ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

ՁԵՌՆԱՐԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կրոն 234 և 235



ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՆԱՐԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատրաստվել Հավերժական Ամուսնությանը, Կրոն 234

Կառուցել Հավերժական Ամուսնություն, Կրոն 235

Պատրաստված է
Եկեղեցու Կրթական Համակարգի կողմից

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Ուղարկեք դիտողություններն ու ուղղումները, ներառյալ տպագրական սխալները՝
CES Editing, 50 E. North Temple Street, Floor 8, Salt Lake City, UT 84150-2772 USA.
էլ-փոստ՝ ces-manuals@ldschurch.org:

© 2001, 2003 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են:
Printed in the United States of America

English approval: 6/03
Translation approval: 6/03
Eternal Marriage: Student Manual-ի թարգմանությունը
Armenian

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

Ուսանողների ձեռնարկի օգտագործումը viii

Ձեռնարկի նպատակը viii

Ձեռնարկի կառուցվածքը. viii

Ապրել ավետարանի սկզբունքներով. viii

Վիժեցում

Ընտրված ուսմունքներ 1

Անարգանք

Ընտրված ուսմունքներ 3

Անարգանքի սահմանումը. 3

Վերաբերմունք անարգանքի հանդեպ. 3

Անարգանքի պատճառները 4

Խուսափել անարգանքից 4

Անարգանքի ողբերգական սպիների բժշկում 6

Համակերպում ամուսնության մեջ

Ընտրված ուսմունքներ 10

Համակերպում հարազատների հետ 10

Ֆինանսական համակերպումներ. 10

Համակերպում ինտիմ փոխհարաբերություններում 10

Թեմային առնչվող սուրբ գրություններ 11

Քավությունը եվ հավերժական ամուսնությունը

«Թագավորության խաղաղարար բաները», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ. 11

Ծննդաբերության վերահսկում

Ընտրված ուսմունքներ 15

Ես հարց ունեմ, Դոկտոր Հոմեր Էլսվորթ. 18

Գթություն

Ընտրված ուսմունքներ 20

Թեմային առնչվող սուրբ գրություններ. 20

Դառնալով աստվածային էության ճաշակողներ . . 21

Պարտավորություն

Ընտրված ուսմունքներ 22

Մեր հանդիսավոր պարտականությունները, Գորդոն Բ. Հինքլի 23

Համբերեք և բարձրացվեք, Երեց Ռասսել Մ. Նելսոն . . 27

Հաղորդակցում

Թեմային առնչվող սուրբ գրություններ. 32

Ընտրված ուսմունքներ 32

Ընտանեկան հաղորդակցում, Երեց Մարվին Ջ. Աշթոն 33

Ունկնդրեք, որ սովորեք, Երեց Ռասսել Մ. Նելսոն . . . 36

Ուխտեր և արարողություններ

Ընտրված ուսմունքներ 39

Պահել մեր ուխտերը. 39

Ուխտի վրա հիմնված մեր փոխհարաբերությունը Տիրոջ հետ 41

Ուխտի մեջ ծնված քմահաճ երեխաներ 45

Ուխտյալ ամուսնություն, Երեց Բրյուս Կ. Հեյֆն 48

Ժամադրության չափանիշներ

Ընտրված ուսմունքներ 52

Երիտասարդներին զորացնելու համար՝ կատարել Աստծո հանդեպ մեր պարտականությունը, Գրքույկ. 53

Պարտք

Թեմային առնչվող սուրբ գրություններ. 61

Ընտրված ուսմունքներ 61

Տղաներին և տղամարդկանց, Նախագահ Գորդոն Բ. Հինքլի. 62

Տղամարդկանց և կանանց միջև ներհատուկ տարբերությունները

Ընտրված ուսմունքներ 65

Ժամանակի և ողջ հավերժության համար, Երեց Բոյդ Ք. Փաքեր 68

Կանացի սեռի ուրախությունը, Քույր Մարգարետ Դ. Նադաուլդ 72

Ամուսնալուծություն

Ընտրված սուրբ գրություններ. 75

Թեմային առնչվող սուրբ գրություններ. 75

Մտահոգություն ընտանեկան կյանքի համար. 75

Ամուսնության աճող պատուհասը Աստծուց չէ 75

Ամուսնություն և ամուսնալուծություն, Երեց Դեյվիդ Բ. Հեյթ 76

Կրթություն
Ընտրված ուսմունքներ 80
Պատրաստվեք ապագային. 80
Կրթության կարևորությունը կանանց համար 81
Տղամարդու և կնոջ հավասարությունը
Ընտրված ուսմունքներ 82
Հավերժական հեռանկար
Ընտրված ուսմունքներ 84
Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին
Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին, Առաջին Նախագահություն և Տասներկու Առաքյալների Քվորում 86
Ընտրված ուսմունքներ 87
Հավատքի սկզբունքը 87
Աղոթքի սկզբունքը 88
Ապաշխարության սկզբունքը 89
Ներման սկզբունքն ամուսնության մեջ. 91
Ներում՝ սիրո բարձրագույն ձև, Երեց Մարիոն Դ. Հանքս 93
Փոխադարձ հարգանքի սկզբունքը 94
Կարեկցանքի սկզբունքը 95
Աշխատանքի սկզբունքը 96
«Ուսդ դեմ տուր անվին», Երեց Նիլ Ա. Մաքսվել 98
Օգտակար և ուժերը վերականգնող հանգստի սկզբունքներ, Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ 101
Հավերժական ընտանիք, Երեց Ռոբերտ Դ. Հեյլս . . . 105
Ընտանիք, Երեց Հենրի Բ. Այրինգ 109
Հավատարմություն ամուսնության մեջ
Ընտրված ուսմունքներ 116
Հավատարմության վարդապետությունը 116
Անհավատարմության գինը 117
Նախազգուշական միջոցներ, որոնք օգնում են կանխարգելել անհավատարմությունը. 118
Ֆինանսներ
Ընտրված ուսմունքներ 120
Փողի և ընտանեկան ֆինանսների համար մեկ ուղեցույց, Երեց Մարվին Ջ. Աշթոն 120
Ագահություն, եսասիրություն և բավականություններով տարվելը, Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն 125
Հավերժական ամուսնության հիմունքները
Ընտրված ուսմունքներ 129
Սահմանադրություն կատարյալ կյանքի համար, Նախագահ Հարոլդ Բ. Լի 129
Երջանիկ տան անկյունաքարերը, Նախագահ Գորդոն Բ. Հինքլի 132
Զարգացնել աստվածային հատկանիշներ, Երեց Ջոզեֆ Բ.Վիրթլին 135
Երջանկություն ամուսնության մեջ
Ընտրված ուսմունքներ 138
Ամուսնությունը բերում է երջանկություն և ուրախություն 138
Սատանան փորձում է կործանել երջանկությունը . . 139
Խոստումի Սուրբ Հոգին
Ընտրված ուսմունքներ 141
Անկախություն
Ընտրված ուսմունքներ 142
Մտերմություն ամուսնության մեջ
Ընտրված ուսմունքներ 144
Թեմային առնչվող սուրբ գրություններ. 144
Ֆիզիկական մտերմությունը կարգված է Աստծո կողմից 144
Ֆիզիկական մտերմություն միայն ամուսնության մեջ 145
Մտերմության նպատակները 145
Սխալ օգտագործվող ֆիզիկական մտերմություն . . 145
Կյանքի աղբյուրը, Երեց Բոյդ Ք. Փաքեր 146
Հիսուս Քրիստոս
Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների վկայությունը . . 153
Գիտելիք հոգևոր բաների մասին
Ձեռք բերել հոգևոր գիտելիք, Երեց Ռիչարդ Գ. Սքոթ 153
Առանց ամուսնության համատեղ ապրելը
Թեմային առնչվող սուրբ գրություններ 156
Ընտրված ուսմունքներ 156
Սեր
Ընտրված ուսմունքներ 161
Թեմային առնչվող սուրբ գրություններ. 161
Ի՞նչ է ճշմարիտ սերը. 161
Որո՞նք են ճշմարիտ սիրո որոշ աղավաղումները 163

Ինչպե՞ս է մեր սերը Աստծո հանդեպ ազդում ուրիշներին սիրելու մեր ունակության վրա 164
Ինչպիսի՞ վարվելաձև է օգնում զարգացնել ճշմարիտ սիրո հարաբերություններ: 165
«Ինչպե՞ս եմ ես սիրում քեզ», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ 165
Սիրո և փոխըմբռնման միություն, Երեց Մարլին Ք. Ջենսեն 170

Ամուսնություն հավերժության համար

Ընտրված սուրբ գրություններ 175
Հավերժական աճ 175
Ամուսնության նոր և հավերժական ուխտը 175
Նրանք, ովքեր չեն ամուսնանում 176
Ամուսնություն և ամուսնալուծություն, Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ 176
Ինչ Աստված միմյանց կապեց, Նախագահ Գորդոն Բ. Հինքլի 183
Ինչո՞ւ ամուսնանալ տաճարում, Երեց Ջոն Ա. Ուիդքսոու 187
Ամուսնություն, Երեց Բոյդ Ք Փաքեր 189

Ամուսնություն ողջ տարիների ընթացքում

Ընտրված ուսմունքներ 193
Ամուսնության բարելավումը, Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ 193
Հինքլիները նշելու են 60-րդ տարեդարձը, Դել Վան Օրդեն 195

Զուգընկերոջ ընտրություն

Ընտրված ուսմունքներ 197
Իմաստուն ձևով ընտրելու կարևորությունը 197
Նախադրյալների գործոնները 197
Համապատասխան անձնավորությունը 197
Արտաքին տեսք և ներքին գեղեցկություն 198
Խորհուրդ չամուսնացած քույրերին 199
Խորհուրդ ամուրի եղբայրներին 199
Աղոթքի և անձնական հայտնության դերը 200
Գտնել համապատասխան մեկին 201
Միսիա, թե՞ ամուսնություն 201
Որոշում ընդունել ճիշտ ժամանակին 202
Ազատ կամք, թե՞ ոգեշնչում, Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի 202

Հասունություն

Ընտրված ուսմունքներ 208

Տղամարդկանց աստվածային դերն ու պարտականությունները

Ընտրված ուսմունքներ 210
Հայրեր, խորհեք ձեր ուղիների մասին, Գրքույկ 210
Ուղղված Իսրայելի հայրերին, Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն 213
Լինել արդարակյաց ամուսին և հայր, Հովարդ Վ. Հանթեր 216
Արժանի ապրել այն աղջկան, որի հետ մի օր կամուսնանաք, Նախագահ Գորդոն Բ. Հինքլի . . . 219
Կանանց պատվելու մեր սրբազան պարտականությունը 223
Հայրերի ձեռքերը, Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ 226

Բարոյականություն և համեստություն

Ընտրված ուսմունքներ 230
Հնազանդության և անհնազանդության հետևանքները 232
Համեստություն 233
Համեստություն մտքում 233
Համեստություն խոսքում 234
Համեստություն հագուստի մեջ 234
Համեստ վարք 234
Հագեք Աստծո ողջ սպառազինությունը, Նախագահ Հարոլդ Բ. Լի 235
Մաքրաբարոյության օրենքը, Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն 239
Ուղղված Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի բոլոր անդամներին, Առաջին Նախագահության գրասենյակ 242
Մեր բարոյական միջավայրը, Երեց Բոյդ Ք. Փաքեր 242
Անձնական մաքրություն, Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ . . 245

Տնից դուրս մոր աշխատանքը

Ընտրված ուսմունքներ 250

Ծնող լինել՝ ստեղծել ավետարանի վրա կենտրոնացած տուն

Ընտրված ուսմունքներ 254
Ծնողական հաջողություն 254
Ընտանեկան երեկո 257

Ընտանեկան խորհրդի գործընթացները 257
Լավ ամուսնություններն օրհնում են երեխաներին 258
Ծնող լինելը որպես հավերժական հեռանկար. . . . 259
Ծնող լինելու ուրախությունը. 260
Ավետարանի ուսուցանումը երեխաներին 261
Երեխաներին աշխատել սովորեցնել. 263
Հոր պարտականությունը. 264
Մոր պարտականությունը 266
Կարգապահություն դաստիարակել սիրով 266
Անձնական արդարակեցությունը նախապատրաստում է ծնողներին 267
Ժամանակ անցկացնելով երեխաների հետ 268
Մեծագույն մարտահրավերն աշխարհում՝ լավ ծնող լինելն է, Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ 269

Փրկության ծրագիր
«Երջանկության մեծ ծրագիրը», Երեց Դալլին Հ. Օուքս 273

Պոռնոգրաֆիա
Ընտրված ուսմունքներ 278
Պոռնոգրաֆիայի ազդեցությունները ժամադրության, ամուսնությունների և ընտանիքների վրա 278
Կինոնկարներ և տեսաֆիլմեր 281

Հպարտություն
Մաքրել անոթի ներսը, Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն. 282
Զգուշացեք հպարտությունից, Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն. 283

Սկզբունքներ
Ընտրված ուսմունքներ 288

Առաջնահերթություններ և հավասարակշռություն
Ընտրված ուսմունքներ 290
Հոգևոր առաջնահերթություններ. 290
Ընտանեկան առաջնահերթություններ. 291
Նամակ Առաջին Նախագահությունից Եկեղեցու Անդամներին 291
Ծնողներ Սիոնում, Նախագահ Բոյդ Ք. Փաքեր 292
Հաշվեկշռի մեջ պահելով կյանքի պահանջները 295

Խնդիրներ լուծելը ամուսնության մեջ
Ընտրված ուսմունքներ 298
Ամուսնությունը և երջանկության մեծ ծրագիրը 299
Միասնություն գտնելու բանաձև՝ հաղթահարելով տարակարծություններն ամուսնության մեջ, Երեց Ռոբերտ Ի. Ուելս. 301

Մարգարեական խորհուրդ
Ապահովություն գտնել խորհրդում, Երեց Հենրի Բ. Այրինգ 305

Նույն սեռի հանդեպ հակվածություն
Ընտրված ուսմունքներ 309
Նույն սեռի հանդեպ հակվածություն, Երեց Դալլին Հ. Օուքս 309

Նույնասեռ ամուսնություն
Ընտրված ուսմունքներ 318

Եսասիրություն
Ընտրված ուսմունքներ 320

Ինքնապավինում
Ինքնապավինում, Երեց Բոյդ Ք. Փաքեր. 321
Դառնալով ինքնապավինող, Երեց Լ. Թոմ Փերի . . . 323

Միայնակ ծնողներ
Ընտրված ուսմունքներ 327

Տաճարային նախապատրաստություն
Ընտրված ուսմունքներ 330
Տաճարային արժանավորություն. 330
Ուխտեր և պարտավորություններ. 330
Տաճարի խորհրդանիշը 331
Օժտման նպատակը 331
Օժտում հասկացողությունը. 331
Պատրաստություններ տաճարային ամուսնության համար 332
Երկրի օրենքը. 332
Եկեղեցու արարողակարգերը 332
Սուրբ Տաճարը, Նախագահ Բոյդ Ք. Փաքեր 335
Տաճարային ներքնազգեստ՝ ներքին պարտավորության արտաքին դրսևորում Երեց Կառլոս Ի. Ասայ. 339

Ֆիզիկական պատրաստվածություն
Ընտրված ուսմունքներ 344
Առողջություն 344

Աշխատանք և եկամուտներ. 344
Տնային պահեստ և արտադրություն 346

Սատանայի և բնական մարդու գայթակղությունները

Ընտրված ուսմունքներ 347
Մեր վաղանցիկ քաղաքակրթությունը, Նախագահ Գորդոն Բ. Հինքլի 348
Դաստիարակել կայուն հավասարակշռություն, Գորդոն Բ. Հինքլի 350
Հանեք բնական մարդուն և հաղթող դուրս եկեք, Երեց Նիլ Ա. Մաքսվել. 351
Սուրբ գրություններ 354

Հայրերի ավանդույթները

Ընտրված ուսմունքներ 355
Պահպանել առաքինի ավանդույթներ 355
Կեղծ ավանդույթների օրինակներ 355
Հաղթահարել կեղծ ավանդույթները 356
Իրենց հայրերի ավանդույթը, Երեց Մարիոն Դ. Հանքս. 356

Վստահություն ամուսնությունում

Ընտրված ուսմունքներ 360
Վստահություն 360
Ավելի մեծ հարգանք, նվիրվածություն և համերաշխություն. 360

Համերաշխություն

Ընտրված ուսմունքներ 362
Համերաշխության կարևորությունը ամուսնության մեջ 362
Միասնության հասնել Տիրոջը և Նրա արդարությունը փնտրելու միջոցով 362
Միասնության հասնել գթության միջոցով 362
Միասնության հասնել հավատարմության միջոցով 363
Միասնության հասնել արդյունավետ հաղորդակցության միջոցով. 363
Միասնության օրհնությունները. 363

Կանանց աստվածային դերն ու պարտականությունները

Ընտրված ուսմունքներ 365
Կնոջ աստվածային աշխատանքը 365
Ի՞նչ է օգնականը. 367
Արդար կնոջ դերը, Նախագահ ՍպենսերՎ. Քիմբալ 368
Սիոնի մայրերին, Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն. 370
Եկեղեցու կանայք, Նախագահ Գորդոն Բ. Հինքլի . . . 376
Երջանկության մեծ ծրագրով ապրելու ուրախությունը, Երեց Ռիչարդ Գ. Սքոթ 379
Մենք Աստծո կանայք ենք, Քույր Շերի Լ. Դյու 383
«Մեկ բան է պետք» - դառնալ ավելի մեծ հավատքի տեր կանայք Քրիստոսում, Քույր Պատրիցիա Թ. Հոլլանդ 386

Հղումներ 394
Ցուցիչ 396

ՆԱԽԱԲԱՆ

Ես ուսուցանում եմ նրանց ճիշտ սկզբունքներ, և նրանք իրենք են կառավարում իրենց:

—Մարգարե Ջոզեֆ Սմիթ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Այս ձեռնարկը նախատեսված է ինստիտուտի կրոնի երկու դասընթացների ուսանողական ընթերցանության համար:

- Կրոն 234, «Պատրաստվել Հավերժական Ամուսնությանը»
- Կրոն 235, «Կառուցել Հավերժական Ամուսնություն»

ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Ուսանողների համար ընթերցանության նյութերը ժամադրության և ամուսնության վերաբերյալ ուսմունքների հավաքածու է, որոնք ուսուցանվել են անցյալ և ներկա մարգարեների և Եկեղեցու առաջնորդների կողմից, և սուրբ գրություններում: Այս ձեռնարկը ուսանողներին հնարավորություն է տալիս յուրաքանչյուր դասաժամից առաջ կարդալ հանձնարարված ելույթները, որպեսզի կարողանան ավելի լավ մասնակցել և ներդրում կատարել դասարանային քննարկումներին և միջոցառումներին:

Հասկանալով և ապրելով ժամադրության, ամուսնության և ընտանեկան կյանքի վերաբերյալ մարգարեների ուսմունքներով, ուսանողներն ավելի լավ կնախապատրաստվեն կառավարելու իրենց կյանքը ճիշտ սկզբունքներով և հետևելու Տիրոջ երջանկության մեծ ծրագրին: Այս ձեռնարկի ուսմունքներն ընտրելիս առաջնորդող սկզբունքը վերցվել է «Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին» հռչակագրից: Այդ հայտարարության մեջ նշվում է. «Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա» (*Ensign,* Nov. 1995, 102):

ՁԵՌՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ուսանողների համար ձեռնակում թեմաները դասավորված են այբբենական կարգով՝ հանրագիտարանի պես: Այն պարունակում է ցուցիչ, որը հղագրում է բաժիններին, որոնք ընդգրկում են ավելի քան մեկ թեմա:

Թեմատիկ վերնագրերի ներքո նշվում են մի քանի տեսակի մեջբերումներ: Առաջինը տվյալ թեմային առնչվող «Ընտրված Ուսմունքներ», ելույթների հատվածներ կամ մեջբերումներ են: Այդ մեջբերումները հաճախ ներկայացվում են հիմնական թեմայի հետ կապված ենթավերնագրերի ներքո:

Երկրորդ տեսակի մեջբերումը տվյալ թեմայի վերաբերյալ ամբողջական ելույթ է: Թեմաների մեծ մասը ունեն ընտրված ուսմունքներ և մեկ կամ ավելի ամբողջական ելույթներ: Նմանկառուցվածքը ընթերցողի համար ընդգծում է վկաների օրենքի ուժը: Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Հենրի Բ. Այրինգը ուսուցանել է վկաների օրենքի կարևորության մասին.

«Իր ուրույն ժամանակին մեզ խորհրդով նախազգուշացվեց, թե որտեղ կարող ենք մեղքից և վշտերից ապահովություն գտնել: Այդ նախազգուշացումները ճանաչելու բանալիներից մեկն այն է, որ դրանք կրկնվում են: Օրինակ՝ այս գերագույն համաժողովներում մեկից ավելի անգամներ ենք լսել, ինչպես է մեր մարգարեն ասել, որ մեջբերում կանի նախորդ մարգարեի խոսքից՝ այդպիսով լինելով երկրորդ վկա, իսկ երբեմն էլ, նույնիսկ, երրորդ: Մեզանից յուրաքանչյուրը լսել է Նախագահ Քիմբալին, որը խորհուրդ է տվել տանը մոր կարևորության մասին, իսկ հետո լսել ենք, ինչպես է Նախագահ Բենսոնը նրա ասածը մեջբերել, ապա լսել ենք Նախագահ Հինքլիին՝ նրանց երկուսին էլ մեջբերելիս: Պողոս Առաքյալը գրել է, որ «երկու և երեք վկաների բերանից ամեն բան կհաստատուի» (Ա Կորնթացիս ԺԳ.1): Ուղիներից մեկը, որով կարող ենք իմանալ, թե արդյոք նախազգուշացումը Տիրոջից է, այն է, որ օգնության է կանչվում վկաների օրենքը՝ լիազորված վկաների օրենքը: Երբ մարգարեների խոսքերը կարծես կրկնվում են, մեր ուշադրությունը պետք է կենտրոնանան մեր սրտերը լցվեն երախտագիտությամբ այսպիսի օրհնված ժամանակներում ապրելու համար:

Մարգարեների խորհրդում դեպի ապահովություն տանող ուղին փնտրելը իմաստ է ստանում ուժեղ հավատք ունեցողների համար» (in Conference Report, Apr. 1997, 32; կամ *Ensign,* May 1997, 25):

ԱՊՐԵԼ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ

Կառավարել մեր կյանքը սկզբունքներով

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը խորհուրդ է տվել. «Ամենակարևոր բաներից մեկը, որ կարող եք անել, …սուրբ գրությունների մեջ խորասուզվելն է: Ջանասիրաբար քննեք դրանք: Սնվեք Քրիստոսի խոսքերով: Սովորեք վարդապետությունը: Սերտեք այնտեղ գտնվող սկզբունքները» (“The Power of the Word,” *Ensign,* May 1986, 81):

Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Ռիչարդ Գ. Սքոթը նշել է. «Հոգևոր գիտելիք որոնելիս, փնտրեք սկզբունքներ: Զգուշորեն առանձնացրեք դրանք այն մանրամասներից, որոնք օգտագործվում են դրանք բացատրելու համար: Սկզբունքները խտացված ճշմարտություններ են, որոնք փաթեթավորված են բազմազան հանգամանքներում կիրառության համար: Ճշմարիտ սկզբունքը հստակ է դարձնում որոշումները, նույնիսկ ամենաշփոթեցնող և հարկադրական իրավիճակներում: Արժե մեծ ջանքեր գործադրել մեր հավաքած ճշմարտությունը սկզբունքի պարզ դրույթներով ձևակերպելու համար» (in Conference Report, Oct. 1993, 117; կամ *Ensign*, Nov. 1993, 86):

Ճիշտ սկզբունքներ իմանալն ու դրանցով ապրելը կարևոր է երջանիկ կյանքի և երջանիկ ամուսնության համար: Ավետարանի սկզբունքները ներառում են՝ վարդապետություն, պատվիրաններ, ուխտեր, արարողություններ և կանոններ: Սակայն այս ձեռնարկում *սկզբունք* բառը վերաբերում է ավետարանի որևէ ճշմարտության, որը տալիս է մեզ խորհուրդ և առաջնորդություն վարքի համար:

Մենք պետք է անենք մեր մասը

Սկզբունքները կարող են հաճախ բաժանված լինել երկու հիմնական մասի՝ *եթե* և *ապա*: *Եթե* մասը Տիրոջ կողմից ընդհանուր խորհրդի դրույթ է: *Ապա* մասը այդ խորհրդին հնազանդվելու կամ չհնազանդվելու խոստացված արդյունքներն են:

Աստված կոչել է Իմաստության Խոսքը «խոստումով սկզբունք» (ՎԱՈ 89.3): *Եթե* մասը մեր մարմինները ֆիզիկապես և հոգեպես մաքուր պահելու մասին խորհուրդ է: *Ապա* մասը խոստանում է առողջություն, իմաստություն, ուժ և այլ օրհնություններ:

Տերը պահում է Իր խոստումները. «Ես՝ Տերս, կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ, բայց երբ դուք չեք անում այն, ինչ ես ասում եմ, դուք խոստում չունեք» (ՎԱՈ 82.10): Մենք պետք է անենք մեր մասը օրհնությունների արժանանալու համար (տես ՎԱՈ 130. 20–22): Մենք պետք է նաև հիշենք, որ Աստված որոշում է *ապա* մասը համաձայն Իր իմաստության և ոչ թե մեր սպասումների:

Սկզբունքները ոչ միշտ են ուսուցանվում կամ գրվում *եթե-ապա* ոճով: Օրինակ, Բարձրագույն Իշխանավորները միշտ չէ, որ ասում են. «*Եթե* դուք հավատք ունենաք, *ապա* կունենաք Տիրոջ զորությունը ձեր կյանքում»: Դրա փոխարեն նրանք կարող են օրինակներ բերել, որոնք ցույց են տալիս հավատք կամ տրամադրում են մեզհավատարիմ լինել:

Ավետարանի սկզբունքները համընդհանուր են

Ավետարանի սկզբունքները համընդհանուր բ են՝ դրանք ճշմարիտ են բոլոր իրավիճակներում և բոլոր մշակույթներում, բոլոր ժամանակների համար: Ադամին աշխարհի սկզբում հայտնի դարձված սկզբունքները ճիշտ նույնքան ճշմարիտ են այս վերջին օրերում: Մենք ունենք մարգարեներ, սուրբ գրություններ և Սուրբ Հոգու ազդեցությունը, որոնք օգնում են մեզ տեսնել և կիրառել ճիշտ սկզբունքները:

Ամփոփում

Սկզբունքը հարատև ճշմարտություն է, օրենք կամ կանոն, որը դուք կարող եք որդեգրել և որոնք կարող են առաջնորդել ձեզ որոշումներ կայացնելիս: Սկզբունքներն օգնում են մեզ կիրառել ավետարանի վարդապետություններն ամենօրյա կյանքում: Դրանք լույս են տալիս մեզ՝ լուսավորելով մեր ուղին այս չափազանց խառանաշփոթ և ամբարիշտ աշխարհում:

ՎԻԺԵՑՈՒՄ

Վիժեցումը չարիք է, բացարձակ
և իրական ու նողկալի,
որը պատել է երկիրը:

—Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Վիժեցումը աճող չարիք է, որին մենք դեմ ենք: Անշուշտ կանխամտածված վիժեցման սոսկալի մեղքը դժվար կլինի արդարացնել: Գրեթե անհերևակայելի է այն, որ վիժեցումը երբևէ կարող է փրկել բարի անունը կամ օգնել խուսափել ամոթահարությունից, փրկել նեղությունից և անհարմարությունից կամ օգնել խուսափել պատասխանատվությունից: Ինչպե՞ս կարող է ինչ-որ մեկը գնալ այդպիսի վիրահատության կամ ինչ որ ձևով մասնակցել դրան, ֆինանսավորելով կամ քաջալերելով այն: Եթե հազվադեպ հատուկ դեպքեր կարողանային արդարացվել, իհարկե, դրանք իսկապես հազվադեպ կլինեին: Մենք այն դնում ենք մեղքերի ցուցակի վերին մասում, որի դեմ խստորեն զգուշացնում ենք մարդկանց:

Վիժեցումը պետք է համարվի այսօրվա ամենազզվելի և մեղսալի արարքներից, երբ մենք ականատես ենք լինում ամենաթողության սոսկալի փաստին, որը տանում է դեպի սեռական անբարոյականություն» (*Priesthood Bulletin,* February 1973, p. 1.)“ (in Conference Report, Apr. 1974, 8; կամ *Ensign,* May 1974, 7):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Հարց 3. Ո՞րն է ձեր դիրքորոշումը վիժեցման վերաբերյալ:

Համաձայն հիվանդությունների վերահսկողության և կանխարգելման կենտրոնների տվյալների, 1995 թվականին միայն Միացյալ Նահանգներում տեղի է ունեցել ավելի քան 1,200,000 վիժեցում: Ի՞նչ է պատահել մարդկային կյանքի հանդեպ մեր հարգանքին: Ինչպե՞ս կարող են կանայք և տղամարդիկ մերժել կյանքի մեծ և թանկարժեք պարգևը, որն աստվածային է իր ծագմամբ ու բնույթով:

Ինչպիսի՜ սքանչելի բան է երեխան: Որքա՜ն գեղեցիկ է նորածին մանկիկը: Չկա ավելի մեծ հրաշք, քան մարդկային կյանքի ստեղծումը:

Վիժեցումը տգեղ բան է, ստորացուցիչ բան, մի բան, որն անխուսափելիորեն առաջացնում է խղճի խայթ, վիշտ ու զղջում:

Չնայած մենք մերժում ենք այն, բացառություն ենք անում այնպիսի դեպքերում, երբ հղիությունը արյունապղծության կամ բռնաբարության արդյունք է, երբ կյանքը կամ մոր առողջությունը բժշկական հեղինակավոր մասնագետի կարծիքով լրջորեն վտանգված է, կամ երբ սաղմը հեղինակավոր բժշկական մասնագետի կարծիքով լուրջ թերություններ ունի, որոնց հետևանքով ծնվելուց հետո երեխան չի կարող ապրել:

Բայց այսպիսի դեպքերը հազվադեպ են և դրա իրականացման համար կա միայն աննշան հավանականություն: Այս հանգամանքներում, նրանք ովքեր այդ խնդրի առջև են կանգնում, նման քայլի դիմելուց առաջ պետք է խորհրդակցեն իրենց տեղական հոգևոր առաջնորդների հետ և աղոթեն ողջ անկեղծությամբ՝ աղոթքով հաստատում ստանալու համար:

Կա շատ ավելի լավ ուղի:

Եթե ամուսնության հեռանակար չկա տվյալ տղամարդու հետ, և մայրը պետք է մնա միայնակ, կա մի շատ ողջունելի տարբերակ՝ երեխային որդեգրության տալ այնպիսի ծնողների, ովքեր կսիրեն նրան և հոգ կտանեն նրա մասին: Կան բազմաթիվ զույգեր լավ տներում, ովքեր երազում են երեխա ունենալ, բայց չեն կարողանում» (in Conference Report, Oct. 1998, 91–92; կամ *Ensign,* Nov. 1998, 71):

«Դուք, որ կանայք և մայրեր եք, դուք եք ընտանիքի խարիսխը: Դուք եք կրում երեխաներին: Ինչպիսի՜ վիթխարի և սրբազան պատասխանատվություն է սա: Ինձ ասել են, որ 1972-1990թթ. միայն Միացյալ Նահանգներում կատարվել է 27 միլիոն վիժեցում: Ի՞նչ է կատարվում մարդկային կյանքի սրբության մեր գնահատման հետ: Վիժեցումը չարիք է, բացարձակ և իրական ու նողկալի, որը պատել է երկիրը: Ես աղերսում եմ այս Եկեղեցու կանանց խուսափել դրանից, կանգնել դրանից վեր, հեռու մնալ այն կոմպրոմիսային իրավիճակներից, որոնք ստիպում են այն ցանկալի երևալ: Կարող են լինել մի քանի հազվադեպ հանգամանքներ, որոնց առկայության դեպքում դա կարող է տեղի ունենալ, բայց դրանք չափազանց սահմանափակ են և մեծամասամբ անհավանական: Դուք Աստծո որդիների և դուստրերի մայրերն եք, որոնց կյանքը սրբազան է: Նրանց ապահով պահելը աստվածայնորեն տրված պատասխանատվություն է, որը չի կարելի հեշտորեն մի կողմ դնել» (“Walking in the Light of the Lord,” *Ensign,* Nov. 1998, 99):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Ինչ էլ որ մարդկային օրենքները հանդուրժեն, ծննդաստեղծ ուժի սխալ օգտագործումը, վիժեցման միջոցով անմեղ կյանքի կործանումը և փոքր երեխաների հանդեպ բռնությունները վիթխարի չափերի օրինազանցություններ են: Այդ գործողությունները որոշում են անմեղ, անօգնական երեխաների ճակատագրերը» (in Conference Report, Oct. 1986, 21; կամ *Ensign,* Nov. 1986, 18):

«Ոչ մի պարագայում ընտրության իրավունքը այնպիսի ուժով չի պաշտպանվում, ինչպես վիժեցման դեպքում: Երբ որոշումը կայացվում է և հղիացումը տեղի է ունենում, ընտրությունն այլևս չի կարող փոխվել: Բայց դեռևս կան ընտրություններ, միշտ լավագույն մի տարբերակ:

Երբեմն ամուսնության ուխտն է խախտվում, իսկ ավելի հաճախ երբևէ արված չի էլ լինում: Ամուսնության մեջ կամ ամուսնությունից դուրս, վիժեցումը անձնական ընտրություն չէ: Առնվազն երեք կյանք է ներգրավված:

Սուրբ գրություններն ասում են մեզ. «Մի…. սպանիր, ոչ էլ նման *որևէ* բան գործիր» (ՎԱՈՒ 59.6, շեղագիրն ավելացված է):

Բացառությամբ, երբ արյունապղծության կամ բռնաբարության սոսկալի հանցագործությունն է տեղի ունեցել, կամ երբ բժշկական հեղինակավոր մասնագետը հաստատում է, որ մոր կյանքը վտանգի տակ է կամ խիստ թերի սաղմը չի կարող ապրել ծնվելուց հետո, մնացած դեպքերում հստակորեն ասվում է՝ մի «գործիր» վիժեցում: Նույնիսկ այս բացառիկ դեպքերում, ճիշտ ընտրություն կատարելու համար պահանջվում է շատ լուրջ աղոթք:

Մենք դիմակայում ենք այդպիսի լուրջ ընտրությունների, որովհետև մենք Աստծո զավակներն ենք» (in Conference Report, Oct. 1990, 108; կամ *Ensign,* Nov. 1990, 85):

«Ես չգիտեմ բարոյական չափանիշների հետ կապված մեղքեր, որոնց համար մենք չկարողանանք ներվել: Ես չեմ բացառում վիժեցումը» (in Conference Report, Apr. 1992, 95; կամ *Ensign,* May 1992, 68):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Վիժեցումը, որը վիթխարի չափերի է հասել, ստիպում է մարդուն հարցնել. «Միթե՞ մենք այնքան ենք հեռու մնացել՝ սիրիր քո ընկերոջը Աստծո երկրորդ մեծ պատվիրանից, որ արգանդում եղող մանկիկն այլևս արժանի չէ սիրվելու, առնվազն որպես մոր ընկեր»: Ամեն դեպքում, բռնությունը չծնված երեխայի հանդեպ չի արդարացնում մեկ այլ բռնություն» (in Conference Report, Apr. 1993, 94–95; կամ *Ensign,* May 1993, 76):

Երեց Ռասսել Մ. Նելսոն

«Ցավալի է պատերազմի պատճառով սիրելիների կորուստը, բայց պատերազմից մահացածների թվին գերազանցում է մի նոր պատերազմի զոհերի թիվը, որն *ամեն տարի* ավելի շատ կյանքեր է խլում, քան այս ազգի բոլոր պատերազմների մահացածների ընդհանուր թիվն է:

Սա պատերազմ է անպաշտպանների և ձայնազուրկների դեմ: Սա պատերազմ է չծնվածների դեմ:

Այս պատերազմը, որը կոչվում է «վիժեցում», համաճարակային բնույթ է կրում և մոլեգնում է ողջ աշխարհով մեկ: Ավելի քան 55 միլիոն վիժեցման դեպք է զեկուցվել ողջ աշխարհում միայն 1974 թվականին: Աշխարհի բնակչության վաթսուն չորս տոկոսն ապրում է այն երկրներում, որոնք պաշտոնապես թույլատրել են այս գործառությունը: Ամերիկայի Միացյալ Նահանգներում ամեն տարի ավելի քան 1.5 միլիոն վիժեցումներ են կատարվում: Այժմ բոլոր հղիությունների մոտ 25- 30 տոկոսը վերջանում են վեժեցմամբ» (in Conference Report, Apr. 1985, 13; կամ *Ensign,* May 1985, 11):

Երեց Դալլին Հ. Օուքս

«Կործանման ծայրահեղ ակտը կյանքը խլելն է: Այդ պատճառով վիժեցումը լուրջ մեղք է համարվում: Մեր վերաբերմունքը վիժեցման հանդեպ հիմնված չէ հայտնությամբ տրված գիտելիքի վրա, թե երբ է սկսվում մահկանացու կյանքը իրավական տեսակետից: Մեր գիտելիքի միջոցով հաստատված է, որ համաձայն հավերժական մի ծրագրի, Աստծո բոլոր հոգևոր զավակները պետք է գան այս երկիր մի փառահեղ նպատակի համար, իսկ անհատական ինքնությունը սկսվել է հղիացումից շատ առաջ և կշարունակվի գալիք բոլոր հավերժություններում: Մենք ապավինում ենք Աստծո մարգարեներին, ովքեր ասել են մեզ, որ չնայած կարող են լինել հազվադեպ բացառություններ, «ինքնակամ վիժեցման գնալը արմատապես հակառակ է Տիրոջ «մի սպանիր … ոչ էլ նման որևէ բան գործիր» կարգադրությանը (Վարդապետություն և Ուխտեր 59.6)» (*1991 Supplement to the 1989 General Handbook of Instructions,* p. 1):

«Երջանկության մեծ ծրագրի մասին մեր գիտելիքը մեզ նաև մի առանձնահատուկ հեռանակար է տալիս ամուսնության նյութի և երեխաներ ծնելու վերաբերյալ: Սրանում մենք նաև ներկա որոշ հզոր ուժերի՝ սովորույթների, օրենքի և տնտեսության դեմ ենք գնում» (in Conference Report, Oct. 1993, 99–100; կամ *Ensign,* Nov. 1993, 74):

ԱՆԱՐԳԱՆՔ

Անարգանքն ուրիշների հանդեպ ֆիզիկական, զգացմունքային, սեռական կամ հոգևոր անպատշաճ վերաբերմունքն է:

— Ինչպես արձագանքել անարգանքին

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Անարգանքի սահմանումը

«Անարգանքը ուրիշների հանդեպ ֆիզիկական, զգացմունքային, սեռական կամ հոգևոր անպատշաճ վերաբերմունքն է: Այն կարող է ոչ միայն վնասել մարմինը, այլ կարող է խորապես ազդել մտքի և հոգու վրա՝ կործանելով հավատքը և առաջացնելով խառնաշփոթություն, կասկած, անվստահություն, հանցանք և վախ» (*Responding to Abuse: Helps for Ecclesiastical Leaders*, 1):

Նախագահ Գորդոն Բ.Հինքլի

«Իմ գրասենյակում ես մի կապոց նամակներ ունեմ այն կանանցից, ովքեր բողոքում են այն վերաբերմունքից, որին արժանանում են տանը իրենց ամուսինների կողմից: Նրանք պատմում են այդ տղամարդկանցից մի քանիսի Եկեղեցու պարտականությունների հանդեպ իրենց վերաբերմունքի մասին: Նրանք խոսում են նույնիսկ տաճարային երաշխավորագրեր ունեցող տղամարդկանց մասին: Եվ նրանք խոսում են անարգանքի մասին՝ լինի ծածուկ, թե բացահայտ: Նրանք պատմում են ամուսինների մասին, ովքեր կորցնում են ինքնատիրապետումը և բղավում իրենց կանանց և երեխաների վրա: Նրանք պատմում են տղամարդկանց մասին, ովքեր պահանջում են վիրավորական ինտիմ հարաբերություններ: Նրանք պատմում են տղամարդկանց մասին, ովքեր ստորացնում են իրենց և նվաստացնում, և հայրերի մասին, ովքեր կարծես թե քիչ բան գիտեն իրենց երեխաների հետ կապված համբերության և ինքնազսպման նշանակության մասին» (in Conference Report, Apr. 1990, 68; կամ *Ensign*, May 1990, 52):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Որևէ ձևի ֆիզիկական կամ մտավոր անարգանք որևէ կնոջ հանդեպ սազական չէ որևէ քահանայություն կրողի: …. Սա, իհարկե վերաբերում է ինչպես խոսքով, այնպես էլ ֆիզիկական անարգանքին» (in Conference Report, Apr. 1988, 44; կամ *Ensign*, May 1988, 37):

Վերաբերմունք անարգանքի հանդեպ

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Որևէ քահանայություն կրող, եթե սովորություն ունի հայհոյելու իր կնոջը, անարգելու նրան խոսքերով կամ գործողություններով կամ անել նույնը իր երախաներից մեկի հանդեպ, հանցավոր է դառնաղետ մեղքում:

«Կարո՞ղ եք բարկանալ և չմեղանչել», - հարցնում է Պողոս Առաքյալը (Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Եփեսացիս Դ.26)» (in Conference Report, Oct. 1983, 61–62; կամ *Ensign*, Nov. 1983, 42):

«Եթե մարդը չի տիրապետում իրեն, ցավով պետք է ընդունել, որ նա չի վերահսկում իր մտքերը: Նա այն ժամանակ զոհ է դառնում իր իսկ կրքերին և զգացմունքներին, որոնք տանում են նրան գործողությունների, որոնք հեռու են քաղաքակիրթ պատշաճ վարվելակերպից, առավել ևս քահանայություն կրողի վարվելակերպից» (in Conference Report, Oct. 1986, 62; կամ *Ensign*, Nov. 1986, 47):

«Ի՞նչ է նշանակում սիրել մեկին մեր ողջ սրտով: Նշանակում է մեր ողջ զգացմունքներով և նվիրվածությամբ: Անշուշտ, երբ սիրում եք ձեր կնոջը ձեր ողջ սրտով, դուք չեք կարող ստորացնել նրան, քննադատել, նրան մեղավոր համարել, ոչ էլ անարգել նրան խոսքով, խիստ վարվելակերպով կամ գործողություններով» (in Conference Report, Oct. 1983, 63; կամ *Ensign*, Nov. 1983, 43):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Եթե որևէ մեկը անարգում է կամ ստորացնում իր կնոջը ֆիզիկապես կամ հոգեպես, մեղավոր է դառնաղետ մեղքում և կարիք ունի անկեղծ և լուրջ ապաշխարության» (in Conference Report, Oct. 1994, 64; կամ *Ensign*, Nov. 1994, 51):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Հարց 6. Ի՞նչ կասեք ամուսնու/կնոջ կամ երեխայի հանդեպ անարգանքի մասին:….

Մենք անում ենք հնարավորինս, որպեսզի ազատվենք այս սոսկալի չարիքից: Երբ ճանաչում ենք ամուսնու և կնոջ միջև հավասարությունը, երբ կա ըմբռնում, որ այս աշխարհում ծնված յուրաքանչյուր երեխա Աստծո զավակն է, ապա ի հայտ է գալիս ավելի մեծ պատասխանատվություն՝ խնամելու, օգնելու, և հարատև սիրով սիրելու նրանց, ում համար մենք պատասխանատու ենք:

Ով անարգում է իր կնոջն ու երեխաներին, արժանի չէ կրելու Աստծո քահանայությունը: Ով անարգում է իր կնոջն ու երեխաներին արժանի չի համարվի լավ դիրքում լինելու որպես այս Եկեղեցու անդամ: Կողակցին և երեխաներին անարգելը ամենալուրջ վիրավորանքն է Աստծո համար,

իսկ ով անում է դա, Եկեղեցու կարգապահական տույժի կենթարկվի» (in Conference Report, Oct. 1998, 92–93; կամ *Ensign*, Nov. 1998, 72):

Անարգանքի պատճառները

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Հպարտության դրսևորումներից մեկն էլ հակառակությունն է: Վեճերը, կռիվները, անարդար իշխանություն գործադրելը, սերունդների տարակարծությունը, բաժանությունները, կողակցին անարգելը, խռովություններն ու վրդովմունքները՝ բոլորն ընկնում են հպարտության այս կարգի տակ» (in Conference Report, Apr. 1989, 5; կամ *Ensign*, May 1989, 6):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ես ուրախ եմ, որ այս նենգ չարիքի մասին հասարակական տեղեկացվածությունն աճում է: Երեխաներին շահագործելը կամ կողակցի հանդեպ բռնությունը սադիստական ցանկությունները բավարարելու համար, ամենածանր տեսակի մեղք է» (in Conference Report, Oct. 1985, 67; կամ *Ensign*, Nov. 1985, 51):

Խուսափել անարգանքից

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Մեր զսպվածությանը մենք պետք է ավելացնենք *համբերությունը:* Համբերությունը ինքնատիրապետման մեկ այլ ձև է: Դա բավականությունը հետաձգելու և կրքերը սանձելու կարողությունն է: Սիրելիների հետ իր հարաբերություններում համբերատար մարդը թույլ չի տալիս իրեն պոռթկուն վարվելակերպ, որի համար հետագայում կզղջա: Համբերությունը ինքնազսպվածություն է լարված պահին: Համբերատար մարդը հասկանում է մյուսների թերությունները» (in Conference Report, Oct. 1986, 62; կամ *Ensign*, Nov. 1986, 47):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Պետք է լինի ինքնակարգապահություն, որը զսպում է կնոջ և երեխաների և ինքն իր հանդեպ անարգանքը: Պետք է ջանալ հրավիրել, սնուցել և զորացնել Աստծո Հոգին: Պետք է ընդունել այն փաստը, որ յուրաքանչյուրը Աստծո զավակն է՝ հայրը, մայրը, որդին և դուստրը, յուրաքանչյուրն ունի ծննդի աստվածային իրավունք, և նաև պետք է ընդունել այն փաստը, որ երբ մենք վիրավորում ենք նրանցից որևէ մեկին, մենք վիրավորում ենք մեր Երկնային Հորը» (in Conference Report, Apr. 1991, 97; կամ *Ensign*, May 1991, 74):

«Հարց. «Ի՞նչ եք անում դուք կրճատելու համար [երեխաների հանդեպ բռնությունը]»:

«Պատասխան. «Մենք անում ենք այն ամենը, ինչ գիտենք, այն կրճատելու համար: Մենք սովորեցնում ենք մեր ժողովրդին: Մենք խոսում ենք այդ մասին: Մենք հաստատել ենք հրահանգների դասընթաց մեր եպիսկոպոսների և ողջ ազգաբնակչության համար: Անցած ողջ տարին մենք իրականացրեցինք մի կրթական ծրագիր: Մենք հիմնել ենք օգնության գիծ, որտեղ նրանք կկարողանան ստանալ մասնագիտացված խորհրդատվություն և օգնություն լուծելու համար այս խնդիրները: Մենք թողարկել ենք մի ամսագիր, որը վերաբերում է երեխաների, կնոջ/ամուսնու, մեծահասակների հանդեպ բռնությանը, և արծարծում է բռնության ողջ խնդրի հետ կապված հարցերը: Մենք մտահոգված ենք այդ առթիվ: Ես խորապես մտահոգված եմ զոհերի համար: Սիրտս ցավում է նրանց համար: Մենք ցանկանում ենք անել հնարավորինս ամեն ինչ թեթևացնելու համար ցավը, կանխելու այս չարիքն ու ամբարշտությունը…. Ես չգիտեմ որևէ այլ կազմակերպություն այս աշխարհում, որ ձեռք առած լինի ավելի սպառիչ միջոցներ, ավելի շատ ջանք գործադրած լինի, ավելին անի այս խնդրի լուծման համար, աշխատի այդ ուղղությամբ, անի ինչ-որ բան իրավիճակը շտկելու համար: Մենք հասկանում ենք դրա ահավոր բնույթը և ուզում ենք օգնել մեր ժողովրդին, օգնության ձեռք մեկնել և աջակցել նրանց» (in Conference Report, Oct. 1996, 72; կամ *Ensign*, Nov. 1996, 51):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Բռնության ընտանեկան ձևերը և ծնողական իշխանության անարդար գործադրումը ակնհայտորեն խորապես ազդում են մեզ վրա: Բայց սրանք չպետք է գերության մատնեն ապագա սերունդներին: Ծնողական արդար ազդեցության բացակայությունը չի նշանակում երեխաների ինքնաբերաբար և հավետ կործանում: Հնարավոր է դադարեցնել կամ ազատվել նման վարվելակերպից: Աստված կարող է բժշկել մեզ, եթե մենք ենթարկվենք նրան: Սա չպետք է նվազեցնի դժվարության աստիճանը, որը նախատեսված է ցանկալի փոփոխություն առաջացնելու համար, բայց հենց այդ դժվար ժամանակ է անհրաժեշտ գործադրել հավատք և համբերություն » (*Not My Will, But Thine,* 62–63):

Երեց Հ. Բըրք Պիտերսոն

«*Զորավոր մարդը նա է, ով նախագահում է—*

Համոզմամբ: Նա չի օգտագործում նվաստացնող խոսքեր կամ վարվելաձև, հմտորեն չի բանեցնում ուրիշներին, ամենի մեջ հենվում է լավագույնի վրա և հարգում արժանապատվությունը և ողջ մարդկության՝ տղամարդկանց, կանանց, տղաների և աղջիկների ազատ կամքը:

Երկայնամտությամբ: Նա անհրաժեշտության պահին սպասում է և լսում ամենախոնարհ կամ ամենաերիտասարդ

անձին: Նա համբերատար է ուրիշների գաղափարների հանդեպ և խուսափում է արագ դատողություններից և բարկությունից:

Մեղմությամբ: Նա ավելի հաճախ ժպիտ է օգտագործում, քան խոժոռ դեմք: Նա խիստ չէ կամ բարձրախոս կամ երկյուղալի, նա չի դաստիարակում զայրացած ժամանակ:

Հեզությամբ: Նա գոռոզ չէ, չի իշխում զրույցներում և կամենում է ենթարկել իր կամքը Աստծո կամքին:

Անկեղծ սիրով: Նա չի ձևացնում: Նա անմիջական է, անվերապահորեն անկեղծ սեր է ցուցաբերում, նույնիսկ, երբ դիմացինն անհրապույր անձնավորություն է:

Բարությամբ: Նա գործի է դնում քաղաքավարություն և լրջամտություն, ինչպես փոքր բաներում, այնպես էլ ավելի ակնհայտ բաներում:

Մաքուր գիտելիքով: Նա խուսափում է կիսատ ճշմարտություններից և ձգտում է մտնել ուրիշների դրության մեջ:

Առանց կեղծավորության: Նա գործածում է այն սկզբունքները, որոնք ուսուցանում է: Նա գիտի, որ միշտ չէ որ ինքը ճիշտ է և հոժար է ընդունել իր սխալները և ասել «Ներեցեք»:

Առանց նենգության: Նա խարդախ չէ կամ խորամանկ ուրիշների հետ իր հարաբերություններում, այլ ազնիվ է և բնական իր զգացմունքները դրսևորելիս….

Յուրաքանչյուր ամուսին, յուրաքանչյուր հայր պետք է ինքն իրեն տա որոշ հարցեր՝ տեսնելու, թե ինքն արդյոք անարդար իշխանության սահմանագծի վրա է, թե ոչ.

1. Արդյոք ես ընտանիքի անդամներին ավելի շատ քննադատո՞ւմ եմ, քան գովում:

2. Արդյո՞ք ես պնդում եմ, որ ընտանիքի անդամները հնազանդվեն ինձ, որովհետև ես եմ հայրը կամ ամուսինը և կրում եմ քահանայություն:

3.Արդյո՞ք ավելի շատ երջանկություն եմ փնտրում աշխատանքի մեջ կամ իմ տնից բացի որևէ այլ տեղ:

4. Իմ երեխաներն արդյո՞ք դժկամությամբ են խոսում ինձ հետ իրենց զգացմունքների և մտահոգությունների մասին:

5. Արդյո՞ք փորձում եմ երաշխավորել իմ իշխանական դիրքը ֆիզիկական կարգավարժման կամ պատժի միջոցով:

6.Արդյո՞ք սահմանում եմ բազմաթիվ կանոններ և ստիպում ենթարկվել դրանց՝ ընտանիքի անդամներին վերահսկելու համար:

7. Արդյո՞ք ընտանիքի անդամները վախենում են ինձանից:

8. Արդյո՞ք վախենում եմ այն մտքից, որ պետք է կիսվեմ ընտանիքի անդամների հետ ընտանիքում որոշումներ ընդունելու իշխանությամբ և պատասխանատվությամբ:

9. Արդյո՞ք կինս լիովին կախված է ինձանից և անկարող է ինքնուրույն որոշումներ ընդունել:

10. Արդյոք կինս բողոքո՞ւմ է, որ նա բավականաչափ փող չունի տան հոգսերը հոգալու համար, որովհետև ես եմ վերահսկում ամբողջ փողը:

11. Արդյոք պնդո՞ւմ եմ, որ ես եմ յուրաքանչյուր ընտանիքի անդամի համար ոգեշնչում ստանալու հիմնական աղբյուրը, և ոչ թե սովորեցնում եմ յուրաքանչյուր երեխայի լսել Հոգուն:

12. Արդյոք հաճա՞խ եմ բարկանում և քննադատում ընտանիքի անդամներին:

Եթե այս հարցերից որևէ մեկի պատասխանը այո է, ապա մենք պետք է վերանայենք ընտանիքի անդամների հետ մեր հարաբերությունը: Նա ով կրում է քահանայություն, լավագույն ստուգարքը, թե արդյոք փորձում է վերահսկել ընտանիքի անդամների կյանքը, կարող է անցկացնել, քննելով իր հարաբերությունը Տիրոջ հետ: Եթե մարդը զգում է Սուրբ Հոգու ազդեցության նվազեցում և հեռացում (որը դրսևորվում է հակառակությամբ, անմիաբանությամբ կամ ապստամբությամբ), նա կարող է իմանալ, որ գործի է դնում անարդար իշխանություն» (“Unrighteous Dominion,” *Ensign,* July 1989, 10–11):

Քույր Էյլին Հ. Քլայդ

«Եթե գթությունը միշտ չէ արագ հասնում մեր հասկացողությանը, այն երբեմն կարող է արագ հասնել մեր թյուրըմբռնմանը: Գթություն չէ կամ բարություն դիմանալ որևէ ձևի բռնության կամ անարդարության, որը կարող է հասցվել մեզ ուրիշների կողմից: Աստծո պատվիրանը, որ եթե մենք սիրում ենք նրան, մենք պետք է հարգենք ինքներս մեզ, հուշում է, որ մենք չպետք է հանդուրժենք ուրիշների կողմից անհարգալից վերաբերմունք: Գթություն չէ թույլ տալ ուրիշ մեկին կրկին և կրկին մերժել մեր աստվածային էությունը և ազատ կամքը: Գթություն չէ խոնարհվել հուսահատությամբ և անօգնական: Այդպիսի տառապանքին պետք է վերջ դնել, իսկ դա շատ դժվար է մենակ անել: Կան քահանայության առաջնորդներ և այլ հոգատար ծառաներ, ովքեր օգնության կհասնեն և ուժ կտան, երբ *իմանան,* որ դրա կարիքը կա: Մենք պետք է կամենանք թույլ տալ ուրիշներին օգնել մեզ» (in Conference Report, Oct. 1991, 107; կամ *Ensign,* Nov. 1991, 77):

ԱՆԱՐԳԱՆՔԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՍՊԻՆԵՐԻ ԲԺՇԿՈՒՄ

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, Apr. 1992, 43–46; կամ Ensign, May 1992, 31–33

Անարգանքի ողբերգական սպիները

Ես խոսում եմ սրտիս խորքից ձեզանից յուրաքանչյուրի հետ, ովքեր սպիներ են ստացել անարգանքի տգեղ մեղքից, լինեք Եկեղեցու անդամ, թե ոչ անդամ: Ես կնախընտրեի մեկուսի մի տեղ քննարկել այս նուրբ հարցը և խնդրել, որ Սուրբ Հոգին օգներ մեզ երկուստեք ստանալ մխիթարություն Տիրոջից այն դաժանության դեմ, որը սպիներ է թողել ձեր կյանքի վրա:

Մինչև չբժշկվեք Տիրոջ կողմից, մտավոր, ֆիզիկական կամ սեռական անարգանքը կարող է ձեզ վրա լուրջ, երկարատև հետևանքներ թողնել: Որպես զոհ դուք զգացել եք դրանցից մի քանիսը: Դրանք ընդգրկում են՝ վախ, ընկճվածություն, մեղավորության զգացում, ատելություն սեփական անձի հանդեպ, արժանապատվության խորտակում և օտարացում նորմալ մարդկային հարաբերություններից: Շարունակական անարգանքից հասցրած վիրավորանքը ընդվզման ուժեղ զգացմունքներ, զայրույթ և ատելություն է առաջացնում: Այդ զգացմունքները հաճախ կենտրոնանում են ձեր, ուրիշների, կյանքի և նույնիսկ Երկնային Հոր դեմ: Նույնով պատասխանելու հուսահատված ջանքերը կարող են հանգեցնել թմրանյութերից կախվածության, անբարոյականության, տնից հեռանալուն և, ողբերգական ծայրահեղ դեպքերում՝ ինքնասպանության: Չբուժվելու դեպքում այդ զգացմունքները առաջ են բերում խորտակված կյանքեր, կործանված ամուսնություններ և, նույնիսկ, զոհը վերածվում է անարգողի: Սոսկալի հետևանքներից մեկը ուրիշների հանդեպ խորացող վստահության բացակայությունն է, որը դառնում է արգելք ապաքինման համար:

Սպիները չպետք է լինեն ընդմիշտ

Որպեսզի ձեզ օգնեն, դուք պետք է հասկանաք որոշ բաներ հավերժական օրենքի մասին: Ձեր անարգանքն առաջանում է ձեր ազատության վրա մեկ ուրիշի անարդար հարձակումից: Քանի որ Երկնային Հոր բոլոր զավակները վայելում են իրենց կամքի ազատությունը, կարող են լինել ոմանք, ովքեր ինքնակամ որոշում են խախտել պատվիրանները և վնասել ձեզ: Այդպիսի գործողությունները ժամանակավորապես սահմանափակում են ձեր ազատությունը: Արդարությամբ փոխհատուցելու համար, Տերն ուղի է պատրաստել ձեզ համար՝ հաղթահարելու ձեր կամքի դեմ ուրիշների կատարածի կործանարար հետևանքները: Այդ մխիթարությունը գալիս է քահանայության աջակցությամբ հավերժական ճշմարտություններ կիրառելու արդյունքում:

Իմացեք, որ ուրիշների ամբարիշտ ընտրությունները չեն կարող լիովին կործանել ձեր ազատ կամքը, մինչև ինքներդ թույլ չտաք դա: Նրանց արարքները կարող են պատճառել ցավ, տառապանք, նույնիսկ ֆիզիկական վնաս, բայց նրանք չեն կարող կործանել ձեր հավերժական հնարավորությունները երկրի վրա այս կարճ, բայց վճռորոշ կյանքում: Դուք պետք է հասկանաք, որ *ազատ եք հաղթահարելու բռնության ցավալի հետևանքները:* Ձեր կյանքում ձեր վերաբերմունքը կարող է վերահսկել փոփոխությունն՝ի բարին: Դա թույլ է տալիս ձեզ ունենալ այն օգնությունը, որը Տերը նախատեսել է, որ դուք ստանաք: Ոչ ոք չի կարող վերցնել ձեր վերջնական հնարավորությունները, երբ հասկանաք և ապրեք հավերժական օրենքով: Ձեր Երկնային Հոր օրենքները և Տիրոջ քավությունը հնարավոր են դարձրել, որ դուք չկողոպտվեք այն հնարավորություններից, որոնք տրվում են Աստծո զավակներին:

Դուք գուցե զգաք սպառնալիք մեկի կողմից, որը ձեզ վերահսկելու իշխանություն ունի: Դուք կարող է ձեզ զգաք թակարդի մեջ, որից ազատում չկա: Խնդրում ենք հավատացեք, որ ձեր Երկնային Հայրը չի ուզում, որ դուք գերության մեջ մնաք անարդար ազդեցության հետևանքով, ճնշման սպառնալիքների կամ ձեզ անարգող ընտանիքի անդամի հանդեպ հակահարված ձեռնարկելու վախի պատճառով: Վստահեք, որ Տերը կառաջնորդի ձեզ դեպի մի լուծում: Խնդրեք հավատքով, առանց կասկածի նշույլի (տես Հակոբոս Ա.6, Ենովս 1.15, Մորոնի 7.26, ՎԵՈՒ 8.10, 18.18):

Ես հանդիսավոր վկայում եմ, որ երբ մեկ ուրիշի բռնարարքները, այլասերումը կամ արյունապղծությունը ձեզ սոսկալի ցավ են պատճառում, ձեր կամքին հակառակ, դուք պատասխանատու չեք և դուք չպետք է հանցավոր զգաք: Գուցե անարգանքի հետևանքով սպիներ առաջանան, բայց այդ սպիները չպետք է ընդմիշտ մնան: Հավերժական ծրագրում, Տիրոջ ժամանակացույցում, այդ վնասվածքները կարող են ուղղվել, երբ դուք անեք ձեր մասը: Ահա, թե ինչ կարող եք անել *այժմ*:

Օգնություն փնտրեք

Եթե դուք այժմ կամ անցյալում անարգանքի եք ենթարկվել, անհապաղ օգնություն փնտրեք: Հավանական է, որ չեք վստահում ուրիշներին և զգում եք, որ չեք կարող վստահելի օգնություն գտնել: Սկսեք ձեր Երկնային Հորից և նրա սիրելի Որդուց՝ ձեր Փրկչից: Ձգտեք հասկանալ

նրանց պատվիրանները և հետևել նրանց: Նրանք կառաջնորդեն ձեզ դեպի այն մարդիկ, ովքեր կզորացնեն և կքաջալերեն ձեզ: Ձեզ համար մատչելի կլինի որևէ քահանայության առաջնորդ, սովորաբար եպիսկոպոս, երբեմն էլ ցցի նախագահության որևէ անդամ: Նա կարող է կառուցել կամուրջ դեպի ավելի մեծ հասկացողություն և ապաքինում: Ջոզեֆ Սմիթը ուսուցանել է. «Մարդը ոչինչ չի կարող անել ինքնուրույն, մինչև Աստված չուղղորդի նրան ճիշտ ճանապարհով, իսկ Քահանայությունը այդ նպատակին է ծառայում» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [Salt Lake City: Deseret Book Co., 1938], p. 364):

Վստահելով խոսեք ձեր եպիսկոպոսի հետ: Նրա կոչումը թույլ է տալիս գործել որպես գործիք Տիրոջ ձեռքում՝ հոգուտ ձեզ: Նա կարող է տալ վարդապետական հիմք, առաջնորդելով ձեզ դեպի ապաքինում: Հավերժական օրենքի ընբռնումը և կիրառումը կապահովի այն բժշկությունը, որը պահանջում եք դուք: Նա իրավունք ունի ոգեշնչում ստանալ Տիրոջից ձեզ համար: Նա կարող է օգտագործել քահանայությունը՝ օրհնելու ձեզ:

Ձեր եպիսկոպոսը կարող է օգնել ձեզ մատնացույց անել վստահելի ընկերների՝ ձեզ աջակցելու համար: Նա կօգնի ձեզ վերստին ձեռք բերել ինքնավստահություն և արժանապատվություն վերականգնման գործընթացը սկսելու համար: Եթե տեղի է ունեցել սոսկալի բռնություն, նա կարող է օգնել ձեզ, առաջարկելով պատշաճ պաշտպանություն և մասնագիտական բուժում ըստ Փրկչի ուսմունքների:

Ապաքինման սկզբունքները

Սրանք ապաքինման մի քանի սկզբունքներ են, որոնք դուք կսկսեք լիովին հասկանալ.

Ընդունեք, որ դուք Երկնային Հոր սիրելի զավակն եք: Նա ձեզ սիրում է կատարելապես և կարող է օգնել ձեզ այնպես, ինչպես չի կարող ոչ մի երկրային ծնող, կողակից կամ նվիրված ընկեր: Նրա Որդին տվեց իր կյանքը, որպեսզի նրա հանդեպ հավատքով և նրա ուսմունքների հանդեպ հնազանդությամբ դուք կարողանաք առողջ լինել: Նա է գերագույն բժշկողը:

Ձեռք բերեք վստահություն ձեր ավագ եղբայր՝ Հիսուս Քրիստոսի սիրո և կարեկցանքի մեջ՝ խորհելով սուրբ գրությունների մասին: Ինչպես Նեփիացիներին, նա ասում է ձեզ. «Ես կարեկցանք ունեմ ձեզ վրա. Իմ սիրտը լցված է ողորմությամբ…. Ես տեսնում եմ, որ ձեր հավատքը բավարար է, որ ես բժշկեմ ձեզ» (3 Նեփի 17.7–8):

Ապաքինումը լավագույնս սկսվում է ձեր անկեղծ աղոթքով, երբ օգնություն եք խնդրում ձեր Երկնային Հորից: Ձեր ազատ կամքի այդ օգտագործումը թույլ է տալիս աստվածային միջամտություն: Երբ դուք թույլատրում եք դա, Փրկչի սերը փափկացնում է ձեր սիրտը և խզել բռնության ցիկլը, որը կարող է զոհին դարձնել ագրեսոր: Ձախորդությունը, նույնիսկ, երբ այն կամովին առաջանում է ուրիշների կողմից անզուսպ ցանկության պատճառով, կարող է լինել աճի աղբյուր, եթե դիտենք այն հավերժական սկզբունքի տեսանկյունից (տես ՎԿՈ 122.7):

Զոհը պետք է անի այն ամենը, ինչ կարող է, բռնությունը դադարեցնելու համար: Շատ հաճախ զոհը անմեղ է, քանի որ վախից կամ վիրավորողի ուժի կամ հեղինակության ազդեցության տակ անընդունակ է դառնում գործելու: Սակայն ժամանակի ինչ որ մի պահի, Տերը, հնարավոր է, հուշի զոհին ինչ որ չափով պատասխանատվություն կրել անարգանքի համար: Ձեր քահանայության առաջնորդը կօգնի գնահատել ձեր պատասխանատվությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկվեն: Այլապես մեղավորության սերմերը կմնան և կծլարձակեն, տալով դառը պտուղներ: Մինչդեռ անկախ նրանից, թե ինչ աստիճանի պատախանատվություն է, սկսած բացարձակ բացակայությունից մինչև համաձայնությունը, Հիսուս Քրիստոսի քավության բժշկող ուժը կարող է ապահովել կատարյալ սպեղանին (տես ՎԿՈ 138.1–4): Ներում կարող են ստանալ անարգանքի մեջ ներգրավված բոլոր կողմերը (տես Հավատո Հանգանակ 1.3): Ապա գալիս է ինքնահարգանքի, ինքնարժեքի վերականգնումը և կյանքի նորացումը:

Որպես զոհ ձեր ագրեսորի դեմ ուղղված վրեժի կամ փոխհատուցման վրա ջանքեր մի վատնեք: Կենտրոնացեք ձեր պատասխանատվության վրա, որպեսզի այն, ինչ ի զորու եք, ուղղեք: Վիրավորողին տույժի ենթարկելը թողեք քաղաքացիական և Եկեղեցու իշխանավորներին: Ինչ էլ որ նրանք անեն, ի վերջո հանցավորը դեմ հանդիման կկանգնի Կատարյալ Դատավորի առջև: Վերջում չապաշխարող անարգողը կպատժվի արդար Աստծո կողմից: Անպարկեշտություն և վնասակար նյութեր մատակարարողները, ովքեր գիտակցաբար գայթակղում են ուրիշներին՝ բռնարարքներ և անբարոյականություն գործում, և նրանք, ովքեր խթանում են ամենաթողության և անբարոյականության մթնոլորտ, կպատժվեն: Գիշատիչները, ովքեր զոհ են դարձնում անմեղներին և արդարացնում իրենց իսկ փչացած կյանքը՝ գայթակղելով ուրիշներին որդեգրել իրենց անբարոյական ուղիները, հաշվետու կլինեն: Այդպիսիների դեմ Վարդապետը նախազգուշացրել է.

«Եվ ով որ գայթակղեցնէ այս փոքրերից մեկին, որ հավատում են ինձ, ավելի լավ է նորան, որ էշի ջաղացի քար նորա վզիցը կախուի, և նա ծովի անդունդում ընկղմուի» (Մատթեոս ԺԸ.6):

Գուցե անարգանքի հետևանքով սպիներ առաջանան, բայց այդ սպիները չպետք է ընդմիշտ մնան:

Հասկացեք, որ ապաքինման համար կարող է բավական ժամանակ պահանջվել: Ապաքինումն ընդհանրապես գալիս է քայլ առ քայլ: Այն արագանում է, երբ երախտագիտություն է արտահայտվում Տիրոջ հանդեպ յուրաքանչյուր նկատելի բարելավման համար:

Ներումն օգնում է ապաքինվել

Մեծ վիրահատությունից հետո երկարատև ապաքինման ընթացքում, հիվանդը համբերությամբ ակնկալում է լիակատար առողջացում, վստահելով ուրիշների խնամքին: Նա միշտ չէ հասկանում նշանակված բուժման կարևորությունը, բայց նրա հնազանդությունը արագացնում է առողջացումը: Նույնը վերաբերում է ձեզ, երբ մաքառում եք, բուժելով անարգանքի սպիները: Օրինակ, ներումը կարող է դժվար հասկանալի լինել, նույնիսկ, էլ ավելի դժվար այն շնորհելը: *Սկսեք՝ զսպելով դատապարտելը*: Դուք չգիտեք, թե անարգողը ինչ կարող է տարած լինել որպես զոհ, երբ անմեղ էր: Դեպի ապաշխարություն ճանապարհը պետք է բաց պահվի նրանց համար: Թողեք ագրեսորին տույժի ենթարկելը ուրիշներին: Երբ ձեր սեփական ցավի թեթևացում զգաք, լիակատար ներումն ավելի հեշտորեն կգա:

Դուք չեք կարող ջնջել այն, ինչ արվել է, բայց դուք կարող եք ներել (տես ՎԱՈՒ 64.10): Ներումը բժշկում է սոսկալի, ողբերգական վերքեր, քանի որ այն թույլ է տալիս Աստծո սերը մաքրի ձեր սիրտն ու միտքը ատելության թույնից: Այն մաքրում է ձեր խիղճը վրեժի ցանկությունից: Այն տեղ է պատրաստում մաքրագործման, բժշկման, Տիրոջ սիրո վերականգնման համար:

Վարդապետը խորհուրդ է տվել. «Սիրեք ձեր թշնամիներին, օրհնեք նրանց, ովքեր անիծում են ձեզ, բարին արեք նրանց, ովքեր ատում են ձեզ և աղոթեք նրանց համար, *ովքեր անխղճորեն շահագործում և հալածում են ձեզ*» (3 Նեփի 12.44, շեղագրումն ավելացված է):

Դառնությունը և ատելությունը վնասակար են: Դրանք կործանարար ազդեցություն են թողնում: Դրանք հետաձգում են բաղձալի սփոփանքն ու ապաքինումը: Նպատակահարմարությունն ու ինքնախղճահարությունը կարող են զոհին դարձնել անարգող: Թողեք որ Աստված լինի դատավոր, դուք չեք կարող դա անել այնքան լավ, ինչպես Նա կարող է:

Անօգուտ է խորհուրդ տալ պարզապես մոռանալն անարգանքը: Դուք պետք է հասկանաք դեպի ապաքինում տանող սկզբունքները: Ես կրկնում եմ, շատ հաճախ այն գալիս է քահանայության առաջնորդի հասկացողության միջոցով, որն ունի ոգեշնչում և քահանայության զորություն՝ ձեզ օրհնելու համար:

Նախազգուշացումներ վնասի վերականգման ժամանակ

Ես զգուշացնում եմ ձեզ չմասնակցել երկու անպատշաճ թերապևտիկ ընթացակարգերի, որոնք կարող են օգուտի փոխարեն ձեզ ավելի շատ վնաս պատճառել: Դրանք են՝ (1) ձեր անցած փորձառության յուրաքանչյուր փոքրիկ մանրամասների ավելորդ հետաքննությունը, հատկապես, երբ դա ներառում է խորը, մանրամասն քննարկումներ խմբերով, և (2) ձեր կյանքի ամեն դժվարության համար անարգողին մեղադրելը:

Չնայած որոշ հետազոտություն շատ կարևոր է առողջացման գործընթացի համար, անցած դեպքերի մանրամասների գրեթե հիվանդագին հետաքննությունը, որոնք երկար ժամանակ և ողորմածաբար մոռացվել են, կարող է կործանարար լինել: Կարիք չկա փորփրել ապաքինվող վերքերը՝ դրանք բացելով և ստիպելով, որ թարախակալվեն: Տերը և նրա ուսմունքները կարող են օգնել ձեզ առանց կործանելու ձեր ինքնահարգանքը:

Կա մեկ այլ վտանգ: Մանրամասն քննող հարցերը, որոնք հետաքննում են ձեր անցյալը, կարող են չկանխամտածված մտքեր առաջացնել, որոնք ավելի շատ երևակայության կամ ֆանտազիայի արդյունք են, քան իրականության: Դրանք կարող են տանել դեպի մեկ ուրիշ մարդու դատապարտության այն գործողությունների համար, որոնք չեն գործվել: Ես գիտեմ դեպքեր, հավանաբար ոչ մեծ թվով, որտեղ այսպիսի բուժումը առաջացրել է մեծ անարդարություն անմեղի հանդեպ՝ չկանխամտածված մեղադրանքներ առաջադրելով, որոնք հետագայում պարզվել են, որ կեղծ էին: Հիշողությունը, հատկապես մանկության հետ կապված մեծահասակների հիշողությունը, ենթակա է սխալների: Հիշեք կեղծ մեղադրանքը ևս մեղք է:

Ավելի պարզ ասած, եթե ինչ որ մեկը կանխամտածված մի դույլ կեղտ լցներ ձեր գորգին, մի՞թե դուք կհրավիրեիք ձեր հարևաններին որոշելու համար այդ տգեղ հետքի առաջացրած առանձին բաղադիչները: Իհարկե ոչ: Մասնագետի օգնությամբ դուք առանձին կարող եք առանց ուրիշների վերականգնել դրա մաքրությունը:

Նմանապես անարգանքից առաջացած վնասվածքի վերականգնումը պետք է արվի առանձին, գաղտնի, քահանայության վստահելի առաջնորդի հետ, իսկ և, անհրաժեշտության դեպքում, նրա առաջարկած փորձառու մասնագետի հետ: Պետք է բավականաչափ քննարկում լինի անարգանքի ընդհանուր բնույթի վերաբերյալ, որը կօգնի ձեզ համապատասխան խորհուրդ ստանալ և կանխարգելել ագրեսորին նոր բռնարարքներ գործելուց: Այդ ժամանակ Տիրոջ օգնությամբ, դուք կարող եք թաղել անցյալը:

Ես խոնարհաբար վկայում եմ, որ այն ինչ ասացի ձեզ, ճշմարիտ է: Այն հիմնված է հավերժական սկզբունքների վրա, որոնք ես տեսել եմ, ինչպես է Տերն օգտագործել՝ լիարժեք կյանք տալով նրանց, ովքեր սպիապատվել են ամբարիշտ անարգանքի հետևանքով:

Փրկչի ապաքինող զորությունը

Եթե զգում եք, որ կա հույսի միայն մեկ բարակ թել, հավատացեք ինձ, դա թել չէ: Այն կարող է լինել Տիրոջ հետ կապող ամուր հանգույց, որը կյանքի ապահով պաշտպանություն է ստեղծում ձեր շուրջը: Նա կբժշկի ձեզ, երբ դուք դադարեք վախենալ և դնեք ձեր վստահությունը նրա վրա՝ ձգտելով ապրել նրա ուսմունքներով:

Խնդրում ենք շատ մի տառապեք: Այժմ ևեթ խնդրեք Տիրոջն օգնել ձեզ (տես Մորմոն 9.27, Մորոնի 7.26, 33): Այժմ ևեթ որոշեք խոսել ձեր եպիսկոպոսի հետ: Բռնության սպիներից խավարած ապակիների միջով մի նայեք այն ամենի վրա, ինչ կրում եք կյանքում: Այնքան շատ բաներ կան կյանքում, որոնք գեղեցիկ են: Բացեք ձեր սրտի պատուհանը և ներս թողեք Փրկչի սերը: Եվ երբ անցյալի անարգանքի հետ կապված տգեղ մտքերը ետ գան, հիշեք նրա սերը և նրա բժշկող զորությունը: Ձեր դեպրեսիան կփոխվի խաղաղության և համոզվածության: Դուք կփակեք մի տգեղ հատոր և կբացեք երջանկության հատորներ:

Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՀԱՄԱԿԵՐՊՈՒՄ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Եկել է սրտեր հասկանալու, ինքնագնահատման ու առողջ բանականության, կշռադատության ու ծրագրավորման ժամը:

—Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Տարբեր միջավայրերից եկած երկու մարդիկ ծիսակատարությունը կատարելուց հետո, շուտով հասկանում են, որ կանգնած են ճշմարտությանը դեմհանդիման: Այլևս չկա ֆանտազիաների կամ հավատք նեշնչելու կյանք, մենք պետք է իջնենք ամպերից և մեր ոտքն ամուր դնենք գետնին: Պետք է պատասխանատվություններ ստանձնել և նոր պարտականություններ ընդունել: Որոշ անձնական ազատություններից պետք է հրաժարվել և պետք է կատարվեն բազմաթիվ, անեսասեր համակերպումներ:

Ամուսնությունից հետո մարդ սկսում է շատ շուտով հասկանալ, որ զուգընկերը նախկինում չնկատված կամ չհայտնաբերված թուլություններ ունի: Արժանիքները, որոնք անընդհատ չափազանցվում էին սիրահետման ընթացքում, այժմ հարաբերականորեն փոքրանում են և թուլությունները, որոնք այնքան փոքր և անկարևոր էին թվում, այժմ աճում են և մեծածավալ չափերի հասնում: Եկել է սրտեր հասկանալու, ինքնագնահատման ու առողջ բանականության, կշռադատության ու ծրագրավորման ժամը: Տարիների սովորույթներն այժմ ի հայտ են գալիս, զուգընկերը կարող է ժլատ կամ շռայլ, ծույլ կամ աշխատասեր, բարեպաշտ կամ ոչ կրոնասեր լինել, նա կարող է լինել բարի և համագործակցող կամ ջղային և բարկացկոտ, պահանջկոտ կամ տվող, հպարտ կամ ամաչկոտ: Հարազատների խնդիրն է հայտնվում կենտրոնում և նրանց հանդեպ կողակցի վերաբերմունքը կրկին չափազանցվում է» (“Oneness in Marriage,” *Ensign*, Mar. 1977, 3):

Երեց Հարոլդ Բ. Լի

Եթե երիտասարդները «որոշեն իրենց ամուսնության սկզբից ևեթ, որ այդ ժամանակից ի վեր նրանք կորոշեն և կանեն այն ամենը, ինչ ի զորու են՝ միմյանց գոհացնելու այն բաներում, որոնք ճիշտ են, նույնիսկ իրենց իսկ հաճույքների, բնազդների, իրենց իսկ ցանկությունների զոհաբերության գնով, ամուսնական կյանքում համակերպվելու խնդիրը ինքնստինքյան կլուծվի և նրանց տունն իսկապես կլինի երջանիկ տուն: Մեծ սերը կառուցվում է մեծ զոհաբերության վրա, և այն տանը, որտեղ միմյանց բարօրության համար զոհաբերության սկզբունքն է ամեն օր կիրառվում, այդ տանը մեծ սեր է տիրում» (in Conference Report, Apr. 1947, 49):

Համակերպում հարազատների հետ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Զույգերը ճիշտ կանեն, եթե անմիջապես գտնեն իրենց սեփական տունը, առանձին և հեռու երկու կողմերի հարազատներից: Տունը կարող է լինել շատ համեստ և հասարակ, բայց միևնույն է, դա անկախ բնակատեղ է: Ձեր ամուսնական կյանքը պետք է դառնա անկախ կնոջ և ամուսնու ծնողներից: Դուք սիրում եք նրանց ավելի, քան երբևէ, դուք բարձր եք գնահատում նրանց խորհուրդը, դուք շնորհակալ եք նրանց մտերմության համար, բայց դուք ապրում եք ձեր կյանքով, կառավարվելով ձեր որոշումներով, ձեր սեփական աղոթքով լի խորհրդածություններով, այն բանից հետո, երբ ստացել եք խորհուրդ նրանցից, ովքեր պետք է տան այն: Հարել չի նշանակում ուղղակի զբաղեցնել նույն տունը, այն նշանակում է սերտորեն միանալ, կառչել միմյանց.

«Ուստի օրինական է, որ… նրանք երկուսով կլինեն մեկ մարմին և այս բոլորը, որպեսզի երկիրը կատարի իր ստեղծման նպատակը,

Եվ որպեսզի այն լրացնի մարդկանց քանակը, աշխարհի արարումից առաջ նրանց ստեղծման համաձայն» (ՎԿՈՒ 49.16–17)» (“Oneness in Marriage,” *Ensign*, Mar. 1977, 5):

Ֆինանսական համակերպումներ

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթ

«Մենք զբաղված ենք ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր աշխատանքով: Դուք պետք է միշտ հիշեք, որ աշխարհիկն ու հոգևորը միաձուլված են: Դրանք առանձնացված չեն և չեն կարող իրականացվել առանց մեկը մյուսի, քանի դեռ մենք այստեղ ենք՝ մահկանացու կյանքում» (in Conference Report, Oct. 1900, 46):

Համակերպում ինտիմ փոխհարաբերություններում

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթ

«Երկու սեռերի օրինական համակեցությունը կարգված է Աստծո կողմից, ոչ միայն որպես միակ միջոց մարդկության

հարատևման համար, այլ մարդկային բնության ավելի բարձր հատկանիշներ և ավելի ազնիվ գծեր զարգացնելու համար, որը միայն տղամարդու և կնոջ սիրով ոգեշնչված ընկերակցությունը կարող է ապահովել» (“Unchastity the Dominant Evil of the Age,” *Improvement Era*, June 1917, 739):

Թեմային առնչվող սուրբ գրություններ

Ամուսնությունը, ինչպես մյուս բոլոր հարաբերությունները, պահանջում է համակերպում: Հմտություններն ու վարվելաձևերը, որոնք կարող են օգնել համակերպվել, ներառում են սիրալիր հարաբերություն, հաղորդակցություն, ընդհանուր նպատակներ, զոհաբերություն, ապաշխարություն, ներում, հաշտեցում և վստահություն:

Մտահոգության շրջանակները	Համակերպման անհրաժեշտության պատճառները	Խորհուրդ սուրբ գրություններից
Ֆինանսներ	Անպատշաճ կառավարում, եսասիրություն, պարտք, արժեզրկում, ծուլություն, սեր փողի հանդեպ, ագահություն, նախանձ, ֆինանսական նպատակների վերաբերյալ հաղորդակցման ձախողում	Մատթեոս ԺԶ.26 ՎԵՈՒ 75.28–29 ՎԵՈՒ 104.78
Իրականություն և նոր պարտականություններ	Ֆիզիկական առանձնացում համալսարանի, աշխատանքի և եկեղեցու պատճառով Հոգեբանական առանձնացում դեպի իրականություն վերադարձի պատճառով Ժամանակի հանդեպ պահանջներ	Եփեսացիս Ե.25 ՎԵՈՒ 42.22
Սեռական համակերպում, կամ ինտիմ հարաբերություն	Նոր փորձառություն, անտեղյակություն, եսասիրություն, հեշտասիրություն, ինքնատիրապետման պակաս, այլասերվածություն, հոիություն	Ա Կորնթացիս Է.3–5 Եբրայեցիս ԺԳ.4
Ազգականներ	Գերկախվածություն, խիստ սերտ կապ ծնողների հետ, մրցակցություն ժամանակի համար, տարբեր սովորույթներ և կենսաոճեր, տատիկների և պապիկների պահանջներ	Մարկոս Ժ.6–9 3 Նեփի ԺԳ.24
Երեխաներ	Երեխաներ չունենալու ցանկություն, երեխաների անտեսում, երեխաների պահանջներ, ծնողի դերին համակերպում	Սաղմոս ՃԻԷ.3–5 *Եսայիա ԾԴ.13* *ՎԵՈՒ 68.25–28* Մովսես 2.27–28

ՔԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Խաղաղություն փնտրելը մարդկային հոգու մեծագույն որոնումներից մեկն է:

—Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

«ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԲԱՆԵՐԸ»

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, Oct. 1996, 112–16; կամ Ensign, *Nov. 1996, 82–84*

Հիսուսն է տալիս խաղաղություն, ուժ և հույս

Խաղաղություն և ավետիս, ավետիս և խաղաղություն: Սրանք մեծագույն օրհնություններն են, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը բերում է անհանգիստ աշխարհում ապրող անհանգիստ մարդկանց, տալիս է լուծումներ անձնական մաքառումներին և մարդկային մեղսավորությանը, ուժի աղբյուր է հանդիսանում հոգնածության և իսկական հուսահատության օրերին: Ողջ այս գերագույն համաժողովը և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, որը հրավիրում է այն, հայտարարում է, որ Աստծո Միածին Որդին է, որ տալիս է մեզ այս օգնությունը և այս հույսը: Այս հավաստիացումը այնքան «հաստատուն է, ինչպես մեզ շրջապատող լեռները»:[3] Մորմոնի Գրքի մարգարե Աբինադին, մի փոքր տարբերությամբ, այսպես պարզաբանեց Եսայիայի բացականչությունը.

«Որքա՜ն գեղեցիկ են սարերի վրա ոտքերը նրա, որը *հիմնադիրն է խաղաղության*, այո, այսինքն՝ Տերը, որը փրկագնել է իր ժողովրդին. այո, նրա, որն իր ժողովրդին փրկություն է շնորհել»:[4]

Վերջապես Քրիստոսն է, որ գեղեցիկ է սարի վրա: Եվ Նրա ողորմած խոստումն է՝ «խաղաղություն այս աշխարհում», Նրա ավետիսն է՝ «հավերժական կյանք գալիք աշխարհում»,[5] որը ստիպում է մեզ ընկնել Նրա ոտքերը և Նրան կոչել օրհնյալ և շնորհակալություն հայտնել Նրա ճշմարիտ և կենդանի Եկեղեցու վերականգման համար:

Որոնել խաղաղություն, որը միայն Աստված կարող է բերել

Խաղաղություն փնտրելը մարդկային հոգու մեծագույն որոնումներից մեկն է: Մենք բոլորս ունենք վերելքներ և անկումներ, բայց այդպիսի ժամանակներ գալիս են և դրանք, սովորաբար, միշտ գնում են: Աջակցում են բարի հարևանները: Արևի գեղեցիկ շողերը բերում են քաջալերանք: Գիշերային լավ քունը, սովորաբար, հրաշքներ է գործում: Բայց կան ժամանակներ մեր բոլորի կյանքում, երբ խորը վիշտը կամ տառապանքն ու վախը կամ միայնակությունը ստիպում է մեզ աղաղակել խաղաղության համար, որը միայն Աստված Ինքը կարող է բերել: Սրանք ժամանակներ են հոգևոր քաղցի, երբ նույնիսկ ամենասիրելի ընկերները չեն կարող լիովին գալ մեզ օգնության:

Հավանաբար, այս համաժողովին ներկա գտնվողների մեջ կամ ձեր տեղական ծխում կամ ցցում կամ ձեր իսկ տանը, ճանաչում եք քաջարի մարդկանց, ովքեր կրում են ծանր բեռներ և զգում անձնական ցավ, ովքեր քայլում են այս աշխարհի չարչարանքի խավար հովիտներում: Ոմանք, հնարավոր է, հուսահատ անհանգստանում են ամուսնու կամ կնոջ կամ երեխայի համար, մտահոգված նրանց առողջությամբ կամ նրանց երջանկությամբ կամ էլ պատվիրանները պահելիս նրանց հավատարմության համար: Ոմանք ապրում են ֆիզիկական ցավով, կամ զգացմունքային ցավ զգում կամ թուլություններ, որոնք գալիս են տարիքի հետ: Ոմանք անհանգստացած են, թե ինչպես ֆինանսապես ծայրը ծայրին հասցնեն, իսկ ոմանք ցավ են զգում դատարկ տան կամ դատարկ սենյակի կամ էլ ուղղակի դատարկ բազուկների անձնական միայնակությունից:

Այս սիրելի մարդիկ առանձնահատուկ մղումով են փնտրում Տիրոջը և Նրա խոսքը՝ հաճախ իրենց անկեղծ զգացմունքները դրսևորելով միայն այն ժամանակ, երբ սուրբ գրություններն են բացվում կամ երբ աղոթքներ են հղվում: Երբեմն միայն այդ ժամանակ են մեզանից մնացածները գիտակցում, որ նրանք իրենց ուժը հատնելուն մոտ են գտնվում, նրանք հոգնած են մտքով, մարմնով և սրտով, նրանք զարմանում են թե կասկածում են, որ կարող են ևս մեկ շաբաթ, մեկ օր կամ երբեմն էլ ևս մեկ ժամ դիմանալ: Նրանք Տիրոջ օգնության խիստ կարիքն ունեն և գիտեն, որ այդպիսի ծայրահեղ դեպքերում ոչ մի այլ բան չի օգնի:

Քրիստոսը, հրեշտակները և մարգարեները ձգտում են օգնել

Այսպիսով, գերագույն համաժողովի և մարգարեների ուսմունքների նպատակներից առնվազն մեկն այն է ողջ այս դարերի ընթացքում, որ հենց այս մարդկանց հայտարարվի, որ Տերը հավասարապես ջանում է եռանդով հասնել նրանց, երբ դժվարություն է լինում, Նրա հույսերը և Նրա ձգտումները և Նրա ջանքերը մեծապես գերազանցում են մեր սեփականին և երբեք չեն դադարում:

Մեզ խոստացվել է. «Նա քո ոտքին սահել չի տալ .... Նա չի քնիլ»:[6]

Քրիստոսը և Նրա հրեշտակները ու մարգարեները հավերժ տքնում են՝ զորացնելու մեր հոգիները, ամրացնելու մեր նյարդերը, հանգստացնելու մեր սրտերը, առաջ ուղարկելու նորացված ուժով և հաստատուն հույսով: Նրանք կամենում են, որ բոլորն իմանան, որ «եթե Աստուած մեր կողմն է՝ ո՞վ է մեզ հակառակ»:[7] Աշխարհում նեղություն կունենանք, բայց մենք պետք է քաջ լինենք: Քրիստոսը հաղթել է աշխարհին:[8] Իր տառապանքների միջոցով և Իր հնազանդությամբ Նա վաստակեց և իրոք կրում է «Խաղաղության Իշխանի» թագը:

Հնազանդությունն ու ապաշխարությունը բերում են խաղաղություն

Այդ ոգով մենք հայտարարում ենք ողջ աշխարհին, որ իսկական և մնայուն խաղաղության գալստի համար մենք պետք է ձգտենք ավելի նման լինել Աստծո այդ օրինակելի Որդուն: Մեզանից շատերն են փորձում անել դա: Մենք ողջունում ենք ձեզ՝ ձեր հնազանդության, ձեր համբերատարության, ձեր որոնած ուժը ստանալու համար Տիրոջը հավատարմորեն սպասելու համար, որն անշուշտ կգա: Մեզանից ոմանք, մյուս կողմից, կարիք ունեն կատարելու որոշ փոփոխություններ, կարիք ունեն ավետարանով ապրելու համար ավելի շատ ջանք թափել: Իսկ փոխվել մենք կարող ենք: *Ապաշխարություն* բառի գեղեցկությունը կայանում է հին խնդիրներից, հին սովորույթներից, հին վշտերից, հին մեղքերից ազատվելու խոստման մեջ: Որոնելով իսկական խաղաղություն, մեզանից ոմանք պետք է բարելավեն այն, ինչ պետք է բարելավվի, խոստովանել այն, ինչ պետք է խոստովանվի, և մոռանալ այն, ինչ պետք է մոռացվի, որպեսզի այդ անդորրը կարողանա պարուրել մեզ: Եթե կա պատվիրան, որը մենք խախտում ենք և արդյունքում այն մեզ է թուլացնում և ցավ պատճառում նրանց, ովքեր սիրում են մեզ, եկեք վար կանչենք Տեր Հիսուս Քրիստոսի զորությունը՝ մեզ ազատելու, ապաշխարության միջոցով մեզ տանելու դեպի այդ խաղաղությունը, «որ ամեն մտքից վեր է»:[9]

Եվ երբ Աստված ների մեզ, որը նա այնքան ձգտում է մշտապես անել, թող որ մենք ունենանք խելամտություն հեռանալու այդ խնդիրներից, վերջ տալու դրանց, հանգիստ թողնենք, որ անցյալը թաղի անցյալին: Եթե ձեզանից որևէ մեկը սխալ է թույլ տվել, նույնիսկ, լուրջ սխալ, բայց արել եք այն ամենը, ինչ կարող եք՝ համաձայն Տիրոջ ուսմունքների և Եկեղեցու կանոնների՝ խոստովանելով այն և զգալով տրտմություն դրա համար և հնարավորինս ուղղելով այն, ապա վստահեք Աստծուն, քայլեք Նրա լույսի մեջ և այդ մեղքերը թողեք ձեր ետևում: Մի անգամ ինչ-որ մեկն ասել է, որ ապաշխարությունը առաջին սեղմումն է, որ զգում եք, երբ գցվում եք Աստծո գիրկը, ետևում թողնելով այն ամենը, որ կարող է տրտմություն բերել ձեր հոգուն կամ դառնություն նրանց, ովքեր սիրում են ձեզ: «Հեռացեք չարից» ասում են սուրբ գրությունները և «բարիք արեք»:[10]

Ներեք ուրիշներին՝ խաղաղություն գտնելու համար

Ապաշխարելու մեր պարտավորության հետ սերտորեն կապված է նույնն անելու համար ուրիշներին մեծահոգաբար հնարավորություն տալը. մենք պետք է ներենք, ճիշտ ինչպես մենք ենք ներվում: Սրանով մենք մասնակցում ենք Հիսուս Քրիստոսի Քավության բուն էությանը: Անշուշտ, ամենափառահեղ պահը, այն ճակատագրական ուրբաթ օրը, երբ բնությունը ցնցվեց և տաճարի վարագույրը պատռվեց, այն անասելի ողորմած պահն էր, երբ Քրիստոսն ասաց. «Հայր, թողիր դորանց. որովհետև չգիտեն թէ ինչ են անում»:[11] Որպես Հոր մոտ մեր միջնորդ, Նա դեռ անում է նույն աղերսանքն այսօր՝ ձեր և ինձ համար:

Այստեղ, ինչպես բոլոր բաներում, Հիսուսը մեզ համար սահմանել է չափանիշ, որին մենք պետք է հետևենք: Կյանքը խիստ կարճ է, որպեսզի վատնվի անընդհատ վիրավորանքների մասին մտածելու վրա կամ մեր դեմ կատարված բռնությունների համար միավորների տախտակ պահելու վրա, այսինքն՝ ոչ մի վազանց, ոչ մի դիպուկ նետում, միայն սխալներ: Մենք չենք ուզում, որ Աստված հիշի մեր մեղքերը, այնպես որ ինչ որ հիմնովին սխալ բան կա նրանում, երբ մենք անգթորեն փորձում ենք չմոռանալ ուրիշների մեղքերը:

Երբ մեզ ցավ են պատճառում, անկասկած, Աստված հաշվի է առնում, թե ինչ վնասներ են մեզ հասցվում և ինչպիսի դրդապատճառներ կան մեր վրդովմունքի համար, բայց պարզապես որքան ավելի շատ դրդապատճառներ կան, այնքան ավելի մեծ արդարացում կարող ենք գտնել մեր ցավի համար, ավելի մեծ պատճառ մեզ համար ներելու և ազատվելու կործանարար դժոխքի այդպիսի մահացու թույնից և զայրույթից:[12] Աստվածության հեգնանքը նրանում է, որ խաղաղություն գտնելու համար վիրավորվածը, ինչպես նաև վիրավորողը, պետք է կիրառեն ներման սկզբունքը:

Մեր փորձությունները նպատակ ունեն

Այո, խաղաղությունը շատ արժեքավոր, իսկապես սրտառուչ անհրաժեշտություն է, և կան շատ բաներ, որոնք մենք կարող ենք անել դրան հասնելու համար: Բայց ինչ-ինչ պատճառներով, կյանքն ունի իր պահերը, երբ անընդմեջ խաղաղությունը կարող է անհնարին թվալ մեզ որոշ ժամանակ: Մենք հավանաբար զարմանում ենք, թե ինչու են այդպիսի ժամանակներ լինում կյանքում, հատկապես, երբ մենք գուցէ ավելի շատ ենք փորձում քան երբևէ, արժանի ապրել Աստծո օրհնություններին և ձեռք բերել Նրա օգնությունը: Երբ խնդիրները կամ դժբախտությունները կամ էլ տրտմությունն է գալիս և դրանք *թվում է*, թե մեր մեղքով չեն, ինչ պետք է մենք անենք նրանց անսպասելի հայտնվելու դեպքում:

Ժամանակի հետ և հետագայում մենք ընդունում ենք, որ այսպիսի խնդիրները կյանքում իսկապես գալիս են ինչ-որ նպատակով, եթե միայն այն մարդը, որն այդպիսի հուսահատության մեջ է, թույլ տա իրեն համոզվել, որ նա իրոք

իրենից այն կողմ գտնվող աստվածային ուժի կարիքն ունի, որ նա իսկապես երկնքից մեկնված ձեռքի կարիքն ունի: Նրանք, ովքեր ողորմածության անհրաժեշտությունը չեն զգում, սովորաբար երբեք չեն որոնում այն և գրեթե երբեք չեն շնորհում այն: Նրանք, ովքեր երբեք դառնություն չեն զգացել կամ թուլություն, կամ չեն զգացել միայնակություն կամ լքվածություն, երբեք ստիպված չեն եղել աղաղակել դեպի երկինք անձնական այդպիսի ցավից սփոփանքի համար: Անշուշտ ավելի լավ է գտնել Աստծո բարությունը և Քրիստոսի շնորհը, նույնիսկ հուսահատության գնով, քան վտանգի ենթարկվել ապրելու մեր կյանքը բարոյական կամ նյութական ինքնագոհության մեջ, որի ընթացքում երբեք չի զգացվել հավատքի և ներման կարիք, փրկագնման կամ սփոփանքի կարիք:

Կյանքն առանց խնդիրների կամ սահմանափակումների կամ էլ մարտահրավերների՝ կյանք առանց «հակադրության բոլոր բաներում»,[13] ինչպես Լեքին է արտահայտել դա, թվում է ինքն իրեն հակասող, իրականում լինելով ավելի քիչ պարգևատրող և ավելի քիչ ազնվացնող, քան այն կյանքը, որն առճակատում է, նույնիսկ հաճախ է առճակատում, դժվարության, հուսախաբության ու վշտերի: Ինչպես սիրելի Եվան է ասել, եթե չլինեին ընկած աշխարհի դժվարությունները, ոչ ինքը, ոչ Ադամը, ոչ էլ մենք բոլորս երբևէ չէինք իմանա «մեր փրկագնման ուրախությունը և հավերժական կյանքը, որն Աստված տալիս է բոլոր հնազանդներին»:[14]

«Մեր էության ավելի լավ կողմերը»

Այսպիսով, կյանքն ունի իր ընդդիմություններն ու իր հակասությունները և Հիսուս Քրիստոսի ավետարանն ունի պատասխաններ ու հավաստիացումներ: Քաղաքացիական մի սոսկալի պատերազմի ժամանակ, ամենաշնորհալի առաջնորդներից մեկը, որը երբևէ պայքարել է ազգը միասնական պահելու համար, ասել է մի բան, որը կարելի է ասել ամուսնությունների և ընտանիքների ու ընկերությունների մասին: Աղոթելով խաղաղության համար, աղերսելով խաղաղություն, ամեն գնով ձգտելով խաղաղության, որը վտանգի չէր ենթարկի միությունը, Աբրահամ Լինկոլնը այն խավար, խավար օրերին ժողովրդին ուղղված իր հանդիսավոր առաջին ելույթում ասել է. «Չնայած կրքերը գուցեն պրկված են, դրանք չպետք է կտրեն սիրո կապերը: Հիշողության խորհրդավոր լարերը դեռ կուչեն …. երբ կրկին դրանց դիպչեն, անշուշտ դրանք կլինեն մեր էության ավելի լավ կողմերի միջոցով»:[15]

Մեր էության ավելի լավ կողմերը: Դա մեծ մասամբ այն է, ինչ Եկեղեցին և գերագույն համաժողովը և Հիսուս Քրիստոսի ավետարանն են կոչ անում՝ այսօր, վաղը և հավերժ լինել ավելի լավը, ավելի մաքուր, ավելի բարի, ավելի սուրբ, խաղաղություն որոնել և միշտ հավատացող լինել:

Աստծո սրբագործող վերածննդի պարգևը

Իմ կյանքում ես անձնապես տեսել եմ այն խոստման իրականացումը, «որ հավիտենական Աստված, … երկրի ծայրերի ստեղծողը … չի հոգնիլ, և … չի վաստակիլ»: Ես ականատեսն եմ եղել, որ «նա է հոգնածին ուժ տուողը. և նա կարողություն չունեցողին զորություն է շատացնում»:[16]

Ես գիտեմ, որ վախի կամ հոգնածության ժամանակ «Տիրոջն ապավինողները կնորոգուին ուժով, թևերով վեր կսլանան արծիվների պես, կվազեն և չեն [հոգնի] և կգնան և չեն [թուլանա]»:[17]

Մենք ստանում ենք այդպիսի փառահեղ զորություն և սրբագործող վերածնունդ Տեր Հիսուս Քրիստոսի փրկագնող շնորհի միջոցով: Նա հաղթել է աշխարհին, և եթե մենք կամենանք վերցնել Նրա անունը մեզ վրա և «քայլենք Նրա ուղիներում» և պահենք Նրա հետ մեր ուխտերը, մենք շուտով խաղաղություն կունենանք: Այդպիսի պարգև ոչ միայն հնարավոր է, այլ հաստատ է:

«Քանզի լեռները պիտի հեռանան և բլուրները վերանան, բայց իմ բարությունը չպիտի հեռանա քեզանից, ոչ էլ իմ խաղաղության ուխտը պիտի վերանա, ասում է Տերը, որը ողորմություն ունի քեզ վրա»:[18]

Նրա մասին և Նրա բարի լուրերի, այս համաժողովում Նրա խաղաղության հրապարակման և Նրա այս ճշմարիտ Եկեղեցու և Նրա ապրող մարգարեի մասին, որը շուտով կխոսի մեզ հետ, ես բերում եմ երախտապարտ և ուրախալի վկայություն Տեր Հիսուս Քրիստոսի ողորմած անունով, ամեն:

Հղումներ

3. "Carry On," *Hymns,* no. 255.
4. Մոսիա15.18; շեղագիրն ավելացված է:
5. Վարդապետություն և Ուխտեր 59.23:
6. Սաղմոս ՃԻԱ.3–4:
7. Հռովմայեցիս Ը.31:
8. Տես Հովհաննես ԺԶ.33:
9. Փիլիպպեցիս Դ.7:
10. Սաղմոս ԼԴ.14:
11. Ղուկաս ԻԳ.34:
12. Վերցված է George MacDonald-ից:
13. 2 Նեփի 2.11:
14. Մոսես 5ժ.11:
15. Abraham Lincoln, First Inaugural Address, 4 Mar. 1861.
16. Եսայիա Խ.28—29:
17. Եսայիա Խ.31:
18. 3 Նեփի 22.10:

ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

Մեծագույն գանձերը երկրի վրա և երկնքում մեր երեխաներն են և մեր հետնորդները:

—Երեց Դալլին Հ. Օուքս

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին

«Մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, պաշտոնապես հայտարարում ենք, որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար

Ադամին և Եվային Աստծո կողմից տրված առաջին պատվիրանը վերաբերվում էր որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությանը: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Իր զավակներին տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: Մենք հայտարարում ենք նաև Աստծո այն պատվիրանը, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին:

Մենք հայտարարում ենք, որ երկրի վրա կյանքի ստեղծման ուղիները ղեկավարվում են Աստծո կողմից: Մենք հաստատում ենք կյանքի սուրբ լինելը և նրա կարևորությունն Աստծո հավերժական ծրագրում» (*Ensign,* Nov. 1995, 102):

Առաջին Նախագահություն՝ Հեբեր Ջ. Գրանտ, Ռուբեն Քլարկ Կրտ., Դեյվիդ Օ. Մակքեյ

«Որպես Եկեղեցու Առաջին Նախագահություն մեզ շնորհված իշխանությամբ մենք նախազգուշացնում ենք մեր ժողովրդին …

Ադամին ու Եվային տված ամենավաղ պատվիրանների շարքում, Տերն ասել է. «Շատացեք և լցրեք երկիրը»: Նա կրկնել է այդ պատվիրանը մեր օրերում: Նա կրկին բացահայտել է այս վերջին տնտեսությունում ամուսնական ուխտի հավերժության սկզբունքը …

Տերն ասել է մեզ, որ յուրաքանչյուր ամուսնու և կնոջ պարտականությունն է հնազանդվել Ադամին տրված շատանալու և երկիրը լցնելու պատվիրանին, որպեսզի ընտրյալ հոգիների անթիվ բազմությունները, որոնք սպասում են իրենց մարմնական տաղավարներին, կարողանան գալ այստեղ և առաջ շարժվել Աստծո մեծ նախագծի համաձայն՝ դառնալու կատարյալ հոգիներ, քանզի առանց այդ մարմնական տաղավարների նրանք չեն կարող առաջադիմել դեպի Աստծո ծրագրած իրենց ճակատագիրը: Այսպիսով, յուրաքանչյուր ամուսին և կին պետք է դառնա հայր և մայր Իսրայելում՝ երեխաների համար, ովքեր կծնվեն հավերժական սուրբ ուխտի ներքո» (in Conference Report, Oct. 1942, 11–12):

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթ

«Մայրությունը դրված է տան երջանկության և ազգի բարգավաճման հիմքում: Աստված տղամարդկանց և կանանց վրա մայրության հետ կապված շատ սրբազան պարտավորություններ է դրել, և դրանք պարտավորություններ են, որոնք չեն կարող անտեսվել առանց աստվածային դժգոհություն առաջ բերելու: Ա Տիմոթեոս Բ.13–15 հատվածներում ասվում է, որ «Ադամն առաջ ստեղծուեցաւ և յետոյ Եւան….»: Կարո՞ղ է նա փրկվել առանց որդեծնության: Նա իսկապես սոսկալի վտանգի է ենթարկվում, եթե ինքնակամ անտեսում է այն, ինչ Աստծո հայտնած պահանջն է» (*Gospel Doctrine,* 288–89):

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Սերն իրականացնում է իր ամենաքաղցր երջանկությունը և իր ամենաաստվածային իրագործումը այն տանը, որտեղ երեխաների գալը չի սահմանափակվում, որտեղ նրանք ամենառողջունելին են և որտեղ ծնողական պարտականությունները ընդունվում են որպես համագործակցություն հավերժական Արարիչի հետ:

Այս բոլորով հանդերձ, մոր առողջությունը պետք է պահպանվի: Կանացիության ոլորտում կինը պետք է կառավարի գերագույն ձևով» (*Gospel Ideals,* 469):

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ

«Ընտանիքը ամենակարևոր կազմակերպությունն է ժամանակի կամ հավերժության համար: Կյանքում մեր նպատակն է ստեղծել մեզ համար հավերժական ընտանեկան միավորներ: Չկա ոչինչ, որ երբևէ կարող է գալ ձեր ընտանեկան կյանք, որն այնքան կարևոր լինի, որքան տաճարային կնքման օրհնությունները, իսկ հետո սելեստիալ ամուսնության այս կարգի հետ կապված ուխտերի պահպանումը» (in Conference Report, Apr. 1972, 13; կամ *Ensign,* July 1972, 27):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Վաղը, երբ ես կրկնեմ այն արտահայտությունները, որոնք հավերժ կկապեն ձեզ, ես կասեմ նույն տպավորիչ խոսքերը, որոնք Տերն ասաց այն գեղեցիկ երիտասարդին և նրա սիրունատես հարսնացուին Եդեմի պարտեզում. «Աճեցէք եւ շատացէք, և լցրէք երկիրը» …

Դուք եկել եք ձեզ համար մահկանացու մարմին ստանալու, որը կկարողանա դառնալ կատարյալ և անմահ, և դուք հասկացաք, որ պետք է գործեք Աստծո հետ ընկերակցելով՝ ապահովելու մարմիններ ուրիշ հոգիների համար … Եվ այսպիսով, դուք չեք հետաձգի ծնող դառնալը: Կլինեն ռացիոնալիստներ, ովքեր դա հետաձգելու համար բազմաթիվ պատճառներ կնշեն: Իհարկե, ավելի դժվար կլինի ստանալ ձեր համալսարանական աստիճանները կամ ձեր ընտանեկան ֆինանսական մեկնարկը, բայց ձեր ուժը կօգնի, որպեսզի չերկնչեք դժվարին խոչընդոտների հանդիպելիս: Ունեցեք ընտանիք, ինչպես Տերն է կանխատեսել: Իհարկե այն թանկ է, բայց դուք ուղի կգտնեք, և բացի այդ, հաճախ աշխարհի գործը առաջ են տանում հենց այն երեխաները, ովքեր մեծանում են պատասխանատվությամբ և դժվարություններով» (“John and Mary, Beginning Life Together,” *New Era,* June 1975, 8):

«Ամուսնության մեջ գերագույն երջանկությունը նշանակալի չափով պայմանավորված է մի գլխավոր գործոնով՝ երեխաներ ծնելով և մեծացնելով: Չափազանց շատ երիտասարդներ որոշում են չամուսնանալ կամ երեխաներ չունենալ, մինչև ավելի ապահով չլինեն, մինչև զինվորական ծառայության ժամանակահատվածը չվերջանա, մինչև համալսարանական աստիճանը չապահովվի, մինչև աշխատանքն ավելի չլավանա, մինչև պարտքերը չմարվեն կամ էլ մինչև ավելի հարմար չլինի: Նրանք մոռանում են, որ առաջին պատվիրանն է. «Աճեցէք, շատացէք և լցրէք երկիրը և տիրեցէք նորան» (Ծննդոց Ա.28): Եվ այսպիսով հարսնացուները շարունակում են իրենց աշխատանքը, իսկ ամուսնիները խրախուսում են դա և օգտագործում են հակաբեղմնավորիչներ կանխարգելելու հղիացումը: Բարեկամները և ընկերները և, նույնիսկ, մայրերը, երբեմն, իրենց նոր ամուսնացած երիտասարդներին քաջալերում են կանխել ծննդաբերությունը: Բայց արդարացումները շատ են, մեծամասամբ թույլ: Կինը առողջ չէ, ընտանեկան բյուջեն չի բավարարի ավելի մեծ ընտանիքին, կամ բժշկի, հիվանդանոցի և այլ պատահարների ծախսերը խիստ մեծ են, այն լարվածություն կստեղծի սոցիալական կյանքում, այն կխանգարի երկու աշխատավարձ ունենալ, և այսպիսով անոնրմալ կենսաձևը խանգարում է երեխաներ ծնել: Եկեղեցին չի կարող հավանություն տալ, ոչ էլ այդչափ ներել այն բաները, որոնք այդպիսի հսկայական չափերով սահմանափակում են ընտանիքը» (*Teachings of Spencer W. Kimball,* 328–29):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Հարգեք ձեր կնոջ առանձնահատուկ և աստվածայնորեն նշանակված դերը որպես մայր Իսրայելում և երեխաներ ծնելու և մեծացնելու նրա հատուկ ունակությունը: Մենք շատանալու և երկիրը լցնելու և մեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ դաստիարակելու աստվածային պատվիրանի տակ ենք (տես Մովսես 2. 28, ՎԱՈՒ 93.40): Որպես սիրառատ զուգընկեր, դուք մասնակցում եք երեխաներին խնամելու գործին: Օգնեք նրան կառավարել և պահպանել ձեր տունը: Օգնեք ուսուցանել, վարժեցնել և կարգապահ դարձնել ձեր երեխաներին» (in Conference Report, Oct. 1994, 67; կամ *Ensign,* Nov. 1994, 50):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ինձ վիրավորական է թվում այն սոփեստությունը, որ Վերջին Օրերի Սուրբ կանանց միակ ճակատագիրն է մնալ տանը և երեխաներ ծնել: Դա խելացի արտահայտություն է, բայց այն կեղծ է: Իհարկե մենք հավատում ենք երեխաներին: Տերը մեզ ասել է շատանալ և լցնել երկիրը, որպեսզի մենք ուրախություն ունենանք մեր հետնորդներով, և չկա ավելի մեծ ուրախություն, քան լավ ընտանիքների երջանիկ երեխաները: Բայց Նա չի նշել թիվը և ոչ էլ Եկեղեցին է նշել: Դա սրբազան հարց է, որը թողնված է զույգին և Տիրոջը: Եկեղեցու պաշտոնական դրույթը հետևյալ ոճով է հնչում. «Ամուսինները պետք է հոգատար լինեն իրենց կանանց հանդեպ, ովքեր ավելի մեծ պատասխանատվություն են կրում ոչ միայն երեխաներ ծնելու, այլ նաև մանուկ հասակում նրանց հոգ տանելու համար, և պետք է օգնեն նրանց պահպանել իրենց առողջությունն ու ուժը: Ամուսնացած զույգերը պետք է գործադրեն ինքնավերահսկողություն բոլոր իրենց փոխհարաբերություններում: Նրանք պետք է ձգտեն ոգեշնչում ստանալ Տիրոջից՝ իրենց ամուսնական մարտահրավերները հաղթահարելու և իրենց երեխաներին ըստ ավետարանի ուսմունքների մեծացնելու համար» (*General Handbook of Instructions* [1983], p. 77)» (*Cornerstones of a Happy Home,* 6):

Երեց Մելվին Ջ. Բալլարդ

«Կա մի հատված սուրբ գրություններում, որը Վերջին Օրերի Սրբերն ընդունում են որպես աստվածային. «Ահա, սա է [Աստծո] փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» [Մովսես 1.39]: Նմանապես, մենք կարող ենք ասել, որ սա է տղամարդկանց և կանանց փառքը՝ իրականացնել Աստծո որդիների և դուստրերի մահկանացու կյանքը, տալով երկրային կյանք մեր Հոր սպասող զավակներին…. Կնոջ մեծագույն առաքելությունն է պատվավոր ամուսնության միջոցով կյանք տալ, երկրային կյանք, սպասող ոգիներին՝ մեր Հոր ոգեղեն զավակներին, ովքեր անհամբեր ցանկանում են գալ և ապրել այստեղ՝ այս մահկանացու վիճակում: Ողջ

պատիվն ու փառքը, որոնք կարող են գալ տղամարդուն կամ կնոջը՝ զարգացնելով իրենց տաղանդները, այն ընդունելությանն ու գովասանքին, որին կարող են արժանանալ նրանք ծափահարող աշխարհից՝ երկրպագելով նրանց հանճարի փայլին, մի աղոտ բան է, որի տեսնչը կթառամի այն բարձր պատվի, հավերժական փառքի, հարատև երջանկության համեմատությամբ, որը կգա կնոջը, ով կատարում է իրեն տրված առաջին մեծ պարտականությունն ու առաքելությունը՝ դառնալով Աստծո որդիների և դուստրերի մայրը» (Hinckley, *Sermons and Missionary Services of Melvin Joseph Ballard*, 203–4):

Երեց Էզրա Թաֆթ Բենսոն

«Մարդուն տրված առաջին պատվիրանն էր՝ շատանալ և լցնել երկիրը երեխաներով: Այդ պատվիրանը երբեք չի փոխվել, հարմարեցվել կամ վերցվել: Տերը չի ասել շատանալ և լցնել երկիրը, եթե դա հարմար է, կամ եթե դուք հարուստ եք, կամ ձեր համալսարանական կրթությունը ստանալուց հետո, կամ երբ երկրի վրա խաղաղություն է տիրում կամ էլ մինչև որ դուք չորս երեխա ունենաք: Աստվածաշունչն ասում է. «Ահա, որդիքը Տիրոջ ժառանգությունն են…. Երանի այն մարդին որ իր կապարճը նորանցով լցրեց…. » (Սաղմոս ՃԻԷ, 3, 5): Մենք հավատում ենք, որ Աստված փառավորվում է ունենալով բազում զավակներ և նրանց համար կատարելագործման ծրագիր: Այդպես էլ Աստված կփառավորի այն ամուսնուն և կնոջը, ովքեր մեծ սերունդ ունեն, և ովքեր փորձել են նրանց մեծացնել արդարությամբ» (in Conference Report, Apr. 1969, 12):

Երեց Դալլին Հ. Օուքս

«Երկրի վրա առաջին տղամարդուն և կնոջը, Տերն ասաց. «Աճեցեք և շատացեք» (Մովսես 2.28, Ծննդոց Ա.28, տես նաև Աբրահամ 4.28): Այս պատվիրանը առաջինն էր ինչպես հաջորդականությամբ, այնպես էլ իր կարևորությամբ: Կարևոր էր, որ Աստծո հոգևոր զավակներն ունենան մահկանացու ծնունդ և հնարավորություն՝ առաջադիմելու դեպի հավերժական կյանք: Հետևաբար, ծնելիության հետ կապված բոլոր բաները հակառակորդի հիմնական թիրախներն են Աստծո ծրագիրը խափանելու ջանքերում ….

Երջանկության մեծ ծրագրի գիտելիքը Վերջին Օրերի Սրբերին տալիս է նաև հստակ վերաբերմունք երեխաներ ծնվելու և մեծացնելու հարցում:

Որոշ դեպքերում և տեղերում երեխաները համարվել են ոչ ավելի քան ընտանիքի տնտեսական կազմակերպությունում աշխատողներ կամ իրենց ծնողներին աջակցություն ապահովողներ: Չնայած անընդունելի ենք համարում նման շահագործումը, որոշ մարդիկ մեր օրերում ամոթ չեն զգում նման վարքագծի համար, որը Աստծո հոգևոր զավակների բարօրությունը ենթարկեցնում է ծնողների բարեկեցությանն ու հարմարությանը:

Փրկիչը սովորեցրել է, որ մենք չպետք է գանձեր դիզենք երկրի վրա, այլ գանձեր դիզենք երկնքում (տես Մատթեոս Զ.19–21): Երջանկության մեծ ծրագրի լույսի ներքո, ես հավատում եմ, որ մեծագույն գանձերը երկրի վրա և երկնքում մեր երեխաներն են և մեր սերունդը» (in Conference Report, հոկտ. 1993, 97, 100–101; կամ *Ensign*, նոյ. 1993, 72, 75):

ԵՍ ՀԱՐՑ ՈՒՆԵՄ

Դոկտոր Հոմեր Էլսվորթ

Ensign, *Aug. 1979, 23–24*

Մի՞թե մեր դիրքորոշումն այն է, որ մենք պետք է երեխաներ ծնենք այնքան ժամանակ և այնքան հաճախ, որքան մարդկային մարմինը ի վիճակի կլինի: Մի՞թե չկա որևէ այլ, այսպես կոչված, «ընտանիքի ավետարանական ծրագրավորում», քանզի դա արտահայտելու ավելի լավ ձև չկա:

Ես այսպիսի հարց հաճախ եմ լսում ակտիվ և նվիրված Վերջին Օրերի Սուրբ կանանցից, ովքեր հաճախ են հարցեր տալիս, որոնք դուրս են իմ մասնագիտական պարտականություններից: Ահա սկզբունքներից և կանոններից մի քանիսը, որոնք, իմ կարծիքով, վերաբերում են այս հիմնախնդրին՝ հարց, որը զույգերի մեծամասնությունը իրենց է տալիս բազմաթիվ անգամներ մանկածնության իրենց տարիների ընթացքում:

Ես հրճվում եմ փրկության ծրագրի մեր հիմնավոր հասկացողությամբ, որն ուսուցանում է մեզ, որ մենք աշխարհ ենք գալիս աճի, հասունացման և ստուգման համար: Այդ ընթացքում մենք կարող ենք ամուսնանալ և ժամանակավոր մարմիններ ապահովել մեր Երկնային Հոր հոգևոր զավակների համար: Ինձ թվում է, սա է հիմնականը: Մտածելով այս ճշմարտության մասին, ես մեծ հրճվանք եմ ապրում Եկեղեցու դրական դիրքորոշմամբ, որ մեր օրինությունը, ուրախությունը և մեր հոգևոր պարտավորությունն է՝ երեխաներ ծնել և ընտանիք ունենալ: Ինձ տպավորում է այն, որ դրականը շեշտվում է որպես մեր նպատակ:

Մենք ուրախանում ենք մեր այն հասկացողությամբ, որ փրկության ծրագրի ամենահիմնական սկզբունքներից մեկն ազատ կամքն է: Ազատ կամքով ընտրություններ կատարելու հնարավորությունն այնքան կարևոր է, որ մեր Երկնային Հայրը կամեցավ ետ պահել լրացուցիչ հնարավորություններն իր զավակների մեկ երրորդից, քան զրկել նրանց իրենց ընտրության իրավունքից: Ազատ կամքի այս սկզբունքը կենսական է մեր փորձաշրջանի հաջողության համար: Մեր ընդունած որոշումներից շատերը ներառում են սկզբունքների կիրառումը, որտեղ ճշգրիտ «այո» կամ «ոչ» պատասխաններն ուղղակի մատչելի չեն Եկեղեցու դասագրքերում:

Այդ ժամանակ մենք աճ ենք ապրում այլընտրանքները կշռադատելով, հարցն ուշադիր ուսումնասիրելով և Տիրոջից ոգեշնչում փնտրելով: Սա, կարծում եմ, ավետարանի ծրագրի սիրտն է: Դա ինձ միշտ տվել է մեծ ուրախություն և վստահություն նկատելու, որ Աստծո ուսմունքները գործադրելիս, մեր ոգեշնչված մարգարեները չեն ձգտում խախտել անհատական ազատ կամքի այս ընդհանուր ծրագիրը, այլ գործել լայնածիր ուղեգծերի սահմաններում, որտեղ հաշվի են առնվում բավականաչափ անհատական տարբերություններ:

Ես հիշում եմ Եկեղեցու մի նախագահի, որն այժմ մահացած է, որն այցելել էր իր դստերը հիվանդանոցում մի ընդհատված հղիությունից հետո:

Նա ութ երեխաների մայր էր և ընդամենը քառասուն տարեկան էր: Նա հարցրեց. «Հայրիկ, կարո՞ղ եմ դադարել այժմ»: Նրա պատասխանն էր. «Ինձ մի հարցրու: Այդ որոշումը քո և ամուսնուդ և Երկնային Հոր միջև է: Եթե դուք կարողանաք հանդիպել Նրան հանգիստ խղճով և կարողանաք ասել, որ արել եք լավագույնը, ինչ կարողացել եք, որ դուք իսկապես փորձել եք, ապա կարող եք դադարեցնել: Բայց դա քո և նրա գործն է: Ես ունեմ իմ անձնական բավականաչափ խնդիրները խոսելու Նրա հետ, երբ մենք հանդիպենք»: Այսպիսով, ինձ համար պարզ է, որ մեր երեխաների վերաբերյալ որոշումները՝ երբ և քանի երեխա ունենալ, և նրանց հետ կապված բոլոր այլ խնդիրներն ու հարցերը կարելի է որոշել ամուսնական զուգընկերների միջև միայն իսկական քննարկումից և աղոթքից հետո:

Մինչ փորձում եք սովորել, թե ինչն է ճիշտ ձեզ համար որևէ որոշակի պահի, ես միշտ օգտակար եմ համարել օգտագործել մի գլխավոր չափորոշիչ՝ *Դա եսասիրակա՞ն է, թե ոչ:* Ես հանգել եմ այն եզրակացության, որ մեր մեղքերի մեծ մասը իրականում եսասիրության մեղքեր են: Եթե դուք չեք վճարում ձեր տասանորդը, եսասիրությունն է դրա պատճառը: Եթե դուք շնություն եք գործում, եսասիրությունն է դրա պատճառը: Ես նկատել եմ, որ շատ դեպքերում սուրբ գրություններում մենք նկատում ենք, որ Տերը խրատում է ժողովրդին իրենց եսասիրության պատճառով:

Այսպիսով, ընտանեկան հարցերում, եթե մենք սահմանափակում ենք մեր ընտանիքները, որովհետև մենք եսակենտրոն ենք և նյութապաշտ, մենք անշուշտ կզարգացնենք բնավորություն, որը հիմնված է եսասիրության վրա: Ինչպես սուրբ գրություններն են հստակեցնում, դա սելեստիալ բնավորության նկարագիր չէ: Ես պարզել եմ, որ մենք պետք է իսկապես քննենք ինքներս մեզ մեր դրդապատճառները բացահայտելու համար: Երբեմն սնահավատ դրդապատճառներ և արդարացումներ են հայտնվում, երբ անում ենք այդ:

Բայց մյուս կողմից, մենք չպետք է վախենանք ուսումնասիրել հարցը տարբեր տեսանկյուններից, ինչպես օրինակ՝ մոր և հոր ֆիզիկական կամ մտավոր առողջությունը, հիմնական կարիքներն ապահովելու ծնողների կարողությունը և այլն: Եթե ինչ որ անձնական հատուկ պատճառներով զույգը աղոթքով որոշում է, որ անմիջապես ևս մեկ երեխա ունենալը խելամիտ չէ, ծնունդների միջև ժամանակահատվածների որոշելը, հանելով հնարավոր բժշկական կամ ֆիզիկական ազդեցությունները, մեծ տարբերություն չեն

առաջացնում: Իհարկե սեռական ինքնազսպումը նույնպես հակաբեղմնավորման միջոց է և այլ մեթոդների պես այն ունի կողմնակի ազդեցություններ, որոնցից մի քանիսը վնասակար են ամուսնական փոխհարաբերությունների համար:

Որպես բժիշկ ինձանից հաճախ պահանջվում է բուժել հասարակական, զգացմունքային կանխանշաններ կապված կյանքի տարբեր կողմերի հետ: Այդ անելիս ես միշտ զարմացել եմ, որ մեր անցյալ և ներկա մարգարեները երբեք պայման չեն դրել, որ ամուսնական փոխհարաբերության միակ ֆունկցիան երեխաներ ծնելն է: Մարգարեներն ուսուցանել են, որ ֆիզիկական մտերմությունը զորավոր ուժ է, որն ամրացնում է սիրո կապերը ամուսնության մեջ՝ մեծացնելով և ամրապնդելով ամուսնական միասնությունը: Իսկապես, դա Աստծո իրավազոր պարգևն է ամուսնացածներին: Ինչպես Պողոս Առաքյալն է ասում.

«Կինն իր մարմնի վերայ իշխանություն չունի, այլ մարդը. Այնպես էլ մարդն իր մարմնի վերայ իշխանություն չունի, այլ կինը»: Պողոսը շարունակում է. «Իրարից մի հեռացեք, բացի միայն համաձայնությամբ որոշ ժամանակով՝ ծոմին ու աղոթքին տրվելու համար և դարձյալ միացեք իրար, որպեսզի Սատանան չգայթակղի ձեզ ձեր անժուժկալության պատճառով» (Ա Կորնթացիս Է.4–5, Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն): Ամուսնության մեջ սեռական զսպվածությունը, ըստ Պողոսի, կարող է առաջացնել անհարկի գայթակղություններ և լարվածություններ, որոնք իհարկե վնասակար կողմնակի ազդեցություններ են:

Այսպիսով, ինչ վերաբերում է երեխաների թվին ու քանի տարին մեկ պետք է ունենալ և այս նյութին առնչվող այլ հարցերին, այդպիսի որոշումներ պետք է ընդունվեն ամուսնու և կնոջ կողմից արդարությամբ և փոխըմբռնմամբ միմյանց հետ հաղորդակցվելով և Տիրոջից ոգեշնչում փնտրելով: Հավատում եմ, որ մարգարեներն իմաստուն խորհուրդ են տվել, երբ նրանք խորհուրդ են տվել զույգերին հոգատար լինել և զգուշորեն ծրագրել, որպեսզի մոր առողջությունը չտուժի: Առաջին Նախագահության այս խորհուրդն անտեսելու, կամ չիմանալու կամ թյուրըմբռնելու դեպքում, արդյունքը կարող է լինել խորը վիշտը:

Ես գիտեմ մի զույգի, որն ուներ յոթ երեխա: Կինը արյան բարձր ճնշում ուներ և բժիշկը նախազգուշացրել էր, որ նոր հղիությունը լի էր մեծ վտանգով և պետք չէր փորձել: Բայց զույգը մեկնաբանեց տեղի քահանայության առաջնորդների ուսմունքները այն իմաստով, որ իրենք ոչ մի դեպքում հակաբեղմնավորիչներ չպետք է օգտագործեն: Նա մահացավ ութերորդ երեխայի ծննդաբերության ժամանակ արյան զեղումից:

Երբ հանդիպում եմ այլ մարդկանց և տեղեկանում նրանց հանգամանքներին, ես միշտ ոգեշնչվում եմ *General Handbook of Instructions* գրքի Առաջին Նախագահության խորհրդից, որ պետք է հաշվի առնվի մոր առողջությունը և ընտանիքի բարօրությունը: Երեսունչորս տարի աշխատելով որպես գինեկոլոգ և լինելով Վերջին Օրերի Սրբերի ընտանիքների հետազոտող, ես սովորել եմ, որ պետք է հաշվի առնվի ոչ միայն ֆիզիկական բարվոք վիճակը, այլ զգացմունքային բարվոք վիճակը ևս: Որոշ ծնողներ ավելի քիչ են ենթակա տրամադրության փոփոխությունների ու դեպրեսիայի և կարող են ավելի հեշտորեն հաղթահարել շատ երեխաներ ունենալու ճնշումները: Որոշ ծնողներ ավելի շատ օգնություն են ստանում իրենց ընտանիքներից և ընկերներից: Ոմանք ավելի արդյունավետ ծնողներ են, քան մյուսները, նույնիսկ, երբ նրանց ցանկությունը և դրդապատճառները նույնն են: Բացի այդ ծնողներն իսկապես պարտավոր են հոգալ իրենց երեխաների կենսական կարիքները: Ճոխությունների հանդեպ ցանկությունն իհարկե, չի կարող լինել պատշաճ վճռորոշ գործոն ընտանիքի չափսերի համար, ճոխություններն ուղղակի ճիշտ նկատառում չէ: Կարծում եմ յուրաքանչյուր ոգեշնչված մարդկային սիրտ կարող է արագ որոշել, թե ինչն է ճոխություն և ինչը՝ ոչ:

Ամփոփելով, ինձ համար պարզ է, որ զույգերը չպետք է թողնեն այն բաները, որոնք ամենակարևորն են, հանձնված լինեն նրանց կամքին, ովքեր ամենաքիչ կարևորությունն ունեն: Հետազոտելով, թե ինչն է ամենակարևորը, հավատում եմ, որ մենք հաշվետու ենք ոչ միայն նրա համար, թե ինչ ենք անում, այլ թե ինչու ենք մենք դա անում: Այսպիսով, ընտանիքի չափսերի, քանի տարին մեկ երեխա ունենալու և առնչվող այլ հարցերով հանդերձ, մենք պետք է ցանկանանք շատանալ և լցնել երկիրը, ինչպես Տերն է պատվիրում մեզ: Այդ գործընթացում Երկնային Հայրն ի նկատի ունի, որ մենք կօգտագործենք նրա կողմից տրված մեր ազատ կամքը՝ գծելով իմաստուն ուղի մեր և մեր ընտանիքների համար: Մենք ձեռք ենք բերում իմաստություն գծելու այդ իմաստուն ուղին՝ ուսումնասիրության, աղոթքի և մեր ներքին մեղմ ու հանդարտ ձայնին լսելու միջոցով:

ԳԹՈՒԹՅՈՒՆ

Գթությունն ավելին է, քան սերը, շատ ավելին. այն հավիտենական սեր է՝ Քրիստոսի մաքուր սերը, որը տևում է հավերժ:

—Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Աստվածաշնչի բառարան

«***Գթություն.*** Քրիստոսի մաքուր սերը, ոչ թե պարզապես կապվածություն, այլ ամենավեհ, ամենաազնիվ, ամենազորեղ սերն է: Այն երբեք չի օգտագործվում արտահայտելու համար որորմություններ կամ նվիրատվության գործեր, չնայած այն կարող է լինել հուշող դրդապատճառ» (Ա Կորնթացիս Է.1, ԺԳ. 1–4, ԺԴ.1, Մորոնի 7.47) (ՍՈՒ էջ.44):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Աստվածային մի հատկանիշը մյուսին ավելացնելու գործընթացը, ինչպես նկարագրում է Պետրոսը [Բ Պետրոսում Ա], դառնում է այս գիտելիքը ձեռք բերելու բանալին, որը տանում է դեպի հավերժական կյանք» (in Conference Report, Oct. 1986, 63; կամ *Ensign*, Nov. 1986, 48):

Երեց Մարվին Ջ. Աշթոն

«Իսկական գթությունը ոչ թե այնպիսի մի բան է, որ դուք տալիս եք, այլ այն մի բան է, որը դուք ձեռք եք բերում և դարձնում ձեր մի մասը: Եվ երբ գթությունն արմատավորվում է ձեր սրտում, դուք այլևս երբեք նորից նույնը չեք: Այն [քննադատական կամ խոսքով վիրավորող] լինելու միտքն իսկ նողկալի է դարձնում:

Հավանաբար, մեծագույն գթությունը գալիս է, երբ մենք բարի ենք միմյանց հանդեպ, երբ մենք չենք դատում կամ դասակարգում մեկ ուրիշին, երբ մենք պարզապես լավն ենք մտածում մարդու մասին կամ լուռ ենք մնում: Գթությունն այն է, երբ մենք ընդունում ենք ինչ-որ մեկի տարբերությունները, թուլությունները և թերությունները, ունենալով համբերություն այն մարդու հանդեպ, որ հիասթափեցրել է մեզ, կամ դիմադրում ենք վիրավորվելու ներքին մղումին, երբ ինչ-որ մեկի մոտ չի ստացվում որևէ բան այն ձևով, ինչպես մենք հույս ունեինք: Գթությունը մերժում է մեկ ուրիշի թուլությունից օգուտ քաղելը և կամենում է ներել նրան, ով ցավ է պատճառել մեզ: Գթությունը սպասում է լավագույնը մեկ մեկու հանդեպ» (in Conference Report, Apr. 1992, 24; կամ *Ensign*, May 1992, 18–19):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

«Աստվածապաշտության և կատարելագործման բոլոր հատկանիշներից վեր, *գթությունը մի բան է,* որն մեծ անձկությամբ պետք է ցանկանալ: Գթությունն ավելին է քան սերը, շատ ավելին, այն հավիտենական սեր է, կատարյալ սեր, Քրիստոսի մաքուր սերը, որը տևում է հավերժ: Այն սեր է այնքան կենտրոնացած արդարության վրա, որն ունեցողը իր սեփական հոգու և իր շրջապատի մարդկանց հոգիների հավերժական բարօրությունից բացիոչ մի այլ նպատակ կամ ցանկություն չի հետապնդում (2 Նեփի 26.30, Մորոնի 7.47, 8.25–26)» (*Mormon Doctrine*, 121):

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին

«Եթե պարզ սահմանենք, գթություն նշանակում է ստորադասել մեր հետաքրքրություններն ու կարիքները հանուն ուրիշների, ինչպես Փրկիչն է արել մեզ բոլորիս համար: Պողոս Առաքյալը գրել է հավատքի, հույսի և գթության մասին, «սրանցից մեծը գթությունն է» (Ա Կորնթացիս ԺԳ.13), իսկ Մորոնին գրել է, որ «եթե դուք չունենաք գթություն, դուք ոչ մի կերպ չեք կարող փրկվել Աստծո արքայությունում» (Մորոնի 10.21): Կարծում եմ, որ ինքնամոռաց ծառայությունը ավետարանի բնորոշ մասն է» (in Conference Report, Oct. 1991, 20; կամ *Ensign*, Nov. 1991, 16):

Թեմային առնչվող սուրբ գրություններ

Տես Մատթեոս Ե.46, Ա Կորնթացիս ԺԳ.13, Կողոսացիս Գ.12–15, Ա Պետրոս Դ.8, 2 Նեփի 26.30, Ալմա 7.24, 34.29, Եթեր 10.32, 12.34, Վարդապետություն և Ուխտեր 18.19, 31.9:

Ուշադրություն դարձրեք Մորոնի 7.45–47 հատվածներում թվարկված գթության հետևյալ բնորոշ հատկանիշներին՝

- Երկայնամիտ
- Բարի
- Չի նախանձում
- Փքված չէ
- Իրենը չի փնտրում
- Չի գրգռվում հեշտորեն
- Չարը չի մտածում
- Չի հրճվում անօրինությամբ
- Տանում է ամեն բան
- Հավատում է ամեն բանի
- Ամեն բանի հույս ունի
- Ամեն բանի համբերում է
- Տևում է հավերժ

Դառնալով աստվածային էության ճաշակողներ

Բ Պետրոս Ա.4–10



Պետրոսը նկարագրում է աստվածային էությունից ճաշակողներ դառնալու ընթացքը:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը ապահով ամուսնությունն է, որտեղ կա պարտավորություն կատարելու անձնական համակերպումներ՝ հավերժ միասին ապրելու համար:

—Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Սկիզբը [մեր երեխաների վրա բարի ազդեցություն թողնելու համար] ապահով ամուսնությունն է, որտեղ կա պարտավորություն կատարելու անձնական համակերպումներ՝ հավերժ միասին ապրելու համար» (in Conference Report, Oct. 1974, 161; կամ *Ensign*, Nov. 1974, 112):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Խնդրում եմ, թույլ տվեք եզրափակել՝ շեշտելով հասարակության մեջ այն տեղը, որտեղ այդ ուժն ու պարտավորությունը պետք է դրսևորվի, եթե մենք պիտի գոյատևենք որպես ազգ, որպես ժողովուրդ կամ որպես լիովին հաջողված եկեղեցի: Մենք ուղղակի պետք է սեր ունենանք և հավատարմություն և ուժեղ սկզբունքներ մեր տներում: Մենք պետք է մնայուն պարտավորություն ունենանք ամուսնության և երեխաների ու բարոյականության հանդեպ: Մենք պիտի հաջողության հասնենք այնտեղ, որտեղ հաջողությունը ամենաշատը հաշվվում է հաջորդ սերնդի համար» (in Conference Report, Apr. 1990, 77; կամ *Ensign*, May 1990, 61):

Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ

«Հոգևոր խաղաղությունը չի գտնվում ռասայի կամ մշակույթի կամ էլ ազգության մեջ, այլ ավելի շուտ ձեռք է բերվում Աստծո հանդեպ մեր պարտավորության և ավետարանի ուխտերի և արարողությունների միջոցով» (in Conference Report, Apr. 1995, 83; կամ *Ensign*, May 1995, 63):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Ես զարմանում եմ, թե արդյոք հնարավոր է ամուսնական մի զուգընկերը դուրս գցի մյուսին և լիովին անվնաս դառնա: Զուգընկերներից որևէ մեկը, որը երեխաների ներկայությամբ նվազեցնում է մյուսի աստվածային դերը, ստորացնում է բողբոջող կանացիությունը դուստրերի մեջ և որդիների մեջ առաջացող տղամարդկությունը: Կարծում եմ, միշտ էլ իրոք կան որոշ տարբերություններ ամուսնու և կնոջ միջև, բայց թող դրանք կարգավորվեն առանձին:

Այս նյութի կարևորությունը համարձակություն է տալիս ինձ մի խոսք ասել ուխտը խախտելու մասին: Պետք է ընդունել, որ որոշ ամուսնություններ ուղղակի ձախողվում են: Ես հասկանում եմ նրանց, ովքեր նման հանգամանքներում են հայտնվել, որովհետև ամեն մի ապահարզան իր մեջ վիշտ է կրում: Հուսով եմ, որ այն ինչ ասում եմ չի վրդովեցնի: Իմ կարծիքով, տղամարդու և կնոջ միջև ամուսնության ծիսակատարությանը բնորոշ ցանկացած խոստում ձեռք է բերում ուխտի կարևորություն: Հոր, մոր և երեխայի ընտանեկան փոխհարաբերությունը ամենահին և ամենահարատև հաստատությունն է աշխարհում: Այն գոյատևել է, չնայած աշխարհագրական և մշակութային մեծ բազմազանությանը: Սա այն պատճառով է, որ ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև բնական վիճակ է և կարգվել է Աստծո կողմից: Այն կարևոր բարոյական պարտականություն է: Այն ամուսնությունները, որոնք կատարվում են մեր տաճարներում, որոնք նախատեսված են լինելու հավերժական հարաբերություններ, դառնում են ամենասրբազան ուխտերը, որ մենք կարող ենք կապել: Աստծո կողմից Եղիայի միջոցով տրված զորությունը այսպես է հայցվում, և Աստված մասնակից է դառնում խոստումներին:

Ուրեմն, ի՞նչը կարող է լինել «արդար պատճառ» ամուսնության ուխտերը խախտելու համար: Ողջ կյանքիս ընթացքում գործ ունենալով մարդկային խնդիրների հետ, ես մաքառել եմ հասկանալու, թե ինչը կարող է «արդար պատճառ» համարվել ուխտերը խախտելու համար: Խոստովանում եմ, ես իմաստություն կամ իշխանություն ունենալով իրավունք չեմ վերապահում որոշակիորեն սահմանելու, թե ինչ է «արդար պատճառը»: Միայն ամուսինները կարող են դա որոշել: Նրանք պետք է պատասխանատվություն կրեն հետևանքների այն շարանի համար, որոնք անխուսափելիորեն հետևում են, եթե այդ ուխտերը չեն հարգվում: Իմ կարծիքով, «արդար պատճառը» չպետք է լինի սակավ լրջության, քան երկարատև և ակնհայտորեն անդառնալի փոխհարաբերությունը, որը որպես մարդկային էակ կործանարար է անձնավորության արժանապատվության համար:

Միևնույն ժամանակ ես ուժեղ զգացումներ ունեմ այն բանի վերաբերյալ, թե ինչը դրդապատճառ չէ ամուսնության սրբազան ուխտերը խախտելու համար: Անշուշտ, դա միայն «մտավոր անհանգստությունը» չէ կամ «անհատական տարբերությունները», կամ «միմյանցից հեռացումը», կամ «հիասթափված սերը»: Սա հատկապես այդպես է,

որտեղ երեխաներ կան: Մնայուն աստվածային խորհուրդ է տալիս Պողոսը.

«Մարդիկ, սիրեցէք ձեր կանանցը, ինչպէս Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն և իր անձը մատնեց նորա համար» (Եփեսացիս Ե.25):

«Որ զգաստացնեն մատղաշ կանանցը՝ լինել այրասէր և որդեսէր» (Տիտոս Բ.4):

«Իմ կարծիքով Եկեղեցու անդամներն ունեն ամենաարդյունավետ բուժումը մեր քայքայվող ընտանեկան կյանքի համար: Տանը տղամարդիկ, կանայք և երեխաները պետք է պատվեն և հարգեն հայրերի և մայրերի աստվածային դերը: Այսպիսով փոխադարձ հարգանքն ու գնահատանքը Եկեղեցու անդամների մեջ կորդեգրվի՝ այնտեղ գոյություն ունեցող արդարության միջոցով: Այս ձևով Եղիայի կողմից վերականգնված կնքման մեծ բանալիները, որոնց մասին խոսվել էր Մաղաքիայի կողմից, կկարողանան գործել «դարձնելու հայրերի սիրտը դեպի որդիքը և որդկանց սիրտը՝ դեպի իրանց հայրերը. որ մի գուցէ ես գամ և երկիրը զարկեմ անէծքով» (ՎԱՈՒ 110.15, տես նաև Մաղաքիա Դ.6)» (in Conference Report, Apr. 1993, 46–47; կամ *Ensign*, May 1993, 36–37):

Երեց Ռասսել Մ. Նելսոն

«Ամուսնության պարտեզը լավ մշակված և արհամարհանքի մոլախոտերից զերծ պահելը պահանջում է ժամանակ և սիրո պարտավորություն: Դա միայն հաճելի արտոնություն չէ, այն սուրբ գրության պահանջ է՝ հավերժական փառքի խոստումով» (in Conference Report, Apr. 1991, 28; կամ *Ensign*, May 1991, 23):

Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն

«*Ձեր սիրատածումը կենդանի պահեք:* Միասին որոշ բաներ անելու պահեր ստեղծեք՝ ուղղակի դուք երկուսով: Այնքանով, որքանով կարևոր է լինել երեխաների հետ որպես ընտանիք, ձեզ անհրաժեշտ է ամենշաբաթյա կանոնավոր ժամանակ միասին միայնակ լինելու համար: Այն պլանավորելը թույլ կտա ձեր երեխաներին իմանալ, որ դուք զգում եք, թե ձեր ամուսնությունը որքան կարևոր է, որ դուք պետք է սնուցեք այն: Դա պահանջում է պարտավորություն, ծրագրավորում և գրաֆիկի ստեղծում» (in Conference Report, Apr. 1995, 86; կամ *Ensign*, May 1995, 65):

Քույր Արդեթ Գ. Կափ

«Մեր հավատքն է կարևոր Աստծո հետ ուխտեր կապելիս և մեր վիթխարի հնարավորությունների մասին հասկացողության գալը այն մասին, որ տաճարը՝ Տիրոջ տունը, դառնում է կիզակետն այն բոլորի, որն իսկապես նշանակություն ունի: Տաճարում մենք մասնակցում ենք արարողությունների և ուխտերի, որոնք կապում են տարածությունը երկնքի և երկրի միջև: Դրանք նախապատրաստում են մեզ մի օր վերադառնալու և վայելելու հավերժական ընտանիքների և հավերժական կյանքի օրհնությունները:

«Ես լսել եմ երիտասարդ կանանց ողջ աշխարհում կրկնելիս իրենց պարտավորությունը բազմաթիվ լեզուներով. «Մենք կնախապատրաստվենք կապելու և պահելու սրբազան ուխտեր, ստանալու տաճարային արարողություններ և վայելելու վեհացման օրհնությունները» (*Young Women Handbook*, p. 3): Այդ օրհնությունները կարող են մատչելի լինել մեզ բոլորիս համար՝ մեր Հոր բոլոր զավակների համար: Երբ մեր հավատքը կենտրոնացած է Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի վրա, մենք սկսում ենք հասկանալ մեր ինքնությունը և մեր քնքուշ փոխհարաբերությունը Նրա հետ:…

Արարողությունների և ուխտերի միջոցով է, որոնք մատչելի են տաճարում, որ մեր Հայրը Երկնքում ապահովել է ուղի մեզ համար վերադառնալու Նրա մոտ ուրախանալով: Այս հավերժական ճշմարտությունների մասին ես բերում եմ իմ վկայությունը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն» (in Conference Report, Apr. 1992, 110–11; կամ *Ensign*, May 1992, 79):

ՄԵՐ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

In Conference Report, Oct. 1991, 68–73; կամ Ensign, Nov. 1991, 49–52 (priesthood session)

Եղբայրներ, մենք գերազանց ժողով անցկացրեցինք: Հիշելու և մեր կյանքում կիրառելու շատ բան խոսվեց: Ես հաստատում եմ և վստահում եմ ձեզ այն, ինչ Եղբայրներն ասացին: Հուսով եմ, որ յուրաքանչյուր տղամարդ և պատանի, որտեղ էլ որ դուք լինեք, այս երեկո այս ժողովից կհեռանա ավելի մեծ ցանկությամբ և ավելի ուժեղ վճռականությամբ ապրելու ավելի արժանի աստվածային քահանայությանը, որը մեզանից յուրաքանչյուրը կրում է:…

Փորձառություն վշտի հետ

…Այս տասը տարիների ընթացքում ծառայելով Նախագահությունում, ես նաև ճաշակել եմ շատ վշտեր: Այս փորձառության պատճառով է, որ ես կամենում եմ մի քիչ ավելի խոսել: Արդեն տաս տարի է, ինչ ես մասնակցում եմ, նստելով և դատելով նրանց արժանավորության

մասին հանձնարարությունը, ովքեր աղերսում են ետ գալ Եկեղեցի հեռացվելուց հետո: Յուրաքանչյուր դեպքում տեղի է ունեցել վարքի Եկեղեցու չափանիշների լուրջ խախտում: Դեպքերի մեծամասնությունը դավաճանության պատճառով է տեղի ունեցել և շատ դեպքերում ամուսիններն են եղել վիրավորողները:Կարգապահական տույժերը կիրառվել են նրանց դեմ: Ամիսներ անց նրանք ցանկանում էին այն, ինչ նախկինում ունեցել էին: Ապաշխարության ոգին նրանց սիրտ էր մուտք գործել:

Ինչպես այդ մարդկանցից մեկն ասաց ինձ. «Ես իրականում երբևէ չէի հասկացել, ոչ էլ գնահատել Սուրբ Հոգու պարգևը, մինչև այն վերցվեց ինձանից»:

Կանանց դժբախտությունը

Երեք կամ չորս առիթներով անցած տաս տարիների ընթացքում ես խոսել եմ Եկեղեցու կանանց հետ: Այդ զանազան ելույթներին ի պատասխան ես ստացել եմ մեծ քանակությամբ նամակներ: Դրանցից մի քանիսը ես պահել եմ մի թղթապանակում, որը կոչվում է «Դժբախտ կանայք»:

Այդ նամակները եկել են տարբեր տարածքներից: Բայց դրանք բոլորը գրված են նույն տոնով: Ես կկամենայի կարդալ մի հատված դրանցից մեկից, որը ստացել եմ հենց անցած շաբաթ: Գրողը թույլ է տվել ինձ այդ անել: Ես անունները չեմ բացահայտի:

Նա գրում է. «Ես հանդիպեցի իմ ամուսնուն, երբ նա առաջին կուրսում էր սովորում: Նա շատ ակտիվ ընտանիքից էր՝ Եկեղեցու բազում տարիների ծառայությամբ: Նա մեծ խանդավառությամբ էր սպասում միսիա ծառայելուն: Կարծում էի, մենք կիսում էինք ավետարանը որպես մեր ամենակարևոր արժեք այս կյանքում: Մենք երկուսս էլ սիրում էինք երաժշտություն և բնություն և բարձր առաջնահերթություն էինք տալիս գիտելիք ձեռք բերելուն: Մենք մի քանի ամիս ժամադրվում էինք, հեշտորեն սիրահարվեցինք և գրում էինք միմյանց, երբ նա ծառայում էր պատվավոր միսիայում: Երբ նա ետ եկավ տուն, վերադարձավ համալսարան, մենք ամուսնացանք Սոլթ Լեյքի Տաճարում: Մենք հետևեցինք Եկեղեցու առաջնորդների խորհրդին և սկսեցինք կառուցել մեր ընտանիքը: Ես [համալսարան] էի հաճախում Honors at Entrance կրթաթոշակով, բայց հղիացա, սրտխառնոցներ էի ունենում և թողեցի համալսարանը՝ նվիրելով իմ ժամանակը և էներգիան ամուսնուս և մանկիկ որդուս:

Հաջորդ տասնութ տարիների ընթացքում ես աջակցում էի ամուսնուս մինչև նա ավարտեց համալսարանը, ձեռք բերեց որոշ աշխատանքային փորձ և սկսեց իր սեփական գործը: Մենք երկուսս էլ ծառայում էինք ղեկավար պաշտոններում Եկեղեցում և համայնքում: Մենք ունեինք հինգ հրաշալի երեխաներ: Ես ուսուցանում էի ավետարանը երեխաներին, սովորեցնում էի ինչպես աշխատել, ինչպես ծառայել, ինչպես հաղորդակցվել և ինչպես դաշնամուր նվագել: Ես հաց էի թխում, պահածոյացնում դեղձ, խնձոր, լոլիկ, զգեստներ և վերմակներ կարում, մաքրում էի տունը և աճեցնում ծաղիկներ ու բանջարեղեն: Հիմնականում թվում էր, թե մենք իդեալական ընտանիք էինք: Մեր փոխհարաբերությունները երբեմն ջերմ էին և երբեմն դժվար: Գործերը երբեք կատարյալ չէին ընթանում, որովհետև ես կատարյալ կին չեմ և նա էլ կատարյալ տղամարդ չէ, բայց շատ բաներ լավ էին: Ես կատարելություն չէի ակնկալում, այլ ուղղակի շարունակում էի փորձել:

Այնուհետև տեղի ունեցավ փլուզումը: Մոտ մեկ տարի առաջ նա որոշեց, որ երբեք չի սիրել ինձ, և մեր ամուսնությունն ի սկզբանէ սխալ էր: Նա համոզված էր, որ մեր հարաբերության մեջ իր համար չկար ոչինչ: Նա դիմեց ապահարզանի և մեկնեց: «Սպասիր, - շարունակում էի կրկնել ես,- «Օ, ոչ: Կանգնիր: Մի արա այդ: Ինչո՞ւ ես մեկնում: Ի՞նչ է պատահել: Խնդրում եմ խոսիր ինձ հետ: Նայիր մեր երեխաներին: Ի՞նչ է լինելու բոլոր մեր երազանքների հետ: Հիշիր մեր ուխտերը: Ոչ, ոչ: Ամուսնալուծությունը ելք չէ»: Նա չկամեցավ լսել ինձ: Կարծում էի, թե կմեռնեմ:

Այժմ ես միայնակ ծնող եմ: Ինչպիսի՜ վշտի, ցավի և միայնակության վիթխարի բեռ կա այդ բառերի ետևում: Դա նշանակում է այնքան շատ վիրավորանք և այնքան շատ բարկություն իմ դեռահաս որդիներից: Դա նշանակում է այնքան շատ արցունքներ իմ փոքրիկ դուստրերից: Դա նշանակում է այնքան շատ անքուն գիշերներ, ընտանեկան բազում պահանջներ և կարիքներ: Ինչո՞ւ եմ ես այսպիսի խառնաշփոթի մեջ: Ի՞նչն եմ սխալ ընտրել: Ինչպե՞ս եմ ավարտելու համալսարանը: Ինչպե՞ս եմ այս շաբաթն անցկացնելու: Որտե՞ղ է իմ ամուսինը: Որտե՞ղ է իմ երեխաների հայրը: Ես համալրում եմ իրենց ամուսիններից լքված և հոգնած կանանց շարքը: Ես փող չունեմ, ոչ էլ աշխատանք: Ես ունեմ երեխաներ, որոնց համար պետք է հոգ տանեմ, հաշիվները վճարեմ, չունենալով մեծ հույս»:

Ես չգիտեմ, գուցե նրա նախկին ամուսինը որևէ տեղ այս լսարանում կարող է լինել: Եթե նա լսում է, ես գուցե և նրանից մի նամակ ստանամ, որը կարդարացնի իր արածը: Գիտեմ, որ ամեն վիճելի հարց ունի երկու կողմ: Բայց, համենայն դեպս, ես չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես մի մարդ, որը կրում է սուրբ քահանայությունը, և որը մտել է սրբազան և պարտավորեցնող ուխտերի մեջ Տիրոջ առջև, կարող է արդարացնել իր տասնութ տարվա կնոջ և հինգ երեխաների հանդեպ իր պարտավորությունները լքելը, ովքեր գոյություն ունեն նրա շնորհիվ և ովքեր վերցրել են նրա միսն ու արյունը և ժառանգականությունը:

Խնդիրը նոր չէ: Կարծում եմ, դա այնքան հին է, ինչպես մարդկային ցեղը: Անշուշտ, այն գոյություն է ունեցել Նեփիացիների մեջ: Հակոբը՝ Նեփիի եղբայրը, խոսելով իր ժողովրդի հետ որպես մարգարե, հայտարարել է.

«Քանզի ահա, ես Տերս, տեսա վիշտը և լսեցի իմ ժողովրդի դուստրերի ողբը Երուսաղեմի հողում, այո, և բոլոր երկրներում իմ ժողովրդի, իրենց ամուսինների ամբարշտության պղծությունների պատճառով:

… Դուք կոտրել եք ձեր քնքուշ կանանց սրտերը և կորցրել եք ձեր զավակների վստահությունը, նրանց առաջ ձեր վատ օրինակի պատճառով, և նրանց սրտերի հեկեկոցը բարձրանում է վեր առ Աստված, ձեր դեմ» (Հակոբ 2.31, 35):

Զսպեք կատաղի զայրույթը

Թույլ տվեք կարդալ մեկ այլ նամակից: Նամակագիրը գրում է. «Իմ ամուսինը լավ մարդ է բազմաթիվ աչքի ընկնող հատկանիշներով և բնավորության գծերով, բայց այդ բոլորի տակ կա բացարձակ հնազանդության մի խիստ պահանջ…. Նրա անզուսպ բարկությունը բավականին հաճախ է բռնկվում՝ ինձ հիշեցնելով ողջ այն պոտենցիալ տգեղությունը, որին նա ընդունակ է:

Նախագահ Հինքլի … խնդրում եմ հիշեցրեք եղբայրներին, որ կանանց ֆիզիկապես և խոսքով վիրավորելը աններելի է, երբեք ընդունելի չէ, և վախկոտ ձև է տարաձայնությունները հաղթահարելու, հատկապես և մասնավորապես արհամարհանքի արժանի, եթե անարգողը քահանայության կրող է»:

Այնուամենայնիվ, ես հավատում եմ, որ Եկեղեցում ամուսնությունների մեծ մասը երջանիկ են, որ ինչպես ամուսինները, այնպես էլ կանայք այդ ամուսնություններում զգում են փոխադարձ ապահովության զգացում և սեր, փոխադարձ վստահություն և բեռների հավասար բաժանում: Ես վստահ եմ, որ երեխաներն այդ տներում, առնվազն նրանց մեծամասնությունը, մեծանում են խաղաղության և ապահովության զգացումով, իմանալով, որ իրենք իրենց երկու ծնողների կողմից էլ գնահատված են և սիրված, և զգում են, որ նրանք սիրում են միմյանց: Բայց ես վստահ եմ, եղբայրներ, որ բավականաչափ բան կա ընդդեմ՝ արդարացնելու այն, ինչ ես ասում եմ:

Ո՞վ կարող է հաշվել պատճառած վերքերը, դրանց խորությունը և ցավը, որը ուղեկցվում է զայրույթի պահին ասված կոպիտ և ստոր բառերով: Ինչպիսի ողորմելի տեսարան է այն, երբ տղամարդը, որն ուժեղ է շատ կողմերից, կորցնում է ողջ ինքնատիրապետումը, երբ աննշան կարևորության ինչ-որ մի բան, խանգարում է նրա հանգիստը: Իհարկե յուրաքանչյուր ամուսնություն ունի իր բնորոշ տարբերությունները: Բայց ես արդարացում չեմ գտնում ամենափոքր առիթների պատճառով բարկության բռնկումների համար:

Առակաց գրողն ասում է. «Բարկությունը անգութ է և ցասումը հեղեղառատ» (Առակաց ԻԷ.4):

Եվ նույնիսկ այդ դեպքերում, երբ ամուսնություն է նախաձեռնվել և երեխաներ են բերվել աշխարհ, կա պատասխանատվություն, պարտավորցնող և հաշվետվություն Աստծո առջև:

Կատաղի բարկությունը այնպիսի մի սոսկալի, կործանարար բան է: Եվ ողբերգությունը նրանում է, որ այն չի իրականացնում ոչ մի բարիք, այն միայն սնուցում է չարին՝ վրդովմունքով, ապստամբությամբ և ցավով: Դիմում եմ ինձ լսող բոլոր տղամարդկանց կամ պատանիներին, ովքեր դժվարություն ունեն իրենց լեզուն վերահսկելու, ուզում եմ առաջարկել, որ դուք աղերսեք Տիրոջը, որպեսզի ուժ ստանաք ձեր թուլությունը հաղթահարելու համար, որպեսզի ներողություն խնդրեք նրանցից, ում վիրավորել եք, և որպեսզի ձեր մեջ ուժ զարգացնեք զսպելու ձեր լեզուն:

Այստեղ գտնվող պատանիներին, ցանկանում եմ առաջարկել, որ վերահսկեք ձեր բարկությունն այժմ, ձեր կյանքի ձևավորման այս տարիներին: Ինչպես Եղբայր [Դեյվիդ Բ.] Հեյթն է հիշեցրել ձեզ, սա է ուժ և ունակություն զարգացնելու, ինքներդ ձեզ կարգապահության վարժեցնելու ժամանակը: Գուցե մտածեք, թե տղամարդկություն է զայրույթից կատաղել և հայհոյել ու պղծել Տիրոջ անունը: Դա տղամարդկություն չէ: Դա թուլության նշան է: Բարկությունն ուժի արտահայտություն չէ: Այն ցույց է տալիս տվյալ անձնավորության անընդունակությունը վերահսկելու իր մտքերը, խոսքերը, իր զգացմունքները: Իհարկե, հեշտ է բարկանալ: Երբ բարկության թուլությունը համակում է մարդուն, տրամաբանության ուժը լքում է նրան: Ձեր մեջ զարգացրեք ինքնազսպման զորավոր ուժը:

Ամուսնական ուխտերի սրբությունը

Այժմ ես անցնում եմ մեկ այլ կործանարար տարրի, որը դժբախտացնում է խիստ մեծ թվով ամուսնություններ: Ինձ համար հետաքրքիր է, որ Տասը Պատվիրաններից երկուսը վերաբերում են սրան. «Շնություն մի անիր» և «Մի ցանկանար» (Ելից Ի.14, 17): Թեդ Կոպպելը՝ «ABC's Nightline» լրատվական ծրագրի հաղորդավարը, խոսելով Դյուք Համալսարանի մի խումբ ուսանողների հետ թմրանյութերի և անբարոյականության կրճատման վերաբերյալ կարգախոսների մասին, ասել է.

«Մենք փաստորեն համոզել ենք մեզ, որ կարգախոսները կփրկեն մեզ …. Բայց պատասխանն է՝ *Ոչ*: Ոչ այն պատճառով, որ այն հրաշալի է կամ խելացի կամ այն պատճառով, որ դուք կավարտեք ձեր կյանքը բանտում կամ կմահանաք ՄԻԱՎ-ի բաժանմունքում, բայց *Ոչ* այն պատճառով, որ դա սխալ է, որովհետև մենք 5000 տարի անց ենք կացրել որպես բանական մարդկային էակների ցեղ, փորձելով ինքներս մեզ դուրս քաշել նախնադարյան տիղմից, փնտրելով ճշմարտություն և բարոյական բացարձակ արժեքներ: Ճշմարտությունն ինքնին ուսին քաղաքավարի թփթփոց չէ: Այն ճչացող նախատինք է: Այն, ինչ

Մովսեսը վար բերեց Սինայ սարից, *Տաս Առաջարկություններ* չէին» (ելույթից, Duke University, 10 May 1987):

Մի պահ մտածեք այդ մասին: Այն, ինչ Մովսեսը վար բերեց, քարե տախտակների վրա Եհովայի մատով գրված Տասը Պատվիրաններ էին փրկության և ապահովության համար, Իսրայելի զավակների անվտանգության և երջանկության համար և բոլոր այն սերունդների համար, որոնք գալու էին նրանցից հետո:

Ընդհանրապես խիստ մեծ թվով տղամարդիկ, առավոտյան տանը թողնելով իրենց կանանց և գնալով աշխատանքի, որտեղ նրանք գտնում են գրավիչ հագնված և հրապուրիչ շպարված երիտասարդ կանանց, իրենց համարում են երիտասարդ, գեղեցիկ և անդիմադրելիորեն գրավիչ: Նրանք բողոքում են, որ իրենց կանայք նույն տեսքը չունեն, ինչ քսան տարի առաջ էին, երբ նրանք ամուսնացան նրանց հետ: Ի պատասխան, ես ասում եմ. «Իսկ ո՞վ կունենար նման տեսք ձեզ հետ քսան տարի ապրելուց հետո»:

Ողբերգությունը նրանում է, որ տղամարդկանցից ոմանք ծուղակն են ընկնում իրենց իսկ հիմարության և իրենց իսկ թուլության պատճառով: Նրանք քամուն են տալիս Տիրոջ տանը կապած սուրբ քահանայության իշխանությամբ կնքված ամենասրբազան և հանդիսավոր ուխտերը: Նրանք մի կողմ են դնում իրենց կանանց, ովքեր հավատարիմ են եղել, ովքեր սիրել և հոգ են տարել նրանց, ովքեր մաքառել են նրանց հետ աղքատության ժամանակ, բայց դեն են նետվում լիության ժամանակ: Նրանք թողել են իրենց երեխաներին անհայր: Նրանք ամեն կեղծարարության դիմել են՝ խուսափելով վճարել դատարանի կողմից որոշված ալիմենտը և երեխաների նպաստը:

Տերը սովորեցնում է կրկին և կրկին, որ մենք պետք է համբերենք մինչև վերջ:

Մի՞թե խիստ եմ խոսում և բացասական: Այո, ես այդպես էլ զգում եմ, երբ ծանոթանում եմ այդ գործերին: Պողոսը գրել է. «Բայց եթե մեկը իրանների և մանավանդ ընտանիքների համար խնամք չտանի, նա հավատքիցն ուրացած է և անհավատից էլ չար է» (Ա Տիմոթեոս Ե.8): Այդ նույն թղթում, նա ասում է Տիմոթեոսին. «Քո անձը սուրբ պահիր» (Ա Տիմոթեոս Ե.22):

Այժմ ես ընդունում եմ, որ կարող են լինել մի քանի դեպքեր, որտեղ ամուսնության պայմանները բացարձակապես անտանելի են: Բայց այդ դեպքերը սակավաթիվ են: Եվ նույնիսկ այդ դեպքերում, երբ ամուսնություն է նախաձեռնվել և երեխաներ են աշխարհ եկել, կա պատասխանատվություն, որը կապում է և հաշվետվություն է պահանջում Աստծո առաջ՝ ապահովելու խնամք նրանց համար, որոնց կյանքի համար հայրը պատասխանատու է:

Ամուսնու բողոքը տասնութ տարվա ամուսնությունից և հինգ երեխաներից հետո, որ նա այլևս չի սիրում իր կնոջը, իմ կարծիքով, թույլ արդարացում է Աստծո առջև կապած ուխտերը խախտելու և նաև այն պարտականություններից խուսափելու համար, որն ուժն է այն հասարակության, որին մենք պատկանում ենք: Ամուսնալուծության համար մեղավորին գտնելուն սովորաբար նախորդում է երկար ժամանակահատված, որի ընթացքում փոքր սխալները հնչեցվում են խիստ և զայրացած տոնով, որտեղ տարաձայնության բլուրներն աճում են, դառնալով հակասության մեծ լեռներ: Ես համոզված եմ, որ որքան անբարյացակամ վերաբերմունքի է արժանանում կինը, այնքան ավելի անհրապուրիչ է դառնում նա: Նա կորցնում է իրենով հպարտանալու զգացումը: Նա իր մեջ զարգացնում է թերարժեքության զգացում: Իհարկե, դա իրեն զգացնել է տալիս:

Ամուսինը, որն իշխում է իր կնոջ վրա, որը նվաստացնում և ստորացնում է նրան, և որն անընդունելի պահանջներ է ներկայացնում նրան, ոչ միայն վնասում է նրան, այլ նաև նսեմացնում է իրեն: Եվ շատ դեպքերում նա հետագա նմանատիպ վարքի օրինակ է սերմանում իր որդիների մեջ:

Չկա հարատև երջանկություն առանց կանանց

Իմ եղբայրներ, դուք ձեզ վրա եք վերցրել Աստծո քահանայությունը, դուք գիտեք, ինչպես ես գիտեմ, որ առանց լավ կնոջ ընկերակցության չկա հարատև երջանկություն, չկա սրտում տևական խաղաղություն, չկա անդորր տանը: Մեր կանայք մեր ստորադրյալները չեն:

Որոշ տղամարդիկ, ովքեր հավանաբար անկարող են հարգանք ձեռք բերել իրենց կյանքի բարությամբ, իրենց գործողությունների համար որպես արդարացում օգտագործում են այն միտքը, որ Եվային ասվեց, որ Ադամը պետք է իշխի նրա վրա: Դարերի ընթացքում որքան շատ տխրություն, որքան շատ ողբերգություն, որքան շատ դառնություն է առաջացրել սա թույլ տղամարդկանց կողմից, ովքեր օգտագործել են դա որպես դաժան վարքագծի սուրբգրքյան արդարացում: Նրանք չեն ընդունում, որ նույն պատմությունը ցույց է տալիս, որ Եվան տրվեց Ադամին որպես օգնական: Փաստն այն է, որ նրանք կողք-կողքի էին կանգնած պարտեզում: Նրանք միասին արտաքսվեցին պարտեզից, և նրանք կողք-կողքի միասին էին ձեռք բերում իրենց հացը՝ իրենց ճակատի քրտինքով:

Այսպիսով, եղբայրներ, ես խոսեցի փոքրամասնության մասին: Բայց փոքրամասնությանը և, հատկապես, այդ փոքրամասնության զոհերին տանջող ողբերգության խորությունը ստիպեց ինձ ասել այն, ինչ ես ասացի: Կա մի

հին ասացվածք, որն ասում է. «Եթե կոշիկը ոտքովդ է, հագիր այն»:

Այն, ինչ խոսեցի, ասացի օգնելու ցանկությամբ և, որոշ դեպքերում, հանդիմանության ոգուն հետևեց ավելի մեծ սեր նրանց հանդեպ, ում գուցե հանդիմանեցի:

Երջանիկ ամուսնության գեղեցկությունը

Որքան գեղեցիկ է այն երիտասարդ տղամարդու և կնոջ ամուսնությունը, ովքեր սկսում են միասին իրենց կյանքը՝ ծնկի իջնելով Տիրոջ տան զոհասեղանի առջև, սեր և հավատարմություն խոստանալով միմյանց ժամանակի և ողջ հավերժության համար: Երբ այդ տանը երեխաներ են ծնվում, նրանց խնամում են և սիրում, նրանց համար հոգ են տանում, և նրանք օրհնված են լինում այն զգացումով, որ իրենց հայրը սիրում է իրենց մորը: Այդ միջավայրում նրանք գտնում են խաղաղություն, ուժ և ապահովություն: Հետևելով իրենց հորը, նրանք հարգանք են զարգացնում կանանց հանդեպ: Նրանք սովորում են զսպվածություն և ինքնակարգապահություն, որոնք բերում են ուժ՝ խուսափելու հետագա ողբերգությունից:

Տարիներն անցնում են: Երեխաներն ի վերջո թողնում են տունը մեկ առ մեկ: Եվ հայրն ու մայրը կրկին մենակ են մնում: Բայց նրանք ունեն միմյանց՝ զրուցելու, վստահելու, հոգ տանելու, քաջալերելու և օրհնելու համար: Գալիս է կյանքի աշունը և բավարարվածությամբ և ուրախությամբ լեցուն մի ետադարձ հայացք են գցում: Անցած տարիների ընթացքում հավատարմություն է եղել միմյանց հանդեպ: Եղել է հարգանք և սիրատածում: Այժմ առկա է որոշակի մեղմություն, փափկություն, մի ազդեցություն, որը գալիս է սրբացված հարաբերությունից: Նրանք հասկանում են, որ մահը կարող է գալ ցանկացած պահի, սովորաբար առաջինը մեկին՝ բաժանելով միմյանցից կարճ կամ երկար ժամանակով: Բայց նրանք գիտեն նաև, որ քանզի նրանց ընկերակցությունը կնքվել է հավերժական քահանայության իշխանության ներքո, և նրանք արժանիորեն են ապրել օրհնություններին, անկասկած կլինի մի քաղցր վերամիավորում:

Եղբայրներ, սա է այն ուղին, որով մեր Երկնային Հայրը կկամենար, որ լիներ: Սա է Տիրոջ ուղին: Նա այդպես է նշել: Նրա մարգարեներն են խոսել այդ մասին:

Պահանջվում է ջանք, ինքնատիրապետում և անեսասիրություն: Պահանջվում է սիրո ճշմարիտ իմաստ, որը հուզիչ մտահոգությունն է զուգընկերոջ բարօրության և երջանկության համար: Ոչինչ ավելին չէի կամենա ձեզ բոլորիդ, և ես աղոթում եմ, որ սա լինի ձեր անձնական օրհնությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՀԱՄԲԵՐԵՔ ԵՎ ԲԱՐՁՐԱՑՎԵՔ



Երեց Ռասսել Մ. Նելսոն

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, ապր. 1997, 96–101, կամ Ensign, մայիս 1997, 70–73

Մնացեք «նավի վրա»

Մեր ամուսնական կյանքի վաղ օրերին, երբ Քույր Նելսոնն ու ես ապրում էինք Մինիապոլիսում, մենք որոշեցինք վայելել մի ազատ ետկեսօրյա ժամանց մեր երկու տարեկան դստեր հետ: Մենք գնացինք Մինեսոտայի գեղեցիկ լճերից մեկը և վարձեցինք մի փոքրիկ նավ: Ափից հեռու թիավարելուց հետո, մենք կանգ առանք մի փոքր հանգստանալու և վայելելու խաղաղ տեսարանը: Հանկարծ մեր հազիվ քայլող փոքրիկը, մեկ ոտքը դուրս հանելով նավակից փորձեց դուրս գալ նավակից, բացականչելով. «Ժամանակն է դուրս գալու, հայրիկ»:

Մենք արագ բռնեցինք նրան և բացատրեցինք. «Ոչ սիրելիս, ժամանակը չէ դուրս գալու, մենք պետք է մնանք նավակում մինչև այն մեզ անվտանգ ետ տանի ափ»: Միայն բավականին համոզելուց հետո, մեզ հաջողվեց նրան հավատացնել, որ նավակից շուտ հեռանալը աղետի կբերի:

Երեխաները հակված են անել այդպիսի վտանգավոր բաներ, պարզապես այն պատճառով, որ նրանք ձեռք չեն բերել իմաստություն, ինչպես իրենց ծնողները: Նմանապես, մենք որպես Երկնային Հոր զավակներ, գուցե անմտորեն կամենանք «դուրս գալ նավից» նախքան այն նպատակակետին հասնելը, որին Նա կամենում է, որ մենք հասնենք: Տերը սովորեցնում է կրկին ու կրկին, որ մենք պետք է համբերենք[1] մինչև վերջ:[2] Սա սուրբ գրությունների գլխավոր թեման է: Օրինակներից մեկը կարող է ծառայել ներկայացնելով բազմաթիվ հատվածներ, որոնք արտահայտում են նույնատիպ ուղերձ.

«Օրհնված են նրանք, ովքեր կձգտեն առաջ բերել իմ Սիոնը… քանզի նրանք կունենան Սուրբ Հոգու պարգևն ու զորությունը, և եթե նրանք համբերեն մինչև վերջ, նրանք կբարձրացվեն վերջին օրը և կփրկվեն Գառան հավիտենական արքայությունում»:[3]

Աստծո կողմից շնորհված օրհնությունները միշտ հաստատվում են օրենքին հնազանդվելու միջոցով:[4] Ինչ վերաբերում է իմ համանմանությանը, մենք առաջինը պետք է «նավ» մտնենք Նրա հետ: Ապա մենք պետք է *մնանք* Նրա հետ: Եվ եթե մենք «նավակից դուրս» չգանք ժամանակից շուտ, մենք կհասնենք Նրա արքայությանը, որտեղ մենք կբարձրացվենք դեպի հավերժական կյանք:

Եթե համբերենք, մենք կբարձրացվենք

Բարձրացված տերմինը կապված է մի ֆիզիկական օրենքի հետ, որը կարելի է ներկայացնել մի հասարակ ցուցադրմամբ:[5] Ես կօգտագործեմ մի կոճ և կփչեմ կոճի առանցքի անցքից: Իմ շնչառության ուժը կշարժի ինձանից մի փոքր հեռու գտնվող անձեռոցիկի թուղթը: Այնուհետև ես կվերցնեմ մի սովորական քարտ և մի ուղիղ գնդասեղ: Ես կանցկացնեմ գնդասեղը քարտի միջով: Կոճի անցքի միջով գնդասեղն անցկացնելով ես կպահեմ քարտը կոճին մոտիկ: Ես նորից կփչեմ կոճի անցքի միջով: Փչելու ընթացքում ես չեմ պահի քարտը, որպեսզի այն շարժվի ֆիզիկական ուժի ազդեցությամբ: Նախքան իմ սկսելը կարո՞ղ եք կանխագուշակել, թե ինչ տեղի կունենա: Ես հեռու կփչե՞մ քարտն ինձանից, թե՞ քարտը կբարձրանա դեպի ինձ: Պատրա՞ստ եք: [Երեց Նելսոնը ցուցադրում է, որ կոճի անցքի միջով փչելը բարձրացնում է քարտը վեր դեպի կոճը]:

Նկատեցի՞ք: Քանի դեռ ես բավականաչափ շունչ ունեի, քարտը բարձրացված էր: Բայց երբ ես այլևս չկարողացա փչել, քարտն ընկավ: Երբ շունչս կտրվեց, ձգողականության հակադիր ուժը գերիշխեց: Եթե իմ էներգիան կարողանար դիմանալ, քարտը բարձրացված կմնար անսահմանափակ ժամանակով:[6]

Միշտ էներգիա է պահանջվում ապահովելու ընդդիմադիր ուժերից վեր բարձրացումը: Այս նույն օրենքները վերաբերում են մեր անձնական կյանքին: Երբ որ մի նախաձեռնություն է սկսվում, ինչպես էներգիան, այնպես էլ դիմանալու կամքը կարևոր է: Հինգ կիլոմետր մրցույթի հաղթողը հայտարարվում է ոչ թե մեկ կամ երկու կիլոմետրի, այլ *հինգ* կիլոմետրի վերջում: Եթե դուք Բոստոն գնացող ավտոբուսն եք նստում, դուք չեք իջնում Բերլինգտոնում: Եթե դուք կամենում եք կրթություն ստանալ, կիսատ չեք թողնում ձեր համալսարանական ուսումը, ճիշտ ինչպես վճարելով շքեղ ռեստորանում ճաշելու համար , դուրս չեք գալիս այնտեղից միայն աղցանը համտեսելուց հետո:

Ինչպիսին էլ լինի ձեր գործը, համբերեք սկզբում, համբերեք ընդդիմադիր ուժերին ճանապարհի ընթացքում և համբերեք մինչև վերջ: Ցանակացած աշխատանք պետք է ավարտել նախքան դուք կկարողանաք վայելել արդյունքը, որի համար դուք աշխատում եք: Բանաստեղծն այսպես է գրել.

Կառչեք ձեր գործից, մինչև այնձեզանից կկառչի,
Սկսողները շատ են, ավարտողները քիչ:
Պատիվ, ուժ, տեղ, գովասանք
[Միշտ] կգան նրան,…ով համբերում է միշտ:

Կառչեք ձեր գործից, մինչև այն ձեզանից կկառչի,
Կքվեք, քրտնեք, նաև ժպտացեք,
Քանզի կքվելուց, քրտնելուց և ժպտալուց,
Կյանքի հաղթանակներ են շուտով գալիս:[7]

Երբեմն համբերելու անհրաժեշտությունը գալիս է ֆիզիկական մարտահրավերներին դիմակայելիս: Բոլոր մարդիկ, ովքեր չարչարված են ծանր հիվանդությունից կամ տարիքային հաշմանդամությունից, հույս են տածում կարողանալ մինչև վերջ համբերել այդպիսի փորձություններին:[8] Շատ հաճախ ուժեղ ֆիզիկական մարտահրավերներն ուղեկցվում են նաև հոգևոր մարտահրավերներով:

Համբերելու համար մենք պետք է լինենք հաստատապես դարձի եկած

Մտածեք առաջին պիոներների մասին: Ի՞նչ կպատահեր, եթե նրանք չդիմանային դեպի արևմուտք գաղթի դժվարություններին: Այս տարի չէր լինի 150- ամյակի տոնակատարությունները: Նրանք անսասան դիմացան՝ անցնելով հալածանքի,[9] արտաքսումի,[10] ոչնչացման կառավարական հրամանի,[11] ունեցվածքի բռնագրավման,[12] և ավելի շատ բաների միջով: Նրանց տոկուն հավատքն առ Տերը ապահովեց բարձրացում նրանց համար, ինչպես նաև կապահովի ձեր և ինձ համար:

Տիրոջ ամենամեծ մտահոգությունը յուրաքանչյուր անհատի հոգու փրկության և վեհացման համար է: Ի՞նչ կպատահեր, եթե Պողոս Առաքյալի դարձը տոկուն չլիներ: Նա երբեք չէր վկայի, ինչպես նա արեց իր ծառայության վերջում. «Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի հավատքը պահեցի»:[13]

Ի՞նչ կպատահեր, եթե Հիսուսն Իր Հոր կամքը կատարելիս Իր պարտավորվածության մեջ սասանվեր:[14] Նրա Քավությունը չէր իրականանա: Մահացածները հարություն չէին առնի: Չէին լինի անմահության և հավերժական կյանքի օրհնությունները:[15] Բայց Հիսուսը համբերեց: Իր վերջին ժամին Հիսուսն աղոթեց Իր Հորը, ասելով. «Ես քեզ փառավորեցի երկրի վերայ, այն գործը *կատարեցի* որ տուիր ինձ որ անեմ»:[16]

Իր մահկանացու ծառայության սկզբում Հիսուսը մտահոգվեց Իր հետևորդների պարտավորվածության վերաբերյալ: Նա հենց նոր էր կերակրել 5,000-ին,[17] իսկ հետո նրանց ուսուցանել թագավորության վարդապետությունները: Բայց ոմանք տրտնջացել էին. «Խիստ է այդ բանը, ո՞վ կարող է լսել դորան»:[18] Նույնիսկ, հետո երբ Նա կերակրեց նրանց, շատերը Նրա հետ համբերելու հավատք չունեցան: Նա դիմեց Տասներկուսին և ասաց. «Մի՞թե դուք էլ ուզում էք գնալ»:

«Պետրոսն էլ պատասխանեց նորան. Տեր, ո՞ւմ մոտ գնանք … հավիտենական կեանքի խոսքեր ունիս դու:

Եվ մենք հավատացինք եւ ճանաչեցինք, թե դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին»:[19]

Պետրոսի պատասխանը նկարագրում է պարտավորության իսկական էությունը: Երբ մենք գիտենք առանց կասկածելու, որ Հիսուսը Քրիստոսն է, մենք կկամենանք մնալ

Նրա հետ: Երբ մենք հաստատապես դարձի ենք գալիս, համբերելու ուժը մերն է դառնում:

Համբերել ամուսնության ուխտի մեջ

Համբերելու այս ուժը կարևոր է այն երկու ամենակարևոր հարաբերություններում, որոնց մեջ մենք մտնում ենք կյանքում: Մեկը ամուսնությունն է, մյուսը Տիրոջ Եկեղեցու անդամակցությունն է: Սրանք նաև եզակի են նրանով, որ երկուսն էլ ուխտեր են՝ ոչ պայմանագրային հարաբերություններ:

Ամուսնությունը, հատկապես տաճարային ամուսնությունը և ընտանեկան կապերը ներառում են ուխտի հարաբերություններ: Դրանք չեն կարող պատահական համարվել: Այսօր ողջ աշխարհում ամուսնալուծությունների թվի ահագնացող աճն ասում է այն մասին, որ շատ ամուսիններ ձախողվում են միմյանց հանդեպ իրենց պարտավորություններում մինչև վերջ համբերելիս: Եվ որոշ տաճարային ամուսնություններ ձախողվում են, որովհետև ամուսինը մոռանում է, որ իր քահանայության գերագույն և ամենակարևոր պարտականությունն է պատվել և աջակցել իր կնոջը:[20] Լավագույն բանը, որ հայրը կարող է անել իր երեխաների համար «նրանց մորը սիրելն է»:[21]

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին վերջերս մի դրույթ առաջ քաշեց, որ յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ ամուսին պետք է ուշադրությամբ հետևի. «Մեծարեք ձեր [կնոջը],- ասաց նա,- և այդ անելով դուք կմեծարեք ձեր քահանայությունը»:[22] Այս խորիմաստ խորհրդին մենք կարող ենք ավելացնել Պողոսի հավերժական խորհուրդը, որն ասել է. «Ամեն մեկն իր կնկանը թող այնպես սիրէ ինչպես իր անձը՝ և կինը վախենայ իր մարդիցը»:[23] Համբերատար սերն ապահովում է տևական բարձրացում կյանքի փորձությունների միջով: Տևական ամուսնությունն առաջանում է, երբ թե ամուսինը և թե կինը հարգում են իրենց միությունը որպես երկու ամենակարևոր պարտավորություններից մեկը, որ իրենք երբևէ ընդունել են:

Համբերել Աստծո հետ մեր ուխտերում

Հավիտենական հետևանք ունեցող մյուս պարտավորությունը Տիրոջ հանդեպ է:[24] Դժբախտաբար, որոշ հոգիներ ուխտ են կապում Աստծո հետ՝ նշանակված մկրտության սրբազան արարողության միջոցով, առանց Նրա հետ համբերելու անկեղծ պարտավորվածության: Մկրտությունը չափազանց կարևոր արարողություն է: Բայց դա ընդամենը սկիզբն է: Եկեղեցու անդամակցության գերագույն արտոնությունները կարող են իրականություն դառնալ միայն տաճարային վեհացնող արարողություններով: Այս օրհնությունները որակավորում են մեզ «գահերի, թագավորությունների, իշխանությունների, և զորությունների»[25] համար սելեստիալ արքայությունում:

Տերը կարողանում է անմիջապես զանազանել նրանց, ովքեր գործունեության մակերեսային նշաններով են և նրանց, ովքեր խորապես արմատավորվել են Եկեղեցում: Հիսուսը սա սովորեցրեց սերմնացանի առակում: Նա նկատեց, որ ոմանք «իրանց մէջ արմատ չունին, այլ առժամանակեայ են, յետոյ երբոր այն խոսքի համար նեղութիւն կամ հալածմունք է լինում, շուտով գայթակղվում են»:[26]

Տիրոջ հանդեպ հավատարմությունը կրում է հավատարմության պարտականություն, նրանց հանդեպ, ովքեր կանչված են Տիրոջ կողմից առաջնորդելու Իր Եկեղեցին: Նա զորություն է տվել այդ մարդկանց կարգվելու, որպեսզի խոսեն Իր սուրբ անունով:[27] Երբ նրանք ապահով առաջնորդում են Նրա անխորտակելի նավը դեպի փրկության ափը, մենք լավ կանենք մնալ նավում նրանց հետ:[28] «Ջրերը չեն կարող կուլ տալ այն նավը, որտեղ օվկիանոսի, երկրի ու երկնքի Տիրակալն է»:[29]

Այնուամենայնիվ, որոշ մարդիկ ցանկանում են «նավից դուրս» ցատկել նախքան ցամաքին հասնելը: Ոմանց էլ դժբախտաբար համոզում են ընկերակիցները, ովքեր պնդում են, որ կյանքի վտանգավոր ճամփորդության մասին ավելին գիտեն, քան Տիրոջ մարգարեները: Խնդիրներ հաճախ բարձրանում են, որոնք ձեզանից չեն կախված: Ձեզանից ոմանք կարող են միամտաբար հայտնաբերել, որ լքված են մեկի կողմից, որին վստահել են: Բայց ձեր Քավիչը երբեք չի լքի ձեզ, որն ասել է. «Ես՝ Տերս, կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ»:[30]

Առանց Տիրոջ հանդեպ ուժեղ պարտավորության, մարդը հակված է կողակցի հանդեպ առավել ցածր մակարդակի պարտավորության: Հավերժական ուխտերի հանդեպ թույլ պարտավորությունը հանգեցնում է հավերժական հետևանքների կորստի: Ողբերը հետագա կյանքում լցված են լինում զղջումով, ինչպես արտահայտված է այս տողերում.

Ասված կամ գրված խոսքերից տրտում,
Ամենատրտումն այսպես է ասում.
«Շատ ավելի լավ կարող էր լինել»:[31]

Մենք խոսում ենք բոլոր օրհնություններից ամենակարևորի մասին: Տերն ասել է. «Եթե պահես իմ պատվիրանները և համբերես մինչև վերջ, դու կունենաս հավերժական կյանք, պարգև, որը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից»:[32]

Ճիշտ առաջնահերթություններն օգնում են մեզ համբերել

Ձեզանից յուրաքանչյուրը, ով իսկապես կամենում է համբերել մինչև Երկնային Հոր կանխատեսած փառահեղ ավարտը, ամուր հիմք կդնի որոշ անձնական առաջնահերթությունների համար: Շատ հետաքրքրություններով հանդերձ, որոնք կմրցակցեն ձեր հավատարմության համար, դուք պետք է զգույշ լինեք նախ ապահով մնալով «նավում»: Ոչ ոք չի կարող ծառայել երկու տերերի:[33] Եթե սատանան

կարողանա ձեզ ստիպել սիրել որևէ բան՝ զվարճություն, սիրաբանություն, հռչակ կամ հարստություն ավելի, քան կողակցին կամ Տիրոջը, որի հետ դուք կապել եք սրբազան ուխտեր համբերելու, հակառակորդը կսկսի հաղթանակ տոնել: Երբ դիմակայում եք այդպիսի գայթակղություններին, դուք կպարզեք, որ ուժը գալիս է նախապես ստանձնած պարտավորություններից: Տերն ասել է. «Դրեք այս ձեր սրտերում, որ դուք կանեք այն բաները, որոնք ես կուսուցանեմ և կպատվիրեմ ձեզ»:[34] Նա հայտարարել է Իր մարգարե Երեմիայի միջոցով. «Իմ օրենքը պիտի դնեմ նորանց ներսումը, և նորանց սրտի վերան պիտի գրեմ այն, և պիտի լինեմ նորանց Աստուած և նորանք պիտի ինձ համար ժողովուրդ լինեն»:[35]

Երբ առաջնահերթությունները ճիշտ են, համբերելու ուժը մեծանում է: Եվ երբ դրանք յուրացվում են, այդ առաջնահերթությունները կօգնեն ձեզ, որպեսզի «նավից դուրս» չգաք: Դրանք կպահպանեն ձեզ խաբվելուց ամուսնության մեջ, Եկեղեցում և կյանքում:

Եթե դուք իսկապես ցանկանում եք նման *լինել* Տիրոջը ավելի, քան *որևէ բանի* կամ *որևէ մեկին,* դուք կհիշեք, որ ձեր պաշտամունքը Հիսուսի հանդեպ լավագույնս ցույց է տրվում Նրան ձեր նմանվելով: Այդ ժամանակ դուք թույլ չեք տա, որևէ այլ սեր դառնա ավելի կարևոր, քան ձեր սերը ձեր կողակցի, ձեր ընտանիքի և ձեր Արարչի հանդեպ: Դուք կղեկավարվեք ոչ թե ինչ-որ մեկ ուրիշի սահմանած կանոններով, այլ բացահայտված ճշմարտության սկզբունքներով:

Տերը կօգնի մեզ համբերել

Ձեր համբերելու պատասխանատվությունը եզակիորեն ձերն է: Բայց դուք երբեք մենակ չեք: Ես վկայում եմ, որ Տիրոջ բարձրացնող զորությունը ձերը կլինի, եթե դուք կամենաք «գալ դեպի Քրիստոսը» և «կատարելագործվեք նրանում»: Դուք «կհրաժարվեք ամեն անաստվածությունից»: Եվ դուք «կսիրեք Աստծուն ողջ ձեր զորությամբ, մտքով և ուժով»:[36]

Տիրոջ կենդանի մարգարեն հղել է մի հստակ կոչ. «Ես կոչ եմ անում ձեզանից յուրաքանչյուրին»,- ասել է Նախագահ Հինքլին,- « ոտքի ելնեք և երգը ձեր սրտում առաջ շարժվեք, ապրելով ավետարանով, սիրելով Տիրոջը և կառուցելով արքայությունը: Միասին մենք պիտի *մնանք* ճիշտ ուղու վրա և *պահպանենք* հավատքը»:[37]

Ես աղոթում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը կարողանա այսպես համբերել և բարձրացվել վերջին օրը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. *Endure* բառը գալիս է երկու լատինական արմատից: *en* նախածանցը նշանակում է «ներսում»: Մնացածը գալիս է *durare* բայից, որը նշանակում է «ամուր կամ պինդ»: Այսպիսով to *endure* նշանակում է «ամուր դառնալ ձեր ներսում»: Այդ իմաստը պարունակվում է Աստվածաշնչի բնագիր լեզուն:

   Հին Կտակարանի եբրայերեն լեզվում *aman* բառի արմատը նշանակում է «ամուր դարձնել» կամ «լինել հավատարիմ, վստահել»: Այն հաճախ թարգմանվում է որպես «հավատարիմ», բայց ոչ երբեք միայն «հավատք»: *Aman-ը* նշանակում էր ավելին քան հավատք: Այն պասսիվ տերմին չէ, այն նշանակում էր «հավատարիմ լինելու ամուր վճռականություն»:*Aman* բառը նաև հանդիսանում էր եբրայերեն արմատ այնպիսի բառերի համար, որոնք թարգմանվել առնչվող տերմինների, ինչպիսիք են “verified,” “believe,” “long continuance,” “assurance,” “establish(ed),” “sure,” “trust,” “steadfast,” “stand fast,” և այլն:

   Նոր կտակարանի հունարեն լեզվում *hupoméno* բայն է օգտագործվել: Այն նշանակում է «մնալ», «կենալ», «շարունակել»: *Hupo* (կամ *hypo*) նշանակում է «տակ», ինչպես օրինակ *hypodermic* («մաշկի տակ») կամ *hypothermia* («ցածր ջերմաստիճան»): To *endure* բայը արտահայտում է պարտավորություն մարդու հոգու *ներսում*:

2. Տես Մատթեոս ԻԴ.13, Մարկոս ԺԳ.13, 2 Նեփի 33.4, Օմնի 1.26, 3 Նեփի 15.9, ՎԱՈ 14.7, 18.22, 20.29: Այս խոստումը հաստատվել է ինչպես մեր Երկնային Հոր այնպես էլ Տեր Հիսուս Քրիստոսի կողմից: Մեծ Էլոհիմից մենք ունենք այս խոսքը. «Այո, իմ Սիրելիի խոսքերը ճշմարիտ են և հավատարիմ: Ով որ համբերում է մինչև վերջ, նա կփրկվի» (2Նեփի 31.15): Իսկ Փրկչից մենք ունենք այս խոստումը. «Ով որ ապաշխարի և մկրտվի իմ անունով, նա կլցվի, և եթե նա համբերի մինչև վերջ, ահա, նրան ես անմեղ կհամարեմ իմ Հոր առաջ այն օրը, երբ ես կկանգնեմ դատելու աշխարհը» (3 Նեփի 27.16):

3. 1 Նեփի 13.37, տես նաև Մոսիա 23.22, Ալմա 13.29, 36.3, 37.7, 38.5, 3 Նեփի 27.21–22, Եթեր 4.19, ՎԱՈՒ 5.35, 9.14, 17.8, 75.16: Լրացուցիչ շեշտադրման համար սուրբ գրություններն ուսուցանում են այս պատվիրանին չհնազանդվելու բացասական հետևանքները: Օրինակ. «Եթե նրանք չապաշխարեն և չհավատան նրա անունին, և չմկրտվեն նրա անունով, և չհամբերեն մինչև վերջ, նրանք պետք է նզովվեն, քանզի Տեր Աստված՝ Իսրայելի Սուրբն է խոսել սա» (2 Նեփի 9.24, տես նաև 2 Նեփի 31.16, Մորմոն 9.29):

4. Տես Վարդապետություն և Ուխտեր 130.20–21:

5. Բերնոուլիի սկզբունքի այս ցուցադրումը ֆիզիկայում առաջին անգամ ցույց է տրվել հեղինակին 1996

թվականի օգոստոսի 17–ին Երեց Նորման Կ. Բոեմի կողմից, այնուհետև Եկեղեցու մի Տարածքային Իշխանավորի կողմից, որն ապրում էր Սակրամենտոյում, Կալիֆոռնիա:

6. Բարձրացման օրենքը գործում է, երբ օդանավերը թռչում են: Այն «ամբողջ աէրոդինամիկ ուժի բաղկացուցիչ մասն է, որն ազդում է թևի վրա կամ ողջ ինքնաթիռի կամ թևավոր ռակետի, որն ուղղահայաց է քամուն և սովորաբար տեղադրված է լինում ներքևից դեպի վերև ուղղությամբ, դիմադրելով ձգողականության քաշող ուժին» (*American Heritage Dictionary*, 3rd ed. [1992], "lift," 1040):
7. "Stick to Your Task," in Jack M. Lyon and others, eds., *Best-Loved Poems of the LDS People* (1996), 255–56.
8. 95 տարեկանում Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը հասարակայնորեն հույս հայտնեց, որ նա կկարողանա «համբերել մինչև այս կյանքի վերջը» (in Conference Report, Oct. 1970, 92; կամ *Improvement Era*, Dec. 1970, 27): Նա որ ծառայեց այնպես հավատարմորեն և լավ իր բոլոր օրերում մի օրինակ թողեց մեզ բոլորիս հետևելու համար:
9. Տես Ջոզեֆ Սմիթ —Պատմություն 1.20, 22–24, 27, 58, 60–61, 74:
10. Պիոներները քշվեցին Օհայոյից դեպի Միսսուրի, ապա դեպի Իլլինոյս և ի վերջո դեպի Մեծ Սոլթ Լեյք:
11. Առաջին պիոներներին բռնի տեղահան արեցին Միսսուրիից մի հրամանի սպառնալիքի տակ, որը ստորագրվել էր Միսսուրիի նահանգապետի կողմից հրահանգելով, որ «Մորմոններին պետք է վերաբերվեն որպես թշնամիների և *պետք է բնաջնջել* կամ դուրս քշել նահանգից» (*History of the Church*, 3:175):
12. 1887 թվականին ԱՄՆ-ի Կոնգրեսը աննախադեպ քայլ կատարեց Եկեղեցու պաշտոնական գոյությունը վերացնելու համար, ուժը կորցրած հայտարարելով նրա գործող կանոնադրությունը և լիազորելով ֆեդերալ ստացողներին սեփականատիրության իրավունք ընձեռելով փաստորեն ողջ Եկեղեցու ունեցվածքի և մյուս միջոցների, ներառյալ երկրպագության ամենասրբազան տների՝տաճարների վրա՝ Լոգանում, Մանթիում, Սենթ Ջորջում և Սոլթ Լեյք Սիթիում (see *The Late Corporation of The Church of Jesus Christ of Latter-Day Saints v. United States*, 136 U.S. 1 [1890]):
13. Բ Տիմոթեոս Դ.7:
14. Տես 3 Նեփի 27.13:
15. Տես Մովսես 1.39:
16. Հովհաննես ԺԷ.4, շեղագիրն ավելացված է: Տես նաև Հովհաննես Դ.34:
17. Տես Մատթեոս ԺԴ.21, ԺԶ.9, Մարկոս Զ.44, Ը.19, Ղուկաս Թ.14, Հովհաննես Զ.10:
18. Հովհաննես Զ.60:
19. Հովհաննես Զ.67–69:
20. Տես Վարդապետություն և Ուխտեր 42.22:
21. Այս միտքն արտահայտվել է Եկեղեցու մի քանի առաջնորդների կողմից: Օրինակ՝ տես Հովարդ Վ. Հանթեր Conference Report հոկտ. 1994, 68 կամ *Ensign* նոյ.1994, 50, Դեյվիդ Օ, Մակքեյ ինչպես մեջբերել է Գորդոն Բ. Հինքլին, Conference Report հոկտ. 1982,112 կամ *Ensign*, նոյ. 1982, 77:
22. Անդամների հավաքույթ համաժողովի առաջին նիստը Լիմայում, Պերու, 9 նոյ. 1996:
23. Եփեսացիս Ե.33:
24. Բացի այդ արժանի տղամարդիկ արտոնված են որակավորված լինել քահանյության երդման և ուխտի համար, որը կօրհնի բոլոր տղամարդկանց, կանանց, և երեխաներին, ում նրանք ծառայում են (տես ՎԱՈՒ 84.33–48):
25. Վարդապետություն և Ուխտեր 132.19:
26. Մարկոս Դ.17:
27. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.38, 21.5, 68.4:
28. Տես Գործք ԻԷ.30–31, 1 Նեփի 18.21–23:
29. "Master, the Tempest Is Raging," *Hymns*, no. 105.
30. Վարդապետություն և Ուխտեր 82.10:
31. John Greenleaf Whittier, "Maud Muller," *The Complete Poetical Works of Whittier* (1892), 48.
32. Վարդապետություն և Ուխտեր 14.7: Մարգարե Ջոզեֆ Սմիթը ընդգրկեց համբերելու այս տեսակետը հավատքի տասներեքերորդ հանգանակում: «Համբերել ենք շատ բաների և հույս ունենք, որ կկարողանանք համբերել բոլոր բաներին»:
33. Տես Մատթեոս Զ.24:
34. Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ղուկաս ԺԴ.28:
35. Երեմիա ԼԱ.33:
36. Մորոնի 10.32:
37. In Conference Report, հոկտ. 1995, 96, կամ *Ensign*, նոյ. 1995, 72, շեղագիրն ավելացված է:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Լսելու ժամանակն այն պահն է, երբ ինչ որ մեկը կարիք ունի լսվելու:

—Երեց Մարվին Ջ. Աշթոն

Թեմային առնչվող սուրբ գրություններ

Յոբ Զ.25

«Ի՞նչ թափանցիկ են ուղիղ խոսքերը»:

«Կողոսացիս Գ.8

Դեն դրէք այն ամենը, բարկությունը, սրտմտությունը, չարությունը, հայհոյութիւնը, ամօթալի խոսքերը ձեր բերանիցը»:

Եբրայեցիս ԺԳ.16

«Իսկ բարերարութիւնը և հաղորդակցվիլը մի մոռանաք. Որ այնպիսի պատարագներին հավանում է Աստուած»:

Հակոբոս Ա.19–20

«Թող ամեն մարդ շուտ լինի լսելու համար, և ծանր՝ խոսելու համար, և ծանր՝ բարկանալու համար:

Որովհետև մարդի բարկութիւնն Աստուծոյ արդարութիւնը չէ գործում»:

Հակոբոս Գ.2

«Որովհետև շատ բաներով մեղանչում ենք ամենս: Եթե մէկը խոսքով չէ մեղանչում նա կատարեալ մարդ է, որ կարող է իր բոլոր մարմինը սանձահարել»:

Մոսիա 2.32

«Զգուշացեք, որ չլինի թե ձեր մեջ հակառակություններ բարձրանան»:

Ալմա 12.14

«Քանզի մեր խոսքերը կդատապարտեն մեզ»:

3 Նեփի 11.29

«Նա ով ունի հակառակության ոգին, ինձանից չէ, այլ դևից է, որը հակառակության հայրն է»:

Վարդապետություն և Ուխտեր 20.54

«Եվ հետևել, որ եկեղեցում չլինի անօրինություն, ոչ կոպտություն միմյանց հանդեպ, ոչ էլ ստախոսություն, ոչ բամբասանք, ոչ էլ չարախոսություն»:

Վարդապետություն և Ուխտեր 88.124

«Դադարեք սխալներ գտնել միմյանց մեջ»:

Վարդապետություն և Ուխտեր 136.23–24

«Դադարեք հակառակվել մեկմեկու. Դադարեք չարախոսել մեկդ մյուսի մասին»:

«Վերջ տվեք հարբեցողությանը. և թող ձեր խոսքերը լինեն միմյանց շենացնելու միտումով»:

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Հաղորդակցման ժամանակ իհարկե, պետք է ուշադիր հաշվի առնվի մեր մահկանացու փոխհարաբերությունների իսկությունը, որպեսզի խուսափենք սխալներից:

Վիլյամ Էդուարդ Նորիսն ասել է.

Որպեսզի շուրթերդ զապես վրիպելուց,
Ուշադիր հետևիր հինգ բանի,
Ում հետ ես խոսում, ում մասին ես խոսում,
Եվ ինչպես, և երբ, և որտեղ:

Մենք պետք է լուրջ և զուսպ լինենք, սակայն պատրաստակամ լինենք հաղորդակցվել, քանի որ ճշմարիտ եղբայրությունը այնպիսին է, որ մեր ընկերներն ու ընտանիքները մեր հաղորդակցության ժամանակ դարմանը հեռու կփչեն և կանեն դա բարության շնչով:

Այսպիսով Քրիստոնեական հաղորդակցության մեծագույն խոչընդոտներից մեկն այն է, որ մենք այնքան շատ ենք վախենում սխալ հասկացվել: Այսպիսով, երբ կասկածների մեջ ենք, պետք է զուսպ լինենք: Այնուամենայնիվ, Պողոսն ասել է, որ խոսենք ճշմարտությունը սիրով, այդ ժամանակ մենք կարող ենք ռիսկի դիմել: Մենք անհանգստանում ենք (և հասկանալիորեն), որ որոշ հաղորդակցումներ կառաջացնի միայն ավելի շատ թյուրըմբռնումներ: Բայց լռությունը նույնպես շատ վտանգավոր է….

Սովորաբար, երբ մենք ինչ-որ մեկին չգիտենք, մեզ համար դժվար է վստահել նրան և սա կաշկանդվածություն է առաջացնում հաղորդակցվելիս և աճելիս: Հոգու պատուհանը բացելն օգնում է կառուցել առողջ փոխհարաբերություններ: Բայց եթե այդ պատուհանները միշտ փակ են կամ կրկնափեղկերն իջեցված, դժվար է օգնել, ուղղակի հնարավոր չէ իմանալ, թե ինչ է անհրաժեշտ» (*All These Things Shall Give Thee Experience*, 81–82):

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ



Երեց Մարվին Ջ. Աշթոն

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, ապրիլ 1976, 79–82, կամ Ensign, մայիս 1976, 52–54

Մի քանի շաբաթ առաջ մի շփոթված հայր հարցրեց. «Ինչո՞ւ է թվում, թե ես կարողանում եմ հաղորդակցվել բոլորի հետ, բացի իմ սեփական որդուց»:

Ես պատասխանեցի. «Ի՞նչ ի նկատի ունեք ասելով, որ չեք կարողանում հաղորդակցվել ձեր որդու հետ»:

«Ուղղակի երբ փորձում եմ ինչ-որ բան պատմել նրան, նա ինձ չի լսում»,- պատասխանեց նա:

Ընտանեկան հաղորդակցում

Այնուհետև մեր հաճախակի զրույցներից հետո ես եզրակացրեցի, որ հավանաբար մեր ընտանիքի անդամների հետ հարաբերություններում մեր ձախողումների հիմնական պատճառներից մեկն այն է, որ մեզ չի հաջողվում կիրառել անձնական հաղորդակցման մի քանի հիմունքներ: Եբրայեցիս ԺԳ.16 հատվածում մենք կարդում ենք. «Իսկ բարերարությունը և հաղորդակցվելը մի մոռանաք. Որ այնպիսի պատարագներին հավանում է Աստուած»: Ընտանիքում հաղորդակցումը հաճախ կարող է պահանջել զոհաբերություն, որովհետև մեզանից ակնկալվում է օգտագործել մեր ժամանակը, մեր միջոցները, մեր տաղանդը և մեր համբերությունը՝ տալու, կիսվելու և հասկանալու համար: Շատ հաճախ մենք օգտագործում ենք հաղորդակցման պահերը որպես առիթներ՝ ասելու, թելադրելու, աղերսելու կամ սպառնալու համար: Ընդհանուր առմամբ ընտանիքում հաղորդակցումը ոչ մի դեպքում չպետք է օգտագործվի հարկադրելու, հրամայելու կամ նեղություն պատճառելու համար:

> ***Արդյունավետ լինելու համար ընտանեկան հաղորդակցումը պետք է լինի զգացմունքների և տեղեկությունների փոխանակում:***

Արդյունավետ լինելու համար ընտանեկան հաղորդակցումը պետք է լինի զգացումների և տեղեկությունների փոխանակում: Հաղորդակցման դռները կբացվեն տանը, եթե անդամները հասկանան, որ բոլորի կողմից ժամանակն ու մասնակցությունը անհրաժեշտ բաղադիչներ են: Ընտանեկան քննարկումների ժամանակ տարաձայնությունները չպետք է անտեսվեն, այլ պետք է հանգիստ կշռադատվեն և գնահատվեն: Որևէ մեկի տեսակետը կամ կարծիքը սովորաբար այնքան կարևոր չէ որքան առողջ, հարատև փոխհարաբերությունները: Քննարկումների ընթացքում լսելիս և պատասխանելիս քաղաքավարությունն ու հարգանքը կարևոր են պատշաճ երկխոսության համար: Քանի որ մենք սովորում ենք միասին անցկացնել իմաստալի հաղորդակցում, մենք կարողանում ենք արտահայտել մեր սիրալիր, վստահելի և հետաքրքրական մտքերը: Երբ մենք հակված ենք լինում ձեռք քաշել հուսահատությամբ հաղորդակցվելու մեր ջանքերից, քանի որ ընտանիքի մյուս անդամները չեն ջանում պատասխանել, հավանաբար լավ կանենք ձեռք չքաշել, այլ ավելի շուտ հարցեր տալ և ներգրավել մեր զրույցների մեջ: Որքան կարևոր է գիտենալ, թե ինչպես չհամաձայնվել ուրիշի տեսակետի հետ առանց անբարեհամբույր լինելու: Որքան կարևոր է քննարկման պահեր ունենալ քննարկումներից առաջ: Ջոնս Սթիվենսը գրել է. «Ես հասկացա, որ գլուխը չի լսում ոչինչ, մինչև սիրտը չի ունկնդրում և որ այն, ինչ սիրտը գիտի այսօր, գլուխը հասկանում է վաղը»:

Ավելի արդյունավետ ընտանեկան հաղորդակցման համար թույլ տվեք ձեզ հետ կիսվել յոթ կարևոր առաջարկներով:

Զոհաբերություն

1. *Զոհաբերել պատրաստակամորեն:* Եղեք այնպիսի ընտանիքի անդամ, որը պատրաստ է ժամանակ տրամադրել մատչելի լինելու համար: Զարգացրեք ունակություն և ինքնակարգապահություն ձեր իսկ կարիքներից առաջ մտածելու ընտանիքի մյուս անդամների և նրանց հաղորդակցման կարիքների մասին՝ հոժարակամ պատրաստվելով այդ պահի համար, կիսվելու պահի, ուսուցանելու պահի համար: Դեն նետեք ձեր միջից գերզբաղվածության տեսքը և սովորեք ներթափանցել ընտանիքի անդամի գերզբաղվածության զրահից ներս: Տխուր է այն օրը, երբ լսում ես դստերդ ասելիս. «Մայրս տալիս է ինձ ամեն ինչ, բացի իր անձից»:

Խիստ վաղ և խիստ հաճախ ենք մենք ցանում «Չե՞ս տեսնում զբաղված եմ: Այժմ մի անհանգստացրու ինձ» սերմերը: Երբ մենք ցուցաբերում ենք «Հեռու գնա, հիմա ինձ մի խանգարի» վերաբերմունքը, ընտանիքի անդամները փորձում են ուրիշ տեղ գնալ կամ լռությամբ մեկուսանալ: Այս կամ այն առիթներով, երբ ընտանիքի անդամները կարիք ունեն, որ իրենց լսեն կամ իրենք խոսեն, պետք է նրանց ընդառաջել, որպեսզի կամենան գալ, կիսվել և խնդրել:

Անձնական զոհաբերություն է պահանջվում հաղորդակցվելու համար, երբ պահը հարմար է մյուս մարդու համար՝ ճաշի պատրաստման ընթացքում, ժամադրությունից, վիրավորանքից, հաղթանակից, հիասթափությունից հետո, կամ երբ ինչ-որ մեկը կամենում է կիսվել գաղտնիքով:

Մարդ պետք է հոժարակամ հրաժարվի անձնական հարմարությունից՝ ժամանակ տրամադրելով ընտանիքում հաղորդակցության ամուր հիմք հաստատելու համար: Երբ ընտանիքում հաղորդակցումը խաթարված է, յուրաքանչյուրը պետք է իր մեջ որոնի սպեղանի:

Եթե կամենում ենք ճշմարիտ սեր և ըմբռնում խթանել միմյանց հանդեպ, մենք պետք է հասկանանք, որ հաղորդակցումը ավելին է, քան խոսքերով կիսվելը: Դա էմոցիաներով, զգացմունքներով և մտահոգություններով *իմաստուն* ձևով կիսվելն է: Դա իրեն ամբողջությամբ տրամադրելն է: «Ո՞վ է ձեզանում իմաստուն և խելացի, թող իր բարի վարքովը ցույց տայ իր գործերովը իմաստութեան հեզութիւնովը» (Հակոբոս Գ.13):

Ստեղծել իրավիճակ

2. *Իրավիճակ ստեղծելու պատրաստակամություն:* Տեղը, իրավիճակը կամ հանգամանքները պետք է հարմար, առանձին և զրույցին նպաստող լինեն: Արդյունավետ հաղորդակցումներ են տեղի ունեցել ծառերի պուրակում, լեռներում, ծովի մոտ, ընտանեկան երեկոյի ընթացքում, զրոսանքի ժամանակ, մեքենայի մեջ, արձակուրդի ժամանակ, հիվանդանոց այցելելիս, դպրոցի ճանապարհին, սպորտային խաղ դիտելու ժամանակ: Երբ իրավիճակը ստեղծված է, մենք պետք է պատրաստակամորեն թույլ տանք, որ ընտանիքի մյուս անդամը լինել ուշադրության կենտրոնում, երբ մենք համապատասխանաբար արձագանքենք:

Ամիսներ ու տարիներ հետո բասկետբոլի խաղի հաշիվը վաղուց մոռացված է լինում, բայց Հայրիկի հետ այնտեղ լիովին մենակ լինելը երբեք չի աղոտանա: Ես երկար կհիշեմ մի տասնամյա աղջկա հուզված պատմությունը, թե ինչպես է իր հայրիկի հետ մեքենայով անցել ողջ ճանապարհը Սոլթ Լեյք Սիթիից մինչև Պրովո և ետ: «Ռադիոն միացրա՞ծ էր»,-հարցրեցի ես: «Օ, ոչ,- պատասխանեց նա,- այն ամենը, ինչ արեց Հայրկը, ինձ լսելն ու ինձ հետ զրուցելն էր»: Նա պարզապես իր հայրիկի հետ էր եղել մի իրավիճակում, որը նա այդքան էլ շուտ չի մոռանա: Թույլ տվեք, որ կարիքի դեպքում հարմար իրադրություն ստեղծվի:: Թույլ տվեք, որ հարմար իրավիճակ ստեղծվի, երբ մյուս անձնավորությունը պատրաստ է:

Ունկնդրել

3. *Ունկնդրելու պատրաստակամություն:* Ունկնդրելն ավելի է, քան լուռ լինելը: Ունկնդրելը շատ ավելին է, քան լռությունը: Ունկնդրելը պահանջում է համակ ուշադրություն: Ունկնդրելու պահը այն ժամանակ է, երբ ինչ որ մեկը կարիք ունի լսվելու: Մարդու հետ որևէ խնդրի շուրջ հարց քննարկելու պահը այն ժամանակ է, երբ նա ունենում է այդ խնդիրը: Ունկնդրելու պահը այն ժամանակ է, երբ մեր հետաքրքրությունը և սերը կենսական են որևէ մեկի համար, որը փնտրում է մեր ականջը, մեր սիրտը, մեր օգնությունը և մեր կարեկցանքը:

Մենք պետք է բոլորս մեծացնենք տեղին հարցեր տալու մեր ունակությունը, իսկ հետո ունկնդրենք՝ ուշադիր, բնական ձևով: Ունկնդրելը կապված է սիրո հետ: Որքան զորեղ են խոսքերը՝ «Ուստի, իմ սիրելի եղբայրներ, թող ամեն մարդ շուտ լինի լսելու համար, և ծանր խոսելու համար, և ծանր բարկանալու համար:

Որովհետև մարդի բարկությունն Աստուծոյ արդարութիւնը չէ գործում» (Հակոբոս Ա.19–20):

Բարձրաձայնեք զգացմունքները

4. Զգացմունքները բարձրաձայնելու պատրաստակամություն: Որքան կարևոր է մեր մտքերն ու զգացմունքները պատրաստակամորեն բարձրաձայնելը: Այո, որքան կարևոր է կարողանալ զրուցել ընտանիքի յուրաքանչյուր անդամի մակարդակով: Շատ հաճախ թույլ ենք տալիս ընտանիքի անդամներին ենթադրել, թե ինչ ենք զգում իրենց հանդեպ: Հաճախ սխալ հետևություններ են արվում: Շատ հաճախ մենք կկարողանայինք ավելի լավ վարվել, եթե իմանայինք, թե ինչ են ընտանիքի անդամները զգում մեր հանդեպ և ինչ են ակնկալում մեզանից:

Ջոն Փաուելը կիսվում է այս հուզիչ փորձառությամբ. «Դա հայրիկիս մահվան օրն էր….Հիվանդանոցի փոքրիկ սենյակում ես գրկած օգնում էի նրան, երբ …. հայրս ծանր վայր ընկավ, և ես զգուշորեն իջեցրեցի նրա գլուխը բարձին: Ես ասացի մայրիկիս.

«Ամեն ինչ վերջացած է, մամ: Հայրիկը մահացավ»:

«Նա ինձ հանկարծակիի բերեց: Ես երբեք չեմ իմանա, թե ինչո՞ւ էին սրանք այն առաջին խոսքերը, որ նա ասաց ինձ նրա մահից հետո: Մայրս ասաց. «Օ՜, նա այնքան էր հպարտանում քեզնով: Նա այնքա՜ն շատ էր սիրում քեզ»:

Ինչ որ ձևով ես գիտեի…. Որ այդ խոսքերը ինչ որ շատ կարևոր բան էին ասում ինձ: Դրանք նման էին լույսի հանկարծակի շողի, ցնցող մի մտքի, որը ես երբեք նախկինում չէի զգացել: Սակայն այդ ամենում առկա էր ցավը, որ ես սկսում էի հորս ավելի լավ ճանաչել մահից հետո, քան երբևէ նրան ճանաչել էի կյանքում:

Քիչ անց, երբ բժիշկը հաստատում էր մահը, ես պատին թիկնած սենյակի հեռավոր անկյունում մեղմ արտասվում էի: Մի բուժքույր մոտեցավ ինձ և ձեռքը սփսփանքով դրեց ուսիս: Ես չկարողացա խոսել արցունքներիս միջից: Ես ուզում էի ասել նրան.

Ես չեմ արտասվում, որովհետև հայրս մահացել է: Ես արտասվում եմ, որովհետև հայրս երբեք չի ասել, որ հպարտացել է ինձանով: Նա երբեք չի ասել, որ սիրել է ինձ: Իհարկե, ես կուզենայի իմանալ այդ բաները: Ես կուզենայի իմանալ այն մեծ դերի մասին, որ խաղացել էի նրա կյանքում և այն մեծ տեղի մասին, որ ես զբաղեցրել էի նրա սրտում, բայց նա երբեք այդ մասին չի ասել ինձ» (*The Secret of Staying in Love,* Niles, Ill.: Argus, 1974, p. 68.):

Որքան նշանակալի են Աստծո խոսքերը, երբ նա ժամանակ գտավ բարձրաձայն արտահայտելու իր զգացմունքները, ասելով. «Դա է իմ սիրելի որդին», այո, հենց այն զորավոր խոսքերը. «Դա է իմ սիրելի Որդին, որին ես հաւանեցի» (Մատթեոս Գ.17):

Հաճախ ծնողները արդյունավետորեն հաղորդակցվում են իրենց երեխաների հետ, ունկնդրում և դիմում են միմյանց: Մեղմություն և սեր արտահայտող նրանց զրույցները լսվում են մեր մշտարթուն, տպավորվող երեխաների կողմից: Մենք պետք է սովորենք արդյունավետորեն հաղորդակցվել ոչ միայն մեր ձայնով, այլ տոնով, զգացումներով, հայացքներով, շարժուձևով և ողջ անհատականությամբ: Շատ հաճախ, երբ չենք կարողանում զրուցել մեր դստեր կամ կնոջ հետ, մենք զարմանում ենք. «Ի՞նչ է պատահել նրան», մինչդեռ պետք է զարմանանք. «Ի՞նչ է պատահել մեր մեթոդներին»: Մի բազմիմաստ ժպիտ, մի տեղին շոյանք ուսին, և մի ջերմ ձեռքսեղմում՝ բոլորը կարևոր են: Լռությունը մեկուսացնում է: Լարված լռության պահերը առաջացնում են շփոթմունք, ցավ և շատ հաճախ սխալ հետևություններ:

Աստված գիտի մշտական հաղորդակցման լիակատար ազդեցությունը, երբ նա խրախուսում է մեզ միշտ աղոթել: Նա նաև խոստացել է պատասխանել, երբ մենք արդյունավետորեն խոսենք նրա հետ:

Մի դատեք

5. *Պատրաստակամություն խուսափել դատելուց:* Փորձեք հասկացող լինել և ոչ քննադատական: Ցույց մի տվեք շոկ, անհանգստություն կամ զզվանք ուրիշների դիտողությունների և նկատողությունների հանդեպ: Բուռն մի արձագանքեք: Աշխատեք մարդու ազատ կամքի սահմաններում: Արտահայտեք պայծառ և լավատեսական մոտեցում: Հույս կա: Կա ետդարձի ճանապարհ: Կա հնարավորություն ավելի լավ փոխըմբռնման համար:

Թող ընդհանուր հիմք զարգացվի անձնական որոշումների համար: «Ես էլ չեմ քեզ դատապարտում, գնա և այսուհետեւ մեղք մի գործիր» (Հովհաննես Ը.11) խոսքերը ճիշտ նույնքան արդյունավետ են այսօր, ինչպես դրանք առաջին անգամ արտասանվեցին:

Խուսափեք ձեր արժեքները ուրիշներին պարտադրելուց: Երբ կարողանանք սովորել հարցերը լուծել առանց խառնելու անհատներին և միևնույն ժամանակ խուսափենք նախապաշարմունքներից և զգացմունքայնությունից, մենք արդյունավետ ընտանեկան հաղորդակցման ուղու վրա կլինենք: Երբ ընտանիքի մի անդամ որոշում է ընդունում, որը անհամապատասխան է կամ անպատշաճ, մենք արդյոք ունե՞նք ունակություն և համբերություն ցույց տալու նրան, որ թեպետ մենք համաձայն չենք նրա որոշման հետ, բայց նա ունի ընտրության իր իրավունքը և այնուամենայնիվ ընտանիքի սիրված անդամ է:

Հեշտ է մատնացույց անել սխալները և դատապարտել: Անկեղծ հաճոյախոսություններ և գովասանք շատ ավելի դժվար է դուրս գալիս մեզանից մեծամասնությունից: Իսկական հասունություն է պահանջվում ծնողից, որպեսզի ներողություն խնդրի երեխայից սխալի համար: Անկեղծ ներողությունը հաճախ որդուն կամ դստերը ստիպում է զարմանալի ջերմություն զգալ մոր կամ հոր, եղբոր կամ քրոջ հանդեպ: «Որովհետև շատ բաներով մեղանչում ենք ամենս: Եթե մէկը խոսքով չէ մեղանչում նա կատարեալ մարդ է, որ կարող է իր բոլոր մարմինը սանձահարել» (Հակոբոս Գ.2):

Եղեք վստահության արժանի

6. *Վստահությունը պահպանելու պատրաստակամություն:* Եղեք վստահության արժանի նույնիսկ առօրյա հարցերում և դիտողություններում: Ծանրակշիռ հարցերն ու դիտողությունները կգան միայն այն դեպքում, եթե մենք վստահության արժանի ենք եղել առօրյա հարցերում: Հարգանքով վերաբերվեք ամենանվիրական հարցերում դրսևորված վստահությանն ու մտահոգություններին: Կառուցեք ձեռք բերած վստահության վրա: Իսկապես բախտավոր են այն մարդիկ, ովքեր օրհնված են հարաբերվելու մեկի հետ, որի հետ նրանք կարող են առանձին խոսել և որին կարող են վստահել: Ո՞վ է ասում, որ ընտանեկան վստահությունն ավելի մեծ չէ, քան համայնքի վստահությունը:

Հաղորդակցվեք համբերությամբ

7. *Համբերություն դրսևորելու պատրաստակամություն:* Համբերությունը հաղորդակցության ժամանակ այն որոշակի բաղադրիչն է վարքի, որը մենք հույս ունենք ուրիշները կդրսևորեն մեր հանդեպ, երբ մենք ձախողվում ենք դրան հասնել: Մեր սեփական համբերությունը զարգանում է, երբ մենք համբերատար ենք լինում ուրիշների հետ:

«Եղիր համբերատար. եղիր լրջամիտ, եղիր ժուժկալ, ունեցիր համբերություն, հավատք, հույս և գթություն» (ՎԵՌ 6.19):

«Ես զզվել եմ քո բողոքները լսելուց» և «Ես քեզ հազար անգամ ասել եմ» ընդամենը բազմաթիվ հաճախակի կրկնվող ընտանեկան մեջբերումներից երկուսն են, որոնք ցույց են տալիս, որ համբերությունը հատել է և հաղորդակցման ուղիները փակված են:

Քաջություն է պահանջվում համբերությամբ հաղորդակցվելու համար: Մենք մշտապես պետք է անկեղծորեն արտահայտենք հպարտություն, հույս և սեր: Մեզանից յուրաքանչյուրը պետք է խուսափի երևալ որպես մեկը, որը անձնատուր է եղել և վերջնականապես հոգնել փորձելուց:

Պետք է խուսափել ուրիշների առջև ընտանիքի անդամներին ուղղելուց: Շատ ավելի ուշադրություն պետք է դարձվի խաղաղ, առանձին զրույցներին: Ընտանիքի բոլոր անդամների հետ հանգիստ համբերելը անգին արժանիք է:

Երբ ընտանիքի անդամները մեկը մյուսին չեն լսում, հաղորդակցում տեղի չի ունենում: Ասվող բառերը չեն լսվում, անցանկալի են և դիմադրության են հանդիպում, երբ մենք ձախողվում ենք հասկանալ ճիշտ հերթագայության հիմունքները: Յուրաքանչյուրը պետք է հոժարակամ անի բարելավման իր մասը, քանի որ ընտանեկան միավորը Եկեղեցու հիմնական հիմքն է: Ճիշտ հաղորդակցումը միշտ կլինի ընտանեկան միասնության և հարատևության հիմնական բաղադրիչը:

Արդյունավետ հաղորդակցում

Աղոթում եմ, որ մեր Երկնային Հայրն օգնի մեզ տանը ավելի արդյունավետորեն հաղորդակցվել՝ զոհաբերելու, լսելու, զգացմունքները բարձրաձայն արտահայտելու, դատելուց խուսափելու, վստահությունը պահպանելու, համբերություն զարգացնելու պատրաստակամությամբ: «Ի՜նչ թափանցիկ են ուղիղ խոսքերը» (Յոբ Զ.25): Այո, ի՜նչ թափանցիկ են ուղիղ խոսքերը, որոնք տրվում են ճիշտ պահին ճիշտ անձնավորությանը:

Թող որ մեր ողորմած և բարի Երկնային Հայրն օգնի մեզ մեր կարիքների և ցանկությունների մեջ՝ հասնելու ավելի արդյունավետ ընտանեկան հաղորդակցման: Հաղորդակցումը կարող է օգնել մեզ կառուցել ընտանեկան միասնություն, եթե մենք կամենանք աշխատել այդ ուղղությամբ և զոհաբերենք հանուն դրա: Այս նպատակի համար ես աղոթում եմ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՈՒՆԿՆԴՐԵՔ, ՈՐ ՍՈՎՈՐԵՔ



Երեց Ռասսել Մ. Նելսոն

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, ապր. 1991, 27–28, 31, կամ Ensign, մայիս 1991, 22–23, 25

Ունկնդրեք, որ սովորեք

Համաժողովի այս նիստի իր աղոթքում Երեց Հյու Վ. Փինոքը խնդրեց, որ մենք կարողանանք ուշադիր ունկնդրել: Եկեղեցու գրականության բազմաթիվ հոդվածներ անդրադարձել են ունկնդրելու կարևորությանը:[1] Նրանք հաստատում են այն ասացվածքը, որն ուսուցանում է այս կարևոր դասը. «Խորհուրդ լսիր և խրատ ընդունիր, որ յետի ժամանակումդ իմաստուն լինես» (Առակաց ԺԹ.20):[2] Անշուշտ իմաստություն կգա, երբ մենք ունկնդրենք, որ *սովորենք*՝ երեխաներից, ծնողներից, աշխատակիցներից, հարևաններից, Եկեղեցու առաջնորդներից և Տիրոջից:

Երեխաներ

Ծնողներ և ուսուցիչներ, սովորեք ունկնդրել, ապա ունկնդրեք, որ սովորեք երեխաներից: Մի անգամ մի իմաստուն հայր ասել է. «Ես ավելի շատ բարիք եմ գործում, երբ ունկնդրում եմ իմ երեխաներին, քան երբ ես խոսում եմ նրանց հետ»:[3]

Երբ մեր ամենափոքր դուստրը մոտ չորս տարեկան էր, ես տուն եկա հիվանդանոցի հերթապահությունից բավականին ուշ երեկոյան: Ես գտա իմ սիրելի կնոջը շատ հոգնած: Ես չգիտեմ ինչու: Նա ընդամենը ինքը երեխա էր ողջ օրը խնամել: Այսպիսով, ես առաջարկեցի որ քնելու պատրաստեմ մեր չորս տարեկանին: Ես սկսեցի հրամաններ արձակել՝ «Հանիր շորերդ, կախիր դրանք, հագիր գիշերազգեստդ, խոզանակիր ատամներդ, ասա աղոթքդ» և այլն, հրամաններ տալով մի եղանակով, որն ավելի կսազեր բանակի մի խիստ սպայի: Հանկարծ նա գլուխը մի կողմ թեքեց, նայեց ինձ թախծոտ հայացքով և ասաց. «Հայրիկ ես քո սեփականությո՞ւնն եմ»:

Նա ինձ մի կարևոր դաս սովորեցրեց: Այդ քաղցրիկ հոգու վրա ես գործածում էի հարկադրական մեթոդ: Երեխաներին ուժով կառավարելը սատանայի տեխնիկան է, ոչ թե Փրկչի: Ոչ, երեխաները մեր սեփականությունը չեն: Մեր ծնողական պարտականությունն է սիրել նրանց, առաջնորդել նրանց և թույլ տալ նրանց գնալ:

Ունկնդրելու պահը այն ժամանակ է, երբ ինչ որ մեկը կարիք ունի, որ իրեն լսեն: Երեխաները բնականաբար ձգտում են կիսվել իրենց փորձառություններով, որոնք կարող են տատանվել հաղթանակի հրճվանքից մինչև վշտալի փորձություններ: Մենք այնումենայնիվ ձգտո՞ւմ ենք ունկնդրել նրանց: Եթե նրանք փորձում են արտահայտել իրենց տառապանքը, արդյոք հնարավո՞ր է մեզ համար սրտաբացորեն ունկնդրել ցնցող մի փորձառություն առանց ինքներս ընկնելու շոկային վիճակի մեջ: Կարո՞ղ ենք ունկնդրել առանց ընդհատելու և առանց սուր դիտողություններ անելու, որոնք շրխկոցով փակում են երկխոսության դուռը: Այն կարող է բաց մնալ հանգստացնող համոզվածությամբ, որ մենք հավատում ենք նրանց և հասկանում նրանց զգացմունքները: Մեծահասակները չպետք է ձևացնեն, որ տվյալ փորձառությունը չի պատահել ուղղակի այն պատճառով, որ նրանք այլ կերպ կցանկանային լիներ:

Նույնիսկ լռությունը կարող է ոչ ճիշտ մեկնաբանվել: Մի պատմություն կա գրված մի «փոքրիկ տղայի մասին, [որը] նայեց իր մորը և ասաց. «Ինչո՞ւ ես իմ վրա բարկացած»: Նա պատասխանեց. «Ես բարկացած չեմ քո վրա: Ի՞նչն է ստիպում քեզ այդպես մտածել»: «Դեհ, ձեռքերդ դրված են կոնքերիդ և ոչինչ չես ասում»:[4]

Դեռահասների ծնողները գուցե մտածեն, որ ունկնդրելու պահը հաճախ ոչ այնքան հարմար է, որքան կարևոր, երբ պատանիները միայնակ են զգում կամ նեղված: Եվ երբ

թվում է նրանք ամենաքիչն են արժանի բարեհաճության, նրանք հավանաբար դրա կարիքն ամենաշատը ունեն:

Իմաստուն ծնողները և ուսուցիչները ունկնդրում են, որ սովորեն երեխաներից:

Ծնողներ

Տարբեր տարիքի երեխաները սովորում են ունկնդրել և ունկնդրում են, որ սովորեն ծնողներից, ինչպես Երեց [Դալլին Հ.] Օուքսը սովորեցրեց մեզ այս առավոտ: Հոգեպես թե ֆիզիկապես այն կարող է լինել կյանքի ու մահվան հարց:

Մի քանի տարի առաջ ես հրավիրվեցի մի կարևոր դասախոսություն կարդալու Նյու Յորք Սիթիի բժշկական համալսարանում: Դասախոսությունից առաջ երեկոյան Քույր Նելսոնը և ես հրավիրվեցինք ճաշի մեզ հյուրընկալող պրոֆեսորի տանը: Այնտեղ նա հպարտորեն մեզ ներկայացրեց իր գեղեցիկ դստերը, որը բժշկական համալսարանի հարգված ուսանողուհի էր:

Մի քանի շաբաթ անց այդ պրոֆեսորը զանգահարեց ինձ խոսելով վշտահար ձայնով: Ես հարցրեցի. «Ի՞նչ է պատահել»:

«Հիշո՞ւմ եք մեր դստերը, ում հետ ձեզ ծանոթացրեցի մեր տանը»:

«Իհարկե»,- պատասխանեցի ես,-Երբեք չեմ մոռանա այդպիսի հոյակապ երիտասարդ աղջկա»:

Այդ ժամանակ նրա հայրը հեկեկալով ասաց. «Անցած գիշեր նա զոհվեց ավտովթարից»: Փորձելով իրեն հավաքել նա շարունակեց. «Նա թույլտվություն խնդրեց, որ գնա պարելու մի երիտասարդի հետ: Ես լավ կանխազգացում չունեի դրա վերաբերյալ: Ես ասացի նրան այդ մասին և խնդրեցի, որ չգնա: Նա հարցրեց. «Ինչո՞ւ»: Ես ուղղակի ասացի նրան, որ անհանգիստ եմ զգում: Նա միշտ հնազանդ աղջիկ է եղել, սակայն ասաց, որ ցանկանում է գնալ, քանի որ ես չեմ կարողանում հիմնավորել մերժումը: Եվ այդպես էլ արեց: Պարի ժամանակ ալկոհոլային խմիչք էր մատուցվել: Նրա ուղեկիցը մի քիչ խմել էր, մենք չգիտենք թե որքան: Տունդարձի ճանապարհին նա մեծ արագությամբ էր վարել մեքենան, բաց էր թողել շրջադարձը և հարվածելով պաշտպանական բազրիքին ընկել էր ներքևի ջրամբարը: Երկուսն էլ սուզվել էին ջրի տակ և մահացել»:

Երբ իմ ցավակցությունը հայտնեցի, նա ասաց. «Իմ վիշտը ավելի խորն է, որովհետև ես հստակ զգացում ունեի, որ դժբախտություն էր սպասվում: Ինչո՞ւ ես չկարողացա համոզիչ լինել»:

Այս փորձառությունը կարող է զուր չլինել, եթե մյուսները կարողանան ունկնդրել և սովորել դրանից: Երեխաներ, պատվեք ձեր ծնողներին,[5] նույնիսկ երբ նրանք չեն կարողանում լիարժեքորեն բացատրել իրենց զգացումները:

Խնդրում ենք հավատք ունեցեք այս սուրբ գրության հանդեպ, որը վերաբերում է բոլոր տարիքային խմբերին. «Լսիր, որդեակս, քո հոր խրատը, և մի մերժիր քո մոր հրահանգը» (Առակաց Ա.8):

Ծնողները աստվածային պարտավորություն ունեն սովորեցնելու իրենց երեխաներին սիրել Տիրոջը:[6] Երեխաները երկակի պարտականություն ունեն. «հնազանդվել [իրենց] ծնողներին Տերում» (Եփեսացիս Զ.1):[7]

Իմաստուն երեխաներն ունկնդրում են, որ սովորեն ծնողներից:

Ամուսիններ

Ամուսիններն ու կանայք սովորում են ունկնդրել և ունկնդրում են մեկը մյուսից սովորելու համար: Ինձ զվարճացրեց Երեց Ֆ. Բրրթն Հովարդի կողմից իր կենսագրությունում գրված Նախագահ Մարիոն Գ. Ռոմնիի մասին մի դեպք: «Նրա բարեհոգի հումորով սերը Իդայի հանդեպ դրսևորվում էր բազմաթիվ ձևերով: Նա հրճվանքով էր պատմում նրա լսողության կորստի մասին: «Մի անգամ ես բժշկի գնացի նրա լսողության հարցով»,- ասում էր նա: Նա հարցրեց ինձ, թե որքանով է վատ վիճակը և ես ասացի, որ չգիտեմ: Նա ինձ պատվիրեց տուն գնալ և պարզել: Բժիշկը հրահանգեց ինձ գնալ ամենահեռավոր սենյակը և խոսել նրա հետ: Հետո պետք է շարժվեի ավելի ու ավելի մոտիկ մինչև նա կլսեր: Հետևելով բժշկի խորհրդին ես խոսեցի նրա հետ ննջասենյակից, երբ նա գտնվում էր խոհանոցում՝ ոչ մի պատասխան: Ես ավելի մոտեցա և նորից խոսեցի՝ ոչ մի պատասխան: Այսպիսով, ես գնացի ուղիղ դեպի դուռը և ասացի. «Իդա, լսո՞ւմ ես ինձ»: Նա պատասխանեց. «Ի՞նչ է պատահել, Մարիոն, ես երեք անգամ պատասխանեցի քեզ»:[8]

Նույնիսկ նորմալ լսողությամբ որոշ զույգեր կարծես չեն լսում մեկը մյուսին: Խոսելու համար ժամանակ տրամադրելը կարևոր է հաղորդակցման գծերը սարքին պահելու համար: Եթե ամուսնությունը կյանքի հիմնական փոխհարաբերությունն է, այն արժանի է հիմնական ժամանակին: Սակայն հաճախ առաջնահերթություն է տրվում ոչ այնքան կարևոր հանդիպումներին և տեսակցություններին, թողնելով միայն պահերի մնացորդներ թանկագին ամուսիններին լսելու համար:

Ժամանակ և սիրո պարտավորվածություն է պահանջվում ամուսնության պարտեզը լավ խնամված և անտեսվածության մոլախոտերից զերծ պահելու համար: Դա ոչ միայն հաճելի արտոնություն է, այլ սուրբգրքյան պահանջ՝ հավերժական փառքի խոստումով:[9]

Իմաստուն ամուսիններ, ունկնդրեք՝ մեկդ մյուսից սովորելու համար….

Իմաստուններն ունկնդրում են՝ Տիրոջից սովորելու համար: Ես վկայում եմ Նրա մասին և հավաստում, որ երբ «ականջ

ենք դնում և …. Լսում Տիրոջ ձայնը», մենք օրհնվում ենք, «քանզի նրա գալստի ժամը մոտ է» (ՎԱՈՒ 133.16–17), Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. Օրինակները ներառում են հետևյալը.

   Marvin J. Ashton, "Family Communications," *New Era,* Oct. 1978, pp. 7–9.

   Lynne Baker, "Please Take Time to Listen!!" *Improvement Era,* Nov. 1968, pp. 110–13.

   Marilyn A. Bullock, "Listening to My Two-year-old," *Ensign,* Jan. 1983, p. 70.

   Henry B. Eyring, "Listen Together," in *1988–89 Devotional and Fireside Speeches* [Provo: Brigham Young University Press, 1989], pp. 11–21.

   Winnifred C. Jardine, "Listen with All of You," *Ensign,* Feb. 1974, p. 51.

   Larry K. Langlois, "When Couples Don't Listen to Each Other," *Ensign,* Sept. 1989, pp. 16–19.

   Boyd K. Packer, in Conference Report, Oct. 1979, pp. 27–31; կամ *Ensign,* Nov. 1979, pp. 19–21.

   H. Burke Peterson, in Conference Report, Apr. 1990, pp. 105–8; կամ *Ensign,* May 1990, pp. 83–84.

   "Giving with Your Ears," *Church News,* 13 Jan. 1985, p. 16.

   "Parents, Are You Listening?" *Ensign,* Feb. 1971, pp. 54–57.

2. Տես նաև Առակաց Ը.32–33, Հակոբ 6.12:
3. George D. Durrant, "Take Time to Talk," *Ensign,* Apr. 1973, p. 24; տես նաև Հակոբոս Ա.19:
4. Florence B. Pinnock, "Let's Listen," *Improvement Era,* Oct. 1964, pp. 872–73.
5. Տես Ելից Ի.12, Երկրորդ Օրինաց Ե.16, Մատթեոս ԺԵ.4, ԺԹ.19, Մարկոս Է.10, Ժ.19, Ղուկաս ԺԸ.20, Եփեսացիս Զ.2, 1 Նեփի 17.55, Մոսիա 13.20:
6. Տես Ղևտացոց Ժ.11, Երկրորդ Օրիանաց Դ.10, Զ.5–7, ԺԱ.19, Մոսիա 1.4, ՎԱՈՒ 68.25, 28, Մովսես 6.57–58:
7. Տես Կողոսացիս Գ.20:
8. F. Burton Howard, *Marion G. Romney: His Life and Faith* [Salt Lake City: Bookcraft, 1988], pp. 144–45.
9. Տես Եփեսացիս Ե.25, 33, Կողոցասիս Գ.19, Ա Պետրոս Գ.1, Հակոբոս Գ.7, ՎԱՈՒ 132.19:

ՈՒԽՏԵՐ ԵՎ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պահելով ձեր ուխտերը, դուք ապահով կլինեք: Խախտելով դրանք, դուք ապահով չեք լինի:

—Երեց Բոյդ Կ. Փաքեր

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Պահել մեր ուխտերը

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ

«Սուրբ Հոգու Խոստումը Սուրբ Հոգին է, որը դնում է հաստատման դրոշմը յուրաքանչյուր արարողության՝ մկրտության, հաստատման, կարգման, ամուսնության վրա: Խոստումն է, որ օրհնությունները կստանան հավատարմության միջոցով»:

Եթե մարդը խախտում է ուխտը, լինի դա մկրտություն, կարգում, ամուսնություն կամ որևէ այլ բան, Հոգին ետ է վերցնում հաստատման դրոշմը, և օրհնությունները չեն գալիս:

Յուրաքանչյուր արարողություն կնքվում է պարգևի խոստումով, որը հիմնված է հավատարմության վրա: Երբ խախտվում են ուխտերը,Սուրբ Հոգին ետ է վերցնում հաստատման դրոշմը» (*Doctrines of Salvation*, 1:45):

«*Ամուսնալուծությունը Ավետարանի ծրագրի մասը չէ:* Եթե ողջ մարդկությունը ապրի ավետարանին խիստ հնազանդվելով և այն սիրով, որը ծնվում է Տիրոջ Հոգու միջոցով, բոլոր ամուսնությունները հավերժական կլինեին, իսկ ամուսնալուծությունընդհանրապես գոյություն չէր ունենա:…

Ամուսնալուծության համար Տիրոջ տուգանքը…

Եկեղեցու օրենքների համաձայն ամուսնությունը ամենասուրբ և ամենասրբազան արարողությունն է: Այն ամուսնում և կնոջը կբերի լիակատար վեհացում Աստծո արքայությունում, եթե նրանք մնան իրենց ուխտերում: Երբ այդ ուխտը խախտվում է, այն բերում է *հավերժական թշվառություն մեղսավոր զույգին,* քանի որ մենք բոլորս պետք է պատասխան տանք մեր գործերի համար, որոնք արել ենք մարմնում եղած ժամանակ: Դա մի արարողություն է, որի հետ չպետք է անփույթ վերաբերվել, և տաճարում կապած ուխտերը չեն կարող խախտվել առանց մեղավորի սոսկալի պատժի: ….

Մարդուն պատվիրվել է աճել և շատանալ: Պարտավորությունները, որոնք ամուսնացած զույգերը վերցնում են իրենց վրա, պետք է համապատասխանեն ամենայն մանրամասնությամբ Տիրոջ կողմից տրված պատվիրաններին:

Սկզբում, Եվային տալով Ադամին Տերն ասաց. «Աճեցեք և շատացեք, և լցրեք երկիրը, և տիրեցեք նորան» [Ծննդոց Ա.28, Մովսես 2.28]: Այս երկիրը ստեղծվել է հենց այն նպատակով, որ մեր Հոր հոգևոր զավակները կարողանան *ժամանակավոր գոյության արտոնություն* ունենալ՝ ստանալով մսից և ոսկորներից մարմիններ որպես տաղավարներ հոգիների համար, որոնք զբաղեցնում են դրանք, իսկ հետո Հիսուս Քրիստոսի քավության միջոցով, ստանան հարություն, որի ժամանակ հոգին և մարմինը դառնում են անբաժանելիորեն միացված, որպեսզի մարդը կարողանա կրկին ապրել:…

Ադամին տրված շատանալու ուխտը վերականգվեց ջրհեղեղից հետո Նոյի և նրանից հետո նրա որդիների հետ: Տերն ասաց Նոյին. «Եվ դուք աճեցեք ու շատացեք, երկրի վերայ բազմացեք և նորանում շատացէք: Եվ Աստուած ասեց Նոյին եւ նորա որդկանցը նորա հետ՝ ասելով. Եւ ես ահա իմ ուխտը հաստատում եմ ձեզ հետ եւ ձեզանից յետոյ ձեր սերունդի հետ » [Ծննդոց Թ.7–9]:

Այս ուխտը դեռևս կապող է, չնայած մարդկությունը հեռացել է հավերժական կյանքի ուղուց և մերժել ամուսնության ուխտը, որը բացահայտել է Տերը….

Մեռական մեղքի նողկալիությունը…

Ուրեմն արդյոք կարելի՞ է զարմանալ, որ Տերը դնում է ամուսնության այս ուխտի խախտումը և առաքինության կորուստը որպես երկրորդը անմեղ արյուն թափելուց հետո միայն: [Տես Ալմա 39.5–9] Ուրեմն մի՞թե բավականաչափ պատճառ չկա պատժի խստության համար, որը խոստացվել է նրանց, ովքեր խախտում են այս հավերժական օրենքը: Դեռ ավելին, *մի՞թե մենք չենք մոռացել ընդհանուր առմամբ կույս չլինելու հանցագործության և ամուսնական երդումների խախտման նողկալիությունը:* Մի՞թե նրանք, ովքեր հանցավոր են, կարծում են, որ կյանքի օրենքների դիտավորյալ կամ ամբարշտորեն ոտնակոխ անելը անուշադրության կմատնվի արդար Աստծո կողմից: Միթե՞ նրանք կարծում են, թե մի քանի մտրակահարվածները, կամ ընդհանրապես որևէ պատիժամիջոց, կարող է ուղղել այս օրենքի խախտումը» (*Doctrines of Salvation*, 2:80, 83–84, 86–87, 92):

Երեց Մարիոն Գ. Ռոմնի

«Ավետարանի այս պտուղները՝ հավաստիացումը, որ մենք ձեռք կբերենք հավերժական կյանք, խաղաղություն այս աշխարհում, որն ամրացված է այդպիսի հավաստիացմամբ, և ի վերջո հավերժական կյանք գալիք

աշխարհում, հասանելի են մեզ բոլորիս համար»: Սակայն երբեմն դրանք չհասկանալու կամ չգնահատելու պատճառով, ես համոզված եմ, որ մենք շատ բաներ համարում ենք, որ այդպես էլ պետք է լինի: Մենք ենթադրում ենք, որ քանի որ Եկեղեցու անդամներ ենք, բնականաբար կստանանք ավետարանի բոլոր օրհնությունները: Ես լսել եմ, թե ինչպես են մարդիկ վիճում, որ իրենք հայցում են այդ օրհնությունները, քանի որ նրանք տաճարում են եղել, չնայած լիարժեքորեն չեն պահում այնտեղ կապած իրենց ուխտերը: Չեմ կարծում, որ դա այդպես կլինի:

Մենք կարող ենք դաս քաղել Մարգարեի կողմից տրված հարության տեսիլքի պատմությունից, որում նա հիշատակում է, որ *ամենատխուր բաներից մեկը, որը նա երբևէ տեսել էր Եկեղեցու անդամների վիշտն էր, ովքեր դուրս եկան մի հարության ժամանակ, որն ավելի ցածր էր նրանից, ինչ նրանք համարել էին, որ այսպես թե այնպես պիտի ստանան»* (in Conference Report, Oct. 1949, 43; շեղագիրն ավելացված է):

Երեց Բոյդ Կ. Փաքեր

«Իմ ուղերձը ուղղված է ձեզ, որ գայթակղվել եք նպաստելու կամ էլ սկսելու և պահպանելու մի կենսաոճ, որը խախտում է ձեր ուխտերը և մի օր վիշտ կբերի ձեզ և ձեր սիրելիներին:

Մեծ թվով մարդիկ այժմ մրցում են դարձնելու հոգեպես վտանգավոր կենսաոճերը օրինական և հասարակայնորեն ընդունելի: Դրանց թվում են վիժեցումը, համասեռամոլշարժումը տղամարդկանց և կանանց մեջ և թմրադեղերից կախվածությունը: Նրանք բանավիճում են հավաքներում և սեմինարներում, դասընթացներում, զրույցներում, համագումարներում և դատարաններում ողջ աշխարհով մեկ: Դրանց հասարակական և քաղաքական կողմերը ամեն օր մամուլում է:

Խնդիրը, որ ես ուղղակի բարձրացնում եմ, սա է. կան այս հարցերի ԲԱՐՈՅԱԿԱՆ և ՀՈԳԵՎՈՐ կողմերը, որոնք ամենուրեք անտեսվում են: Վերջին Օրերի Սրբերի համար բարոյականությունը մի բաղկացուցիչ մաս է, որը չպետք է անտեսվի, երբ քննարկվում են այս հարցերը, հակառակ դեպքում սրբազան ուխտերը վտանգի տակ են: Պահելով ձեր ուխտերը, դուք ապահով կլինեք: Խախտելով դրանք, դուք ապահով չեք լինի:…

Աստծո օրենքները հաստատվել են մեզ երջանիկ դարձնելու համար: Երջանկությունը չի կարող համագոյակցել անբարոյականության հետ՝ Ալմա մարգարեն ասել է մեզ խորամիտ հստակությամբ, որ «ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել» (Ալմա 41.10) (in Conference Report, Oct. 1990, 107–8; կամ *Ensign*, Nov. 1990, 84):

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս

«Ինչպես ուսուցանվում է այս սուրբ գրությունում [ՎԿՈՒ 123.19], հավերժական կապը տեղի չի ունենում ուղղակի որպես տաճարում կնքված ուխտերի արդյունք: Ինչպե՞ս ենք պահում մեզ այս կյանքում կորոշի, թե ինչ մենք կլինենք գալիք ողջ հավերժությունների մեջ: Երկնային Հոր տված կնքման օրհնությունները ստանալու համար, մենք պետք է պահենք պատվիրանները և մեզ պահենք այնպես, որ մեր ընտանիքները կամենան ապրել մեզ հետ հավերժությունների ընթացքում: Ընտանեկան հարաբերությունները, որոնք մենք ունենք այստեղ՝ այս երկրի վրա, կարևոր են, բայց դրանք շատ ավելի կարևոր են մեր ընտանիքների վրա ունեցած իրենց ազդեցություններով մահկանացու կյանքի սերունդների և ողջ հավերժության համար:

Աստվածային պատվիրանով ամուսիններից պահանջվում է սիրել միմյանց ամեն ինչից առավել: Տերը հստակորեն հայտարարում է. «Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի» (ՎԿՈՒ 42.22) (in Conference Report, Oct. 1996, 87; կամ *Ensign*, Nov. 1996, 65):

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ և Պատրիցիա Թ. Հոլլանդ

«ՋՌՀ՝ Այդ պատճառով մենք կարող ենք ուխտեր կապել այդպիսի վստահությամբ, իմանալով անկասկած Աստծո զորությունը խավարի և վտանգի և ամեն տեսակի նեղությունների վրա: Մենք պետք է երախտագիտություն հայտնենք մեր հոգու խորքից երջանկության ծրագրի համար, որն ապահովում է փախուստ ամեն անձնական սխալից, որ երբևէ գործել ենք և ամեն հիմար բանից, որ երբևէ արել ենք: Մենք պետք է արտահայտենք հավերժական շնորհակալություն մաքուր, անկեղծ, աստվածային բարությանը, որը կարող է փարատել ամեն մտահոգություն, բուժել ամեն վերք, վերացնել ամեն թերություն և, ի վերջո, չորացնել ամեն արտասուք: Թագավոր Լամոնին տեսավ Աստծուն, Քրիստոսին և ծրագիրը, որն անչափ ապշեցրեց նրան: Այն մեզ ևս կապշեցնի՝ իր ուժով և շքեղությամբ, երբ մեր կարիքը բավականաչափ մեծ է, մեր հավատքը բավականաչափ ուժեղ և մեր հեռանկարը բավականաչափ հստակ՝ այն տեսնելու համար: Մեր ծայրահեղ վիճակում մենք կտեսնենք, եթե պահենք մեր ուխտերը, կտեսնենք ինչպես են խավարի ամպերը բարձրանում, անհավատության վարագույրը հեռացվում Հոր ձեռքով, որը հավերժորեն պարտավորված է մեր երջանկության համար:

«*ՓԹՀ՝* … Ուխտերը ոչ միայն պարտավորեցնում են մեզ անսասան լինել Աստծո հանդեպ մեր նվիրվածության մեջ, դրանք հիշեցնում են մեզ, որ Աստված միշտ անսասան կլինի մեր հանդեպ իր նվիրվածության մեջ: Եվ չնայած

մենք կարող է տատանվենք և կատարենք սխալներ, Նա երբեք չի տատանվում: Նա երբեք սխալ չի գործում: Նա ընդմիշտ հավատարիմ է մեզ: Սա է գեղեցկությունն ու վեհափառությունը, որը ներհատուկ է այն ուխտերին, որ մենք կապում ենք Աստծո հետ:

ՋՈՒՀ՝ Ուխտերը պարտավորեցնող են, սրբազան, կատարյալ պայմանագրեր Աստծո և իր զավակների միջև: Դրանք հանդիսավոր խոստումներն են Աստվածության՝ Աստված, որը միշտ պահում է իր խոսքը, որ երկինքը դուրս կթափի անհամար օրհնություններ բոլոր նրանց վրա, ովքեր հավատարիմ են և հարգում են իրենց երդման պայմանները: Մարդ կարող է երդվել երդումով, բայց միայն այն դեպքում, երբ Աստված փոխադարձաբար պատասխանում է, ուխտ է հաստատվում:

Մենք գիտենք, որ երդումները երբեք չպետք է ասվեն թեթևակիորեն և ուխտի լեզուն ևս ավելի բարձր կարգի է: Ուխտերը ճշգրտորեն արտահայտում են ամենասրբազան լեզուն, որ մենք կարող ենք արտաբերել այս աշխարհում: Այս լեզուն հաստատում է կապ և փոխհարաբերություն, որը եզակի է մարդկային փորձառության մեջ: Դա այն միջոցն է, որով անկում ապրած ընտանիքի անհատները իրենց ճանապահն են բացում՝ ետ դեպի հավերժական փառահեղություն: Դա այն միջոցն է, որով մեզանից յուրաքանչյուրը կարող է Տիրոջ իսկ խոսքերով «սեպհական ժողովուրդ [լինել] ամեն ազգերիցը» (Ելից ԺԹ.5): Այդ պատճառով մեր ուխտերը պահելը, ինչպես սուրբ գրություններն են ասում, կավելացնեն « փառք…. նրանց գլխին հավիտյանս հավիտենից» (Աբրահամ 3.26) (in Green and Anderson, *To Rejoice as Women*, 99–100):

Երեց Ջ. Բալլարդ Ուռշբորն

«Այսպիսով, մենք տեսնում ենք, որ ամուսնանալով ամուսինն ու կինը մտնում են քահանայության մի կարգի մեջ, որը կոչվում է ամուսնության նոր և հավիտենական ուխտ: Այս ուխտը ներառում է երեխաներ ունենալու և ավետարանով նրանց կրթելու պատրաստակամություն: Աշխարհի բազմաթիվ խնդիրներ առաջ են գալիս, երբ ծնողները չեն ընդունում այս ուխտի պարտականությունները: Այս ուխտին հակառակ է կանխարգելել երեխաների ծնունդը, եթե ծնողները առողջական լավ վիճակում են գտնվում:

Երեսունհինգ տարի առաջ, երբ ես առաջին անգամ սկսեցի զբաղվել բժշկությամբ, հազվադեպ մի բան էր ամուսնացած կնոջ համար խորհուրդ հարցնել այն մասին, թե ինչպես կարող էր պաշտպանվել երեխաներ ունենալուց: Երբ ես ավարտեցի բժշկությամբ զբաղվել, հազվադեպ բան էր, բացի մի քանի հավատարիմ Վերջին Օրերի Սուրբ կանանցից, ամուսնացած կնոջ համար ցանկանալ ունենալ ավելի քան մեկ կամ երկու երեխա, իսկ ոմանք չէին ուզում ունենալ *որևէ* երեխա: Մենք Եկեղեցում չպետք է տարվենք աշխարհիկ կեղծ վարդապետություններով, որոնք կստիպեն մեզ խախտել տաճարային սրբազան ուխտերը:

Մենք տաճար ենք գնում ուխտեր կապելու, բայց մենք տուն ենք գնում պահելու այդ ուխտերը, որոնք մենք կապել ենք: Տունը ստուգարքային հրապարակ է: Տունը այն վայրն է, որտեղ մենք սովորում ենք ավելի Քրիստոսանման լինել: Տունը այն վայրն է, որտեղ մենք սովորում ենք հաղթահարել եսասիրությունը և ծառայել մյուսներին» (in Conference Report, Apr. 1995, 13; կամ *Ensign*, May 1995, 12):

Ուխտի վրա հիմնված մեր փոխհարաբերությունը Տիրոջ հետ

Անդրադառնալով մեր ավետարանական ուխտերի կարևորությանը Երեց Մ. Ռասսել Բալլարդն ասել է.

«Տիրոջ հետ կապած մեր ուխտերին պարբերաբար անդրադառնալը կօգնի մեզ մեր առաջնահերթություններն ընտրելիս և մեր կյանքը հավասարակշռելիս: Այս անդրադարձը կօգնի մեզ տեսնել, թե որտեղ մենք պետք է ապաշխարենք և փոխենք մեր կյանքը՝ հավաստիանալու, որ մենք արժանի ենք այն խոստումներին, որոնք ուղեկցում են մեր ուխտերին և սրբազան արարողություններին: Մեր սեփական փրկությունը գործելու համար անհրաժեշտ է լավ ծրագրավորում և նպատակաուղղված, քաջարի ջանքեր» (in Conference Report, Apr. 1987, 15; կամ *Ensign*, May 1987, 14):

Հետևյալ աղյուսակներից անդրադարձեք այն խոստումներին, որոնք մենք տալիս ենք և յուրաքանչյուր ավետարանի ուխտին հնազանդ լինելու համար առաջարկվող օրհնություններին: Արդյոք բարեփոխվելու կարիք զգո՞ւմ եք: Ի՞նչ կարող եք անել ուխտերը պահելիս ավելի հավատարիմ լինելու համար, ուխտեր, որոնք նախապատրաստում են մեզ հավերժական ամուսնությանը: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ավելի հավատարիմ լինեքայն ուխտերը պահելիս, որոնք կապված են ամուսնության նոր և հավիտենական ուխտի հետ:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Իշխանություն

Ահարոնյան Քահանայության (կամ Մելքիսեդեկյան Քահանայության) որևէ քահանա կարող է կատարել արարողությունը տեղի քահանայության ղեկավարի թույլտվությամբ: Նա ասում է սուրբգրքյան մկրտության աղոթքը և ապա մկրտություն ստացողին լիովին սուզում ջրի մեջ:

Ուխտերը, որոնք մենք կապում ենք Աստծո հետ

Մենք ուխտում ենք.

- Միանալ Աստծո հոտին:
- Վերցնել մեզ վրա Հիսուս Քրիստոսի անունը:
- Կանգնել որպես Հիսուս Քրիստոսի վկա:
- Միշտ պահել պատվիրանները:
- Կրել մեկս մյուսի բեռը:
- Աստծուն մինչև վերջ ծառայելու վճռականություն դրսևորել:
- Գործերով ցույց տալ, որ մենք ապաշխարել ենք մեր մեղքերից:
- Պատրաստվել ստանալ Սուրբ Հոգին մեղքերի լիակատար թողության համար:

Տես 2 Նեփի 31.17–21, Մոսիա 18.8–10, ՎԿՈՒ 20.37, Հավատո Հանգանակ 1.4:

Խոստացված օրհնություններ

1. Մենք արժանի ենք դառնում Քրիստոսի Եկեղեցու անդամակցությանը:
2. Եթե մենք արժանի ենք, Տերը խոստանում է.
   - Իր Հոգին թափել մեզ վրա:
   - Փրկագնել մեզ մեր մեղքերից:
   - Մեզ բարձրացնել Առաջին Հարության ժամանակ:
   - Տալ մեզ հավերժական կյանք:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎԸ

Իշխանություն

Մելքիսեդեկյան Քահանայություն կրողը, լիազորված տեղի քահանայության ղեկավարի կողմից, աղոթքով և ձեռնադրմամբ կարող է շնորհել Սուրբ Հոգու պարգևը:

Ուխտերը, որոնք մենք կապում ենք Աստծո հետ

Որպեսզի արժանի լինենք Սուրբ Հոգու պարգևին, մենք պետք է պահենք մկրտության ուխտերը, շարունակենք համեստությամբ ու հավատքով, և այսպիսով արժանի լինենք Սուրբ Հոգու մշտական ուղեկցությանը (տես Հավատո Հանգանակ 1.4):

Խոստացված օրհնություններ

1. Մենք հաստատվում ենք որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ:
2. Մենք ստանում ենք Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը վայելելու իրավունքը կամ արտոնությունը: Մենք կարող ենք անընդհատ Սուրբ Հոգուց ստանալ ոգեշնչում, երկնային հայտնություններ, հոգևոր պարգևներ և ուղղություն: Մենք նաև ստանում ենք օրհնություններ ընդունելով Սուրբ Հոգու պարգևը, քանի որ Սուրբ Հոգին է վկայություն բերում Հիսուս Քրիստոսի և աստվածային ճշմարտությունների մասին, տալիս հոգևոր առաջնորդություն և զգուշացումներ և հնարավորություն տալիս մեզ զանազանելու ճիշտը սխալից:
3. Մենք սրբագործվում ենք կամ մաքրվում Սուրբ Հոգու զորությամբ և ծնվում Աստծուց, երբ շարունակում ենք հավատարմորեն: Կրակով և Սուրբ Հոգու մկրտությամբ մարդկային սրտերն ու ցանկությունները մաքրվում են և հոգիները դարձվում են ամբիծ: Սուրբ Հոգու պարգևը ստանալը ապաշխարության և մկրտության գործընթացի գագաթնակետն է (տես 2 Նեփի 31.13, 17, 3 Նեփի 27.20):
4. Մենք գիտենք, որ Սուրբ Հոգու պարգևը Եկեղեցում գտնվող բոլոր հոգևոր պարգևների բանալին է, ներառյալ մարգարեության և հայտնության, բժշկության, լեզուներով խոսելու, լեզուների գրավոր և բանավոր թարգմանության պարգևները:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Իշխանություն

Ահարոնյան Քահանայության (կամ որևէ Մելքիսեդեկյան Քահանություն կրող) կարող է սպասավորել հաղորդությունը տեղի քահանայության ղեկավարի թույլտվությամբ: Հաղորդության աղոթքները տրված են սուրբ գրություններում:

Ուխտերը, որոնք կապում ենք Աստծո հետ

Մենք ուխտում ենք.

- Նորոգել մեր մկրտության ուխտերը:
- Վերստին պարտավորվել ձեզ վրա վերցնելու Հիսուս Քրիստոսի անունը, միշտ հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները: Հաղորդությունը ճաշակելը անձնական ներզննման, ապաշխարության և վերանվիրման ժամանակ է:

Տես 3 Նեփի 18.28–29, Մորոնի 4–5, ՎԼՈՒ 20.75–79, 27.2, 46.4:

Խոստացված օրհնություններ

1. Տերը ներում է մեղքերը, որոնց համար մենք ապաշխարում ենք:
2. Տերը խոստանում է, որ մենք կարող ենք միշտ ունենալ Նրա Հոգին մեզ հետ:

Ուխտի մեջ ծնված քմահաճ երեխաներ

ՍՏԱՆԱԼ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԴՈՒՄՆ ՈՒ ՈՒԽՏԸ

Իշխանություն

Մելքիսեդեկյան Քահանայություն կրողը, ունենալով իշխանություն այդ անելու, կարող է ձեռնադրել արժանի արական սեռի անդամներին Մելքիսեդեկյան Քահանայությամբ՝ աղոթքով և ձեռնադրմամբ:

Ուխտերը, որ մենք կապում ենք Աստծո հետ

Քահանայության կրողները ուխտում են.

- Լավ հավատքով և ազնիվ միտումով ստանալ ինչպես Ահարոնյան, այնպես էլ Մելքիսեդեկյան Քահանայությունները (տես ՎԵՈՒ 84.33):
- Փառավորել կոչումները՝ կատարելով բոլոր քահանայության պաշտոնների հետ կապված պարտականությունները, որոնց նրանք կանչված են:
- Ուսուցանել Աստծո խոսքը և աշխատել իրենց ողջ զորությամբ առաջ տանելու Տիրոջ նպատակները (տես Հակոբ 1.19):
- Ձեռք բերել ավետարանի գիտելիքը (տես ՎԵՈՒ 107.31):
- Ծառայություն մատուցել մխիթարելով և զորացնելով Աստծո Սրբերին (տես Մոսիա 18.8–9):
- Լինեք հնազանդ և «ջանասիրաբար ուշք դարձնեք հավերժական կյանքի խոսքերին» (ՎԵՈՒ 84.43):
- Ականջ դրեք և հետևեք Տիրոջից ստացած հայտնությանը: «Ապրեք Աստծո բերանից դուրս եկող ամեն մի խոսքով» (հ. 44):

See also Elder Carlos E. Asay, in Conference Report, Oct. 1985, 56–58; կամ *Ensign*, Nov. 1985, 43–44.

Խոստացված օրհնություններ

Արժանի քահանայություն կրողները ստանում են այս խոստումները.

1. «Հոգու կողմից սրբագործվում են ի նորացումն իրենց մարմնի» (ՎԵՈՒ 84.33):
2. «Դառնում են Մովսեսի ու Ահարոնի որդիները, և Աբրահամի սերունդը» (հ. 34):
3. Դառնում անդամներ «եկեղեցու և արքայության և ընտրյալներն Աստծո» (հ. 34):
4. Ստանում Հոր արքայությունը և «այն ամենն, ինչ իմ Հայրն ունի, կտրվի նրան» (հ. 38):
5. Ստացեք Հոր լրիվությունն ու փառքը և դարձեք «աստվածներ…. այսինքն Աստծո որդիներ » (ՎԵՈՒ 76.58):
6. Նախազգուշացվում են, որ նա, ով դրժում է այս ուխտը, և «ամբողջովին շրջվում է նրանից, չի ունենա մեղքերի ներում ոչ այս աշխարհում, ոչ էլ գալիք աշխարհում» (ՎԵՈՒ 84.41):

   Առաջին Նախագահությունից Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին ՎԵՈՒ 84.41-ի վերաբերյալ արել է հետևյալ դիտողությունը. «Ես չեմ կարծում, որ նա այստեղ խոսում է անպայման աններելի մեղքի մասին, բայց ես ասում եմ, որ մեզանից նրանք, ովքեր ստանում են այս քահանայությունը և հասկանում, թե ինչի մասին է այն, և չեն փառավորում իրենց կոչումները , կկորցնեն մի բան, որը հնարավոր չի լինի վերականգնել հետագայում» (in Conference Report, Apr. 1974, 116; կամ *Ensign*, May 1974, 80):

ՏԱՃԱՐԱՅԻՆ ՕԺՏՈՒՄ

Իշխանություն

Տաճարային օժտումը ի վերուստ տրված հոգևոր ուժի և օրհնության մի պարգև է: Այն բաղկացած է հրահանգների շարքից, փրկարար արարողություններից և ուխտերից, որոնք սպասավորվում են լիազորված պաշտոնյաների կողմից միայն նվիրագործված տաճարներում (տես ՎԱՈՒ 95.8, 97.14, 109.13–15):

Տաճարային օժտումը համարվում է որպես շարունակություն և գագաթնակետ ուխտերի, որոնք կատարվում են մկրտության ժամանակ: Տաճարային ուխտերը ներառում են «ստուգարքներ, որոնց միջոցով իմացվում է արդարակեցության համար մեր պատրաստակամությունը և համապատասխանությունը» (John A. Widtsoe, *Program of the Church of Jesus Christ of Latter-day Saints*, 178):

Ուխտերը, որ մենք կապում ենք Աստծո հետ

Մենք ուխտում ենք.

«Պահել անբիծ առաքինության և մաքրաբարոյության օրենքը, լինել գթառատ, նվիրաբերող, հանդուրժողական և շիտակ, նվիրել և տաղանդները, և նյութական միջոցները ճշմարտության տարածման և մարդկային ցեղի բարձրացման համար, պահպանել նվիրվածություն ճշմարտության գործին և ձգտել ամեն կերպ ներդրում կատարել այն մեծ նախապատրաստությանը, որպեսզի երկիրը պատրաստվի՝ ընդունելու իր Թագավորին՝ Տեր Հիսուս Քրիստոսին» (James E. Talmage, *House of the Lord*, 84):

Խոստացված օրհնություններ

1. «Յուրաքանչյուր ուխտը կապելիս և յուրաքանչյուր պարտականությունն ընդունելիս արտասանվում է խոստացված օրհնություն, պայմաններին հավատարիմ հետևելու պայմանով» (Talmage, *House of the Lord*, 84):
2. Մարգարե Ջոզեֆ Սմիթը ուսուցանել է, որ օժտումը նախատեսված է՝ մեզ տալու «Աստծո հետ մեր վիճակի և ճշմարիտ փոխհարաբերության բազմակողմանի հեռանկար» (*Teachings of the Prophet Joseph Smith*, 324), «նախապատրաստելու հետևորդներին աշխարհի հանդեպ իրենց առաքելություններին» (p. 274), կանխարգելելու մեզ «հաղթվելու այս չարիքներից» (p. 259), և հնարավորություն տալու մեզ «ապահովել այն օրհնությունների լիարժեքությունը, որոնք նախապատրաստված են Անդրանիկի Եկեղեցու համար»(p. 237):
3. Նախագահ Գորդոն Բ. Հինքլին Վերնելի Յուտայի Տաճարի նվիրագործման աղոթքում ասել է. «Մենք աղոթում ենք, որ Դու այցելես այն և թող Քո Սուրբ Հոգին այցելի այն և թող Քո Սուրբ Հոգին բնակվի այստեղ սրբագործելու այն և դարձնի այն սուրբ բոլորի համար, ովքեր կմտնեն դրա շքամուտքից ներս» (“We Thank Thee for This Sacred Structure,” *Church News*, 8 Nov. 1997, 4): Տաճարային օժտման միջոցով մենք կարող ենք փնտրել «Սուրբ Հոգու լրիվությունը» (ՎԱՈՒ 109.15): Տաճարային արարողությունները համարվում են միջոցներ՝ Սուրբ Հոգու միջոցով ոգեշնչում և հրահանգներ ստանալու և պատրաստվելու Աստծո ներկայություն վերադառնալու համար:

ՍԵԼԵՍՏԻԱԼ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Իշխանություն

Տաճարային արարողությունը, որն ունի քահանայության կնքող զորությունը, աղոթքով աղերսում է ուխտեր, որոնք նախատեսված են ազդեցություն ունենալ ժամանակի և ողջ հավերժության համար: Սելեստիալ ամուսնությունը ներառում է մի ծիսակատարություն, որը կատարվում է սուրբ տաճարում (տես ՎԵՈՒ 131.1–3, 132.18–19):

Ուխտերը, որոնք մենք կապում ենք Աստծո հետ

Զույգերը, ովքեր խոստանում են մնալ սելեստիալ ամուսնության օրենքի մեջ.

- Ուխտում են անբիծ սիրով հավատարիմ մնալ միմյանց և Աստծուն ողջ հավերժության ընթացքում:
- Ուխտում են պահպանել իրենց ինտիմ քնքշանքներն ու սեռական հարաբերությունները միմյանց հանդեպ:
- Պարտավորվում են ապրել այնպես, որ դա նպաստի երջանիկ և հաջողակ ընտանեկան կյանքին:
- Ուխտում են «աճել և շատանալ, և լցնել երկիրը» (Ծննդոց Ա.28): Տաճարային ամուսնության հիմնական նպատակն է այս կյանքում աճել և հասունանալ կիսվելով Աստծո ստեղծագործական աշխատանքով՝ արդարությամբ մեծացնելով ընտանիքը: Ծնողները համագործակցում են Աստծո հետ մահկանացու մարմիններ ստեղծելով, որտեղ բնակվում են Աստծո հոգևոր զավակները (in Ludlow, *Encyclopedia of Mormonism*, 2:859):

Խոստացված օրհնություններ

1. Ամուսիններն ու կանայք կստանան հավերժական կյանք գալիք աշխարհում՝ սելեստիալ արքայության փառքը (տես ՎԵՈՒ 88.4, Մովսես 6.59):
2. Նրանք կդառնան աստվածներ ողջ զորությամբ և «կժառանգեն գահեր, թագավորություններ, իշխանություններ, և զորություններ» (ՎԵՈՒ 132.19):
3. Նրանք ձեռք կբերեն վեհացում սելեստիալ փառքի բարձրագույն աստիճաններում (տես ՎԵՈՒ 131.1–4):
4. Նրանք կկսեն ճանաչել Հայր Աստծուն և Հիսուս Քրիստոսին (տես ՎԵՈՒ 132.48–50):

Մարգարե Ջոզեֆ Սմիթը

«Երբ կնիք է դրվում հոր և մոր վրա, դա ապահովում է նրանց սերնդին, որպեսզի նրանք չկորչեն, այլ փրկվեն իրենց հոր և մոր ուխտի արժանիքներով» (in *History of the Church,* 5:530):

Նախագահ Բրիգամ Յանգ

«Թող հայրն ու մայրը, ովքեր այս Եկեղեցու և Արքայության անդամներ են, արդար ուղղություն բռնեն և ձգտեն իրենց ողջ զորությամբ երբեք անհիրավություն չանել, այլ անել բարիք իրենց ողջ կյանքում, անկախ նրանից նրանք մեկ երեխա ունեն, թե հարյուր երեխա, եթե նրանք վարվեն նրանց հետ ինչպես հարկն է, իրենց հավատքով և աղոթքներով կապելով նրանց Տիրոջը, ես չեմ անհանգստանա, թե ուր կգնան այդ երեխաները, նրանք կապված են իրենց ծնողներին մի հավիտենական կապով և երկրի կամ դժոխքի ոչ մի ուժ չի կարող բաժանել նրանց իրենց ծնողներից հավերժության մեջ, նրանք կրկին կվերադառնան այն աղբյուրին, որտեղից իրենք սկիզբ են առել» (in *Discourses of Brigham Young,* 208):

Առաջին Նախագահություն - Սպենսեր Վ. Քիմբալ, Ն. Էլդոն Թաններ, Մարիոն Գ. Ռոմնի

«Այս օրերին, երբ տան սրբությունը հարձակման է ենթարկվում և որտեղ երեխաների խնամքին թեթևակիորեն են վերաբերվում, մենք ընտանեկան երեկոյին նվիրված ձեռնարկով, համարձակվել ենք տպավորություն գործել ծնողների վրա՝ տանը սեր զարգացնելու կարևորության վերաբերյալ, որպեսզի ապագայում, երբ այդ երեխաները այդպես ուսուցանված շեղվեն ճանապարհից, նրանք ի վերջո կրկին վերադառնան, որպեսզի չկորցնեն իրենց տեղը ընտանիքի հավերժական շրջանակում» (*Family Home Evening: Love Makes Our House a Home,* 2):

Երեց Բոյդ Կ. Փաքեր

«Անսովոր մի բան չէ, երբ պարտավորված ծնողները կորցնում են իրենց երեխաներից մեկին որոշ ժամանակով այն ազդեցությունների պատճառով, որոնց վրա նրանք վերահսկողություն չունեն: Նրանք տանջվում են ըմբոստ որդիների և դուստրերի պատճառով: Նրանք զարմանում են, թե ինչու են իրենք այդքան անօգնական, երբ փորձել են ջանասիրաբար անել այն, ինչ իրենք պարտավոր էին անել:

Ես համոզված եմ, որ այդ ամբարիշտ ազդեցությունները մի օր կվերահսկվեն:

«Մարգարե Ջոզեֆ Սմիթը հատարարել է—և նա երբեք չի ուսուցանել ավելի սփոփիչ վարդապետություն, որ հավատարիմ ծնողների հավերժական կնքումները և նրանց տրված աստվածային խոստումները, որոնք տրվել են նրանց՝ Ճշմարտության Գործում իրենց քաջարի ծառայության համար, կփրկի ոչ միայն իրենց, այլ նաև իրենց սերնդին: …. Աղոթեք ձեր անհոգ և անհնազանդ երեխաների համար, նրանց ձեզ մոտիկ պահեք ձեր հավատքով: Շարունակեք հուսալ, վստահել, մինչև որ տեսնեք Աստծո փրկությունը» (Orson F. Whitney, in Conference Report, Apr. 1929, p. 110):

Մենք չենք կարող ավելի շեշտադրել տաճարային ամուսնության կարևորությունը, կնքող արարողության պարտավորեցնող կապերը, և նրանցից պահանջվող արժանավորության չափանիշները: Երբ ծնողները պահում են ուխտերը, որոնք նրանք կապել են տաճարի զոհասեղանի մոտ, նրանց երեխաները հավերժ կապված կլինեն նրանց» (in Conference Report, Apr. 1992, 94–95; կամ *Ensign,* May 1992, 68):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Կան մի քանի սքանչելի խոստումներ, որոնք կարող են օգնել հավատարիմ ծնողներին այս եկեղեցում: Հավերժական կնքումներով երեխաները իրենց վրա կիրավիրեն իրենց քաջարի նախնիներին տրված աստվածային խոստումները, ովքեր ազնվորեն պահել են իրենց ուխտերը: Ծնողների կողմից հիշվող ուխտերը կհիշվեն Աստծո կողմից: Այսպիսով, երեխաները կարող են դառնալ այս մեծ ուխտերի և խոստումների շահառուներն ու ժառանգորդները: Սա այն պատճառով է, որ նրանք ուխտի երեխաներ են» (in Conference Report, Oct. 1990, 43; կամ *Ensign,* Nov. 1990, 35):

ՈՒԽՏՅԱԼ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Երեց Բրյուս Կ. Հեյֆն

Յոթանասունից

In Conference Report, Oct. 1996, 33–36; կամ Ensign, Nov. 1996, 26–28

Ամուսնությունը ուխտ է, ոչ թե համաձայնագիր

Երեք ամառ առաջ ես հետևում էի մի նոր հարսի ու փեսայի՝ Թրեյսիին և Թոմին մի սուրբ տաճարից դուրս գալիս: Նրանք ծիծաղում էին և բռնել էին միմյանց ձեռքը մինչ ընտանիքը և ընկերները հավաքվեցին լուսանկարելու: Ես երջանկություն և խոստում տեսա նրանց դեմքին, երբ նրանք ողջունում էին ընդունելության եկած իրենց հյուրերին, որոնք հրապարակավ տոնում էին նոր ընտանիքի ստեղծումը: Այդ գիշեր ես մտածում էի, թե որքան երկար դա կտևի, մինչև այդ երկուսը կդիմակայեն հակադրության,

որը ստուգում է յուրաքանչյուր ամուսնություն: Միայն այդ ժամանակ նրանք կպարզեն, արդյոք իրենց ամուսնությունը հիմնված է *համաձայնագրի,* թե *ուխտի* վրա:

Մեկ ուրիշ հարս հառաչեց երանության մեջ իր հարսանիքի օրը. «Մամ, ես իմ դժվարությունների ավարտին եմ մոտենում»: «Այո, - պատասխանեց նրա մայրը,-բայց որ ծայրից»: Երբ դժվարությունները գալիս են, *համաձայնագրային* ամուսնության կողմերը ձգտում են երջանկության հեռանալով միմյանցից: Նրանք ամուսնանում են շահեր ձեռք բերելու համար և կմնան միմյանց հետ քանի դեռ կստանան այն ինչի համար գործարք են կնքել: Բայց երբ դժվարություններ են գալիս *ուխտի* ամուսնության ժամանակ, ամուսինն ու կինը հաղթահարում են դրանք: Նրանք ամուսնանում են տալու և աճելու համար, կապված լինելով միմյանց հետ ուխտերով, հասարակության և Աստծո հետ: *Համաձայնագրով* ամուսնացածներից յուրաքանչյուրը տալիս է 50 տոկոս, *ուխտով* ամուսնացածներից յուրաքանչյուրը տալիս է 100 տոկոս:

> ***Ամուսնությունը իր բնույթով ուխտ է, ոչ թե ուղղակի անձնական համաձայնագիր, որը մարդ կարող է փոխել, երբ կամենա:***

Ամուսնությունը իր էությամբ ուխտ է, ոչ թե ուղղակի անձնական համաձայնագիր, որը մարդ կարող է փոխել, երբ կամենա: Հիսուսը սովորեցրեց համաձայնագրային վերաբերմունքի մասին, երբ նա նկարագրեց «վարձկանին», որը կատարում է խնամք տանելու իր պայմանագրային խոստումը միայն այն ժամանակ, երբ փոխարենը ինչ որ բան է ստանում դրա դիմաց: Երբ վարձկանը «տեսնում է գայլին գալիս», նա «թողում է ոչխարները եւ…. Փախչում որովհետև նա … ոչխարների համար հոգս չունի»: Ի հակադրություն, Փրկիչն ասում է. «Ես եմ բարի Հովիվը, … և իմ անձը դնում եմ ոչխարների համար»:[1] Շատ մարդիկ այսօր ամուսնանում են որպես վարձկաններ: Եվ երբ գայլը գալիս է, նրանք փախչում են: Այս գաղափարը սխալ է: Այն անիծում է երկիրը, ծնողների սրտերը հեռացնելով իրենց երեխաներից և մեկը մյուսից:[2]

Ամուսնության հավերժական հեռանկարը

Նախքան իրենց ամուսնությունը Թոմը և Թրեյսին ստացան մի հավերժական հեռանկար ուխտերի և գայլերի վերաբերյալ: Նրանք սովորեցին Ադամի և Եվայի պատմության միջոցով կյանքի նպատակի մասին և թե ինչպես վերադառնալ Աստծո ներկայություն հնազանդության և Քավության միջոցով: Քրիստոսի կյանքը Քավությունը տալու պատմությունն է: Ադամի և Եվայի կյանքը Քավությունն ընդունելու պատմությունն է, որը նրանց զորություն տվեց հաղթահարել իրենց բաժանումը Աստծուց և ողջ հակադրությունը մինչև նրանք հավերժորեն «մեկ» դարձան Տիրոջ հետ և մեկը մյուսի հետ:

Առանց Անկման Լեքին սովորեցրել է, Ադամն ու Եվան երբեք չէին իմանա հակադրության մասին: Եվ նրանք «երեխաներ չէին ունենա, ուստի, նրանք մնացած կլինեին անմեղության վիճակում, չունենալով ուրախություն, քանզի չգիտեին թշվառություն»:[3] Իմաստուն ծնողներն այստեղ մի փոքրիկ կապ կտեսնեն՝ չկան երեխաներ, չկա թշվառություն: Բայց պարտեզում մնալով Ադամն ու Եվան երբեք չէին կարողանա իմանալ ուրախություն: Այսպիսով, Տերը սովորեցրեց նրանց, որ նրանք կապրեն և երեխաներ կծնեն ցավով, քրտինքով և փշերով:

Բայց և այնպես երկիրն անիծվեց *նրանց պատճառով,*[4] բայց նրանց չարչարանքի ուղին տանում էր նաև դեպի փրկագնման և հասկացողության *ուրախությունը:*[5] Այդ պատճառով ամուսինն ու կինը ուխտի ամուսնության մեջ աջակցում են և բարձրացնում միմյանց, երբ գայլը գալիս է: Եթե Թոմն ու Թրեյսին հասկացած լինեին այս ամենը, հավանաբար նրանք ավելի դանդաղ կքայլեին տաճարի պարտեզանման տարածքից դուրս, Ադամի և Եվայի նման, ձեռք ձեռքի տված դեպի անողոք և միայնակ աշխարհ:

Եվ այնուամենայնիվ ամուսնանալն ու երեխաներ մեծացնելը *կարող է* տալ ամենաարժեքավոր կրոնական փորձառությունները զույգի կյանքում: Ուխտի ամուսնությունը պահանջում է հավատքի լիակատար գործադրում, նրանք պետք է պահեն իրենց ուխտերը առանց իմանալու, թե ինչպիսի ռիսկեր կարող են պահանջվել նրանցից: Նրանք պետք է ենթարկվեն առանց պայմանականությունների, հնազանդվելով Աստծուն և զոհաբերելով միմյանց համար: Այդ ժամանակ նրանք կհայտնագործեն այն, ինչ Ալման անվանում է «անրմբռնելի ուրախություն»:[6]

Իհարկե, ոմանք հնարավորություն չունեն ամուսնանալու: Եվ որոշ ամուսնալուծություններ անխուսափելի են:

Բնական աղետների «գայլը»

Յուրաքանչյուր ամուսնություն մշտապես ստուգվում է երեք տեսակի գայլերով: Առաջին գայլը բնական աղետն է: Տարիներ շարունակ Աստծուն խնդրելուց հետո, որ իրենց տա առաջին երեխային, Դեյվիդն ու Ֆրանը երեխա ունեցան սրտի լուրջ արատով: Երեքշաբաթյա պայքարից հետո, նրանք թաղեցին իրենց նորածին որդուն: Ինչպես իրենցից առաջ Ադամն ու Եվան, նրանք սգացին միասին, սրտները կոտրված, Տիրոջ առջև հավատքով:[7]

Անձնական թերությունների «գայլը»

Երկրորդը, իրենց իսկ անձնական թերությունների գայլը կստուգի նրանց: Մի կին արցունքների միջից պատմեց ինձ, թե ինչպես նրա ամուսնու մշտական քննադատությունը ի վերջո կործանեց ոչ միայն իրենց ամուսնությունը,

այլ նրա ողջ ինքնարժեքի զգացումը: Նա սկզբում բողոքում էր նրա խոհարարությունից և տան մաքրությունից, իսկ հետո, թե ինչպես էր օգտագործում իր ժամանակը, ինչպես էր խոսում, ինչպիսի տեսք ուներ և ինչպես էր մտածում: Ի վերջո, նա սկսեց իրեն զգալ բացարձակապես անընդունակ և անգործունակ: Իմ սիրտը նրանց երկուսի համար էլ ցավեց:

Համեմատենք նրան մի երիտասարդ կնոջ հետ, որը քիչ ինքնավստահություն ուներ, երբ նա առաջին անգամ ամուսնացավ: Հետո նրա ամուսինը այնքան շատ գովեստի արժանի բաներ գտավ նրա մեջ, որ նա աստիճանաբար սկսեց հավատալ, որ ինքը լավ անձնավորություն էր, և որ իր կարծիքը կարևոր էր: Ամուսնու հավատքը նրա հանդեպ վերարթնացրեց նրա ներքին ինքնարժեքը:

Խիստ անհատապաշտության «գայլը»

Երրորդ գայլը խիստ անհատապաշտությունն է, որն առաջացրել է այսօրվա պայմանագրային վերաբերմունքը: Մի յոթ տարեկան աղջնակ դպրոցից տուն եկավ արտասվելով. «Մամ, մի՞թե ես քեզ չեմ պատկանում: Այսօր մեր ուսուցիչն ասաց, որ ոչ ոք ոչ մեկին չի *պատկանում* երեխաները չեն պատկանում ծնողներին, ամուսինները չեն պատկանում կանանց: Ես *քոնն* եմ չէ՞, մամ»: Մայրը գրկեց նրան և շշնջաց. «Իհարկե, դու իմն ես, իսկ ես էլ քոնն եմ»: Անշուշտ ամուսնական զույգերը պետք է հարգեն մեկը մյուսի անհատական ինքնությունը, իսկ ընտանիքի անդամները ոչ ստրուկներ են, ոչ էլ անշունչ առարկաներ: Բայց այս ուսուցչի վախը, որը շատերն են կիսում այսօր, այն է՝ որ ազգակցական կամ ամուսնական կապերը արժեքավոր կապեր չեն, որոնք պարտավորեցնում են, այլ ընդհակառակը ուղղակի գերություն: Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ առկա է պատկանելիության զգացման նվազեցում:

Հակառակորդը այս անհատական ինքնուրույնության գերշեշտադրումը մշակել է երկար ժամանակ, և հիմա նա եռանդագին շահագործում է այն: Մեր խորապես Աստվածատուր բնազդն է շտապել դեպի այն մարդկանց մոտ, ովքեր մեր կարիքն ունեն, և ովքեր մեզ աջակցում են: Բայց նա այսօր հեռացնում է մեզ միմյանցից անվստահության և կասկածի սեպերով: Նա չափազանցնում է տան պարտականություններով չպարփակվելու, դրսում ժամանակ անցկացնելու և անձնական ժամանակն ունենալու անհրաժեշտությունը : Որոշ մարդիկ հավատում են նրան, իսկ հետո զարմանում, թե ինչու են լքված զգում: Եվ չնայած հրաշալի բացառություններին, Ամերիկայի աճող թվով միայնակ ծնողով ընտանիքների երեխաները շատ ավելի մեծ վտանգի տակ են, քան երկու ծնողներ ունեցող ընտանիքների երեխաները:[8] Երեխաների բարեկեցության ընդհանուր անկման հիմնական պատճառը մեծ թվով «ամուսնությունների փլուզումն է»:[9]

Ժամանակակից հարցեր ամուսնության վերաբերյալ

Շատ մարդիկ նույնիսկ զարմանում են, թե ինչ է ամուսնությունն այս օրերում: Մենք պե՞տք է արգելենք համասեռ ամուսնությունը: Մեք պե՞տք է դժվարացնենք ապահարզան ձեռք բերելը: Ոմանք ասում են, որ այս հարցերը հասարակության գործը չեն, որովհետև ամուսնությունը անձնական համաձայնագիր է:[10] Բայց ինչպես ժամանակակից մարգարեներն են վերջերս հայտարարել՝ «ամուսնությունը … հաստատվել է Աստծո կողմից»:[11] Նույնիսկ աշխարհիկ ամուսնությունը պատմականորեն եռակողմ ուխտ է տղամարդու, կնոջ և պետության միջև: Հասարակությունը հսկայական հետաքրքրություն է ցուցաբերում յուրաքանչյուր ամուսնության հետևանքի և սերնդի հանդեպ: Այսպիսով, ամուսնության հասարակական բնույթը այն տարբերակում է բոլոր մյուս փոխհարաբերություններից: Հյուրերը գալիս են հարսանիքների, գրում է Վենդել Բերրին, որովհետև սիրահարները «ասում են իրենց երդումները նույնչափ համայնքին, որչափ մեկը մյուսին», տրվելով ոչ միայն միմյանց, այլև հօգուտ հանրության, «քանի որ ոչ մի *համաձայնագիր* երբևէ չէր կարող միացնել նրանց»:[12]

Ուխտերը պահելը ուժ է բերում

Երբ մենք հետևում ենք ուխտերին, որոնք մենք անում ենք զոհասեղանի առջև, մենք հայտնաբերում ենք ուժի թաքնված պահուստներ: Ես մի անգամ վրդովված ասացի կնոջս՝ Մարիին. «Տերը Ադամին և Եվային դրեց երկրի վրա որպես չափահաս մարդիկ: Ինչո՞ւ նա չէր կարող անել դա այս մեր տղայի հետ, պեպեններով և անհնազանդ մազերով այս մեկի հետ»: Նա պատասխանեց. «Տերը տվեց մեզ այս երեխային, որ մեզանից Քրիստոնյաներ սարքի»:

Մի գիշեր Մարին ուժասպառ եղավ ժամեր շարունակ խրախուսելով այդ երեխային վերջացնել մետաղե լիստի վրա բնիկ ամերիկյան գյուղի մի տեսարան պատրաստելը, որը դպրոցական հանձնարարություն էր: Դա մի ստուգարք էր, որին ոչ մի վարձկան չէր դիմանա: Սկզբում նա մաքառեց մոր ջանքերի դեմ, բայց մինչև քնելու ժամը ես տեսա, թե ինչպես նա հպարտությամբ դրեց «իր» սարքած տեսարանը սեղանի վրա: Նա ուղղեց քայլերը դեպի անկողինը, ապա ետ շրջվեց, վազեց սենյակով և գրկեց իր մորը, և բացելով իր չորրորդ դասարանցու ատամները, ժպտաց: Քիչ անց լիովին ապշահար ես հարցրեցի Մարիին. «Ինչպե՞ս քեզ հաջողվեց դա»: Նա ասաց. «Ես ուղղակի մտքումս դրեցի, որ չէի կարող թողնել նրան, ինչ էլ որ լիներ»: Այնուհետև նա ավելացրեց. «*Ես չգիտեի, որ ունեի դա իմ մեջ»:* Նա հայտնաբերեց խորը, կարեկցանքի ներքին աղբյուրներ, որովհետև իր ուխտերի կապերը նրան ուժ տվեցին վար դնելու իր կյանքը իր ոչխարի համար, թեկուզ՝ ամեն անգամ մի ժամ:

Եղեք հովիվներ, ոչ թե վարձկաններ

Այժմ ես վերադառնում եմ Թոմին և Թրեյսիին, ովքեր այս տարի հայտնաբերեցին իրենց սեփական աղբյուրները: Նրանց երկրորդ երեխան սպառնում էր շատ վաղ աշխարհ գալ: Նրանք կարող էին վարձկանի համար հարմարավետ ընտրություն կատարել և առաջ շարժվել իրենց կյանքով, թույլ տալով, որ տեղի ունենար վիժեցում: Բայց քանի որ նրանք փորձում էին պահպանել իրենց ուխտերը զոհաբերությամբ,[13] կենսախինդ, կայտառ Թրեյսին գրեթե հինգ շաբաթ անշարժ պառկեց տանը, ապա ևս հինգ շաբաթ հիվանդանոցի մահճակալին: Թոմը փաստորեն նրա հետ էր ամեն ժամ, երբ նա չէր աշխատում կամ քնած չէր: Նրանք աղոթեցին իրենց երեխայի համար, որ երկիր գար: Այնուհետև երեխան պահանջեց ևս 11 շաբաթ հիվանդանոցում մնալ: Բայց նա այստեղ է, և նա նրանցն է:

Մի գիշեր, երբ Թրեյսին հիվանդանոցում համբերատար սպասում էր Տիրոջն ապավինելով, նա զգաց, որ հավանաբար երեխայի համար իրեն զոհաբերելու իր պատրաստակամությունը փոքր ինչ նման էր ինչ որ ձևով իր համար Բարի Հովվի զոհաբերությանը: Նա ասաց. «Սպասում էի, որ փորձել այդքան շատ տալը իրականում դժվար կլիներ, բայց ինչ որ տեղ դա ավելի շատ արտոնություն էի համարում»: Ինչպես Սիոնի շատ ծնողներ են արել, նա և Թոմը նվիրաբերեցին իրենց սրտերն Աստծուն՝ տալով դրանք իրենց երեխային: Այդ ընթացքում նրանք հասկացան, որ իրենց ամուսնությունը ուխտյալ ամուսնություն է, որը կապում է նրանց միմյանց և Տիրոջը:

Թող որ մենք վերականգնենք ամուսնության գաղափարը, որպես ուխտ, այսինքն ամուսնության նոր և հավիտենական ուխտ:[14] Եվ երբ հայտնվի գայլը, թող որ մենք լինենք հովիվներ, ոչ թե վարձկաններ, մշտապես պատրաստակամ վար դնելու մեր կյանքը մեր ուխտի ոչխարի համար: Այդ ժամանակ Ադամի և Եվայի նման մենք կունենանք ուրախություն:[15] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. Հովհաննես Ժ.12–15:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 2:
3. 2 Նեփի 2.23:
4. Տես Մովսես 4.23:
5. Տես Մովսես 5.11:
6. Ալմա 28.8:
7. Տես Մովսես 5.27:
8. Տես Barbara Dafoe Whitehead, “Dan Quayle Was Right,” *Atlantic Monthly*, Apr. 1993, 47:
9. Maggie Gallagher, *The Abolition of Marriage* (1996), 4.
10. Տես Bruce Dunford, “Governor: Take State Out of Marriage Role,” *Honolulu Star-Bulletin*, 9 Jan. 1996, p. A5; “Family Cannot Be Forced,” *Salt Lake Tribune*, 17 Jan. 1996, p. A10.
11. The First Presidency and Quorum of the Twelve Apostles, “The Family: A Proclamation to the World,” *Ensign*, Nov. 1995, 102.
12. Wendell Berry, *Sex, Economy, Freedom and Community* (1993), 125, 137–39; italics added.
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 97.8:
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 131.2:
15. Տես 2 Նեփի 2.25:

ԺԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ճիշտ ամուսնությունը սկսվում է ճիշտ ժամադրությունից:

—Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Հոգու ընկերները» ցնորք է և պատրանք, և մինչ յուրաքանչյուր երիտասարդ տղամարդ և երիտասարդ կին ողջ ջանասիրությամբ և աղոթքով ձգտում է գտնել զուգընկեր, որի հետ կյանքը կարող է ամենաներդաշնակը և գեղեցիկը լինել, այնուամենայնիվ անկասկած է, որ գրեթե ամեն լավ տղամարդ և ամեն լավ կին կարող է ունենալ երջանկություն և հաջող ամուսնություն, եթե նրանք երկուսով պատրաստ լինեն համապատասխան ջանք գործադրելու» (“Oneness in Marriage,” *Ensign,* Mar. 1977, 4):

Նախագահ Էզրա Թաֆ Բենսոն

«Միսիան ոչ միայն պետք է համարվի քահանայության պարտականություն, այլ ամեն երիտասարդ տղամարդ պետք է անհամբեր սպասի այս փորձառությանը մեծ ուրախությամբ ու ակնկալիքով: ...

Դուք չեք կարող անել ավելի կարևոր մի բան: Համալսարանը կարող է սպասել: Կրթաթոշակները կարող են տարկետվել: Աշխատանքային նպատակները հետաձգվել: Այո, նույնիսկ տաճարային ամուսնությունները պետք է սպասեն մինչև երիտասարդը պատվավոր լիաժամկետ միսիա ծառայի Տիրոջ համար: Իսկ ձեզ խորհուրդ կտայի ժամադրել միայն հավատարիմ երիտասարդ կանանց, ովքեր հավատում են սրան և տալիս ձեզ այդ քաջալերանքը» (in Conference Report, Apr. 1986, 57; կամ *Ensign,* May 1986, 44):

«Այսպիսով, երիտասարդներ, մի սպասեք կատարելության զուգընկերոջ ձեր ընտրությունը կատարելիս: Մի եղեք այնքան բծախնդիր, որ աչքաթող անեք նրա ուժեղ վկայության, ավետարանի սկզբունքներով ապրելու, օջախը սիրելու, Սիոնում մայր լինելու և ձեր քահանայության պարտականություններում աջակցելու ամենակարևոր հատկանիշները:

Իհարկե, նա պետք է գրավիչ լինի ձեզ համար, բայց ուղղակի մի ժամադրեք մի աղջկա մյուսի ետևից միայն ժամադրելու հաճույքի համար, առանց ձգտելու Տիրոջ հավաստմանը հավերժական ընկերակցի ձեր ընտրության մեջ:

Եվ չափանիշներից մեկը, թե անձնավորությունը ձեզ համար արդյոք ճիշտ այն անձնավորությունն է, հետևյալն է՝ արդյոք նրա ներկայությամբ դուք ունենո՞ւմ ձեր ազնվագույն մտքերը, արդյոք ոգեշնչվո՞ւմ եք կատարելու ձեր լավագույն գործերը, արդյոք ցանկանո՞ւմ եք ավելի լավը դառնալ քան դուք կաք» (in Conference Report, Apr. 1988, 59; կամ *Ensign,* May 1988, 53):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Իրականում որքա~ն գեղեցիկ է լավ հարդարված երիտասարդ կինը, որը մաքուր է մարմնով և մտքով: Նա Աստծո դուստրն է, որով նրա Հավերժական Հայրը կարող է հպարտանալ: Որքան դուրեկան է եիտասարդ տղամարդը, որը լավ հարդարված է: Նա Աստծո որդին է, արժանի՝ կրելու Աստծո սուրբ քահանայությունը: Նա կարիք չունի դաջվածքների, ոչ էլ ականջօղերի կամ դակելու իր մարմնի մասերը: Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը միասնական են ձեզ այս բաների դեմ խորհուրդ տալու մեջ: ...

Իսկ այժմ, երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք, մի քանի խոսք բոլոր խնդիրներից ամենասովորականն ու ամենադժվարինը հաղթահարելու մասին: Դա մեկդ մյուսի հանդեպ ունեցած փոխհարաբերության մասին է: Դուք գործ ունեք մարդկային բնազդներից ամենազորավորի հետ: Միայն ապրելու կամքն է, որ հավանաբար գերազանցում է դրան:

Տերը մեզ գրավիչ է դարձրել միմյանց համար մի մեծ նպատակով: Բայց հենց այս գրավչությունն է, որ դառնում է վտանգավոր պայթուցիկ ուժ, եթե վերահսկողության տակ չպահվի: Այն գեղեցիկ է, երբ գործածվում է ճիշտ ձևով: Այն մահացու է, եթե ձեռքից բաց է թողնվում:

Այս պատճառով է, որ Եկեղեցին խորհուրդ է տալիս վաղ չժամադրվել: Այս կանոնը չի նախատեսված ձեզ որևէ ձևով վնասելու համար: Այն նախատեսված է օգնելու ձեզ, և դա այդպես կլինի, եթե դուք հետևեք դրանու:

Վաղ հասակում կայուն ժամադրությունը հաճախ տանում է դեպի ողբերգություն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ինչքան տղան և աղջիկը երկար են ժամադրվում միմյանց հետ, այնքան հավանական է, որ նրանք փորձանքի մեջ ընկնեն:

Ավելի լավ է, իմ ընկերներ, ժամադրվել տարբեր ընկերակիցների հետ մինչև պատրաստ լինեք ամուսնանալ: Հրաշալի ժամանակ անցկացրեք, բայց հեռու մնացեք անպարկեշտությունից: Ձեռքներդ ձեզ պահեք: Դա կարող է հեշտ չլինել, բայց դա հնարավոր է: ...

... Դուք այնքան մեծ նշանակություն ունեք այս Եկեղեցու համար: Առանց ձեզ այն չի կարող լինել նույնը: Գլուխներդ բարձր կանգնեք որպես Աստծո որդիներ և դուստրեր՝ հպարտ ձեր ժառանգությամբ: Նայեք դեպի Նա հասկացողության և առաջնորդության համար: Քայլեք Նրա կանոնների և պատվիրանների համեմատ:

Դուք կարող եք լավ ժամանակ անցկացնել: Իհարկե կարող եք: Մենք ուզում ենք, որ դուք զվարճանաք: Մենք ուզում ենք, որ դուք վայելեք կյանքը: Մենք չենք ուզում, որ դուք կեղծ բարեպաշտներ լինեք: Մենք ուզում ենք, որ դուք կայտառ և զվարթ լինեք, երգեք և պարեք, ծիծաղեք և երջանիկ լինեք:

Բայց այդ անելով, խոնարհ և աղոթալից լինեք, և երկնքի ժպիտները կիջնեն ձեզ վրա» (“A Prophet’’s Counsel and Prayer for Youth,” *Ensign,* Jan. 2001, 8, 11):

«Ես չեմ անհանգստանում ձեզ համար, երիտասարդներ, ովքեր վերջերս եք վերադարձել միսիոներական դաշտից: Դուք ինձ պես գիտեք, թե ինչ եք պարտավոր անել: Դա ձեր պարտականությունն է և հնարավորությունը, որ ժամադրության և սիրատածման բնական գործընթացի ժամանակ գտնեք մի հրաշալի զուգընկեր և ամուսնանաք Տիրոջ տանը: Մի շտապեք անտեղի և մի հետաձգեք անտեղի: «Շտապով ամուսնացողը կապաշխարի պարապ ժամանակ» հին ասացվածք է, որը դեռ իր իմաստը չի կորցրել մեր ժամանակաշրջանում: Բայց զուր ժամանակ մի մատնեք անպտուղ, անխոստումնալի և չարաճճի ժամադրության խաղի վրա, որը միայն հույսեր է առաջացնում և բերում հուսախաբություններ և, որոշ դեպքերում էլ, դառնություն» (“To Single Adults,” *Ensign,* հունիս 1989, 72, տես նաև 73-75):

Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

«Տղաները հազվադեպ են քննադատում աղջիկներին շատ քիչ շպարվելու համար: Երբեմն նրանք ասում են. «Նա լավ աղջիկ է, բայց լավ կլիներ որ մի քիչ փակ հագնվեր և նա շատ է շպարվում»: Շատ ճոխ, արտասովոր, ցանկալի երևալու համար հագնվելը, գերզարդարված լինելը, առնվազն վատ ճաշակ է: Երիտասարդ կինը իմաստուն է վարվում, երբ կարողանում է օգտագործել ուղղակի բավականաչափ շպար և շրթներկ, որը թվում է ընկերներին, որ դա ընդհանրապես շպար չէ այլ «իսկապես ինքը»: ...

«Երիտասարդ տղամարդիկ իրենց դեմքերը սափրված պետք է պահեն, մազերը սանրված, նրանց մազերի կտրվածքը պետք է լինի պահպանողական, եղունգները մաքրած: Շատ նեղ, ուշագրավ տաբատները պիտակում են երիտասարդ տղամարդկանց որպես վուլգար: Երիտասարդ տղամարդիկ կարող են խելամիտ լինել և շփվող, արժանապատիվ և գրավիչ՝ գտնելով հագնվելու մի ձև, որը հեռու է ծայրահեղականից, բայց այնուամենայնիվ լավ ոճով է» (“Save the Youth of Zion,” *Improvement Era,* սեպտ. 1965, 761):

«Պարզ ասած, ճիշտ ամուսնությունը սկսվում է ճիշտ ժամադրությունից: Մարդն ընդհանրապես ամուսնանում է նրանցից մեկի հետ, ում հետ նա շփվում է: ... Ուստի այս նախազգուշացումը գալիս է խիստ շեշտադրմամբ: Մի օգտվեք հնարավորությունից, ժամադրվելով ոչ անդամների հետ, կամ անդամների հետ, ովքեր ուսուցված չեն և անհավատ են: Ինչ որ մի աղջիկ կարող է ասել. «Օ՜, ես չեմ պատրաստվում ամուսնանալ այս անձնավորության հետ: Սա ուղղակի «զվարճալի» ժամադրություն է»: Բայց դուք չեք կարող սիրահարվել ինչ որ մեկին, որը գուցե երբեք չընդունի ավետարանը» (*Miracle of Forgiveness,* 241–42):

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

«Դուք, երիտասարդ տղամարդիկ, պետք է մշակեք ուշադիր վերաբերմունք բոլոր տարիքի կանանց հանդեպ: Երիտասարդ կանայք խնդրեցին ինձ ասել ձեզ, որ նրանք ուզում են, որ դուք հարգեք նրանց և ցույց տաք նրանց սովորական, անկեղծ քաղաքավարություն: Առանց կասկածելու ցույց տվեք ձեր քաղաքավարությունը՝ նրանց համար բացելով դուռը, վերցնելով նրանց ժամադրության հրավիրելու նախաձեռնությունը և կանգնելով, երբ նրանք սենյակ են մտնում: Հավատում եք, թե ոչ, հավասար իրավունքների այս տարիքում, երիտասարդ կանայք կամենում են, որ դուք ցույց տաք այդ հասարակ քաղաքավարական վերաբերմունքը» (in Conference Report, հոկտ. 1990, 48; կամ *Ensign,նոյ.* 1990, 37):

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԶՈՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԿԱՏԱՐԵԼ ԱՍՏԾՈ ՀԱՆԴԵՊ ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրքույկ

Ազատ կամք և հաշվետվություն

«Ուստի, մարդիկ ազատ են ... ընտրելու ազատություն և հավերժական կյանք, բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով, կամ ընտրելու գերություն և մահ» (2 Նեփի 2.27):

Ձեր Երկնային Հայրը տվել է ձեզ ազատ կամք, ճիշտը սխալից ընտրելու կարողություն և ինքնուրույն գործելու ունակություն: Ձեզ տրվել է Սուրբ Հոգին՝ օգնելու ձեզ տարբերել բարին չարից: Մինչ դուք այստեղ եք երկրի վրա, դուք ստուգվում եք՝ տեսնելու թե կարո՞ղ եք օգտագործել ձեր ազատ կամքը ցույց տալու ձեր սերը Աստծո հանդեպ, պահելով Նրա պատվիրանները:

Չնայած դուք ազատ եք ընտրելու ինքնուրույնորեն, դուք ազատ չեք ընտրելու ձեր գործողությունների հետևանքները: Երբ ընտրություն եք կատարում, դուք կստանաք այդ ընտրության հետևանքները: Հետևանքները կարող են անմիջապես չլինել, բայց դրանք, լավ, թե վատ, միշտ կհետևեն: Սխալ ընտրությունները հետաձգում են ձեր առաջընթացը և տանում դեպի դառնություն և թշվառություն: Ճիշտ ընտրությունները տանում են դեպի երջանկություն և հավերժական կյանք: Այդ պատճառով ձեզ համար կարևոր է ձեր ողջ կյանքի ընթացքում ընտրել այն, ինչը ճիշտ է:

Դուք պատասխանատու եք այն ընտրությունների համար, որ կատարում եք: Դուք չպետք է մեղադրեք ձեր հանգամանքները, ձեր ընտանիքին կամ ձեր ընկերներին, եթե դուք ընտրում եք չհնազանդվել Աստծո պատվիրաններին: Դուք մեծ ուժով օժտված Աստծո զավակներ եք: Դուք ունեք ունակություն ընտրելու արդարություն և երջանկություն, անկախ նրանից, ինչպիսին են ձեր հանգամանքները:

Դուք նաև պատասխանատու եք զարգացնելու ունակություններ և տաղանդներ, որոնք Երկնային Հայրն է տվել ձեզ: Դուք հաշվետու եք Նրան այն ամենի համար, ինչ անում եք ձեր ունակությունների հետ և թե ինչպես եք անցկացնում ձեր ժամանակը: Մի վատնեք ձեր ժամանակը: Պատրաստ եղեք շատ աշխատել: Ընտրեք շատ բարի բաներ անել ձեր իսկ ազատ կամքով:

Մատթեոս ԻԵ.14–29

Երախտագիտություն

«Նա, ով ստանում է բոլոր բաները շնորհակալությամբ, փառավոր կդարձվի» (ՎԿՈՒ 78.19):

Տերը կամենում է, որ դուք ունենաք երախտագիտության հոգին ամեն ինչում, որ անում եք և ասում: Ապրեք երախտագիտության հոգով և դուք ավելի մեծ երջանկություն և բավարարվածություն կունենաք կյանքում: Նույնիսկ ձեր ամենադժվարին ժամանակներում, դուք կարող եք շատ բան գտնել երախտագետ լինելու համար: Այդպես անելը կզորացնի և կօրհնի ձեզ:

Ձեր աղոթքներում նախքան օրհնություններ խնդրելը, դուրս թափեք ձեր հոգին՝ Աստծուն շնորհակալություն հայտնելով այն օրհնությունների համար, որ դուք արդեն ստացել եք: Շնորհակալ եղեք Նրանից ձեր ընտանիքի համար, ընկերների և սիրելիների համար, ղեկավարների և ուսուցիչների, ավետարանի և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի համար:

Դուք կարող եք նաև երախտագիտություն հայտնել Տիրոջը ձեր ապրելակերպով: Երբ պահում եք Նրա պատվիրանները և ծառայում ուրիշներին, դուք ցույց եք տալիս, որ սիրում եք Նրան և երախտապարտ եք Նրան: Շնորհակալություն հայտնեք բոլորին, ով ինչ որ ձևով օգնում է ձեզ:

Ղուկաս ԺԷ.12–19

Կրթություն

«Սովորիր իմաստություն քո երիտասարդության տարիներին» (Ալմա 37.35):

Տերն ուզում է կրթել ձեր միտքը և բարելավել ձեր հմտություններն ու ունակությունները: Կրթությունը կօգնի ձեզ բարի ազդեցություն գործել աշխարհում: Այն կօգնի ձեզ ավելի լավ ապահովել ինքներդ ձեզ, ձեր սիրելիներին և նրանց, ովքեր կարիքի մեջ են:

Պատրաստ եղեք ջանասիրաբար աշխատել և զոհաբերություններ կատարել գիտություն ձեռք բերելու համար: Կրթությունը մեծ ներդրում է, որը մեծ պարգևներ է բերում: Դուք ապրում եք մրցակցական աշխարհում, որտեղ լավ կրթությունը բացում է հնարավորության դռները, որոնք այլապես փակ կլինեին ձեզ համար:

Պահպանեք ջերմեռանդություն գիտելիքի հանդեպ ձեր կյանքի ընթացքում: Ուրախություն գտեք, շարունակ սովորելով ինքներդ ձեր, ուրիշ մարդկանց և ձեզ շրջապատող աշխարհի մասին: Ուսումնասիրեք Տիրոջ խոսքերը և շարունակեք սովորել ձեր Երկնային Հոր ծրագրի մասին: Սեմինարիան դարձրեք ձեր ընդհանուր կրթության կարևոր մասը:

Վարդապետություն և Ուխտեր 88.77–80

Ընտանիք

«Ընտանեկան կյանքում ամենայն հավանականությամբ երջանկության կարելի է հասնել, երբ հիմնվում են Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում են և պահպանվում հավատքի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի ու օգտակար և ուժերը վերականգնող հանգստի սկզբունքների վրա» («Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին):

Ընտանիքի մաս լինելը մեծ օրհնություն է: Ձեր ընտանիքը կարող է ապահովել ձեզ ընկերակցությամբ և երջանկությամբ, օգնել ձեզ սովորել ճիշտ սկզբունքներ սիրո մթնոլորտում և օգնել ձեզ պատրաստվել հավերժական կյանքին: Ոչ բոլոր ընտանիքներն են նույնը, բայց յուրաքանչյուրը կարևոր է Երկնային Հոր ծրագրում:

Արեք ձեր մասը երջանիկ տուն կառուցելու համար: Եղեք զվարթ, օգնող և հոգատար ուրիշների հանդեպ: Տանը շատ խնդիրներ են առաջանում, որովհետև ընտանիքի անդամները խոսում են և գործում եսասիրաբար կամ անբարյացկամորեն: Մտահոգվեք ընտանիքի այլ անդամների կարիքներով: Ձգտեք ավելի շուտ լինել խաղաղություն հաստատող, քան ծաղրող, կռվող և վիճող: Հիշեք, որ ընտանիքը ամենասրբազան միավորն է Եկեղեցում:

Պատվեք ձեր ծնողներին՝ ցույց տալով սեր և հարգանք նրանց հանդեպ և լինելով հնազանդ: Պատրաստ եղեք

օգնել տնային ամենօրյա գործերում, որոնք պետք է արվեն: Մասնակցեք ընտանեկան միջոցառումներին և ավանդույթներին, ներառյալ ընտանեկան աղոթքներին, ընտանեկան երեկոներին և սուրբ գրությունների ընտանեկան ընթերցանությանը: Այս ավանդույթները զորացնում են և միավորում ընտանիքները: Լավ օրինակ եղեք ընտանիքի մյուս անդամների համար:

Զորացրեք ձեր հարաբերությունները ձեր եղբայրների և քույրերի հետ: Նրանք կարող են դառնալ ձեր ամենամոտիկ ընկերները: Աջակցեք նրանց իրենց հետաքրքրություններում և օգնեք նրանց իրենց խնդիրներում, որոնց նրանք դիմակայում են:

Եփեսացիս Զ.1–3

Ընկերներ

«Որովհետեւ այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք» (Մատթեոս ԻԵ.40):

Զգուշությամբ ընտրեք ձեր ընկերներին: Նրանք մեծապես կազդեն ինչպես ձեր մտածելակերպի, այնպես էլ գործելակերպի վրա, և նույնիսկ կօգնեն որոշել, թե ինչպիսի մարդ կդառնաք: Ընտրեք ընկերներ, ովքեր կիսում են ձեր արժեքները, որպեսզի կարողանաք զորացնել և քաջալերել միմյանց՝ ապրելով բարձր չափանիշներով: Ճշմարիտ ընկերը կքաջալերի ձեզ լինել լավագույն անձնավորությունը:

Լավ ընկերներ ունենալու համար, ինքներդ եղեք լավ ընկեր: Ցույց տվեք հետաքրքրություն ուրիշների հանդեպ և թույլ տվեք որ իմանան, որ դուք հոգ եք տանում իրենց մասին: Բոլորին վերաբերվեք բարությամբ և հարգանքով: Ջանք գործադրեք, լինելով ընկեր նրանց համար, ովքեր ամաչկոտ են կամ իրենց ներգրավված չեն զգում:

Հրավիրեք այլ հավատքի ձեր ընկերներին Եկեղեցու ժողովներին և միջոցառումներին, որտեղ նրանք կարող են իմանալ ավետարանի մասին: Օգնեք նրանց իրենց զգալ ընդունված և ցանկալի: Շատ մարդիկ են միացել Եկեղեցուն իրենց ընկերների օրինակի և ընկերկցության շնորհիվ: Մի վիրավորվեք, եթե ձեր ընկերները մերժում են ավետարանի մասին ավելին իմանալու ձեր հրավերը: Ուղղակի շարունակեք լինել նրանց ընկերը:

Հատուկ ջանք գործադրեք, օգնության հասնելով նորադարձներին և նրանց, ովքեր քիչ ակտիվ են: Օգնեք նրանց զգալ իրենց ընդունված ձեր ընկերական խմբում: Դուք կարող եք զորացնել նրանց, կիսվելով նրանց հետ ձեր վկայությամբ և նրանց համար լավ օրինակ հանդիսանալով:

Ալմա 17.1–2

Հագուստ և արտաքին տեսք

«Չգիտէ՞ք որ դուք Աստուծոյ տաճար էք և Աստուծոյ Հոգին բնակուած է ձեզանում… Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք եք» (Ա Կորնթացիս Գ.16–17):

Ձեր մարմինը Աստծո սրբազան ստեղծագործությունն է: Հարգեք այն որպես Աստծո պարգև և մի պղծեք այն որևէ ձևով: Ձեր հագուստի և արտաքին տեսքի միջոցով, դուք կարող եք ցույց տալ Տիրոջը, որ գիտեք, թե որքան արժեքավոր է ձեր մարմինը: Դուք կարող եք ցույց տալ, որ դուք Հիսուս Քրիստոսի աշակերտն եք:

Աստծո մարգարեները միշտ խորհուրդ են տվել Նրա զավակներին համեստ հագնվել: Այն ձևը, որով դուք հագնվում եք արտացոլում է ձեր ներքինը: Ձեր հագուստը և հարդարանքը ուրիշներին ուղերձներ են ուղարկում ձեր մասին և տպավորություն թողնում ուրիշների վրա: Երբ դուք լավ հարդարված եք և համեստ հագնված, դուք հրավիրում եք Հոգու ընկերակցությունը և կարող եք լավ ազդեցություն գործել նրանց վրա, ովքեր ձեր շրջապատում են:

Երբեք մի ցածրացրեք ձեր հագուստի չափանիշները որևէ առիթով: Այդպես անելը ուղերձ է ուղարկում, որ դուք օգտագործում եք ձեր մարմինը ուշադրություն և հավանություն հրավիրելու համար և որ համեստությունը կարևոր է միայն այն ժամանակ, երբ այն հարմար է:

Անհամեստ հագուստը ներառում է կարճ տաբատներ և կիսաշրջազգեստ, սեղմ հագուստներ, վերնաշապիկներ, որոնք չեն ծածկում գոտկատեղը և այլ բաց զգեստներ: Երիտասարդ կանայք պետք է կրեն հագուստներ, որոնք ծածկում են ուսերը, և խուսափեն հագուստներից, որոնք կարճ կտրվածքով են առջևից կամ ետևից կամ ինչ որ այլ ձևով բաց են: Երիտասարդ տղամարդիկ իրենց արտաքին տեսքով ևս պետք է պահպանեն համեստություն: Բոլորը պետք է խուսափեն ծայրահեղություններից հագուստի, արտաքին տեսքի և սանրվածքի ոճի մեջ: Միշտ եղեք կոկիկ ու մաքուր և խուսափեք թափթփված կամ անպատշաճորեն անփույթ լինելուց՝ հագուստի, հարդարանքի և շարժուձևի մեջ: Ինքներդ ձեզ հարց տվեք. «Ինձ արդյո՞ք հարմարավետ կզգայի, եթե լինեի Տիրոջ ներկայությամբ»:

Մի օր դուք կստանաք ձեր օժտումը տաճարում: Ձեր զգեստը և վարքը պետք է օգնեն ձեզ պատրաստվել այդ սրբազան ժամանակին:

Մի տգեղացրեք ձեզ դաջվածքներով կամ մարմինը դակելով: Եթե աղջիկները կամ կանայք ցանկանում են դակել իրենց ականջները, նրանց խորհուրդ է տրվում կրել միայն մեկ զույգ համեստ ականջող:

Ցույց տվեք հարգանք Տիրոջ և ինքներդ ձեր հանդեպ, պատշաճորեն հագնվելով Եկեղեցու ժողովների և միջոցառումների ժամանակ, լինի դա կիրակի օրը կամ շաբաթվա ընթացքում: Եթե դուք համոզված չեք, թե ինչն է պատշաճ, դիմեք ձեր ծնողներին կամ ղեկավարներին օգնության համար:

Ալմա 1.27

Զվարճություն և մամուլ

«Եթե մի բան առաքինի է, գեղեցիկ, բարեհամբավ, գովեստի արժանի, մենք ձգտում ենք այդ ամենին» (Հավատո Հանգանակներ 1.13):

Ինչ որ դուք կարդում եք, լսում, կամ նայում, ազդեցություն ունի ձեզ վրա: Ուստի ընտրեք միայն այն զվարճությունը կամ մամուլը, որը բարձրացնում է ձեզ: Լավ զվարճությունը կօգնի ձեզ ունենալ լավ մտքեր և կատարել արդար ընտրություններ: Այն թույլ կտա ձեզ բավականություն ստանալ առանց կորցնելու Տիրոջ Հոգին:

Չնայած զվարճությունը լավ է, բայց դրանցից մի քանիսը կարող է ձեզ հեռու տանել արդար ապրելակերպից: Վնասակար բովանդակություն կրում են հաճախ ինտերնետային կայքերը, համերգները, կինոֆիլմերը, երաժշտությունը, տեսաերիզները,տեսասկավառակները, գրքերը, ամսագրերը, նկարները և այլն: Սատանան օգտագործում է այդպիսի զվարճությունը ձեզ խաբելու համար, դարձնելով այն, ինչը սխալ է և չար, երևակայելի նորմալ և հուզիչ:

Մի այցելեք, մի նայեք կամ մասնակցեք այնպիսի զվարճության, որն ինչ որ ձևով գռեհիկ է, անբարոյական, բռնադատող կամ պոռնոգրաֆիկ: Մի մասնակցեք զվարճության, որն ինչ որ ձևով ներկայացնում է անբարոյականությունը կամ բռնարարքները որպես ընդունելի մի բան:

Պոռնոգրաֆիան բոլոր իր ձևերով առանձնապես վտանգավոր է և հակում առաջացնող: Այն, ինչ սկսվում է որպես հետաքրքիր զբաղմունք, կարող է դառնալ կործանարար սովորույթ, որը վերահսկողության տակ է վերցնում ձեր կյանքը: Այն կարող է ձեզ տանել դեպի սեռական օրինազանցության և նույնիսկ հանցագործ վարքի: Պոռնոգրաֆիան մի թույն է, որը թուլացնում է ձեր ինքնավերահսկողությունը, փոխում է ուրիշների հանդեպ ձեր տեսակետը, ստիպում է ձեզ կորցնել Հոգու առաջնորդությունը և կարող է նույնիսկ ազդել ձեր ապագա կողակցի հետ նորմալ հարաբերություններ ունենալու վրա: Եթե դուք պոռնոգրաֆիայի եք հանդիպում, անմիջապես շրջվեք դրանից:

Բռնության պատկերումները հաճախ գովազդում են չարաղետ վարքը: Դրանք վիրավորում են Հոգուն և դարձնում ձեզ ավելի քիչ ընդունակ՝ արձագանքելու ուրիշներին՝ զգայուն, հոգատար ձևով: Դրանք հակասում են միմյանց սիրելու Փրկչի ուղերձին:

Ունեցեք քաջություն դուրս գալու կինոնկարի կամ տեսաերիզի դիտումից, անջատելու համակարգիչը կամ հեռուստացույցը, փոխելու ռադիոկայանը կամ վայր դնելու ամսագիրը, եթե այն, ինչ ներկայացվում է, չի համապատասխանում Երկնային Հոր չափանիշներին: Արեք այս բաները, նույնիսկ, եթե ուրիշները չեն անում: Թող ձեր ընկերներն ու ընտանիքն իմանան, որ դուք պարտավոր եք պահել Աստծո չափանիշները: Դուք ունեք Սուրբ Հոգու պարգևը, որը ձեզ կտա ուժ և օգնություն՝ ճիշտ ընտրություններ կատարելու համար:

Մորոնի 7.12–19

Երաժշտություն և պար

«Եթե ուրախ ես, գովք ասա Տիրոջը՝ երգելով, երաժշտությամբ, պարելով» (ՎԼՈՒ 136.28):

Երաժշտությունը կյանքի կարևոր և զորավոր մասն է: Այն կարող է բարի ազդեցություն գործել, օգնելով ձեզ ավելի մոտենալ Երկնային Հորը: Սակայն այն կարող է նաև օգտագործվել չար նպատակներով: Անպարկեշտ երաժշտությունը կարող է թվալ անվնաս, բայց այն կարող է ազդել ձեր մտքի և հոգու վրա:

Ուշադիր ընտրեք երաժշտությունը, որը դուք լսում եք: Մի լսեք այն երաժշտությունը, որը հեռացնում է Հոգին, խրախուսում է անբարոյականություն, փառաբանում է բռնությունը, օգտագործում կեղտոտ կամ վիրավորական խոսքեր, կամ էլ դրդում է սատանիզմի կամ այլ չար գործողությունների:

Պարելը բավականություն է և կարող է հնարավորություն տալ ձեզ հանդիպելու նոր մարդկանց: Այնուամենայնիվ, այն նույնպես կարող է սխալ օգտագործվել: Երբ պարում եք խուսափեք ձեր պարընկերոջ հետ ողջ մարմնով շփման մեջ գտնվելուց: Մի օգտագործեք դիրքեր կամ շարժումներ, որոնք սեռական վարվելաձևի տպավորություն են թողնում: Ծրագրեք և հաճախեք պարերի, որտեղ զգեստները, հարդարանքը, լուսավորությունը, երաժշտության խոսքերը և երաժշտությունը նպաստում են առողջ մթնոլորտին, որտեղ Տիրոջ Հոգին կարող է ներկա գտնվել:

Վարդապետություն և Ուխտեր 25.12

Լեզու

«Ոչ մի գեշ խոսք չդուրս գայ ձեր բերանից. Բայց այն՝ որ բարի է» (Եփեսացիս Դ.29):

Ձեր խոսելաձևը շատ բան է ասում այն մասին, թե ով եք դուք: Մաքուր և կիրթ լեզուն ապացույց է պայծառ և առողջ մտքի: Օգտագործեք լեզու, որը բարձրացնում է, քաջալերում և հաճոյախոսում ուրիշներին: Մի վիրավորեք ուրիշներին, կամ ցածրացրեք նրանց, նույնիսկ կատակով: Խոսեք բարությամբ և դրականորեն ուրիշների մասին, որպեսզի կարողանաք կատարել միմյանց սիրելու Տիրոջ պատվիրանը: Երբ օգտագործում եք լավ խոսելաձև, դուք հրավիրում եք Հոգին լինելու ձեզ հետ:

Միշտ ակնածանքով և հարգանքով օգտագործեք Աստծո և Հիսուս Քրիստոսի անունները: Նրանց անունները սխալ օգտագործելը մեղք է: Պիղծ, գռեհիկ կամ կեղտոտ լեզուն կամ շարժուձևը, ինչպես նաև կատակները անբարոյական գործողությունների մասին, վիրավորական են Տիրոջ և ուրիշների համար: Անմաքուր լեզուն վնասում է ձեր հոգին և

նվաստացնում ձեզ: Մի թույլ տվեք, որ ուրիշների ազդեցությամբ օգտագործեք այն:

Ընտրեք ընկերներ, ովքեր օգտագործում են լավ խոսելաձև: Ձեր շրջապատի մարդկանց օգնեք օգտագործել մաքուր խոսելաձև ձեր օրինակով և բարյացակամորեն քաջալերեք նրանց ընտրել այլ խոսքեր: Քաղաքավարի դուրս եկեք կամ փոխեք թեման, երբ ձեր շրջապատում ուրիշները գործածում են վատ խոսելաձև:

Եթե զարգացրել եք հայհոյելու սովորույթ, պետք փոխեք այն: Սկսեք փոխվելու որոշում ընդունելուց: Աղոթեք օգնության համար: Եթե դուք սկսում եք օգտագործել խոսքեր, որոնք դուք գիտեք, որ սխալ են, լռեք կամ ասեք այն, ինչ ուզում եք ասել, որևէ այլ ձևով:

Հակոբոս Գ.2–13

Ժամադրություն

«Տերը մեզ գրավիչ է դարձրել միմյանց համար մեծ նպատակով: Բայց հենց այդ գրավչությունը դառնում է պայթուցիկ նյութ, եթե վերահսկողության տակ չպահվի…. Այդ պատճառով է, որ Եկեղեցին խորհուրդ չի տալիս վաղ ժամադրվել» (Նախագահ Գորդոն Բ. Հինքլի):

Այն մշակույթներում, որտեղ ժամադրությունը կամ սիրատածումը ընդունելի են, ժամադրությունը կարող է օգնել զարգացնել երկարատև ընկերություն և ի վերջո հավերժական ընկեր գտնել: Ժամադրեք միայն նրանց, ովքեր բարձր չափանիշներ ունեն և ում ընկերակցությամբ դուք կարող եք պահպանել ձեր չափանիշները: Երիտասարդ տղամարդը կամ երիտասարդ կինը պատասխանատու են ժամադրության ընթացքում օգնելու միմյանց պահպանել իրենց չափանիշները և պաշտպանել մեկը մյուսի պատիվն ու առաքինությունը: Դուք պետք է հարգեք քահանայության և կանանց սրբազան լինելը:

Մի ժամադրվեք մինչև 16 տարեկանը: Դրանից առաջ ժամադրվելը կարող է տանել դեպի անբարոյականություն, սահմանափակելով այլ մարդկանց թիվը, որոնց դուք կհանդիպեք և զրկելով ձեզ փորձառություններից, որոնք կօգնեն ձեզ ընտրել հավերժական զուգընկեր:

Ոչ բոլոր դեռահասներն են, որ կարիք ունեն ժամադրվելու կամ նույնիսկ կամենում են ժամադրվել: Շատ երիտասարդներ չեն ժամադրվում մինչև իրենց դեռահաս դառնալը, որովհետև նրանց դա դեռ չի հետաքրքրում, չունեն հնարավորություններ կամ ուղղակի հետաձգում են լուրջ հարաբերություններ ստեղծելը: Այնուամենայնիվ, լավ ընկերություններ կարելի է և պետք է զարգացնել ամեն տարիքում:

Երբ սկսում եք ժամադրվել, հանդիպեք խմբերով կամ զույգերով: Խուսափեք հաճախակի ժամադրությունների գնալ միևնույն մարդու հետ: Անպայման ձեր ծնողներին ներկայացրեք նրանց, ում հետ հանդիպում եք: Գուցե կամենաք հրավիրել ձեր ժամադրածներին ընտանեկան միջոցառումների: Ծրագրեք ժամադրություններ, որոնք դրական են և ոչ թանկ և դա կօգնի ձեզ լավ ճանաչել միմյանց: Արեք բաներ, որոնք կօգնեն ձեզ և ձեր ընկերակցին պահպանել ձեր ինքնահարգանքը և մոտ մնալ Տիրոջ Հոգուն:

Բ Կորնթացիս Զ.14

Սեռական մաքրություն

«Ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին» (Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին):

Ֆիզիկական մտերմությունը ամուսնու և կնոջ միջև գեղեցիկ է և սրբազան: Այն կարգված է Աստծո կողմից երեխաներ ստեղծելու համար և ամուսնու և կնոջ միջև սիրո արտահայտման համար: Աստված պատվիրել է, որ սեռական մտերմությունը պահվի ամուսնության համար:

Երբ հնազանդվում եք սեռական մաքրություն ունենալու Աստծո պատվիրանին, պատրաստվեք տաճարում կապել և պահել սրբազան ուխտեր: Նախապատրաստվեք կառուցել ամուր ամուսնություն և աշխարհ բերել երեխաներ որպես սիրող ընտանիքի մաս: Պաշտպանեք ձեզ էմոցիոնալ վնասվածքից, որը միշտ գալիս է ինչ որ մեկի հետ ամուսնությունից դուրս ֆիզիկական մտերմություն ունենալուց:

Նախքան ամուսնությունը մի ունեցեք ոչ մի սեռական հարաբերություն և ամուսնությունից հետո եղեք լիովին հավատարիմ ձեր ամուսնուն: Սատանան կարող է գայթակղել ձեզ պատճառաբանել, որ սեռական մտերմությունը նախքան ամուսնությունը ընդունելի է, երբ երկու անձ սիրահարված են: Այդ ճիշտ չէ: Աստծո համար սեռական մեղքերը խիստ լուրջ են, որովհետև դրանք պղծում են այն ուժը, որն Աստված տվել է մեզ կյանք ստեղծելու համար: Մարգարե Ալման ասել է, որ սեռական մեղքերը ավելի լուրջ են, քան որևէ այլ մեղքեր, բացի սպանությունից կամ Սուրբ Հոգին ուրանալուց (տես Ալմա 39.5):

Նախքան ամուսնանալը ոչինչ մի արեք, որպեսզի արթնացնեք հզոր զգացմունքներ, որոնք պետք է արտահայտվեն միայն ամուսնության մեջ: Մի մասնակցեք կրքոտ համբույրներ, մի պառկեք մյուս անձնավորության վրա կամ դիպեք մեկ ուրիշ անձնավորության մարմնի անձնական, սուրբ մասերին, հագնված կամ առանց հագուստի: Մի թույլ տվեք որևէ մեկին անել այդ ձեզ հետ: Մի արթնացրեք այդ զգացմունքները ձեր սեփական մարմնում:

Մշակույթներում, որտեղ ժամադրությունը կամ սիրատածումն ընդունված է, միշտ վերաբերվեք ձեր ժամադրողին հարգանքով, ոչ թե որպես ձեր կրքոտ ցանկությունների առարկայի: Մնացեք ապահով տարածքներում, որտեղ դուք հեշտությամբ կարող եք վերահսկել ձեր ֆիզիկական զգացումները: Մի մասնակցեք խոսակցությունների կամ

գործողությունների, որոնք արթնացնում են սեռական զգացումներ:

Համասեռամոլ վարքը լուրջ մեղք է: Եթե դուք գտնվում եք նույն սեռի հանդեպ հրապույրի դեմ պայքարի մեջ, խորհուրդ վերցրեք ձեր ծնողներից և եպիսկոպոսից: Նրանք կօգնեն ձեզ:

Բռնաբարության, արյունապղծության կամ այլ սեռական անարգանքի զոհերը մեղավոր չեն մեղքի համար: Եթե դուք այս հանցագործությունների զոհ եք, իմացեք, որ դուք անմեղ եք, և որ Աստված սիրում է ձեզ: Անմիջապես ձեր եպիսկոպոսից խորհուրդ վերցրեք, որպեսզի նա կարողանա օգնել ձեզ անցնել զգացմունքային ապաքինման գործընթացով:

Եթե ձեզ գայթակղում են սեռական օրինազանցություն գործել, օգնություն հայցեք ձեր ծնողներից, եպիսկոպոսից և ընկերներից, որոնց կարող եք վստահել: Աղոթեք Տիրոջը, որը կօգնի ձեզ դիմադրել գայթակղությանը և հաղթահարել անպատշաճ մտքերն ու զգացումները:

Եթե գործել եք սեռական օրինազանցություն, սկսեք ապաշխարության գործընթացն այժմ, որպեսզի կարողանաք գտնել ներքին խաղաղություն և ունենալ Հոգու լիարժեք ընկերակցությունը: Որոնեք Տիրոջ ներումը: Խոսեք ձեր եպիսկոպոսի հետ: Նա կօգնի ձեզ ձեռք բերել ներում, որը մատչելի է բոլոր նրանց, ովքեր իսկապես ապաշխարում են:

Ծննդոց ԼԹ.1–12, Վարդապետություն և Ուխտեր 38.42

Ապաշխարություն

«Ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես Տերս, այլևս չեմ հիշում դրանք» (ՎԵՈՒ 58.42):

Փրկիչը տվեց Իր կյանքը մեզ համար և տառապեց մեր մեղքերի համար: Այս մեծ զոհաբերությունը կոչվում է Քավություն: Քավության միջոցով դուք կարող եք ստանալ ներում և մաքրվել ձեր մեղքերից, երբ ապաշխարեք: Երբ անեք, ինչ անհրաժեշտ է ներում ստանալու համար, դուք ինքներդ կիմանաք ձեզ համար Քավության ուժը և ձեր հանդեպ Աստծո ունեցած սերը: Դուք կզգաք Տեր Հիսուս Քրիստոսի խաղաղությունը, որը ձեզ կբերի մեծ ուժ:

Սատանան ուզում է, որ դուք մտածեք, որ չեք կարող ապաշխարել, բայց դա բացարձակապես ճիշտ չէ: Փրկիչը խոստացել է ձեզ ներում, եթե դուք անեք այն, ինչ պահանջվում է: Որքան ավելի շուտ ապաշխարեք, այնքան շուտ կգտնեք օրհնությունները, որոնք գալիս են ներումից:

Որոշ մարդիկ, գիտենալով, խախտում են Աստծո պատվիրանները, մտածելով, որ կապաշխարեն մինչև տաճար գնալը կամ միսիա ծառայելը: Այդպիսի դիտավորյալ մեղքը ծաղր է Փրկչի Քավության հանդեպ և հրավիրում է սատանայի ազդեցությունը կյանքում: Այսպիսի վարքի համար ապաշխարությունը դժվար է և կարող է երկար ժամանակ պահանջել: Եթե դուք այս ձևով մեղանչում եք, դուք կարող եք շատ տարիներ շարունակ կորցնել օրհնություններ և հոգևոր առաջնորդությունը: Դուք կարող եք մեղսավոր վարքի թակարդն ընկնել, դժվարացնելով ետդարձի ձեր ճանապարհը:

Դուք միշտ պետք է խոստովանեք ձեր մեղքերը Տիրոջը: Դուք պետք է նաև խոստովանեք ձեր մեղքերը նրանց, ում վնասել եք: Եթե դուք լուրջ մեղքեր եք գործել, ինչպես օրինակ՝ անբարոյականություն, դուք պետք է խոստովանեք դրանք ձեր եպիսկոպոսին:

Ալմա 36.6–24

Ազնվություն

«Գողություն մի անիր: Քո դրացու դէմ սուտ վկայութիւն մի անիր» (Ելից Ի.15–16):

Ազնիվ եղեք ինքներդ ձեր, ուրիշների և Տիրոջ հետ: Երբ դուք ազնիվ եք ամեն ձևով, դուք կառուցում եք բնավորության ուժ, որը թույլ կտա ձեզ մեծ ծառայության մեջ լինել Աստծո և ուրիշների մոտ: Դուք կօրհնվեք մտքի խաղաղությամբ և ինքնահարգանքով: Լինելով ազնիվ, դուք վստահության կարժանանաք Տիրոջ և նրանց կողմից, ովքեր ձեր շրջապատում են:

Անազնվությունը ցավ է պատճառում ձեզ և սովորաբար ուրիշներին ևս: Երբ ստում եք, գողանում, խանութից ապրանք վերցնում կամ խաբում, դուք վնասում եք ձեր հոգին և դառնում ավելի անընդունակ բարի գործեր անելու: Եղեք ազնիվ ձեր գործում, տալով լիարժեք աշխատանք ձեր վճարի դիմաց:

Մի արդարացրեք ձեզ, որ սխալը ճիշտ է, չնայած շատ մարդիկ ձեր շրջապատում գուցե մտածեն, որ վնաս չկա անազնիվ լինելու մեջ: Ազնիվ լինելը քաջություն է պահանջում և պարտավորություն՝ անելու այն, ինչ գիտեք, որ ճիշտ է:

Ալմա 27.27

Հանգստության օրը պահելը

«Յիշիր հանգստութեան օրը նորան սուրբ պահելու համար» (Ելից Ի.8):

Տերը Հանգստության օրը տվել է ձեր օգտի համար և պատվիրել է ձեզ այն սուրբ պահել: Հանգստության օրը պահելը կմոտեցնի ձեզ Տիրոջը և ձեր ընտանիքին: Այն կտա ձեզ անհրաժեշտ հանգիստը և ուժերի վերականգնում:

Շատ վեհացնող գործեր հանգստյան օրվա համար պատշաճ են: Երկրպագեք Տիրոջը, հաճախեք եկեղեցի, անցկացրեք խաղաղ ժամանակ ձեր ընտանիքի հետ, ուսումնասիրեք ավետարանը, նամակներ գրեք, վարեք օրագիր, կատարեք ընտանեկան պատմության աշխատանք և այցելեք հիվանդներին կամ հաշմանդամներին: Ձեր զգեստը մինչև եկեղեցական ժողովները, դրանց ընթացքում և

դրանցից հետո պետք է հարգանք ցույց տան Հանգստյան օրվա հանդեպ:

Երբ աշխատանք եք որոնում, ասացեք ձեր ապագա գործատուին, որ կամենում եք հաճախել ձեր կիրակնօրյա ժողովներին և հանգստյան օրը սուրբ պահել: Շատ գործատուներ գնահատում են այսպիսի անձնական հավատամքներով աշխատողներին: Երբ հնարավոր է, ընտրեք այնպիսի գործ, որը չի պահանջում Հանգստյան օրն աշխատել:

Կիրակին արձակուրդ չէ կամ զվարճության կամ սպորտային խաղերի օր: Մի ձգտեք զվարճանալ կամ փող ծախսել այս օրը: Թող ձեր ընկերներն իմանան, թե որոնք են ձեր չափանիշները, այսպիսով նրանք չեն փորձի համոզել ձեզ մասնակցել այն գործերին, որոնք պատշաճ չեն Հանգստյան օրվա համար:

Վարդապետություն և Ուխտեր 59.9-13

Տասանորդ և նվիրատվություններ

«Բոլոր տասանորդը տարեք գանձատունը… և ինձ մեկ փորձեցեք սորանով, ասում է Զորաց Տերը, թե արդեօք չե՞մ բանալ ձեզ համար երկնքի պատուհանները եւ օրհնութիւն թափել ձեզ համար ՝ մինչև որ նորա համար տեղ չլինի» (Մաղաքիա Գ.10, 3 Նեփի 24.10):

Տասանորդի օրենքը կարևոր պատվիրան է, որին դուք պետք է հնազանդվեք ձեր ողջ կյանքի ընթացքում: Տասանորդը ձեր եկամտի մեկ տասներորդն է:

Տասանորդ վճարելով դուք ձեր երախտագիտությունն եք ցույց տալիս Աստծուն այն բոլոր բաների համար, որ Նա տվել է ձեզ: Դա մի ձև է, որն օգնում է կառուցել Աստծո թագավորությունը երկրի վրա: Տասանորդն օգտագործվում է տաճարներ և ժողովատներ կառուցելու, սուրբ գրքերը թարգմանելու և հրատարակելու, եկեղեցական նյութերով անդամներին ապահովելու, միսիոներական աշխատանք կատարելու, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանք կատարելու և սեմինարիաներին ու ինստիտուտներին աջակցելու համար:

Տասանորդ վճարելիս ձեր վերաբերմունքը կարևոր է: Վճարեք այն, որովհետև դուք սիրում եք Տիրոջը և հավատք ունեք Նրա հանդեպ: Վճարեք այն պատրաստակամորեն շնորհակալ սրտով: Վճարեք այն առաջինը, նույնիսկ, երբ կարծում եք բավականաչափ փող չունեք ձեր մյուս կարիքները հոգալու համար: Այդպես անելը կօգնի ձեզ հաղթահարել եսասիրությունը և ավելի ընկալունակ լինել Հոգու հանդեպ:

Յուրաքանչյուր տարվա վերջում ձեր եպիսկոպոսի հետ պլանավորեք տասանորդի հարցազրույցի ժամանակը: Այս մի հանդիպում է, որի ընթացքում դուք վերանայում եք ձեր նվիրատվության արձանագրությունները և հայտարարում, թե արդյոք վճարել եք լրիվ տասանորդ:

Հնազանդվեք ծոմի օրենքին՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ ծոմ պահելով (եթե առողջությունը թույլ է տալիս), սովորաբար ամսվա առաջին կիրակին: Ծոմի օրը ճիշտ պահելը ներառում է չուտել և չխմել երկու միմյանց հաջորդող ճաշերի ժամանակ և առատ ծոմի նվիրատվություն տալ՝ օգնելու հոգ տանել նրանց համար, ովքեր կարիքի մեջ են: Սկսեք և ավարտեք ծոմը աղոթքով՝ խնդրելով հատուկ օգնություն առանձնահատուկ կարիքի համար:

Վարդապետություն և Ուխտեր 119.3-4

Ֆիզիկական առողջություն

«Բոլոր սրբերը, ովքեր հիշում են, որ պահեն և կատարեն այս ասածները, ... Կունենան առողջություն իրենց պորտում և ծուծ իրենց ոսկորներում, և կգտնեն իմաստության և գիտության մեծ գանձեր, նույնիսկ թաքնված գանձեր: Եվ կվազեն ու չեն հոգնի, և կքայլեն ու չեն նվաղի» (ՎԿՈՒ 89.18–20):

Տերը պատվիրել է ձեզ լավ հոգ տանել ձեր մարմնի մասին: Այդ անելու համար հետևեք Իմաստության Խոսքին, որը գտնվում է Վարդապետություն և Ուխտեր 89 բաժնում: Օգտագործեք սննդարար ուտելիք, կանոնավորապես մարզվեք և բավականաչափ քնեք: Երբ անեք բոլոր այս բաները, դուք զերծ կմնաք վնասակար հակումներից և վերահսկողություն կունենաք ձեր կյանքի վրա: Դուք ձեռք կբերեք առողջ մարմնի, զգոն մտքի օրհնությունները և Սուրբ Հոգու առաջնորդությունը:

Երբեք մի օգտագործեք ծխախոտային արտադրատեսակներ՝ գլանակներ, քթախոտ, ծամելու ծխախոտ, սիգարներ և ծխամորճ: Դրանք խիստ հակում առաջացնող են, կվնասեն ձեր մարմինը և կկարճացնեն ձեր կյանքը: Մի խմեք սուրճ կամ թեյ, քանի որ սրանք նույնպես հակում առաջացնող են և վնասակար:

Ալկոհոլի ամեն ձև վնասակար է ձեր մարմնի և հոգու համար: Ալկոհոլի ազդեցության տակ լինելը թուլացնում է ձեր դատողությունը և ինքնատիրապետումը և կարող է տանել ձեզ դեպի մաքրաբարոյության օրենքի կամ այլ պատվիրանների խախտման: Խմելը կարող է տանել դեպի ալկոհոլիզմ, որը կործանում է անձանց և ընտանիքներին:

Որևէ թմրադեղ, քիմիական նյութ կամ վտանգավոր կիրառում, որն օգտագործվում է զգացողություն կամ «երանություն» առաջացնելու համար, կարող է կործանել ձեր ֆիզիկական, մտավոր և հոգևոր բարօրությունը: Սրանք ընդգրկում են թունդ թմրադեղեր, դեղատոմսով կամ ազատ վաճառքի դեղամիջոցներ և կենցաղային քիմիկատներ:

Երբեք թույլ մի տվեք սատանային կամ ուրիշներին ստիպել ձեզ մտածել, որ Իմաստության Խոսքի խախտումը ձեզ ավելի երջանիկ կամ գրավիչ կդարձնի:

Դանիել Ա.3–20

Ուրիշներին ծառայելը

«Սորանով կգիտենան ամենքը թե իմ աշակերտներն էք, եթե իրար վերայ սէր ունենաք» (Հովհաննես ԺԳ.35):

Ուրիշներին ծառայելը Հիսուս Քրիստոսի աշակերտի ամենակարևոր հատկանիշն է: Աշակերտը հոժար է կրել ուրիշ մարդկանց բեռները և մխիթարել նրանց, ովքեր մխիթարության կարիք ունեն (տես Մոսիա 18.8–9): Հաճախ Երկնային Հայրը կբավարարի ուրիշների կարիքները ձեր միջոցով:

Ծառայելիս նայեք Փրկչին որպես օրինակ: Չնայած Նա աշխարհ եկավ որպես Աստծո Որդի, Նա խոնարհաբար ծառայեց նրանց, ովքեր Իր շրջապատում էին:

Կան ուրիշներին ծառայելու բազմաթիվ ուղիներ: Դուք կարող եք ծառայել ձեր Եկեղեցական հանձնարարություններում և ձեր տանը, դպրոցում և համայնքում: Ամեն օր որոնեք Սուրբ Հոգու առաջնորդությունը, իմանալու համար, թե ում ծառայեք և ինչպես օգնեք բավարարել նրանց կարիքները: Հաճախ ամենակարևոր ծառայությունները մատուցվում են բարության ամենօրյա հասարակ գործերով:

Երբ նվիրվեք ուրիշներին ծառայելուն, դուք ավելի կմոտենաք Երկնային Հորը: Ձեր սիրտը կլցվի սիրով: Ձեր ընդունակությունները կմեծանան և ձեր կյանքը և նրանց կյանքը, ովքեր ձեր շրջապատում են, կօրհնվեն:

Ղուկաս Ժ.25–37

Առաջ գնացեք հավատքով

Այս գրքում ներկայացված չափանիշները կօգնեն ձեզ կատարել ճիշտ ընտրություններ: Հաճախ անդրադարձեք դրանց և հարցրեք ինքներդ ձեզ. «Արդյո՞ք այնպես եմ ապրում, ինչպես Տերն է կամենում, որ ես ապրեմ»:

Որպեսզի կարողանաք դառնալ այնպիսին, ինչպիսին Տերն է կամենում, որ դառնաք, ամեն օր ծնկի իջեք և արտահայտեք Նրան ձեր սրտի ցանկությունները: Նա է ամեն իմաստության աղբյուրը և դուք Նրա օգնության կարիքն ունեք: Նա կլսի և կպատասխանի ձեզ:

Ամեն օր կարդացեք սուրբ գրությունները: Դրանք անձնական հայտնության հզոր աղբյուր են և հաստատուն ուժ ձեր վկայության համար:

Հիշեք և պահեք ուխտերը, որոնք դուք կապել եք, երբ մկրտվել եք և որոնք դուք նորոգում եք ամեն շաբաթ, երբ ճաշակում եք հաղորդությունը: Դուք, երիտասարդ տղաներ, պետք է պահեք այն ուխտերը, որոնք կապել եք քահանայություն ստանալիս: Այժմ այդ ուխտերը պահելը կօգնի ձեզ պատրաստվել տաճարային ուխտերին, որոնք դուք կկապեք հետագայում:

Հավատարիմ եղեք Տիրոջը և Նրա Եկեղեցուն բոլոր հանգամանքներում: Եկեղեցու իշխանավորները կառաջնորդեն ձեզ դեպի երջանկության ուղիներ: Երախտապարտ եղեք Աստծո մեծ արքայության անդամը լինելու համար:

Եղեք խոնարհ և պատրաստակամ լսելու Հոգու շշուկներին: Տիրոջ իմաստությունը վեր դրեք ձեր սեփական իմաստությունից:

Երբ անեք այս ամենը, Տերը շատ ավելի մեծ բան կստեղծի ձեր կյանքից, քան դուք կարող եք ինքներդ: Նա կմեծացնի ձեր հնարավորությունները, կլայնացնի ձեր տեսադաշտը և կզորացնի ձեզ: Նա կտա ձեզ այն օգնությունը, որի կարիքը դուք ունեք, ձեր փորձություններին և մարտահրավերներին դիմակայելու համար: Երբ սկսեք ճանաչել ձեր Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և զգաք նրանց սերը ձեր հանդեպ, դուք կգտնեք իսկական ուրախություն:

2 Նեփի 31.16–21

ՊԱՐՏՔ

Ժամանակը եկել է կարգի բերելու մեր տները:

—Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Թեմային առնչվող սուրբ գրություններ

Առակաց ԻԲ.7

«Հարուստը աղքատներին կտիրէ և փոխ առնողը ծառայ կլինի փոխ տուողին»:

Հռովմայեցիս ԺԳ.8

«Ոչ ովի ոչինչ պարտական չմնաք բացի իրար սիրելուց. որովհետեւ ընկերին սիրողը՝ օրենքը կատարել է»:

Մոսիա 4.28

«Եվ ես կկամենայի, որ դուք հիշեիք, որ ձեր միջից ով որ պարտք է վերցնում իր հարևանից, պետք է վերադարձնի այն, ինչը պարտք է վերցրել, ինչպես որ նա համաձայնվել է, այլապես դուք մեղք կգործեք. և միգուցե դուք կստիպեք ձեր հարևանին էլ մեղք գործել»:

Վարդապետություն և Ուխտեր 64.27

«Ահա, իմ օրենքներում ասված է, կամ արգելված է պարտքի տակ ընկնել թշնամիներից»:

Վարդապետություն և Ուխտեր 104.78

«Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, ձեր պարտքերի վերաբերյալ,- ահա, իմ կամքն է, որ դուք վճարեք ձեր բոլոր պարտքերը»:

Վարդապետություն և ՈՒխտեր 136.25

«Եթե պարտք ես վերցնում քո մերձավորից, պետք է վերադարձնես այն, ինչ վերցրել ես, իսկ եթե չես կարողանում ետ վճարել, ապա գնա անմիջապես և ասա մերձավորիդ, չլինի թե նա դատապարտի քեզ»:

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Ողջ իմ կյանքում մանկությունից սկսած ես լսել եմ, թե ինչպես են Եղբայրներն ասում. «Դուրս եկեք պարտքերից և պարտքից զերծ մնացեք»» (in Conference Report, Apr. 1975, 166):

«Ամուսնալուծությունների մեծ մասի պատճառը եսասիրությունը և այլ մեղքերն են: Պողոս Առաքյալը գիտեր պատասխանը: Նա ասաց, որ տղամարդիկ սիրեն իրենց կանանց, իսկ կանայք սիրեն իրենց ամուսիններին: Երկու հոգի իրենց ամուսնությունը միասին կայացնելու համար պետք է խնամքով կազմեն իրենց բյուջեն, կազմեն երկուսով՝ ամուսինը և կինը, ապա խիստ հետևեն դրան» (in Conference Report, Oct. 1975, 6; կամ *Ensign,* Nov. 1975, 6):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Մեր ոգեշնչված առաջնորդները միշտ հորդորել են մեզ դուրս գալ պարտքից, ապրել մեր միջոցների սահմաններում, և միայն գնել այն բաները, որոնց համար այժմ կարող ենք վճարել» (“ ‘Pay Thy Debt, and Live,’ “ *Ensign,* հունիս 1987, 3):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Մեր ցանկությունները բավարարելու համար մենք պարտքի տակ ենք ընկնում, ցրում ենք մեր ռեսուրսները բարձր տոկոսներ վճարելով, և դառնում ստրուկներ, աշխատելով դրանք վճարելու համար: ...

Ես հանձնարարում եմ ձեզ խնայողության և աշխատասիրության արժանիքները ... Աշխատանքն ու խնայողությունն է, որ անկախ է դարձնում ընտանիքը» (“ ‘Thou Shalt Not Covet,’ ” *Ensign,* Mar. 1990, 4):

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

«Մենք հորդորում ենք Վերջին Օրերի Սրբերին լինել խնայող իրենց ծրագրերը կազմելիս, լինել պահպանողական իրենց ապրելակերպով և խուսափել չափազանց մեծ կամ անհարկի պարտքերից» (in Conference Report, Apr. 1992, 68; կամ *Ensign,* May 1992, 47):

Երեց Մարվին Ջ. Էշթոն

Տես մեջբերումները էջեր 115-19-ում:

Երեց Լ. Թոմ Փերի

«Մեծ և ընդարձակ շենքից եկող ներկա աղաղակները գայթակղում են մեզ մրցակցել այս աշխարհի ապրանքներին տիրանալու համար ... Հաճախ այդ ապրանքները գնվում են պարտքով վերցված փողով, առանց նույնիսկ մտածելու մեր ապագա կարիքները հոգալու մասին: …

Մեզ իմաստությամբ խորհուրդ է տրվել խուսափել պարտքից, ինչպես կխուսափեինք ժանտախտից»:

Լավ կառավարվող ընտանիքը չի վճարում տոկոսներ՝ այլ վաստակում է դրանք» (in Conference Report, Sept.–Oct. 1995, 45, 47; կամ *Ensign,* Nov. 1995, 35–36):

Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ

«Մենք պետք է զգույշ լինենք ապառիկի սխալ օգտագործումից: Ապառիկ քարտերի օգտագործումը շատ վայրերում սպառողական պարտքը մեծացրել է ապշեցուցիչ չափերով: Ես հիշում եմ մի ծեր ֆերմերի պատմությունը, [որը] գրել էր փոստով առաքվող ապրանքների խանութին հետևյալը. «Խնդրում եմ ուղարկեք ինձ 787 էջում ցուցադրված բենզինով աշխատող շարժիչներից մեկը, և եթե այն որևէ բանի պետք լինի. ես կուղարկեմ ձեզ չեկը»:

Որոշ ժամանակ անց նա ստացավ հետևյալ պատասխանը. «Խնդրում ենք ուղարկեք չեկը: Եթե այն որևէ բանի պետք լինի, մենք կուղարկենք շարժիչը» [Jacob M. Braude, *Braude's Treasure of Wit and Humor* (1964), 45]:

«Ժամանակակից հասարակությունը գլխապատառ նետվում է կուտակելու այս աշխարհի նյութական ապրանքները: Սա ստիպում է շատերին մտածել, որ նրանք կարող են փոխել բերքահավաքի օրենքը, հնձելով վարձք առանց վճարելու գինը ազնիվ աշխատանքով և ջանքով: Ցանկանալով անմիջապես բարգավաճել, նրանք դիմում են խիստ վտանգավոր ֆինանսական սխեմաներով սպեկուլյացիայի, որը վայրկենապես խթանում է հարստություն: Այս բոլորը շատ հաճախ առաջացնում է տնտեսական ցնցումներ, երբեմն նույնիսկ ֆինանսական փլուզում: Առակաց գրքում կարդում ենք. «Հավատարիմ մարդի օրհնությունները շատ են, բայց հարստանալու շտապողը անպատիժ չի մնալ [Առակաց ԻԸ.20]» (in Conference Report, Apr. 1998, 59; կամ *Ensign*, May 1998, 44):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Կարևոր է սովորել տարբերակել ցանկությունները կարիքներից: Պահանջվում է ինքնակարգապահություն՝ խոսափելու համար «գնիր այժմ, վճարիր հետո» փիլիսոփայությունից և որդեգրելով «խնայիր այժմ և գնիր հետո» գործելակերպը:...

Պարտքերից զերծ տուն ունենալը կարևոր նպատակ է խնայողաբար ապրելու համար: … Տները, որոնք զերծ են և մաքուր գրավներից ու կալանքներից, չեն կարող իրավունքից զրկվել: …

… Անկախությունը շատ բաներ է նշանակում: Այն նշանակում է … ազատ լինել անձնական պարտքից, տոկոսներից և տուգանքներից, որոնք պահանջվում են աշխարհի կողմից պարտքի դիմաց» (in Conference Report, Apr. 1986, 24–25; կամ *Ensign*, May 1986, 20–21):

Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն

Տես «Ագահություն, եսասիրություն և բավականություններով տարվելը», էջեր 120–22 [00]:

ՏՂԱՆԵՐԻՆ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Եկեղեցու Նախագահ

In Conference Report, Oct. 1998, 69–72; կամ Ensign, Nov. 1998, 52–54

Ուղղված տարեց տղամարդկանց

Այժմ, եղբայրներ, ես կկամենայի խոսել տարեց տղամարդկանց հետ, հույս ունենալով, որ այն կլինի դաս նաև երիտասարդների համար:

Ես ուզում եմ խոսել ձեզ հետ աշխարհիկ հարցերի վերաբերյալ:

Որպես հետադարձ հայացք այն բանի վերաբերյալ, ինչ ցանկանում եմ ասել, ես կկարդամ ձեզ համար մի քանի հատվածներ Ծննդոց գրքի 41-րդ գլխից:

Փարավոնը՝ Եգիպտոսի կառավարիչը երազ տեսավ, որը նրան խիստ անհանգստացրեց: Նրա արքունիքի իմաստունները չկարողացան մեկնաբանել այն: Այդ ժամանակ Հովսեփին բերեցին նրա մոտ:

«Փարավոնն ասաց Հովսեփին. Երազումս, ահա կանգնել էի գետի եզերքին.

Եվ ահա գետիցը եոթը երինջներ ելան պարարտ եւ գեղեցիկ տեսքով, եւ արածում էին պրտուների մեջ:

Եվ ահա նորանց ետեւից ուրիշ եոթը երինջներ ելան նիհար ու շատ զազիր տեսքով եւ վտիտ մարմնով…

Եվ այն վտիտ եւ զազիր երինջները կերան առաջի եոթը պարարտ երինջներին….

Եվ ես երազումս տեսա … մեկ փունջի վերայ եոթը լիքը և լավ հասկեր էին դուրս գալիս.

Եւ ահա նորանց ետեւից եոթը չոր, նիհար եւ խորշակահար հասկեր էին բուսնում.

Եւ նիհար հասկերը կուլ տուին այն եոթը լաւ հասկերին…

Եւ Հովսեփն ասեց Փարավոնին .. . . Աստուած իր անելիքը յայտնեց Փարավոնին:

Այն եոթը լաւ երինջները եոթը տարի են, եւ այն եոթը լաւ հասկերը եոթը տարի են. երազը մէկ է…

… Աստուած իր անելիքը Փարավոնին ցոյց է տուել:

Ահա եոթը տարի են գալու, որ բոլոր Եգիպտոսի երկրումը մեծ առատութիւն կլինի.

Եվ նորանց ետեւիցը եոթը տարի սով կգայ…

Աստուած շուտով անելու է այս» (Ծննդոց ԽԱ.17–20, 22–26, 28–30, 32):

Մեր տները կարգի բերենք

Այժմ, եղբայրներ, ես կամենում եմ հստակ դարձնել այն, որ ես չեմ մարգարեանում սովի տարիներ ապագայում: Բայց ես առաջարկում եմ, որ մենք մեր տները կարգի բերենք:

Մեր մարդկանցից այնքան շատերն են ապրում իրենց եկամուտները ծայրը ծայրին հասցնելով: Փաստորեն, ոմանք ապրում են պարտքերով:

Վերջին շաբաթների ընթացքում մենք ականատես եղանք համաշխարհային շուկաներում լայնածավալ և երկյուղալի տատանումների: Տնտեսությունը փխրուն բան է: Ջակարտայում կամ Մոսկվայում տնտեսության մեջ մի վրիպումը կարող է անմիջապես անդրադառնալ ողջ աշխարհի վրա: Այն ի վերջո կարող է հասնել մեզանից յուրաքանչյուրին որպես անհատ: Փոթորկոտ եղանակի նախանշան կա, որին նախապես լավ կանենք ուշադրություն դարձնել:

Ես հույս ունեմ ողջ իմ սրտով, որ մենք երբեք չենք ընկնի լճացման մեջ: Ես երեսունականների Մեծ Լճացման զավակն եմ: Ես ավարտեցի համալսարանը 1932 թվականին, երբ գործազրկությունը այս տարածքում գերազանցում էր 33 տոկոսը:

Հայրս այդ ժամանակ Եկեղեցու ամենամեծ ցցի նախագահն էր այս հովտում: Դա նախքան մեր ներկա բարօրության ծրագրի հաստատումն էր: Նա քայլում էր սենյակում՝ անհանգստանալով իր ժողովրդի համար: Նա և նրա ընկերակիցները հիմնադրեցին մի մեծ փայտահատման ծրագիր, որը նախագծվեց տան բուխարիները և վառարանները վառելու և ձմռանը մարդկանց տաքացնելու համար: Նրանք փող չունեին, որ ածուխ գնեին: Մարդիկ, ովքեր հարուստ էին, նրանց շարքում էին, ովքեր փայտ էին կտրում:

Նախազգուշացում սպառողական պարտքի դեմ

Կրկնում եմ, կկամենայի էլ երբեք չտեսնեինք այդպիսի լճացում: Բայց ես անհանգստանում եմ հսկայական սպառողական երկարատև վարկերի առթիվ, որը կախված է ազգի , ներառյալ մեր մարդկանց գլխավերևում: 1997 թվականին այդ պարտքը կազմեց 1.2 տրիլիոն դոլար, որը ներկայացնում է 7 տոկոս աճ նախորդ տարվա համեմատությամբ:

Միացյալ Նահանգներում 1997թվականի դեկտեմբերին, 55-ից 60 միլիոն տնային տնտեսություններ կատարում էին վարկային քարտի հաշվեկշիռներ: Այդ հաշվեկշիռները միջին չափով ավելի քան 7,000 դոլար էին և արժեին ամեն տարին 1,000 դոլլարի տոկոսներ և վարձեր: Սպառողական վարկը որպես տրամադրված վարկի տոկոս բարձրացել է 1993 թվականի 16.3 տոկոսից մինչև 19.3 տոկոս 1996 թվականին:

Բոլորը գիտեն, որ յուրաքանչյուր պարտք վերցված դոլար իր հետ բերում է տոկոս վճարելու տուգանքը: Երբ փողը հնարավոր չի լինում ետ վճարել, այդ ժամանակ տեղի է ունենում սնանկացում: Միացյալ Նահանգներում անցյալ տարվա ընթացքում տեղի է ունեցել 1,350,118 սնանկացում: Սա ներկայացնում է 50 տոկոս աճ 1992 թվականի համեմատ: Այս տարվա երկրորդ եռամսյակին մոտավորապես 362,000 մարդ գրանցվեց որպես սնանկ, ինչը ռեկորդային թիվ է երեք ամսվա ժամանակահատվածի համար:

Մենք գայթակղվում ենք հրապուրիչ գովազդներով: Հեռուստատեսությունը գայթակղիչ հրավերներ է ներկայացնում՝ պարտքով գնելու տան արժեքի մինչև 125 տոկոսը փակելու մասին, սակայն առանց նշելու պարտքի դիմաց հաշվարկվող տոկոսը:

Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը 1938 թվականի ապրիլի գերագույն համաժողովին ասաց այս ամբիոնից. «Երբ պարտքի մեջ եք ընկնում, տոկոսը ձեր ուղեկիցն է օրվա և գիշերվա յուրաքանչյուր րոպե, դուք չեք կարող անտեսել այն, կամ դրանից խուսափել, դուք չեք կարող դրանից հեռանալ, այն չի ենթարկվում ոչ պայմանագրերի, ոչ պահանջների ոչ էլ հրամանների և երբ որ դուք մտնում եք այդ ճանապարհը կամ կտրում դրա ընթացքը կամ ձախողվում բավարարել դրա պահանջները, այն հարվածում է ձեզ» (in Conference Report, Apr. 1938, 103):

Ապրեք ձեր միջոցների սահմաններում

Ես իհարկե ընդունում եմ, որ գուցե անհրաժեշտ լինի պարտքով փող վերցնել տուն գնելու համար: Բայց եկեք գնենք այնպիսի տուն, որը կարող ենք մեզ թույլ տալ և այսպիսով հեշտացնել վճարումները, որոնք անողքաբար անընդհատ կախված կլինեն մեր գլխավերևում 30 տարվա ընթացքում:

Ոչ ոք չգիտի, թե երբ կհարվածեն պատահարները: Ես ծանոթ եմ մի մարդու հետ կապված դեպքի հետ, որը շատ հաջողակ էր իր մասնագիտության մեջ: Նա ապրում էր բարեկեցիկ: Նա մեծ տուն կառուցեց: Այնուհետև նա մի օր լուրջ վթարի ենթարկվեց: Վայրկենապես, առանց նախազգուշացման, նա գրեթե իր կյանքը կորցնելու շեմին էր: Նա հաշմանդամ մնաց: Նա կորցրեց վաստակելու ուժը: Նրա առջևում էին հսկայական բժշկական սպասարկման հաշիվները: Նա այլ վճարումներ ուներ կատարելու: Մի պահ նա հարուստ էր, այնուհետև նա սնանկացավ:

Եկեղեցու սկզբից ի վեր Տերը խոսել է պարտքի այս խնդրի վերաբերյալ: Մարտին Հարիսին հայտնության միջոցով Նա ասաց. «Վճարիր պարտքը, որը դու պայմանավորվել

ես տպագրիչի հետ: Ազատիր քեզ գերությունից» (ՎԱՈՒ 19.35):

Նախագահ Հեբեր Ջ. Գրանտը անընդհատ ամբիոնից խոսել է այս հարցի վերաբերյալ: Նա ասել է.

«Եթե կա որևէ բան, որը խաղաղություն կբերի և բավարարություն մարդկային սրտին և ընտանիքին, դա մեր միջոցներին համապատասխան ապրելն է: Եվ եթե կա մի որևէ բան, որը տանջող է և հուսահատեցնող և սիրտ կեղեքող, դա պարտքեր ունենալն է և պարտականություններ, որոնք մարդ չի կարողանում կատարել» (*Gospel Standards*, comp. G. Homer Durham [1941], 111):

Դառնալ ինքնավստահ

Ողջ Եկեղեցում մենք տարածում ենք ինքնավստահության ուղերձը: Հնարավոր չէ ձեռք բերել ինքնավստահություն, երբ ընտանիքի գլխին լուրջ պարտք է կախված: Մարդը ոչ անկախություն ունի, ոչ ազատություն գերությունից, երբ նա պարտք է ուրիշներին:

Եկեղեցու գործերը կառավարելիս մենք փորձել ենք օրինակ հանդիսանալ: Մենք որպես քաղաքականություն, խնայողաբար հետևել ենք ամեն տարի Եկեղեցու եկամտի մեկ տոկոսը հավանական նեղ օրվա համար մի կողմ դնելուն:

Ես երախտապարտ եմ, որ կարող եմ ասել, որ Եկեղեցին բոլոր իր գործողություններում, բոլոր իր նախաձեռնություններում, բոլոր իր բաժանմունքներում կարողանում է գործել առանց պարտք վերցրած փողի: Եթե չկարողանանք տեղավորվել, մենք կկրճատենք մեր նախագծերը: Մենք մեր ծախսերը կհարմարեցնենք մեր եկամուտներին: Մենք պարտք չենք վերցնի:

Նախագահ Ջոզեֆ Ֆ.Սմիթի կյանքում ամենաերջանիկ օրերից մեկն այն էր, երբ Եկեղեցին վճարեց իր երկարատև պարտքը:

Ինչպիսի հրաշալի զգացում է պարտքից ազատ լինել, ունենալ մի քիչ փող նեղ օրվա համար դրված մի տեղում, որտեղից անհրաժեշտություն ծագելու դեպքում կարելի կլինի հանել:

Նախագահ Ֆաուստը սրա մասին ինքը չէր պատմի: Հավանաբար ես կարող եմ պատմել այն և նա կարող է ինձանից մեջբերում անել հետագայում: Նա իր տան համար գրավ էր դրել, որը 4 տոկոս փող էր տանում: Շատ մարդիկ գուցե նրան ասեին, որ նա հիմար էր այդպիսի ցածր տոկոսով գրավը վճարել: Բայց միջոցներ ձեռք բերելու առաջին հնարավորության դեպքում նա և իր կինը որոշեցին, որ պետք է վճարեին իրենց պարտքը: Նա այդ օրվանից սկսած ազատ է եղել պարտքից: Այդ պատճառով նրա դեմքին ժպիտ կա և այդ պատճառով նա սուլում է աշխատելիս:

Ազատվեք պարտքի ստրկությունից

Ես հորդորում եմ ձեզ, եղբայրներ, հետևել ձեր ֆինանսական վիճակին: Ես հորդորում եմ ձեզ համեստ լինել ձեր ծախսերում, կարգավարժ ձեր գնումներում՝ հնարավորին չափով խուսափելու պարտքերից: Վճարեք պարտքերը որքան կարող եք արագ, և ազատեք ձեզ գերությունից:

Սա ավետարանի աշխարհիկ գործերի մի մասն է կազմում, որին մենք հավատում ենք: Թող Աստված օրհնի ձեզ, իմ սիրելի եղբայրներ, որ կարգի բերեք ձեր տները: Եթե դուք վճարել եք ձեր պարտքերը, եթե ունեք պահուստ, եթե դա նույնիսկ փոքր լինի, այդ ժամանակ փոթորիկները կմոլեգնեն ձեր գլխին, բայց դուք կունենաք ապաստան ձեր կանանց համար և խաղաղություն ձեր սրտերում: Սա այն բոլորն է, ինչ կկամենայի ասել այդ մասին, բայց կցանկանայի ասել դա ողջ ուժով, որին ես ունակ եմ:

Ես թողնում եմ իմ վկայությունը այս աշխատանքի աստվածայնության և ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ իմ սիրո մասին, Քավիչի՝ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԵՎ ՆԵՐՀԱՏՈՒԿ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որոշ դերեր լավագույնս սազում են տղամարդկային էությանը, իսկ մյուսները կանանց էությանը:

—Երեց Բոյդ Ք. Փաքեր

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Հարոլդ Բ. Լի

«Իմ կյանքի փորձից ելնելով, թվում է, որ հավատարիմ մայրերն ունեն հատուկ պարգև, որը մենք հաճախ ակնարկում ենք որպես մոր կանխազգացում: Հավանաբար մայր լինելու մեծ օրհնության հետ մեկտեղ մեր Երկնային Հայրը նրանց օժտել է այս հատկանիշով, քանի որ հայրերը զբաղված իրենց քահանայության կոչումներով և ապրուստ վաստակելով, երբեք այնքան մոտիկից չեն առնչվում երկնային էակների հետ այն հարցերում, որոնք կապված են տանը երեխաներին դաստիարակելու անհատական մանրամասների հետ» (*Teachings of Harold B. Lee,* 291):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Իր իմաստությամբ և ողորմությամբ մեր Երկնային Հայրը տղամարդկանց և կանանց դարձրել է մեկը մյուսից կախված՝ իրենց ներուժի լիակատար ծաղկման համար: Քանի որ նրանց էությունները ինչ որ ձևով տարբեր են, նրանք կարող են լրացնել միմյանց; քանի որ նրանք շատ բաներով նման են, կարող են հասկանալ մեկմեկու: Թող ոչ մեկը չնախանձի մյուսին իրենց տարբերությունների համար, թող երկուսով զանազանեն, թե որն է արտասովոր և ինչն է հրաշալիորեն արմատական այդ տարբերություններում և գործեն համապատասխանաբար» (“Relief Society—Its Promise and Potential,” *Ensign*, Mar. 1976, 5):

Մենք ունեինք լիակատար հավասարություն, որպես նրա հոգևոր զավակներ: Մենք ունենք հավասարություն, որպես մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Աստծո կատարյալ սիրո ստացողներ …

Այդ մեծ հավաստիացումներում, այնուամենայնիվ, մեր դերերն ու հանձնարարությունները տարբերվում են: Սրանք հավերժական տարբերություններ են՝ մայրության և քույրության կանանց բազմաթիվ ու հսկայական պարտականությունները, և հայրության և քահանայության տղամարդկանց վիթխարի պարտականությունները» (“The Role of Righteous Women,” *Ensign,* Nov. 1979, 102):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Դուք [կանայք] չեք ստեղծվել որպեսզի լինեք նույնը, ինչպիսին տղամարդիկ են: Ձեր բնական հատկանիշները, մեղմությունը ու անհատականություններն ամբողջովին տարբեր են տղամարդկանցից: Դրանք բաղկացած են հավատարմությունից, բարեգործությունից, բարությունից և գթությունից: Դրանք են հաղորդում ձեզ կնոջ անհատականություն: Դրանք նաև հավասարակշռում են տղամարդկանց ավելի ագրեսիվ և մրցակցական էությունը:

Գործարար աշխարհը մրցակցական է և երբեմն անողորմ: Մենք չենք կասկածում, որ կանայք ունեն ինչպես խելացիություն, այնպես էլ հմտություններ, իսկ որոշ դեպքերում հիանալի ունակություններ, մրցելու տղամարդկանց հետ: Բայց մրցելով, նրանք պետք է, անհրաժեշտաբար, դառնան ագրեսիվ և մրցակցական: Այսպիսով, նրանց աստվածային հատկանիշները նվաստացվում են և նրանք սկսում են դրսևորել նույն հատկանիշները, ինչ տղամարդիկ (*Teachings of Ezra Taft Benson,* 547–48):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Կարծում եմ դուք կասեք, դա տղամարդու տեսակետ է բեռը կնոջ վրա դնել՝ կայունությունը և ամուսնության քաղցրությունը պահպանելու համար, բայց սա կարծես նրա աստվածային էությունն է: Նա ունի գերազանց հոգևորություն ամուսնական հարաբերության մեջ և հնարավորություն քաջալերելու, բարձրացնելու, ուսուցանելու և լինելու մեկը, որը օրինակ է հանդիսանում ընտանիքում արդարակյաց ապրելակերպի համար: Երբ կանայք գան այն հասկացողությանը, որ ավելի կարևոր է լինել գերազանց, քան հավասար, նրանք կգտնեն իսկական ուրախություն այն սկզբունքներով ապրելով, որոնք Տերը սահմանել է իր աստվածային ծրագրում» *(Teachings of Howard W. Hunter,* 139):

«Տարօրինակ է թվում, որ կանայք ցանկանում են տղամարդկանց հետ հավասարաբար մտնել մասնագիտությունների և աշխատանքի ու հասարակական գործերի մեջ, ցանկանալով հագնվել տղամարդու նման և կատարել տղամարդկանց աշխատանքը: Ես չեմ ժխտում այն փաստը, որ կանայք ընդունակ են այդ անել, բայց երբ ես կարդում եմ սուրբ գրքերը, դժվարանում եմ համաձայնեցնել դա նրա հետ, ինչ Տերն է ասել կանանց մասին, նրա հետ, ինչ ասել է ընտանիքի մասին, ինչ ասել է երեխաների մասին: Ինձ թվում է, որ , չնայած նրանք կարող են հավասար լինել շատ բաներում, տղամարդկանց և

կանանց միջև կա տարբերակում, որը մենք լիովին հասկանում ենք: Հուսով եմ, երբեք չի գա մի ժամանակ, երբ կանայք կիջեցվեն տղամարդկանց մակարդակին, չնայած նրանք կարծես ներկայացնում են այս պահանջները ողջ աշխարհով մեկ … անցկացվող ժողովներում» (*Teachings of Howard W. Hunter,* 150):

Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ

«Նախքան արու և էգ ծնվելը, մենք որոշակի պարտավորություններ ենք վերցրել և … համաձայնվել ենք գալ այս աշխարհ մեծ, հարուստ, բայց տարբեր շնորհներով: Մենք կոչվում էինք արու և էգ, մեծ գործեր անելու առանձին մոտեցումներով և առանձին հանձնարարություններով:

… Պատասխանը տղամարդկանց նման դառնալը չէ: Ավելի շուտ պատասխանը կայանում է նրանում, թե ով եք դուք, և ինչպես կարող եք ապրել ըստ ձեր աստվածային ներուժի՝ իրականացնելով հավերժական պարտավորություններ: …

«Դուք բոլորդ ստիպված կլինեք երբեմն պատասխանել կանացի ձեր բնական բնազդներին, որոնք, ինչպես ասել է Մարգարե Ջոզեֆ Սմիթը, ձեր էությանը համաձայն է: Նա ասել է.«Եթե դուք ապրեք համաձայն ձեր արտոնությունների, հրեշտակներին հնարավոր չի լինի ետ պահել ձեր ընկերակիցները լինելուց» [*Teachings of the Prophet Joseph Smith,* 226.]: Դուք պետք է շռայլորեն արձագանքեք բարիք անելու այդ բնազդներին և հուշումներին: Ձեր հոգին շատ խաղաղ պահեք և լսեք Սուրբ Հոգու հուշումները: Հետևեք ազնիվ կանխազգացումներին, որոնք Աստվածության կողմից նախորդ աշխարհում խորը սերմանվել են ձեր հոգիներում: Այս ձևով դուք կարձագանքեք Աստծո Սուրբ Հոգուն և կարբագործվեք ճշմարտությամբ: Այդպես անելով, դուք հավերժորեն կհարգվեք և կսիրվեք: Ձեր գործի մեծ մասը ձեր հոգատարությամբ և ողորմածությամբ մարդկությանը հարստացնելու վիթխարի ունակությունն է» (“How Near to the Angels,” *Ensign,* May 1998, 95–97):

Նախագահ Բոյդ Կ. Փաքեր

«Քրոջ ձեռքի քնքուշ հպումը տալիս է բժշկություն և քաջալերանք, որը տղամարդու ձեռքը, որքան էլ լավ մտադրություններով լինի, չի կարող երբեք լիովին կրկնօրինակել» (in Conference Report, Apr. 1998, 94; կամ *Ensign,* May 1998, 72):

«Տանը և Եկեղեցում քույրերը պետք է գնահատվեն իրենց բուն էության համար: Զգույշ եղեք, որ չլինի թե անգիտակցաբար որդեգրեք ազդեցություններ և գործողություններ, որոնք միտում ունեն ջնջել արական և իգական տարբերությունները, որոնք բնությունն է հաստատել: Տղամարդը, հայրը կարող է անել սովորաբար կանացի աշխատանք համարվող գործերի մեծ մասը: Իր հերթին կինը և մայրը կարող է անել շատ բան, իսկ անհրաժեշտության դեպքում, մեծագույն բաներ, որոնք սովորաբար համարվում են տղամարդու պարտականությունը, առանց վտանգելու իրենց հստակ դերերը: Այնուամենայնիվ, ղեկավարները և, հատկապես, ծնողները, պետք է հաշվի առնեն, որ կա առանձնահատուկ արական էություն և առանձնահատուկ կանացի էություն, որոնք կարևոր են տան և ընտանիքի հիմնադրման համար: Այն ինչն անհանգստացնում է կամ թուլացնում կամ էլ միտում ունի ջնջել այդ տարբերությունը, քայքայում է ընտանիքը և նվազեցնում է երջանկության հավանականությունը» (in Conference Report, Apr. 1998, 96; կամ *Ensign,* May 1998, 73):

Երեց Թոմաս Ս. Մոնսոն

«Այն, ինչ նորարարներն ու ազատամիտները միշտ մոռանում են, այն է, որ կանայք, բացի այն, որ անձնավորություններ են, նաև պատկանում են սեռի և որ սեռի տարբերությունների հետ կապված են գործունեության և վարքագծի կարևոր տարբերություններ: Իրավունքների հավասարությունը չի նշանակում ֆունկցիաների նույնություն: Ինչպես Պողոս Առաքյալն է հայտարարել. «…Ոչ կինն առաց մարդի, և ոչ մարդն առանց կնկայ Տերումը» (Ա Կորնթ. ԺԱ.11) (“The Women’s Movement: Liberation or Deception?” *Ensign,* Jan. 1971, 20):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

Եթե Ադամն ու Եվան էությամբ տարբեր չլինեին մեկը մյուսից, նրանք չէին բազմանա և լցնի երկիրը [տես Ծննդոց Ա.28]: Լրացուցիչ տարբերությունները երջանկության ծրագրի բուն բանալին են:

«Որոշ դերեր լավագույնս սազում են արական էությանը, իսկ մյուսները կանացի էությանը» (in Conference Report, Oct. 1993, 28; կամ *Ensign,* Nov. 1993, 21):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

Տես մեջբերումները 80 (00) էջում:

Գոյություն ունի հստակ տղամարդկային էություն և հստակ կանացի էություն, որոնք կարևոր են տան և ընտանիքի հիմնադրման համար:

Երեց Դալլին Հ. Օուքս

«Մենք ապրում ենք մի օրում, երբ բազմաթիվ քաղաքական, պաշտոնական և հասարակական ճնշումներ փոփոխությունների են դրդում, որոնք շփոթեցնում են սեռերը և ջնջում տղամարդու և կնոջ միջև տարբերությունները: Մեր հավերժական հեռանկարը մեզ տրամադրում է փոփոխությունների դեմ, որոնք փոխում են տղամարդու և կնոջ այդ առանձին պարտականություններն ու արտոնությունները, որոնք կարևոր են երջանկության մեծ ծրագիրն իրականացնելու համար: Մենք դեմ

չենք կանգնում տղամարդու և կնոջ միջև վերաբերմունքի բոլոր փոփոխություններին, քանի որ օրենքներում և սովորույթներում որոշ փոփոխություններ ուղղակի ճշտում են հին սխալները, որոնք երբեք չեն հիմնվել հավերժական սկզբունքների վրա» (in Conference Report, Oct. 1993, 99; կամ *Ensign,* Nov. 1993, 73–74):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Մեր Երկնային Հայրն օժտել է Իր որդիներին և դուստրերին առանձնահատուկ հատկանիշներով, որոնք հատկապես համապատասխանում են իրենց անձնական պարտականություններին, երբ նրանք իրականացնում են Նրա ծրագիրը: Նրա ծրագրին հետևելը պահանջում է, որ դուք անեք այն բաները, որոնք Նա սպասում է ձեզանից որպես որդի կամ դուստր, ամուսին կամ կին: Այդ դերերը տարբեր են, բայց ամբողջովին համատեղելի: Տիրոջ ծրագրով պահանջվում են երկուսը՝ տղամարդ և կին մեկ ամբողջություն կազմելու համար: Իրականում ամուսինն ու կինը երկու նույնատիպ կեսեր չեն, այլ սքանչելի, աստվածայնորեն որոշված լրացուցիչ ընդունակություններով և հատկանիշներով մի միասնություն:

«Ամուսնությունը թույլ է տալիս, որ այս տարբեր հատկանիշներն ի մի գան՝ մեկ դառնալով միասնությամբ, օրհնելով ամուսնուն և կնոջը, նրանց երեխաներին ու թոռներին: Մեծագույն երջանկության և կյանքում արդյունավետության համար հարկավոր են ամուսին և կին: Նրանց ջանքերը միակցվում են և միմյանց լրացնում: Յուրաքանչյուրն ունի անձնական հատկանիշներ, որոնք լավագույնս սազում են որպես տղամարդ կամ կին Տիրոջ սահմանած դերին»: Երբ դրանք օգտագործվում են ինչպես Տերն է նախատեսել, այդ ունակությունները թույլ են տալիս ամուսնացած զույգին մտածել, գործել և ուրախանալ որպես մեկ՝ միասին դիմակայելով մարտահրավերներին և հաղթահարելով դրանք որպես մեկ, աճելով սիրով և հասկացողությամբ և տաճարային արարողությունների միջոցով հավերժորեն միասին կապված լինել որպես մեկ ամբողջություն: Այդ է ծրագիրը:

Դուք կարող եք սովորել, թե ինչպես լինել ավելի արդյունավետ ծնողներ՝ ուսումնասիրելով Ադամի և Եվայի կյանքը: Ադամը Միքայելն էր, որն օգնեց ստեղծել երկիրը՝ մի փառահեղ, հոյակապ անձնավորություն: Եվան նրան հավասար էր՝ լիարժեք, զորությամբ նվիրվող զուգընկեր: Պտուղը ճաշակելուց հետո Տերը խոսեց նրանց հետ: Նրանց դատողությունները բացահայտում են տղամարդու և կնոջ մի քանի տարբեր հատկանիշներ: Ադամին Նա ասաց. «Մի՞թե կերել ես այն ծառից, որից պատվիրեցի, որ չուտես» [Մովսես 4.17]: Իսկ Ադամի պատասխանը հատկանշական էր մի մարդու, որն ուզում էր որքան հնարավոր էր ճիշտն արտահայտել: Ադամը պատասխանեց. «Կինը, որին տվեցիր ինձ, և պատվիրեցիր, որ մնա ինձ հետ, նա ինձ տվեց այն ծառի պտղից, և ես կերա» [4.18]: Եվ Տերն ասաց Եվային. «Այս ի՞նչ է, որ դու արեցիր» [4.19]: Եվայի պատասխանը հատկանշական էր կնոջը: Նրա պատասխանը շատ պարզ էր և ուղղամիտ. «Օձն ինձ խաբեց և ես կերա» [Մովսես 4.19] (in Conference Report, Oct. 1996, 101; կամ *Ensign,* Nov. 1996, 73–74):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Մենք այնքան քիչ գիտենք, եղբայրներ և քույրեր, կանանց և տղամարդկանց և մայրության ու քահանայության միջև պարտականությունների բաժանման պատճառների մասին: Դրանք աստվածայնորեն որոշված էին մեկ այլ ժամանակում և մեկ այլ տեղում:…

Մենք՝ տղամարդիկ, ճանաչում ենք Աստծո հավատքն ունեցող կանանց որպես կանայք, մայրեր, քույրեր, դուստրեր, գործակիցներ և ընկերներ: Դուք թվում է սանձահարում եք մեզ և ազնվացնում մեզ, և այո, ուսուցանում մեզ և ոգեշնչում: Ձեր հանդեպ մենք հիացմունք ենք զգում, ինչպես նաև սեր, որովհետև արդարակեցությունը դերի հարց չէ, ոչ էլ բարությունը սեռի հարց: Արքայության գործում տղամարդիկ և կանայք առանց մեկը մյուսի չեն, բայց մի նախանձեք միմյանց, որ չլինի թե հրաժարվելով կամ դերերը փոփոխելով չկործանենք ինչպես կանանց սեռը, այնպես էլ տղամարդկանց սեռը» (in Conference Report, Apr. 1978, 13; կամ *Ensign,* May 1978, 10):

Երեց Մերիլ Ջ. Բեթման

«Երբ տղամարդը հասկանում է, թե որքան փառահեղ է կինը, նա նրան այլ կերպ է վերաբերվում: Երբ կինը հասկանում է, որ տղամարդն իր ներսում ունի աստվածության սերմերը, նա հարգում է նրան ոչ թե միայն նրա ով լինելու համար, այլ նրա համար, թե նա ով կարող է դառնալ: Աստվածային էության ըմբռնումը թույլ է տալիս յուրաքանչյուր մարդու հարգանք ունենալ մյուսի հանդեպ: Հավերժական հեռանկարը տղամարդու և կնոջ մեջ ցանկություն է առաջացնում սովորել և կիսվել միմյանց հետ:

Տղամարդիկ և կանայք ստեղծվել են որպես լրացումներ: Նրանք լրացնում են միմյանց: Պողոսն ասել է Կորնթացիներին. «Բայց դարձյալ ոչ կինն առանց մարդի, և ոչ մարդն առանց կնկայ, Տերումը» (Ա Կորնթացիս ԺԱ.11): Տղամարդիկ և կանայք լրացնում են միմյանց ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև զգացմունքային և հոգևոր առումով: Պողոս Առաքյալը սովորեցրել է, որ «անհավատ մարդը սրբված է կնկանովը, և անհավատ կինը սրբված է մարդովը» և նրանց միջոցով նաև երեխաներն են սրբագործվում (Ա Կորնթացիս Է.14): Տղամարդիկ և կանայք ունեն տարբեր ուժեղ և թույլ կողմեր, իսկ ամուսնությունը համագործակցող հարաբերություն է, որում հոգևոր աճը արագացվում է տարբերությունների պատճառով» (“The Eternal Family,” 113):

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՈՂՋ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Երեց Բոյդ Կ Փաքեր

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, Oct. 1993, 27–32; կամ Ensign, Nov. 1993, 21–24

Երջանկության մեծ ծրագիրը

Սիրելի եղբայրներ և քույրեր, սուրբ գրքերն ու Առաքյալների և մարգարեների ուսմունքները մեր մասին խոսում են որպես նախամահկանացու կյանքում որդիների և դուստրերի, Աստծո հոգևոր զավակների:[1] Սեռը գոյություն ուներ ավելի շուտ և չսկսվեց մահկանացու ծննդի ժամանակ:[2]

Երկնային մեծ խորհրդում[3] ներկայացվեց Աստծո ծրագիրը,[4] փրկության ծրագիրը,[5] փրկագնման ծրագիրը,[6] երջանկության մեծ ծրագիրը:[7] Ծրագիրը քննություն է բոլորի համար. բոլորը պետք է ընտրեն բարու և չարի միջև:[8] Նրա ծրագիրն ապահովում է Քավիչ, Քավություն, Հարություն և, եթե մենք հնազանդվում ենք, մեր վերադարձը դեպի Աստծո ներկայություն:

Հակառակորդն ապստամբեց և իր սեփական ծրագիրը ստեղծեց:[9] Նրանք, ովքեր հետևեցին նրան, զրկվեցին մահկանացու մարմին ունենալու իրավունքից:[10] Մեր ներկայությունն այստեղ հաստատում է, որ մենք ընդունել ենք մեր Հոր ծրագիրը:[11]

Լյուցիֆերի միակ նպատակն է հակադրվել երջանկության մեծ ծրագրին, փչացնել ամենամաքուրը, ամենագեղեցիկը և կյանքի ամենահրապուրիչ փորձառությունները՝ ռոմանտիկան, սերը, ամուսնությունը և ծնող դառնալը:[12] Նրա ետևից ամենուրեք մնում է դառնություն և հանցանք:[13] Միայն ապաշխարությունը կարող է բժշկել, ինչ նա վնասում է:

Աստծո ծրագիրը պահանջում է ամուսնություն և ընտանիք

Երջանկության ծրագիրը պահանջում է արական և իգական սեռի, տղամարդու և կնոջ, ամուսնու և կնոջ արդար միություն:[14] Վարդապետություններն ուսուցանում են մեզ, թե ինչպես արձագանքենք բնական հարկադրող ազդակներին, որոնք շատ հաճախ ազդում են մեր վարվելակերպի վրա:

Մարմինը, որը ձևավորվեց Աստծո պատկերով, ստեղծվեց Ադամի համար,[15] և նա ուղարկվեց Այգի:[16] Սկզբում Ադամը միայնակ էր: Նա կրում էր քահանայություն,[17] բայց նա մենակ չէր կարող իրականացնել իր ստեղծման նպատակները:[18]

Ոչ մի ուրիշ տղամարդ չէր համապատասխանի: Ոչ մենակ, ոչ էլ ուրիշ տղամարդկանց հետ Ադամը չէր կարողանա առաջադիմել: Ոչ էլ Եվան կարող էր ուրիշ կնոջ հետ: Այդպես էր դա այն ժամանակ: Դա այդպես է այսօր:

Եվան, օգնականը, ստեղծվեց: Ամուսնությունը հաստատվեց:[19] Ադամին պատվիրվեց հարել իր *կնոջը* (ոչ թե ուղղակի ինչ որ *կնոջ*) և «ուրիշ ոչ մեկի»:[20]

Ընտրությունը, կարելի է ասել, պարտադրվեց Եվային:[21] Նրան կգովեն իր որոշման համար: Այդ ժամանակ «Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն»:[22]

Երեց Օրսոն Ֆ. Ուիթնին նկարագրել է Անկումը որպես «երկկողմանի ուղղություն՝ ներքև, բայց առաջ: Այն մարդուն բերեց աշխարհ և դրեց նրա ոտքերը առաջընթացի մայրուղու վրա »:[23]

Աստված օրհնեց Ադամին և Եվային և ասաց նրանց. «Պտղաբեր եղեք և բազմացեք»:[24] Եվ այսպիսով հիմնադրվեց ընտանիքը:

Աստված տղամարդկանց և կանանց գնահատում է հավասարապես

Հայտնություններում չկա ոչ մի բան, որը ենթադրության տեղիք տա, որ Աստծո աչքում տղամարդ լինելը նախընտրելի է կին լինելուց, կամ որ Նա ավելի բարձր է գնահատում որդիներին քան դուստրերին:

Սուրբ գրքերում թվարկվող բոլոր արժանիքները՝ սերը, ուրախությունը, խաղաղությունը, հավատքը, բարեպաշտությունը, գթությունը, տրվում են ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց,[25] և քահանայության բարձրագույն արարողությունը մահկանացու կյանքում տրվում է միայն տղամարդուն և կնոջը միասին:[26]

Անկումից հետո բնական օրենքն ուներ հեռուն գնացող ինքնուրույնություն մահկանացու կյանքի ծննդյան վրա: Ինչպես Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտ. է կոչում, բնության «կատակները»[27] առաջացնում են մի շարք անհորմալություններ, պակասություններ և այլանդակություններ: Որքան էլ որ դա անազնիվ է թվում մարդկային տրամաբանությամբ, դրանք ինչ որ ձևով համապատասխանում են մարդկությանը ստուգելու Տիրոջ նպատակներին:

Ամեն արժանի բնազդին հետևելը, ամեն արդար մղմանը արձագանքելը, ամեն վեհացնող մարդկային հարաբերության կատարելագործումը ապահովվում է և հովանավորվում Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետություններում և պաշտպանվում Նրա Եկեղեցուն հայտնի դարձված պատվիրանների միջոցով:

Տղամարդկանց և կանանց դերերը

Առանց Ադամի և Եվայի էությունների տարբերությունների նրանք չէին կարողանա շատանալ և լցնել երկիրը:[28]

Լրացուցիչ տարբերությունները հենց երջանկության ծրագրի բանալին են:

Որոշ դերեր լավագույնս սազում են արական սեռի էությանը, իսկ մյուսները կանանց սեռի էությանը: Ինչպես սուրբ գրությունները, այնպես էլ այդ էության ձևերը հաստատում են տղամարդուն որպես պաշտպան և հայթհայթող:[29]

Քահանայության այս պարտականությունները, որոնք առնչվում են Եկեղեցու կառավարման հետ, անհրաժեշտաբար գործում են տնից դուրս: Դրանք վստահվել են տղամարդկանց Աստվածային օրենքով: Դա այդպես է եղել սկզբից ի վեր, քանզի Տերը հայտնել է, որ «քահանայության այս կարգը հաստատվել է, որ փոխանցվի հորից որդուն … Այս կարգը հաստատվել է Ադամի օրերում»:[30]

Տղամարդը, որը կրում է քահանայություն, առավելություն չունի կնոջ վրա վեհացման արժանանալիս: Կինը իր բուն էությամբ նույնպես համագործակից է Աստծո հետ և երեխաների հիմնական խնամատարն է: Արժանիքները և հատկանիշները, որոնցից կախված են կատարելագործումն ու վեհացումը, բնականաբար գալիս են կնոջը և կատարելագործվում ամուսնության և մայրության միջոցով:

Քահանայությունը տրվում է միայն արժանի տղամարդկանց, որպեսզի համապատասխան լինեն մեր Երկնային Հոր երջանկության ծրագրին: Բնության օրենքների և Աստծո հայտնած խոսքի հետ ներդաշնակության մեջ գործելով, այն լավագույնս աշխատում է այդ ձևով:

Քահանայությունը կրում է պատկառելի պատասխանատվություն: «Ոչ մի զորություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ, միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով, բարությամբ և մաքուր գիտելիքով»:[31]

Եթե մարդ «իշխանություն, տիրապետություն կամ էլ հարկադրանք գործադրի … անիրավության որևէ աստիճանով»,[32] նա խախտում է «երդումը և ուխտը, … որը պատկանում է քահանայությանը»:[33] Այդ ժամանակ «երկինքները ետ են քաշվում, Տիրոջ Հոգին տրտմում է »:[34] Եթե նա չապաշխարի, ապա կկորցնի իր օրհնությունները:

Չնայած տղամարդու և կնոջ դերերը սահմանվում են վեհացած սելեստիալ հայտարարություններով, դրանք լավագույնս դրսևորվում են ամենագործնական, սովորական, ընտանեկան իրական կյանքի երկրային փորձառություններում:

Վերջերս լսեցի, թե ինչպես հաղորդության ժողովի մի խոսնակ բողոքեց, որ նա չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ էին իր թոռնիկները միշտ ասում *Տատիկի* տուն գնալու մասին և երբեք չէին ասում Պապիկի տուն: Ես նրա համար լուծեցի այդ մեծ գաղտնիքը՝ Պապիկները կարկանդակներ չեն թխում:

Բնական և հոգևոր օրենքները հավերժական են

Բնական և հոգևոր օրենքները, որոնք կառավարում են կյանքը, հաստատվել էին նախքան աշխարհի հիմնադրումը:[35] Դրանք հավերժական են, ինչպես դրանց հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները: Դրանք հիմնված չեն հասարակական կամ քաղաքական դատողությունների վրա: Դրանք չեն կարող փոխվել: Ոչ մի ճնշում, ոչ մի բողոք, ոչ մի օրենսդրություն չի կարող փոփոխել դրանք:

Տարիներ առաջ ես ղեկավարում էի հնդկացիների սեմինարիաները: Երբ ես այցելեցի Ալբուկերկեի մի դպրոց, տնօրենն ասաց ինձ մի դեպքի մասին, որը տեղի էր ունեցել առաջին դասարանում:

Դասի ժամանակ մի կատվի ձագ մտել էր դասարան և շեղել փոքրիկների ուշադրությունը: Նրան բերել էին սենյակի առջև, որպեսզի բոլորը կարողանային տեսնել նրան:

Մի փոքրիկ հարցրել էր. «Տղա կատո՞ւ է, թե աղջիկ»:

Ուսուցիչը, որն անպատրաստ էր եղել այդ քննարկմանը, ասել էր. «Կարևոր չէ, այն ուղղակի կատվի ձագ է»:

Բայց երեխաները պնդել էին և մի փոքր տղա ասել էր. «Ես գիտեմ, թե ինչպես կարող ենք ասել, թե այն տղա փիսիկ է, թե աղջիկ»:

Ուսուցիչը ստիպված ասել էր. «Դե լավ դու ասա մեզ, թե ինչպես կարող ենք իմանալ, այն տղա փիսիկ է, թե աղջիկ»:

Տղան պատասխանել էր. «Մենք կարող ենք քվեարկել»:

Որոշ բաներ չեն կարող փոխվել: Վարդապետությունը չի կարող փոխվել:

Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆն ասել է. «Ուսմունքները, որոնք հայտնի են դարձվել մարդկանց զավակների փրկության և վեհացման համար, … սկզբունքներ են, որոնք չեն կարող վերացվել: *Դրանք սկզբունքներ են, որոնք տղամարդկանց [կամ կանանց] ոչ մի միավորում չի կարող կործանել:* Դրանք այնպիսի սկզբունքներ են, որոնք երբեք չեն կարող մեռնել… Դրանք կառավարելու կամ կործանելու մարդկանց հասանելիությունից դուրս են… Ողջ աշխարհը ուժ չունի միավորվելու այդ սկզբունքները կործանելու համար… Ոչ մի կետ կամ գծիկ այս սկզբունքներից չի կործանվի երբեք»:[36]

II Համաշխարհային Պատերազմի ընթացքում տղամարդիկ կանչվեցին կռվի դաշտ: Հրատապ շտապողականությամբ կանայք և մայրերը աղջ աշխարհում աշխատանքի լծվեցին, ինչպես երբեք նախկինում: Պատերազմի ամենաաղետաբեր ազդեցությունը եղավ ընտանիքի վրա: Այն տարածվում է մինչև այս սերունդը:

Շատացեք և լցրեք աշխարհը

1942թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ Առաջին Նախագահությունը մի ուղերձ հղեց «սրբերին

ամեն երկրում և բնակավայրում», որում ասվում է. «Որպես Եկեղեցու Առաջին Նախագահություն մեր մեջ գտնվող իշխանության առաքինությամբ, մենք նախազգուշացնում ենք մեր ժողովրդին»:

Նրանք ասացին. «Ադամին և Եվային տրված Իր ամենավաղ պատվիրանների շարքում» Տերն ասել է. «Շատացեք և լցրեք երկիրը»: Նա կրկնել է այս պատվիրանը մեր օրերում: Նա կրկին հայտնել է այս՝ վերջին տնտեսությունում, ամուսնական ուխտի հավերժության սկզբունքը …

Տերն ասել է մեզ, որ յուրաքանչյուր ամուսնու և կնոջ պարտականությունն է հնազանդվել Ադամին տրված շատանալու և երկիրը լցնելու պատվիրանին, որպեսզի ընտրյալ հոգիների բանակները, որոնք սպասում են իրենց մսե տաղավարներին, կարողանան գալ այստեղ և առաջ գնալ ըստ Աստծո մեծ ծրագրի՝ դառնալով կատարյալ հոգիներ, քանզի առանց այս մսե տաղավարների, նրանք չեն կարող առաջադիմել դեպի Աստծո ծրագրած իրենց ճակատագիրը: Այսպիսով, յուրաքանչյուր ամուսին և կին պետք է հայր և մայր դառնան Իսրայելում՝ հավերժական սուրբ ուխտի ներքո ծնված երեխաներին:

Այս ընտրյալ հոգիներին երկիր բերելով, յուրաքանչյուր հայր և յուրաքանչյուր մայր հանձն է առնում պատասխանատվություն մարմնավորված հոգու և Իրեն՝ Տիրոջ հանդեպ Նրա առաջարկած հնարավորությունից օգտվելու համար՝ ամենասրբազան տեսակի մի պարտավորություն, որովհետև այդ հոգու ճակատագիրը գալիք հավերժություններում, օրհնությունները կամ պատիժները, որոնք կսպասեն նրան այստեղից հետո, կախված են մեծ մասամբ խնամքից, ուսմունքներից, ուսուցումից, որոնք ծնողները կտան այդ հոգուն:

Ոչ մի ծնող չի կարող խուսափել այդ պարտականությունից և այդ պատասխանատվությունից և դրանց պատշաճ կատարման համար Տերը մեզ պատասխանատվության կենթարկի: Չկա ավելի մեծ պարտք, քան սա, որ կարելի է հանձն առնել մահկանացուների կողմից:

Մայրությունը սուրբ կոչում է

Խոսելով մայրերի մասին, Առաջին Նախագահությունն ասել է. «Այսպիսով մայրությունը դառնում է սուրբ կոչում, մի սրբազան նվիրում Տիրոջ ծրագրերը իրականացնելու համար, նվիրվածության մի սրբագործում ՝ մեծացնելու և խնամակալելու, դաստիարակելու մարմնում, մտքով և հոգով նրանց, ովքեր պահել են առաջին վիճակը և եկել այս երկիր իրենց երկրորդ վիճակի համար՝ «տեսնելու, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց» (Աբրահամ 3.25): Իրենց երկրորդ վիճակը պահելու համար նրանց առաջնորդելը, մայրության գործն է, և «նրանք, ովքեր կպահեն իրենց երկրորդ վիճակը, նրանց գլխին փառք կավելացվի հավիտյանս հավիտենից» (op. cit.) [Աբրահամ 3.26]:

Մայրության այս աստվածային ծառայությունը կարող է մատուցվել միայն մայրերի կողմից: Այն չի կարող փոխանցվել ուրիշներին: Դայակները չեն կարող անել այն, հասարակական մանկամսուրները չեն կարող անել այն, վարձված օգնականները չեն կարող անել դա, միայն մայրը, այնքան որքան հնարավոր է սիրող հոր, եղբայրների և քույրերի ձեռքերի աջակցությամբ, կարող է տալ այդ անհրաժեշտ լիարժեք աչալուրջ խնամքը:

Առաջին Նախագահությունը խորհուրդ է տվել, որ «մայրը, որը վստահում է իր երեխային ուրիշների խնամքին, որպեսզի կատարի ոչ մայրական աշխատանք, լինի ոսկու համար, հոչակի կամ հասարակական ծառայության համար, պետք է հիշի, որ. «բաց ընկած տղան անարգանք կբերէ իր մոր համար» (Առակաց ԻԹ.15): Մեր օրերում Տերն ասել է, որ եթե ծնողները չսովորեցնեն իրենց երեխաներին Եկեղեցու վարդապետությունները, «մեղքը [կ]լինի ծնողների գլխին» (ՎԱՈ 68.25):

Մայրությունը մոտ է աստվածությանը: Այն ամենաբարձր, ամենասուրբ ծառայությունն է, որ մարդկությունը հանձն է առնում: Այն դնում է նրան, ով հարգում է այդ սուրբ կոչումը և ծառայությունը, հրեշտակների կողքին»: [37]

Առաջին Նախագահության այդ ուղերձն ու նախազգուշացումը, ոչ պակաս և նույնիսկ ավելի անհրաժեշտ է այսօր, քան երբ այն տրվեց: Եվ Եկեղեցու ոչ մի կազմակերպության կառավարող ձայն որևէ մակարդակում չի կարող հավասարվել Առաջին Նախագահության ձայնին: [38]

Որոշ հոգիներ, ովքեր բնությունից կամ հանգամանքներից ելնելով չեն վայելում ամուսնության և ծնող լինելու օրհնությունը, կամ որոնք ոչ իրենց մեղքով պետք է միայնակ գործեն երեխաներին մեծացնելիս և աշխատեն նրանց աջակցելու համար, հավերժություններում չեն մերժվի՝ նրանց կտրվի ցանկացած օրհնություն, եթե նրանք պահեն պատվիրանները:[39] Ինչպես Նախագահ Լորենցո Սնոուն է խոստացել «Դա անկասկած է և հաստատ»:[40]

Գանձի և բանալիների առակը

Ես ավարտում եմ առակով:

Մի անգամ մի մարդ որպես ժառանգություն ստացավ երկու բանալի: Նրան ասվեց, որ առաջին բանալին բացելու էր շենքը, որը նա պետք է ամեն գնով պահպաներ: Երկրորդ բանալին պիտի բացեր շենքի միջի անկիզելի գանձապահարանը, որը մի անգին գանձ էր պարունակում: Նա պետք է բացեր այդ գանձապահարանը և ազատորեն օգտագործեր թանկարժեք բաները, որոնք պահեստավորված էին այնտեղ: Նրան նախազգուշացվեց, որ շատերը կձգտեին իրենից կողոպտել իր ժառանգությունը: Նրան խոստացվեց, որ եթե նա գանձը արժանիորեն օգտագործեր, այն կշատանար և երբեք չէր նվազի ողջ հավերժության ընթացքում: Նա պետք է ստուգվեր: Եթե այն օգտագործվեր ուրիշների օգտի

համար, նրա սեփական օրհնություններն ու ուրախությունը կմեծանային:

Մարդը մենակ գնաց դեպի շենքը: Նրա առաջին բանալին բացեց դուռը: Նա փորձեց բացել գանձը մյուս բանալիով, բայց չկարողացավ, քանի որ գանձապահարանի վրա երկու կողպեք կար: Միայն իր բանալիով նա չկարողացավ բացել այն: Նա ապշել էր: Նրան տրվել էին բանալիները: Նա գիտեր, որ գանձն օրենքով իրենն էր: Նա հնազանդվել էր հրահանգներին, բայց նա չէր կարողանում բացել գանձապահարանը:

Ճիշտ ժամանակին շենք եկավ մի կին: Նա ևս բանալի ուներ: Այն ակնհայտորեն տարբերվում էր իր ունեցած բանալիից: Նրա բանալին համապատասխանեց մյուս կողպեքին: Նրան խոնարհեցրեց այն, որ նա չկարողացավ ձեռք բերել իր օրինական ժառանգությունն առանց նրա:

Նրանք ուխտ կապեցին, որ միասին, նրանք կբացեին գանձը և ինչպես հրահանգված էր, նա կհսկեր շենքը: Նա մտահոգված չէր, որ որպես դամբարանի հսկիչ, նա ուներ երկու բանալիներ, քանի որ նրա ողջ նպատակն էր հոգ տանել, որ կինն ապահով լիներ, երբ նա հսկում է այն բաները, որոնք ամենաթանկարժեքն էին իրենց երկուսի համար էլ: Նրանք միասին բացեցին գանձապահարանը և ճաշակեցին իրենց ժառանգությունից: Նրանք ուրախ էին, քանզի ինչպես խոստացվել էր, այն ինքն իրեն շատացավ:

Մեծագույն ուրախությամբ նրանք պարզեցին, որ իրենք կարող էին փոխանցել այդ գանձն իրենց երեխաներին, յուրաքանչյուրը կարող էր ստանալ լիարժեք չափով, առանց նվազելու մինչև վերջին սերունդը:

Հավանաբար նրանց հետնորդներից մի քանիսը չեն գտնի իրենց զուգընկերներ, ովքեր կունենան լրացուցիչ բանալի կամ մեկը, որն արժանի կլինի և կկամենա պահել գանձի հետ կապված ուխտերը: Սակայն, եթե նրանք պահեն պատվիրանները, նրանք չեն զրկվի նույնիսկ ամենափոքր օրհնությունից:

Որովհետև ոմանք գայթակղում էին նրանց սխալ օգտագործել իրենց գանձը, նրանք ուշադիր էին իրենց երեխաներին ուսուցանելիս բանալիների և ուխտերի մասին:

Եղան ոմանք իրենց ուրույն ժամանակին նրանց հետնորդների մեջ, մի քանիսը ովքեր խաբվեցին կամ նախանձ էին կամ եսասեր, քանի որ մեկին տրվեց երկու բանալի, իսկ մյուսին միայն մեկը: «Ինչո՞ւ,- տրամաբանեցին եսասերները,- միթե՞ գանձը չի կարող միայն իմը լինել՝ այն օգտագործելու այնպես, ինչպես ես եմ ցանկանում»:

Ոմանք փորձեցին ձևափոխել բանալին, որը նրանց տրվել էր նմանեցնելու մյուս բանալիին: Գուցե մտածեցին, որ այն կհամապատասխաներ այդ դեպքում երկու կողպեքներին էլ: Եվ այսպիսով եղավ այնպես, որ գանձապահարանը փակվեց նրանց համար: Նրանց ձևափոխած բանալիները ոչ մի բանի պետք չէին և նրանց ժառանգությունը կորավ:

Նրանք, ովքեր ստացան գանձը երախտագիտությամբ և հնազանդվեցին դրան վերաբերող օրենքներին, ճաշակեցին ուրախություն առանց սահմանի ժամանակի և ողջ հավերժության համար:

Ես բերում եմ իմ վկայությունը մեր Երկնային Հոր երջանկության ծրագրի վերաբերյալ, և վկայում Նրա անունով, ով գործեց Քավությունը, որպեսզի դա այդպես լինի, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. Տես ՎԱՈՒ 76.24, տես նաև Թվոց ԺԶ.22, Եբրայեցիս ԺԲ.9:
2. Տես ՎԱՈՒ 132.63, First Presidency, "The Origin of Man" (Nov. 1909), in James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (Salt Lake City: Bookcraft, 1965–75), 4:203; տես նաև Spencer W. Kimball, "The Blessings and Responsibilities of Womanhood," *Ensign,* Mar. 1976, p. 71; Gordon B. Hinckley, in Conference Report, Oct. 1983, p. 115; կամ *Ensign,* Nov. 1983, p. 83:
3. Տես *Teachings of the Prophet Joseph Smith*, sel. Joseph Fielding Smith (Salt Lake City: Deseret Book Co., 1938), pp. 348–49, 357, 365:
4. Տես Աբրահամ 3.24–27:
5. Տես Հարում 1.2, Ալմա 24.14, 42.5, Մովսես 6.62:
6. Տես Հակոբ 6.8, Ալմա 12.25–36, 17.16, 18.39, 22.13–14, 39.18, 42.11, 13:
7. Ալմա 42.8:
8. Տես Ալմա 42.2–5:
9. Տես 2 Նեփի 9.28, Ալմա 12.4–5, Հելաման 2.8, 3 Նեփիi 1.16, ՎԱՈՒ 10.12, 23, Մովսես 4.3:
10. *Տես Մարգարե Ջոզեֆ Սմիթի Ուսմունքները,* էջեր 181, 297:
11. *Տես Մարգարե Ջոզեֆ Սմիթի Ուսմունքները,* էջ 181:
12. Տես 2 Նեփի 2.18, 28.20:
13. Տես Ալմա 39.5, Մորոնի 9.9:
14. Տես ՎԱՈՒ 130.2, 131.2, Ա Կորնթացիս ԺԱ.11, Եփեսացիս Ե.31:
15. Տես Մովսես 6.8–9:
16. Տես Մովսես 3.8:
17. Տես Մովսես 6.67:
18. Տես Մովսես 3.18:
19. Տես Մովսես 3.23–24:
20. ՎԱՈՒ 42.22:
21. Տես Մովսես 4.7–12:

22. 2 Նեփի 2.25:
23. *Cowley and Whitney on Doctrine*, comp. Forace Green (Salt Lake City: Bookcraft, 1963), p. 287.
24. Մովսես 2.28, տես նաև Գաղատացիս Ա.28, Թ.1:
25. Տես Գաղատացիս Ե.22–23,ՎԱՈՒ 4.5–6, Ալմա 7.23–24:
26. Տես ՎԱՈՒ 131.2:
27. Տես "Our Wives and Our Mothers in the Eternal Plan" (address given in general Relief Society conference, 3 Oct. 1946), in *J.* Reuben Clark: Selected Papers on Religion, Education, and Youth, ed. David H. Yarn, Jr. (Provo: Brigham Young University Press, 1984), p. 62:
28. Տես Ծննդոց Ա.28:
29. Տես ՎԱՈՒ 75.28, Ա Տիմոթեոս Ե.8:
30. ՎԱՈՒ 107.40–41, տես նաև ՎԱՈՒ 84.14–16:
31. ՎԱՈՒ 121.41–42, շեղագիրն ավելացված է:
32. ՎԱՈՒ 121.37:
33. ՎԱՈՒ 84.39:
34. ՎԱՈՒ 121.37:
35. *Տես Մարգարե Ջոզեֆ Սմիթի Ուսմունքները* , էջեր 308, 367:
36. In *Journal of Discourses*, 22:342; շեղագիրն ավելացված է:
37. In Conference Report, Oct. 1942, pp. 7, 11–12.
38. Տես ՎԱՈՒ 107.8–9, 22, 91:
39. Տես ՎԱՈՒ 137.7–9:
40. "Discourse by President Lorenzo Snow," *Millennial Star*, 31 Aug. 1899, p. 547.

ԿԱՆԱՑԻ ՍԵՌԻ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Քույր Մարգարետ Դ. Նադաուլդ

Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

In Conference Report, Oct. 2000, 14–17; կամ Ensign, Nov. 2000, 14–16

Հավատարիմ կանայք ունեն փառահեղ առաքելություն

Այսօր Աստծո դուստր լինելն ակնառու օրհնություն է: Մենք ունենք Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը: Մենք օրհնված ենք՝ երկրի վրա ունենալով վերականգնված քահանայությունը: Մենք առաջնորդվում ենք Աստծո մարգարեի կողմից, որը կրում է քահանայության բոլոր բանալիները: Ես սիրում եմ և հարգում Նախագահ Գորդոն Բ. Հինքլիին և մեր բոլոր եղբայրներին, ովքեր արժանավայել են կրում քահանայությունը:

Ես ոգեշնչվում եմ լավ և հավատարիմ կանանց կյանքով: Ժամանակի սկզբից ի վեր Տերը մեծ վստահություն է ունի նրանց հանդեպ: Նա մեզ երկիր է ուղարկել այնպիսի մի ժամանակ, ինչպիսին սա է՝ կատարելու հրաշալի և փառահեղ առաքելություն: Վարդապետություն և Ուխտերը սովորեցնում են, որ նույնիսկ նախքան մեր ծնվելը, մենք նրանց մեջ էինք, ովքեր «ստացել էին իրենց առաջին դասերը հոգիների աշխարհում և պատրաստվել էին առաջ գալու Տիրոջը հարմար ժամանակ, որպեսզի աշխատեին նրա այգում մարդկանց հոգիների փրկության համար» (ՎԱՈՒ 138.56): Ինչպիսի հրաշալի հեռանակար է այն մեզ տալիս՝ երկրի վրա մեր նպատակի վերաբերյալ:

Որտեղ շատ է տրվում, շատ էլ պահանջվում է: Մեր Երկնային Հայրը խնդրում է իր դուստրերին քայլել առաքինությամբ, որպեսզի մենք կարողանանք իրականացնել մեր կյանքի առաքելությունը և Նրա նպատակը: Նա կամենում է, որ մենք հաջողակ լինենք և Նա կօգնի մեզ, երբ մենք որոնենք Նրա օգնությունը:

Կանանց տրվել են հատուկ հատկանիշներ

Այն, որ կանայք այս երկրում ծնվել են որպես իգական սեռ, կանխորոշված էր մահկանացու ծննդից շատ առաջ, ինչպես որ արականի և իգականի միջև աստվածային տարբերություններն էին: Ես սիրում եմ Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի ուսմունքների հստակությունը ընտանիքի վերաբերյալ հայտարարության մեջ, որտեղ նրանք նշում են. «Սեռն անհատի հիմնական բնութագիրն է նախաերկրային, երկրային և հավերժական կյանքի և նպատակի»: [1] Այդ դրույթը մեզ սովորեցնում է, որ յուրաքանչյուր աղջիկ կանացի էր և իգական հոգեպես, իր մահկանցու կյանքից շատ առաջ:

Աստված կանանց աշխարհ ուղարկեց հավելյալ ընդունակություններ պարունակող որոշ հատկանիշներով: Խոսելով երիտասարդ կանանց հետ, Նախագահ Ֆաուստը նշել է, որ կանացիությունը «մարդկության աստվածային զարդն է: Այն արտահայտվում է ձեր … սիրելու, հոգևորության, նրբանկատությաւն, փայլի, զգայունության, ստեղծարարության, գրավչության, բարության, մեղմության, արժանապատվության և խաղաղ ուժի ունակության մեջ: Դա յուրաքանչյուր աղջկա կամ կնոջ մեջ յուրովի է արտահայտվում, բայց յուրաքանչյուրը … օժտված է դրանով: Կանացիությունը ձեր ներքին գեղեցկության մասն է կազմում»:[2]

Հոգացեք արտաքին տեսքի համար

Մեր արտաքին տեսքը արտացոլումն է այն ամենի, ինչ մեր ներսում է: Մեր կյանքն արտացոլում է այն, ինչին մենք

ձգտում ենք: Եվ եթե մենք ողջ մեր սրտով, իսկապես, ձգտում ենք ճանաչել մեր Փրկչին և ավելի նմանվել Նրան, մենք կնմանվենք, քանի որ Նա մեր աստվածային, հավերժական Եղբայրն է: Մենք հին ժամանակների Ալմայի հետ հարցնում ենք. «Ընդունե՞լ եք դուք նրա պատկերը ձեր դեմքին» (Ալմա 5.14):

Դուք կարող եք ճանաչել կանանց, ովքեր երախտապարտ են Աստծո դուստրը լինելու համար իրենց արտաքին տեսքով: Այս կանայք հասկանում են իրենց պատասխանատվությունը իրենց մարմինների հանդեպ և դրանց արժանապատվությամբ վերաբերվում: Նրանք հոգ են տանում իրենց մարմնի համար, ինչպես հոգ կտանեին սուրբ տաճարի համար, քանի որ նրանք հասկանում են Տիրոջ ուսմունքը. «Չգիտե՞ք, որ դուք Աստուծոյ տաճար էք և Աստուծոյ հոգին բնակուած է ձեզանում» (Ա Կորնթացիս Գ.16):

Կանայք, ովքեր սիրում են Աստծուն, երբեք չեն չարաշահի կամ տգեղացնի տաճարը գրաֆիտով: Ոչ էլ նրանք կբացեն այդ սուրբ շենքի դռները և կիրավիրեն աշխարհին նայել այնտեղ: Ուրեմն որքան ավելի սուրբ է մարմինը, քանի որ այն չի ստեղծվել մարդու կողմից: Այն ստեղծվել է Աստծո կողմից: Մենք ենք տնտեսները, պահպանողներն այն մաքրության և անաղարտության, որով այն եկել է երկնքից: «Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ապականէ, նորան էլ Աստուած կապականէ. Որովհետեւ Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք էք» (Ա Կորնթացիս Գ.17):

Աստծո երախտապարտ դուստրերը զգուշորեն պահպանում են իրենց մարմինները, քանի որ գիտեն, որ դրանք կյանքի աղբյուր են և նրանք հարգում են կյանքը: Նրանք չեն բացում իրենց մարմինները աշխարհի հավանությանն արժանանալու համար: Նրանք համեստորեն են քայլում Երկնային Հոր հավանությանն արժանանալու համար, քանի որ գիտեն, Նա շատ է սիրում իրենց:

Ծառայեք ուրիշներին

Դուք կարող եք իրենց վերաբերմունքով ճանաչել այն կանանց, ովքեր երախտապարտ են Աստծո դուստրը լինելու համար: Դուք գիտեք, որ հրեշտակների հանձնարարությունը տրվել է կանանց, և նրանք կամենում են լինել Աստծո հանձնարարության մեջ՝ սիրելու Նրա զավակներին և ծառայելու նրանց, նրանց սովորեցնելու փրկության վարդապետությունները, կանչելու նրանց ապաշխարության, փրկելու նրանց վտանգավոր հանգամանքներում, առաջնորդելու նրանց Նրա աշխատանքի կատարման ընթացքում, հաղորդելու Նրա ուղերձները:[3] Նրանք հասկանում են, որ կարող են օրինել իրենց Հոր զավակներին իրենց տներում և շրջակայքում և ամենուրեք: Կանայք, ովքեր երախտապարտ են Աստծո դուստրը լինելու համար, փառք են բերում Նրա անվանը:

Աստծուն [հավատացող] կանայք երբեք չեն կարող նման լինել աշխարհիկ կանանց:

Զորացրեք պարգևները

Դուք կարող եք ճանաչել կանանց, ովքեր երախտապարտ են Աստծո դուստրը լինելու համար՝ իրենց ունակություններով: Նրանք իրագործում են իրենց աստվածային ներուժը և հզորացնում Աստծուց տրված իրենց պարգևները: Նրանք ընդունակ, ուժեղ կանայք են, ովքեր օրինում են ընտանիքները, ծառայում են ուրիշներին և հասկանում, որ «Աստծո փառքը բանականությունն է» (ՎԱՈ 93.36): Նրանք կանայք են, ովքեր ընդունում են մշտատև արժեքներ, որպեսզի լինեն այն ամենը, ինչ մեր Հորն է անհրաժեշտ, որ նրանք լինեն: Մարգարե Հակոբը խոսել է այդ արժանիքներից մի քանիսի մասին, երբ ասել է, որ նրանց «զգացմունքները չափազանց քնքուշ են, և մաքրաբարո ու նուրբ Աստծո առջև, բան, որը հաճո է Աստծուն» (Հակոբ 2.7):

Հարգեք մայրությունը

Դուք կարող եք ճանաչել կանանց, ովքեր երախտապարտ են Աստծո դուստրերը լինելու համար՝ մայրության հանդեպ իրենց հարգանքի շնորհիվ, նույնիսկ, երբ այդ օրինությունը նրանցից ետ է պահվում որոշ ժամանակ: Այդ հանգամանքներում, նրանց արդար ազդեցությունը կարող է օրինություն լինել երեխաների կյանքում, ում նրանք սիրում են: Իրենց օրինակով ուսուցումները կարող են անդրադարձնել հավատարիմ տան ձայնը և ճշմարտության պատասխան արձագանք առաջացնել երեխաների սրտերում, ովքեր մեկ այլ վկայության կարիք ունեն:

Աստծո երախտապարտ դուստրերը սիրում են Նրան և սովորեցնում են իրենց երեխաներին սիրել Նրան առանց վերապահության և վիրավորանքի: Նրանք նման են Հելամանի զորքի պատանիների մայրերին, ովքեր այնքան մեծ հավատք ունեին և «սովորեցվել էին իրենց մայրերի կողմից, որ եթե նրանք չկասկածեին, Աստված կազատեր նրանց» (Ալմա 56.47):

Երբ դիտում եք բարի և մեղմ մայրերին գործի մեջ, դուք տեսնում եք մեծ ուժով կանանց: Նրանց ընտանիքները կարող են զգալ սիրո և հարգանքի ու ապահովության ոգին, երբ իրենք նրա կողքին են, երբ նա որոնում է Սուրբ Հոգու ընկերակցությունը և Նրա Հոգու առաջնորդությունը: Նրանք օրինվում են նրա իմաստությամբ և առողջ դատողությամբ: Ամուսիններն ու երեխաները, որոնց կյանքը նրանք օրինում են, կնպաստեն հասարակությունների հաստատունությանը ողջ այս աշխարհում: Աստծո երախտապարտ դուստրերը սովորում են ճշմարտություններ իրենց մայրերից և տատիկներից ու մորաքույրներից: Նրանք սովորեցնում են իրենց դուստրերին օջախ ստեղծելու ուրախալի արվեստը: Նրանք ձգտում են լավ կրթության իրենց երեխաների համար և իրենք էլ ունեն գիտության ծարավ: Նրանք օգնում են

իրենց երեխաներին զարգացնել հմտություններ, որոնք նրանք կկարողանան օգտագործել ուրիշներին ծառայելիս: Նրանք գիտեն, որ ճանապարհը, որոնք նրանք ընտրել են, հեշտ ուղի չէ, բայց նրանք գիտեն, որ այն բացարձակապես արժանի է իրենց լավագույն ջանքերին:

Նրանք հասկանում են այն, ինչ Երեց Նիլ Ա. Մաքսվելն ի նկատի ուներ, երբ ասել է. «Երբ մարդկության իսկական պատմությունը լիովին բացահայտվի, այն արդյոք կպատկերի՞ հրացանի կրակոցների արձագանքը, թե օրորոցային երգի հանգստացնող ձայնը: Զինվորականների կողմից ստեղծված վիթխարի զինանոցը՞, թե տներում և շրջակայքում խաղաղություն հաստատող կանանց: Միթե՞ այն, ինչ տեղի էր ունենում օրորոցներում և խոհանոցներում, կարող է պարզվել, որ ավելի կարևոր էին, քան այն, ինչ տեղի էր ունենում կոնգրեսներում»:[4]

Աստծո դուստրերը գիտեն, որ կանանց խնամատար էությունն է, որ կարող է բերել հավիտենական օրհնություններ և նրանք ապրում են մշակելու այս աստվածային հատկանիշը: Անշուշտ, երբ կինը հարգում է մայրությունը, նրա որդիքը կանգնում են և նրան երանի տալիս (տես Առակաց ԼԱ.28):

Ոչ նման աշխարհիկ կանանց

Աստծուն [հավատացող] կանայք երբեք չեն կարող նման լինել աշխարհիկ կանանց: Աշխարհն ունի բավականաչափ կանայք, ովքեր կոպիտ են, մենք կարիք ունենք կանանց, ովքեր քնքուշ են: Կան բավականաչափ կանայք, ովքեր խիստ են, մենք կարիք ունենք կանանց, ովքեր բարի են: Կան բավականաչափ կանայք, ովքեր գռեհիկ են, մենք կարիք ունենք կանանց, ովքեր բարեկիրթ են: Մենք բավականաչափ հանրաճանաչ և հարուստ կանայք ունենք, մենք ավելի շատ հավատքով կանանց կարիք ունենք: Մենք բավականաչափ ժլատություն ունենք, մենք ավելի շատ կարիք ունենք առատաձեռնության: Մենք բավականաչափ սնապարծություն ունենք, մենք ավելի շատ կարիք ունենք առաքինության: Մենք բավականաչափ հանրահայտություն ունենք, ավելի շատ կարիք ունենք մաքրության:

Օ~հ, ինչպես ենք աղոթում, որ յուրաքանչյուր երիտասարդ կին մեծանալով, ձեռք բերի բոլոր այն սքանչելի հատկանիշները, որոնք կանխորոշված են իր համար: Մենք աղոթում ենք, որ նրա մայրն ու հայրը ցույց տան նրան ճիշտ ճանապարհը: Թող որ Աստծո դուստրերը հարգեն քահանայությունը և հաստատեն քահանայության արժանի կրողների: Թող որ նրանք հասկանան իրենց իսկ ուժի մեծ ունակությունը հավիտենական արժանիքներում, որոնք ոմանք կարիամարհեն կանանց համար ժամանակակից, ազատամիտ այս աշխարհում:

Հասկանալ և սնուցել ներուժը

Թող որ մայրերն ու հայրերը հասկանան բարու համար այն մեծ ներուժը, որ նրանց դուստրերը ժառանգել են իրենց երկնային տնից: Մենք պետք է սնուցենք նրանց նրբագեղությունը, նրանց խնամատար էությունը, նրանց ներքին հոգևորությունը և զգայունությունը և նրանց փայլուն միտքը: Ուրախացեք այն փաստով, որ աղջիկները տարբեր են տղաներից: Շնորհակալ եղեք այն դիրքի համար, որ նրանք ունեն Աստծո մեծ ծրագրում: Եվ միշտ հիշեք, թե ինչ է ասել Նախագահ Հինքլին. «Հետո միայն երբ երկիրը ձևավորվեց, երբ օրն առանձնացվեց գիշերից, երբ ջրերը բաժանվեցին ցամաքից, երբ բուսական և կենդանական կյանքը ստեղծվեց, և երբ տղամարդը դրվեց երկրի վրա, ստեղծվեց կինը և միայն այդ ժամանակ աշխատանքը հայտարարվեց ավարտված և բարի»:[5]

Հայրեր, ամուսիններ, երիտասարդ տղամարդիկ, թող որ դուք ըմբռնեք ողջ այն պատկերացումը, թե ովքեր են կանայք և ովքեր կարող են լինել: Խնդրում ենք արժանի եղեք Աստծո սուրբ քահանայությանը, որը դուք կրում եք և հարգեք այդ քահանայությունը, քանի որ այն օրհնում է մեզ բոլորիս:

Քույրեր, անկախ ձեր տարիքից, խնդրում ենք հասկացեք այն ամենը, որ դուք կաք և պետք է լինեք, բոլորը որ նախապատրաստվել եք լինելու ի վերուստ արքայական պալատներում՝ հենց Իր՝ Աստծո կողմից: Թող որ մենք երախտագիտությամբ օգտագործենք անգին պարգևները, որոնք մեզ տրվել են մարդկությանը բարձրացնելու ավելի վեհ մտածողության և ավելի ազնիվ մղումների, աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. *Ensign, Nov. 1995, 102.*
2. *"Womanhood: The Highest Place of Honor," Ensign, May 2000, 96.*
3. *Տես Bruce R. McConkie, Mormon Doctrine, 2nd ed. (1966), 35:*
4. *In Conference Report, Apr. 1978, 14; կամ Ensign, May 1978, 10–11.*
5. *"Our Responsibility to Our Young Women," Ensign, Sept. 1988, 11.*

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սնուցեք և աճեցրեք ձեր ամուսնությունը: Պահպանեք այն և աշխատեք ամուր և գեղեցիկ պահել այն:

—Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Թեմային առնչվող սուրբ գրություններ

Ծննդոց Բ.24

«Սորա համար մարդ կթողէ հայրը և մայրը եւ իր կնոջը կյարի և երկուսը կլինին մէկ մարմին»:

Մատթեոս ԺԹ.4–6

«Չէ՞ք կարդացել թե նա որ սկզբիցն ստեղծեց, արու և էգ ստեղծեց նորանց,

և ասեց. Սորա համար մարդ կթողէ հայրը և մայրը եւ իր կնոջը կյարի և երկուսը կլինին մէկ մարմին:

Որովհետեւ այլ եւս երկու չեն, այլ մեկ մարմին. Արդ այն որ Աստուած միավորեց, թող մարդը չբաժանէ»:

Վարդապետություն և Ուխտեր 42.22, 75

«Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի…

Բայց եթե դուք իմանաք, որ ինչ- որ անձինք հեռացել են իրենց կողակցից շնության համար, և նրանց կողակիցն ապրում է և նրանք իրենք են մեղավոր, նրանք պետք է դուրս գցվեն ձեր միջից»:

Մտահոգություն ընտանեկան կյանքի համար

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Դաստիարակեք և մշակեք ձեր ամուսնությունը: Հսկեք այն և աշխատեք ամուր և գեղեցիկ պահել այն: Ամուսնալուծությունը այնքան սովորական է դառնում, այնքան, նույնիսկ, խիստ տարածված, որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի քանի տարի անց ներկայումս ամուսնացածների կեսը կամուսնալուծվեն: Դա տեղի է ունենում, ափսոսանքով եմ ասում, նույնիսկ նրանցից ոմանց հետ, ովքեր կնքված են Տիրոջ տանը: Ամուսնությունը պայմանագիր է, այն դաշինք է, այն միություն է տղամարդու և կնոջ միջև Ամենազորի ծրագրի ներքո: Այն կարող է փխրուն լինել: Այն պահանջում է դաստիարակություն և խիստ մեծ ջանքեր: Ես ափսոսանքով եմ ընդունում, որ որոշ ամուսիններ անմարդկային են, ոմանք բարի չեն, ոմանք անուշադիր են, ոմանք չար են: Նրանք տրվում են պոռնոգրաֆիայի և առաջացնում իրավիճակներ, որոնք կործանում են նրանց, կործանում իրենց ընտանիքները և կործանում բոլոր փոխհարաբերություններից ամենաարբազանը:

Ես խղճում եմ այն մարդուն, որը մի ժամանակ նայել է գեղեցիկ, երիտասարդ կնոջ աչքերի մեջ և բռնել նրա ձեռքը զոհասեղանի մյուս կողմից Տիրոջ տանը, երբ նրանք սրբազան և հավիտենական խոստումներ են տվել միմյանց, բայց որը չունենալով ինքնակարգապահություն, չի կարողացել ավելի լավ էություն մշակել, սուզվել է գռեհիկության և չարի մեջ և կործանել այն փոխհարաբերությունը, որը Տերն ապահովել է նրա համար» (“Walking in the Light of the Lord,” *Ensign,* Nov. 1998, 99):

«Ես մտահոգված եմ Եկեղեցում ընտանեկան կյանքի վերաբերյալ: Մենք հրաշալի մարդիկ ունենք, բայց մենք ունենք շատ շատերը, որոնց ընտանիքները քայքայվում են: Դա լուրջ մտահոգության խնդիր է: Կարծում եմ դա իմ ամենալուրջ մտահոգությունն է» (“Pres. Hinckley Notes His 85th Birthday, Reminisces about Life,” *Church News,* 24 June 1995, 6):

Ամուսնալուծության աճող պատուհասը Աստծուց չէ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Խիստ շատերն են գալիս ամուսնության՝ լինելով փայփայված և շփացած և ինչ որ ձևով առաջնորդված զգալու, որ ամեն ինչ պետք է մանրակրկիտ ձևով ճիշտ լինի բոլոր դեպքերում, որ կյանքը զվարճությունների շարան է, որ ախորժակը պետք է բավարարվի առանց հաշվի նստելու սկզբունքի հետ: Որքան ողբերգական են այդպիսի դատարկ և անտրամաբանական մտածողության հետևանքները…

Ժամանակ առ ժամանակ ամուսնալուծության համար կարող է լինել օրինական պատճառ: Ես չեմ այն մարդը, որը կասի, թե այն երբեք չի արդարացվում: Բայց ես ասում եմ առանց տատանվելու, որ այս պատուհասը մեր մեջ, որը կարծես թե աճում է ամենուր, Աստծուց չէ, այլ ավելի շուտ այն արդարության, և խաղաղության ու ճշմարտության հակառակորդի գործն է» (in Conference Report, Apr. 1991, 96–98; կամ *Ensign,* May 1991, 73–74):

Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ

Ուրեմն ի՞նչը կարող է լինել «արդար պատճառ» ամուսնության ուխտերը խախտելու համար: Ողջ կյանքի

ընթացքում գործ ունենալով մարդկային խնդիրների հետ, ես ձգտել եմ հասկանալ, թե ինչը կարող է համարվել «արդար պատճառ» ուխտերը խախտելու համար: Խոստովանում եմ, ես չեմ հավակնում իմաստության կամ իշխանության որոշակիորեն սահմանելու, թե ինչն է «արդար պատճառ»: Միայն ամուսնական կողմերը կարող են որոշել այդ: Նրանք պետք է պատասխանատվություն կրեն այն հետևանքների շարանի համար, որոնք անխուսափելիորեն հետևում են, եթե այդ ուխտերը չեն հարգվում: Իմ կարծիքով «արդար պատճառը» պետք է լինի ոչ պակաս լուրջ, քան երկարատև և ակնհայտորեն անուղղելի փոխհարաբերությունը, որը կործանարար է որպես մարդկային էակի տվյալ անձնավորության արժանապատվության համար:

Միևնույն ժամանակ ես ուժեղ համոզմունքներ ունեմ այն բաների վերաբերյալ, որոնք չեն կարող հանդիսանալ դրդապատճառներ ամուսնության սրբազան ուխտերը խախտելու համար: Անշուշտ դրանք չեն կարող լինել պարզապես «մտավոր լարվածությունը» կամ «անհատական տարբերությունները» կամ էլ «միմյանցից հեռանալը» կամ «սիրահարված չլինելը»: Դա հատկապես այդպես է, որտեղ երեխաներ կան» (in Conference Report, ապր. 1993, 46; կամ *Ensign*, մայիս 1993, 36–37):

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երեց Դեյվիդ Բ. Հեյթ

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, ապր. 1984, 14–17, կամ Ensign, մայիս 1984, 12–14

Աղոթում եմ Սուրբ Հոգու ուղեկցության համար, որպեսզի իմ դիտողությունները ներդաշնակ լինեն բացահայտված ճշմարտության հետ և ընդունվեն և հասկացվեն այդ նույն երկնային ազդեցության միջոցով:

Հարձակում ավանդական ընտանիքի վրա

Ավելի քան քսանհինգ տարիների ընթացքում մենք ականատես ենք եղել ավանդական ընտանիքի վրա մի անվերջանալի հարձակման: Մարդկային բարության սրբազան արժեքները, կարգապահությունը և սերն ու հարգանքը Աստծո՝ մեր Երկնային Հոր հանդեպ, ենթարկվել են մարտահրավերի:

Մի նոր եսակենտրոն սերունդ դարձրել է ընտանիքը անընդհատ ծաղրի գլխավոր նշանակետ: Ամուսնությունը թերագնահատում են կամ արհամարհում, ծնող լինելը նվաստացնում են և խուսափում: Սա, այլ անհանգստացնող ազդեցությունների հետ միասին, առաջացրել է չարաղետ գայթակղությունների մի հեղեղ՝ այսպես կոչված վայրկենական հաճույքի և ամուսնության և կնոջ ու մոր սրբազան դերի նվաստացման համար:

Ամուսնության աստվածային նպատակը

Դժբախտաբար կան շատ լավ մարդիկ, ովքեր այլ կերպ կապրեին, բայց նրանք չգիտեն Իր զավակների համար Աստծո հավերժական ծրագիրը: Մենք սուրբ գրություններից իմանում ենք, որ ամուսնությունը պետք է լինի հարատև ընտանեկան հարաբերություններով մի հավերժական միություն՝ ողջ հավերժության համար:

Սուրբ գրությունները հայտնում են, որ երկիրը ձևավորելուց հետո, Աստված ստեղծեց մարդուն Իր իսկ պատկերով և իշխանություն տվեց նրան երկրի վրա: Տղամարդու կողքին կանգնած էր կինը՝ նրա հետ կիսելով բոլոր մյուս արարածների վրա գերակայության աստվածայնորեն շնորհված պատիվն ու արժանապատվությունը: Աստված ասաց. «Լավ չէ որ մարդը մինակ լինի. Նորա նման մի օգնական շինեմ իրան յարմար» (Ծննդոց Բ.18):

«Աստուծոյ պատկերովը ստեղծեց նորան. արու եւ էգ ստեղծեց նորանց» (Ծննդոց Ա.27):

Տերը նաև հրահանգել է. «Սորա համար մարդը կթողէ իր հայրը եւ իր մայրը, եւ կյարի իր կնոջը. Եւ մէկ մարմին կլինին» (Ծննդոց Բ.24), սրանով վավերացում տալով արուի և էգի միությանը իրավական ամուսնության մեջ, որը ծրագրված է երկնքում մահկանացու մարմինների արարման համար:

Ընտանիքի համար Տիրոջ ծրագիրը

Ադամի ու Եվայի համար ամենավաղ արձանագրված պատվիրանն էր «աճեցեք եւ շատացէք, և լցրեք երկիրը» (Ծննդոց Ա.28):

Մենք երեխաներին համարում ենք Աստծո պարգևները, հանձնած մեր խնամքին՝ սիրելու, դաստիարակելու և ուշադիր ուսուցանելու համար:

Տերը նաև հրահանգել է. «Եվ նրանք նաև պետք է իրենց երեխաներին ուսուցանեն աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ» (ՎԵՈՒ 68.28):

Նրանց չի կարելի վատ վերաբերվել կամ վիրավորել, քանի որ իրենց ծնողների հետ նրանք հավերժական փոխհարաբերության ներուժով ընտանիքի մասն են կազմում:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը բացատրել է.

«Տերը սկզբից ի վեր կազմեց ողջ ծրագիրը հորով, որը ստեղծում է, ապահովում և սիրում ու ուղղություն տալիս, և մորով, որը հղիանում է և ծնում ու դաստիարակում և

կերակրում ու ուսուցանում: Տերը կարող էր այլ ձևով կազմակերպել, բայց ընտրեց ունենալ մի միավոր պատասխանատվությամբ և նպատակային ընկերակցությամբ, որտեղ երեխաները ուսուցանում են և կարգապահության վարժեցնում միմյանց և սկսում սիրել, հարգել և գնահատել միմյանց: Ընտանիքը կյանքի մեծ ծրագիրն է, ինչպես հղացվել և կազմակերպվել է մեր Երկնային Հոր կողմից» (*Ensign*, հուլիս 1973, էջ 15):

Ամուսնությունը կանխորոշված է լինելու և կարող է լինել ամուսնու և կնոջ միջև սիրո, կապվածության և ներդաշնակության հարաբերություն:

Ամուսնալուծությունը միշտ ողբերգական է և ցավագին

Երբ մենք խորհում ենք Մովսեսին կատարած մեր Տիրոջ «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39) հայտարարության մասին, մենք տխրությամբ մտածում ենք ամուսնալուծությունների միջոցով ընտանիքների և տների բաժանման ներկա լուրջ միտման մասին:

Կարող է թվալ, որ ամուսնալուծության գլխավոր հիմնապատճառը չհասկանալն է, որ ամուսնությունը և ընտանիքները Աստծուց են տրված և Աստծո կողմից են կարգված: Եթե մենք հասկանայինք լրիվ իմաստը, մենք ավելի քիչ ամուսնալուծություններ կունենայինք և դրան ուղեկցող դժբախտություն: Զույգերը կծրագրեին աստվածային հրահանգների վրա հիմնված երջանիկ ամուսնական փոխհարաբերություն: Եթե զույգերը հասկանային իրենց սիրավեպի սկզբից ի վեր, որ իրենց ամուսնական փոխհարաբերությունը կարող է օրհնվել խոստումներով և պայմաններով, որոնք ձգվելու են մինչև հավերժություններ, ամուսնալուծությունը նույնիսկ չէր համարվի տարբերակ, երբ դժվարություններ առաջանային: Ամուսնալուծվիր, եթե չի ստացվում, առկա փիլիսոփայությունը դժվարացնում է ամուսնությունը սկզբից ի վեր:

Անընդհատ աճող ամուսնալուծությունը վառ ապացույց է, թե որքան ընդունելի է դարձել ամուսնալուծությունը որպես հանրաճանաչ լուծում դժբախտ կամ «սպասումները ոչ այնքան արդարացնող» ամուսնությունների համար:

Բայց անկախ նրանից, թե որքան ընդունելի է դարձել ամուսնալուծությունը, որքան արագ և հեշտ ձեռք բերվող, ամուսնալուծությունը ողբերգական է և ցավագին ոչ միայն ամուսնալուծության պահին, այլ նաև գալիք տարիների ընթացքում:

Ամուսնալուծությունները երբեք չեն կարող իսկապես վերջնական լինել: Ինչպե՞ս կարող են մայրերն ու հայրերն իրականում ամուսնալուծվել իրենց իսկ միս և արյունով երեխաներից, կամ օրերով և տարիներով միասին կիսած փորձառությունների հիշողությունից, որը դարձել է իրենց իսկ կյանքի մի մասը:

Ամուսնալուծությունը հազվադեպ է տեղի ունենում առանց ուժեղ զգացմունքային, սոցիալական և ֆինանսական տեղաշարժերի: Մարդկանց մեծ մասը թերագնահատում են օտարացումը, դառնությունը, խզումը և հուսահատությունը բաժանվող զույգերի միջև և նրանց երեխաների, ընկերների և ազգականների մեջ: Ոմանք երբեք չեն հարմարվում առաջացած զգացմունքային հետևանքներին:

> ***Ամուսնալուծության հիմնապատճառը չհասկանալն է, որ ամուսնությունը և ընտանիքները Աստծուց են տրված և Աստծո կողմից կարգված:***

Հավանաբար բոլորից ամենաողբերգականն այն է, որ բոլոր ամուսնալուծությունների 60 տոկոսը ներառում են տասնութ տարեկանից ցածր երեխաների: Ամուսնալուծվածների երեխաները բոլորը խիստ հաճախ ունենում են իրավազանցության բարձր տոկոս և ինքնավստահության պակաս և միտված են լինել ավելի անկարգ և ավելի հավանական է, որ իրենք ևս ունենան դժբախտ ամուսնություններ:

Պատրաստվեք հաջողության համար

Մտածելով ամուսնության հսկայական կարևորության մասին, բավականին ապշեցուցիչ է, որ մենք ավելի լավ չենք նախապատրաստվում հաջողության համար: Սովորաբար երիտասարդ զույգերը ժամադրվում են մի քանի ամիս կամ մեկ կամ երկու տարի, վայելելով սիրավեպ և ծանոթանալով, իսկ հետո ամուսնանում: Երբ ամուսնանում են, նրանք շուտով իմանում են, որ սիրավեպը պետք է միաձուլել հոգևոր հավատալիքների, կողակցի հարազատների հարաբերությունների, փողային հարցերի և էթիկայի, երեխաների և տունը կառավարելու լուրջ քննարկումների հետ:

Խիստ շատ մարդիկ են անհամապատասխանորեն պատրաստված այս վսեմ պարտականության համար:

Մարդիկ տարիներ շարունակ հաճախում են քոլեջ մի արհեստ կամ մասնագիտություն սովորելու համար, … որն [անգամ մոտավորապես] այնքան … օգտակար չի կարող լինել [կամ այնքան կարևոր], որքան ամուսնությունը» (տես Lowell S. Bennion, “Conference on Utah Families,” *Salt Lake Tribune*, 6 Apr. 1980, p. F-9):

Որոնեք լավ խորհուրդ

Լուրջ օրինազանցություններ, ինչպես նաև խաթարված կյանքեր, որոնք երբեմն բացահայտվում են եպիսկոպոսի գրասենյակներում, բոլորը խիստ հաճախ հստակ են դարձնում, որ ամուսին և կին փոխհարաբերություններն արժանի են ավելի շատ աղոթքի և ուշադրության, քան շատերը հատկացնում են դրան: Ավելի քիչ ամուսնություններ

կընկնեին դժբախտության մեջ և ավելի շատերը կլինեին ավելի երջանիկ, եթե զույգերը այցելեին ջերմ սրտով մի եպիսկոպոսի, որը կկարողանար ուղիներ առաջարկել՝ փոսերի մեջ ընկնելուց խուսափելու համար և կքաջալերեր ամուսիններին և կանանց լրջորեն կիրառել ինքնակարգապահություն և անհրաժեշտ զսպվածություն և զարգացնել անեսասեր սիրելու հատկանիշ:

Մի քանի տարի առաջ Նախագահ Հարոլդ Բ. Լին ստացավ այս նամակը մի ամուսնացած կնոջից. «Երբ մենք մտածեցինք, որ վերջը մոտիկ էր և որ միայն մեկ բան էր մնացել անելու և դա ապահարզան ստանալն էր, մեզ ասվեց, որ մենք պետք է խորհրդակցեինք մեր եպիսկոպոսի հետ: Սկզբում մենք տատանվեցինք, որովհետև նա ուղղակի երիտասարդ մի տղա էր: … Բայց նա մեր եպիսկոպոսն էր, այսպիսով մենք գնացինք նրան տեսնելու: Մենք բացեցինք մեր սրտերը մեր երիտասարդ եպիսկոպոսի առջև: Նա լուռ նստած լսում էր և երբ մենք վերջացրեցինք խոսելը նա պարզապես ասաց. «Դեհ ես և իմ կինը նույնպես խնդիրներ ունեինք, բայց մենք սովորեցինք դրանց լուծելու ձևը», ահա այն ամենը, ինչ նա ասաց: Բայց գիտեք, տեղի ունեցավ ինչ որ բան երիտասարդ եպիսկոպոսի ասածի պատճառով: Մենք դուրս եկանք այնտեղից և ասացինք. «Դեհ, եթե նրանք կարողացել են լուծել իրենց խնդիրները, ի՞նչ է պատահել մեզ» (*Ensign*, հունվար 1974, էջ 100):

Պահպանեք և զարգացրեք ամուսնությունը

Մի նշանավոր ռեժիսյոր վերջերս նշել է.

«Կինոֆիլմերում և հեռուստատեսությունում … ամուսնության հետ առնչվելիս դժկամություն է զգացվում … [բացառություն են կազմում] միայն կոմիկական թեմաները կամ բազմասերիանոց հեռուստաֆիլմերը: Մենք նախընտրում ենք շեշտել ….[սեռական կապերը] և [հանգիստ թողնել] … երջանիկ վերջաբանները, … ինչպես մանկական կախարդական հեքիաթներում» (Karl E. Meyer, *The Wife of Your Youth* [Palos Heights, Illinois: Np, 1977], np):

Մեր մտահոգությունը միայն նրանում չէ, որ լրատվություն ստեղծողները և գրողները չեն պատկերում երջանիկ, պտղաբեր ամուսնություն, այլ որ շատ ամուսնացած զույգեր բավականաչափ լուրջ չեն վերաբերվում իրենց ամուսնություններին՝ աշխատելու դրանց վրա, պաշտպանելու դրանք, դաստիարակելու դրանք, մշակելու դրանք օրըստօրե, շաբաթ առ շաբաթ, տարիների ընթացքում, քառորդ դարվա ընթացքում, կես դարվա ընթացքում, հավերժ:

Հատկապես ցավալի են միջին տարիքի ամուսնալուծությունները, քանի որ դրանք ցույց են տալիս, որ հասուն մարդիկ, ովքեր մեր հասարակության ողնաշարն են, բավականաչափ ուշադիր չեն աշխատում իրենց ամուսնությունը պահպանելու համար: Ամուսնալուծությունները, որոնք տրվում են քառասունհինգն անց մարդկանց, աճել է սոսկալի չափով: Երբ նույնիսկ միջին տարիքի մարդիկ են մտածում դադարեցնել իրենց ամուսնությունը, մի զույգ, ովքեր խնամել են իրենց երեխաներին, ովքեր հավանաբար թոռներ ունեն, իսկ այժմ որոշում են գնալ առանձին ճանապարհներով, նրանք պետք է հասկանան, որ յուրաքանչյուր ամուսնալուծություն մեկի կամ երկուսի կողմից, եսասիրության արդյունք է:

Մաղաքիայում մենք կարդում ենք.

«Նորա համար որ Տերը վկայում է քո եւ քո երիտասարդութեան կնոջ մեջտեղը, որի դէմ դու անհաւատարիմ ես եղել. Սակայն նա քո ընկերն է եւ քո ուխտի կինը…

Ուրեմն զգուշացէք ձեր անձերի մասին, եւ [թող ոչ մեկը իր] երիտասարդութեան կնոջ հետ անհավատարիմ [չ]լինի» (Մաղաքիա Բ.14–15):

Իդեալական ամուսնություն

Ամուսնությունն ուխտ է: Տասը պատվիրաններից երկուսը ուղղակորեն առնչվում են ամուսնության սրբությունը պահելուն. «Շնություն մի անիր» և «Մի ցանկանար քո դրացու կնոջը» (Ելից Ի.14, 17):

Հիսուսը շնության դեմ օրենքն ուժեղացրեց. «Բայց ես ասում եմ ձեզ թե ամեն ով որ մի կնկայ վերայ մտիկ տայ նորան ցանկանալու համար, նա արդէն շնացաւ նորա հետ իր սրտի մեջ» (Մատթեոս Ե.28):

Իդեալական ամուսնությունը տղամարդու և կնոջ հավատարմությունն է միմյանց հանդեպ, հավատարմություն, որը սկսվեց, երբ յուրաքանչյուրն ընտրեց մյուսին: Առակացում մենք կարդում ենք. «Թող քո աղբիւրը օրհնեալ լինի, եւ ուրախացիր քո երիտասարդութեան կնոջ հետ» (Տես Առակաց Ե.18): Թող նրա սերը լցնի քեզ ամեն ժամանակ բերկրանքով և միշտ նրա սիրով զմայլվես:

Սա իսկապես արտոնություն է ապրել մեր կյանքը մեր երիտասարդության կնոջ հետ, վայելել ոսկե տարիները միասին, չառարկելով ոչ կնճիռների ոչ էլ մոխրագույն մազերի դեմ, այլ շարունակել ձեռք բերել սիրո խորություն, միասնություն և իմաստություն, որով կարելի է կիսվել միմյանց հետ այժմ և ողջ հավերժության մեջ:

Ամուսնությունը հաստատվում է հավատքով և նրա աստվածային հիմնադրման գիտությամբ և հաստատվում ամեն օր սիրո էներգիայով: Մի իմաստուն մարդ բացատրել է. «Երբ մեկ այլ մարդու բավարարվածությունը կամ անվտանգությունը դառնում է այնքան կարևոր մյուսի համար, որքան իր սեփական բավարարվածությունն ու անվտանգությունը, այդ դեպքում գոյություն ունի սիրո վիճակ» (Harry Stack Sullivan, *Concepts of Modern Psychiatry*, 2nd ed. [New York: W. W. Norton and Co., 1961], p. 42):

Աստծուց օգնություն խնդրեք

Ուժեղ, տարածված համոզմունքը, որ կա ինչ որ հավերժորեն թանկ բան ամուսնական հարաբերության մեջ, չարին դիմադրելու համար հավատք է տալիս: Ամուսնությունը պետք է լինի գեղեցիկ և ավարտուն, մեր ամենաթանկ երազանքներից վեր ուրախությամբ, քանի որ «ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ Տերումը» (Ա Կորնթացիս ԺԱ.11):

Վերջին Օրերի Սրբերը չպետք է ամուսնալուծվեն, ամուսնական խնդիրներին կան լուծումներ: Եթե որպես ամուսին և կին դուք լուրջ թյուրըմբռնումներ ունեք կամ եթե դուք ինչ որ ձգվածություն կամ լարվածություն եք զգում ձեր ամուսնությունը կայացնելիս, դուք պետք է խոնարհաբար ծնկի իջնեք միասին և խնդրեք Աստծուն՝ մեր Հորը, անկեղծ սրտով և ճշմարիտ միտումով, բարձրացնել խավարը, որը ձեր հարաբերության վրա է, որպեսզի դուք ստանաք անհրաժեշտ լույսը, տեսնելու ձեր սխալները, ապաշխարելու ձեր անիրավություններից, ներելու միմյանց և յուրաքանչյուրդ ձեզ համար ընդունեք, ինչպես սկզբում էիք անում: Ես հանդիսավորապես հավաստիացնում եմ ձեզ, որ Աստված ապրում է և կպատասխանի ձեր խոնարհ աղերսանքներին, քանզի նա ասել է. «Դուք կխնդրեք, ինչ կամենաք, Հիսուսի անունով, և այն կկատարվի»(ՎԱՈՒ 50.29): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մենք հավատում ենք մեր երիտասարդությանն ուսուցանելուն, ինչպես աղջիկներին այնպես էլ տղաներին:

—Նախագահ Գորդոն Բ, Հինքլի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Պատրաստվեք ապագային

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Ուղղված է քահանայությանը: «Եղեք խելացի ապագայի համար ձեր մտքերը և ձեռքերը վարժեցնելիս: … Դուք պարտավորություն ունեք ձեր կյանքում հասնել այն ամենին, ինչին կարող եք հասնել: Այժմ ծրագրեք այն ողջ կրթությունը, որ կարող եք ստանալ, իսկ հետո աշխատեք իրականացնել այդ ծրագրի իրագործումը:

Դուք ապրում եք բարդ դարում: Աշխարհը կարիք ունի ունակ և ուսուցված տղամարդկանց և կանանց: Մի անտեսեք ձեր կրթությունը:

Ես չեմ առաջարկում, որ դուք բոլորդ պետք է դառնաք մասնագետներ: Այն, ինչ առաջարկում եմ՝ սա է՝ ինչ որ ընտրում եք անել, ուսուցում ստացեք դրա համար: Որակավորում ձեռք բերեք … անկախ նրանից, թե ինչ զբաղմունք եք ընտրում: Դուք կարող եք արագ հասնել ձեր նպատակներին կրթության միջոցով:…

Եղեք խելացի: Մի կորցրեք ուսումը, որը կուժեղացնի ձեր ապագան, որպեսզի բավարարեք ձեր անմիջական, անցողիկ հաճույքը: Մշակեք ձեր ապագա կյանքի հեռանկարը: Ձեզանից շատերն այստեղ բավականին երկար են լինելու» (in Conference Report, Oct. 1981, 57; կամ *Ensign,* Nov. 1981, 40):

Մենք հավատում ենք մեր երիտասարդությանն ուսուցանելուն, ինչպես աղջիկներին այնպես էլ տղաներին…

Դուք մատչելի վիթխարի հնարավորություններ ունեք՝ ձեր մտքերն ու ձեր ձեռքերը վարժեցնելու համար: Դուք կկամենաք ամուսնություն և լավ ամուսնու ընկերակցություն: Բայց մեզանից ոչ ոք չի կարող կանխագուշակել ապագան: Նախապատրաստվեք ցանկացած պատահականության… Հուսով ենք ձեզանից մեծ մասը կամուսնանան: Բայց ձեր ստացած ուսուցումը զուր չի լինի: Այն կլինի օրհնություն, լինեք դուք ամուրի, թե ամուսնացած» (“Live up to Your Inheritance,” *Ensign,* Nov. 1983, 82):

«Աշխարհը, որի մեջ դուք կընթանաք, սոսկալի մրցակցական կլինի: Դուք պետք է ընդլայնեք ձեր կրթությունը՝ բարելավելով ձեր հմտությունները, սրելով ձեր ունակությունները, որպեսզի կարողանաք ստանձնել պատասխանատու պարտականություններ այն հասարակության մեջ, որին դուք մաս կդառնաք» (in Conference Report, Apr. 1992, 100; կամ *Ensign,* May 1992, 71):

Ուղղված քահանայությանը: Աշխատեք կրթություն ստանալ: Ստացեք ողջ ուսուցումը, որը կարող եք: Աշխարհը մեծապես կվճարի ձեզ այն, ինչին կարծում է, որ արժանի եք: Պողոսը խոսք չէր ծեծում, երբ գրեց Տիմոթեոսին. «Բայց եթե մէկը իրաւունքի և մանավանդ ընտանիքների համար խնամք չտանի նա հավատքիցն ուրացած է եւ անհավատից էլ չար է» (Ա Տիմոթեոս Ե.8):

«Ձեր հիմնական պարտականությունն է ապահովել ձեր ընտանիքը:

Ձեր կինն իսկապես բախտավոր կլինի, եթե նա ստիպված չլինի դուրս գալ և շուկայում առևտուր անել: Նա կրկնակի օրհնված կլինի, եթե կարողանա մնալ տանը, երբ դուք դառնաք ընտանիքի հաց վաստակողը:

Կրթությունը տնտեսական հնարավորության բանալին է: Տերը մանդատ է դրել մեզ վրա որպես ժողովուրդ ուսում ձեռք բերել «ուսումնասիրելով, և նաև հավատքով» (ՎԱՈ 109.14): Ամենայն հավանականությամբ դուք ավելի լավ ապահովող կդառնաք, եթե ձեր միտքը և ձեռքերը վարժեցված լինեն արժանի մի բան անելու հասարակության մեջ, որին դուք մաս կդառնաք» (in Conference Report, ապր. 1998, 68; կամ *Ensign,* մայիս 1998, 50):

Երեց Լ. Թոմ Փերի

«Գործունեություններն անընդհատ փոփոխվում են: Դրանք ասում են ինձ, որ երիտասարդ մարդիկ, ովքեր այսօր մտնում են աշխատուժի շարքերը կունենան գործունեությունների մեծ փոփոխություններ, միգուցե երեք կամ չորս անգամ իրենց աշխատանքային կյանքի ընթացքում: Աշխատատեղի փոփոխություններն ավելի հաճախ տեղի կունենան, նույնիսկ տաս կամ տասներկու անգամ՝ աշխատանքային կյանքի փուլի ընթացքում:… Այսօր աշխարհում անկայունությունը հրամայական է դարձնում, որ մենք ուշադրություն դարձնենք խորհրդին և նախապատրաստվենք ապագայի համար» (in Conference Report, Sept.–Oct. 1995, 47; կամ *Ensign,* Nov. 1995, 36–37):

Երեց Ռասսել Մ. Նելսոն

«Հոգևոր և մտավոր ներուժի զարգացման համար հնարավորությունները հավասար են: Տղամարդիկ մենաշնորհ չունեն բանականության վրա, իսկ կանայք բացառիկ գերիշխանություն չունեն սրտի վրա: Մարդկային նվաճման բարձրագույն կոչումները՝ ուսուցիչ, կրթված մասնագետ, հավատարիմ աշխատող, հավատարիմ ընկեր, սուրբ գրությունների ուսանող, Աստծո զավակ, Քրիստոսի հետևորդ, վստահելի ընկերակից, սիրող ծնող, վաստակվում են արժանավորության միատեսակ պահանջով» (in Conference Report, Oct. 1989, 25; կամ *Ensign,* Nov. 1989, 21):

«Ես հիշում եմ շատ տարիներ առաջ իմ վճռականության պահը, երբ որպես անփորձ պատանի, ես ունեցա ժամանակավոր աշխատանք Սուրբ Ծննդյան տոների ժամանակ: Աշխատանքը ձանձրալի էր: Յուրաքանչյուր ժամը և յուրաքանչյուր օրը դանդաղ էին անցնում: Այդ ժամանակ և այնտեղ ես որոշեցի, որ պետք է ձեռք բերեմ կրթություն, որն ինձ ավելի լավ կորակավորի կյանքի համար: Ես վճռեցի դպրոցում մնալ և աշխատել կրթության համար այնպես, կարծես կյանքս հենց դրանից էր կախված» (in Conference Report, Oct. 1992, 5; կամ *Ensign,* Nov. 1992, 6):

Եպիսկոպոս Վիկտոր Լ. Բրաուն

«Մենք պետք է ուսուցանենք մեր երեխաներին կրթության կարևորությունը, որպես օժանդակություն՝ բացահայտելու, թե ինչպես մտածել և սովորել» (in Conference Report, Oct. 1982, 117; կամ *Ensign,* Nov. 1982, 81):

Կրթության կարևորությունը կանանց համար

Երեց Հովարդ Վ. Հանթեր

«Կան հարկադրական պատճառներ նաև մեր քույրերի համար աշխատանքի վերաբերյալ ծրագրեր կազմելիս: Մենք ուզում ենք, որ նրանք ձեռք բերեն ողջ կրթությունը և մասնագիտական հնարավոր ուսուցումը նախքան ամուսնությունը: Եթե նրանք այրիանան կամ ամուսնալուծվեն և կարիք ունենան աշխատելու, մենք կամենում ենք, որ նրանք ունենան արժանավայել և հատուցող աշխատանք: Եթե որևէ քույր չի ամուսնանում, նա ունի բոլոր իրավունքները զբաղվելու մի մասնագիտությամբ, որը նրան թույլ կտա զարգացնել իր տաղանդներն ու պարգևները» (“Prepare for Honorable Employment, *Ensign,* Nov. 1975, 124):

Երեց Ռասսել Մ. Նելսոն

«Իմաստուն կինը վերահաստատում է իրեն: Համապատասխան պահին նա զարգացնում է իր տաղանդները և շարունակում իր կրթությունը: Նա տիրապետում է իր նպատակներին հասնելու հմտությանը: Նա ցրում է խավարը և բացում ճշմարտության պատուհաններ իր ուղին լուսավորելու համար:

Կինը ուսուցանում է առաջնահերթություններ հրահանգով և օրինակով: Վերջերս ես դիտեցի մի հեռուստածրագիր, որում մի կին փաստաբան հարցազրույց էր տալիս: Նա տանն էր իր երեխայի հետ լիաժամկետ հիմունքներով: Երբ հարցրեցին իր որոշման մասին, նա պատասխանեց. «Օ, ես մի օր կվերադառնամ օրենքին, բայց ոչ այժմ: Ինձ համար հարցը պարզ է: Ցանկացած փաստաբան կարող է հոգ տանել իմ հաճախորդներին, բայց միայն ես պետք է լինեմ այս երեխայի մայրը»:

Այսպիսի որոշում ընդունվում է ոչ թե իրավունքների լեզվով, այլ պարտավորությունների և պատասխանատվությունների լեզվով: Նա գիտի, որ երբ նա որոշում է ընդունում կրելու իր պատասխանատվությունները, իրավունքները իրենք իրենց մասին հոգ են տանում» (in Conference Report, Oct. 1989, 26–27; կամ *Ensign,* Nov. 1989, 21):

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԵՎ ԿՆՈՋ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր դերերն ու հանձնարարությունները տարբեր են:… Բայց ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տերումը:

—Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթ

«Երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը շրջեց բանալին դեպի կանանց էմանսիպացիան, այն շրջվեց ողջ աշխարհի համար և սերնդե սերունդ կանանց թիվը, ովքեր կարող են վայելել կրոնական ազատության և քաղաքացիական ազատության օրհնությունները գնալով մեծանում են» (“Address to the Members of the Relief Society,” *Relief Society Magazine,* Dec. 1945, 717):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Մեր դերերն ու հանձնարարությունները տարբեր են: Դրանք հավերժական տարբերություններ են՝ կանաց տրված լինելով մայրության և քույրության բազմաթիվ հրաշալի պատասխանատվություններ, իսկ տղամարդկանց տրված լինելով հայրության և քահանայության սքանչելի պատասխանատվությունները, բայց ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տերումը» (տես Ա Կորնթ. ԺԱ.11):

«Չնայած տղամարդու և կնոջ հավերժական դերերը տարբեր են, … շատ բան է մնում անելու զուգահեռ անձնական զարգացման ուղով՝ ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար» (“The Role of Righteous Women,” *Ensign,* Nov. 1979, 102):

«Մենք չենք ուզում, որ մեր ՎՕՍ կանայք լինեն *լուռ* զուգընկերներ կամ սահմանափակ զուգընկերներ այդ հավերժական հանձնարարության մեջ: Խնդրում ենք լինել *ներդնող* և *լիարժեք* զուգընկերներ» (“Privileges and Responsibilities of Sisters,” *Ensign,* նոյ. 1978, 106):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Մարդը, որը քահանայություն է կրում, ընդունում է իր կնոջը որպես ընկերակից տան և ընտանիքի կառավարման մեջ՝ դրա հետ կապված բոլոր որոշումներում լիակատար գիտությամբ և լիակատար մասնակցությամբ … Տերը նախատեսել է, որ կինը օգնական լինի տղամարդու համար (*օգնական* նշանակում է հավասար), այսինքն գործընկեր, որը հավասար է և անհարժեշտ լիակատար փոխհամագործակցության համար» (in Conference Report, Oct. 1994, 68; կամ *Ensign,* նոյ. 1994, 50–51):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ես տեսնում եմ հիսուներկու տարիների իմ սեփական զուգընկերոջը: Միթե՞ նրա ներդրումը ավելի քիչ ընդունելի է Տիրոջ առջև, քան իմը: Ես բավարարված եմ, որ դա այդպես չէ: Նա լուռ քայլել է իմ կողքին, օգնել է իմ պարտականություններում, խնամել է և օրհնել մեր երեխաներին, Եկեղեցում ծառայել բազմաթիվ կոչումներում և տարածել անսպառ զվարթություն և բարություն, ուր էլ որ գնացել է: Որքան ավելի եմ մեծանում, այնքան ավելի եմ գնահատում , այո, ավելի շատ եմ սիրում, այդ փոքրիկ կնոջը, որի հետ ես Տիրոջ տանը ծնկի եկա զոհասեղանի մոտ ավելի քան կես դար առաջ» (“Rise to the Stature of the Divine within You,” *Ensign,* Nov. 1989, 97):

Նախագահ Բոյդ Կ. Փաքեր

«Եկեղեցում գոյություն ունի իշխանության հստակ գիծ: Մենք ծառայում ենք, որտեղ կանչվում ենք նրանց կողմից, ովքեր նախագահում են մեզ վրա:

Տանը դա հավասարապես միասին լծված ամուսնու և կնոջ միջև փոխհամագործակցությունն է, համատեղ որոշումներ ընդունելիս և միշտ միասին աշխատելիս: Չնայած ամուսինը՝ հայրը պատասխանատվություն է կրում արժանավոր և ոգեշնչված առաջնորդություն ապահովելու համար, նրա կինը ոչ ետևում է և ոչ էլ առջևում, այլ նրա կողքին (in Conference Report, Apr. 1998, 96; կամ *Ensign,* մայիս 1998, 73):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

«Ինչ վերաբերում է հոգևոր բաներին, կապված Հոգու բոլոր պարգևներին՝ հայտնություններ ստանալու, վկայություններ ձեռք բերելու և տեսիլքներ տեսնելու վերաբերյալ բոլոր հարցերում, որոնք վերաբերում են աստվածապաշտությանը և սրբությանը և որոնք իրականանում են անձնական արդարակեցության հետևանքով, բոլոր այս բաներում տղամարդիկ և կանայք կանգնած են Տիրոջ առջև բացարձակապես հավասար դիրքերում» (“Our Sisters from the Beginning,” *Ensign,* Jan. 1979, 61):

«Տերը երբեք չի ուղարկում առաքյալներ և մարգարեներ և արդար տղամարդիկ ծառայելու իր ժողովրդին առանց դնելու նմանատիպ հոգևոր դիրքով կանանց նրանց կողքին… Մեկի վեհացումը կախված է մյուսից» (*Doctrinal New Testament Commentary,* 3:302):

Երեց Բոյդ Կ. Փաքեր

«Ձեր կինը ձեր ընկերակիցն է ընտանիքի կառավարման մեջ և պետք է ունենա լիակատար տեղյակություն և լիակատար մասնակցություն ձեր տան հետ կապված բոլոր որոշումներում» (in Conference Report, Apr. 1994, 26; կամ *Ensign,* մայիս 1994, 21):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Ինչպե՞ս պետք է նրանք, ովքեր քահանայություն են կրում, վերաբերվեն իրենց կանանց և իրենց ընտանիքի կանացի սեռի մյուս ներկայացուցիչներին: Մեր կանայք պետք է փայփայվեն: Նրանք պետք է լսեն, ինչպես են իրենց ամուսինները իրենք օրհնված համարում, իսկ երեխաները պետք է լսեն, թե ինչպես են իրենց հայրերը առատապես գովում իրենց մայրերին» (տես ԼԱ.28): Տերը գնահատում է իր դուստրերին ճիշտ նույնքան, որքան իր որդիներին: Ամուսնության մեջ ոչ մեկը գերիշխող չէ, յուրաքանչյուրն ունի տարբեր հիմնական և աստվածային պատասխանատվություն: Կանանց համար այս տարբեր պարտականություններում գլխավորը մայրության կոչումն է: Ես անկասկած հավատում եմ, որ մեր սիրելի հավատարիմ քույրերը վայելում են հատուկ հոգևոր հարստացում, որը ներհատուկ է իրենց էությանը» (in Conference Report, Oct. 1993, 54; կամ *Ensign,* Nov. 1993, 38–39):

Ամուսնության մեջ ոչ մեկը չի գերակշռում:

«Ինչպես հայրերը, այնպես էլ մայրերը բնականաբար բազմաթիվ տարբեր բաներ են անում իրենց երեխաների համար: Ինչպես մայրերը, այնպես էլ հայրերը ստեղծված են երեխաներին դաստիարակելու համար, բայց նրանց մոտեցումները տարբեր են: Մայրերը կարծես թե գերակշռող դեր են վերցնում՝ ներկայում և ապագայում երեխաներին պատրաստելով ապրելու իրենց ընտանիքների ներսում: Հայրերը կարծես ստեղծված են լավագույն ձևով նախապատրաստելու երեխաներին ընտանիքից դուրս գտնվող միջավայրում գործելու համար» (in Conference Report, ապր. 1993, 44–45; կամ *Ensign,* մայիս 1993, 35):

Երեց Դալլին Հ. Օուքս

«Մենք ապրում ենք մի օրում, երբ բազմաթիվ քաղաքական, պաշտոնական և հասարակական ճնշումներ փոփոխությունների են դրդում, որոնք շփոթեցնում են սեռերը և ջնջում տղամարդու և կնոջ միջև տարբերությունները: Մեր հավերժական հեռանկարը մեզ տրամադրում է փոփոխությունների դեմ, որոնք փոխում են տղամարդու և կնոջ այդ առանձին պարտականություններն ու արտոնությունները, որոնք կարևոր են երջանկության մեծ ծրագիրն իրականացնելու համար: Մենք դեմ չենք կանգնում տղամարդու և կնոջ միջև վերաբերմունքի բոլոր փոփոխություններին, քանի որ օրենքներում և սովորույթներում որոշ փոփոխություններ ուղղակի ճշտում են հին սխալները, որոնք երբեք չեն հիմնվել հավերժական սկզբունքների վրա»

(in Conference Report, հոկտ. 1993, 99; կամ *Ensign,* նոյ. 1993, 73–74):

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

Քույրերը «ցանկանում են լսվել և գնահատվել և կամենում են իմաստալի ներդրումներ կատարել ցցի կամ ծխի և դրանց անդամների համար, որոնք կծառայեն Տիրոջը և կօգնեն իրականացնել Եկեղեցու առաքելությունը…

Եղբայրներ, խնդրում ենք անպայման ձգտեք ունենալ քույրերի էական ներդրումը ձեր խորհրդատվական ժողովներում (in Conference Report, հոկտ. 1993, 103; կամ *Ensign,* նոյ. 1993, 76):

Քույր Էլիզա Ռ. Սնոու

«Կանանց իրավիճակը օրվա խնդիրներից մեկն է: Սոցիալապես և քաղաքականապես այն իր վրա է հրավիրում աշխարհի ուշադրությունը: Ոմանք … հրաժարվում են ընդունել, որ կինը կոչված է վայելելու ցանկացած իրավունքներ, ի տարբերություն նրանցից, ինչ տղամարդկանց քմահաճույքները, երևակայությունը կամ արդարադատությունը, տվյալ դեպքում, կարող է բարեհաճել նրանց շնորհել: Փաստարկները, որոնց նրանք չեն կարողանում հակաճառել ապացույցով, նրանք պարսավում են և ծաղրում, ինչը մի հին ապաստան է նրանց համար, ովքեր դեմ են սկզբունքներն ուղղելուն, որոնք նրանք չեն կարող վիճարկել: Մյուսները, կրկին, ոչ միայն ընդունում են, որ կանանց իրավիճակը պետք է բարելավվի, այլ այնքան վճռական են իրենց ծայրահեղ տեսություններում, որ հակադրության մեջ են դնում կնոջը տղամարդու հետ, առաջարկում կնոջ համար առանձին և հակադիր գոյություն և ցույց տալիս, թե որքան կատարելապես անկախ պետք է լինի կինը, եթե հարկադրված ձեռք բերի տղամարդկանց կողմից ներկայացվող առավել դատապարտելի բնավորության գծերը և որոնք պետք է վերացվեն կամ բարելավվեն տղամարդկանց կողմից, փոխարեն կանանց կողմից ընդօրինակվելու: Սրանք երկու ծայրահեղություններ են և նրանց մեջտեղում է «ոսկե միջինը» (“Woman’s Status,” *Woman’s Exponent,* 15 July 1872, 29):

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

Ամուսնության հեռանկարը և հավերժական սկզբունքների վրա հիմնված ընտանիքը մեծացնում են հաջողության հավանականությունը:

—Երեց Մերիլ Ջ. Բեյթման

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ



«ԲՈԼՈՐ ԲԱՆԵՐԸ՝ ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ ՀԱՅՏՆԻ ԵՆ ՆՐԱՆՑ ՓԱՌՔԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԱՆԸՆԴՀԱՏ ՏԻՐՈՋ ԱՌԱՋ ԵՆ» (ՎԱՌՈՒ 130.7):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Որքան ավելի հստակորեն ենք տեսնում հավերժությունը, այնքան ակնհայտ է դառնում, որ Տիրոջ գործը, որով զբաղված ենք մենք, վարագույրի երկու կողմից էլ ապշեցուցիչ նմանություններով մի հսկայական և սքանչելի աշխատանք է…

Եթե մենք ապրում ենք այնպես, որ հավերժության վերաբերյալ մտորումները ճնշում են մեզ, մենք ավելի լավ որոշումներ կընդունենք (*Teachings of Spencer W. Kimball,* 25):

Եթե մենք նայենք մահկանացու կյանքին որպես գոյության ամբողջություն, ապա ցավը, վիշտը, ձախողումը և կարճ կյանքը աղետ կլինեն: Բայց եթե մենք նայում ենք կյանքին որպես հավերժական մի բանի, որը ձգվում է հեռու դեպի նախամահկանացու անցյալը և շարունակվում դեպի հավերժական ետմահու ապագան, ապա բոլոր իրադարձությունները կարող են դրվել ճիշտ հեռանկարով» (*Faith Precedes the Miracle,* 97):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Կանանց շարժման ակնհատ ազդակ է եղել դժգոհության զգացումները, որոնք ստեղծվել են երիտասարդ կանանց մոտ, ովքեր ընտրել են կնոջ և մոր դերը: Նրանց հաճախ ստիպել են զգալ, որ կան ավելի հրապուրիչ և ինքնակայացնող դերեր կանանց համար, քան տնարարությունը, տակդիրներ փոխելը և մայրիկ կանչող երեխաները: Այս տեսակետը կորցնում է հավերժական հեռանկարի տեսարանը, որն Աստված ընտրել է կանանց մոր ազնիվ դերի համար և որ վեհացումը հավերժական հայրություն է և հավերժական մայրություն» (’To the Elect Women of the Kingdom of God,’ Nauvoo Illinois Relief Society Dedication, 30 հունիս 1978) (*Teachings of Ezra Taft Benson,* 548):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Աստված հյուսում է իր գորգը համաձայն իր սքանչելի նախագծի: Ողջ մարմինները նրա ձեռքում են: Մեր արտոնությունը չէ Նրան խորհուրդ տալ: Մեր պարտականությունն է և մեր հնարավորությունը լինել խաղաղ մեր մտքերում և մեր սրտերում, և իմանալ, որ Նա է Աստված, որ սա Նրա աշխատանքն է և որ Նա թույլ չի տա, որ այն ձախողվի» (in Conference Report, Apr. 1983, 5; կամ *Ensign,* May 1983, 6):

Երեց Բրյուս Մակքոնկի

«Հավերժական կյանքը, որը հավերժական տեսանկյունից Աստծո պարգևներից մեծագույնն է (ՎԱՌ 14:7), պահված է նրանց համար, ովքեր հավատում են և հնազանդվում» (*New Witness for the Articles of Faith,* 358):

«Ամուսնական և ընտանեկան միավորը առաջընթացի և վեհացման ծրագրի կենտրոնական մասում են: Հավերժական հեռանկարում բոլոր բաները կենտրոնացած են ընտանեկան միավորի մեջ և ընտանեկան միավորի շուրջ: Վեհացումը կայանում է հավերժության մեջ ընտանեկան միավորի շարունակման մեջ» (*Doctrinal New Testament Commentary,* 1:546):

«Դա գալիք ավելի լավ կյանքի հույսն է, որ ի վիճակի է դարձնում սրբերին դեմ կանգնել այս աշխարհի վտանգներին և գայթակղություններին: Երբ որ մարդիկ ձեռք են բերում Տիրոջ հավերժական հեռանկարն այն մասին, թե որտեղից են նրանք եկել, ինչու են այստեղ և ինչ է սպասվում առջևում՝ կյանքի և գոյության հավերժական ոլորտներում: Նրանք ավելի լավ են կարողանում կառավարել մարմնում արվող գործերը: Հարության գիտելիքը այսպիսով առաջնորդում է դեպի անձնական արդարակեցություն» (*Doctrinal New Testament Commentary,* 2:396):

Երեց Լ. Թոմ Փերի

«Արդյո՞ք առաջինը և ամենաշատը մենք ներդրում ենք կատարում այն բաներում, որոնք բնույթով հավերժական են: Արդյոք ունե՞նք հավերժական հեռանկար: Թե ընկել ենք այս աշխարհի բաներում առաջինը և ամենաշատը ներդնելու թակարդը և ապա Տիրոջը մոռանալուն»

(in Conference Report, Apr. 1987, 40; կամ *Ensign,* May 1987, 34):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Հարցերը, որոնք մենք ուղղում ենք, կարող են հստակեցնել մեր հեռանկարի բացակայությունը: Փաստարկներից մեկը, թե ինչու Եսավը կամեցավ վաճառել իր անդրանիկությունը այսպես է բացահայտվում. «Ահա, ես գնալով մեռնելու եմ և ի՞նչ պետք է ինձ անդրանիկություն»: Եթե Եսավը համարում էր, որ իր անդրանիկությունը, վերաբերվում էր միայն այս կյանքին, նա անշուշտ չուներ հավերժական հեռանկար: Հավատքը, ի վերջո ներառում է հեռանկարներ, որոնք ձգվում են երկու ուղղությամբ այսօրվանից հետո՝ հիշելով անցյալի մասին և շարունակում մեր հավատքը դեպի ապագան: Այսպիսին է հավատքի և օգտակարությունը և գեղեցկությունը՝ մի աման ոսպի թանը մնում է մի աման ոսպի թան և ոչ մի ավել բան» (*Men and Women of Christ,* 116):

«Թակարդ, որից պետք է խուսափել … մեր ունեցած այն միտումն է, երբ բավականին մարդկայնորեն, բավականին հասկանալիորեն նայում ենք ներկայի պրիզմայի միջով, իսկ հետո աղավաղում իրերի վերաբերյալ մեր հեռանկարը: Ժամանակը այս աշխարհից է, այն հավերժությունից չէ:, Եթե զգույշ չլինենք, կարող ենք զգալ ժամանակի ճնշումները և իրերը տեսնել աղավաղված ձևով: Որքան կարևոր է, որ մենք հնարավորին չափով տեսնենք իրերը իրենց հավերժական հեռանկարներով ավետարանի ոսպնյակի միջով:…

… *Շատ կարևոր է, որ մենք չմտածենք միայն մահկանացու կյանքի հեռանկարների մասին, երբ ընդունում ենք որոշումներ, որոնք կտևեն հավերժության մեջ:* Մեզ անհրաժեշտ են ավետարանի հեռանկարները՝ հավերժության ենթատեքստում որոշումներ ընդունելու համար: Մենք պետք է հասկանանք, որ մենք չենք կարող կատարել Տիրոջ աշխատանքը աշխարհիկ ձևով» (“But for a Small Moment,” 453–54):

Երեց Դալլին Հ. Օուքս

«Ավետարանը ուսուցանում է մեզ, որ մենք երկնային ծնողների հոգևոր զավակներն ենք: Նախքան մեր մահկանացու ծնունդը մենք «նախագոյության մեջ ապրող ոգեղեն անձնավորություններ էինք, որպես Երկնային Հոր որդիներ և դուստրեր (statement of the First Presidency, *Improvement Era,* Mar. 1912, p. 417; նաև տես Երեմիա Ա.5): Մենք դրվեցինք այստեղ՝ երկրի վրա՝ առաջադիմելու դեպի հավերժական կյանքի մեր ճակատագիրը: Այս ճշմարտությունները տալիս են մեզ առանձնահատուկ հեռանկար և մեր որոշումներում մենք առաջնորդվում ենք այլ արժեքներով, ի տարբերություն նրանց, ովքեր կասկածում են Աստծո գոյությանը և հավատում, որ կյանքը պատահական գործընթացների արդյունք է.» (in Conference Report, Oct. 1993, 96–97; կամ *Ensign,* Nov. 1993, 72):

«Սրտով մաքուրները կյանքին նայելու որոշակի ձև ունեն: Նրանց վերաբերմունքը և ցանկությունները ստիպում են նրանց նայել իրենց փորձառությունների վրա հավերժության տեսանկյունից: Այս հավերժական հեռանկարն ազդում է նրանց ընտրությունների և առաջնահերթությունների վրա: Երբ նրանք հեռանում են աշխարհիկ կյանքից, նրանք ավելի մոտիկ են իրենց զգում մեր Երկնային Հորը և ավելի ունակ՝ առաջնորդվելու նրա Հոգու կողմից: Մենք կոչում ենք մտքի այս վիճակը, կյանքի այս հատկանիշը *հոգևորություն*» (*Pure in Heart,* 111):

«Հավերժության տեսանկյունից, ժամանակավոր անհաջողությունը կարող է հավերժական կարևորություն ունեցող հոգու ուժը զարգացնելու հնարավորություն դառնալ: Ուժը կոփվում է ձախորդության մեջ: Հավատքը զարգանում է մի իրավիճակում, որտեղ մենք չենք կարող տեսնել, թե ինչ կա առջևում» (in Conference Report, Oct. 1985, 78; կամ *Ensign,* Nov. 1985, 63):

Երեց Մերիլ Ջ. Բեյթման

«Կարելի է կարծել, թե որքան երկար է տղամարդու և կնոջ հեռանկարը ամուսնության հարաբերության վերաբերյալ, այնքան ավելի մեծ է հաջողության հավանականությունը: Տաճարային ամուսնալուծության աստիճանը բավականին ցածր է քաղաքացիական ամուսնությունների հետ համեմատած, իսկ քաղաքացիական ամուսնալուծության ցուցանիշներին գերազանցում են ոչ պաշտոնական ամուսնությունների բաժանման ցուցանիշները» (տես Tim B. Heaton and Kristen L. Goodman, ‘Religion and Family Formation,’ *Review of Religious Research* 26, no. 4 [June 1985]: 343–59; John O. G. Billy, Nancy S. Landale, and Steven D. McLaughlin, ‘The Effect of Marital Status at First Birth on Marital Dissolution Among Adolescent Mothers,’ *Demography* 23, no. 3 [August 1986]: 329–49; Larry L. Bumpass and James A. Sweet, ‘National Estimates of Cohabitation,’ *Demography* 26, no. 4 [November 1989]: 615–25): Ամուսնության և ընտանիքի հեռանկարը, որը հիմնված է հավերժական սկզբունքների վրա, մեծացնում է հաջողության հավանականությունը: Երբ մարդ որդեգրում է երկար հեռանկար, նա ավելի շատ է աշխատում համբերատար լինել, երկայնամիտ, բարի և հեզ: Այս հատկանիշներն իրենց հերթին ուժեղացնում են ամուսնությունը» (“The Eternal Family,” 115):

Կարելի է կարծել, թե որքան ավելի երկար է տղամարդու և կնոջ ունեցած հեռանկարը ամուսնության հարաբերության վերաբերյալ, այնքան ավելի մեծ է հաջողության հավանականությունը:

ԸՆՏԱՆԻՔ՝ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԻՆ

Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում են և պահպանվում հավատքի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի ու օգտակար և ուժերը վերականգնող հանգստի սկզբունքների վրա:

—Առաջին Նախագահություն և Տասներկու Առաքյալների Քվորում

ԸՆՏԱՆԻՔ՝ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԻՆ

Առաջին Նախագահություն և Տասներկու Առաքյալների Խորհուրդ Ensign, նոյ. 1995, 102

ՄԵՆՔ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, պաշտոնապես հայտարարում ենք, որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ Արարչի ծրագրում Իր զավակների հավերժական ճակատագրի համար ընտանիքը կենտրոնական դեր ունի:

ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԷԱԿՆԵՐԸ՝ տղամարդիկ և կանայք արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր: Նախաերկրային, երկրային և հավերժական ինքնության և նպատակի համար սեռն անհատի հիմնական բնութագիրն է:

ՆԱԽԱԵՐԿՐԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հայր և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի Նրա զավակները կարող էին ձեռք բերել ֆիզիկական մարմին և աշխարհիկ փորձ կուտակեին դեպի կատարելություն առաջ ընթանալու և որպես հավերժական կյանքի ժառանգներ իրենց աստվածային ճակատագիրն ի վերջո իրականացնելու համար: Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան հարաբերությունները հավերժացվեն գերեզմանից այն կողմ: Սուրբ տաճարներում կատարվող սրբազան արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների համար վերադառնալ Աստծո ներկայությունը, իսկ ընտանիքների համար միավորվելու հավերժորեն:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՎԻՐԱՆԸ, որն Աստված տվեց Ադամին ու Եվային վերաբերվում էր որպես ամուսին և կին նրանց ծնող դանալու հնարավորությանը: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Իր զավակներին տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: Մենք հայտարարում ենք նաև, որ Աստված պատվիրել է, որ ծննդաստեղծ սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին:

ՄԵՆՔ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆՔ, որ ուղիները, որոնց միջոցով մահկանացու կյանք է ստեղծվում, ղեկավարվում է աստծո կողմից: Մենք հաստատում ենք կյանքի սուրբ լինելը և նրա կարևորությունն Աստծո հավերժական ծրագրում:

ԱՄՈՒՍԻՆԸ ԵՎ ԿԻՆԸ լուրջ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և իրենց երեխաներին: «Որդիքը Տիրոջ ժառանգությունն են» (Սաղ. ՃԻԷ.3): Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապահ քաղաքացիներ լինել, որտեղ էլ որ ապրեն: Ամուսիններն ու կանայք, մայրերն ու հայրերը հաշվետու կլինեն Աստծո առջև այս պարտականությունների կատարման համար:

ԸՆՏԱՆԻՔԸ կարգված է Աստծո կողմից: Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը Նրա հավերժական ծրագրի համար էական է: Երեխաները պետք է ծնվեն ամուսնական կապի մեջ և դաստիարակվեն մոր և հոր կողմից, ովքեր հարգում են ամուսնական երդումները լիակատար հավատարմությամբ: Ընտանեկան կյանքում ամենայն հավանականությամբ երջանկության կարելի է հասնել, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում են և պահպանվում հավատքի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի ու օգտակար և ուժերը վերականգնող հանգստի սկզբունքների վրա:

Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան հարաբերությունները շարունակվեն գերեզմանից այն կողմ:

Ըստ աստվածային ծրագրի հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով և առաքինությամբ և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքների կենսական կարիքներն ու իրենց ընտանիքների պաշտպանությունը: Մայրերը հիմնականում պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակության համար: Այս սուրբ պարտականություններում հայրերը և մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ: Անաշխատունակությունը, մահը կամ այլ հանգամանքներ կարող են անհրաժեշտություն առաջացնել, որպեսզի փոփոխվեն ընտանիքի համար հոգ տանողների դերերը: Անհրաժեշտության դեպքում մոտիկ ազգականները պետք է օգնություն ցույց տան:

ՄԵՆՔ ՋԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆՔ, որ այն անձինք, ովքեր խախտում են մաքրաբարոյության ուխտերը, ովքեր բռնություն են գործադրում իրենց կողակցի կամ երեխաների հանդեպ կամ թերանում ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստծո առջև: Դեռ ավելին, մենք նախազգուշացնում ենք, որ ընտանիքի քայքայումը անհատների, համայնքների և ազգերի վրա կբերեն այն աղետները, որոնք կանխագուշակվել են հնադարյան և ժամանակակից մարգարեների կողմից:

ՄԵՆՔ ԴԻՄՈՒՄ ԵՆՔ պատասխանատու քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին ամենուր, որպեսզի խթանվեն այն միջոցները, որոնք նախատեսված են որպես հասարակության հիմնական միավորի՝ ընտանիքը պահպանելու և ամրապնդելու համար:

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ես ողջունում եմ այն հայրերին և մայրերին, ովքեր հավատարիմ են միմյանց և ովքեր դաստիարակում են իրենց երեխաներին հավատքով և սիրով: Ընտանիքի հայտարարությունը առաջացրել է մի հրաշալի արձագանք, որը մենք թողարկել ենք անցած հոկտեմբերին:… Հույս ունենք դուք կընթերցեք և կվերընթերցեք այն» (in Conference Report, Apr. 1996, 90; կամ *Ensign,* May 1996, 66):

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

«Ընտանիքի վերաբերյալ վերջին հայտարարությունն աշխարհին, որը թողարկվել է Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից, խիստ հստակեցնում է, որ ընտանիքը կարգված է Աստծո կողմից: Հայտարարությունը նախազգուշացնում է, որ ընտանիքի քայքայումը կբերի անհատների, համայնքների և ազգերի վրա աղետներ, որոնք կանխագուշակվել են հնադարյան և ժամանակակից մարգարեների կողմից» (in Conference Report, Apr. 1996, 112; կամ *Ensign,* May 1996, 81):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Սովորեք երջանկության մեծ ծրագրի վարդապետական հիմքը՝ ուսումնասիրելով սուրբ գրությունները, խորհելով դրանց բովանդակության մասին և աղոթելով դրանք հասկանալու համար: Ուշադիր ուսումնասիրեք և օգտագործեք Առաջին Նախագահության և Տասներկուսի ընտանիքի վերաբերյալ հայտարարությունը:… Այն ոգեշնչվել է Տիրոջ կողմից» (in Conference Report, Oct. 1996, 103; կամ *Ensign,* Nov. 1996, 75):

Երեց Մերիլ Ջ. Բեյթման

«Հայտարարությունը սովորեցնում է, որ «հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում և պահպանվում են հավատքի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի ու օգտակար և ուժերը վերականգնող հանգստի սկզբունքների վրա»: Այլ խոսքով ասած, Տերը չափում է ընտանիքի հաջողությունը նրա հարաբերությունների որակով: Մի տանը, որտեղ գերիշխում է հավատք, սեր և ներողամտություն, անդամները գտնում են ուրախություն և բավարարվածություն, միասին լինելով: Լավագույն դեպքում հայրն է նախագահում սիրով և արդարությամբ, ապահովում է կյանքի կարիքները և պաշտպանում ընտանիքին, մինչ մայրը հիմնականում պատասխանատու է երեխաների դաստիարակության համար: Աշխարհը ճիշտ հակառակ, հաճախ չափում է ընտանիքի հաջողությունը աշխարհիկ բաների կուտակումով և երեխաներին անցնող ունեցվածքի չափերով» (“The Eternal Family,” 115):

Հավատքի սկզբունքը

Մատթեոս Թ.29

«Այն ժամանակ նորանց աչքերին դիպաւ և ասեց. Ձեր հաւատքի պէս թող լինի ձեզ»:

Բ Կորնթացիս Ե.7

«Որովհետեւ հաւատքով ենք գնում, եւ ոչ թե երեւույթով»:

Փիլիպպեցիս Դ.13

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»:

1 Նեփի 3.7

«Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է, քանզի գիտեմ, որ Տերը պատվիրաններ չի տալիս մարդկանց զավակներին առանց ուղի պատրաստելու նրանց համար, որպեսզի նրանք կարողանան իրագործել այն, ինչ նա պատվիրել է իրենց»:

Վարդապետություն և Ուխտեր 76.53

«Եվ ովքեր հաղթում են հավատքով, և կնքվում են խոստումի Սուրբ Հոգով, որը Հայրը թափում է բոլոր նրանց վրա, ովքեր արդար են և ճշմարիտ»:

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ

«Երբ տղամարդը և կինը ողջ անկեղծությամբ մտնում են ժամանակի և ողջ հավերժության համար ամուսնության ուխտի մեջ (հետո երբ նրանք «հաղթում են հավատքով» և «արդար են և ճշմարիտ [ՎԿՈ 76.53]), Սուրբ Հոգին, որը խոստումի Հոգին է, արձանագրում է կամ վավերացնում է այդ կնքումը»: Այլ խոսքով, նա կնքում է ամուսնության ուխտին վերաբերող խոստումները նրանց վրա» (*Doctrines of Salvation*, 2:98):

Նախագահ Հարոլդ Բ. Լի

«Հավատքն է, և ոչ թե կասկածը, ողջ գիտության սկիզբը, լինի դա գիտության ասպարեզում, թե կրոնում:. . . Հավատքն է, որ փնտրում է հոգևոր գիտելիք և զորություն, քննելով ձեր իսկ մտքում տվյալ նյութի վերաբերյալ հարցը, կիրառելով բոլոր հնարավոր մարդկային իմաստությունը ի լուծումն ձեր խնդրի, իսկ հետո հարցնելով Աստծուն, թե ձեր եզրակացությունը ճի՞շտ է արդյոք: Եթե այն ճիշտ լինի, կուրծքդ կայրվի քո ներսում և «պիտի զգաս», որ դա ճիշտ է, բայց եթե քո եզրակացությունը ճիշտ չլինի, դու կունենաս մտքի ընդարմացում, որի արդյունքում դու կմոռանաս այն, ինչը սխալ է (ՎԿՈ. 9.8–9)» (*Decisions for Successful Living*, 194):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Սերը, որի մասին խոսում է Տերը, միայն ֆիզիկական գրավչություն չէ, այլ նաև հավատք, վստահություն, ըմբռնում և գործընկերություն: Այն նվիրվածություն է և ընկերակցություն, ծնող լինելը և ընդհանուր գաղափարներ ու չափանիշներ ունենալը: Դա կյանքի մաքրությունն է, զոհաբերությունն ու անեսասիրությունը» (*Teachings of Spencer W. Kimball*, 248):

Մարի և Ջոն, ես շնորհավորում եմ ձեզ ձեր հեռանկարի և հավատքի և ձեր պատարաստակամության առթիվ, որ աշխարհիկ հարսանիքի շքեղությունից ու ճոխությունից նախընտրեցիք պարզ, խաղաղ, բայց տաճարային գեղեցիկ ամուսնությունը, մի հաճելի հավերժական ծիսակատարություն, որը կլինի համեստ և սրբազան ձեր ծննդի, օրհնության, մկրտության կամ ձեռնադրման նման» *(Faith Precedes the Miracle*, 127):

Երեց Լե Գրանդ Ռիչարդս

«Անդերսոն Մ. Բեյթոնը նվիրաբերել է մի բանաստեղծություն իր սիրելի կնոջը՝ Բեուլային, որը կոչվում է՝ «Կյանքի փիլիսոփայությունը», որն արտահայտում է նրա հավատքը, որ իր ամուսնությունը կտևի գերեզմանից այն կողմ.

«Ես ամուսնացա քեզ հետ հավերժ, ոչ այժմվա համար,
Ոչ էլ երկրային խաբուսիկ կարճ տարիների համար,
Ամուսնացա քեզ հետ արցունքներից այն կողմ կյանքի համար,
Մրտի ցավից և կիտված հոնքերից այն կողմ:
Մերը չի ճանաչում գերեզման, և այն կառաջնորդի մեզ սիրելիս,
Երբ կյանքն անցնում է, մոմերը թրթռում են և հանգչում»:
(*Marvelous Work and a Wonder*, 203):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

Մեկնաբանելով Բ Կորնթացիս Ա.24-ը, կարելի է ասել. «Իր Որդու զոհաբերության միջոցով Աստծո շնորհի դրսևորումից հետո, մկրտությունից հետո, տաճարային ամուսնությունից հետո, Տիրոջ կողմից մարդկանց ցանկացած օրհնություն տալուց հետո, այնուամենայնիվ, խոստացած պարգևները գալիս են անձնական հավատքի միջոցով, անձնական առաքինության միջոցով, երբ մարդը միայնակ կանգնում է իր Արարչի առջև և անում այն բաները, որոնք նրան հնարավորություն են տալիս իրականացնելու իր փրկությունը» (*Doctrinal New Testament Commentary*, 2:410):

Երեց Դեյվիդ Բ. Հեյթ

«Ամուսնությունը հաստատվում է հավատքով և դրա աստվածային հիմնադրման գիտությամբ, և ամեն օր հաստատվում է սիրո էներգիայով . . .

Ուժեղ, տարածված համոզմունքը, որ կա ինչ որ հավերժորեն թանկ բան ամուսնական հարաբերության մեջ, հավատք է տալիս չարին դիմադրելու: Ամուսնությունը պետք է լինի գեղեցիկ և ավարտուն, մեր ամենաթանկ երազանքներից վեր ուրախությամբ, քանի որ «ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ Տերումը» (Ա Կորնթացիս ԺԱ.11) (in Conference Report, Apr. 1984, 16–17; կամ *Ensign*, May 1984, 14):

Աղոթքի սկզբունքը

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Երբ ամուսինն ու կինը միասին հաճախ սուրբ տաճար են գնում, ծնկի իջնում աղոթքով միասին իրենց տանը ընտանիքի հետ միասին, … այդ ժամանակ երջանկությունը իր գագաթնակետին է» (*Teachings of Spencer W. Kimball*, 309):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Աղոթքը տանը և աղոթքը միմյանց հետ կուժեղացնի ձեր միությունը: Աստիճանաբար մտքերը, ոգեշնչումները և գաղափարները կձուլվեն, մեկ դառնալով, մինչև դուք կձգտեք նույն մտադրություններին և նպատակներին:

Ապավինեք Տիրոջը, մարգարեների ուսմունքներին և սուրբ գրություններին առաջնորդության և օգնության համար, հատկապես երբ կարող են լինել անհամաձայնություններ և խնդիրներ» (“Salvation—A Family Affair,” *Ensign,* July 1992, 2, 4; see also Conference Report, Oct. 1982, 85–86; կամ *Ensign,* Nov. 1982, 60)

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ես գիտեմ, որ չկա ոչ մի այլ գործողություն, որը կարող է ունենալ այնպիսի ողջունելի ազդեցություն ձեր կյանքի վրա, ինչպես կարող է ունենալ աղոթքով միասին ծնկի իջնելու գործողությունը: Հենց միայն «Մեր Երկնային Հայր» խոսքերն ունեն վիթխարի ազդեցություն: Դուք չեք կարող արտաբերել դրանք անկեղծորեն և հարգանքով առանց Աստծո հանդեպ հաշվետու լինելու որևէ զգացում ունենալու: Փոքրիկ փոթորիկները, որոնք թվում է նեղում են ամեն մի ամուսնություն, դառնում են անհետևանք, մինչ ծնկի ենք իջնում Տիրոջ առաջ և դիմում նրան որպես աղերսող որդի կամ դուստր:

Ամուսնությունը պետք է գեղեցիկ և կայացնող լինի, մեր թանկագին երազանքներից վեր ուրախությամբ:

Ձեր ամենօրյա զրույցները նրա հետ կբերեն խաղաղություն ձեր սրտերին և ուրախություն ձեր կյանք, որը ոչ մի այլ աղբյուրից չի կարող գալ: Ձեր ընկերակցությունը կքաղցրանա տարիների ընթացքում: Ձեր սերը կուժեղանա: Միմյանց հանդեպ ձեր գնահատանքը կաճի:

Ձեր երեխաները կօրհնվեն ապահովության զգացումով, որը գալիս է այնպիսի մի տանն ապրելուց, որտեղ բնակվում է Սուրբ Հոգին: Նրանք կճանաչեն և կսիրեն ծնողներին, ովքեր հարգում են միմյանց և հարգանքի ոգին կաճի նրանց իսկ սրտերում: Նրանք կզգան մեղմորեն բարի խոսքեր խոսելու ապահովությունը: Նրանք ապաստան կգտնեն հոր և մոր կողմից, ովքեր Աստծո հետ ազնվորեն ապրելով, ազնվորեն են ապրում միմյանց հետ և իրենց ընկերների հետ: Նրանք կհասունանան շնորհակալության զգացումով, լսելով իրենց ծնողներին աղոթելիս երախտագիտություն հայտնելիս մեծ և փոքր օրհնությունների համար: Նրանք կաճեն հավատքով առ կենդանի Աստված» (*Teachings of Gordon B. Hinckley,* 216):

Ձեր ընկերակցությունը կլինի այնպիսին, որը կքաղցրանա և կուժեղանա տարիների ընթացքում և այն կդիմանա հավերժության մեջ: Ձեր սերն ու գնահատանքը միմյանց հանդեպ կմեծանա» (*Cornerstones of a Happy Home,* 11):

Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն

«Եկեղեցու շատ առաջնորդներ ինչպես նաև մասնագիտացած խորհրդականներ նշել են, որ նրանք երբեք չեն տեսել որևէ ամուսնություն լուրջ դժվարության մեջ, եթե զույգը ամենօր միասին շարունակում է աղոթել: Երբ դուք հրավիրում եք Տիրոջը մասնակից լինել ձեր միությանը, տեղի է ունենում զգացումների փափկեցում, լարվածության թուլացում, որը տեղի է ունենում Հոգու զորության միջոցով: Տեսեք թե ինչ է պատահում, երբ դուք ծնկի եք իջնում միասին, լսելով, ինչպես է ձեր զուգընկերը երախտագիտություն և սեր հայտնում ձեզ համար: Աղոթեք, որ դուք միասին աշխատելով կարողանաք հաղթահարել ցանկացած դժվարություն, որպեսզի ձեր սերը աճի…

Երբեմն, երբ Բարբարան լավ չէր զգում կամ ինչ որ պատճառով հուսալքված էր թվում, ինձ օգտակար էր թվում և իմաստալի մեր միասնական աղոթքի ժամանակ անցնել առաջին դեմքի և անկեղծորեն արտահայտել իմ զգացումները. «Հայր, այնքան երախտապարտ եմ, որ ունեմ այնպիսի զուգընկեր, ինչպիսին է Բարբարան: Օգնիր նրան իմանալ, թե որքան շատ եմ սիրում ու գնահատում նրան, որպես Քո ընտրյալ դուստրերից մեկը: Օգնիր, որ նա լիովին առողջանա և տուր նրան առողջություն և ուժ, որի կարիքը նա ունի, որպեսզի շարունակի իր կյանքի կարևոր միսիան որպես կին և մայր…

Ես ձեզ անկեղծորեն կկամենայի հրավիրել քննել ձեր իրավիճակը: Դուք ձեր զուգընկերոջ հետ միասին աղոթո՞ւմ եք ամեն օր, որ ձեր ամուսնությունը ամրապնդվի: Եթե ոչ, այժմ գերազանց ժամանակ է սկսելու համար» (*One Step at a Time,* 15–16):

Ապաշխարության սկզբունքը

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Մի օր Սոլթ Լեյք Սիթիի տաճարում, երբ քայլում էի երկար դահլիճով ներքև՝ պատրաստվելով գնալ սենյակներից մեկը երիտասարդ մի զույգի համար ամուսնություն կատարելու, մի կին հետևեց ինձ … և մեծ հուզմունքով ասաց. «Երեց Քիմբալ, ինձ հիշո՞ւմ եք»: Նրա աչքերը խուզարկում էին և նրա ականջները ձգտում էին լսել, թե ես արդյոք հիշում էի նրան: Ես հանկարծակիի եկա: Անկեղծ ասած ես չէի կարողանում մտաբերել: Ես շատ նեղսրտվեցի: Ի վերջո ասացի. «Ներեցեք, բայց չեմ կարողանում հիշել ձեզ»: Հիասթափության փոխարեն մեծ ուրախություն հայտնվեց նրա դեմքին: Նա հանգստացավ: Նա ասաց. «Օհ, այնքան երախտապարտ եմ, որ դուք չկարողացաք հիշել ինձ: Ամուսնուս հետ մի ամբողջ գիշեր ձեզ հետ անցկացրեցինք, մինչ դուք փորձում էիք փոխել մեր կյանքը: Մենք մեղք էինք գործել և մաքառում էինք ազատվել դրանից: Դուք աշխատեցիք ողջ գիշեր՝ օգնելու ինձ մաքրվելու դրանից: Մենք ապաշխարել ենք և լիովին փոխել մեր կյանքը: Ես ուրախ եմ, որ չկարողացաք հիշել ինձ, որովհետև, եթե դուք, լինելով առաքյալներից մեկը, չկարողացաք հիշել ինձ, երևի Փրկիչն էլ չկարողանա հիշել իմ մեղքերը» (*Teachings of Spencer W. Kimball,*108):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Կա սպեղանի այս բոլորի համար: Դա չի գտնվում ամուսնալուծության մեջ: Այն գտնվում է Աստծո Որդու ավետարանի մեջ: Նա է ասել այս. «Արդ այն որ Աստուած միավորեց թող մարդը չբաժանէ» (ԺԹ.6): Ամուսնությունների լարվածության մեծ մասի դեմ սպեղանին ամուսնալուծությունը չէ: Դա ապաշխարությունն է: Դա բաժանումը չէ: Դա պարզապես ազնվությունն է, որն օգնում է մարդուն նախապատրաստվել իր պարտականությունները կատարելուն: Դա գտնվում է Ոսկե Կանոնում» (in Conference Report, Apr. 1991, 97; կամ *Ensign*, May 1991, 73–74):

Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

«Լավ կլինի հիշել, որ այնպիսի ահավոր, սոսկալի և լուրջ մեղքերի համար, ինչպիսին շնությունն ու սեռական մյուս մեղքերն են, Տերը բարությամբ ապահովել է ներում՝ մեղքին համապատասխան ապաշխարության պայմանով: Բայց ինչ վերաբերվում է այս մեղքերին և նույնիսկ սրանցից ավելի քիչ ծանր մեղքերին, դրանց կանխարգելումն այնքան շատ ավելի լավ է, քան բուժումը» (*Miracle of Forgiveness*, 74):

«Մեկ այլ երիտասարդ զույգ դրսևորեց նմանատիպ անտեղյակություն մեղքի ծանրության վերաբերյալ և հատկապես սեռական մեղքի: Նրանք եկան ինձ մոտ հունիսին, պաշտոնապես նշանված լինելով մատանիով անցած դեկտեմբերին, և վեց ամիսների ժամանակահատվածում նրանց սեռական մեղքը հաճախ կրկնվել էր: Հունիսին նրանք գնացին իրենց համապատասխան եպիսկոպոսների մոտ՝ ձգտելով երաշխավորագրեր ստանալ տաճարի համար: Աղջկա եպիսկոպոսը՝ իմանալով որ նա միշտ ակտիվ էր եղել, ստուգող հարցեր չտվեց նրան մաքրության վերաբերյալ, և շուտով երաշխավորագիրը պահվեց նրա դրամապանակում՝ պատրաստ հունիսին ծրագրված ամուսնության համար: Մյուս ծխի եպիսկոպոսը ուշադիր հարցեր տվեց երիտասարդ տղամարդուն և պարզեց վեցամսյա օրինազանցության մասին:

Իմ գրասենյակում զույգն անկեղծորեն ընդունեց իր մեղքը և ինձ ապշեցրեց, երբ ասացին. «Դա այնքան էլ սխալ չէ, այնպես չէ՞, երբ մենք պաշտոնապես նշանված էինք և սպասում էինք շուտով ամուսնանալու»: Նրանք պատկերացում չունեին մեղքի մեծության մասին: Նրանք պատրաստ էին սուրբ տաճար գնալ իրենց ամուսնության համար առանց մտքով իսկ անցկացնելու, որ նրանք պղծում էին Տիրոջ տունը: Ուսուցման ինչպիսի բացթողում: Որքան անկեղծությունից զուրկ էր նրանց մոտեցումը: Նրանք խիստ անհանգստացան, երբ նրանց ամուսնությունը պետք է հետաձգվեր՝ նրանց ժամանակ տալու ապաշխարության համար: Նրանք արդարացրել էին մեղքը, կարծես թե այն գոյություն չուներ: Նրանք պնդում էին, որ օր նշանակվեր, հնարավոր ամենամոտը, երբ նրանք կկարողանային ծրագրել իրենց տաճարային ամուսնությունը: Նրանք չէին հասկանում, որ ներումը օրերի և ամիսների կամ նույնիսկ տարիների բան չէ, այլ դա զգացմունքների ուժգնության և ինքնափոխակերպման հարց է: Սա կրկին ցույց է տալիս վերաբերմունքի աղավաղում, իրենց խորը օրինազանցության լրջության մեջ իրենց մեղավոր ճանաչելու բացակայություն: Նրանք չէին խոստովանել իրենց լուրջ օրինազանցությունը: Նրանք ընդունեցին դա միայն այն ժամանակ, երբ այն հայտնաբերվեց: Այդ երկու իրավիճակների միջև մեծ տարբերություն կա:

Այս զույգը կարծես գաղափար չուներ Տիրոջը բավարարելու, ընդհանուր տույժերը վճարելու և ազատում ու կարգավորում ձեռք բերելու մասին, որը կարելի կլիներ վերջնական համարել և որը կարող էր ընդունվել Տիրոջ կողմից: Ես նրանց հարցրեցի. «Երբ դուք կշռադատում եք այս օրինազանցության մասին, դուք զգո՞ւմ եք, որ պետք է հեռացվեք Եկեղեցուց»: Նրանք զարմացան այս հարցից: Նրանք մտածել էին, որ իրենց նողկալի մեղքը ոչ այլ ինչ էր, քան անխոհեմություն: Նրանք ծնվել և մեծացել էին Եկեղեցում և ստացել էին Սուրբ Հոգու պարգևը ութ տարեկանում: Բայց իրենց ուխտադրժության միմյանց հաջորդող գիշերների ընթացքում նրանք հեռու էին վանել Սուրբ Հոգուն: Նրանք անցանկալի էին դարձրել նրան: Նրանք չէին լսում նրա հուշումները: Անհերևակայելի է, որ նրանք չիմանային, թե որքան սխալ էր իրենց մեղքը, բայց նրանք իրենց տրամադրել էին ճշմարտության դեմ: Նրանք կարծես այրել էին իրենց խիղճը տաք արդուկով» (*Miracle of Forgiveness*, 155–56):

Իմ գրասենյակում մի օր նստած էր մի զուսպ զույգ, որը փոքր երեխաների մի մեծ ընտանիք ուներ: Իրենց ամուսնական կյանքի սկզբում նրանք երկուսն էլ շնություն էին գործել և շատ տարիների ընթացքում անասելի տառապել էին խղճի խայթի ուժեղ ցավից: Նրանք ներել էին միմյանց, բայց դեռ տառապում էին չարչարանքներից:

Ապաշխարության և ներման զույգ սկզբունքներն ուժով գերազանցում են հակառակորդի վախ ներշնչող ուժին:

Զույգը եկել էր որոշ հարցերի պատասխաններ ստանալու: Նրանք այլևս չէին կարողանում դիմանալ: Ամուսինը խախտեց լռությունը: «Ես ասացի կնոջս, որ տարիներ առաջ կատարած մեր շնության պատճառով, մենք երբեք չէինք կարող հույս ունենալ փրկության սելեստիալ արքայությունում, շատ ավելի քիչ՝ վեհացման և հավերժական կյանքի համար, բայց որ մենք կարող էինք մեծ բավականություն ստանալ, ծնելով երեխաներ և մեծացնելով նրանց այնպես, որ նրանք լինեին այնքան արդար, որ մենք

կարողանայինք համոզված լինել, որ նրանք բոլորը կկարողանային ստանալ ավետարանի և Եկեղեցու բոլոր օրհնությունները և ի վերջո հասնել իրենց վեհացմանը:

Երբ ես մեջբերեցի սուրբ գրությունների մի երկար ցուցակ՝ ցույց տալով, որ ներումն ի վերջո հնարավոր էր, երբ ծանր գինը վճարվեր, ես հույս տեսա նրանց մեջ և խաղաղություն հանգչեց նրանց վրա: Նրանք թողեցին իմ գրասենյակը, փայլելով վերգտած զմայլանքից» (*Miracle of Forgiveness,* 343):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Լյուցիֆերի միակ նպատակն է հակադրվել երջանկության մեծ ծրագրին, փչացնել մաքրագույնը, գեղեցկագույնը և կյանքի հրապուրիչ փորձառությունները՝ ռոմանտիկան, սերը ամուսնությունը և ծնող լինելը [տես 2Նեփի 2.18, 28.20]: Դառնության և հանցանքի ուրվականը [տես Ալմա 39.5, Մորոնի 9.9] հետևում է նրան ամենուր: Միայն ապաշխարությունը կարող է բժշկել այն, ինչ նա վնասում է» (in Conference Report, հոկտ. 1993, 27–28; կամ *Ensign,* նոյ. 1993, 21):

«Կյանքի ճակատամարտում հակառակորդը վիթխարի թվով գերիներ է վերցնում և շատերը, ովքեր փախստի ուղին չգիտեն հարկադրված են նրա ծառայությանը: Յուրաքանչյուր հոգի, որը բանտարկված է մեղքի և հանցանքի համակենտրոնացման ճամբարում, ունի դռան մի բանալի: Հակառակորդը չի կարող նրանց պահել, եթե նրանք գիտենան, թե ինչպես օգտագործել այն: Բանալին կոչվում է *Ապաշխարություն:* Ապաշխարության և ներման զույգ սկզբունքներն իրենց ուժով գերազանցում են հակառակորդի սոսկալի ուժին:

Բարոյական չափանիշների հետ կապված ես չգիտեմ որևէ մեղք, որի համար մենք չկարողանանք ներվել: Ես չեմ բացառում վիժեցումը: Բանաձևը սահմանված է քառասուն բառերով.

«Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք:

Այս բանով դուք կարող եք իմանալ, թե արդյոք մարդն ապաշխարում է իր մեղքերից,- ահա նա կխոստովանի և կթողնի դրանք» (ՎԱՈՒ 58.42–43):

Որքան էլ երկար և ցավագին լինի ապաշխարության գործընթացը, Տերն ասել է.

«Սա է այն ուխտն որ կդնեմ նորանց հետ … կտամ իմ *օրենքները* նորանց սրտերի մեջ, և նորանց խորհուրդների վերայ կգրեմ նորանց,

Եվ *նորանց անօրէնութիւնները էլ չեմ յիշիլ*» (Եբրայեցիս Ժ.16–17, շեղագիրն ավելացված է) (in Conference Report, Apr. 1992, 95; կամ *Ensign,* May 1992, 68):

Ներման սկզբունքն ամուսնության մեջ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Եթե երկու մարդկանց հանցանքը գրեթե հավասար է, եթե երկուսի աչքում էլ գերան կա, դա, միևնույն է, չի արդարացնում եսասեր, չներող վերաբերմունքը: Այս ունենալով մտքումս, ես նորից գրեցի մի կնոջ, որի հետ նախկինում առիթ էի ունեցել մանրամասնորեն քննարկելու նրա ընտանեկան խնդիրները: Ես խորհուրդ էի տվել, ցանկանալով կանխարգելել հետագա թյուրըմբռնումները և խուսափելու բաժանումից կամ ամուսնալուծությունից: Մի քանի շաբաթից, նա գրեց, որ նա կամենում էր ընդունել իմ որոշումը: Ես մասնավորապես պատասխանեցի հետևյալ ձևով.

«Սա *իմ* որոշումը չէ, որոշում ընդունելը ձեր գործն է: Դուք ունեք ձեր ազատ կամքը: Եթե դուք մտադրված եք ապահարզան ստանալ, դա ձեր պատասխանատվությունն է և ձեր տառապանքը, եթե չեք կամենում ուղղումներ անել: Երբ ես խոսեցի ձեզ հետ, ես հասկացա, որ դուք ներել էիք միմյանց և կամենում եք սկսել այդտեղից կառուցել գեղեցիկ կյանք: Հավանաբար, ես սխալվում էի: Բոլոր իմ նախազգուշացումները և աղերսանքները թվում է հնչել են խուլ ականջներում: Ես կամենում եմ, որ դուք իմանաք, որ ես չեմ արդարացնում ձեր ամուսնուն որևէ բանում, որն անիրավ է, բայց ես հասկանում էի ողջ ընթացքում, որ ամբողջ հանցանքը միայն նրանը չէր: Ես երբեք չկարողացա զգալ, որ դուք լիովին մաքրել եք եսասիրությունը ձեր սեփական հոգուց: Ես իսկապես գիտեմ, որ երկու մարդիկ, որոնք կարծես այնքան խելամիտ և ըստ երևույթին այնքան հասուն են, ինչպիսին դուք երկուսդ եք, կկարողանային ունենալ փառահեղ երջանիկ կյանք, եթե երկուսով սկսեիք թույլ տալ, որ ձեր մտահոգություններն ուղղվեին ի օգուտ մյուսի, փոխարենը գնալու ի օգուտ ձեր եսասեր էությունների:

Փախստի դիմողը երբեք գլուխը չի ազատում: Եթե երկու մարդ, եսասեր և եսակենտրոն և առանց ներման ոգու, փախչում են միմյանցից, նրանք չեն կարող փախչել իրենցից: Հիվանդությունը չի բուժվում բաժանումով կամ ապահարզանով և անկասկածորեն դա կկրկնվի ապագա ամուսնությունների ժամանակ» (*Miracle of Forgiveness,* 270–71):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Առաջինը ես կոչ եմ անում Եկեղեցու բոլոր անդամներին ապրել, միշտ ավելի մեծ ուշադրություն դարձնելով Տեր Հիսուս Քրիստոսի կյանքին և օրինակին, հատկապես նրա ցույց տված սիրուն, հույսին և կարեկցանքին: Աղոթում եմ, որ մենք վերաբերվենք միմյանց ավելի շատ բարությամբ, ավելի շատ համբերությամբ, ավելի շատ քաղաքավարությամբ և ներողամտությամբ» (in Conference Report, հոկտ. 1994, 7; կամ *Ensign,* նոյ. 1994, 8):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Պետք է լինի երկկողմանի ճանաչում ինչպես անուսնու, այնպես էլ կնոջ կողմից ամուսնության լրջության և սրբազանության և դրա ետևում Աստծո կողմից տրված նախագծի վերաբերյալ:

Պետք է լինի հոժարակամություն՝ անտեսելու փոքրիկ հանցանքները, ներելու, իսկ հետո մոռանալու» (in Conference Report, ապր. 1991, 97; կամ *Ensign,* մայիս 1991, 74):

«Հավերժական զգոնությունը հավերժական զարգացման գինն է: Երբեմն կարող ենք սխալվել: Ես շնորհակալ եմ Տիրոջը ապաշխարության մեծ սկզբունքի և ներման համար: Երբ մենք ձախողվում ենք, երբ սխալ ենք գործում, կա մեզ ուղղված Տիրոջ խոսքը, որ նա կների մեր մեղքերը և դրանք այլևս չի հիշի մեր դեմ: Բայց ինչ որ ձևով մենք հակված ենք ինքներս մեզ հիշեցնելու դրանց մասին» (in Conference Report, հոկտ. 1994, 64–65; կամ *Ensign,* նոյ. 1994, 48):

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

«Վերջերս ես կարդացի մի տարեց մարդու մասին, որն իր եղբոր թաղման ժամանակ, որի հետ միասին ապրել էր վաղ երիտասարդությունից սկսած մի փոքրիկ մեկ սենյականոց խրճիթում՝ Կանիստեոյի մոտակայքում, Նյու Յորք, պատմեց, որ մի վեճից հետո նրանք բաժանել էին սենյակը կավճե գծով երկու մասի և ոչ մի անգամ չէին անցել այդ գծից, ոչ էլ խոսել մի բառ միմյանց հետ այդ օրվանից՝ վաթսուներկու տարվա ընթացքում: Ինչպիսի մարդկային ողբերգություն՝ և այդ բոլորը ողորմածության և ներման բացակայության պատճառով» (in Conference Report, ապր. 1995, 77; կամ *Ensign,* մայիս 1995, 59):

Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

Ինչպիսի փառահեղ աշխարհ կլիներ սա, եթե մենք ձգտեինք խաղաղության, նախաձեռնություն հանդես բերելով տարաձայնությունները կարգավորելիս, եթե մենք կարողանայինք ներել և մոռանալ ողջ մեր սրտով, եթե կարողանայինք մաքրել մեր իսկ հոգիները մեղքից, մեղադրանքներից, դառնությունից և հանցանքից նախքան ուրիշների վրա քար գցելը, եթե ներեինք բոլոր իրական կամ մտացածին վիրավորանքները մեր իսկ մեղքերի համար ներում խնդրելուց առաջ, եթե վճարեինք մեր իսկ պարտքերը, մեծ թե փոքր, նախքան մեր պարտապաններին նեղելը, եթե հասցնեինք մաքրել մեր իսկ աչքերը կուրացնող գերաններից նախքան մենք նրանց շյուղը կնկատեինք ուրիշների աչքում: Ամուսնալուծությունները կկրճատվեին, հասնելով նվազագույնի, դատարանները կազատվեին զզվելի սովորական դարձած արարողակարգից, ընտանեկան կյանքը կլիներ երկնային» (in Conference Report, Oct. 1949, 133):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Ո՞րն է այն անձանց գլխավոր հատկանիշը, ովքեր ունեն ընդամենը հինգ հաց և երկու ձուկ: Ի՞նչն է հնարավոր դարձնում նրանց համար Տիրոջ հպման ներքո, ծառայել, բարձրացնել և օրհնել, որպեսզի նրանք բարու համար հպվեն հարյուրավորների և նույնիսկ հազարավորների կյանքերին: Մի ողջ կյանքի ժամանակահատվածում, շփվելով տղամարդկանց և կանանց գործերի հետ, հավատում եմ, որ դա անձնական եսը և հպարտությունը հաղթահարելու ունակությունն է, երկուսն էլ թշնամիներ են Աստծո Հոգու լիակատար վայելելու և նրա առջև խոնարհաբար քայլելու համար: Եսը խանգարում է ամուսիններին և կանանց միմյանցից ներում խնդրել: Այն խանգարում է վայելել բարձրագույն սիրո լիակատար քաղցրությունը: Եսը հաճախ է խանգարում ծնողներին և երեխաներին միմյանց լիովին հասկանալուց: Եսը ընդարձակում է ինքնակարևորության և արժեքավորության մեր զգացումները: Այն կուրացնում է մեզ իրականության հանդեպ: Հպարտությունը ետ է պահում մեզ Տիրոջը մեր մեղքերը և թերությունները խոստովանելուց և մեր ապաշխարությունը գործելուց» (in Conference Report, ապր. 1994, 4–5; կամ *Ensign,* մայիս 1994, 6):

Երեց Ռոբերտ Դ. Հեյլզ

«Ես պետք է ներում խնդրեմ Երկնային Հորից այն բաների համար, որ ես արել եմ, որոնք կատարյալից հեռու են, և խնդրել ներում բոլորից, ում ես գուցե վիրավորել եմ գիտակցաբար կամ անգիտակցաբար, իմ անհատականության կամ ոճի պատճառով» (in Conference Report, ապր. 1994, 105; կամ *Ensign,* մայիս 1994, 78):

Երեց Ռոբերտ Լ. Սիմփսոն

Յուրաքանչյուր զույգ, լինի առաջին, թե քսանմեկերորդ տարվա ամուսնության մեջ, պետք է հայտնագործի օրվա վերջում նախքան քնելը զրուցելու կարևորությունը՝ հրաշալի ժամանակ վերագնահատում կատարելու, խոսելու վաղվա մասին: Եվ ամենակարևորը, դա մի պահ է, երբ սերը և գնահատանքը միմյանց հանդեպ կարելի է վերահաստատել: Եվս մեկ օրվա վերջը նաև գերազանց պահ է ասելու. «Սիրելիս, ցավում եմ այսօրվա պատահածի համար: Խնդրում եմ, ներիր ինձ» (in Conference Report, ապր. 1982, 30; կամ *Ensign,* մայիս 1982, 21):

ՆԵՐՈՒՄ՝ ՍԻՐՈ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՁԵՎ

Երեց Մարիոն Դ. Հանքս

Տասներկու Առաքյալների Քվորումի օգնական

In Conference Report, հոկտ. 1973, 14–15, 17; կամ

Ensign, հունվար 1974, 20, 22

Ներման դաս

Այսօր ես կկամենայի խոսել մի դասի մասին, որը նա [Տերը] ուսուցանեց մեզ և որը դուք և ես պետք է սովորենք, եթե կամենում ենք արժանի լինել նրա ընկերությանը:

Քրիստոսի սերն այնքան անբիծ էր, որ Նա տվեց իր կյանքը մեզ համար. «Ոչ ոք նորանից աւելի մեծ սէր չունի, որ մէկն իր անձը դնէ իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ.13): Բայց կար մեկ այլ պարգև, որ Նա շնորհեց, մինչ գտնվում էր խաչի վրա, մի պարգև, որը հետագայում սահմանեց Նրա մեծ սիրո կարևորությունը. Նա ներեց և խնդրեց իր Հորը ներել նրանց, ովքեր հալածեցին և խաչեցին իրեն:

Ներման այս ակտը արդյոք ավելի քիչ դժվա՞ր էր, քան իր մահկանացու կյանքը զոհաբերելը: Միթե՞ այն ավելի փոքր ստուգարք էր նրա սիրո: Ես չգիտեմ պատասխանը: Բայց ես զգացել եմ, որ Աստծո և մարդկանց հանդեպ սիրո մեծագույն ձևը ներումն է:

Նա անցավ ստուգարքը: Իսկ մենք ի՞նչ պիտի անենք: Հավանաբար մենք չենք կանչվի տալու մեր կյանքը մեր ընկերների կամ մեր հավատքի համար (չնայած հավանաբար ոմանցից կպահանջվի), բայց անտարակուսելի է, որ մեզանից յուրաքանչյուրն ունի և կունենա առիթ դիմակայելու մյուս մարտահրավերին: Ի՞նչ կանենք մենք այդ դեպքում: Ի՞նչ *ենք* անում մենք այդ դեպքում:

Ինչ որ մեկը գրել է. «… Սերը ետ պահելը Քրիստոսի ոգու ժխտումն է, ապացույց, որ մենք երբեք չենք իմացել Նրան, որ Նա զուր ապրեց մեզ համար: Դա նշանակում է, որ Նա ոչինչ չառաջարկեց մեր բոլոր մտքերում, որ Նա ոչինչ չոգեշնչեց մեր բոլորիս կյանքում, որ մենք մի ժամանակ երբեք բավականաչափ մոտիկ չենք եղել Նրան համակված լինելու աշխարհի համար Նրա կարեկցանքի հմայքով»:

Քրիստոսի օրինակը և իր ընկերներին ուղղված հրահանգները հստակ են: Նա ներեց և ասաց. «Սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին. բարի արէք ձեզ ատողներին. և աղոթք արէք ձեզ չարչարողների եւ ձեզ հալածողների համար» (Մատթ. Ե.44):

Արձագանք վիրավորանքներին

Ինչպիսի՞ն է մեր արձագանքը, երբ մեզ վիրավորում են, սխալ հասկանում, անազնվորեն կամ անբարյացակամորեն վերաբերվում, կամ մեր դեմ մեղանչում, մի խոսքի համար դարձնում վիրավորող, սուտ մեղադրանք հասցնում, անտեսում, ցավ պատճառում, մեր նվիրաբերություններն ուրանում նրանք, ում մենք սիրում ենք,: Մենք բարկանո՞ւմ ենք, արդյոք դառնանում և ոխ ենք պահում, թե լուծում գտնում խնդրին, եթե կարող ենք, ներում ենք և ազատում մեզ բեռից:

Մեր պատասխանի բնույթը այդպիսի իրադրություններում կարող է ճիշտ որոշել մեր կյանքի բնույթն ու որակն այստեղ և հավերժորեն: Մի քաջ ընկեր, որի հավատքը զտվել էր բազում չարչարանքներից, ասաց ինձ ընդամենը մի քանի ժամ առաջ. «Նվաստացումը գալիս է վեհացումից առաջ»:

Պահանջվում է ներում

Մեզանից պահանջվում է ներել: Մեր փրկությունը կախված է դրանից: 1831 թվականին տրված հայտնության մեջ Տերն ասում է.

«Իմ աշակերտները, հին օրերում, մեղադրանք էին փնտրում մեկմեկու դեմ և միմյանց չէին ներում իրենց սրտերում, և այս չարիքի համար նրանք չարչարվեցին և դառնորեն խրատվեցին:

Ուստի, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ներեք միմյանց, քանզի, ով իր եղբորը չի ներում նրա զանցանքները, դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ. Քանզի նրա մեջ ավելի մեծ մեղք է մնում:

Ես Տերս, կներեմ, ում որ կներեմ, բայց ձեզանից պահանջվում է ներել բոլոր մարդկանց» (ՎԿՈՒ 64. 8–10):

Այդ պատճառով Հիսուսը սովորեցրեց մեզ աղոթել. «Եվ թող մեզ մեր պարտքերը, ինչպէս մենք էլ թողում ենք մեր պարտականներին» (Տես Մատթ. Զ.12–13):

Միթե՞ չի թվում գերագույն լկտիություն խնդրել և սպասել, որ Աստված կների, երբ մենք չենք ներում՝ բացահատորեն և «մեր սրտերում»:

Տերը հաստատում է Մորմոնի Գրքում, որ մենք դատապարտություն ենք բերում մեզ վրա, եթե չենք ներում (Տես Մոսիա 26.30–31):

Բայց ոչ միայն մեր հավերժական փրկությունն է կախված մեր պատրաստակամությունից և մեր դեմ գործված անօրինությունները ներելու ունակությունից: Մեր ուրախությունն ու բավարարվածությունն այս կյանքում և մեր իսկական ազատությունը կախված են մեր այդպես անելուց: Երբ Քրիստոսը պատվիրեց մեզ շրջել մյուս այտը, քայլել

երկրորդ մղոնը, մեր շապիկը տալ նրան, ով վերցնում է մեր բաճկոնը, արդյո՞ք գողի համար էր մտահոգությունը, թե հանգստացնելու նրան, ով վշտացած էր այն կործանարար բեռից, որը վրդովմունքն ու զայրույթը են մեզ վրա դնում…

Աստված, օգնիր մեզ ազատվել վրդովմունքից և նեղացկոտությունից և հիմար հպարտությունից՝ սիրելու և ներելու, որպեսզի մենք կարողանանք ընկերներ լինել ինքներս մեզ հետ, ուրիշների հետ և Տիրոջ հետ:

«Ինչպես Քրիստոսը ձեզ ներեց , այնպես էլ դուք» (Կողոսացիս Գ.13):

Հիսուս Քրիստոսի անունով: Ամեն:

Փոխադարձ հարգանքի սկզբունքը

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Բավական չէ խուսափել շնությունից: Մենք պետք է ամուսնական փոխհարաբերությունը դարձնենք սրբազան, զոհաբերենք և աշխատենք պահպանել ջերմությունն ու հարգանքը, որը մենք վայելում էինք սիրատածման ժամանակ: Աստված նախատեսել է, որ ամուսնությունը լինի հավերժական, կնքված քահանայության զորությամբ, որպեսզի տևի գերեզմանից այն կողմ: Սիրատածման և բարության ամենօրյա քայլերը, որոնք կատարվում են բարխղճորեն և սիրով, մասն են կազմում նրա, ինչ Տերն է ակնկալում» (in Conference Report, Oct. 1978, 7; կամ *Ensign,* Nov. 1978, 6):

Մենք պետք է ամուսնական հարաբերությունը դարձնենք սրբազան, զոհաբերենք և աշխատենք պահպանել ջերմությունն ու հարգանքը, որը մենք վայելում էինք սիրատածման ժամանակ:

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Որևէ մարդ, որը վիրավորում է կամ նվաստացնում իր կնոջը ֆիզիկապես կամ հոգեպես, հանցավոր է դառնաղետ մեղքում և կարիք ունի անկեղծ և լուրջ ապաշխարության: Տարաձայնությունները պետք է հարթվեն սիրով և բարությամբ փոխադարձ համաձայնության ոգով: Տղամարդը պետք է միշտ խոսի իր կնոջ հետ սիրով և բարությամբ, վերաբերվելով նրան մեծագույն հարգանքով: Ամուսնությունը նման է քնքուշ ծաղկի, եղբայրներ, և պետք է սնուցվի անընդհատ սիրո և քնքշանքի արտահայտություններով» (in Conference Report, հոկտ. 1994, 68; կամ *Ensign,* նոյ. 1994, 51):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Որքան գեղեցիկ է երիտասարդ տղամարդու և երիտասարդ կնոջ ամուսնությունը, ովքեր սկսում են իրենց կյանքը, միասին ծնկի իջնելով զոհասեղանի կողքին Տիրոջ տանը, խոստանալով իրենց սերը և հավատարմությունը մեկ մեկու հանդեպ ժամանակի և ողջ հավերժության համար: Երբ երեխաներ են հայտնվում այդ տանը, նրանք դաստիարակվում են և խնամվում, սիրվում և օրհնվում այն զգացումով, որ իրենց հայրը սիրում է իրենց մորը: Այդ միջավայրում նրանք գտնում են խաղաղություն, ուժ և ապահովություն: Նայելով իրենց հորը, նրանք զարգացնում են հարգանք կանանց հանդեպ: Նրանք սովորեցվում են ինքնավերահսկողություն և ինքնակարգապահություն, որը բերում է ուժ խուսափելու հետագա ողբերգությունից» (in Conference Report, հոկտ. 1991, 73; կամ *Ensign,* նոյ. 1991, 52):

«Յուրաքանչյուր ամուսնություն երբեմն ենթակա է փոթորկոտ եղանակի: Բայց համբերությամբ, փոխադարձ հարգանքով և համբերատարության ոգով, մենք կարող ենք դիմանալ այդ փոթորիկներին: Որտեղ սխալներ են գործվել, կարող է լինել ներողություն, ապաշխարություն և ներում: Բայց երկու կողմերից էլ պետք է լինի այդ անելու պատրաստակամությունը» (“This I Believe,” 80):

Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ

«Չկա մի մեծ կամ կախարդական երաժշտություն, որն անընդհատ առաջացնի մեծ սիրո ներդաշնակություն: Ամենակատարյալ երաժշտությունը երկու ձայների միաձուլումն է մեկ հոգևոր մեներգի մեջ: Ամուսնությունը Աստծո կողմից տրված միջոցն է մարդկային կարիքներից մեծագույնի բավարարման համար, որը հիմնված է փոխադարձ հարգանքի, հասունության, անեսասիրության, օրինավորության, պարտավորության և ազնվության վրա: Ամուսնության և ծնող լինելու երջանկությունը կարող է հազար անգամ գերազանցել որևէ այլ երջանկության» (in Conference Report, հոկտ. 1977, 14; կամ *Ensign,* նոյ. 1977, 11):

Երեց Գորդոն Բ. Հինքլի

«Ընկերակցությունը ամուսնության մեջ միտում ունի դառնալ սովորական և նույնիսկ ձանձրալի: Ես չգիտեմ ավելի լավ եղանակ պահելու այն բարձր և ոգեշնչող մակարդակի վրա, քան որ մարդ երբեմն մտածի այն փաստի մասին, որ օգնականը, որը կանգնած է իր կողքին, Աստծո դուստրն է, որը Նրա հետ զբաղված է մեծ ստեղծագործական գործընթացի մեջ՝ իրականացնելով Նրա հավերժական նպատակները: Ես չգիտեմ ավելի արդյունավետ մի ուղի կնոջ համար միշտ փայլուն պահելու իր ամուսնու հանդեպ սերը, քան փնտրելու և շեշտելու այն աստվածային հատկանիշները, որոնք անքակտելի մասն են հանդիսանում մեր Հոր յուրաքանչյուր որդու և որոնք կարող են արթնացվել, երբ կա հարգանք և հիացմունք և քաջալերանք: Այդպիսի քայլերի հենց գործընթացը կմշակի անընդհատ

պարգևատրող գնահատանք միմյանց հանդեպ» (in Conference Report, ապր. 1971, 82; կամ *Ensign,* հունիս 1971, 71–72):

Երեց Լ.Թոմ Փերի

«Ադամն իմացավ, որ ամուսնական կապերն ավելի ուժեղ են, քան որևէ այլ ընտանեկան կապ: Ամուսնական սրբազան կապերը առաջացնում են միասնություն, հավատարմություն, հարգանք և փոխադարձ աջակցություն» (in Conference Report, ապր. 1995, 97; կամ *Ensign,* մայիս 1995, 72):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Հարաբերությունները և դրանց ելքը կարծես թե կառավարվում են սկզբունքներով, որոնք անփոփոխելի են և չեն կարող վերացվել… Չկա ոչ մի ուղի միջանձնական փոխհարաբերությունների վրա անազնվության, ինքնակարգապահության բացակայության, ուրիշների իրավունքների հանդեպ հարգանքի բացակայության հետևանքները նվազեցնելու համար… և ոչ մեկը … չի կարող փոխել այս փաստը…(*Journal of Marriage and Family,* February 1971, p. 46)» (*That My Family Should Partake,* 15):

Երեց Մերիլ Ջ. Բեյթման

«Երբ տղամարդը հասկանում է, թե որքան փառահեղ է կինը, նա նրան այլ կերպ է վերաբերվում: Երբ կինը հասկանում է, որ տղամարդն ունի աստվածության սերմերը իր ներսում, նա հարգում է նրան ոչ թե միայն նրա ով լինելու համար, այլ նրա համար, թե նա ով կարող է դառնալ: Աստվածային էության ըմբռնումը թույլ է տալիս յուրաքանչյուր մարդու հարգանք ունենալ մյուսի հանդեպ: Հավերժական հեռանկարը տղամարդու և կնոջ մեջ ցանկություն է առաջացնում սովորելու և կիսվելու միմյանց հետ» (“The Eternal Family,” 113):

Կարեկցանքի սկզբունքը

Կարեկցանքի հայերեն հոմանիշները

Ցավակցություն, վշտակցություն, գութ, խիղճ, խղճահարություն, ողորմություն, ողորմածություն, գթասրտություն, բարեգթություն, գորովագթություն, սրտառուչություն

Կարեկցանքի հայերեն հականիշները

Խստություն, կոպտություն, դաժանություն, կոշտություն, թշնամություն, չարություն, դառնություն, ատելություն, քեն, ոխ, վիրավորանք

Կարեկցանքի որոշ իմաստներ, որոնք օգտագործվել են սուրբ գրություններում

1. *Chamal* {khaw-mal’} Եբրայերեն՝ բայ: Հնարավոր սահմանումներ՝ (Qal)խնայել, խղճալ, կարեկցանք ունենալ: Օրինակ՝ Ելից Բ.6
2. *Racham* {raw-kham’}Եբրայերեն՝ բայ: Հնարավոր սահմանումներ՝ սիրել, ողորմություն ունենալ, գթառատ լինել, քնքուշ սեր ունենալ, գթություն ունենալ: Օրինակ՝ Երկրորդ Օրինաց ԺԳ.17:
3. *Splagchnizomai* {splangkh-nid’-zom-ahee} Հունարեն՝ բայ: Հնարավոր սահմանումներ՝ աղիները գալարվել, ուստի գթալ, գթություն ունենալ (քանզի աղիները համարվում էր սիրո և խղճահարության կենտրոնը): Օրինակ՝ Մատթեոս Թ.36, Մարկոս Ա.41:
4. *Eleeo* {el-eh-eh’-o}Հունարեն՝ բայ: Հնարավոր սահմանումներ՝ ողորմություն ունենալ, օգնել մեկին, որը չարչարված է կամ օգնություն է փնտրում, օգնություն ցույց տալ թշվառին: Օրինակ՝ Մարկոս Ե.19:
5. *Metriopatheo* {met-ree-op-ath-eh’-o} Հունարեն՝ բայ: Հնարավոր սահմանումներ՝ ազդվել չափավորապես կամ պատշաճ չափով, պահպանել չափավորություն կրքերում, հատկապես զայրույթի կամ վշտի ժամանակ, ուստի մեկը, որը անհարկի չի անհանգստանում ուրիշների սխալներից, հանցանքներից, մեղքերից, այլ դրանք հանդարտորեն է տանում: Օրինակ՝ Եբրայեցիս Ե.2:
6. *Sumpatheo* {soom-path-eh’-o}Հունարեն՝ բայ: Հնարավոր սահմանումներ՝ (ա) ազդվել նույն զգացումով ինչ որ մեկ ուրիշը, մասնակից կամ կողմնակից լինել (բ) կարեկցանք զգալ կամ ունենալ մեկի հանդեպ: Օրինակ՝ Եբրայեցիս Ժ.34 (տես հունարեն և եբրայերեն լեքսիկոնները):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ինչպիսի աստվածանման հատկանիշ է ողորմածությունը: Այն չի կարելի օրենքով հրատարակել: Այն պետք է սրտից գա: Այն պետք է առաջանա ներսից: Դա այն օժտման մասն է կազմում, որը մեզանից յուրաքանչյուրը ստանում է որպես Աստծո որդի կամ դուստր և որպես աստվածային ծննդյան իրավունքի ճաշակողներ: Ես աղերսում եմ, որ մենք բոլորս ջանք գործադրենք, որպեսզի ավելի մեծ դրսևորում և մեծածավալ լայնություն ձեռք բերի այս բնազդը, որը գտնվում է մեր մեջ…

«Աղերսում եմ կարեկցանքի ավելի ուժեղ ոգու համար մեր բոլոր հարաբերություններում, ողորմածության ավելի զորավոր տարրի համար, քանզի հաստատ է խոստումը, որ եթե մենք ողորմած ենք, մենք ձեռք կբերենք ողորմածություն…

Ողորմածությունը Հիսուս Քրիստոսի ավետարանի հենց էությունն է: Այն աստիճանը, որին մեզանից յուրաքանչյուրը կարողանում է հասցնել այն, դառնում է մեր աշակերտության իրական արտահայտությունը Նրա ներքո, ով մեր Տերն է՝ Վարդապետը:

Հիշեցնում եմ ձեզ, որ Նա է, որ ասել է. «Ով որ ապտակ տայ քո աջ երեսին, միւսն էլ նորան դարձրու» (Մատթեոս Ե.39):

Նա է, որ ասել է. «Եվ ով որ ուզէ քեզ հետ դատ վարել եւ քո շապիկն առնել, քո բաճկոնն էլ թող նորա մոտ» (Ե.40):

Նա է, որ ասել է. «Եվ ով որ քեզ պաակ բռնած մէկ մղոն քշէ, նորա հետ երկուսը գնա» (Ե.41):

Նա է, որ ասել է. «Քեզանից բան ուզողին տուր, քեզանից փոխ առնել կամեցողից երես մի դարձնիր» (Ե.42):

Նա է, որ ասել է մեղքի մեջ բռնված կնոջը.

«Ո՞ւր են քեզ ամբաստանողները. Ոչ ով քեզ չդատապարտե՞ց….

Ես էլ չեմ քեզ դատապարտում, գնա եւ այսուհետեւ մեղք մի գործիր» (Հովհ. Ը. 10–11):

Նա էր որ, երբ գամված էր խաչին սոսկալի հոգևարքի մեջ, գոչեց. «Հայր, թողիր դորանց. որովհետեւ չգիտեն թէ ինչ են անում» (Ղուկաս ԻԳ.34):

Նա հավիտենական Հոր Որդին, ողորմածության կատարյալ օրինակ էր: Նրա ծառայությունը կարեկցանք էր՝ ուղղված աղքատին, հիվանդին, ճնշվածին, անարդարության զոհերին և մարդու հանդեպ մարդու անմարդասիրությանը: Խաչի վրա Նրա զոհաբերությունը հանուն ողջ մարդկության ողորմածության մի անզուգական ակտ էր:

Ինչպիսի մեծ բան է ողորմածությունը: Շատ դեպքերում այն լուռ է և ոչ սնապարծ: Այն երբեք չի թմբկահարվում: Այն հակապատկերն է վրիժառության և ատելության, ագահության և վիրավորական եսասիրության ….

Եվ սա բերում է ինձ մեկ այլ տարածք, որտեղ այնպիսի մեծ կարիք կա այն ողորմածության համար, որը խոսում է համբերատարության, բարության, մեղմության, կարեկցանքի մասին: Ես խոսում եմ մարդկանց օջախների մասին:

Յուրաքանչյուր երեխա, մի քանի հավանական բացառությամբ, տան արդյունք է, լինի այն լավ, վատ, թե անտարբեր: Երբ երեխաները մեծանում են, տարիների ընթացքում, նրանց կյանքը մեծ մասամբ դառնում է ընտանեկան ուսուցման ազդեցության տարածում և արտացոլում: Եթե կա կոպտություն, վիրավորանք, անզուսպ բարկություն, անհավատարմություն, պտուղները կլինեն որոշակի և նկատելի, և ամենայն հավանականությամբ դրանք կկրկնվեն շարունակվող սերնդում: Եթե մյուս կողմից կա համբերատարություն, ներողամտություն, հարգանք, ուշադրություն, բարություն, ողորմություն և կարեկցանք, պտուղները կրկին նկատելի կլինեն և դրանք կլինեն հավերժորեն պարգևատրող: Դրանք կլինեն դրական, քաղցր և սքանչելի: Եվ երբ ողորմածություն է տրվում և ուսուցանվում ծնողների կողմից, այն կկրկնվի հաջորդ սերնդի կյանքերում և գործերում:

Ես խոսում եմ հայրերի և մայրերի հետ ամենուրեք, մեր տներում կոպտությունը մի կողմ թողնելու, մեր բարկությունը սանձահարելու, մեր ձայները ցածրացնելու և ողորմածությամբ և սիրով ու հարգանքով մեկ մեկու հանդեպ վերաբերվելու խնդրանքով (in Conference Report, Apr. 1990, 86–89; կամ *Ensign,* May 1990, 68–70):

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

«Ինչպիսի զորություն, ինչպիսի քնքշություն, ինչպիսի կարեկցանք ցույց տվեց մեր Վարդապետը և Օրինակը: Մենք ևս կարող ենք օրինել, եթե միայն կամենանք հետևել Նրա ազնիվ օրինակին: Հնարավորություններն ամենուրեք են: Կարիք կա թշվառ վիճակը տեսնող աչքերի և կոտրված սրտի լուռ աղաչանքները լսող ականջների: Այո, և կարեկցանքով լեցուն հոգու, որպեսզի մենք կարողանանք հաղորդակցվել ոչ միայն աչք աչքի կամ ձայն ականջին, Փրկչի այդ մոգական ոճով, այսինքն սիրտ սրտի» (in Conference Report, ապր. 1991, 80; կամ *Ensign,* մայիս 1991, 61):

Աշխատանքի սկզբունքը

Ծննդոց Գ.17–19

«Անիծեալ լինի երկիրը քո պատճառովը, նեղութիւնով ուտես նորանից կեանքիդ բոլոր օրերումը:

Եւ նա փուշ ու տատասկ բուսցնէ քեզ համար, և դաշտի խոտն ուտես:

Երեսիդ քրտինքովը հաց ուտես, մինչեւ որ ետ դառնաս դէպիի երկիրը, որովհետեւ նորանից առնուեցար. Նորա համար որ հող էիր դու, եւ դէպի հողը դառնաս»:

2 Նեփի 5.17

«Եվ եղավ այնպես, որ ես Նեփիս, սովորեցրի իմ ժողովրդին աշխատասեր լինել և աշխատել իրենց ձեռքերով»:

Մոսիա 10.4–5

«Եվ ես կարգադրեցի, որ տղամարդիկ մշակեին հողը և ամեն ձևի հատիկ և ամեն ձևի, ամեն տեսակի միրգ աճեցնեին:

Եվ ես կարգադրեցի, որ կանայք մանեն, և տքնեն, և աշխատեն, և գործեն ամեն ձևի նուրբ քաթան, այո, և ամեն տեսակի գործվածք, որ մենք կարողանայինք ծածկել մեր մերկությունը. և այսպիսով, մենք բարգացաճեցինք երկրում, այսպիսով քսաներկու տարիների ընթացքում երկրում անընդհատ խաղաղություն ունեցանք»:

Վարդապետություն և Ուխտեր 42.42

«Ծույլ մի եղիր, քանզի նա, ով ծույլ է, չպետք է ուտի աշխատողի հացը, ոչ էլ հագնի նրա հանդերձները»:

Վարդապետություն և Ուխտեր 68.30–31

«Ծույլը հիշողության մեջ պիտի պահվի Տիրոջ առաջ: Արդ, ես Տերս, չեմ հավանում Սիոնի բնակիչներին, քանի որ նրանց մեջ կան ծույլեր»:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Արդյունավետ աշխատանքին երկնքի տակ ոչինչ չի կարող փոխարինել: Դա երազանքներն իրականություն դարձնելու գործընթացն է: Դա պարապ մտապատկերները դինամիկ նվաճումներ դարձնելու գործընթացն է:

Մեզանից մեծ մասին հատուկ է ծուլությունը: Մենք ավելի կնախընտրեինք խաղալ, քան աշխատել: Մի քիչ խաղալը կամ մի քիչ պարապ ման գալը լավ է: Բայց աշխատանքն է, որ տարբերություն է մտցնում տղամարդու կամ կնոջ կյանքում: Աշխատանքն է, որ ապահովում է մեր ուտելու սնունդը, մեր հագնելու հագուստը, տները, որտեղ մենք ապրում ենք: Մենք չենք կարող մերժել աշխատանքի անհրաժեշտությունը՝ հմուտ ձեռքերով և կրթված մտքերով, եթե մենք պետք է աճենք և ծաղկենք անհատապես և հավաքականապես» (“I Believe,” *New Era*, Sept. 1996, 4):

Երեց Մարվին Ջ. Էշթոն

«Երեսիդ քրտինքովը հաց ուտես» խորհուրդը ուժը չի կորցրել: Այն կարևոր է անձնական բարօրության համար: Ամենամեծ աջակցություններից մեկը, որ ծնողները կարող են ցույց տալ իրենց երեխաներին, նրանց աշխատել սովորեցնելն է: Շատ բան է ասվել տարիների ընթացքում՝ երեխաների և ամսեկան գումարների մասին և կարծիքներն ու հանձնարարականները մեծապես տարբերվում են: Ես «հին դպրոցից» եմ: Ես հավատում եմ , որ երեխաները պետք է իրենց կարիքների համար իրենք վաստակեն փող՝ ծառայության և ամենօրյա համապատասխան գործերի միջոցով: Երեխաների որոշ ֆինանսական պարգևատրությունները կարող են նաև կապված լինել կրթական ջանքերի և այլ արժանավոր նպատակների հետ: Կարծում եմ երեխայի բախտը չի բերել, եթե նա մեծանում է մի ընտանիքում, որտեղ երեխայի մտքում սերմ է ցանվել, որ կա ընտանեկան փողի ծառ, որը շաբաթը մեկ կամ ամիսը մեկ ինքնաբերաբար «կանաչ թղթադրամներ» է թափում» (*One for the Money*, 8):

Նրանք, ովքեր կառուցում են երջանիկ, ապահով, հաջողակ ամուսնություններ, վճարում են գինն այդ անելու համար:

Երեց Լ. Թոմ Փերի

«Երեխաներին ազնիվ աշխատանքի ուրախությունը սովորեցնելը բոլոր մեծագույն պարգևներից մեկն է, որը դուք կարող եք շնորհել նրանց: Ես համոզված եմ, որ այդքան շատ զույգերի բաժանման պատճառներից մեկն այսօր ծնողների կողմից իրենց որդիներին սեփական ընտանիքներն ապահովելու և հոգ տանելու և այս պատասխանատվությունից եկող մարտակոչը վայելել ուսուցանելու և վարժեցնելու ձախողման պատճառով է: Մեզանից շատերը թերացել են նաև իրենց դուստրերի մեջ տնարարության միջոցով գեղեցիկը ներարկելու և կարգ ու կանոնը իրենց տուն բերելու ցանկություն զարագացնելու մեջ» (in Conference Report, հոկտ. 1986, 78, կամ Ensign, նոյ. 1986, 62):

«Ամուսնությունը աստվածային հաստատություն է, որը կարգվել է Աստծո կողմից: Տանը հաջողության հասնելը երկնային մարտահրավեր է, ոչ մի այլ հաջողություն չի կարող համակշռել դրան: Այնուամենայնիվ, մինչև տղամարդը և կինը չսովորեն միասին աշխատել որպես մեկ, ամուսնությունը նույնպես կարող է լինել դժոխային փորձություն: Այսօր խիստ շատ դժբախտ ամուսնություններ կան աշխարհում: Կան խիստ շատ ամուսնություններ, որոնք չեն դիմանում՝ չհասունացած ավարտվելով ամուսնալուծությամբ» (in Conference Report, ապր. 1995, 96; կամ Ensign, մայիս 1995, 72):

Երեց Դեյվիդ Բ. Հեյթ

«Մեր մտահոգությունը միայն նրանում չէ, որ լրատվություն ստեղծողները և գրողները չեն պատկերում երջանիկ, պտղաբեր ամուսնություն, այլ որ շատ ամուսնացած զույգեր բավականաչափ լուրջ չեն վերաբերվում իրենց ամուսնություններին՝ դրանց վրա աշխատելու համար, դրանք պաշտպանելու համար, դրանք դաստիարակելու համար, մշակելու դրանք օրըստօրե, շաբաթ առ շաբաթ, տարիների ընթացքում, քառորդ դարվա ընթացքում, կես դարվա ընթացքում, հավերժ» (in Conference Report, Apr. 1984, 16; կամ *Ensign*, May 1984, 13):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Երեխաներին կարգավարժելու և պատասխանատու լինել սովորեցնելու հիմնական մասը նրանց աշխատել սովորեցնելու մեջ է: Երբ մեծանում ենք, մեզանից շատերը նմանվում են այն մարդուն, որն ասում էր. «Ես սիրում եմ

աշխատանքը, դա հրապուրում է ինձ: Ես կարող եմ նստել և ժամերով նայել դրան» (Jerome Klapka Jerome, in *The International Dictionary of Thoughts,* comp. John P. Bradley, Leo F. Daniels, and Thomas C. Jones [Chicago: J. G. Ferguson Publishing Co., 1969], p. 782): Բացի այդ, աշխատանքի սկզբունքի լավագույն ուսուցիչները ծնողներն իրենք են: Ինձ համար աշխատանքը դարձավ ուրախություն, երբ առաջին անգամ աշխատեցի հորս, պապիկիս, քեռիներիս և եղբայրներիս կողքին: Ես համոզված եմ, որ հաճախ ավելի շատ խանգարում էի, քան օգնում, բայց հիշողությունները քաղցր են և սովորած դասերը՝ արժեքավոր: Երեխաները պետք է սովորեն պատասխանատվություն և անկախություն: Արդյոք ծնողները հատկացնում են ժամանակ անձնապես ցույց տալու, ապացուցելու ու բացատրելու, որպեսզի երեխաները կարողանան, ինչպես Լեքին է սովորեցրել, «գործել ինքնուրույն և … չներգործվել» (2 Նեփի 2.26):

«Լյութեր Բարբանքը, աշխարհի մեծագույն այգեգործներից մեկը, ասել է. «Եթե մենք ավելի շատ ուշադրություն դարձրած չլինեինք մեր բույսերին, քան մեր երեխաներին ենք պարտավոր դարձնել, մենք այժմ կապրեինք մոլախոտերի ջունգլիում» (in *Elbert Hubbard's Scrap Book* [New York: Wm. H. Wise and Co., 1923], p. 227)» (in Conference Report, հոկտ. 1990, 42; կամ *Ensign,* նոյ. 1990, 34):

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

«Որոշ մարդիկ, ովքեր ապրել են Մեծ Ճգնաժամի և դրան հաջորդող ժամանակահատվածում, երբ կառավարությունը ժողովրդին դրամական նվիրատվություններ էր կատարում, սկսեցին մտածել, որ աշխարհը պարտավոր էր ապահովել իրենց ապրուստով: Այդ մթնոլորտում 1936 թվականին Առաջին Նախագահությունն ասաց. «Եկեղեցու նպատակն է օգնել ժողովրդին, որ իրենք օգնեն իրենց: Աշխատանքը պետք է վերստին գահ բարձրացնել, որպես մեր Եկեղեցու անդամների կյանքում կառավարող սկզբունք» (In Conference Report, հոկտ. 1936, էջ 3):

Աշխատանքի հանդեպ սերը պետք է վերստին գահ բարձրացնել մեր կյանքում: Ամեն ընտանիք պետք է աշխատանքի ծրագիր ունենա, որն ազդում է յուրաքանչյուր ընտանիքի անդամի վրա, որպեսզի այս հավերժական սկզբունքը արմատավորվի նրանց կյանքում (in Conference Report, Apr. 1981, 116; կամ *Ensign,* May 1981, 85):

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին

«Ամուսիններ, համբերատար եղեք ձեր կանանց հետ, և կանայք, համբերատար եղեք ձեր ամուսինների հետ: Մի սպասեք կատարելության: Գտեք համաձայնության ուղիներ բարձրացող տարաձայնությունները լուծելու համար» (in Conference Report, ապր. 1987, 37, կամ *Ensign,* մայիս 1987, 32):

«Ծնողները պետք է աշխատանքային էթիկայի խորը սերմեր ցանեն իրենց երեխաների սրտերում և սովորույթներում: Քանի որ հասարակությունը հերթափոխվել է գյուղատնտեսականից դեպի քաղաքային կառուցվածքի, ջանասեր և ծանր աշխատանքի ուրախությունն ու անհրաժեշտությունը վերացել է: Եթե մեր երիտասարդ մարդիկ չեն սովորում աշխատել, երբ իրենց տներում են, նրանք հավանաբար հարկադրված կլինեն սովորել ավելի ուշ մի իրավիճակում, որտեղ դասը կարող է ցավոտ լինել» (in Conference Report, ապր. 1989, 9, կամ *Ensign,* մայիս 1989, 8):

Երեց Դին Լ. Լարսեն

«Ամուսնությունը հեշտ արկածախնդրություն չէ: Այն մեծամասամբ, մեկանգամյա «արա ինքդ» նախագիծ է՝ ամուսնու և կնոջ համար: Այսօր ես անընդհատ հանդիպում եմ այն պատկերացմանը, հատկապես երիտասարդների մեջ, որ կատարյալ ամուսնություններ են ստեղծվում, երբ ուղղակի երկու ճիշտ մարդիկ հանդիպում են միմյանց: Սա ճիշտ չէ: Ամուսնություններն ինքնաբերաբար չեն հաջողվում: Նրանք, ովքեր կառուցում են երջանիկ, ապահով, հաջող ամուսնություններ, վճարում են գինը՝ այդ անելու համար: Նրանք անդադար աշխատում են դրա վրա» (“Enriching Marriage,” Ensign, մարտ 1985, 20):

Քույր Բարբարա Բ. Սմիթ

«Հաշվետու լինելը աշխատանքի անհրաժեշտ պայման է: Պատասխանատվությունը կազմակերպվածություն է բերում ընտանիքի գործերում և կարգ ու կանոն ամուսնության մեջ: Պարտականությունների սահմանազատումը և հաշվետվության մեթոդի ծրագրավորումը նպաստում է ընտանիքի համերաշխությանը և նաև իմաստալի ուղի է անձնական կարգապահություն զարգացնելու համար» (in Conference Report, հոկտ. 1981, 119–20; կամ *Ensign,* նոյ. 1981, 84):

«ՈՒՍԴ ԴԵՄ ՏՈՒՐ ԱՆՎԻՆ»

Երեց Նիլ Ա. Մաքսվել

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, ապր. 1998, 48–51; կամ Ensign, մայիս1998, 37–39

(քահանայության նիստ)

Սովորել աշխատել, խոզեր աճեցնելով

Եղբայրներ, իմ Ահարոնյան Քահանայության տարիներին ես խոզապահ էի: Այդ անցած տարիներին, 4-H Club նախագծի միջոցով բազմացնելով Դյուրոք ազնվացեղ

խոզեր, ես սովորեցի աշխատանքի մասին: Որպես ապացույց, որ այն, ինչ տեղի ունեցավ, ուղղակի չափազանցված հիշողություն չէ, կարելի՞ է ես Երեց Նելսոնի օգնությամբ շատ համառոտ ցույց տամ մոտավորապես հարյուր ժապավեններով գործած այս ծածկոցը, որոնցով պարգևատրվել էի իմ խոզերի համար տարբեր տոնավաճառների ժամանակ մի քանի տարիների ընթացքում:

Վերևում՝ Երեց Նելսոնի ձեռքին մոտիկ, կա մի վարդագույն ժապավեն, որը շահել էի 60 տարի առաջ: Դա հենց այն առաջին ժապավենն է, որ երբևիցէ շահել էի: Կարծում եմ դատավորը լավ աչքով նայեց և խոզը իրականում այնքան էլ ընտիր չէր, բայց նա գիտեր, որ ես քաջալերանքի կարիք ունեի և ես ստացա չորրորդ մրցանակը: Կարմիր ժապավենները չեմպիոնների համար էին, որոնք ցուցադրվեցին հետագայում:

Ճնորհակալություն, Երեց Նելսոն

Եղբայրներ, ես սովորեցի տեղի մսի փաթեթավորման ֆաբրիկայում խոզի մսի գների տատանումներին հետևելու անհրաժեշտության դժվարին ուղու մասին: Շահույթի և կորուստների ուշադիր գրառումները պահվում էին իմ հաշվապահ հոր օգնությամբ: Ինչպես բոլոր բաներում ծնողներս այնքան պատրաստակամ էին օգնելու, որ ի վերջո իրենց չէին խնայում որոշ գործեր անելով, հատկապես անզուգական մայրս, որն այսօրվանից հաշված 95 տարի առաջ էր ծնվել: Նա ցույց էր տալիս ինձ ինչպես աշխատել և ինձ բավականաչափ սիրում էր ուղղելու համար:

Որպեսզի խոզերը ձեռք բերեի ցածր գնով, ես կանոնավորապես գնում էի դյուժիններով երեք օրվա հաց մի հացի փռից՝ հատը ընդամենը մեկ պեննիով: Բացի այդ, եթե ժամանակին տեղում էի լինում, տեղի պանրագործարանից, կարողանում էի *անվճար* ստանալ սերը քաշած մոտ 70 գալոն կաթ: Այժմ ես վճարում եմ գալոնը 2.5 դոլար՝ զվարճալի իրոնիա է, այնպես չէ՞: Այսպես խնայելով, ես կարողացա գնել անհրաժեշտ հացահատիկը խոզերի համար, այն փոքր կանխիկ գումարով, որն ունեի:

Լինում էին շատ դեպքեր, երբ հղի խոզը ծնում էր իր ձագերին կես գիշերից հետո: Այդ բոլորին հետևելու և դեռ ավելին անելու արդյունքում հոգնածությունը իրական խնդիր էր դառնում: Այնուամենայնիվ, այդ բոլորով հանդերձ. կար ձեռքբերման ինչ որ մի զգացում, ներառյալ մեր ընտանիքի ուտեստների մեջ ներդրումը: Իմ տարիքի երիտասարդ տղաներից շատերն էին կատարում նմանատիպ աշխատանք: Այդ ժամանակ, եղբայրներ, մենք բոլորս միասին աղքատ էինք և մենք չգիտեինք այդ մասին: Աշխատանքը պարգև էր: Այսօր, ոմանց համար ստանալն է պարգև:

Սակայն խոզեր աճեցնելն ուներ իրական հասարակական նվաստացնող կողմեր: Արդեն ամաչելով, ես հիշում եմ հստակորեն, թե ինչպես միջնակագ դպրոցի բարձր դասարանների տնօրենը մի անգամ մտավ իմ դասարանը և ասաց բարձրաձայն բոլորի առջև. «Նիլ, հենց նոր զանգահարեց մայրդ: Խոզերդ դրսում են»: Ես մի պահ ուզում էի մտնել նստարանի տակ, բայց փոխարենը վազեցի տուն՝ օգնելու խոզերին հավաքել:

Երախտագիտություն ծնողների համար, ովքեր սովորեցրել են աշխատել

Հայրս սիրում էր ինձ, բայց ինձ ճշգրտում էր: Նա նկատում էր, որ չնայած ես շատ էի աշխատում, իմ աշխատանքը հաճախ ուշադիր չէի անում: Կատարելությունն ինձ համար օտար էր: Մի ամառային օր ես որոշեցի գոհացնել հայրիկիս, դնելով մի քանի անհրաժեշտ ցանկապատի ցցեր, ամուր ամրացնելով և ճիշտ հավասար գծով շարելով: Ես քրտնաջան աշխատեցի ողջ այդ օրը և սպասումով նայում էի, թե երբ էր հայրս այդ արահետով տուն գալու: Երբ նա ժամանեց, ես անհամբեր հետևում էի, երբ նա ուշադրությամբ ստուգում էր ցանկապատի ցցերը, նույնիսկ հարթաչափով, նախքան կհամարեր, որ դրանք լիովին բավարար էին: Ապա եկավ նրա գովասանքը: Իմ ճակատի քրտինքը վաստակեց հայրիկիս գովասանքը, որն իր հերթին հալեցրեց սիրտս:

Խնդրում եմ ներեցեք այս ինքնակենսագրական հուշերի համար, որոնք ես օգտագործեցի, արտահայտելով իմ խորը շնորհակալությունը վաղ հասակում աշխատել սովորելու համար: Չնայած, եղբայրներ, ես իհարկե միշտ չէր որ «սիրտս երգով լի» էի ուսս անվին դեմ տալիս (*Hymns*, no. 252), բայց ես իսկապես սովորում էի ուսերի և անիվների մասին, որը հետագայում օգնեց ինձ կյանքում, երբ անիվները խոշորացան: Այսօր այլախոհ երիտասարդ լավ տղամարդիկ սխալմամբ մտածում են, որ իրենց ուսերը անվին դեմ տալը նույն բանն է, ինչ իրենց ձեռքերը ուղղություն տվող դեկին դնելը:

Աշխատանքի ավետարանը

Մեր Երկնային Հայրը նկարագրել է Իր զավակների համար Իր վիթխարի ծրագիրը, ասելով. «Ահա, սա է իմ *գործը* և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39, շեղագիրն ավելացված է): Մտածեք Տիրոջ օգտագործած *գործ* բառի կարևորության մասին: Այն, ինչ Նա անում է այնպիսի սիրով և փրկագնելով, այնուամենայնիվ աշխատանք է, նույնիսկ Նրա համար: Մենք նմանապես խոսում ենք «մեր փրկությունը գործելու մասին», «բերքահավաքի օրենքի մասին» և «ճակատի քրտինքի մասին» (տես Մովսես 5.1, տես Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց Դ.1): Սրանք դատարկ արտահայտություններ չեն: Ընդհակառակը դրանք ընդգծում են աշխատանքի կարևորությունը: Փաստորեն, եղբայրներ, աշխատանքը միշտ հոգևոր անհրաժեշտություն է, նույնիսկ, եթե ոմանց համար աշխատանքը տնտեսական անհրաժեշտություն չէ:

Այսպիսով, ես խոսում եմ ձեզ հետ՝ որպես լավ երիտասարդների, ներառյալ յոթ հրաշալի տղա թոռներիս հետ, որ լսում եք այսօր, որոնց շարքում են երկու միսիոներներ և երեք վերջերս ձեռնադրված սարկավագներ: Ես հիշեցնում եմ ձեզ, որ աշխատանքի ավետարանը «ավետարանի լրիվության մասն է կազմում»: Չնայած ցնծալից, միսիոներական աշխատանքը աշխատանք է: Չնայած ցնծալից, տաճարային աշխատանքը աշխատանք է: Մեր մի քանի հիացմունքի չարժանացած երիտասարդներ շատ լավ են աշխատում, բայց ավաղ մեծամասամբ փորձում են գոհացնել իրենց:

Աշխատանքի հավասարակշռումը պետք է համապատասխանեցնել

Դժբախտաբար, մեր այլախոհ լավ երիտասարդներից մի քանիսն անզուսպ են և գրեթե միշտ գտնում են ազատ ելք: Հպարտանալու բաներն ապահովված են, ներառյալ վառելիքով լցված և ապահովագրված ավտոմեքենաները՝ բոլորը վճարված ծնողների կողմից, ովքեր երբեմն լսում են մի քանի դատարկ քաղաքավարական և շնորհակալական խոսքեր:

Երիտասարդ տղամարդիկ, ձեր անհատական աշխատանքի խառնուրդը բնականաբար կտարբերվի, կախված ժամանակից և հանգամանքներից, որպես ժամեր, որոնք կանցկացնեք *տնային աշխատանքի* և *ընտանեկան աշխատանքի, Եկեղեցու աշխատանքի, կարճժամկետ աշխատանքի* և *ծառայողական նախագծերի աշխատանքային* ժամերի մեջ: Աշխատանքի յուրաքանչյուր ձևը կարող է կոփել ձեր տաղանդները: Այնուամենայնիվ հետևեք նախազգուշացնող լույսերին: Օրինակ, եթե դուք զբաղված եք ոչ լիաժամկետ աշխատանքով, արդյո՞ք ձեր ողջ աշխատանքը ծախսում եք ձեզ վրա: Տասանորդը վճարվո՞ւմ է: Որոշ մասն արդյո՞ք խնայվում է միսիայի համար: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը տվել է մեզ այս պարզ խորհուրդը. «Եթե [երիտասարդ տղամարդուն] թույլատրվում է ծախսել իր ողջ աշխատածը իր վրա, եսասիրության այդ ոգին կարող է շարունակել նրա հետ լինել մինչև իր մահը» (*Teachings of Spencer W. Kimball*, 560):

Դպրոցական *տնային աշխատանքը* իհարկե անհրաժեշտություն է, բայց արդյո՞ք մտավոր աշխատանքը ամբողջովին դուրս է մղում հոգևոր աշխատանքը: Ձեր միջին թվանշանը շատ կարևոր է, բայց ինչպիսի՞ն է ձեր ՄԹ-ն քրիստոնեական ծառայության համար:

Եկեղեցու աշխատանքը կատարելը կարող է զարգացնել կենսական ռեֆլեկսներ և աշխատանքի այս ձևի համար կարիքը երբեք չի սպառվում: Բայց մի՞թե դուք գնում եք լոկ թելադրանքների միջոցով:

Ընտանեկան աշխատանքը նույնպես կարևոր է, բայց մի՞թե այն սահմանափակվում է միայն ձեր սենյակը մաքուր պահելով և ձեր սեփական հագուստները տեղը դնելով:

Ինչպիսին էլ լինի աշխատանքի բնույթը, ամենածանր աշխատանքը, որ դուք և ես երբևէ կանենք, մեր եսասիրությունը մեր միջից հանելն է: Դա դժվար գործ է:

Անհրաժեշտ է համապատասխանեցնել աշխատանքի հավասարակշռումը, որովհետև աշխատանքի որոշ ձևեր միտում ունեն գերիշխելու մյուս ձևերի վրա, ինչպես օրինակ, երբ հայրերը հաճախ մինչև ուշ աշխատում են գրասենյակում: Մեր նախընտրած գործերը շատ քաջալերանքի կարիք չունեն, ճիշտ նվագախմբի դիրիժորներին Շտրաուսի նախազգուշացման Երեց Սպենսեր Քոնդիի պատմածի նման. «Երբեք քաջալերող շարժում չանեք դեպի փողային գործիքների կողմը, այլապես երբեք չեք լսի լարային գործիքներին»:

Հայրեր, աշխատեք ձեր որդիների հետ

Զգույշ եղեք, հայրեր, երբ դուք չափից ավելի եք կամենում, որ ձեր երեխաների գործերն ավելի լավ լինեն, քան դրանք ձեզ համար էին: Համենայն դեպս, անգիտակցաբար գործերն ավելի մի վատթարացրեք, հեռացնելով խելամիտ աշխատանքի պահանջները, որպես իրենց փորձառության մաս, դրանով զրկելով ձեր երեխաներին հենց այն բաներից, որոնք օգնեցին ձեզ դառնալ այն, ինչ դուք կաք:

Համաձայն ենք, որոշ տակտիկական իրավիճակներ փոխվել են: Երիտասարդ տղամարդկանցից շատերի համար չկան կթելու կովեր, կերակրելու խոզեր և այլն: Այո, այսօրվա որոշ աշխատանքներ կարող են թվալ արհեստական և հնարովի: Այնուամենայնիվ, երիտասարդներ, համբերատար եղեք ձեր ծնողների հետ, երբ նրանք փորձում են օգնել, ապահովելով ձեզ խելամիտ և իմաստալի աշխատանքով: Այդ կապակցությամբ, որքան օրհնված կլինենք մենք, եթե ժամանակ առ ժամանակ ավելի շատ որդիներ կարողանային իրենց հայրերի հետ կողք կողքի աշխատել: Հայրեր և որդիներ, եթե այդպիսի խմբավորում արդեն տեղի չի ունենում , հաջորդ երեք ամիսների ընթացքում ընտրեք ուղղակի մեկ ձգձգված ամենօրյա գործ՝ միասին անելու համար:

Տարբերվեք աշխատանքային ձեր էթիկայով

Երիտասարդներ, ես չգիտեմ, թե որոնք են ձեր անձնական շնորհները, բայց դուք ունեք դրանք: Խնդրում ենք, օգտագործեք այդ շնորհները և զարգացրեք ձեր տաղանդները՝ աղբարկղները դուրս հանելու, մարգագետինները հնձելու, փոցխով տերևները հավաքելու կամ այրի կանանց և տղամարդկանց կամ էլ հիվանդ հարևանի համար ձյունը մաքրելու հետ համատեղ:

Իմանալը, թե ինչպես աշխատել, կտա ձեզ առավելություն կյանքում և մեծ վարպետության հետ մեկտեղ՝ փորձառություն, որը հատուկ առավելություն է:

Եկեք բոլորս արագ լինենք և շռայլ մեր երիտասարդների կատարած աշխատանքը գովելիս, հատկապես, երբ նրանք դա լավ են կատարում:

Ամոր սերունդը կորոշի, թե Վերջին Օրերի Սրբերը արդյոք կշարունակեն հանրաճանաչ լինել իրենց աշխատանքի էթիկայի շնորհիվ: Շատ վաղուց Նախագահ Բրիգամ Յանգը խորհուրդ է տվել. «Ես ուզում եմ տեսնել մեր Երեցներին այնքան լի հավատարմությամբ, որ [նրանց աշխատանքը] նախընտրելի լինի … Եթե մենք ապրենք մեր կրոնով և եթե արժանի լինենք Վերջին Օրերի Սրբերի անվանը, … մենք կլինենք հենց այն մարդիկ, որոնց կարելի կլինի վստահել բոլոր այդ գործերը կատարյալ անվտանգությամբ, եթե այն հնարավոր չլինի [վստահել], դա կապացուցի, որ մենք չենք ապրում մեր կրոնով» (*Discourses of Brigham Young,* 232–33):

Ընտանիքները պետք է ավելի շատ ժամանակ անցկացնեն միասին աշխատելով և հանգստանալով:

Առանց քրտինք թափելու կրճատ ուղի

Երբ գա ժամանակը, երիտասարդներ, կատարեք ձեր կարիերայի ընտրությունը: Իմացեք, որ եթե մեկը նեյրովիրաբույժ է, անտառապահ, մեխանիկ, ֆերմեր թե ուսուցիչ, դա նախընտրության հարց է, ոչ թե սկզբունքի: Չնայած կարիերայի հետ կապված այդ ընտրությունները շատ կարևոր են, դա չէ ստեղծում ձեր կարիերայի իրական ուղին: Ճիշտ հակառակը եղբայրներ, դուք Աստծո ուղևորության մեջ գտնվող որդիներն եք, ովքեր հրավիրվել են բռնելու տուն տանող ճանապարհը: Այսպիսով, դագաղագործները կհայտնաբերեն, որ իրենց մասնագիտությունը միակը չէ, որ չի հնանում: Բայց ունակությունը և իմաստուն աշխատելը երբեք չի հնանում: Եվ ոչ էլ սովորելու ունակությունը: Մինչդեռ, իմ երիտասարդ եղբայրներ, ես չեմ տեսել առանց քրտնելու որևէ կարճ ուղի դեպի սելեստիալ արքայություն. մեզ այնտեղ տանելու համար չկա հեշտ շարժասանդուղք:

Հատուկ հոգիները ուղարկվում են կատարելու հատուկ գործեր

Այսպիսով, լինեք Ահարոնյան, թե Մելքիսեդեկյան Քահանայության կրողներ, ոչ մի անգամ երբևէ ավելի կարևոր չի եղել ձեզ համար իմանալը, թե *ով* եք դուք այսօրվա աշխարհում: Երկար, երկար ժամանակ ձեզանից յուրաքանչյուրը եղել է մի մեծ և շարունակվող դերակատարության մի մասը: Դուք փաստորեն Աստծո հետ էիք սկզբում (տես ՎԱՈՒ 93.29): Դուք գտնվում էիք մեծ, նախամահկանացու խորհրդում, երբ որպես հոգևոր որդիներ ուրախությունից բացականչեցիք Երկնային Հոր փրկության ծրագրի այս մահկանացու փորձառության հետագա հեռանկարի առթիվ:

Հետագա դերակատարությունը առջևում է հավատարիմների համար, ներառյալ մի օր, երբ ամեն ծունկ կծալվի և ամեն լեզու կխոստովանի, որ Հիսուսը Քրիստոսն է, և երբ բոլորը կընդունեն, որ Աստված Աստված է և որ Նա կատարյալ է Իր արդարադատությամբ և ողորմությամբ (տես Մոսիա 27.31, 16.1, Ալմա12.15): Նրանք, ովքեր սիրում են Տիրոջը, կժառանգեն Նրա սելեստիալ արքայությունը, որտեղ աչքը չի տեսել, ոչ էլ ականջն է լսել այնպիսի բաներ, ինչպիսիք Տերն է պատրաստել նրանց համար (տես Ա Կորնթացիս Բ.9): Հիսուսն արդեն պատրաստել է այդպիսի փառահեղ տեղ մեզ համար

Իմ եղբայրներ՝ տարեց և երիտասարդ, *արագ ընթացքը* միակ ձևն է ձեր հոգևոր պատմության և ձեր հնարավոր ապագան նկարագրելու համար: Միշտ էլ մեծ քանակությամբ անելու գործ կա, հատկապես նրանց համար, ովքեր գիտեն, թե ինչպես անեն Տիրոջ աշխատանքը: Ես ուրախությամբ հաստատում եմ այն, ինչ Նախագահ Հինքլին է հայտարարել. «Մենք ունենք երիտասարդության ամենահրաշալի սերունդը, որ երբևէ ունեցել ենք այս Եկեղեցու պատմության մեջ» (*Teachings of Gordon B. Hinckley,* 714; տես նաև Conference Report, ապր. 1992, 96, կամ *Ensign,* մայիս 1992, 69):

Ես հավատում եմ ձեր ապագա հնարավորություններին: Դուք հատուկ հոգիներ եք, ուղարկված կատարելու հատուկ գործեր: Այդ գործերի վերաբերյալ էր, որ ես փորձեցի այսօր ձեզ տալ ընկերական թեթևակի հրում արմունկով:

Ես սիրում եմ ձեզ: Թող Աստված օրհնի ձեզ և պահի այդ ուղու վրա, որը կտանի ձեզ տուն, իմ աղոթքն է Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն:

Օգտակար և ուժերը վերականգնող հանգստի սկզբունքներ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Չափից ավելի հանգիստը երեխաների մեջ ձանձրույթի զգացում է առաջացնում և նրանց համար բնական է ցանկանալ ավելի և ավելի թանկարժեք բաներ իրենց ուժերի վերականգնման համար: Մենք պետք է արժանապատվություն հաղորդենք աշխատանքին, կիսվելով տան և բակի պարտականություններով» (in Conference Report, ապր. 1976, 5–6; կամ *Ensign,* մայիս 1976, 5):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Օգտակար, ուժերը վերականգնող հանգիստը մեր կրոնի մասն է կազմում և տեմպի փոփոխությունն անհրաժեշտ է, նույնիսկ դրա ակնկալիքը կարող է բարձրացնել ոգին» (in Conference Report, Oct. 1974, 92; կամ *Ensign,* Nov. 1974, 66):

«Ընտանիքները պետք է ավելի շատ ժամանակ անցկացնեն միասին աշխատանքի և ուժերը վերականգնող հանգստի միջոցով: Շաբաթը մեկ պետք է ծրագրվի ընտանեկան երեկո որպես ուժերը վերականգնող հանգիստ, աշխատանքի նախագծեր, կոմիկական պիեսներ, երգեր դաշնամուրի շուրջը, խաղեր, հատուկ հյուրասիրություններ և ընտանեկան աղոթքներ: Շղթայի երկաթյա օղակների պես այս զբաղմունքը ընտանիքին կկապի միմյանց՝ սիրով, հպարտությամբ, ավանդույթով, ուժով և հավատարմությամբ» (in Conference Report, Oct. 1982, 86; կամ *Ensign*, Nov. 1982, 60):

«Հաջողված ընտանիքները միասին են անում գործեր, ընտանեկան նախագծեր, աշխատանք, անցկացնում արձակուրդներ, ուժերը վերականգնող հանգիստ և ընտանեկան հավաքներ» (in Conference Report, Apr. 1984, 6; կամ *Ensign*, May 1984, 6):

«Մայրեր Սիոնում, ձեր Աստծո կողմից տրված դերերն այնքան կենսական են ձեր իսկ վեհացման համար և ձեր փրկության և վեհացման համար որպես ընտանիք …

… Ժամանակ հատկացրեք ձեր երեխաների համար իսկական ընկեր լինելու համար …

… Ժամանակ տրամադրեք ձեր երեխաների համար կարդալուն…

… Ժամանակ գտեք միասին որպես ընտանիք գործեր անելու» (*To the Mothers in Zion*, 8–10):

«Իսրայելի հայրերի հանդեպ սիրով լցված սրտով, կարո՞ղ եմ առաջարկել տաս առանձնահատուկ ուղի, որոնցով հայրերը կարող են տալ հոգևոր առաջնորդություն իրենց երեխաներին. . . .

4. Գնացեք հայր –դուստր ժամադրությունների և հայր և որդիներ քաղաքից դուրս զբոսանքի ձեր երեխաների հետ: Որպես ընտանիք գնացեք վրաններով քաղաքից դուրս և զբոսախնջույքների, գնդակով խաղերի և մենահամերգների, դպրոցական միջոցառումների և այլն: Երբ հայրը ներկա է, ամեն ինչ դառնում է առանձնահատուկ:

5. Ստեղծեք ընտանեկան արձակուրդների, ուղևորությունների և քաղաքից դուրս զբոսանքների ավանդույթներ: Այս հիշողությունները երբեք չեն մոռացվի ձեր երեխաների կողմից (in Conference Report, հոկտ. 1987, 62–63; կամ *Ensign*, նոյ. 1987, 51; *To the Fathers in Israel*, 8–9):

Նախագահ Հյու Բ. Բրաուն

«Սա կոչվում է. Երբ հաջողությունը ձախորդություն է դառնում»:

«Երբ դուք անում եք ավելի ցածրը, երբ ավելի բարձրը հնարավոր է,

Երբ դուք ավելի մաքուր, ավելի բարի, ավելի մեծ մարդ չեք ձեր աշխատանքի պատճառով,

Երբ դուք ապրում եք ուտելու և խմելու, լավ ժամանակ անցկացնելու և փող հավաքելու համար, ապա դա հաջողության ձախողում է:

Երբ դուք չեք կրում ավելի բարձր հարստություն ձեր բնավորության մեջ, քան ձեր դրամապանակում է,

Երբ ձեր փառասիրությանը հասնելով, ուրիշների ձգտումներն եք խորտակում և հույսերը ձախողում,

Երբ ավելի շատ փողի, ավելի շատ հողի, ավելի շատ տների և պարտատոմսերի քաղցը աճում է, դառնալով ձեր գերակշռող կիրքը,

Երբ ձեր մասնագիտությունը դարձնում է ձեզ ֆիզիկական ավերակ՝ «նյարդերի» և տրամադրությունների զոհ,

Երբ աշխատանքով ձեր կլանվածությունը փաստորեն օտար է դարձնում ձեզ ընտանիքի համար,

Երբ փողի ձեր ագահությունը խավարեցնում և կաշկանդում է ձեր կնոջ կյանքը և զրկում նրան ինքնադրսևորումից, անհրաժեշտ հանգստից և ուժերի վերականգնումից, որևէ ձևի զվարճությունից,

Երբ ողջ համակրանքը և ընկերասիրությունը վերանում է ձեր կյանքից՝ մասնագիտությանը ձեր եսասեր նվիրվածության պատճառով,

Երբ դուք վեր չեք բարձրանում ձեր մասնագիտությունից, երբ դուք ավելի մեծ չեք որպես մարդ, քան որպես փաստաբան, առևտրական, բժիշկ կամ գիտնական,

Երբ դուք փաստարկում եք, որ երբեք ժամանակ չունեք զարգացնելու ձեր ընկերությունը, ձեր քաղաքավարությունը կամ ձեր բարեկիրթ շարժումները,

Երբ ճանապարհին կորցնում եք ձեր ինքնահարգանքը, քաջությունը, ինքնավերահսկողությունը կամ մարդկայնության, որևէ ուրիշ հատկանիշ, այդ դեպքում հաջողությունը ձախողում է»:

(In Conference Report, ապր. 1969, 113)

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

«Այնքան հաճախ ենք սխալմամբ կարծում, որ մեր երեխաները ավելի շատ բաների կարիք ունեն, երբ իրականում նրանց լուռ աղերսանքն է՝ պարզապես ավելի շատ ժամանակ իրենց հատկացնելը: Հարստության կուտակումը կամ ունեցվածքի բազմապատկումը հակադիր է Վարդապետի ուսմունքին.

«Ձեզ համար գանձեր մի դիզէք երկրիս վերայ. Ուր որ ցեցն և ժանկն ապականում են, եւ ուր որ գողերը պատը ծակում են եւ գողանում:

Բայց ձեզ համար գանձեր դիզեցէք երկնքումը, ուր ոչ ցեց եւ ոչ ժանկ չեն ապականում, եւ ուր գողերը պատը չեն ծակում եւ չեն գողանում:

Որովհետեւ ինչ տեղ որ ձեր գանձն է, այն տեղ կլինի և ձեր սիրտը [Մատթեոս Զ.19–21]» (in Conference Report, ապր. 1994, 80, կամ *Ensign,* մայիս 1994, 62):

Երեց Մարկ Ի. Պիտերսոն

«Մի՞թե չափազանց շատ է ամեն երկուշաբթի ընտանեկան երեկո անելը և այնտեղ մեր ընտանիքին սովորեցնելը մաքուր կյանքի կարևորությունը, անելով դա ուժերը վերականգնող հանգստի, ինչպես նաև պատվիրանի միջոցով» (in Conference Report, ապր. 1980, 96; կամ *Ensign,* մայիս 1980, 70):

Երեց Թոմաս Ս. Մոնսոն

«Մեր *տունը* պետք է լինի *կարգ ու կանոնի տուն* : «Ամեն բանի ժամանակ կայ. եւ ժամանակ երկնքի տակի բոլոր ձեռնարկության» (Ժողովող Գ.1), - խորհուրդ է տալիս Ժողովողը, Քարոզիչը: Նույնը ճիշտ է մեր կյանքում: Եկեք ժամանակ տրամադրենք ընտանիքի համար, ժամանակ աշխատանքի համար, ժամանակ սովորելու համար, ժամանակ ծառայելու համար, ժամանակ ուժերը վերականգնելու համար, ժամանակ ինքներս մեզ համար, բայց բոլորից վեր, ժամանակ Քրիստոսի համար» (in Conference Report, Apr. 1984, 22; կամ *Ensign,* May 1984, 18):

Երեց Լ. Թոմ Փերի

«Եթե ինձ վիճակվեր կրկին իմ կողքին երիտասարդ ընտանիք ունենալ, ես վճռականորեն ավելի շատ ժամանակ կհատկացնեի նրանց…

Շաբաթը կլիներ հատուկ միջոցառման օր՝ բաղկացած երկու մասից՝ առաջինը, ժամանակ երեխաներին ուսուցանելու համար աշխատանքի օրհնությունները, հոգ տանելով և բարենորոգելով տունը, բակը, պարտեզը, դաշտը, երկրորդը՝ ժամանակ ընտանեկան գործերի համար, ստեղծելով ընտանեկան ավանդույթ այն ամենի, ինչը դուք սիրում եք միասին անել» (in Conference Report, հոկտ. 1980, 8–9; կամ *Ensign,* նոյ. 1980, 9):

«Դոկտոր Նիք Սթինեթը Նեբրասկայի Համալսարանից մի շատ հետաքրքիր ելույթ ունեցավ Ընտանեկան Հարաբերությունների Ազգային Խորհրդի ամենամյա ժողովում: Այն կոչվում էր «Ուժեղ ընտանիքների հատկանիշները»:… [Նրա հիմնադրույթներից մեկը հետևյալն էր.]

…. Ուժեղ ընտանիքը նշանակալի չափով ժամանակ է անցկացնում միասին՝ խաղալով, աշխատելով, ուտելով կամ ուժերը վերականգնող հանգստով: Չնայած ընտանիքի բոլոր անդամները դրսում հետաքրքրություններ ունեն, նրանք գտնում են բավարար ժամանակ միասին անցկացնելու համար» (in Conference Report, Apr. 1983, 107; կամ *Ensign,* May 1983, 79):

«Ստեղծեք ավանդույթներ ձեր ընտանիքներում, որոնք կմիավորեն ձեզ, ցույց տալով ձեր նվիրվածությունը, սերը և աջակցությունը միմյանց հանդեպ…. Կիսվելով այս առիթներով որպես ընտանիք, մենք կկառուցենք հիմք, որը հաստատված կլինի ժայռի վրա» (in Conference Report, ապր. 1985, 29, կամ *Ensign,* մայիս 1985, 23):

«Զորացրեք հարաբերությունները ընտանեկան միջոցառումների միջոցով» (in Conference Report, ապր. 1994, 48; կամ *Ensign,* մայիս 1994, 36).

«Սա Լեքիի երազի այն մասն է, որին ես կկամենայի անդրադառնալ այսօր: Մեծ և ընդարձակ շենքից եկող ներկա գոչյունները, որոնք մենք լսում ենք, գայթակղում են մեզ մրցակցել այս աշխահի բաների սեփականատիրության համար: Մենք մտածում ենք, որ մեզ պետք է ավելի մեծ տուն՝ երեք ավտոմեքենայի համար ավտոտնակով ու հանգստի համար փոխադրամիջոցով, որը կայանված է նրանց կողքին: … Հաճախ այդ իրերը գնվում են պարտք վերցված փողով առանց մտածելու մեր ապագա կարիքներն ապահովելու մասին: Բոլոր այս վայրկենական բավարարման արդյունքում են առաջանում գերծանրաբեռնված սնանկացման դատարաններ և ընտանիքներ, որոնք չափից դուրս գերզբաղված են իրենց ֆինանսական պարտքերով» (in Conference Report, Sept.–Oct. 1995, 45; կամ *Ensign,* Nov. 1995, 35):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«*Զարգացրեք ընտանեկան ավանդույթներ:* Ընտանիքների մեծ զորություններից մի քանիսը կարող են գտնվել իրենց իսկ ավանդույթներում, որը կարող են բաղկացած լինել մի քանի հատուկ առիթներից՝ երեխաների օրհնություններից, մկրտություններից, քահանայության կարգումներից, ծննդյան օրերից, ձկնորսական ուղևորություններից, Սուրբ Ծննդյան նախօրեին երգիծանքներից, ընտանեկան երեկոներից և այլն: Յուրաքանչյուր ընտանիքի ավանդույթները առանձնահատուկ են և ապահովվում են մեծամասամբ մայրերի ջանքերով» (in Conference Report, Apr. 1983, 58; կամ *Ensign,* May 1983, 41):

Երեց Ռասսել Մ. Նելսոն

«Եթե կյանքում ամուսնությունը գլխավոր հարաբերությունն է, այն արժանի է գլխավոր ժամանակին» (in Conference Report, ապր. 1991, 27; կամ *Ensign,* մայիս 1991, 23):

Երեց Մարիոն Դ. Հանքս

«Նա, ով հավատում է, գիտի որ նա պատկանում է այդ խմբին: Բայց նա պետք է նաև զգա իրեն կարևոր և ընդունված, խմբի անբաժան մասը: Երիտասարդ մարդիկ ուզում են ունենալ ծնողներ և ընտանիք, որոնցով կարող են

հպարտանալ, և նրանք արժանի են դրան: Արժանավոր մարդիկ դառնալու նրանց ունակությունը ուժեղ ներգործվում է այդպիսի ընտանիքի բացակայությամբ կամ ներկայությամբ և ներդնող, պատասխանատու անդամ լինելու մարտահրավերի իրենց իսկ ընդունելությամբ: Լավ ընտանիքի ազդեցությունը լավ է նկարագրված անհայտ աղբյուրից վերցված այս պատմության միջոցով.

«Հրաշալի հոկտեմբերյան օր էր: Ամուսինս՝ Արթը և ես նավակառամատույցի մոտ օգնում էինք մեր ընկեր Դոնին քաշել իր մակույկը դեպի ծովափ: Արթը մտախոհ նշեց, որ երկար ժամանակ կտևի նախքան հաջորդ ամառ կկարողանանք բոլորով կրկին սկսել նավարկել: «Ժողովուրդ, դուք ավելի լավ կանեք, եթե մեր ընտանիքի նման սկսեք զբաղվել դահուկավազքով և տարին կլոր զվարճանաք», - ասաց Դոնը:

«Դա շատ թանկ չէ՞»,- հարցրեցի ես:

«Դոնը ուղղվեց և ժպտաց: «Ծիծաղելի է, - ասաց նա: - Մենք ապրում ենք երկաթյա ոտքերով վաննա ունեցող և հնաոճ տիպի իրերով մի տան մեջ: Տարիներ շարունակ մենք փող ենք խնայում լողարանը վերանորոգելու համար: Բայց ամեն ձմեռ մենք փող ենք վերցնում բանկից և գնում մի քանի ընտանիքներով դահուկասահքի ուղևորության: Մեր ավագ որդին այժմ բանակում է և նա հաճախ է նշում իր նամակներում, թե ինչ հրաշալի ժամանակ էինք անցկացնում այդ ուղևորությունների ժամանակ: Գիտեք, չեմ կարողանում պատկերացնել, որ նա կարող է գրել. «Իսկապես ի~նչ հրաշալի լողարան ունենք, չէ,՞ հայրիկ» (in Conference Report, ապր. 1968, 57):

«Մի քանի շաբաթ առաջ ես լսեցի մի ցցի նախագահի, որը հորդորում էր իր ժողովրդին ամուր ընտանիքներ կառուցել և նրանց հետ վայելել կյանքը: Դա հրաշալի քարոզ էր և դրա գագաթնակետը ինձ համար նրա պատմությունն էր ընտանեկան դահուկասահքի ուղևորության գնալու մասին, երբ մի չորս տարեկան երեխա ուզում էր գնալ մինչև գագաթը ընտանիքի մնացած մասի հետ և դահուկով սահել ներքև: Երբ նրանք ժամանեցին, հասկացան, որ նա պետք է շատ դանդաղ սահեր ողջ վայրէջքի ուղին, որովհետև շատ դժվար էր սահել նրա տարիքի և փորձառության տեր երեխայի համար: Մայրը սկսեց ուղեկցել իր չորս տարեկան որդուն բլրից վայրէջքի ժամանակ, բայց նրա դեռահաս որդին կամավոր օգնության հասավ և սիրով առաջնորդեց իր փոքրիկ եղբորը ներքև, փոխարենը սլանալու ներքև ինքնուրույն, ինչպես նա կարող էր անել: Նա զվարթորեն զոհաբերեց մեկ արագընթաց վազք սարից ներքև և օրհնեց ողջ ընտանիքին սիրո, հոգատարության և երախտագիտության քաղցր ոգով» (in Conference Report, Apr. 1971, 130; կամ *Ensign,* June 1971, 91–92):

Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն

«Կենդանի պահեք ձեր սիրատածումը: Ժամանակ գտեք միասին ինչ որ բաներ անելու համար՝ ուղղակի միայն երկուսով: Որքան կարևոր է լինել երեխաների հետ որպես ընտանիք, նույնքան անհրաժեշտ է նաև ամենշաբաթյա միայնակ միասին կանոնավոր ժամանցը: Այդ պլանավորելը թույլ կտա ձեր երեխաներին իմանալ, որ դուք ամուսնությունն այնքան կարևոր եք համարում, որ անհրաժեշտ եք գտնում այն զարգացնել: Դրա համար պահանջվում է պարտավորվածություն, ծրագրավորում և գրաֆիկ» (in Conference Report, ապր. 1995, 86, կամ *Ensign,* մայիս 1995, 65):

Երեց Դին Լ. Լարսեն

«Ամուսնությունները ինքնաբերաբար չեն հաջողության հասնում: Նրանք, ովքեր կառուցում են երջանիկ, ապահով, հաջողակ ամուսնություններ, վճարում են գինը դրա համար: Նրանք անընդհատ աշխատում են դրա վրա….

… Բացահայտեք այն բաները, որոնք դուք հաճույքով եք միասին անում և ապա կատարեք դրանք կանոնավորապես: Գնահատեք մեկդ մյուսի տաղանդները և քաջալերեք ու զարգացրեք դրանք:

Մի իմաստուն եպիսկոպոս ասաց ինձ վերջերս, որ ամեն ուրբաթ երեկո ժամադրության երեկո է իր և իր կնոջ համար: Ընտանիքի ավագ երեխաները գիտեն, որ նրանք ամեն ուրբաթ երեկո երեխաներին պահելու հանձնարարություն ունեն: Դա ավանդույթ է, որը նրանք վայելում են իրենց ծնողների հետ» (“Enriching Marriage,” *Ensign,* մար. 1985, 20, 23):

Եպիսկոպոս Վոգն Ջ. Ֆեդերստթոուն

«Կատարեք զվարճալի բաներ, որոնք չեն պահանջում դրամական ծախսեր, բայց ավելի տնական տպավորություններ են թողնում ձեր երեխաների վրա» (“Food Storage,” *Ensign,* մայիս 1976, 117):

Եպիսկոպոս Ջ. Ռիչարդ Քլարկ

«Այժմ, ինչպե՞ս անցկացնենք մեր ազատ ժամանակը: Թե ինչպես ենք անցկացնում մեր ժամանցը հավասարապես նույնքան կարևոր է մեր ուրախության համար, որքան մեր աշխատանքային զբաղմունքները: Ժամանցի ճիշտ օգտագործումը պահանջում է զատորոշող սրաթափանցություն: Մեր ժամանցը հնարավորություն է ապահովում մեր հոգիների, մտքի և մարմնի վերաթարմացման համար: Դա ժամանակ է՝ պաշտամունքի, ընտանիքի, ծառայության, սովորելու, ուժերի վերականգման համար: Այն ներդաշնակություն է բերում մեր կյանք» (in Conference Report, ապր. 1982, 112; կամ *Ensign,* մայիս 1982, 78):

Քույր Բարբարա Բ. Սմիթ

« Աշխատող մոր համար կարող է գայթակղություն լինել քաղաքից դուրս գնալու և խաղալու համար հատուկ ծրագրեր կազմելը, որպես այսպես կոչված «բարձրորակ» ժամանակ, որը նա անցկացնում է իր երեխաների հետ: Բայց շատերն են տեղյակ այն վտանգի մասին, որ սա ներկայացնում է, տալով նրանց կյանքի վերաբերյալ աղավաղված պատկեր՝ միասին օգտագործելով ողջ իրենց ժամանակը հանգստի համար: Երեխաների համար կարևոր է տեսնել հավասարակշռությունը, որն անհրաժեշտ է աշխատանքի և խաղի միջև: Նրանք պետք է իմանան, որ հատուկ իրադարձություններն ավելի իմաստալի են, երբ ամենօրյա գործերը հաստատվում են և երբ հանձնարարված պարտականությունները կատարվում են» (in Conference Report, ապր. 1982, 114; կամ *Ensign*, մայիս 1982, 80):

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Երեց Ռոբերտ Դ. Հեյլզ

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, հոկտ. 1996, 86–90; կամ Ensign, նոյ. 1996, 64–68

Հավերժական ընտանիքների վարդապետությունը

Ես կկամենայի խոսել բոլոր նրանց հետ, ովքեր կուզենային իմանալ հավերժական ընտանիքների մասին և ընտանիքների հավերժ լինելու մասին: Մեկ տարի առաջ Առաջին Նախագահությունը և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Տասներկու Առաքյալների Քվորումը լույս ընծայեցին մի հայտարարություն՝ ուղղված աշխարհին ընտանիքի վերաբերյալ: Այն ամփոփում է հավերժական ավետարանի սկզբունքները, որոնք ուսուցանվել են պատմությունը գրվելուց ի վեր և նույնիսկ նախքան աշխարհի ստեղծումը:

Ընտանիքի վերաբերյալ վարդապետությունը սկսվում է երկնային ծնողներով: Մեր բարձրագույն ձգտումն է նմանվել նրանց: Պողոս Առաքյալը սովորեցրել է, որ Աստված մեր հոգիների հայրն է (տես Եբրայեցիս ԺԲ.9): Հայտարարությունում մենք կարդում ենք. «Նախաերկրային կյանքում հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հայր, և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի Նրա զավակները կարող էին ձեռք բերել ֆիզիկական մարմին և աշխարհիկ փորձ կուտակեին դեպի կատարելություն առաջ ընթանալու և որպես հավերժական կյանքի ժառանգներ իրենց աստվածային ճակատագիրը ի վերջո իրականացնելու համար»: Հայտարարությունը նաև վերակրկնում է աշխարհին, որ « տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ Արարչի ծրագրում Իր զավակների հավերժական ճակատագրի համար ընտանիքը կենտրոնական դեր ունի» («Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Ensign*, նոյ. 1995, 102):

Ամենասկզբից սկսած Աստված հաստատեց ընտանիքը և այն դարձրեց հավերժական: Ադամն ու Եվան կնքվեցին ամուսնությամբ՝ ժամանակի և ողջ հավերժության համար:

«Եվ այսպես, բոլոր բաները հաստատվեցին Ադամի համար, սուրբ արարողությամբ, և Ավետարանի քարոզմամբ, և հրամանագրի արձակմամբ, որ այն պիտի լինի աշխարհում, մինչև նրա վերջը. Եվ դա այդպես էլ եղավ» (Մովսես 5.59):

«Եվ Ադամը գիտեցավ իր կնոջը, և նա որդիներ և դուստրեր բերեց նրա համար, և նրանք սկսեցին բազմանալ և լցնել երկիրը» (Մովսես 5.2):

Փրկիչը՝ Ինքը խոսեց այս սրբազան ամուսնական ուխտի և խոստման մասին, երբ տվեց իշխանություն Իր աշակերտներին երկնքում կապելու սրբազան ուխտեր, որոնք կապվել էին երկրի վրա.

«Եվ ես կտամ քեզ երկնքի արքայության բանալիները, եւ այն որ կապես երկրի վերայ, կապուած կլինի երկնքումը եւ այն որ երկրի վերայ արձակես, արձակուած կլինի երկնքումը» (Մատթեոս ԺԶ.19):

Այս վերջին օրերում հավերժական ընտանիքների վերաբերյալ խոստումը վերականգվեց 1829 թվականին, երբ Մելքիսեդեկյան Քահանայության զորությունները վերականգվեցին երկրի վրա: Յոթ տարի անց Կիրթլենդի Տաճարում վերականգվեցին կնքող արարողություններ կատարելու բանալիները, ինչպես գրի է առնվել Վարդապետություն և Ուխտերում.

«Եղիա մարգարեն, որն առանց մահ ճաշակելու երկինք էր վերցվել, կանգնեց մեր առաջ և ասաց.

Ահա, ժամանակը լիովին մոտեցել է, որը խոսվել է Մաղաքիայի բերանով….

…. Այս տնտեսության բանալիները հանձնվում են ձեր ձեռքը» (ՎԱՈՒ 110. 13–14, 16):

Այս բանալիների և քահանայության իշխանության վերականգնումով հնարավորություն է ստեղծվում բոլորի համար, ովքեր արժանի են, ստանալ հավերժական ընտանիքների օրհնությունները. «Այո, հազարավորների և բյուրավորների սրտերը մեծապես կցնծան այն օրհնությունների հետևանքով, որոնք պիտի թափվեն, և օժտման հետևանքով, որով իմ ծառաներն օժտվել են այս տանը» (ՎԱՈՒ 110.9):

Կնքումների խոստումները և պահանջները

Ո՞րն է այս կնքումների խոստումը, որոնք կատարվում են տաճարում: Տերը ուրվագծում է խոստումը և պահանջները այս սրբազան հատվածում.

«Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Եթե մի տղամարդ ամուսնանա մի կնոջ հետ, իմ խոսքով, որն իմ օրենքն է, և նոր և հավիտենական ուխտով, և այն նրանց համար կնքվի խոստումի Սուրբ Հոգով, նրա կողմից, ում ես օծել եմ, ում ես նշանակել եմ այս զորությունը և այս քահանայության բանալիները. և նրան կասվի,– Դուք առաջ կգաք առաջին հարության մեջ. և եթե դա լինի առաջին հարությունից հետո, ապա հաջորդ հարության մեջ. և կժառանգեք գահեր, թագավորություններ, իշխանություններ, և զորություններ, տիրապետություններ, բոլոր բարձրությունները և խորությունները,– այն ժամանակ Գառի Կյանքի Գրքում կգրվի …. և ամբողջությամբ ուժի մեջ կլինի, երբ նրանք աշխարհից դուրս են. և նրանք կանցնեն հրեշտակների և աստվածների մոտով, որոնք նշանակված են այնտեղ, դեպի իրենց վեհացումը և փառքը բոլոր բաներում, ինչպես որ կնքվել է նրանց գլխին, փառք, որը կլինի սերունդների լիությունը և շարունակությունը հավիտյանս հավիտենից» (ՎԱՈՒ 132.19):

Մենք յուրաքանչյուրս ընտանիքի կարևոր և անբաժանելի մասն ենք:

Ինչպես սովորեցվում է այս սուրբ գրությունում, հավերժական կապը տեղի չի ունենում ուղղակի որպես կնքվող ուխտերի արդյունք, որոնք մենք անում ենք տաճարում: Այն, թե ինչպես ենք պահում մեզ այս կյանքում, կորոշի, թե ինչ կլինենք մենք գալիք ողջ հավերժություններում: Ստանալու համար կնքման օրհնությունները, որոնք մեր Երկնային Հայրը տվել է մեզ, մենք պետք է պահենք պատվիրանները և վարվենք այնպես, որ մեր ընտանիքները կամենան ապրել մեզ հետ հավերժություններում: Ընտանեկան հարաբերությունները, որոնք մենք ունենք այստեղ՝ այս երկրի վրա, կարևոր են, բայց դրանք շատ ավելի կարևոր են մեր ընտանիքների վրա ունեցած իրենց ազդեցությամբ մահկանացու սերունդների վրա և ողջ հավերժության ընթացքում:.

Բոլորից շատ սիրեք ձեր կողակցին

Աստծո պատվիրանով կողակիցներից պահանջվում է բոլոր մյուսներից առավել սիրել միմյանց: Տերը հստակորեն հայտարարում է. «Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի» (ՎԱՈՒ 42.22): Հայտարարությունը նշում է.

«Աստծո նախագծով, հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքներում սիրով և արդարությամբ և պատասխանատու են ապահովել կյանքի կարիքները և իրենց ընտանիքների պաշտպանությունը [տես ՎԱՈՒ 83.2–4, Ա Տիմոթեոս Ե.8]: [Աստծո նախագծով] մայրերը հիմնականում պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակության համար: Աստծո նախագծով ամուսինն ու կինը հավասար ընկերակիցներ են իրենց ամուսնության մեջ և ծնողական պարտականություններում: Աստծո անմիջական պատվիրանով «ծնողները սրբազան պարտականություն ունեն….սովորեցնել [իրենց երեխաներին] *սիրել և ծառայել մեկը մյուսին, հետևել Աստծո պատվիրաններին և լինել օրինապահ քաղաքացիներ* [այն երկրներում, որտեղ նրանք ապրում են]» (*Ensign*, Nov. 1995, 102; շեղագիրն ավելացված է, տես Մոսիա 4.14–15, ՎԱՈՒ 68.25–28):

Ընտանիքը կործանելու սատանայի ջանքերը

Երջանկության հավերժական ծրագրի համար ընտանիքի կարևորության պատճառով, սատանան մեծ ջանքեր է գործադրում կործանելու ընտանիքի սրբությունը, նվազեցնելու տղամարդու և կնոջ դերերի կարևորությունը, քաջալերելով բարոյական անմաքրություն և մաքրաբարոյության սրբազան օրենքի խախտում, և հուսահատեցնելով ծնողներին երեխաներ ծնելն ու մեծացնելը որպես իրենց ամենաբարձր առաջնահերթություններից մեկը դնելիս:

Այնքան հիմնարար է ընտանեկան միավորը փրկության ծրագրի համար, որ Աստված հայտարարել է մի նախազգուշացում, որ այն «անձինք, ովքեր խախտում են մաքրաբարոյության ուխտերը, ովքեր բռնություն են գործադրում իրենց կողակցի կամ երեխաների հանդեպ կամ թերանում ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստծո [իրենց ստեղծողի] առջև: Դեռ ավելին, մենք նախազգուշացնում ենք, որ ընտանիքի քայքայումը անհատների, համայնքների և ազգերի վրա կբերեն այն աղետները, որոնք կանխագուշակվել են հնադարյան և ժամանակակից մարգարեների կողմից: (*Ensign*, նոյ. 1995, 102):

Փրկել ընտանիքները և ոչ թե միայն մեզ

Չնայած մեր անձնական փրկությունը հիմնված է մեր անձնական հնազանդության վրա, անբաժանելի մասն ենք ընտանիքի և բարձրագույն օրհնությունները կարելի է ստանալ միայն հավերժական ընտանիքի սահմաններում: Երբ ընտանիքները գործում են ինչպես նախագծված է Աստծո կողմից, այնտեղ գտնվող հարաբերությունները ամենակարևորն են մահկանացու կյանքում: Ըստ Հոր ծրագրի, ընտանեկան սերն ու ընկերակցությունը պետք է շարունակվի մինչև հավերժություն: Ընտանիքում մեկ լինելը նշանակում է կրել ընտանիքի յուրաքանչյուր անդամին հոգալու, սիրելու, բարձրացնելու և զորացնելու մի մեծ պատասխանատվություն, որպեսզի բոլորը կարողանան արդարացիորեն համբերել մինչև վերջ մահկանացու կյանքում և միասին ապրել հավերժության ընթացքում:

Բավական չէ հենց միայն մեզ փրկել: Հավասարապես կարևոր է, որ ծնողները, եղբայրները և քույրերը փրկվեն մեր ընտանիքներում: Եթե մենք մեր Երկնային Հոր մոտ՝ տուն վերադառնանք մենակ, մեզ հարց կտրվի. «Ո՞ւր է ընտանիքի մնացած մասը»: Այդ պատճառով մենք ուսուցանում ենք, որ ընտանիքները հավերժ են: Անձնավորության հավերժական բնույթը դառնում է ընտանիքի հավերժական բնույթը:

Ընտանիքները պատրաստում են մեզ հավերժական կյանքի համար

Մեր մարմնի և մեր հոգու հավերժական բնույթը հարց է, որը հաճախ է մտորումների առիթ տալիս նրանց, ովքեր ապրում են մահկանացու կյանքում: Բոլոր մարդիկ, ովքեր երբևէ կապրեն երկրի վրա, մարդկային ընտանիքի անդամներ են և Աստծո՝ մեր սիրառատ Երկնային Հոր հավերժական զավակներն են: Մահկանացու կյանքում ծնվելուց և մահ ճաշակելուց հետո, բոլորը հարություն կառնեն Հիսուս Քրիստոսի՝ Հայր Աստծո Միածին Որդու Քավության շնորհիվ, ունենալով հավերժական աճ բոլոր գալիք հավերժությունների համար: Սրբազան ուխտեր կապելու և պահելու շնորհիվ՝ տաճարային արարողությունների միջոցով, մարդիկ կարող են վերադառնալ Աստծո ներկայություն և վերամիավորվել իրենց ընտանիքների հետ հավերժորեն:

Տունն այն տեղն է, որտեղ մենք դաստիարակվում ենք և որտեղ մենք նախապատրաստվում ենք մահկանացու կյանքում ապրելու համար: Դա նաև այն տեղն է, որտեղ մենք նախապատրաստվում ենք մահվան և անմահության համար՝ մեր հավատքի և մեր հասկացողության շնորհիվ, որ մահից հետո կյանք կա, ոչ միայն անձնավորության այլ նաև ընտանիքի համար:

Մահացու հիվանդությամբ ընկերոջ հավատքը

Ընտանիքի հավերժական բնույթի վերաբերյալ ավետարանի սկզբունքների մեծագույն դասերից մի քանիսը սովորում ենք, երբ տեսնում ենք, թե ինչպես են Եկեղեցու անդամները ձախորդության հանդիպելիս կիրառում ավետարանի սկզբունքներն իրենց կյանքում և իրենց տներում: Անցած տարիներին ես ականատես եղա ուրախության այն օրհնություններին, որոնք ստանում են նրանք, ովքեր պատվում են և հարգում հավերժական ընտանիքի ավետարանական ուսմունքը իրենց կյանքում ձախորդության պահերին:

Մի քանի տարի առաջ ես հնարավորություն ունեցա այցելելու մի մարդու, որի մոտ ախտորոշել էին մահացու հիվանդություն: Որպես քահանայության հավատարիմ կրող, նա դեմառդեմ կանգնեց մահկանացու կյանքի իրողություններին: Այնուամենայնիվ, նա ուժ գտավ Փրկչի օրինակում, որն ասաց Տերունական Աղոթքում. «Արդ դուք այսպէս աղոթք արեք.... լինի քո կամքը, ինչպէս երկնքումն՝ այնպես էլ երկրի վրա» (Մատթեոս Զ.9–10): Ընկերս քաջություն ձեռք բերեց, գիտենալով, որ ինչպես Հիսուսից պահանջվեց դիմանալ մեծ ցավի և հոգևարքի Գեթսեմանի Պարտեզում, երբ իրականացնում էր քավող զոհաբերությունը, Նա արտաբերեց հետևյալ խոսքերը. «Իմ Հայր, եթե կարելի չէ որ այս բաժակն ինձանից անցնի առանց իմ նորան խմելուս, քո կամքը լինի» (Մատթեոս ԻԶ.42):

Ընկերս հասավ «Քո կամքը լինի» արտահայտությունը ընդունելուն, դիմակայելով իր իսկ դառը փորձություններին և տառապանքներին: Որպես Եկեղեցու հավատարիմ անդամ, նա այժմ առճակատում էր մի քանի լուրջ մտահոգությունների: Հատկապես հուզիչ էին նրա հարցերը. «Արդյոք արել եմ այն բոլորը, ինչ պետք է անեի մինչև վերջ հավատարմորեն համբերելու համար»: «Ինչպիսի՞ն կլինի մահը»: «Ընտանիքս պատրաստ կլինի՞ դիմանալու հավատքով և ինքնավստահությամբ, երբ ես գնամ»:

Մենք հնարավորություն ունեցանք քննարկելու բոլոր այս երեք հարցերը: Դրանք հստակ պատասխան են ստանում այն վարդապետության միջոցով, որը մեզ ուսուցանվել է մեր Փրկչի կողմից: Մենք քննարկեցինք թե ինչպես նա անցկացրեց իր կյանքը, ձգտելով հավատարիմ լինել, անելով այն, ինչ Աստված խնդրեց նրանից, ազնիվ լինելով իր բոլոր հարաբերություններում իր ընկերների և բոլոր ուրիշների հետ, հոգ տանելով և սիրելով իր ընտանիքին: Միթե՞ դա չէ մինչև վերջ համբերելը: Մենք խոսեցինք այն մասին, թե ինչ է տեղի ունենում մահից անմիջապես հետո, հոգիների աշխարհի մասին - այն ինչ սովորեցրել է մեզ Աստված: Այն դրախտային և երջանկության տեղ է նրանց համար, ովքեր ապրել են արդար կյանքով: Դա վախենալու բան չէ:

Մեր զրույցից հետո, նա կանչեց իր կնոջը և ընտանիքի մոտիկ հարազատներին՝ երեխաներին և թոռներին, նրանց կրկին ուսուցանելու Քավության վարդապետության մասին, որ բոլորը պետք է հարություն առնեն: Բոլորը հանգեցին այն հասկացողության, որ ճիշտ ինչպես Տերն է ասել, չնայած սուգ կլինի ժամանակավոր բաժանման ժամանակ, վիշտ չի լինի նրանց համար, ովքեր մահանում են Տերում (տես Հայտնություն ԺԴ.13, ՎԱՈՒ 42.46): Նրա օրհնությունը խոստացավ նրան հանգստություն և վերահավաստում, որ ամեն ինչ լավ կլիներ, որ նա ցավ չէր զգա, որ նա կունենար լրացուցիչ ժամանակ՝ պատրաստելու իր ընտանիքին իր հեռանալուց առաջ և որ նույնիսկ կիմանար իր հեռանալու ժամը: Ընտանիքը պատմեց ինձ, որ իր մահանալու նախորդ գիշերը, նա ասաց, որ կմահանար հաջորդ օրը: Նա մահացավ հաջորդ օրվա կեսօրին խաղաղության մեջ, ողջ իր ընտանիքով շրջապատված: Սա է սփոփանքն ու մխիթարությունը, որը մենք ունենում ենք, երբ հասկանում ենք ավետարանի ծրագիրը և իմանում, որ ընտանիքները հավերժական են:

Ավետարանի վարդապետությունները մխիթարում են երիտասարդ այրուն

Հակադրեք այս իրադարձությունները մի դեպքի, որը պատահեց ինձ հետ, երբ ես քսան տարեկանս չլրացած երիտասարդ էի: Երբ ծառայում էի օդային ուժերում, իմ էսկադրոնի օդաչուներից մեկը ուսուցողական վարժությունների ժամանակ վթարի ենթարկվեց և մահացավ: Ինձ հանձնարարվեց ուղեկցել իմ ընկած ընկերոջը դեպի տուն իր վերջին ճամփորդության ընթացքում՝ Բրուկլինում թաղվելու համար: Ես պատիվ ունեցա կանգնել նրա ընտանիքի կողքին զննման և թաղման արարողության ժամանակ և ներկայացնում էի մեր կառավարությանը գերեզմանի մոտ՝ հանձնելով դրոշը նրա սգացող այրուն: Թաղման արարողությունը խավար ու մռայլ էր: Ոչ մի խոսք չասվեց նրա բարության կամ նրա նվաճումների մասին: Նրա անունը երբեք չհիշատակվեց: Արարողության վերջում նրա այրին դիմեց ինձ, հարցնելով. «Բոբ, ի՞նչ է իրականում պատահելու Դոնին»: Այդ ժամանակ ես կարողացա նրան տալ Հարության քաղցր վարդապետությունը և այն իրականությունը, որ ովքեր մկրտվում են և կնքվում տաճարում՝ ժամանակի և ողջ հավերժության համար, նրանք կարող են միասին լինել հավերժորեն: Կրոնավորը, որը կանգնած էր նրա կողքին ասաց. «Դա ամենագեղեցիկ վարդապետությունն է, որ ես երբևէ լսել եմ»:

Հիսուս Քրիստոսի ավետարանը մեծ մխիթարություն է բերում մահկանացու կյանքի լարված պահերին: Այն բերում է լույս, որտեղ խավար է և մի հանգստացնող ազդեցություն, որտեղ կա աղմուկ: Այն տալիս է հավերժական հույս, որտեղ կա մահկանացու հուսահատություն: Այն պարզապես գեղեցիկ վարդապետություն չէ: Դա իրականություն է մեր կյանքում՝ եթե մենք հնազանդ ենք լինում և ձեռք ենք բերում հավերժական պարգևները, որոնք Աստված է շնորհում մեզ, եթե մենք մոտենում ենք Նրան և ընդունում հավերժական վարդապետությունը, մենք օրհնվում ենք:

Մահացող մարդը հավատում է հավերժական ընտանիքի գաղափարին

Մեկ այլ դեպք, որը վերջերս ազդեց իմ կյանքի վրա, տեղի ունեցավ, երբ մահացու հիվանդությամբ մի երիտասարդ մահացավ: Նա գիտեր, որ իր հիվանդությունը առաջինը նրանից խլելու էր իր ձեռքերի ճկունությունը և քայլելու կարողությունը, ապա դրա զարգացումը խլելու էր նրա խոսելու ունակությունը և ի վերջո նրա շնչառական համակարգն էր դադարելու գործել: Բայց նա նաև ուներ հավատք, որ ընտանիքները հավերժական են: Այս գիտելիքով նա խոսեց երեխաներից յուրաքանչյուրի հետ տեսաձայնագրությունների միջոցով, որոնք օգտագործվում էին այն ժամանակ, երբ նա մահացավ: Նա կատարեց ձայնագրություններ, որոնք տրվելու էին իր որդիներին և դուստրերին՝ իրենց կյանքի կարևոր, սրբազան առիթներով, ինչպիսիք են մկրտությունները, քահանայության կարգումները և հարսանիքները: Նա խոսեց նրանց հետ հայրական ջերմ սիրով, որ գիտեր, որ չնայած իր ընտանիքը հավերժական էր, որոշ ժամանակով նա չէր կարողանալու ֆիզիկապես նրանց հետ լինել, բայց հոգեպես նա երբեք չէր հեռանալու նրանց կողքից:

Հավատքի օրինակները, որոնք ցույց են տրվում անսասան որբևայրիների և այրի տղամարդկանց կողմից, իրենց երեխաների հավատքի հետ միասին, կողակցի կամ ծնողի կյանքից հեռանալուց հետո, մեզանից բոլորի համար ոգեշնչման աղբյուր են դառնում: Մեծ դասեր կարելի է սովորել, երբ տեսնում ենք նրանց հավատքը և հնազանդությունը, երբ նրանք ձգտում են հավատարիմ մնալ, որպեսզի մեկ անգամ էլ կարողանան լինել միասին որպես ընտանիքներ հավերժության ընթացքում:

Ավետարանը բերում է լույս և հույս

Այն վարդապետության գիտելիքն ու հասկացողությունը, որ Աստված ապրում է և Հիսուսը Քրիստոսն է և որ մենք հնարավորություն ունենք հարություն առնելու և ապրելու Հայր Աստծո և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ, հնարավոր են դարձնում դիմանալ այլևայլ ողբերգական իրադարձությունների: Այս վարդապետությունը բերում է հույսի պայծառություն՝ չափազանց խավար և մռայլ աշխարհում: Այն պատասխանում է պարզ հարցերի, թե որտեղից ենք մենք եկել, ինչո՞ւ ենք այստեղ և ո՞ւր ենք գնում: Սրանք ճշմարտություններ են, որոնք պետք է ուսուցանվեն և կիրառվեն մեր տներում:

Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Նրա Քավության միջոցով մենք հնարավորություն կունենանք հարություն առնել: Դա ուղղակի անձնական օրհնություն չէ, դա ավելին է: Դա օրհնություն է մեզանից յուրաքանչյուրին և մեր ընտանիքներին՝ որ մենք կարող ենք հավերժորեն երախտապարտ լինել, որ կարող ենք ապրել Աստծո՝ Հավերժական Հոր և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ, որ մենք կարող ենք լինել միասին գալիք հավերժություններում, որ մենք կարողանանք հասկանալ ուրախությունը, և իմ աղոթքն է որպեսզի մենք ոչ միայն ուսուցանենք այս վարդապետությունը, այլ հավատարիմ ապրենք դրան մեր կյանքում և մեր ընտանիքներում, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԸՆՏԱՆԻՔ

Երեց Հենրի Բ. Այրինգ

Տասներկու Առաքյալների Քվորումից

Հավաք քոլեջի տարիքի երիտասարդ ամուրիների համար, 5 նոյ. 1995, կամ Ավելի մոտենալ Աստծուն, 157–73

Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումից ի վեր Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով մինչև 1995թվականի սեպտեմբերի 23-ը, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին լույս է ընծայել մեկ հայտարարություն ընդամենը չորս անգամ: Ավելի քան տասնհինգ տարի է անցել վերջին անգամից, որը նկարագրում էր Եկեղեցու կատարած առաջընթացը իր պատմության 150 տարիների ընթացքում: Այսպիսով, դուք կարող եք պատկերացնել այն կարևորությունը, որը մեր Երկնային Հայրն է տալիս ամենավերջերս կատարած այս հայտարարությանը:

Քանի որ մեր Հայրը սիրում է իր զավակներին, նա չի թողնի մեզ ենթադրություններ անելու այն մասին, թե որ հարցերն են այս կյանքում ամենամտահոգիչը, որտեղ մեր ուշադրությունը կարող է բերել երջանկություն, իսկ մեր անտարբերությունը կբերի տրտմություն: Երբեմն նա կասի մարդուն ուղղակիորեն, ոգեշնչման միջոցով: Բայց նա լրացուցիչ կասի մեզ իր ծառաների միջոցով: Ամովս մարգարեի խոսքերով, որոնք գրի են առնվել շատ վաղուց. «Որովհետեւ Տեր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթե չհայտնէ իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարեներին» (Ամովս Գ.7): Նա անում է այդ, որպեսզի նույնիսկ նրանք, ովքեր չեն կարողանում զգալ ոգեշնչում, կարողանան իմանալ, եթե միայն լսեն, որ իրենց ասվել է ճշմարտությունը և նախազգուշացվել է:

Հայտարարության վերնագիրն է. «Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահություն և Տասներկու Առաքյալների Խորհուրդ» (տես *Ensign*, նոյ. 1995, p. 102):

Վերնագրի երեք բաղկացուցիչներ արժանի են մեր ուշադիր խորհրդածությանը: Առաջինը թեման է՝ ընտանիքը: Երկրորդը՝ լսարանը, որը ողջ աշխարհն է: Եվ երրորդը նրանք են, ովքեր հայտարարել են դա, ում մենք հաստատում ենք, որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ: Դա նշանակում է, որ ընտանիքը պետք է նույնքան կարևոր լինի մեզ համար, որքան որևէ բան, որ մենք կարող է բարձր գնահատենք, որ այն, ինչ հայտարարությունն ասում է, կարող է օգնել աշխարհում ցանկացած մեկին և որ հայտարարությունը համապատասխանում է Տիրոջ խորհրդին, երբ նա ասել է. «Լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է» (ՎԿՈՒ 1.38):

Նախքան մենք միասին կսկսենք լսել հայտարարության խոսքերը, վերնագիրն ասում է մեզ որոշ բան այն մասին թե ինչպես պատրաստվել: Մենք կարող ենք ակնկալել, որ Աստված ուղղակի չի ասի մեզ մի քանի հետաքրքիր բաներ ընտանիքի մասին, նա կասի մեզ թե ինչչիսին պետք է լինի ընտանիքը և ինչու: Եվ մենք գիտենք, որ սկզբում գուցե հեշտորեն համակվենք այնպիսի մտքերով, ինչպիսիք են. «Սա այնպիսի բարձր չափանիշ է, իսկ ես այնքան թույլ եմ, որ երբեք չեմ կարող հույս ունենալ այդպիսի ընտանիքի համար»: Այդ զգացումը կարող է գալ, որովհետև այն, ինչ մեր Երկնային Հայրն ու Նրա Որդի Հիսուս Քրիստոսն են ուզում մեզ համար՝ Իրենց նման դառնալն է, որպեսզի մենք կարողանանք նրանց հետ ապրել հավերժական ընտանիքներում: Մենք նրանց մտադրության մասին իմանում ենք այս պարզ դրույթից.

«Սա է իմ գործը և իմ փառքը իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Հավերժական կյանք նշանակում է դառնալ Հոր նման և հավերժ ապրել ընտանիքներում երջանկության և ուրախության մեջ, այսպիսով, այն, ինչ Նա ցանկանում է մեզ համար՝ կպահանջի օգնություն մեր զորությունից վեր: Մեր անհամապատասխանության այդ զգացումը կարող է ավելի հեշտ դարձնել ապաշխարությունը և օգնել պատրաստ լինել ապավինելու Տիրոջ օգնությանը:

Այն փաստը, որ հայտարարությունը ուղղված է ողջ աշխարհին, նրանում գոյություն ունեցող յուրաքանչյուր անձի և կառավարության, տալիս է մեզ հավատիացում, որ մենք չպետք է ընկճվենք: Ով էլ որ լինենք, որքան էլ որ դժվարին լինեն մեր հանգամանքները, մենք կարող ենք իմանալ, որ այն, ինչ պատվիրում է մեր Հայրը, որ մենք անենք, որ արժանանանք հավերժական կյանքի օրհնություններին, մեզանից հեռու չի լինի: Այն, ինչ ասել է երիտասարդ մի տղա շատ վաղուց, երբ նա դիմակայում էր անհնարին թվացող մի հանձնարարության, ճշմարիտ է.

«Գիտեմ, որ Տերը պատվիրաններ չի տալիս մարդկանց զավակներին առանց ուղի պատրաստելու նրանց համար, որպեսզի նրանք կարողանան իրագործել այն, ինչ նա պատվիրել է իրենց» (1 Նեփի 3.7):

Մենք գուցե պետք է աղոթենք՝ հավատքով իմանալու համար, թե ինչ պետք է անենք, և մենք պետք է աղոթենք հնազանդվելու վճռականությամբ, բայց մենք կարող ենք իմանալ, թե ինչ անենք, և համոզված լինենք, որ ուղին պատրաստված է մեզ համար Տիրոջ կողմից: Երբ կարդում ենք այն մասին, թե ինչ է ասում հայտարարությունը ընտանիքի մասին, մենք կարող ենք ակնկալել, փաստորեն պետք է ակնկալենք, որ տպավորություններ առաջանան մեր մտքում, որ իմանանք, թե ինչ պետք է անենք, և մենք կարող ենք վստահ լինել, որ դա հնարավոր է:

Հայտարարությունը սկսվում է այսպես.

«ՄԵՆՔ՝ Հիսուս ՔրիստոսիՎերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, պաշտոնապես հայտարարում ենք, որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ Արարչի ծրագրում Իր զավակների հավերժական ճակատագրի համար ընտանիքը կենտրոնական դեր ունի»:

Փորձեք պատկերացնել ձեզ մի փոքրիկ երեխա, որը լսում է այդ խոսքերն առաջին անգամ և հավատում, որ դրանք ճշմարիտ են: Սա կարող է լինել օգտակար մոտեցում, երբ մենք կարդում կամ լսում ենք Աստծո խոսքը, որովհետև Նա ասել է մեզ. «Ճշմարիտ ասում եմ ձեզ թէ ով որ Աստուծոյ արքայութիւնը չընդունի ինչպէս երեխայ՝ նա չի մտնիլ նորա մեջ» (Ղուկաս ԺԸ.17):

Փոքրիկ երեխան այս խոսքերը լսելով ապահով կզգար, որ կնոջ և տղամարդու միջև ամուսնությունը կարգված է Աստծուց: Երեխան կիմանար, որ ձգտումը ունենալ և հոր և մոր սերը, պարզ, բայց ինչ որ տեղ կատարելապես լրացնող, գոյություն ունի, որովհետև դա է հավերժական ձևը, երջանկության ձևը: Երեխան նաև կզգա իրեն ավելի ապահով, գիտենալով, որ Աստված կօգնի մայրիկին և հայրիկին լուծել տարաձայնությունները և սիրել միմյանց, եթե միայն նրանք օգնություն խնդրեն նրանից և փորձեն: Երեխաների աղոթքները ողջ երկրագնդից վեր կգնան դեպի Աստված, աղերսելով նրա օգնությունը ծնողների և ընտանիքների համար:

Կարդացեք հայտարարության հաջորդ խոսքերը.նույն ձևով, պատկերացնելով ձեզ որպես փոքրիկ երեխա.

«Բոլոր մարդկային էակները ՝ տղամարդիկ և կանայք արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր: Նախաերկրային, երկրային և հավերժական ինքնության և նպատակի համար սեռն անհատի հիմնական բնութագիրն է:

Նախաերկրային կյանքում հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հայր և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի Նրա զավակները կարող էին ձեռք բերել ֆիզիկական մարմին և աշխարհիկ փորձ կուտակեին դեպի կատարելություն առաջ ընթանալու և որպես հավերժական կյանքի ժառանգներ իրենց աստվածային ճակատագիրն ի վերջո իրականացնելու համար: Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան հարաբերությունները հավերժացվեն գերեզմանից այն կողմ: Սուրբ տաճարներում կատարվող սրբազան արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների համար վերադառնալ Աստծո ներկայությունը, իսկ ընտանիքների համար միավորվելու հավերժորեն»:

Այս ճշմարտությունները հասկանալը պետք է որ մեզ օգնեն ավելի հեշտ զգալ փոքրիկ երեխայի պես, ոչ թե միայն հայտարարությունը կարդալիս, այլ մեր ողջ կյանքի ընթացքում, որովհետև մենք երեխաներ ենք, բայց ինչպիսի ընտանիքի և ինչպիսի ծնողների: Մենք կարող ենք պատկերացնել, թե ինչպիսին էինք մենք, քանզի այնքան, որքան կարող ենք պատկերացնել, որդիներ և դուստրեր էինք միավորված մեր երկնային տանը ծնողների հետ, ովքեր գիտեին և սիրում էին մեզ: Բայց այժմ մենք կարող ենք տեսնել մեզ կրկին տանը մեր երկնային ծնողների հետ, այն սքանչելի վայրում, ոչ միայն որպես որդիներ և դուստրեր, այլ ամուսիններ և կանայք, հայրեր և մայրեր, պապիկներ և տատիկներ, հավերժ կապված միմյանց հետ որպես սիրող ընտանիքներ: Եվ մենք գիտենք, որ նախամահկանացու աշխարհում մենք տղամարդիկ և կանայք էինք, առանձնահատուկ շնորհներով՝ մեր սեռի պատճառով և որ ամուսնանալու և մեկ դառնալու հնարավորությունն անհրաժեշտ էր մեզ՝ հավերժական երջանկություն ունենալու համար:

Ունենալով այդ պատկերը մեր առջև, մենք երբեք չենք կարող գայթակղվել նույնիսկ մտածելու. «Միգուցե ես չէի կամենա հավերժական կյանք: Միգուցե ես հենց այնքան երջանիկ կլինեի որևէ ուրիշ տեղում հետմահկանացու կյանքում: Ես լսել եմ, որ նույնիսկ ամենացածր արքայություններն ավելի գեղեցիկ են քան որևէ բան, որ երբևէ տեսել ենք»:

Մենք պետք է ունենանք նպատակը ոչ միայն մեր մտքերում այլ մեր սրտերում: Այն ինչ մենք ցանկանում ենք, հավերժական կյանքն է ընտանիքներով: Մենք չենք ցանկանում այն, որովհետև դա ուղղակի հենց այն է, ինչը գուցե հաջողվի, ոչ էլ ցանկանում ենք հավերժական կյանքին մոտ ինչ որ բան: Մենք ցանկանում ենք հավերժական կյանք, ինչպիսին էլ որ լինի դրա գինը՝ ջանքերի, ցավերի և զոհաբերությունների միջոցով: Երբ որ մենք գայթակղվում ենք վճռականության փոխարեն դարձնել հավերժական կյանքը մեր հույսը, մենք կարող ենք մտածել մի շենքի մասին, որին ես նայեցի մի քանի շաբաթ առաջ:

Ես Բոստոնում էի: Փոքր ինչ կարոտի զգացումը քայլերս ուղղեցին մինչև այն պանսիոնի դուռը, որտեղ ապրում էի ես, երբ հանդիպեցի Կեթլինին, որն այժմ իմ կինն է: Դա երկար ժամանակ առաջ էր, այսպիսով ես ակնկալում էի գտնել տունը մի փոքր ավելի քայքայված, քան նախկինում, քանի որ ես ինքս էլ կարծես փոքր ինչ ավելի քայքայված եմ դարձել: Բայց ի զարմանս ինձ, այն թարմ ներկած էր և լավ վերանորոգված: Համալսարանը գնել էր դա Սոփերներից, այն մարդկանցից, ում պատկանում էր այն և ովքեր պահում էին դա որպես պանսիոն:

Շենքը փակ էր, այնպես որ մենք չկարողացանք ներս մտնել՝ տեսնելու ետևի սենյակը վերևի հարկում, որը մի ժամանակ իմն էր: Գները փոխվել էին, այնպես որ ձեզ

համար դժվար կլինի հավատալ, բայց սա էր համաձայնությունը՝ ըստ որի Սոփերները վարձով տվեցին ինձ. իմ սեփական մեծ սենյակը և լոգարանը, կահույքը, վերնաշապիկների ապահովման և սպասուհու ծառայությունը, վեց մեծ նախաճաշ և շաբաթական հինգ սքանչելի ճաշ - շաբաթը 21դոլարով: Դեռ ավելին, ճաշերը առատ էին և պատրաստված այնպիսի վարպետությամբ, որ մենք մեր տանտիրուհուն քնքշությամբ անվանում էինք «Մա Սոփեր»: Ուղղակի ձեզ հետ այս մասին խոսելը ստիպում է ինձ հասկանալ, որ ես Տիկին Սոփերին բավականաչափ հաճախ չեմ շնորհակալություն հայտնել, ոչ էլ Պն. Սոփերին և նրանց դստերը, քանի որ պետք է որ որոշ չափով բեռ լիներ տասներկու չամուսնացած տղամարդկանց շաբաթվա ընթացքում ամեն երեկո ճաշ տալը:

Այսպիսով, դուք չեք գայթակղվում պանսիոնի այդ նկարագրությամբ, և ոչ էլ ես: Այն կարող էր ունենալ ամենաընդարձակ սենյակները, լավագույն սպասավորումը և լավագույն տասնմեկ տղամարդիկ, որ դուք երբևէ իմացել եք, որպես ընկերակից վարձակալներ, բայց մենք չէինք կամենա ապրել այնտեղ ավելի երկար՝ բացի մի կարճ ժամանակից: Եթե այն գեղեցիկ լիներ մեր երևակայելու ունակությունից վեր, մենք չէինք կամենա ապրել այնտեղ հավերժ, միայնակ, եթե մենք ունենք նույնիսկ ամենաաղոտ հիշողությունը կամ ամենաթույլ մտապատկերը սիրելի ծնողների և երեխաների հետ՝ ընտանիքի մասին, այն մեկի նման, որից մենք եկել ենք այս երկիր և այն մեկը, որը մեր ճակատագիրն է ստեղծելու և ապրելու հավերժ: Կլինի միայն մեկ տեղ, որտեղ կլինեն ընտանիքներ՝ սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում: Դա այն տեղն է, որտեղ մենք կկամենանք լինել:

Որևէ երեխա, որը լսում և հավատում է այդ խոսքերին, կսկսի կյանքի մի ժամանակաշրջանում փնտրել մի սուրբ տաճար, որտեղ արարողություններն ու ուխտերը հավերժացնում են ընտանեկան հարաբերությունները գերեզմանից այն կողմ և կսկսեն ձգտել արժանի դառնալ և գտնել հնարավոր զուգընկեր, որն արժանի է այդ արարողություններին: Հայտարարության խոսքերը պարզ են դարձնում, որ այդ օրհնությունները ստանալու համար պահանջվում եքն որոշ կատարելագործող փորձառություններ: Երեխան կարող է սկզբում չզգալ, բայց շուտով կսովորի, որ բոլոր որոշումներ ընդունելը և ավելի տքնաջան փորձերը կարող են առաջացնել միայն փոխակերպող առաջընթաց դեպի կատարելագործում: Տարիքի հետ միասին կգան այնպիսի գայթակղություններ, որոնք առաջացնում են հանցանքի զգացում: Յուրաքանչյուր երեխա մի օր կզգա խղճի այդ խայթոցները, ինչպես մենք բոլորս են զգացել: Եվ նրանք, ովքեր զգում են հանցանքի այդ անգին զգացումը և չեն կարողանում ազատվել դրանից, գուցե հուսահատվեն, հասկանալով որ հավերժական կյանքը պահանջում է առաջընթաց դեպի կատարելագործում, որը, թվում է, գնալով հեռանում է իրենցից:

Այսպիսով, դուք և ես կորոշենք խոսել մեկի հետ, որը դեռ չգիտի այն, ինչ մենք գիտենք, թե ինչպես է այդ կատարելությունն առաջանում: Մենք կանենք դա, որովհետև գիտենք, որ մի օր նրանք կցանկանան այն, ինչ մենք ենք ցանկանում և այդ ժամանակ կհասկանան, որ մենք նրանց եղբայրն ու քույրն էինք և որ մենք գիտեինք ճանապարհը դեպի հավերժական կյանք: Այսօր կամ վաղը դժվար չի լինի անդամ միսիոներ լինել, եթե դուք մտածեք այդ ապագա պահի մասին, երբ նրանք և մենք կտեսնենք իրերն այնպես, ինչպես դրանք իրականում են:

Հայտարարությունում որոշ այլ խոսքեր կունենան հատուկ իմաստ մեզ համար, քանի որ մենք ավելին գիտենք հավերժական կյանքի մասին: Դրանք գտնվում են հաջորդ երկու պարբերություններում.

«Առաջին պատվիրանը, որն Աստված տվեց Ադամին ու Եվային վերաբերվում էր որպես ամուսին և կին նրանց ծնող դանալու հնարավորությանը: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Իր զավակներին տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: Մենք հայտարարում ենք նաև, որ Աստված պատվիրել է, որ ծննդաստեղծ սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին:

Մենք հայտարարում ենք, որ ուղիները, որոնց միջոցով մահականացու կյանք է ստեղծվում, ղեկավարվում է աստվածության կողմից: Մենք հաստատում ենք կյանքի սուրբ լինելը և նրա կարևորությունն Աստծո հավերժական ծրագրում»:

Հավատալով այդ խոսքերին, երեխան կարող է հեշտորեն գտնել մեծահասակների կողմից դատողության մեջ արված սխալները: Օրինակ, իմաստուն և հզոր մարդիկ ակնհայտորեն մեղադրում են աղքատությունն ու սովը երկրագնդի որոշ մասերում կամ ողջ երկրագնդի վրա խիստ շատ բնակչության պատճառով: Մեծ եռանդով նրանք վիճում են ծնունդները սահմանափակելու համար, կարծես դա առաջ կբերի մարդկության համար երջանկություն: Հայտարարությանը հավատացող երեխան կիմանա, որ դա չի կարող այդպես լինել, նույնիսկ նախքան այս խոսքերը Տիրոջից լսելը նրա մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով.

«Քանզի երկիրը լի է, և բավականաչափ կա նաև խնայելու համար, այո, ես պատրաստել եմ բոլոր բաները և շնորհել եմ մարդկանց զավակներին լինելու գործակալն իրենց անձի» (ՎԱՈՒ 104.17):

Երեխան կարող է տեսնել, որ Երկնային Հայրը չէր պատվիրի տղամարդկանց և կանանց ամուսնանալ և շատանալ ու լցնել աշխարհը, եթե երեխաները, որոնց նրանք հրավիրում էին մահկանացու կյանք, սպառելու էին երկիրը: Քանի որ կա բավականաչափ և մի բան էլ ավել, մարդկության երջանկության թշնամին, ինչպես նաև աղքատության

և սովի պատճառը, երեխաների ծնունդը չէ: Դա մարդկանց ձախողումն է անել երկրի հետ այն, ինչ Աստված կարող էր ուսուցանել նրանց անել, եթե միայն նրանք կամենային խնդրել, իսկ հետո հնազանդվել, քանզի նրանք գործակալն են իրենց անձի:

Մենք կարող ենք նաև տեսնել, որ մաքրաբարո լինելու պատվիրանը՝ միայն ամուսնության մեջ ծննդաստեղծ ուժերի օգտագործումը, չի սահմանափակում, այլ ավելի շուտ ընդլայնում է և վեհացնում: Հավերժական կյանքը մեր ժառանգներին այս կյանքից մեզ հետ միայն հավերժություն տանելը չէ, այլ նաև հավերժական աճ ունենալն է: Սա նկարագրությունն է նրա, թե ինչ է սպասվում նրանց, ովքեր ամուսնացած են որպես ամուսին և կին Աստծո ծառայի կողմից, որն ունի իշխանություն առաջարկելու մեզ կնքման սրբազան արարողությունները: Ահա Տիրոջ խոսքերը.

Ուշադիր մտածեք, թե դուք իսկապես ինչի կարիք ունեք:

«Նրանց հետ պիտի կատարվի այն, ինչ իմ ծառան դրել է նրանց վրա՝ ժամանակի մեջ և ողջ հավերժության ընթացքում, և ամբողջությամբ ուժի մեջ կլինի, երբ նրանք աշխարհից դուրս են, և նրանք կանցնեն հրեշտակների և աստվածների մոտով, որոնք նշանակված են այնտեղ, դեպի իրենց վեհացումը և փառքը բոլոր բաներում, ինչպես որ կնքվել է նրանց գլխին, փառք, որը կլինի սերունդների լիությունը և շարունակությունը հավիտյանս հավիտենից:

Այն ժամանակ նրանք կլինեն աստվածներ, որովհետև նրանք վերջ չունեն, հետևաբար նրանք կլինեն հավիտենականությունից հավիտենականություն» (ՎԱՈ 132.19–20):

Այժմ դուք տեսնում եք, թե ինչու է մեր Երկնային Հայրն այդպիսի բարձր չափանիշներ դնում մեր առջև ծննդաստեղծ ուժերն օգտագործելու համար, որոնց շարունակությունը հավերժական կյանքի սիրտն է կազմում: Նա մեզ հայտնել դրա գինը, ասելով.

«Եվ եթե պահես իմ պատվիրանները և համբերես մինչև վերջ, դու կունենաս հավերժական կյանք, պարգև, որը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից» (ՎԱՈՒ 14.7):

Մենք կարող ենք հասկանալ, թե ինչու է Երկնային Հայրը պատվիրում մեզ հարգել կյանքը և փայփայել զորությունները, որոնք առաջացնում են դա, որպես սրբություն: Եթե մենք չունենանք այդ զգացումներն այս կյանքում, ինչպե՞ս կարող է մեր Հայրը դրանք մեզ տալ հավերժություններում: Ընտանեկան կյանքն այստեղ դասասենյակ է, որտեղ մենք պատրաստվում ենք այնտեղի ընտանեկան կյանքի համար: Եվ արարչագործության նպատակը եղել է և կա այնտեղ մեզ ընտանեկան կյանքի հնարավորություն տալու մեջ: Ահա, թե ինչու էր Եղիայի գալուստը այս ձևով նկարագրվում.

«Եվ նա զավակների սրտերում կսերմանի հայրերին տված խոստումները, և զավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը: Եթե այդպես չլինի, ողջ երկիրն ամբողջովին կամայանա նրա գալստյան ժամանակ» (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.39):

Մեզանից ոմանց համար մահկանացու կյանքի այդ դասասենյակում կլինեն այս կյանքում ամուսնություն և զավակներ ողջ մեր սրտով ունենալու ցանկություն, բայց այն կարող է հետաձգված կամ մերժված լինել: Նույնիսկ այդպիսի վիշտը կարող է դառնալ օրհնություն արդար և սիրառատ Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի կողմից: Ոչ ոք, ով ձգտում է լիակատար հավատքով և ողջ սրտով հավերժական կյանքի օրհնություններին, չի մերժվի: Եվ որքան մեծ կլինի ուրախությունը և որքան ավելի խորը կլինի երախտագիտությունն այն ժամանակ՝ այժմ համբերատարությամբ դիմանալուց և հավատք ցուցեբերելուց հետո:

Հայտարարությունը նկարագրում է ընտանեկան կյանքի համար այստեղ մեր ուսումնառությունը՝ մեր Հավերժական Հոր ներկայության մեջ.

«Ամուսինը և կինը լուրջ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և իրենց երեխաներին: «Որդիքը Տիրոջ ժառանգությունն են» (Սաղ. ՃԻԷ.3): Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապահ քաղաքացիներ լինել, որտեղ էլ որ ապրեն: Ամուսիններն ու կանայք, մայրերն ու հայրերը հաշվետու կլինեն Աստծո առջև այս պարտականությունների կատարման համար:

Ընտանիքը կարգված է Աստծո կողմից: Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը Նրա հավերժական ծրագրի համար էական է: Երեխաները պետք է ծնվեն ամուսնական կապի մեջ և դաստիարակվեն մոր և հոր կողմից, ովքեր հարգում են ամուսնական երդումները լիակատար հավատարմությամբ: Ընտանեկան կյանքում ամենայն հավանականությամբ երջանկության կարելի է հասնել, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում են և պահպանվում հավատքի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի ու օգտակար և ուժերը վերականգնող հանգստի սկզբունքների վրա: Ըստ աստվածային ծրագրի հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով և առաքինությամբ և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքների կենսական կարիքներն ու իրենց ընտանիքների պաշտպանությունը: Մայրերը հիմնականում պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակության համար: Այս սուրբ պարտականություններում հայրերը և մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար

գործընկերներ: Անաշխատունակությունը, մահը կամ այլ հանգամանքներ կարող են անհրաժեշտություն առաջացնել, որպեսզի փոփոխվեն ընտանիքի համար հոգ տանողների դերերը: Անհրաժեշտության դեպքում մոտիկ ազգականները պետք է օգնություն ցույց տան»:

Այդ երկու պարբերությունները լցված են գործնական եզրակացություններով: Կան բաներ, որոնք մենք կարող ենք սկսել անել այժմ: Դրանք կապված են ընտանիքի հոգևոր և ֆիզիկական կարիքներն ապահովելու անհրաժեշտության հետ: Կան բաներ, որոնք մենք կարող ենք անել այժմ նախապատրաստվելու համար, կարիքից շատ առաջ, որպեսզի մենք կարողանանք լինել հանգիստ, իմանալով, որ մենք արել ենք այն ամենը, ինչ կարող էինք:

Սկսենք նրանից, որ կարող ենք որոշել պլանավորել հաջողությունը, ոչ թե ձախողումը: Ամեն օր մենք պարուրվում ենք վիճակագրությամբ՝ համոզելով մեզ, որ ընտանիքը, որը բաղկացած է սիրող հորից և մորից, սիրված, ուսուցանված և խնամված երեխաներից, ինչպես հայտարարությունն է պատկերում, դինոզավրերի ուղով է գնում՝ դեպի բնաջնջում: Դուք բավականաչափ ապացույցներ ունեք ձեր իսկ ընտանիքներում, որ երբեմն արդարակյաց մարդկանց ընտանիքները ճեղքվում են իրենց վերահսկողությունից վեր հանգամանքների պատճառով: Քաջություն է պահանջվում և հավատք ծրագրել այն, ինչ Աստված ձեր առջև ներկայացնում է ավելի շուտ որպես իդեալ, քան այն, ինչ հանգամանքները կարող են ստիպել ձեզ անել:

Կան կարևոր ուղիներ, որոնցով ձախողման պլանավորումը կարող է ձախողումը ավելի հավանական դարձնել, իսկ իդեալը քիչ հավանական: Մտածեք այս երկու պատվիրանների մասին որպես օրինակ. «Հայրերը պետք է … ապահովեն ընտանիքի կենսական կարիքները», իսկ «մայրերը հիմնականում պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակության համար»: Իմանալով, թե որքան դժվար կարող է դա լինել, երիտասարդը գուցեև ընտրի մի կարիերա, այն հիմնավորմամբ, թե որքան փող կարող է վաստակել, եթե նույնիսկ դա նշանակի որ չի կարողանա բավականաչափ տանը լինել, որպեսզի հավասար զուգընկեր լինի: Այդ անելով, նա արդեն որոշում է, որ չի կարող հույս ունենալ անելու այն, ինչ կլիներ լավագույնը: Որևէ երիտասարդ կին գուցեև պատրաստվի մի կարիերայի, որն անհամատեղելի է իր երեխաների դաստիարակության համար պատասխանատու լինելու հետ, որը թույլ չի տա ամուսնանալ, երեխաներ ունենալ կամ միայնակ մնալու դեպքում նրանց համար ինքնուրույն հոգ տանել: Կամ գուցե նրան չի հաջողվի կենտրոնացնել իր կրթությունը ավետարանի և աշխարհիկ գիտելիքի վրա, որը կպահանջեր դաստիարակել ընտանիքին, չհասկանալով, որ իր տաղանդների և իր կրթության բարձրագույն և լավագույն կիրառումը կլիներ իր տանը: Քանի որ երիտասարդ տղամարդը և կինը պլանավորում են վատթարագույն տարբերակը, նրանք գուցեև լավագույնը դարձնեն քիչ հավանական:

Նրանք երկուսն էլ իմաստուն են՝ անհանգստանալով ապագա ընտանիքի ֆիզիկական կարիքների մասին: Տուն գնելու համար գները, համեմատած միջին աշխատավարձներին, թվում է, բարձրանում են, իսկ աշխատատեղերը դժվար է պահել: Բայց կան այլ ուղիներ, որոնցով երիտասարդ տղամարդն ու երիտասարդ կինը գուցե մտածեն այս երեկո պատրաստվել ապահովել այդ ապագա ընտանիքը: Եկամուտը դրա միայն մի մասն է: Նկատե՞լ եք ամուսինների և կանանց, ովքեր նեղված են զգում փողի բացակայությունից, ապա ընտրում են ուղիներ իրենց ընտանիքի եկամուտը անընդհատ բարձրացնելով, իսկ հետո հայտնաբերում են, որ միևնույն է նեղված են՝ եկամուտը որքան էլ որ լինի: Կա մի հին բանաձև, որը լսած կլինեք.. Եկամուտը հինգ դոլար, իսկ ծախսերը վեց դոլար՝ թշվառություն: Եկամուտը չորս դոլար, իսկ ծախսերը երեք դոլար՝ երջանկություն:

Արդյո՞ք երիտասարդ տղամարդը կարող է ապահովել ընտանիքին և միևնույն ժամանակ լինել տանը, իսկ երիտասարդ կինը կարո՞ղ է լինել այնտեղ՝ դաստիարակելու երեխաներին, որ կարող են կախված լինել ինչպես նրանից, թե ոնց են նրանք սովորում ծախսել, նույնպես էլ նրանից, թե ինչպես են նրանք սովորում վաստակել: Բրիգամ Յանգն ասել է այս ձևով, խոսելով ինչպես մեզ հետ, այնպես էլ իր օրերի մարդկանց հետ.

«Եթե ցանկանում եք հարստանալ, խնայեք ինչ որ ստանում եք: Հիմարը կարող է փող վաստակել, բայց իմաստուն մարդուց պահանջվում է խնայել և տնօրինել այն ի նպաստ իրեն: Ապա գնալ աշխատելու և խնայել բոլորը և կարել ձեր իսկ գլխարկները և հագուստները» (*Journal of Discourses*, 11:201):

Այսօրվա աշխարհում, փոխարեն ձեզ ասելու գլխարկներ կարել, նա հավանաբար կառաջարկեր ուշադիր մտածել այն մասին, թե դուք իսկապես ինչի կարիք ունեք՝ ավտոմեքենաների, հագուստների, ուժերը վերականգնող հանգստի, տների, արձակուրդների, թե էլի ինչ որ բաների, որոնք դուք մի օր կփորձեք ապահովել ձեր երեխաների համար: Եվ նա հավանաբար կնշեր, որ արժեքների տարբերությունը, ըստ աշխարհի չափանիշների, և այն, ինչի կարիքը ձեր երեխաներն իսկապես ունեն, կարող է թույլ տալ ձեզ լրացուցիչ ժամանակ թողնել, որի կարիքը հայրն ու մայրն իրենց երեխաների հետ գուցե ունենան՝ բերելու նրանց տուն, իրենց Երկնային Հոր մոտ:

Նույնիսկ ամենատնտեսող ծախսելու սովորույթները և աշխատանքի ամենաուշադիր պլանավորումը գուցե բավարար չլինի հաջողություն ապահովելու համար, բայց դա կարող է բավարար լինել տալու ձեզ այն խաղաղությունը, որը գալիս է իմանալուց, որ արեցիք լավագույնը, ինչ կարող էիք՝ ապահովելու և դաստիարակելու համար:

Կա պլանավորման մեկ այլ ուղի, որով մենք կարող ենք ծրագրել հաջողության հասնելու համար այս երեկո, չնայած այն դժվարություններին, որոնք կարող են լինել մեր առջևում: Հայտարարությունը մի բարձր չափանիշ է դնում մեզ համար՝ հստակեցվելով, երբ այն նկարագրում է մեր երեխաներին ուսուցանելու մեր պարտականությունը: Ինչ որ մի ձևով մենք պետք է սովորեցնենք նրանց, որպեսզի նրանք սիրեն միմյանց և ծառայեն միմյանց և պահեն պատվիրանները և լինեն օրինապահ քաղաքացիներ: Եթե մենք մտածում ենք լավ ընտանիքների մասին, ովքեր չեն բավարարում այդ ստուգարքը և քչերն են բավարարում այն առանց ինչ որ չափով ձախողվելու մեկ կամ երկու սերնդի ընթացքում, մենք գուցե կորցնենք մեր հույսը:

Մենք չենք կարող վերահսկել, թե ինչ են ընտրում ուրիշները և այսպիսով մենք չենք կարող ստիպել մեր երեխաներին երկինք գնալ, բայց մենք կարող ենք որոշել, թե ինչ անել: Եվ մենք կարող ենք որոշել այս երեկո, որ մենք կանենք բոլորը, ինչ կարող ենք, վար բերելու երկնքի զորությունները այն ընտանիք, որը մենք այդքան շատ ենք ուզում հավերժ ունենալ:

Հայտարարության մեջ մեզ համար կա մի բանալի.. «Ընտանեկան կյանքում ամենայն հավանականությամբ երջանկության կարելի է հասնել, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա»:

Ի՞նչը կարող է ավելի հավանական դարձնել, որ մարդիկ ընտանիքում սիրեն և ծառայեն միմյանց, պահեն Աստծո պատվիրանները և հնազանդվեն օրենքին: Դա պարզապես ավետարանը սովորեցնելը չէ: Դա Աստծո խոսքը լսելու, իսկ հետո հավատքով փորձելու մեջ է: Եթե նրանք դա անեն, նրանց էությունները կփոխվի մի ձևով, որը կառաջացնի այն երջանկությունը, որին մենք ձգտում ենք: Մորոնիի գրքի այս խոսքերը ճշգրտորեն նկարագրում են, թե ինչպես է այդ փոփոխությունը հանդիսանում Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելու բնական պտուղը:

«Եվ ապաշխարության առաջին պտողներից է մկրտությունը, և մկրտությունը գալիս է հավատքով պատվիրանների կատարման համար. և պատվիրանները կատարելը բերում է մեղքերի թողություն.

Եվ մեղքերի թողությունը բերում է հեզություն և սրտի խոնարհություն. և հեզության ու սրտի խոնարհության շնորհիվ գալիս է Սուրբ Հոգու այցելությունը, Մխիթարիչ, որը լցնում է հույսով և կատարյալ սիրով, սեր, որը համբերում է ջանասիրությամբ առ աղոթքը, մինչև որ կգա վերջը, երբ բոլոր սրբերը կբնակվեն Աստծո հետ» (Մորոնի 8.25–26):

Եթե մենք երեխաներին լավ ենք պատրաստում մկրտության, մենք նրանց պատրաստում ենք այն գործընթացի համար, որը կբերի Քավության ազդեցությունները նրանց կյանք և երկնքի զորությունները մեր տուն: Մտածեք այն փոփոխության մասին, որի կարիքը մենք ունենք: Մենք Սուրբ Հոգու կարիքն ունենք, որ լցնի մեզ հույսով և կատարյալ սիրով, որպեսզի մենք կարողանանք համբերել աղոթքի հանդեպ ջանասիրությամբ : Եվ այդ ժամանակ մենք կարող ենք հավերժ բնակվել Աստծո հետ ընտանիքներով: Ինչպե՞ս դա կարող է գալ: Իր որդուն Մորմոնի նկարագրած պարզ խոստումով: Հավատքն առ Հիսուս Քրիստոս ի ապաշխարություն, իսկ հետո մկրտությունը նրանց կողմից, ովքեր իշխանություն ունեն, տանում է դեպի մեղքերի թողություն: Եվ դա առաջացնում է հեզություն և սրտի համեստություն: Իսկ դա իր հերթին թույլ է տալիս մեզ ունենալ Սուրբ Հոգու ընկերակցությունը, որը լցնում է մեզ հույսով և կատարյալ սիրով:

Դուք գիտեք, որ դա ճիշտ է, ես գիտեմ, որ դա ճիշտ է, մեր իսկ փորձառությունից և նրանց փորձառությունից, ովքեր մեր ընտանիքում են: Մենք գիտենք, որ մի օր մենք կկարողանանք գտնել մեր մահճակալին աշխարհի մյուս կողմից քսանժամյա թռիչքից հետո մի գունավոր գրություն՝ գրված մանկական ձեռագրով. «Դուք պետք է որ այնքան հոգնած լինեք: Պառկեք և հանգստացեք: Դուք տանն եք, որտեղ մենք հոգ կտանենք ամեն ինչի համար»: Եվ դուք կարող եք իմանալ, որ դա նշանակում է ավելի շատ բան, քան լոկ խոսքերը, եթե նրա ավագ քույրն է ասում տունդարձ թռիչքի մի կանգառում կատարած հեռախոսազանգի ընթացքում. «Օ, ես ուղղակի փոշելուկով մաքրում եմ տունը»:

Ինչպե՞ս է տասնմեկ տարեկանը, որը երբեք չի թռչել ծովի վրայով, իմանում, թե ինչպիսին է օդանավի ուշացման ազդեցությունը իր մոր և հոր վրա: Ինչպե՞ս է տասնհինգ տարեկանը որոշում միացնել փոշեկուլը առանց իրեն խնդրելու: Կամ ինչպե՞ս է ամուսինն իմանում իր կնոջ զգացմունքների մասին կամ կինը իր ամուսնու զգացմունքների մասին և այսպիսով հասկանում առանց ասելու և հետո օգնում առանց խնդրելու: Ինչո՞ւ է զարմուհին զիջում իր մահճակալը հորաքրոջը և զարմիկը տալիս իր տունը և ուտելիքը: Ինչպե՞ս է փեսան կամ հարսը հնարավոր համարում երեխաներ տանել իրենց արդեն իսկ զբաղված տունը և իրենց այնպես պահել, կարծես թե դա օրհնություն է: Դա այս խոսքերին հավատալն ու դրանց համաձայն գործելն է, որ վար են բերում երկնքի զորությունները.

«Եվ մեղքերի թողությունը բերում է հեզություն և սրտի խոնարհություն. և հեզության ու սրտի խոնարհության շնորհիվ գալիս է Սուրբ Հոգու այցելությունը, Մխիթարիչ, որը լցնում է հույսով և կատարյալ սիրով, սեր, որը համբերում է ջանասիրությամբ առ աղոթքը, մինչև որ կգա վերջը, երբ բոլոր սրբերը կբնակվեն Աստծո հետ» (հ. 26): Իսկ կարելի՞ է, որ ավելացնեմ «ընտանիքներում» խոսքը:

Հայտարարությունը զգույշ է իր խոստումներում. «Ընտանեկան կյանքում ամենայն հավանականությամբ երջանկության կարելի է հասնել, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա»: Սիրտս ցավում է մի քիչ՝ իմանալով, որ շատերը, ովքեր կարդում են այդ

խոսքերը շրջապատված կլինեն նրանց կողմից, ովքեր չգիտեն կամ մերժում են Հիսուս Քրիստոսի ուսմունքները: Նրանք կարող են միայն անել իրենց լավագույնը: Բայց նրանք կարող են իմանալ սա՝ ընտանիքում նրանց գտնվելը, որքան էլ մարտահրավիրող լինի, հայտնի է սիրառատ Երկնային Հորը: Նրանք կարող են իմանալ, որ ուղին պատրաստված է նրանց համար անելու այն ամենը, ինչ կպահանջվի հավերժական կյանքին արժանանալու համար: Նրանք գուցե չկարողանան տեսնել, թե ինչպես Աստված կարող էր նրանց տալ այդ պարգևը, ոչ էլ՝ թե ում հետ նրանք կկիսվեն դրանով: Այնուամենայնիվ, Հիսուս Քրիստոսի ավետարանի խոստումը հավաստի է.

«Բայց իմացեք, որ նա, ով արդարության գործեր է անում, պիտի ստանա իր վարձքը, այսինքն խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում:

Ես՝ Տերս եմ ասել դա, և Հոգին վկայություն է բերում: Ամեն» (ՎԱՈՒ 59:23–24):

Խաղաղությունը կգա համոզվածությունից, որ մեր կյանքում Քավությունը և հույսը հավերժական կյանքի, որը բխում է նրանից, գործադրվել է:

Հայտարարությունը նախազգուշացնում է, որ նրանց համար ովքեր ձախողվում են արձագանքել, արդյունքն ավելի աղետալի կլինի, քան ուղղակի խաղաղության բացակայությունն այս կյանքում կամ երջանկության բացակայությունը: Ահա, հայտարարությունն ավարտվում է մարգարեական նախազգուշացմամբ և ի գործ կոչով.

«Մենք նախազգուշացնում ենք, որ այն անձինք, ովքեր խախտում են մաքրաբարոյության ուխտերը, ովքեր բռնություն են գործադրում իրենց կողակցի կամ երեխաների հանդեպ կամ թերանում ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստծո առջև: Դեռ ավելին, մենք նախազգուշացնում ենք, որ ընտանիքի քայքայումը անհատների, համայնքների և ազգերի վրա կբերեն այն աղետները, որոնք կանխագուշակվել են հնադարյան և ժամանակակից մարգարեների կողմից:

Մենք դիմում ենք պատասխանատու քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին ամենուր, որպեսզի խթանվեն այն միջոցները, որոնք նախատեսված են, որպես հասարակության հիմնական միավորի՝ ընտանիքը պահպանելու և ամրապնդելու համար»:

Ընտանեկան միավորը ոչ միայն էական է հասարակության և Եկեղեցու համար, այլ հավերժական կյանքի մեր հույսի համար: Մենք սկսում ենք փոքրաքանակությունից ձեռք բերել ընտանիքում՝ ավելի փոքր միավորում, որը կտարածվի Եկեղեցում և հասարակության մեջ, որում մենք ապրում ենք այս աշխարհում և ապա, ինչ փոքրաքանակությունից ենք ձեռք բերում մեր ընտանիքներում, միասին կապված կլինեն հավերժական ուխտերով և հավատարմությամբ: Մենք կարող ենք սկսել այժմ, որպեսզի«խթանվեն այն միջոցները, որոնք նախատեսված են ընտանիքը պահպանելու և ամրապնդելու համար»: Աղոթում եմ, որ մենք անենք այդ: Աղոթում եմ, որ դուք խնդրեք. «Հայր, ինչպե՞ս կարող եմ պատրաստվել»: Ասեք նրան, թե որքան շատ եք ցանկանում այն, ինչ նա այնքան շատ է կամենում տալ ձեզ: Դուք կստանաք տպավորություններ, և եթե դուք գործեք դրանց համաձայն, ես ձեզ խոստանում եմ երկնքի զորությունների օգնությունը:

Ես վկայում եմ, որ մեր Երկնային Հայրն ապրում է, որ մենք ապրել ենք Նրա հետ որպես ոգիներ և որ մենք միայնակ կապրենք որտեղ էլ որ լինի, բայց Նրա հետ՝ գալիք աշխարհում:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է, որ Նա է հնարավոր դարձրել այն փոփոխությունները, որոնք ձեր մեջ և իմ մեջ են, որոնք կարող են տալ մեզ հավերժական կյանք, տառապելով մեր բոլորի՝ Իր հոգևոր եղբայրների և քույրերի, Իր Երկնային Հոր և մեր Երկնային Հոր զավակների մեղքերի համար:

Ես վկայում եմ, որ Սուրբ Հոգին կարող է լցնել մեզ հույսով և կատարյալ սիրով:

Եվ ես վկայում եմ, որ կնքող զորությունը, որը վերականգնվել էր Ջոզեֆ Սմիթի կողմից և այժմ կրում է Նախագահ Գորդոն Բ. Հինքլիին, կարող է կապել մեզ ընտանիքներով և տալ մեզ հավերժական կյանք, եթե մենք անենք այն ամենը, ինչ մենք կարող ենք անել հավատքով: Եվ այսպես եմ ես վկայում և արտահայտում իմ սերը ձեզ, Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ամուսնությունը պետք է համարվի ինքնին որպես սրբազան ուխտ Աստծո առջև:

—Երեց Էզրա Թաֆթ Բենսոն

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Հավատարմության վարդապետությունը

Ելից Ի.14

«Շնություն մի անիր»:

Ալմա 39:5

«Չգիտե՞ս, որդիս, որ այս բաները պղծություն են Տիրոջ աչքում. Այո, ամենապիղծը բոլոր մեղքերից, բացի դա լինի անմեղ արյուն թափելը կամ Սուրբ Հոգին ուրանալը»:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Այժմ ես անցնում եմ մեկ այլ քայքայիչ էլեմենտի, որը դժբախտ է դարձնում չափից շատ ամուսնություններ: Ինձ համար հետաքրքիր է, որ Տասը Պատվիրաններից երկուսը առնչվում են հետևյալի հետ. «Շնութիւն մի անիր» և «Մի ցանկանար» (Ելից Ի.14,17): Թեդ Կոպելը՝ ABC's 'Nightline' ծրագրի կառավարիչը, ասել է հետևյալը Դյուքի Համալսարանում մի խումբ ուսանողների՝ այն կարգախոսների վերաբերյալ, որոնք կոչ էին անում կրճատել թմրադեղերը և անբարոյականությունը.

Մենք փաստորեն համոզում ենք մեզ, որ կարգախոսները կփրկեն մեզ… Բայց պատասխանն է *ՈՉ*: Ոչ թե այն պատճառով, որ դա հրաշալի չէ կամ հանճարեղ կամ դուք ի վերջո կհայտնվեք բանտում կամ կմահանաք ՁԻԱՀ-ի բաժանմունքում, այլ *ՈՉ*, որովհետև դա սխալ է, որովհետև մենք 5,000 տարի անց ենք կացրել որպես մտածող մարդկային էակների ռասա, փորձելով դուրս քաշել մեզ նախնադարյան ճահճից՝ որոնելով ճշմարտություն և բարոյական կատարելություններ: Իր ամենամաքուր ձևով ճշմարտությունը քաղաքավարական թփթփոց չէ ուսին: Այն ոռնացող նախատինք է: Այն, ինչ Մովսեսը վար բերեց Սինայ սարից, *Տասը Առաջարկներ չէին* (address given at Duke University, 10 May 1987):

Մի պահ մտածեք այդ մասին: Այն, ինչ Մովսեսը վար բերեց Տասը Պատվիրաններ էին, որոնք գրվել էին Եհովայի մատով քարե տախտակների վրա՝ Իսրայելի զավակների և բոլոր եկող սերունդների փրկության և ապահովության համար, անվտանգության և երջանկության համար:

Ընդհանրապես, չափից շատ մարդիկ, առավոտյան տանը թողնելով իրենց կանանց և գնալով աշխատանքի, որտեղ նրանք գտնում են հրապուրիչ հագնված և հրապուրիչ հարդարված երիտասարդ կանանց, իրենց երևակայում են երիտասարդ, գեղեցիկ և որպես անդիմադրելի գրավիչ տղամարդ: Նրանք բողոքում են, որ իրենց կանայք այն նույն տեսքը չունեն, ինչ քսան տարի առաջ էին, երբ իրենք ամուսնացան: Որին ես պատասխանում եմ. «Ո՞վ կունենար նախկին տեսքը, ձեզ հետ քսան տարի ապրելուց հետո»:

Ողբերգությունը նրանում է, որ որոշ տղամարդիկ թակարդն են ընկնում իրենց իսկ հիմարությունից և իրենց իսկ թուլությունից: Նրանք քամուն են նետել ամենասրբազան և հանդիսավոր ուխտերը, որոնք կապել են Տիրոջ տանը և կնքել սուրբ քահանայության իշխանությամբ: Նրանք մի կողմ են թողել իրենց կանանց, ովքեր հավատարիմ են եղել, ովքեր սիրել են և հոգ տարել իրենց մասին, ովքեր պայքարել են իրենց հետ աղքատության ժամանակ, որպեսզի խոտանվեն առատ ու լի կյանքի ընթացքում: Նրանք իրենց երեխաներին հայրազուրկ են թողել: Նրանք գործի են դրել ամեն ձևի խաբեություններ, խուսափելու դատարանի որոշմամբ նախատեսված ալիմենտի և երեխայի նպաստի վճարումից:…

Ամուսնությունից տասնութ տարի անց ամուսնու բողոքը, որ նա այլևս չի սիրում իր կնոջը, իմ կարծիքով, Աստծո առջև կապած ուխտերի խախտման և նաև պարտականությունների ոտնահարման թույլ պատճառաբանություն է, որը հենց հասարակության ուժն է, որի մասն ենք կազմում մենք» (in Conference Report, Oct. 1991, 71–72; կամ *Ensign*, Nov. 1991, 51):

Առաջին Նախագահություն՝ Հեբեր Ջ. Գրանթ, Ջ.Ռուբեն Քլարկ Կրտ., Դեյվիդ Օ. Մակքեյ

«Այս Եկեղեցու վարդապետությունն է, որ սեռական մեղքը՝ տղամարդու և կնոջ միջև անօրինական սեռական հարաբերությունները, իրենց մեծությամբ, գտնվում են սպանությունից հետո:

Տերը հիմնական տարբերություններ չի դրել պոռնկության, շնության և մարմնավաճառության միջև….

Դուք՝ ամուսիններ և կանայք, ովքեր մաքրաբարոյության հանդիսավոր պարտավորություններ եք վերցրել Տիրոջ

սուրբ տաճարներում և խախտել եք այդ սրբազան երդումներն ուրիշների հետ անօրինական սեռական հարաբերությունների մեջ մտնելով, դուք ոչ միայն գործում եք շնության չար և նողկալի մեղքը, այլ դուք խախտում եք այն ուխտը, որը դուք ինքներդ եք արել հենց Իր՝ Տիրոջ հետ, կնքման համար նախքան զոհասեղանին ձեր մոտենալը: Դուք դառնում եք ենթակա տուգանքների, որը Տերն է նշանակել նրանց համար, ովքեր խախտում են այդ ուխտերն Իր հետ (in Conference Report, հոկտ. 1942, 11):

Երեց Էզրա Թաֆթ Բենսոն

«Ամուսնությունն ինքնին պետք է համարվի որպես սրբազան ուխտ Աստծո առջև: Ամուսնացած զույգը պարտականություն ունի ոչ միայն միմյանց հանդեպ, այլ Աստծո հանդեպ: Նա օրհնություններ է խոստացել նրանց, ովքեր հարգում են այդ ուխտը:

Բոլոր ամուսնության երդումների համար հավատարմությունը բացարձակապես կարևոր է՝ սիրո, վստահության և խաղաղության համար: Շնությունը միանշանակ դատապարտվում է Տիրոջ կողմից» (in Conference Report, հոկտ. 1982, 85; կամ *Ensign,* նոյ. 1982, 59):

Երեց Ռոբերտ Դ. Հեյլզ

«Նպատակահարմարեցում, որ Աստված պետք է փոխի Իր պատվիրանները մեր օրինազանցություններին հարմարեցնելու համար, տանում է դեպի հոգևոր խավար, որը միայն ավետարանի լույսը կարող է վերացնել: Շնության մեջ բռնված կնոջ համար Քրիստոսը չմեղմացրեց շնություն չգործելու պատվիրանը: Ավելի շուտ Նա խորհուրդ տվեց նրան «այսուհետև մեղք մի գործիր» (Հովհ. Ը.11): Նա խոստացել է մեզ բոլորիս ներում ապաշխարության միջոցով: Մենք է որ պետք է փոխվենք, ոչ թե պատվիրանները» (in Conference Report, ապր. 1996, 52; կամ *Ensign,* մայիս 1996, 37):

Ես համոզված եմ, որ երջանիկ ամուսնությունը ոչ թե այնքան ռոմանտիկայի հարց է, որքան հուզիչ մտահոգություն՝ զուգընկերոջ հանգստավետության և բարօրության համար:

Անհավատարմության գինը

Առակաց Ե.3–4

«Որովհետև օտար կնկայ շրթունքները մեղրի խորիսխ են կաթեցնում և նորա քիմքը իւղից կակուղ է.

Բայց նորա վախճանը դառն է օշինդրի պէս, սուր է երկսայրի սուրի պէս»:

Մաղաքիա Գ.5

«Եվ ես կմոտենամ ձեզ դատաստանի համար, և ես ժիր վկայ կլինեմ կախարդների և շնացողների դեմ»:

Գաղատացիս Զ.7–8

«Մի խաբուիք Աստուած չի ծաղրուիլ: Որովհետև ինչ որ մարդ սերմէ, այն էլ կինձէ:

Իր մարմնի մեջ սերմողը մարմնիցն ապականություիւն կինձէ. և Հոգու մեջ սերմողը Հոգուցն յավիտենական կեանք կինձէ»:

Վարդապետություն և Ուխտեր 42.23–24

«Եվ նա, ով նայում է մի կնոջ վրա ցանկանալով նրան, ուրանում է հավատքը, և չպիտի ունենա Հոգին և եթե նա չապաշխարի, նա դուրս պիտի գցվի:

Շնություն մի արա. իսկ նա, ով շնություն է անում և չի ապաշխարում, դուրս պիտի գցվի»:

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Եղեք հավատարիմ ձեր ամուսնական ուխտերում մտքով, խոսքով և գործով: Պոռնոգրաֆիան, սիրախաղը և անառողջ սեռական քմահաճույքները քայքայում են մարդու բնավորությունը և հարվածում երջանիկ ամուսնության հիմքին: Այդ պատճառով ամուսնության մեջ միասնությունն ու վստահությունը խորտակվում են: Նա, ով չի վերահսկում իր մտքերը և այսպիսով շնություն է գործում իր սրտում, եթե չապաշխարի, չի ունենա Հոգին, այլ կուրանա հավատքը և վախ կունենա» (տես ՎԿՈՒ 42.23, 63.16) (in Conference Report, հոկտ. 1994, 67; կամ *Ensign,* նոյ. 1994, 50):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ես բավարարված եմ, որ երջանիկ ամուսնությունը ոչ թե այնքան ռոմանտիկայի հարց է, որքան հուզիչ մտահոգություն զուգընկերոջ հանգստության և բարօրության համար:

Եսասիրությունը խիստ հաճախ փողային խնդիրների հիմքն է, որոնք շատ լուրջ և իրական գործոն են՝ ազդելով ընտանեկան կյանքի կայունության վրա: Եսասիրությունը շնության արմատն է, հանդիսավոր և սրբազան ուխտերի խախտումը՝ եսասեր կիրքը բավարարելու համար: Եսասիրությունը սիրո ուղղակի հակադրությունն է: Դա ագահության քայքայիչ դրսևորումն է: Այն խորտակում է ինքնատիրապետումը: Այն ոչնչացնում է հավատարմությունը: Այն պատռում է սրբազան ուխտերը: Այն դժբախտացնում է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց:

«Չափից շատ մարդիկ, ովքեր գալիս են ամուսնության, փայփայվել են և փչացվել և ինչ որ տեղ առաջնորդվել զգալու, որ ամեն ինչ բծախնդրորեն ճիշտ պետք է լինի

բոլոր դեպքերում, որ կյանքը զվարճությունների շարան է, որ ախորժակը պետք է բավարարվի առանց սկզբունքը հաշվի առնելու: Որքան ողբերգական են այդպիսի դատարկ և անխելամիտ մտածողության հետևանքները (in Conference Report, ապր. 1991, 96; կամ *Ensign,* մայիս 1991, 73):

Երեց Գորդոն Բ. Հինքլի

«Երբևէ եղե՞լ է շնություն առանց անազնվության: Բարբառային լեզվով չարը նկարագրվում է որպես «խաբեբա»: Եվ դա խաբելն է, քանզի այն զրկում է առաքինությունից, այն զրկում է հավատարմությունից, այն զրկում է սրբազան խոստումներից, այն զրկում է ինքնահարգանքից, այն զրկում է ճշմարտությունից: Այն ներառում է խաբեությունը: Դա ամենավատ տեսակի անձնական անազնվությունն է, քանի որ այն դառնում է մարդկային հարաբերություններից ամենասրբազանի հանդեպ դավաճանություն և Աստծո և մարդու առջև կապած ուխտերի և խոստումների ուրացում: Դա վստահության ստոր խախտումն է: Դա Աստծո օրենքը եսասիրաբար մի կողմ նետելն է և անազնվության այլ ձևերի նման դրա պտուղներն են վիշտը, դառնությունը, սիրտը կոտրած զուգընկերներ և դավաճանված երեխաներ» (in Conference Report, ապր. 1976, 92; կամ *Ensign,* մայիս 1976, 61):

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

«Քանի որ սեռական մտերմությունն այդքան սրբազան է, Տերը պահանջում է ինքնավերահսկողություն և մաքրություն նախքան ամուսնությունը, ինչպես նաև լիակատար հավատարմություն ամուսնությունից հետո…. Օրինացանցությանը հետևում են արցունքներ: Տղամարդիկ, հոգ տարեք, որ կանանց չստիպեք լաց լինել, քանի որ Աստված հաշվում է նրանց արցունքները» (in Conference Report, հոկտ. 1990, 61; կամ *Ensign,* նոյ. 1990, 47):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Շնությունը, պոռնկությունը, համասեռամոլ գործողություններ կատարելը և այլ շեղումները, որոնք մոտենում են դրանց իրենց ծանրությամբ, այլընտրանքային անընդունելի ապրելաձևեր են: Դրանք լուրջ մեղքեր են: Ֆիզիկական և սեռական բռնարարքները մեծ մեղքեր են: Այդպիսի ծանր մեղքերը պահանջում են խորն ապաշխարություն, որպեսզի ներվեն: Նախագահ Քիմբալը սովորեցրել է. «Յուրաքանչյուր ներման համար կա պայման: Վիրակապը պետք է այնքան լայն լինի որքան վերքն է: Ծոմը, աղոթքները, խոնարհությունը պետք է հավասարազոր լինի կամ ավելի մեծ քան մեղքն է» [*The Miracle of Forgiveness* (Salt Lake City: Bookcraft, 1969), p. 353]: «Անհրաժեշտ է, որ Աստված թողություն տա լուրջ մեղքերին մի քանի խնդրանքներով: Ըստ երևույթին Նա սպասում է մինչև երկարատև, հաստատուն ապաշխարություն է տեղի ունենում» [*The Teachings of Spencer W. Kimball,* . . . p. 85]“ (in Conference Report, ապր. 1995, 103, կամ *Ensign,* մայիս 1995, 77):

Նախազգուշական միջոցներ, որոնք օգնում են կանխարգելել անհավատարմությունը

Ա Կորնթացիս Է.2–3

«Սակայն պոռնկության պատճառով թող ամեն մարդ իր կինն ունենայ եւ ամեն մէկ կին թող իր մարդն ունենայ:

Մարդը թող իր կնկայ պարտքը վճարէ. եւ այնպես էլ կինն իր մարդին:

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Աշխարհի սեռական անմաքրությունն այսօր իսկական տղամարդկության կորստի արդյունք է՝ հաճույքներով տարվելու հետևանքով: Անմաքրաբարո մտքերը ծնում են անմաքրաբարո խոսքեր, իսկ անմաքրաբարո խոսքերը՝ անմաքրաբարո գործողություններ: Եկեղեցու ուսմունքներում, սպանության մեղքից հետո գալիս է շնությունը և սեռական անմաքրաբարոյությունը: Եթե Եկեղեցու անդամները հավատարիմ մնան մաքրաբարոյության իրենց հավատքին և զարգացնեն իսկական տղամարդկություն այլ ուղիներով ինքնավերահսկողություն գործադրելու միջոցով, նրանք կկանգնեն որպես փարոսի լույսեր, որոնց ճառագայթները կներթափանցեն մեղքով աղտոտված աշխարհ» (“Christ, the Light of Humanity,” *Improvement Era,* June 1968, 5):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Բավական չէ հեռու մնալ շնությունից: Մենք պետք է ամուսնական հարաբերությունը սրբազան դարձնենք, զոհաբերելով և աշխատելով պահպանել ջերմությունն ու հարգանքը, որը մենք վայելում էինք սիրատածման ժամանակ: Աստված նախատեսել է ամուսնությունը լինելու հավերժական, կնքված քահանայության զորությամբ, գոյատևելու գերեզմանից այն կողմ: Բարեխղճորեն և սիրով իրականացվող քաղաքավարության և բարության ամենօրյա գործերը մասնավորապես այն են, ինչ Տերն է ակնկալում» (in Conference Report, հոկտ. 1978, 7, կամ *Ensign,* նոյ. 1978, 6):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Վերահսկեք ձեր մտքերը: Ոչ ոք չի ընկնում անբարոյականության մեջ մեկ ակնկարթում: Անբարոյալկանության առաջին սերմերը միշտ ցանվում են մտքում: Երբ մենք թույլ ենք տալիս, որ մեր մտքերը պտտվեն անպարկեշտ կամ անբարոյական բաների վրա, դեպի անբարոյականության ուղին առաջին քայլերն արված են: Ես հատկապես

զգուշացնում եմ ձեզ պոռնոգրաֆիայի չարիքների դեմ…. Փրկիչը սովորեցրել է, որ նույնիսկ, երբ որևէ տղամարդ նայում է մի կնոջ ցանկանալով նրան, կամ այլ խոսքով ասած, երբ նա թույլ է տալիս որ իր մտքերը վերահսկողությունից դուրս գան, նա արդեն կատարում է շնություն նրա հետ իր սրտում (տես Մատթեոս Ե.28, ՎԱՈՒ 63.16)…

«… Եթե դուք ամուսնացած եք, խուսափեք որևէ ձևի սիրախաղից …

… Եթե ամուսնացած եք, խուսափեք մենակ լինել հակառակ սեռի անդամների հետ, երբ որ հնարավոր է: Անբարոյականության ողբերգությունների շատ դեպքեր սկսվում են, երբ տղամարդն ու կինը մենակ են գրասենյակում կամ եկեղեցում կամ էլ մեքենայում: Սկզբում կարող է ոչ մի մտադրություն կամ միտք չլինի մեղքի վերաբերյալ: Բայց հանգամանքները բերրի հող են պատրաստում գայթակղության համար…. Այնքան ավելի հեշտ է խուսափել այդպիսի հանգամանքներից հենց սկզբից, որպեսզի գայթակղությունը հնարավորություն չունենա սնուցման համար» (“Law of Chastity,” 51–52):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Վեր կանգնեք աղտոտությունից և կեղտից և այն գայթակղությունից, որը ձեզ շրջապատում է:

Դուք, կանայք, ովքեր չամուսնացած եք և ձեզանից ոմանք ովքեր ամուսնացած են, ովքեր գտնվում են աշխատատեղում, կարե՞լի է ձեզ մի նախազգուշացնող խոսք ասել: Դուք աշխատում եք տղամարդկանց հետ կողք կողքի: Ավելի ու ավելի շատ են լինում նախաճաշի գնալու հրավերներ, գործի մասին խոսելու ակնկալիքով Դուք ճանապարհորդում եք միասին: Դուք կանգ եք առնում նույն հյուրանոցում: Դուք աշխատում եք միասին:

«Հավանաբար դուք չեք կարող խուսափել սրանցից մի քանիսից, բայց դուք կարող եք խուսափել ձեզ վարկաբեկող իրավիճակների մեջ ընկնելուց: Կատարեք ձեր աշխատանքը, բայց ձեզ հեռու պահեք: Մի դարձեք մեկ այլ կնոջ տան խորտակման գործոն: Դուք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եք: Դուք գիտեք թե ձեզանից ինչ է սպասվում: Հեռու մնացեք այն բաներից, որոնք գայթակղեցնող են: Խուսափեք չարից, դրա հենց տեսքից» (“Walking in the Light of the Lord,” *Ensign,* նոյ. 1998, 99):

ՖԻՆԱՆՍՆԵՐ

Հարստություն ունենալը կամ նշանակալի եկամտի ձեռքբերումը երկնային բարեհաճության նշան չէ, իսկ դրանց բացակայությունը ապացույց չէ երկնքի անբարեհաճության:

—Երեց Դալլին Հ. Օուքս

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Երեց Դալլին Հ. Օուքս

«Հարստության խաբուսիկությունը կարող է շատ ուղիներով խեղդել ավետարանի պտուղները: Այն մարդը, որը ցանկանում է մեկ ուրիշի հարստությունը, հոգեպես տանջվում է: Մեծ հարստության տեր մարդը, որը հետո կորցնելով այն դառնանում ու ատելությամբ է լցվում, նույնպես հարստության խաբուսիկության զոհ է:

Զոհ է նաև այն մարդը, որը բարկությամբ է լցվում ամբարիշտների հարստության պատճառով: Մարգարե Երեմիան բարձրաձայնել է հին հարցը «Ինչո՞ւ համար յաջող է ամբարիշտների ճանապարհը. Հանգիստ են՝ բոլոր նենգութիւն գործողները» (Երեմիա ԺԲ 12.1): Նրանք, ովքեր մտորում են ամբարիշտների բարգավաճման կամ թվացյալ երջանկության մասին, խիստ մեծ շեշտ են դնում նյութական բաների վրա: Նրանք կարող են խաբվել, որովհետև նրանց առաջնահերթությունները խիստ կենտրոնացած են աշխարհիկ հարստության վրա:

Հարստությունների խաբուսիկության մեկ այլ զոհ է այն անձնավորությունը, որը գիտակցաբար կամ անգիտակցաբար հանցանքի զգացում ունի ունեցվածքի կամ աչքի ընկող դիրք ձեռք բերելիս ձախողվելու պատճառով, որոնք աշխարհը համարում է հաջողության չափորոշիչներ:

Նրանք, ովքեր քարոզում են հաջողության ավետարանը և բարգավաճման աստվածաբանությունը տանջվում են «հարստությունների խաբուսիկությունից» և «աստվածապաշտությունը շահավաճառություն» համարելուց: Հարստություն ունենալը կամ նշանակալի եկամտի ձեռքբերումը երկնային բարեհաճության նշան չէ, ոչ էլ դրանց բացակայությունը ապացույց երկնքի անբարեհաճության: Հարստությունները կարող են լինել օրհնությունների շարքում, որոնք հետևում են ճիշտ վարքին՝ օրինակ տասանորդ վճարելուն (Մաղաքիա Գ. 9-12), բայց հարստությունները կարող են նաև ձեռք բերվել ոսկեխույզի բախտի միջոցով կամ որպես անազնվության պտուղներ (*Pure in Heart*, 75–76):

ՓՈՂԻ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԿ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Երեց Մարվին Ջ. Աշթոն

Տասներկու Առաքյալների Քվորումից

Գրքույկ

1975 թվականի ապրիլին գերագույն համաժողովի բարօրությանը նվիրված նիստի ժամանակ, Երեց Մարվին Ջ. Աշթոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, մի ելույթ ունեցավ, որից կազմվեց այս գրքույկը: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը հաստատեց Երեց Աշթոնի ուղերձը, երբ նույն ժողովի ժամանակ նա կանգնեց և ասաց.

«Ես շատ բաների մասին եմ մտածում այս ժողով գալուց ի վեր: Ես հաստատում եմ, ինչ Եղբայր Աշթոնն ասաց: Կարծում եմ, եթե սկսեի երիտասարդ ընտանիքից, ես կկամենայի սկսել Եղբայր Աշթոնի կողմից տասներկու կետերը բացատրելուց և ինքս ճշգրտորեն կհետևեի դրանց և կսովորեցնեի իմ երեխաներին և իմ ընտանիքին և բոլորին, ում հետ կշփվեի: Դա կարևոր է: Իմ ողջ կյանքում մանկությունից սկսած ես լսել եմ եղբայրներին ասելիս. «Պարտքից դուրս եկեք և պարտքից հեռու մնացեք»: Ես մի քանի տարի աշխատել եմ բանկում և տեսել եմ այն սոսկալի վիճակը, որի մեջ ընկնում էին շատ մարդիկ, որովհետև անտեսում էին այդ կարևոր խորհուրդը:

«Ես համաձայն եմ ... տանը ընտանիքի ֆինանսավորման հետ կապված այն բոլոր բաների հետ, ինչ Եղբայր Աշթոնն ասաց: Յուրաքանչյուր ընտանիք պետք է ունենա բյուջե: Ինչո՞ւ մենք չենք պատկերացնում մեկ օր առանց բյուջեի այս Եկեղեցում կամ մեր գործերում: Մենք պետք է մոտավորապես իմանանք, թե ինչ կարող է ստանանք և մենք իհարկե պետք է իմանանք, թե ինչ պետք է ծախսենք: Եվ Եկեղեցու հաջողություններից մեկը պայմանավորված է նրանով, որ Եղբայրները շատ ուշադիր հետևում են այս բաներին և մենք չենք ծախսում այն ինչը մենք չունենք»:

Վերջերս ես հնարավորություն ունեցա այցելել մի ընտիր երիտասարդ զույգի: Նրանք պետք է ամուսնանային այդ շաբաթվա ընթացքում: Նրանց աչքերը փայլում էին այդ կարևոր իրադարձության սպասումով և միմյանց հանդեպ իրենց շարունակվող սիրո ապացույցով: Երկուսն էլ համալսարանական կրթության, լավ տների և մշակութային փորձառությունների արտոնությունն ունեին: Հրաշալի էր

ճանաչել նրանց որպես անձնավորություններ, մասնակից լինել նրանց ծրագրերին և նրանց ներուժին: Նրանց սիրատածումը կարծես արդեն ամուր դրված էր հավերժական հիմքերի վրա:

Մեր հարցազրույցի ժամանակ, միայն մեկ հարցի վերաբերյալ նրանց պատասխանները մտահոգություն առաջացրեցին իմ մեջ: Ես հուսով եմ, որ իմ անհանգստությունը և առաջարկները ստիպեցին նրանց վերագնահատել իրենց անխուսափելի ընկերակցությունը:

Այն հարցին, թե՝ «Ո՞վ է պատրաստվում կառավարել փողը ձեր ամուսնությունում»,- հարսնացուն պատասխանեց,- «Կարծում եմ նա»: Փեսացուն պատասխանեց. «Մենք դեռ չենք խոսել այդ մասին»: Այս պատասխանները զարմացրեցին և շփոթեցրեցին ինձ:

Որքանո՞վ են կարևոր փողի կառավարումը և ֆինանսները ամուսնությունում և ընտանեկան գործերում: Կարելի՞ է ես պատասխանեմ. «Հսկայական»: Ամերիկյան Փաստաբանների Միությունը նշել է, որ բոլոր ապահարզանների 89 տոկոսը կարելի է վերագրել փողի համար վեճերին և մեղադրանքներին: Ուրիշները հաշվել են, որ բոլոր ապահարզանների 75 տոկոսն առաջանում են ֆինանսական հողի վրա տեղի ունեցած բախումներից: Որոշ մասնագետ խորհրդատուներ նշում են, որ հինգ ընտանիքներից չորսում այն լուրջ փողային խնդիրների հետ է կապված:

Կարելի՞ է այս անգամ արագացնեմ այն փաստի շեշտադրումը, որ այդ ամուսնական ողբերգությունները չեն առաջանում պարզապես փողի բացակայությունից, այլ ավելի շուտ անձնական ֆինանսների սխալ կառավարումից: Ապագա կինը լավ կանի, որ մտահոգվի ոչ թե նրա համար, թե որքան կարող է իր ամուսինը վաստակել մեկ ամսում, այլ թե ինչպես ինքը (և նա) կկառավարեն այն փողը, որը գալիս է նրանց ձեռքը: Փողի կառավարումը պետք է նախորդի փող աշխատելուն: Ապագա ամուսինը, որը նշանված է իր սիրեցյալի հետ, որն ունի ամեն ինչ, լավ կանի որ մեկ անգամ էլ ուշադրություն դարձնի և տեսնի, թե արդյոք նա ունի փողի կառավարման առողջ դատողություն:

Տանը փողի կառավարումը ամուսնու և կնոջ միջև պետք է լինի գործընկերական հիմունքներով, երբ երկու կողմերն էլ ունեն ձայն որոշում ընդունելիս և գործունեության ծրագիր կազմելիս: Երբ երեխաները մեծանում են և հասնում պատասխանատվության տարիքի, նրանք ևս պետք է ընդգրկվեն ֆինանսական հարցերում սահմանափակ մասնակցության հիմքի վրա: Տանը հնարավոր չէ ունենալ խաղաղություն, բավարարվածություն, սեր և ապահովություն, երբ ֆինանսական հուզումներն ու վիճաբանությունները գերակշռում են: Անկախ նրանից մենք սպասում ենք ամուսնության, թե արդեն ամուսնացած ենք, այսօր ժամանակն է մեզ բոլորիս համար վերանայել և ապաշխարել, քանի որ անհրաժեշտ է բարելավել մեր փողի կառավարման հմտությունները և ապրել մեր միջոցների սահմաններում:

Քանի որ փողի կառավարումը և մեր միջոցների սահմաններում ապրելը կարևոր են այսօրվա աշխարհում, եթե մենք կամենում ենք ապրել առատության մեջ և երջանիկ, թույլ տվեք մի քանի խորհուրդներ տալ անձնական և ընտանեկան ֆինանսական կառավարման բարելավման համար: Կարծում եմ հետևյալ տասներկու կետերը կօգնեն մեզանից յուրաքանչյուրին հասնել այդ նպատակին:

Վճարեք ազնիվ տասանորդ

Յուրաքանչյուր Վերջին Օրերի Սրբի տանը հաջող ֆինանսական կառավարումը սկսվում է ազնիվ տասանորդ վճարելուց: Եթե մեր տասանորդը և ծոմի նվիրատվությունը առաջին պարտականություններն են յուրաքանչյուր աշխատավարձ ստանալուց հետո, ավետարանի այս կարևոր սկզբունքի հանդեպ մեր պարտավորվածությունը կուժեղանա և ֆինանսական սխալ կառավարման հավանականությունը կնվազի: Տասանորդը ճշգրտորեն վճարելը Նրան, ով ամեն ամիս չի գալիս ստուգելու, կսովորեցնի մեզ ավելի ազնիվ լինել նրանց հետ, ովքեր ֆիզիկապես ավելի մոտ են մեզ:

Սովորեք կառավարել փողը նախքան փողը կկառավարի ձեզ

Հետագա հարսնացուն լավ կանի ինքն իրեն հարց տա. «Կարո՞ղ է իմ սիրեցյալը կառավարել փողը: Գիտի՞ արդյոք, թե ինչպես ապրի իր միջոցների սահմաններում»: Սրանք ավելի կարևոր հարցեր են, քան «Կարո՞ղ է շատ փող աշխատել»: Ֆինանսական հարցերում մտքի խաղաղությունը չի որոշվում, թե որքան շատ ենք վաստակում, այլ այն կախված է նրանից, թե որքան շատ ենք մենք ծախսում:

Փողի հանդեպ պետք է միշտ զարգացնել նոր մոտեցումներ և փոխհարաբերություններ բոլոր զույգերի կողմից: Ի վերջո ընկերակցությունը պետք է լինի լիակատար և հավերժական: Ընտանեկան ֆինանսների կառավարումը պետք է ամուսնու և կնոջ միջև լինի փոխադարձ անկեղծության և վստահության ոգով: Փողի վերահսկողությունը ամուսիններից մեկի կողմից որպես ուժի և իշխանության աղբյուր առաջացնում է անհավասարություն ամուսնության մեջ և անպատշաճ է: Ընդհակառակը, եթե ամուսնական զույգերից մեկը կամավոր լիովին հեռացնում է իրեն ընտանիքի ֆինանսական կառավարումից, դա նշանակում է անհրաժեշտ պատասխանատվությունից հրաժարում:

Փողային հարցերում սովորեք ինքնակարգապահության և ինքնազսպվածության

Սովորելով, թե ինչպես կարգավարժվել և գործադրել զսպվածություն, ինչ վերաբերվում է փողին, կարող է ավելի կարևոր լինել, քան հաշվապահության դասընթացները: Երիտասարդ զույգերը պետք է հասկանան, որ իրենք չեն կարող

Պարտքը վերացնելու օրացույց

	Վարկային քարտ	Մթերային խանութ	Ատամնաբույժ	Դաշնամուրի վարկ	Մեքենայի վարկ
Մարտ	110	70	50	75	235
Ապրիլ	110	70	50	75	235
Մայիս	110	70	50	75	235
Հունիս	110	70	50	75	235
Հուլիս		180	50	75	235
Օգոստոս		180	50	75	235
Սեպտ.		180	50	75	235
Հոկտ.			230	75	235
Նոյ.			230	75	235
Դեկտ.				305	235
Հունվ.				305	235
Փետր.					540
Մարտ					

անմիջապես պահպանել նույն ծախսելու ձևը և կենսակերպը, ինչին որ սովոր էին իրենց ծնողների ընտանիքում: Ամուսնացած զույգերը ցույց են տալիս իսկական հասունություն, երբ նրանք մտածում են իրենց ծնողների և իրենց ընտանիքի կարիքների մասին իրենց իսկ ծախսելու մղումներից առաջ: Փողը կառավարելու հմտությունները պետք է սովորել միասին՝ համագործակցության և սիրո ոգով շարունակական հիմքի վրա: Մի զզված ամուսին մի անգամ ասաց. «Կարծում եմ, որ կյանքում փողն է խոսում, բայց երբ այն ընկնում է կնոջս ձեռքը, միակ բանը, որ այն ասում է «Ցտեսություն» բառն է»: Այն ամուսնուն, որն ասում է իր կինը ամենավատ փող կառավարողն է աշխարհում, ես կասեի. «Նայիր հայելու մեջ և ծանոթացիր աշխարհի ամենավատ ուսուցիչ-մարզիչի հետ»:

Մենք ապրում ենք բավականություններով տարված, եսակենտրոն, նյութական հասարակության մեջ: Ազդագրերը հրապուրում են երիտասարդ գնորդներին ցուցադրելով, թե որքան հեշտ է երկարաժամանակետ վարկ ստանալը: Հետաքրքիր է, որ ոչ մի ազդագիր չի կենտրոնանում փողը ետ վճարելու հրապույրի վրա, ոչ էլ նշում են, թե որքան երկար կամ դժվար է անել դա, հատկապես երբ անխուսափելի տոկոսն ավելանում է:

Պարտքը վերացնող օրացույցը կարող է օգնել ձեզ կրճատել կամ վերացնել ոչ անհրաժեշտ պարտքը: Թղթի մի կտորի վրա մի քանի սյունակներ գծեք: Առաջին սյունակում ձախից գրեք ամիսների անունները, սկսելով մոտեցող ամսից: Հաջորդ սյունակի վերևում գրեք վարկատուի անունը, որին առաջինն եք ուզում վճարել: Դա կարող է լինել ամենաբարձր տոկոսով վարկը կամ ամենաշուտ վճարվող ամսաթիվը: Գրի առեք ամենամսյա վճարումը այդ վարկատուին վարկը լիովին վճարելու համար, ինչպես ցույց է տրված վերևի նկարում: Հաջորդ սյունակի վերևում, գրեք երկրորդ վարկատուի անունը, որին ուզում եք վճարել և գրի առեք ամեն ամսվա պարտադիր վճարումները: Առաջին վարկատուին վճարելուց հետո, ավելացրեք ամենամսյա վճարի գումարը երկրորդ վարկատուի վճարին: (Վերևի օրինակում նշեք, որ ընտանիքը վերջացրել է ամենամսյա վճարումներ կատարելը իրենց վարկային քարտի միջոցով: Նրանք

այնուհետև ավելացրել են 110 դոլար մթերային խանութի 70 դոլար պարտքի վրա, ստեղծելով նոր ամենամսյա վճարում 180 դոլարի չափով): Շարունակեք գործընթացը մինչև բոլոր վարկերը վճարվեն:

Օգտագործեք բյուջե

Ամեն ընտանիք պետք է ունենա կանխորոշված համաձայնություն, թե որքան փող մատչելի կլինի ամեն ամիս և գումարը, որը պիտի ծախսվի ընտանիքի բյուջեի յուրաքանչյուր կարգում: Չեկային գրքույկները հարմար են դարձնում ընտանիքի գումարի կառավարումն ու գրառումներ պահելը: Ուշադիր գրանցեք յուրաքանչյուր չեկ, որը գրվում է և հաշվեկշռեք չեկային գիրքը բանկի ամենամսյա հաշվետվության հետ:

Բացառությամբ տուն գնելուց, կրթության համար վճարելուց կամ այլ կենսական ներդրումներ կատարելուց, խուսափեք պարտքից և դրանցից բխող ֆինանսական պարտավորություններից: Կանխիկ վճարեք սպառողական երկարատև օգտագործման ապրանքների և զվարճությունների համար: Խուսափեք ներդրումային վարկերից և զգույշ եղեք ձեր վարկային քարտերն օգտագործելիս: Դրանք հիմնականում հարմարավետության համար են և ինքնության հաստատման համար և չպետք է անզգուշորեն կամ անփութորեն գործածվեն: Բազմաթիվ վարկային քարտերի օգտագործումը նշանակալիորեն ավելացնում է շատ պարտքերի հնարավորությունը: Գնեք օգտագործված առարկաներ, մինչև բավականաչափ խնայեք գնելու որակյալ նոր իրեր: Վատորակ ապրանքների գնումը գրեթե միշտ վերջում խիստ թանկ է նստում:

Խնայեք և ներդրեք որոշակի տոկոս ձեր եկամտից: Խնայողությունները, որոնք մատչելի են, հրատապ իրավիճակներում պետք է բավականաչափ լինի փակելու առնվազն երեք ամսվա բոլոր հիմնական ընտանեկան ֆինանսական պարտավորությունները: Ամեն Վերջին Օրերի Սրբի ընտանիք պետք է ազնվորեն և ճիշտ ժամանակին մուծի հարկերը:

Խնդրում եմ ուշադիր լսեք և եթե սա ձեզանից ոմանց ստիպում է անհարմար զգալ, դա այդ նպատակով է՝ այն Վերջին Օրերի Սրբերը, ովքեր անտեսում կամ խուսափում են իրենց պարտապաններից, պետք է որ ներքին հուսահատություն զգան, որը բնորոշ է այս վարքին, և նրանք չեն ապրում Վերջին Օրերի Սրբերին վայել ապրելակերպով: Պետք է խուսափել սնանկացումից, բացառությամբ միայն ամենաեզակի և անդառնալի հանգամանքներից, իսկ հետո վարկն օգտագործել միայն աղոթքով մտածելուց և մասնագիտական խորը ֆինանսական վերլուծությունից հետո:

Բյուջեն օգնում է ձեզ ծրագրել և գնահատել ձեր ծախսերը:

Բյուջեն որոշակի ժամանակահատվածի համար (ինչպես օրինակ շաբաթական, երկշաբաթյա, ամսական) համաձայն ձեր վճարման գրաֆիկի:

Հաշվեկշռեք եկամուտը ծախսերի հետ և ծախսեք ավելի քիչ, քան վաստակում եք:

Վաղ սովորեցրեք ընտանիքի անդամներին աշխատելու և վաստակելու կարևորությունը

«Երեսիդ քրտինքովը հաց ուտես»-ը ժամկետանց խորհուրդ չէ: Այն կարևոր է անձնական բարօրության համար: Մեծագույն բարիքներից մեկը, որ կարող են ծնողներն անել իրենց երեխաների համար նրանց աշխատել սովորեցնելն է: Տարիների ընթացքում շատ բան է ասվել ամսեկան ապրուստաբաժնի մասին և կարծիքներն ու խորհուրդները խիստ տարբերվում են: Ես «հին դպրոցից եմ»: Կարծում եմ երեխաները պետք է վաստակեն իրենց համար անհրաժեշտ գումարը՝ ծառայության և համապատասխան ամենօրյա գործեր կատարելու միջոցով: Կարելի է նաև որոշ ֆինանսական պարգևներ տալ երեխաներին կրթական ջանքերի և այլ արժանավոր նպատակներ իրականացնելու համար: Կարծում եմ բախտը չի բերել այն երեխայի, որը մեծանում է մի ընտանիքում,

ԲՅՈՒՋԵ _____ 19 ____		
ԵԿԱՄՈՒՏ	**ԾՐԱԳՐՎԱԾ**	**ՓԱՍՏԱՑԻ**
Աշխատավարձ (հարկերից հետո)		
Այլ եկամուտ		
Ընդհանուր եկամուտ		
ԾԱԽՍԵՐ		
Ծրագրավորված		
Փաստացի		
Եկեղեցու նվիրատվություններ		
Խնայողություններ		
Ուտելիք		
Գրավ կամ վարձավճար		
Կենցաղային սպասարկում		
Փոխադրամիջոցներ		
Պարտքի վճարումներ		
Ապահովագրություն		
Բժշկական		
Հագուստ		
Այլ		
Ընդհանուր ծախսեր		
Եկամուտը ավելի քիչ, քան ծախսերը		

նրա մտքում սերմանում են, որ կա ընտանեկան փողի ծառ, որն ինքնաբերաբար շաբաթը կամ ամիսը մեկ «կանաչ թղթադրամներ» է թափում:

Երեխաներին սովորեցրեք փողային հարցերի հետ կապված որոշումներ ընդունել պահպանելով մտածելու ունակությունը

Հիմնվելով պատշաճ ուսուցման և անձնական փորձառության վրա, երեխաները պետք է պատասխանատու լինեն ֆինանսական որոշումներ ընդունելու համար, որն ազդում է նրանց սեփական փողի վրա և դիմանան ոչ խելամիտ ծախսերի հետևանքներին: Ծնողի կողմից երեխային ուղղված «Խնայիր փողդ» արտահայտությունն անիմաստ է: «Խնայիր փողդ միսիայի, հեծանվի, տիկնիկի տան, օժիտի կամ մեքենայի համար» իմաստը դարձնում է հասկանալի: Ընտանեկան միասնությունը գալիս է ընդհանուր, միատեղ հավանության արժանացած մի նպատակի համար միասին խնայողություններ անելուց: Մեր տանը միասնականություն ստեղծվեց, երբ երեխային հանձնարարեցինք կարևոր նախագծի համար խնայողություններ անել, այնուհետև, երբ գումարը ձեռք բերվեց, մենք համեմատեցինք այն կանխորոշված տոկոսի հետ: Դրդապատճառները հզոր ուժ է ցանկալի վարքը հիմնավորելու և դրան հասնելու համար:

Սովորեցրեք ընտանիքի յուրաքանչյուր անդամին ներդրում կատարել ընտանիքի ընդհանուր բարօրության համար

Երբ երեխաները հասունանում են, նրանք պետք է հասկանան ընտանիքի ֆինանսական վիճակը, բյուջեն և ներդրումների նպատակները և ընտանիքի ներսում իրենց անձնական պատասխանատվությունը: Քաջալերեք երեխաներին անցկացնել ոչ թանկ զվարճության պարզ նախագծեր, որոնք նպաստում են ընտանիքի նպատակին կամ ուրախ տրամադրությանը: Որոշ ընտանիքներ բաց են թողնում մի վիթխարի ֆինանսական և հոգևոր փորձառություն, երբ նրանք միասին չեն նստում, նախընտրելի է, ընտանեկան երեկոյի ժամանակ և յուրաքանչյուրը չի դնում իր բաժինը ամսեկան գումարի վրա, որն ուղարկվում է միսիայի դաշտում ծառայող որդուն կամ դստերը, եղբորը կամ քրոջը: Երբ ամենամսյա այս միջոցառումը տեղի է ունենում միաժամանակ, տղան կամ աղջիկը դառնում են «մեր» միսիոները, հպարտությամբ դառնալով երկկողմանի երթևեկությամբ փողոց:

Կրթությունը դարձրեք շարունակական գործընթաց

Ձեռք բերեք որքան հնարավոր է բազմակողմանի կանոնավոր, լիաժամկետ կրթություն ներառյալ արհեստակցական դպրոցներում ու սկսնակ ծրագրերում: Սա փողի լավ ներդրում է: Կյանքի ժամանակի ընթացքում սպասվող հնարավոր վաստակը ձեր կրթությունը շարունակելու վրա ծախսված ժամերը իրականում շատ արժեքավոր կդարձնեն: Օգտագործեք գիշերային դպրոցները և հեռակա դասընթացները՝ շարունակելով նախապատրաստվել: Ձեռք բերեք որոշ առանձնահատուկ հմտություն կամ ունակություն, որը կարող է օգտագործվել խուսափելու երկարաձգվող գործազրկությունից: Տան և ավտոմեքենաների հիմնական վերանորոգման հմտությունը կարող է հաճախ օգտակար լինել, ինչպես նաև կարող է լինել ընտանիքի խնայողությունների համար աղբյուր: Բոլորի համար կարող են լինել անսպասելի գործազրկության ժամանակահատվածներ: Մենք չպետք է մեզ թույլ տանք, երբ աշխատանք չունենք, նստենք և սպասենք «մեզ համար հարմար աշխատանքի», երբ այլ պատվավոր ժամանակավոր աշխատանքի հնարավորություն է ընձեռվում:

Աշխատեք տուն ձեռք բերելու ուղղությամբ

Տան սեփականատեր դառնալը համարվում է ներդրում, ոչ թե սպառում: Գնեք այնպիսի տուն, որը հնարավոր կլինի ձեր եկամտի դեպքում: Բարելավեք տունը և գեղեցկացրեք տեսարանը այն ժամանակաընթացքում, երբ դուք զբաղեցնում եք այդ տարածքը, որպեսզի երբ դուք վաճառեք այն, դուք կարողանաք օգտագործել կուտակած ունեցվածքը և հնարավոր կապիտալի տոկոսները՝ ձեռք բերելու ընտանիքի կարիքների համար ավելի հարմարավետ տուն:

Ներգրավվեք պատշաճ ապահովագրական ծրագրում

Խիստ կարևոր է ունենալ բավականաչափ բժշկական, ավտոմեքենայի և տան սեփականատիրոջ ապահովագրություն և համապատասխան կյանքի ապահովագրության ծրագիր: Հիվանդության, վթարի և մահվան ծախսերը կարող են այնքան մեծ լինել, որ չապահովագրված ընտանիքները կարող են ֆինանսապես ծանրաբեռնված լինել շատ տարիների ընթացքում:

Հասկացեք արտաքին ուժերի ազդեցությունը ընտանեկան ֆինանսների և ներդրումների վրա

Փողի արժեզրկումը շարունակում է ազդել միջին աշխատավարձի մեծ մասի վրա: Բարձր աշխատավարձը չի կարող նշանակել ավելի մեծ գնողական ունակություն և չպետք է լինի արդարացում արտասովոր գնումների կամ լրացուցիչ պարտքի համար: Բացի անձեռնմխելի ընթացիկ խնայողություններից ընտանիքները պետք է ծրագրեն և օգտագործեն իմաստուն ներդրումային ծրագիր՝ նախապատրաստվելով ֆինանսական ապահովության, հնարավոր հաշմանդամության և թոշակի անցնելու համար: Խուսափեք բարձր ռիսկային բոլոր առաջարկներից և արագ հարստանալու նախագծերից:

Պատշաճորեն պատրաստվեք մթերապահեստի և արտակարգ իրավիճակների ծրագրերի համար

Կուտակեք ձեր հիմնական մթերքների պահեստի պարագաները սիստեմատիկ և կանոնավոր ձևով: Խուսափեք այդ նպատակների համար պարտքերի մեջ ընկնելուց: Զգուշացեք ոչ խելամիտ մթերքների պահեստավորման ծրագրերից: Այգու ամենամյա տնկումն ու բերքահավաքը ամեն առումով օգտակար է ընտանիքի համար, ներառյալ ուտելիքի բյուջեն: Կերեք սննդարար ուտելիքներ և վարժություններ կատարեք առողջությունը բարելավելու համար, այսպիսով խուսափելով բժշկական շատ ծախսերից:

Այս մի քանի կետերը և առաջարկները չեն համարվում համապարփակ կամ սպառիչ: Ավելի շուտ հույս կա, որ անհրաժեշտությունն ի դերև է հանվել??? լուրջ խորհրդածության համար: Մենք պետք է ընդունենք և տեղյակ լինենք այս հիմնական հրահանգներին՝ փողն իմաստուն ձևով տնօրինելու համար:

Աստված թող օգնի մեզ հասկանալ, որ փողի կառավարումը կարևոր բաղադրիչ է անձնական պատշաճ բարօրության համար: Մեր միջոցների սահմաններում ապրել սովորելը պետք է լինի շարունակական գործընթաց: Մենք պետք է միշտ աշխատենք, որպեսզի մեզ հեռու պահենք ֆինանսական դժվարություններից: Ֆինանսապես երջանիկ օր է, երբ ժամանակն ու տոկոսը աշխատում են ոչ թե ի վնաս, այլ հօգուտ ձեզ:

Փողը Վերջին Օրերի Սրբերի կյանքում պետք է օգտագործվի որպես միջոց հավերժական երջանկության հասնելու համար: Անփույթ և եսասեր օգտագործումը ստիպում է մեզ ապրել ֆինանսական ստրկության մեջ: Մենքպետք է թե անձնապես և թե ընտանիքով մեր մասնակցությունը բերենք փողի տնօրինման գործում: Այդ դեպքում, Աստված կբացի երկնքի պատուհանները մեզ համար, միայն թե ապրենք Նրան մոտ և պահենք Նրա պատվիրանները:

ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ, ԵՍԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՏԱՐՎԵԼԸ



Երեց Զո Զ. Քրիսչենսեն

Յոթանասունի Քվորումից

In Conference Report, ապր. 1999, 8—11, կամ Ensign, մայիս 1999, 9–11

Ասում են ավետարանը սփոփում է տառապյալներին և տառապեցնում սփոփվածներին: Իմ նպատակն է այսօր խոսել սփոփվածների՝ հարուստների, աղքատների և միջին կարողության տեր մեզ բոլորիս համար:

Տերն ասել է. «Վայ ձեզ, հարուստներ, … Քանզի ձեր հարստությունները կապականեն ձեր հոգիները»: Նա ասել է նաև. «Վայ ձեզ, աղքատներ, որոնց սրտերը կոտրված չեն… [և] որոնց աչքերը լի են ագահությամբ»:[1]

Ձեզանից շատերը հավանաբար լսել են այս փոքրիկ աղոթքը, որը գրել է ինչ որ մեկը.

«Սիրելի Աստված,

«Մինչև այսօր ես ամեն ինչ ճիշտ եմ արել: Ես չեմ բամբասել, չեմ բարկացել, ագահ չեմ եղել, չեմ եղել դժկամ, մռայլ, եսասեր կամ ամբողջովին բավականություններով տարված: Բայց մի քանի րոպեից, Տեր, ես պատրաստվում եմ վեր կենալ անկողնուց, իսկ հետո ես երևի ավելի շատ օգնության կարիք կունենամ»:

Երբ հարցը վերաբերվում է ագահության, եսասիրության և բավականություններով տարվելը հաղթահարելուն, մենք բոլորս էլ ավելի շատ օգնության կարիք ունենք: Իր անկեղծ խոսելաձևով Նախագահ Բրիգամ Յանգն ասել է. «Վատթարագույն վախը... որ ես ունեմ այս ժողովրդի համար այն է, որ նրանք կհարստանան այս երկրում, կմոռանան Աստծուն և Նրա ժողովրդին, կգիրանան և դուրս կքշվեն Եկեղեցուց...Իմ մեծագույն վախն այն է, որ նրանք չեն կարողանա դիմանալ հարստությանը»:[2]

Մեր բարգավաճումը բերում է որոշ իրական մարտահրավերներ, որովհետև շատերն են հարստանում, մեզանից շատերն են գիրանում և ագահության, եսասիրության և բավականություններով տարվելու հետևանքով մենք գուցե կորցնենք Հոգին և տառացիորեն դուրս մղվենք Եկեղեցուց:

Մատերիալիզմը կործանում է մեր մտքերը

Փողը և նյութական բաները գրեթե բոլորի մտքերում են: Ինչպես գրել է Մորիս Չալֆանթը «Քսաներորդ դարի մեծագույն [հարցը] «Ինչպե՞ս կարող եմ հարստության տիրանալ»-ն է: Այսօր ոչ մի հարց չի զբաղեցնում ավելի մեծ տեղ մարդկանց ... մտքերում և ... սրտերում, քան սա...Սա ճշմարիտ է մարդկանց կյանքի յուրաքանչյուր պահի և յուրաքանչյուր քայլի համար»:[3]

Փողը ինքնին չարիք չէ, բայց ինչպես Պողոսն է սովորեցրել Տիմոթեոսին, փողի սերն է, որ ամենայն չարիքի արմատն է:[4] Կան որոշ հարուստներ, ովքեր իրենց բարգավաճման հետ շատ լավ են վարվում, օգտագործելով իրենց միջոցները ուրիշներին օրհնելու և արքայությունը կառուցելու համար: Սակայն շատերի համար հարստությունը մեծ դժվարություններ է ներկայացնում:

Երբ մենք գործ ենք ունենում մատերիալիզմի հետ, որը մեզ վախեցնում է, ահա չորս առաջարկներ մեզանից յուրաքանչյուրիս խորհելու համար:

Պահանջները կարիքներ չեն

Նախևառաջ, մենք չպետք է շփոթենք պահանջները կարիքների հետ:

Մայրս մի կարևոր դաս է սովորեցրել ինձ այս առումով: Տարիներ շարունակ հայրս ամեն տարի նոր ավտոմեքենա գնելու սովորություն ուներ: Այնուհետև երբ II Համաշխարհային պատերազմից հետո հացահատիկի գինը բարձրացավ, մենք զարմացանք, երբ մի օր հայրս տուն բերեց մի ավելի թանկարժեք ավտոմեքենա:

Մի առավոտ մայրս հարցրեց. «Որքա՞ն ավելի արժեր նոր մեքենան այն մյուսից»:

Երբ հայրս ասաց նրան, մայրս ասաց. «Դեհ, մյուս մեքենան միշտ էլ կարողանում էր ինձ տանել այնտեղ, ուր ինձ անհրաժեշտ էր: Կարծում եմ, մենք պարտավոր էինք տարբերությունը տալ որևէ մեկին, որը դրա կարիքն ավելի շատ ուներ»:

Եվ դա այդպես էր: Հաջորդ տարի հայրս վերադարձավ ավելի էժան ավտոմեքենաներին, և նրանք շարունակեցին իրենց առատաձեռն նվիրատվությունները:

Եթե մենք ուշադիր չլինենք, մեր պահանջները հեշտորեն կարող են դառնալ կարիքներ: Հիշեք այս տողը. «Դեհ, դեհ փոքրիկ շքեղություն, լաց մի լինիր: Դու կամաց-կամաց կդառնաս անհրաժեշտություն»:

Խուսափեք երեխաներին փչացնելուց

Երկրորդ, մենք պետք է խուսափենք երեխաներին փչացնելուց նրանց չափից շատ բաներ տալով:

Մեր օրերում շատ երեխաներ մեծանում են աղավաղված արժեքներով, որովհետև մենք որպես ծնողներ երես ենք տալիս նրանց: Եթե դուք լավ ապահովված եք կամ մեզանից շատերի նման ավելի համեստ պայմաններում եք ապրում, մենք որպես ծնողներ հաճախ փորձում ենք բավարարել մեր երեխաների գրեթե բոլոր ցանկությունները, այսպիսով նրանց զրկելով ակնկալելու, իրենց չունեցած ինչ-որ բանը փափագելու օրհնությունից: Ամենակարևոր բաներից մեկը, որ մենք կարող ենք սովորեցնել մեր երեխաներին ՝ իրենց զրկելն է: Վայրկենական բավարարումը ընդհանրապես լավ է գործում թույլ մարդկանց համար: Քանի՞ իսկապես մեծ անձնավորություն գիտեք, ովքեր երբեք ստիպված չեն եղել պայքարել:

Երեց Մաքսվելը խոսել է այս մտահոգության մասին, երբ ասել է. «Եկեղեցու մեր հրաշալի երիտասարդներից և երիտասարդ ամուրիներից մի քանիսն անզուսպ են, գրեթե միշտ գտնում են ազատ ելք: Հպարտանալու բաներն ապահովված են, ներառյալ վառելիքով լցված և ապահովագրված ավտոմեքենաները՝ բոլորը վճարված ծնողների կողմից, ովքեր երբեմն լսում են մի քանի դատարկ քաղաքավարի շնորհակալական խոսքեր: Այսպիսով, այն ինչ համարվում է որպես ընդունված կարգ... միտված է ապահովագրելու եսասիրություն և արտոնյալ լինելու զգացում»:[5]

Մի իմաստուն մայր ասել է. «Ես ընտրում եմ չտալ մեր երեխաներին, ինչ կարող եմ թույլ տալ ինձ նրանց տալ: Ես զսպում եմ ինձ նրանց օգտի համար»:

Ֆրեդ Գոսմանի խոսքերով. «Երեխաները, ովքեր միշտ ստանում են այն, ինչ կամենում են, կկամենան այնքան ժամանակ, քանի դեռ կապրեն»:[6] Եվ այդ տողի որոշակի կետում կարևոր է մեր երեխաների բնավորության զարգացման համար որպեսզի սովորեն, որ «դեռևս երկիրը պտտվում է արևի շուրջը» և ոչ թե՝ իրենց:[7] Ավելի շուտ մենք պետք է սովորեցնենք մեր երեխաներին իրենց ուղղել այս հարցը. Ինչքանո՞վ է աշխարհն ավելի լավ վայր, որովհետև իրենք են այնտեղ:

Երեսառածության պատճառով շատ երեխաներ հեռանում են տնից իրական աշխարհում միայնակ ապրելուն անպատրաստ:

Մենք ապրում ենք գունեղ զվարճությունների, բազմաթիվ սրընթաց գործողությունների մի աշխարհում, որտեղ շատ երեխաներ մեծանում են ՝ մտածելով, որ եթե այն զվարճալի չէ, ճանձրալի է և անկարևոր: Նույնիսկ ընտանեկան միջոցառումների ժամանակ, մենք պետք է հավասարակշռություն պահպանենք խաղի և աշխատանքի միջև: Իմ ամենահիշարժան փորձառությունները, երբ մեծանում էի, կենտրոնացած էին ընտանեկան գործերի վրա՝ սովորելով, թե ինչպես կավարով ծածկել տանիքը, սարքել ցանկապատը կամ աշխատել պարտեզում: Ոչ մի խաղ և միայն աշխատանք լինելու փոխարեն, մեր երեխաներից շատերի համար գրեթե ամբողջը խաղ է և շատ քիչ աշխատանք:

Երեսառածության պատճառով շատ երեխաներ հեռանում են տնից իրական աշխարհում միայնակ ապրելուն անպատրաստ: Նախագահ Հինքլին ասել է.«Իհարկե, մենք պետք է վաստակենք մեր ապրուստը: Տերն ասաց Ադամին, որ իր երեսի քրտինքով պետք է ուտի իր հացը իր կյանքի բոլոր օրերում: Մեզ համար կարևոր է, որ մենք լինենք ինքնապահովող, հատկապես յուրաքանչյուր երիտասարդ ամուսնության ժամանակ պետք է պատրաստ լինի և կարողանա ստանձնել պարտականություններ՝ ապահովելու համար իրեն, իր կողակցին և երեխաներին, ովքեր կգան այդ տուն»:[8]

Շատ-շատերն են ամուսնության մեջ մտնում երբեք սովորած չլինելով ճաշ պատրաստել, կարել կամ զարգացնել կյանքի այլ կարևոր հմտություններ: Այս անհրաժեշտ հմտությունների անտեսումը փողի կառավարման հասկացողության բացակայության հետ միասին սերմեր են ցանում մեր երեխաների ամուսնություններից շատերի ձախողման համար:

Վախենում եմ, որ շատ դեպքերում մենք երեխաներ ենք մեծացնում, որոնք թանկարժեք քմահաճույքների և նորաձևությունների ստրուկներ են դառնում: Հիշեք սուրբ գրությունը. «Որովհետեւ ինչ տեղ որ ձեր գանձն է, այնտեղ կլինի և ձեր սիրտը»:[9] Ինչպե՞ս ենք որոշում, թե որտեղ է մեր գանձը: Այդ անելու համար մենք պետք է գնահատենք ժամանակի չափը, փողը, միտքը, որը մենք նվիրաբերում ենք ինչ որ բանի: Լավ չէ՞ր լինի գնահատել, թե որքան ենք կենտրոնանում գնումների և ծախսերի վրա:

Սա չի նշանակում, որ մեր երեխաները չպետք է հագնեն պատշաճ որոշ հագուստներ, որոնք նորաձև են, որովհետև դա կարող է շատ կարևոր լինել նրանց համար: Բայց նրանք կարիք չունեն մի լիքը պահարան հագուստի: Որպես Եկեղեցու անդամներ մենք պատասխանատվություն ունենք ներկայանալու լավ հարդարված, գրավիչ և համեստ ձևով: Լավ պլանավորելու դեպքում սա կարելի է անել առանց մեր հագուստների վրա արտասովոր ծախսեր անելու:

10 անգամից ավելի Մորմոնի Գրքի մարգարեները նախազգուշացնում են մեզ հպարտության խնդիրների մասին կապված մեր հագուստների բնույթի հետ: Ահա դրա մի օրինակ. «Եվ եղավ այնպես... որ Եկեղեցու ժողովուրդը սկսեց հպարտանալ իրենց անչափ մեծ հարստությունների պատճառով, և իրենց ընտիր մետաքսների, իրենց նրբահյուս բեհեզի... Բոլոր այս բաների համար նրանք հպարտությունից բարձրացել էին իրենց աչքում, քանզի սկսել էին կրել շատ թանկարժեք հանդերձներ»:[10]

Մենք լավ կանեինք, եթե բոլոր այս նյութական բաների շրջանակներում մենք և մեր երեխաները հետևեինք հաճախակի մեջբերվող մեր պիոներ նախնիների նշանաբանին. «հարմարեցնել, հագնել մինչև մաշվի, նորոգել ունեցածը կամ յոլա գնալ առանց տվյալ իրի»:

Ապրեք համեստ և խուսափեք պարքից

Երրորդը, ինչպես մենք շատ հաճախ լսել ենք, ապրել համեստ և խուսափել պարտքից, ինչպես ժանտախտից:

Նախագահ Հինքլին վերջերս հիշեցրեց մեզ Նախագահ Հեբեր Ջ. Գրանտի խոսքերը. «Եթե կա մի բան, որը մարդկային սրտին և ընտանիքին խաղաղություն և բավարարվածություն կբերի, դա մեր միջոցների սահմաններում ապրելն է: Եվ եթե կա մի բան, որը ջախջախում և հուսահատեցնում է, դա պարտքեր և պարտավորություններ ունենալն է, որոնք նա չի կարողանում վճարել» (*Gospel Standards*, comp. G. Homer Durham [1941], 111):[11]

Սամուել Ջոնսոնն ասել է. «Մի հարմարվեք պարտքը որպես անհարմարություն համարելու մտքին, դուք կպարզեք, որ դա աղետ է»:

Իրականում որքան տարածք է հարկավոր մեր ընտանիքին հարմարավետորեն օթևան ունենալու համար: Մենք չպետք է մեզ վտանգի ենթարկենք ոչ հոգեպես, ոչ էլ տնտեսապես ձեռք բերելով տներ, որոնք ցուցամոլություն են, սնուցում են մեր փառասիրությունը և մեր կարիքներից հեռուն գնում:

Եթե մենք պետք է լինենք ինքնապահովող և տալու պատրաստ, ակնհայտ է մենք պետք է ձեռք բերենք որոշ միջոցներ: Եթե մենք ապրում ենք մեր միջոցների սահմաններում և խուսափում ենք պարտքից, ապա կարող ենք միջոցներ կուտակել: Կան մարդիկ միջին եկամուտներով, ովքեր կյանքի ընթացքում կուտակում են որոշ միջոցներ, և կան ոմանք, ովքեր ստանում են մեծ աշխատավարձեր և չեն հավաքում: Ո՞րն է տարբերությունը: Դա պարզապես այն պատճառով է, որ ծախսում են ավելի քիչ, քան իրենք ստանում են, խնայելով այդ ընթացքում և օգտվելով բաղադրյալ շահի հնարավորությունից:

Ֆինանսական խորհրդատուները նշում են, որ «ժողովրդի մեծ մասը սխալ պատկերացում ունեն հարստության մասին... Հարստությունը նույնը չէ, ինչ եկամուտը: Եթե դուք լավ եկամուտ ունեք ամեն տարի և ամբողջը ծախսում եք, դուք չեք հարստանում: Դուք ուղղակի լավ եք ապրում: Հարստությունն այն է, ինչ դուք կուտակում եք, և ոչ թե այն, ինչ դուք ծախսում եք»:[12]

Առատորեն տվեք ուրիշներին

Ի վերջո, եղեք առատաձեռն ուրիշներին տալիս և նրանց հետ կիսվելիս:

Որքան ավելի մեր սրտերը և մտքերը դարձնենք դեպի մյուսներին օգնելը, ում բախտն ավելի քիչ է բերել, քան մերը, այնքան ավելի կխուսափենք հոգևոր քայքայման ազդեցություններից, որոնք առաջանում են ագահությունից, եսասիրությունից և բավականություններով տարվելուց: Մեր ռեսուրսը տնտեսվարությունն է, ոչ թե մեր ունեցվածքը: Ես վստահ եմ, որ մենք տառացիորեն կկանչվենք հաշվետու լինելու Աստծո առջև այն բանի համար, թե ինչպես ենք մենք օգտագործել դրանք կյանքեր օրհնելու և արքայությունը կառուցելու համար:

Մարգարե Հակոբը տալիս է մեզ մի գերազանց խորհուրդ, թե հարստություններն ինչպես կարող են ձեռք բերվել և ինչի համար դրանք պետք է օգտագործվեն.

«Բայց նախքան հարստություններ փնտրելը, փնտրեք Աստծո արքայությունը:

Եվ նրանից հետո, երբ դուք հույս ձեռք բերեք Քրիստոսում, դուք ձեռք կբերեք հարստություններ, եթե փնտրեք դրանք... բարիք անելու մտադրությամբ՝ հագցնելու մերկերին, կերակրելու սովածներին, ազատելու գերյալներին և սփոփելու հիվանդներին ու չարչարվածներին»: [13]

Բացի ազնիվ տասանորդ վճարելուց, մենք պետք է առատաձեռն լինենք աղքատներին օգնելիս: Որքա՞ն մենք

պետք է տանք: Ես բարձր եմ գնահատում Կ.Ս. Լյուիսի միտքը այս նյութի վերաբերյալ: Նա ասել է. «Վախենում եմ, միակ ապահով կանոնը ավելին տալն է, քան մենք կարող ենք խնայել... Եթե մեր գթությունը ոչ մի նեղություն չի պատճառում կամ չի խանգարում մեզ, դրանք խիստ փոքր են: Պետք է լինեն բաներ, որոնք մենք կկամենայինք անել, բայց չենք կարողանում անել, որովհետև մեր գթության ծախսերը թույլ չեն տալիս անել դրանք»:

Կան շատ արժանավոր անձնավորություններ և գործեր, որոնց մենք կարող ենք նվիրատվություն անել: Մենք պետք է տանք առատաձեռնորեն ծոմի զոհաբերություն և մարդասիրական ֆոնդերին նվիրատվություններ կատարենք: Եվ եթե մենք կամենում ենք, որ մեր ընտանիքներն ապրեն խորիմաստ կյանքով, մենք պետք է քաջություն ունենանք ազնվորեն քննել, թե որտեղ են մեր գանձերը դրված և խուսափենք որոգայթերից, որոնք առաջանում են ագահությունից, եսասիրությունից և բավականություններով տարվելուց:

Թող մեզանից յուրաքանչյուրը հիշի՝

- Առաջինը՝ չշփոթել պահանջները կարիքների հետ:
- Երկրորդ՝ խուսափել մեր երեխաներին փչացնելուց:
- Երրորդ՝ ապրել համեստորեն և խուսափել պարտքից:
- Չորրորդ՝ լինել առատաձեռն ուրիշներին տալիս:

Տալն իսկապես մեր հավատքի սրտում է: Այս Զատկի օրերին, մենք կրկին հիշատակում ենք, որ «Աստված [մեր Երկնային Հայրը] այնպես սիրեց աշխարհը, որ Նա տվեց Իր միածին Որդուն»,[15] որն աշխարհ եկավ և կարող էր ունենալ ցանկացած նյութական բարիք, բայց ավելի շուտ ընտրեց տալ մեզ բոլորիս հասարակ կյանքի մի օրինակ, որը զերծ էր ագահության, եսասիրության կամ բավականություններով տարվելու որևէ նշույլից: Թող որ մենք ամեն օր ձգտենք ապրել Նրա նման՝ խորիմաստ կյանքի այդ բարձրագույն օրինակով:

Ես վկայում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է, սա Նրա Եկեղեցին է, որն առաջնորդվում է ապրող մարգարեների կողմից, և Նրա գերեզմանը տառացիորեն դատարկ էր այն երրորդ օրը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. Վարդապետություն և Ուխտեր 56.16–17:
2. Reported in James S. Brown, *Life of a Pioneer*(1900), 122–23; տես նաև Preston Nibley, *Brigham Young: The Man and His Work* (1936), 128.
3. Morris Chalfant, “The Sin of the Church,” *Wesleyan Methodist*, quoted by John H. Vandenberg in Conference Report, Oct. 1965, 131; or *Improvement Era*, Dec. 1965, 1154.
4. Տես Ա Տիմոթեոս Զ.10:
5. BYU devotional, 12 Jan. 1999.
6. *Spoiled Rotten: American Children and How to Change Them* (1992), 37.
7. *Spoiled Rotten*, inside front cover, 11.
8. “Thou Shalt Not Covet,” *Ensign*, Mar. 1990, 2.
9. Մատթեոս Զ.21:
10. Ալմա 4.6:
11. In Conference Report, Oct. 1998, 71; կամ *Ensign*, Nov. 1998, 53.
12. Thomas J. Stanley and William D. Danko, *The Millionaire Next Door* (1996), 1.
13. Հակոբ 2.18–19:
14. *Mere Christianity* (1952), 67.
15. Հովհաննես Գ.16:

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ Ը

Հավերժական Հորը և Նրա Սիրելի Որդուն դարձրեք ձեր կյանքի ամենակարևոր առաջնահերթությունը:

—Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին

«Ընտանեկան կյանքում ամենայն հավանականությամբ երջանկության կարելի է հասնել, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա» (*Ensign*, Nov. 1995, 102):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Ամենակարևոր սկզբունքը, որ ես կարող եմ կիսվել սա է. Ձեր կյանքը կենտրոնացրեք Հիսուս Քրիստոսի՝ ձեր Քավչի վրա: Ձեր Երկնային Հորը և Նրա Սիրելի Որդուն դարձրեք ձեր կյանքի ամենակարևոր առաջնահերթությունը, Նրան համարելով ավելի կարևոր քան ինքը կյանքը, ավելի կարևոր քան սիրելի կողակիցը կամ երեխաները, կամ որևէ մեկն աշխարհում: Դարձրեք նրանց կամքը ձեր կենտրոնական ցանկությունը: Այդ ժամանակ այն ամենը, ինչի կարիքը դուք ունեք երջանկության համար, կգա ձեզ» (in Conference Report, Apr. 1993, 43; կամ Ensign, May 1993, 34):

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՅԱԼ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Նախագահ Հարոլդ Բ. Լի

Եկեղեցու Նախագահ

Կանգնեք սուրբ տեղերում՝ Նախագահ Հարոլդ Բ. Լիի քարոզների և գրվածքների ընտրանի, 341–48

Դուք ուզում եք իմանալ այն «քայլերը», որոնցով մարդ կարող է իր կյանքը մոտեցնել այն լրիվությանը, որը դարձնում է նրան արժանի քաղաքացի կամ «սուրբ» Աստծո արքայությունում: Լավագույն պատասխանը կարելի է գտնել սուրբ գրություններում Հիսուսի կյանքը ուսումնասիրելու միջոցով, քանզի ասվել է որ. «մեր ավետարանները պարզապես բանավոր ուսուցման հիշատակարան չեն, դրանք կենդանի մարդու դիմանկարներ են» (Dean Inge.): «Քրիստոսն աշխարհ եկավ ոչ միայն մարդկության մեղքերի համար քավություն անելու, այլ աշխարհին Աստծո օրենքի կատարելության չափանիշ և Հորը հնազանդվելու օրինակ ցույց տալու համար: Լեռան Իր քարոզում Տերը մեզ կարծես հայտնություն է տվել Իր իսկ բնավորության վերաբերյալ, որը կատարյալ էր, կամ որը կարելի է ասել «ինքնակենսագրություն էր, որի ամեն վանկը նա գրեց գործերով» և այդպես անելով տվեց մեզ ծրագիր մեր սեփական կյանքի համար: Բոլոր նրանք, ովքեր հստակորեն հասկանում են Նրա խոսքերի բուն իմաստը, գիտակցում են, որ չնայած Եկեղեցու անարժան անդամը կարող է լինել Աստծո թագավորությունում, սակայն չի լինի թագավորությունից՝ իր անարժանության պատճառով:

Դուք կարող եք իմանալ լիարժեք եք ապրում, թե ոչ, երբ ունենում եք ապրելու իսկական ուրախությունը, քանզի «մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» (2 Նեփի 2.25): Այդ դեպքում, ի՞նչն է ձեզ պարգևում ուրախություն կոչվող այդ բարձր զգացմունքային էքստազը: Դա գալիս է անսովորի՞ց, թե հասարակ բաներից: Նա, ով զգացվում է այդ ձևով միայն անսովորից մեկի նման է, որը ախորժակի բացակայությունը պետք է գրգռի ուժեղ համեմունքներով և համերով, որոնք փչացնում են համի իսկական զգացումը: Դուք լուրջ սխալ եք գործում, եթե սխալմամբ համարում եք զգացմունքային հրճվանքը, որը պահի հետ անցնում է, զգացմունքային խորը վերելքի հետ, որն ապրելու ուրախությունն է: Եթե ինչ որ մեկը զգում է երջանկության և ցանկության ուժեղ աճ երջանիկ տան անդորրից, բացվող կյանքի գեղեցկությունից, աստվածային իմաստության հայտնությունից, կամ գեղեցկության հանդեպ սիրուց, ճշմարիտից և բարուց, նա ճաշակում է ուրախության լիակատարություն, որը կարող է բերել միայն հարուստ լիարժեք կյանքով ապրելը:

Լեռան այն անզուգական քարոզում Հիսուսը մեզ տվել է ութ որոշակի ուղիներ, որոնցով մենք կարող ենք ստանալ այս տեսակի ուրախություն: Նրա հայտարարություններից յուրաքանչյուրը սկսվում է «երանի» բառով: Երանությունները սահմանվում են որպես ավելի բարձր, քան երջանկությունը: «Երջանկությունը գալիս է դրսից և կախված է հանգամանքներից, երանությունը ներքին աղբյուր է՝ ուրախության հենց հոգում, որի վրա որևէ արտաքին հանգամանքներ չեն կարող լրջորեն ազդել» (Dummelow's *Commentary*.): Վարդապետի այս հայտարարությունները քրիստոնեական աշխարհի գրականության մեջ հայտնի են որպես Երանություններ և Աստվածաշնչի մեկնաբանների կողմից ակնարկվում են որպես անհրաժեշտ նախապատրաստություն՝ երկնքի արքայություն մտնելու համար: Այս

քննարկման նպատակի համար թույլ տվեք խոսել դրանց մասին որպես մի բան, որն ավելին է քան սա, քանի որ դրանք վերաբերվում են ինձ և ձեզ: Դրանք փաստորեն մարմնավորում են կատարյալ կյանքի համար սահմանադրությունը:

Եկեք դրանց մասին մի քանի րոպե մտածենք: Դրանցից չորսը կապված են մեր անձնական ինքնության հետ, մեր իսկ ներքին անձնական կյանքով ապրելու հետ, եթե մենք կատարյալ լինենք և գտնենք այդ ներքին ուրախության երանությունը:

Երանի հոգով աղքատներին,
Երանի սգավորներին,
Երանի նրանց, որ սոված և ծարավ են արդարության,
Երանինրանց, որ սրտով մաքուր են:

Հոգով աղքատ լինել նշանակում է զգալ ձեզ որպես հոգեպես կարիքավոր, նույնիսկ կախված Տիրոջից ձեր հագուստների, ձեր ուտելիքի, ձեր շնչած օդի, ձեր առողջության, ձեր կյանքի համար՝ հասկանալով, որ ոչ մի օր չպետք է անցնի առանց շնորհակալական ջերմեռանդ աղոթքի, առաջնորդության, ներման և ուժի համար, որ բավարար կլինի յուրաքանչյուր օրվա համար: Եթե մի երիտասարդ հասկանում է իր հոգևոր կարիքը, երբ վտանգավոր տեղերում հենց նրա կյանքն է վտանգված, նրան կարող է ձգել դեպի ճշմարտության աղբյուրը և հուշում գալ Տիրոջ Հոգու կողմից իր դժվարին փորձության ժամին: Իսկապես տխրեցնող է այն փաստը, որ մարդն իր հարստության կամ կրթության կամ աշխարհիկ ունեցվածքի պատճառով մտածում է, թե ինքն անկախ է այս հոգևոր կարիքից: Դա հպարտության կամ ինքնագոհության հակադրությունն է: Ինչ վերաբերում է աշխարհիկ հարստությանը, ապա «նա պետք է ունենա իր հարստությունն այնպես, կարծես թե դա իրենը չէ» և պատրաստակամ լինի ասելու առանց ափսոսալու, եթե նրան ֆինանսական աղետ պատահի, ինչպես Հոբն արեց. «Տերը տվավ եւ Տէրն առավ: Տիրոջ անունը օրհնյալ լինի» (Հոբ Ա.21): Այսպիսով, եթե համեստորեն ընդունում եք ձեր հոգևոր կարիքը, դուք պատրաստ եք որդեգրվելու «Անդրանիկի եկեղեցում» և դառնալու «Աստծո ընտրյալը»:

Սգալով, ինչպես Տիրոջ դասն է այստեղ սովորեցնում, մարդը պետք է ցույց տա, որ «Աստծոյ ուզած կերպով տրտմությունը, ապաշխարություն է գործում» (Բ Կորնթացիս Է.10) և զղջացողի համար ներում է բերում մեղքերից և արգելում վերադարձ դեպի գործերը, որի համար նա սգում է: Դա պետք է տեսնել, ինչպես Պողոս Առաքյալը տեսավ. «նեղությունների մեջ էլ պարծենում ենք... գիտենալով, որ նեղութիւնը համբերութիւն է գործում: Համբերութիւնը՝ փորձառութիւն, փորձառութիւնը հույս» (Հռովմայեցիս Ե. 3–4): Դուք պետք է պատրաստակամ լինեք «կրել միմյանց բեռները, որպեսզի դրանք թեթև լինեն» (Մոսիա 18.8): Դուք պետք է պատրաստ լինեք սգալու նրանց հետ, ովքեր սգում են և մխիթարելու նրանց, ովքեր մխիթարության կարիք ունեն (Մոսիա 18.9): Երբ որևէ մայր սգում է իր միայնակության մեջ կամակոր դստեր վերադարձի համար, դուք կարեկցանքով պետք է արգելեք գցելու առաջին քարը: Դա այնպիսի մի սուգ է, որը պատկերված է Սայփանի նավաստու խորը զգացմունքներում, որը գրել էր մեզ II Համաշխարհային Պատերազմի ժամանակ, երբ նրա ընկերն էր սպանվել: «Երբ ես պառկած էի իմ խցիկում այդ գիշեր, ես դառնորեն լալիս էի»: Ձեր սուգը տարեց մարդու, այրու և որբի հետ պետք է մղի ձեզ նրանց անհրաժեշտ նեցուկը լինելու: Մի խոսքով, դուք պետք է լինեք ինչպես մաքսավորը և ոչ թե Փարիսեցին: «Ով Աստված, ողորմիր ինձ մեղավորիս» (Ղուկաս ԺԸ.13): Այդ ժամանակ ձեր պարգևը կլինի ձեր հոգու հանգստության օրհնությունը ձեր սեփական մեղքերի ներման միջոցով:

Արդյոք դուք երբևէ փափագե՞լ եք ուտելիք կամ ծարավել եք ջրի, երբ ձեզ տանջող ցավերը կարող էր թեթևացնել հացի մի կտոր չորուկը կամ մի կում գաղջ ջուրը, և այն կթվար բոլոր ունեցվածքներից ամենաթանկը: Եթե դուք այդպես քաղցել եք, ապա կարող եք սկսել հասկանալ, թե ինչ ի նկատի ուներ Վարդապետը ասելով, որ մենք պետք է քաղցենք և ծարավ լինենք արդարության: Դա այդ սովելն ու ծարավելն է, որ առաջնորդում է Վերջին Օրերի Սրբերին տնից դուրս՝ որոնելու Սրբերի ընկերակցությունը հաղորդության սպասավորման ժամանակ և որն առաջացնում է պաշտամունք Տիրոջ օրը: Դա այն է, որ հուշում է ջերմեռանդ աղոթքներ և առաջնորդում մեր ոտքերը դեպի սուրբ տաճար և մեզ հրավիրում ակնածալի լինել այնտեղ: Ով Հանգստյան Օրը սուրբ է պահում, կլցվի տևական ուրախությամբ, շատ ավելի, քան որևէ անցողիկ հաճույք, որ գալիս է բավականություն ստանալու համար կազմակերպվող զվարճություններից, որոնք հակադիր են Աստծո պատվիրաններին: Եթե դուք խնդրեք «...մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ սուրբ Հոգու զորությամբ» և նրա զորությամբ դուք «կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.4-5): Կառուցեք «յուրաքանչյուր նոր տաճար ավելի ազնիվ, քան վերջինը... մինչև դուք վերջապես ազատ լինեք», այդ ժամանակ «ձեր ամբողջ մարմինը լցված կլինի լույսով, և ձեր մեջ չի լինի խավար ...» (ՎԱՈՒ 88.67):

Եթե դուք կամենում եք տեսնել Աստծուն, դուք պետք է անբիծ լինեք: Հրեական գրվածքներում մի պատմություն կա մի մարդու մասին, որը ինչ-որ առարկա տեսավ հեռվում, մի առարկա, որը նա կարծեց գազան էր: Երբ այն ավելի մոտեցավ նա զգաց, որ այն մարդ էր, երբ այն ավելի մոտացավ նա տեսավ, որ նա իր ընկերն էր: Դուք կարողանում եք տեսնել միայն այն ինչ դուք աչքեր ունեք տեսնելու: Հիսուսի որոշ ընկերներ տեսնում էին Նրան միայն որպես հյուսն Հովսեփի որդի: Մյուսները Նրան համարում էին

գինեմոլ կամ հարբեցող իր խոսքերի պատճառով: Ուրիշները կարծում էին Նա դևեր ուներ: Միայն արդարներն էին տեսնում Նրան որպես Աստծո Որդի: Միայն դուք, որ սրտով մաքուր եք, կտեսնեք Աստծուն և նաև ավելի պակաս չափով դուք կկարողանաք տեսնել «Աստծուն» կամ բարին մարդու մեջ և սիրել նրան՝ այն բարության համար, որ կտեսնեք նրա մեջ: Լավ ուշադրություն դարձրեք այն մարդուն, որը քննադատում և զրպարտում է Աստծո մարդուն կամ Տիրոջ օծյալ առաջնորդներին Իր Եկեղեցում: Այդպիսին խոսում է անմաքուր սրտից:

Բայց որպեսզի ձեռք բերենք մուտք դեպի երկնային արքայություն, մենք ոչ միայն պետք է լինենք բարի, բայց մեզանից պահանջվում է նաև բարին գործել և բարի լինել ինչ որ բանի համար: Այսպիսով, եթե դուք քայլեք ամեն օր դեպի կատարելագործման և կյանքի լիարժեքության նպատակը, դուք պետք է ուսուցանվեք կատարյալ կյանքի համար Վարդապետի սահմանադրության մնացած չորս հոդվածներով: Այս Երանությունները առնչվում են մարդու ուրիշների հետ ունեցած հասարակական հարաբերություններին:

Երանի հեզերին:
Երանի ողորմածներին:
Երանի խաղաղություն անողներին:
Երանի նրանց՝ որ արդարության համար հալածված են:

Հեզ մարդը նա է, որը հեշտորեն չի բորբոքվում կամ նյարդայնանում և համբերատար է վիրավորանքի կամ վրդովմունքի մեջ: Հեզ մարդը ուժեղ, հզոր, լիակատար ինքնատիրապետման հասած մարդ է: Նա քաջություն է դրսևորում բարոյական համոզմունքներում, չնայած ընկերախմբի կամ ակումբի ճնշումներին: Վիճաբանության մեջ նրա կարծիքը դատարանի վերջին հույսն է և նրա լրջամիտ խորհուրդը զսպում է ամբոխի անխոհեմությունը: Նա խոնարհ մտքով է, նա չի կատաղում: «Երկայնամիտը զորավորիցը լաւ է…» (Առակաց ԺԶ.32): Նա էությամբ առաջնորդ է, և բանակի և նավատորմի, բիզնեսի և եկեղեցու ընտրյալն է՝ առաջնորդելու այնտեղ, ուր հետևում են մյուս մարդիկ: Նա երկրի «աղն» է և պիտի ժառանգի այն:

Մեր փրկությունը հիմնվում է ողորմածության վրա, որ մենք դրսևորում ենք ուրիշների հանդեպ: Անբարյացակամ և դաժան խոսքերը կամ չարամիտ գործողությունները մարդու կամ գազանի հանդեպ, չնայած թվացյալ վրեժխնդրությանը, որակազրկում են հանցագործին ողորմածության իր պահանջից, երբ նա ողորմածության կարիք ունի դատաստանի օրը աշխարհիկ կամ երկնային դատարաններում: Արդյո՞ք կա մեկը, որը երբեք չի վիրավորվել մեկ ուրիշի զրպարտությունից, որին համարում էր իր ընկերը: Հիշո՞ւմ եք պայքարը, որ դուք վրեժխնդրությունից ձեռնպահ մնալու համար: Օրհնված եք դուք բոլորդ, ովքեր ողորմած եք, քանզի դուք բոլորդ ձեռք կբերեք ողորմածություն:

Խաղաղություն հաստատողները կկոչվեն Աստծո որդիք: Խառնակություն ստեղծողը, օրենքի և կարգուկանոնին հակառակվողը, խառնամբոխի առաջնորդը, օրենքը խախտողները դրդվում են չարի դրդապատճառներից, և մինչև նրանք չդադարեն դա անել, նրանք հայտնի կլինեն որպես ավելի շուտ սատանայի որդիք, քան Աստծո: Հեռու պահեք ձեզ նրանից, որը տագնապալի կասկածներ է առաջացնում կարևորություն չտալով սրբազան բաներին, քանզի նա չի ձգտում խաղաղության, այլ տարածում է խառնաշփոթություն: Ով վիճաբանող է կամ հակառակվող, և ում վիճաբանությունները այլ նպատակներ են հետապնդում, բացի ճշմարտությունը պարզելուց, խախտում է մի հիմնական ճշմարտություն, որը դրված է Վարդապետի կողմից որպես հիմնական սկզբունք լիարժեք հարուստ կյանք կառուցելու համար: «Խաղաղություն աշխարհին, բարգավաճում ամենքին» հրեշտակի երգն էր, որ հռչակեց Խաղաղության Իշխանի ծնունդը:

Հանուն մեծ գործի արդարության համար հալածվելը, որտեղ ճշմարտությունը և առաքինությունը և պատիվն է վտանգված, Աստվածանման է: Ամեն մի մեծ գործում միշտ էլ եղել են նահատակներ: Մեծագույն վնասը, որ կարող է գալ հալածանքից հենց հալածանքից չէ, այլ հնարավոր ազդեցությունից, որը կարող է հալածվողներին ետ պահել արդար գործի հանդեպ իրենց նվիրվածությունից: Այդ հալածանքի մեծ մասը գալիս է հասկացողության բացակայությունից, քանզի մարդիկ հակված են հակադրվել այն ամենին, ինչ չեն ըմբռնում: Դրա մի մասը գալիս է այն մարդկանցից, ովքեր հակված են դեպի չարը: Բայց ինչ պատճառ էլ որ լինի հալածանքն այնքան համատարած է նրանց դեմ, ովքեր զբաղված են արդար գործով, որ Վարդապետը նախազգուշացնում է մեզ. «Վայ ձեզ՝ երբոր ամեն մարդիկ ձեզանից բարի ասեն, որովհետեւ այդպէս էին անում սուտ մարգարէներին նորանց հայրերը» (Ղուկաս Զ.26):

Թող երիտասարդներն ամենուր հիշեն այդ նախազգուշացումը, երբ նրանց սուլում են և նախատում, որովհետև դուք հրաժարվում եք փոխզիջման գնալ ձեր ժուժկալության, ազնվության և բարոյականության չափանիշներում, որպեսզի ձեռք բերեք ամբոխի ծափահարությունները: Եթե ամուր կանգնեք ճշտի համար, չնայած ամբոխի բացասական արձագանքներին կամ նույնիսկ ֆիզիկական բռնության դեպքում, դուք կթագադրվեք հավերժական ուրախության օրհնությամբ: Ով գիտի մեր օրերում գուցե կրկին որոշ սրբերից կամ նույնիսկ առաքյալներից, ինչպես նախկին օրերում պահանջվի տալ իրենց կյանքը ճշմարտության պաշտպանության համար: Եթե գա այդ ժամանակը Աստված տա, որ նրանք չթուլանան:

Երբ աստիճանաբար մենք աղոթքով լցված խորհում ենք այս բոլոր ուսմունքների մասին, մենք ոմանց համար ապշեցուցիչ հայտնագործություն ենք կատարում, որ ի վերջո մեր

արժեքի Աստծո չափորոշիչը Իր արքայությունում չեն լինի բարձր պաշտոնները, որոնք մենք զբաղեցրել ենք այստեղ մարդկանց մեջ, ոչ էլ Իր եկեղեցում, ոչ էլ այն պատիվները, որոնց մենք արժանացել ենք, այլ ավելի շուտ թե ինչպիսի կյանք ենք վարել և թե ինչ բարի գործեր ենք արել, համաձայն այն «կատարյալ կյանքի համար սահմանադրությանը», որը հայտնի է դարձվել Աստծո Որդու կյանքում:

Թող որ դուք Երանությունները դարձնեք ձեր սեփական կյանքի սահմանադրությունը և այդպիսով ստանաք այնտեղ խոստացված երանությունը:

ԵՐՋԱՆԻԿ ՏԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐԵՐԸ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Արքանյակային հեռարձակում ամուսինների և կանանց համար, 29 հունվ. 1984 թ.

Անցել է ավելի քան կես դար, բայց ես երբեք չեմ մոռացել մայրիկիս հանդեպ հորս քնքշանքը: Նա մահացավ, երբ հիսուն տարեկան էր, բավականին երիտասարդ կին: Իր հիվանդության ամիսների ընթացքում նա անընդհատ մտահոգված էր նրա հարմարավետության համար: Բայց այս վերաբերմունքը չէր արտահայտվում միայն նրա հիվանդանալուց հետո: Դա մեզ՝ նրանց երեխաների համար ակնհայտ էր մեր ողջ կյանքի ընթացքում: Մեր մանկության երջանիկ տանը մենք գիտեինք և դա գալիս էր զգացումով և ոչ թե հայտարարությամբ, որ նրանք սիրում, հարգում և պատվում էին միմյանց: Ինչպիսի օրինություն էր այդ պատկերը: Երբ երեխա էինք, այդ պատճառով, մենք որոշակի ապահովություն էինք զգում: Երբ մեծացանք մեր գործողությունները գունազարդվում էին այդ օրինակի հուշով:

Իմ սիրելի զուգընկերը և ես այժմ ամուսնացած ենք մոտավորապես կես դար՝ ավելի ճիշտ քառասունյոթ տարի: Նա նույնպես օրհնված էր լինելով մի տնից, որտեղ կար ընկերակցության, սիրո և վստահության մթնոլորտ: Ես գիտեմ, որ ձեզանից մեծ մասը այդպիսի տներից են դուրս եկել, ավելին, ես գիտեմ, որ ձեզանից շատերն ապրում են երջանկության և սիրո մեջ ձեր սեփական տներում: Բայց կան շատերը, շատ շատերը, ովքեր նման պայմաններում չեն ապրում:

Դժբախտ ամուսնություններ

Ինձ համար դժվար է հասկանալ ինձ ուղարկվող դժբախտ ամուսնությունների մասին ողբերգական պատմությունները: Դրանք խոսում են բռնության մասին: Դրանք խոսում են բռնապետական վերաբերմունքի մասին և որոշ ամուսինների մասին, ովքեր կռվարար են իրենց տներում: Դրանք խոսում են կորցրած վստահության և խախտած ուխտերի մասին: Դրանք խոսում են ամուսնալուծության և արցունքների ու դառնության մասին: Վերջերս մի նամակ դրվեց իմ սեղանին մի կնոջից, որը մանրամասն գրել էր իր նեղությունների մասին: Հուսահատության ոգով նա հարց էր տալիս. «Արդյոք կինը ունի՞ խոստում, որ մի օր կդառնա մարդկային ցեղի առաջնակարգ անդամ: Մի՞թե նա միշտ պետք է լինի չադրայի մեջ փաթաթված միստրուկ, որը գործում է միայն իր գլխին կանգնած տղամարդու թույլտվությամբ» (Չադրան ի դեպ շատ հասարակ գլխաշոր է, որը կանայք կրում են Հնդկաստանում): Հետո նա շարունակում է. «Ինձ համար այլևս այս հարցերը կարևոր չեն, բայց ես դուստրեր ունեմ: Եթե կնոջ համար հնարավոր է սպասել մի հավերժության, որը կլինի մեկ այլ բան, քան ոտաբոբիկ և հոի լինելը, ես կկամենայի հնարավորություն ունենալ նրանց ուսուցանելու այդ»:

Այդ նամակի տողերում առկա է դառը ողբերգություն: Վախենում եմ, որ կան շատերը, որ զգում են նույն ձևով: Իրավիճակը ողբերգական է, որովհետև դաամենևին այն չէ, ինչ մեր Երկնային Հայրը կկամենար իր դուստրերի համար: Այս կնոջ խոսքերի ետևում ես տեսնում եմ մի կնոջ, որը հուսահատված է, կարոտ է երախտագիտության, պատրաստ անձնատուր լինելու և չգիտի, թե ինչ անի: Ես տեսնում եմ մի ամուսնու, որը թերացել է իր սրբազան պարտականությունների մեջ, որը կարծրացել է իր զգացմունքներում և խեղաթյուրել իր ըմբռնումները, և որը իր ապրելակերպի միջոցով մերժում է Հիսուս Քրիստոսի ավետարանի բուն էությունը: Չեմ կասկածում, որ կնոջ կողմից էլ մեղավորություն կա, բայց հակված եմ մտածել, որ ամուսնու մեղքն ավելի լուրջ է:

Հավասարություն ամուսնության մեջ

Բոլոր տղամարդկանց, ում կարող է հասնել իմ ձայնը, որտեղ էլ որ դուք լինեք, ես ասում եմ՝ եթե մեղավոր եք ձեր կնոջը նվաստացնող վերաբերմունքով, եթե հակված եք թելադրել և նրա վրա իշխանություն գործադրել, եթե եսասեր եք և կոպիտ ընտանիքում ձեր գործողությունների մեջ, ապա կանգ առեք: Ապաշխարեք: Ապաշխարեք այժմ, քանի դեռ հնարավորություն ունեք այդ անելու:

Կանանց, ովքեր միշտ բողոքում են և տեսնում կյանքի միայն մութ կողմերը և զգում, որ սիրված չեն և ոչ ցանկալի, քննեք ձեր սեփական սրտերն ու մտքերը: Եթե ինչոր սխալ բան կա, փոխվեք: Ժպիտ դրեք ձեր դեմքերին: Ձեզ հրապուրիչ դարձրեք: Պայծառացրեք ձեր ապագայի ակնկալիքը: Դուք ձեզ զրկում եք երջանկությունից և հրապուրվում թշվառությամբ, եթե միշտ բողոքում եք և չեք ուղղում ձեր սեփական սխալները: Խուսափեք իրավունքների և արտոնությունների մասին վիճաբանելուց և քայլեք Աստծո դստեր խաղաղ արժանապատվությամբ:

Ժամանակը եկել է մեզ բոլորիս համար ապաշխարության ոգով անցյալը մեր ետևում թողնելու և նոր նվիրվածությամբ ավետարանով ապրելու համար: Ժամանակն է այժմ ամուսինների և կանանց համար, ովքեր գուցե վիրավորել են միմյանց, որպեսզի ներում խնդրեն և վճռեն հարգանք ու սեր զարգացնել միմյանց հանդեպ՝ կանգնելով Արարչի առջև որպես որդիներ և դուստրեր՝ արժանի նրա ժպիտին:

Ես կկամենայի կարդալ Տիրոջ խոսքերը, մի փոքր փոփոխելով այնպես, որ իմաստը չխաթարվի: Նա ասել է. «Նա որ սկզբիցն ստեղծեց, արու եւ էգ ստեղծեց նորանց,... Սորա համար մարդ կթողէ հայրը եւ մայրը եւ իր կնոջը կիարի եւ երկուսը կլինին *մեկ*... Որովհետեւ այլ եւս երկու չեն, այլ *մեկ*» (Մատթեոս ԺԹ.4–6): Աստված՝ Երկնային Հայրը կարգեց, որ մենք լինենք ընկերակիցներ: Դա նշանակում է հավասարություն: Ամուսնությունը համատեղ ձեռնարկություն է: Իհարկե, կան դժվարություններ և խնդիրներ, բայց դրանք երկրորդական են ավելի մեծ հնարավորությունների և ավելի մեծ բավարարվածությանհամեմատ, որոնք գալիս են ազնվացնելու եսասիրական հետաքրքրությունները հօգուտ ընկերակցության:

Մի քանի տարի առաջ ես Ջենկին Լլոյդ Ջոնսի հոդվածը կտրեցի *Deseret News* –ից, որը մասնակիորեն ասում էր. «Կարծես թե սնահավատություն կա մեր երիտասարդներից շատ հազարավորների մեջ, ովքեր … ձեռք-ձեռքի տված մտնում են կինոթատրոններ, ուր ամուսնությունը մշտադալար մոլոշավարդերով շրջապատված մի խրճիթ է, ուր մշտական երիտասարդ և գեղեցիկ տղամարդը գալիս է տուն մշտական երիտասարդ և գեղեցիկ կնոջ մոտ: Երբ մոլոշավարդերը թոռոմում են և ճանճրույթն ու մուրհակներն են հայտնվում, ամուսնալուծող դատարանները մարդաշատ են դառնում... Կյանքը նման է հին ժամանակների երկաթուղային ուղևորության՝ ուշացումներ, պահեստային գծեր, ծուխ, փոշի, մոխիր և ցնցումներ, որոնք երբեմն ընդհատվում են միայն գեղեցիկ հեռապատկերներով և արագության հուզումնալի պոռթկումներով: Գաղտնիքը նրանում է, որ Տիրոջը շնորհակալություն պետք է հայտնել այդ ուղևորությանը մասնակցելու թույլտվության համար:

Եղբայրներ և քույրեր, գաղտնիքը նրանում է, որ պետք է վայելել ճանապարհորդությունը ճամփորդելով և արևաշողին և փոթորկին ձեռք-ձեռքի տված որպես միմյանց սիրող ընկերակիցներ: Ամեն մեկը կարող է անել դա ավետարանով ապրելու մշտական ջանքերգործադրելով: Հիշեք. «Եթե Տերը չշինէ տունը՝ զուր են աշխատում նորա շինողները» (Սաղմոս ՃԻԷ.1):

Չորս անկյունաքար

Չնայած հնարավոր է կրկնեմ մի քանի բաներ, որոնք ես ասել եմ նախկինում, ես կկամենայի առաջարկել չորս անկյունաքարեր, որոնց վրա կարող եք հաստատել ձեր տները և հոգ տանել դրանց համար: Առանց վարանելու խոստանում եմ, որ եթե դուք այդպես անեք, ձեր կյանքերը կհարստանան և բարիքներով հարուստ բերք կտան, և ձեր ուրախությունը կլինի հավիտենական:

1. Փոխադարձ հարգանք

Դրանցից առաջինը ես ընտրում եմ կոչել փոխադարձ հարգանք:

Մեզանից յուրաքանչյուրը անհատականություն է: Մեզանից յուրաքանչյուրը տարբեր է: Պետք է լինի հարգանք այդ տարբերությունների հանդեպ, և թեպետ կարևոր է և անհրաժեշտ, որ ամուսինն ու կինը ձգտեն բարելավել այդ տարբերությունները, պետք էընդունեն, որ դրանք կան և ամենևին էլ տհաճ չեն: Չնայած այդ տարբերություններին, պետք է միմյանց հանդեպ հարգանք լինի:: Իրականում տարբերությունները կարող են ընկերակցությունը ավելի հետաքրքիր դարձնել:

Ես երկար ժամանակ զգացել եմ, որ երջանկությունը ամուսնության մեջ ոչ այնքան ռոմանտիկայի հարց է, որքան անհանգիստ մտահոգություն զուգընկերոջ հարմարավետության և բարօրության մասին: Այն ներառում է պատրաստակամություն անտեսելու թուլություններն ու սխալները:

Մի մարդ ասել է. «Սերը կույր չէ, այն տեսնում է ավելին, և ոչ թե ավելի քիչը: Բայց քանի որ այն տեսնում է ավելին, այն պատրաստ է տեսնել ավելի քիչը» (Julius Gordon, *Treasure Chest*, ed. Charles L. Wallis [New York: Harper and Row, 1965], p. 168):

Մեզանից շատերը պետք է դադարեն որոնել սխալներ և սկսեն որոնել արժանիքներ: Բութ Տարգինգտոնը մի անգամ ասել է. «իդեալական կինն այն կինն է, ով ունի իդեալական ամուսին» (*Looking Forward and Others* [Garden City, N.Y.: Page and Co., 1926], p. 97): Դժբախտաբար որոշ կանայք կամենում են վերադաստիարակել իրենց ամուսիններին իրենց սեփական նախագծով: Որոշ ամուսիններ իրենց առաջնահերթությունն են համարում ստիպել իրենց կանանց հարմարվել իրենց չափանիշներին, նրան ինչ իրենք համարում են իրենց իդեալը: Դա երբեք չի ստացվում: Այն միայն տանում է դեպի հակառակություն, թյուրըմբռնում և վիշտ:

Պետք է հարգանք լինի միմյանց հետաքրքրությունների հանդեպ: Պետք է լինեն հնարավորություններ և քաջալերանք անձնական տաղանդի զարգացման և արտահայտման համար: Որևէ տղամարդ, որնիր կնոջը ժամանակ չի թողնում և չի քաջալերում, որպեսզի նա զարգացնի իր տաղանդները, նա զրկում է իրեն և իր երեխաներին մի օրհնությունից, որը կարող էր զարդարել իրենց տունը և օրհնել իրենց սերնդին:

Մեզ համար սովորական է ասել, որ մենք Աստծո որդիները և դուստրերն ենք: Ավետարանում չկա հիմք ամուսնու

և կնոջ միջև գերադասության կամ ստորադասության համար: Մի՞թե կարծում եք, Աստված՝ մեր Հավերժական Հայրը իր դուստրերին ավելի քիչ է սիրում, քան իր որդիներին: Ոչ մի մարդ չի կարող նվաստացնել կամ ստորացնել իր կնոջը որպես Աստծո դուստր, առանց վիրավորանք հասցնելու նրա Երկնային Հորը:

Վիրավորված եմ այն սոփեստությունից, որ Վերջին Օրերի Կնոջ միակ ճակատագիրն է լինել ոտաբոբիկ և հղի: Դա խելացի արտահայտություն է, բայց այն կեղծ է: Իհարկե մենք հավատում ենք երեխաներին: Տերն ասել է մեզ շատանալ և լցնել երկիրը, որպեսզի ունենաք ուրախություն մեր ժառանգներով և չկա ավելի մեծ ուրախություն, քան այն ուրախությունը, որը գալիս է լավ ընտանիքներում երջանիկ երեխաներից: Բայց ոչ նա, ոչ էլ Եկեղեցին չեն նշել երեխաների թիվը: Դա սուրբ հարց է, որը թողնված է զույգերի հայեցողությանը և Տիրոջը: Եկեղեցու պաշտոնական դրույթը ներառում է այս խոսելառճը. «Ամուսինները պետք է հոգատար լինեն իրենց կանանց հանդեպ, ովքեր ավելի մեծ պատասխանատվություն են կրում ոչ միայն երեխաներին կրելու համար, այլ նրանց մանկության ընթացքում հոգ տանելու համար և պետք է օգնեն նրանց պահպանել իրենց առողջությունն ու ուժը: Ամուսնացած զույգերը պետք է վերահսկենիրենց հարաբերությունները: Նրանք պետք է ոգեշնչում փնտրեն Տիրոջից՝ իրենց ամուսնական մարտահրավերներին դիմակայելու և ավետարանի ուսմունքների համաձայն երեխաներին մեծացնելու համար» (*General Handbook of Instructions* [1983], p. 77):

Ավետարանում չկա հիմք ամուսնու և կնոջ միջև գերադասության կամ ստորադասության համար:

Ամուսիններ, կանայք, հարգեք միմյանց: Միմյանց հանդեպ հարգանքին արժանի ապրեք: Զարգացրեք այնպիսի հարգանք, որն արտահայտվում է բարությամբ, զսպվածությամբ, համբերությամբ, ներողամտությամբ, անկեղծ սիրով, առանց կիսապաշտոնական վերաբերմունք դրսևորելու և առանց իշխանության ցուցադրման:

2. Մեղմ պատասխան

Այժմ անցնում եմ երկրորդ անկյունաքարին: Ավելի լավ ձևով ներկայացնելու համար, այն կկոչեմ մեղմ պատասխան:

Առակաց գրողը հայտարարել է շատ առաջ. «Մեղմ պատասխանը կհանգստացնէ բարկությիւնը, բայց վիրավորիչ խոսքը բարկութիւն կգրգռէ» (Առակաց ԺԵ.1):

Ես լսում եմ այնքան շատ բողոքներ տղամարդկանցից և կանանցից, որ նրանք չեն կարողանում հաղորդակցվել միմյանց հետ: Միգուցե ես միամիտ եմ, սակայն չեմ հասկանում դա: Հաղորդակցությունը հիմնականում խոսակցություն վարելն է: Նրանք պետք է սկսեին հաղորդակցվել սիրատածման ժամանակ: Մի՞թե նրանք չեն կարողանում շարունակել խոսել միմյանց հետ ամուսնությունից հետո: Մի՞թե նրանք չեն կարող միմյանց հետ բաց և ազնիվ, անկեղծ և երջանիկ ձևով քննարկել իրենց հետաքրքրությունները, իրենց խնդիրները, իրենց մարտահրավերները, իրենց ցանկությունները:

Ինձ թվում է, որ հիմնականում հաղորդակցությունը միմյանց հետ զրուցելն է: Թող այդ խոսակցությունը լինի խաղաղ, քանզի խաղաղ խոսակցությունը սիրո լեզուն է: Դա խաղաղության լեզուն է: Դա Աստծո լեզուն է: Այն ժամանակ, երբ մենք բարձրացնում ենք մեր ձայնը, տարաձայնությունների փոքր բլրակներըվերածվում են հակամարտության լեռների:

Ինձ թվում է կա մի ինչ-որ կարևոր բան Բահաղի քահանաների հետ Եղիայի մրցության նկարագրության մեջ. «Մի մեծ և զորավոր հողմ պատառեց սարերը եւ կոտրատեց ապառաժները Տիրոջ առաջին. Բայց Տերն այն հողմի մեջ չէր: Եւ հողմից յետոյ երկրաշարժ եղավ, բայց Տերը երկրաշարժի մէջ չէր: Եվ երկրաշարժից յետոյ կրակ, բայց Տերը կրակի մեջ չէր. Եւ կրակից յետոյ մի մեղմ ու բարակ ձայն» (Գ Թագավորաց ԺԹ.11-12): Երկնքի ձայնը մեղմ և բարակ ձայն է: Տան մեջ խաղաղության ձայնը մեղմ ձայն է:

Ամուսնության մեջ կարգապահության մեծ կարիք կա, ոչ թե ընկերակցի, այլ ինքնակարգապահության: Ամուսիններ և կանայք, հիշեք, «Երկայնամիտը զորավորիցը լավ է» (Առակաց ԺՁ.32): Մշակեք մեղմ պատասխանի արվեստը: Դա կօրհնի ձեր տները, դա կօրհնի ձեր կյանքը, դա կօրհնի ձեր ընկերակցությունները, դա կօրհնի ձեր երեխաներին:

3. Ֆինանսական ազնվություն

Երրորդ անկյունաքարը ֆինանսական ազնվությունն է: Ես համոզված եմ, որ մեծ անհանգստության արմատը ավելի շուտ փողն է ամուսնության մեջ, քան մյուս բոլոր պատճառները միասին վերցված:

Ես վստահ եմ, որ չկա ավելի լավ կարգապահություն, ոչ էլ օրհնությունների ավելի մեծ պտղաբերություն մեր միջոցների կառավարման մեջ, քան հնադարյան Իսրայելին Մաղաքիա մարգարեի միջոցով տրված պատվիրանին հնազանդվելը. «Բոլոր տասանորդը տարեք գանձատունը,.. Եւ ինձ մեկ փորձեցէք սորանով, ասում է Զօրաց Տէրը, թե արդեօք չե՞մ բանալ ձեզ համար երկնքի պատուհանները եւ օրհնութիւն թափել ձեզ համար՝ մինչև որ նորա համար տեղ չլինի» (Մաղաքիա Գ.10): Նրանք, ովքեր ազնվորեն են ապրում Աստծո հետ, ավելի հավանական է, որ ազնվորեն ապրեն միմյանց հետ և իրենց ընկերների հետ:

Հետագայում, երբ նրանք բյուջեավորեն իրենց տասանորդներն ու նվիրատվությունները, իրենց միջոցների կառավարման հարցում կարգապահություն կզարգացնեն:

Մենք ապրում ենք համոզիչ գովազդի և հմուտ առևտրականության շնորհքի դարաշրջանում, բոլորը ծրագրված է հրապուրելու մեզ ծախսել: Ցանկացած շռայլ ամուսին կամ կին կարող է վտանգել ցանկացած ամուսնություն: Կարծում եմ, լավ սկզբունք է, որ յուրաքանչյուրն ունենա որոշ ազատություն և անկախություն ամենօրյա անհրաժեշտ ծախսերում, միևնույն ժամանակ միշտ քննարկելով, խորհրդակցելով ու համաձայնացնելով մեծ ծախսերի հարցերում: Ավելի քիչ կլինեն հապշտապ որոշումներ, ավելի քիչ անմիտ ներդրումներ, հետևաբար ավելի քիչ կորուստներ, ավելի քիչ սնանկացումներ, եթե ամուսիններն ու կանայք միասին խորհրդակցեն այդ հարցերում և միասնաբար խորհուրդ հարցնեն ուրիշներից:

Ազնիվ ապրեք Տիրոջ հետ: Ազնիվ ապրեք միմյանց հետ որպես զուգընկերներ: Ազնիվ ապրեք ուրիշների հետ: Պարտավորությունները ժամանակին վճարելը դարձրեք ձեր կյանքի հիմնական սկզբունքը: Խորհրդակցեք միմյանց հետ և միասնական եղեք ձեր որոշումներում: Տերը կօրհնի ձեզ, երբ դուք դա անեք:

4. Ընտանեկան աղոթք

Վերջին անկյունաքարը, որի վրա կառուցվում է ձեր տունը ընտանեկան աղոթքն է:

Ես չգիտեմ որևէ այլ գործողություն, որը կարող է ունենալ այնպիսի մեծ ազդեցություն ձեր կյանքի վրա, ինչպես միասին աղոթքով ծնկի իջնելը: Հենց «Մեր Երկնային Հայր» խոսքերը վիթխարի ազդեցություն ունեն: Դուք չեք կարող ասել դրանք անկեղծորեն և ընդունելով, առանց Աստծո հանդեպ պատասխանատվության որոշ զգացումներ ունենալու: Փոքրիկ փոթորիկները, որոնք կարծես թե վնասում են ամեն ամուսնություն, դառնում են ոչ մեծ կարևորության, երբ ծնկի ենք իջնում Տիրոջ առջև և դիմում նրան որպես խնդրող որդի կամ դուստր:

Նրա հետ ձեր ամենօրյա զրույցները կբերեն խաղաղություն ձեր սրտերում և ուրախություն ձեր կյանքում, որը չի կարող գալ որևէ այլ աղբյուրից: Ձեր ընկերակցությունը կդառնա ավելի քաղցր տարիների ընթացքում: Ձեր սերը կուժեղանա: Ձեր երախտագիտությունը միմյանց հանդեպ կաճի:

Ձեր երեխաները կօրհնվեն ապահովության զգացումով, որը գալիս է մի տանը ապրելուց, որտեղ բնակվում է Աստծո Հոգին: Նրանք կճանաչեն և կսիրեն ծնողներին, ովքեր հարգում են միմյանց և հարգանքի ոգին կաճի նրանց իսկ սրտերում: Նրանք կզգան մեղմորեն խոսվող բարի խոսքերի ապահովությունը: Նրանք ապաստան կգտնեն մի հոր և մոր մոտ, ովքեր ազնվորեն ապրելով Աստծո հետ, ազնվորեն են ապրում միմյանց հետ և իրենց ընկերների հետ: Նրանք կհասունանան երախտագիտության զգացումով, լսելով իրենց ծնողների աղոթքներում արտահայտված երախտագիտությունը մեծ և փոքր օրհնությունների համար: Նրանք կաճեն կենդանի Աստծո հավատքում:

Ձեր ընկերակցությունը կլինի այնպիսին, որը կքաղցրանա և կամրանա տարիների ընթացքում և հավերժ կհարատևի: Ձեր սերն ու երախտագիտությունը միմյանց հանդեպ կմեծանա ...

Թող Աստված օրհնի ձեզ, եղբայրներ և քույրեր, ամուսիններ և կանայք, որ միավորված եք միասին, որպես երախտագետ ընկերակիցներ ամուսնության սրբազան ուխտով ժամանակի և հավերժության համար, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, Ամեն:

ԶԱՐԳԱՑՆԵԼ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, հոկտ. 1998, 31–34; կամ Ensign, Նոյ. 1998, 25–28

Որպես Վերջին Օրերի Սրբեր «ամեն բանի հավատում ենք, ամեն բանի համար հույս ունենք… Եթե մի բան առաքինի է, գեղեցիկ, բարեհամբավ, գովեստի արժանի,- մենք ձգտում ենք այդ ամենին»:[6] Ինչի՞ն ենք հավատում, որը կդրդի մեզ առաջ ընթանալ: Ինչի՞ հույս ունենք մենք: Որո՞նք են առաքինի, գեղեցիկ կամ գովասանքի արժանի բաները, որոնց մենք պետք է ձգտենք: Հավատում եմ, որ մենք պետք է ձգտենք զարգացնել մեր մեջ Փրկչի բնավորության հատկանիշները:

Հավատք, հույս և գթություն

Պողոս Առաքյալի խոսքերն ենք մտաբերում. «Ապա ուրեմն մնում է հաւատք, յոյս, սեր. Այս երեքը, եւ սորանցից մեծը սէրն է»:[7] Այս աստվածային հատկանիշները պետք է ամուր մնան մեր սրտերում և մտքերում առաջնորդելու մեզ բոլոր մեր գործողություններում: Մենք կարդում ենք Մորոնիում. «Հարեք գթությանը, որը բոլորից մեծ է, … Ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի»:[8] Գթությունը կարող է լինել հավատքի և հույսի արտաքին դրսևորումը: Եթե ձգտենք և ձեռք բերենք՝ սելեստիալ բնավորության այս երեք հիմնական էլեմենտները կմնան մեզ հետ այս կյանքում և վարագույրից այն կողմ՝ հաջորդ կյանքում: Հիշեք, որ «այն նույն ոգին, որը տիրել է

ձեր մարմիններին այն պահին, երբ դուք դուրս եք գալիս այս կյանքից … այդ նույն ոգին կունենա զորություն՝ տիրելու ձեր մարմնին այն հավերժական աշխարհում»:[9] Մենք չպետք է մեկ օր իսկ սպասենք՝ ակտիվացնելով մեր անձնական ջանքերը, որպեսզի զորացնենք այս առաքինի, գեղեցիկ և գովասանքի արժանի հատկանիշները:

Երբ պահում ենք Տիրոջ պատվիրանները, հավատքը, հույսը և գթությունը մնում են մեզ հետ: Այս արժանիքները «կիջնեն քո հոգու վրա, ինչպես ցողը երկնքից»[10] և մենք կպատրաստվենք կանգնելու վստահորեն մեր Տիրոջ և Փրկչի, Հիսուս Քրիստոսի առջև որպես «անբիծ եւ անարատ գառ»:[11]

Երբ կարդում եմ և խորհում այս սուրբ գրությունների վերաբերյալ, տեսնում եմ, որ մեր մեջ հավատք, հույս և գթություն զարգացնելը քայլ առ քայլ գործընթաց է: Հավատքը ծնում է հույս, և միասին նրանք խթանում են գթություն: Մենք կարդում ենք Մորոնիում. «Ուստի, պիտի լինի նաև հույս. և եթե պիտի լինի հույս, պիտի լինի նաև գթություն»:[12] Այս երեք արժանիքները կարող են լինել սկզբում միմյանցից բխող, բայց երբ ձեռք են բերվում, դրանք դառնում են փոխկապակցված: Յուրաքանչյուրը թերի է առանց մյուսների: Դրանք օգնում և ամրացնում են միմյանց: Մորոնին բացատրել է. «Եվ եթե դուք չունենաք գթություն, դուք ոչ մի կերպ չեք կարող փրկվել Աստծո արքայությունում. Ոչ էլ կարող եք դուք փրկվել Աստծո արքայությունում, եթե դուք չունենաք հավատք, ոչ էլ կարող եք, եթե չունենաք հույս»:[13]

Սրանք առաքինի, գեղեցիկ, գովասանքի արժանի հատկանիշներ են, որոնց ձգտում ենք մենք: Մենք բոլորս ծանոթ ենք Պողոսի ուսմունքին, որ «սէրը երբէք չի վերջանալ»:[14] Անշուշտ մենք կարիք ունենք անսպառ հոգևոր ուժի մեր կյանքում: Մորոնին գրի է առել հայտնությունը, «որ հավատքը, հույսը և գթությունը բերում են [մեզ] դեպի [Տերը]՝ դեպի ակունքն ամենայն արդարության»: [15]

Այսօր երկրի վրա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին՝ Տիրոջ վերականգնված Եկեղեցին, առաջնորդում է մեզ դեպի Փրկիչը և օգնում մեզ զարգացնել, դաստիարակել և ամրացնել այս աստվածային հատկանիշները: Փաստորեն, Նա բացահայտել է այն որակավորումները, որոնք պահանջվում են Իր ծառայության մեջ աշխատելու համար՝ այս խոսքերով. «Եվ ոչ ոք չի կարող օգնել այս գործերում, եթե նա չլինի խոնարհ և սիրով լի, ունենալով հավատք, հույս և գթություն»:[16]

Մորմոնը սովորեցրել է, որ «գթությունը Քրիստոսի մաքուր սերն է» և մեզ հորդորել է «աղոթել Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են»:[17] Ուշադրություն դարձրեք, որ գթություն տրվում է միայն նրանց, ովքեր որոնում են այն, միայն նրանց, ովքեր անկեղծորեն աղոթում են դրա համար, միայն նրանց, ովքեր Քրիստոսի հետևորդներն են: Որպեսզի կարողանանք լցվել այդ մաքուր սիրով, նախևառաջ մենք պետք է սկսենք ավետարանի առաջին սկզբունքից: Մենք պետք է ունենանք «առաջինը, Հավատք առ Տեր Հիսուս Քրիստոսը»:[18]

Հավատք

«*Հավատքն* էլ *յուսացած* բաների հաստատությունը՝ եւ չերեւեցող բաների ապացոյցն է»:[19] «Հավատքը բաների մասին կատարյալ գիտելիք ունենալը չէ. Հետևաբար, եթե [մենք] ունենք հավատք, [մենք] հույս ունենք բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են»:[20] Վերջին Օրերի Սրբերը կարող են ցնծալ մեր հավատքի ուժով, որովհետև մենք ունենք ավետարանի լրիվությունը: Եթե մենք ուսումնասիրում ենք, խորհում և աղոթում, մեր հավատքը չերևացող, բայց ճշմարիտ բաների հանդեպ կաճի: Եթե նույնիսկ մենք սկսենք «գործադրել հավատքի մի մասնիկ, … Նույնիսկ եթե չենք կարող ավելին, քան ցանկանալ հավատալ»,[21] ուշադրությամբ սնուցելով հավատքի մի փոքրիկ սերմը, այն կարող է աճել՝ դառնալով վկայության ուժեղ, ամուր պտղատու ծառ:

Հավատքն առ Հիսուս Քրիստոս դրդում է մեզ ապաշխարել: Ապաշխարության միջոցով, որը հնարավոր է դարձել Տիրոջ Քավության շնորհիվ, մենք կարող ենք զգալ ներման հանգստացնող խաղաղությունը մեր մեղքերի, թուլությունների և սխալների համար: Հոգևոր վերածննդի հանդեպ հավատքով մենք մկրտվում ենք և ստանում Սուրբ Հոգու պարգևը:

Մենք ձգտում ենք պահել Աստծո պատվիրաններն այն հավատքով, որ հնազանդությունը կօգնի մեզ դառնալ Նրա նման: Մեր Փրկչի Հարության զորությամբ մենք հավատք ունենք, որ մահը կյանքի վերջը չէ: Մենք հավատք ունենք, որ մենք մեկ անգամ ևս կզգանք հաճելի ընկերակցությունը և ջերմ գրկախառնությունը մեր սիրելիների, ովքեր հեռացել են մահկանացու կյանքից:

Հույս

Մորմոնը հարցրել է իր օրերի Սրբերին. «Եվ ի՞նչն է, որի համար դուք պիտի հույս ունենաք»: Նա տվել է նրանց այս պատասխանը. «Ահա, ես ասում եմ ձեզ, որ դուք կունենաք հույս, Քրիստոսի Քավության և նրա հարության զորության միջոցով, բարձրացվելու դեպի հավերժական կյանք, և դա՝ ձեր հավատքի շնորհիվ առ նա՝ խոստումի համաձայն»:[22] Եթերի գրքում մենք սովորում ենք որ. «Ով որ հավատում է Աստծուն, կարող է անկասկած հուսալ ավելի լավ աշխարհի համար, այո, նույնիսկ մի տեղի՝ Աստծո աջ կողմում, հույս, որը գալիս է հավատքից, [և] դառնում է խարիսխ մարդկանց հոգիների համար»:[23]

Նույնիսկ, երբ հակառակորդի քամիներն են փչում, մեր Հայրը մեզ խարսխված է պահում մեր հույսին: Տերը

խոստացել է. «Ձեզ որբ չեմ թողիլ»[24] և Նա «կնվիրագործի [մեր] չարչարանքները [մեր] օգտի համար»:[25] Նույնիսկ, երբ մեր փորձությունները թվում են անհաղթահարելի, մենք կարող ենք ուժ և հույս ստանալ Տիրոջ հաստատ խոստումից՝ «Դուք մի վախենաք եւ մի զարհուրիք... Որովհետեւ պատերազմը ձերը չէ այլ Աստծունն է»:[26]

Գթություն

Երբ հավատքն աճում է դառնալով հաստատուն, մնայուն վկայություն, տալով մեզ հույս մեր Երկնային Հոր երջանկության ծրագրի հանդեպ, երբ մենք տեսնում ենք հավատքի աչքով, որ մենք սիրառատ Հոր զավակներն ենք, որը տվել է մեզ Իր Որդու պարգևը մեզ փրկագնելու համար, մենք հզոր փոփոխություն ենք զգում մեր սրտերում:[27] Մենք ցանկանում ենք «երգել փրկագնող սիրո երգը»[28] և մեր սրտերը հորդում են գթությամբ: Իմանալով, որ Աստծո սերը «ամենաբաղձալին է բոլոր բաներից ավելի... և հոգու համար ամենաբերկրալին»,[29] մենք ցանկանում ենք կիսվել մեր ուրախությամբ ուրիշների հետ: Մենք կամենում ենք ծառայել նրանց և օրհնել նրանց:

Ընտանիք

«Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին» հռչակագիրը հստակորեն նշում է ընտանիքի սրբությունը, և որ «Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար»:[30] Երեխաներին պետք է ուսուցանել վաղ հասակում տաճարների սրբության վերաբերյալ, և որ նրանց վերջնական նպատակը պետք է լինի տաճար գնալ՝ վայելելու այն օրհնությունները, որոնք մեր Երկնային Հայրը պահել է նրանց համար: Նույնիսկ երեխաներին տրվում է այս սրբազան նպատակի համար պաստառ, որ ժամանակին նրանք հասկանան, որ սա մեծագույն օրհնություն է, որ կարող էր գալ նրանց այս կյանքում...

Ես վկայում եմ ձեզ որպես հատուկ վկա, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ Իր մարգարեի՝ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի միջոցով, Փրկիչը նախագահում է Իր Եկեղեցու վրա: Թող որ մենք զարգացնենք մեր մեջ Նրա աստվածային հատկանիշները՝ պատրաստվելով Նրա վերադարձին այս աշխարհ, սա է իմ աղոթքը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

6. Հավատո Հանգանակ 1.13:
7. Ա Կորնթացիս ԺԳ.13:
8. Մորոնի 7.46–47:
9. Ալմա 34.34:
10. Վարդապետություն և Ուխտեր 121.45:
11. Ա Պետրոս Ա.19:
12. Մորոնի 10.20:
13. Մորոնի 10.21:
14. Ա Կորնթացիս ԺԳ.8:
15. Եթեր 12.28:
16. Վարդապետութոյն և Ուխտեր 12.8:
17. Մորոնի 7.47–48:
18. Հավատո Հանգանակ 1.4:
19. Եբրայեցիս ԺԱ.1, շեղագիրն ավելացված է:
20. Ալմա 32.21:
21. Ալմա 32.27, տես նաև հատվածներ 28–43:
22. Մորոնի 7.41:
23. Եթեր 12.4:
24. Հովհ. ԺԴ.18:
25. 2 Նեփի 2.2:
26. Բ Մնացորդաց Ի.15:
27. Տես Ալմա 5.14:
28. Ալմա 5.26:
29. 1 Նեփի 11.22–23:
30. *Ensign*, Nov. 1995, 102.

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ամուսնությունը կարող է լինել ավելի մեծ ցնծություն, քան կարող է ընկալել մարդկային միտքը: Դա մատչելի է յուրաքանչյուր զույգի, յուրաքանչյուր անձնավորության:

—Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Ամուսնությունը բերում է երջանկություն և ուրախություն

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Քրիստոսի Եկեղեցու ուսմունքներում ընտանիքը գերագույն կարևորություն ունի անձնավորության և հասարակության զարգացման համար:«Երջանիկ են և եռապատիկ երջանիկ նրանք, ովքեր վայելում են անքակտելի միություն, և որոնց սերը, անկոտրում որևէ բողոքներից, չի անհետանա մինչև վերջին օրը»: Այն չի անհետանա, երբ արժանի զույգը կնքվի Սուրբ Քահանայության իշխանությամբ ողջ հավերժության համար: Երբ ամուսնական ծիսակատարությունը կնքվում է այս ձևով, առաջացնում է երջանկություն և ուրախություն, որին չի գերազանցի աշխարհում որևէ այլ փորձառություն» (in Conference Report, Apr. 1966, 108):

««Ուրեմն ինչպես,- հարցնում եք դուք,- «կարելի է ասել, թե արդյոք կա՞ որևէ հարազատություն [կապվածության զգացումներ], այն ինչ առնվազն ձեզ հարազատ կդարձնի միմյանց հանդեպ»: ««Արդյոք կա՞,- հարցնում եք դուք,- ինչ որ ուղեցույց, ... Այնուամենայնիվ, առանց սիրո անշուշտ չկա երջանկություն» (*Gospel Ideals*, 459):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Պատվավոր, երջանիկ և հաջողակ ամուսնությունը անկասկած յուրաքանչյուր նորմալ անձնավորության գլխավոր նպատակն է: Ամուսնությունը, հավանաբար, ամենակենսականն է բոլոր որոշումներից և ունի ամենահեռու գնացող ազդեցություններ, քանի որ այն առնչվում է ոչ միայն անմիջական երջանկության, այլ նաև հավերժական հրճվանքի հետ...

...Ամուսնությունը կարող է լինել ավելի մեծ ցնծություն, քան կարող է ընկալել մարդկային միտքը: Դա մատչելի է յուրաքանչյուր զույգի, յուրաքանչյուր անձնավորության» (“Oneness in Marriage,” *Ensign*, Mar. 1977, 3–4):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Քանի որ այս կյանքում մեր ընտանիքը ուրախության մեծագույն աղբյուրն է, դա նույն հաջողությամբ կարող է այդպես լինել հավերժության մեջ» (in Conference Report, Apr. 1979, 48; կամ *Ensign*, May 1979, 33–34):

Նախագահ Բոյդ Կ. Փաքեր

«Վերջնական նպատակը այն ամենի, ինչ մենք սովորեցնում ենք, ծնողներին և երեխաներին միավորելն է Տեր Հիսուս Քրիստոսի հավատքում, որ նրանք երջանիկ լինեն տանը, կնքված հավերժական ամուսնությամբ, կապված իրենց սերունդների հետ և հավաստիացած, որ վեհացում կստանան մեր Երկնային Հոր ներկայության մեջ» (in Conference Report, Apr. 1995, 8; կամ *Ensign*, May 1995, 8):

Երեց Բոյդ Կ. Փաքեր

«Որոշ ամուսնություններ իսկապես լուրջ խնդիրներ ունեն, իսկ մի քանիսը վերջանում են սրտաբեկությամբ, բայց մենք չպետք է այդ պատճառով կորցնենք հավատքն ամուսնության հանդեպ, ոչ էլ վախենանք դրանից:

Խաթարված ամուսնությունները տիպական չեն:

Հիշեք, որ անախորժությունը ուշադրություն է հրավիրում: Մենք ճամփորդում ենք մայրուղով, որի երկու կողմով էլ հազարավոր ավտոմեքենաներ են ընթանում, և առանձնակի ուշադրություն չենք դարձնում դրանցից որևէ մեկին: Բայց երբ վթար է տեղի ունենում, մենք անմիջապես նկատում ենք դա:

Երբ կրկին վթարի ենք հանդիպում, մենք կեղծ տպավորություն ենք ստանում, որ ոչ ոք չի կարող ապահով գնալ ճանապարհով:

Մեկ վթարը կարող է հայտնվել թերթերի առաջին էջերում, մինչդեռ հարյուր միլիոնավոր մեքենաներ, որոնք ապահով անցնում են, հիշատակելու արժանի չեն համարվում:

Գրողները կարծում են, թե երջանիկ, կայուն ամուսնությունը չունի դրամատիկ գրավչություն, կոնֆլիկտ, որն արժե նկարագրել գրքում կամ պիեսում կամ էլ կինոֆիլմում:

Ես հավատում եմ ամուսնությանը: Ես հավատում եմ, որ այն իդեալական ձև է մարդկային կյանքի համար:

Ես չգիտեմ ավելի լավ ժամանակ աշխարհի ողջ պատմության մեջ երիտասարդ որևէ զույգի համար, ովքեր չափահաս են, պատրաստված և սիրահարված են, որպեսզի մտածեն ամուսնության մասին: Չկա ավելի լավ ժամանակ, որովհետև սա *ձեր* ժամանակն է:

Ես գիտեմ, որ այժմ շատ անհանգիստ ժամանակներ են: Այնպիսի փորձանքներ, որոնք տեղի են ունենում այսօր, շատ դժվար են ամուսնությունների համար:

Ես չեմ կորցնում հավատքս ամուսնության հանդեպ: Չեմ կորցնում նույնիսկ, եթե անցել եք ամուսնալուծության դժբախտության միջով և շրջապատված եք ամուսնության հիշողություններով, որոնք փշուր-փշուր են եղել» (in Conference Report, Apr. 1981, 15–16; կամ *Ensign,* May 1981, 14–15):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

«Այս աշխարհում չկա ավելի կարևոր բան, քան ընտանեկան միավորների ստեղծումն ու կատարելագործումը» (“Salvation Is a Family Affair,” *Improvement Era,* June 1970, 43–44):

«Ավետարանի ողջ նպատակն ու մտադրությունն է հնարավորություն ընձեռել տղամարդկանց և կանանց՝ միացված որպես մեկ Տերում, իրենց համար ստեղծել հավերժական ընտանիքի միավորներ հավերժության մեջ: Սելեստիալ ամուսնությունը նախապատրաստում է մեզ մեծագույն ուրախությանը և երջանկությանը, որը երբևէ հայտնի է եղել մահկանացուներին, և պատրաստում է հավերժական կյանքին գալիք աշխարհում» (in Conference Report, Oct. 1979, 82; կամ *Ensign,* Nov. 1979, 55):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Ամուսնության և ծնող լինելու երջանկությունը կարող է հազար անգամ գերազանցել որևէ այլ երջանկության» (in Conference Report, Oct. 1977, 14; կամ *Ensign,* Nov. 1977, 11):

Սուրբ գրությունների ուսումնասիրություն

Հետևյալ սուրբ գրություններում նշեք սկզբունքները, որոնք մեզ տալիս են ներըմբռնում ամուսնության երջանկության վերաբերյալ.

Հոբ Զ.25

Առակաց ԺԵ.1

Մատթեոս ԺԲ.34–37

1 Նեփի 1.20

Ալմա 41.10

Վարդապետություն և Ուխտեր 42.22–23, 50.28

Սատանան փորձում է կործանել երջանկությունը

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Հավանաբար, մեր մեծագույն մտահոգությունը վերաբերում է ընտանիքներին: Ընտանիքներ են կործանվում ողջ աշխարհով մեկ: Ամենուր ջարդվում են հին կապերը, որոնք միմյանց էին միավորում հորը, մորը և երեխաներին: Մենք պետք է դիմակայենք սրան մեր իսկ շրջապատում: Առկա են չափից շատ ավերված տներ հենց մեր մեջ: Սերը, որհանգեցրել էր ամուսնության, ինչ որ ձևով գոլորշիանում է, և ատելությունն է գրավում դրա տեղը: Կոտրվում են սրտեր, արտասվում են երեխաներ: Արդյոք չե՞նք կարող ավելի լավ վարվել: Իհարկե, կարող ենք: Եսասիրությունն է, որ առաջ է բերում այս ողբերգությունների մեծ մասը: Եթե լինի համբերատարություն, եթե լինի ներողամտություն, եթե լինի սրտառուչ հոգածություն կողակցի երջանկության համար, ապա սերը կծաղկի և կբողբոջի:

Երբ նայում եմ դեպի ապագան, ընտանիքի հետ կապված քիչ բան եմ տեսնում ոգևորիչ ինչպես Ամերիկայում, այնպես էլ ողջ աշխարհում: Թմրադեղերն ու ոգելից խմիչքները սոսկալի վնաս են պատճառում, որը նվազման միտում չունի: Կոպիտ խոսելաձև միմյանց հետ, անտարբերություն միմյանց կարիքների հանդեպ, այս ամենը թվում է գնալով աճում է: Այնքան շատ է երեխաների սեռական բռնությունը: Այնքան շատ է կողակցի հանդեպ բռնությունը: Աճում է մեծահասակների հանդեպ բռնությունը: Այս բոլորը կշարունակվի և ավելի կվատթարանա, մինչև որ հիմքում ընկած չլինի այն գիտակցությունը, այո, ուժեղ և ջերմեռանդ համոզմունքը, այն փաստի վերաբերյալ, որ ընտանիքը Ամենազորի գործիքն է: Դա Նրա ստեղծածն է: Այն նաև հասարակության հիմնական միավորն է:

Ես նախազգուշացնող ձայն եմ բարձրացնում դեպի մեր ժողովուրդը: Այս հարցում մենք շատ հեռուն ենք գնացել հասարկության հոսանքով: Իհարկե, կան լավ ընտանիքներ: Ամենուրեք կան լավ ընտանիքներ: Բայց կան չափից շատ ընտանիքներ, ովքեր փորձանքի մեջ են: Սա հիվանդություն է, որը բուժում ունի: Նշանակումը պարզ է և հրաշալիորեն արդյունավետ: Դա սերն է: Սա հստակ ու պարզ է՝ ամենօրյա սեր և հարգանք: Դա քնքուշ բույս է, որը սնուցման կարիք ունի: Բայց արժե գործադրել բոլոր ջանքերը, որոնք կարող ենք ներդնել» (in Conference Report, Oct. 1997, 94; կամ *Ensign,* Nov. 1997, 69):

«Ժամանակ առ ժամանակ կարող է լինել ամուսնալուծության ճիշտ դեպք: Ես այն մարդը չեմ, որը կասի, թե այն երբեք արդարացված չէ: Բայց ես ասում եմ առանց տատանվելու, որ մեր մեջ այս համաճարակը, որը թվում է աճում է ամենուրեք, Աստծուց չէ, այլ արդարության և խաղաղության ու ճշմարտության հակառակորդի գործն

է» (in Conference Report, Apr. 1991, 97–98; կամ *Ensign,* May 1991, 74):

Երեց Բոյդ Կ. Փաքեր

«Լյուցիֆերի միակ նպատակն է հակադրվել երջանկության մեծ ծրագրին, փչացնել կյանքի ամենամաքուր, ամենագեղեցիկ և ամենահրապուրիչ փորձառությունները՝ ռոմանտիկան, սերը, ամուսնությունը և ծնող լինելը [2 Նեփի 2.18, 28.20]: Նրա ետևում ամենուրեք մնում է սրտաբեկություն և մեղք [Ալմա 39.5, Մորոնի 9.9]: Միայն ապաշխարությունը կարող է բժշկել պատճառված ցավն ու վնասը» (in Conference Report, Oct. 1993, 27–28; կամ *Ensign,* Nov. 1993, 21):

«Հակառակորդի վերջնական նպատակը, որը «մեծ բարկութիւն ունի, գիտենալով, որ քիչ ժամանակ ունի» [Հայտնություն ԺԲ.12] պիտի քանդի, խորտակի և կործանի տունը և ընտանիքը: Նավի նման, որը ղեկ չունի, առանց ուղեցույցի, մենք հեռու ենք քշվում ընտանեկան արժեքներից, որոնք մեզ խարսխել են անցյալում: Այժմ մենք ընկած ենք հոսանքի մեջ, որն այնքան ուժեղ է, որ եթե մենք չուղղենք մեր ընթացքի ուղղությունը, քաղաքակրթությունը ինչպես գիտենք անկասկած կխորտակվի վերածվելով բեկորների» (in Conference Report, Apr. 1994, 24; կամ *Ensign,* May 1994, 19):

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին

«Մենք ապրում ենք մի օրում, երբ Լյուցիֆերի ազդեցությունն ավելի մեծ է, քան երբևէ մենք իմացել ենք մեր կյանքի ընթացքում: Երկրի վրա մեղքի, չարի և ամբարշտության տեսակետից մենք կարող ենք մեր ժամանակը նմանեցնել նախքան ջրհեղեղը Նոյի օրերին: Ոչ ոք պաշտպանված չէ չարչարանքի և դժվարության դեմ, լինի դա տնտեսական, զգացմունքային, թե հոգևոր: Անբարոյականությունը, բռնությունը և ամուսնալուծությունը դրանց ուղեկցող վշտերով, աղետներ են բերում հասարակության գլխին ողջ աշխարհում» (in Conference Report, Oct. 1993, 4; կամ *Ensign,* Nov. 1993, 5):

Երեց Հենրի Բ. Այրինգ

«Մարգարեների խորհուրդներում անվտանգ արահետը փնտրելը խելամիտ է նրանց համար, ովքեր ունեն ուժեղ հավատք» (in Conference Report, Apr. 1997, 32; կամ *Ensign,* May 1997, 25):

ԽՈՍՏՈՒՄԻ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Կնքել նշանակում է վավերացնել, հաստատել կամ հավանություն տալ:

—Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

«*Խոստումի Սուրբ Հոգին* այն Սուրբ Հոգին է, որը *խոստացվել էր* սրբերին կամ այլ խոսքով ասած Սուրբ Հոգին»: Այս անուն-կոչումը օգտագործվում է կապված Սուրբ Հոգու կնքող և վավերացնող զորության հետ, այսինքն այն զորության, որը տրվել է նրան վավերացնելու և հաստատելու մարդկանց արդար գործերը, որպեսզի այդ գործերը կապված լինեն երկրի վրա և երկնքում: «Բոլոր ուխտերը, պայմանագրերը, մուրհակները, պարտավորությունները, երդումները, կատարումները, կապերը, ընկերակցությունները կամ ակնկալիքները» պետք է կնքվեն Խոստումի Սուրբ Հոգու կողմից, եթե դրանք պետք է ունենան «ազդեցություն, զորություն կամ ուժ մեռելների հարության ժամանակ և հետո, քանզի բոլոր պայմանագրերը, որոնք չեն կնքվել ադ վախճանի համար, վերջանում են մարդկանց մահվան հետ» (ՎԱՈՒ 132.7):

Այն գործը, որը կնքվում է Խոստումի Սուրբ Հոգու կողմից, ... այդ մեկն է, որ հավանության է արժանանում Տիրոջ կողմից:

Կնքել նշանակում է *վավերացնել, հաստատել* կամ *հավանություն տալ*: Այսպիսով այն գործը, որը կնքվում է Խոստումի Սուրբ Հոգու կողմից, այդ մեկն է, որ վավերացվում է Սուրբ Հոգուց, այդ մեկն է, որ հավանության է արժանանում Տիրոջ կողմից, և այն մարդը, որը պարտավորություն է վերցնում իր վրա, հաստատվում է Հոգու կողմից այն բանում, որ նա արել է:

Վավերացնող կնիքը կամ հավանությունը դրվում է մի գործի վրա, եթե նրանք, ովքեր պայմանագրի մեջ են մտնում արժանի են անձնական արդարակեցության հետևանքով ստանալ աստվածային վավերացումը: Նրանք «կնքվում են Խոստումի Սուրբ Հոգու կողմից, որը Հայրը թափում է բոլոր նրանց վրա, ովքեր *արդար* են և *ճշմարիտ*» (ՎԱՈՒ 76.53): Եթե արդար, ճշմարիտ և արժանի չեն, վավերացնող կնիքը մերժվում է:

Երբ որևէ ծիսակատարություն կամ պայմանագիր կնքվում է Հոգու կողմից, այն հավանության է արժանանում պարգևատրության խոստումով, պայմանով որ անարդարությունը հետագայում չի խախտի կնիքը, վերացնի վավերացնող հաստատումը և առաջացնի խոստացված օրհնությունների կորուստ (*Doctrines of Salvation*, vol. 1, p. 55; vol. 2, pp. 94–99.): Կնիքները դրվում են պայմանագրերի վրա արդարակեցության միջոցով:

«Խոստման Սուրբ Հոգու գործունեությունը և զորությունը լավագույն ձևով նկարագրվում է մկրտության ծիսակատարության և պայմանագրի միջոցով: Մկրտության համար անարժան թեկնածուն գուցե խաբի երեցներին և մկրտությունը ի կատար ածվի, բայց ոչ ոք չի կարող ստել Սուրբ Հոգուն և անցնել առանց հայտնաբերվելու: Հետևաբար, անարժան և չապաշխարող մարդու մկրտությունը չի կնքվի Հոգու կողմից, այն չի վավերացվի Սուրբ Հոգու կողմից, անարժան մարդը չի հաստատվի Հոգու կողմից իր գործողություններում: Եթե հետագայում նա արժանի դառնա ապաշխարության և հնազանդության միջոցով, այդ ժամանակ կնիքը ուժի մեջ կմտնի: Նմանապես, եթե որևէ արժանի մարդ մկրտվի, արարողությանը ներկա գտնվող Սուրբ Հոգու վավերացնող հաստատումով, սակայն կնիքը կարող է կոտրվել հետագա մեղքից:

Այս սկզբունքները վերաբերվում են նաև Եկեղեցու յուրաքանչյուր այլ ծիսակատարության և արարողության: Այսպիսով, եթե երկու կողմերն էլ «արդար են և ճշմարիտ», եթե նրանք արժանի են, նրանց տաճարային ամուսնության վրա դրվում է վավերացնող կնիք, եթե նրանք անարժան են, նրանք չեն հաստատվում Հոգու կողմից և Սուրբ Հոգու վավերացումը ետ է պահվում: Հետագա արժանավորությունը ուժի մեջ կդնի կնիքը, իսկ անարդարակեցությունը կկոտրի ցանկացած կնիք:

Նույնիսկ եթե մարդ առաջադիմում է կատարելությանը մոտ մի վիճակի, որում նրա կոչումն ու ընտրությունը դառնում են անխախտ, որով նա «կնքվում է հավերժական կյանքի համար» (ՎԱՈՒ 131.5, 132.18–26), որում նա ստանում է « հավերժական կյանքի... խոստումը (ՎԱՈՒ 88.3–4), որում նա «կնքվել է փրկագնման օրվա համար» (ՎԱՈՒ 124.124, Եփես. Ա.13), այս ամենով հանդերձ, այս մեծ խոստումները ապահովվում են միայն այն ժամանակ, եթե «ծիսակատարությունները» կնքվում են Խոստումի Սուրբ Հոգու կողմից» (*Mormon Doctrine*, 361–62):

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր անձնավորություն պետք է գնահատի իր անկախությունը և աշխատի իր ողջ զորությամբ պահպանել այն՝ լինելով ինքնահաստատվող:

—Երեց Մարիոն Գ. Ռոմնի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Զույգերը լավ կանեն անմիջապես գտնեն իրենց սեփական օջախը, երկու կողմի ծնողներից էլ առանձին և մեկուսի լինելու համար: Տունը կարող է շատ համեստ լինել և անհավակնոտ, բայց միևնույն է այն անկախ բնակարան է: Ձեր ամուսնական կյանքը պետք է անկախ դառնա ինչպես ամուսնու, այնպես էլ կնոջ ազգականներից: Դուք սիրում եք նրանց ինչպես երբեք, դուք բարձր եք գնահատում նրանց խորհուրդը, դուք շնորհակալ եք նրանց ընկերակցության համար, բայց դուք ապրում եք ձեր կյանքով, կառավարվելով ձեր որոշումներով, ձեր իսկ աղոթքով մտորելով՝ նրանցից խորհուրդ ստանալուց հետո, ովքեր պետք է տան այն» (“Oneness in Marriage,” *Ensign,* Mar. 1977, 5):

Նախագահ Մարիոն Գ. Ռոմնի

«Այս սուրբ գրության հատվածն [ՎԱՈՒ 29.34–35] ասում է մեզ, որ չկա այնպիսի մի բան, որը կոչվի ժամանակավոր պատվիրան: Այն նաև ասում է մեզ, որ մարդը պետք է լինի «գործակալն իր անձի»: Մարդը չի կարող լինել գործակալն իր անձի, եթե նա ինքնավստահ չէ: Սրանով տեսնում ենք, որ անկախությունը և ինքնավստահությունը կարևոր բանալիներ են մեր հոգևոր աճի համար: Երբ մենք հայտնվում ենք մի վիճակում, որը սպառնում է մեր ինքնավստահությանը, մենք մեր ազատությունը ևս սպառնալիքի տակ կգտնենք: Եթե մենք մեծացնում ենք մեր կախվածությունը, մենք անմիջապես մեր ազատությունը սահմանափակված ենք գտնում» (in Conference Report, Oct. 1982, 134; կամ *Ensign,* Nov. 1982, 93):

Երեց Էզրա Թաֆթ Բենսոն

«Մեկ այլ առաջնակարգ արժանիք, որը շենացնում է տղամարդկային արժանիքները և անկախությունը, խնայողությունը կամ տնտեսվարությունն է: «Մի վատնիր, մի ցանկանար»-ը վաղուց ի վեր շեփորող կոչ է եղել: Այնուամենայնիվ, վերջին տարիների ընթացքում այս ասացվածքը իր տեղն է զիջել այսպես կոչված «պակասորդով ծախսում»-ին: Շատերն են ուսուցանում, որ մենք պետք է անցնենք մեր ճանապարհը դեպի բարգավաճում: Ի՞նչ եք մտածում այս փիլիսոփայության մասին: Արդյոք դադարե՞լ եք վերլուծել դրա ազդեցություններն անկախության, ինքնավստահության և անձնավորության բնավորության վրա: Իսկ ի՞նչ կասեք դրա հնարավոր ազդեցության մասին այս ազգի հենց գոյության վրա՝ որպես ազատասեր կանանց և տղամարդկանց ապաստանի» (. . . *So Shall Ye Reap,* 165):

Երեց Մարիոն Գ. Ռոմնի

«Առաջինը, յուրաքանչյուր անձնավորություն պետք է գնահատի իր անկախությունը և աշխատի ողջ իր զորությամբ պահպանել այն՝ լինելով ինքնահաստատվող: Տերը սա մեզ վրա դրեց, երբ Եդեմի Պարտեզից Նա դուրս հանեց մեր առաջին ծնողներին խիստ հրաման տալով. «Երեսիդ քրտինքովը հաց ուտես, մինչեւ որ ետ դառնաս դէպի երկիրը» (Ծննդ. Գ.19) (in Conference Report, Apr. 1943, 27):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Ինքնավստահության սկզբունքը կամ անձնական անկախությունը կարևոր է երջանիկ կյանքի համար: Խիստ շատ տեղերում, խիստ շատ ուղիներում մենք հեռու ենք գնում դրանից:

Նյութը, որի մասին ուզում եմ խոսել հետևյալն է. Ինքնավստահության նույն սկզբունքը կիրառում ունի հոգևոր և զգացմունքային առումով...

Մենք չպետք է հիմնադրենք խորհրդատվական ծառայությունների ցանց առանց միևնույն ժամանակ շեշտելու զգացմունքային ինքնավստահության և անձնական անկախության սկզբունքը:

Եթե կորցնում ենք մեր զգացմունքային և հոգևոր անկախությունը, մեր ինքնավստահությունը, մենք կարող ենք այնքան թուլանալ, գուցե նույնիսկ ավելի շատ, քան երբ մենք նյութական կախվածության մեջ ենք ընկնում:

Եթե ուշադիր չլինենք, մենք կարող ենք կորցնել անձնական հայտնության զորությունը...

Հոգևոր անկախությունը և ինքնավստահությունը հաստատող ուժ է Եկեղեցում: Եթե մենք անդամներից կողոպտում ենք դա, ինչպե՞ս նրանք կարող են հայտնություն ստանալ իրենց համար: Ինչպե՞ս նրանք կարող են իմանալ, որ կա Աստծո մարգարե: Ինչպե՞ս կարող են աղոթքներին պատասխան ստանալ: Ինչպե՞ս կարող են նրանք ինքնուրույն *անկասկած* իմանալ» (in Conference Report, Apr. 1978, 136–37; կամ *Ensign,* May 1978, 91–92):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

Աշխարհիկ և տնտեսական *անկախությունը* կարևոր է, եթե պետք է լինի պաշտամունքի բացարձակ ազատություն... Որևէ մեկը, որի օգնությունը գալիս է մեկ այլ մարդուց կամ գործակալությունից, քիչ թե շատ ենթակա է աջակցող ուժի կամքին կամ վերահսկողությանը (*Mormon Doctrine,* 378):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Տերն ասել է, որ Եկեղեցու համար կարևոր է «կանգնել անկախ՝ սելեստիալ աշխարհի տակ գտնվող բոլոր մյուս արարածներից բարձր» (ՎԱՈՒ 78.14): Եկեղեցու անդամներին ևս խորհուրդ է տրվում անկախ լինել: Անկախություն նշանակում է շատ բաներ: Դա նշանակում է զերծ լինել թմրադեղերից, որոնք հակում են առաջացնում, սովորույթներից, որոնք կապում են, և հիվանդություններից, որոնք անիծում են: Այն նաև նշանակում է զերծ լինել անձնական պարտքերից և տոկոսից և աշխարհով մեկ պարտավորություններ կրել պահանջվող պարտքերի դիմաց» (in Conference Report, Apr. 1986, 24–25; կամ *Ensign,* May 1986, 21):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Եսասիրության վերջին, նուրբ հենքերից մեկը այն բնական զգացումն է, որ մենք ենք մեր «տերը»: Իհարկե մենք ազատ ենք ընտրելու և անձնապես հաշվետու ենք: Այո, մենք ունենք անհատականություն: Բայց նրանք, ովքեր ընտրել են «գալ դեպի Քրիստոս», շուտով հասկանում են, որ նրանք իրենք իրենց «տերը չեն»: Փոխարենը, նրանք պատկանում են Նրան: Մենք պետք է դառնանք նվիրագործված մեր պարգևներով, մեր նշված օրերով և մեր բուն էությամբ: Այսպիսով, մեծ տարբերություն կա համառորեն «տեր լինել» մեզ, թե խոնարհաբար պատկանել Աստծուն: Հին էությունից կախված մնալը անկախության նշան չէ, այլ բավականություններով տարված լինելու նշան» (in Conference Report, Oct. 1990, 18; կամ *Ensign,* Nov. 1990, 16):

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ոչ թե եսասիրությունը, այլ մեղմությունը և հարգանքը պետք է լինեն ամուսնու և կնոջ մտերիմ հարաբերության մեջ առաջնորդող սկզբունքները:

—Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Թեմային առնչվող սուրբ գրություններ

Ա Կորնթացիս Է.2–5

«Սակայն պոռնկութեան պատճառով թող ամեն մարդ իր կինն ունենայ. Եւ ամեն մէկ կին թող իր մարդն ունենայ:

Մարդը թող իր կնկայ պարտքը վճարէ. Եւ այնպէս էլ կինն իր մարդին:

Կինն իր մարմնի վերայ իշխանութիւն չունի, այլ մարդը. Այնպէս էլ մարդն իր մարմնի վերայ իշխանութիւն չունի, այլ կինը:

Իրար մի զրկէք. Բայց միայն իրար հետ միաբանվելով մի քիչ ժամանակի համար, որ ծոմապահութեան եւ աղոթքի պարապուիք. Եւ դարձեալ մէկտեղ դարձէք, որ սատանան չփորձէ ձեզ՝ ձեր անժուժկալութեան պատճառովը»:

Ֆիզիկական մտերմությունը կարգված է Աստծո կողմից

Նախագահ Ջոն Թեյլոր

«Մենք ունենք մեծ քանակությամբ ներքին սկզբունքներ մեր էության մեջ, որոնք ճիշտ են, բայց դրանք կարիք ունեն սրբագործման: Աստված ասաց մարդուն. «Աճեցէք եւ շատացէք, եւ լցրէք երկիրը, եւ տիրեցեք նորան. եւ իշխեցէք ծովի ձկների, եւ երկնքի թռչունների վերայ, եւ երկրի վերայ սողացող բոլոր կենդանիների վերայ» (Ծննդոց Ա.28): Նա հիանալի է ծրագրել սրա հետ կապված բնական ցանկություն կնոջ մեջ դեպի տղամարդը, իսկ տղամարդու մեջ դեպի կինը, և քնքշանքի, հարգանքի և համակրանքի զգացում սեռերի միջև: Մենք բերում ենք դա աշխարհ մեզ հետ, բայց դա մյուս բաների նման պետք է սրբագործվի: Այս զգացմունքների անօրինական բավարարումը և համակրանքները սխալ են Աստծո աչքում և տանում են դեպի մահ, մինչդեռ մեր ֆունկցիաների պատշաճ գործածումը տանում է դեպի կյանք, երջանկություն և վեհացում այս կյանքում և գալիք կյանքում: Եվ դա այդպես է հազարավոր այլ բաների վերաբերյալ» (*Gospel Kingdom,* 61):

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթ

«Սեռերի օրինական համագործակցումը կարգված է Աստծուց, ոչ միայն որպես մարդկային ցեղի շարունակման միջոց, այլ ավելի բարձր ունակությունների և ավելի ազնվագույն մարդկային էության հատկանիշների ձևավորման համար, որը կարող է ապահովվել միայն տղամարու և կնոջ սիրով ոգեշնչված ընկերակցությամբ» (“Unchastity the Dominant Evil of the Age,” *Improvement Era,* June 1917, 739):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Տղամարդկանց և կանանց ճակատագիրն է միանալ միմյանց կազմելով հավերժական ընտանեկան միավորներ: Օրինական ամուսնության ենթատեքստում սեռական մտերիմ հարաբերությունները ճիշտ են և աստվածայնորեն հաստատված: Չկա ոչ մի անսուրբ կամ այլասերված բան սեռական հարաբերության մեջ, քանզի այդ կերպ են տղամարդիկ և կանայք միանում արարման գործընթացում և արտահայտում սեր» (*President Kimball Speaks Out,* 2):

«Սեռերի միավորումը՝ ամուսին և կին (*միմիայն* ամուսին և կին) երեխաներ աշխարհ բերելու հիմնական նպատակով էր: Սեռական փորձառությունները երբեք նախատեսված չէին Տիրոջ կողմից ուղղակի խաղ լինելու համար կամ պարզապես կրքերն ու տենչերը բավարարելու համար: Մենք չգիտենք ոչ մի հրահանգ Տիրոջից, որ պատշաճ սեռական փորձառությունը ամուսնու և կնոջ միջև պետք է սահմանափակել ընդհանրապես երեխաների ծնվելով, բայց մենք շատ փաստեր ենք գտնում Ադամից սկսած մինչ այժմ, որ Տիրոջ կողմից ոչ մի որոշում չի կայացվել ամուսնությունից դուրս սեռական հարաբերության վերաբերյալ» (“The Lord’s Plan for Men and Women,” *Ensign,* Oct. 1975, 4):

Երեց Փարլի Փ. Փրաթ

«Մեր բնական մտերմությունը մեր մեջ դրվել է Աստծո Հոգու կողմից, իմաստուն նպատակի համար, իսկ դա կյանքի և երջանկության հենց հիմնական աղբյուրն է, դա առաքինի և երկնային ողջ հասարակության ցեմենտն է, դա է գթության կամ սիրո էությունը ...

Գոյության մեջ չկա ավելի մաքուր և սուրբ սկզբունք, քան սերը, որը բոցկլտում է առաքինի տղամարդու սրտում իր կողակցի հանդեպ...

Փաստ է, որ Աստված ստեղծեց մարդուն արու և էգ, նա սերմանեց նրանց սրտում այդ սերը, որը նպաակ ունի խթանելու նրանց երջանկությունը և միությունը» (*Writings of Parley Parker Pratt,* 52–53):

Ֆիզիկական մտերմություն միայն ամուսնության մեջ

Երեց Բոյդ Ք. Փաքեր

Տես մեջբերումներ 141–44 էջերում:

Երեց Դալլին Հ. Օուքս

«Մեր ծննդաստեղծ զորությունների արտահայտումը հաճելի է Աստծո համար, բայց Նա պատվիրել է, որ դա պետք է սահմանափակվի ամուսնական հարաբերության մեջ» (in Conference Report, Oct. 1993, 99; կամ *Ensign,* Nov. 1993, 74):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Ամուսնական կապերից դուրս որևէ սեռական մտերմություն, ես ի նկատի ունեմ որևէ կանխամտածված շփում մեկ ուրիշի մարմնի անձնական մասերի հետ՝ հագուստով, թե առանց հագուստի, մեղք է և արգելվում է Աստծո կողմից» (in Conference Report, Oct. 1994, 51; կամ *Ensign,* Nov. 1994, 38):

Մտերմության նպատակները

Նախագահ Լորենզո Սնոու

«Մտածեք այն խոստումների մասին, որոնք տրվում են ձեզ գեղեցիկ և փառահեղ ծիսակատարության ժամանակ-տաճարում ամուսնական ուխտ կապելիս: Երբ երկու Վերջին Օրերի Սրբեր միավորվում են ամուսնությամբ, նրանց խոստումներ են տրվում իրենց ժառանգների վերաբերյալ, որը հասնում է հավերժությունից հավերժություն: Նրանց խոստացվում է, որ նրանք զորություն և իրավունք կունենան կառավարելու, վերահսկելու և փրկություն, վեհացում և փառք սպասավորելու իրենց ժառանգներին աշխարհներում առանց վերջի: Եվ այն ժառանգները, որ նրանք չունեն այստեղ, անկասկած հնարավորություն կտրվի ունենալու նրանց հետագայում: Էլ ի՞նչ կարող էր մարդը ցանկանալ: Տղամարդ և կին մյուս կյանքում, ունենալով սելեստիալ մարմիններ, զերծ տկարությունից և հիվանդությունից, փառավորված և աննկարագրելիորեն գեղեցիկ, կանգնած են իրենց հետնորդների մեջտեղում, նրանց կառավարելով և վերահսկելով, սպասավորելով կյանք, վեհացում և փառք աշխարհներում առանց վերջի» (*Teachings of Lorenzo Snow,* 138):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Ձեր սերը ծաղկի պես պետք է սնուցվի: Մեծ սեր և փոխկախվածություն կառաջանա ձեր միջև, քանի որ ձեր սերն աստվածային է: Այն խորն է, համապարփակ, բազմակողմանի: Դա աշխարհիկ այն մոտիկությունը չէ, որը սխալ ձևով անվանվում է սեր, և որը մեծամասամբ ֆիզիկական հրապուրանք է: Եթե ամուսնությունը միայն սրա վրա է հիմնված, շուտով կողմերը ձանձրանում են միմյանցից: Տեղի է ունենում բաժանում և ամուսնալուծություն, և մի նոր ավելի թարմ ֆիզիկական հրապուրանք է հայտնվում մեկ այլ ամուսնությամբ, որը իր հերթին կարող է տևել միայն այնքան, մինչև այն ևս կորցնի իր թարմությունը: Սերը, որի մասին խոսում է Տերը, միայն ֆիզիկական հրապուրանք չէ, այլ նաև հոգևոր հրապուրանք: Այն հավատք է, վստահություն և փոխըմբռնում: Այն լիարժեք գործընկերություն է: Դա ընդհանուր իդեալներով և չափանիշներով ընկերակցություն է: Դա անշահախնդրություն է և զոհաբերություն միմյանց համար: Դա մտքերի և գործերի ու առ Աստված ու Նրա ծրագիրը հավատքի մաքրություն է: Դա ծնող լինելն է մահկանացու կյանքում՝ միշտ նայելով դեպի աստվածությունը և ստեղծագործումը և հոգիների ծնող լինելը: Այն հսկայական է, համապարփակ և անսահման: Այսպիսի սերը երբեք չի ձանձրացնում կամ էլ թոռռմում: Այն հարատևում է անցնելով հիվանդությունների և վշտերի, բարգավաճման և զրկանքների, ձեռքբերումների և հիասթափությունների, ժամանակի և հավերժության միջով» (*Faith Precedes the Miracle,* 130–31):

Սխալ օգտագործվող ֆիզիկական մտերմություն

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Եկեք հրահանգենք երիտասարդներին, ովքեր գալիս են մեզ մոտ, առաջինը՝ երիտասարդ տղամարդկանց ողջ Եկեղեցում, որ իմանան՝ կինը պետք է լինի իր իսկ մարմնի թագուհին: Ամուսնական ուխտը չի տալիս իրավունք տղամարդուն նրան ստրկացնել, կամ բռնանալ նրա վրա կամ նրան օգտագործել պարզապես իր կրքի բավարարման համար: Ձեր ամուսնության արարողությունը չի տալիս ձեզ այդ իրավունքը» (in Conference Report, Apr. 1952, 86):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Եթե դա անբնական է, ուղղակի մի արեք դա: Ահա բոլորը և ողջ ընտանեկան կյանքը պետք է պահվի մաքուր, արժանի և շատ բարձր մակարդակի վրա: Կան որոշ մարդիկ, ովքեր ասում են, որ ննջարանի դռների ետևում տեղի է ունենում ամեն ինչ: Դա ճշմարիտ չէ և Տերը թողություն չէր տա դրան» (*Teachings of Spencer W. Kimball,* 312):

«Մենք հորդորում ենք Պետրոսի հետ, «... հեռու կացէք, մարմնավոր ցանկութիւններից, որ կռվում են հոգու դեմ»

(Ա Պետրոս Բ.11): Ոչ մի անպարկեշտ ցուցադրում կամ պոռնոգրաֆիա կամ այլ շեղումներ չպետք է պղծեն միտքն ու հոգին: Մարմինների ոչ մի փաղաքշանք, իր սեփականը կամ ուրիշներինը և ոչ մի սեռական հարաբերություն չպետք է լինի անձանց միջև, բացի ամուսնական պատշաճ սեռական հարաբերությունից: Սա կտրականապես արգելված է մեր Արարչի կողմից բոլոր տեղերում, բոլոր ժամանակներում, և մենք վերահաստատում ենք դա: Նույնիսկ ամուսնության մեջ կարող են լինել որոշ ծայրահեղություններ և աղավաղումներ: Ոչ մի չափով հակառակ պատճառաբանություններ չեն կարող բավարարել հուսախաբված Հորը երկնքում (in Conference Report, Apr. 1974, 8–9; կամ *Ensign,* May 1974, 7):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Զերծ մնացեք ամուսնու և կնոջ միջև քնքուշ, մտերմական հարաբերության մեջ որևէ բռնակալական կամ անարժան վարվելաձևից: Քանի որ ամուսնությունը կարգված է Աստծո կողմից, ինտիմ հարաբերությունը ամուսնու և կնոջ միջև բարի է և պատվավոր Աստծո աչքում: Նա պատվիրել է, որ նրանք լինեն մեկ մարմին, և որ նրանք շատանան և լցնեն աշխարհը (տես Մովսես 2.28, 3.24): Դուք պետք է սիրեք ձեր կնոջը, ինչպես Քրիստոսը սիրեց Եկեղեցին և տվեց իրեն հանուն նրա (տես Եփեսացիս Ե.25–31):

Քնքշանքն ու հարգանքը, ոչ թե եսասիրությունը, պետք է լինի առաջնորդող սկզբունքները ամուսնու և կնոջ միջև ինտիմ հարաբերությունների ընթացքում: Յուրքանչյուր կողմը պետք է լինի հոգատար և զգայուն մյուսի կարիքների և ցանկությունների հանդեպ: Ամուսնու և կնոջ միջև որևէ բռնություն, անպարկեշտ կամ անզուսպ վերաբերմունք դատապարտվում է Տիրոջ կողմից» (in Conference Report, Oct. 1994, 68; կամ *Ensign,* Nov. 1994, 51):

Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

«Չնայած սեռական հարաբերությունը կարող է կարևոր և բավարար մասը լինել ամուսնական կյանքի, մենք պետք է հիշենք, որ կյանքը նախագծված չէ հենց սեռական հարաբերության համար: Նույնիսկ ամուսնությունը որոշակի պատշաճ ծայրահեղություններ չի ընդունում սեռական բավարարվածության համար: Եփեսացի սրբերին Պողոսն աղաչեց ամուսնության մեջ պատշաճավորության համար. «Այսպէս պէտք է մարդիկ սիրեն իրանց կանանցը, ինչպէս իրանց մարմինները. ով որ իր կնոջը սիրում է, իրան է սիրում» (Եփես. Ե.28): Եվ հավանաբար Տիրոջ դատապարտությունը ներառում է սեռական գաղտնի մեղքերը ամուսնության մեջ, երբ նա ասել է. «... Իսկ, ովքեր մաքուր չեն, բայց ասել են, որ իրենք մաքուր էին, պիտի կործանվեն, ասում է Տեր Աստվածը» (ՎԱՈՒ 132.52) (*Miracle of Forgiveness,* 73):

ԿՅԱՆՔԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Երեց Բոյդ Կ. Փաքեր

Տասներկու Առաքյալների Քվորումից

Հոգու բաները, 105–17

Մենք կսկսենք հենց սկզբից: «Աստվածներն իջան ներքև, որ կազմավորեն մարդուն իրենց իսկ պատկերով, որ Աստվածների պատկերով ձևավորեն նրան, արու և էգ ձևավորեն նրանց: Եվ Աստվածներն ասացին. Մենք կօրհնենք նրանց: Եվ Աստվածներն ասացին. Մենք այնպես կանենք, որ նրանք լինեն պտղաբեր և բազմանան, և լցնեն երկիրը, և տիրեն նրան» (Աբրահամ 4. 27–28):

Եվ այսպես, մարդկային կյանքի շրջանը սկսվեց այս երկրի վրա, երբ «Ադամը գիտեցավ իր կնոջը, և նա որդիներ և դուստրեր բերեց նրա համար, և նրանք սկսեցին բազմանալ և լցնել երկիրը: Եվ ... Ադամի որդիներն ու դուստրերն սկսեցին երկրի վրա բաժանվել երկու-երկու, և հողը մշակել, և հոտեր պահել, և նրանք նույնպես ծնեցին որդիներ և դուստրեր» (Մովսես 5.2–3):

Պատվիրանը երբեք չեղյալ չի համարվել

Շատանալու և երկիրը լցնելու պատվիրանը երբեք չեղյալ չի հայտարարվել: Այն կարևոր է փրկագնման ծրագրի համար և մարդկային երջանկության աղբյուրն է: Այս զորության արդար օգտագործման միջոցով, ավելի քան որևէ այլ միջոցով, մենք կարող ենք մոտենալ մեր Երկնային Հորը և ճաշակել ուրախության լիություն, նույնիսկ՝ աստվածություն: Ծննդաստեղծ զորությունը պատահական մաս չէ երջանկության ծրագրում, այն բանալին է, հենց բանալին:

Կյանք ստեղծելու զորությունը ի հայտ է գալիս արական և իգական մարմիններում, երբ յուրաքանչյուրն աճում է հասունանալով, զորացնելով տղամարդուն հայր դառնալ, իսկ կնոջը՝ մայր:

Մնայուն մարդկության մեջ

Մարդկության մեջ զույգավորվելու ցանկությունը մնայուն է և շատ ուժեղ: Մահկանացու կյանում մեր երջանկությունը, մեր ուրախությունն ու վեհացումը կախված են այն բանից, թե մենք ինչպես ենք արձագանքում այս մշտական, հարկադրական ֆիզիկական ցանկություններին:

Երբ ծննդաստեղծ զորությունը հասունանում է վաղ տղամարդկության և կանացիության շրջանում, բնական ձևով առաջանում են անձնական շատ զգացմունքներ, որոնք

նման չեն որևէ այլ ֆիզիկական փորձառության: Անիմաստ չէ, որ այն գործընթացը, որի միջոցով կյանք է ստեղծվում, պետք է ուղեկցվի այդպիսի խորության և հրապուրանքի զգացմունքներով, որ դրանք մղեն անձնավորությանը ձգտել դրանց կրկնությանը:

Սովորաբար, զուգավորումը սկսվում է ռոմանտիկայով: Չնայած սովորույթները կարող են տարբեր լինել, ռոմանտիկան ծաղկում է հայտնի բոլոր հուզական և սպասողական և երբեմն էլ մերժողական զգացմունքներով: Կան լուսնի լույսը և վարդեր, սիրային նամակներ, սիրային երգեր, բանաստեղծություններ, ձեռք բռնել և սիրո արժանավոր այլ արտահայտություններ երիտասարդ տղամարդու և երիտասարդ կնոջ միջև: Զույգի շուրջ աշխարհն անհետանում է, և նրանք ունենում են ուրախության զգացումներ: Յուրաքանչյուր սիրահարված զույգ համոզված է, որ ոչ մի զույգ Ադամից և Եվայից սկսած չեն զգացել ճիշտ նույն ձևով, ինչ իրենք են զգացել:

Կան ռոմանտիկայի այլ ձևեր, որոնք թվում են խորը զգայական, անչափ խաղաղ, նույնիսկ՝ ճանձրալի: Այնուամենայնիվ, դրանք մարմնավորում են քնքշանքի և ռոմանտիկ սիրո մի խորություն, որը չափազանց լուրջ մարդիկ, գլխակորույս սիրահարվածները կամ իրականությունից անտեղյակները կզգան միայն այն ժամանակ, երբ հասունանան:

Հասուն սեր

Եվ եթե դուք կարծում եք, որ երիտասարդ ռոմանտիկ սիրո հրաշալի ցանկությունները սիրո բարձրագույն ձևերն են, որոնք բխում են կյանքի աղբյուրից, դուք դեռ չեք ապրել տեսնելու երկարատև ամուսնական սիրո նվիրվածությունն ու հանգստավետությունը: Ամուսնական զույգերը փորձվում են գայթակղություններով, թյուրըմբռնումներով, բաժանումով, ֆինանսական խնդիրներով, ընտանեկան ճգնաժամերերով, հիվանդությամբ և ողջ ընթացքում սերը ուժեղանում է, հասուն սերը վայելում է մի երանություն, որը նույնիսկ աներևակայելի է նորապսակների համար:

Ճշմարիտ սերը պահանջում է փոխադարձ հարգանք, որը և զույգը պահպանում է մինչև այդ սիրո բաշխումը ամուսնությունից հետո, որը բացում է այդ սրբազան զորությունները կյանքի այդ աղբյուրում: Դա նշանակում է նախքան ամուսնությունը խուսափել իրավիճակներից, որոնց ժամանակ ֆիզիկական ցանկությունը կարող է վերցնել վերահսկողությունը: Սիրատածումը հավատարմությունը, բարոյական ուժը և արժանավորությունը չափելու ժամանակահատված է: «Եթե սիրում ես ինձ, դու ինձ թույլ կտաս» առաջարկը ցույց է տալիս բնավորության մեծ թերություն: Դրան արժե պատասխանել. «Եթե դու իսկապես սիրեիր ինձ, դու երբեք չէիր խնդրի օրինազանցել: Եթե դու հասկանայիր ավետարանը, դու չէիր կարող ասել դա»:

Մաքուր սերը ենթադրում է, որ միայն հավերժական հավատարմության երդումից հետո՝ պաշտոնական և օրինական մի ծիսակատարություն, և սովորաբար տաճարում կնքման արարողությունից հետո են այդ ծննդաստեղծ ուժերն արձակվում սիրո լիակատար արտահայտման համար: Դրանք պետք է կիսվեն միայն և միմիայն այն մարդու հետ, ով մեր ամուսնական զույգն է:

Զուգավորման պրոցեսին մասնակցելը ներկայացնում է մի փորձառություն, որի նմանը չկա կյանքում: Երբ արժանավորապես ենմասնակցում դրան, այն միավորում է ամենաբացառիկ և վեհացնող ֆիզիկական, զգացմունքային և հոգևոր ապրումները, որոնք կապված են *սեր* բառի հետ: Այդ զգացմունքները և կյանքի ընթացքում միմյանց կարիքը կապում են ամուսնուն և կնոջը միմյանց ամուսնության մեջ, որտեղ չափահաս տղամարդու արական բոլոր հատկանիշները լրացվում են կանանց սեռի կանացի անգին արժանիքների հետ:

Կյանքի այդ մասը չունի հավասար, ոչ մի նմանակ ողջ մարդկային փորձառության մեջ: Այն տեղի կունենա, երբ ուխտերը կապվեն և պահպանվեն, հարատևեն հավերժ. «Քանզի նրանում են կարգված սուրբ քահանայության բանալիները, որ դուք կարողանաք պատվի ու փառքի արժանանալ» (ՎԱՈՒ 124.34), «փառք, որը կլինի սերունդների լիությունը և շարունակությունը հավիտյանս հավիտենից» (ՎԱՈՒ 132.19):

Բայց ռոմանտիկ սերը թերավարտ է, դա նախերգանքն է: Սերը սնուցվում է երեխաների լույս աշխարհ գալով, ովքեր հայտնվում են ամուսնական զույգին վստահված կյանքի այդ աղբյուրից: Հղիացումը տեղի է ունենում ամուսնու և կնոջ միջև ամուսնական գրկախառնության ժամանակ: Սկսում է ձևավորվել ապշեցուցիչ բարդության նմանատիպ մի փոքրիկ մարմին: Երեխան լույս աշխարհ է գալիս ծննդյան հրաշքով, ստեղծված իր երկրային հոր և մոր պատկերով, տեսնելու, լսելու, զգալու, և ֆիզիկական զգայարանների միջոցով ընկալելու ունակությամբ: Մահկանացու մարմնի ներսում ոգի է, հոգևոր բաներ զգալու և ընկալելու ունակությամբ: Երեխայի մահկանացու մարմնի ներսում իր իսկ պատկերով հետնորդ ստեղծելու զորության ներուժ կա:

«Ոգին ու մարմինը՝ մարդու հոգին են» (ՎԱՈՒ 88.15), ուստի կան հոգևոր և ֆիզիկական օրենքներ, որոնց պետք է հնազանդվել, եթե ուզում ենք երջանիկ լինել:

Բարոյական և բնական օրենքներ

Կան հավերժական օրենքներ, ներառյալ կյանք տալու այս զորության հետ կապված օրենքները, «երկնքում անդարձորեն հրամանագրված, այս աշխարհի հիմնադրումից առաջ, որի վրա հիմնված են բոլոր օրհնությունները» (ՎԱՈՒ 130.20): Կան հոգևոր օրենքներ, որոնք սահմանում

են բարոյական չափանիշներ մարդկության համար: (տես ՋՍԹ Հռովմ. Է.14—15, 2 Նեփի 2.5, ՎԱՈՒ 29.34, ՎԱՈՒ 134.6): Կան ուխտեր, որոնք կապում են, կնքում, պահպանում և տալիս հավերժական օրհնությունների խոստում: Կան ֆիզիկական կամ բնական օրենքներ, որոնք կառավարում են, կնքում, պահպանում և տալիս հավերժական օրհնությունների խոստում:Կան ֆիզիկական կամ բնական օրենքներ, որոնք կառավարում են զուգընկերոջ հանդեպ հրապուրանքը, հետնորդների հանդեպ սերը և նրանց պաշտպանելու բնազդը:

Մի սպանիր

Ամեն անգամ, երբ ֆիզիկական պայմանները բավարար են, հղիացումը տեղի կունենա, լինի դա ամուսնության մեջ, թե ամուսնությունից դուրս: Երբ կյանք է հղացվել, այդ կյանքը կործանել նույնիսկ նախքան ծնվելը, մեծ օրինազանցություն է, բացի նրանից, երբ հղիացումը տեղի է ունենում բռնաբարության հետևանքով, մոր կյանքը վտանգված է կամ մասնագետների հավաստմամբ հույս չկա, որ պտուղը լույս աշխարհ կգա: Մենք չգիտենք բոլորն այն մասին, թե երբ է ոգին մտնում մարմին, բայց մենք գիտենք, որ կյանքը, ցանկացած ձևով շատ թանկ է: Չնայած մեզ տրված է կյանք առաջացնելու զորություն և պատվիրվել է այդպես անել, մենք իրավունք չունենք կործանելու այն. «Քանզի Տերը...արգելել է դա բոլոր բաներում, մարդու սկզբից ի վեր» (Եթեր 8.19): Եվ Սինայում տրված պատվիրանը վերականգնվել է այս տնտեսությունում. «Մի սպանիր», (Ելից Ի.13, տես նաև 2 Նեփի 9.35) «ոչ էլ նման որևէ բան գործիր» (ՎԱՈՒ 59.6):

Վերահսկվել

Հիսուս Քրիստոսի ավետարանի հավերժական օրենքները չեն խանգարում մեզ արձագանքել բնածին, աստվածատուր զուգավորման բնազդներին: Ալման հորդորեց իր որդի Սիբլոնին. «Տես որ դու սանձես բոլոր քո կրքերը, որ դու լցվես սիրով» (Ալմա 38.12): Սանձն օգտագործվում է առաջնորդելու, ուղղություն տալու համար: Մեր կրքերը պետք է վերահսկվեն, բայց չվերահսկվեն ոչնչացման միջոցով, ինչպես միջատների համաճարակի ժամանակ, չվերահսկվեն արմատախիլ անելով, ինչպես հիվանդության ժամանակ: Այն պետք է վերահսկվի, ինչպես էլեկտրականությունն է վերահսկվում, ուժ և կյանք ստեղծելու համար: Երբ ծննդաստեղծ ուժը օրինական կարգով է օգտագործվում, այն կօրհնի և կսրբագործի (see Joseph F. Smith, *Gospel Doctrine* [Salt Lake City: Deseret Book Co., 1977], p. 309):

Ավետարանը ուսուցանում է մեզ, թե այս սրբազան զորությունները երբ և ում հետ կարելի է ապահով օգտագործել: Ինչպես բոլոր բաներում սուրբ գրությունները չեն պարունակում էջ առ էջ մանրամասն պատվիրաններ, որոնք արծարծում են կյանքի օրենքի յուրաքանչյուր հնարավոր կիրառում: Դրանք ավելի շուտ խոսում են ընդհանուր արտահայտություններով, թողնելով մեզ ազատորեն կիրառել ավետարանի սկզբունքները ծանոթանալով կյանքի անսահման բազմազանության հետ:

Մենք ազատ ենք անտեսելու սուրբ գրությունների խորհուրդներն ու պատվիրանները, բայց երբ հայտնությունները խոսում են այնպիսի բացահայտ արտահայտություններով, ինչպես օրինակ «դուք չպետք է», մենք լավ կանենք ուշադրություն դարձնենք: Երբ մենք հնազանդվում ենք, մենք կարող ենք վայելել այդ կյանք տվող զորությունները ամուսնության ուխտի մեջ, և մեր կյանքի աղբյուրներից կհայտնվեն մեր երեխաները, մեր ընտանիքը: Սերը ամուսնու և կնոջ միջև կարող է լինել հաստատուն և կայացում ու բավարարվածություն բերել նրանց կյանքի բոլոր օրերում:

Աստծո զավակները

Չկա ավելի մեծ իդեալ, որը երբևէ հայտնի է դարձվել, քան այն գերագույն ճշմարտությունը, որ մենք Աստծո զավակներն ենք, և որ մեր արարման արժանիքով մենք տարբերվում ենք բոլոր այլ կենդանի արարածներից (տես Մովսես 6.8–10, 22, 59): «Ամեն մարմին,- ուսուցանում են սուրբ գրությունները,- միեւնոյն մարմինը չէ. ուրիշ է մարդկանց մարմինը, ուրիշ է անասունների մարմինը» (Ա Կորնթացիս ԺԵ.39):

Տղամարդիկ և կանայք կյանք ստեղծելու առանձնահատուկ պարտականություններ ունեն: Սուրբ գրությունները պատմում են մեզ, որ «մարդիկ բավականին ուսուցանված են, որ բարին տարբերեն չարից: Եվ օրենքը տրված է մարդկանց» (2 Նեփի 2.5): «Մենք բանական էակներ ենք և մենք պատասխանատու ենք մեր գործերի համար, նույնիսկ մեր մտքերի» (տես Ալմա 12.14):

Արարածները կենդանիների թագավորությունում մի որոշ ժամանակ հավաքվում են միասին զուգավորվելու ստիպողական բնազդով: Երբ հղիացումը տեղի է ունենում, նրանք առանձնանում են, սովորաբար մորը մենակ թողնելով՝ պաշտպանելու և ապահովելու իր ձագերի համար, քանզի դա է կենդանիների ապրելակերպը: Բայց դա մարդկության ապրելակերպը չէ: Կենդանիների մեջ ընտանեկան կյանքը հազվադեպ է և նույնիսկ այդ դեպքում ընդհանրապես ժամանակավոր է: Բացի հազվադեպ օրինակներից, օրինակ թռչունների մեջ, ծնող կենդանիների միջև կապը վաղանցիկ է, արուի և ձագերի միջև կապ գրեթե գոյություն չունի:

Կենդանիները չեն կարող պատասխանատու լինել բարոյականության չափանիշների համար, որով դատվում է մարդկությունը: Նրանք կառավարվում են բնության ֆիզիկական

օրենքներով: Կենդանիները ընդհանրապես անխտիր արձագանքում են իրենց զուգավորման բնազդներին: Այնուամենայնիվ, նրանց զուգավորման ծեսերը հետևում են սահմանված ձևերի և խիստ սահմանափակումների: Օրինակ, կենդանիները զույգ չեն կազմում իրենց սեփական սեռի հետ՝ բավարարելու իրենց զուգավորման բնազդները: Ոչ էլ այդ զուգավորման բնազդները արտահայտվում են իրենց իսկ ձագերի հանդեպ մանկապղծությամբ:

Աստծո զավակները կարող են կամավոր հանձնվել իրենց մարմնական էությանը և առանց թվացող խղճի խայթի, խախտել բարոյականության օրենքները և այլասերվել նույնիսկ գազաններից էլ ցած իջնելով:

Փորձիչը

Գայթակղությունները միշտ առկա են մահկանացու կյանքում: Հակառակորդը նախանձում է բոլոր նրանց, ովքեր կյանք ստեղծելու զորություն ունեն: Նա չի կարող կյանքստեղծել, նա անկարող է:Նա և նրանք, ովքեր հետևեցին նրան, դուրս գցվեցին երկնքից և զրկվեցին մահկանացու մարմին ստանալու իրավունքից: Նա կամենում է, հնարավորության դեպքում տիրանալ *ձեր* մարմնին, ուղղության տալ, թե ինչպես օգտագործեք այն: Նրա հրեշտակները խնդրեցին, որ բնակվեն խոզերի մարմիններում (տես Մատթեոս Ը.31): Նա գիտի ծննդաստեղծ զորության մեր գերագույն արժեքը և նախանձով ցանկանում է կառավարել նրանց, ովքեր ունեն այն: Եվ հայտնություններն ասում են մեզ՝ «նա ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը» (2 Նեփի 2.27): Նա կգայթակղի ձեզ, եթե կարողանա՝ այլասերելու, փչացնելու, հնարավորության դեպքում կործանելու այս պարգևը, որի միջոցով արժանի լինելու դեպքում կարող ենք ունենալ հավերժական աճ (տես ՎԱՈՒ 132.28–31):

Մոլագարություն

Հասարակության մեջ արժեքների բուռն և սրընթաց այլասերմանը այժմ հատկանշական է մի մտահոգություն, նույնիսկ մի մոլագարություն ծննդաստեղծ ակտի վերաբերյալ: Ինքնազսպվածությունը նախքան ամուսնությունը և հավատարմությունը ամուսնության ընթացքում բացեիբաց ծաղրի է ենթարկվում որպես հնաոճ մի բան, ամուսնությունն ու ծնող լինելը ծիծաղի առարկա է որպես դժվարակիր և ոչ անհրաժեշտ: Համեստությունը՝ արժանիք, որը առկա է բարեկիրթ անձնավորության կամ հասարկության մեջ, իսպառ վերացվել է:

Բարոյականությունը այլևս բնավորության չափանիշ չէ մեր երիտասարդության համար, որպես ակնառու ընդօրինակման մոդել են հանդիսանում՝ քաղաքագետները, մանրամարզիկները, զվարճացնողները: Գնալով ավել քիչ բացառություններով, ողջ մեր տեսածի և կարդացածի կամ լսածի կենտրոնական թեման զուգավորման ակտն է: Ամեն ձևի գրաքննությունը դուրս է մղվում բեմից՝ որպես անհատի ազատության դեմ ոտնձգություն: Այն, ինչը պետք է բացարձակապես գաղտնի լինի, կողոպտվում է և ցուցադրվում կենտրոնական բեմում: Կուլիսների ստվերներում առկա են հակվածությունը, պոռնոգրաֆիան, այլասերվածությունը, անհավատարմությունը, վիժեցումը, իսկ այդ բոլորից ամենայլանդակը՝ արյունապղծությունն ու մանկապղծությունն է: Եվ այդ ամենը գնալով աճում է: Այժմ դրանք ուղեկցվում են համաճարակային հիվանդությամբ, որը աստվածաշնչյան ժանտախտի նման սպառնում է մարդկության ցեղերին: Իրականում՝ ողջ մարդկությանը:

Փիլիսոփայությունները, որոնք այժմ բոլորը միաբանվում են, բոլորը մի ընդհանուր բան ունեն, կամ զրպարտությամբ, կամ էլ հռչակագրով նրանք ժխտում են Աստծուն որպես մեր արարիչ, որպես մեր Հայր, որպես մեր օրենսգետ:

Չար գաղափարը

Այն գիտելիքը, որ մենք Աստծո զավակներն ենք մաքրող և նույնիսկ վեհացնող ճշմարտություն է: Մյուս կողմից, ոչ մի այլ գաղափար այնքան կործանարար չի եղել երջանկության համար, ոչ մի փիլիսոփայություն չի պատճառել այնքան վիշտ, և ոչ մի գաղափար այդքան չի նպաստել ընտանիքի քայքայմանը, որքան այն գաղափարը, որ մենք Աստծո զավակը չենք, այլ ընդամենը զարգացած կենդանիներ: Այդ գաղափարից է բխում ոչ այնքան խորաթափանց ընկալումը, որ քանի որ մենք ստիպված ենք ենթարկվել ամեն մի մարմնական մղման, մենք ենթակա ենք ոչ թե բարոյական, այլ ֆիզիկական օրենքներին:

Կենդանուց-մարդ տեսությունը բավականաչափ ճանապարհ է անցել, որպեսզի հայտարարվի ճշմարիտ՝ համընդհանուր հավանության հիմքի վրա: Քանի որ կարծես առաջարկում է տրամաբանական բացատրություններ *ողջ* բաների վերաբերյալ, այն համատարած ուսուցանվում է և համընդհանուր ընդունելություն գտնում, որպես կյանքի գաղտնիքի լուծում:

Ես գիտեմ, որ երկու տեսակետներ կան այդ նյութի վերաբերյալ: Բայց մեկ բան է այս տեսությունը չափել լոկ բանական կամ գիտական չափանիշներով, լիովին այլ բան՝ չափել այն բարոյական, հոգևոր կամ վարդապետական չափանիշներով:

Երբ տեսությունը, որ մարդը կենդանուց է առաջացել, սերմանվում է երիտասարդների մտքերում, այն պետք է ուղեկցվի զգուշավոր հրահանգումով՝ մեկուսացնելով այն մտքի դաշտում, մինչև որ հավատքը լավ արմատավորվի: Հակառակ դեպքում կասկածի սերմերը կարող են ծլարձակել և խեղդել հավատքի տունկը, և բերքը կլինի դառը պտուղ, իսկ տվողը ծառայած կլինի սխալ տիրոջ:

Ընտրելու ազատություն

Լեքին սովորեցրել է, որ մարդիկ ազատ են և պետք է լինեն ազատ, ազատ՝ «գործելու ինքնուրույն և չներգործվելու, բացի դա լինի օրենքի պատժով այն մեծ և վերջին օրը» (2 Նեփի 2.26):

Հասարակությունն այժմ ազատում է իրեն երիտասարդների մեջ սեռական անբարոյականության բարձր անկման որևէ պատասխանատվությունից, եթե հաշվի չառնենք դպրոցում երեխաներին ուսուցանելը մարդկային վերարտադրության ֆիզիկական պրոցեսը, որպեսզի կանխարգելեն հղիությունը կամ հիվանդությունը և ապահովելով դեռահասներին միջոցներով, որոնք ըստ երևոյթին պիտի պաշտպանեն նրանց երկուսից էլ: Երբ որևէ ջանք է գործադրվում այդ դասընթացներում ընդգրկելու համաշխարհային հիմնական արժեքներ, ոչ թե հենց Եկեղեցու, այլ քաղաքակրթության, հենց հասարակության արժեքները, բողոք է բարձրացվում. «Դուք մեզ կրոն եք պարտադրում, սպառնալով մեր ազատությանը»:

Հետաքրքիր է, թե ինչպես մեկ արժանիքը, երբ դրան տրվում է չափազանցված կամ ֆանատիկ շեշտադրում, կարող է օգտագործվել ջախջախելու մյուսին: Որքան խելացի է խաբեությունը, երբ ազատությունը, որը արժանիք է, օգնության է կանչվում արդարացնելու չարիքը:

Փաստաբանները ողջ բարոյական լարվածությունը վերացնելու համար ազատում են իրենց պատասխանատվությունից ասելով. «Ես մտադիր չեմ ինքս անել այս բաներից որևէ մեկը, բայց կարծում եմ յուրաքանչյուր ոք պետք է ազատ լինի ընտրելու, թե ինչ են իրենք կամենում անել առանց որևէ բարոյական կամ իրավական միջամտության»: Այդ նույն տրամաբանությամբ, մեկը կարող է վիճել, որ բոլոր տրանսպորտային նշանները և սահմանները, որոնք դրված են պահպանելու անփույթներին մահվան զոհ դառնալուց, պետք է վերացվեն այն տեսության հիման վրա, որ յուրաքանչյուր անձնավորություն ունի բարոյական իրավունք ընտրելու, թե որքան մոտիկ նա կքայլի եզրաշերտին:

Կան ավելի բարձր օրենքներ

Բոլոր նրանց, ում ուսուցանվել է փրկության ծրագիրը, հասկանում են, որ ազատությունը բոլոր բարոյական սահմանափակումներից պաշտպանելը նշանակում է քարոզել այն, ինչ հակառակ է Աստծո կամքին: «Ազատ կամք» արտահայտությունը չի հայտնվում սուրբ գրություններում: Միակ կամքը, որի մասին այնտեղ խոսվում է, *բարոյական* կամքն է,- «որը» Տերն ասել է, «տվել եմ նրան, որպեսզի դատաստանի օրն ամեն մարդ պատասխան տա իր իսկ մեղքերի համար» (ՎԱՈՒ 101.78):

Անցյալ քաղաքակրթությունները, օրինակ Սոդոմն ու Գոմորը կործանվեցին՝ չհնազանդվելով բարոյականության օրենքներին. «Քանզի Տիրոջ Հոգին միշտ չի ճգնի մարդու հետ: Եվ երբ Հոգին դադարում է մարդու հետ ճգնելը, այն ժամանակ գալիս է սրընթաց կործանում» (2 Նեփի 26.11, տես նաև Ծննդոց Զ.3, Եթեր 2.15, ՎԱՈՒ 1.33, Մովսես 8.17):

Եթե մենք աղտոտում ենք կյանքի մեր աղբյուրները կամ առաջնորդում ուրիշներին օրինազանցել այդ ձևով, կլինեն տույժեր շատ ավելի «սուր» և «ծանր տանելու» (տես ՎԱՈՒ 19.15), քան բոլոր ֆիզիկական հաճույքները կարող են երբևէ արժանի լինել: Ալման ասաց իր որդի Կորիանթոնին. «Չգիտե՞ս, որդիս, որ այս բաները պղծություն են Տիրոջ աչքում, այո, ամենապիղծը բոլոր մեղքերից, բացի դա լինի անմեղ արյուն թափելը կամ Սուրբ Հոգին ուրանալը» (Ալմա 39.5): Մենք չենք խուսափում հետևանքներից, երբ մենք օրինազանցում ենք:

> ***Այն գիտելիքը, որ մենք Աստծո զավակներն ենք, մաքրող և նույնիսկ վեհացնող ճշմարտություն է:***

Ծննդաստեղծ ուժերի օրինական միակ օգտագործումը ամուսնու և կնոջ միջև է, որոնք ամուսնացել են պաշտոնապես և օրենքով: Որևէ այլ բան քան սա, խախտում է Աստծո պատվիրանները: Եվ ինչպես Ալման է ասել. «Ես ասում եմ ձեզ, եթե դուք խոսեք սրա դեմ, դա նշանանակություն չունի, քանզի Աստծո խոսքը պետք է իրագործվի» (Ալմա 5.58):

Դուք, որ ամուսնացած եք, կապրեք ծնող լինելու ուրախությունը և կզգաք պատասխանատվությունը, որը գալիս է ընտանեկան կյանքի հետ: Միշտ ձեր մտքում պահեք և դարձրեք ձեր կյանքի կենտրոնական մասը ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ մեծացնելը: Տվեք այդ թանկարժեք հոգիներին այն լավագույնը, որ դուք սովորում եք կյանքից: Եվ ընդունեք այս նախազգուշացումը: Ամուսնացած զույգը կարող է գայթակղվել ներմուծելով այնպիսի բաներ իրենց հարաբերությունում, որոնք անարժան են: Ինչպես սուրբ գրություններն են զգուշացնում՝ «քնական գործածությունը մի փոխեք անբնականի հետ» (Հռովմ. Ա.26): Հակառակ դեպքում փորձիչը սեպ կխրի ձեր միջև: Եթե ինչ որ անարժան բան է մտել ձեր հարաբերության մեջ, եղեք իմաստուն և այլևս երբևք մի արեք դա:

Բացառություններ

Երբ մենք խոսում ենք ամուսնության, ընտանեկան կյանքի մասին, անխուսափելիորեն մեր միտքն է գալիս հետևյալ հարցը. «Իսկ ի՞նչ կասեք բացառությունների մասին: Միշտ էլ լինում են բացառություններ»: Ոմանք ծնվում են սահմանափակումներով և չեն կարող երեխաներ ունենալ: Որոշ անմեղ անձանց ամուսնությունը խորտակվել է իրենց կողակիցների անհավատարմության պատճառով: Մյուսները չեն ամուսնանում և ապրում են արժանավոր կյանքով որպես միայնակ ամուրի, մինչդեռ քմահաճներն ու ամբարիշտները թվում է վայելում են այդ ամենը:

Այժմ ես առաջարկում եմ այս սփոփանքը՝ Աստված մեր Հայրն է: Ողջ սերն ու մեծահոգությունը, որը դրսևորվում է կատարյալ երկրային հոր մեջ, մահկանացու մտքի մտածելու ունակությունից վեր ուժեղացված Նրա մեջ է, որը մեր Հայրն է և մեր Աստվածը: Նրա դատաստաններն արդար են, Նրա ողորմությունն անսահման է, իսկ Նրա փոխհատուցելու զորությունը վեր է որևէ երկրային համեմատությունից:

Հիշեք, որ մահկանացու կյանքը մի կարճ պահ է, քանզի մենք ապրելու ենք հավերժ: Կլինի շատ, ես գրեթե *ժամանակ* բառն էի օգտագործելու, բայց ժամանակ բառը այստեղ չի կարող օգտագործվել, կլինի լայն հնարավորություն բոլոր անարդարությունները, բոլոր անօրինությունները ճիշտ դարձնելու համար, բոլոր միայնակությունն ու զրկանքները կփոխհատուցվեն և ողջ արժանավորությունը կպարգևատրվի, երբ մենք պահենք հավատքը: «Եթե միայն այս կեանքումն ունինք յոյս Քրիստոսի վերայ, ամեն մարդկանցից աւելի ողորմելի ենք» (Ա Կորնթացիս ԺԵ.19): Ամեն ինչ չի վերջանում մահկանացու մահով, այն ուղղակի սկսվում է:

Ապաշխարություն

Ես արդեն նախազգուշացրել եմ, որ հակառակորդի սարսափելի ուժերը կօգտագործվեն՝ գայթակղելու ողջ մարդկությանը մեղսագործորեն օգտագործելու ծննդաստեղծ սրբազան զորությունը: Անձնատուր մի եղեք, օրինազանցության յուրաքանչյուր պարտքի համար պետք է վճարվի «Մինչեւ որ վերջին նաքարակիտը չվճարես» (Մատթեոս Ե.26): Արդարադատության օրենքը պահանջում է այն, և «...քո տառապանքները [կ]լինեն դառը,- որքան դառը, դու չգիտես, որքան սուր, դու չգիտես, այո, որքան ծանր տանելու, դու չգիտես» (ՎԵՈՒ 19.15):

Մարդկային հոգիների համար համաշխարհային ճակատամարտում, հակառակորդը վերցնում է վիթխարի թվով գերիներ: Շատերը չիմանալով փախուստի ուղին հարկադրվում են ծառայելու նրան: Յուրաքանչյուր հոգի, որը բանտարկված է մեղքի և հանցանքի նրա համակենտրոնացման ճամբարում, ունի դռան մի բանալի: Բանալին կոչվում է՝ Ապաշխարություն: Հակառակորդը չի կարող պահել նրանց, եթե նրանք իմանան, թե ինչպես օգտագործեն այն: Ապաշխարության և ներման զույգ սկզբունքներն ուժով գերազանցում են փորձչի սարսափելի ուժին:

Աշխարհը լինելով այնպիսին, ինչպիսին որ է, եթե արդեն սխալ եք թույլ տվել, այն անշուշտ կարող է հասկացվել: Դրան չի կարող թողություն տրվել ըստ օրենքի, բայց այն կարելի է հասկանալ: Դուք պետք է դադարեք վարվել այդպես, դա անբարոյական է: Դուք պետք է կանգ առնեք այժմ:

Ոչ մի տեղ Աստծո մեծահոգությունը, բարությունն ու ողորմածությունը չի դրսևորվում այնպիսի ուժգնությամբ, ինչպես ապաշխարության ժամանակ: Հասկանո՞ւմ եք արդյոք Աստծո Որդու, մեր Փրկչի, մեր Քավիչի կատարած քավության լիակատար մաքրագործման ուժը, որն ասել է. «Ես Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն» (ՎԵՈՒ 19.16): Ես չգիտեմ բարոյական օրենքի օրինազանցման հետ կապված որևէ մեղք, որը չկարողանա ներվել, ի նկատի ունենալով իհարկե լրիվ և լիակատար ապաշխարությունը: Ես չեմ բացառում վիժեցումը:

Բանաձևը ձևակերպված է երեսունհինգ բառերով. «Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս չեմ հիշում դրանք: Այս բանով դուք կարող եք իմանալ, թե արդյո՞ք մարդն ապաշխարում է իր մեղքերից,- ահա նա կխոստովանի և կթողնի դրանք» (ՎԵՈՒ 58.42–43): Ես չգիտեմ ավելի գեղեցիկ խոսքեր բոլոր հայտնություններում, քան սրանք. «Նա ներվում է, և ես Տերս չեմ հիշում դրանք»:

Խոստովանություն եպիսկոպոսին

Ապաշխարության բանաձևը պահանջում է, որ մենք խոստովանենք: Մեր առաջին խոստովանությունը Տիրոջն է ուղղված աղոթքով: Երբ մեր մեղքերը ծանր չեն, և եթե դրանք անձնական են, դա կարող է լինել այն ամենը, ինչ պահանջվում է խոստովանության ձևով:

Եթե մեր օրինազանցությունը ներառում է երկու սեռերից որևէ մեկի ծննդաստեղծ ունակությունների հետ առնչվելը, ապա բացի աղոթքից անհրաժեշտ է խոստովանություն: Իր քահանայությունից Տերը նշանակել է եպիսկոպոսին լինելու ընդհանուր դատավոր: Եթե ձեր օրինազանցությունը լուրջ է, և ձեր խիղճը ձեզ կասի, թե արդյոք դա այդպես է, գտեք եպիսկոպոսին:

Եկեղեցում ներում շնորհելիս եպիսկոպոսը ներկայացնում է Տիրոջը: Երբեմն նա պետք է տա դառը դեղ: Ալման ասաց Կորիանթոնին. «Արդ, ապաշխարությունը չէր կարող գալ մարդկանց, եթե չլիներ մի պատիժ» (Ալմա 42.16): Ես չէի կամենա ապրել մի աշխարհում, որտեղ չկա ապաշխարություն, և եթե պատժի պայմանով է, ես պատրաստակամորեն կընդունեմ այն: Կա ամենուրեք մի գաղափար, որ մարդ կարող է փոստային բացիկով աղոթք ուղարկել և ետ ստանալ լիարժեք ներում և միանգամից պատրաստ լինել միսիայի գնալ կամ ամուսնանալ տաճարում: Այդպես չէ: Պետք է վճարումներ կատարել: Եթե եպիսկոպոսն առաջարկում է միայն սփոփանք և մոլորեցնող բարությամբ որոնում հանգստացնել ձեզ ապաշխարության հետ կապված ցավոտ, բայց բժշկող գործընթացում, նա ձեզ լավ ծառայություն չի մատուցում:.

Ներում Տիրոջից վաստակում են անձնական մեծ ջանքերի շնորհիվ: Խիզախություն է պահանջվում ձեր օրինազանցության իրականությանը դեմ հանդիման կանգնելու

համար, ընդունելու ինչ պատիժ էլ պահանջվի և թույլ տալու բավականաչափ ժամանակ այդ գործընթացն առաջ գնալու համար: Երբ այդ արվի, դուք նորից կլինեք *անմեղ*: Տերն ասել է. «Ես՝ ես եմ, որ ջնջում եմ քո յանցանքները իմ պատճառով եւ քո մեղքերը չեմ յիշում» (Եսայիա ԽԳ.25):

Նա այլևս չի հիշի մեր մեղքերը

«Սա է այն ուխտն որ կդնեմ նորանց հետ այն օրերից յետոյ, ... Կտամ իմ օրէնքները նորանց սրտերի մեջ, եւ նորանց խորհուրդների վերայ կգրեմ նորանց և նորանց մեղքերը եւ նորանց անօրինութիւնները էլ չեմ յիշիլ» (Եբրայեցիս Ժ.16–17):

Ալման, որը իր երիտասարդ ժամանակ ապստամբ ոգի ուներ, խոսել է իր իսկ փորձառությունից ելնելով, թե ինչպիսի մեծ սփոփանք է բերում ապաշխարությունը. «Արդ, երբ դատողությունս որսաց այս միտքը, ես գոչեցի իմ սրտում. Ով Հիսուս, դու, Աստծո Որդի, ողորմություն ունեցիր իմ հանդեպ, որ դառը մաղձի մեջ եմ, և օղակված եմ մահվան հավիտենական շղթաներով: Եվ արդ, ահա, երբ ես մտածեցի այս, ես այլևս չկարողացա հիշել իմ ցավերը. Այո, ես այլևս տակնուվրա չէի լինում իմ մեղքերի հիշողությունից: Եվ, Օհ, ինչպիսի ուրախություն, և ինչ սքանչելի լույս ես տեսա. Այո, իմ հոգին լցվեց ուրախությամբ նույնքան սաստիկ, ինչպիսին իմ ցավն էր» (Ալմա 36.18–20):

Երբեմն, նույնիսկ խոստովանությունից և տույժերից հետո, ապաշխարության ամենադժվար մասը ինքն իրեն ներելն է: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը պատմել է մի կնոջ մասին, որը ապաշխարել էր անբարոյական արարքի համար և պայքարում էր, որպեսզի իր ուղին գտներ: Նա հարցրեց նրան ինչ պետք է աներ այժմ: Իր հերթին նա խնդրեց [կնոջը] կարդալ իր համար Հին Կտակարանի պատմությունը Սոդոմի և Գոմորի մասին, Ղովտի և Ղովտի կնոջ մասին, որը դարձավ աղե սյուն (տես Ծննդոց ԺԹ.26): Ապա հարցրեց նրան, թե այդ հատվածները ինչ դաս էին պարունակում իր համար:

Նա պատասխանեց. «Տերը կկործանի նրանց, ովքեր ամբարիշտ են»:

«Այդպես չէ,- ասաց Նախագահ Սմիթը այդ ապաշխարող կնոջը,- Դասը ձեզ համար «Ետ մի նայիր»-ն է:

Տաճարը

Ակնածալիորեն այժմ ես օգտագործում եմ *տաճար* բառը: Եվ միտքս են գալիս խոսքերը. «Կոշիկներդ հանիր ոտքերիցդ, որովհետեւ այն տեղը, որի վերայ դու կանգնել ես, սուրբ երկիր է» (Ելից Գ.5): Ես պատկերացնում եմ կնքման սենյակը և մի զոհասեղան այնտեղ ծնկի եկած երիտասարդ զույգով, կամ գուցե ավելի հասուն զույգի, որը միացել է Եկեղեցուն մեկ տարի առաջ: Այս սրբազան տաճարային արարողությունը ավելին է, ավելի քան հարսանիքը, քանի որ այս ամուսնությունը կնքվում է Խոստումի Սուրբ Հոգով, և սուրբ գրությունները խոստանում են, որ մասնակիցները, եթե նրանք արժանի մնան, «կժառանգեն գահեր, թագավորություններ, իշխանություններ և զորություններ, տիրապետություններ» (ՎԱՈՒ 132.19):

Ես մտածում եմ կնքման արարողության խոսքերի մասին, որոնք չեն կարող գրվել այստեղ: Ես, առնվազն մի փոքր հասկանում եմ կյանքի աղբյուրի սրբազան բնույթը, որը մեր մեջ է: Եվ ես տեսնում եմ ուրախությունը, որը սպասում է նրանց, ովքեր ընդունում են այս գերագույն պարգևը և արժանիորեն են օգտագործում այն:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Հիսուսը՝ Կենդանի Քրիստոսը՝

Աստծո անմահ Որդին

—Առաջին Նախագահություն և
Տասներկու Առաքյալների Քվորում

ԿԵՆԴԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԸ՝ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցի, 1 հունվարի, 2000թ.

Հիշելով երկու հազարամյակ առաջ տեղի ունեցած Հիսուս Քրիստոսի ծնունդը, մենք բերում ենք մեր վկայությունը Նրա անզուգական կյանքի իրականության և Նրա մեծ քավող զոհաբերության անսահման զորության մասին: Ոչ ոք չի ունեցել այդպիսի խորը ազդեցություն բոլորի վրա, ովքեր ապրել են, և ովքեր դեռ կապրեն երկրի վրա:

Նա Մեծ Եհովան էր Հին Կտակարանի և Մեսիան՝ Նոր Կտակարանի: Իր Հոր ղեկավարության ներքո Նա էր երկրի արարիչը: «Ամեն ինչ նրանով եղավ, և առանց նրան ոչինչ չեղավ, ինչ որ եղավ» (Հովհ. Ա.3): Լինելով անմեղ Նա մկրտվեց, որ ամեն արդարություն կատարվի: Նա «ման եկավ բարի անելով» (Գործք Ժ.38), թեև արհամարհվեց դրա համար: Նրա ավետարանը խաղաղության ու բարյացակամության ուղերձ էր: Նա կոչ արեց բոլորին հետևել Իր օրինակին: Նա քայլեց Պաղեստինյան ճանապարհներով, բուժելով հիվանդներին, տեսողություն շնորհելով կույրերին, կենդանացնելով մահացածներին: Նա սովորեցնում էր հավերժության ճշմարտությունները, մեր նախաերկրային կյանքի իրողությունը, երկրի վրա մեր կյանքի նպատակը և գալիք կյանքի համար Աստծո որդիների ու դուստրերի ներուժը:

Նա հիմնեց հաղորդության արարողությունը որպես Իր մեծ քավող զոհաբերության հիշեցում: Նա ձերբակալվեց ու դատապարտվեց կեղծ մեղադրանքներով, մեղավոր ճանաչվեց ամբոխին բավարարելու համար և մահվան դատապարտվեց Գագաթի խաչի վրա: Նա զոհեց Իր կյանքը քավելու համար ողջ մարդկության մեղքերը: Նա մեծ փրկագնող պարգև էր հօգուտ բոլոր նրանց, ովքեր երբևէ կապրեն երկրի երեսին:

Մենք ամենայն լրջախոհությամբ վկայում ենք, որ Նրա կյանքը, որն առանցքային է ողջ մարդկության պատմության մեջ, սկիզբ չի առել Բեթլեհեմում, ոչ էլ ավարտվել է Գագաթում: Նա Աստծո Առաջնեկն էր, Միածին Որդին մարմնում, աշխարհի Քավիչը:

Նա հարություն առավ գերեզմանից՝ «ննջածների առաջնեկ եղավ» (Ա Կորնթ. ԺԵ.20): Որպես հարություն առած Տեր, Նա այցելեց նրանց, ում սիրում էր կյանքի ժամանակ: Նա նաև առաքելությամբ այցելեց հնադարյան Ամերիկայի Իր «ուրիշ ոչխարներին» (Հովհ. Ժ.16): Ներկայիս աշխարհում Նա և Նրա Հայրը հայտնվեցին պատանի Ջոզեֆ Սմիթին՝ սկիզբը դնելով երկար խոստացված «ժամանակների լրության տնտեսության» (Եփեսացիս Ա.10):

Ապրող Քրիստոսի մասին մարգարե Ջոզեֆը գրել է. «Նրա աչքերը կարծես կրակի բոցեր լինեին. նրա գլխի մազերը ճերմակ էին, ինչպես մաքուր ձյունը. նրա դեմքը փայլում էր արևի պայծառությունից վառ. և նրա ձայնն ասես շառաչուն մեծ ջրերի հնչում լիներ, այսինքն Եհովայի ձայնը, ասելով.

Ես եմ առաջինը և վերջինը, ես նա եմ, ով ապրում է, ես նա եմ, ով սպանվել էր. Ես ձեր բարեխոսն եմ Հոր մոտ» (ՎԵՈՒ 110.3–4):

Նրա մասին Մարգարեն նաև հայտարարել է. «Եվ արդ, բազմաթիվ վկայություններից հետո, որ տրվել են նրա մասին, սա է վկայությունը, ամենավերջինը, որ մենք տալիս ենք նրա մասին. Որ նա ապրում է:

Քանզի մենք տեսանք նրան, նույնիսկ Աստծո աջ կողմում. և մենք լսեցինք ձայնը, որը վկայում էր, որ Նա Հոր Միածինն է,-

Որ Նրանով, նրա միջոցով, և նրանից է, որ աշխարհները կան և ստեղծվել են, և դրանց բնակիչները ծնված որդիներն ու դուստրերն են Աստծո» (ՎԵՈՒ 76.22–24):

Մենք ազդարարում ենք ամենայն հանդիսավորությամբ, որ Նրա Քահանայությունը և Նրա Եկեղեցին վերականգնվել են երկրի երեսին. «Առաքյալների և մարգարեների հիմքի վրա շինված, որի անկյունի գլուխը Հիսուս Քրիստոսն է» (Եփեսացիս Բ.20):

Մենք վկայում ենք, որ մի օր Նա կվերադառնա երկիր: «Եվ պիտի հայտնվի Տիրոջ փառքը, և ամեն մարմին միասին պիտի տեսնեն» (Եսայիա Խ.5): Նա կղեկավարի ինչպես Թագավորների Թագավոր և կկառավարի ինչպես Տերերի Տեր և ամեն ծունկ պիտի ծալվի ու ամեն լեզու պիտի խոստովանի դա Նրա առջև երկրպագությամբ: Մեզանից յուրաքանչյուրը պետք է կանգնի դատվելու Նրա կողմից՝ համաձայն մեր գործերի ու մեր սրտի ցանկությունների:

Մենք վկայում ենք, որպես Նրա պատշաճ կերպով կարգված Առաքյալներ, որ Հիսուսը ապրող Քրիստոսն է, Աստծո անմահ Որդին: Նա է մեծ Թագավոր Էմմանուելը, որը կանգնած է այսօր Աստծո աջ կողմում: Նա է լույսը,

կյանքը և հույսն աշխարհի: Նրա ճանապարհն այն արահետն է, որ տանում է դեպի երջանկություն այս կյանքում և հավիտենական կյանք գալիք աշխարհում: Փառք Աստծուն Իր սուրբ Որդու անզուգական պարգևի համար:

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Գորդոն Բ. Հինքլի
Թոմաս Ս. Մոնսոն Ջեյմս Ի. Ֆաուստ

ՏԱՄՆԵՐԿՈՒՍԻ ՔՎՈՐՈՒՄ

Բոյդ Քեյ. Փաքեր
Լ. Թոմ Փերի
Դեյվիդ Բ. Հեյթ
Նիլ Ա. Մաքսվել
Ռասսել Մ. Նելսոն
Դալլին Հ. Օուքս
Մ. Ռասսել Բալլարդ
Ջոզեֆ Բ. Վիրթլին
Ռիչարդ Գ. Սքոթ
Ռոբերտ Դ. Հեյլս
Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Հենրի Բ. Այրինգ

ԳԻՏԵԼԻՔ ՀՈԳԵՎՈՐ ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ հոգևոր գիտելիքը բացվում է, այն պետք է հասկանալ, գնահատել, հնազանդվել, հիշել և ընդլայնել:

—Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՀՈԳԵՎՈՐ ԳԻՏԵԼԻՔ

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, հոկտ. 1993, 117—20, կամ Ensign, նայ. 1993, 86–88

Դուք՝ այս Եկեղեցու սքանչելի, արդար անդամներ, մշտապես ոգեշնչում եք և առաջ մղում ինձ: Շնորհակալություն կյանքի ձեր խանդավառության, ձեր անձն անմնացորդ նվիրելու, ձեր նվիրվածության և արժանավոր ապրելու ձեր վճռականության համար: Ես երախտագիտություն եմ հայտնում նաև մեր բազմաթիվ ընկերներին, ովքեր միացել են մեզ համաժողովի այս նիստերի ընթացքում: Թող որ տրված ուղերձներն օրհնեն ձեր կյանքը:

Հոգևոր գիտելիքի կարևորությունը

Վերջերս Հարավային Ամերիկայում մի երիտասարդ հարց տվեց. «Կարո՞ղ եք առաջարկներ տալ, որոնք կօգնեն մեզ Փրկչին ավելի լավ ճանաչել և կարողանալ մշտապես հետևել Նրա օրինակին»: Այդ իմաստալի հարցը և նմանատիպ այլ հարցեր ևս հուշեցին ինձ պատրաստելու այս ուղերձը հոգևոր գիտելիք ձեռք բերելու մասին:

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը շեշտել է հոգևոր գիտելիքի կարևորությունը, ասելով.

«Մենք պետք է դարձնենք ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրությունը կյանքի ողջ ժամանակահատվածի զբաղմունք...

... Ամենակարևոր [բանը] որ կարող եք անել ... Սուրբ գրությունների մեջ խորասուզվելն է: Ջանասիրաբար հետազոտեք դրանք... Սովորեք վարդապետություն: Տիրապետեք սկզբունքներին ...

Դուք պետք է ...հասկանաք, որ ...սուրբ գրությունները հետազոտելը բեռ չէ [մեզ] վրա դրված Տիրոջ կողմից, այլ սքանչելի օրհնություն և հնարավորություն» (in Conference Report, հոկտ. 1986, p. 61, կամ *Ensign*, Նոյ. 1986, 47):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը նշել է.

«Հոգևոր ուսումն առաջնահերթ է: Աշխարհիկ գիտելիքը առանց հոգևոր հիմքի... նման է կաթի վրայի փրփուրի, անցնող ստվերի... Մարդը չպետք է ընտրի երկուսի միջև... Քանի որ կա երկուսն էլ միաժամանակ ստանալու հնարավորություն» (*The Teachings of Spencer W. Kimball*, p. 390):

Ինչպե՞ս ձեռք բերել հոգևոր գիտելիք

Երբ որոնում եք հոգևոր գիտելիք, փնտրեք սկզբունքներ: Ուշադիր առանձնացրեք դրանք մանրամասներից, որոնք օգտագործվում են դրանք բացատրելու համար: Սկզբունքները խտացված ճշմարտություններ են՝ նախատեսված տարբեր հանգամանքների դեպքում կիրառելու համար: Ճշմարիտ սկզբունքը որոշումները հստակ է դարձնում, նույնիսկ ամենախառնաշփոթ և հարկադրական հանգամանքներում: Արժե մեծ ջանք գործադրել մեր հավաքած ճշմարտությունը որպես պարզ դրույթներով սկզբունք ձևակերպելու համար: Ես դա փորձել եմ անել հոգևոր գիտելիք ձեռք բերելու հետ մեկտեղ: Արդյունքն այժմ կիսվում եմ այն հույսով, որ այն կհանդիսանա սկզբնակետ ձեր ուսումնասիրության համար: Սկզբունքի այդ դրույթն է.

Հոգևոր գիտելիք ձեռք բերելու և դրան իմաստությամբ հնազանդվելու համար, մարդ պետք է.

- *Համեստությամբ որոնի աստվածային լույս:*
- *Գործադրի հավատք առ Հիսուս Քրիստոս:*
- *Ականջ դնի Նրա խորհրդին:*
- *Պահի Նրա պատվիրանները:*

Երբ հոգևոր գիտելիքը բացվում է, այն պետք է *հասկանալ, գնահատել, հիշել, ընդլայնել և դրան հնազանդվել:*

Ես կբացատրեմ այդ դրույթը օգտագործելով օրինակներ սուրբ գրություններից, մարգարեներից և թանկարժեք, չնայած դժվար, անձնական փորձառության լաբորատորիայից: Իմ ցանկությունն է, որ տրված առաջարկները օգնեն ձեզ ձեր ողջ կյանքի ընթացքում հոգևոր ճշմարտության ձեր փնտրտուքներում: Ապա ժամանակի ընթացքում դուք կարող եք իրականացնել Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից տրված այս նպատակը.

«Մարդկության մեծագույն նվաճումը, որին կարող է հասնել այս աշխարհը աստվածային ճշմարտության հետ ծանոթանալն է, այնքան խորապես, այնքան կատարելապես, որ աշխարհում ոչ մի արարածի ապրելու օրինակը կամ վարքը երբևէ չկարողանա նրանց հեռացնել այն գիտելիքից, որը նրանք ձեռք են բերել...

Իմ պատանեկությունից սկսած ես կամեցել եմ սովորել ավետարանի սկզբունքներն այն ձևով... որ ինձ համար նշանակություն չունենար, թե ով կարող էր շեղվել ճշմարտությունից,...իմ հիմքը լիներ ...հաստատ այն ճշմարտություններում, որ ես էի սովորել» (*Gospel Doctrine* [Salt Lake City: Deseret Book Co., 1939], pp. 3–4):

Նախագահ Սմիթի պես, դուք և ես կարիք ունենք այդպիսի խարսխի՝ մեր կյանքը կենտրոնացած պահելու արդարակեցության վրա և խուսափելու աշխարհիկության անողորմ ալիքներից հեռու քշվելուց:

Խոնարհաբար փնտրեք աստվածային լույս

Հետևյալ սուրբ գրություններն ուսուցանում են, թե ինչու մենք պետք է *փնտրենք աստվածային լույս*.

«Քո խոսքը ճրագ է իմ ոտների համար, և *լույս* իմ ճանապարհի համար» (Սաղմոս ՃԺԹ.105, շեղագիրն ավելացված է):

«Ես Տերս, ... հավիտյանս լույս կլինեմ նրանց համար, ովքեր լսում են իմ խոսքերը» (2 Նեփի 10.14,):

«Այդ ես եմ, որ խոսում եմ, ահա, ես լույսն եմ, որը շողում է խավարում, և իմ զորությամբ եմ ես այս խոսքերը տալիս քեզ:

... Ապավինիր այն Հոգուն, որն առաջնորդում է բարիք գործել, այո, արդար գործել, խոնարհ քայլել, արդարությամբ դատել. և դա է իմ Հոգին:

... Ես քեզ բաժին պիտի հանեմ իմ Հոգուց, որը կլուսավորի քո միտքը, որն ուրախությունով կլցնի քո հոգին:

«Եվ ... դրանով դու կիմանաս բոլոր բաները, ինչ կցանկանաս ինձանից, որոնք վերաբերում են արդարության բաներին, հավատքով հավատալով ինձ, որ դու պիտի ստանաս» (ՎԱՈՒ 11.11–14 շեղագիրն ավելացված է):

Ֆիզիկական լույսի հետ համանմանություններն օգնում են մեզ հասկանալ հոգևոր լույսի զորությունը: Մութ սենյակում վառվող էլեկտրական լամպը ցրում է խավարը: Սակայն, եթե խավարը խիստ թանձր է, այն կարող է հաղթել լույսին, ինչպես լամպը սև թանաքով լցված դույլի մեջ: Հոգևոր լույսը հաղթում է տգիտության և անհավատության խավարին: Երբ օրինազանցությունը սաստիկ մթագնում է կյանքը, ապաշխարության հոգևոր ճշմարտությունների վրա կենտրոնացումը ցրում է մթությունը, ինչպես լազերն է ներթափանցում ամենամուգ թանաքի մեջ:

Համեստությունը կարևոր է հոգևոր գիտելիք ձեռք բերելու համար: Լինել խոնարհ նշանակում է լինել ուսանելի: Համեստությունը թույլ է տալիս ձեզ ուսուցանվել Հոգու կողմից և ուսուցանվել Տիրոջ կողմից ոգեշնչված աղբյուրներից, ինչպես օրինակ սուրբ գրություններից: Անձնական աճի և հասկացողության սերմերը ծլարձակում են համեստության բերրի հողում: Նրանց պտուղը հոգևոր գիտելիքն է, որը կառաջնորդի ձեզ ինչպես այստեղ, այնպես էլ հետագայում:

Հպարտ մարդը չի կարող իմանալ Հոգու բաները: Պողոսն ուսումնասիրել է այս ճշմարտությունը, ասելով.

«Աստծո բաներն ոչ ով չգիտէ, եթե ոչ Աստուծոյ Հոգին...

Բայց շնչավոր մարդն Աստուծո Հոգու բաները չէ ընդունում. Որովհետեւ նորանք հիմարությիւն են նորա համար. եւ չէ կարող էլ գիտենալ, որոհետեւ հոգևոր կերպով են քննվում» (Ա Կորնթացիս Բ.11, 14):

Քանի որ անձնական մեծ ջանք է պահանջվում արժանի գիտելիք ձեռք բերելու և օգտագործելու համար, դուք չեք կարող անվերջ օրինակ վերցնել կյանքի յուրաքանչյուր հրապուրիչ ասպարեզից: Ուստի դուք պետք է ուշադիր ընտրեք մի քանի կենսական տարածքներ, որտեղ դուք կարող եք էներգիա կենտրոնացնել կենսական ճշմարտություններ սովորելու և դրանցով կիսվելու համար: Ես գիտեմ, որ մեծարժեք գիտելիք ստանալու համար պահանջվում է արտասովոր անձնական ջանքեր: Սա հատկապես ճշմարիտ է, երբ մեր ցանկությունն է ձեռք բերել հոգևոր գիտելիք: Նախագահ Քիմբալն ասել է սա այս ձևով.

«Աշխարհիկ և հոգևոր գիտության գանձերը թաքցված են, բայց թաքցված նրանցից, ովքեր ինչպես հարկն է չեն փնտրում և ձգտում գտնել դրանք... Հոգևոր գիտելիքը մատչելի չէ պարզապես այն խնդրելու միջոցով, նույնիսկ աղոթքները բավական չեն: Պահանջվում է հետևողականություն և մարդու կյանքի նվիրաբերում... Գիտության բոլոր գանձերից ամենակենսականը Աստծո մասին գիտությունն է» (*The Teachings of Spencer W. Kimball*, pp. 389–90):

Բրիգամ Յանգը սովորեց ճշմարտությունը՝ ուշադրությամբ լսելով Ջոզեֆ Սմիթին և ձգտելով հասկանալ այն ամենը, ինչ ուսուցանվել էր խոսքով, օրինակով կամ Հոգով: Ուսուցանման արդյունքն օրհնել է սերունդներ: Այն պատճառ է հանդիսացել Բիրգամ Յանգի համար սովորել լրացուցիչ ճշմարտություններ և կիսվել ավելի շատ ճշմարտություններով, քան ինքն անձնապես ստացել էր Ջոզեֆ Սմիթից: Հետևեք նրա օրինակին:

Հավատք գործադրեք և ականջ դրեք Հիսուսի խորհրդին

Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելը բացարձակապես անհրաժեշտ է և կարևոր: Դա փրկության ծրագրի հիմքն է: Երբ հավատքի այդ գործադրումը կրկնապատկվում է անկեղծ ջանքերով, որոնք հիմնված են *Նրա Խորհրդին ականջ դնելու* պատրաստակամությամբ, անձնական մեծ աճ և օրհնություններ են հետևում: Փրկիչը հայտարարել է.

«Եվ այժմ ես ձեզ պատվիրան եմ տալիս, ... ջանասիրաբար ուշք դարձնեք հավերժական կյանքի խոսքերին:

Քանզի դուք պետք է ապրեք Աստծո բերանից դուրս եկող ամեն մի խոսքով:

Քանզի Տիրոջ խոսքը ճշմարտություն է, և այն ինչ ճշմարտություն է՝ լույս է, և այն ինչ լույս է՝ Հոգի է, այսինքն Հիսուս Քրիստոսի Հոգին:

Եվ Հոգին լույս է տալիս ամեն մարդու, որն աշխարհ է գալիս և Հոգին լուսավորում է ամեն մարդու, աշխարհով մեկ, որ ականջ է դնում Հոգու ձայնին:

Եվ ամեն ոք, ով ականջ է դնում Հոգու ձայնին գալիս է Աստծո մոտ, այսինքն Հոր» (ՎԿՈՒ 84.43–47, շեղագիրն ավելացված է):

Հնազանդվեք պատվիրաններին

Հոգևոր գիտելիք ձեռք բերելիս *հնազանդության* դերը վճռական է, ինչպես Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի այս մեջբերումն է հաստատում.

«Այժմ Տերը կկամենար մեզ պարգևներ տալ: Նա կարագացնի մեր միտքը: Նա կտա մեզ ... գիտելիք, որն այնքան խորն արմատավորված կլինի մեր հոգիներում, որ [այն] երբեք արմատախիլ չի արվի, եթե մենք ուղղակի միշտ ձգտենք դեպի լույսը...և ըմբռնումը, որը խոստացված է մեզ, և որը մենք կարող ենք ստանալ, եթե միայն մենք ճշմարիտ և հավատարիմ լինենք Հիսուս Քրիստոսի ավետարանին վերաբերող յուրաքանչյուր ուխտին և պարտավորությանը» (in Conference Report, Oct. 1958, p. 22):

Պատվիրանները պահելու համար, դուք պետք է իմանաք դրանք: Դրանք սովորելու լավագույն և միակ աղբյուրը սուրբ գրություններն են: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը այսպես է հորդորել.

«Այսօր մեզ անհանգստացնում են չարություն ծրագրող մարդիկ, ովքեր [ձգտում են] կործանել Եկեղեցու անդամների վկայությունները, շատերը ... վտանգի մեջ են հասկացողության բացակայության պատճառով և որովհետև նրանք չեն ձգտել Հոգու առաջնորդությանը... Սա պատվիրան է Տիրոջից, որ անդամները... ջանասեր լինեն,...ուսումնասիրեն... ավետարանի հիմնական ճշմարտությունները... Յուրաքանչյուր մկրտված անդամ [կարող է] ունենալ մնայուն վկայություն..., բայց [այն] կդառնա մշուշոտ և ի վերջո կանհետանա [առանց] ուսումնասիրության, հնազանդության և ջանասիրաբար ձգտելու իմանալ և հասկանալ ճշմարտությունը» (in Conference Report, Oct. 1963, p. 22; կամ *Improvement Era,* Dec. 1963, p. 1062):

Հոգևոր խորը ճշմարտությունը չի կարող ուղղակի մեկի մտքից ու սրտից լցվել մեկ ուրիշի միտք և սիրտ: Դա պահանջում է հավատք և եռանդուն ջանքեր: Թանկարժեք ճշմարտությունը գալիս է ամեն անգամ մի փոքր մաս, մեծ ճիգեր գործադրելու, իսկ երբեմն էլ ցավոտ մաքառումների միջոցով: Տերը նախատեսել է, որ այդ ուղով լինի, որպեսզի մենք կարողանանք հասունանալ և առաջընթաց ունենալ: Մորոնին ասել է. «մի վիճեք, եթե դուք չեք տեսնում, քանզի նախքան ձեր հավատքի փորձությունը, դուք վկայություն չեք ստանում» (Եթեր 12.6): Այդ ճշմարտությունը բացատրելու համար Նախագահ Հարոլդ Բ. Լին տվել է այս հրահանգը.

«Փրկչի արյունը, Նրա քավությունը կփրկի մեզ, բայց միայն այն ժամանակ, երբ մենք արած կլինենք այն ամենը, ինչ կարող ենք փրկելով մեզ Նրա պատվիրանները պահելու միջոցով: Ավետարանի բոլոր սկզբունքները խոստման սկզբունքներ են, որոնց միջոցով Ամենազորի ծրագրերը բացվում են մեզ համար» (*Stand Ye in Holy Places* [Salt Lake City: Deseret Book Co., 1974], p. 246):

Կիրառեք հոգևոր գիտելիքը

Երբ գիտելիքի փաթեթները բացվում են, դրանք պետք է *հասկանալ, գնահատել, հիշել, ընդլայնել և դրանց հնազանդվել*: Ես կբացատրեմ.

- *Հասկանալ:* Երբ հանդիպում եք ճշմարտության յուրաքանչյուր էլեմենտի, դուք պետք է ուշադիր քննեք այն նախորդ գիտելիքի լույսի ներքո, որոշելու, թե որտեղ է այն հարմար: Խորհեք այն, ստուգեք այն ներսից դուրս: Ուսումնասիրեք այն ամեն տեսանկյունից բացահայտելու թաքնված իմաստը: Քննեք դա այն տեսակետից, որպեսզի հավաստիանաք, որ չեք հանգել կեղծ եզրակացությունների: Աղոթքով մտորելը կտա ավելի խորը ըմբռնում: Այդպիսի գնահատումը առանձնապես կարևոր է, երբ ճշմարտությունը գալիս է որպես տպավորություն Հոգուց:
- *Գնահատել:* Դուք ցույց եք տալիս, որ գիտելիքը գնահատվում է՝ արտահայտելով երախտագիտություն դրա համար, հատկապես երախտագիտության սրտառուչ աղոթքներ հղելով: Տերն ասել է. Նա, ով ընդունում է բոլոր բաները գոհությամբ, պիտի փառավորվի. և այս աշխարհի բաները պիտի ավելացվեն նրա համար, նույնիսկ հարյուրապատիկ, այո, ավելի շատ» (ՎԿՈՒ 78.19):
- *Հնազանդվել:* Ճշմարտության հնազանդ կիրառումը ամենահաստատուն ուղին է այն հավերժ ձերը դարձնելու համար: Գիտելիքի իմաստուն օգտագործումը կներթափանցի ձեր կյանք իր թանկարժեք պտղով:
- *Հիշել:* Ձեր կյանքում հզոր հոգևոր ուղղությունը կարող է հաղթահարվել կամ ետին պլան մղվել, եթե դուք չապահովեք մի ուղի այն ձեր հիշողության մեջ պահպանելու համար: Բրիգամ Յանգը հայտարարել է. «Եթե դուք սիրում եք ճշմարտությունը դուք կարող եք հիշել այն» (*Discourses of Brigham Young,* sel. John A. Widtsoe [Salt Lake City: Deseret Book Co., 1941], p. 10): Խնամքով գրի առնված գիտելիքը, մի գիտելիք է, որը մատչելի է կարիքի պահին: Հոգևոր զգայուն տեղեկությունը պետք է պահվի սուրբ տեղում, որը ցույց է տալիս Տիրոջը, թե ինչպես եք փայփայում

այն: Այդ վարվելակերպը կուժեղացնի հետագա լույս ստանալու հավանականությունը:

- *Ընդլայնել:* Այս միտքը վերաբերվում է բազում արտոնություններին, որոնք գալիս են ճշմարտության ձեր ըմբռնումը մեծացնելու, ընդարձակելու և զարգացնելու ձեր ջանքերից: Օգտագործեք սուրբ գրությունները և մարգարեների հայտարարությունները ընդլայնելու ձեր գիտելիքը: Դուք կգտնեք, որ գիտելիքով կիսվելու ջանքերը հաճախ պարգևատրվում են ավելի մեծ հասկացողությամբ, երբ լրացուցիչ լույս է հոսում ձեր միտք ու սիրտ (տես ՎԵՈՒ 8.2–3):

Ուսումնասիրեք և կիրառեք համաժողովների ուղերձները

Մենք մոտենում ենք մի մեծ համաժողովի ավարտին: Նրա ուղերձների միջոցով ձեզ տրվել է ոգեշնչված ճշմարտություն առանց ձեր կողմից մեծ ջանքեր գործադրելու: Դարձրեք այս ճշմարտությունները ձերը՝ ուսումնասիրության և խելամիտ կիրառման միջոցով և օրինակ վերցրեք Աստծո մարգարեից՝ Սպենսեր Վ. Քիմբալից, որը համաժողովի ավարտին սովորեցրեց.

«Մինչ նստած էի այստեղ, ես որոշեցի, որ երբ այս գիշեր տուն գնամ այս համաժողովից, կան շատ ու շատ ոլորտներ իմ կյանքում, որոնք ես կկարողանամ կատարելագործել: Ես մտովի մի ցուցակ եմ կազմել դրանց, և պատրաստվում եմ գնալ ու աշխատելհամաժողովը ավարտվելուն պես» (in Conference Report, Oct. 1975, p. 164; կամ *Ensign,* Nov. 1975, p. 111):

Բացարձակ ճշմարտություն սովորելու արտոնությունը սրբազան է ինձ համար: Ես երկյուղածություն եմ զգում, որ մեր Երկնային Հայրը և Նրա Սիրելի Որդին կամենում են, նույնիսկ մտահոգվում են մեզ համար, որ մենք սովորենք իրենցից: Խնդրում եմ օգտագործեք այն, ինչ ես կիսվեցի մեզանից յուրաքանչյուրիս տրված սքանչելի արտոնության հանդեպ դյուրազգացությամբ, պատրաստ հնազանդվելու, ուսուցանվելու հավերժական ճշմարտություն: Հոգևոր գիտելիքի ձեռք բերումը մեխանիկական գործընթաց չէ: Այն սրբազան արտոնություն է՝ հոգևոր օրենքի վրա հիմնված: Ես վկայում եմ, որ դուք կկարողանաք ստանալ ոգեշնչված օգնություն: Խոնարհաբար խնդրեք ձեր Հավերժական Հորը: Որոնեք աստվածային լույս: Գործադրեք հավատք առ Փրկիչը: Ձգտեք ականջ դնել Նրա խորհրդին և հնազանդվել Նրա պատվիրաններին: Նա կօրհնի և կառաջնորդի ձեզ, երբ դուք առաջ ընթանաք երբեմն նենգ այս աշխարհի միջով:

Ես հանդիսավոր վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսն առաջնորդում է Իր այս եկեղեցին: Նա անձնապես գիտի ձեզ և սիրում է ձեզ: Երբ դուք քայլեք հավատարիմ հնազանդությամբ, Նա կօրհնի ձեզ, կոգեշնչի ձեզ և կառաջնորդի դեպի ավելի մեծ գիտելիք և ունակություն: Ես վկայում եմ, որ Նա ապրում է, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԱՌԱՆՑ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐԵԼԸ

Առանց ամուսնության համատեղ ապրելը կործանում է ինչ որ բան բոլոր նրանց ներսում, ովքեր անում են դա:

—Երեց Բոյդ Ք. Փաքեր

Թեմային առնչվող սուրբ գրություններ

Առակաց Զ.27–33

«Հնա՞ր է, որ մի մարդ կրակ կրէ իր ծոցումը, եւ նորա հանդերձները չայրուին:

Կամ կարելի՞ է որ մի մարդ կայծերի վերայ մանգայ, և նորա ոտները չխանձուին:

Բայց կին պոծողն անմիտ է. իր ոգին է փչացնում, ով որ անէ այս:

Նա վերք ու անարգանք կգտնէ և նորա նախատինքը չի ջնջուիլ»:

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Այս ամեն ինչ թույլատրող աշխարհի ոչ բոլոր մեղքերն են երիտասարդության հետ: Ես ցնցվեցի վերջերս, երբ մի ամսագրի հոդված կարդացի: Մարդը խոսում էր ամուսնության մասին որպես իրավական, թուղթ ստորագրելու հաստատություն և ասում. «Այն պետք է վերացվի: Առանց հասարակական ճնշումների մի պետությունում, այն հավանաբար ուտոպիա կլիներ»: Նա հարց էր ուղղել մի կնոջ: Նա ասել էր. «Ամուսնությունը պետք է վերացվի: Ես արդեն գիտեմ մարդկանց, ովքեր խաղաղ ապրում են առանց ամուսնության, բայց ես դեռ չեմ տեսել դրա ազդեցությունը երեխաների վրա, երբ նրանք մեծանան այդպիսի հասարակության մեջ»:

Սրանք միակը չեն, ովքեր պաշտպանում են առանց ամուսնության համատեղ ապրելը: Մեր ունեցած ողջ ուժով մենք սրա վրա ենք հրավիրում մեր մարդկանց ուշադրությունը.

Մենք կրկին ասում ենք. Մենք Եկեղեցու անդամներս ամուսնանում ենք: Բոլոր նորմալ մարդիկ պետք է ամուսնանան: (Կարող են լինել մի քանի բացառություններ): Բոլոր ամուսնացած նորմալ զույգերը պետք է դառնան ծնողներ (in Conference Report, Oct. 1974, 9; կամ *Ensign*, Nov. 1974, 8):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Աստծո կողմից վավերացված ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև հազարավոր տարիներ եղել է քաղաքակրթության հիմքը: Չկա արդարացում վերասահմանելու, թե ինչ է ամուսնությունը: Սա մեր իրավունքը չէ, իսկ նրանք, ովքեր փորձում են, հաշվետու կլինեն Աստծո առաջ» (in Conference Report, Oct. 1999, 70; կամ *Ensign*, Nov. 1999, 54):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Այժմ առկա է բավականին գերակշռող մի գործառույթ, չամուսնացած զույգերն ապրում են համատեղ՝ ամուսնության մի կեղծիք: Նրանք կարծում են, որ իրենք կունենան այն ամենը, ինչ ամուսնությունը կարող է տալ առանց դրա հետ կապված պարտավորությունների: Նրանք սխալվում են:

Չնայած նրանք հուսով են գտնել շատ բան այդպիսի մի հարաբերության մեջ, նրանք ավելի շատ կկորցնեն: Առանց ամուսնության համատեղ ապրելը կործանում է ինչ որ բան բոլոր նրանց ներսում, ովքեր անում են դա: Առաքինությունը, արժանապատվությունը և բնավորության կատարելագործումը թոշնում է:

Պնդելը, որ դա տեղի չի ունենա, չի կանխարգելի կորուստը, և այս արժանիքները, երբ կորում են, հեշտորեն չեն վերականգնվում:

Ենթադրել, որ մի օր նրանք անդառնալի կփոխեն իրենց սովորույթները և անմիջապես կհայցեն բոլոր այն բաները, որոնք իրենցը կլինեին, եթե նրանք ամուսնությունը ծաղր սարքած չլինեին, պետք է ենթադրել մի բան, որը չի լինի:

Մի օր, երբ նրանք ուշքի գան, նրանք կհնձեն հիասթափություն:

Մարդ չի կարող այլասերել ամուսնությունը առանց արատավորելու այնպիսի խոսքեր ինչպիսիք են՝ *տղա, աղջիկ, տղամարդկություն, կանացիություն, ամուսին, կին, հայր, մայր, մանկիկ, երեխաներ, ընտանիք, օջախ:*

Այնպիսի խոսքեր, ինչպիսիք են *անհասատիրությունը* և *զոհաբերությունը* այդ ժամանակ մի կողմ կգցվեն: Այդ ժամանակ ինքնահարգանքը կաղոտանա և սերն ինքը չի կամենա մնալ:

Եթե դուք գայթակղվել եք մտնելով այդպիսի հարաբերության մեջ, կամ եթե դուք այժմ ապրում եք մեկ ուրիշի հետ առանց ամուսնության, թողեք դա: Ետ քաշվեք դրանից:

Հեռացեք դրանից: Մի շարունակեք այն: Կամ եթե կարող եք, դարձրեք այն ամուսնություն» (in Conference Report, Apr. 1981, 14–15; կամ *Ensign*, May 1981, 13):

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Ամուսնությունը «միության այնպիսի մի ամբողջականություն է, որ մենք օգտագործում ենք *կնքել* բառը արտահայտելու նրա հավերժական խոստումը: Մարգարե Ջոզեֆ Սմիթը մի անգամ ասել է, որ մենք հավանաբար կարող ենք պատկերացնել այդպիսի սրբազան կապը որպես «միացված» լինել [տես ՎԼՈՒ 128.18] մեկը մյուսին:

Բայց այսպիսի ամբողջական միացում, այդպիսի անխախտ պարտավորություն տղամարդու և կնոջ միջև կարող է գալ միայն մերձավորությունից և մնայունությունից, որը թույլ է տալիս ամուսնական ուխտը, հանդիսավոր խոստումներով և երդմամբ այն ամենով, ինչ իրենք ունեն՝ իրենց իսկ սրտերով և մտքերով, բոլոր իրենց օրերով և բոլոր իրենց երազանքներով:

Կարո՞ղ եք տեսնել բարոյական այն կեղծավորությունը, որը գալիս է *ձևացնելուց*, որ դուք մեկ եք, ձևացնելով, որ դուք հանդիսավոր խոստումներ եք տվել Աստծո առջև, կիսվելով ֆիզիկական խորհրդանիշներով և ֆիզիկական մտերմությամբ ձեր կեղծ միության, բայց հետո փախչելով, նահանջելով, խզելով բոլոր մյուս այն տեսակետները, որոնք միտված էին լինելու լիակատար պարտավորություն:

«*Մարդկային մտերմության հարցերում, դուք պետք է սպասեք:* Դուք պետք է սպասեք մինչև կարողանաք տալ ամեն բան, իսկ դուք չեք կարող տալ ամեն ինչ, մինչև իրավական և օրինական ձևով ամուսնացած չլինեք: Տալ ապօրինաբար այն, ինչը ձերը չէ (հիշեք, դուք ձեզ չեք պատկանում) և տալ միայն մի մասը նրա, ինչին չի կարող հետևել ձեր ողջ էության պարգևը, էմոցիոնալ ռուսական ռուլետկա է: Եթե դուք համառորեն հետամուտ եք ֆիզիկական բավարարվածության առանց երկնքի թույլատրության, դուք սոսկալի ռիսկի եք դիմում՝ այնպիսի հոգևոր, հոգեբանական վնասվածք ստանալու, որին դուք կարող եք ենթարկվել *ինչպես* ձեր տենչով ֆիզիկական մտերմության, *այնպես էլ* ողջ սրտով նվիրվածություն ցույց տալու կարողությամբ, հետագայում ավելի ճշմարիտ սիրո դեպքում (in Conference Report, Oct. 1998, 100; կամ *Ensign*, Nov. 1998, 76–77):

ՍԵՐ

Եթե մեկը իսկապես սիրում է մեկ ուրիշին, այդ մարդը ավելի շուտ կմեռնի մյուսի համար, քան կվնասի նրան:

—Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

ԹԵՄԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մատթեոս Զ.24

«Ոչ ով չէ կարող երկու տէրերի ծառայել. Որովհետև կամ մէկին կատէ եւ միուսին կսիրէ, կամ մէկին կմեծարէ եւ միուսին կարհամարհէ: Չէք կարող Աստծուն ծառայել եւ մամոնային»:

Հռովմայեցիս Ը.35, 39

«Ապա ո՞վ կբաժանէ մեզ Քրիստոսի սէրիցը, տառապա՞նք, թէ նեղութի՞ւն, թե հալածա՞նք, թե սո՞վ, թե մերկութի՞ւն, թե վտա՞նգ, թե սո՞ւր...

Ոչ բարձրություն, ոչ խորություն, և ոչ մէկ ուրիշ ստեղծուած բան կարող է մեզ բաժանել Աստուծոյ սէրիցը՝ որ մեր Տեր Հիսուս Քրիստոսումն է»:

Հռովմայեցիս ԺԳ.10

«Սէրն իր ընկերին չար չի անիլ. Ուրեմն օրենքի լրումը սէրն է»:

Եփեսացիս Ե.2, 25, 33

«Եւ սէրով գնացեք, ինչպէս որ Քրիստոսն էլ մեզ սիրեց, եւ իր անձը մեզ համար մատնեց, պատարագ եւ զոհ Աստուծոյ անուշչ հոտ...

Մարդիկ, սիրեցէք ձեր կանանցը, ինչպէս Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն եւ իր անձը մատնեց նորա համար...

Սակայն դուք էլ մի ըստ միոջէ ամեն մէկն իր կնկանը թող այնպէս սիրէ ինչպէս իր անձը. Եւ կինը վախենայ իր մարդիցը»:

Վարդապետություն և Ուխտեր 42.22–23

«Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի:

Եվ նա, ով նայում է մի կնոջ վրա՝ ցանկանալով նրան, ուրանում է հավատքը, և չպիտի ունենա Հոգին. և եթե նա չապաշխարի, նա դուրս պիտի գցվի»:

Ի՞նչ է ճշմարիտ սերը:

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Դեհ, դուք հավանաբար հարցնեք. Ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե ե՞րբ եմ սիրահարված»:

Ջորջ Ք. Մորիսը [որը հետագայում դարձավ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, տվել է այս պատասխանը]. Մայրս մի անգամ ասաց, որ երբ հանդիպեմ մի աղջկա հետ, որի ներկայությամբ ցանկություն կունենամ հասնելու ինչ որ բանի, որը կոգեշնչի ինձ գործել իմ ուժերի սահմանում և դառնալ իմ անհատականության առավելագույնը, այդ երիտասարդ կինը արժանի է քո սիրուն և սեր է արթնացնում քո սրտում:

Ես ընդունում եմ դա...որպես ճիշտ ուղեցույց: Ձեր սիրելի աղջկա ներկայությամբ դուք չեք ուզենա քծնել, նրա ներկայությամբ դուք չեք ուզենա նրանից օգուտ քաղել, նրա ներկայությամբ դուք կուզենաք լինել այնպիսին, ինչպիսին կատարյալ տղամարդը պետք է դառնա, քանի որ նա կոգեշնչի ձեզ այդ կատարելատիպով: Եվ ես խնդրում եմ ձեզ, երիտասարդ կանայք, առաջնորդվեք այդ նույն ուղեցույցով» (“As Youth Contemplates an Eternal Partnership,” *Improvement Era,* Mar. 1938, 139):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Եթե մենք իսկապես ձգտում ենք ավելի նմանվել մեր Փրկչին և Տիրոջը, մեր բարձրագույն նպատակը պետք է լինի սիրել, ինչպես Նա սիրեց» (*Teachings of Ezra Taft Benson,* 275):

Երեց Ջոն Ա. Ուիդքսոու

«Սերը ամուսնության հիմքն է, բայց սերն ինքը օրենքի արդյունք է և ապրում է օրենքով: Ճշմարիտ սերը օրենքում կենալն է, քանի որ բարձրագույն բավարարվածությունը գալիս է օրենքում մնացող կյանքին...

... Ամուսնությունը, որը տևում է միայն երկրային կյանքում, տխուր մի բան է, քանի որ տղամարդու և կնոջ միջև հաստատված սերը, երբ նրանք միասին են ապրում և աճեցնում իրենց ընտանիքը, չեն մեռնի, այլ կապրեն և կբարգավաճեն հավերժական տարիների հետ: Ճշմարիտ սերը հույս ունի և աղոթում է իր սիրելիի հետ անվերջ շարունակվող միության համար: Նրանց համար, ովքեր կնքված են միմյանց հետ ողջ գոյության համար, սերը միշտ ջերմ է, ավելի հուսալի, հավատքով, խիզախ և աներկյուղ: Այդպիսի մարդիկ ապրում են ավելի հարուստ, ավելի ուրախ կյանքով: Նրանց համար երջանկությունը և այն արարելը վերջ չունի...

Բացի ֆիզիկական գրավչությունից, սերը ծնվում է մտքի և հոգու հատկանիշներից, որոնք հաճախ նուրբ են: Գեղեցիկ դեմքը կարող է թաքցնել դատարկ միտք, հաճելի ձայնը կարող է արտասանել կոպիտ խոսքեր, հմայիչ կառուցվածքը կարող է ունենալ տհաճ շարժուձև, փայլուն գեղեցկությամբ կինը, թագավորական արտաքինով մարդը կարող են լինել անտանելի ձանձրալի՝ ավելի մոտիկից ծանոթանալուց հետո, կամ այն անձնավորությունը որը գրավիչ տեսք ունի, իրականում կարող է թերություններ չունենալ, կարող է գերազանցել մեզ գիտելիքով և քաղաքավարությամբ, այնուամենայնիվ, նա մեր տեսակից չէ, նրա ուղիները մերը չեն: Երկու դեպքում էլ սերը թոշնում է սկզբնական փուլում: «Սիրահարվելը» միշտ ավելի շուտ ներսից է, քան դրսից: Այսինքն, ֆիզիկական գրավչությունը պետք է ամրանա մտավոր և հոգևոր ներդաշնակությամբ, եթե ճշմարիտ սեր պիտի ծնվի և ունենա երկար կյանք՝ Վերջին Օրերի Սրբերի տեսակետից, ողջ հավերժություն տևելու համար» *(Evidences and Reconciliations,* 297, 299, 302):

Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

«Ի՞նչ է սերը: Շատ մարդիկ կարծում են դա ուղղակի ֆիզիկական գրավչություն է և նրանք սովորաբար խոսում են «սիրահարվելու» և «սեր առաջին հայացքից» երևույթի մասին: Սա կարող է լինել Հոլիվուդյան տարբերակ և կարող է լինել սիրային երգեր գրողների և սիրո մասին գեղարվեստական գրքեր գրողների մեկնաբանությունը: Իսկական սերը չի փաթեթավորվում այդպիսի անկայուն նյութերով: Մարդ կարող է անմիջապես հրապուրվել մեկ ուրիշ անձնավորությամբ, բայց սերը շատ ավելին է, քան ֆիզիկական հրապուրանքը:Այն խորն է, ընդգրկուն և բազմակողմանի: Ֆիզիկական հրապուրանքը, մի քանի տարրերից միայն մեկն է, բայց պետք է լինի հավատք, վստահություն, փոխըմբռնում և ընկերակցություն: Պետք է լինի ընդհանուր իդեալներ և չափանիշներ: Պետք է լինի մեծ նվիրում և ընկերական հարաբերություններ: Սերը մաքրություն է և առաջընթաց, զոհաբերություն և անեսասիրություն: Այդպիսի սերը երբեք չի ձանձրացնում և չի թոշնում, այլ ապրում է անցնելով հիվանդության և վշտերի, աղքատության և զրկանքների, նվաճումների և հիասթափությունների, ժամանակի և հավերժության միջով» (*Love versus Lust,* 18):

Եթե մեկն իսկապես սիրում է մեկ ուրիշին, այդ մարդը ավելի շուտ կմեռնի մյուսի համար, քան կվնասի նրան» (Teachings of Spencer W. Kimball, 279):

Երեց Գորդոն Բ. Հինքլի

«Կարելի՞ է ես արագ առաջարկեմ չորս անկյունաքարեր, որի վրա պետք է կառուցել այդ տունը: Կան ուրիշները, բայց ես նախընտրում եմ շեշտադրել սրանք...

Սրանցից առաջինը ես կկոչեի *Հարգանք միմյանց հանդեպ,* այնպիսի հարգանք, որը համարում է իր կողակցին ամենաթանկ ընկերը երկրի վրա և ոչ թե սեփականություն կամ ստրուկ, որին պետք է ստիպել կամ հարկադրել հարմարվելու իր եսասիրական քմահաճույքներին:

«Փերլ Բաքը նկատել է. «Սերը չի կարելի պարտադրել...Այն գալիս է երկնքից, առանց խնդրելու և առանց որոնելու»: (*The Treasure Chest,* p. 165.)

«Այս հարգանքը գալիս է հասկանալուց, որ մեզանից յուրաքանչյուրը Աստծո որդի կամ դուստր է, օժտված նրա աստվածային էության ինչ որ հատկանիշով, որ յուրաքանչյուրը անհատականություն է և կոչված է արտահայտելու և մշակելու անձնական տաղանդները և արժանի է ինքնազսպվածության, համբերատարության, ըմբռնման, քաղաքավարության, լուրջ խորհրդածության: Ճշմարիտ սերը այնքան էլ ռոմանտիկայի հարց չէ, որքան զուգընկերոջ բարօրության համար անկեղծ մտահոգություն» (in Conference Report, Apr. 1971, 81–82; կամ *Ensign,* June 1971, 71):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

Տես մեջբերումը 142 էջում:

Երեց Մարվին Ջ. Աշթոն

«Աշխարհը լի է մեզանից շատ-շատերով, ովքեր միտում ունեն արտահայտել իրենց սերը հայտարարությամբ կամ հռչակելով:

Ճշմարիտ սերը գործընթաց է: Ճշմարիտ սերը պահանջում է անհատական գործողություններ: Սերը պետք է շարունակական լինի, որպեսզի լինի իրական: Սերը ժամանակ է պահանջում: Խիստ հաճախ նպատակահարմարությունը, սիրահարվածությունը, մղումը, համոզվածությունը, կամ կիրքը սխալմամբ սեր են անվանում: Որքան սին, որքան դատարկ է մեր սերը, եթե այն վայրկենական զգացմունքի բռկումից այն կողմ չի անցնում կամ դրա մասին խոսքերով արտահայտվելը այլևս չի հարատևում ավելի, քան այն ժամանակը, որի ընթացքում այն խոսվում է...

Մենք պետք է կանոնավորապես և պատշաճ ընդմիջումներից հետո խոսենք և վերահավաստիացնենք մյուսներին մեր սիրո մասին և երկար ժամանակ է պահանջվում ապացուցելու դա մեր գործողություններով: Իսկական սերը իսկապես ժամանակ է պահանջում: Մեծ Հովիվը մտքում ուներ նույն խոհերը, երբ սովորեցրեց. «Եթե ինձ սիրում էք, իմ պատվիրանքները *պահեցէք*» (Հովհ. ԺԴ.15 շեղագիրն ավելացված է) և «Եթե սիրում եք ինձ, *արածեցրեք* իմ ոչխարները» (Հովհ. ԻԱ.16 շեղագիրն ավելացված է): Սերը գործեր է պահանջում, եթե այն պետք է շարունակական լինի: Սերը գործընթաց է: Սերը հռչակագիր չէ: Սերը հայտարարություն չէ: Սերը անցողիկ քմահաճույք չէ: Սերը նպատակահարմարություն չէ: Սերը հարմարավետություն

չէ: «Եթե ինձ սիրում էք, իմ պատվիրանքները պահեցեք» «Եթե սիրում եք ինձ, արածեցրեք իմ ոչխարները» Աստծո կողմից տրված ազդարարումներն են, որոնք պետք է մեզ հիշեցնեն, որ մենք կարող ենք լավագույն ձևով ցույց տալ մեր սերը *արածեցնելու* և *պահելու* գործընթացներով:

Աստծո սերը ժամանակ է պահանջում: Ընտանիքի սերը ժամանակ է պահանջում: Երկրի հանդեպ սերը ժամանակ է պահանջում: Հարևանի հանդեպ սերը ժամանակ է պահանջում: Զուգընկերոջ հանդեպ սերը ժամանակ է պահանջում: Սիրատածման ընթացքում սերը ժամանակ է պահանջում: Մեր անձի հանդեպ սերը ժամանակ է պահանջում» (in Conference Report, Oct. 1975, 160, 163; կամ *Ensign*, Nov. 1975, 108, 110):

«Նա, ով սիրում է, պատասխանատվություն է զգում: Ա Կորնթացիս թղթում Պողոսն ասում է, որ սերը չարը չի մտածում, իրենը չի փնտրում, երկայնամիտ է, համբերատար և բարի (տես Ա Կորնթ. ԺԳ.4–5): Եթե մենք նայենք երկու անձանց միջև սիրո վրա, ովքեր պատրաստվում են ամուսնանալ տաճարում, մենք կտեսնենք զոհաբերության և միմյանց լավագույն հետաքրքրություններին ծառայելու էլեմենտներ, ոչ թե կարճատես «ինձ» հետաքրքրությունը: Սիրատածման և ամուսնության ընթացքում ճշմարիտ սերն ու երջանկությունը հիմնված է ազնվության, ինքնահարգանքի, զոհաբերության, ուշադրության, սիրատածման, բարության և «մենք»-ը «ինձ»-ից վեր դնելու վրա» (in Conference Report, Apr. 1981, 30; կամ *Ensign*, May 1981, 23):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Կատարյալ սերը կատարելապես համբերատար է» (*All These Things Shall Give Thee Experience*, 69):

«Ի տարբերություն մեր սիրո, Հիսուսի սերը բաղկացած է ակտիվ խստությունից, ինչպես նաև շտապ խրախուսանքից: Նրա կատարյալ սերը յուրաքանչյուրի և բոլորի հանդեպ Նրան ազատություն է տալիս ընդունել մեզ ինչպիսին որ մենք կանք այժմ, քանի որ Նա կատարելապես գիտի այն հնարավորությունը, ինչ կարող ենք դառնալ» (*Even As I Am*, 18):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Սերը, ինչպես սահմանվել է Տիրոջ կողմից, բարձրացնում է, պաշտպանում, հարգում և հարստացնում ուրիշին: Այն մղում է մեկին զոհաբերություն անել մյուսի համար» (in Conference Report, Apr. 1991, 43; կամ *Ensign*, May 1991, 35):

Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն

«Շտապեք ասել ներողություն: Որքան էլ խոսքեր գտնելը դժվար լինի, անհապաղ ասեք. «Ներողություն եմ խնդրում և խնդրում եմ ներիր ինձ», չնայած դուք չեք այն մեկը, ով լիովին հանցավոր է: Ճշմարիտ սերը զարգանում է նրանց մոտ, ովքեր կամենում են պատրաստակամորեն ընդունել անձնական սխալներն ու վիրավորանքները» (in Conference Report, Apr. 1995, 86; կամ *Ensign*, May 1995, 65):

Որո՞նք են ճշմարիտ սիրո որոշ աղավաղումները

Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

«Մեղքի ժամին, մաքուր սերը դուրս է գալիս մի դռնից, մինչ կիրքը սողոսկում է մյուս դռնից: Քնքշանքը փոխարինվում է մարմնական ցանկությամբ և անվերահսկելի կրքով: Ընդունված է այն վարդապետությունը, որը դևն այնքան ձգտում է հաստատել, որ ապօրինի սեռական հարաբերություններն արդարացվում են» (*Teachings of Spencer W. Kimball*, 279):

«Եթե որևէ մեկը զգում է, որ փաղաքշանքը կամ այլ շեղումները սիրո արտահայտություն են, թող իրենց հարց տան. «Եթե այս գեղեցիկ մարմինը, որը ես չարաշահում եմ, հանկարծ տձև դառնա կամ հաշմանդամ, արդյոք իմ արձագանքը նույնը կլիներ: Եթե այս սիրունիկ դեմքը սպիներով պատվեր կրակի բոցերից, կամ այս մարմինը, որը ես օգտագործել եմ, հանկարծ կորցներ ճկունությունը կամ այս սուր միտքը, որը ես վայելել եմ, հանկարծ դառնար դատարկ, մի՞թե ես կլինեի այսպիսի կրակոտ սիրահար: Եթե զառամյալություն կամ նմանատիպ մի բան պատահեր իմ սիրելիին, ինչպիսին կլիներ իմ վերաբերմունքը: Այս հարցերի պատասխանները կարող են օգնել մարդուն հասկանալ, թե ինքն իսկապես սիրո՞ւմ է, թե դա միայն ֆիզիկական հրապուրանքն է, որը մղել է անպատշաճ ֆիզիկական մերձեցման: Ճշմարիտ սեր է արտահայտում այն երիտասարդը, որը պաշտպանում է իր սիրելիին ամեն տեսակի *չարաշահումից* կամ *բռնությունից*, վիրավորանքից և խայտառակությունից, թույլ չտալով նման վարք ոչ իր, ոչ էլ մյուսների կողմից »:

Բայց երիտասարդ տղամարդը, որն *օգտագործում է* իր ընկերացին որպես կենդանի խաղալիք անցողիկ բավարարվածություն ստանալու համար, դա *կիրք է*, և սիրուց հեռու մեկ այլ հատվածի ծայրում է գտնվում: Երիտասարդ կինը, որն իրեն պահում է հոգևոր, մտավոր և ֆիզիկական առումով գրավիչ, բայց ոչ խոսքով, ոչ զգեստով, ոչ շարժուձևով չի հուզում, ոչ էլ խթանում ֆիզիկական ռեակցիաներ և չի գայթակղում իր կողքի ընկերակցին, դա է ճշմարիտ սերը: Այն երիտասարդ կինը, որը շոշափում է և հուզում, շոյում և չարաշահում է, չի ճանաչում սեր: Դա կիրք է և շահագործում» (*Love versus Lust*, 18–19):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Մեծագույն խաբեությունը, որը մեր օրերում փաթաթում են մարդկային ցեղի վզին, այն գերշեշտադրումն է ֆիզիկական բավարարվածության վրա, որը ներկայացվում է որ-

պես ռոմանտիկ սեր: Դա պարզապես նույն մոլորության կրկնությունն է, որն ազդել է յուրաքանչյուր սերնդի վրա անցած դարերում: Երբ մենք իմանում ենք, որ ֆիզիկական բավարարվածությունը ոչ այնքան էական է և ինքնին սիրո ստիպողական ուժը չէ, մենք կատարում ենք մեծագույն հայտնագործություն: Եթե միայն ֆիզիկական բավարարվածությունն է, որ հետաքրքրում է ձեզ, դուք ընդհանրապես ընտրելու կարիք չունեք: Այս ուժը գրեթե բոլորն ունեն: Մենակ, առանց ուղեկցող սիրո, այս հարաբերությունը դառնում է ոչինչ, իրականում, ավելի քիչ և ավելի վատ, քան ոչինչը» (*Eternal Love,* 15):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Սատանան ձգտում է կեղծել սերը, իբրև այն կիրք է: Այն մղվում է անձնական ախորժակը հագեցնելու քաղցով: Նա, ով գործադրում է այս խաբեությունը, քիչ է մտահոգվում այն ցավի և կործանման մասին, որ պատճառում է մեկ ուրիշին: Չնայած հաճախ այն քողարկվում է կեղծավոր խոսքերով, դրա պատճառը ինքնաբավարարում ստանալն է: Դուք գիտեք, թե ինչպես մաքուր լինել և ապրել արդար կյանքով: Մենք վստահ ենք, որ դուք կանեք դա: Տերը ձեզ առատապես կօրհնի և կօգնի ձեզ մաքուր և անբիծ մնալ» (in Conference Report, Apr. 1991, 43–44; կամ *Ensign,* May 1991, 35):

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

«Կարելի՞ է առաջարկել, որ մարդկային մտերմությունը ամուսնացած զույգի համար՝ Աստծո կողմից կարգված այդ սրբազան ֆիզիկական միությունը, կապված է մի *խորհրդանիշի* հետ, որը պահանջում է հատուկ սրբություն: Տղամարդու և կնոջ միջև սիրո այդպիսի ակտը, անշուշտ կարգվել է՝ և մի խորհրդանիշ է նրանց սրտերի միության, նրանց հույսերի, նրանց կյանքերի, նրանց սիրո, նրանց ընտանիքի, նրանց ապագայի, նրանց ամեն ինչի ամբողջական միության: Դա մի խորհրդանիշ է, որը մենք փորձում ենք առաջարկել տաճարում մեկ բառով, ինչպես օրինակ՝ *կնիք:* Մի անգամ Ջոզեֆ Սմիթ Մարգարեն ասել է. որ մենք գուցե պարտավոր ենք այդ սուրբ կապը թարգմանել որպես «միացում», որպեսզի նրանք, ովքեր միավորվել են ամուսնությամբ և հավերժական ընտանիքներով, «միացվեն» մեկմեկու անբաժանելիորեն, հակառակորդի գայթակղություններին և մահկանացու կյանքի չարչարանքներին դիմանալու համար» (տես ՎԿՈՒ 128.18):

Բայց այսպիսի ամբողջական միացում, այդպիսի անխախտ պարտավորություն տղամարդու և կնոջ միջև կարող է գալ միայն այն մերձեցումից և հարատևությունից, որը թույլ է տալիս ամուսնական ուխտը, իր հանդիսավոր խոստումներով և երդումով, այն ամենով, ինչ իրենք ունեն՝ իրենց իսկ սրտերով և մտքերով, բոլոր իրենց օրերով և բոլոր իրենց երազանքներով...

Կարո՞ղ եք տեսնել բարոյական այն կեղծիքը, որը գալիս է *ձևացնելուց,* իբրև դուք մեկ եք, ձևացնելով, որ դուք հանդիսավոր խոստումներ եք տվել Աստծո առջև, կիսվելով *ֆիզիկական* խորհրդանիշներով և *ֆիզիկական* մտերմությամբ ձեր կեղծ միության, բայց հետո փախչելով, նահանջելով, խստորեն քննադատելով բոլոր մյուս այն տեսակետները, որոնք միտված էին լինելու լիակատար պարտավորություն, միայն գաղտագողի միանալու ևս մեկ գիշեր կամ դեռ ավելի վատ՝ գողունի միանալու (և դուք երևի նկատում եք, թե որքան ցինիկաբար եմ օգտագործում այդ բառը) մեկ այլ պարտնյորի հետ, որն այլևս կապված չէ մեզ հետ, այլևս մեզանից մեկ չէ, քան այն մեկը, որ վերջինն էր կամ այն մեկը, որը կգա հաջորդ շաբաթ կամ հաջորդ ամիս կամ հաջորդ տարի կամ էլ որևէ ժամանակ նախքան ամուսնական պարտավորեցնող կապանքները» (*Speaking Out on Moral Issues,* 158–59; տես նաև Conference Report, Oct. 1998, 100):

Ինչպե՞ս է մեր սերը Աստծո հանդեպ ազդում ուրիշներին սիրելու մեր ունակության վրա

Երեց Օրսոն Պրատ

«Որքան ավելի արդարակյաց են դառնում մարդիկ, այնքան ավելի ունակ են դառնում ուրիշներին սիրելու և նրանց երջանիկ դարձնելու համար: Ամբարիշտ մարդը կարող է ունենալ, բայց քիչ սեր իր կնոջ հանդեպ, մինչդեռ արդարակյաց մարդը, լինելով լցված Աստծո սիրով, անշուշտ ցույց կտա այս երկնային հատկանիշը իր ամեն մտքով և սրտի զգացմունքով, ամեն մի խոսքով և գործով: Սերը, ուրախությունը և անմեղությունը կճառագի նրա հենց դեմքից և կարտահայտվի յուրաքանչյուր հայացքի մեջ: Սա վստահություն կծնի իր ծոցի կնոջ մեջ և նա կսիրի նրան փոխադարձաբար, քանի որ սերը սեր է ծնում, երջանկությունը երջանկություն է բերում և երկնքում ծնված այս զգացմունքները կշարունակեն աճել ավելի ու ավելի, մինչև դրանք կատարյալ և փառավոր կդառնան հավերժական սիրո ողջ ամբողջականությամբ» (“Celestial Marriage,” *The Seer,* Oct. 1853, 156):

Երեց Ջոն Ա. Ուիդքսոու

«Կնոջ հանդեպ տղամարդու ճշմարիտ սերը միշտ ներառում է Աստծո սերը, որից գալիս են բոլոր լավ բաները» (*Evidences and Reconciliations,* 297):

Երեց Ռասսել Մ.Նելսոն

«Առանց Տիրոջ հանդեպ ուժեղ պարտավորվածության, մարդն ավելի հակված է կողակցի հանդեպ ցածր մակարդակի պարտավորվածության: Հավերժական ուխտերի հանդեպ թույլ պարտավորությունները տանում են հավերժական հետևանքների կորստի» (in Conference Report, Apr. 1997, 98; կամ *Ensign,* May 1997, 72):

Ինչպիսի՞ վարվելաձև է օգնում զարգացնել ճշմարիտ սիրո հարաբերություններ

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ

«Եթե տղամարդն ու կինը անկեղծորեն և հավատարմորեն հետևեն ավետարանի բոլոր արարողություններին և սկզբունքներին, ամուսնալուծության համար ոչ մի պատճառ չի կարող առաջանալ: Ամուսնական հարաբերության հետ կապված ուրախությունն ու երջանկությունը կդառնան ավելի քաղցր, և ամուսինն ու կինը ավելի ու ավելի կմերձենան, օրերն անցնելու հետ: Ոչ միայն ամուսինը կսիրի կնոջը և կինը՝ ամուսնուն, այլ նրանցից ծնված երեխաները կապրեն սիրո և ներդաշնակության մթնոլորտում: Յուրաքանչյուրի սերը մյուսների հանդեպ չի խաթարվի և առավել ևս բոլորի սերը մեր Հավերժական Հոր և նրա Որդի Հիսուս Քրիստոսի հանդեպ ավելի հաստատուն կարմատավորվի նրանց հոգիներում» (in Conference Report, Apr. 1965, 11):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

Տերն ասել է. «Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի» (ՎԱՌԻ 42.22):

«Այսպիսի սեր կարող է ցույց տրվել ձեր կանանց հանդեպ այնքան շատ ուղիներով: Առաջինը և ամենակարևորը, ոչ մի բան ձեր կյանքում, բացի Իրենից Աստծուց, չի կարող առաջնահերթություն լինել ձեր կնոջ հարցում՝ ոչ աշխատանքը, ոչ զվարճությունները, ոչ նախասիրությունները...

Ի՞նչ է նշանակում սիրել մեկին ձեր ողջ սրտով: Դա նշանակում է սիրել ձեր ողջ զգացմունքային ապրումներով և ձեր ողջ նվիրվածությամբ...Դուք չեք կարող նվաստացնել, քննադատել նրան, կռվի առիթ որոնել...

Ի՞նչ է նշանակում «հարիր նրան»: Դա նշանակում է մոտիկ մնալ նրան, լինել նրա հանդեպ անձնվեր ու հավատարիմ, հաղորդակցվել նրա հետ և արտահայտել ձեր սերը նրա հանդեպ:

«Սիրել նշանակում է լինել նրբազգաց նրա զգացմունքների և կարիքների հանդեպ...

Ամուսիններ, ընդունեք ձեր կնոջ խելամտությունը և ձեզ խորհուրդ տալու նրա ունակությունը...

Նրան հնարավորություն տվեք աճել խելամտությամբ, զգացմունքներով, և հասարակական հարցերում և նաև հոգևորով:

Եղբայրներ, հիշեք սերը կարելի է աճեցնել և սնուցել փոքրիկ նվերներով: Հատուկ առիթներով ծաղիկները հրաշալի են, բայց նույնպիսի ազդեցություն ունի ձեր պատրաստակամությունը օգնել լվանալ ամանները, փոխել տակդիրները, գիշերը վեր կենալ լացող երեխային հանգստացնելու համար և թողնելով հեռուստացույցը կամ թերթերը օգնել ճաշ պատրաստել: Դրանք լուռ ձևեր են մեր գործողություններով ասելու. «Ես սիրում եմ քեզ»: Այդպիսի փոքրիկ ջանքերը բերում են հարուստ շահութաբաժիններ» (in Conference Report, Oct. 1987, 61–62; կամ *Ensign*, Nov. 1987, 50):

Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

«Եթե երկու մարդիկ Տիրոջն ավելի շատ են սիրում, քան իրենց իսկ կյանքը, իսկ հետո սիրում մեկմեկու ավելի, քան իրենց իսկ կյանքը՝ լիակատար ներդաշնակությամբ ավետարանի ծրագրով որպես իրենց հիմնական նախագիծ միասին աշխատելով, նրանք անշուշտ պիտի ունենան այս մեծ երջանկությունը: Երբ ամուսինն ու կինը հաճախ են միասին գնում սուրբ տաճար, ծնկի իջնում միասին աղոթքով իրենց տանը իրենց ընտանիքի հետ, միասին ձեռք-ձեռքի տված գնում իրենց կրոնական ժողովներին, իրենց կյանքը լիովին մաքուր պահում, մտավոր և ֆիզիկական առումով, այնպես որ նրանց ողջ մտքերն ու ցանկությունները և սերը ամբողջովին կենտրոնացած են լինում մեկ էակի՝ իրենց զուգընկերոջ մեջ, և երկուսով աշխատում են Աստծո թագավորության կառուցման համար, ապա երջանկությունը իր գագաթնակետում է» (“Oneness in Marriage,” *Ensign*, Mar. 1977, 5):

«ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԵՍ ՍԻՐՈՒՄ ՔԵԶ»

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Տասներկու Առաքյալների Քվորումից

Բրիգամ Յանգի Համալսարան 1999–2000 ելույթներ, 158–62

Ուզում եմ խոսել ձեզ հետ այս առավոտ Քրիստոսանման սիրո մասին, և թե ինչ կարող է և պետք է այն նշանակի ձեր ընկերության, ձեր ժամադրության, լուրջ սիրատածման և ի վերջո ձեր ամուսնության համար:

Ես այս նյութին անդրադառնում եմ լիովին լավ հասկանալով, որ ինչպես նոր նշանված մի երիտասարդ կին ասաց ինձ անցած ամիս. «Իհարկե, ամենուրեք մեծ քանակությամբ խորհուրդներ են տրվում»: Ես անշուշտ չեմ կամենում ավելացնել անհարկի կրկնվող ևս մեկ խորհուրդ ռոմանտիկ սիրո վերաբերյալ, բայց հավատում եմ, որ միայն Եկեղեցու ձեր անդամակցությունից հետո, երկրորդը «ամուսնության մեջ ձեր անդամակցությունը» ամենակարևոր հաղորդակցությունն է, որ դուք կունենաք ժամանակի և հավերժության մեջ, իսկ հավատարիմներին, այն ինչ չի գալիս ժամանակի ընթացքում *պիտի* գա հավերժության մեջ: Այսպիսով գուցե դուք բոլորդ ներեք ինձ, այո, ևս մեկ

խորհուրդ ձեզ առաջարկելու համար: Բայց կկամենայի, որ դա լիներ սուրբգրքյան խորհուրդ, ավետարանական խորհուրդ: Խորհուրդ, եթե կկամենայիք, որը կարևոր է կյանքի համար և սիրո համար, խորհուրդ, որը հավասարապես կիրառելի է ինչպես տղամարդու, այնպես էլ կնոջ համար: Այն ոչ մի կապ չունի ժամանակակից հասարակական կարծիքների կամ հանրահայտ տեսակետների հետ կամ խաղամոլների աճպարարության հետ, այդ ամենը կապված է ճշմարտության հետ:

Այսպիսով, կարելի՞ է, որ ես դնեմ ձեր ընկերությունը և ժամադրությունները և վերջապես ձեր ամուսնությունները սուրբգրքյան ենթատեքստում այս առավոտ և խոսեմ ձեզ հետ մի բանի մասին, որը ես կանվանեմ *ճշմարիտ* սեր:

Մորմոնի կողմից գթության նյութի վերաբերյալ մի հրաշալի երկար վերլուծությունից հետո, Մորոնիի յոթերորդ գլուխն ասում է մեզ, որ Քրիստոնեական արժանիքներից այս բարձրագույնը ավելի ճշգրտորեն անվանվում է «Քրիստոսի մաքուր սերը»:

«Բայց գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, և այն տևում է հավերժ. և ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, [նրա] *համար լավ կլինի:*

Ուստի, իմ սիրելի եղբայրներ, աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են, որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները [և դուստրերը], որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման, քանզի մենք պիտի տեսնենք նրան, ինչպես որ ինքն է, որ մենք կարողանանք ունենալ այդ հույսը, որ մենք կարողանանք մաքրվել, ճիշտ ինչպես նա է մաքուր» [Մորոնի 7.47–48]:

Ճշմարիտ գթությունը, բացարձակ մաքուր, Քրիստոսի կատարյալ սերը, իրականում հայտնի է եղել միայն մեկ անգամ այս աշխարհում, Քրիստոսի՝ կենդանի Աստծո, կենդանի Որդու իսկ տեսքով: Քրիստոսի սիրո մասին է, որ Մորմոնը որոշ տեղ է հատկացրել նկարագրելու մեզ և որը նաև Պողոս Առաքյալն է արել մի քանի տարի [նրանից] առաջ, գրելով Նոր Կտակարանի ժամանակներում Կորնթացիներին: Ինչպես ամեն բաներում Քրիստոսը միակն էր, որն ամեն ինչ հիանալի արեց, ամեն ինչ կատարյալ արեց, սիրեց այնպես, ինչպես բոլորս պետք է փորձենք սիրել: Բայց չնայած մենք թերանում ենք, այդ աստվածային չափանիշը այնտեղ է մեզ համար: Դա մի նպատակ է, որին մենք պետք է շարունակենք հասնել, շարունակենք ձգտել և իհարկե, մի նպատակ, որը պիտի շարունակենք գնահատել:

Եվ երբ մենք խոսում ենք այս մասին, կարելի՞ է հիշեցնել ձեզ, ինչպես Մորմոնը հստակորեն ուսուցանեց, որ այս սերը, այս կարողությունը, այս ընդունակությունը և փոխհատուցումը, որը մենք բոլորս այնքան ցանկանում ենք, պարգև է, տրված Աստծո կողմից: Այն «օժտվում է», սա Մորմոնի բառն է: Այն չի գալիս առանց ջանքի և այն չի գալիս առանց համբերության, բայց փրկության նման այն ի վերջո պարգև է Աստծուց՝ տրված «իր Որդու Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներին»: Կյանքի խնդիրների լուծումները միշտ ավետարանական լուծումներ են: Ոչ միայն *պատասխաններն* են գտնվում Քրիստոսում, այլ նաև զորությունը, պարգևը, օժտումը, այդ պատասխանները տալու և ստանալու հրաշքը: Միրո այս հարցում, ոչ մի վարդապետություն չի կարող ավելի քաջալերող լինել մեզ համար, քան սա:

Լուծումները կյանքի խնդիրներին միշտ ավետարանական լուծումներ են:

Ես որպես վերնագիր վերցրել եմ Տիկին Բրաունինգի սքանչելի տողը «Ինչպե՞ս եմ ես սիրում քեզ» (Elizabeth Barrett Browning, *Sonnets from the Portuguese* [1850] no. 43.): Ես չեմ պատրաստվում «հաշվել ձևերը» այս առավոտ, բայց ինձ զարմացնում է մակբայի նրա ընտրությունը՝ ոչ թե *երբ* ես սիրում եմ քեզ ոչ էլ *որտեղ* ես սիրում եմ քեզ, *ինչու* եմ ես սիրում քեզ, ոչ էլ ինչու դու ինձ չես սիրում, բայց ավելի շուտ *ինչպես*: *Ինչպես* եմ ես ցույց տալիս դա, *ինչպես* եմ ես բացահայտում իմ ճշմարիտ սերը քո հանդեպ: Տիկին Բրաունինգը ճիշտ էր: Իսկական սերը լավագույնս ցույց է տրվում «ինչպես»-ում և Մորմոնն ու Պողոսը մեզ ամենաշատն են օգնում ինչպես-ով:

Աստվածային սիրո առաջին էլեմենտը՝ մաքուր սերը, որը ուսուցանվել է այս երկու մարգարեների կողմից, նրա բարությունն է, նրա անձնազոհ հատկանիշը, նրա եսի և սնապարծության բացակայությունը և եսակենտրոնության ոչնչացումը: «Եվ գթությունը երկայնամիտ է և բարի, չի նախանձում, փքված չէ, իրենը չի փնտրում» (Մորոնի 7.45): Ես լսել եմ Նախագահ Հինքլիին հրապարակայնորեն և առանձին ուսուցանելիս, որը կարծում եմ բոլոր ղեկավարներն են ասել, որ խնդիրների մեծ մասը սիրո և ամուսնության մեջ վերջ ի վերջո սկսվում են եսամոլությունից: Ընդգծելով իդեալական սերը, որում Քրիստոսը՝ ամենաանեսասեր մարդը, որ երբևէ ապրել է, մեծագույն օրինակն է, զարմանալի չէ, որ այս սուրբգրքյան մեկնաբանությունը սկսվում է այստեղ:

Ընկերոջ կամ լուրջ ժամադրության մեջ կան շատ հատկանիշներ, որոնք դուք կորոնեք, էլ չեմ ասում կողակցի և հավերժական ընկերակցի մասին, բայց անշուշտ ամենաառաջինների և ամենահիմնական հատկանիշների շարքում կլինեն ուրիշների հանդեպ հոգատարությունն ու նրբազգացությունը, եսակենտրոնության նվազագույնը, որը թույլ է տալիս կարեկցանքին և սիրալիրությանն ակնհայտ դառնալ: «Լավ մարդու կյանքի լավագույն մասը... Նրա բարությունն է», ասել է Պր. Ուիլյամ Ուորդսուորթը (*Lines Composed a Few Miles Above Tintern Abbey* [1798], lines 33–35): Մեզ բոլորիս մեջ կան շատ թերություններ, որոնք մենք հուսով ենք մեր սիրած էակները չեն նկատի:

Կարծում եմ, մեզանից ոչ մեկն այնքան գեղեցիկ չէ կամ այնքան սիրունիկ, որքան ինքը կկամենար լինել, կամ այնքան փայլուն դպրոցում կամ այնքան սրամիտ խոսքում կամ այնքան հարուստ, որքան կկամենայինք լինել, բայց զանազան տաղանդների և հարստությունների մի աշխարհում, որոնց մենք միշտ չէ որ *կարող ենք* տնօրինել, կարծում եմ նույնիսկ ավելի գրավիչ են դարձնում այն հատկանիշները, որոնք մենք *կարող ենք* տնօրինել, այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են լրջամտությունը, համբերությունը, բարի խոսքը, և իսկական հրճվանքը ուրիշի հաջողության համար: Սրանք մեզ համար չարժեն *ոչինչ*, բայց դրանք կարող են նշանակել *ամեն ինչ* նրանց համար, ովքեր ստանում են դրանք:

Սիրում եմ Մորմոնի և Պողոսի գրելաոճը, որն ասում է, որ նա ով սիրում է «փքված չէ»: Փքված: Միթե՞ իսկապես պատկերավոր չէ: Երբևէ չե՞ք եղել որևէ մեկի հետ, որն այնքան ինքնագոհ է, այնքան իրենով հիացած, որ նման է Փիլսբերիի Հաստլիկին: Ֆրեդ Ալլանն ասել է մի անգամ, որ այդպիսի մի մարդու էր տեսել, որը քայլում էր Սիրահարների Արահետով իր իսկ ձեռքից բռնած: Ճշմարիտ սերը ծաղկում է, երբ մենք ավելի շատ հոգ ենք տանում մեկ այլ մարդու մասին, քան մեր մասին: Դա Քրիստոսի քավության մեծ օրինակն է մեզ համար և դա պետք է ավելի ակնհայտ դառնա մեր ցույց տված բարության, մեր ցուցաբերած հարգանքի և անեսասիրության ու սիրալիրության միջոցով, որոնք մենք դրսևորում ենք մեր անձնական հարաբերություններում:

Սերը փխրուն բան է և կյանքի որոշ էլեմենտներ կարող են փորձել կոտրել այն: Մեծ վնաս կարող է հասցվել, եթե մենք քնքույշ ձեռքերում չենք՝ հոգատար ձեռքերում: Մեզ ամբողջապես մեկ ուրիշին հանձնելը, ինչպես մենք ենք անում ամուսնության մեջ, ամենավստահող քայլն է, որը մենք կատարում ենք որևէ մարդկային հարաբերության մեջ: Դա իսկական հավատքի գործ է, հավատք, որը մենք բոլորս պետք է պատրաստ լինենք գործադրել: Եթե մ դա ճիշտ անենք, մենք ավարտին կհասնենք կիսվելով ամեն ինչով՝ մեր բոլոր հույսերով, մեր բոլոր երկյուղներով, մեր բոլոր երազանքներով, մեր բոլոր թուլություններով և մեր բոլոր ուրախություններով մեկ այլ մարդու հետ:

Ոչ մի լուրջ սիրատածում կամ նշանադրություն կամ էլ ամուսնություն ոչ մի արժեք չունեն, եթե մենք լիարժեք չենք ներդնում դրա մեջ *այն ամենը*, ինչ մենք ունենք, և այդ անելով ամբողջովին վստահում մեզ նրան, ում մենք սիրում ենք: Դուք չեք կարող հաջողության հասնել սիրո մեջ, եթե դուք պահեք ձեր մեկ ոտքը դրսում՝ ափին, ապահովության համար: Այդ ձեռնարկման հենց էությունն է պահանջում, որ դուք որքան կարող եք ամուր բռնեք միմյանց և ցատկեք լողավազանի մեջ միասին: Այդ ոգով և Մորմոնի մաքուր սիրո աղերսի ոգով, ես ուզում եմ, որ դուք պատկերացնեք ձեր կողակցի ապագայի խոցելիությունը և նրբությունը, քանի որ այն դրված է ձեր ձեռքում՝ ապահով այն պահելու համար՝ տղամարդ թե կին, դա վերաբերվում է երկուսին էլ:

Քույր Հոլլանդն ու ես ամուսնացած ենք մոտավորապես 37 տարի, մոտ վեց տարի պակաս, որ *երկու անգամ* ավելի երկար դառնա, քան առանց միմյանց ապրած տարիները: Ես գուցե ամեն ինչ չգիտեմ նրա մասին, բայց ես գիտեմ 37 տարիների չափով, և նա էլ այդքանով գիտի իմ մասին: Ես գիտեմ նրա համակրանքներն ու հակակրանքները: Ես գիտեմ նրա ճաշակը և հետաքրքրությունները, հույսերն ու երազանքները, իսկ նա գիտի իմ մասին: Երբ մեր սերն աճեց և մեր հարաբերությունը հասունացավ, մենք հետզհետե ավելի ազատ դարձանք միմյանց հետ բոլոր այդ բաներում:

Արդյունքում ես շատ ավելի հստակորեն գիտեմ այժմ, թե ինչպես օգնեմ նրան, և եթե ինձ թույլ տամ, ես ճշգրիտ գիտեմ, թե ինչը նրան ցավ կպատճառի: Մեր սիրո ազնվությամբ, սեր, որը չի կարող Քրիստոսանման լինել առանց այսպիսի ամբողջական նվիրվածության, անշուշտ Աստված ինձ պատասխանատվության կկանչի, որևէ ցավի համար, որ ես կպատճառեմ նրան դիտավորյալ շահագործելով կամ ցավ պատճառելով նրան, երբ նա այնքան վստահել է ինձ, շատ վաղուց դեն նետած լինելով ինքնապաշտպանությունը, որպեսզի կարողանանք ինչպես սուրբ գրություններն են ասում լինել «մեկ մարմին» (Ծննդոց Բ.24): Վնասել կամ խանգարել նրան *որևէ ձևով* ի օգուտ ինձ կամ սնապարծության համար կամ էլ նրա վրա զգացմունքային տիրապետության հասնելու համար, ինձ տվյալ դեպքում կորակազրկի նրա ամուսինը լինելուց: Իսկապես այն պետք է դատապարտի իմ թշվառ հոգին հավերժական բանտարկության այն մեծ և ընդարձակ շենքում, որը Լեքին ասում է նրանց բանտն է, ովքեր ապրում են «սին երևակայություններով» և «աշխարհի հպարտությամբ» (1 Նեփի 11.36, 12.18): Զարմանալի չէ, որ այդ շենքը դաշտի հակադիր ծայրում է կենաց ծառի, որը ներկայացնում է Աստծո սերը: Բոլոր այն բաներով հանդերձ, որոնցում գտնվում էր Քրիստոսը, Նա *երբեք* չնախանձեց կամ չփքվեց, երբեք չտարվեց Իր սեփական կարիքներով: Նա ոչ մի անգամ, *երբևէ* չորոնեց Իր իսկ արտոնությունը ուրիշ ինչ որ մեկի հաշվին: Նա հրճվում էր ուրիշների երջանկությամբ, այն երջանկությամբ, որը նա կարողացել էր բերել նրանց: Նա միշտ բարի էր:

Ժամադրվելիս և սիրատածման ժամանակ ես չէի ցանկանա, որ դուք հինգ րոպե իսկ անցկացնեիք մեկի հետ, որը ձեզ նվաստացնում է, որն անընդհատ քննադատաբար է տրամադրված ձեր հանդեպ, որը դաժան է ձեր հաշվին և նույնիսկ կարող է կոչել դա հումոր: Կյանքը բավականին դժվար է, եթե ձեր կողքին չէ այն մարդը, որը պետք է սիրի ձեզ, հեռացնի ձեր ինքնարժեքի, արժանապատվության զգացման, ձեր վստահության և ձեր ուրախության վրա ուղղված հարձակումը:

Առաջին Նախագահության անդամները սովորեցրել են, որ «ֆիզիկական կամ մտավոր որևէ վիրավորանք ցանկացած

կնոջ հանդեպ պատշաճ չէ որևէ քահանայություն կրողի» և որ ոչ մի «մարդ, որն Աստծո քահանայությունն է կրում [չպետք է] վիրավորի իր կնոջը որևէ ձևով, [կամ] նվաստացնի կամ էլ վնասի կամ անտեղի շահագործի [որևէ] կնոջ», իսկ դա ներառում է ընկերներին, ժամադրվողին, սիրուհուն և հարսնացուին, էլ չեմ ասում կողակից կնոջը» (James E. Faust, "The Highest Place of Honor," *Ensign,* May 1988, 37, and Gordon B. Hinckley, "Reach Out in Love and Kindness," *Ensign,* November 1982, 77):

Եթե դուք գնում եք ուղղակի պիցցա ուտելու կամ թենիս խաղալու, գնացեք մեկի հետ, որը կապահովի անմեղ զվարճություն: Բայց եթե դուք լուրջ եք, կամ ծրագրում եք լուրջ լինել, խնդրում եմ գտեք մեկին, որը ձեր մեջ ի հայտ է բերում լավագույնը և չի նախանձում ձեր հաջողությանը: Գտեք մեկին, որը տառապում է, երբ դուք տառապում եք, և գտնում է իր երջանկությունը ձեր երջանկության մեջ:

Սիրո վերաբերյալ Մորոնի 7.45 հատվածի սուրբգրքյան քարոզի երկրորդ մասն ասում է, որ ճշմարիտ գթությունը, իսկական սերը «չի գրգռվում հեշտորեն, չարը չի մտածում և չի հրճվում անօրինությամբ»: Մտածեք, թե որքան շատ վիճաբանություններից հնարավոր կլիներ խուսափել, որքան վիրավորված զգացմունքներ կխնայվեին, որքան սառը հարաբերություններ և լուռ վարվելաձևեր կավարտվեին, և վատթարագույն սցենարի դեպքում, որքան բաժանումներից և ապահարզաններից կարելի կլիներ խուսափել, եթե մենք այդքան հեշտորեն չգրգռվեինք, եթե չարը չմտածեինք մեկս մյուսի մասին, և եթե մենք ոչ միայն չուրախանայինք անօրինությամբ, այլ չուրախանայինք նույնիսկ փոքր սխալներից:

Զգացմունքային պոռթկումները հաճելի չեն նույնիսկ երեխաների մոտ, դրանք արհամարհանքի են արժանի չափահասների մոտ, հատկապես այն չափահասների, ովքեր ենթադրվում է, որ պետք է սիրեն միմյանց: Մենք խիստ հեշտորեն ենք գրգռվում, մենք խիստ հակված ենք մտածելու, որ մեր զուգընկերը ի նկատի ուներ մեզ վիրավորել, ի նկատի ուներ մեզ չարիք պատճառել, այսպես ասած, և պաշտպանական կամ նախանձոտ պատասխանով մենք խիստ հաճախ ուրախանում ենք, երբ տեսնում ենք *նրանց* սխալ գործելիս և *նրանց* հանցավոր ենք ճանաչում: Եկեք ցույց տանք որոշ կարգապահություն սրանում: Գործեք ավելի հասուն ձևով: Եթե հարկավոր է կծեք ձեր լեզուն: «Երկայնամիտը զորավորիցը լաւ է, եւ իր ոգին զսպողը՝ քաղաք առնողիցը»: Առնվազն տանելի ամուսնության և հաջող ամուսնության միջև կարող է լինել այն պատրաստակամությունը, որ որոշ բաներ այդ դեպքում թույլ են տալիս առանց անդրադառնալու և առանց արձագանքելու անցնի:

Ես նշեցի Շեքսպիրին քիչ առաջ: Սիրո և ռոմանտիկայի մասին խոսակցության մեջ դուք հավանաբար կակնկալեք, որ հիշատակվի Ռոմեոյի և Ջուլիետի մասին: Բայց թույլ տվեք ինձ անդրադառնալ առավել ոչ առաքինի մի պատմության: Ռոմեոյի և Ջուլիետի դեպքում հետևանքը արդյունքում անմեղության կորուստն էր, ինչ որ մի տխուր, սրտաճմլիկ սխալ երկու ընտանիքների միջև, որոնք պետք է ավելի լավ իմանային: Բայց Օթելլոյի և Դեզդեմոնայի դեպքում վիշտն ու կործանումը հաշվարկված էր, ի սկզբանե այն նենգորեն առաջ էր մղվում: Շեքսպիրի բոլոր գրվածքների սրիկաներից և գուցե ողջ գրականության մեջ, չկա մեկը, որից այդքան շատ նողկանք զգայի, որքան Յագոյից: Նույնիսկ նրա անունն է չար թվում ինձ, կամ ըստ երևույթին այն դարձել է այդպիսին: Իսկ ո՞րն *է* նրա չարիքը և Օթելլոյի ողբերգությունը, գրեթե աններելի կասկածամտությունը: Դա Մորոնի 7-ի և Ա Կորնթացիս ԺԳ-ի ոտնահարումն է: Այլ բաների շարքում, նրանք որոնում էին չարիք, որտեղ այն գոյություն չուներ, նրանք ընդունում էին երևակայական անօրինությունը: Սրիկաներն այստեղ ուրախանում էին ոչ թե «ճշմարտությամբ»: Անմեղ Դեզդեմոնայի մասին Յագոն ասաց. «Ես նրա առաքինությունը մեղք կդարձնեմ»/Եվ նրա իսկ բարությունից ցանց կհյուսեմ/Որը կկործանի նրանց բոլորին» (Վիլյամ Շեքսպիր, Օթելլո, գործողություն 2, տեսարան 3, տողեր 366–68): Սերմանելով կասկած և դիվական զրպարտություն, խաղալով նախանձության և խաբեության վրա և վերջում արյունահեղ ցասման վրա, Յագոն դրդում է Օթելլոյին խլել Դեզդեմոնայի կյանքը, առաքինությունը դառնում է մեղք, բարությունից հյուսվում ճակատագրական ցանց:

Այժմ, շնորհակալություն երկնքին, այստեղ՝ Երջանկության Հովտում այս առավոտ, մենք չենք խոսում անհավատարմության մասին, իրական թե անիրական կամ սպանության, այլ համալսարանական կրթության ոգով, եկեք սովորենք ուսուցանված դասը: Մտածեք լավագույնը միմյանց մասին, հատկապես նրանց, ում մասին ասում եք, որ սիրում եք: Ենթադրեք բարին և կասկածեք չարին: Ձեզ քաջալերեք նրանում, ինչ Աբրահամ Լինկոլն անվանել է «մեր էության ավելի լավ հրեշտակները» (First Inaugural Address, 4 March 1861): Օթելլոն կարող էր փրկվել նույնիսկ վերջին պահին, երբ նա համբուրեց Դեզդեմոնային և նրա մաքրությունն այնքան ակնհայտ էր: «Այդ [համբույրը] գրեթե համոզում էր/Արդարությանը կոտրել իր սուրը», ասաց նա (գործողություն 5, տեսարան 2, տեղեր 16–17): Այսպիսով, նա կխուսափեր նրան սպանելուց, իսկ հետո իր ինքնասպանությունից, եթե նա կոտրեր այն, ինչը համարում էր արդարության սուրը հենց այդ պահին և այդտեղ, փոխարենը փոխաբերական իմաստով օգտագործեր այն նրա վրա: Այս ողբերգական Եղիսաբեթյան տխուր պատմությունը կարող էր ունենալ գեղեցիկ, երջանիկ ավարտ, եթե ուղղակի մեկ մարդ, որն ազդեցություն գործեց մյուսի վրա, չմտածեր չարիք, ուրախանար ոչ թե անօրինությամբ, այլ ճշմարտությամբ:

Երրորդը և վերջինը, մարգարեներն ասում են մեզ, որ ճշմարիտ սերը «ամեն բանի դիմանում է. ամեն բանի հավատում է, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է» (Ա Կորնթացիս ԺԳ.7): Մեկ անգամ ևս, սա ի վերջո Քրիստոսի սիրո նկարագրությունն է՝ Նա է մեծագույն օրինակը նրա, ով դիմացավ և հավատաց և հուսաց ու համբերեց: Մեզ կոչ են անում լավագույնս անել նույնը մեր սիրատածման և մեր ամուսնության ընթացքում: Դիմացեք և ուժեղ եղեք: Եղեք հույսով լցված և հավատացող: Կյանքում որոշ բաների վրա մենք քիչ վերահսկողություն ունենք կամ ընհանրապես չունենք: Դրանց պետք է դիմանալ: Սիրո և ամուսնության մեջ որոշ հիասթափություններ պետք է հաղթահարել: Կյանքում ոչ ոք նման բաներ չի ցանկանում, բայց դրանք երբեմն պատահում են: Եվ երբ դրանք պատահում են, մենք պետք է տանենք դրանք, մենք պետք է հավատանք, մենք պետք է հույս ունենանք, որ այդ ցավերն ու դժվարությունները կունենան ավարտ, մենք պետք է համբերենք մինչև որ վերջում ամեն ինչ կարգի գա:

Ճշմարիտ սիրո մեծագույն նպատակներից մեկը նման պահերին միմյանց օգնելն է: Ոչ ոք չպետք է միայնակ դիմակայի նման փորձությունների: Մենք կարող ենք համբերել գրեթե ամեն ինչի, եթե մենք մեր կողքին ունենանք մեկին, որն անկեղծորեն սիրում է մեզ, որը հեշտացնում է ծանրությունը և թեթևացնում է բեռը: Սրա հետ կապված մեր ԲՅՀ-ի ֆակուլտետի մի ընկեր՝ Պրոֆեսոր Բրենթ Բարլոուն պատմեց մեզ մի քանի տարի առաջ Փլիմսոլի նշանների մասին:

Սամուել Փլիմսոլը, երբ պատանի էր Անգլիայում, սիրում էր նայել ինչպես են նավերը բեռնում և բեռնաթափում: Նա շուտով նկատեց, որ անկախ բեռան համար մատչելի տարածքից, յուրաքանչյուր նավ ուներ իր առավելագույն տարողունակությունը: Եթե նավը գերազանցում էր իր սահմանը, այն հավանական է սուզվեր ծովում: 1868 թվականին Փլիմսոլը մտավ Պառլամենտ և անցկացրեց առևտրական նավերի վերաբերյալ մի ակտ, որը մյուս բաների շարքում, կոչ արեց հաշվարկներ անել, թե որքան կարող էր նավը տանել: Այդ պատճառով Անգլիայում յուրաքանչյուր նավի իրանին սկսեցին գծեր քաշել: Երբ բեռը բարձվում էր բեռնատար նավն ավելի ու ավելի խորն էր սուզվում ջրի մեջ: Երբ ջրի մակարդակը նավի կողքին հասնում էր Փլիմսոլի նշանին, նավը համարվում էր ողջ տարողունակությամբ բեռնված, անկախ նրանից, թե նավի վրա որքան ազատ տարածություն էր մնում: Դրա հետևանքով ծովում բրիտանացիների մահվան տոկոսը մեծապես կրճատվեց:

Նավերի նման, իրենց կյանքում մարդիկ տարբեր տարողունակություն ունեն տարբեր ժամանակներում և նույնիսկ տարբեր օրերում: Մեր հարաբերություններում մենք պետք է հաստատենք մեր սեփական Փլիմսոլի նշանները և օգնենք որոշել դրանք մեր սիրելիների կյանքում: Միասին մենք պետք է հաշվարկենք բեռի մակարդակը և օգնենք դեն գցել կամ առնվազն հարմարեցնել որոշ բեռներ, եթե տեսնում ենք մեր սիրելին սուզվում է: Ապա, երբ տեսնում ենք, որ սիրո նավը հաստատուն է դառնում, մենք կարող ենք գնահատել երկարատև ժամանակի համար ինչը շարունակել, ինչը կարելի է հետաձգել մինչև մեկ այլ ժամանակ և ինչը կարելի է մշտապես հետաձգել: Ընկերները, սիրահարները և կողակիցները պետք է կարողանան չափել միմյանց լարվածությունը և տեսնել կյանքի մակընթացությունները ու տեղատվությունները: Մենք պարտավոր ենք միմյանց հայտարարել որոշ սահմաններ, իսկ հետո օգնել նավից դուրս նետել բեռի որոշ մասեր, եթե վտանգված են սիրո հարաբերության էմոցիոնալ առողջությունը և ուժը: Հիշեք, մաքուր սերը «ամեն բանի դիմանում է. ամեն բանի հավատում է, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է» և օգնում է սիրելի մարդկանց նույնկերպ վարվել:

Թույլ տվեք եզրափակել: Մորմոնի և Պողոսի վերջին վկայություններում նրանք հայտարարում են, որ «գթությունը [մաքուր սերը] երբեք չի խափանվում» (Մորոնի 7.46, Ա Կորնթացիս ԺԳ.8): Դա այդպես է չնայած բոլոր տեսակի խոչընդոտներին: Այն դիմանում է արևին ու ստվերին, ամենախավար վշտին և նաև լույսին: Այն *երբեք* չի խափանվի: Ինչպես Քրիստոսը սիրեց մեզ և այդպես էլ Նա հույս ունի մենք կսիրենք միմյանց: Բոլոր իր աշակերտներին բոլոր ժամանակներում ուղղված մի վերջին կարգադրության ժամանակ, նա ասաց. «Նոր պատվիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք, *ինչպէս ես ձեզ սիրեցի*» (Հովհ. ԺԳ.34, շեշտադրումն ավելացված է): Իհարկե, այդպիսի Քրիստոսանման մնայուն սիրո դիմացկուն ուժ սիրավեպում և ամուսնության մեջ պահանջում է ավելին, քան մեզանից ցանկացած մարդ իրականում ունի: Դա պահանջում է ինչ որ ավելի մի բան՝, օժտում երկնքից: Հիշեք Մորմոնի խոստումը, որ այդպիսի սերը՝ սեր, որին մենք բոլորս ենք տենչում և կառչում, «շնորհվում է» «Քրիստոսի ճշմարիտ հետևորդներին»: Դուք ընդունակություն, ապահովություն և անվտանգություն եք ցանկանում ժամադրվելիս և ձեր սիրավեպում, ամուսնական կյանքում և հավերժության մեջ: Եղեք Հիսուսի ճշմարիտ հետևորդ: Եղեք խոսքով և գործով անկեղծ, նվիրված Վերջին Օրերի Սուրբ: Հավատացեք, որ ձեր հավատքը *ամեն ինչով* կապված է ձեր սիրո հետ, որովհետև դա այդպես է: Դուք առանձնացնում եք ժամադրությունը անդամակցությունից ձեր ռիսկով: Կամ ձևակերպելով դա ավելի լավատեսորեն, Հիսուս Քրիստոսը՝ աշխարհի լույսը միակ ճրագն է, որով դուք կարող եք բարեհաջող տեսնել սիրո և երջանկության ճանապարհը ձեր *և* ձեր սիրած մարդու համար: Ինչպե՞ս *պետք է* ես սիրեմ քեզ: Ինչպես Նա է սիրում, քանզի այդ դեպքում այն «երբեք չի խափանվում»: Այսպես եմ ես վկայում և արտահայտում իմ սերը ձեր հանդեպ և Նրա հանդեպ, Տեր Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն:

ՍԻՐՈ ԵՎ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Երեց Մարլին Ք. Ջենսեն

Յոթանասունի Քվորումից

Ensign, հոկտ. 1994, 46–51

Իմ կոչման հետ կապված ծառայության բազմաթիվ հնարավորություններից, կարծում եմ ոչ մեկը չի գերազանցում Տիրոջ տաճարներից որևէ մեկում կնքման ծիսակատարություն կատարելու արտոնությանը: Երբ էլ հայտնվում եմ գեղեցիկ հարդարված կնքման սենյակում, հանդիպելով առողջ և հուզված երիտասարդ զույգի, ովքեր պատրաստվում են կապել ամենասրբազան ուխտերից մեկը Աստծո հետ և միմյանց հետ, ես այնպիսի զգացում եմ ունենում, որ չեմ կարող ասել որևէ բան, որը նրանց կյանքում կկարողանար ճշգրիտ ներկայացնել այդ իրադարձության կարևորությունը:

Այդպիսի պահերին ես հաճախ եմ հիշում իմ իսկ հարսանիքի օրը մոտավորապես քսանվեց տարի առաջ և այն ուժեղ սիրո զգացումը, որ ես ունեի կնոջս հանդեպ: Ես հիշում եմ նաև ապագայի հետ կապված մեր բարձր ակնկալիքները: Քեթին և ես մի կատարելատիպ ունեինք մեր մտքում, որն անխուսափելորեն առանձնահատուկ չէր մեզ համար, մենք պատրաստվում էինք միասին սկսել մի ընկերակցություն, որն անզուգական կլիներ արևմտյան քաղաքակրթության սիրային պատմության մեջ:

Սակայն, չնայած մեր լավագույն մտադրություններին և ջանքերին, մեր կատարելատիպը սկսեց շուտով հակադրվել իրականության հետ մեր կարճ, ոչ բանկարժեք մեղրամսից հետո: Ես չեմ կարող խոսել Քեթիի փոխարեն, բայց շուտով ես սկսեցի զգալ հիասթափություն, մի զգացում, որ ամուսնության մեջ կար ինչ որ ավելի մի բան, քան հնարավոր էր թվում իրականացնել:

Մեր ամուսնության այդ վաղ օրերից մի փոքրիկ օրինակ կներկայացնի մեր առջև ծառացած մարտահրավերները: Մենք ապրում էինք Սոլթ Լեյք Սիթիում, որտեղ ես սովորում էի իրավաբանական համալսարանում, իսկ Քեթին դասավանդում էր առաջին դասարանում: Գտնվելով նոր քաղաքում լարվածության մեջ մեր համապատասխան ուսումնական հաստատություններում և միմյանց հետ, մենք դարձանք մի փոքր դյուրագրգիռ: Մի երեկո մոտավորապես ճաշի ժամին, մենք վիճեցինք, որն ինձ համոզեց, որ տանը սնվելու հույս կարող եմ չունենալ: Այսպիսով, ես թողեցի մեր համեստ բնակարանը և քայլեցի մեկ թաղամաս դեպի մոտակայքում գտնվող արագ սնունդ մատուցող ռեստորանը: Երբ այդ հաստատություն մտա հյուսիսային կողմի դռնով, ես նայեցի աջ և ի մեծ զարմանս ինձ տեսա Քեթիին հարավային կողմի դռնից մտնելիս: Մենք փոխանակեցինք զայրացած հայացքներ և առաջացանք դեպի հակադիր ուղղությամբ գտնվող դրամարկղները՝ գրանցելու մեր պատվերները: Մենք շարունակեցինք անտեսել միմյանց, երբ մենակ նստած էինք ռեստորանի հակադիր ծայրերում, ինքնամփոփ ուտելով մեր երեկոյան ճաշը: Մենք այնուհետև դուրս եկանք այնտեղով որտեղից մտել էինք և մեր առանձին ճանապարհներով տուն հասանք: Մենք վերջերս հիշեցինք այդ դեպքը և ծիծաղեցինք միասին, թե որքան երեխայական էինք մենք:

Ես այժմ հասկանում եմ, որ այսպիսի փոքրիկ գժտությունները սովորական բան են ամուսնությունների մեծ մասի վաղ շրջանում: Սակայն հավատում եմ, դրանք ներկայացնում են այն բազմաթիվ խոչընդոտները, որոնք հաճախ կարող են խանգարել, հավերժական ամուսնության մեջ գոյություն ունեցող վիթխարի ներուժի և երջանկության կայացմանը, ներուժ, որը շատ հաճախ մնում է չիրականացված:

Երբ Վերկանգնումը սկսվեց, Մարգարե Ջոզեֆ Սմիթը չէր ուսուցանում հավերժական ամուսնության վարդապետությունը մինչև Եկեղեցու կազմավորումից մի քանի տարի հետո: Երբ նա սկսեց անել դա, կատարում էր ընտրողաբար: Երեց Փարլի Փ. Փրաթը, որը քաղաքացիական ամուսնություն էր կնքել տասներեք տարի առաջ, հավերժական ամուսնության այդ տեսության մասին առաջինը լսեց Մարգարեից Ֆիլադելֆիայում, 1839 թվականին: Նրա արձագանքը ինչպես գրված է նրա կենսագրությունում կարող է դժվար հասկանալի լինել մեզանից նրանց համար, ովքեր մեծացել են սպասելով տաճարում ամուսնանալուն՝ ժամանակի և ողջ հավերժության համար: Այս տեսակետը լիովին նոր էր Երեց Փրաթի համար, այնպես որ նա ցնցված էր:

«Ես առաջինը [Ջոզեֆից] իմացա ընտանիքի հավերժական կազմակերպության գաղափարի և սեռերի հավերժական միության մասին՝ այն աներևակայելի սեր ներշնչող հարաբերության մասին, որը միմիայն բարձր բանականությամբ և սրբված ու սրտով մաքուրները գիտեն, թե ինչպես գնահատեն և որոնք երջանկություն կոչված ամեն արժանավոր բանի հենց հիմքում են գտնվում:

Մինչև այդ ես սովորել էի գնահատել ազգակցական կապերը և համակրանքը որպես միայն այս անցողիկ վիճակին վերաբերող, որպես մի բան, որը սիրտը պետք է ամբողջապես մոռանա, որպեսզի հարմարվի իր երկնային վիճակին:

Ջոզեֆ Սմիթն էր, որ սովորեցրեց ինձ, թե ինչպես գնահատեմ հոր և մոր, ամուսնու և կնոջ, եղբոր և քրոջ, որդու և դստեր հանդեպ սեր ոգեշնչող հարաբերությունները:

Նրանից էր, որ ես իմացա, որ իմ ծոցի կինը կարող է կապվել ինձ հետ ժամանակի և ողջ հավերժության համար, և որ մաքրագործված համակրանքն ու սերը, որը ոգեշնչվում է մեր մեջ միմյանց հանդեպ, բխում է աստվածային հավերժական սիրո աղբյուրից: Նրանից էր, որ իմացա, որ մենք պետք է մշակենք այս քնքշանքները և աճենք ու մեծանանք նույնում ողջ հավերժությունում, մինչ մեր անվերջ միության արդյունքնում կլինեն ժառանգներ այնքան բազմաթիվ, որքան երկնքի աստղերը կամ ծովափի ավազները...

Ես նախկինում էլ սիրել եմ, բայց չգիտեի, թե ինչու: Բայց այժմ ես սիրում եմ անաղարտորեն, բարձրացած, վեհացած զգացումով, որը բարձրացնում է հոգիս անցողիկ բաների այս ստոր ոլորտից և տարածում այն ինչպես օվկիանոս: Ես զգացի, որ Աստված իսկապես իմ երկնային Հայրն է, որ Հիսուսը իմ եղբայրն էր, և որ իմ ծոցի կինը անմահ, հավերժական ընկերակից է, բարի սպասավորող հրեշտակ, ինձ տրված որպես մխիթարություն, փառքի պսակ հավիտյանս հավիտենից: Այսինքն, այժմ ես կարող եմ սիրել հոգով և նաև հասկացողությամբ» (*Autobiography of Parley P. Pratt*, Salt Lake City: Deseret Book Co., 1979, pp. 297–98):

Վերջին Օրերի Սրբերի ողջ գրականության մեջ ես չգիտեմ որևէ ավելի գեղեցիկ կամ ավելի հզոր միտք, քան սա՝ կայացման և երջանկության ներուժի վերաբերյալ, երբ սկսում ենք ամուսնությունը միասին Տիրոջ ձևով: Այսպիսի ընկերակցության հնարավորությունը ի վերջո կգա բոլորին, ովքեր արժանի են ապրում դրան: Մտածեք «հոգով և նաև հասկացողությամբ» սիրել կարողանալու իմաստների մասին: Մտածեք այն գաղափարի ուժի մասին, որ աշխարհի բոլոր ժողովուրդներից, մենք՝ Վերջին Օրերի Սրբերը, գիտենք ամենաշատը իսկական ռոմանտիկ սիրո մասին և ունենք մեծագույն հնարավորությունը հասնելու իսկական երջանկության և հարատև ամուսնության: Մի՞թե հիշարժան օր չի լինի, երբ որպես ժողովուրդ մենք ամենաշատը հայտնի կլինենք ոչ միայն ուղղակի մեծ ընտանիքների, այլ մեր իսկապես բացառիկ ամուսնությունների շնորհիվ:

Որոնք են հավերժական ավետարանի սկզբունքները, որոնք թույլ են տալիս մեզ սիրատածել միմյանց և, ի վերջո, հաստատել ամուսնություններ, որոնք երջանիկ են, կայացած և հարատև: Ես կքննարկեմ մի քանի ճշմարտություններ, որոնք զգում եմ, որ ամենակենսականն են: Բոլոր դրանք սերտորեն կապված են Փրկչի, նրա ուսմունքների և ավետարանի ծրագրում Նրա խաղացած կենտրոնական դերի հետ: Փաստորեն, եթե կամենում ենք արժանի հավերժական ընկերակիցներ դառնալ, մենք կարող ենք նախ կենտրոնանալ դառնալու Վարդապետի անսասան աշակերտներ:

Զարգացնել սիրելու մեր կարողությունը

Քրիստոսի ուսմունքներն առաջարկում են, որ մենք պետք է սկսենք հավերժական ընկերակցի մեր որոնումը, ավելի շատ մտահոգվելով սեր տալու մեր ընդունակության, քան այն ստանալու մեր անհրաժեշտության մասին: Հովհաննեսը գրել է Փրկչի մասին. «Մենք սիրենք նորան, որովհետեւ առաջ նա սիրեց մեզ» (Ա Հովհ.Դ.19):

Իսկապես, դա կարող է լինել մեր սեր տալու ունակությունը, որը դարձնում է մեզ ամենասիրվածը: Որքան ավելի մեծ է մեր անձնական էությունը և ավելի խորը մեր մտավոր, զգացմունքային և հոգևոր պաշարները, ավելի մեծ կլինի ուրիշներին, հատկապես մեր զուգընկերոջը հոգ տանելու և սիրելու մեր կարողությունը: Առաջին Նախագահությունից Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին ուղղել է մի հարց, որըբացահայտնում է ուրիշների համար անկեղծորեն հոգ տանելու մեր ունակությունը. «Ինչպե՞ս կարող ենք տալ, եթե այնտեղ ոչինչ չկա»: Ուտելիքը սովածներին չի կարող գալ դատարկ դարակներից: Կարիքավորներին օգնելու համար փողը չի կարող գալ դատարկ դրամապանակից: Աջակցությունն ու հասկացողությունը չի կարող գալ անզգամ մարդուց: Ուսուցում չի կարող գալ անգրագետից: Եվ բոլորից ամենակարևորը հոգևոր առաջնորդություն չի կարող գալ հոգևոր առումով թույլ մարդուց» (*Ensign*, Nov. 1982, p. 93):

Շատ քիչ սեր կարող է գալ նրանից, ով խաղաղության մեջ չէ ինքն իր և Աստծո հետ: Ինչպես Ենովսը սովորեց, ոչ ոք չի կարող մտահոգվել որևէ մեկի բարօրությամբ և սեր տալ մեկ ուրիշին, մինչև նա չմտահոգվի իր իսկ հոգու համար: Այսպիսով, հավերժական ամուսնության համար մեր նախապատրաստությունը, պետք է ներառի ապաշխարելը, սովորելը, հավատք ձեռք բերելը և մեր ապահովությունը զարգացնելը, որը գալիս է մեր ներուժը որպես Երկնային Հոր զավակներ տեսնելուց: Միայն երբ մենք սիրենք Աստծուն բոլոր մյուսներից ավելի, ինչպես սովորեցրել է Փրկիչը (տես Մատթ. ԻԲ.34–40), մենք ընդունակ կլինենք մեր զուգընկերոջն առաջարկել մաքուր, քրիստոսանման սեր ողջ հավերժության համար:

Առաքինությունը սիրում է առաքինություն

Այս հատվածում նկարագրված է մեծ սիրո ընդունակ մարդ դառնալու մի շատ բնական և սքանչելի հետևանք. «Քանզի բանականությունը հարում է բանականությանը, իմաստությունը ստանում է իմաստություն, ճշմարտությունը փարվում է ճշմարտությանը, առաքինությունը սիրում է առաքինությանը, լույսը հարում է լույսին» (ՎԵՈՒ 88.40):

Եթե մենք հետապնդում ենք հավերժական ամուսնության նպատակը մաքրությամբ և ինչպես սրտով, այնպես էլ մտքով, ես հավատում եմ, որ մեծամասամբ մենք ի վերջո կպարգևատրվենք զուգընկերոջով, որն առնվազն հոգեպես հավասար է մեզ և որը կհարի բանականությանը և լույսին, ինչպես մենք ենք հարում, որը կստանա իմաստություն, ինչպես մենք ենք ստանում այն, որը կփարվի ճշմարտությանը, ինչպես մենք ենք փարվում նրան և կսիրի առաքինությունը,

ինչպես մենք ենք սիրում այն: Հավերժությունն անցկացնել մի զուգընկերոջ հետ, որը մեզ հետ կիսում է ամենակարևոր սկզբունքային արժեքներին որը կքննարկի դրանք, կապրի դրանցով և կմասնակցի դրանք երեխաներին ուսուցանելիս, ճշմարիտ ռոմանտիկ սիրո ամենահոգեպարար փորձառություններից է: Իմանալ, որ կլինի ինչ որ մեկը, որը քայլում է բարության և աճի զուգահեռ արահետով մեզ հետ և տենչում է նույն հավերժական արժեքներին և երջանկության, մեծ մխիթարություն է:

Վերջերս ես վկա եղա այս սկզբունքի մի հզոր օրինակի, երբ կնքեցի մի երիտասարդ զույգի Սոլթ Լեյքի Տաճարում: Երբ կնքման ծիսակատարությունը կատարեցի և զույգը փոխանակեց մատանիներ և գրկախառնություններ, ես խնդրեցի, որ նրանք կիսվեն միմյանց և Տիրոջ հանդեպ իրենց զգացումներով: Նորահարսը խոսեց առաջինը: Նրա համառոտ դիտարկումները արտահայտում էին և երախտագիտություն և զգացմունք, երբ նա պատմեց, թե ինչպես է շատ երիտասարդ տարիներից ի վեր ցանկացել իրեն առաքինի պահել և հույս է ունեցել գտնել մի զուգընկեր, որը կկիսեր իր արժեքները և արդար ձգտումները: Նա հաստատեց իր ամուսնու բարությունը վկայելով, որ նա այն մարդն էր, որի համար նա հույսեր էր փայփայելև նույնիսկ՝ ավելին:

Այնուհետև խոսեց երիտասարդ ամուսինը: Նա նույնպես արտասվելով կիսվեց, թե ինչպես տասնչորս տարեկան հասակում սկսել էր աղոթել Տիրոջը, որ իր ապագա կինը, ով էլ որ նա լիներ, պաշտպանված լիներ և իրեն առաքինի պահեր, մինչ պատրաստվում էր հավերժական ամուսնության: Նա նաև պատմեց, թե ինչպես նա տարիների ընթացքում կրկին ու կրկին պարտավորվել էր այդ նույն ուղուն հետևել: Ապա նա հայտնեց իր մեծ ուրախությունը իր աղոթքների այս կնոջը հանդիպելու համար, և նա նշեց, թե ինչպիսի մեծ հույսեր է փայփայել իսկապես բացառիկ ամուսնության համար:

Սա մի փոխհարաբերություն էր, որը մեր Երկնային Հայրը ցանկանում է բոլոր իր զավակների համար: Իր հավատարիմ զավակներից ոչ մեկը բաց չի թողնի հավերժական ամուսնության հնարավորությունը նրա հետ, ով հավասարապես պատրաստված է հավերժական կյանքի համար: Առաքինությունը սիրում է առաքինություն: Ճշմարտությունը փարվում է ճշմարտությանը:

Սանձել կրքերը

Կայացած ռոմանտիկ սիրո սերմերը ցանվում են սիրատածման ժամանակ: Այս ժամանակաընթացքում մենք պետք է ուշադիր լինենք և շնորհակալ ճշմարտության և հասկացողության մակարդակի համար, որն արտացոլված է իր որդի Սիբլոնին տրված Ալմայի հավիտենական խորհրդում. «Տես, որ դու սանձես բոլոր քո կրքերը, որ դու լցվես սիրով» (Ալմա 38.12):

Ձեզանից նրանք, ովքեր մեծացել են ձիերով, թամբերով և սանձերով շրջապատված, կզգան, որ Ալման չէր առաջարկում Սիբլոնին, որ նա արմատախիլ աներ իր կրքերը, բայց ավելի շուտ որ նա վերահսկեր կամ հունի մեջ պահեր դրանք՝ սիրով լցվելով արժանավոր նպատակի համար: Սիրատածման ընթացքում այս վերահսկողությունը նշանակում է հետաձգել ֆիզիկական հարաբերությունները մինչև դրանք կարողանան պատշաճորեն ծաղկել ամուսնության մեջ: Բայց զսպվածություն և չափավորություն անհրաժեշտ են նույնիսկ ամուսնության մեջ, քանի որ ավետարանը ուսուցանում է, որ «ամեն մի թագավորության տրված է օրենք և ամեն մի օրենքում կան նաև որոշակի սահմաններ և պայմաններ» (ՎԱՈՒ 88.38):

Ամուսնացած Վերջին Օրերի Սրբերը պետք է հիշեն՝ ամեն ինչ չէ, որ աշխարհը թողություն է տալիս կամ քաջալերում ռոմանտիկ սիրո արտահայտման համար, որը տեղ ունի հավերժական ամուսնության մեջ: Երեց Բոյդ Ք. Փաքերի խոսքերով «մեծագույն խաբեությունը, որը փաթաթվում է մարդկային ցեղի վզին մեր օրերում... ֆիզիկական բավարարվածության գերշեշտադրումն է, երբ այն կապվում է ռոմանտիկ սիրո հետ: Դա պարզապես կրկնողությունն է նույն մոլորության, որով ներգործել են յուրաքանչյուր սերնդի վրա անցած դարերում: Մենք կարևորագույն հայտնագործություն ենք կատարում, երբ սովորում ենք, որ ֆիզիկական բավարարվածությունը միայն միջադեպ է և ոչ թե ինքնին սիրո ազդեցիկ ուժ, » (*Eternal Love,* Salt Lake City: Deseret Book Co., 1973, p. 15):

> ***Շատ քիչ սերը կարող է գալ մեկից, ով խաղաղության մեջ չէ իր և Աստծո հետ:***

Երբ արդարակյաց զույգը աճում և հասունանում է իրենց սիրո մեջ, նրանք իմանում են, որ իրենց հարաբերությունների հոգևոր և ֆիզիկական չափորոշիչների նուրբ միաձուլումը ստեղծում է ամուր հիմք իրենց հավերժական միության համար:

Ամուսնությունն առաջնահերթություն է

Քանի որ վերականգված ավետարանը հայտնում է, որ հավերժական կյանքում մեր Երկնային Հոր հետ կապրենք ընտանեկան միավորներով, մենք խելամիտ կլինեինք, եթե բարձր առաջնահերթություն դնեինք այս կյանքում՝ նախապատրաստվելով և զարգացնելով պարգևատրող ամուսնական հարաբերություններ և դերեր, որպես արդյունավետ հայրեր և մայրեր: Եթե շատ թեթևամտորեն ենք մոտեցել ամուսնության վերաբերյալ մարգարեների խորհրդին, մեզ երևի անհրաժեշտ կլինի վերանայել մեր մտածելակերպը: Բոլոր մարգարեները վերջին տարիներին հզոր դրույթներ են առաջ քաշել հաստատելով, որ բոլոր նրանք, ովքեր հնարավորություն ունեն, պետք է

աշխատեն ձեռք բերել հավերժական ամուսնություն և զարգացնեն հավերժական ընտանեկան միավոր:

Այնուամենայնիվ, սատանան կձգտի ստիպել մեզ հակառակն անել և գայթակղիչ ձայները կխոսեն մեզ աշխարհիկ նվաճումների և ձեռքբերումների մասին, որոնք կարող են տանել մեզ դեպի վտանգավոր զարտուղի ճանապարհներ, որոնցից կարող ենք ետ դառնալ միայն մեծ ջանքերով: Փոքրիկ, աննշան թվացող ընտրությունները ճանապարհի ընթացքում կունենան մեծ հետևանքներ, որոնք կորոշեն մեր վերջնական ճակատագիրը:

Կինս և ես մեր ամուսնության վաղ շրջանում կատարեցինք մի կարևոր ընտրություն, երբ ես մաքառում էի իրավաբանական ֆակուլտետի առաջին կուրսում, իսկ նա գերծանրաբեռնված էր իր առաջին դասավանդման աշխատանքով: Մեր անձնական գործերով զբաղվելով և գալով մենք հազվադեպ էինք հանդիպում և մեր հարաբերություններն ակնհայտորեն տուժում էին:

Նույնիսկ կիրակիները ծանրաբեռնված էին թվում, երբ մենք փորձում էինք կատարել մեր եկեղեցական կոչումները և հասցնել դասերը և համալսարանական պարապմունքներին նախապատրաստվելը: Ի վերջո, մի օր մենք նստեցինք և որոշեցինք, որ եթե մեր ամուսնությունը մեր կյանքի շատ կարևոր մասն է, մենք ավելի լավ է սկսենք գործել դրան համաձայն: Մենք եկանք համաձայնության կիրակին լիովին պատվելու վերաբերյալ՝ ձեռնպահ մնալով ամեն աշխատանքից, ներառյալ մեր պարապմունքները, և մեզ նվիրելով ավելի ուժեղ ամուսնություն կառուցելուն: Մենք զգացինք մի անմիջական ալիք մեր զգացմունքներում միմյանց հանդեպ և ակնհայտ բարելավում մյուս բնագավառներում, ներառյալ իմ թվանշանների և Քեթիի դասավանդման մեջ: Քսանվեց տարի անց մենք դեռ դիմակայում ենք նմանատիպ ընտրությունների և վիճելի հարցերի: Հուսով եմ և աղոթում եմ, որ մենք լուծենք դրանք հօգուտ այն բաների, որոնք ամենաշատն են կարևոր:

Կատարելագործումը աստիճանական է

Փրկիչը ձեռք բերեց կատարելություն՝ անցնելով հետևյալ գործընթացով. «Եվ նա լիությունը չստացավ սկզբում, այլ շարունակեց շնորհից շնորհ, մինչև որ ստացավ լիությունը» (ՎԵՈՒ 93.13):

Ընդունելը, որ Փրկչի կատարելագործումը եկավ աստիճանաբար, սփոփիչ է երկու անկատար էակների համար, ովքեր փորձում են դարձնել իրենց ամուսնությունը կատարյալ: Իմ անձնական դեպքում ես վերջերս համարձակվեցի հարցնել կնոջս. «Ինչպիսի՞ն եմ ես այժմ»:

Ես քաջալերվեցի նրա պատասխանից. «Դե, կարծում եմ այժմ ավելի լավն ես, քան նախկինում էիր»:

Կարծում եմ, որ ձեզանից նրանք, ովքեր փնտրում են խոստումնալի կողակից ցանկալի հատկանիշների լիովին կատարելագործված ցուցակով, կարող են դատարկաձեռն մնալ: Այդ հատկանիշների մեծ մասը կլինի միայն սաղմնային վիճակում, երբ սիրատածում եք և կխլի կյանքի ժամանակի մեծ մասը դրանք կատարելագործելու համար:

Նվիրվածություն

Մեկ այլ ավետարանական սկզբունք, որը նշանակալիորեն նպաստում է հավերժական ամուսնության զարգացմանը, մեր զուգընկերոջը բացարձակորեն հավատարիմ լինելն է, ինչպես նկարագրվում է այս սուրբ գրությունում. (ՎԵՈՒ 42.22):

Սա ակնհայտորեն նշանակում է նաև. «Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի»: Երբ ամուսնանում ենք, ոչ ոք չգիտի, թե կյանքն ինչ կբերի մեզ՝ առողջական խնդիրներ, թե՞ ֆինանսական դժվարություններ կամ նույնիսկ օրինազանցություններ: Հավերժական ամուսնության մեջ միմյանց նվիրվելը անվերապահորեն լիովին անձնապես նվիրվելն է ողջ ճանապարհորդության համար:

Վերջերս ես այցելեցի մի այրի տղամարդու, երբ նա խիզախորեն կանգնած էր իր կնոջ դագաղի կողքին, շրջապատված մի քանի գեղեցկատես և ամրակազմ որդիներով: Այդ տղամարդն ու նրա կինը ամուսնացած էին եղել հիսուներեք տարի, որոնցից վերջին վեց տարիների ընթացքում, կինը լուրջ հիվանդացել էր երիկամային ծանր հիվանդությամբ: Նա տրամադրել էր 24 ժամյա խնամք, որը պահանջվում էր, մինչև որ իր իսկ առողջությունը ևս վտանգի էր ենթարկվել: Ես իմ հիացմունքն արտահայտեցի նրա հանդեպ և իր կնոջ հանդեպ նրա ցուցաբերած մեծ սիրո և խնամքի համար: Ես հարկադրված էի հարցնել. «Ինչպե՞ս արեցիք դա»:

Դա հեշտ էր, պատասխանեց նա, երբ հիշեցի, որ հիսուներեք տարի առաջ, ծնկի իջա տաճարի զոհասեղանի առջև և ուխտ կապեցի Տիրոջ և իմ հարսնացուի հետ: «Ես ուզում էի պահել դա»,- ասաց նա:

Հավերժական ամուսնության մեջ Աստծո և միմյանց միջև ուխտով սկսածը վերջացնելը, պարզապես շատ փոքր տեղ ունի: Երբ մարտահարավերները գալիս են և մեր անձնական թուլություններն ի հայտ են գալիս, դեղամիջոցն ապաշխարելն է, բարեփոխվելն ու ներողություն խնդրելը, ոչ թե բաժանվելն ու ամուսնալուծվելը: Երբ մենք ուխտեր ենք կապում Տիրոջ հետ և մեր հավերժական զուգընկերոջ հետ, մենք պետք է անենք այն ամենը, ինչ ի զորու ենք՝ պայմանները հարգելու համար:

Սիրառատ բարություն

Ավետարանական մի վերջնական ճշմարտություն, որը կնպաստի մեր հասկացողությանը և ուստի մեր ամուսնությունների որակին, կախված է նրանից, թե որքանով ենք-մենք որպես ամուսին և կին ներգրավում Փրկչին մեր

հարաբերություններում: Ինչպես ծրագրված է մեր Երկնային Հոր կողմից, ամուսնությունը բաղկացած է նախ Քրիստոսի հետ ուխտյալ հարաբերության մեջ մտնելուց, իսկ հետո միմյանց հետ:Նա և Նրա ուսմունքները պետք է լինեն մեր միասնականության կիզակետը: Երբ մենք ավելի ենք նմանվում Նրան և ավելի մոտենում Նրան, մենք բնականաբար դառնում ենք ավելի սիրառատ և ավելի ենք մոտենում միմյանց:

Ես անձնապես ձգացել եմ Քրիստոսի փափկեցնող օրինակը և ուսմունքներն իմ սեփական ամուսնության մեջ: Ես հստակ հիշում եմ, թե իմ ամուսնության վաղ տարիներին որքան հեշտ էր մեղադրել, դատապարտել ու հանցանք գտնել: Երեկոյան, երբ տուն էի վերադառնում այնքան շատ բան հասցնելով անել աշխատանքի վայրում, ես հաճախ էի զարմանում, թե ինչու Քեթին, որը խնամում էր մեր փոքրիկներին, հենց նոր էր պատրաստում երեկոյան ճաշը: Այնուհետև մի օր մի իմաստուն ուսուցիչ ինձ հետ կիսվեց Փրկչի մասին Նեփիի հուզիչ նկարագրությամբ:

«Եվ աշխարհը իր անօրինությունների պատճառով, կդատի նրան որպես ոչ պիտանի մի բանի, ուստի, նրանք կխարազանեն նրան, և նա կտանի դա. և նրանք կզարկեն նրան, և նա կտանի դա: Այո, նրանք կթքեն նրա վրա, և նա դա կտանի մարդկանց զավակների հանդեպ իր ողորմության և երկայնամտության պատճառով» (1Նեփի 19.9):

Կարծում եմ «սիրառատ բարությունը» հոմանիշ է գթության կամ Քրիստոսի մաքուր սիրո համար: Ես գիտեմ, որ դա բացարձակապես կարևոր բաղադրիչ է հավերժական ամուսնության մեջ, և որ ռոմանտիկ սերը չի կարող առանձնացվել դրանից կամ ծաղկել առանց դրա: Սիրառատ բարությունը ընդհանուր գիծ է բոլոր բացառիկ ամուսնություններում, որոնց հետ ես ծանոթ եմ, և այն գրեթե բոլոր ամուսնական խնդիրների դեղամիջոցն է:

Ես միայն սկսել եմ քննել իմ թեմայի մի քանի առանձնահատուկ կողմերը, և միայն ակնարկել եմ զոհաբերության, ներման, ազատ կամքի և երեխաների մասին, որոնցից բոլորը կենսական էլեմենտներ են հաջողակ հավերժական ամուսնության մեջ: Ես երբեք հույս չէի ունենա ճշգրտորեն ներկայացնել վարդապետությունները և ճշմարտությունները, որոնց հետևելու դեպքում հնարավոր կդառնա մեզ համար որպես ամուսիններ և կանայք «անցնել հրեշտակների և աստվածների մոտով, որոնք նշանակված են այնտեղ, դեպի իրենց վեհացումը և փառքը բոլոր բաներում, ինչպես որ կնքվել է նրանց գլխին, փառք, որը կլինի սերունդների լիությունը և շարունակությունը հավիտյանս հավիտենից» (ՎԿՈՒ 132.19):

Եթե հասկացողությամբ մենք ձգտենք սիրել, Հոգին կսովորեցնի մեզ «բոլոր բաները, որոնք [մենք] պետք է անենք» (2 Նեփի 32.5) հասնելու Տիրոջը գոհացնող հավերժական ամուսնությանը: Հոգու ազդեցության ներքո մեր համակրանքն ու սերը մեր հավերժական զուգընկերոջ հանդեպ կխորանա, և մենք կսկսենք զգալ երջանկություն և գոհունակություն ամուսնության մեջ, որն աշխարհը երբեք չի իմանա:

Անկախ նրանից, թե ինչպիսի նախադրյալներ կամ հատկանիշներ են ունեցել մեր նախնիների կամ ծնողների ամուսնությունները, մենք ժամանակի ընթացքում կարող ենք Տիրոջ օգնությամբ հասնել կատարյալին: Եթե մեր ժառանգականությունը ներառում է հոգեպես ուժեղ ընտանիք առողջ ամուսնություններով և սերտ փոխհարաբերություններով, մենք կկարողանանք ստեղծել և նույնիսկ բարելավել այդ հիմքի վրա դրվածը: Եթե մեր ժառանգականությունն այնքան էլ ուժեղ չէ, մենք կարող ենք որոշում կայացնել, որ մեր երեխաները կստանան ավելի հարուստ ժառանգություն:

Ամեն ինչից վեր ես հուսով եմ, որ մենք կխոստանանք՝ երբեք չ բավարարվել միջակ ամուսնությանբ: Վերջերս ընկերս պատմեց ինձ, որ իր փոքր երեխաներից մեկը հարցրել էր. «Ի՞նչ ես կարծում պապիկը երբևէ համբուրում է տատիկին»: Ես իհարկե հուսով եմ, որ կինս և ես բավականաչափ սիրում ենք միմյանց և ցույց ենք տալիս դա, որպեսզի մեր թոռները չհարցնեն նույնը: Մենք կարող ենք երբեք թույլ չտալ, որ մեր հարաբերությունները դառնան փոխադարձ հանդուրժողական կամ հարմարվողական»:

Հավերժական ամուսնությունները աստվածային ամուսնություններ են: *Հավերժական* տերմինը նույնքանով է նկարագրում ամուսնության հատկանիշը, որքանով նրա տևողությունը:

ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մեր ողջ ուսուցման վերջնական նպատակը ծնողներին և երեխաներին Տեր Հիսուս Քրիստոսի հավատքում միավորելն է, որ նրանք երջանիկ լինեն տանը, կնքված հավերժական ամուսնությամբ:

—Նախագահ Բոյդ Կ. Փաքեր

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Հավերժական աճ

Առաջին Նախագահություն՝ Հեբեր Ջ. Գրանտ, Անթոնի Վ. Իվինս, Չարլզ Վ. Նիբլի

«Մարդն Աստծո զավակն է, ձևավորված աստվածային պատկերով և օժտված աստվածային հատկանիշներով և ճիշտ ինչպես երկրային հոր և մոր մանուկը կարող է տղամարդ դառնալ իր ուրույն ժամանակին, նմանապես սելեստիալ ծնողների չզարգացած ժառանգը կարող է դարերի և միլիոնավոր տարիների փորձառությունների միջով անցնելով դառնալ Աստված» (in Clark, *Messages of the First Presidency*, 5:244):

Երեց Մարվին Ջ. Բալլարդ

«Ի՞նչ ի նկատի ունենք ասելով անվերջ կամ հավերժական աճ: Մենք ի նկատի ունենք, որ տղամարդկանց և կանանց արդարակեցության և հավատարմության միջոցով, ովքեր պահում են Աստծո պատվիրանները, նրանք առաջ կգան սելեստիալ մարմիններով, համապատասխանեցված և նախապատրաստված մտնելու իրենց մեծ, բարձր և հավերժական փառքը Աստծո սելեստիալ արքայությունում, և իրենց նախապատրաստության համաձայն նրանցից առաջ կգան հոգևոր զավակներ: Կարծում եմ դա այնքան դժվար չէ պատկերացնել: Ժառանգի էությունը որոշվում է այն նյութի բնույթով, որը հոսում է այդ էակի երակներով: Երբ արյուն է հոսում այդ էակի երակներով, ժառանգը կլինի այն, ինչ արյունն է արտադրում, որը շոշափելի միս և ոսկոր է, բայց երբ այն, ինչ հոսում է էակի երակներում հոգևոր նյութ է, նյութ, որն ավելի զտված և մաքուր և փառահեղ է, քան արյունը, այդ էակների ժառանգները կլինեն հոգևոր զավակներ: Դրանով ես ի նկատի ունեմ, որ նրանք կլինեն իրենց ծնողների պատկերով: Նրանք կունենան հոգևոր մարմին և կունենան իրենց մեջ միշտ գոյություն ունեցող հավերժական կամ աստվածային փայլը» (*Melvin J. Ballard—Crusader for Righteousness*, 211):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

«Մահկանացու մարդիկ, ովքեր հաղթահարում են բոլոր բաները և ձեռք են բերում բարձրագույն վեհացում, հավերժ կապրեն ընտանեկան միավորում և կունենան հոգևոր երեխաներ, այսպիսով դառնալով Հավերժական Հայրեր և Հավերժական Մայրեր (ՎԿՈՒ 132.19–32): Եկեղեցու պաշտոնական հայտարարությունները, որոնք լույս են տեսել Առաջին Նախագահության և Տասներկուսի Խորհրդի կողմից, նշում են. «Մինչև այժմ ինչպես հայտնի է դարձվել աստվածային հայտնության միջոցով հավերժական առաջընթացի աստիճանների և ձեռք բերման վերաբերյալ, մենք պետք է հասկանանք, որ *միայն հարություն առած և փառավորված էակները կարող են դառնալ հոգևոր ժառանգների ծնողներ*» (*Man: His Origin and Destiny*, p. 129)» (*Mormon Doctrine*, 517):

Ամուսնության նոր և հավերժական ուխտը

Նախագահ Բրիգամ Յանգ

«Մենք հասկանում ենք, որ պետք է դարձվենք թագավորներ և քահանաներ Աստծո համար, ուրեմն եթե ես դարձվեմ թագավոր և օրենսդիր իմ ընտանիքի համար, և եթե ես ունենամ շատ որդիներ, ես կդառնամ շատ հայրերի հայրը, քանի որ նրանք կունենան որդիներ և նրանց որդիները կունենան որդիներ, և այսպես սերնդից-սերունդ և այս ձևով ես գուցե դառնամ շատ հայրերի հայրը կամ շատ թագավորների թագավոր: Սա յուրաքանչյուր մարդու կհաստատի իշխան, թագավոր, տեր կամ ինչ որ Հայրը հարմար տեսնի շնորհել մեզ:

Այս ձևով մենք կարող ենք դառնալ թագավորների թագավոր, և տերերի տեր կամ հայրերի հայր կամ իշխանների իշխան, և սա է միակ ուղին, քանզի ուրիշ մարդ չի բարձրացնելու թագավորություն ձեզ համար» (in *Discourses of Brigham Young*, 195):

«Ամուսնական կապի նյութի վերաբերյալ ամեն ինչ չէ որ հասանելի է ինձ կամ այս երկրի վրա ապրող որևէ այլ մարդու: Այն առանց օրերի սկզբի կամ տարիների վերջի է, դա դժվար հարց է հասնելու համար: Մենք կարող ենք դրա հետ կապված որոշ բաներ պատմել, այն դնում է աշխարհների, հրեշտակների և Աստվածների համար հիմք՝ բանական էակների համար պսակվելու փառքով, անմահությամբ և հավերժական կյանքով: Փաստորեն, դա այն թելն է, որը գալիս է սկզբից մինչև Փրկության սուրբ Ավետարանի՝

Աստծո Որդու Ավետարանի վերջը, այն հավերժությունից հավերժություն է» (in *Discourses of Brigham Young,* 195):

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

«Բոլոր մեր սովորեցրած բաների բարձրագույն նպատակը ծնողներին և երեխաներին Տեր Հիսուս Քրիստոսի հավատքում միավորելն է, որպեսզի նրանք երջանիկ լինեն տանը, կնքվեն հավերժական ամուսնությամբ, կապված լինեն իրենց սերունդների հետ և հավաստիացած՝ մեր Երկնային Հոր ներկայության մեջ վեհացման համար» (in Conference Report, Apr. 1995, 8; կամ *Ensign,* May 1995, 8):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

«Եթե արդար մարդիկ ուժ ունենան ավետարանի և նրա սելեստիալ ամուսնության պսակով արարողության միջոցով դառնալ թագավորներ և քահանաներ կառավարելու վեհացման մեջ հավերժ, հետևաբար նրանց կողքի կինը (առանց որի նրանք չեն կարող ձեռք բերել վեհացում) կլինեն թագուհիներ և քահանայուհիներ (Հայտ. Ա.6, Ե.10): Վեհացումը գալիս է տղամարդու և կնոջ հավերժական միությունից: Նրանց մասին, ում ամուսնությունը հարատևում է հավերժության մեջ, Տերն ասում է. «Այն ժամանակ նրանք կլինեն աստվածներ» (ՎԱՈՒ 132.20), այսինքն նրանցից յուրաքանչյուրը՝ տղամարդը և կինը կլինեն աստված: Որպես այդպիսին նրանք կկառավարեն իրենց տիրապետությունների վրա հավիտյան» (*Mormon Doctrine,* 613):

«Ամուսնությունները, որոնք կատարվում են տաճարներում ժամանակի և հավերժության համար, Եղիայի կողմից վերկանգված կնքող բանալիների զորությամբ, կոչվում են *սելեստիալ ամուսնություններ*: Մասնակից կողմերը դառնում են ամուսինը և կինը այս մահկանացու կյանքում, և եթե իրենց ամուսնությունից հետո, նրանք պահեն քահանայության այս կարգի բոլոր իրենց կետերն ու պայմանները, նրանք շարունակում են որպես ամուսին և կին Աստծո սելեստիալ արքայությունում:

Եթե ընտանեկան միավորները շարունակվեն, ապա այդ փաստի ուժով ընտանիքի անդամները ձեռք են բերում հավերժական կյանք (վեհացում), Մեծագույնը Աստծո պարգևներից, քանզի համաձայն սահմանման վեհացումը բաղկացած է ընտանիքի միավորի շարունակությունից հավերժության մեջ: Նրանք, ովքեր այսպես ժառանգում են, Աստծո որդիներն ու դուստրերն են, նրա ընտանիքի անդամները, նրանք, ովքեր անտարակուսելի են դարձրել իրենց կոչումներն ու ընտրությունները: Նրանք համատեղ ժառանգորդներ են Քրիստոսի հետ այն ամենի, ինչ Հայրն ունի, և նրանք ստանում են Հոր լիությունն ու փառքը, դառնալով աստվածներ իրենց իսկ իրավունքով (ՎԱՈՒ 132; *Doctrines of Salvation,* vol. 2, pp. 58–99.)» (*Mormon Doctrine,* 117):

Նրանք, ովքեր չեն ամուսնանում

Նախագահ Լորենզո Սնոու

«Չկա Վերջին Օրերի Սուրբ, որը մահանա հավատարիմ կյանքով ապրելուց հետո, որը կկորցնի որևէ բան, որոշ բաներ ձախողվելով անել, երբ հնարավորություններ չեր տրվել իրեն: Այլ խոսքով, եթե երիտասարդ տղամարդը կամ կինը հնարավորություն չի ունեցել ամուսնանալու, բայց նրանք ապրել են հավատարիմ կյանքով մինչև իրենց մահը, նրանք կունենան իրենց բոլոր օրհնությունները, վեհացումը և փառքը, որը յուրաքանչյուր տղամարդ կամ կին կունենա, ով ունեցել է այդ հնարավորությունը և օգտագործել այն: Սա անկասկած է և հաստատ» (*Teachings of Lorenzo Snow,* 138):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Եթե դուք ամուսնացած չեք և չեք ընդունել ամուր որոշում սելեստիալ ամուսնության համար, ապրեք դրա համար: Աղոթեք դրա համար: Սպասեք դրան Տիրոջ ժամանակացույցի համաձայն: Ձեր չափանիշներում ոչ մի դեպքում փոխզիջման մի գնացեք, որը դուրս կմղի այդ օրհնությունը վարագույրի այս կամ այն կողմում: Տերը գիտի ձեր սրտի ցանկությունը: Նրա մարգարեները նշել են, որ դուք կունենանք այդ օրհնությունը, երբ դուք հետևողականորեն ապրեք դրան արժանի լինելով» (in Conference Report, Apr. 1999, 33; կամ *Ensign,* May 1999, 27):

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

Եկեղեցու Նախագահ

In 1976 Devotional Speeches of the Year, 142–55

Ես նախազգուշացրել եմ Սիոնի երիտասարդությանը մեր հասարակության մեջ գերիշխող մեղքերի և չարիքների՝ սեռական անմաքրության և բոլոր դրա բազմաթիվ տգեղ դրսևորումների դեմ: Ես խոսել եմ հագուստների և գործողությունների անհամեստության մասին, որպես Լյուցիֆերի փափկացնող գործընթացներից մեկը: Ես սրանով արտահայտում եմ իմ երախտագիտությունը այն բազմաթիվ մարդկանց, ովքեր ուշադրությամբ արձագանքեցին այդ հորդորներին և կրկին զգուշացրեցին նրանց, ովքեր անտեսել էին դրանք:

Ես պարզորոշ եմ խոսել, նախազգուշացնելով երիտասարդներին փաղաքշանքների և այլ այլասերող ծուղակների մասին, որոնց մեջ ընկնում են երիտասարդները: Ես ձգտել եմ նաև հույս տալ նրանց, ովքեր հնարավոր է անցել են պատշաճության սահմանները, և ես ուրվագծել եմ նրանց համար ուղին, որով լիակատար ապաշխարությունը կարող է ներում բերել նրանց:

Ես նախազգուշացրել եմ երիտասարդներին տարբեր հավատքների միջև ամուսնանալու բազում վտանգների մասին, և իմ ունեցած ողջ ուժով ես նախազգուշացրել եմ երիտասարդներին խուսափել վշտերից ու հուսախաբությունններից, որոնք գալիս են Եկեղեցուց դուրս ամուսնանալուց և դժբախտ իրավիճակներից, որոնք գրեթե անխուսափելիորեն առաջանում են, երբ հավատացյալն ամուսնանում է անհավատի հետ: Ես նշեցի Եկեղեցու պահանջները իր անդամների հանդեպ ժամանակի, էներգիայի և ֆինանսների առումով, հոգևոր կապերի խորության մասին, որոնք ամրանում են ամուսնությունից հետո և ընտանիքի մեծանալու հետ միասին, հակասությունը, որը բնականաբար առաջանում է այսպիսի սխալ զույգ կազմելուց, այն փաստը, որ այս և ուրիշ շատ պատճառներ պերճախոս փաստում են Եկեղեցու ներսում ամուսնանալու օգտին, որտեղ ամուսինն ու կինն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդհանուր կատարելատիպեր և չափանիշներ, ընդհանուր հավատալիքներ, հույսեր և նպատակներ և բացի այդ ամենից, ամուսնությունը այստեղ կարող է հավերժացվել սուրբ տաճար արդար ձևով մտնելուց հետո:

Այսօր հուսով եմ ընտանեկան կյանքի վերաբերյալ քննարկում կծավալենք: Այս թեման նոր չէ, ոչ էլ այն տպավորիչ է, բայց այն կենսական է: Ամուսնությունը տեղին է ամեն մեկի կյանքում, իսկ ընտանեկան կյանքը մեր գոյության հիմքն է:

Ամուսնական երջանկություն և դժբախտություն

Ամուսնալուծության տգեղ հրեշը մտել է մեր հասարակական կյանք: Քիչ հայտնի լինելով մեր նախնիներին և նույնիսկ ոչ տարածված մեր ծնողների մեջ, այս քաղցկեղն այնքան սովորական է դարձել մեր իսկ օրերում, որ գրեթե ամեն ընտանիք անիծված է դրա կործանարար մեքենայություններով: Այն սատանայի հիմնական միջոցներից է՝ կործանելու հավատքը, բաժանելով երջանիկ տները և բերելով հուսախաբություն կյանքում և մտքի աղավաղում:

Պատվով, երջանիկ և հաջողակ ամուսնությունը անկասկած ամեն նորմալ մարդու հիմնական նպատակն է: Նա, ով նպատակային ձևով կամ անփութորեն կխուսափի դրա լուրջ եզրակացություններից ոչ միայն նորմալ չէ, այլ խեղաթյուրում է իր իսկ ծրագիրը: Կան մի քանիսը, ովքեր ամուսնանում են ի հեճուկս մեկի կամ ամուսնանում են հարստության համար կամ էլ ամուսնանում գայթակղության զոհ դառնալով: Որքան խեղաթյուրված է այդպիսիների մտածողությունը:

Ամուսնությունը հավանաբար ամենակենսականն է բոլոր որոշումներից և ունի ամենահեռուն գնացող ազդեցություններ, քանի որ այն կապ ունի ոչ միայն անմիջական երջանկության, այլև հավերժական ուրախությունների հետ: Այն ազդում է ոչ միայն երկու ներգրավված մարդկանց, այլ նրանց ընտանիքների և հատկապես նրանց երեխաների և թոռների վրա՝ հասնելով մինչև շատ սերունդների:

Այսօր բացարձակապես զարհուրելի է մեր հասարակության մեջ առանց երկու ծնողների՝ հոր և մոր, մեծացող երեխաների թիվը, և մեկը ևս լիովին բավարար չէ, եթե կարող էին ունենալ երկուսը:

Կյանքի և հավերժության համար զուգընկեր ընտրելիս հիարկե մանրակրկիտ պետք է ծրագրել, խորհրդածել ու ծոմ պահել, համոզվելու համար բոլոր այդ որոշումների վերաբերյալ, այս մեկը սխալ չպետք է լինի: Ճշմարիտ ամուսնության մեջ պետք է լինի ինչպես մտքերի, այնպես էլ սրտերի միություն: Որոշումները չպետք է ամբողջապես ընդունվեն զգացմունքների հիման վրա, այլ միտքը և սիրտը, զորացված ծոմով և աղոթքով և լուրջ մտորումով, կտա մարդուն ամուսնական երջանկության առավելագույն հնարավորություն:

Ամուսնությունը հեշտ չէ, այն հասարակ չէ, ինչպես վկայում են ամուսնալուծության անընդհատ բարձրացող տոկոսները: Ճշգրիտ թվերն ապշեցնում են մեզ: Հետևյալը գալիս է Սոլթ Լեյքի Գավառից [մինչև 1976 թվականը], որոնք հավանաբար ինչ որ տեղ մոտ են միջինին: Մեկ ամսում գրանցվել էր 832 ամուսնություն և տեղի էր ունեցել 414 ամուսնալուծություն: Ամուսնությունների ուղիղ կեսը ամուսնալուծվում են: Տեղի էին ունեցել 364 տաճարային ամուսնություններ և մոտավորապես տաճարային ամուսնությունների 10 տոկոսն էր չեղյալ համարվել ամուսնալուծության պատճառով: Սա էականորեն ավելի լավ է, քան միջինը, բայց մեզ վիշտ է պատճառում, երբ տաճարային որևէ ամուսնության հաջորդում է ամուսնալուծություն:

Մենք երախտապարտ ենք, որ այս հետազոտությունը բացահայտում է, որ մոտավորապես տաճարային ամուսնությունների 90 տոկոսը ամուր են մնում: Այդ պատճառով մենք խորհուրդ ենք տալիս, որ մարդիկ ամուսնանան նրանց հետ, ովքեր ընդհանրապես նույն ռասայական ծագումն ունեն, ինչ որ տեղ նույն տնտեսական և հասարակական ու կրթական նախադրյալները (դրանցից մի քանիսը բացարձակ անհրաժեշտություն չեն, բայց նախընտրելի են), ամենակարևորը, անկասկած՝ նույն կրոնական նախադրյալները: Չնայած ամենաբարենպաստ զույգերի ձևավորմանը, չարը դեռ հասցնում է հսկայական վնաս, և պատճառ է դառնում շատ բաժանված տների, հուսախաբ եղած կյանքերի:

Բոլոր հնարավոր իդեալականին մոտիկ պայմաններով հանդերձ, դեռ կան մարդիկ, ովքեր վերջ են դնում իրենց ամուսնությանը «անհամատեղելիության» պատճառով: Մենք այնքան շատ ներկայացումներ ենք տեսնում և այնքան շատ գեղարվեստական գրքեր կարդում և շփվում այնքան շատ խայտառակ իրադարձությունների հետ հասարակության մեջ, որ մարդիկ ընդհանրապես «ամուսնանալը և ապահարզան տալը», ամուսնալուծվելն ու նորից ամուսնանալը սկսում են համարել որպես նորմալ ապրելակերպ:

Ապահարզանը ինքնին չի պարունակում ամբողջ չարիքը, բայց հենց ապահարզանի ընդունումը որպես դեղամիջոց նույնքան լուրջ մեղք է այս սերնդի համար: Քանի որ համընդհանուր ընդունված ծրագիրը կամ ձևը ապացույց չէ, որ այն ճիշտ է: Ամուսնությունը երբեք չի եղել հեշտ, և գուցե երբեք էլ չլինի: Այն իր հետ բերում է զոհաբերություն, տալու և մեծ անձնվիրության պահանջ:

Հեռուստաներկայացումներից շատերը և գեղարվեստական պատմվածքները վերջանում են ամուսնությամբ. «Նրանք երջանիկ ապրեցին ընդմիշտ»: Քանի որ գրեթե մենք բոլորս տեսել ենք ապահարզան մեր մոտիկ ընկերների կամ բարեկամների մոտ, մենք սկսել ենք հասկանալ, որ ամուսնալուծությունը բժշկություն չէ դժվարության դեպքում, այլ այն ընդամենը փախուստ է և մի թույլ բան: Մենք սկսել ենք նաև հասկանալ, որ ուղղակի ծիսակատարության կատարումը չի բերում երջանկություն և հաջող ամուսնություն: Երջանկությունը չի գալիս կոճակը սեղմելով, ինչպես էլեկտրական լույսի դեպքում, երջանկությունը մտքի վիճակ է և գալիս է ներսից: Այն անհրաժեշտ է վաստակել: Այն հնարավոր չէ գնել փողով, այն չի կարող վերցվել ոչ մի բանով:

Ոմանք մտածում են, որ երջանկությունը հեշտ, շքեղ և մշտական հրճվանքներով սքանչելի կյանք է, բայց ճշմարիտ ամուսնությունը հիմնված է երջանկության վրա, որն ավելին է, քան այդ, մի բան, որը գալիս է տալու, ծառայելու, կիսվելու, զոհաբերելու և անձնվեր վերաբերմունքի շնորհիվ:

Երկու մարդիկ, որոնք ունեն տաբեր նախադրյալներ, շուտով պարզում են ծիսակատարությունը կատարելուց հետո, որ պետք է դիմակայեն մերկ իրականությանը: Այլևս չկա երևակայական կյանք կամ պատրանքներ, մենք պետք է դուրս գանք ամպերից և մեր ոտքերը հաստատուն դնենք գետնին: Պետք է պատասխանատվություն և նոր պարտականություններ ստանձնել: Որոշ անձնական ազատություններից պետք է հրաժարվել և շատ կանոնակարգումներ, անեսասեր կանոնակարգումներ կատարել:

Ամուսնությունից հետո շատ շուտով մարդը սկսում է գիտակցել, որ կողակիցը ունի թուլություններ, որոնք նախկինում հայտնի չեն եղել կամ հայտնաբերվել: Արժանիքները, որոնք սիրատածման ժամանակ անընդհատ զորացվում էին, այժմ համեմատաբար փոքրանում են, և թուլությունները, որոնք սիրատածման ընթացքում այնքան փոքր էին թվում և ոչ կարևոր, այժմ աճում են նշանակալի չափերով: Գալիս է ժամը սրտեր հասկանալու, ինքնագնահատման և առողջ բանականության, դատողության և պլանավորման: Տարիների սովորույթները զգացնել են տալիս իրենց, կողակիցը գուցե ժլատ է կամ վատնող, ծույլ կամ աշխատասեր, հավատացյալ կամ անհավատ, կարող է լինել բարի և համագործակցող կամ նյարդային և դյուրագրգիռ, պահանջկոտ կամ տվող, եսասեր կամ անձնվեր: Առաջ է գալիս ծնողների խնդիրը և մեծանում է նրանց հետ ամուսնիների հարաբերությունների դերը:

Հաճախ ցանկություն չի լինում հանդարտվել և ընդունել անմիջապես բաժին ընկած ծանր պատասխանատվությունները: Շռայլ ապրելակերպը չի կամենում տեղը զիջել տնտեսվարությանը, և երիտասարդները հաճախ շատ են ցանկանում «Ջոնսերից ետ չմնալ»: Հաճախ ցանկություն չի լինում կատարել անհրաժեշտ ֆինանսական հարմարեցումները: Երիտասարդ կանայք հաճախ պահանջում են, որ իրենց հաջողակ հայրերի բարգավաճ տներում նախկինում վայելած բոլոր շքեղությունները շարունակվեն իրենց տներում: Նրանցից ոմանք պատրաստ են վաստակել այդ շռայլ ապրելակերպը շարունակելով աշխատել ամուսնությունից հետո: Հետևաբար, նրանք թողնում են տունը, որտեղ իրականում սպասում են իրենց պարտականություններըմասնագիտական կամ գործարարական նպատակներ հետապնդելով, այսպիսով հիմնելով մի տնտեսություն, որը կայունանում է, այնպես որ այն դառնում է շատ դժվար նորմալ ընտանեկան կյանքին ենթարկելու համար: Երբ ամուսնիները երկուսն էլ աշխատում են, ընտանիք է մուտք գործում ոչ թե համագործակցությունը, այլ մրցակցությունը: Երկու ուժասպառ աշխատող տուն են վերադառնում լարված նյարդերով, անհատական հպարտությամբ, մեծացած անկախությամբ և այդ ժամանակ սկսվում է թյուրըմբռնումը: Փոքր լարումները կուտակվելով դառնում են մեծ խնդիր: Հաճախ կողակիցները մեղսավոր ձևով վերադառնում են նոր և հին սիրավեպերի և տեղի է ունենում անխուսափելի թվացող բաժանումը ապահարզանով՝ սրտաբեկությամբ, դառնությամբ, հիասթափությամբ և միշտ սպիներով:

Չնայած ամուսնությունը դժվար է, իսկ աններդաշնակ և հուսախաբված ամուսնությունները սովորական են, այնուամենայնիվ իսկական, տևական երջանկությունը հնարավոր է և ամուսնությունը կարող է լինել ավելի մեծ երջանկություն, քան մարդկային միտքը կարող է ընկալել: Դա յուրաքանչյուր զույգի, յուրաքանչյուր անձնավորության ձեռքում է: «Իրար համար ստեղծված հոգիները» հորինվածք է և պատրանք, և որքան էլ յուրաքանչյուր երիտասարդ տղամարդ և երիտասարդ կին ողջ ջանասիրությամբ և աղոթքով փնտրի մեկին, որի հետ կյանքը կարող է ամենահամատեղելին և ամենագեղեցիկը լինել, այնուամենայնիվ անկասկած յուրաքանչյուր լավ տղամարդ

կամ լավ կին կարող են երջանկություն և հաջող ամուսնություն ունենալ, եթե երկուսն էլ պատրաստակամ են վճարելու գինը:

Կա երբեք չփոփոխվող բանաձև, որը յուրաքանչյուր զույգին կերաշխավորի երջանիկ և հավերժական ամուսնություն, սակայն ինչպես բոլոր բանաձևերը, հիմնական բաղադրիչները չպետք է դուրս թողնվեն, կրճատվեն կամ սահմանափակվեն: Սիրատածելուց առաջ ընտրություն կատարելը և ամուսնությունից հետո շարունակվող սիրատածումը հավասարապես կարևոր են, սակայն ինքնին ամուսնությունից ավելի կարևոր չեն, որի հաջողությունը կախված է երկու անհատներից՝ ոչ թե մեկից, այլ երկուսից:

Ամուսնությունը, որը սկսվել է և հիմնվել խելամիտ չափանիշների վրա, ինչպես արդեն նշվեց, չկան ուժերի միավորումներ, որոնք կարողանան կործանել այն, բացի կողակիցներից յուրաքանչյուրի կամ երկուսի մեջ պարփակված ուժից, և նրանք պետք է ընդհանրապես պատասխանատվություն կրեն: Այլ մարդիկ և գործակալություններ կարող են ազդել ի բարին կամ ի չարը: Ֆինանսական, հասարակական, քաղաքական և այլ իրադրություններ գուցե թվա, թե կարող են ազդեցություն ունենալ, բայց ամուսնությունը նախևառաջ մշտապես կախված է երկու կողակիցներից, ովքեր միշտ կարող են դարձնել իրենց ամուսնությունը հաջող և երջանիկ, եթե նրանք վճռական են, անեսասեր և արդարակյաց:

Բանաձևը պարզ է, բաղկացուցիչ մասերը քիչ են, չնայած շատ չափազանցումներ կան յուրաքանչյուրից:

Առաջինը պետք է լինի ճիշտ մոտեցում ամուսնությանը, որը ներառում է մտադրություն ընտրել մի կողակցի, որը հասնում է մոտավորապես հնարավորին չափով կատարելության գագաթնակետին բոլոր հարցերում, որոնք կարևոր են անձնավորությունների համար: Իսկ հետո այդ երկու կողմերը պետք է գան զոհասեղանի մոտ տաճարում, հասկանալով, որ իրենք պետք է ջանասիրաբար աշխատեն ի նպաստ այս հաջողակ համատեղ կյանքի:

Երկրորդը, պետք է լինի մեծ անձնազոհություն, ինքնամոռաց ուղղորդելով ողջ ընտանեկան կյանքը և այն ամենը, ինչը կապված է ընտանիքի բարօրությանը, ձեր անձը հպատակեցնելով:

Երրորդը, պետք է լինի մշտական սիրատածում և քնքշանքի, բարության արտահայտություններ և ուշադրություն պահելով սերն ակտիվ և աճող:

Չորրորդը, պետք է ապրել լիովին պահելով Տիրոջ պատվիրանները, ինչպես նշված է Հիսուս Քրիստոսի ավետարանում:

Այս բաղկացուցիչ մասերը պատշաճ խառնելով և շարունակաբար ակտիվ պահելով, բոլորովին անհնար է, որ դժբախտություն գա, թյուրըմբռնումը շարունակվի կամ բաժանում տեղի ունենա: Ամուսնալուծությամբ զբաղվող իրավաբաններին անհրաժեշտ կլինի այլ ասպարեզ տեղափոխվել և ամուսնալուծության դատարանների վրա կդրվեն կախովի կողպեքներ:

Անեսասիրություն ամուսնությունում

Երկու անհատներ, ովքեր մոտենում են ամուսնության զոհասեղանին պետք է գիտակցեն, որ երջանիկ ամուսնություն ունենալու համար, որի համար նրանք հույս են տածում, նրանք պետք է իմանան, որ ամուսնությունը օրինական արտահագուստ չէ, այլ դա նշանակում է զոհաբերություն, բաժին հանել և նույնիսկ անձնական ազատությունների կրճատում: Դա նշանակում է երկար, դժվարին խնայողություն: Դա նշանակում է երեխաներ, ովքեր բերում են իրենց հետ ֆինանսական խնդիրներ, ծառայողական խնդիրներ, խնամքի և անհանգստության խնդիրներ, բայց նաև նշանակում է ամեն ինչից վեր առավելխորը և քաղցր զգացումներ:

Նախքան ամուսնությունը, յուրաքանչյուր անձնավորություն լիովին ազատ է գնալու և գալու ինչպես կամենա, կազմակերպելու և պլանավորելու իր կյանքը ինչպես իրեն լավ է թվում, ընդունելով բոլոր որշումները ինքնուրույն որպես կենտրոնական դեմք: Սիրահարները պետք է հասկանան նախքան երդուներ տալը, որ յուրաքանչյուրը պետք է տառացիորեն և լիովին ընդունի, որ փոքրիկ նոր ընտանիքի բարօրությունը վեր պետք է լինի յուրաքանչյուր կողակցի բարօրությունից: Յուրաքանչյուր կողմը պետք է արմատախիլ անի «Ես»-ը և «իմ»-ը և փոխարինի «մենք»-ով կամ «մեր»-ով: Յուրաքանչյուր որոշում պետք է հաշվի առնի, որ կան երկու կամ ավելի մարդիկ, որոնց վրա այն կազդի: Այժմ, երբ կինը պատրաստվում է կարևոր որոշումներ ընդունել, նա կմտահոգվի, թե ինչ ազդեցություն դրանք կունենան ծնողների, երեխաների, տան և իրենց հոգևոր կյանքի վրա: [Ամուսնու] մասնագիտության, նրա հասարակական կյանքի, նրա ընկերների, նրա ամեն հետաքրքրության ընտրությունը պետք է հաշվի առնվի այն տեսակետից, որ նա ընտանիքի միայն մի մասն է կազմում, որ խմբի ամբողջությունը պետք է հաշվի առնվի:

Յուրաքանչյուր ամուսնալուծություն եսասիրության արդյունք է ամուսնական պայմանագրի այս կամ այն կողմից կամ երկու կողմերից էլ: Ինչ որ մեկը մտածում է իր հանգստի, հարմարավետության, ազատությունների, շքեղությունների կամ հեշտության մասին: Երբեմն տխուր, դժգոհ և եսասեր կողակցի անդադար խայթոցները կարող են հանգեցնել լուրջ ֆիզիկական բռնության: Երբեմն մարդիկ կարող են գրգռվել այն աստիճան, երբ նրանք սխալմամբ արդարացված են զգում անելով բաներ, որոնք այնքան սխալ են: Իհարկե, ոչինչ չի արդարացնում մեղքը:

Երբեմն կինը կամ ամուսինը զգում են անտեսված, վատ վերաբերմունքի արժանացած և արհամարհված, մինչդեռ

ամուսինը կամ կինը սխալմամբ արդարացված են զգում՝ գործելով նոր սխալներ: Եթե ամուսիններից յուրաքանչյուրը հաճախ ինքնավերլուծություն է կատարում և չափում իր իսկ թերությունները կատարելության մետրով և Ոսկե Կանոնով, և եթե նման ինքնաքննումից հետո ամուսիններից յուրաքանչյուրը մյուսի շեղումները ուղղելու փոխարեն, ավելի շուտ սկսի ուղղել ինքն իրեն ամեն շեղման դեպքում, ապա արդյունքում կգա կերպարանափոխություն և երջանկություն: Կան շատ կեղծավոր մարդիկ, ովքեր ամուսնանում են, պետք է սերտեն Ղուկասի գրքում Փրկչի առակը՝ մարդիկ, ովքեր բարձրացնում են իրենց արժանիքները և դիզում բարության իրենց անձնական հատկանիշները, և դնում են դրանք կշեռքին ի հակադրություն ամուսնու թուլությունների, նրանք ասում են. «Շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում, եւ իմ բոլոր ստացուածքներիցը տասանորդ եմ տալիս» (տես Ղուկաս ԺԸ.12):

Սերը նման է ծաղկի և մարմնի նման այն մշտական սնուցման կարիք ունի:

Յուրաքանչյուր բախման համար կա պատճառ և որտեղ կա դժբախտություն, յուրաքանչյուրը պետք է քննի ինքն իրեն՝ գտնելու պատճառը կամ առնվազն պատճառի այն բաժինը, որն առաջացրել էր այդ եսը:

Ամուսնությունը չի կարող միշտ լինել հարթ և առանց միջադեպերի, սակայն այն կարող է լինել մեծ խաղաղություն բերող: Զույգը կարող է լինել աղքատության, հիվանդության, հիասթափության, ճախողումների մեջ, և նույնիսկ տեսնել մահ ընտանիքում, բայց նույնիսկ այդ ամենը չի կարող վերցնել նրանցից խաղաղությունը: Ամուսնությունը կարող է հաջողված համարվել, քանի դեռ եսասիրությունը ներս չի սողոսկել այնտեղ: Նեղությունները ու խնդիրները ծնողներին կմոտեցնեն միմյանց, ստեղծելով անկոտրում միություններ, եթե եսասիրությունը իսպառ բացակայում է: 1930-ականների ճգնաժամի տարիներին առկա էր ամուսնալուծությունների որոշակի անկում: Աղքատությունը, ճախորդությունները, հուսախաբությունները միմյանց կապեցին ծնողներին: Դժվարությունները կարող են ամրացնել հարաբերությունները, իսկ բարգավաճումը կարող է կործանել դրանք:

Եսասիրության վրա հիմնված ամուսնությունը ենթակա է տապալման: Նա, ով ամուսնանում է հարստության կամ համբավի, կամ էլ հասարակական դիրքի համար, անկասկած հիասթափվելու է: Նա, ով ամուսնանում է բավարարելու սնապարծությունն ու հպարտությունը կամ ինչ-որ մեկին հակառակ կամ ցուցադրելու համար, խաբում է ինքն իրեն:Իսկ նա, ով ամուսնանում է երջանկություն տալու և ստանալու համար, ծառայություն մատուցելու և ստանալու համար, ով հոգ է տանում երկուսի և ապա ընտանիքի շահերի համար, լավ հնարավորություններ ունի երջանիկ ամուսնություն ունենալու համար:

Չնայած կան շատ մարդիկ, ովքեր չեն կարողանում գտնել ամուսնալուծությամբ զբաղվող իրավաբանների և վերջ չեն դնում իրենց ամուսնությանը, բայց թույլ են տալիս իրենց ամուսնությունը հնանա, թուլանա և էժանանա: Կան կողակիցներ, ովքեր ընկել են հիացմունքի և պաշտամունքի գահից և ցածր վիճակում են՝ լինելով լոկ տունը համատեղ զբաղեցնողներ, սեղանի կողքին համատեղ նստողներ, որոշակի բաների համատեղ սեփականատերեր, որոնք հեշտ չեն կարող բաժանել: Այս մարդիկ դեպի նեղություն տանող արահետի վրա են: Այս մարդիկ լավ կանեն վերագնահատեն, վերաթարմացնեն իրենց սիրատածումը, արտահայտեն իրենց սերը, գնահատեն բարությունը և մեծացնեն իրենց ուշադրությունը, որպեսզի նրանց ամուսնությունը կրկին դառնա գեղեցիկ, քաղցր և աճող:

Սերը նման է ծաղկի, և մարմնի նման այն մշտական սնուցման կարիք ունի: Մահկանացու մարմինը շուտով կհյուծվի և կմեռնի, եթե հաճախակի չսնուցվի Քնքույշ ծաղիկը կթոշնի և կմահանա առանց սննդի և ջրի: Եվ այսպիսով սերը, նույնպես չի կարելի ակնկալել, որ հավերժ կլինի, եթե անընդհատ չսնուցվի սիրո սննդաբաժիններով, գնահատանքի և հիացմունքի դրսևորմամբ, երախտագիտության արտահայտմամբ և անձնվիրությունը գնահատելով:

Լիակատար անեսասիրությունը անկասկած հաջողված ամուսնության մեկ այլ գործոն է: Եթե մեկը մշտապես ձգտում է մեկ ուրիշի հետաքրքրությունները, հարմարավետությունն ու երջանկությունն ապահովել, սիրատածման ժամանակ ի հայտ եկած և ամուսնության ժամանակ ամրապնդված սերը կաճի հսկայական չափերով: Շատ զույգեր թույլ են տալիս, որ իրենց ամուսնությունը դառնա համն ու հոտը կորցրած, իսկ իրենց սերը սառչի հին հացի կամ մաշված կատակների կամ սառը սոուսի պես: Իհարկե, սիրո համար ամենակենսական սնուցիչներն են՝ ուշադրությունը, բարությունը, լրջությունը, մտահոգությունը, քնքշանքի արտահայտությունները, շնորհակալական գրկախառնությունները, հիացմունքը, պարծանքը, ընկերակցությունը, վստահությունը, հավատքը, ընկերությունը, հավասարությունը և հուսալիությունը:

Ամուսնության մեջ իսկապես երջանիկ լինելու համար, մարդը պետք է անընդհատ հավատարմորեն պահի Տիրոջ պատվիրանները: Ոչ ոք, ամուրի թե ամուսնացած երբևէ լիովին երջանիկ չի եղել, մինչև չի պահել Տիրոջ պատվիրանները: Կան ժամանակավոր բավականություններ և գլխապտույտ իրավիճակներ պահի տակ, բայց մշտական, լիակատար երջանկությունը կարող է գալ միայն մաքրության և արժանավորության միջոցով: Նա, ով կրոնական ապրելակերպ ունի խորը կրոնական համոզմունքներով, չի կարող երբեք երջանիկ լինել ոչ ակտիվ կյանքով: Խիղճը

կշարունակի տանջել, միչև այն բթանա, այդպիսի դեպքում ամուսնությունն արդեն վտանգի տակ է: Խղճի խայթը կարող է կյանքը ամենաանտանելին դարձնել: Անգործությունը կործանարար է ամուսնության համար, հատկապես, որտեղ կողմերը տարբեր աստիճանի անգործունյա են:

Կրոնական տարբերությունները բոլոր տարբերություններից ամենափորձող և ամենաանլուծելին են:

Ամուսնական հաստատության աստվածայնությունը

Ամուսնությունը կարգված է Աստծո կողմից: Այն ուղղակի հասարակական սովորույթ չէ: Առանց պատշաճ և հաջող ամուսնության մարդ երբեք չի հասնի վեհացման: Կարդացեք ձեր Տիրոջ խոսքերը, որ ամուսնանալը ճիշտ է և պատշաճ:

Իրոք որ լրջախոհ և կրթված Վերջին Օրերի Սուրբը ուշադիր կծրագրի իր կյանքը համոզված լինելու համար, որ խոչընդոտներ չլինեն դրված ճանապարհին: Մեկ լուրջ սխալ գործելով մարդը կարող է ճանապարհին խոչընդոտներ դնել, որոնք երբեք գուցե չհեռացվեն, և որոնք կարող են փակել դեպի հավերժական կյանք և դեպի աստվածություն՝ մեր վերջնական ճակատագիր տանող ճանապարհը: Եթե երկու մարդիկ սիրում են Տիրոջն ավելի, քան իրենց սեփական կյանքը և սիրում են միմյանց ավելի, քան իրենց իսկ կյանքը՝ միասին աշխատելով լիակատար ներդաշնակության մեջ ավետարանի ծրագրով, որպես իրենց հիմնական նախագիծ, նրանք անկասկած կունենան այս մեծ երջանկությունը: Երբ ամուսինն ու կինը միասին հաճախ են գնում սուրբ տաճար, միասին ծնկի են իջնում աղոթքով իրենց տանը իրենց ընտանիքի հետ, ձեռք-ձեռքի տված գնում են իրենց կրոնական ժողովներին, իրենց կյանքը լիովին մաքրաբարո պահում, մտքով և ֆիզիկապես, որպեսզի նրանց բոլոր մտքերը և ցանկությունները և սերը ամբողջովին կենտրոնացած լինեն մեկ էակի՝ իրենց զուգընկերոջ մեջ, և երկուսով աշխատում են միասին Աստծո արքայությունը կառուցելու համար, այդ ժամանակ երջանկությունը գտնվում է գագաթնակետում:

Երբեմն ամուսնությունում լինում են ուրիշների հետ հարումներ, չնայած այն փաստին, որ Տերն ասել է.

«Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի» [ՎԵՈՒ 42.22]:

Սա նշանակում է հենց նույն ճշտությամբ, որ «դուք պետք է սիրեք ձեր *ամուսնուն* ողջ ձեր սրտով և հարեք *նրան* և ուրիշ ոչ մեկի»: Հաճախ, մարդիկ շարունակում են հարել իրենց մայրերին և հայրերին և իրենց ընկերներին: Երբեմն մայրերը չեն կամենում թուլացնել իրենց ազդեցությունը երեխաների վրա, և ամուսինները, ինչպես նաև կանայք վերադառնում են իրենց մայրերի և հայրերի մոտ խորհրդակցելու և խորհուրդ վերցնելու և գաղտնիք վստահելու, մինչդեռ հարելը պետք է լինի կնոջ հետ շատ բաներում և բոլոր ինտիմ հարցերը պետք է պահվեն ծածուկ և մյուսներից խիստ գաղտնի:

Զույգերը լավ կանեն անմիջապես գտնեն իրենց համար սեփական օջախ, առանձին և հեռու երկու կողմերի ծնողներից: Տունը գուցե շատ համեստ լինի և անշուք, բայց միևնույն է այն անկախ բնակարան է: Ձեր ամուսնական կյանքը պետք է անկախ դառնա կնոջ ազգականներից և ամուսնու ազգականներից: Սիրեք նրանց ավելի քան երբևէ, բարձր գնահատեք նրանց խորհուրդը, շնորհակալ եղեք նրանց ընկերակցության համար, բայց ապրեք ձեր սեփական կյանքով, կառավարվելով ձեր որոշումներով, ձեր իսկ աղոթքով լի խորհրդածություններով նրանցից խորհուրդ ստանալուց հետո, ովքեր պարտավոր են տալ այն: Հարել չի նշանակում միայն զբաղեցնել նույն տունը, այն նշանակում է սերտորեն կառչել, կպչել միմյանց.

«Ուստի, օրինական է, որ ...նրանք երկուսով կլինեն մեկ մարմին, և այս բոլորը, որպեսզի երկիրը կատարի իր ստեղծման նպատակը.

Եվ որպեսզի այն լրացնի մարդկանց քանակը, աշխարհի արարումից առաջ նրանց ստեղծման համաձայն» [ՎԵՈՒ 49.16–17]:

Մեր սեփական արձանագրությունը գոհացուցիչ չէ: Մեր արձանագրություններն ասում են, որ 31,037 ամուսնություններից միայն l4,169 –ն էին կատարվել տաճարում հավերժության համար: Դա 46 տոկոսն է: 7,556 անդամներ ամուսնացել էին Եկեղեցուց դուրս: Սա մեծապես անհանգստացնում է մեզ: Սա 24 տոկոսն է, որը նշանակում է, որ մոտավորապես 9,000, կամ 30 տոկոսը, ակնհայտորեն ամենևին չեն մտածել իրենց և իրենց ժառանգների մասին, որ նրանք ամուսնացել են տաճարից դուրս, որը կարող էր տալ նրանց բանալի դեպի հավերժական կյանք: Հնարավոր է նրանք չգիտեն, կամ նրանց հոգսը չէ:

Իհարկե, շատերը, ովքեր ամուսնանում են Եկեղեցուց դուրս և տաճարից դուրս, հարցը չեն կշռադատում: Հետազոտությունը, որը ես նշեցի, բացահայտել է մի փաստ, որ ոչ անդամ կողակիցներից մոտավորապես յոթից մեկն էդարձի է գալիսև մկրտվում Եկեղեցում: Սա մեծ կորուստ է: Դա նշանակում է, որ շատ դեպքերում ոչ միայն չմկրտված կողակիցն է կորչում, այլ նաև երեխաները և նույնիսկ երբեմն մյուս կողակիցը:

Մենք սիրում ենք նրանց, ովքեր միանում են Եկեղեցուն ամուսնությունից հետո: Մենք գովում ենք նրանց և հարգում, բայց հավանականությունը մեր դեմ է: Համաձայն վերևում տրված թվերի, նշանակում է, որ մոտավորապես 6,500 նոր ամուսնություններում հավանաբար այդպես էլ ի վերջո երկու կողմերը չմիանան Եկեղեցուն, որպեսզի ընտանիքը ամբողջապես միավորվի: Սա մեզ շատ է վշտացնում: Ընտանիքը չի կարող լիովին վայելել Տիրոջ ամբողջական

ծրագիրը, եթե մարդիկ անհավասար են միացած ամուսնության մեջ:

Մենք կոչ ենք անում ձեզ՝ բոլոր երիտասարդներիդ, տաճարային ամուսնության լուրջ, ուժեղ վճռականություն ունենալ, որպեսզի ձեր որոշումը ապահովի ձեզ համար հավերժական ամուսնության հարուստ խոստումները դրանց ուղեկցող ուրախություններով և երջանկությամբ: Սա կգոհացնի Տիրոջը, որն այնքան մեծ հույսեր է կապել ձեզ հետ: Նա ասել է, որ հավերժական կյանք կարելի է ունենալ միայն այն ուղով, ինչպես ինքն է ծրագրավորել:

Նախքան ավարտելը թույլ տվեք մեջբերել մեկ կամ երկու խոսք սուրբ գրություններից:

«Եվ սպիտակ մի քար է տրվում բոլոր նրանց, ովքեր գալիս են սելեստիալ արքայություն, որի վրա մի նոր անուն է գրված, որը ոչ մի մարդ չգիտի, բացի նրանից, ով ստանում է այն: Այդ նոր անունը նշանաբառ է» [ՎԱՈՒ 130.11]:

Ամուսնանալը *նորմալ* բան է: Այն պատրաստվել է Աստծո կողմից սկզբից ի վեր: Այն մարդը, ով չի ուզում ամուսնանալ, լիովին նորմալ չէ: Հիշեք.

«Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տերումը» [Ա Կորնթացիս ԺԱ.11]:

Ոչ ոք չի կարող մերժել (սելեստիալ ամուսնության) այս ուխտը և հասնել Աստծո հավերժական արքայությանը: Սա անկասկած է:

«Սելեստիալ փառքի մեջ կա երեք երկինք կամ աստիճան:

Եվ ամենաբարձրին հասնելու համար մարդ պետք է մտնի քահանայության այս կարգի մեջ [նշանակում է ամուսնության նոր և հավիտենական ուխտ],

Եվ եթե նա չմտնի, չի կարող հասնել դրան:

Նա կարող է մտնել մեկ ուրիշը, բայց դա նրա թագավորության վերջն է. նրա աճը չի շարունակվի» [ՎԱՈՒ 131.1–4]:

«Քանզի ահա, ես հայտնում եմ քեզ նոր և հավիտենական ուխտը. և եթե դու չմնաս այդ ուխտի մեջ, ապա դու նզովված ես. Քանզի ոչ ոք չի կարող մերժել այս ուխտը և թույլատրվի մտնել իմ փառքը» [ՎԱՈՒ 132.4]:

Իսկ *նզովված նշանակում է* առաջընթացը կանգ առնել:

Սրանք Տիրոջ խոսքերն են: Դրանք ուղղակիորեն մեզ են ասվել: Դրանք անառարկելի են:

«Եվ ինչ վերաբերում է նոր և հավիտենական ուխտին, այն հաստատվել է իմ փառքի լիության համար. և ով ստանում է նրա լիությունից, պարտավոր է և պետք է մնա օրենքի մեջ ...

Հետևաբար, երբ նրանք այս աշխարհից դուրս են, նրանք ոչ կին են առնում, ոչ էլ մարդի են գնում, այլ նշանակված հրեշտակներ են երկնքում, հրեշտակներ, որոնք սպասավոր ծառաներ են, որ սպասավորեն նրանց, ովքեր արժանի են ավելի արտակարգ և գերազանց և հավերժական փառքի մեծության:

Քանզի այդ հրեշտակները չեն մնացել իմ օրենքում. Հետևաբար, նրանք չեն կարող շատանալ, այլ մնում են առանձին և միայնակ, առանց վեհացման, իրենց փրկված վիճակում, մինչև ողջ հավերժություն. և այնուհետև աստվածներ չեն, այլ Աստծո հրեշտակներ են հավիտյանս հավիտենից»: [ՎԱՈՒ 132.6, 16–17]

Եվ մի եզրափակիչ միտք.

«Բոլոր բաները, որոնք Աբրահամը ստացել էր, նա ստացել էր հայտնությամբ ու պատվիրանով, իմ խոսքով, ասում է Տերը, և մտել է իր վեհացումն ու նստած է իր գահին...

Գնացեք, հետևաբար, և կատարեք Աբրահամի գործերը, ընդունեք իմ օրենքը և դուք կփրկվեք»: [ՎԱՈՒ 132.29, 32]

Եղբայրներ և քույրեր, կարող եմ ասել, սա Տիրոջ խոսքն է: Այն շատ-շատ լուրջ է և չկա մեկը, որ վիճի Տիրոջ հետ: Նա է սարքել երկիրը, նա է ստեղծել մարդկանց: Նա գիտի պայմանները: Նա է կազմել ծրագիրը, և մենք բավականաչափ խելացի չենք կամ ընդունակ, որ կարողանանք վիճել նրա հետ այս կարևոր հարցերում: Նա գիտի, թե ինչն է ճիշտ և ճշմարիտ:

Մենք ձեզ խնդրում ենք մտածել այս բաների մասին: Դուք բոլոր ուսանողներդ համոզվեք, որ ձեր ամուսնությունը ճիշտ է: Համոզվեք, որ ձեր կյանքը ճիշտ է: Համոզվեք, որ ամուսնության ձեր մասըճիշտ ուղղությամբ եք տանում:

Այժմ ես խնդրում եմ Տիրոջից, որ ձեզ օրհնի: Այս բաներն անհանգստացնում են մեզ, որովհետև խիստ շատ ամուսնալուծություններ կան և դրանք գնալով աճում են: Ամուսնալուծության մասին խոսելը դարձել է սովորական մի բան: Այն պահին, երբ մի փոքրիկ ճգնաժամ է լինում կամ մի փոքրիկ վեճ ընտանիքում, մենք խոսում ենք ամուսնալուծության մասին, և մենք նետվում ենք տեսնելու իրավաբանին: Սա Տիրոջ ձևով չէ: Մենք պետք է ետ գնանք և կարգավորենք մեր խնդիրները և դարձնենք մեր ամուսնությունը համատեղելի, քաղցր և օրհնված:

Ես աղոթում եմ Տիրոջը օրհնել յուրաքանչյուրին, ով որոշումների առջև է կանգնած ամուսնությունից առաջ և հետո: Ես խնդրում եմ նրա օրհնությունները ձեզանից յուրաքանչյուրի վրա լինի և բերում եմ իմ վկայությունը, որ այս Եկեղեցին ճշմարիտ է և աստվածային, Հիսուս Քրիստոսի անունով: Ամեն:

ԻՆՉ ԱՍՏՎԱԾ ՄԻՄՅԱՆՑ ԿԱՊԵՑ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

In Conference Report, ապր. 1991, 93—98, կամ Ensign, մայիս 1991, 71–74

Թոռնուհիների հարսանեկան ծիսակատարությունը

Տաս օր առաջ ես մի գեղեցիկ և հուզիչ փորձառություն ունեցա Սոլթ Լեյքի Տաճարում, այս թաբերնակլից անմիջապես դեպի արևելք գտնվող շենքում: Այնտեղ, այդ սրբազան սրբավայրում, ես արտոնություն ունեցա կնքելու ամուսնությունը, երկու առանձին բայց իրար հաջորդող ծիսակատարություններով, երկու գեղեցիկ օրիորդների, որոնք երկորյակներ են, յուրաքանչյուրին մի գեղեցիկ և առնական իր ընտրած երիտասարդի հետ: Այդ երեկո կրկնակի հարսանեկան ընդունելություն տեղի ունեցավ, որտեղ հարյուրավոր ընկերներ եկան արտահայտելու իրենց սերն ու բարի մաղթանքները:

Մայրերը հաճախ են արցունքներ թափում հարսանեկան ծիսակատարության ժամանակ: Քույրերը նույնպես և երբեմն էլ՝ հայրերը: Հազվադեպ են պապիկներն ու տատիկները որևէ զգացմունքներ դրսևորում: Բայց այս գեղեցիկ աղջիկները իմ սեփական թոռնուհիներն էին, և ես պետք է խոստովանեմ, որ այս ծեր պապիկը խեղդվում էր արցունքներից և դժվար պահ էր նրա համար: Ես չեմ հասկանում, թե ինչու: Անկասկած դա երջանիկ առիթ էր, երազանքների և աղոթքների իրականացում: Հավանաբար, արցունքներս իսկապես ուրախության և երախտագիտության արտահայտություն էին առ Աստված, այս սիրուն հարսնացուների համար և գեղեցիկ երիտասարդ ամուսինների համար: Սրբազան խոստումներում նրանք երդվեցին իրենց սիրով և հավատարմությամբ միմյանց հանդեպ ժամանակի և ողջ հավերժության համար:

Ամուսնությունը կարգված է Աստծուց

Ինչպիսի սքանչելի բան է ամուսնությունը մեր Երկնային Հոր ծրագրում, ծրագիր, որը տրվել է Նրա աստվածային իմաստությամբ Իր զավակների երջանկության և ապահովության համար և մարդկային ցեղի շարունակման համար:

Նա է մեր Արարիչը, և Նա նախագծել է ամուսնությունը ի սկզբանե: Եվայի ստեղծման ժամանակ «Ադամն ասեց. Սա հիմա ոսկր է իմ ոսկրիցը եւ մարմին է իմ մարմնիցը. Սորա համար մարդը կթողէ հայրը եւ իր մայրը, եւ կպարի իր կնոջը. Եւ մէկ մարմին կլինին» (Ծննդոց Բ.23–24):

Կորնթացի Սրբերին Պողոսը գրել է. «Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տերումը» (Ա Կորնթացիս ԺԱ.11):

Ժամանակակից հայտնության մեջ Տերն ասել է. «Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նա, ով արգելում է ամուսնանալը, կարգված չէ Աստծու կողմից, քանզի ամուսնությունն Աստծու կողմից է կարգված մարդու համար» (ՎԱՈՒ 49.15):

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը մի անգամ հայտարարել է, «որ ոչ մի մարդ չի կարող փրկվել և վեհացվել Աստծո թագավորությունում առանց կնոջ և ոչ մի կին չի կարող հասնել կատարելության և վեհացման Աստծո թագավորությունում, միայնակ... Աստված հաստատեց ամուսնությունը ի սկզբանե: Նա ստեղծեց մարդուն Իր իսկ պատկերով և նմանությամբ, արու և էգ և նրանց արարման ժամանակ նախատեսված էր, որ նրանք պետք է միացվեն միմյանց ամուսնության սրբազան կապերով, և մեկը կատարյալ չէ առանց մյուսի» (in Conference Report, ապր. 1913, p. 118):

Անկասկած կարդալով սուրբ գրությունները, ինչպես հնադարյան, այնպես էլ ժամանակակից, ոչ ոք չի կարող կասկածել ամուսնության աստվածային գաղափարին: Կյանքի ամենաթաղցր զգացումները, մարդկային սրտի ամենավեհ և գոհացնող ներքին մղումները իրենց արտահայտությունն են գտնում ամուսնության մեջ, որը մաքուր և անարատ է կանգնում աշխարհի չարիքից վեր:

Այդպիսի ամուսնությունը կարծում եմ ամենուրեք տղամարդկանց և կանանց ցանկությունն է, որի համար հույս են տածում, աղոթում են և որը փայփայում են:

Ամուրի եղբայրներ և քույրեր

Երբ որոշ ժամանակ առաջ ինքնաթիռով թռչում էի, ես վերցրեցի *New York Magazine* -ի մի օրինակ: Երբ թերթում էի այն, հասա մի բաժնի, որի վերնագիրն էր «Խիստ անձնական»: Ես հաշվեցի 159 հայտարարություն, որոնք դրվել էին միայնակ տղամարդկանց և կանանց կողմից, ովքեր զուգընկեր էին փնտրում: Ակնհայտ էր, որ նրանք ովքեր տեղադրել էին հայտարարությունները, աշխատել էին հնարավորինս լավագույն լույսի ներքո ներկայացնել իրենց: Կցանկանայի ժամանակ ունենալ դրանցից մի քանիսը կարդալու ձեզ համար: Դուք բավականություն կստանայիք դրանցից: Ոչ մի անպարկեշտ բնույթի բան չկար դրանցում: Հեշտ էր զգալ, որ այդ սրամիտ և խելացի նկարագրությունների ետևում կար շատ տխրություն և միայնակություն, մեծ ցանկություն գտնելու մի բարյացակամ ընկերակցի, որի հետ հնարավոր կլիներ քայլել կյանքի ճանապարհով:

Սիրտս ցավում է մեր միջից նրանց, հատկապես մեր չամուսնացած քույրերի համար, ովքեր երազում են ամուսնանալ և չեն կարողանում կարծես գտնել այն: Մեր Երկնային Հայրը նրանց համար պահում է ամեն խոստացված օրհնություն: Ես շատ ավելի քիչ կարեկցանք ունեմ երիտասարդների հանդեպ, ովքեր մեր հասարակության ավանդույթների համաձայն արտոնություն ունեն վերցնելու նախաձեռնությունը այս հարցերում, բայց այնքան շատ դեպքերում ձախողվում են դա անել: Նրանց հասցեին անցյալում խիստ խոսքեր են ասվել այս եկեղեցու Նախագահների կողմից:

Ամուսնական երանություն

Ամուսնությունը սովորաբար նշանակում է երեխաներ և ընտանիք: Կարող է երիտասարդ մայրը, որն իր առաջին երեխան է ծնել, կասկածել աստվածությանը և այդ ամենի զարմանալիքին ու հրաշքին: Կարո՞ղ է երիտասարդ հայրը, նայելով իր նորածին որդուն կամ դստերը զգա այլ բան, քան այն, որ սա Ամենազորի ծրագիրն է:

Իհարկե, ամուսնության մեջ ամեն ինչ չէ որ երանություն է: Տարիներ առաջ ես այս խոսքերը կտրեցի Ջենկինս Լլոյդ Ջոնսի գրած հոդվածի սյունակից.

«Թվում է մեր երիտասարդներից շատ հազարավորների մեջ, ովքեր ձեռք-ձեռքի տված կինոթատրոն են գնում, որ ամուսնությունը անթառամ վարդերով շրջապատված խրճիթ է, ուր մշտապես երիտասարդ գեղեցիկ ամուսինը տուն է գալիս մշտապես երիտասարդ և սքանչելի կնոջ մոտ: Երբ վարդերը թոշնում են և հայտնվում է ծածրույթն ու մուրիակները ամուսնածությամբ զբաղվող դատարանները մարդաշատ են դառնում...

Բոլոր նրանք, ովքեր պատկերացնում են, որ այդ երանությունը նորմալ է, պատրաստվում են շատ ժամանակ վատնել վազելով ամենուր և գոռալով, որ իրեն կողոպտել են» (“Big Rock Candy Mountains,” *Deseret News*, 12 June 1973, p. A4):

Ցավը գործընթացի մասն է կազմում

Փոթորկոտ եղանակը երբեմն հարվածում է ամեն տան: Ողջ գործընթացի հետ կապված անխուսափելի է շատ ցավ՝ ֆիզիկական, մտավոր և զգացմունքային: Վախի և անհանգստության հետ կա մեծ լարում և մաքառում: Կարծես թե երբեք բավականաչափ փող չի լինում ընտանիքի կարիքները բավարարելու համար: Հիվանդությունը զարկում է պարբերաբար: Տեղի են ունենում վթարներ: Մահվան զարհուրելի ձեռքը կարող է գաղտագողի հասնել՝ վերցնելու մեզ համար թանկ մեկին:

Բայց այս բոլորը թվում է ընտանեկան կյանքի մասն են կազմում: Իսկապես շատ քչերն են ապրում առանց ճաշակելու դրանցից մի քանիսը: Դա այդպես է եղել սկզբից ի վեր: Կայենը վիճեց Աբելի հետ, իսկ հետո արեց սոսկալի մի բան: Որքան պետք է որ մեծ լիներ վիշտը նրանց ծնողների՝ Ադամի և Եվայի սրտերում:

Մեր ապստամբ զավակների հանդեպ

Աբիսողոմը Դավթի երրորդ որդին էր, որդի, որն արտոնյալ էր և սիրված: Դավիթը նրան անվանել էր մի անունով, որը նշանակում էր «խաղաղության հայր»: Բայց նա ոչ թե խաղաղություն բերեց, այլ ավելի շուտ զայրույթ, սնափառություն և վիշտ: Նա սպանեց իր եղբորը և դավ նյութեց իր հոր դեմ: Իր չար գործերի մեջ, իր հոր գահին տիրելու իր ամբարիշտ ձգտմանը հետամուտ, երբ Աբիսողոմը ջորուն հեծած գնում էր, նրա գլուխը դիպավ կաղնու ծառի ճյուղերին, և նա մնաց ծառից անօգնական կախված: Հովաբը, Դավիթի եղբորորդին և թագավորի բանակի զորավարը, օգտվելով այս ապստամբ և դավաճան որդուց ազատվելու հնարավորությունից, գեղարդները խրեց Աբիսողոմի սիրտը: Նա հավանաբար կարծում էր թե լավություն էր անում թագավորին:

Բայց երբ Դավիթը լսեց իր որդու մահվան մասին, չնայած այդ որդին դավադրել էր նրան կործանելու համար, «թագավորը խռովեցաւ ու վեր գնաց դռան վերնատունը և լաց եղաւ, եւ այսպես էր ասում գնալով. Որդիս Աբիսողոմ, որդիս, որդիս... [Եվ] թագավորը ծածկեց իր երեսը, եւ [արտասվեց]» (Բ Թագավորաց ԺԸ.33, ԺԹ.4):

Մարդկային սերունդների պատմության ընթացքում ապստամբ երեխաների գործողությունները բերել են վիշտ և սրտի ցավ, բայց նույնիսկ երբ ապստամբություն է տեղի ունեցել, ընտանեկան կյանքի ամուր կապերը վրա են հասել օգակելու ապստամբին:

Ես չգիտեմ ավելի գեղեցիկ պատմություն ողջ գրականության մեջ, քան Տիրոջ պատմածը, ինչպես գրի է առնվել Ղուկասի տասնհինգերորդ գլխում: Դա մի հանդունգն և ագահ որդու մասին է, որը պահանջեց իր ժառանգությունը, որը նա մինչև վերջ վատնեց: Ձղջալով նա վերադարձավ իր հոր մոտ, և նրա հայրը հեռվից տեսնելով նրան վազեց դեպի նա և գրկեց նրան ու վզովն ընկավ և համբուրեց նրան:

Ամուսնալուծության մեծ խարազանը

Ձայնիս լսելիության սահմաններում ձեզանից ոմանք կարող են հիշել վշտեր ձեր իսկ փորձառություններից: Բայց ողբերգություններից մեծագույնը և կարծում եմ ամենասովորականը ամուսնալուծությունն է: Այն դարձել է մեծ խարազան: *World Almanac* –ի վերջին թողարկման մեջ ասվում է, որ Միացյալ Նահանգներում տասներկու ամիսների ընթացքում՝ 1989թ. մարտից մինչև 1990թ. մարտը, ամուսնացել են 2,423,000 զույգեր: Այս նույն ժամանակահատվածում 1,177,000 հազար զույգեր ամուսնալուծվել են (տես

The World Almanac and Book of Facts 1991 [New York: World Almanac, 1990], p. 834.):

Սա նշանակում է, որ Միացյալ Նահանգներում գրեթե ամեն երկու ամուսնության դեպքում տեղի է ունենում մեկ ամուսնալուծություն:

Սրանք միայն թվեր են գրված գրքի էջերում: Բայց դրանց ետևում ընկած են ավելի շատ դավաճանություն, ավելի շատ վիշտ, ավելի շատ անտեսվածություն և աղքատություն, պայքար և մաքառում, քան կարող է պատկերացնել մարդկային միտքը: Այս ազգի մեջ ամուսնալուծվածներից միլիոնավորներ միայնակ են, հուսախաբված, անապահով և դժբախտ: Միլիոնավոր միայնակ ծնողներ մաքառում են ընտանիքները պահելու համար, կրելով բեռներ, որոնք իրենց ունակությունից վեր է տանելու համար: Միլիոնավոր երեխաներ մեծանում են միայնակ ծնողով տներում, և ծնողը, սովորաբար մայրը, կարիքից դրդված ժամանակի մեծ մասը բացակայում է տնից: «Դռան բանալի ունեցող այս երեխաները» ամեն օր դպրոցից վերադառնում են դատարկ բնակարան, որտեղ շատ դեպքերում անհամապատասխան ուտելիք է լինում և միակ ապաստանը հեռուստացույցն է: Ոչ միայն երեխաներն են տանջվում, այլ ողջ հասարակությունը վճարում է երկյուղալի գին նրանց պայմանների համար:

Երբ նրանք մեծանում են, թմրադեղեր օգտագործելու հավանականությունը մեծանում է նրանց մեջ: Մեծ թիվ են կազմում նրանք, ովքեր դիմում են հանցագործ ուղիների: Չունենալով համապատասխան կրթություն, շատերը գործազուրկ են: Ոմանք աննպատակ վատնում են իրենց կյանքը: Միլիոնավորներ դառնում են հասարակության թափթփուկները, որոնք ընկած են անտեսվածության, բռնության և հուսախաբության օվկիանոսների ափին, անօգնական լինելով ուղղել իրենց պայմանները: *Time* ամսագիրը, քննարկելով Նյու Յորք քաղաքի խնդիրները, նշել է, որ ամենալուրջը ընտանիքների խորտակումն է: Նյու Յորք քաղաքի պետական դպրոցների աշակերտների վաթսուն տոկոսը, որոնց ընդհանուր թիվը կազմում է 600000, գալիս են մեկ ծնող ունեցող տներից: Համեմատական ուսումնասիրությունները անկասկած առաջ կբերեն նմանատիպ վիճակագրություն Ամերիկայի մյուս մեծ քաղաքների և աշխարհի մեծ քաղաքների մեծամասնության համար:

Մենք կառուցում ենք և պահում ավելի շատ բանտեր, քան ի վիճակի ենք: Ծախսերը հսկայական են, գրեթե պատկերացումից վեր:

Տագնապալի տոկոսներ կազմող դեպքերից, որոնցով բնակեցվում են այդ շինությունները, նրանց անցյալում կարելի է գտնել խորտակված տուն, որտեղ հայրը լքել էր իր տունը և մայրը զուր մաքառում էր հաղթահարելու իր դեմ ծառացած ընկճող դժվարությունները:

Եսասիրությունը ամուսնալուծության գլխավոր պատճառն է

Ի՞նչն է այս բոլոր տների խորտակման պատճառը: Ի՞նչ է պատահում ամուսնության հետ, որը սկսվում է միմյանց հանդեպ անկեղծ սիրով, անձնվեր և հավատարիմ ու ազնիվ լինելու ցանկությամբ:

Չկա պարզ պատասխան: Ես ընդունում եմ դա: Բայց ինձ թվում է, որ կան մի քանի ակնհայտ պատճառներ, որոնք հիմք են հանդիսանում այս խնդիրների շատ բարձր տոկոսայնության համար: Ես սա ասում եմ այսպիսի ողբերգությունների հետ ունեցած փորձառությունից ելնելով: Գտնում եմ, որ մեծամասամբ եսասիրությունն է արմատական պատճառը:

Ես գոհ եմ, որ երջանիկ ամուսնությունը այնքան շատ ռոմանտիկայի հարց չէ, որքան անհանգիստ մտահոգություն՝ զուգընկերոջ հարմարավետության և բարօրության համար:

Եսասիրությունն այնքան հաճախ է փողային խնդիրների հիմք դառնում, որոնք շատ լուրջ և իրական գործոն են ազդելով ընտանեկան կյանքի կայունության վրա: Եսասիրությունն է շնության, հանդիսավոր և սրբազան ուխտերը խախտելու արմատը՝ եսասիրական կիրքը բավարարելու համար: Եսասիրությունը սիրո ուղղակի հակադրությունն է: Դա ագահության քայքայիչ դրսևորումն է: Այն կործանում է ինքնակարգապահությունը: Այն ոչնչացնում է անձնվիրությունը: Այն պատառոտում է սրբազան ուխտերը: Այն տառապանքի է մատնում ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց:

Կան շատ-շատերը, ովքեր ամուսնության են գալիս փայփայված և երես առած և ինչ որ տեղ առաջնորդված զգալու, որ ամեն ինչ պետք է մանրամասնորեն ճիշտ լինի բոլոր դեպքերում, որ կյանքը զվարճությունների շարան է, որ ախորժակները պետք է բավարարվեն առանց սկզբունքը հաշվի առնելու: Որքան ողբերգական են այդպիսի դատարկ և անխելամիտ մտածողության հետևանքները:

Ծանրաբեռնված միայնակ մայր

Դառը հետևանքներ են նկատվում այն երեխաների կյանքում, ովքեր կարիք ունեն հոր, բայց չունեն հայր, որը նրանց սիրի, սովորեցնի, պաշտպանի և առաջնորդի իրենց կյանքի ճանապարհով՝ օրինակով և պատվիրանով: Թույլ տվեք պատմել ձեզ որոշ բան, որը ես լսել եմ երկու տարի առաջ այս թաբերնակլում: Առիթը չամուսնացած տղամարդկանց և կանանց մեծ հավաքույթն էր: Երեց Մարիոն Դ. Հանքսը վարում էր խմբակային քննարկումները: Այդ խմբի մեջ էր մի գրավիչ և ունակ երիտասարդ կին, ամուսնալուծված, յոթ երեխաների մայր, որոնք այդ ժամանակ հինգից տասնվեց տարեկանի սահմաններում էին: Նա ասաց, որ մի երեկո նա գնաց փողոցի դիմացի կողմի հարևանին ինչ-որ բան տալու: Լսեք նրա խոսքերը ինչպես ես

եմ հիշում դրանք. «Երբ շրջվեցի ետ դառնալու տուն, ես տեսա իմ տան լույսերը վառ: Ես լսեցի երեխաներիս ձայների արձագանքը, երբ մի քանի րոպե առաջ դուրս էի գալիս դռնից. «Մամ, ի՞նչ ենք ուտելու ճաշին»: «Ինձ կարո՞ղ ես գրադարան տանել», «Ես պետք է պլակատի թուղթ վերցնեմ այս երեկո»: Հոգնած ու ձանձրացած ես նայեցի այդ տանը և տեսա լուսերը վառ յուրաքանչյուր սենյակում: Ես մտածեցի բոլոր այդ երեխաների մասին, ովքեր տանը սպասում էին, որ ես գնամ և իրենց կարիքները բավարարեմ: Ուսերիս վրա դրված բեռը շատ ծանր թվաց:

Հիշում եմ ինչպես նայեցի արցունքներիս միջից դեպի երկինք և ասացի. «Ով Հայր իմ, ես ուղղակի չեմ կարող անել դա այս երեկո: Ես շատ եմ հոգնած: Ես չեմ կարող դիմակայել: Չեմ կարող գնալ տուն և մենակ հոգ տանել բոլոր այդ երեխաների համար: Կարո՞ղ եմ ուղղակի գալ Քեզ մոտ և մնալ Քեզ հետ միայն մեկ գիշեր: Ես կվերադառնամ առավոտյան»:

Ես իսկապես չէի լսում պատասխանի խոսքերը, բայց ես լսեցի դրանք իմ մտքում: Պատասխանն էր. «Ոչ, փոքրիկս, դու չես կարող գալ ինձ մոտ այժմ: Դու երբեք չես կամենա ետ վերադառնալ: Բայց ես կարող եմ գալ քեզ մոտ»:

Կան այդ երիտասարդ մոր նման այնքան շատերը, շատ-շատերը: Նա տեսնում է իր համար մատչելի աստվածային զորությունը: Նա բավականին բախտավոր է, որ ունի մեկը իր կողքին, ով սիրում է իրեն և օգնում: Միայնակության և հուսահատության մեջ տեսնելով ինչպես են իրենց երեխաները հակվում դեպի թմրադեղերը և հանցագործությունը և անօգնական այդ հակման դեմն առնելու, նրանք լալիս են և աղոթում:

Դեղամիջոցը Ոսկե Կանոնն է

Այս բոլորի համար կա դեղամիջոց: Այն չի գտնվում ամուսնալուծության մեջ: Այն գտնվում Աստծո Որդու ավետարանի մեջ: Նա էր, որ ասաց. «Այն որ Աստուած միավորեց, թող մարդը չբաժանէ»: (Մատթեոս ԺԹ.6): Ամուսնական լարվածության մեծ մասի համար դեղամիջոցը ամուսնալուծության մեջ չէ: Այն ապաշխարության մեջ է: Այն բաժանման մեջ չէ: Այն հասարակ ազնվության մեջ է, որն առաջնորդում է մարդուն ուղղել իր ուսերը և կատարել իր պարտականությունները: Այն գտնվում է Ոսկե Կանոնի մեջ:

Ամուսնությունը գեղեցիկ է, երբ որոնում են գեղեցկություն և զարգացնում այն: Այն կարող է լինել տգեղ և անհարմարավետ, երբ մարդը որոնում է հանցանքներ և կուրացած է առաքինության հանդեպ: Ինչպես Էդգար Ա. Գեստն է մի անգամ նշել. «Կյանքի երկար տարիներ են պահանջվում տունը օջախ դարձնելու համար» (“Home,” in *Collected Verse of Edgar A. Guest* [Chicago: Reilly and Lee Co., 1934], p. 12): Սա ճիշտ է: Ես կարող եմ ցույց տալ ձեզ այս եկեղեցու միջոցով հարյուր հազարավոր ընտանիքներ, ովքեր գործի են դնում այս սկզբունքը սիրով և խաղաղությամբ, կարգավարժմամբ և ազնվությամբ, սրտացավությամբ և անձնվիրությամբ:

Պետք է լինի ամուսնության հանդեպ և դրա ետևում աստվածատուր նախագծի լրջության և սրբազանության ճանաչում ինչպես ամուսնու, այնպես էլ կնոջ կողմից:

Պետք է լինի փոքրիկ հանցանքներն անտեսելու, ներելու և ապա մոռանալու պատրաստակամություն:

Պետք է լինի լեզվի զսպվածություն: Կատաղությունը չար և քայքայող բան է, որը կործանում է քնքշանքը և դուրս նետում սերը:

Պետք է լինի ինքնակարգապահություն, որը զսպում է կնոջ և երեխաների և սեփական անձի դեմ վիրավորանքը: Պետք է լինի Աստծո Հոգին՝ հրավիրվելով, որպեսզի գործակցի, դաստիարակի և զորացնի: Պետք է ընդունվի փաստը, որ յուրաքանչյուրը Աստծո զավակն է՝ հայրը, մայրը, որդին և դուստրը, յուրաքանչյուրը աստվածային ծննդի իրավունքով, և նաև ընդունվի այն փաստը, որ երբ մենք վիրավորում ենք նրանցից մեկին, մենք վիրավորում ենք Երկնային Հորը:

Դիմադրեք սատանայի աղերսանքներին

Ժամանակ առ ժամանակ կարող է լինել օրինական պատճառ ամուսնալուծության համար: Ես չեմ այն մարդը, որը կասեր որ այն երբեք արդարացված չէ: Բայց ես ասում եմ առանց տատանվելու, որ այս ժանտախտը մեր մեջ, որը կարծես աճում է ամենուրեք, Աստծուց չէ, այլ ավելի շուտ արդարության և խաղաղության հակառակորդի գործն է:

(Ժամանակի սղության պատճառով այս ելույթի մնացած մասը չհնչեց ամբիոնից: Նախագահ Հինքլին խնդրեց, որ այն ընդգրկվի Համաժողովի զեկույցներում):

Դուք չպետք է լինեք նրա զոհերը: Դուք կարող եք նրա խաբեություններից և աղերսանքներից վեր բարձրանալ: Ազատվեք գրգռող զվարճություններից, պոռնոգրաֆիայից, որը տանում է դեպի չար ցանկություններ և դատապարտելի գործունեություն: Կանայք, նայեք ձեր ամուսիններին որպես թանկագին զուգընկերներ և արժանի ապրեք այդ ընկերակցությանը: Ամուսիններ, տեսեք ձեր կանանց մեջ ձեր ամենաթանկ ունեցվածքը ժամանակի և հավերժության համար, յուրաքանչյուրի մեջ Աստծո դուստր, զուգընկեր, որի հետ դուք կարող եք քայլել ձեռք-ձեռքի տված, փայլող արևի և փոթորիկի միջով, կյանքի բոլոր վտանգների և հաղթանակների միջով: Ծնողներ, տեսեք ձեր երեխաների մեջ Երկնային Հոր որդիներին և դուստրերին, որը ձեզ պատասխանատվության կկանչի նրանց համար: Կանգնեք միասին որպես նրանց պահապաններ, նրանց պաշտպաններ, նրանց ուղեկիցներ, նրանց խարիսխներ:

Ընտանիքի նախագծողը Աստված է

Ազգերի ուժը գտնվում է մարդկանց տներում: Աստված է ընտանիքի նախագծողը: Նա է նախատեսել, որ մեծագույն երջանկությունը, կյանքի մեծագույն բավարարվածություն առաջացնող կողմերը, ամենամեծ ուրախությունները որպես հայրեր, մայրեր և երեխաներ պետք է գան մեր միասնական ընկերակցությունների և միմյանց համար մեր մտահոգությունների միջոցով:

Աստված օրհնի մեր ժողովրդի տները: Թող Նա օրհնի նրանց տները, որպեսզի այնտեղ լինեն անձնվեր և իսկական հայրեր և լավ ու սքանչելի մայրեր, և հնազանդ ու մեծ ձգտում ունեցող երեխաներ՝ դաստիարակված «Տիրոջ խրատով ու ուսմունքով» (Եփես. 1.1), ես խոնարհաբար աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԻՆՉՈ՞Ւ ԱՄՈՒՍՆԱՆԱԼ ՏԱՃԱՐՈՒՄ

Երեց Ջոն Ա. Ուիդթսոու

Տասներկու Առաքյալների Քվորումից

Evidences and Reconciliations, 297–301

Ամուսնությունը, որն ամենակարևոր իրադարձությունն է ծննդյան և մահվան միջև, վճռորոշ պայման է կյանքի երջանկության համար: Այդ պատճառով դրա մեջ պետք է մտնել մեծագույն զգուշությամբ: Կյանքի ընկերակից պետք է լինի նա, ով ապրում է արդար, որին լիառատ սեր կարելի է տալ, և որը կարող է հարգվել իր ամենօրյա քայլերում և խոսքերում: Նմանապես, ամուսնության ուխտը պետք է այնպիսին լինի բնույթով, որ օգնի ստեղծել, կառուցել և պահպանել ամենօրյա երջանկությունը: Ինչպես հաջորդող օրերն են, այնպես էլ կլինի ողջ կյանքը: Հարստությունը, զորությունը և հռչակը, անկարելի է նկարագրել համեմատած այն ուրախության հետ, որը գալիս է երջանիկ ընտանեկան կյանքից:

Եկեղեցին առաջարկում է ամուսնության արտոնությունը տաճարներում, որպես ամենալավ միջոց հաստատելու և պահպանելու երջանկություն իր անդամների ընտանիքներում: Դա համեմատությունից վեր արտոնություն է, որը յուրաքանչյուր խոստումնալի հարսնացու և փեսացու պետք է փնտրի և օգտագործի: Պայմաններն այնպիսին են, որ յուրաքանչյուր անձ կարող է իրեն համապատասխանեցնել ստանալու այդ արտոնությունը, որն այնքան անկեղծորեն ցանկանում են ճշմարիտ Վերջին Օրերի Սրբերը:

Ահա ինը համառոտ պատասխաններ «Ինչո՞ւ ամուսնանալ տաճարում» հարցին:

1. *Դա Տիրոջ ցանկությունն է և կամքը:* Տաճարը աստվածային հրամանագրով այն տեղն է, որտեղ ամուսնությունը պետք է հնարավորության դեպքում կատարվի: Ամուսնությունը այնքան վճռական կարևորություն ունի կյանքում, որ այն պետք է սկսվի լիովին հնազանդվելով Աստծո օրենքներին: Սերն ամուսնության հիմքն է, բայց սերն ինքնին օրենքի արդյունք է և ապրում է օրենքով: Ճշմարիտ սերն օրինապահ է, քանզի բարձրագույն բավարարվածությունները գալիս են օրինապահ կյանքից:

Բացի այդ, տղամարդու ճշմարիտ սերը կնոջ հանդեպ միշտ ներառում է սեր Աստծո հանդեպ, որից բխում են բոլոր լավ բաները: Աստծո հանդեպ մեր սիրո ապացույցը Նրա օրենքին հնազանդվելն է: Բացի այդ կյանքն այնքան լի է խնդիրներով, որ ամուսնացած զույգը առաջինը պետք է ձգտի ունանալ Տիրոջ բարեհաճությունը: Բոլոր տաճարում ամուսնացածներին այցելում է գալիս է ապահովության և հանգստավետության մի զգացում: Նրանք հնազանդվել են օրենքին: Նրանք գոհացրել են Տիրոջը: Որպես Աստծո թագավորության օրինապահ քաղաքացիներ, նրանք հատուկ հայցում են աստվածային օգնություն, օրհնություններ և պաշտպանություն: Համաձայնությունը Եկեղեցու սահմանված կարգերի հետ միշտ կառուցում է երջանկություն կյանքում: Ամուսնությունը ճիշտ ձևով պետք է սկսվի՝ օրենքին հնազանդվելով:

2. *Դա ամուսնության սրբազան ուխտի էության հետ ներդաշնակության մեջ է:* Տաճարային ամուսնությունները ավելի ներդաշնակության մեջ են նաև այդ առիթի բնույթի և կարևորության հետ: Դրանք կատարվում են հատկապես այդ նպատակին ծառայող կնքման գրավիչ սենյակում: Ծիսակատարությունն ինքնին պարզ է, գեղեցիկ և խորը: Համեմատաբար քիչ վկաներ են ներկա: Խաղաղություն և կարգ ու կանոն է գերիշխում: Չկան միտքը շեղող արտաքին ծուղակներ: Հնարավոր է ուշադրությունը լիովին հատկացնել կատարվող սրբազան ուխտերին և դրանց հաջորդող օրհնություններին, որոնք կտարածվեն հավերժական գոյության վիթխարի շրջանի վրա: Ուշադրությունը կենտրոնացած է ամուսնության ծիսակատարության իմաստի վրա և ոչ թե ուշադրությունը շեղող արտաքին առանձնահատկությունների վրա, որոնք բնորոշ են խնամքով մշակված հասարակական հարսանիքի միջավայրում: Հոգու այսպիսի կենտրոնացումը կապվող ուխտերի վրա և խոստացված օրհնությունների վրա, դառնում է ուրախ, երջանիկ հիշողություն անհամեմատ ավելի քաղցր, քան տաճարի պատերից դուրս կատարվող սովորական բուռն և ցուցադրական հարսանիքները: Իր պարզ գեղեցկությամբ հաճելի և խորը իմաստ ունի տաճարային հարսանիքը:

Տաճարային ծիսակատարությունից հետո կա լայն հնարավորություն ընդունելության համար, պարզ կամ մանրամասնորեն մշակված, որի ընթացքում ընկերները կարող են

հավաքվել շնորհավորելու զույգին և ցանկանալու նրանց երջանկություն:

3. *Այն միտված է ապահովելու ամուսնական երջանկություն:* Փորձառությունը ցույց է տվել, որ տաճարային ամուսնությունները ընդհանրապես ամենաերջանիկն են: Համեմատաբար ավելի քիչ են ամուսնալուծությունները այն զույգերի մեջ, ովքեր կնքվել են տաճարի զոհասեղանի մոտ: Սա արտահայտվում է վստահելի վիճակագրության միջոցով: Ամուսնության այսօրվա տեսակետները նկատելիորեն խիստ չեն, սակայն կյանքի հանդեպ օրինավոր մոտեցում ունեցող ոչ մի մարդ չի մտնի ամուսնական կապի մեջ որպես փորձարկում: Կյանքի երջանկությունը ստեղծվում է կամ կործանվում ամուսնության միջոցով: Ամուսնալուծությունը չի վերադարձնում մարդկանց իրենց նախկին վիճակին: Մնում են սպիներ: Հապշտապ հարսանիքները և դրանց հետևող հեշտ ապահարզանները սպառնում են մարդկանց և հասարության բարօրությանը: Երբ ընտանիքի ամբողջականությունը՝ հասարակության միավորը, անհետանում է և ընտանեկան հարաբերություններին անհարգալից են մոտենում, հասարակությունը գնում է դեպի աղետ: Լուրջ խորհրդածությունը, որը նախորդում է տաճարային ամուսնությանը, հանդիսավորությունը, որն ուղեկցում է նրան և այն զորությունը, որը կնքում և օրհնում է այն, ստեղծում են ամուր պաշտպանություն օրվա շատ չարիքների դեմ: Տաճարային ամուսնությունը պաշտպանում է և անխախտ պահում երջանկությունը, որն ըստ իրավունքի պատկանում է ամուսնացած վիճակին:

4. *Այն թույլ է տալիս ամուսնու և կնոջ ընկերակցություն ժամանակի և ողջ հավերժության ընթացքում:* Տաճարային և բոլոր այլ ամուսնությունների միջև հիմնական տարբերությունը մեծագույն հետևանքի մեջ է: Տաճարում, և միայն այնտեղ հարսանեկան զույգը միացվում է ժամանակի և հավերժության համար: Պայմանագիրն անվերջ է: Այստեղ և այսուհետև, երկրի վրա և այն կողմում, նրանք կարող են միասին ճանապարհորդել սիրառատ ընկերակցությամբ: Այս թանկագին պարգևը հաստատում է Վերջին Օրերի Սրբերի հավատքը, որ այս կյանքից հետո գոյությունը կարող է լինել ակտիվ, օգտակար, առաջադիմող: Սերը, որը վերջանում է մահվամբ, անցողիկ է, խղճուկ և անօգնական: Ամուսնությունը, որը տևում է միայն այս երկրային կյանքի ընթացքում, տխուր է, քանզի սերը, որը հաստատվում է տղամարդու և կնոջ միջև, երբ նրանք միասին են ապրում և մեծացնում իրենց ընտանիքը, չպետք է մահանա, այլ պիտի ապրի և բուռն աճի հավերժական տարիների հետ: Ճշմարիտ սերը հույս ունի և աղոթում է սիրելիների հետ ընկերակցության անվերջ շարունակության համար: Նրանք, ովքեր կնքված են միմյանց հետ ողջ հավերժության համար, սերը միշտ ջերմ է, ավելի հույսեր ներշնչող, հավատքով, քաջարի և աներկյուղ: Այդպիսի մարդիկ ապրում են ավելի հարուստ, ավելի ուրախ կյանքով: Նրանց համար երջանկությունը և դրա ստեղծումը չունի վերջ: Մռայլ, զարհուրելի, վախով լի է այն հայացքը սիրո վրա, որը վերջանում է մահով: Եկեղեցու երիտասարդությունը չպետք է հրաժարվի հավերժական ամուսնության պարգևից:

> ***Ճշմարիտ սերը հույս ունի և աղոթում է անվերջ հարատևման համար:***

5. *Այն ապահովում է երեխաների և ընտանեկան հարաբերությունների հավերժական տիրակալություն:* Սակայն կա դեռ հավելյալ մի օրհնություն ևս: Երեխաները, որոնք ծնվում են տաճարային ուխտի մեջ, պատկանում են իրենց ծնողներին ողջ ժամանակի և հավերժության համար: Այսինքն ընտանեկան հարաբերությունները երկրի վրա շարունակվում են հավերժ, այստեղ և այսուհետև: Ընտանիքը, որը շարունակվում է երկրից դեպի հաջորդ աշխարհ, դառնում է միավոր հավիտենական կյանքում: Երկար հավերժություններում մենք միայնակ թափառականներ չենք լինի, բայց կողք-կողքի, մեր սիրելիների հետ, ովքեր մեզանից առաջ են գնացել, և նրանք, ովքեր պիտի հետևեն, մենք կճանապարհորդենք անվերջ ճամփորդություն: Ի՞նչ մայր չի գնահատում այս խոստումը: Ի՞նչ հայր չի զգում իր սիրտը ջերմացած իր ընտանիքի հավերժական տիրակալության առթիվ: Ինչպիսի՞ սրտաբեկություններից կարելի էր խուսափել, եթե մարդկությունը հավատարիմ լիներ ճշմարտությանը և ենթարկվեր Աստծո Քահանայության կնքող զորությանը: Տաճարային ամուսնությունը դառնում է անվեջ ուրախության խոստում:

6. *Այն գործում է որպես կաշկանդող բան չարիքի դեմ:* Խավարի զորությունները միշտ ակտիվ են դրդելու մարդկությանը դեպի չար ուղիներ: Հաճախ մենք գայթակղվում ենք անել հիմար բաներ: Ընտանիքում փոքրիկ բաները կարող են տանել դեպի տարաձայնություն: Ապերջանկություն ստեղծելը արդարության հակառակորդի նպատակն է: Այստեղ երևում է տաճարային ամուսնության մեծագույն օրհնությունները: Նրանք, ովքեր կնքվել են տաճարում, իրենց աչքերը սևեռել են հավերժության վրա: Նրանք չպետք է հրաժարվեն խոստացված օրհնություններից: Ընտանիքը նրանց համար հավիտենական տիրակալություն է: Նրանք հիշում են ուխտերը, որոնք հնարավոր են դարձնում այս հավերժական ընկերակցությունը: Տաճարային ամուսնությունը իր բոլոր նշանակություններով հանդերձ դառնում է մի կաշկանդող ուժ գայթակղության առջև: Բոլոր ընտանեկան գործերը ավելի հավանական է ձևավորել անմահ հարաբերության ակնկալիքով: Տաճարային ծիսակատարության հիշողության ազդեցության ներքո ընտանեկան տարաձայնությունները կուլ են գնում խաղաղությանը, ատելությունը փոխվում է սիրո, վախը՝ խիզախության, և չարը նախատվում է և դուրս նետվում: Աշխարհը խաղաղության մեծ կարիք ունի: Տիրոջ տաճարներից և դրանց ներսում տեղի ունեցող բոլոր

արարողություններից սկիզբ է առնում ճշմարտության ոգին, որը խաղաղության հիմքն է:

7. *Այն անվերջ առաջընթացի հնարավորություն է տալիս:* Ժամանակակից հայտնությունը բացատրում է նրանց բարձր ճակատագիրը, ովքեր կնքված են հավիտենական ընկերակցության համար: Նրանց կտրվի հնարավորություն իրենց զորությունների ավելի մեծ օգտագործման համար: Դա նշանակում է առաջընթաց: Նրանք ավելի պատրաստակամորեն կպահպանեն իրենց տեղը Տիրոջ ներկայության մեջ, նրանք ավելի սրընթաց կաճեցնեն յուրաքանչյուր աստվածային զորություն, նրանք ավելի սերտորեն կմոտենան Աստծո նմանությանը, նրանք ավելի լիովին կիրականացնեն իրենց աստվածային ճակատագիրը: Եվ այս առաջընթացը չի հետաձգվի մինչև կյանքը մահվանից հետո: Այն սկսվում է այստեղ, այսօր, նրանց համար, ովքեր հնազանդություն են հանդես բերում օրենքին: Կյանքն անհամ է առանց առաջընթացի: Հավերժական ամուսնությունը իր բոլոր նշանակություններով հանդերձ, ապահովում է անվերջ առաջադիմություն: «Հավերժական աճը» պարգև է բոլոր նրանց համար, ովքեր մտնում են հավերժական ամուսնության ուխտի մեջ, ինչպես որ ի կատար է ածվում Տիրոջ տաճարներում:

8. *Այն դնում է ընտանիքը Քահանայության իշխանության պաշտպանության ներքո:* Նրանք, ովքեր ամուսնացել են տաճարում, կնքվել են Սուրբ Քահանայության իշխանությամբ ժամանակի և հավերժության համար: Սա մարդու պահպանության համար տրված գերագույն իշխանությունն է: Այդ զորությունը բխում է անտեսանելի աշխարհից: Այն կյանք և լույս է տալիս աշխարհին: Մարդկային կյանքը իր հոգսերով և մտահոգություններով վերափոխվում է փայլուն փորձառության և արկածի, երբ այն կառչում է այդ աստվածային ուժին և օրհնվում է նրա միջոցով: Քայլել աստվածային իշխանության ներքո, ունենալ այն, լինել նրա մի մասը, նշանակում է գլուխը բարձր քայլել, երախտագետ սրտով, մեր ընկերակից մարդկանց և մեր Հոր առջև, որ երկնքում է: Տղամարդիկ և կանայք, ովքեր դուրս են եկել այս զորությամբ Տիրոջ սուրբ տնից, կօղակվեն աստվածային պաշտպանությամբ և կքայլեն ավելի ապահով երկրի դժվարությունների մեջ: Նրանք կլինեն վերջնական հաղթողները երկրի, քանզի նրանք գալիս են Աստծո անսահման զորությամբ՝ լուծելու երկրի խնդիրները: Հոգևոր ուժն ուղեկցում է բոլորին, ովքեր ամուսնանում են տաճարում, եթե նրանք այնուհետև պահում են իրենց սրբազան ուխտերը:

9. *Այն ապահովում է Աստվածանման ճակատագիր մարդկային էակների համար.* «Եթե մի տղամարդ ամուսնանա մի կնոջ հետ, իմ խոսքով, որն իմ օրենքն է, և նոր և հավիտենական ուխտով, և այն նրանց համար կնքվի խոստումի Սուրբ Հոգով, նրա կողմից, ում ես օծել եմ, ում ես նշանակել եմ այս զորությունը և այս քահանայության բանալիները. և նրան կասվի,–Դուք առաջ կգաք առաջին հարության մեջ. և եթե դա լինի առաջին հարությունից հետո, ապա հաջորդ հարության մեջ. և կժառանգեք գահեր, թագավորություններ, իշխանություններ և զորություններ, տիրապետություններ, բոլոր բարձրությունները և խորությունները...

Այն ժամանակ նրանք կլինեն աստվածներ, որովհետև նրանք վերջ չունեն. Հետևաբար նրանք կլինեն հավիտենականությունից հավիտենականություն, որովհետև նրանք հարատևում են. այն ժամանակ նրանք կլինեն բոորից վեր, որովհետև բոլոր բաները ենթակա են նրանց» (ՎԱՈՒ 132.19, 20, տես նաև *The Improvement Era*, 17:1064; 30:1098; 34:704; 39:214; 41:136, 220, 268, 330; 43:586):

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Երեց Բոյդ Կ. Փաքեր

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, ապր. 1981, 14—17, կամ Ensign, մայիս 1981, 13–15

Մարգարե Հակոբը կանխագուշակել է մի ժողովրդի կործանումը, որովհետև նրանք կույր էին սովորական բաների հանդեպ, «կուրություն, որը,- ասել է նա,- եկել էր նշանակետից այն կողմ նայելուց» (Հակոբ 4.14):

Մենք հաճախ որոնում ենք բաներ, որոնք մեզ թվում է չենք կարող գտնել, երբ դրանք հեշտորեն հասանելի սովորական, ակնհայտ բաներ են:

Ես ցանկանում եմ խոսել մի սովորական բառի մասին: Ամիսներ շարունակ փորձեցի, իսկապես փորձեցի, ինչպես կարող եմ ներկայացնել այդ բառը, որպեսզի դուք խիստ տպավորվեք նրանով և նրա նշանակությամբ:

Ամուսնություն

Այդ խոսքը *ամուսնությունն* է:

Կուզենայի կարողանալ ձեր առջև դնել նուրբ քանդակված սնդուկ, դնելով այն որտեղ լույսը ճիշտ է ընկնում: Ես խնամքով կբացեի այն և ակնածալից կհանեի *ամուսնություն* բառը:

Միգուցե այդ ժամանակ դուք կտեսնեիք, որ դա անգին է:

Ես չեմ կարող ցույց տալ ձեզ այդ ձևով, այսպիսով ես կանեմ այն, ինչ լավագույնս կարող եմ, օգտագործելով սովորական այլ բառեր:

Իմ նպատակն է հաստատել և պաշտպանել, խրախուսել և աջակցել ամուսնությանը:

Մեր օրերում շատերն այն համարում են առնվազն կիսաթանկարժեք մի բան, իսկ ոմանք էլ՝ անպիտան մի բան:

Ես տեսել եմ և լսել, ինչպես դուք եք տեսել և լսել ազդանշաններ՝ բոլորը մեր մասին, զգուշությամբ գործիքավորված՝ համոզելու մեզ, որ ամուսնությունը հնաոճ է և ազատությանը խանգարող:

Ամուսնության կեղծիք

Այժմ առկա է բավականին գերակշռող մի գործառություն, չամուսնացած զույգերն ապրում են համատեղ՝ ամուսնության մի կեղծիք: Նրանք կարծում են, թե իրենք կունենան այն ամենը, ինչ ամուսնությունը կարող է տալ առանց դրա հետ կապված պարտավորությունների: Նրանք սխալվում են:

Այնուամենայնիվ նրանք, ովքեր հուսով են գտնել շատ բան այդպիսի մի հարաբերության մեջ, նրանք ավելի շատ կկորցնեն: Առանց ամուսնության համատեղ ապրելը կործանում է ինչ-որ բան բոլոր նրանց ներսում, ովքեր անում են դա: Առաքինությունը, արժանապատվությունը և բնավորության կատարելագործումը թոշնում է:

Պնդելը, որ դա տեղի չի ունենա, չի կանխարգելի կորուստը, և երբ այս արժանիքները կորչում են, հեշտորեն չեն վերականգվում:

Ենթադրել, որ մի օր նրանք անդարձ կփոխեն իրենց սովորույթները և անմիջապես կհայցեն բոլոր այն բաները, որոնք իրենցը կարող էին լինել, եթե նրանք ամուսնությունը ծաղր սարքած չլինեին, պետք է ենթադրել մի բան, որը չի լինի:

Մի օր, երբ ուշքի գան, նրանք կհնձեն հիասթափություն:

Մարդ չի կարող այլասերել ամուսնությունը առանց արատավորելու այնպիսի խոսքեր, ինչպիսիք են՝ *տղա, աղջիկ, տղամարդկություն, կանացիություն, ամուսին, կին, հայր, մայր, մանկիկ, երեխաներ, ընտանիք, օջախ:*

Այդ ժամանակ մի կողմ կգցվեն այնպիսի խոսքեր, ինչպիսիք են *անհասիրությունը* և *զոհաբերությունը*: Այդ ժամանակ ինքնահարգանքը կնվազի, և սերն ինքը չի կամենա մնալ:

Եթե դուք գայթակղվել եք մտնելով այդպիսի հարաբերության մեջ, կամ եթե դուք այժմ ապրում եք մեկ ուրիշի հետ առանց ամուսնության, թողեք այդ: Ետ քաշվեք դրանից: Հեռացեք դրանից: Մի շարունակեք այն: Կամ եթե կարող եք, դարձրեք այն ամուսնություն:

Ամուսնությունը սրբազան է

Նույնիսկ անկայուն ամուսնությունը լավ նպատակի կծառայի, քանի դեռ երկու մարդիկ պայքարում են պահել այն քայքայվելուց:

Իսկ այժմ նախազգուշացնող մի խոսք: Ով կործանում է ամուսնությունը, իսկապես իր վրա է վերցնում շատ մեծ պատասխանատվություն: Ամուսնությունը սրբազան է:

Կամավոր կործանել ամուսնությունը, լինի դա ձերը, թե մեկ ուրիշ զույգինը, նշանակում է վիրավորել մեր Աստծուն: Նման արարքը թեթևորեն չի դիտարկվի Ամենազորի դատաստանի ժամանակ և հավերժական բաների սխեմայում հեշտորեն չի ներվի:

Մի սպառնացեք, ոչ էլ կործանեք ամուսնությունը: Ձեր կողակցի հանդեպ հիասթափությունը կամ որևէ այլ մարդու հանդեպ հրապուրանքը մի դարձրեք արդարացում ամուսնությունը խորտակող վարքագծի համար:

Այս հսկայական օրինազանցությունը հաճախ ծանր բեռ է դնում փոքրիկ երեխաների վրա: Նրանք չեն հասկանում դժբախտ չափահասների եսասեր ձգտումները, ովքեր կամենում են գնել իրենց իսկ բավարարվածությունը անմեղների գնով:

Աստված Ինքն է սահմանել, որ սիրո ֆիզիկական արտահայտությունը, արական և իգական այդ միությունը, որն ուժ ունի կյանք ստեղծելու, թույլատրվում է միայն ամուսնության մեջ:

Ամուսնությունը այն ապաստանն է, որտեղ ստեղծվում են ընտանիքները: Այն հասարակությունը, որը ցածր է գնահատում ամուսնությունը, քամի է ցանում և ժամանակին պտտահողմ կհնձի, և եթե այնուհետև նրանք չապաշխարեն, իրենց վրա բնաջնջում կբերեն:

Դժբախտությունը ուշադրություն է գրավում

Ոմանք մտածում են, որ պետք է ակնկալել, որ ամեն ամուսնություն անհաջողություն կկրի և կավարտվի ամուսնալուծությամբ՝ հույսերն ու երազանքները կանխորոշված ավարտվելու ջարդված և տխուր խորտակմամբ:

Որոշ ամուսնություններ իսկապես լուրջ խնդիրներ ունեն, իսկ մի քանիսը վերջանում են բաժանությամբ, բայց մենք չպետք է այդ պատճառով կորցնենք հավատքն ամուսնության հանդեպ, ոչ էլ վախենանք դրանից:

Բաժանված ամուսնությունները տիպական չեն:

Հիշեք, որ անախորժությունը ուշադրություն է հրավիրում: Մենք ճամփորդում ենք մայրուղով, որի երկու կողմով էլ հազարավոր ավտոմեքենաներ են ընթանում, և մենք առանձնակի ուշադրություն չենք դարձնում դրանցից որևէ մեկին Բայց երբ վթար է տեղի ունենում, մենք անմիջապես նկատում ենք դա:

Եթե կրկին վթարի ենք հանդիպում, մենք կեղծ տպավորություն ենք ստանում, որ ոչ ոք չի կարող ապահով գնալ ճանապարհով:

Մեկ վթարը կարող է հայտնվել թերթերի առաջին էջերում, մինչդեռ հարյուր միլիոնավոր մեքենաներ, որոնք ապահով անցնում են, հիշատակելու արժանի չեն համարվում:

Գրողները կարծում են, թե երջանիկ, կայուն ամուսնությունը չունի դրամատիկ գրավչություն, կոնֆլիկտ, որն արժե նկարագրել գրքում կամ պիեսում կամ էլ կինոֆիլմում: Այդ պատճառով մենք անընդհատ լսում ենք կործանվածների մասին և կորցնում ենք մեր հեռանկարը:

Ես հավատում եմ ամուսնությանը: Ես հավատում եմ, որ այն իդեալական ձև է մարդկային կյանքի համար: Ես հավատում եմ, որ այն մարդկային ապրելակերպի կատարյալ ձև է: Գիտեմ, որ այն կարգված է Աստծո կողմից: Դրա հետ կապված սահմանափակումները նախատեսված են մեր երջանկությունը պաշտպանելու համար:

Պահպանեք ամուսնության հանդեպ հավատքը

Ես չգիտեմ ավելի լավ ժամանակ աշխարհի ողջ պատմության մեջ երիտասարդ որևէ զույգի համար, ովքեր չափահաս են և պատրաստված, և ովքեր սիրահարված են, որպեսզի մտածեն ամուսնության մասին: Չկա ավելի լավ ժամանակ, որովհետև սա *ձեր* ժամանակն է:

Ես գիտեմ, որ այժմ շատ անհանգիստ ժամանակներ են: Այնպիսի փորձանքներ, որոնք տեղի են ունենում այսօր, շատ դժվար են ամուսնությունների համար:

Մի կորցրեք հավատքն ամուսնության հանդեպ: Նույնիսկ, եթե անցել եք ամուսնալուծության դժբախտության միջով և շրջապատված եք ամուսնության հուշերով, որոնք փշուրփշուր են եղել:

Եթե դուք հարգել եք ձեր երդումները, իսկ ձեր զուգընկերը չի հարգել, հիշեք Աստված հետևում է մեզ: Մի օր բոլոր վաղվա օրերն անցնելուց հետո, կլինի հատուցում: Ովքեր բարոյական են եղել և հավատարիմ իրենց ուխտերին, երջանիկ կլինեն, իսկ ովքեր բարոյական չեն եղել, կլինեն այլ վիճակում:

Որոշ ամուսնություններ խորտակվում են, չնայած ամուսնությունը միասնական պահելուն ուղղված զուգընկերներից մեկի ջանքերին: Չնայած սխալներ կարող են լինել երկու կողմից էլ, ես չեմ ուզում դատապարտել անմեղին, որը տառապում է, չնայած այն ամենին, ինչ կամեցել և արել են՝ ամուսնությունը փրկելու համար:

Իսկ ձեզ ասում եմ մի կորցրեք հավատքը ամուսնության հանդեպ: Թույլ մի տվեք ձեր հիասթափությունը ձեզ դառնացնի կամ անպատկառ դարձնի, կամ արդարացնի ամեն անարժան վարմունք:

Եթե դուք ամուսնանալու հնարավորություն չեք ունեցել, կամ եթե մահը խլել է ձեր կողակցին, պահեք ձեր հավատքը ամուսնության հանդեպ:

Մի քանի տարի առաջ իմ ընկերներից մեկը կորցրեց իր սիրելի կնոջը: Նա մահացավ երկարատև հիվանդությունից հետո, և նա անօգնական տագնապով հետևում էր, երբ բժիշկները կորցրեցին ողջ հույսը:

Մի օր վերջին մոտ կինն ասաց նրան, որ երբ ինքը կյանքից հեռանա, ուզում է, որ ամուսինը նորից ամուսնանա առանց երկար սպասելու: Նա ընդդիմացավ: Երեխաները գրեթե մեծ էին, և նա կարող էր մնացած ճանապարհը միայնակ անցնել:

Նա շրջվեց և արտասվելով ասաց. «Մի՞թե ես այդպիսի ձախողակն եմ եղել, որ բոլոր միասին անցկացրած այս տարիներից հետո, դու նախընտրում ես չամուսնացած մնալ: Մի՞թե ես այդպիսի ձախողակն եմ եղել»:

Ուրույն ժամանակին եկավ մեկ ուրիշը և նրանց համատեղ կյանքը վերահաստատեց նրա հավատքը ամուսնության հանդեպ: Եվ ես ունեմ մի զգացում, որ նրա առաջին սիրված կինը խորապես երախտապարտ է երկրորդին, որը լրացրեց տեղը, որն ինքը չկարողացավ պահել:

Ամուսնության ուրախություններն ու ստուգարքները

Ամուսնությունը դեռևս ապահով է, իր բոլոր քաղցր իրագործումներով, բոլոր իր ուրախությամբ և սիրով: Ամուսնությունում մարդկային հոգու բոլոր արժանավոր ձգտումները, բոլոր այն, ինչ ֆիզիկական է ու զգացմունքային և հոգևոր, կարող է իրագործվել:

Ամուսնությունը չի լինում առանց տարբեր տեսակի փորձությունների: Այս ստուգումները կոփում են առաքինությունն ու ուժը: Ամուսնությունն ու ընտանեկան կյանքը ամրապնդվում են տղամարդկանց և կանանց շնորհիվ, ովքեր մի օր կվեհանան:

Աստված կարգել է, որ կյանքը պետք է ունենա իր սկիզբը ամուսնության պաշտպանիչ ապաստանի ներքո, առաջանալով սիրո լիակատար արտահայտմամբ և փայփայվելով ու խնամվելով ավելի խորը սիրով, որը միշտ ուղեկցվում է զոհաբերությամբ:

Ամուսնությունը կայացում է պահանջում ողջ կյանքի ընթացքում՝ երիտասարդության և երիտասարդ սիրո ընթացքում, հարսանիքի և մեղրամիսի, երեխաների հայտնվելու հետ և նրանց դաստիարակելու ընթացքում: Հետո գալիս են ոսկե տարիները, երբ երիտասարդները թողնում են բույնը կառուցելու իրենց սեփականը: Հետո ցիկլը կրկնվում է, ինչպես Աստված է սահմանել, որ պիտի լինի:

Հավերժական սեր, հավերժական ամուսնություն, հավերժական աճ

Եկեղեցում կա մեկ այլ չափորոշիչ ամուսնության համար, որի մասին մենք գիտենք: Այն եկել է հայտնությամբ: Այս

փառահեղ, գերագույն ճշմարտությունն ուսուցանում է մեզ, որ ամուսնությունը նախասահմանված է հավերժական լինելու:

Կան ուխտեր, որոնք մենք կարող ենք կապել, եթե մենք կամենանք, և կապեր, որոնք կարող ենք կնքել, եթե մենք արժանի ենք, որն ամուսնությունն ապահով կպահի և անձեռնմխելի մահվան վարագույրից այն կողմում:

Տերը հայտարարել է. «Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Եկեղեցու ողջ գործունեության վերջնական նպատակն այն է, որ տղամարդը և կինը և նրանց երեխաները կարողանան երջանիկ լինել տանը, և ընտանիքը կարողանա հարատևել հավերժության ընթացքում: Ողջ Քրիստոնեական վարդապետությունը ձևակերպվել է պաշտպանելու անհատին, տունը և ընտանիքը:

Այս տողերն արտահայտում են որոշ բան մարդու հավերժական առաջընթացում ամուսնության տեղի մասին.

Վառվող կրակ ունենք ներսում,
Լույս վառելու լույսեր,
Կյանքի սրբազան կրակ,
Որը եթե սխալ է գործածվում
Ծխի խեղդող ամպ է դառնում,
Վիշտ ու ցավ է այն բերում:
Երբ օրենքով է գործածվում,
Այս ուժը կյանք, ընտանիք,
Երջանկություն է շնորհում:

Փորձիչները խավարի
Ձգտում են խեղել այս ուժը
Չար և պիղծ գործերով
Մինչև գալիս է ժամը
Դատաստանի և հատուցման,
Երբ դառն արդյունքներ են թափվում,
Կյանք տվող ուժերն արդեն,
Գնացած, մահացած են լինում:

Գիտեմ այս ուժն է բանալին,
Աստծո ծրագրի բանալին,
Որը բերում է կյանք հավերժական,
Անմահություն մարդու համար:
Իսկ ամուսնությունն այնքան էական
Կյանքի տարրերն է միացնում,
Որտեղ տաճարներ են ստեղծվում մարմնական
Այդ աստվածային ծրագրում:

Ապա մեր Աստծո հոգևոր զավակը
Կարող է մահկանացու մարմնով գալ
Ընտրություն կատարել, ստուգվել
Այս է նպատակը մեր գոյության:
Այստեղ բարին և չարը միանման կանգնած
Մինչև գերագույնը գլխով անի.
Ովքեր ընտրում են արդար ուղին
Վարագույրը կանցնեն,
Աստծո մոտ կվերադառնան:

Աստծուց պարգև է տրված
Որ մահկանացու խոնարհ մարդկանց
Ուժ տրվի, գերագույն ուժ,
Իրենց սիրով կիսվեն, օգնեն արարել
Ապրող երեխա, ապրող հոգի,
Մարդու պատկերով և Աստծո:
Որքան ենք հարգում այս սուրբ պարգևը
Որ կորոշի մեր ուղին՝ մեր ճակատագիրը:

Հավերժական սեր, հավերժական ամուսնություն, հավերժական աճ: Այս կատարելատիպը, որը նոր է շատերի համար, երբ լրջամտորեն հաշվի է առնվում, կարող է պահել ամուսնությունն ուժեղ և ապահով: Ոչ մի հարաբերություն չունի ներուժ այնպես վեհացնելու տղամարդուն և կնոջը, ինչպես ամուսնության ուխտը: Հասարակության մեջ, թե Եկեղեցում ոչ մի պարտականություն չի գերազանցում դրան իր կարևորությամբ:

Ես շնորհակալ եմ Աստծուն ամուսնության համար: Ես շնորհակալ եմ Աստծուն տաճարների համար: Ես շնորհակալ եմ Աստծուն փառահեղ կնքող զորության համար, այն ուժի, որը գերազանցում է այն ամենին, ինչ մեզ տրվել է, որի միջոցով մեր ամուսնությունները կարող են դառնալ հավերժական: Թող որ մենք արժանի լինենք այս սրբազան պարգևին, աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ՈՂՋ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մենք կառուցում ենք մեր ամուսնությունը անվերջ ընկերակցությամբ, վստահությամբ, հավատարմությամբ և սպասավորելով և հաստատելով միմյանց:

—Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Բրիգամ Յանգ

«Նրանք, ովքեր ձեռք կբերեն առաջին կամ սելեստիալ հարության օրհնությունը, մաքուր և սուրբ կլինեն և մարմնով կատարյալ: Յուրաքանչյուր տղամարդ կամ կին, որը հասնում է այս անասելի ձեռքբերմանը, կլինի այնքան գեղեցիկ, ինչպես հրեշտակները, որոնք շրջապատում են Աստծո գահը: Եթե դուք կարողանաք այս կյանքի ընթացքում հավատարմության շնորհիվ ձեռք բերել հարության առավոտ դուրս գալու իրավունք դուք չեք երկյուղի, որ կինը դժգոհ կլինի իր ամուսնուց, կամ ամուսինը կնոջից, քանի որ նրանք, ովքեր առաջին հարությանն են պատկանում, զերծ կլինեն մեղքից և մեղքի հետևանքներից ու զորությունից (“Future State of Existence,” *Contributor*, May 1890, 241):

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

Տասներկու Առաքյալների Քվորումից

In Conference Report, հոկտ. 1977, 12–14; կամ Ensign, նոյ. 1977, 9–11

Մի քանի տարի առաջ մի կին, որը ցանկանում էր ամուսնալուծվել իր ամուսնուց այնպիսի հիմնավորմամբ, որն իմ կարծիքով արդարացված էր, ինձանից խորհուրդ հարցրեց: Ամուսնալուծության ավարտից հետո երկար տարիներ ես նրան այլևս չտեսա: Շատ զարմացա, երբ փողոցում նրան պատահական հանդիպեցի: Միայնակության և հուսահատության տարիները իրենց դրոշմն էին թողել նրա մի ժամանակ գեղեցիկ դեմքի վրա:

Մի քանի բարեսիրտ հարց ու պատասխանից հետո, նա արագ ասաց, որ կյանքն իր համար չէր եղել հարուստ և պարգևատրող, և որ նա հոգնել էր միայնակ մաքառելուց: Այնուհետև եկավ մի ցնցող բացահայտում, որը նրա թույլտվությամբ ես կկիսվեմ ձեզ հետ: Նա ասաց. « Ճիշտ է, այն ժամանակ շատ վատ էր, սակայն եթե ստիպված լինեի կրկին գնալ այդ քայլին, իմանալով հանդերձ թե ինչ է սպասվում ինձ, ես չէի ձգտի ամուսնալուծվել: Սա ավելի վատ է»:

Ամուսնալուծություն

Վիճակագրական տեսանկյունից, դժվար է խուսափել ամուսնալուծությունից, որովհետև Միացյալ Նահանգներում ամեն հարյուր ամուսնությունից այժմ մոտավորապես հիսունը ամուսնալուծվում են (*World Almanac*, 1976.): Եթե ներկա անընդհատ աճող ամուսնալուծությունների տեմպը չնվազի, 1980-ական թվականների սկզբում ամեն հարյուր ամուսնություններից յոթանասունը կամուսնալուծվեն:

Ամուսնալուծությունը կարող է արդարացվել միայն ամենահազվագյուտ հանգամանքներում, որովհետև այն հաճախ մասնատում է մարդկանց կյանքը և կործանում ընտանեկան երջանկությունը: Հաճախ ամուսնալուծության ժամանակ կողմերն ավելի շատ բան կորցնում, քան ձեռք են բերում:

Այն ցավալի փորձառությունը, որով անցնում է մարդը ամուսնալուծության ժամանակ, կարծես թե քիչ է հասկացվում, և ոչ այնքան բավարար գնահատվում, և իհարկե անհրաժեշտ է, որ լինի ավելի շատ համակրանք և ըմբռնում նրանց հանդեպ, ովքեր տարել են այս մեծ ողբերգությունը և որոնց կյանքը ետ չի կարող դառնալ: Նրանք, ովքեր ամուսնալուծվել են, դեռ շատ բաներ ունեն հուսալու և ակնկալելու կյանքում՝ կայացման և երջանկության համար, ինքնամոռաց ծառայություն մատուցելով ուրիշներին:

Դժվարին հարցեր

Ինչո՞ւ է ամուսնության մեջ երջանկությունն այդքան փխրուն և վաղանցիկ շատերի համար, սակայն այնքան լիառատ ուրիշների համար: Ինչո՞ւ պատճառված դառնության և տառապանքի գնացքն այդքան երկար պիտի լինի և ունենա այնքան շատ անմեղ մարդիկ իր տախտակամածի վրա:

Որո՞նք են բացակայող բարելավող բաղադրամասերը այդքան շատ ամուսնություններում, որոնք բոլորը սկսվել են այնպիսի երջանկությամբ և այնքան շատ մեծ հույսերով:

Այս դժվարին հարցերի շուրջ ես երկար եմ խորհել: Գրեթե մի կյանք անցկացնելով՝ գործ ունենալով մարդկային փորձառությունների հետ, ես որոշ չափով ծանոթ եմ դժբախտ ամուսնությունների, ամուսնալուծությունների և սրտաբեկ ընտանիքների խնդիրներին: Ես կարող եմ նաև խոսել մեծ երջանկության մասին, քանի որ իմ սիրելի Ռութի շնորհիվ ես ամուսնության մեջ գտել եմ մարդկային գոյության ամենակարևոր նվաճումը:

Պատճառներ ամուսնալուծության համար

Չկան պարզ, հեշտ պատասխաններ ամուսնական երջանկության դժվարին և բարդ հարցերին: Ամուսնալուծության համար կան նաև ենթադրվող պատճառներ: Դրանց շարքում են լուրջ խնդիրներ՝ ինչպիսիք են եսասիրությունը, տհաստությունը, պարտավորվածության բացակայությունը, անբավարար հաղորդակցությունը, անհավատարմությունը և բոլոր մնացածը, որոնք ակնհայտ են և լավ հայտնի:

Իմ փորձառության մեջ կա մեկ այլ պատճառ, որը թվում է ոչ այնքան ակնհայտ, բայց որը նախորդում է և երիզակապում մյուսներին: Դա ամուսնության մեջ անընդհատ բարելավման բացակայությունն է: Դա լրացուցիչ ինչ որ բանի բացակայությունն է, որն այն դարձնում է թանկարժեք, հատուկ և սքանչելի, երբ այն նաև ծանր է, դժվարին և միապաղաղ:

Ամուսնությունը բարելավելը

Դուք գուցե զարմանաք. «Ինչպե՞ս կարելի է ամուսնությունն անընդհատ բարելավել»: Ադամը խոսելով Եվայի մասին, ասաց. «Սա հիմա ոսկր է իմ ոսկրիցը եւ մարմին է իմ մարմնիցը» (Ծննդոց Բ.23):

Մենք կառուցում ենք մեր ամուսնությունները անվերջ ընկերությամբ, ազնվությամբ և աջակցելով և պաշտպանելով միմյանց մեր դժվարություններում:

Կան մի քանի պարզ, այդ թեմային առնչվող հարցեր, որոնք պետք է յուրաքանչյուր անձնավորություն, թե ամուսնացածը, թե ամուսնության պատրաստվողը, ազնվորեն ուղղի ինքն իրենց «մեկ մարմին» դառնալու ջանքեր գործադրելիս: Դրանք են՝

Առաջինը՝ արդյոք կկարողանա՞մ առաջինը մտածել իմ ամուսնության և զուգընկերոջ շահերի մասին նախքան իմ անձնական ցանկությունների մասին մտածելը:

Երկրորդ՝ այլ հետաքրքրություններից զատ, որքա՞ն խորն է իմ պարտավորությունը իմ զուգընկերոջ հանդեպ:

Երրորդ՝ արդյո՞ք նա իմ լավագույն ընկերն է:

Չորրորդ՝ արդյոք հարգանք ունե՞մ իմ զուգընկերոջ արժանապատվության հանդեպ՝ որպես արժեքավոր և թանկագին անձ:

Հինգերորդ՝ արդյոք մենք վիճո՞ւմ ենք փողի պատճառով: Թվում է փողն ինքնին զույգին ոչ երջանիկ է դարձնում, ոչ էլ դրա բացակայությունն է դարձնում նրանց անպայման դժբախտ, բայց փողը հաճախ եսասիրության խորհրդանիշն է:

Վեցերորդ՝ արդյոք մեր միջև հոգևոր սրբագործող կապ կա՞:

Ես ողջունում եմ Նախագահ Քիմբալի «Ամուսնություն և ամուսնալուծություն» թեմային վերաբերող բոլոր այն գերազանց քննարկումները, որոնցում նա հիշեցնում է մեզ. «[Չկան] ուժի միավորում[ներ] [որոնք] կկարողանային կործանել ամուսնությունը, բացի այն ուժից, որը կա ամուսիններից մեկի կամ իրենց իսկ երկուսի մեջ էլ» (*Marriage and Divorce,* Deseret Book, p. 17.):

Աղոթք

Ամուսնական հարաբերությունը կարող է բարելավվել ավելի լավ հաղորդակցությամբ: Կարևոր ուղիներից մեկը միասին աղոթելն է: Սա կլուծի շատ տարաձայնություններ, եթե կան այդպիսիք զույգի միջև նախքան քուն մտնելը: Ես չեմ ուզում անընդհատ շեշտել տարաձայնությունները, բայց դրանք իրական են և շատ բաներ հետաքրքիր են դարձնում: Մեր տարաձայնությունները աղի փոքր պտղունցների են նման, որոնք կարող են ամուսնությունն ավելի քաղցր թվացող դարձնել: Մենք հաղորդակցվում ենք հազարավոր ուղիներով, ինչպես օրինակ ժպիտով, մազերը շոյելով, մի նուրբ հպմամբ և չենք մոռանում ամեն օր ասել՝ «Ես սիրում եմ քեզ», իսկ ամուսինը պետք է ասի. «Դու գեղեցիկ ես»: Որոշ այլ կարևոր խոսքերից են, եթե տեղին են «Ներիր»-ը: Լսելը գերազանց հաղորդակցություն է:

Վստահություն

Միմյանց հանդեպ լիակատար վստահությունը ամենամեծ բարելավող գործոններից է ամուսնության մեջ: Ոչ մի բան այնպես չի կործանում փոխադարձ վստահությունը, որն անհրաժեշտ է փոխհարաբերության կայացումը պահպանելու համար, ինչպես անհավատարմությունը: Շնության համար արդարացում չկա: Չնայած այս կործանիչ արարքի առկայությանը, երբեմն ամուսնությունները պահպանվում են և ընտանիքները պաշտպանվում են: Դրա համար վիրավորված կողմից պահանջվում է ի վիճակի լինել ցուցաբերելու անկեղծ սեր, բավականաչափ մեծ՝ ներելու և մոռանալու համար: Իսկ մոլորված անձից պահանջվում է ապաշխարելու մեծ ցանկություն և իրականում այդ չարիքից հրաժարում:

Մեր հավերժական զուգընկերոջ հանդեպ հավատարմությունը չպետք է լինի լոկ ֆիզիկական, այլև մտավոր և հոգևոր: Քանի որ չեն լինում անվնաս ֆլիրտներ և չի կարելի խանդի տեղիք տալ ամուսնությունից հետո, ավելի լավ է խուսափել չարիքի երևույթիցն իսկ՝ հեռու մղելով մեկ ուրիշի հետ կասկածելի ցանկացած շփում, որի հետ մենք ամուսնացած չենք:

Առաքինություն

Առաքինությունն այն ուժեղ սոսինձն է, որն ամեն ինչ միասին է պահում: Տերն ասել է. «Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի» (ՎԱՌՒ 42.22):

Բոլորից առավել, ինչը կարող է օրհնել ամուսնությունները, կա մի կարևոր բաղադրիչ, որը ամեն ինչից առավել շատ կօգնի տղամարդուն և կնոջը միմյանց միանալ ամենահիրական, սուրբ, հոգևոր իմաստով: Դա աստվածայինի ներկայությունն է ամուսնության մեջ: Շեքսպիրը խոսելով *Հենրի Հինգերորդում*, ասում է. «Աստված՝ բոլոր ամուսնությունների լավագույն ստեղծողը, թող ձեր սրտերը մեկի մեջ միավորի» (Հենրի V, 5.2): Աստված նաև բոլոր ամուսնությունների պահպանողն է:

Կան շատ բաներ, որոնք բարելավման են տանում ամուսնությունները, բայց դրանք թվում է թե կեղև են: Ընկերակցությունը և Սուրբ ու Աստվածային ներկայության պտուղների վայելքն ունենալը ամուսնության մեջ մեծ երջանկության միջուկն է: Հոգևոր միասնությունը խարիսխն է: Ամուսնության մեջ սրբագործող չափերի դանդաղ արտահոսքը ամուսնությունները հաճախ դարձնում են օդը բաց թողած անվադողերի նման:

Ամուսնալուծությունները շատանում են, որովհետև շատ դեպքերում միությունը զուրկ է այն կարևոր բաղադրիչից, որը գալիս է սրբագործող օրհնությունից, որն իր հերթին գալիս է Աստծո պատվիրանները պահելուց: Դա հոգևոր սնուցման բացակայությունն է:

Տասանորդ

Ես հասկացել եմ մոտ քսան տարվա եպիսկոպոսի և ցցի նախագահի իմ ծառայությունից, որ լավագույն ապահովագրությունը ամուսնալուծություններից տասանորդ վճարելն է: Տասանորդ վճարելը թվում է օգնում է հոգևոր մարտկոցը լիցքավորված պահել, որպեսզի դա գործի այն ժամանակաընթացքում, երբ հոգևոր գեներատորը պարապ կամ անգործ է մնում:

Չկա մեծ կամ վեհաշունչ երաժշտություն, որն անընդհատ առաջացնում է մեծ սիրո ներդաշնակություն: Ամենակատարյալ երաժշտությունը երկու ձայների ձուլումն է մեկ հոգևոր մեներգի մեջ: Ամուսնությունը Աստծո կողմից տրված այն ուղին է մարդկային մեծագույն պահանջների բավարարման համար, որը հիմնված է փոխադարձ հարգանքի, հասունության, անեսասիրության, օրինավորության, պարտավորվածության և ազնվության վրա: Ամուսնության և ծնող լինելու երջանկությունը կարող է հազար անգամ գերազանցել որևէ այլ երջանկություն:

Ծնող լինելը

Ամուսնության ոգին մեծապես բարելավվում է և հոգևոր աճի գործընթացը մեծապես ուժեղանում է, երբ զույգը դառնում է ծնողներ: Ծնող լինելը պետք է պարգևի մեծագույն երջանկությունը: Տղամարդիկ աճում են, որովհետև որպես հայրեր նրանք պետք է հոգ տանեն իրենց ընտանիքի համար: Կանայք ծաղկում են, որովհետև որպես մայրեր, նրանք պետք է իրենց մոռանան: Մենք սիրո լիակատար իմաստը լավագույն ձևով ենք հասկանում, երբ դառնում ենք ծնողներ:

Մեր տները պետք է լինեն բոլոր երկրային սրբավայրերից ամենասրբագործվածը:

Ամուսնությունը բարելավելիս փոքր բաները մեծ բաներ են: Դա մշտական գոհությունն է միմյանց համար և երախտագիտության լրջամիտ դրսևորումը: Դա աճելու համար միմյանց խրախուսելն ու օգնելն է: Ամուսնությունը բարու, գեղեցիկի և աստվածայինի համատեղ որոնումն է:

Փրկիչն ասել է. «Ահա ես դռան առաջին կանգնած եմ և թակում եմ. Եթե մէկը լսէ իմ ձայնը եւ դուռը բանայ, կմտնեմ նորա մոտ եւ ընթրիք կանեմ նորա հետ, եւ նա ինձ հետ»: (Հայտ. Գ.20):

Թող որ Աստծո ներկայությունը բարելավվի և օրհնի բոլոր ամուսնություններն ու տները, հատկապես Իր Սրբերինը, որպես Իր հավերժական ծրագրի մաս, ես խոնարհաբար աղոթում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով: Ամեն:

ՀԻՆՔԼԻՆԵՐԸ ՆՇԵԼՈՒ ԵՆ 60-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Դեյ Վան Օրդեն

Church News, *19 ապր. 1997, 3*

Նախագահ և Քույր Հինքլին խոսեցին երջանիկ ամուսնության համար գլխավոր բաների մասին:

«Ապրեք ավետարանով,- հորդորեց Նախագահ Հինքլին,- Դա այնքան կարևոր է: Դա նշանակում է շատ բաներ: Որոշ դեպքերում դա նշանակում է զոհաբերություն: Դա նշանակում է սեր և շնորհակալություն և հարգանք: Դա նշանակում է ինքնակարգապահություն: Դա նշանակում է ձեր բարկության և ձեր լեզվի զսպում և զգուշավորություն, թե ինչ ենք ասում, որովհետև խոսքերը կարող են վիրավորել ճիշտ այնքան խորը և այնքան լրջորեն, որքան կարող է ցանկացած բան, որը պատճառում է մարմնական վնասվածք:

Եվ դուք պետք է նայեք իրերի լուսավոր կողմին, դուք պետք է լավատես լինեք և ասեք. «Մենք կարող ենք դա անել»:

Զարգացրեք և պահպանեք հարգանք միմյանց հանդեպ: «Դուք պետք է տաք և վերցնեք ամուսնության մեջ: Մեկ այլ բան է մեղմ պատասխանը, ձեր ձայնը ցածր պահելը: Մի կորցրեք ձեր ինքնատիրապետումը: Հանգիստ խոսեք: Տարբերություն կլինի,- Նախագահ Հինքլին շարունակեց,- բայց մի սրտնեղվեք: Ուղղակի եղեք խաղաղ և հանգիստ և մեղմ խոսեք միմյանց հետ»:

Քույր Հինքլին ավելացրեց. «Դուք չեք կարող եսասեր լինել ամուսնության մեջ: Դուք որպես ձեր առաջին նախապատվություն պետք է ունենաք ձեր կողակցի երջանկությունն ու հանգիստը: Եթե այդ ուղղությամբ աշխատեք, ապա դուք էլ երջանիկ կզգաք»:

«Եսասիրությունը,- ասաց Նախագահ Հինքլին,-առաջ է բերում հակասություն և այն բոլոր դժվարությունները, որոնք վնասում են շատ ու շատ ամուսնություններ: Պարզապես, բացարձակ եսասիրությունը պրոբլեմ է»:

Շարունակելով նա ասաց. «[Ամուսնությունը] պահանջում է շատ մեծ ինքնակարգապահություն: Ամուսնությունը ամբողջովին ռոմանտիկա չէ: Ամուսնությունն աշխատանք է: Ամուսնությունը ջանք է: Դուք պետք է հարմարվեք միմյանց: Մեկ այլ բան է ուժերի սահմանում անել ամեն ինչ, որ զարգացնեք ձեր զուգընկերոջ տաղանդները, ռեսուրսներն ու հնարավորությունները»:

«Որոշ մարդիկ,- ասաց Քույր Հինքլին,-փորձում են վերափոխել իրենց կողակցին»:

«*Ընդունեք ձեր տարբերությունները,* -ասաց Նախագահ Հինքլին,- Դուք կպարզեք, որ դա շատ առողջարար և խթանիչ բան է»:

Նախագահ Հինքլին նաև խորհուրդ տվեց ամուսիններին և կանանց դուրս գալ պարտքից: «Պարտքը սոսկալի բան է: Ամեն մեկը, ով ապրել է Ճգնաժամի տարիներին, գիտի, որ պարտքը ստրկացնող բան է: Պարտքից զերծ մնացեք և ճշտապահորեն վճարեք ձեր մուրհակները:

Կա մեկ այլ բան՝ մենք միմյանց հետ միշտ խոսել ենք: Մեր միջև հաղորդակցության պակասություն չի եղել: Ես այնքան շատ, այնքան շատ դժբախտ ամուսնությունների դեպքերի և մարդկանց մասին եմ լսում, ովքեր ասում են՝մենք չենք կարողանում միմյանց հետ հաղորդակցվել:

Մեր միջև հաղորդակցության պակասություն չի եղել», ասաց Նախագահ Հինքլին:

«Մենք շատ երջանիկ ամուսնություն ենք ունեցել,- շարունակեց նա,- Երբ ես ետ եմ նայում, ես չեմ ափսոսում: Տարիների ընթացքում մենք օրհնվել ենք ավելի, քան երբևէ երազել ենք: Մենք այնքան առատորեն ենք օրհնվել: Մենք երբեք պակասություն չենք ունեցել, ես կարող եմ ազնվորեն ասել: Մենք վճարել ենք մեր տասանորդը: Դա առաջին տեղում էր: Մենք ապրել ենք համեստ, բայց հարմարավետ և բավականին լավ: Մեր ամուսնությունը մենք սկսել ենք համեստ պայմաններում և միասին աշխատելով մենք կարողացել ենք բարելավել մեր վիճակը»:

«Իրականում մեր կյանքում ոչ մի արտասովոր բան չկա»,- հաստատեց նա:

Երբ հարցազրույցը մոտենում էր ավարտին, Նախագահ Հինքլին շրջվեց դեպի իր կինը և ասաց. «Ինչ նա արել է որպես ծնող, նա անում է որպես տատիկ և մեծ տատ: Այժմ մեր ամուսնությունից 60 տարի անց մենք ավելի փոքրամարմին ենք դարձել, մենք ողջ հասակով չենք կանգնում, մենք մի քիչ կուչ ենք եկել»:

«Մենք դանդաղ ենք շարժվում»,- ավելացրեց Քույր Հինքլին:

«Մենք դանդաղ ենք շարժվում,- ասաց Նախագահ Հինքլին,- բայց մենք երջանիկ ենք և սիրում ենք միմյանց»:

Հարցազրույց Նախագահ և Քույր Հինքլիների հետ

Մի քանի հիմնական բաներ երջանիկ ամուսնության համար

- Ապրեք ավետարանով:
- Սիրեք, գնահատեք միմյանց:
- Զարգացրեք ինքնակարգապահություն:
- Ջսպեք բարկությունն ու լեզուն:
- Նայեք իրերի լուսավոր կողմին:
- Զարգացրեք, պահպանեք հարգանք միմյանց հանդեպ:
- Տվեք մեղմ պատասխան:
- Խոսեք մեղմ:
- Մի եղեք եսասեր:
- Հոգ տարեք միմյանց համար:
- Զարգացրեք զուգընկերոջ տաղանդներն ու հնարավորությունները:
- Ընդունեք տարբերությունները:
- Վճարեք տասանորդ, պարտքից հեռու մնացեք:
- Զարգացրեք միմյանց հետ հաղորդակցվելու ունակություն:

ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

«Հոգու ընկերները» ցնորք է և պատրանք, …. անկասկած գրեթե ամեն լավ տղամարդ և ամեն լավ կին կարող է ունենալ երջանկություն և հաջող ամուսնություն»:

—Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Իմաստուն ձևով ընտրելու կարևորությունը

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Ամուսնությունը հավանաբար ամենակենսականն է բոլոր որոշումներից և ունի ամենահեռուն գնացող ազդեցություններ, քանի որ այն կապ ունի ոչ միայն անմիջական երջանկության, այլև հավերժական ուրախությունների հետ: Այն ազդում է ոչ միայն երկու ներգրավված մարդկանց, այլև նրանց ընտանիքների և հատկապես նրանց երեխաների և նրանց երեխաների երեխաների վրա շատ սերունդների ընթացքում» (“Oneness in Marriage,” *Ensign,* Mar. 1977, 3):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ձեր կյանքի ամենակարևոր որոշումը այն է, թե ինչ անձնավորության հետ դուք կամուսնանաք….

…. Ամուսնացեք համապատասխան անձնավորության հետ, համապատասխան տեղում, համապատասխան ժամանակ» (“Life’s Obligations,” *Ensign,* Feb. 1999, 2):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

«Ամենակարևոր բաները, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու որևէ անդամ երբևէ կարող է անել այս աշխարհում 1. Ամուսնանալ համապատասխան մարդու հետ, համապատասխան տեղում, համապատասխան իշխանությամբ և 2. Պահել այս սուրբ և ամուսնության կատարյալ կարգի հետ կապված ուխտերը » (*Mormon Doctrine,* 118):

Նախադրյալների գործոնները

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Զուգընկեր ընտրելիս, անհրաժեշտ է ուսումնասիրել այն մարդու բնավորությունը, ժառանգականությունը և պատրաստվածությունը, ում հետ դուք մտածում եք կատարել կյանքի ճամփորդությունը» (*Gospel Ideal*s, 459):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Երբ նախադրյալները տարբեր են, դժվարությունները և ամուսնության խոչընդոտները մեծապես աճում են» (*Teachings of Spencer W. Kimball,* 302):

«Ես նախազգուշացրել եմ երիտասարդներին տարբեր հավատքների ամուսնության խոչընդոտների վերաբերյալ և ողջ իմ ունեցած ուժով ես նախազգուշացրել եմ երիտասարդներին խուսափել վշտերից և հիասթափություններից, որոնք գալիս են Եկեղեցուց դուրս ամուսնանալիս և դժբախտ պատահարներից, որոնք գրեթե անխուսափելիորեն առաջանում են, երբ հավատացյալն ամուսնանում է անհավատ կողակցի հետ: Ես նշել եմ Եկեղեցու պահանջները իր անդամների հանդեպ ժամանակի, էներգիայի և միջոցների, հոգևոր կապերի խորության վերաբերյալ, որոնք ամրանում են ամուսնությունից հետո և երբ հայտնվում է ընտանիք, հակասությունը, որը բնականաբար առաջանում է այսպիսի սխալ զուգավորումից, այն փաստը, որ այս և շատ այլ պատճառներ պերճախոս վկայում են հօգուտ Եկեղեցու ներսում ամուսնության, որտեղ ամուսինն ու կինն ունեն ընդհանուր նախադրյալներ, ընդհանուր իդեալներ և չափանիշներ, ընդհանուր հավատալիքներ, հույսեր և նպատակներ և այդ ամենից բացի, որտեղ ամուսնությունը կարող է հավերժացվել սուրբ տաճար արդարորեն մտնելով….

…. Մենք խորհուրդ ենք տալիս, որ մարդիկ ամուսնանան նրանց հետ, ովքեր…. ինչ որ տեղ նույն տնտեսական և սոցիալական և կրթական նախադրյալներն ունեն (դրանցից մի քանիսը բացարձակ անհրաժեշտություն չեն, բայց նախընտրելի են), և բացի այդ ամենից, անկասկած ունենան նույն կրոնական նախադրյալները» (“Marriage and Divorce,” 142–44):

Համապատասխան անձնավորությունը

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Եղեք արժանի այն զուգընկերոջը, ում ընտրում եք: Հարգեք նրան: Խրախուսեք նրան: Սիրեք ձեր զուգընկերոջը ձեր ողջ սրտով: Սա կլինի ձեր կյանքի ամենակարևոր որոշումը՝ անձնավորությունը, ում հետ կամուսնանաք:

Տաճարային ամուսնությանը փոխարինող ոչինչ չկա: Այն միակ տեղն է երկնքի տակ, որտեղ ամուսնությունը

կարող է օրինականացվել հավերժության համար: Մի խաբեք ինքներդ ձեզ: Մի խաբեք ձեր զուգընկերոջը: Մի ընդունեք ավելի ցածրը, երբ կարող եք ունենալ ավելի բարձրը: Ամուսնացեք համապատասխան անձնավորության հետ, համապատասխան տեղում, համապատասխան ժամանակին:

Ընտրեք ձեր իսկ հավատքի զուգընկեր: Դուք ավելի շատ հավանականություն կունենաք երջանիկ լինելու: Ընտրեք զուգընկեր, որին դուք միշտ կարող եք պատվել, կարող եք միշտ հարգել, մեկին, որը կարող է լրացնել ձեզ ձեր իսկ կյանքում, մեկին, ում դուք կարող եք նվիրել ձեր ողջ սիրտը, ձեր ողջ սերը, ձեր ողջ հավատարմությունը….

…. Ես չեմ կարող ձեզանից որևէ մեկին կամենալ ավելին, քան ես եմ ունեցել՝ իմ գեղեցիկ կնոջ հետ իմ ընկերակցության ընթացքում:

Լավ ամուսնությունը ժամանակ է պահանջում: Այն ջանքեր է պահանջում: Դուք պետք է դրա վրա աշխատեք: Դուք պետք է այն մշակեք: Դուք պետք է ներեք և մոռանաք: Դուք պետք է բացարձակապես հավատարիմ լինեք միմյանց: Ձեզանից շատերը կամուսնանան և երեխաներ կունենան: Նրանք կդառնան ձեր մեծագույն հպարտության և երջանկության աղբյուրը….

Այս բոլորը տեղի կունենա, եթե դուք կատարեք այս ամենակարևոր որոշումը, եթե առաջնորդվեք աղոթքով, ինչպես նաև բնազդով, ընտրելով մի սիրելի զուգընկեր, որը կլինի ձերը, լավ և վատ օրերի ընթացքում՝ հավիտյան, ողջ հավերժություն» (“Life’s Obligations,” *Ensign*, Feb. 1999, 2, 4):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

Համապատասխան անձնավորությունը նա է, որի համար բնական և առողջ ու նորմալ սերը, որը պետք է գոյություն ունենա, իսկապես գոյություն ունի: Դա այն անձնավորությունն է, որն այնպես է ապրում, որ կարող է գնալ Աստծո տաճարը և կապել այն ուխտերը, որոնք մենք այնտեղ կապում ենք (in Conference Report, Sept.–Oct. 1955, 13):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Հավերժական ամուսնության հաստատման համար ավելի շատ բան է անհրաժեշտ, քան սիրունիկ դեմքն ու գրավիչ կազմվածքը: Ավելի շատ մտածելու բան կա, քան հանրաճանաչությունը, կամ գրավչությունը: Երբ փնտրում եք հավերժական զուգընկեր, գտեք մեկին, որը զարգացնում է երջանկություն բերող հիմնական հատկանիշները՝ Տիրոջ և Նրա պատվիրանների հանդեպ խորը սեր, դրանցով ապրելու վճռականություն, մեկին, որը բարյացակամորեն հասկացող է, մյուսներին ներող և պատրաստակամ իրեն նվիրաբերելու, գեղեցիկ երեխաներով պսակված ընտանիք ունենալու ցանկությամբ և տանը նրանց ճշմարտության սկզբունքներն ուսուցանելու պարտավորությամբ:

Ապագա կնոջ հիմնական առաջնահերթությունը կին և մայր լինելու ցանկությունն է: Նա պետք է զարգացնի սրբազան հատկանիշներ, որոնք Տերն է տվել Իր դուստրերին աչքի ընկնել որպես կին և մայր՝ համբերություն, բարություն, սեր երեխաների հանդեպ և ավելի շուտ նրանց հոգ տանելու ցանկություն, քան մասնագիտական կարիերայի զարգացում: Նա պետք է ձեռք բերի լավ կրթություն նախապատրաստվելու մայրության պահանջները բավարարելու համար:

Ապագա ամուսինը պետք է նաև պատվի իր քահանայությունը և օգտագործի այն ծառայելով ուրիշներին:

Երբ փնտրում եք հավերժական զուգընկեր, գտեք մեկին, ով զարգացնում է երջանկություն բերող հիմնական հատկանիշները:

Փնտրեք տղամարդու, որն ընդունում է իր դերը որպես կյանքի կարիքների հոգացող, ունի կարողություն անելու այդ և գործնական ջանքեր է գործադրում նախապատրաստվելու այդ պարտականությունները կատարելուն:

Ես առաջարկում եմ ձեզ չանտեսել բազմաթիվ հնարավոր այն թեկնածուներին, ովքեր դեռ զարգացնում են այս հատկանիշները, փնտրելով մեկին, որը կատարելագործված է դրանում: Դուք հավանական է չգտնեք այդ կատարյալ անձնավորությանը, իսկ եթե գտել եք, իհարկե չի եղել հետաքրքրություն ձեր հանդեպ: Այս հատկանիշները լավագույնս հղկվում են միասնաբար որպես ամուսին և կին» (in Conference Report, Apr. 1999, 31; կամ *Ensign*, May 1999, 26):

Արտաքին տեսք և ներքին գեղեցկություն

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Այո տղամարիկ հրապուրվում են գեղեցկությամբ և հազարավորներ թակարդվում են դրանով: Կան հազարավոր տղամարդիկ, ովքեր էլ ուրիշ ոչ մի բանի չեն ձգտում և ուրիշ էլ ոչինչ չեն ցանկանում, բացի իրենց զգայարանները գոհացնելուց կամ իրենց կրքերը բավարարելուց: Այս արտաքին զարդարանքները կբավարարեն և միայն արտաքին բարետեսությունը կհիշվի: Երբ գեղեցկությունը թոշնի, կիրքը բավարարություն կորոնի ուրիշ տեղ: «Գեղեցկությունը ընդամենը մաշկի խորություն ունի», և երբ արտաքին բարետեսությունը այն ամենն է ինչ աղջիկն ունի, հիացմունքը, որ նա առաջացնում է, ավելի մակերեսային է, քան նրա գեղեցկությունը….

Բայց կա գեղեցկություն, որն ունի ամեն աղջիկ՝ մի պարգև Աստծուց, արևի լույսի նման մաքուր և այնպես սրբազան ինչպես կյանքը: Դա գեղեցկություն է, որը բոլոր տղամար-

դիկ են սիրում, մի արժանիք, որը շահում է բոլոր տղամարդկանց հոգիները: Այդ գեղեցկությունը *մաքրաբարոյությունն* է: Մաքրաբարոյությունը առանց մաշկի գեղեցկության կարող է բոցավառել հոգին, մաշկի գեղեցկությունը առանց մաքրաբարոյության կարող է բոցավառել միայն աչքը: Մաքրաբարոյությունը իսկական կանացիության խառնվածքի մեջ հավերժորեն փայփայված կպահի ճշմարիտ սերը (*Gospel Ideals,* 450):

Խորհուրդ չամուսնացած քույրերին

Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆ

«Երբ Սիոնի դուստրերին երիտասարդ տղամարդիկ խնդրում են իրենց միանալ ամուսնությամբ, փոխարենը հարցնելու «Այս մարդը լավ աղյուսե տուն, մի զույգ ընտիր ձիեր և գեղեցիկ կառք ունի՞», նրանք պետք է հարցնեն,- «Արդյո՞ք նա Աստծո մարդն է: Աստծո Հոգին ունի՞ իր հետ: Նա Վերջին Օրերի Սո՞ւրբ է: Նա աղոթո՞ւմ է: Նա ունի՞ Հոգին իր վրա՝ արժանի լինելու կառուցելու արքայությունը: Եթե նա ունի այդ, ուշադրություն մի դարձրեք կառքին և աղյուսե տանը, բաց մի թողեք այդ հնարավորությունը և միացեք միմյանց Աստծո օրենքի համաձայն» (in *Discourses of Wilford Woodruff,* 271):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Սիրելի քույրեր, երբեք աչքից բաց մի թողեք [տաճարային ամուսնության] այս սրբազան նպատակը: Աղոթքով նախապատրաստվեք դրան և ապրեք դրա համար: Ամուսնացեք Տիրոջ ուղով: Տաճարային ամուսնությունը վեհացման ավետարանական արարողություն է: Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ Իր դուստրերից յուրաքանչյուրն ունենա այս հավերժական օրհնությունը:

Ուստի թեթևամտորեն մի մոտեցեք ձեր երջանկությանը, կապվելով մեկի հետ, որը չի կարող ձեզ արժանիորեն տանել տաճար: Այժմ կատարեք ձեր ընտրությունը, որ դա է այն տեղը, որտեղ դուք կամուսնանաք: Թողնել այդ որոշումը մինչև մի ռոմանտիկ կապ զարգանա, նշանակում է ռիսկի ենթարկվել, որի կարևորությունը այժմ չեք կարող լիովին հաշվարկել:

Եվ հիշեք, ձեզանից չի պահանջվում իջեցնել ձեր չափանիշները, որպեսզի զույգ գտնեք: Ձեզ հրապուրիչ պահեք, պահպանեք բարձր չափանիշներ, պահպանեք ինքնահարգանքը: Մի մտեք մտերմությունների մեջ, որոնք բերում են սրտի ցավ և կսկիծ: Դրեք ձեզ այնպիսի դիրքում, որպեսզի հանդիպեք արժանի տղամարդկանց և զբաղվեք կառուցողական գործերով:

Բայց մի սպասեք նաև կատարելություն զույգի ձեր ընտրության հարցում: Մի մտահոգվեք նրա ֆիզիկական արտաքինով և նրա բանկային հաշվով այնքան, որ աչքաթող անեք նրա ավելի կարևոր հատկանիշները: Իհարկե, նա պետք է գրավիչ լինի ձեզ համար, և նա պետք է կարողանա ֆինանսապես ապահովել ձեզ: Բայց նա ունի՞ ուժեղ վկայություն: Նա ապրո՞ւմ է ավետարանի սկզբունքներով և մեծարում է իր քահանայությունը: Նա ակտի՞վ է իր ծխում և ցցում: Նա սիրո՞ւմ է տունն ու ընտանիքը, և նա կլինի՞ հավատարիմ ամուսին և լավ հայր: *Սրանք* հատկանիշներ են, որոնք իսկապես կարևոր են:

Եվ ես նաև կցանկանայի զգուշացնել ձեզ չամուսնացած քույրեր, որ չդառնաք այնքան անկախ և ինքնավստահ, որպեսզի որոշեք, որ չարժե ամուսնանալ և դուք ինքներդ կարող եք ձեզ համար հիանալի ապրել: Մեր քույրերից ոմանք նշում են, որ նրանք չեն ուզում մտածել ամուսնության մասին, մինչև չպաշտպանեն իրենց գիտական աստիճանները կամ հետամուտ չլինեն իրենց կարիերային: Սա ճիշտ չէ: Իհարկե մենք ուզում ենք, որ մեր չամուսնացած քույրերը ուժեղացնեն իրենց անձնական ներուժը, լավ կրթություն ստանան և լավ աշխատեն իրենց ներկա աշխատանքում: Դուք շատ բան ունեք ներդնելու հասարակության, ձեր համայնքի և ձեր հարևանության մեջ: Բայց մենք անկեղծորեն աղոթում ենք, որ մեր չամուսնացած քույրերը ցանկանան պատվավոր ամուսնություն տաճարում արժանի տղամարդու հետ և մեծացնեն արդար ընտանիք, չնայած դա կարող է նշանակել գիտական աստիճանների և կարիերայի զոհաբերում: Մեր առաջնահերթությունները ճիշտ են, երբ մենք հասկանում ենք, որ չկա ավելի բարձր կոչում, քան պատվավոր կին և մայր լինելը» (“To the Single Adult Sisters of the Church,” *Ensign,* Nov. 1988, 96–97):

Խորհուրդ ամուրի եղբայրներին

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Տքնաջան աշխատեք կրթություն ստանալու համար և ձեր մասնագիտության մեջ: Դրեք ձեր վստահությունը Տիրոջ վրա, ունեցեք հավատք և դա կտա արդյունք: Տերը երբեք չի տալիս պատվիրան առանց միջոցներ ապահովելու դրանց իրագործման համար» (տես 1Նեփի 3.7):

«Մի տարվեք նաև մատերիալիզմով, մեր սերնդի իսկական չարիքներից մեկով՝ այսինքն, ձեռք բերելով իրեր, փարթամ կյանք և ապահովելով կարիերայի հաջողություն, ձգտելով միմիայն հասարակական դիրքի:

Պատվավոր ամուսնությունն ավելի կարևոր է, քան հարստությունը, պաշտոնը և հասարակական դիրքը: Որպես ամուսին և կին դուք կարող եք միասին հասնել ձեր կյանքի նպատակներին: Երբ դուք զոհաբերեք միմյանց համար և ձեր երեխաների համար, Աստված կօրհնի ձեզ և ձեր պարտավորությունը Տիրոջ հանդեպ և ձեր ծառայությունը Նրա արքայությունում կզորացվի» (in Conference Report, Apr. 1988, 59; կամ *Ensign,* May 1988, 53):

«Այժմ, եղբայրներ, մի սպասեք կատարյալ զուգընկեր ձեր ընտրությունում: Մի եղեք այնքան բծախնդիր, որ աչքաթող անեք նրա ուժեղ վկայություն ունենալու, ավետարանի սկզբունքներով ապրելու, տունը սիրելու, Սիոնում մայր լինելու և ձեր քահանայության պարտականություններում ձեզ աջակցելու ամենակարևոր հատկանիշները:

Իհարկե նա հրապուրիչ պետք է լինի ձեզ համար, բայց ուղղակի մեկը մյուսի ետևից աղջիկներ մի ժամադրեք միմիայն ժամադրության հաճույքի համար, առանց ձգտելու ունենալ ձեր հավերժական զուգընկերոջ ընտրության մեջ Տիրոջ հաստատումը:

Եվ կա մի լավ չափանիշ որոշելու, թե արդյոք տվյալ անձնավորությունը կարող է լինել ձեզ համար համապատասխան զուգընկեր, այդ չափանիշը հետևյալն է՝ նրա ներկայությամբ դուք արդյոք մտածո՞ւմ եք ձեր ազնվագույն մտքերը, ոգեշնչվո՞ւմ եք կատարել ձեր վսեմագույն գործերը, փափագո՞ւմ եք ավելի լավը լինել, քան կաք:

Աստված օրհնի ձեզ Եկեղեցու ամուրի չափահաս եղբայրներ: Թող որ ձեր առաջնահերթությունները ճիշտ լինեն: Ես առաջարկեցի մի քանի շատ կարևոր առաջնահերթություններ այս երեկո: Թող որ դուք լրջորեն մտածեք և խորհեք դրանց մասին» (in Conference Report, ապր. 1988, 59, կամ *Ensign,* մայիս1988, 53):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Հուսով եմ, դուք շատ երկար չեք հետաձգի ձեր ամուսնությունը: Ես երիտասարդ կանանց հետ այնքան շատ չեմ խոսում որքան երիտասարդ տղամարդկանց հետ, որոնց արտոնությունն է և պարտավորությունը այս հարցում վերցնել նախաձեռնությունը: Անվերջ մի տարվեք թեթևամիտ ժամադրության խաղով: Փնտրեք ընտիր զուգընկեր, մեկին, ում կարող եք սիրել, պատվել ու հարգել և որոշում կայացրեք» (“Thou Shalt Not Covet,” *Ensign,* Mar. 1990, 6):

Աղոթքի և անձնական հայտնության դերը

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

«*Գործածեք և ազատ կամքը և աղոթքը:* Տիրոջ ծրագիրն ու նպատակը չէ, երբեք չի եղել, և երբեք չի լինի, որքան էլ մենք աղոթենք նրան, պատասխանել մեր բոլոր խնդիրներին և մտահոգություններին առանց մեր կողմից պայքարի և ջանքերի: Այս մահկանացու կյանքը փորձնական վիճակ է: Սրանում մենք ունենք մեր ազատ կամքը: Մենք ստուգվում ենք՝ տեսնելու, թե ինչպես մենք կարձագանքենք տարբեր իրավիճակներում, ինչպես կորոշենք հարցերը, ինչպիսի ուղղություն կընտրենք, մինչ մենք այստեղ քայլում ենք, ոչ թե տեսողությամբ, այլ հավատքով: Այսպիսով, մենք պետք է լուծենք մեր իսկ խնդիրները և հետո խորհրդակցենք Տիրոջ հետ աղոթքով և ստանանք հոգևոր հաստատում, որ մեր որոշումները ճիշտ են» (“Why the Lord Ordained Prayer,” *Ensign,* Jan. 1976, 11):

Երեց Դալլին Հ. Օուքս

«Եթե հայտնությունը տվյալ մարդու տնօրինության սահմաններից դուրս է, դուք իմացեք, որ դա Տիրոջից չէ և դուք կապված չեք դրանով: Ես լսել եմ դեպքերի մասին, երբ մի երիտասարդ ասել է մի աղջկա, որ նա պետք է ամուսնանա իր հետ, որովհետև նա հայտնություն է ստացել, որ նա պետք է լինի իր հավերժական զուգընկերը: Եթե սա ճշմարիտ հայտնություն է, այն կհաստատվի ուղղակիորեն այդ աղջկան, եթե նա ձգտի իմանալ: Միևնույն ժամանակ նա ոչ մի հարկադրանքի տակ չէ՝ դրան ենթարկվելու համար: Նա պետք է ձգտի ստանալ իր առաջնորդությունը և ընդունի իր սեփական որոշումը: Մարդը կարող է հայտնություն ստանալ առաջնորդվելու իր իսկ գործողություններում, բայց նա չի կարող համապատասխան հայտնություն ստանալ ղեկավարելու մեկ ուրիշին: Նա այդ [տղամարդու] տնօրինությունից դուրս է….

… Երբ որևէ ընտրություն իսկապես տարբերություն է մտցնելու մեր կյանքում, լինի դա ակնհայտ թե ոչ, և երբ մենք ներդաշնակ ենք ապրում Հոգու հետ և որոնում նրա առաջնորդությունը, մենք կարող ենք համոզված լինել, որ կստանանք առաջնորդությունը, որի կարիքն ունենք մեր նպատակին հասնելու համար» (“Revelation,” 25–26):

«Տիրոջ կողմից առաջնորդվելու ցանկությունը ուժ է, բայց այն պետք է ուղեկցվի ընմբռնմամբ, որ մեր Երկնային Հայրը թողնում է շատ որոշումներ մեր անձնական ընտրությանը: Անձնական ընտրություն կատարելը աճի աղբյուրներից մեկն է, որը մենք պետք է կիրառենք մահկանացու կյանքի ընթացքում: Այն անձիք, ովքեր փորձում են բոլոր որոշումների ընդունումը Տիրոջ վրա թողնել և աղաչում են հայտնություն յուրաքանչյուր ընտրության համար, շուտով կհայտնվեն այնպիսի հանգամանքներում, որոնց համար աղոթում են առաջնորդություն ստանալու համար և չեն ստանում այն: Օրինակ, սա հավանաբար տեղի կունենա այն բազմաթիվ հանգամանքներում, որոնք անկարևոր են կամ երկու ընտրություններն էլ ընդունելի են:

Մենք պետք է ջանասիրաբար ուսումնասիրենք խնդիրները՝ օգտագործելով մտածելու կարողությունները, որոնք մեր Արարիչը դրել է մեր մեջ: Ապա մենք պետք է աղոթենք առաջնորդության համար և գործենք ըստ այդմ, եթե ստանանք այն: Եթե մենք չենք ստանում առաջնորդություն, մենք պետք է գործենք մեր լավագույն դատողությամբ: Անձիք, ովքեր համառորեն հայտնություն են փնտրում առաջնորդության համար այն նյութերի վերաբերյալ, որոնք Տերը չի ընտրել մեզ առաջնորդելու, կարող է պատասխան հնարի իր իսկ երևակայությամբ կամ նախապաշարմունքով կամ նա կարող է նույնիսկ պատասխան ստանալ կեղծ հայտնության միջոցով: Աստծո կողմից

հայտնությունը սրբազան իրականություն է, բայց ուրիշ այլ սրբազան բաների նման, այն պետք է փայփայվի և պատշաճորեն օգտագործվի, որպեսզի մեծ ուժը չդառնա հաշմանդամ դարձնող թուլություն (“Our Strengths Can Become Our Downfall,” *Ensign,* Oct. 1994, 13–14):

Գտնել համապատասխան մեկին

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Չնայած ամուսնությունը դժվար է և աններդաշնակ և հուսախաբված ամուսնությունները սովորական երևույթ են, սակայն իսկական, հարատև երջանկություն հնարավոր է, և ամուսնությունը կարող է լինել ավելի վեհացնող երջանկություն, քան մարդկային միտքը կարող է ըմբռնել: Դա մատչելի է յուրաքանչյուր զույգի համար, յուրաքանչյուր անձնավորության համար: «Հոգու ընկերները» ցնորք է և պատրանք, և մինչ յուրաքանչյուր երիտասարդ տղամարդ և երիտասարդ կին ողջ ջանասիրությամբ և աղոթքով ձգտում է գտնել զուգընկեր, որի հետ կյանքը կարող է ամենաներդաշնակը և գեղեցիկը լինել, այնուամենայնիվ կասկած չկա, որ գրեթե ամեն լավ տղամարդ և ամեն լավ կին կարող է ունենալ երջանկություն և հաջող ամուսնություն, եթե երկուսով պատրաստ լինեն համապատասխան ջանք գործադրել» (“Oneness in Marriage,” *Ensign,* Mar. 1977, 4):

Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ

«Այնուամենայնիվ մենք չունենք սուրբգրքյան ապացույց այն հավատքի համար, որ մենք արտոնություն ենք ունեցել ընտրելու մեր ծնողներին և մեր կյանքի ընկերներին հոգևոր աշխարհում: Այս հավատքը պաշտպանվում է ոմանց կողմից և հավանաբար որոշ դեպքերում այն ճիշտ է, բայց այն կպահանջի խիստ մեծ երևակայության թռիչք՝ հավատալու, որ դա այդպես է բոլոր դեպքերում կամ նույնիսկ դեպքերի մեծամասնությունում: Առավել հավանական է, որ մենք եկել ենք այնտեղ, որտեղ իշխանություն ունեցողները ուղարկել են մեզ: Մեր ազատ կամքը հավանաբար գործի չի դրվել այն չափով, որ ընտրություն կատարեինք ծնողների և ժառանգների հարցում» (*Way to Perfection,* 44):

Միսիա, թե՞ ամուսնություն

«Կա աճող ապացույց, որ որոշ երիտասարդ կանայք շատ են խրախուսվում լիաժամկետ միսիա ծառայել: Չնայած երիտասարդ կանայք ունակ են և արդյունավետ, նրանք չունեն միսիա ծառայելու նույն պարտավորությունը, ինչպես երիտասարդ տղամարդիկ, ովքեր քահանայություն են կրում: Մենք երախտապարտ ենք, որ ոմանք ցանկանում են ծառայել որպես լիաժամկետ միսիոներներ, բայց նրանց պետք չէ ստիպել պարտավորված զգալ այդ անել: Երիտասարդ կանանց չպետք է խորհուրդ տալ միսիայի գնալ, եթե դա կխանգարի ամուսնության որոշակի առաջարկի» (in *Bulletin,* 1993, no. 2, p. 2):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Այժմ ես կցանկանայի միսիոներական ծառայության վերաբերյալ որոշ բան ասել եպիսկոպոսներին և ցցի նախագահներին: Սա նուրբ հարց է: Եկեղեցում կարծես աճում է մի գաղափար, որ բոլոր երիտասարդ կանայք, ինչպես նաև բոլոր երիտասարդ տղամարդիկ պետք է գնան միսիա: Մենք կարիք ունենք որոշ երիտասարդ կանանց: Նրանք նշանակալից աշխատանք են կատարում: Նրանք կարող են գնալ տներ, որտեղ երեցները չեն կարող գնալ:

Ես խոստովանում եմ, որ երկու թոռնուհիներ ունեմ միսիայում: Նրանք պայծառամիտ և գեղեցիկ երիտասարդ կանայք են: Նրանք տքնաջանորեն աշխատում են և կատարում շատ բարիք: Խոսելով իրենց եպիսկոպոսների և իրենց ծնողների հետ, նրանք միսիա գնալու իրենց սեփական որոշումն են ընդունել: Նրանք ինձ ասել են արդեն թղթերը հանձնելուց հետո: Ես ոչ մի գործ չեմ ունեցել՝ գնալու նրանց որոշման հետ:

Այժմ անելով այդ խոստովանությունը, ես կկամենայի ասել, որ Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Խորհուրդը միասնաբար ասում են մեր երիտասարդ քույրերին, որ նրանք միսիա գնալու պարտավորության տակ չեն: Հուսով եմ կկարողանամ ասել, ինչ պետք է ասեմ, այնպես որ վիրավորական չլինի որևէ մեկի համար: Երիտասարդ կանայք չպետք է զգան, որ իրենք պարտականություն ունեն համեմատվելու երիտասարդ տղամարկանց հետ: Նրանցից ոմանք շատ կփափագեն գնալ: Եթե այդպես է, նրանք պետք է խորհրդակցեն իրենց եպիսկոպոսի, ինչպես նաև իրենց ծնողների հետ: Եթե գաղափարը հետևողական է, եպիսկոպոսը գիտի ինչ պետք է անել:

Ես ասում եմ այն, ինչ ասվել է նախկինում, որ միսիոներական աշխատանքը հիմնականում քահանայության պարտականությունն է: Որպես այդպիսին մեր երիտասարդ տղամարդիկ պետք է կրեն հիմնական բեռը: Սա նրանց պարտականությունն ու պարտավորությունն է:

Մենք չենք խնդրում երիտասարդ կանանց միսիան համարել իրենց կյանքի ծրագրի հիմնական մաս: Շատ տարիների ընթացքում մենք տարիքային մարկարդակը բարձր ենք պահել նրանց համար՝ ջանալով համեմատաբար ցածր պահել գնացողների թիվը: Ես կրկին ասում եմ քույրերին, որ դուք նույնքան բարձր կգնահատվեք, դուք նույնքանով կհամարվեք որպես պարտականության գծում գտնվողներ, ձեր ջանքերը նույնքանով ընդունելի կլինեն Տիրոջ և Եկեղեցու համար, անկախ նրանից դուք կգնաք միսիա, թե ոչ:

Մենք անընդհատ նամակներ ենք ստանում երիտասարդ կանանցից, ովքեր հետաքրքրվում են, թե ինչու քույր միսիոներների տարիքը նույնը չէ, ինչպես երեցներինն է: Մենք պարզապես ասում ենք պատճառները: Մենք գիտենք, որ նրանք հիասթափված են: Մենք գիտենք, որ շատերն են դրել իրենց սրտերը միսիայի վրա: Մենք գիտենք, որ նրանցից շատերն են փափագում ունենալ այս փորձառությունը նախքան իրենց ամուսնանալը և առաջ գնալը իրենց չափահաս կյանքում: Ես ուղղակի ասում եմ, որ միսիան չպետք է լինի նրանց կյանքի մասը:

Միակ ամենակարևոր բանը, որը Վերջին Օրերի յուրաքանչյուր Սուրբ երբևէ անում է այս աշխարհում համապատասխան մարդու հետ համապատասխան վայրում ամուսնանալն է:

Այսպիսով, մի քիչ տարօրինակ կարող է թվալ, երբ նման բան է ասվում քահանայության ժողովի ժամանակ: Ես սա ասում եմ այստեղ, որովհետև ես չգիտեմ էլ որտեղ ասել դա: Եկեղեցու եպիսկոպոսներն ու ցցի նախագահներն այժմ լսեցին դա: Եվ նրանք են այն մարդիկ, ովքեր պետք է որոշում կայացնեն:

Այս նյութի վերաբերյալ այսքանը» (in Conference Report, Oct. 1997, 72–73; կամ *Ensign,* Nov. 1997, 52):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Կարևոր չէ դա խանգարում է ձեր ուսմանը, հետաձգում է ձեր կարիերան, ամուսնությունը, թե բասկետբոլը: Եթե դուք չունեք առողջական լուրջ խնդիր, յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ երիտասարդ տղամարդ պետք է արձագանքի միսիա ծառայելու կանչին» (in Conference Report, Apr. 1984, 61; կամ *Ensign,* May 1984, 42):

Որոշում ընդունել ճիշտ ժամանակին

Նախագահ Հարոլդ Բ. Լի

«Երիտասարդ տղամարդիկ, ես չեմ փորձում ստիպել ձեզ ամուսնանալ շատ վաղ: Կարծում եմ այսօրվա կյանքի վտանգներից մեկն այդտեղ է: Մենք չենք ուզում, որ երիտասարդ տղամարդը մտածի ամուսնության մասին, մինչև նա ունակ չլինի հոգ տանել ընտանիքի համար, ունենա իր հիմնարկությունը, լինի անկախ: Նա պետք է համոզված լինի, որ գտել է իր ընտրյալ աղջկան, որ իրենք միմյանց բավականաչափ երկար են ճանաչում, որ գիտեն միմյանց սխալները, բայց դեռևս սիրում են միմյանց: Ես ասել եմ միսիայի նախագահներին (մի քանիսը մեզ տեղեկացրել են, որ ասել են միսիոներներին. «Այժմ, եթե դու չամուսնանաս վեց ամսվա ընթացքում, ուրեմն ձախողվել ես որպես միսիոներ»), երբևէ չասեք դա ձեր միսիոներներից որևէ մեկին: Հնարավոր է, վեց ամսում նրանք չկարողանան գտնել կին, և եթե ձեզ լուրջ ընդունեն, նրանք կարող է շտապեն ամուսնանալ, որը սխալ կլինի նրանց համար:

Խնդրում ենք սխալ մի հասկացեք մեր ասածները, բայց եղբայրներ, ավելի լուրջ մտածեք ամուսնության պարտականությունների մասին նրանց համար, ովքեր կրում են սուրբ քահանայությունը այն ժամանակ, երբ ամուսնությունը պետք է լինի յուրաքանչյուր տղամարդու սպասումը, ով հասկանում է պատասխանատվությունը, քանի որ հիշեք, եղբայրներ, որ միայն նրանք, ովքեր մտնում են ամուսնության նոր և հավերժական ուխտի մեջ տաճարում ժամանակի և հավերժության համար, միայն նրանք կունենան վեհացում սելեստիալ արքայությունում: Սա այն է, ինչ Տերն է ասում մեզ» (in Conference Report, Oct. 1973, 120; կամ *Ensign,* Jan. 1974, 100):

Առաջին Նախագահություն՝ Էզրա Թաֆթ Բենսոն, Գորդոն Բ. Հինքլի, Թոմաս Ս. Մոնսոն

«Երբ լիաժամկետ միսիոներները տուն են վերադառնում, նրանց պետք է խորհուրդ տրվի այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ իրենց կրթությունը կամ աշխատանքը շարունակելը, ընտանեկան կապերը զորացնելը, Եկեղեցում ակտիվորեն մասնակցություն ցույց տալը, տասանորդներ և նվիրատվություններ վճարելը և տաճարում ամուսնանալուն նախապատրաստվելը: Այնուամենայնիվ, իմաստուն չէ «խորհուրդ տալ միսիոներներին ամուսնանալ որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Ամուսնանալու որոշումն այնքան կարևոր է, որ այն պետք է ընդունվի անձնավորության կողմից միայն շատ աղոթելուց և մանրակրկիտ խորհրդածելուց հետո» [*Mission President's Handbook* (31153), 1990, 23]» (in *Bulletin,* 1993, no. 1, 2):

ԱԶԱՏ ԿԱՄՔ, ԹԵ՞ ՈԳԵՇՆՉՈՒՄ

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

Տասներկու Առաքյալների Քվորումից

New Era, Jan. 1975, 38–43

Վերջերս կինս և ես լուրջ քննարկում էինք անցկացնում հաշվելով մեր բազմաթիվ օրհնությունները: Մենք նշեցինք բազմաթիվ բաներ, որոնք եկել էին մեզ Եկեղեցու շնորհիվ, մեր ընտանիքի շնորհիվ, հավերժական ճշմարտության փառահեղ վերկանգման շնորհիվ, որը տեղի է ունեցել այս օրերում, իսկ հետո նա քննարկումը հասցրեց կիզակետին՝ ուղղելով այս հարցը. «Ո՞րն է մեծագույն օրհնությունը, որ երբևէ ստացել ես քո կյանքում»:

Առանց մի պահ իսկ տատանվելու ես ասացի. «Մեծագույն օրհնությունը, որ երբևէ տրվել է ինձ 1937 թվականի հոկտեմբերի տասներեքին էր, ես արտոնություն ունեցա ծնկի իջնել Սոլթ Լեյքի Տաճարի զոհասեղանի մոտ և ստանալ քեզ որպես հավերժական զուգընկեր»:

Նա ասաց. «Լավ, դու անցար ստուգարքը»:

Հավատացած եմ, որ միակ ամենակարևոր բանը, որ որևէ Վերջին Օրերի Սուրբ երբևէ անում է այս աշխարհում համապատասխան մարդու հետ, համապատասխան տեղում, համապատասխան իշխանությամբ, ամուսնանալն է, և ապա, երբ նրանք այդպես կնքվում են Եղիա մարգարեի կողմից վերականգնած զորության և իշխանության միջոցով, մյուս ամենակարևոր բանը, որ որևէ Վերջին Օրերի Սուրբ կարող է երբևէ անել, այնպես ապրելն է, որ այդ ձևով կապված ուխտի պայմաններն ու ժամկետները լինեն պարտավորեցնող և արդյունավետ այժմ և հավերժ: Եվ այսպիսով, ես կուզենայի, եթե պատշաճորեն առաջնորդվեմ, կատարել մի քանի առաջարկություններ, որոնք կիրառվում են ընտրության բոլոր ոլորտներում՝ բոլոր ոլորտներում, առնվազն գործունեության բոլոր գլխավոր ոլորտներում, բայց այն կիրառել մասնավորապես հավերժական ամուսնության հարցում, առանձնացնելով այն՝ բոլոր մյուսներից վեր, որպես միակ գերագույնը:

Երբ մենք ապրում էինք Աստծո՝ մեր Երկնային Հոր ներկայության մեջ, մենք օժտված էինք ազատ կամքով: Սա տվեց մեզ հնարավորություն, արտոնություն ընտրելու, թե ինչ անենք՝ կատարելու ազատ, առանց դրսի ազդեցության ընտրություն: Երբ հայր Ադամը դրվեց Եդեմի պարտեզում, նրան տրվեց այս նույն զորությունը, և մենք այժմ ունենք այն: Մեզանից սպասվում է, որ մենք օգտագործենք պարգևները և տաղանդներն ու ունակությունները, բանականությունն ու դատողությունը և ազատ կամքը, որոնցով մենք օժտված ենք:

Բայց մյուս կողմից մեզ պատվիրված է որոնել Տիրոջը, փափագել նրա Հոգին, ստանալ հայտնության հոգին և ոգեշնչում մեր կյանքում: Մենք գալիս ենք Եկեղեցի և մի քահանայություն կրող պաշտոնյա դնում է իր ձեռքերը մեր գլխին և ասում. «Ստացիր Սուրբ Հոգին»: Սա տալիս է մեզ Սուրբ Հոգու պարգևը, որն Աստվածագլխի այդ անդամի մշտական ընկերակցության իրավունքն է, որը հիմնված է հավատարմության վրա:

Եվ այսպիսով մենք հանդիպում ենք երկու առաջարկության: Մեկը, որ մենք պետք է առաջնորդվենք ոգեշնչման հոգով, հայտնության հոգով: Մյուսը, որ մենք այստեղ ենք ղեկավարության ներքո՝ գործածելու մեր ազատ կամքը, որոշելու, թե մենք ինչ պետք է անենք ինքնուրույն, և մենք պետք է գտնենք ճիշտ հավասարակշռություն այս երկուսի միջև, եթե մենք պատրաստվում ենք հետևել մի ուղու, որը մեզ կտա ուրախություն, բավարարություն և խաղաղություն այս կյանքում և կառաջնորդի դեպի հավերժական պարգև՝ մեր Հոր արքայությունում:

Երբ մենք մեր Հոր հետ էինք նախագոյության ոլորտում, նա հետևում էր և ուսումնասիրում մեզ, և նա գիտեր, թե ինչպես ենք արձագանքումիր օրենքներին, երբ նրա ներկայության մեջ ենք, երբ մենք ունեինք գիտելիք, որ նա մեր Հայրն էր, և որ մեզ ներկայացված ուսմունքները գալիս էին նրանից: Մենք քայլում էինք տեսողությամբ: Այժմ նա պարզում է, թե ինչպես ենք արձագանքում, երբ քայլում ենք հավատքով, երբ մենք Նրա ներկայությունից դուրս ենք, և մենք պետք է ապավինենք բաների, որոնք այլ են, քան այն անձնական խորհուրդը, որը մի ժամանակ ստանում էինք նրանից:

Ես կկամենայի ներկայացնել երեք դեպքի ուսումնասիրություն, որոնցից, հավանաբար, մենք կկարողանանք հանգել շատ իրական և խելամիտ եզրակացությունների այն բանի վերաբերյալ, թե ինչ պետք է լինի մեր կյանքում: Ես կվերցնեմ այս օրինակները այն հայտնություններից, որոնք Տերը տվել է մեզ:

«Դու չհասկացար»

Առաջին դեպքի ուսումնասիրություն. Օլիվեր Քաուդերի անունով մի մարդ կար: Այն վաղ օրերին նա աշխատում էր որպես դպիր Մարգարեի համար: Նա գրագիրն էր: Նա գրում էր խոսքերը, որոնք Մարգարեն թելադրում էր, երբ Հոգին հանգչում էր նրա վրա թարգմանության ընթացքում (այդ ժամանակ թարգմանվում էր Մորմոնի Գիրքը): Եղբայր Քաուդերին այդ ժամանակ համեմատաբար հոգեպես ոչ հասուն էր, և նա ձգտում էր և ցանկանում էր անել ինչ որ բան, որն այդ ժամանակվա իր հոգևոր կարողությունից վեր էր: Նա ուզում էր թարգմանել: Եվ այսպիսով նա խնդրեց Մարգարեին, Մարգարեն հարցը բարձրացրեց Տիրոջ առջև, և նրանք հայտնություն ստացան: Տերն ասաց. «Օլիվեր Քաուդերի, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ հաստատապես, ինչպես կենդանի է Տերը, որը քո Աստվածն է ու քո Քավիչը, ճիշտ այդպես հաստատ, դու կստանաս իմացություն, ինչ բաների վերաբերյալ էլ որ դու խնդրես հավատքով, ազնիվ սրտով, հավատալով, որ դու կստանաս….»: Իսկ հետո մի բան, որը նա կարող էր ստանալ նկարագրվում է որպես «իմացություն փորագրությունների վերաբերյալ հին հիշատակարանների, որոնք հնադարյան են, որոնք պարունակում են իմ սուրբ գրքերի այն մասերը, որոնց մասին ասվեց իմ հոգու հայտնությամբ»:

Այդ առանձնահատուկ խնդիրը այսպես լուծելուց հետո, Տերը բացահայտեց մի սկզբունք, որը վերաբերում է սրան և բոլոր նմանատիպ իրավիճակներին. «Այո, ահա, ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Սուրբ Հոգով, որը կիջնի քո վրա և որը կմնա քո սրտում: Արդ, ահա, սա է հայտնության ոգին» (ՎԿՈՒ 8.1–3):

Օլիվերն արեց այն, ինչ մեզանից շատերը կանեին: Նա ուներ հրահանգները, որոնք ես կարդացի, և նա կարծում էր, որ դրանք նշանակում էին այն, ինչ մակերեսայնորեն թվում էր ասում էին, որը հետևյալն էր, որ եթե նա

հավատքով խնդրեր Աստծուց, նա կունենար զորություն թարգմանելու: Բայց իր համեմատաբար հոգևոր ոչ հասուն վիճակում, նա դեռ չէր սովորել, թե ինչ էր նշանակում խնդրել Աստծուց, կամ ինչպես առաջացնել այնպիսի հավատք կամ անել առանձնահատուկ մի բան, որպեսզի աղոթքի պատասխանը ստացվեր: Եվ այսպիսով նա խնդրեց: Եվ ինչպես գիտեք, նա ձախողվեց, նա բացարձակապես անկարող էր թարգմանել: Սա առաջացրեց որոշ մտահոգություն, կարծում եմ ինչպես նրա, այնպես էլ Մարգարեի մոտ: Հարցը ետ բարձրացվեց առ Տերը, որի խոստումը նրանք փորձում էին հաստատել և եկավ պատասխան, եկավ պատճառը, թե ինչու նա չէր կարողանում թարգմանել. «Ահա, դու չհասկացար. դու կարծում էիր, որ ես պիտի տայի քեզ, երբ դու միտք չարեցիր, այլ միայն խնդրեցիր ինձ» (ՎԱՈ 9.7):

Այսպիսով, թվում է, դա այն ամենն էր, ինչ նրան հրահանգվեց անել, խնդրել հավատքով, բայց հավատքով խնդրելու տակ թաքնված էր դրան նախորդող պահանջ, որ մենք անենք ամեն ինչ, որ մեր զորությունում է, իրականացնելու նպատակը, որին մենք ձգտում ենք: Մենք օգտագործում ենք ազատ կամքը, որով մենք օժտված ենք: Մենք օգտագործում ենք ամեն ունակություն և կարողություն, որը մենք ունենք առաջ բերելու այն հնարավորությունը, որը դրա հետ կարող է կապված լինել: Դա կարող է լինել Մորմոնի Գրքի թարգմանությունը, դա կարող է լինել կնոջ ընտրությունը, դա կարող է լինել աշխատանքի ընտրությունը, դա կարող է լինել տաս հազար կարևոր բաներից որևէ մեկը, որոնք ի հայտ են գալիս մեր կյանքում:

Տերը շարունակեց.

«….Ես ասում եմ քեզ, որ դու պետք է քննես այն քո մտքում. հետո դու պետք է հարցնես ինձ, թե արդյոք դա ճիշտ է, և եթե դա ճիշտ լինի, ես այնպես կանեմ, որ կուրծքդ կայրվի քո ներսում. Ուստի, դու պիտի զգաս, որ դա ճիշտ է:

Բայց, եթե դա ճիշտ չլինի, դու նման զգացումներ չես ունենա, այլ կունենաս մտքի ընդարմացում, որի արդյունքում դու կմոռանաս այն, ինչը սխալ է, ուստի, դու չես կարող գրել այն, ինչը սրբազան է, եթե դա չտրվի ինձանից» (ՎԱՈՒ 9.8–9):

Ինչպե՞ս եք կին ընտրում: Ես Բրիգամ Յանգի Համալսարանի շատ երիտասարդներից և այլ տեղերից եմ լսել. «Ես պետք է ոգեշնչման զգացում ունենամ: Ես պետք է հայտնություն ստանամ: Ես պետք է ծոմ պահեմ և աղոթեմ և Տիրոջը խնդրեմ, որ ցույց տա ինձ, թե ում հետ պետք է ամուսնանամ: Դեհ, երևի ձեզ զարմանալի թվա, բայց երբեք իմ կյանքում չեմ հարցրել Տիրոջից, թե ո՞ւմ հետ պետք է ամուսնանամ: Երբեք մտքովս չի անցել հարցնել նրան: Ես դուրս եկա և գտա այն աղջկան, որին ուզում էի, նա ինձ հարմար էր, ես գնահատեցի և կշռադատեցի իմ առաջարկությունը և ինձ ուղղակի հարյուր տոկոսով թվաց, որ սա հենց այն էր, ինչ պետք էր: Ուրեմն, եթե ամեն ինչ ուզում եի գերազանց լինի, ես պետք է որոշ չափով խորհրդակեի Տիրոջ հետ, որը ես չէի արել, բայց այն ամենն ինչ արեցի, հետևյալն էր՝ աղոթեցի Տիրոջը և խնդրեցի որոշ առաջնորդություն և ուղղություն իմ կայացրած որոշման վերաբերյալ: Ավելի կատարյալ մի բան կարող էր լինել որոշման հետ կապված նրա հետ խորհրդակցելը և հոգևոր հաստատում ստանալը, որ եզրակացությունը, որին ես հանգել էի իմ ազատ կամքով և իմ ունակությամբ և կարողությամբ, ճիշտ էր:

«Ինչո՞ւ եք դուք հարցնում ինձ»

Այժմ, երկրորդ դեպքի ուսումնասիրություն. Կա մի մարդ, որի անունը չի պահպանվել մեզ համար հնադարյան հիշատակարանում: Նա հայտնի է որպես Հարեդի եղբայր: Այլ աղբյուրներից մենք գիտենք, որ նրա անունը Մորիանկումր էր: Սկզբում նա էր հարեդացի ժողովրդի հոգևոր առաջնորդը: Երբ նրանք սկսեցին Բաբելոնի աշտարակից իրենց ճամփորդությունը դեպի Ամերիկայի խոստացված երկիրը, նա էր այն անձնավորությունը, որը հաղորդակցվում էր Տիրոջ հետ՝ ուղղություն և հոգևոր առաջնորդություն ստանալով նրանից, ում կարիքը որպես ժողովուրդ նրանք ունեին:

Եվ տեղի ունեցան որոշ հետաքրքիր բաներ: Նրանք հասան ջրերին, որոնք նրանք պատրաստվում էին անցնել, և Տերն ասաց նրան. «Կառուցեք բեռնանավեր»: Բայց հետաքրքրական է, որ Տերը չասաց նրանց, թե ինչպես կառուցեն բեռնանավերը: Հարեդի եղբայրն արել էր դա նախորդ անգամ, նա հրահանգի կարիք չուներ, նա հայտնության կարիք չուներ առաջնորդվելու համար: Այսպիսով, նա կառուցեց բեռնանավերը:

Բայց այս անգամ դրանք օգտագործվելու էին որոշ առանձնահատուկ և դժվարին պայմաններում, և նա կարիք ուներ մի բանի, որն այժմ առկա չէր այնտեղ, նա կարիք ուներ օդի: Եվ սա մի խնդիր էր, որը նրա կարողությունից վեր էր: Այսպիսով նա ներկայացրեց այդ հարցը Տիրոջը, և քանի որ դրա լուծումը բացարձակապես վեր էր նրա ունակությունից, Տերը լուծեց այն նրա համար և ասաց. «Արա այսպես և այնպես և դու օդ կունենաս»:

Բայց այդ ժամանակ Հարեդի եղբայրը վստահություն ունենալով, քանի որ նա խոսում էր Տիրոջ հետ, քանի որ նա հաղորդակցվում էր և պատասխաններ ստանում, տվեց մեկ այլ հարց, նա հարցրեց մի խնդրի հետ կապված, որը նա ինքն էր նկատել և չէր ներկայացրել Տիրոջը: Նա ասաց. «Ի՞նչ անենք նավերում լույս ունենալու համար»:

Եվ Տերը մի քիչ խոսեց նրա հետ այդ մասին, իսկ հետո ասաց հետևյալը. «Ի՞նչ կկամենաս, որ ես անեմ, որ դուք լույս ունենաք ձեր նավերում» (Եթեր 2.23): Իրականում

«Ի՞նչ եք ինձանից կամենում: Սա մի բան է, որ դուք պետք է լուծած լինեիք»: Եվ նա մի քիչ էլ խոսեց և կրկնեց հարցի էությունը. «Ի՞նչ կկամենաք դուք, որ ես պատրաստեմ ձեզ համար, որ դուք կարողանաք լույս ունենալ, երբ դուք կուլ գնացած կլինեք ծովի խորքերին» (Եթեր 2.25): Այլ խոսքով ասած «Մորիանկումր, սա ձեր խնդիրն է: Ինչո՞ւ եք ինձ անհանգստացնում: Ես տվել եմ ձեզ ձեր ազատ կամքը, դուք օժտված եք կարողությամբ և ունակությամբ: Գործի անցեք և լուծեք խնդիրը»:

Եվ Հարեդի եղբայրը հասկացավ ուղերձը: Նա բարձրացավ սարը, որը կոչվում էր Սելեմ և հիշատակարանն ասում է, նա «ապարից հալեց տասնվեց փոքր քարեր. և դրանք սպիտակ էին ու թափանցիկ, ճիշտ ապակու պես թափանցիկ» (Եթեր 3.1):

Եվ Հարեդի եղբայրը վերցրեց յուրահատուկ տեսակի տասնվեց փոքրիկ քարերը (նա կարողացավ պահել դրանք բոլորը իր ձեռքերում) սարի գագաթին» (Եթեր 3.1), իսկ հետո նա ասաց Տիրոջը «Այժմ սա այն է, ինչ հուսով եմ դու կանես»: Դուք իրականում չեք ասում Տիրոջն ինչ անել, բայց դուք ստանում եք որոշ ոգեշնչում և օգտագործում եք ձեր դատողությունը և խոսում այդ հարցի մասին նրա հետ: Եվ այսպիսով Մորիանկումրն ասաց Տիրոջը. «Դիպչիր այս քարերին, ով Տեր, քո մատով, և պատրաստիր դրանք, որ դրանք կարողանան փայլել խավարում. և դրանք կփայլեն մեզ համար նավերի մեջ, որոնք մենք ենք պատրաստել, որ մենք կարողանանք լույս ունենալ, մինչ մենք կանցնենք ծովը» (Եթեր 3.4):

Եվ Տերն արեց այն, ինչ Հարեդի եղբայրը խնդրեց, և այդ ժամանակ էր, երբ նա տեսավ Տիրոջ մատը, և երբ նա ներդաշնակ էր, ստացավ հայտնություն, որը գերազանցում էր որևէ բան որ որևէ մարգարե երբևէ ձեռք էր բերել մինչև այդ պահը: Տերը նրան ավելի շատ բան բացահայտեց իր էության և անձի վերաբերյալ, քան մինչև այդ երբևէ բացահայտվել էր և այդ ամենը հայտնվեց, որովհետև նա արեց ամեն ինչ, որ ինքը կարող էր անել և որովհետև նա խորհրդակցում էր Տիրոջ հետ:

Գոյություն ունի լավ համակշռություն ազատ կամքի և ոգեշնչման միջև: Մեզանից սպասվում է անել մեր ուժերի սահմանում ամեն ինչ և ապա պատասխան փնտրել Տիրոջից, հաստատող կնիք, որ մենք հասել ենք ճիշտ եզրակացության և երբեմն, բարեբախտաբար, նաև մենք ստանում ենք հավելյալ ճշմարտություններ և գիտելիք, որը մենք նույնիսկ չէինք ենթադրում:

«Նրանք պետք է խորհրդակցեն միմյանց հետ և ինձ հետ»

Այժմ, երրորդ դեպքի ուսումնասիրությունը. Եկեղեցու պատմության վաղ օրերին, Տերը պատվիրեց Սրբերին հավաքվել Միսսուրիի որոշակի մի վայրում: Մատնանշելով, որ ստացել էր «Հավաքվեք» հրամանագիրը. «Թող Նախագահող Եպիսկոպոսը գա այստեղ և անի սա և սա»: Այժմ տեսեք, թե ինչ պատահեց: Խոսում է Տերը.

«….Ինչպես ես ասեցի իմ ծառա Էդվարդ Պատրիջի մասին, այս հողն է նրա բնակության հողը, և նրանց նշանակել է իրեն խորհրդականներ լինելու. և նաև նրա բնակության հողը, ում ես նշանակել եմ պահպանելու իմ շտեմարանը.

Ուստի, թող նրանք բերեն իրենց ընտանիքներին այս հողը, ինչպես որ կխորհրդակցեն միմյանց հետ և ինձ հետ» (ՎԱՈՒ 58.24–25):

Դուք տեսնում եք, Տերն ասաց «հավաքվեք» Սիոնում: Այնուամենայնիվ մանրամասներն ու պատրաստությունները, *ինչպես, երբ* և *հանգամանքները*, պետք է որոշվեին նրանց ազատ կամքով, ովքեր կանչվել էին հավաքելու, բայց նրանք պետք է խորհրդակցեին Տիրոջ հետ: Այսպիսով, երբ դուք խորհուրդ եք անում Տիրոջ հետ, դուք խոսում եք ինչ-որ բան: Ես ներս եմ բերում իմ երեխաներին, և մենք խորհուրդ ենք անում որևէ խնդրի շուրջ: Ես չեմ ասում նրանց, թե ինչ պետք է լինի, ես ասում եմ. «Ի՞նչ ես կարծում: Ո՞րն է քո գնահատականը: Ի՞նչ ես ուզում անել այս իրավիճակում: Ո՞րն է լավագույն բանը անելու համար»: Եվ նրանք պատմում են մեզ, թե իրենք ինչ են մտածում, և եթե լինում է այնպես, որ ես որևէ իմաստություն կամ դատողություն եմ ունենում այդ հարցի վերաբերյալ, ես արտահայտում եմ իմ տեսակետը: Տերն ունի ողջ իմաստությունը, ողջ գիտությունը և ողջ զորությունը, նա գիտի թե ինչպես կառավարի և վերահսկի ու ուղղություն տա մեզ կատարյալ մի ձևով:

Այսպիսով, Եկեղեցու նախագահող եպիսկոպոսությանը Տերն այս ասելուց հետո, տվեց սկզբունք, որը կառավարում է այս իրավիճակում և այն կառավարում է բոլոր իրավիճակներում: Եվ սա մեզ բացահատված փառահեղ ճշմարտություններից մեկն է: Նա ասաց.

«Քանզի ահա, լավ չէ, որ ես պատվիրեմ բոլոր բաներում. քանզի ով հարկադրվում է բոլոր բաների մեջ, նա ծույլ է և իմաստուն ծառա չէ. ուստի նա վարձք չի ստանում:

Ճշմարիտ ասում եմ. Մարդիկ պետք է ջերմեռանդ ներգրավված լինեն բարի գործի մեջ, և շատ բաներ անեն իրենց իսկ ազատ կամքով, և շատ արդարություն գործեն.

Քանզի զորություն կա նրանց մեջ, որով նրանք գործակալն են իրենց կամքի: Եվ որքան որ մարդիկ բարիք գործեն, նրանք ոչ մի դեպքում չեն կորցնի իրենց վարձքը:

Բայց ով ոչինչ չի անում, մինչև նրան չեն պատվիրում, և ընդունում է պատվիրանը կասկածամիտ սրտով, և պահում է այն ծուլությամբ, նա նզովված է» (ՎԱՈՒ 58.26–29):

Մարգարե Ջոզեֆ Սմիթին հարցրեցին. «Ինչպե՞ս ես կառավարում այդքան մեծ և բազմազան մի ժողովրդի, ինչպիսին Վերջին Օրերի Սրբերն են»:

Նա պատասխանեց. «Ես սովորեցնում եմ ճիշտ սկզբունքներ և նրանք կառավարում են իրենք իրենց»:

Այսպիսով, սա է երկնքի կարգը: Սա է այն ձևը, որով Ամենակարողն է գործում: Ահա այդպես պետք է Եկեղեցին գործի: Մեզանից ակնկալվում է, որ մենք պիտի սովորենք ճիշտ սկզբունքներ, իսկ հետո կառավարենք ինքներս մեզ: Մենք ենք կատարում մեր իսկ ընտրությունները, իսկ հետո ներկայացնում հարցը Տիրոջը և ստանում նրա հավանությունը, վավերացնող կնիքը:

«Խորհուրդ արեք Տիրոջ հետ բոլոր ձեր գործերում»

Դրանք բոլոր երեք դեպքերի ուսումնասիրություններն են, եկեք հանգենք բացահայտված եզրակացությանը: Կար Ալմա անունով մի մարդ, մի հզոր և մեծ մարգարե: Նա Հելաման անունով մի որդի ուներ, որը սուրբ և արդար մարդ էր, հետևելով իր հոր օրինակին: Եվ Հելամանին Ալման ասաց հետևյալը. «Օ, հիշիր, որդիս, և սովորիր իմաստություն քո երիտասարդության տարիներին. Այո, քո երիտասարդության տարիներին սովորիր պահել Աստծո պատվիրանները: Այո, և կանչիր առ Աստված քո բոլոր գոյամիջոցների համար» (Ալմա 37.35–36): Մի՞թե կարծում եք, որ եթե ձեզ խորհուրդ է տրվել աղոթել առ Տերը ձեր գոյամիջոցների համար, ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր, որ դա այն ամենն է, ինչ դուք պետք է անեք: Տերունական աղոթքն ասում է. «Տուր մեզ այսօր մեր հացը հանապազորյա»: Մի՞թե դուք դուրս եք գալիս և նստում անապատում կամ սարի վրա և աղոթում ողջ ձեր ջերմեռանդությամբ. «Տուր մեզ այսօր մեր հացը հանապազօրյա», թե գնում եք և հացահատիկ ցանում և նախիրներ աճեցնում և անում այն ամենը, ինչ կարող եք ձեր իրավիճակում վերջնական արդյունքը ստանալու համար:

Եթե դուք ստանաք հանգիստ, քաղցր համոզվածություն, որը գալիս է միայն Սուրբ Հոգուց, դուք իմացեք, որ հանգել եք ճիշտ եզրակացության:

Շարունակելով. «Այո, թող բոլոր քո արարքները լինեն ի Տերը, և ուր էլ որ գնաս, թող դա լինի Տիրոջով, այո, թող քո բոլոր մտքերն ուղղված լինեն առ Տերը. այո, թող քո սրտի գորովանքը դրված լինի Տիրոջ վրա հավիտյան» (Ալմա 37.36): Այժմ ուշադրություն դարձրեք. «Խորհուրդ արա Տիրոջ հետ քո բոլոր գործերում, և նա ուղղություն ցույց կտա քեզ բարու համար» (Ալմա 37.37):

Ո՞րն էր Օլիվեր Քաուդերիի խնդիրը: «Դու միտք չարեցիր, այլ միայն խնդրեցիր ինձ…դու պետք է քննես այն քո մտքում» (ՎԿՈՒ 9.7–8):

Այսպիսով, ուզո՞ւմ եք կին: Ո՞ւզում եք որևէ բան, որը ճիշտ է և պատշաճ: Գնացեք գործելու և գործադրեք ձեր ազատ կամքը և զորությունն ու ունակությունը, որ Աստված տվել է ձեզ: Օգտագործեք ամեն ձիրք, ստացած ողջ բանականությունը, որը դուք կարող եք կենտրոնացնել խնդրի վրա, որոշեք ինքներդ, իսկ հետո, համոզված լինելով, որ չեք սխալվում, խորհուրդ արեք Տիրոջ հետ: Դուք խոսեք այդ մասին: Ասեք. «Սա այն է, ինչ ես եմ մտածում, ի՞նչ կարծիքի ես դու»: Եվ եթե դուք ստանում եք հանգիստ, քաղցր համոզվածություն, որը գալիս է միայն Սուրբ Հոգուց, դուք իմացեք, որ հասել եք ճիշտ եզրակացության, բայց եթե կա անհանգստություն և անորոշություն ձեր սրտում, ապա ավելի լավ է նորից սկսեք, որովհետև Տիրոջ ձեռքը դրանում չէ, և դուք չեք ստանում վավերացնող կնիքը, որը դուք լիազորված եք ստանալ որպես Եկեղեցու անդամ, ով ունի Սուրբ Հոգու պարգևը:

«…. Այո, երբ դու պառկես գիշերը, պառկիր ի Տերը, որ նա կարողանա հսկել քեզ, քնիդ մեջ. և երբ դու վեր կենաս առավոտյան, թող քո սիրտը լի լինի գոհությամբ առ Աստված. և եթե դու անես այս բաները, դու պիտի բարձրացվես վերջին օրը» (Ալմա 37.37): Եթե դուք սովորեք, թե ինչպես օգտագործեք ազատ կամքը, որ Աստված տվել է ձեզ, և եթե դուք փորձեք կատարել ձեր իսկ որոշումները, և եթե դուք հանգեք եզրակացությունների, որոնք խելամիտ են և ճիշտ, և եթե դուք խորհուրդ անեք Տիրոջ հետ և ստանաք նրա հավանության վավերացնող կնիքը, ձեր կատարած եզրահանգումների վրա, այդ դեպքում դուք ստանում եք հայտնություն, մեկ բանի համար, և մեկ այլ բանի համար, դուք կունենաք հավերժական կյանքի մեծ պարգևը և կբարձրացվեք վերջին օրը: Մենք բոլորս հավասար չենք ոչ մի դեպքում, ոմանք ունեն մեկ տաղանդ և ունակություն, իսկ մյուսները՝ մեկ այլ: Բայց եթե մենք օգտագործենք մեր ունեցած տաղանդները մենք ինչ-որ կերպ լավ դուրս կգանք իրավիճակից:

Մի երկուշաբթի, երբ մենք տոնում էինք Վաշինգտոնի ծննդյան տարեդարձը, ես մայրիկիս մոտ էի, ետնաբակում գերան էի սղոցում: Նա դուրս եկավ ինձ մի քանի ուղղություն տալու և տեսնելու, թե ինչպես եմ ես անում այդ գործը, և նա այնքան էլ գոհ չէր: Նա կարծում էր, որ ես դա պետք է ուրիշ ձևով անեի: Նա վերադարձավ տուն և մի քանի րոպեից իմ փոքր եղբայրը եկավ: Նա ասել էր նրան. «Կարծում եմ լավ կանես գնաս ետնաբակը և Բրյուսին օգնություն ցույց տաս և տես, որ նա այդ գործը ճիշտ ձևով անի»: Ապա նա ասել էր նրան. «Բրյուսն այնքան էլ ընդունակ չէ»: Ուրեմն ես ընդունակ չեմ: Այսպիսով, ես սկսում եմ, որտեղից որ եմ, և ես առաջ եմ գնում այդտեղից: Ես սկսում եմ օգտագործել այնպիսի տաղանդ, որ ես ունեմ և սկսում եմ կիրառել հավերժական ճշմարտության սկզբունքներն իմ կյանքում: Ես ընթացքում խորհրդակցում ու խորհրդակցում եմ Տիրոջ հետ, և կարևոր չէ, թե ես որտեղ եմ, ավետարանը տանում է ինձ առաջ և

բարձրացնում է ու իջեցնում, և օրհնությունները հոսում են դեպի ինձ, որոնք ազնվացնում, սրբագործում և բարելավում ինձ այս կյանքում և վերջում տալիս ինձ փառք և պատիվ ու արժանապատվություն գալիք կյանքում:

Մենք ունենք հայտնության Հոգին

Կարծում եմ, մենք բավականաչափ խոսեցինք. սկզբունքները մեր առջևում են: Թույլ տվեք ինձ անել մեկ բան ևս: Թույլ տվեք ինձ անել իրականում այն, ինչ իմ ընկեր Ալման կաներ: Նա խոսքը քարոզելուց հետո, ասաց. «Եվ այս բոլորը չէ: Մի՞թե դուք կարծում եք, որ այս բաների մասին ես ինքս գիտեմ» (Ալմա 5.45): Այսինքն, նա տվել էր նրանց դեպքի ուսումնասիրությունները, նա մեջբերել էր հայտնությունները, նա հայտնել էր նրանց, թե ինչ կապ կար և հետո բերել իր անձնական վկայությունը: Սա այն է, ինչ մենք պարտավոր ենք անել Եկեղեցում: Մենք պարտավոր ենք սովորել, թե ինչպես սովորեցնենք Հոգու զորությամբ, որպեսզի, երբ մենք վերջացնենք խոսելը ավետարանի թեմաների շուրջ, մենք իմանանք, թե այն ինչ մենք ասացինք ճիշտ էր, և մենք կլինենք վկայություն բերելու մի իրավիճակում, ոչ միայն ճշմարտության մասին և աշխատանքի աստվածայնության մասին, այլ նաև այն մասին, որ այն վարդապետությունը, որ մենք հայտարարում ենք և հավիտենական ճշմարտությունները, որոնք մենք մեկնաբանում ենք, ճշմարիտ են, որ դրանք Տիրոջ միտքն են և ձայնը ու կամքը: Այս աշխատանքի և այս վարդապետությունների հետ կապված փառահեղ և զարմանալի բանը նրանում է, որ դրանք ճշմարիտ են: Չկա այս աշխարհում որևէ բան, չկա ճշմարտություն, որը մենք կարողանանք զգալ, համեմատելու այն ճշմարտության հետ, որ այն աշխատանքը, որով զբաղված ենք մենք, ճշմարիտ է, որ Տիրոջ ձեռքն այստեղ է: Տառացի փաստ է, որ մենք ունենք Սուրբ Հոգու պարգևն ու զորությունը: Մենք ունենք հայտնության ոգին, վկայության ոգին, մարգարեության ոգին: Այս բաները պետք է լինեն, հակառակ դեպքում մենք Աստծո Եկեղեցում և արքայությունում չենք, Տիրոջ ժողովուրդը չենք:

Փաստը նրանում է, որ մենք ունենք դրանք. հայտնությունը գործում է: Մի խուսափեք հայտնություն ստանալուց: Ջոզեֆ Սմիթն ասել է. «Աստված չի բացահայտել որևէ բան Ջոզեֆին, բայց այն ինչ նա հայտնի կդարձնի Տասներկուսին և նույնիսկ ամենավերջին Սուրբը կարող է իմանալ բոլոր բաներն այնքան արագ, որքան որ նա կկարողանա դրանք կրել» (*Teachings of the Prophet Joseph Smith,* 149.): Մենք հայտնության ոգին ունենալու իրավունք ունենք, բայց այն ինչ փորձում եմ սովորեցնել այն է, որ կա ինչպես-ի և ընթացակարգի և կան նախորդող պայմանների խնդիրներ: Մեր պարտականությունն է գնալ և մեր խնդիրների վրա աշխատել, իսկ հետո խորհրդակցել Տիրոջ հետ և ստանալ Սուրբ Հոգու վավերացնող կնիքը այն եզրակացությունների վերաբերյալ, որոնց մենք հանգել ենք և այդ վավերացնող կնիքը հայտնության ոգին է:

Թող Աստված մեզ շնորհի իմաստություն այս բաներում: Թող Աստված մեզ շնորհի խիզախություն և ունակություն կանգնելու մեր իսկ ոտքերի վրա և օգտագործելու մեր ազատ կամքը և ունակություններն ու կարողությունները, որոնք մենք ունենք, այդ դեպքում եկեք բավականաչափ խոնարհ լինենք և պատասխանատու Հոգուն՝ խոնարհեցնելու մեր կամքը նրա կամքի առջև, ստանալու նրա վավերացնող, հաստատող հավանության կնիքը, այդպիսով մեր կյանք բերելով հայտնության ոգին: Եվ եթե մենք այդպես անենք, արդյունքի վերաբերյալ հարց չկա, դա խաղաղություն է այս կյանքում, դա փառք է և պատիվ և արժանապատվություն գալիք կյանքում:

ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հասունության միակ ճշմարիտ չափանիշը անձնական վարքն է:

—Երեց Մարվին Ջ. Աշթոն

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Երկու տարին հսկայական փոփոխություն է մտցնում երիտասարդ տղամարդու կյանքում: Նա դուրս է գալիս որպես տղա և վերադառնում, որպես տղամարդ: Նա դուրս է գալիս ոչ հասունացած, և վերադառնում հասունացած և ուժեղ, ներողամիտ և աշխատող ու պատրաստակամ ծառայելու: Մեծամասամբ նա վերադառնում է քոլեջ և այնտեղ նա ավելի բարձր գնահատականներ է ստանում, քան երբևէ նախկինում, որովհետև նա նպատակ ունի իր կյանքում: Նա արդեն բավականություն է ստանում նպատակից, իսկ այժմ նա ունի նոր նպատակ» (*Teachings of Spencer W. Kimball,* 590–91):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Մեզանից յուրաքանչյուրը կարգավարժմամբ և ջանասիրությամբ ունի կարողություն վերահսկելու իր մտքերն ու իր գործողությունները: Սա հոգևոր, ֆիզիկական և էմոցիոնալ հասունության մասն է կազմում» (in Conference Report, Apr. 1987, 57; կամ *Ensign,* May 1987, 47):

Երեց Մարվին Ջ. Աշթոն

«Մի քանի շաբաթ առաջ Եկեղեցում բարձր պաշտոն զբաղեցնող մի մարդ ինձանից հատուկ մի ծառայություն խնդրեց: «Կարո՞ղ ես բավականաչափ բարի լինել ժամանակ հատկացնելու լսելու, երբ մայրը, հայրը և նրանց դեռահաս դուստրը, իմ հատուկ ընկերները, փորձում են խոսել միմյանց հետ:

«Երբ մենք չորսով միասին նստեցինք, անմիջապես ակնհայտ դարձավ, որ հաղորդակցության բոլոր կանալները խցանված էին նախապաշարմունքով, սպառնալիքներով, մեղադրանքներով և վիրավորանքի զգացումով: Երբ խոսքային փոթորիկները զարգացան խիստ սաստկանալով, ես ինձ գտա միակ ունկնդիրը: Չնայած նրանք անհատապես և որպես խումբ համաձայնվել էին, որ ես էի լինելու խորհրդատուն, դատավորը, միջնորդ դատավորը կամ այսպես ասած զրույցը վարողը, ես համբերությամբ սպասում էի, երբ առիթ կունենամ խոսելու: Տաքացած և էմոցիոնալ առճակատման ընթացքում դեռահասը կրկնում էր արտահայտելով իր վրդովմունքը. «Դուք չեք կարող խոսել ինձ հետ այդ ձևով: Այժմ ես չափահաս եմ: Դուք չեք կարող այդպես վարվել ինձ հետ: Այժմ ես չափահաս եմ: Դուք այլևս չեք կարող տնօրինել իմ կյանքը: Այժմ ես չափահաս եմ»:

Ամեն անգամ, երբ նա ասում էր. «Այժմ ես չափահաս եմ», ես կծկվում էի: Ըստ սահմանման՝ չափահասը այն մարդն է, ով հասել է հասունության տարիքի՝ լիակատար աճի: Ճիշտ է, անձը հասնելով որոշակի տարիքի կարող է իրավաբանորեն համարվել չափահաս, , սակայն մեր նպատակների համար այսօր այնպիսի չափահաս վիճակը, որի մասին մենք խոսում ենք, պետք է վաստակել գործողություններով և վերաբերմունքով:

Ես լիովին համոզված չեմ, թե ով ունի իրավունք կամ պատասխանատվություն որևէ մեկին չափահաս հայտարարելու, բայց ես լիովին համոզված եմ, որ հաճախ ամենաքիչ իրավունքն ունի այդ մասին հայտարարելու համար հենց ինքը այդ անձնավորությունը:

Եթե անձնավորությունը հասուն է, նա այդ մասին հայտարարելու կարիք չի ունենա : Անձնական վարքը հասունության միակ ճշմարիտ չափանիշն է: Չափահասի դասակարգումը, երբ այն վերաբերում է վարքին, չի գալիս տարիքի հետ, կնճիռների կամ ճերմակ մազերի: Գուցե ճիշտ կլինի ասել, որ չափահաս վարքը գործընթաց է: Հասուն վարքը ընդհանրապես զարգանում է ինքնակարգապահությամբ, ճկունությամբ և շարունակական ջանքերով:

Ազնվորեն ասած, չնայած դեռահասի «Այժմ ես չափահաս եմ » հայտարարությունը, ինձ վրա այնքան էլ լավ տպավորություն չթողեց, հանդիպման ժամանակ եղան պահեր, երբ ես մտածեցի, որ նա ավելի շատ հասունություն ցուցաբերեց, քան սենյակում գտնվող մյուս անձնավորությունները: Երբ մենք, ովքեր ավելի մեծ ենք, օգտագործում ենք «Ես քեզանից մեծ եմ» արտահայտությունը ինչ որ հարց կարգավորելու համար, ես լիովին համոզված չեմ, թե դա խիստ արդյունավետ է: Ավելի լավ է հարգանք և սեր վաստակել ծնողական արժանի վերաբերմունքով, քան ձգտել դրան տարիքային տարբերության միջոցով:

Երիտասարդ տղամարդիկ և կանայք ողջ աշխարհում, դուք կարիք չունեք հայտարարելու կամ հռչակելու ձեր հասունության մասին: Ձեր հավատքի և գործերի միջոցով դուք կճանաչվեք, թե ով եք դուք: Ձեր պտուղներով դուք կճանաչվեք և կդասակարգվեք: Մեզանից նրանք, ովքեր վիրավորական փաստեր, զայրույթի պոռթկումներ, նվաստացնող և վիրավորական քննադատություն, անիմաստ փոխադարձ բողոքներ և անհարգալից վերաբերմունք են ցույց տալիս, ոչ մի բան չեն շահի: Եկեք մի կողմ թողնենք մանրախնդրությունը, բարկությունը և փոխադարձ վրեժի զգացումները, որոնք ինքնակործանարար են և

վերադառնանք ապահով ուղի, որը նշվել է Բարի Հովվի կողմից:

Խիզախություն է պետք վիճաբանությունից փախչելու համար: Երբ հասունությունը սկսում է մուտք գործել, սկսում է մուտք գործել չափահաս կյանքը: «Ամեն դառնութիւն եւ բարկութիւն եւ սրտմտութիւն եւ աղաղակ եւ հայհոյութիւն թող վեր առուի ձեզանից՝ ամեն չարութեան հետ:

Եւ իրար հետ քաղցր եղէք, գթած՝ իրար ներելով, ինչպէս Աստուած էլ Քրիստոսով ձեզ ներեց» (Եփեսացիս Դ.31–32):

Տարիներ շարունակ ես մտքումս ունեցել եմ Պիղատոսի առջև կանգնած Հիսուս Քրիստոսի վառ պատկերը: Երբ Հիսուսը կանգնած էր զայրացած ամբոխի առջև, որը ծաղրում էր և քննադատում, Պիղատոսը փորձեց ստիպել Նրան պատասխանել և նույնով փոխհատուցել: Նա փորձեց ստիպել Նրան հռչակել իրեն թագավոր: Հիսուսը լուռ էր: Նրա կյանքը իր քարոզն էր: Նա կատարյալ էր բնավորությամբ, արժանի որդի, Հոր Միածինը: Նրա հասունությունը, այլ խոսքով ասած, ինքնին խոսում էր իր մասին» (in Conference Report, Apr. 1987, 78–79; կամ *Ensign,* May 1987, 65):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Ճիշտ ինչպես բավականությունը հետաձգելու կարողությունն է իսկական հասունության նշան, նմանապես հետաձգված բացատրության պատրաստակամ սպասումը նշան է ժամանակի ընթացքում հավատքի և վստահության մեծացման» (in Conference Report, Apr. 1985, 91; կամ *Ensign,* May 1985, 71):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Մենք այստեղ ենք երկրի վրա ձեռք բերելու փորձառություն, որը մենք չենք կարող ձեռք բերել ոչ մի այլ ճանապարհով: Մեզ տրվել է աճելու, զարգանալու և հոգևոր հասունություն ձեռք բերելու հնարավորություն: Այդ անելու համար մենք պետք է սովորենք կիրառել ճշմարտությունը: Այն թե ինչպես ենք դիմակայում մարտահրավերներին և լուծում դժվարին խնդիրները անչափ կարևոր է մեր երջանկության համար» (in Conference Report, Oct. 1989, 38; կամ *Ensign,* Nov. 1989, 30):

Երեց Մարիոն Դ. Հանքս

«Մենք ապրում ենք բարոյական օրենքի աշխարհում: Մենք կարող ենք ընտրել չարը և ստանալ այն, ինչ մենք ենք ուզում հենց այժմ, իսկ հետո վճարել դրա համար: Կամ մենք կարող ենք ընտրել բարին և վճարել դրա համար նախապես, նախքան այն ստանալը»: …. Դա հնարավոր է ազնվությամբ և պատասխանատվությամբ, սեռական մաքրությամբ, հավատարմությամբ, անձնազոհ ծառայությամբ կյանքի դեպքում:

Երբ Պողոսը խոսեց «մաքուր սրտից» դուրս բխող գթության մասին, կարծում եմ նա խոսեց ուրիշների հանդեպ ազնիվ, անեսասեր մտահոգության զգացման մասին, որը բարոյական և հոգևոր իսկական հասունության նշան է» (in Conference Report, Oct. 1967, 59–60):

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԴԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայր տիտղոսը սրբազան է և հավերժական: Կարևոր է, որ հարգանքի, պատվի ու հիացմունքի բոլոր տիտղոսներից, որոնք տրվում են Աստվածությանը, Նա խնդրել է, որ մենք Նրան Հայր կոչենք:

—Հայրեր, խորհեք ձեր ուղիների մասին

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Հարոլդ Բ. Լի

«Բոլոր կանայք ընկերակցության ցանկություն ունեն: Նրանք ուզում են լինել կողակիցներ, նրանք ուզում են լինել մայրեր, և երբ տղամարդիկ չեն ստանձնում ամուսնության իրենց պարտականությունները, առանց որևէ լուրջ պատճառի նրանք չեն կարողանում իրականացնել ամուսնության իրենց ցանկությունը: Եղբայրներ, մենք չենք կատարում քահանայություն կրողի մեր պարտականությունը, երբ մենք անցնում ենք մեր ամուսնական տարիքը և ձեռնպահ մնում այդ հաճելի կանանց հետ պատվավոր ամուսնությունից, ովքեր ձգտում են ամուսին, ընտանիք և տուն ունենալու կանացի մեծագույն ցանկության իրականացմանը» (in Conference Report, Oct. 1973, 119–20; or *Ensign,* Jan. 1974, 100):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Տերն ի սկզբանե կազմեց ողջ ծրագիրը, որտեղ կար հայր, որը ծնունդ է տալիս, ապահովում, սիրում և ուղղություն է տալիս, և մայր, որը հղիանում է, ծնում ու խնամում, կերակրում և ուսուցանում: Տերը կարող էր կազմել այն այլ ձևով, բայց ընտրեց ունենալ պատասխանատվությամբ և նպատակասլաց կապերով մի միավոր, որտեղ երեխաները ուսուցանում են և կարգապահության վարժեցնում միմյանց և սկսում սիրել, հարգել և գնահատել մեկ մեկու: Ընտանիքը կյանքի մեծ ծրագիրն է, ինչպես որ այն ծնունդ է տվել և կազմվել մեր Երկնային Հոր կողմից» (in Conference Report, Apr. 1973, 151; or *Ensign,* July 1973, 15):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Ձեր կնոջ հետ միասին դուք եք որոշում ձեր տան հոգևոր կլիման» (in Conference Report, Oct. 1994, 69; or *Ensign,* Nov. 1994, 51):

ՀԱՅՐԵՐ, ԽՈՐՀԵՔ ՁԵՐ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գրքույկ

Եղբայրներ, դուք մտածե՞լ եք հաջող հայր լինելու մարտահրավերի մասին: Ծանր աշխատանք և ծրագրավորում է պահանջվում արդարության մեջ մեծացնելու ձեր երեխաներին և միասնություն ունենալ ձեր կնոջ հետ, տանը սիրո և ներդաշնակության կայուն զգացում կառուցելու համար: Ինչո՞ւ է արդարակյաց հայր լինելն այդպիսի մարտահրավեր գրեթե յուրաքանչյուր տղամարդու համար:

Տիրոջ փրկության ծրագիրը պահանջում է, որ դուք անցնեք փորձությունների միջով այս մահկանացու կյանքում: Այդ փորձությունները կարծես հասնում են առավելագույնին, երբ դուք հայր եք դառնում, բայց վստահ եղեք, հայրությունը ինչ որ իմաստով աշակերտություն է աստվածությանը: Այս քննարկումը կօգնի ձեզ տալ ավելի լայն հեռանկար, թե ինչ է նշանակում լինել հայր. այն ձեզ կօգնի հասկանալ և զգալ ձեր արժեքը ձեր երկնային Հոր մոտ: Հայրեր, խորհեք ձեր ուղիների մասին:

Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով Աստված ստեղծեց երկինքներն ու երկիրը: Այդ ժամանակ դուք ապրում էիք Նրա հետ որպես Նրա հոգևոր զավակ, և դուք ուրախությունից բացականչեցիք, երբ այս երկիրը ձևավորվեց: Դուք գիտեիք երկիր գալու, ֆիզիկական մարմին ստանալու և երկրային կյանքի շատ փորձությունների միջով անցնելու անհրաժեշտության մասին: Դուք գիտեիք, որ երբեմն դուք սխալներ կանեք: Դուք գիտեիք նաև, որ ձեր Եղբայր և Փրկիչ Տեր Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության միջոցով, դուք կկարողանաք ապաշխարել այդ սխալներից և մաքուր համարվել:

Դուք գիտեիք նաև, որ Հիսուս Քրիստոսը պետք է լիներ ձեր օրինակը և պետք է ցույց տար ուղին ետ վերադառնալու ձեր երկնային Հոր մոտ: «Եւ Աստուած իր պատկերովը. Աստուծոյ պատկերովը ստեղծեց նորան. արու եւ էգ ստեղծեց նորան….» (Ծննդոց Ա.27): Եվ նա մարդուն իշխանություն տվեց կամ տնօրինություն երկրի վրա բոլոր բաների վրա և նրան հաշվետու դարձրեց դրանց համար: Նրա մեծագույն տնօրինությունը և պատասխանատվությունը կլինի երեխաների համար:

Ամուսնությունը, քանի որ Աստծո կողմից է կարգված, տղամարդու և կնոջ օրինավոր միությունն է, ոչ միայն այս երկրային կյանքի համար, այլ ողջ հավերժության համար: Ամուսնության ամենակարևոր նպատակը մեր երկնային Հոր հոգևոր զավակներին երկրային մարմիններ հագցնելն է: Երբ ծնվում է ձեր առաջնեկը դուք դառնում եք հայր: *Հայր* տիտղոսը սրբազան է և հավերժական: Կարևոր է, որ հարգանքի և պատվի ու հիացմունքի բոլոր տիտղոսներից, որոնք տրվում են Աստվածությանը, Նա խնդրել է, որ մենք Նրան Հայր կոչենք:

Հայրը նախագահող իշխանությունն է իր ընտանիքում: Այս երկրի վրա ընտանիքի հայր լինելու ձեր սկզբնական փորձառությունը ձեզ հնարավորություններ է ընձեռում սովորել կառավարել սիրով և համբերությամբ և ձեր կնոջ հետ ձեր երեխաներից յուրաքանչյուրին սովորեցնել ճիշտ սկզբունքներ, նախապատրաստելով նրանց դառնալ լավ հայրեր և մայրեր: Երբ դուք սա անում եք ըստ Տիրոջ կողմից տրված օրինակի և համբերում մինչև վերջ, ձեր ընտանիքը կավելացվի հավերժորեն: Արդարակյաց ընտանիքը հավերժական միավոր է: Այս երկրի վրա քահանայության քվորումները և Եկեղեցու բոլոր մյուս կազմակերպությունները օգնում են ձեզ՝ հորը և ձեր կնոջն ու ընտանիքին այս հավերժական նպատակներին հասնելու համար:

Հայրեր, Աստծո կողմից ձեր կնոջն ու ձեզ վստահվել է զորություն՝ լինելու համատեղ ստեղծողներ Իր հետ, շատանալու և լցնելու երկիրը: Որպես համատեղ ստեղծողներ դուք ձեզ վրա եք վերցրել մեր երկնային Հոր զավակներին մահկանացու կյանք բերելու և լույսի ու ճշմարտության մեջ սովորեցնելու հնարավորությունն ու պատասխանատվությունը:

Երբ դուք ընդունում եք ձեր երեխաներին ուսուցանելու կարևորությունը, դուք դառնում եք խոնարհ, որովհետև միանգամից հասկանում եք, որ սա իրականացվում է հրահանգով և օրինակով: Դուք չեք կարող լինել մի բան և արդյունավետորեն ուսուցանել մեկ այլ բան: Դուք պետք է մաքրվեք և կազմակերպեք ձեր կյանքը, որպեսզի ձեր օրինակը և առաջնորդությունը արտացոլի Հիսուս Քրիստոսի ավետարանի լույսը:

Դուք պետք է ծրագրեք ձեր օրը առաջնորդվելով Տիրոջ Հոգու կողմից, անկեղծորեն ձգտելով ձեր իսկ բարօրությանը և ձեր ընտանիքի բարօրությանը, նախքան այլ հոգսերը կկուրացնեն ձեզ այս առաջնահերթ պարտականությունների հանդեպ: Ինչպես սովորեցվել ենք ապրող մարգարեների կողմից. «Ոչ մի այլ հաջողություն չի կարող փոխհատուցել տանը ունեցած ձախողմանը» (տես David O. McKay in *Conference Report*, Apr. 1964, p. 5) և «Մեծագույն աշխատանքը դուք երբևէ կարող եք անել կլինի ձեր իսկ պատերի ներսում» (տես Harold B. Lee, *Strengthening the Home*, 1973, p. 7.):

Պետք է շեշտադրել, որ որպես հայր, դուք միշտ ուսուցանում եք: Լավ թե վատ, ձեր ընտանիքը սովորում է ձեր ուղիները, ձեր հավատալիքները, ձեր սիրտը, ձեր գաղափարները, ձեր մտահոգությունները: Ձեր երեխաները գուցե հետևեն կամ գուցեև ոչնչանան հետևել ձեզ, բայց ձեր տված օրինակը մեծագույն լույսն է, որ դուք պահում եք ձեր երեխաների առջև և դուք պատասխանատու եք այդ լույսի համար:

Մի անգամ մի երիտասարդ հայր անբարյացակամորեն վարվեց իր կնոջ հետ: Երեք օր անց այդ նույն մարդը ականատեսը եղավ, թե ինչպես է իր երեքամյա դուստրը այդ նույն խոսքերն օգտագործելով անբարյացակամորեն վարվում իր մոր հետ: Այդ տղամարդը զգաստացավ և ինքն իրեն տվեց այս հարցը. «Արդյոք բավականաչափ սիրո՞ւմ եմ իմ ընտանիքին ապաշխարելու, հանուն նրանց բարօրության կյանքս փոխելու համար»:

Լավ հայր լինելու պարտականությունները, բեռները, պատասխանատվությունը կարող է թվալ ճնշող: Բարեբախտաբար, ձեզանից չի պահանջվում նախագահել և դատել և գործել առանց խորհրդի, առանց օգնության: Դուք ունեք կին, ընկերակից, խորհրդատու, զուգընկեր, օգնական, ընկեր:

Նա արդյոք մե՞կ է ձեզ հետ: Դուք Տիրոջը արդյոք ամեն օր շնորհակալություն հայտնո՞ւմ եք նրա համար: Դուք պահո՞ւմ եք ուխտերը, որոնք կապել եք նրա և Տիրոջ հետ տաճարում: Դուք միշտ ձգտո՞ւմ եք մաքուր պահել ձեր մտքերը և խոսքերն ու գործերը: Դուք հասկանո՞ւմ եք, որ երբ վիրավորում եք նրան ինչ որ ձևով, դա նման է ինքներդ ձեզ վիրավորելուն, քանի որ դուք մեկ եք:

Նա գիտի՞ իր հանդեպ ձեր սիրո մասին: Ձեր հարաբերությունը արդյոք նման է՞ շարունակվող սիրատածման: Արդյոք միասին մենակ կանոնավորապես ժամանակ անցկացնո՞ւմ եք, որի ժամանակ ձեր խոսքերով և վերաբերմունքով արտահայտում եք նրա հանդեպ ձեր երախտագիտությունը և վերահաստատում, որ ապավինում եք նրա ընկերակցությանը: Արդյոք գործադրո՞ւմ եք արդար առաջնորդություն, նրա հանդեպ:

Դուք արդյոք միշտ պահում եք աչքի առջև ձեր ամուսնության նպատակը՝ հավերժական միավորի ստեղծումը միմյանց միացած սիրով և քահանայության զորությամբ և արարողություններով:

Հայրեր, դուք պատասխանատու եք Տիրոջը նրա համար, ինչ ունեք և ինչ որ կաք: Ապագայում դուք անկասկած կկանգնեք Նրա առջև: Ինչպիսի՞ն կլինի ձեր զեկուցումը ձեր ընտանիքի վերաբերյալ: Արդյոք կկարողանա՞ք զեկուցել, որ ձեր տունը սիրո մի վայր էր, մի փոքրիկ երկինք: Որ ամեն օր ընտանեկան աղոթք և գաղտնի աղոթք էր մատուցվում: Որ այն ծոմի տուն էր: Որ ընտանեկան երեկոների ժամանակ և

այլ դեպքերում դուք և ձեր կինը ուսուցանում էիք ձեր երեխաներին ավետարանի հիմնական սկզբունքները:

Կկարողանա՞ք զեկուցել, որ կենդանի Աստծո հանդեպ հավատք կառուցելու համար ձեր տանը մթնոլորտ ստեղծեցիք՝ խրախուսելով կրթություն, սովորեցնելով կարգ ու կանոն, հնազանդություն և զոհաբերություն: Որ դուք հաճախ կիսվել եք վկայությամբ ձեր Երկնային Հոր իրականության, վերականգնված ավետարանի ճշմարտացիության վերաբերյալ ձեր կնոջ և երեխաների հետ: Կկարողանա՞ք զեկուցել, որ դուք հետևել եք ապրող մարգարեներին: Որ ձեր տունը այն տեղն էր, որտեղ ձեր քնքուշ երեխաները կարող էին պաշտպանված և ապահով զգալ, և որտեղ նրանք զգացել են ձեր և իրենց մոր ընդունելությունն ու սերը:

Իսկ ինչպիսի՞ն կլինի ձեր զեկուցումը ձեր ընտանիքի նյութական բարօրության վերաբերյալ: Աստծո ծրագիրն է, որ դուք աշխատեք նրա համար, ինչ ստանում եք: Ձեր զբաղմունքը պետք է պատվավոր լինի և պետք է բավականաչափ ապահովի՝ բավարարելու ձեր ընտանիքի կարիքները: Արդյոք ձեր վրա վերցրած պարտականություններն ու գործերը կատարո՞ւմ եք ուրախ և շնորհակալ ոգով: Արդյոք ձեր կինը և երեխաները ապահո՞վ են զգում, որովհետև ձեր աշխատանքի հանդեպ լավ եք տրամադրված: Արդյո՞ք գործում եք խնայողաբար և չափավոր և խուսափում պարտքից ապրելով ձեր եկամտի սահմաններում՝ ձեր տասնորդված եկամտի: Արդյոք ձեր կինն ու երեխաներն ունե՞ն ավանդապահության և կայունության զգացում, որովհետև ընտանեկան օջախը հանկարծակի չի տեղափոխվում քմահաճույքից, ոչ խելամիտ դրդապատճառներից ելնելով:

Հայրեր, արդյոք դուք կրում եք պարտավորություն ձեր երեխաներից յուրաքանչյուրի հավերժական բարօրության համար: Արդյո՞ք աշխատում և սիրում ու ճիգ եք թափում նրանց հետ նրանց կյանքի ողջ ընթացքում:

Հայրությունը ղեկավարություն է, ամենակարևոր ղեկավարությունը: Միշտ այդպես է եղել և այդպես էլ կլինի: Հայրեր, ձեր հավերժական զուգընկերոջ օգնությամբ և խորհրդով ու խրախուսանքով, դուք եք նախագահում տանը: Դա կապ չունի, թե դուք ամենաարժանավորն եք կամ ամենապատրաստվածը, այլ դա օրենքի և նշանակման հարց է: Դուք եք նախագահում ճաշի սեղանի շուրջ ընտանեկան աղոթքի ժամանակ: Դուք եք նախագահում ընտանեկան երեկոյի ժամանակ և առաջնորդվելով Տիրոջ Հոգով, դուք հոգ եք տանում, որ ձեր երեխաներն ուսուցանվեն ճիշտ սկզբունքներ: Ձեր պաշտոնն է՝ ուղղություն տալ ողջ ընտանեկան կյանքի վերաբերյալ:

Դուք տալիս եք հայրական օրհնություններ: Դուք ակտիվ մասնակցություն եք ցույց տալիս՝ հաստատելով ընտանեկան կանոններ և կարգապահություն: Որպես տան ղեկավար դուք ծրագրում եք և զոհաբերում հասնելու միավորված և երջանիկ ընտանիք ունենալու օրհնությանը: Այս բոլորն անելու համար պահանջվում է, որ դուք ապրեք ընտանիքի վրա կենտրոնացած կյանքով:

Այսպիսով, դուք Աստծո որդին եք: Դուք այս երկիր եք ուղարկվել, որպեսզի ֆիզիկական մարմին ստանաք և ստուգվեք անցնելով այս երկրային կյանքի փորձություններով և փորձառություններով: Սա ձեր Երկնային Հոր ծրագիրն է, որ դուք կնքվել եք կամ կնքվեք մի զուգընկերոջ հետ հավերժության համար: Ամուսնության մեջ դուք և ձեր կինը մեկ եք նպատակով, քանի որ ձգտում եք իրականացնել Տիրոջ նպատակները: Որպես Աստծո հետ համատեղ արարչագործներ դուք ծնում եք երեխաներ:

Դուք եք նախապատրաստում ձեր ընտանիքին և ընտանիքի յուրաքանչյուր անդամին ծառայելու իրենց մերձավորին՝ երկրի վրա Աստծո արքայությունը կառուցելու համար: Դուք բարեխղճորեն ապահովում եք նրանց նյութական բարօրությունը: Ընտանիքում դուք սովորում եք արդար կառավարել: Դուք ընդհանրապես սովորեցնում եք արքայության վարդապետությունները ձեր ընտանիքին և անհատապես յուրաքանչյուր երեխային:

Կգա օրը, երբ դուք կկանգնեք Տիրոջ առջև և կզեկուցեք երկրի վրա որպես հայր ձեր տնտեսության վերաբերյալ:

Ամփոփում

1. Ձեր հայրությունը ինչ որ իմաստով աստվածությանը աշակերտելն է:
2. Ձեր երկրային կյանքը փրկության ծրագրի մասն է կազմում, որը հնարավորություն է տալիս ձեզ դառնալ ձեր Երկնային Հոր նման:
3. Հիսուս Քրիստոսը ձեր օրինակն է՝ ցույց տալու ձեզ Երկնային Հոր մոտ վերադառնալու ուղին:
4. Արդար ընտանիքը հավերժական միություն է:
5. Դուք եք տան նախագահող իշխանությունը:
6. Եկեղեցին գոյություն ունի օգնելու ձեզ ձեր ընտանիքի հետ վերադառնալԵրկնային Հոր ներկայություն:
7. Դուք և ձեր կինը Աստծո հետ Նրա հոգևոր երեխաների հավերժական բարօրության համար համատեղ արարչագործներ եք:
8. Դուք ամենաարդյունավետ ձևով՝ օրինակով եք ուսուցանում:
9. Մեծագույն աշխատանքը, որ դուք երբևէ կանեք, կլինի ձեր սեփական տան պատերի ներսում:
10. Դուք պետք է փնտրեք Տիրոջ հոգին՝ ձեր ընտանիքը ղեկավարելու համար:
11. Մայրը հաստատում է հորը և նրա օգնական ու նրա խորհրդատուն է:

12. Դուք և ձեր կինը մեկ եք նպատակով:

13. Դուք պատասխանատվություն ունեք ձեր երեխաների ֆիզիկական, մտավոր, սոցիալական և հոգևոր բարօրության համար:

14. Դուք պատասխանատվություն եք կրում առաջնորդելու ձեր ընտանիքին՝

    Ա. Կառավարելով, ուղղելով, դաստիարակելով և օրինելով նրանց հեզությամբ, քնքշությամբ և սիրով՝ հիմնվելով արդարության սկզբունքների վրա (Տես ՎԵՈՒ 121):

    Բ. Ստեղծելով տանը կարգ ու կանոնին, աղոթքին, երկրպագությանը, ուսմանը, ծոմին, երջանկությանը և Տիրոջ Հոգուն նպաստող մթնոլորտ:

    Գ. Նրանց ուսուցանելով առ Քրիստոս, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի, մինչև վերջ համբերելու, բարձրաձայն և գաղտնի աղոթելու հավատքի սկզբունքներ:

    Դ. Սիրելով Աստծուն և պահելով Նրա պատվիրանները:

ՈՒՂՂՎԱԾ ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՅՐԵՐԻՆ

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

Եկեղեցու Նախագահ

Conference Report, հոկտ. 1987, 59–63, կամ Ensign, նոյ. 1987, 48–51, տես նաև To the Fathers in Israel գրքույկը

Սիրելի եղբայրներ, ես երախտապարտ եմ Աստծո քահանայության այս փառահեղ ժողովում այստեղ ձեզ հետ լինելու համար: Աղոթում եմ, որ Տիրոջ Հոգին լինի ինձ հետ և ձեզ հետ, երբ ես ձեզ դիմեմ մեծագույն կարևորություն ունեցող թեմայի վերաբերյալ: Այս երեկո ես կկամենայի խոսել այստեղ հավաքված և ողջ Եկեղեցում գտնվող հայրերի հետ նրանց սրբազան կոչումների վերաբերյալ:

Հուսով եմ երիտասարդ տղամարդիկ նույնպես ուշադիր կլսեն, քանի որ դուք այժմ նախապատրաստվում եք դառնալ ապագա հայրեր Եկեղեցում:

Հավերժական կոչում

Հայրեր, ձերը հավերժական կոչում է, որից դուք երբեք չեք ազատվում: Եկեղեցու կոչումները, որքան էլ դրանք կարևոր լինեն, իրենց իսկ բնույթով միայն մի ժամանակահատվածի համար են, որից հետո տեղի է ունենում պատշաճ ազատում: Բայց հոր կոչումը հավերժական է, որի կարևորությունը ժամանակով չի պայմանավորվում: Դա կոչում է ինչպես ժամանակի, այնպես էլ հավերժության համար:

> ***Հայրեր, ձերը հավերժական կոչում է, որից դուք երբեք չեք ազատվի:***

Նախագահ Հարոլդ Բ. Լին ճշմարիտ է նշել, որ «Տիրոջ ամենակարևոր աշխատանքը, որ դուք [հայրեր] երբևէ կանեք, կլինի ձեր սեփական տան պատերի ներսում» (*Strengthening the Home* [pamphlet, 1973], p. 7): Տնային ուսուցումը, եպիսկոպոսության աշխատանքը և այլ Եկեղեցու պարտականություններ՝ բոլորը կարևոր են, բայց ամենակարևոր աշխատանքը ձեր տան ներսում է»:

Ուրեմն այդ դեպքում, որն է հոր առանձնահատուկ պարտականությունը իր տան սրբազան պատերի ներսում: Կարելի՞ է առաջարկել Իսրայելում յուրաքանչյուր հոր երկու հիմնական պարտականություն:

Ապահովել նյութական կարիքները

Առաջինը դուք սրբազան պարտականություն ունեք ապահովել ձեր ընտանիքի նյութական կարիքները:

Տերը հստակորեն սահմանեց ապահովելու և արդար սերունդ դաստիարակելու դերերը: Սկզբում Ադամին և ոչ թե Եվային հրահանգվեց վաստակել հացը իր ճակատի քրտինքով:

Պողոս Առաքյալը խորհուրդ է տալիս ամուսիններին և հայրերին. «Բայց եթե մէկը իրաւունքների եւ մանավանդ ընտանիքների համար խնամք չտանի, նա հավատքիցն ուրացած է եւ անհավատից էլ չար է» (Ա Տիմոթէոս Ե.8):

Վերականգնված Եկեղեցու պատմության վաղ օրերին Տերը հատուկ պարտավորություն դրեց տղամարդկանց վրա ապահովել իրենց կանանց և ընտանիքը: 1832 թվականի հունվարին Նա ասաց. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ամեն տղամարդ, ով պարտավոր է ապահովել իր սեփական ընտանիքը, թող ապահովի այն, և ոչ մի դեպքում նա չի կորցնի իր պսակը» (ՎԵՈՒ 75.28): Երեք ամիս անց Տերը կրկին ասաց. «Կանայք իրենց ապրուստի համար իրավունք ունեն աջակցվելու իրենց ամուսինների կողմից, քանի դեռ նրանց ամուսինները չեն վերցվել» (ՎԵՈՒ 83.2): Սա կնոջ և մոր աստվածային իրավունքն է: Մինչ կինը հոգ է տանում և դաստիարակում իր զավակներին տանը, ամուսինը վաստակում է ընտանիքի ապրուստը, որպեսզի դա հնարավոր լինի:

Տանը, որտեղ աշխատունակ ամուսին կա, ակնկալվում է որ նա լինի հաց վաստակողը: Երբեմն մենք լսում ենք ամուսինների մասին, ովքեր կորցրել են իրենց աշխատանքը և սպասում են, որ կանայք դուրս գան տնից և աշխատեն, չնայած ամուսինը դեռ կարող է ապահովել իր ընտանիքը: Նման դեպքերում մենք հորդորում ենք ամուսնուն անել այն ամենը, ինչ կարող է, որպեսզի իր կինը մնա տանը հոգ տանելով երեխաների համար, մինչ նա շարունակում

է իր ուժերի սահմանում ապահովել իր ընտանիքը, չնայած որ աշխատանքը գուցեև իդեալական չլինի և ընտանիքի բյուջեավորումը ավելի սեղմ դարձվի:

Նաև կրթության և նյութական բաների հանդեպ կարիքը չի արդարացնում երեխաներ ունենալը հետաձգելը, որի դեպքում կինը շարունակում է աշխատել որպես ընտանիքի հացը վաստակող:

Նախագահ Քիմբալի խորհուրդը

Հիշում եմ մեր սիրելի մարգարե Սպենսեր Վ. Քիմբալի խորհուրդը ամուսնացած ուսանողներին: Նա ասել է. «Ես ասել եմ հազարավոր երիտասարդների, որ երբ նրանք ամուսնանում են, նրանք չպետք է հետաձգեն երեխաներ ունենալը մինչև չավարտեն իրենց ուսումը և չիրագործեն ֆինանսական ցանկությունները…. Նրանք պետք է նորմալ ապրեն միասին և թույլ տան, որ երեխաները գան….

…. Ես չգիտեմ որևէ սուրբ գրություն», շարունակել է Նախագահ Քիմբալը, «որտեղ լիազորություն է տրվում երիտասարդ կանանց թողնել իրենց ընտանիքները և գնալ աշխատելու՝ իրենց ամուսիններին հնարավորություն տալով ավարտել համալսարանը: Կան հազարավոր ամուսիններ, ովքեր անցել են իրենց սեփական ուղին համալսարանում և միևնույն ժամանակ ընտանիքներ պահել» (“Marriage Is Honorable,” in *Speeches of the Year, 1973* [Provo: Brigham Young University Press, 1974], p. 263):

Մոր դերը տանը

Քահանայության եղբայրներ, ես շարունակում եմ շեշտել մայրերի տանը մնալու կարևորությունը՝ իրենց երեխաներին արդարության սկզբունքներով դաստիարակելու, խնամելու և կրթելու համար:

Երբ ճանապարհորդում եմ Եկեղեցով մեկ, ես զգում եմ, որ ՎՕՍ մայրերը հիմնականում անկեղծորեն ցանկանում են հետևել այս խորհրդին: Բայց մենք գիտենք, որ երբեմն մայրն աշխատում է տնից դուրս ամուսնու քաջալերանքով կամ նույնիսկ պահանջով: Նա է, ով ցանկանում է հարմարավետության միջոցներ, որոնք կարող են գնվել միայն հավելյալ եկամտով: Այսպիսի դեպքերում ոչ միայն ընտանիքն է տուժվում, եղբայրներ, այլ ձեր իսկ հոգևոր աճը և ձեր առաջընթացն է արգելակվում: Ես ասում եմ ձեզ բոլորիդ, Տերը տղամարդկանց վրա է դրել իրենց ընտանիքներին ապահովելու պարտականությունն այնպես, որ կինը տանը կատարի իր դերը որպես մայր:

Ընտանիքի պատրաստվածությունը ավելի հրատապ է այսօր

Հայրեր, ձեր ընտանիքի նյութական կարիքները հոգալու մեկ այլ կենսական կողմ է հանդիսանում ձեր ընտանիքի մթերքով ապահովումը ծայրահեղ դեպքերի համար:

Ընտանիքի նախապատրաստումը եղել է վաղուց հաստատված բարօրության սկզբունք: Այն նույնիսկ ավելի հրատապ է այսօր:

Ես անկեղծորեն հարցնում եմ ձեզ, արդյոք ապահովե՞լ եք ձեր ընտանիքը մեկ տարվա մթերքի, հագուստի և, եթե հնարավոր է, վառելիքի պաշարով: Մթերք արտադրելու և պահեստավորելու հայտնությունը կարող է լինել ավելի կարևոր մեր նյութական բարօրության համար այսօր, ինչպես Նոյի օրերում տապան մտնելն էր այդ ժամանակվա մարդկանց համար:

Բացի այդ, արդյոք ապրո՞ւմ եք ձեր եկամտի սահմաններում և մի փոքր էլ խնայում:

Արդյոք ազնի՞վ եք Տիրոջ հետ ձեր տասանորդները վճարելիս: Այս աստվածային օրենքով ապրելը կբերի ինչպես հոգևոր, այնպես էլ նյութական օրհնություններ:

Այո, եղբայրներ, որպես հայրեր Իսրայելում դուք մեծ պատասխանատվություն ունեք ապահովելու ձեր ընտանիքի նյութական կարիքները և ունենալ անհրաժեշտ պաշարներ ծայրահեղ դեպքերի համար:

Ապահովել հոգևոր առաջնորդություն

Երկրորդ, դուք ունեք սրբազան պատասխանատվություն հոգևոր առաջնորդություն ապահովել ձեր ընտանիքում:

Մի քանի տարի առաջ Տասներկուսի Խորհրդով հրատարակված մի գրքույկում մենք ասացինք հետևյալը.«Հայրությունը ղեկավարություն է, ամենակարևոր ղեկավարությունը: Դա միշտ այդպես է եղել և այդպես էլ կլինի: Հայրեր, ձեր հավերժական զուգընկերոջ օգնությամբ և խորհրդով ու խրախուսանքով, դուք եք նախագահում տանը» (*Father, Consider Your Ways* [pamphlet, 1973], pp. 4–5):

Սակայն այդ նախագահող դիրքի հետ գալիս է կարևոր պարտավորություններ: Մենք երբեմն տղամարդկանց պատմություններ ենք լսում, նույնիսկ Եկեղեցում, ովքեր մտածում են, որ տան գլուխը լինելը ինչ որ տեղ դնում է նրանց գերիշխող դերում և թույլ է տալիս նրանց թելադրել և պահանջներ ներկայացնել իրենց ընտանիքին:

Պողոս Առաքյալը նշում է, որ «մարդը կնոջ գլուխն է՝ ինչպես Քրիստոս էլ եկեղեցու գլուխը» (Եփեսացիս Ե.23, շեղագիրն ավելացված է): Այդ օրինակով է, որ մենք պետք է հետևենք տանը նախագահելիս: Մենք չենք տեսնում Փրկչին Եկեղեցին կոպիտ կամ անբարյացակամ ձեռքով ղեկավարելիս: Մենք չենք տեսնում Փրկչին Իր Եկեղեցուն անհարգալից կամ արհամարհական վերաբերվելիս: Մենք չենք տեսնում Փրկչին Իր նպատակներն իրականացնելու համար ուժ կամ հարկադրանք գործադրելիս: Ոչ մի տեղ չենք տեսնում Փրկչին որևէ բան անելիս, բացի նրանից ինչը վեհացնում է, վսեմացնում, մխիթարում և բարձրացնում:

Եղբայրներ, ասում եմ ձեզ ողջ լրջությամբ, Նա է օրինակը, որին մենք պետք է հետևենք, երբ հոգևոր առաջնորդություն ենք ստանձնում մեր ընտանիքներում:

Սա ճշմարիտ է հատկապես ձեր կնոջ հետ ձեր փոխհարաբերություններում:

Սիրեք ձեր կանանց

Այստեղ կրկին Պողոս Առաքյալի խորհուրդը ամենագեղեցիկն է և տեղին: Նա պարզապես ասել է. «Մարդիկ, սիրեցէք ձեր կանանցը, ինչպէս Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն» (Եփեսացիս Ե.25):

Վերջին օրերի հայտնությունում Տերը կրկին խոսում է այս պարտավորության մասին: Նա ասել է. «Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի» (ՎԱՈՒ 42.22): Որքան գիտեմ ողջ սուրբ գրություններում մեզ պատվիրվում է մեր ողջ սրտով սիրել ևս մեկին՝ դա Ինքն Աստված է: Մտածեք, թե դա ինչ է նշանակում:

Ձեր կանանց հանդեպ այսպիսի սեր կարող եք ցույց տալ այնքան շատ ուղիներով: Առաջինը և ամենաշատը, ոչ մի բան, բացի Աստծուց Իրենից, առաջնահերթ չէ ձեր կնոջից ձեր կյանքում, ոչ աշխատանքը, ոչ հանգիստը, ոչ հոբիները: Ձեր կինը ձեր թանկագին, հավերժական օգնականն է՝ ձեր զուգընկերը:

Ի՞նչ է նշանակում սիրել ինչ որ մեկին ձեր ողջ սրտով: Դա նշանակում է սիրել ողջ ձեր էությամբ և ողջ ձեր նվիրվածությամբ: Անկասկած, երբ դուք սիրում եք ձեր կնոջը ձեր ողջ սրտով, դուք չեք կարող նվաստացնել նրան, քննադատել նրան, հանցավոր ճանաչել նրան կամ վիրավորել նրան խոսքով, խիստ վերաբերմունքով կամ քայլերով:

Ի՞նչ է նշանակում «հարիր նրան»: Սա նշանակում է մոտիկ մնալ նրան, լինել ազնիվ և հավատարիմ նրան, հաղորդակցվել նրա հետ, արտահայտել ձեր սերը նրա հանդեպ:

Սիրել նշանակում է լինել զգայուն նրա զգացմունքների և կարիքների հանդեպ: Նա ուզում է, որ իրեն նկատեն և փայփայեն: Նա ուզում է, որ ասեք թե սիրուն և գարվիչ եք համարում իրեն և ձեզ համար կարևոր: Սիրել նշանակում է դնել նրա բարօրությունը և արժանապատվությունը որպես բարձր առաջնահերթություն ձեր կյանքում:

Դուք պետք է երախտապարտ լինեք, որ նա ձեր երեխաների մայրն է և ձեր տան թագուհին, երախտապարտ լինեք, որ նա ընտրել է տնարարությունը և մայրությունը՝ ձեր երեխաներին ծնելը, սնուցելը, սիրելը և ուսուցանելը որպես առավել ազնվագույն կոչում:

Ամուսիններ, ընդունեք ձեր կնոջ խելացիությունը, նրա խորհուրդ տալու ունակությունը և համարեք նրան որպես ձեր իսկական ընկերակից ընտանեկան ծրագրերի, ընտանեկան միջոցառումների և ընտանեկան բյուջեավորման ժամանակ: Ժլատ մի եղեք ձեր ժամանակի կամ ձեր միջոցների հարցում: Հնարավորություն տվեք նրան աճել խելքով, զգացմունքներով և սոցիալապես, ինչպես նաև հոգևորով:

Հիշեք եղբայրներ, սերը կարող է փայփայվել և սնուցվել փոքրիկ նշաններով: Ծաղիկները հատուկ առիթներով հիանալի է, բայց նման քայլ է նաև ամանները լվանալը, տակդիրները փոխելը, գիշերը լացող երեխայի համար վեր կենալը և հեռուստացույցը կամ լրագիրը պատրաստակամորեն մի կողմ թողնելը՝ նրան օգնելով ճաշ պատրաստելիս: Նման մեր լուռ գործերով մենք ասում ենք. «Ես սիրում եմ քեզ»: Այսպիսով, փոքր ջանքեր գործադրելով մեծ բարիք ենք բերում:

Այդպիսի սիրառատ քահանայական ղեկավարությունը վերաբերում է ինչպես ձեր երեխաներին, այնպես էլ ձեր կնոջը:

Հոր դերը տանը

Մայրերը կարևոր դեր են խաղում որպես տան սիրտը, բայց դա ոչ մի ձևով չի նվազեցնում հոր կրկնակի կարևոր դերը, որ հայրերն են խաղում, որպես տան գլուխ դաստիարակելով, ուսուցանելով և սիրելով իրենց երեխաներին:

Որպես ձեր տան հայրապետ ձեր երեխաների հետ աշխատելիս պետք է ղեկավարի լուրջ պատասխանատվություն ստանձնեք: Դուք պետք է օգնեք ստեղծել տուն, որտեղ Տիրոջ Հոգին կարող է բնակվել: Ձեր պարտականությունն է ուղղություն տալ ողջ ընտանեկան կյանքին: Դուք պետք է ակտիվ մասնակցություն ցույց տաք հաստատելով ընտանեկան կանոններ և կարգապահություն:

Ձեր տները պետք է խաղաղության ապաստան լինեն և ուրախություն ձեր ընտանիքի համար: Անկասկած ոչ մի երեխա չպետք է վախենա իր սեփական հորից՝ հատկապես քահանայություն կրող հորից: Հոր պարտականությունն է դարձնել իր տունը երջանկության և ուրախության վայր: Նա չի կարող դա անել, երբ առկա է վեճ, կռիվ, հակառակություն կամ անարդար վարք: Արդար հայրերի հզոր ազդեցության օրինակ հանդիսանալը, կարգավարժելը և ուսուցանելը, դաստիարակելը և սիրելը երեխաների հոգևոր բարօրության համար կենսական նշանակություն ունի:

Հոգևոր առաջնորդություն տալը

Իսրայելի հայրերի հանդեպ սիրով լցված սրտով կարո՞ղ եմ առաջարկել տաս հատուկ ուղիներ, որոնցով հայրերը կարող են հոգևոր առաջնորդություն տալ իրենց երեխաներին.

1. Տվեք հայրական օրհնություն ձեր երեխաներին: Մկրտեք և հաստատեք ձեր երեխաներին: Կարգեք ձեր որդիներին քահանայության: Սրանք հոգևոր հիմնական իրադարձություններ կդառնան ձեր երեխաների կյանքում:

2. Անձնապես ուղղորդեք ընտանեկան աղոթքները, ամենօրյա սուրբ գրությունների ընթերցանությունը և ամենշաբաթյա ընտանեկան երեկոները: Ձեր անձնական մասնակցությունը ցույց կտա ձեր երեխաներին, թե իրականում որքան կարևոր են այս միջոցառումները:
3. Հնարավորության դեպքում միասին հաճախեք Եկեղեցու ժողովներին որպես ընտանիք: Ընտանեկան երկրպագությունը ձեր ղեկավարության ներքո կարևոր է ձեր երեխաների հոգևոր բարօրության համար:
4. Գնացեք հայր-դուստր ժամադրության և հայր-որդի զբոսանքի ձեր երեխաների հետ: Որպես ընտանիք գնացեք քաղաքից դուրս բացօդյա հանգստի և զբոսախնջույքների, գնդակով խաղերի և մենահամերգների, դպրոցական ծրագրերի և այլն: Հայրիկի ներկայությունը ամեն ինչ տարբեր է դարձնում:
5. Ստեղծեք ընտանեկան արձակուրդների ավանդույթներ և ուղևորություններ ու քաղաքից դուրս ժամանցներ:
6. Կանոնավոր հանդիպումներ ունեցեք մեկ առ մեկ ձեր երեխաների հետ: Թույլ տվեք որ խոսեն, ինչի մասին որ կկամենան: Ուսուցանեք նրանց ավետարանական սկզբունքներ: Ուսուցանեք նրանց ճշմարիտ արժեքներ: Ասեք նրանց, որ սիրում եք իրենց: Ձեր երեխաների հետ անցկացրած անհատական ժամանակն ասում է նրանց, թե ինչպիսի առաջնահերթություններ ունի հայրիկը:
7. Ուսուցանեք ձեր երեխաներին աշխատել և ցույց տվեք նրանց արժանի նպատակի համար աշխատելու արժեքը: Միսիոներական ֆոնդեր և կրթության ֆոնդեր ձեր երխաների համար հիմնելը ցույց է տալիս նրանց, թե հայրիկն ինչն է համարում կարևոր:
8. Խրախուսեք լավ երաժշտությունը և արվեստն ու գրականությունը ձեր տանը: Տները, որոնք ունեն մաքրության և գեղեցկության ոգին, հավերժ կօրհնեն ձեր երեխաների կյանքը:
9. Եթե հեռավորությունը թույլ է տալիս կանոնավորապես ձեր կնոջ հետ տաճար հաճախեք: Ձեր երեխաները այդ դեպքում ավելի լավ կհասկանան տաճարային ամուսնության և տաճարային ուխտերի ու հավերժական ընտանեկան միավորի կարևորությունը:
10. Ցույց տվեք ձեր երեխաներին ձեր ուրախությունն ու բավարարվածությունը Եկեղեցուն ծառայելիս: Սա կարող է վարակիչ դառնալ նրանց համար, այսպիսով նրանք ևս կցանկանան ծառայել Եկեղեցում և կսիրեն թագավորությունը:

Ձեր ամենակարևոր կոչումը

Ով Իսրայելի ամուսիններ և հայրեր, դուք այնքան շատ բան կարող եք անել ձեր ընտանիքների փրկության և բարձրացման համար: Ձեր պարտականություններն այնքան կարևոր են:

Հիշեք ձեր սրբազան կոչումը որպես Իսրայելի հայր՝ ձեր ամենակարևոր կոչումն է ժամանակի և հավերժության մեջ, կոչում, որից դուք երբեք չեք ազատվի:

Թող որ դուք միշտ կարողանաք ապահովել ձեր ընտանիքի նյութական կարիքները, և ունենալով ձեր հավերժական զուգընկերոջ ձեր կողքին կատարեք ձեր սրբազան պարտականությունը՝ ապահովեք հոգևոր առաջնորդություն ձեր տանը:

Այս նպատակի համար եմ աղոթում, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԼԻՆԵԼ ԱՐԴԱՐԱԿՅԱՑ ԱՄՈՒՍԻՆ ԵՎ ՀԱՅՐ

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

Եկեղեցու Նախագահ

Conference Report, հոկտ. 1994, 66—70, կամ Ensign, նոյ. 1994, 49–51

Քահանայության իմ սիրելի եղբայրներ, ես արտոնություն եմ համարում հանդիպել ձեզ հետ այս երեկո, քահանայության այս գերագույն ժողովի ժամանակ: Քահանայությունը մեծագույն եղբայրությունն է երկրի վրա: Ես մեծ ուժ եմ զգում տեսնելով ձեր հավատարմությունը և զգալով ձեր սերն ու ձեր հաստատող քվեն: Մենք հատկապես երախտապարտ ենք, որ այդքան շատ Ահարոնյան քահանայության եղբայրներ ունենք այստեղ իրենց հայրերի կամ խորհրդականների հետ:

Ամուսնությունը սրբազան արտոնություն է և պարտականություն

Այս երեկո իմ ելույթի թեման հատկապես ավելի շատ ուղղված կլինի ամուսիններին և հայրերին: Դուք բոլորդ, որ Ահարոնյան Քահանայություն եք կրում, շուտով կհասնեք ամուսնության և հայրության տարիքի: Ուստի, այն ինչ ասում եմ այս երեկո, վերաբերում է բոլոր ներկաներին:

Ես կամենում եմ խոսել իր կնոջ և երեխաների հետ քահանայություն կրող տղամարդու փոխհարաբերության մասին: Փրկության ծրագրի գիտելիքը ունենալով որպես հիմք, մարդը, որը քահանայություն է կրում, ամուսնությունը ընդունում է որպես սրբազան արտոնություն և պարտավորություն: Լավ չէ տղամարդու, ոչ էլ կնոջ համար միայնակ լինել: Տղամարդն առանց կնոջ ամբողջական չէ: Ոչ էլ կարող են լրացնել իրենց արարման չափը առանց մյուսի: (տես Ա Կորնթացիս ԺԱ.11, Մովսես 13): Ամուսնությունը տղամարդու և կնոջ

միջև կարգված է Աստծուց (տես ՎԿՈ 49.15–17): Միայն ամուսնության նոր և հավերժական ուխտի միջոցով նրանք կարող են հասկանալ հավերժական օրհնությունների լրիվությունը (տես ՎԿՈՒ 131.1–4, 132.15–19): Ինչ վերաբերում է քահանայության պարտականությանը, մարդը նորմալ հանգամանքներում, չպետք է անտեղի հետաձգի ամուսնությունը: Եղբայրներ, Տերը պարզ խոսել է այս նյութի վերաբերյալ: Ձեր սրբազան և լուրջ պարտականությունն է հետևել Նրա խորհրդին և Նրա մարգարեների խորհրդին:

Անցյալում մարգարեները խոսել են նաև նրանց մասին, ովքեր գուցե չեն ունեցել հնարավորություն ամուսնանալու այս կյանքում: Նախագահ Լորենզո Սնոուն ասել է.

«Չկա Վերջին Օրերի Սուրբ, որը հավատարիմ կյանքով ապրելուց հետո մահանալով կկորցնի որևէ բան, քանի որ որոշ հարցերում ձախողվել է հնարավորություն չունենալու պատճառով: Այլ խոսքով ասած, եթե երիտասարդ տղամարդը կամ երիտասարդ կինը չի ունեցել հնարավորություն ամուսնանալու, բայց նրանք ապրել են հավատարիմ կյանքով մինչև իրենց մահը, նրանք կունենան բոլոր օրհնությունները՝ բարձրացում և փառք, որ ամեն տղամարդ և կին կունենա, ովքեր ունեցել են այս հնարավորությունը և օգտագործել են այն: Սա անկասկած է և հաստատ» (*The Teachings of Lorenzo Snow,* comp. Clyde J. Williams [Salt Lake City: Bookcraft, 1984], p. 138):

Հավատարիմ եղեք ձեր ամուսնական ուխտերին՝ մտքով, խոսքով և գործով:

Ես հավատում եմ, որ Նախագահ Սնոուի միտքը ճշմարիտ է:

Դրսևորեք բարոյական կատարյալ հավատարմություն

Քահանայություն կրող տղամարդը կատարյալ բարոյական հավատարմություն է դրսևորում իր կնոջ հանդեպ և իր հավատարմությանը կասկածելու ոչ մի առիթ չի տալիս: Ամուսինը պետք է սիրի իր կնոջը իր ողջ սրտով և հարի նրան և ուրիշ ոչ մեկի (տես ՎԿՈՒ 42.22–26): Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը բացատրել է.

«*Ուրիշ ոչ ոք* բառերը բացառում են ամեն մեկին և ամեն ինչ: Ամուսինը կամ կինը դառնում են կյանքում առաջնայինը, և ոչ հասարակական կյանքը, ոչ աշխատանքը, ոչ էլ քաղաքական կյանքը կամ որևէ այլ հետաքրքրություն կամ անձնավորություն երբեք չեն կարող ամուսնուց կամ կնոջից ավելի կարևոր տեղ զբաղեցնել» (*The Miracle of Forgiveness* [Salt Lake City: Bookcraft, 1969], p. 250):

Տերն արգելում է և նրա Եկեղեցին դատապարտում է ամուսնությունից դուրս ցանկացած որևէ մտերմիկ հարաբերություն: Տղամարդու կողմից անհավատարմությունը կոտրում է իր կնոջ սիրտը և կորցնում նրա և երեխաների վստահությունը (տես Հակոբ 2.35):

Հավատարիմ եղեք ձեր ամուսնական ուխտերին՝ մտքով, խոսքով և գործով: Պոռնոգրաֆիան, սիրախաղերը և անմաքուր ֆանտազիաները քայքայում են մարդու բնավորությունը և ցնցում երջանիկ ամուսնության հիմքը: Այդպիսով, ամուսնության մեջ կործանվում են միասնությունը և վստահությունը: Նա, ով չի վերահսկում իր մտքերը և այդպիսով շնություն է գործում իր սրտում, եթե նա չի ապաշխարում, չի ունենա Հոգին, այլ կուրանա հավատքը և պիտի վախենա (տես ՎԿՈՒ 42.23, 63.16):

Ակնածանքով վերաբերվեք մայրությանը

Մարդը, որը քահանայություն է կրում ակնածանք ունի մայրության հանդեպ: Մայրերին տրվում է սրբազան արտոնություն «մարդկանց հոգիներ բերել. քանզի դրանով է իմ Հոր գործը շարունակվում, որպեսզի նա փառավորվի» (ՎԿՈՒ 132.63):

Առաջին Նախագահությունն ասել է. «Մայրությունը մոտ է աստվածությանը: Այն ամենաբարձր, ամենասուրբ ծառայությունն է մարդկության համար» (in James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. [Salt Lake City: Bookcraft, 1965–75], 6:178): Քահանայությունը չի կարող իրականացնել իր ճակատագիրը, ոչ էլ կարող է Աստծո նպատակներն իրագործվել, առանց մեր օգնականների: Մայրերը կատարում են մի աշխատանք, որը չի կարող կատարել քահանայությունը: Կյանքի այս պարգևի համար քահանայությունը պետք է անսահման սեր տածեն իրենց երեխաների մայրերի հանդեպ:

Հարգեք ձեր կնոջ անզուգական և աստվածայնորեն նշանակված դերը որպես մայր Իսրայելում և երեխաներ ծնելու և մեծացնելու նրա առանձնահատուկ կարողությանը: Մենք շատանալու և երկիրը լցնելու և մեր երեխաներին ու թոռնիկներին լույսի և ճշմարտության մեջ դաստիարակելու աստվածային պատվիրանի ներքո ենք (տես Մովսես 2.28, ՎԿՈՒ 93.40): Դուք որպես սիրող ընկերակից կիսում եք երեխաներին խնամելու գործը: Օգնեք նրան կառավարել և պահել ձեր տունը: Օգնեք ուսուցանել, վարժեցնել և կարգապահություն սովորեցնել ձեր երեխաներին:

Դուք պետք է մշտապես ակնածանքով վերաբերվեք ձեր կնոջն ու երեխաներին, և հարգեք նրան: Իսկապես լավագույն բանը, որ հայրը կարող է անել իր երեխաների համար նրանց մորը սիրելն է:

Ընտանիքը համարեք ամենակարևորը

Քահանայություն կրող տղամարդը ընտանիքը համարում է Աստծո կողմից կարգված: Ձեր ընտանիքի կառավարումը ձեր ամենակարևոր և սրբազան պարտականությունն է:

Ընտանիքը ամենակարևոր միավորն է ժամանակի և հավերժության համար և որպես այդպիսին գերազանցում է կյանքի մյուս բոլոր հետաքրքրություններին:

Մենք շատ ենք կրկնում այն, ինչ նշվել է Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի կողմից. «[Կյանքում] ոչ մի այլ հաջողություն չի կարող փոխհատուցել տանը կրած ձախողմանը» (quoting J. E. McCulloch, *Home: the Savior of Civilization*, p. 42; in Conference Report, Apr. 1935, p. 116) և Նախագահ Հարոլդ Բ. Լիի կողմից ասվածը.«Տիրոջ աշխատանքում ամենակարևոր բանը, որ դուք և ես երբևէ կանենք, կլինի մեր սեփական տան պատերի ներսում» (*Stand Ye in Holy Places* [Salt Lake City: Deseret Book Co., 1974], p. 255): Եղբայրներ, ընտանիքի արդյունավետ կառավարումը պահանջում է ինչպես ժամանակի քանակ, այնպես էլ որակ: Ընտանիքի ուսուցանումը և կառավարումը չպետք է թողնել միայն ձեր կնոջ վրա, հասարակության, դպրոցի կամ նույնիսկ Եկեղեցու վրա:

Ընդունեք կնոջը որպես հավասար ընկերակից

Քահանայություն կրող տղամարդը ընդունում է իր կնոջը որպես գործընկեր տան և ընտանիքի ղեկավարությունում ամբողջական գիտելիքով և լիակատար մասնակցությամբ որոշում կայացնելու գործընթացներին: Եկեղեցում և տանը անպայման պետք է լինի նախագահող պաշտոնյա (տես ՎԼՈՒ 107.21): Աստվածային հանձնարարությամբ տանը նախագահելու պարտականությունը դրված է քահանայություն կրողի վրա (տես Մովսես 4.22): Տերը նախատեսել է, որ կինը տղամարդու համար օգնական լինի (*օգնական* նշանակում է հավասար), այսինքն հավասար և անհրաժեշտ ընկեր լիակատար ընկերակցության համար: Արդարությամբ նախագահելը անպայման առաջ է բերում համատեղ պատասխանատվություն ամուսնու և կնոջ միջև, դուք միասնաբար եք գործում գիտելիքով և մասնակցությամբ բոլոր ընտանեկան հարցերում: Ընտանիքը կառավարելիս տղամարդու կողմից իր կնոջ զգացումներն ու խորհուրդը առանց հաշվի առնելու անկախ գործելը նշանակում է անարդար իշխանություն գործադրել:

Ինտիմ հարաբերություններում եղեք քնքուշ

Ձեզ հեռու պահեք որևէ բռնակալական կամ անարժան վերաբերմունքից ամուսնու և կնոջ միջև քնքուշ և մտերմիկ հարաբերության մեջ: Քանի որ ամուսնությունը կարգված է Աստծուց ամուսնու և կնոջ միջև ինտիմ փոխհարաբերությունը բարի է և պատվավոր Աստծո աչքում: Նա պատվիրել է, որ նրանք մեկ մարմին լինեն, և որ նրանք շատանան ու լցնեն երկիրը (տես Մովսես 2.28, 3.24): Դուք պետք է սիրեք ձեր կնոջը, ինչպես Քրիստոսը սիրեց Եկեղեցին և իրեն տվեց նրա համար (տես Եփեսացիս Ե.25–31):

Քնքշությունն ու հարգանքը՝ ոչ թե եսասիրությունը, պետք է լինի ամուսնու և կնոջ միջև մտերիմ փոխհարաբերության առաջնորդող սկզբունքը: Զուգընկերներից յուրաքանչյուրը պետք է հոգատար և զգայուն լինի մյուսի կարիքների և ցանկությունների հանդեպ: Ամուսնու և կնոջ փոխհարաբերության մեջ որևէ բռնակալական, որևէ ոչ օրինավոր կամ անվերահսկելի վերաբերմունք դատապարտվում է Տիրոջ կողմից:

Եղեք սիրով լի, ոչ թե վիրավորող

Որևէ մարդ, որը վիրավորում կամ ստորացնում է իր կնոջը ֆիզիկապես կամ հոգեպես, հանցավոր է դառնաղետ մեղքի մեջ և կարիք ունի անկեղծ և լուրջ ապաշխարության: Տարբերությունները պետք է մշակվեն սիրով, բարությամբ և փոխադարձ համաձայնության ոգով: Տղամարդը միշտ պետք է խոսի իր կնոջ հետ սիրով և բարությամբ, նրան վերաբերվելով մեծագույն հարգանքով: Ամուսնությունը նման է քնքուշ ծաղկի, եղբայրներ, և պետք է անընդհատ սնուցվի սիրո և հոգատարության արտահայտություններով:

Դուք, որ կրում եք քահանայություն, չպետք է երեխաների հետ ձեր հարաբերություններում վիրավորող լինեք: Միշտ ձգտեք գործադրել քահանայության ղեկավարման սկզբունքները, որոնք սահմանված են հայտնություններում (տես ՎԼՈՒ 93.40, 121.34–36, 41–45):

Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթը իմաստությամբ խորհուրդ է տվել. «Մենք չպետք է բարկանանք և կոպտենք միմյանց…. Ոչ ոք երբևէ չի վիրավորել մեկ ուրիշին, երբ նա ունեցել է Տիրոջ Հոգին: Դա միշտ այն ժամանակ է լինում, երբ մենք ունենում ենք որևէ այլ ոգի» (in Conference Report, Oct. 1950, p. 8):

Ոչ ոք, ով կարգված է Աստծո քահանայությանը, չի կարող անպատիժ կերպով վիրավորել իր կնոջը կամ երեխային: Երեխաների հանդեպ սեռական բռնությունը երկար ժամանակ Եկեղեցուց հեռացման պատճառ է եղել:

Մենք քաջալերում ենք ձեզ, եղբայրներ, հիշել, որ քահանայությունը միմիայն արդար իշխանություն է: Վաստակեք ձեր երեխաների հարգանքն ու վստահությունը նրանց հետ ձեր անձնվեր հարաբերության միջոցով: Արդար հայրը իր երեխաներին իր ժամանակը տրամադրելով և իր ներկայությամբ պաշտպանում է նրանց հասարակական, կրթական և հոգևոր գործերում և պարտականություններում: Երեխաների հանդեպ սիրո քնքուշ արտահայտությունները որքան մոր, նույնքան էլ հոր պարտականությունն է: Ասեք ձեր երեխաներին, որ սիրում եք նրանց:

Ապահովեք աշխարհիկ կարիքները

Դուք, որ կրում եք քահանայություն, պարտականություն ունեք, եթե հաշմանդամ չեք, ապահովել ձեր կնոջ և երեխաների աշխարհիկ կարիքները: Ոչ մի տղամարդ չի կարող փոխանցել պատասխանատվության բեռը մեկ ուրիշին, նույնիսկ իր կնոջը: Տերը պատվիրել է, որ կանայք

և երեխաներն իրավունք ունեն պահանջ ներկայացնել իրենց ամուսիններին և հայրերին իրենց ապրուստի համար (տես ՎԼՈՒ 83, Ա Տիմոթեոս Ե.8): Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը նշել է, որ երբ ամուսինը խրախուսում է կամ պնդում, որ կինը տնից դուրս աշխատի իրենց հարմարավետության համար «ոչ միայն ընտանիքը կտուժի այդ դեպքերում,….այլ [իր] իսկ հոգևոր աճը և առաջընթացը կարգելակվի» (in Conference Report, Oct. 1987, pp. 60–61; կամ *Ensign*, Nov. 1987, p. 49):

Մենք հորդորում ենք ձեզ անել ձեր զորությամբ այն ամենը, ինչ կարող եք, որպեսզի ձեր կինը կարողանա մնալ տանը, հոգա երեխաների համար, քանի դեռ ձեր հնարավորության չափով ապահովում եք ընտանիքին: Մենք նաև շեշտում ենք, որ այն տղամարդիկ, ովքեր լքում են իրենց ընտանիքը և չեն ուզում երեխաների հանդեպ կատարել իրենց հայրական պարտականությունները, վտանգի են ենթարկում իրենց տաճարի երաշխավորագրի արժանավորությունը և Եկեղեցում իրենց դիրքը: Ամուսնալուծության կամ բաժանության դեպքում տղամարդիկ պետք է ցույց տան, որ իրենք բավարարում են ընտանիքին օրենքով սահմանված օժանդակ վճարումներով, որոնք նաև պարտադրվում են Եկեղեցու սկզբունքներով, որպեսզի արժանի լինեն Տիրոջ օրհնություններին:

Սովորեցրեք ընտանիքին մասնակցություն հանդես բերել Եկեղեցում

Քահանայություն կրող տղամարդը, սովորեցնում է իր ընտանիքին մասնակցություն հանդես բերել Եկեղեցում, որպեսզի նրանք իմանան ավետարանը և լինեն ուխտերի և արարողությունների պաշտպանության ներքո: Եթե դուք ուզում եք վայելել Տիրոջ օրհնությունները, դուք պետք է կարգի դնեք ձեր սեփական տները: Ձեր կնոջ հետ միասին դուք եք որոշում ձեր տան հոգևոր կլիման: Ձեր առաջին պարտականությունն է կարգի բերել ձեր հոգևոր կյանքը սուրբ գրությունների կանոնավոր ուսումնասիրությամբ և ամենօրյա աղոթքներով: Ապահովեք և հարգեք ձեր քահանայությունը և տաճարային ուխտերը, խրախուսեք ձեր ընտանիքին անել նույնը:

Ուսուցանեք ավետարանը ընտանիքի անդամներին

Լուրջ պարտավորություն ստանձնեք ուսուցանելու ավետարանը ձեր ընտանիքին կանոնավոր ընտանեկան երեկոների, ընտանեկան աղոթքների, շնորհանդեսների և սուրբ գրությունների ընթերցանության ժամին և ուսուցողական այլ պահերի ընթացքում: Հատուկ շեշտադրեք միսիոներական ծառայությանը և տաճարային ամուսնությանը նախապատրաստվելուն: Որպես տան հայրապետ գործադրեք ձեր քահանայությունը կատարելով համապատասխան արարողություններ ձեր ընտանիքի համար և տալով օրհնություններ ձեր կնոջն ու երեխաներին: Ձեր իսկ փրկությունից հետո, եղբայրներ, չկա ավելի կարևոր բան, քան ձեր կնոջ և երեխաների փրկությունը:

Եղբայրներ, ես պարզ խոսեցի ձեզ հետ, որպես սուրբ քահանայության կրողներ ձեր պարտականությունների վերաբերյալ: Եթե ձեր կյանքում կան ոլորտներ, որտեղ պետք է բարելավումներ մտցնել, ես խրախուսում եմ ձեզ աղոթքով դարձնել այն խորհրդածության առարկա:

Ես վկայում եմ, որ սա այն է, ինչ Տերը կկամենար, որ եղբայրները ստանային այս ժամանակահատվածում: Թող որ դուք օրհնվեք ձեր ջանքերում լինելու արդար ամուսիններ և հայրեր: Ես աղոթում եմ բերելով հանդիսավոր վկայություն այն ամենի ճշմարտացիության վերաբերյալ, ինչի մասին խոսվեց այս երեկո, և դա անում եմ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԱՐԺԱՆԻ ԱՊՐԵԼ ԱՅՆ ԱՂՋԿԱՆ, ՈՐԻ ՀԵՏ ՄԻ ՕՐ ԿԱՄՈՒՍՆԱՆԱՔ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Եկեղեցու Նախագահ

Conference Report, ապր. 1998, 66–69, կամ Ensign, մայիս 1998, 49–51

Մեկ շաբաթ առաջ Նախագահ [Ջեյմս Ի.] Ֆաուստը և Երիտասարդ Կանանց գերագույն նախագահությունը խոսեց Եկեղեցու երիտասարդ կանանց հետ այս Թաբերնաքլում:

Երբ նայում էի գեղեցիկ երիտասարդ կանանց այդ հավաքին մտքովս մի հարց անցավ,

«Արդյոք մենք մեծացնո՞ւմ ենք երիտասարդ տղամարդկանց արժանի սերունդ նրանց համար»:

Այդ աղջիկներն այնքան թարմ են և պայծառ: Նրանք գեղեցիկ են: Նրանք փայլուն են: Նրանք ունակ են: Նրանք հավատարիմ են: Նրանք առաքինի են: Նրանք անկեղծ են: Նրանք ուղղակի սքանչելի և հոյակապ երիտասարդ կանայք են:

Եվ այսպիսով, քահանայության այս մեծ ժողովում ես ուզում եմ խոսել ձեզ հետ երիտասարդ տղամարդիկ, որ նրանց կեսն եք: Իմ ելույթի վերնագիրն է. «Ապրել արժանի այն աղջկան, որի հետ մի օր կամուսնանաք»:

Աղջիկը, որի հետ դուք կամուսնանաք, սոսկալի ռիսկի է դիմում: Նա իրեն լիովին կնվիրաբերի երիտասարդ տղամարդուն, որի հետ կամուսնանա: Մեծամասամբ ամուսինը կորոշի նրա կյանքի մնացած մասը: Նա նույնիսկ կհրաժարվի իր անունից նրա անվան համար:

Ինչպես Ադամն է հայտարարել Եդեմի Պարտեզում.

«Սա հիմա ոսկր է իմ ոսկրիցը եւ մարմին է իմ մարմնիցը….

Սորա համար մարդը կթողէ իր հայրը եւ իր մայրը, եւ կպարի իր կնոջը. եւ մէկ մարմին կլինին» (Ծննդոց Բ.23–24):

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, որպես Աստծո քահանայությունը կրող երիտասարդ տղամարդիկ դուք վիթխարի պարտականություն ունեք այն աղջկա հանդեպ, ում հետ ամուսնանում եք: Հավանաբար, դուք այժմ այդ մասին շատ չեք մտածում: Բայց ժամանակը հեռու չէ, երբ դուք կմտածեք դրա մասին, և այժմ է ժամանակը ձեր կյանքում այդ ամենակարևոր օրվան պատրաստվելու համար, երբ դուք կվերցնեք ձեզ կին և ձեզ հավասար ընկերակից Տիրոջ առջև:

Եղեք բացարձակապես հավատարիմ

Այդ պարտականությունը սկսվում է բացարձակ հավատարմությամբ: Ինչպես Անգլիայի հին Եկեղեցու ծիսակատարության ժամանակ է ասվում, դուք ամուսիններ կլինեք նրա հետ «լինեք ավելի հարուստ թե աղքատ, հիվանդ թե առողջ, ավելի լավ թե ավելի վատ»: Նա կլինի ձերը՝ միմիայն ձերը, անկախ ձեր կյանքի հանգամանքներից: Դուք կլինեք նրանը՝ միմիայն նրանը: Չեն կարող լինել աչքեր ուրիշ ոչ մեկի համար: Պետք է լինի բացարձակ հավատարմություն, անսասան հավատարմություն միմյանց հանդեպ: Հուսով ենք դուք կամուսնանաք նրա հետ հավերժ, Տիրոջ տանը, հավիտենական քահանայության իշխանության ներքո: Ձեր կյանքի բոլոր օրերում դուք պետք է այնքան հավատարիմ լինեք միմյանց, ինչպես բևեռային աստղը:

Եղեք առաքինի երիտասարդ տղամարդ

Աղջիկը, որի հետ կամուսնանաք կարող է ակնկալել, որ դուք գաք ամուսնության զոհասեղանի մոտ բացարձակապես մաքուր: Նա կարող է ակնկալել ձեզանից լինել առաքինի երիտասարդ տղամարդ մտքով, խոսքով և գործով:

Այս երեկո ես աղաչում եմ ձեզ տղաներ, որ դուք ձեզ զերծ պահեք աշխարհի մեղքերից: Դուք չպետք է տարվեք զռեհիկ խոսակցություններով դպրոցում: Դուք չպետք է սեռական հարաբերության մասին կատակներ անեք: Դուք չպետք է աննպատակ ժամանակ անցկացնեք ինտերնետում պոռնոգրաֆիկ նյութեր գտնելու համար: Դուք չպետք է հավաքեք երկար հեռախոսային համար՝ լսելու աղտոտություն: Դուք չպետք է վարձեք տեսահոլովակներ որևէ ձևի պոռնոգրաֆիայով: Այսպիսի ցանկասիրական նյութերը ձեզ համար չեն: Հեռու մնացեք պոռնոգրաֆիայից ինչպես կխուսափեիք լուրջ հիվանդությունից: Դա այնքան կործանարար է: Դա կարող է դառնալ սովորույթ և նրանք, ովքեր զբաղվում են դրանով, չեն կարողանում թողնել այն: Այն հակում առաջացնող է:

Դա հինգ միլիոնանոց բիզնես է նրանց համար, ովքեր արտադրում են այն: Նրանք դարձնում են այն որքան հնարավոր է հետաքրքիր և գրավիչ, ինչպես որ միայն նրանք գիտեն թե ինչպես: Այն վնասում է և կործանում իր զոհերին: Այն ամենուրեք է: Այն մեր շրջապատում է: Ես աղաչում եմ ձեզ երիտասարդ տղամարդիկ մի ներգրավվեք դրա օգտագործման մեջ: Դուք ուղղակի չեք կարող ձեզ թույլ տալ դա:

Աղջիկը, որի հետ դուք ամուսնանում եք, արժանի է ամուսնու, որի կյանքը չի արատավորվել այս տգեղ և քայքայող նյութերով:

Ապրեք իմաստության խոսքով

Նայեք Իմաստության Խոսքի վրա որպես ավելի քան մի հասարկ բանի: Ես համարում եմ այն առողջության վերաբերյալ ամենանշանավոր փաստաթուղթը, որը ես երբևէ իմացել եմ: Այն հայտնի դարձվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին 1833 թվականին, երբ համեմատաբար քիչ բան էր հայտնի դիետայի հարցերի մասին: Այժմ որքան ավելի շատանում են գիտական հետազոտությունները, այնքան ավելի անկասկած է դառնում Իմաստության Խոսքի սկզբունքների ապացույցը: Ծխախոտի դեմ փաստարկը այժմ ցնցող է, սակայն մենք տեսնում ենք դրա օգտագործման վիթխարի աճ երիտասարդ տղամարդկանց և կանանց կողմից: Ճիշտ նույնչափ մեծ է ոգելից խմիչքի դեմ փաստարկը:

Ինձ համար ծաղրական մի բան է թվում, որ սպասարկման կայաններում առաջարկում են գարեջրի վաճառք: Մարդը նմանապես կարող է հարբել գարեջրից և լինել նույնքան վտանգավոր ճանապարհին, ինչպես որևէ այլ ալկոհոլային խմիչքից: Դա ուղղակի կախված է նրանից, թե որքան շատ է նա խմում: Բացարձակապես անընդունելի է, որպեսզի սպասարկման կայանը, որտեղից դուք բենզին եք լցնում, որ կարողանաք մեքենան վարել, վաճառի նաև գարեջուր, որի «ազդեցության ներքո» վարելիս կդառնաք սոսկալի սպառնալիք մայրուղիներում:

Հեռու մնացեք դրանից: Դա ձեզ ոչ մի օգուտ չի բերի: Այն կարող է ձեզ պատճառել անուղղելի վնաս: Պատկերացրեք, որ խմում եք և մեքենա վարում և պատճառ դառնում որևէ մեկի մահվան: Դուք երբեք չեք կարող մոռանալ դա, քանի դեռ ապրում եք: Այն ձեզ կայցելի գիշեր թե ցերեկ: Միակ պարզ բանը, որ պետք է անել, դրան չդիպչելն է:

Նմանապես հեռու մնացեք անօրինական թմրանյութերից: Դրանք կարող են լիովին կործանել ձեզ: Դրանք կխլեն ձեզանից մտավոր զորությունները: Դրանք կստրկացնեն ձեզ չարաղետ և սոսկալի ձևով: Դրանք կկործանեն ձեր միտքը և ձեր մարմինը: Նրանք կստեղծեն ձեր մեջ այնպիսի տենչ, որ դուք կանեք ամեն ինչ այն բավարարելու համար:

Արդյոք որևէ խելամիտ աղջիկ երբևէ կամուսնանա՞ երիտասարդ տղամարդու հետ, որը թմրադեղերի սովորույթ ունի, որը ալկոհոլի գերի է, որը հակվածություն ունի պոռնոգրաֆիայից:

Խուսափեք պղծությունից

Խուսափեք պղծությունից: Դպրոցում այն առկա է ամենուր: Երիտասարդները թվում է պարծենում են օգտագործելով կեղտոտ և լկտի բառապաշար ինչպես նաև զբաղվելով պղծությամբ, դատարկ տեղը գործածելով Տիրոջ անունը: Դա դառնում է չար սովորույթ, որով եթե զբաղվում եք երիտասարդ տարիքում, կարտահայտվի ձեր ողջ կյանքում: Ով կկամենա ամուսնանալ մի մարդու հետ, որի խոսքը լի է աղտով և պղծությամբ:

Սովորեք այժմ վերահսկել ձեր բարկությունը

Կա մեկ այլ լուրջ բան, որից շատ երիտասարդներ են հակվածություն ձեռք բերում: Դա բարկությունն է: Նվազագույն սադրանքի դեպքում նրանք պայթում են անվերահսկելի կատաղության զայրույթի պոռթկումներով: Խղճահարություն ես զգում տեսնելով այդքան թույլ մեկին: Բայց նույնիսկ ավելի վատթար է, երբ նրանք միտում են ունենում կորցնել ողջ խելամտության զգացումը և անել բաներ, որոնք ավելի ուշ զղջում են առաջացնում:

Մեր օրերում մենք շատ ենք լսում ճանապարհային կատաղության երևույթի մասին: Վարորդները ամենափոքր զայրույթից սադրանքի մեջ են ընկնում: Նրանք անվերահսկելի կատաղության մեջ են ընկնում, հասնելով նույնիսկ մարդասպանության: Հետևում է զղջումով լի մի կյանք:

Ինչպես Առակաց գրողն է ասել. «Երկայնամիտը զորաւորիցը լաւ է, եւ իր ոգին զսպողը՝ քաղաք առնողիցը» (Առակաց ԺԶ.32):

Եթե դուք բարկություն ունեք, ժամանակն է սովորել այն վերահսկելու: Որքան ավելի շատ դա անեք, երբ երիտասարդ եք, այնքան ավելի հեշտորեն դա տեղի կունենա: Թող այս Եկեղեցու ոչ մի անդամ երբևէ չկորցնի իր վերահսկողությունը այդպիսի անհարկի և դաժան ձևով: Թող որ նա իր ամուսնություն բերի խաղաղության և ինքնազսպման խոսքեր:

Ես անընդհատ գործ եմ ունենում Եկեղեցու անդամների դեպքերի հետ, ովքեր ամուսնացած են եղել տաճարում և ովքեր հետագայում ամուսնալուծվել են, իսկ հետո դիմել տաճարային կնքումը անվավեր ճանաչելու համար: Երբ առաջին անգամ ամուսնանում են, նրանք լի են լինում սպասումներով, երջանկության հոյակապ ոգով: Բայց սիրո ծաղիկը թոշնում է քննադատության և բծախնդրության, ստոր բառերի և անվերահսկելի բարկության մթնոլորտում:

Սերը դուրս է նետվում պատուհանից, երբ հակառակությունն է մտնում այնտեղ: Իմ եղբայրներ, ես կրկնում եմ, եթե ձեզանից որևէ մեկը, երիտասարդ տղամարդիկ, իր բարկությունը զսպելու խնդիր ունի, ես աղաչում եմ սկսեք աշխատել այժմ այդ ուղղումը մտցնելու համար: Հակառակ դեպքում դուք միայն արցունքներ և վիշտ կբերեք ձեր տուն, որը դուք մի օր կհիմնեք: Մորմոնի Գրքում Հակոբը դատապարտում է իր ժողովրդին ամուսնության մեջ իրենց ամբարշտության համար: Նա ասում է. «Ահա, դուք արել եք ավելի մեծ անօրինություններ, քան Լամանացիները՝ մեր եղբայրները: Դուք կոտրել եք ձեր քնքուշ կանանց սրտերը և կորցրել եք ձեր զավակների վստահությունը, նրանց առաջ ձեր վատ օրինակի պատճառով, և նրանց սրտերի հեկեկոցը բարձրանում է վեր առ Աստված, ձեր դեմ: Եվ Աստծո խոսքի խստության պատճառով, որը վայր է իջնում ձեր դեմ, շատ սրտեր մեռան՝ խոցված խորը վերքերով» (Հակոբ 2.35):

Աշխատեք կրթություն ձեռք բերել

Աշխատեք կրթության ձեռք բերել: Ձեր կարողության չափով կրթվեք: Աշխարհը մեծապես կվճարի ձեզ նրա համար ինչի համար որ ձեզ արժանի կգտնի: Պողոսը խոսք չէր ծեծում, երբ գրում էր Տիմոթեոսին. «Բայց եթե մէկը իրաւունքների եւ մանաւանդ ընտանիքների համար խնամք չտանի, նա հաւատքիցն ուրացած է եւ անհաւատից էլ չար է» (Ա Տիմոթեոս Ե.8):

> ***Կրթությունը տնտեսական հնարավորության բանալին է:***

Ձեր հիմնական պարտականությունն է ապահովել ձեր ընտանիքի համար:

Ձեր կինը բախտավոր կլինի իսկապես, եթե նա ստիպված չլինի դուրս գալ և մրցակցել աշխատավայրում: Նա կրկնակի օրհնված կլինի, եթե կարողանա մնալ տանը, երբ դուք դառնաք ընտանիքի հացը վաստակողը:

Կրթությունը տնտեսական հնարավորության բանալին է: Տերը մեզ որպես ժողովուրդ պատվիրել է ուսում ձեռք բերել «ուսումնասիրելով, և նաև հավատքով» (ՎԵՈՒ 109.14): Հնարավոր է, դուք ավելի լավ ապահովող լինեք, եթե ձեր միտքն ու ձեռքերը վարժեցվեն հասարակությանը օգտակար մի բանով, որին մաս կդառնաք դուք:

Համեստ եղեք ձեր ցանկություններում

Եղեք համեստ ձեր ցանկություններում: Երբ սկսեք ձեր համատեղ կյանքը, դուք կարիք չունեք մեծ գրավով մեծ տուն ձեռք բերել: Դուք կարող եք և պետք է խուսափեք անհաղթահարելի պարտքից: Ամուսնության մեջ չկա ոչինչ, որն ավելի մեծ լարվածություն կառաջացնի, քան տանջող պարտքը, որը ձեզ գերի կդարձնի ձեր պարտատերերին: Դուք գուցե պարտքով փող վերցնեք տան սեփականատեր դառնալու համար: Բայց թույլ մի տվեք, որ դա այնքան թանկ լինի, որ օր ու գիշեր զբաղեցնի ձեր մտքերը:

Երբ ես ամուսնացա իմ իմաստուն հայրն ասաց ինձ. «Ձեռք բեր համեստ տուն և վճարիր գրավը, որպեսզի երբ տնտեսական խնդիրներ ունենաք, կինդ և երեխաներդ տանիք ունենան իրենց գլխավերևում»:

Աղջիկը, որն ամուսնանում է ձեզ հետ, չի կամենա ամուսնացած լինել ժլատի հետ: Ոչ էլ նա կցանկանա ամուսնանալ շռայլ ծախսողի հետ: Նա իրավունք ունի իմանալ ամեն ինչ ընտանեկան ֆինանսների մասին: Նա կլինի ձեր ընկերակիցը: Մինչև լիակատար և լրիվ փոխըմբռնում չլինի ձեր և ձեր կնոջ միջև այս հարցերի վերաբերյալ, հավանական է թյուրըմբռնումներ և կասկածներ առաջանան, որոնք դժվարություններ կառաջացնեն, տանելով դեպի ավելի մեծ խնդիրներ:

Գնացեք միսիա և ամուսնացեք տաճարում

Նա կցանկանա ամուսնանալ մեկի հետ, ով սիրում է իրեն, վստահում, ով քայլում է նրա կողքին, որը նրա լավագույն ընկերն է և ուղեկիցը: Նա կցանկանա ամուսնանալ մեկի հետ, ով խրախուսում է նրան Եկեղեցու իր գործերում և համայնքի գործերում, որը կօգնի նրան զարգացնել իր տաղանդները և ավելի մեծ ներդրում անել հասարկության համար: Նա կցանկանա ամուսնանալ մեկի հետ, ով ուրիշների հանդեպ ծառայության զգացում ունի, ով տրամադրված է աջակցել Եկեղեցուն և այլ բարի գործերին: Նա կցանկանա ամուսնանալ մեկի հետ, ով սիրում է Տիրոջը և ձգտում անել Նրա կամքը: Ուստի լավ է, որ ձեզանից յուրաքանչյուրը երիտասարդ տղամարդիկ, ծրագրում է գնալ միսիայի, անշահախնդիր ձևով տալով ձեր Երկնային Հորը ձեր կյանքի տասանորդը, առաջ գնալով լիակատար անձնազոհության ոգով քարոզելու խաղաղության ավետարանը աշխարհին, որտեղ էլ որ դուք ուղարկվեք: Եթե լավ միսիոներ եք, դուք տուն կվերադառնաք շարունակելով Տիրոջը ծառայելու, Նրա պատվիրանները պահելու և Նրա կամքը կատարելու ցանկությամբ: Այսպիսի վերաբերմունքն անչափ մեծ երջանկություն կավելացնի ձեր ամուսնությանը:

Ինչպես ասացի, դուք կցանկանաք ամուսնանալ միայն և միմիայն մեկ տեղում: Դա Տիրոջ տունն է: Դուք չեք կարող ձեր ընկերակցին ավելի մեծ նվեր տալ, քան Աստծո սուրբ տանը ամուսնանալն է: Դրա համար չկա համապատասխան փոխարինող: Դուք չեք կարող այլ կերպ:

Նախապատրաստվեք դառնալ արդար հայր

Ընտրեք խնամքով և իմաստությամբ: Աղջիկը, որի հետ դուք կամուսնանաք ձերը կլինի հավերժ: Նա կսիրի ձեզ և դուք կսիրեք նրան լավ լինի թե վատ, երջանիկ թե դժվար ժամանակներ: Նա կդառնա ձեր երեխաների մայրը: Կա՞ ավելի մեծ բան այս ողջ աշխարհում, քան թանկագին երեխան է, Աստծո՝ մեր Երկնային Հոր որդու կամ դստեր հայրը դառնալը, որի համար մեզ տրվել է մահկանացու կյանքի իրավունքներն ու պարտականությունները:

> *Այս ընտարությունը կլինի ձեր կյանքում կատարած ընտրություններից ամենակարևորը:*

Որքան թանկ բան է երեխան: Որքան հրաշալի բան է երեխան: Ինչպիսի սքանչելի բան է ընտանիքը: Արժանի ապրեք հայր դառնալուն, որով կիպարտանան ձեր կինն ու երեխաները:

Տերը կարգել է, որ մենք պետք է ամուսնանանք, որ մենք պետք է ապրենք միասին սիրո և խաղաղության ու ներդաշնակության մեջ, որ մենք պետք է ունենանք երեխաներ և մեծացնենք նրանց Իր սուրբ ուղիներում:

Եվ այսպիսով, իմ սիրելի երիտասարդ տղամարդիկ, դուք գուցեև լրջորեն չմտածեք այդ մասին այժմ: Բայց կգա ժամանակ, երբ դուք կսիրահարվեք: Այն կզբաղեցնի ձեր ողջ միտքը և կլինի այն նյութը, որից կստեղծվեն ձեր երազանքները: Ձեզ արժանի դարձրեք ողջ աշխարհի ամենասքանչելի աղջկա համար: Ձեզ արժանի պահեք ձեր կյանքի բոլոր օրերում: Եղեք լավը, հավատարիմ և բարի միմյանց հանդեպ: Այնքան շատ դառնություն կա աշխարհում: Այնքան շատ ցավ և վիշտ կա, որոնք գալիս են բարկացկոտ խոսքերից: Այնքան շատ արցունքներ կան, որ գալիս են անհավատարմությունից: Բայց կարող է լինել այնքան շատ երջանկություն, եթե կա ջանք գոհացնելու և մեծ ցանկություն ձեր կողակցին հանգիստ և երջանիկ դարձնելու համար:

Երբ ամեն ինչ ասված է և արված, սա այն է ինչի մասին է ավետարանը: Ընտանիքը Աստծո արարչագործությունն է: Այն գլխավոր արարչագործությունն է: Ազգը զորացնելու ուղին մարդկանց տները զորացնելն է:

Ես համոզված եմ, որ եթե մենք կամենանք որոնել արժանիքներ միմյանց մեջ և ոչ թե թերություններ, շատ ավելի մեծ երջանկություն կլինի մեր ժողովրդի տներում: Շատ ավելի քիչ ամուսնալուծություններ կլինեն, շատ ավելի քիչ անհավատարմություն, շատ ավելի քիչ բարկություն, թշնամություն և վեճ: Կլինի ավելի շատ ներողամտություն, ավելի շատ սեր, ավելի շատ խաղաղություն, ավելի շատ երջանկություն: Ահա, թե ինչպես է Տերը կամենում, որ այն լինի:

Այժմ է ապագային նախապատրաստվելու ժամանակը

Երիտասարդ տղամարդիկ, այժմ է ապագային նախապատրաստվելու ժամանակը: Եվ այդ ապագայում ձեզանից մեծամասնության համար կա գեղեցիկ երիտասարդ մի կին, որի մեծագույն ցանկությունն է կապվել ձեզ հետ մի հարաբերությամբ, որը հավերժական է և հարատև:

Դուք չեք ունենա ավելի մեծ երջանկություն, քան այն, որ գտնվում է ձեր տանը: Դուք չեք ունենա ավելի լուրջ պարտականություն, քան այն, որը դուք կատարում եք ձեր տանը:

Կյանքում ձեր հաջողության ամենամեծ գրավականը կլինի ձեր ամուսնության որակը:

Աստված օրհնի ձեզ, իմ սիրելի երիտասարդ տղամարդիկ: Ես ձեզ ցանկանում եմ այն սքանչելի սերը, բացարձակ լիակատար սերը կողակցի, որով դուք հպարտանում եք և որն արժանի է ամեն առումով: Այս ընտրությունը կլինի ձեր կյանքում կատարած բոլոր ընտրություններից ամենակարևորը: Աղոթում եմ, որ երկինքը օրհնի ձեզ ձեր կատարած ընտրության մեջ, որ դուք կարողանաք առաջնորդվել, որ դուք կարողանաք ապրել առանց ափսոսանքի, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԿԱՆԱՆՑ ՊԱՏՎԵԼՈՒ ՄԵՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Երեց Ռասել Մ. Նելսոն

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, ապր. 1999, 50–53, կամ Ensign, մայիս 1999, 38–40

Ուրախ եմ լինել ձեզ հետ այս երեկո եղբայրներ, և հրաշալի է տեսնել այսքան շատ երիտասարդ տղամարդկանց իրենց հայրերի հետ: Մենք հավաքվել ենք, որովհետև մեր ցանկությունն է լսել Եկեղեցու առաջնորդներին: Բայց այս հավաք առանձնահատուկ է: Ես չեմ տեսնում մայրերի: Մեզանից ոչ ոք չէր կարող լինել այստեղ առանց մոր, այնուամենայնիվ մենք այստեղ ենք՝ առանց մեր մայրերի:

Այս երեկո ես մասնակցում եմ որդուս, փեսաներիս և թոռներիս հետ: Որտե՞ղ են նրանց մայրերը: Նրանք հավաքվել են մեր տան խոհանոցում: Ի՞նչ են նրանք անում: Պատրաստում են մեծ քանակությամբ տնական փքաբլիթներ: Այն ժամանակ, երբ մենք կվայելենք դրանք, այդ մայրերը, քույրերը և դուստրերը ուշադիր կունկնդրեն, երբ մեզանից յուրաքանչյուրը կխոսի այն բաների մասին, որոնք մենք սովորեցինք այստեղ, այս երեկո: Սա ընտանեական հաճելի ավանդույթ է, որը խորհրդանշում է այն փաստը, որ այն ամենը, ինչ մենք սովորում ենք և անում որպես քահանայություն կրողներ, պետք է օրհնի մեր ընտանիքները:[1]

Եկեք խոսենք մեր արժանավոր և սքանչելի քույրերի, հատկապես մեր մայրերի մասին և մտածենք նրանց պատվելու մեր սրբազան պարտականության մասին:

Երիտասարդ տղամարդու մեղսագործությունն անպատվում է մորը

Երբ ես համալսարանի երիտասարդ ուսանող էի, իմ համակուրսեցիներից մեկը թախանձագին խնդրեց մեր խմբին՝ Վերջին Օրերի Սրբերի ընկերներին, արյուն նվիրաբերել իր մոր համար, որն ուժեղ արյունահոսություն ուներ: Մենք ուղիղ հիվանդանոց գնացինք մեր արյան կարգն իմանալու և ստուգելու համար: Ես երբեք չեմ մոռանա այն ցնցումը, երբ մեզ ասացին, որ մեզանից մեկը չի կարող դոնոր լինել, քանի որ արյան ստուգումը պարզել էր, որ նա վեներական հիվանդության վարակակիր է: Այդ ախտահարված արյունը հենց նրանն էր: Բարեբախտաբար նրա մայրը կենդանի մնաց, բայց ես երբեք չեմ մոռանա նրա տանջալից կսկիծը: Նրա համար ծանր էր իմանալը, որ իր իսկ անբարոյականության պատճառով նա զրկվել էր իր մորն անհրաժեշտ օգնություն ցույց տալու հնարավորությունից, և նա ավելացրեց իր մոր վիշտը: Ես մի մեծ դաս սովորեցի. եթե մարդը անպատվում է Աստծո պատվիրանները, նա անպատվում է մորը, և եթե մարդն անպատվում է մորը, նա անպատվում է Աստծո պատվիրանները:[2]

Պատվեք մայրությունը

Իմ մասնագիտական կարիերայի ընթացքում որպես բժիշկ ինձ հաճախ են հարցրել, թե ինչու եմ ընտրել այս դժվարին մասնագիտությունը: Ես պատասխանում էի, որ իմ կարծիքով ամենաբարձր և ամենաազնիվ աշխատանքը այս կյանքում դա մոր աշխատանքն է: Քանի որ այդ տարբերակը ինձ համար մատչելի չէր, ես մտածեցի, որ հիվանդներին խնամելը կարող էր մոտ լինել դրան: Ես փորձել եմ հոգ տանել իմ հիվանդների մասին այնպիսի կարեկցանքով և այնքան լիարժեքորեն, ինչպես Մայրս է հոգ տարել ինձ համար:

Տարիներ առաջ Առաջին Նախագահությունը լույս ընծայեց մի դրույթ, որն ունեցավ խորը և տևական ազդեցություն ինձ վրա: «Մայրությունը, - գրում էին նրանք,- մոտ է աստվածությանը: Այն բարձրագույն, ամենասուրբ ծառայությունն է, որ ստանձնում է մարդկությունը: Նա, ով պատվում է այդ սուրբ կոչումը և ծառայությունը, դասվում է հրեշտակների շարքին»:[3]

Քանի որ մայրերը կարևոր են երջանկության Աստծո մեծ ծրագրում, նրանց սրբազան աշխատանքին հակադրվում է սատանան, որը կամենում է կործանել ընտանիքը և նվազեցնել կանանց արժեքը:

Երիտասարդ տղամարդիկ, դուք պետք է իմանաք, որ չէիք կարող հասնել ձեր բարձրագույն ներուժին առանց լավ կանանց ազդեցության, հատկապես ձեր մոր և, մի քանի տարուց լավ կնոջ ազդեցության: Սովորեք այժմ ցույց տալ հարգանք և երախտագիտություն: Հիշեք, որ ձեր մայրը ձեր մայրն է: Նա հրամաններ արձակելու կարիք չունի: Նրա ցանկությունը, նրա հույսը, նրա ակնարկը կապահովի ուղղություն, որը դուք պետք է հարգեք: Շնորհակալ եղեք նրան և արտահայտեք ձեր սերը նրա հանդեպ: Եվ եթե նա մաքառում է մեծացնելու ձեզ առանց ձեր հայրիկի,

դուք պարտավոր եք նրան կրկնակի պատվել:

Մոր նամակը փրկում է իր զավակին

Ձեր մոր ազդեցությունը կօրհնի ձեզ ձեր ողջ կյանքի ընթացքում, հատկապես, երբ դուք ծառայեք որպես միսիոներ: Երկար տարիներ առաջ Երեց Ֆրանկ Կրոֆթը ծառայում էր Ալաբամա նահանգում: Երբ քարոզում էր ժողովրդին, նրան բռնի առևանգեց մի դաժան հրոսակախումբ, որպեսզի ճիպոտահարեն և մտրակահարեն նրա մերկ մեջքը: Երեց Կրոֆթին հրամայվեց հանել իր վերարկուն և վերնաշապիկը, նախքան նրան ծառին կկապեին: Վերարկուն հանելիս իր մորից վերջերս ստացած նամակն ընկավ գետնին: Այդ հրոսակախմբի գարշելի առաջնորդը վերցրեց նամակը: Երեց Կրոֆթը փակեց իր աչքերը և լուռ աղոթեց: Հարձակվողը կարդաց Երեց Կրոֆթի մոր նամակը: Ես մեջ եմ բերում այդ նամակից մի հատված.

«Սիրելի որդիս,… հիշիր Փրկչի խոսքերը, երբ Նա ասաց,….«Երանի է ձեզ, երբոր կնախատեն ձեզ և կհալածեն եւ ամեն չար բան սուտ տեղը կասեն ձեր վերայ իմ պատճառովը: Ուրախացէք եւ ցնծացէք, որ ձեր վարձքը շատ է երկնքումը. Որովհետեւ այսպէս հալածեցին մարգարէներին, որ ձեզանից առաջ կային»: Հիշիր նաև Փրկչին աշխարհի մեղքերից խաչի վրա տառապելիս, երբ Նա արտաբերեց այս անմահ խոսքերը. «Հայր, թողիր դորանց. որովհետեւ չգիտեն թէ ինչ են անում»: Իհարկե որդիս, նրանք, ովքեր քեզ վատ են վերաբերվում…. չգիտեն, թե ինչ են անում, այլապես նրանք չէին անի դա: Ինչ որ ժամանակ ինչ որ տեղում նրանք կհասկանան և այդ ժամանակ նրանք կզղջան իրենց վերաբերմունքի համար և նրանք կհարգեն քեզ այն փառահեղ աշխատանքի համար, որ դու ես անում: Այսպիսով, համբերատար եղիր, որդիս, սիրիր նրանց, ովքեր վատ են վերաբերվում քեզ և ամեն տեսակի չար բաներ են ասում քո դեմ, և Տերը կօրհնի քեզ և կզորացնի քեզ: … Հիշիր նաև, որդիս, որ օր ու գիշեր քո մայրն աղոթում է քեզ համար»:

Երեց Կրոֆթը հետևում էր ատելությամբ լցված մարդուն, երբ նա ուսումնասիրում էր նամակը: Նա կարդում էր մեկ կամ երկու տող, ապա նստում և խորհում էր: Նա ոտքի կանգնեց և մոտեցավ իր գերյալին և ասաց. «Երիտասարդ, դու պետք է որ հրաշալի մայր ունենաս: Գիտես ես ևս մի ժամանակ ունեի»: Ապա դիմելով ամբոխին նա ասաց. «Տղաներ, այս Մորմոնի մոր նամակը կարդալուց հետո, ես ուղղակի չեմ կարողանում շարունակել գործը: Ավելի լավ կլինի թողնենք, որ նա գնա»: Երեց Կրոֆթը ազատ արձակվեց առանց վնաս կրելու:[4]

Մենք խորապես երախտապարտ ենք մեր սքանչելի միսիոներների հավատարիմ մայրերի և հայրերի համար:

> ***Եթե մեկն անպատվում է Աստծո պատվիրանները, նա անպատվում է մորը, և եթե մեկն անպատվում է մորը, նա անպատվում է Աստծո պատվիրանները:***

Վստահ է այն սերը, որ նրանք ունեն իրենց երեխաների հանդեպ:

Պատվեք ձեր քույրերին

Մենք, որ կրում ենք սուրբ քահանայությունը, ունենք մեր քույրերին պատվելու սրբազան պարտավորություն: Մենք բավականաչափ մեծ ենք և բավականաչափ գիտենք, որ ծաղրելը սխալ է: Մենք հարգում ենք քույրերին ոչ միայն մեր անմիջական ընտանիքներում, այլ բոլոր հիանալի քույրերին մեր կյանքում: Որպես Աստծո դուստրեր նրանց ներուժը աստվածային է: Առանց նրանց հավերժական կյանքն անհնարին կլինի: Մեր բարձր հարգանքը նրանց հանդեպ պետք է բխի Աստծո հանդեպ սիրուց և Նրա հավերժական մեծ ծրագրում նրանց վեհ նպատակից:

Այսպիսով, ես նախազգուշացնում եմ պոռնոգրաֆիայի համար: Այն այլասերում է կանանց: Այն չարիք է: Այն վարակիչ է, կործանարար և հակում առաջացնող: Մարմինը ունի միջոցներ, որոնցով կարող է մաքրել իրեն աղտոտված սննդի և խմիչքի վնասակար ազդեցություններից: Բայց այն չի կարող փսխել պոռնոգրաֆիայի թույնը: Մեկ անգամ իսկ գրանցելուց հետո, այն միշտ մնում է որպես վերհիշելու առարկա, առկայծելով իր այլասերող պատկերները ձեր մտքում, ձեզ կյանքի առողջ բաներից հեռու քաշելու զորությամբ: Խուսափեք դրանից ինչպես ժանտախտից:

Պատվեք ձեր կնոջը

Դուք, որ դեռևս ամուսնացած չեք, մտածեք ձեր ապագա ամուսնության մասին: Ճիշտ ընտրեք ձեր ապագա կողակցին: Հիշեք սուրբ գրությունները, որոնք ուսուցանում են տաճարում ամուսնանալու կարևորությունը՝

«Սելեստիալ փառքի մեջ կա երեք երկինք կամ աստիճան.

Եվ ամենաբարձրին հասնելու համար մարդ պետք է մտնի քահանայության այս կարգի մեջ [որն է՝ ամուսնության նոր և հավիտնական ուխտը],

Եվ եթե նա չմտնի, չի կարող հասնել դրան»:[5]

Տիրոջ տանը բարձրագույն արարողությունները ամուսինն ու կինը ստանում են միասին և հավասարապես, կամ ընդհանրապես չեն ստանում:

Ետադարձ հայացք գցելով ես տեսնում եմ, որ ամենակարևոր օրը իմ կյանքում այն օրն էր, երբ իմ սիրելի Դենզելը և ես ամուսնացանք սուրբ տաճարում: Առանց նրա ես չէի կարող ունենալ քահանայության բարձրագույն և ամենահարատև օրհնությունները: Առանց նրա ես չէի լինի մեր հիանալի երեխաների հայրը կամ մեր թանկագին թոռների պապը:

Որպես հայրեր մենք պետք է անսահման սեր տածենք մեր երեխաների մայրերի հանդեպ: Մենք պետք է հայտնենք նրանց մեր երախտագիտությունը, հարգանքը և գովասանքը, որին նրանք արժանի են: Ձեր ամուսնության մեջ ռոմանտիկայի ոգին կենդանի պահելու համար, ամուսիններ, եղեք հոգատար և բարի ձեր ընտանեկան կյանքի ինտիմ քնքուշ հարաբերություններում: Թող ձեր մտքերն ու գործողությունները ոգեշնչեն համարձակություն և վստահություն: Թող ձեր խոսքերը լինեն օգտակար և ձեր միասին անցկացրած ժամանակը լինի վեհացնող: Թող ոչ մի բան ձեր կյանքում առաջնահերթություն չլինի ձեր կնոջ նկատմամբ՝ ոչ աշխատանքը, ոչ հանգիստը, ոչ էլ հոբին:

Իդեալական ամուսնությունը ճշմարիտ ընկերակցություն է երկու ոչ կատարյալ մարդկանց միջև, ովքերձգտում են լրացնել միմյանց, պահելով պատվիրանները և կատարելով Տիրոջ կամքը:

Ընտանիքը կարգված է Աստծո կողմից

Ընտանիքը հասարակության ամենակարևոր միավորն է: Ընտանիքը կարգված է Աստծո կողմից: Այն կենտրոնական է Նրա ծրագրում Իր զավակների ճակատագրի համար:[6] «Աստված հիմնադրել է ընտանիքներ իր զավակներին երջանկություն բերելու համար, հնարավորություն տալով նրանց սովորել ճիշտ սկզբունքներ սիրո մթնոլորտում և նախապատրաստել նրանց հավերժական կյանքի համար»:[7]

Հայրերը սիրով են նախագահում ընտանիքում

Ծնողներն են կրում հիմնական պատասխանատվությունը իրենց զավակների բարօրության համար:[8] Եկեղեցին չի փոխարինում այդ ծնողական պարտականությանը: Սովորաբար Վերջին Օրերի Սրբերի ընտանիքում նախագահում է արժանի տղամարդը, որը քահանայություն է կրում: Այս հայրապետական իշխանությունը պատվի է արժանացել Աստծո ժողովրդի մեջ բոլոր տնտեսություններում:Այն աստվածային ծագում ունի և այդ միությունը, եթե կնքվում է համապատասխան իշխանությամբ, կշարունակվի ողջ հավերժության մեջ: Նա, ով մեր բոլորիս Հայրն է և այդ իշխանության աղբյուրը, պահանջում է, որ տան կառավարումը լինի սիրով և արդարությամբ:[9]

Հայրեր, դուք կարող եք օգնել ամանները լվանալով, լացող երեխային հոգ տանելով և փոխելով տակդիրները: Եվ գուցե մի կիրակի դուք կարող եք երեխաներին պատրաստել Եկեղեցու համար, իսկ ձեր կինը կարող է նստել մեքենայում և ազդանշան տալ:

«Մարդիկ, սիրեցէք ձեր կանանցը, ինչպէս Քրիստոսն էլ սիրեց եկեղցուն եւ իր անձը մատնեց նորա համար»:[10] Այդպիսի սիրով եղբայրներ, մենք կլինենք ավելի լավ ամուսիններ և հայրեր, ավելի սիրով և հոգևոր առաջնորդներ: Տանը երջանկության կարելի է հասնել, երբ փորձառությունները հիմնված են Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա:[11] Մեր պարտականությունն է հավաստիանալ, որ ընտանեկան աղոթք ասենք, սուրբ գրությունների ուսումնասիրություն և ընտանեկան երեկո անցկացնենք: Մեր պարտականությունն է նախապատրաստել մեր երեխաներին ստանալ փրկության արարողությունները, վեհացում և այն օրհնությունները, որոնք խոստացված են տասանորդ վճարողներին: Մեր արտոնությունն է տալ բժշկության, սփոփանքի և ուղղության քահանայության օրհնություն:

Տունը սիրո մեծ լաբորատորիա է: Եսասիրության և ագահության քիմիական չմշակված հումքը հալվում է համագործակցության ստուգարքում՝ կարեկից մտահոգություն և սեր ցույց տալով միմյանց:[12]

Արտահայտեք սեր ձեր կնոջ, մոր, քույրերի հանդեպ

Եղբայրներ, պատվեք ձեր կյանքի հատուկ քույրերին: Արտահայտեք ձեր սերը ձեր կնոջ, ձեր մոր և քույրերի հանդեպ: Գովեք նրանց, որ համբերատար են ձեզ հետ, նույնիսկ երբ դուք չեք փայլում: Շնորհակալություն հայտնեք Տիրոջը այս քույրերի համար, ովքեր մեր Երկնային Հոր նման սիրում են մեզ ոչ միայն նրա համար, թե ով ենք մենք, այլ նրա համար, թե ինչ մենք կարող ենք դառնալ: Խոնարհաբար ես շնորհակալություն եմ հայտնում իմ մոր, իմ քույրերի, թոռնուհիների և իմ արտակարգ սիրելիի, կողակցի և ընկերուհու՝ իմ կնոջ համար:

> ***Մենք, որ կրում ենք սուրբ քահանայությունը, ունենք մեր քույրերին պատվելու սրբազան պարտականություն:***

Թող Աստված օրհնի մեզ պատվելու յուրաքանչյուր առաքինի կնոջ: Ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. Տես ՎԼՈՒ 23.3:
2. Բազմաթիվ սուրբ գրություններ ուսուցանում են մեզ պատվել մեր ծնողներին: Տես Ելից Ի.12, Երկրորդ Օրինաց Ե.16, Մատթ. ԺԵ.4, ԺԹ.19; Մարկոս Է.10, Ժ.19, Ղուկաս ԺԸ.20, Եփես. Զ.2, 1 Նեփի 17.55, Մոսիա 13.20, ՋՍԹ, Մատթ. ԺԹ.19, Սուրբ Գրքեր՝ ոգեշնչված տարբերակ, ՋՍԹ, Մարկոս Է.12, Աստվածաշնչի հավելված:
3. James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 6:178. 1935 թվականին Առաջին Նախագահությունը նշեց. «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ճշմարիտ ոգին տալիս է կանանց մարդկային կյանքում հարգանքի բարձրագույն տեղը» (in *Messages of the First Presidency*, 6:5):

4. Տես Arthur M. Richardson, *The Life and Ministry of John Morgan* (1965), 267–68.
5. ՎԱՈՒ 131.1–3:
6. Տես «Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին» *Ensign*, նոյ. 1995, 102:
7. *Ընտանեկան Ուղեցույց* (գրքույկ, 1992):
8. Տես ՎԱՈ 68.25–28:
9. Տես ՎԱՈՒ 121.41–45:
10. Եփեսացիս Ե.25:
11. Տես *Ensign*, նոյ. 1995, 102:
12. Տես Մոսիա 4.14—15, ՎԱՈՒ 68.25–31:

ՀԱՅՐԵՐԻ ՁԵՌՔԵՐԸ

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, ապր. 1999, 15–19, կամ Ensign, մայիս 1999, 14–16

Երախտագիտություն Հայր Աստծո հանդեպ

Այս Զատկի օրերին ես կամենում եմ շնորհակալություն հայտնել ոչ միայն հարություն առած Տեր Հիսուս Քրիստոսին, այլև Նրա ճշմարիտ Հորը, մեր հոգևոր Հորը և Աստծուն, որն ընդունելով Իր անդրանիկի, կատարյալ Որդու զոհաբերությունը, օրհնեց բոլոր Իր զավակներին քավության և փրկագնման այդ ժամերին: Զատկի օրերին առավել քան երբևէ այնքան շատ իմաստ է պարունակվում Հովհաննեսի գլխի այս հայտարարության մեջ, որը մեծարում է և Հորը և Որդուն. «Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը չկորչի, այլ յաւիտենական կեանքն ունենայ»:[1]

Ես հայր եմ՝անբավարար համոզվածությամբ, բայց ես չեմ կարողանում ըընկալել, թե ինչպիսի ծանրություն է կրել Աստված Իր երկնքում, Իր Սիրելի Որդու տառապանքի և Խաչելության ականատեսը լինելով: Նրա ամեն մի մղումն ու բնազդը պետք է որ թելադրեին դադարեցնել դա, ուղարկել հրեշտակներին խանգարելու դա, բայց Նա չխանգարեց: Նա դիմացավ նրան ինչ որ տեսավ, որովհետև դա միակ ուղին էր, որով փրկությունը, փոխարինաբար վճարումը կարող էր կատարվել բոլոր Նրա մյուս զավակների մեղքերի համար, սկսած Ադամից և Եվայից մինչև աշխարհի վերջը: Ես հավերժորեն երախտապարտ եմ կատարյալ Հոր և Նրա կատարյալ Որդու համար, որոնցից ոչ մեկը ետ չընկրկեց դառը բաժակից, ոչ էլ լքեցին մեզանից մնացածին, որ անկատար ենք, սխալվում ենք և սայթաքում, և շատ հաճախ ենք կորցնում նշանակետը:

Հիսուսի հարաբերությունը իր Հոր հետ

Մտածելով «քա-վու-թյան» այդպիսի գեղեցկության մասին այդ առաջին Զատկի օրերին, մեզ հիշեցվում է, որ այս հարաբերությունը Քրիստոսի և Նրա Հոր միջև ամենաքաղցր և ամենահուզիչ թեմաներից մեկն է, որ շոշափվում է Փրկչի ծառայության ողջ ընթացքում: Հիսուսի ողջ էությունը, Նրա ողջ նպատակը և հրճվանքը կենտրոնացած էր Իր Հորը գոհացնելուն և Նրա կամքին հնազանդվելուն: Նա թվում է միշտ մտածում էր Նրա մասին, Նա թվում է միշտ աղոթում էր Նրան: Ի տարբերություն մեզ, Նա ճգնաժամի կարիք չուներ, հուսահատեցնող իրադարձությունների հերթափոխ Իր հույսերն ուղղելու դեպի երկինք: Նա արդեն բնազդաբար, կարոտով նայում էր այդ կողմ:

Իր ողջ մահականացու ծառայության ընթացքում Քրիստոսը թվում է երբեք սնապարծության կամ եսապաշտության ոչ մի պահ չունեցավ: Երբ մի երիտասարդ փորձեց կոչել Նրան «բարի», Նա խուսափեց հաճոյախոսությունից, ասելով որ միայն մեկն էր արժանի այդպիսի գովասանքի՝ Իր Հայրը:

Իր ծառայության վաղ օրերին Նա խոնարհաբար ասաց. «Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել…. իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հոր կամքը»:[2]

Իր ուսուցումներից հետո, որոնք շշմեցնում էին լսողներին իրենց զորությամբ և իշխանությամբ, Նա ասում էր. «Իմ վարդապետությունն իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է: Ես իմ անձիցը չեմ եկել. Այլ ճշմարիտ է ինձ ուղարկողը»:[3] Հետագայում նա կրկին ասաց. «Ես իմ անձիցը չխոսեցի. Բայց ինձ ուղարկող Հայրը, նա պատուէր տուաւ ինձ, թէ ինչ պիտի ասեմ եւ ինչ պիտի խոսեմ»:[4]

Նրանց, ովքեր կամենում էին տեսնել Հորը, ուղղակիորեն Աստծուց լսելու, որ Հիսուսն այն էր, ինչ ասում էր, որ էր, Նա պատասխանեց. «Եթե ինձ գիտենայիք, իմ Հորն էլ կգիտենայիք…. Ինձ տեսնողը Հորը տեսավ»:[5] Երբ Հիսուսը ցանկանում էր պահպանել միասնություն Իր աշակերտների մեջ, Նա աղոթեց օգտագործելով Իր սեփական հարաբերության օրինակն Աստծո հետ. «Սուրբ Հայր, պահիր նորանց քո անունովը, որոնց տուիր ինձ, որ մէկ լինեն ինչպէս մենք»:[6]

Նույնիսկ, երբ Նա առաջ էր գնում դեպի Խաչելությունը Նա սաստեց Իր Առաքյալներին, որոնք կամենում էին խանգարել ասելով. «Այն բաժակը, որ իմ Հայրը տուաւ ինձ, ես այն չխմե՞մ»:[7] Երբ այդ անասելի չարչարանքն ավարտվեց, Նա արտասանեց այն, ինչ պետք է որ լիներ Իր մահկանացու ծառայության ամենախաղաղ և արժանավոր խոսքերը: Իր

հոգեվարքի վերջում, Նա շշնջաց. «Կատարուած է….Հայր, հոգիս քո ձեռն եմ ավանդում. Եւ այս ասելով հոգի տուաւ»:[8] Վերջապես կատարված էր: Վերջապես Նա կարող էր տուն գնալ:

Խոստովանում եմ, որ ես շատ եմ մտածել այդ պահի մասին և Հարության մասին, որը շուտով հետևելու էր դրան: Ես զարմանում եմ, թե ինչպիսի՞ն պետք է լիներ այդ վերամիավորումը, Հայրը, որը սիրում էր այդ Որդուն այնքան շատ, Որդին, որը պատվում և մեծարում էր Իր Հորը յուրաքանչյուր խոսքով և գործով: Երկուսի համար, ովքեր մեկ էին ինչպես այս երկուսն էին մեկ, ինչպիսի՞ն պետք է լիներ այդ գրկախառնությունը: Ինչպիսի՞ն պետք է լինի այդ աստվածային ընկերակցությունը մինչև այժմ: Մենք կարող ենք միայն զարմանալ և հիանալ: Եվ մենք կարող ենք Ջատկի օրերին ջանալ ինքներս որոշ չափով արժանիորեն ապրել այդ փոխհարաբերությանը:

Ամրացրեք փոխհարաբերությունները երեխաների հետ

Որպես հայր ես մտածում եմ, թե ես և բոլոր հայրերը կկարողանա՞նք արդյոք ավելին անել կառուցելու ավելի քաղցր, ավելի ամուր փոխհարաբերություն մեր որդիների և դուստրերի հետ այստեղ երկրի վրա: Հայրեր, արդյոք մեծ համարձակությո՞ւն է հույս ունենալ, որ մեր զավակները գուցե ունենան մի փոքրիկ չափով այն զգացումը մեր հանդեպ, որ Աստվածային Որդին էր զգում Իր Հոր հանդեպ: Ամեն դեպքում, մենք իսկապես գիտենք, որ Աստծո մասին երիտասարդի զարգացող տեսակետը, կենտրոնանում է այն հատկանիշների վրա, որոնք նկատվում են այդ երեխայի երկրային ծնողների մեջ:[9]

Հայրերի բացակայությունը վնասում է երեխաներին

Այդ և շատ այլ պատճառներով ես կարծում եմ ոչ մի գիրք, որ ես վերջերս կարդացել եմ, այդքան շատ չի անհանգստացրել ինձ, որքան մի աշխատություն, որի վերնագիրն է *Fatherless America* (Հայրազուրկ Ամերիկա): Այս հետազոտության մեջ հեղինակը խոսում է «հայրազրկության» մասին որպես «ամենավնասակար դեմոգրաֆիական միտում այս սերնդի մեջ», երեխաներին վնասելու գլխավոր պատճառ: Նա համոզված է, որ սա է մեր հրատապ բոլոր հասարակական խնդիրների շարժիչ ուժը՝ աղքատությունից մինչև հանցագործություն, պատանեկան տարիքում հղիությունից մինչև երեխաների անարգանքը և ընտանեկան բռնությունը: Մեր ժամանակի հիմնական սոցիալական հարցերի շարքում է իրենց երեխաների կյանքից հայրերի մասնակցության բացակայությունը:[10]

Հայրերի հոգևոր կամ զգացմունքային բացակայությունը նույնիսկ ավելի մեծ մտահոգություն է, քան որոշ հայրերի ֆիզիկական բացակայությունը: Սրանք հայրական բացթողումների մեղքեր են, որոնք հավանաբար ավելի կործանարար են, քան իրավասության մեղքերը: Ինչո՞ւ չենք զարմանում, որ երբ 2,000 բոլոր տարիքի և ծագման երեխաների հարցրեցին, թե ինչ էին իրենք ամենաշատը գնահատում իրենց հայրերի մեջ, նրանք համընդհանուր պատասխանեցին. «Նա ժամանակ է անցկացնում ինձ հետ»:[11]

Դափնու դասարանից մի երիտասարդ կին, որին ես հանդիպեցի համաժողովի հետ կապված հանձնարարության ընթացքում, մեր այցից հետո վերջերս գրեց ինձ և ասաց. «Կուզենայի, որ հայրս իմանար, թե որքան նրա կարիքն ունեմ ես հոգևոր և զգացմունքային առումով: Ես փափագում եմ որևէ բարի դիտողության, որևէ ջերմ անձնական ժեստի: Չեմ կարծում, նա գիտի թե որքան շատ բան է ինձ համար նշանակում, որ նա ակտիվ հետաքրքրություն ցույց տա այն ամենին, ինչ կատարվում է իմ կյանքում, առաջարկի ինձ օրհնություն տալ կամ ուղղակի որոշ ժամանակ անցկացնի ինձ հետ միասին: Ես գիտեմ, որ նա անհանգստանում է, որ գուցե ինքը ճիշտ բան չանի կամ չասի լավ խոսքեր: Բայց ուղղակի նրա կողմից փորձելը կնշանակեր ավելին, քան նա երբևէ կարող է իմանալ: Ես չեմ ուզում երախտամոռ երևալ, որովհետև ես գիտեմ, որ նա սիրում է ինձ: Մի անգամ նա մի երկտող էր ինձ ուղարկել և ստորագրել էր. «Սիրով, Հայրիկ»: Ես գանձի պես պահում եմ այդ երկտողը: Ես պահում եմ այն իմ ամենասիրելի իրերի հետ»:[12]

Հայրերի մեծամասնությունը հիանալի են

Դեհ ինչ վերաբերվում է այդ երիտասարդ կնոջը ես չեմ ուզում, որ այս խոսակցությունը անշնորհակալ հնչի, ոչ էլ այն նպատակ ունի ստիպել հայրերին իրենց ձախողակ զգալ: Հայրերից շատերը հիանալի են: Շատ հայրեր սքանչելի են: Ես չգիտեմ, թե ով է գրել այս փոքրիկ ոտանավորները, որոնք ես հիշում եմ իմ մանկության տարիներից, բայց դրանք այսպես են հնչում.

Հայրիկն է միայն հոգնած դեմքով,
Տուն գալիս ամենօրյա գործից,…
Ամեն օր տքնում է ու ջանում,
Ինչ էլ պատահի դիմակայում,
Ուրախ իր սրտում, որ հրճվում են տնեցիք, Ուրախ է իր սրտում, որ տնեցիք են ցնծում,
Տեսնելով իրեն տուն գալիս և իր ձայնը լսելիս….Երբ տուն է գալիս և իր ձայնն են լսում….
Միմիայն Հայրիկն է, որ իրեն լիովին նվիրում,
Ուղի է իր փոքրիկների համար հարթում,
Քաջությամբ այնպես խիստ և լուրջ աշխատում,
Իր հոր արած գործերը մեզ համար անում:
Սրանք են այն տողերը, որ նրա համար գրեցի,
Պատկերացրեք միայն, Հայրիկն է նա մեր,
Բայց լավագույնն է մարդկանցից:[13]

Հետևեք հայրության Աստծո օրինակին

Եվ եղբայրներ, եթե նույնիսկ մենք «լավագույնը [չենք] մարդկանցից» նույնիսկ մեր թերություններով և անհամապատասխանությամբ հանդերձ, մենք կարող ենք շարունակել մեր ճանապարհը ճիշտ ուղղությամբ Երկնային Հոր կողմից սահմանված և Երկնային Որդու կողմից ցուցադրված քաջալերող ուսմունքների շնորհիվ: Երկնային Հոր օգնությամբ մենք կարող ենք թողնել ավելի շատ ծնողական ժառանգություն, քան կարծում ենք:

Հենց նոր հայր դարձած մի մարդ գրել է. «Հաճախ, երբ ես նայում եմ որդուս, թե ինչպես է նա հետևում ինձ, մտովի հիշում եմ իմ հորը և թե որքան բուռն էի ցանկանում լինել ճիշտ նրա պես: Հիշում եմ, որ ունեի պլաստմասսայից ածելի և իմ սեփական ամանը կրեմը փրփրացնելու համար և ամեն առավոտ ես սափրվում էի, երբ նա էր սափրվում: Ես հիշում եմ ինչպես էի հետևում նրա ոտնահետքերին խոտի վրայով հետ ու առաջ քայլելով, երբ ամռանը նա հնձում էր մարգագետինը:

Այժմ ես ցանկանում եմ, որ որդիս հետևի իմ առաջնորդությանը և այնուամենայնիվ ինձ սարսափեցնում է, գիտենալով, որ նա հավանաբար դա անելու է: Բռնելով այս փոքրիկ տղային իմ գրկում, ես զգում եմ «երկնային տան կարոտ, ձգտում սիրել այնպես, ինչպես Աստված է սիրում, հանգստացնել այնպես, ինչպես Նա է հանգստացնում, պաշտպանել այնպես, ինչպես Նա է պաշտպանում: Իմ պատանեկան բոլոր երկյուղների պատասխանը միշտ «Ի՞նչ կաներ հայրիկը» հարցն էր: Այժմ երբ ես երեխա ունեմ մեծացնելու, ես հույս դնում եմ Երկնային Հոր վրա, որ Նա ինձ դա ասի»:[14]

Հոր սիրո ազդեցությունը

Համալսարանական օրերի մի ընկեր վերջերս գրեց ինձ ասելով. «Իմ քառասային մանկությունում շատ բաներ անորոշ էին, բայց մի բան ես հաստատ գիտեի, որ հայրս սիրում էր ինձ: Այդ համոզվածությունը իմ երիտասարդ կյանքի խարիսխն էր: Ես սկսեցի ճանաչել և սիրել Տիրոջը, որովհետև հայրս սիրում էր նրան: Ես երբեք ոչ մեկին չեմ անվանել հիմար կամ անտեղի գործածել Տիրոջ անունը, որովհետև նա ասել էր ինձ, որ Աստվածաշունչն ասել է, որ ես չպետք է դա անեմ: Ես միշտ վճարել եմ իմ տասանորդը, որովհետև նա սովորեցրել էր ինձ, որ դա արտոնություն է այդպես անելը: Ես միշտ փորձում էի պատասխանատվություն կրել իմ սխալների համար, որովհետև այդպես էր անում հայրս: Չնայած նա որոշ [ժամանակով] հեռացել էր Եկեղեցուց, իր կյանքի վերջում նա ծառայեց միսիա և հավատարմորեն աշխատեց տաճարում: Իր կտակում նա գրել էր, որ իր [ընտանիքին] հոգ տանելուց հետո, ավելացած գումարը պետք է տրվեր Եկեղեցուն: Նա սիրում էր Եկեղեցին իր ողջ սրտով: Եվ նրա շնորհիվ ես էլ եմ այդպես անում»:[15]

Անկասկած է, որ դա պետք է լիներ Լորդ Բայրոնի երկտող ոտանավորի հոգևոր դիմումը. «Բայց իմ դիմագծերում դուք կարող եք գտնել/ Իմ հոր դեմքի բնորոշ գծերից»:[16]

Հոր ազդեցության սուրբգրքյան օրինակներ

Նեփիի կյանքում խոցելի մի պահի նրա մարգարեական ապագան որոշվեց, երբ նա ասաց. «Ես հավատացի բոլոր այն խոսքերին, որոնք ասվել էին հորս կողմից»:[17]Մարգարե Ենովսի կյանքի շրջադարձային մի կետում նա ասաց, որ դրանք «հաճախ լսել էի իմ հորն ասելիս»,[18] որը հուշեց այն մեծ հայտնությունները, որոնք գրված են Մորմոնի Գրքում: Եվ տառապյալ Ալմա Կրտսերը, երբ դեմհանդիման կանգնեց իր մեղքերի տանջալից հիշողության առջև. «հիշեց նաև լսած լինելը [իր] հոր մարգարեանալը…. Հիսուս Քրիստոսի, մի Աստծո որդու գալստյան վերաբերյալ՝ քավելու համար աշխարհի մեղքերը»:[19] Այդ համառոտ հիշողությունը, այդ անձնական վկայությունը, որը տրվել էր նրա հոր կողմից մի ժամանակաընթացքում, երբ հայրը գուցե չէր զգացել, որ որդին ինչ որ բան էր սովորել, ոչ միայն փրկեց իր այս որդու հոգևոր կյանքը, այլ հավերժ փոխեց Մորոմոնի Գրքի ժողովրդի պատմությունը:

> ***Երկնային Հոր օգնությամբ մենք կարող ենք թողնել ավելի շատ ծնողական ժառանգություն, քան կարծում ենք:***

Աբրահամի՝ մեծ հայրապետի մասին, Աստված ասաց. «*Ես ճանաչեցի նորան*…. որ իր որդկանցը եւ իրանից յետոյ իր տանը կպատվիրէ, և նորանք Եհովայի ճանապարհը կպահեն»:[20]

Ես բերում եմ իմ վկայությունը այս Զատկի օրը, որ «մեծ բաներ կպահանջվեն հայրերի ձեռքից», ինչպես Տերը հայտարարեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին:[21] Անկասկած, ամենակարևորն այն է, որ իրենց կարողության չափով նրանք ամեն ինչ անեն երեխաների երջանկության և հոգևոր ապահովության համար, ում նրանք պետք է դաստիարակեն:

Ողջ մարդկային պատմության ամենածանր պահին, երբ յուրաքանչյուր ծակոտիից արյուն էր հոսում, Քրիստոսը տանջալից աղաղակելով փնտրում էրՆրան, ում Նա միշտ փնտրել էր՝ Իր Հորը: «Աբբա», կանչեց Նա, «Հայր» կամ փոքր երեխայի շուրթերից «Պապա»:[22]

Սա այնպիսի մի անձնական պահ է, որ գրեթե սրբապղծություն է թվում մեջբերում կատարել: Մի Որդի չամոքված ցավի մեջ, մի Հայր՝ Նրա ուժի միակ ճշմարիտ աղբյուրը, երկուսով հաստատուն մնալով ուղուն, արեցին դա գիշերվա ընթացքում, միասին:

Հայրեր, այս Զատկի օրը թող որ մենք նորոգենք մեր պարտականությունը որպես ծնողներ, զորացվելով այս Հոր և այս Որդու պատկերներով, երբ գրկենք մեր երախաներին և կանգնենք նրանց հետ հավերժ: Ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. Հովհ. Գ.16:
2. Հովհ. Ե.30:
3. Հովհ. Է.16, 28:
4. Հովհ ԺԲ.49:
5. Հովհ. ԺԴ.7, 9:
6. Հովհ. ԺԷ.11:
7. Հովհ. ԺԸ.11:
8. Հովհ. ԺԹ.30, Ղուկաս ԻԳ.46:
9. Տես "Parent-Child Relationships and Children's Images of God," *Journal for the Scientific Study of Religion,* Mar. 1997, 25—43:
10. David Blankenhorn, *Fatherless America: Confronting Our Most Urgent Social Problem* (1995), 1.
11. Տես "Becoming a Better Father," *Ensign,* Jan. 1983, 27:
12. Անձնական նամակներ
13. Edgar A. Guest, "Only a Dad," in *Best-Loved Poems of the LDS People,* ed. Jack M. Lyon and others (1996), 90–91.
14. Անձնական նամակներ
15. Անձնական նամակներ Ռոբերտ Ա. Ռիզից:
16. *Parisina,* stanza 13, lines 285–86.
17. 1 Նեփի 2.16:
18. Ենովս 1.3:
19. Ալմա 36.17:
20. Ծննդոց ԺԸ.19, շեղագիրն ավելացված է:
21. Վարդապետություն և Ուխտեր 29.48:
22. Մարկոս ԺԴ.36:

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ

Համեստությունն արտացոլում է հեզության, օրինավորության և պատշաճության վարքագիծ:

—Նախագահ Ն. Էլդոն Թաններ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Անբարոյականությունը չի սկսվում շնությամբ կամ այլասերմամբ: Այն սկսվում է սեքսուալ մտքերով, սեքսի քննարկումներով, կրքոտ համբույրներով, ինտիմ փաղաքշանքներով, և ավելի լուրջ դառնում յուրաքանչյուր անգամ գործելիս: Փոքրիկ անհամեստությունները թվում են անզոր համեմատած ամուր մարմնի, ուժեղ մտքի, երիտասարդության քաղցր ոգու հետ, որը տեղի է տալիս առաջին գայթակղությանը: Բայց շուտով ուժեղը դառնում է թույլ, տերը՝ ստրուկ, հոգևոր աճը կանգ է առնում: Բայց եթե առաջին անարդարակյաց գործողությունը երբեք թույլ չի տրվում որ տեղի ունենա, ծառը կմեծանա մինչև գեղեցիկ հասունացում և երիտասարդությամբ լեցուն կյանքը կաճի դեպի Աստված, մեր Հայրը….

Առաջին առաքյալները և մարգարեները նշում են բազմաթիվ մեղքեր, որոնք դատապարտվել են նրանց կողմից: Դրանցից շատերը սեքսուալ մեղքեր էին՝ շնությունը, սեռական սադիզմը, ցանկասիրությունը, անհավատարմությունը, անժուժկալությունը, ամոթալի գռեհիկ խոսքերը, պղծությունը, կրքոտությունը, պոռնկությունը: Դրանք ներառում են բոլոր սեռական հարաբերությունները, որոնք ամուսնությունից դուրս են՝ սեռական փաղաքշանքները, սեռական այլասերվածությունը, մաստուրբացիան և մտքով և խոսքով սեքսով տարվելը: Ներառյալ յուրաքանչյուր ծածուկ և գաղտնի մեղք և բոլոր անսուրբ և անմաքուր մտքերը և գործողությունները….

Խիղճն ասում է անձավորությանը, երբ նա մտնում է արգելված աշխարհներ, և այն շարունակում է խայթել մինչև լռեցվում է կամքի միջոցով կամ մեղքի կրկնությամբ:

Կարո՞ղ է ինչ որ մեկն ասել ճշմարտապես, որ նա չգիտեր որ այդպիսի բաները սխալ էին: Այս անսուրբ գործողությունները, ինչպիսին էլ որ լինի նրանց չնշվող անունները, բոլոր իրենց մոտեցումներով և բազմաթիվ դրսևորումներով դատապարտվում են Տիրոջ և նրա եկեղեցու կողմից: Մի քանիսը կարող են լինել ավելի նողկալի, քան մյուսները, բայց բոլորը մեղք են, չնայած նրանց հակառակ պնդումներին, ովքեր կեղծ ձևացնում են, թե չգիտեին: Տիրոջ մարգարեները հայտարարում են, որ դրանք ճիշտ չեն:

Աշխարհը կարող է ունենալ իր կանոնները, Եկեղեցու կանոնները տարբեր են…. Աշխարհը կարող է ընդունել նախաամուսնական սեռական փորձառությունները, բայց Տերը և իր եկեղեցին հստակորեն դատապարտում են ամուսնությունից դուրս ցանկացած տեսակի սեռական հարաբերություն….

Քանի որ սիրատածումը ամուսնության նախերգանքն է և խրախուսում է սերտ հարաբերություններ, շատերը համոզել են իրենց, որ ինտիմությունը օրինական է՝ սիրատածման գործընթացի մաս է կազմում: Շատերը դեն են նետել երասաններն ու սանձերը և թուլացրել զսպվածությունը: Փոխարենը մնալու սիրո պարզ արտահայտությունների դաշտում, ոմանք իրենց բաց են թողնում տրվելով շոյանքների, որը հաճախ կոչվում է «տարփանք» իր ինտիմ շփումներով և կրքոտ համբույրներով: Տարփանքը այս անսուրբ ընտանիքի երիտասարդ անդամն է: Դրա մեծ քույրը կոչվում է «սեռական փաղաքշանքներ»: Երբ ինտիմությունը հասնում է այս մակարդակին, դրանք մեղքեր են, որոնք դատապարտվում են Փրկչի կողմից….

Ով կարող է ասել, որ տղամարդը կամ կինը, ով փաղաքշում է, չի դառնում ցանկասեր, չի դառնում կրքոտ: Միթե դա ամենագարշելի գործողությունը չէ, որն Աստված հանդիմանել է իր Տասը Պատվիրանների ժամանակակից կրկնության մեջ. «Մի գողացիր. Շնություն մի արա, մի սպանիր, ոչ էլ նման որևէ բան գործիր» (ՎԵՈՒ 59.6):

> ***Ապահով ետ կանգնեք մեղքի քարափից:***

«Կարո՞ղ եմ հարցնել ձեզ, արդյոք շնություն չէ սեռական փաղաքշանքը: Մի՞թե Տերը չի ընդունել, որ այս նողկալի մեղքը ընդամենը դևի փափկացնող գործընթացն է, որ հանգեցնում է շնության և պոռնկության վերջնական քայլերին: Կարո՞ղ է մարդ Տիրոջ սուրբ գրությունների լույսի մեջ մաքուր խղճով սեռական փաղաքշանքներին տրվել: Կարո՞ղ է որևէ մեկը համոզել իրեն, որ սա խորը մեղք չէ:

Մենք պետք է կրկնենք, ինչ որ ասել ենք շատ անգամներ. Պոռնկությունը բոլոր իր մեծ և փոքր եղբայրներով և քույրերով չարիք է և լիովին դատապարտվել է Տիրոջ կողմից Ադամի օրերում, Մովսեսի օրերում, Պողոսի օրերում և մեր իսկ օրերում: Եկեղեցին չի հանդուրժում որևէ ձևի այլասերմում: Տերն արտահայտել է իր անհանդուրժողականությունը, նշելով.

«Քանզի, ես Տերս, չեմ կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել» (ՎԱՈՒ 1.31):

Երբ սուրբ գրություններն այսքան հստակ են, ինչպե՞ս կարող է որևէ մեկը արդարացնել անբարոյականությունը և կոչել դա սեր: Միթե սևը սպիտակ է: Միթե՞ չարը բարի է: Միթե՞ մաքրությունը կեղտոտություն է:

Որպեսզի բարոյականության վերաբերյալ Եկեղեցու դիրքը հասկանալի լինի, մենք հայտարարում ենք անսասան և անփոփոխ, դա մաշված, գունաթափված, հնաոճ և հնամաշ հանդերձ չէ: Աստված նույնն է երեկ, այսօր և հավիտյան, և նրա ուխտերը և վարդապետությունները անփոփոխ են, և երբ արևը սառչի և աստղերն այլևս չփայլեն, մաքրաբարոյությունը դեռևս կլինի Աստծո աշխարհի և Տիրոջ Եկեղեցու հիմնական օրենքը: Հին արժքները պահպանվում են Եկեղեցու կողմից ոչ միայն այն պատճառով, որ դրանք հին են, այլ նրա համար, որ դարերի ընթացքում դրանք ապացուցվել են, որ ճիշտ են: Սա ընդմիշտ կանոն է լինելու» (“President Kimball Speaks Out on Morality,” *Ensign,* Nov. 1980, 95–96):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Պահապան, ի՞նչ կայ գիշերիցը: Մենք պետք է պատասխանենք ասելով, որ ամեն ինչ չէ, որ լավ է Սիոնում: Ինչպես Մորոնին է խորհուրդ տվել, մենք պետք է մաքրենք անոթի ներսը (տես Ալմա 60.23), սկսելով առաջինը մեզանից, ապա մեր ընտանիքներից, և ի վերջո Եկեղեցուց….

Այս սերնդի սեռական անբարոյականությունը համաճարակային մեղքը է: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ սա կլինի ավելի շատ գայթակղությունների, ավելի շատ տառապանքների և ավելի շատ դժվարությունների աղբյուր Իսրայելի երեցների համար, քան որևէ այլ մեղք (տես *Journal of Discourses,* 8:55) :

«Նախագահ Ջոզեֆ Ֆ.Սմիթն ասել է, որ սեռական անմաքրությունը կլինի երեք վտանգներից մեկը, որը կսպառնա Եկեղեցուն ներսից և այդպես էլ կա (տես *Gospel Doctrine,* pp. 312–13.): Այն ներթափանցում է մեր հասարակություն մեջ» (in Conference Report, Apr. 1986, 3, 6; կամ *Ensign,* May 1986, 4):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Մենք ապրում ենք մի աշխարհում, որը լցված է կեղտով և անառակությամբ, մի աշխարհ, որից չարի գարշահոտ է փչում: Այն մեր ողջ շրջապատում է: Այն հեռուստատեսային էկրանին է: Այն կինոֆիլմերում է: Այն հանրածանոթ գրականության մեջ է: Այն ինտերնետում է: Դուք չեք կարող թույլ տալ ձեզ նայել դա, իմ սիրելի ընկերներ: Դուք չեք կարող թույլ տալ, որ այդ կեղտոտ թույնը դիպչի ձեզ: Հեռու մնացեք դրանից: Խուսափեք դրանից: Դուք չեք կարող վարձել տեսաֆիլմեր և դիտել դրանք, երբ դրանք պարունակում են այլասերող բաներ: Երիտասարդ տղամարդիկ, դուք, որ կրում եք Աստծո քահանայությունը, չեք կարող խառնել այս կեղտը սուրբ քահանայության հետ….

Եվ մինչ խոսում եմ այսպիսի հարցերի մասին, ես ուզում եմ շեշտել կրկին պոռնոգրաֆիայի հարցը: Այն դարձել է 10 միլիարդ դոլարանոց արտադրություն Միացյալ Նահանգներում, որտեղ մի քանի մարդիկ հարստանում են հարյուր հազարավորների հաշվին, ովքեր նրանց զոհերն են: Հեռու մնացեք դրանից: Այն հետքրքիր է, բայց այն կկործանի ձեզ: Այն կաղավաղի ձեր զգացումները: Այն ձեր մեջ կստեղծի մի ախորժակ, որ դուք կանեք ամեն ինչ՝ այն բավարարելու համար: Եվ մի փորձեք ստեղծել ընկերություն ինտերնետի և բլոգների միջոցով: Դրանք կարող են տանել ձեզ վար՝ վշտի և դառնության անդունդը….

Երիտասարդ տղամարդիկ, դուք, որ ծրագրում եք միսիա ծառայել, պետք է հասկանաք, որ սեռական մեղքը կարող է ձեզ զրկել այդ հնարավորությունից: Դուք գուցե մտածեք թաքցնել դա: Երկար փորձառությունը ցույց է տվել, որ դուք չեք կարող: Արդյունավետ միսիա ծառայելու համար դուք պետք է ունենաք Տիրոջ Հոգին, իսկ ճշմարտությունը թաքցնելը չի համապատասխանում այդ Հոգուն: Վաղ, թե ուշ դուք ստիպված կլինեք խոստովանել ձեր ավելի վաղ կատարած օրինազանցությունները: Լավ է ասել Սըր Գալաադը. «Ուժս տաս հոգու ուժի չափ է, որովհետև սիրտս մաքուր է» (Alfred, Lord Tennyson, *Sir Galahad* [1842], st. 1):

Իմ սիրելի երիտասարդ ընկերներ սեռական կյանքի վերաբերյալ դուք գիտեք, թե ինչն է ճիշտ: Դուք գիտեք, որ երբ քայլում եք վտանգավոր տարածքով, երբ է շատ հեշտ սայթաքել և ընկնել օրինազանցության փոսը: Ես աղերսում եմ ձեզ՝ զգույշ եղեք, ապահով ետ կանգնեք մեղքի քարափից, որի վրայից այնքան հեշտ է ընկնել: Ձեզ մաքուր պահեք սեռական օրինազանցության խավար և հուսահատեցնող չարիքից: Քայլեք արևալույսի այն խաղաղության մեջ, որը գալիս է Տիրոջ պատվիրաններին հնազանդվելուց:

Այժմ, եթե ձեզանից կան ոմանք, ովքեր անցել են գծի վրայով, ովքեր գուցե արդեն օրինազանցել են, կա՞ որևէ հույս ձեզ համար: Իհարկե կա: Որտեղ որ կա ճշմարիտ ապաշխարություն, այնտեղ կլինի ներում: Այդ գործընթացը սկսվում է աղոթքով: Տերն ասել է. «Ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք» (ՎԱՈՒ 58.42): Կիսեք ձեր բեռը ձեր ծնողների հետ, եթե կարող եք: Եվ անպայման խոստովանեք ձեր եպիսկոպոսին ձեր մեղքը, որը պատրաստ կանգնած է օգնելու ձեզ» (“A Prophet’s Counsel and Prayer for Youth,” *Ensign,* Jan. 2001, 7–8):

Ովքեր ցանկանում են ներքաշվել պոռնոգրաֆիայի մեջ, դա կարողանում են անել շատ հեշտորեն: Նրանք կարող են վերցնել հեռախոսը և հավաքել համարը, որին նրանք

ծանոթ են: Նրանք կարող են նստել համակարգչի առաջ և ինտերնետով նայել այդ անառակությունը:

Վախենում եմ, որ ձեր տներից մի քանիսում դա գուցե տեղի է ունենում: Դա չարիք է, անպարկեշտություն և անբարոյականություն: Այն գայթակղող է և սովորություն առաջացնող: Դա երիտասարդ տղամարդուն կամ կնոջը կարող է տանել դեպի կործանում այնպես անկասկած, ինչպես ցանկացած բան այս աշխարհում: Այն վտանգավոր անառակություն է, որը հարստացնում է արտադրողներին, իսկ զոհերին՝ թշվառացնում:

Ցավում եմ ասել, որ շատ հայրեր իրենք են սիրում լսել և հետևել նրանց, ովքեր պոռնոգրաֆիա են վաճառում: Ոմանք նաև օգտագործում են ինտերնետը նրա համար, ինչն անպարկեշտ է և հեշտասեր: Եթե իմ ձայնի լսելիության սահմաններում կա մի մարդ, որը ներքաշվել է սրա մեջ կամ որը շարժվում է այդ ուղղությամբ, ես աղերսում եմ ձեզ դուրս նետել այն ձեր կյանքից: Հեռացեք դրանից: Հեռու մնացեք դրանից: Այլապես դա կդառնա մոլություն: Այն կկործանի ձեր ընտանեկան կյանքը: Այն կկործանի ձեր ամուսնությունը: Այն կվերացնի բարին և գեղեցիկը ձեր ընտանեկան հարաբերություններից և կփոխարինի դրանք այլանդակությամբ և կասկածանքով:

Երիտասարդ տղամարդիկ, և երիտասարդ կանաք, ովքեր ձեր ընկերուհիներն են, ես աղաչում եմ ձեզ՝ մի պղծեք ձեր մտքերը այս տգեղ և չար բաներով: Այն ծրագրված է ձեր մեջ հետաքրքրություն արթնացնելու, ձեզ կլանելու իրենց ցանցի մեջ: Այն կվերացնի գեղեցիկը ձեր կյանքից: Այն կտանի ձեզ դեպի խավարն ու այլանդակությունը» (in Conference Report, Oct. 2000, 68–69; կամ *Ensign*, Nov. 2000, 51):

Հնազանդության և անհնազանդության հետևանքները

Հակոբ 2.28–29, 33

Նեփիացիներին զգուշացվեց, որ եթե նրանք չապրեն մաքրաբարոյության օրենքով, չէին բարգավաճի երկրում: Մաքրաբարոյության օրենքի խախտումը բերում է «դառն անեծք, մինչև իսկ ի կործանում»:

Հելաման 13.38

Ովքեր որոնում են երջանկություն մարմնական կրքերում, չեն գտնի այն, որովհետև անօրինություն գործելը հակառակ է երջանկության էությանը: Համեմատեք Ալմա 41.10 «Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»:

3 Նեփի 6.16–18

Նեփիացիները այնքան բարոյապես փչացած էին դարձել, որ նրանք «թողնվել [էին] տարվելու դևի գայթակղություններով, ուր որ նա փափագում էր տանել նրանց, և անել ինչ անօրինություն, որ նա փափագում էր, որ նրանք անեին»:

Վարդապետություն և Ուխտեր 121.45

Առաքինությունը միանալով գթության և հավատքի հետ, տալիս է ձեզ վստահություն Աստծո հետ ձեր հարաբերությունում և թույլ է տալիս, որ քահանայության վարդապետությունները «իջնեն ձեր հոգու վրա, ինչպես ցողը երկնքից»:

Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

«Ամենատարածված սեռական մեղքերից, որոնք մեր երիտասարդները գործում են, տարփանքն ու փաղաքշանքն է: Ոչ միայն այս անպատշաճ հարաբերությունները հաճախ տանում են դեպի պոռնկության և վիժեցման, որոնք երկուսն էլ տգեղ մեղքեր են, այլ իրենք ինքնինքստյան դրանք կործանարար չարիքներ են և հաճախ դժվար է երիտասարդների համար զանազանել, թե որտեղ է վերջանում մեկը և որտեղ է սկսվում մյուսը: Դրանք արթնացնում են կիրք և առաջացնում չար մտքեր և սեռական ցանկություններ: Դրանք միմյանց կապված մեղքերի և անհամեստության մի ողջ ընտանիքի ընդամենը մասերն են….

[Համասեռամոլության] այս մեղքի լրջության պատճառով այն խիստ պատիժ է նախատեսում չապաշխարողի համար: Օրինազանցը կարող է հասկանալ, որ բանադրանքն ու եկեղեցուց հեռացումը պատիժն է խիստ փաղաքշանքների, շնության, պոռնկության և համեմատելի մեղքեր, եթե չկա համապատասխան ապաշխարություն, սակայն նա հաճախ ենթադրում է, քանի որ իր գործողությունները չեն կատարվել հակառակ սեռի հետ, նա մեղքի մեջ չէ: Ուրեմն թող հստակորեն հայտարարվի, որ համասեռամոլության մեղքի լրջությունը հավասար է կամ ավելի մեծ է, քան պոռնկությունն ու շնությունը և որ Տիրոջ Եկեղեցին նույնպիսի պատրաստակամությամբ միջոցներ ձեռք կառնի բանադրանքի կամ հեռացման համար, համասեռամոլ չապաշխարողին, ինչպես որ չապաշխարող պոռնկացողի կամ շնացողի դեպքում» (*Miracle of Forgiveness*, 65, 81–82):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Նրանք, ովքեր ծաղրում են ավանդական բարոյական արժեքները, պետք է ականջ դնեն Դուրանքների կողմից տրված պատմության այս դասին.

«Երիտասարդը, որի մեջ եռում են հորմոնները, կզարմանա, թե ինչու նա չպետք է լիակատար ազատություն տա իր սեռական ցանկություններին, և եթե նա չի վերահսկվում ավանդույթով, բարոյականությամբ կամ օրենքներով, նա կարող է կործանել իր կյանքը նախքան նա բավականաչափ կհասունանա հասկանալու, որ սեռական

կյանքը կրակի գետ է, որը պետք է պատնեշվի և հովացվի հարյուրավոր սահմանափակումներով, քանի դեռ չի կործանել ինչպես անձնին, այնպես էլ խմբին» (Will and Ariel Durant, *The Lessons of History* [New York: Simon and Schuster, 1968], pp. 35–36):

Հեշտասիրությունը զգալու կարողության սխալ դրսևորումն է, որպեսզի մարդիկ կորցնեն զգալու ունակությունը: Երեք տարբեր մարգարեներ երեք տարբեր տնտեսություններում սգացին նրանց համար, ովքեր «անզգայացած էին» (տես 1 Նեփի 17.45, Եփեսացիս Դ.19. Մորոնի 9.20)…. Մեծ մեղքը ոչ միայն բթացնում է զգացումները, այն նաև վնասում է մտավոր ունակությունը» (in Conference Report, Apr. 1993, 95; or *Ensign,* May 1993, 77):

Համեստություն

Ա Տիմոթեոս Դ.12

«Օրինակ եղիր հավատցյալներին խոսքով, վարքով, սիրով, հավատքով, սրբությունով»:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ես տրամադրված չեմ քննարկել այս հավաքույթի ժամանակ հասարակական դպրոցներում սեռական դաստիարակության լավ կամ վատ կողմերի մասին: Բայց ես ուզում եմ ասել, որ հակված եմ համաձայնել *USA Today* լրագրից վերջերս կատարված մեջբերման հետ. «Հասարակական դպրոցներում սեռական դաստիարակության ավելացումը չի վերացնի սեռական հեղափոխության վնասակար ժառանգությունը, մինչև որ չլինի պարզ ուղերձ նախաամուսնական մաքրաբարոյության և ամուսնու մենամուսնության վերաբերյալ»…. (Tottie Ellis, "Teaching about Sex Endangers Children," 16 Mar. 1987, p. 12A)» (in Conference Report, Apr. 1987, 58; կամ *Ensign,* May 1987, 47):

Նախագահ Ն. Էլդոն Թաններ

«Հագուստի համեստությունը մտքի և սրտի որակ է, որն առաջանում է իր անձի, իր մերձավորների և մեր բոլորիս Արարչի հանդեպ հարգանքից: Համեստությունն արտացոլում է խոնարհության, օրինավորության և պատշաճության վարքագիծ: Այս սկզբունքներում լինելով հետևողական և առաջնորդվելով Սուրբ Հոգու կողմից, թող ծնողները, ուսուցիչները և երիտասարդները քննարկեն հագուստի, հարդարանքի և անձնական արտաքինի մանրամասները և ազատ կամքով ընդունեն պատասխանատվություն և ընտրեն ճիշտը» ("Friend to Friend," *Friend,* June 1971, 3):

Երեց Լ. Թոմ Փերի

«Նախագահ [Սպենսեր Վ.] Քիմբալը մի հրաշալի ելույթ ունեցավ շատ տարիներ առաջ Բրիգամ Յանգի Համալսարանում, որը կոչվում էր «Մեր սեփական ոճը»: Նա խրախուսեց մեզ չլինել նրանց շարքում, ովքեր հետևում են աշխարհիկ, անհամեստ ոճերի, այլ ունենալ խիզախություն հանգնվելու մի ձևով, որը կուղարկի ուղերձ է, որ մեր չափանիշները տարբեր են: Մեր հագուստը կարտացոլի այն ձևը, որով մենք մտադիր ենք ապրել՝ հաստատված մեր Տիրոջ և Փրկչի ավետարանի սկզբունքների վրա: Անհնար է սպասել, որ երեխան, որին սովորեցրել են սիրել հագնվել ժամանակի անհամեստ ոճական տենդեցներով, մի գիշերվա ընթացքում փոխի իր զգեստապահարանը լիովին տարբեր ոճի, երբ ընդունվի Եկեղեցու համալսարան կամ միսիոներական ուսուցման կենտրոն կամ երբ ամուսնանա տաճարում կամ, նույնիսկ, երբ հագնվի կիրակի օրվա համար: Համեստ, պատշաճ ոճեր պետք է սովորեցնել գրեթե ծնված օրվանից» (in Conference Report, Oct. 1988, 88; կամ *Ensign,* Nov. 1988, 75):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Լքելով համեստության մեծ սկզբունքը, հասարակությունը վճարել է գինը՝ խախտելով մի ավելի մեծ, բայց դրա հետ կապված սկզբունք՝ մաքրաբարոյության սկզբունքը: Անպատասխանատու սեռական հարաբերությունների տեսակետի մատակարարները, որոնք այլասերում և վայրենացնում են մասնակիցներին, լպիրշորեն ձևացնում են և լիովին բաց են թողել այս աստվածային պարգևների նպատակը» (in Conference Report, Apr. 1981, 8; կամ *Ensign,* May 1981, 9):

Համեստություն մտքում

Մոսիա 4.29–30

«Ես չեմ կարող ասել ձեզ բոլոր բաները, որոնցով դուք կարող եք մեղք գործել. Քանզի կան զանազան ուղիներ և միջոցներ, նույնիսկ այնքան շատ, որ ես չեմ կարող թվել դրանք:

Բայց այսքանը ես կարող եմ ասել ձեզ, եթե դուք չհետևեք ինքներդ ձեզ, և ձեր մտքերին, և ձեր խոսքերին, և ձեր արարքներին, և չկատարեք Աստծո պատվիրանները, և չշարունակեք հավատքով առ այն, ինչ լսեցիք մեր Տիրոջ գալստի վերաբերյալ, նույնիսկ մինչև ձեր կյանքի վերջը, դուք պիտի կորչեք: Եվ այժմ, ով մարդ, հիշիր և մի կորչիր»:

Վարդապետություն և Ուխտեր 121.45

«Նաև թող քո որովայնը գթությամբ լցված լինի բոլոր մարդկանց հանդեպ և հավատքի ընտանիքի հանդեպ, և թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար. այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ. քահանայության վարդապետությունը կիջնի քո հոգու վրա, ինչպես ցողը երկնքից»:

Համեստություն խոսքում

Առակաց ԺԵ.26

«Տիրոջը զզվելի են չար մտածմունքները, բայց մաքուր են պարկեշտ խոսքերը»:

Մատթեոս ԺԲ.36

«Ասում եմ ձեզ, թէ ամեն դատարկ խոսքի համար, որ մարդիկ խոսեն՝ դատաստանի օրը համար պիտի տան»:

Համեստություն հագուստի մեջ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Ծայրահեղությունների համար մեղադրվում է ոճը, բայց մենք կրկին զարմանում ենք, թե արդյոք չպետք է լինեն որոշ բավականություններ, սեռական և այլ ձևի բաներում, որոնք թվում են համեստ օրինավորության անխոհեմ արհամարհում: Խիստ բաց լողազգեստները հագնում են ոճի՞, թե ցնցելու կամ հուզելու կամ էլ գայթակղելու համար: Կարո՞ղ է բոլոր այս դրսևորումներում լինել լիակատար անմեղություն և լիակատար համեստություն….

Մենք չենք կարող չգերշեշտադրել անհամեստությունը որպես ծուղակներից մեկը, որից պետք է խուսափել, եթե կամենում ենք հեռու մնալ գայթակղությունից և մեզ մաքուր պահել» (*Miracle of Forgiveness,* 227):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Այժմ դառնանք մարմինը դաջելու խենթությանը: Ես չեմ կարողանում հասկանալ, թե ինչու է երիտասարդ տղամարդը կամ երիտասարդ կինը կամենում ենթարկվել ցավոտ գործընթացի՝ այլանդակելով մաշկը բազմագույն տարբեր մարդկանց, կենդանիների և զանազան խորհրդանիշների պատկերներով: Դաջվածքների դեպքում մեթոդը մնայուն է, մինչև մեկ այլ ցավոտ և թանկարժեք գործընթաց չկիրառվի այն հեռացնելու համար: Հայրեր զգուշացրեք ձեր որդիներին իրենց մարմինը դաջելու դեմ: Նրանք այժմ կդիմադրեն ձեր ասածին, բայց կգա ժամանակ, երբ նրանք շնորհակալություն կհայտնեն ձեզ: Դաջվածքը ձեր մարմնի տաճարի վրա արված գրաֆիտ է:

Նմանապես բազմաթիվ օրերի համար ականջներին, քթին, նույնիսկ լեզվին մարմնի դակումն է: Մի՞թե կարծում են դա գեղեցիկ է: Դա անցողիկ քմահաճույք է, բայց դրա հետևանքները կարող են մնայուն լինել: Ոմանք գնալով այդպիսի ծայրահեղությունների, ստիպված են եղել դիմել վիրահատության՝ օղը հեռացնելու համար: Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը հայտարարել են, որ մենք չենք խրախուսում դաջվածքներ անելը և նաև «մարմինը դակելը, եթե դա բժշկական նպատակներով չէ: Սակայն մենք դեմ չենք «երբ կանայք ծակում են ականջը՝ մեկ զույգ ականջող կրելու համար» (in Conference Report, Oct. 2000, 70–71; or *Ensign,* Nov. 2000, 52):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Ես ցնցված եմ արժանապատվության բացակայությունից, որը երևում է այն ձևից, թե ինչպես են այդքան շատ մարդիկ այժմ հագնվում հասարակության մեջ: Ուշադրություն գրավելու կամ հարմարավետության և ոչ պաշտոնականության անվան տակ շատերը սուզվել են ոչ միայն անհամեստության, այլև թափթփվածության մեջ: Հակառակ գնալով իրենց անձնական շահին, նրանք ուրիշներին ներկայանում են վատթարագույն ձևով» (in Conference Report, Apr. 1981, 8; օկամ *Ensign,* May 1981, 9):

Համեստ վարք

2 Նեփի 15.20

«Վայ նրանց, որ չարը բարի են կոչում և բարին՝ չար, որ խավարը դնում են լույսի տեղ, և լույսը՝ խավարի տեղ, որ դառը դնում են քաղցրի տեղ և քաղցրը՝ դառի»:

Հավատո հանգանակ 1.13

«Մենք հավատում ենք ազնիվ, ճշմարիտ, մաքրաբարո, բարյացակամ, առաքինի լինելուն և բոլոր մարդկանց բարիք անելուն: Իրավ կարող ենք ասել, որ մենք հետևում ենք Պողոս Առաքյալի հորդորանքին. ամեն բանի հավատում ենք, ամեն բանի համար հույս ունենք, համբերել ենք շատ բաների և հույս ունենք, որ կկարողանանք համբերել բոլոր բաներին: Եթե մի բան առաքինի է, գեղեցիկ, բարեհամբավ, գովեստի արժանի,- մենք ձգտում ենք այդ ամենին»:

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Համեստությունը հագուստում և խոսքում և շարժուձևում զարգացման ճշմարիտ նշան է և առաքինի Վերջին Օրերի Սուրբ կանանց բնորոշ հատկանիշ: Հեռու մնացեք ստորից, գռեհիկից ու անպարկեշտից» (“To the Young Women of the Church,” *Ensign,* Nov. 1986, 83):

ՀԱԳԵՔ ԱՍՏԾՈ ՈՂՋ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ Հարոլդ Բ. Լի

Եկեղեցու Նախագահ

Stand Ye in Holy Places: Selected Sermons and Writings of President Harold B. Lee, 330–39

Պողոս Առաքյալը ցույց է տալիս ոգեշնչված ուսուցչի մեծ ունակություն, երբ նա պատկերում է մեզանից յուրաքանչյուրին որպես ռազմիկ հագած հիմնական զրահ՝ պաշտպանելու մարդկային մարմնի չորս մասերը, որոնք հավանաբար սատանան և նրա զորքը իրենց զգոն հետախուզական համակարգով գտնում են ամենախոցելի մասերը, որոնց միջոցով արդարության թշնամիները կարող են ներթափանցել և ներխուժել մարդկային հոգի: Ահա նրա ոգեշնչված ուսմունքները.

«Արդ հաստատ կանգնեցէք ձեր մեջքերը ճշմարտութեամբ գոտեւորուած, եւ արդարութեան զրահը հագած,

Եւ ձեր ոտները կոշիկ հագած խաղաղութեան աւետարանի պատրաստութիւնովը:

Եւ փրկութեան սաղավարտն առէք…» (Եփեսացիս Զ.14–15, 17):

Դուք ուշադրություն դարձրեցի՞ք ձեր մարմնի այն չորս մասերին, որոնք պետք է պաշտպանել.

1. Ձեր մեջքերը գոտևորված:
2. Ձեր զրահը ձեր սրտի վրա հագած:
3. Ձեր ոտները կոշիկ հագած:
4. Ձեր գլխին սաղավարտ:

Այս հրահանգները ամբողջական նշանակություն են ստանում, երբ հիշում ենք, որ մեջքը մարմնի այն մասն է ներքևի կողոսկրերի և կոնքերի միջև, որտեղ տեղադրված են կենսական ծննդաստեղծ օրգանները և նաև որ սուրբ գրություններում և այլ ոգեշնչված գրվածքներում մեջքը խորհրդանշում է առաքինություն կամ բարոյական մաքրություն և կենսական ուժ: Սիրտը ներկայացնում է մեր ամենօրյա վարմունքը կյանքում, քանզի ինչպես ուսուցանել է Վարդապետը.

«….սրտի ավելացածիցը կխոսի բերանը: Բարի մարդը …բարիքներ կհանէ, եւ չար մարդը…. չար բաներ կհանէ» (Մատթեոս ԺԲ.34–35):

Ոտքերը խորհրդանշում են ընթացքը, որով դուք գնում եք կյանքի ճամփորդությունում: Գլուխն իհարկե ներկայացնում է ձեր միտքը:

Իսկ այժմ հատուկ ուշադրություն դարձրեք այն նյութին, որից ձեր զրահի տարբեր մասերը պետք է ձևավորվեն:

Ճշմարտությունը պետք է լինի այն նյութը, որից ձեր մեջքի գոտին պետք է կազմվի, եթե ձեր առաքինությունը և կենսական ուժը պետք է պահպանվեն: Ինչպե՞ս կարող է ճշմարտությունը պաշտպանել ձեզ բոլոր չարիքներից ամենամահացու չարիքից՝ անմաքրաբարոյությունից: Առաջինը ճշմարտության սահմանումը. Ճշմարտությունը գիտելիք է, ինչպես Տերն է ասել մեզ. «Ճշմարտություն է բաների մասին, ինչպես որ կան, և ինչպես որ կային, և ինչպես որ կլինեն» (ՎԱՈՒ 93.24): Այժմ մտածեք մի քանի րոպե հիմնական գիտելիքի մասին, որը փախուստի կմատնի երիտասարդության մշտակա թշնամուն՝ անբարոյականությանը:

Տղամարդը և կինը Աստծո ժառանգն են և ստեղծված են Նրա իսկ պատկերով և նմանությամբ՝ որպես մահկանացու էակներ: Մեր առաջին մահկանացու ծնողներին տրված առաջին պատվիրաններից մեկը՝ «շատանալ և լցնել երկիրը», կրկնվել է որպես սրբազան հրահանգ յուրաքանչյուր հավատարիմ և ճշմարիտ Վերջին Օրերի Սուրբ երիտասարդ տղամարդուն և երիտասարդ կնոջը, ովքեր ամուսնացել են սուրբ ամուսնությամբ: Ծնող դառնալու այս սրբազան նպատակն իրականացնելու համար, մեր Արարիչը դրել է յուրաքանչյուր հավատարիմ տղամարդու և կնոջ կրծքում փոխադարձ ուժեղ գրավչություն միմյանց հանդեպ, որ ծանոթությունը հասունանա դառնալով ընկերություն, այնուհետև սիրատածման սիրավեպ և ի վերջո հասունանա դառնալով երջանիկ ամուսնություն: Բայց այժմ նկատի առեք, *երբեք ոչ մի անգամ Աստված այդպիսի հրաման չի արձակել չամուսնացած մարդուն:* Իսկապես, ընդհակառակը նա գրել է դա հանցագործության տասը պատվիրանների վերին տեղում և աստվածային կարգադրությամբ միայն երկրորդ տեղում դրել այն՝ սպանությունից հետո. «Շնություն մի անիր» (որը անկասկած մեկնաբանվում է նշանակելով բոլոր անօրեն սեռական հարաբերությունները, քանի որ Վարդապետը փոխարինաբար օգտագործել է *շնություն* և *պոռնկություն* բառերը սեռական անմաքրությունը սահմանելու համար, և այն խստորեն դատապարտվել է յուրաքանչյուր տնտեսությունում եկեղեցու լիազորված առաջնորդների կողմից):

> ***Մեր միտքը…. միշտ պետք է գնահատի գիտելիքը ավետարանի չափանիշով՝ Արդյոք դա ճշմարի՞տ է: Դա վեհացնո՞ղ է:***

Նրանք, ովքեր իրենց արժանի են դարձնում և մտնում ամուսնության նոր և հավերժական ուխտի մեջ տաճարում ժամանակի և ողջ հավերժության համար, կդնեն հավերժական ընտանիքի առաջին անկյունաքարը սելեստիալ արքայությունում, որը կտևի հավերժ:

Նրանց վարձքն է ունենալ «փառք ավելացված իրենց գլխին հավիտյանս հավիտենից»: Այս հավերժական ճշմարտությունները, եթե դուք հավատում եք դրանց ձեր ողջ հոգով, կլինի որպես զրահե գոտի ձեր մեջքի շուրջը պահպանելու ձեր առաքինությունը, երբ դուք կամենաք պաշտպանել ձեր կյանքը:

Բայց այժմ կրկին կարո՞ղ եմ ձեզ պահակ դնել սատանայի մեթոդների դեմ, որոնք գործադրվում են փորձելով կործանել ձեզ: Տերը ճշմարտության սահմանումը տալուց հետո, որը մեջ բերվեց վերևում, ասաց սա. «Եվ ինչ որ սրանից ավել կամ պակաս է, այն ամբարիշտ մեկի ոգին է, որն ի սկզբանե ստախոս էր» (ՎԱՈՒ 93.25):

Երբ ձեզ հուշվում է հագուստի մեջ անհամեստություն կամ անմաքուր կամ անպարկեշտ խոսելաձև կամ էլ լկտի վերաբերմունք ձեր սիրատածման ընթացքում, դուք խաղում եք սատանայի խաղը և դառնում զոհ նրա ստախոս լեզվին: Ճիշտ նույն ձևով, եթե դուք թույլ եք տալիս մարդկանց սին ուսմունքները ստիպեն ձեզ կասկածել Աստծո հետ ձեր հարաբերությանը, ամուսնության աստվածային նպատակներին և հավերժության համար ձեր ապագա հեռանկարներին, դուք զոհ եք դառնում ստերի վարպետին, որովհետև այս բոլորը հակառակ է ճշմարտությանը, որը փրկում է ձեզ այս վտանգներից:

Այժմ ինչ կասեք վահանի մասին, որը կպահպանի ձեր սիրտը կամ ձեր վարքը կյանքում: Պողոս Առաքյալն ասում է, որ վահանը պետք է պատրաստվի մի նյութից, որը կոչվում է արդարություն: Արդար մարդը չնայած գերադաս է իր ընկերներից, ովքեր արդար չեն, խոնարհ է և չի ցուցադրում իր արդարությունը մարդկանց երևալու համար, այլ թաքցնում է իր առաքինությունները, ինչպես նա համեստորեն կթաքցներ իր մերկությունը: Արդար մարդը ձգտում է ինքնակատարելագործման իմանալով, որ ինքն ապաշխարության ամենօրյա կարիք ունի իր սխալների և բացթողումների համար: Նա այնքան էլ շատ չի մտահոգվում այն մասին, թե ինչ կարող է ստանալ, այլ ավելի շատ մտահոգվում է, թե ինչքան շատ կարող է տալ ուրիշներին, իմանալով որ միայն այդ ուղու վրա կարող է գտնել իսկական երջանկություն: Նա ջանում է դարձնել յուրաքանչյուր օրը իր գլուխգործոցը, որպեսզի գիշերվա մոտ նա կարողանա վկայել իր հոգում և իր Աստծուն, որ ինչ որ եկել է իր ձեռքից այդ օրը նա արել է իր կարողության լավագույնով: Նրա մարմինը չի վատնվում և թուլանում բեռներից, որոնք դրվում են անառակ կյանքի պահանջներից, նրա դատողությունը չի խաթարվում երիտասարդության խենթություններից, նրա տեսողությունը հստակ է, միտքը սուր է և մարմինը՝ ուժեղ: Արդարության վահանը տվել է նրան «տաս հոգու ուժ, որովհետև նրա սիրտը մաքուր է»:

Բայց շարունակենք ձեր զրահի մյուս մասի վերաբերյալ: Ձեր ոտքերը, որոնք պետք է ներկայացնեն ձեր նպատակները կամ նպատակակետերը կյանքում, պետք է կոշիկ հագնեն: Կոշիկ հագած ինչո՞վ: «Կոշիկ հագած խաղաղութեան աւետարանի պատրաստութիւնովը»: Առաքյալը, որը գրել է այդ արտահատությունը անկասկած գիտեր կյանքը իրական փորձառությունից ելնելով «խաղաղութեան աւետարանի պատրաստութիւնովը»: Նա գիտեր, որ պատրաստվածությունը դեպի հաղթանակ տանող ուղին էր, և որ «հավերժական զգոնությունը անվտանգության գինն է»: Վախը անպատրաստվածության պատիժն է և հնարավորության ժամանակ աննպատակ թրև գալն է: Լինի խոսքում, թե երգում, ֆիզիկական, թե բարոյական մարտում, հաղթանակը պատկանում է նրան, ով պատրաստված է:

Հին փիլիսոփաները հասկանում էին այս պատրաստվածությունը կյանքի ձևավորման սկզբում ունենալու կարևորությունը, քանի որ մեզ հորդորվում է. «կրթիր երեխային իր ճանապարհին համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանալ նորանից» (Առակաց ԻԲ.6): Այս նույն ճշմարտությունը մատնանշելով մի հին ասացվածք հայտարարում է. «Եթե դուք հետևում եք գետին, դուք կհասնեք ծով», իսկ մեկ այլ ասացվածքնախազգուշացնում է. «Հեշտ ուղուն նվազագույն չափով հետևելը մարդկանց և գետերը դարձնում են ծռված»:

Հիսուս Քրիստոսի ավետարանում մամնավորված են պարզ ժխտական կազադրություններ, որոնք տրվել են աստվածայնորեն Իսրայելի մեծ օրենսդիրին՝ Մովսեսին. «Մի….», որոնց հետագայում հետևեցին Սարի Քարոզի դրական հայտարարությունները, որոնք ուրվագծում են մի ճշմարիտ ուղեցույց կյանքի ընթացքում ձեր ուղու համար: Ավետարանի ծրագիրը խրախուսում է մեզ շարունակ աղոթել, ուղիղ քայլել, հարգել մեր ծնող լինելը, սուրբ պահել հանգստության օրը, և հեռու մնալ ծուլությունից: Երջանիկ է նա, ում ոտքերը կոշիկ են հագած այս ուսմունքների պատրաստությունով իր մանկությունից սկսած՝ չար օրվանը դիմակայելու համար: Նա գտել է խաղաղության ուղին «հաղթելով աշխարհին»: Նա իր տունը շինել է ժայռի վրա, և երբ փոթորիկները գան, անձրևները հարվածեն տանը, այն չի կործանվի, որովհետև այն հաստատված է ժայռի վրա (Տես Մատթեոս Է.24–25): Այդպիսին չի վախենում, նա չի հաղթվի անակնկալ հարձակումից, քանի որ նա պատրաստ է ցանկացած արտակարգ իրավիճակի՝ նա պատրաստված է:

Եվ այժմ ի վերջո մարգարե ուսուցչի զրահավորված հագուստի վերջին մասը: Մենք սաղավարտ կդնենք գլխին: Մեր գլուխը կամ մեր բանականությունը մեր մարմնի վերահսկող անդամն է: Այն պետք է լավ պաշտպանված լինի թշնամու դեմ, «Որովհետեւ նա ինչպէս որ իր սրտումը հաշիվներ անողն է՝ այնպես է» (Առակաց ԻԳ.7): Բայց այժմ որպեսզի այս սաղավարտն արդյունավետ լինի, այն պետք է լինի գերազանց կառուցվածքով: Այն պետք է լինի գերգերազանց նյութից, որպեսզի արդյունավետ լինի ամեն արդարության անտեսանելի թշնամու հետ մեր հավերժական պայքարում: Մերը պետք է լինի «փրկության սաղավարտ»: Փրկություն նշանակում է հավերժական իրավունքի

ձեռքբերում՝ ապրելու Հայր Աստծո և Որդու ներկայության մեջ՝ որպես վարձք մահկանացու մարմնում լավ կյանքի համար:

Ընդմիշտ ունենալով փրկության նպատակը մեր մտքի աչքում որպես նվաճման ծայրակետ, մեր մտածողությունը և մեր որոշումները, որոնք որոշում են մեր գործողությունները միշտ մարտահրավեր կնետեն բոլոր այն բաներին, որոնք վտանգի կենթարկեն այդ փառահեղ ապագա վիճակը: Կորած է իսկապես այն հոգին, որը բանականորեն առանց «փրկության սաղավարտի» է, որն ասում է նրան, որ մահը վերջն է, և որ գերեզմանը կյանքի վրա հաղթանակն է և բերում է հույսերի, ձգտումների, և կյանքի ձեռքբերումների պարտություն: Այդպիսի մեկը գուցեև եզրակացնի, որ նա ևս կարող է «ուտել, խմել և ուրախ լինել, քանի որ վաղը մենք մեռնելու ենք»:

Եզրակացությունը, որին հանգեց նշանավոր հոգևորականներից կազմված մի հանձնաժողով, որին հանձնարարվել էր հետազոտել «ուսանողների ինքնասպանությունների» ալիքի պատճառը ողջ երկրով մեկ մի քանի տարի առաջ, շատ կարևոր էր: Նրանց հայտնագործությունների ամփոփագիրը հայտարարում էր. «Ինքնասպանություն գործած այդ ուսանողների փիլիսոփայությունն այնպիսին էր, որ նրանք երբեք լուրջ չէին մոտեցել կրոնին, և երբ եկավ քննությունը, նրանք ոչինչ չունեին ամուր կառչելու համար»:

Ի հակադրություն այդ ողբերգական պատկերի, ով վստահորեն սպասում է մահկանացու կյանքում իր ջանքերի համար հավերժական վարձքի, անընդհատ հաստատվում է իր ամենածանր փորձությունների ընթացքում, երբ նրա բանկը սնանկանում է, նա ինքնասպան չի լինում, երբ նրա սիրելին է մահանում, նա չի հուսահատվում, երբ պատերազմն ու ավերումը ցրիվ է տալիս նրա կարողությունը, նա չի փոխվում: Նա ապրում է իր աշխարհից վեր և երբեք տեսադաշտից չի կորցնում իր փրկության նպատակը:

Մեր բանականությունն այսպես պաշտպանված լինելով, միշտ պետք է գնահատի գիտելիքը ավետարանի չափանիշով: Արդյոք դա ճշմարի՞տ է: Արդյոք դա վեհացնո՞ղ է: Արդյոք դա օգտակա՞ր է մարդկությանը: Կյանքի ընտրություններում՝ մեր ընկերների, մեր կրթության, մեր մասնագիտության, մեր ամուսնական զուգընկերոջ, բոլոր այս բաները և մյուս բաները պետք է արվեն աչքով ուղղված դեպի հավերժական կյանքը: Մեր մտքերը պետք է «արևի շողերի համն» ունենան, եթե մեր ընկերակցությունը ոգեշնչող և վեհացնող լինի: Եթե մենք կամենում ենք հեռու մնալ սպանությունից, մենք պետք է սովորենք չբարկանալ, եթե կամենում ենք ազատվել սեռական մեղքից, մենք պետք է սովորենք վերահսկել անբարոյական մտքերը, եթե կամենում ենք խուսափել գողության համար բանտարկվելու պատժից, մենք պետք է սովորենք չցանկանալ: Այդպես է ուսուցանել Հիսուսը՝ Վարդապետ Ուսուցիչը և մեր Փրկիչը: (Տես Մատթեոս Ե.21–28:)

«Ախ, այդ խորամանկ ծրագիրը այն չար մեկի: Ախ, սնափառությունը, անկայունությունը և հիմարությունը մարդու: Երբ նրանք ուսյալ են, նրանք կարծում են, թե իմաստուն են, և նրանք չեն լսում Աստծո խորհուրդը, քանզի նրանք այն մի կողմ են դնում՝ ենթադրելով, որ իրենք իմանում են ինքնուրույն, ուստի նրանց իմաստությունը հիմարություն է, և այն նրանց օգուտ չի բերում: Եվ նրանք կկորչեն»: (2 Նեփի 9.28)

Ուխտի զավակները, ովքեր իրենց գլխին ունեն փրկության սաղավարտը այդպիսին չեն: Նրանց հասանելի է հաղթողի ցնծությունը:

Բայց կարո՞ղ եմ ձեր ուշադրությունը հրավիրել մի կարևոր փաստի վրա այն սպառազինության վերաբերյալ, որով դուք այժմ զգեստավորվել եք: Դուք զրահ չունեք, որով կարողանաք պաշտպանվել թիկունքից: Արդյոք սա հուշո՞ւմ է մեկ ուրիշ հատկանիշի մասին ևս, որը այս հավերժական պայքարում կարևոր է «բարձր տեղերում հոգևոր ամբարշտության» վերաբերյալ: Ակնհայտորեն ոչ մեկը չի կարող հաղթել այս ճակատամարտը թշնամուց փախչելով: Պայքարը պետք է լինի դեմ առ դեմ: Չպետք է լինի նահանջ: Այդպես եկավ Առաջին Նախագահության պարզ խորհուրդը մեր տղաներին վերջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ. «Տղաներ ձեզ մաքուր պահեք: Ավելի լավ է մաքուր մեռնեք, քան անմաքուր տուն գաք»: Քաջությունն ու վճռականությունը և ճշտի հանդեպ անընդհատ հաստատակամությունը կյանքի ճակատամարտի հիմնական հատկանիշներն են, այլապես աշխարհում մեր պաշտպանության համար տրված ողջ սպառազինությունը ոչնչի պիտանի չի լինի: Այսպիսով զինված լինելով ներսից և դրսից, մենք այժմ պատրաստ ենք:

Բայց մի պահ սպասեք: Մենք արդյոք չպիտի՞ ունենանք զենքեր, որոնցով կկռվենք: Միթե՞ մենք պետք է լինենք ուղղակի նշանակետեր թշնամու հարձակման համար: Եկեք կարդանք այժմ, թե ինչ ասաց Պողոսը՝ մեծ առաքյալ ուսուցիչը, մեր զենքերի վերաբերյալ.

«Եվ ամենի վերայ հավատքի վահանն առեք. Որով կարող լինիք չարի ամեն կրակոտ նետերը հանգցնել:

Եվ…. Հոգու սուրը՝ որ Աստուծոյ խոսքն է» (Եփեսացիս Զ. 16–17):

Հավատքով ենք հաղթահարում ամենօրյա խոչընդոտներն ու հոսախաբությունները:

Կարո՞ղ եմ փորձել նկարագրել համառոտ, հավատքի այդ վահանը: Հավատքը Աստծո պարգևն է և օրհնված է այն մարդը, ով ունի այն: «Նա, ով կրում է ճրագը չի հուսահատվի,- գրել է արդյունաբերության մեծ առաջնորդներից մեկը, գործարարության ճգնաժամի հետ կապված, -անկախ նրանից,

թե որքան խավար է գիշերը: Այդ ճրագը ես կոչում եմ հավատք»: Պատկերացրեք, մենք քննում ենք կյանքի մի քանի խնդիրներ ուղղակի տեսնելու, թե որքան արդյունավետ կարող է լինել հավատքի վահանը:

Ինչի՞ մենք կարող ենք նմանեցնել թշնամական ուժերի մեծ «աքցանաձև շարժումը», որն ուզում է մեզ շրջափակել, մենք լցվում ենք այն գաղափարով, որ մենք կարող ենք ստանալ «ինչ որ բան ոչինչի դիմաց»: Երբ ներկա մոլեգին սոցիալական հակասության ծուխը մաքրվի և դրա պատճառած կոտորածը խնամքով հաշվարկվի, մենք կրկին կհամոզվենք, որ չենք կարող ստանալ ինչ որ բան ոչնչի դիմաց և շարունակել բարգավաճել, և որ վերցնելու փոխարեն տալու սովորույթը երջանկության ուղին է: Այդ ժամանակ փորձված և վստահելի առաքինությունների՝ խնայողության, ինքնազոհողության և չափավորության հանդեպ մեր հավատքը կհաղթի անխոհեմ ծախսելուն, եսասիրությանը և սովորական քաղաքացիական արժանիքների և բարոյականության պարկեշտ չափանիշների արհամարհանքին:

Մեր ռահվիրա հայրերի հավատքն էր, որ հուշեց նրանց, երբ նրանք ճամբար խփեցին սկսելու նոր բնակավայրխոնարհ աղոթքով խնդրելով Ամենազոր Աստծո օրհնությունները իրենց ջանքերում: Նրանք աղոթեցին, որ անձրևներ տեղային, հողը բերրի լիներ, պաշտպանություն ունենային կործանարար ուժերի դեմ, որ նրանց բույսերն աճեին և որպեսզի բերք հավաքեին: Երբ առատ բերք ստացան, նրանք շնորհակալություն հայտնեցին Աստծուն, իրենց սիրելիների պաշտպանության համար, նրանք գոհություն հայտնեցին Ամենկարող Ուժին մահվան և վշտի, ջրհեղեղների և փոթորիկների ժամանակ, նրանք տեսան ինչպես է գործում Աստվածային Կամքը: Այդպիսի հավատքից նրանց և նմանապես ձեր մեջ կարող է ծնվել մի համոզմունք, որ «Տիրոջ հետ մարդը կարող է ցանկացած քննություն անցնել»:

Եթե մենք հավատում ենք Մեծ Արարչի հետ ազգակցությանը, մենք ընդունում ենք այդ նույն նշանաբանով մեր հարաբերությունը մարդու հետ: Այդպիսի հավատքը հեռացնում է ատելությունը պատերազմի ժամանակ և փոխարինում մեր թշնամու հանդեպ համակրանքով, մարդկային հասարակության նախանձն ու խանդը դառնում են հավատքի ճերմակ լույսի մեջ ուղղակի աճող ցավեր ընտանիքի զավակների մեջ, ովքեր մեծանում են հասունանալով և գալով ավելի լավ հասկացողության, թե ինչպես որպես մեծահասակներ պետք է իրենք գործեն: Հավատքով մենք հաղթահարում ենք ամենօրյա խոչընդոտները և հուսախաբությունները, իսկ մեր պարտությունները մենք այսպիսով մեկնաբանում ենք որպես անհրաժեշտ՝ մեր կյանքի փորձի և զարգացման համար, մենք հասկանում ենք, որ իր իսկ ռեսուրսների վրա գցված լինելը նշանակում է գցված լինել բախտի գոգին, երբ ձեր ունակությունները ենթարկվում են անսպասելի զարգացման: Հավատքով մենք դառնում ենք ռահվիրաներ դեռ չծնված սերունդների համար և մեզ ուրախ զգում՝ մտածելով ծառայության մասին, որ մենք կարող ենք մատուցել մեր մերձավորներին, չնայած վարձքը կարող է լինել ընդամենը նահատակի պսակ:

Այժմ ուշադրություն դարձրեք, թե ինչպես են միասին աշխատում «հավատքի վահանը» և «Հոգու սուրը՝ որ Աստուծոյ խոսքն է», կատարելապես համակարգված որպես զենքեր մեկի ձեռքում, ով իր վրա ունի «արդարության զրահը»: Սուրբ գրությունները հայտարարում են՝ «Հավատքը լսելուցն է, եւ լսելը՝ Աստուծոյ խոսքիցը» (Հռովմ. Ժ.17): Ճիշտ ինչպես մեկը ձեռնամարտում միայն վահանով և առանց սրի շուտով կպարտվի, ճիշտ նույնպես էլ առանց Աստծո խոսքի սուրբ գրություններից և հայտնության, մեր հավատքը թույլ է դառնում ժամանակակից կործանարարների առջև, որոնք իրենց կոչում են «լիբերալներ»: Հավատքով պաշտպանված պատվիրանները, որոնք հայտնի են որպես Տասը պատվիրաններ Սինայ սարից, փիլիսոփայի տափակաբանությունից ուղղակի փոխակերպվում են բարձրից որոտաձայն իշխանության, իսկ սուրբ գրությունների ուսմունքները դառնում են Աստծո հայտնված խոսքը առաջնորդելու մեզ դեպի մեր սելեստիալ տուն: Հնազանդությունը քաղաքացիական օրենքին կդառնա բարոյական և կրոնական պարտականություն, ինչպես նաև քաղաքացիական պարտք, եթե մենք հավատանք, որ «իշխանություններն Աստուածանից են կարգուած: Ուրեմն իշխանութեանը հակառակողը Աստուծոյ հրամանին է հակառակում….» (Հռովմ. ԺԳ.1–2):

Աստծո խոսքով զինված երիտասարդի ձախողված երազանքները և հուսախաբությունները, որոնք առաջանում են պատերազմի սթրեսներից և կենսական ուժերից մեզ չեն դառնացնում կամ շնչահեղձ անում մեր ձգտումները կամ հուշում մեզ մեր հուսահատության պահին աղաղակել վիատված «Օհ, ի՞նչ օգուտ»: Առաջնորդվելով հավատքով՝ ուսուցանված լինելով Աստծո խոսքով, մենք տեսնում ենք կյանքը որպես հոգին վարժեցնելու մեծ գործընթաց: Սիրառատ Հոր մշտարթուն աչքի ներքո մենք սովորում ենք «այն բաներից, որոնցից մենք տառապում ենք», մենք ուժ ենք ձեռք բերում հաղթահարելով խոչընդոտները, և մենք հաղթահարում ենք վախը հրճվալից հաղթանակով այն տեղերում, որտեղ վտանգ է թաքնված: Հավատքով, ինչպես Աստծո խոսքն է սովորեցնում, մենք հասկանում ենք այն, ինչ նպաստում է կյանքում Հիսուսի բարձր չափանիշին. «Արդ դուք կատարեալ եղիք, ինչպէս ձեր Հայրը որ երկնքում է, կատարեալ է» (Մատթեոս Ե.48),- մեր օգտի համար է և մեր հավերժական շահի համար, չնայած այդ կաղապարման մեջ կարող է լինել ամենագետ Աստծո խիստ խրատը. «Որովհետեւ Տէրը իրան սիրածին խրատում է. նա ծեծում է ամեն որդի որ ընդունում է» (Եբրայեցիս ԺԲ.6):

Այսպիսով ուսուցանվելով և հավաքվելով խավարի զորությունների և հոգևոր ամբարշտության դեմ պայքարի համար, մենք գուցե «ամեն բանի մէջ նեղուած ենք, բայց չենք ճնշուած. կարոտ ենք, բայց չենք տարակուսել. Հալածուած, բայց երեսից չընկած. վայր ընկած, բայց չկորած» (Բ Կորնթացիս Դ.8–9):

«Գիշերն անցավ գնաց, եւ ցերեկը մօտեցել է. ուրեմն դէն գցենք խաւարի գործերը, և հագնենք լոյսի զէնքերը:

Ինչպէս ցերեկումը՝ պարկեշտութեամբ ման գանք. ոչ թէ անառակութիւններով եւ արբեցութիւններով և խառն անկողիններով եւ պղծութիւններով, ոչ հակառակութիւնով եւ ոչ նախանձով» (Հռովմայեցիս ԺԳ.12–13):

Սիոնի երիտասարդներ, հագեք Աստծո ողջ սպառազինությունը:

ՄԱՔՐԱԲԱՐՈՅՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

Եկեղեցու Նախագահ

In Brigham Young University 1987–88 Devotional and Fireside Speeches, 51–54

Մի խաբվեք սատանայի ստերով: Չկա հարատև երջանկություն անբարոյականության մեջ: Չի կարելի ուրախություն գտնել մաքրաբարոյության օրենքը խախտելով: Ճիշտ հակառակն է ճշմարիտ: Կարող է լինել վայրկյանական հաճույք: Մի պահ կարող է թվալ, որ ամեն ինչ հրաշալի է: Բայց հարաբերությունները արագ կվատթարանան: Ներս կմտնի հանցանքն ու ամոթը: Մենք վախենում ենք, որ մեր մեղքերը կհայտնաբերվեն: Մենք պետք է գողեգող գնանք և թաքնվենք, ստենք և խաբենք: Սերը սկսում է մահանալ: Դառնությունը, խանդը, զայրույթը և նույնիսկ ատելությունը սկսում է աճել: Բոլոր այս բաները մեղքի և օրինազանցության հետևանքներն են:

Մյուս կողմից, երբ մենք հնազանդվում ենք մաքրաբարոյության օրենքին և մեզ պահում բարոյապես մաքուր, մենք կզգանք օրհնությունները՝ աճող սեր և խաղաղություն, ավելի մեծ վստահություն և հարգանք մեր ամուսնական զույգի հանդեպ, ավելի մեծ պարտավորվածություն միմյանց հանդեպ և ուստի ուրախության և երջանկության խորը և էական զգացում:

Մենք չպետք է մոլորվենք մտածելով, որ այս մեղքերը փոքր են կամ, որ այդ հետևանքները այդքան էլ լուրջ չեն: Անմաքրաբարո լինելու ամենազգաստացնող մտքերից է Ալմայի խոսքը իր որդի Կորիանթոնին. «Չգիտե՞ս, որդիս, որ այս բաները պղծություն են Տիրոջ աչքում, այո, *ամենապիղծը բոլոր մեղքերից*, բացի դա լինի անմեղ արյուն թափելը կամ Սուրբ Հոգին ուրանալը» (Ալմա 39.5, շեշտադրումն ավելացված է): Մեզանից շատ քչերը երբևէ հանցավոր կլինեն սպանության կամ Սուրբ Հոգու դեմ մեղքի մեջ: Բայց մաքրաբարոյության օրենքը հաճախ խախտվում է և այնուամենայնիվ այս մյուս մեղքերից հետո այն հաջորդն է իր լրջությամբ Տիրոջ աչքում:

Սիրելի եղբայրներ և քույրեր, արդյոք մենք ապրո՞ւմ ենք համաձայն այս սուրբ գրությունների: Արդյոք մենք հստակորեն հասկանո՞ւմ ենք սեռական մեղքերի լրջությունը: Արդյոք մենք մշտապես շեշտո՞ւմ ենք այն օրհնությունները, որոնք գալիս են այդ օրենքին հնազանդվելուց: Ես ասում եմ կրկին ինչպես ասել են ինձանից առաջ բոլոր մարգարեները, կա առաքինության և մաքրաբարոյության մեկ չափանիշ, և ակնկալվում է, որ բոլորը հավատարիմ մնան դրան: Այն ինչ Տերն ասում է մեկին, նա ասում է բոլորին. «Եվ դուք պետք է անդադար առաքինություն և սրբություն գործադրեք իմ առաջ» (ՎԱՌՒ 46.33):

Վեց քայլեր նախապատրաստելու և կանխարգելելու համար

Կա մի հին ասացվածք, որն ասում է. Ավելի լավ է նախապատրաստել և կանխագելել, քան վերնորոգել և ապաշխարել: Որքան ճիշտ է դա մաքրաբարոյության օրենքի վերաբերյալ: Պաշտպանության առաջին գիծը մեզ բարոյապես մաքուր պահելուն նախապատրաստելն է՝ գայթակղությանը դիմադրելու և մեղքի մեջ ընկնելուց մեզ կանխարգելելու համար:

Նրանց համար, ովքեր անբիծ են և մաքրաբարո, կարո՞ղ եմ տալ վեց քայլեր, որոնք նախապատրաստության և կանխարգելման քայլեր են, քայլեր, որոնք կապահովեն, որ դուք երբեք չընկնեք օրինազանցության մեջ:

1. *Այժմ որոշեք լինել մաքրաբարո:* Մաքրաբարո և առաքինի լինելու որոշումը պետք է միայն մեկ անգամ ընդունել: Ընդունեք այդ որոշումը այժմ և թող այն լինի այնքան ամուր և այնպիսի խորը պարտավորությամբ, որ այն երբեք չխախտվի: Մի սպասեք, մինչև դուք կայանված մեքենայի մեջ հայտնվեք կամ էլ ընկնեք փոխզիջման իրավիճակում՝ որոշելու մաքրաբարո լինել: Որոշեք այժմ:
2. *Վերահսկեք ձեր մտքերը:* Ոչ ոք չի ընկնում անբարոյականության մեջ մեկ ակնթարթում: Անբարոյականության առաջին սերմերը միշտ ցանվում են մտքում: Երբ մենք թույլ ենք տալիս, որ մեր մտքերը պտտվեն անպարկեշտ կամ անբարոյական բաների վրա, առաջին քայլը դեպի անբարոյականության ուղին կատարված է: Ես առանձնապես զգուշացնում եմ ձեզ պոռնոգրաֆիայի չարիքների դեմ: Կրկին և կրկին մենք լսում ենք նրանցից, ովքեր ընկել են խորը մեղքի մեջ, որ հաճախ առաջին քայլը դեպի օրինազանցության

ճանապարհը սկսվում է պոռնոգրաֆիկ նյութերից: Փրկիչը սովորեցրեց, որ նույնիսկ, երբ տղամարդը նայում է կնոջ վրա տենչալով նրան, կամ այլ խոսքով, երբ նա թույլ է տալիս իր մտքերը վերահսկողությունից դուրս գան, նա արդեն իր սրտում շնություն է գործել նրա հետ (տես Մատթեոս Ե.28, ՎԱՈ 63.16):

3. *Միշտ աղոթեք գայթակղությանը դիմադրելու ուժի համար:* Գայթակղությունը գալու է մեզ բոլորիս: Այն կընդունի շատ ձևեր և կհայտնվի բազմաթիվ ծպտված ձևերով, բայց Տերը տվել է մեզ բանալին դրան դիմակայելու համար: Նա ասել է Մարգարե Ջոզեֆին. «Միշտ աղոթիր, որ կարողանաս հաղթող դուրս գալ. այո, որ կարողանաս հաղթել Սատանային, և որ կարողանաս խույս տալ Սատանայի ծառաների ձեռքից, որոնք նեցուկ են նրա գործին» (ՎԱՈՒ 10.5): Այն պետք է լինի մեր ամենօրյա աղոթքների բաղկացուցիչ մասը՝ խնդրել Տիրոջը մշտական ուժի համար դիմադրելու գայթակղություններին, հատկապես այն գայթակղություններին, որոնք ներառում են մաքրաբարոյության օրենքը:

4. *Եթե դուք ամուսնացած եք, խուսափեք որևէ տեսակի սիրախաղերից:* Երբեմն մենք լսում ենք, որ ամուսնացած տղամարդը նախաճաշի է գնում իր քարտուղարուհու կամ գրասենյակի այլ կանանց հետ: Տղամարդիկ և կանայք, ովքեր ամուսնացած են, երբեմն սիրախաղ են անում և սրամտում հակառակ սեռի անդամների հետ: Այսպես կոչված անմեղ հանդիպումներ են պատրաստում կամ չափիցշատ ժամանակ են անցկացնում միասին: Բոլոր այս դեպքերում մարդիկ պատճառաբանում են ասելով, որ սրանք ընկերության բնական դրսևորումներ են: Բայց այն, ինչ թվում է անվնաս սրամտություն կամ ուղղակի մի փոքրիկ կատակ հակառակ սեռի որևէ անձնավորության հետ, կարող է հեշտորեն տանել ավելի լուրջ հետևանքների, և ի վերջո՝ անհավատարմության: Լավ կանենք ինքներս մեզ տանք հետևյալ հարցը. Արդյո՞ք կողակիցս գոհ կլինե՞ր, եթե նա իմանար, որ ես անում եմ այս: Արդյո՞ք կինս գոհ կլիներ, որ իր ամուսնինը նախաճաշում է մենակ իր քարտուղարուհու հետ: Արդյո՞ք ամուսինը գոհ կլինի, եթե տեսնի իր կինը սիրախաղ է անում և փորձում է գրավել մեկ այլ տղամարդու ուշադրությունը: Սիրելի եղբայրներ և քույրեր, սա այն է, ինչ Պողոսն ի նկատի ուներ, երբ նա ասաց. «Ամեն կերպ չար բանից հեռու կացէք» (Ա Թեսաղոնիկեցիս Ե.22):

5. *Եթե դուք ամուսնացած եք, հնարավորության դեպքում խուսափեք մենակ մնալուց հակառակ սեռի անդամների հետ:* Անբարոյականության ողբերգություններից շատերը սկսվում են, երբ տղամարդը և կինը մենակ են մնում գրասենյակում կամ եկեղեցում կամ էլ ավտոմեքենայում: Սկզբում կարող է ոչ մի մտադրություն չլինել կամ նույնիսկ միտք մեղքի մասին: Բայց հանգամանքներն բերրի հող են պատրաստում գայթակղության համար: Մի բանին հետևում է մեկ այլ բան և շատ արագ կարող է ողբերգություն տեղի ունենալ: Այնքան ավելի հեշտ է խուսափել այդպիսի հանգամանքներից հենց սկզբից, որպեսզի գայթակղությունը սնուցման հնարավորություն չունենա:

6. *Նրանց համար, ովքեր ամուսնացած չեն և ժամադրվում են հակառակ սեռի անդամների հետ, ուշադիր պլանավորեք դրական և կառուցողական միջոցառումներ, որպեսզի չհայտնվեք այնպիսի իրավիճակում, որ միայն ֆիզիկական սիրով եք զբաղվում:* Մեկ անգամ ևս սա մարդու կյանքը դրականով լցնելու սկզբունքն է, որպեսզի բացասականը հնարավորություն չունենա փթթելու: Երբ երիտասարդ մարդիկ պարապ են մնում առանց որոշակի ծրագրված գործերի, հաճախ նրանք սկսում են տարփանքով և փաղաքշանքներով լցնել դատարկ ժամերը:

Հինգ քայլեր վերանորոգելու և ապաշխարելու համար

Բայց ես հասկանում եմ, որ գուցե լինեն ոմանք, նույնիսկ այժմ իմ ձայնի հասանելության սահմաններում, որոնց համար նախապատրաստվելու և կանխարգելելու խոր-հուրդը շատ ուշ է: Դուք հնարավոր է խորապես խճճված եք լուրջ մեղքի մեջ: Եթե վիճակն այդպիսին է, այժմ ձեր կյանքը վերանորոգելուց և ձեր մեղքերից ապաշխարելուց բացի չկա ոչ մի այլ ընտրություն: Ձեզ ես կառաջարկեի հինգ կարևոր բաներ, որոնք դուք կարող եք անել դեպի բարոյական մաքրության վիճակի ետ գալու համար:

1. *Անմիջապես հեռացեք որևէ իրավիճակից, որի մեջ ընկել եք, որը ձեզ ստիպում է մեղանչել կամ որը հավանական է ստիպի ձեզ մեղանչել:* Երբ Եգիպտոսում Հովսեփը ծուղակն ընկավ Պետափրեսի կնոջ կողմից՝ նրա հետ տանը մնալով մենակ, Հովսեփի համար հեշտ կլիներ պատճառաբանություն գտնել: Ի վերջո, ինքը չէր խրախուսել նրան: Ի վերջո, նա [այդ կնոջ] ծառան էր: Ի վերջո, եթե նա մերժեր, դա կվիրավորեր նրա զգացմունքները: Եթե Հովսեփը կանգներ այնտեղ և պատճառաբանություն գտներ, նա հեշտորեն կընկներ: Մեծ դաս կա նրանում, թե ինչպես նա արձագանքեց: Սուրբ գրությունն ասում է. «Եւ նա իր հանդերձը թողեց նորա ձեռքին եւ փախավ դուրս գնաց» (Ծննդոց ԼԹ.12, շեշտադրումն ավելացված է): Նա փախավ և դուրս գնաց: Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, եթե դուք ներկայումս մի իրավիճակում եք, որտեղ ձեր բարոյական մաքրությունն է վարկաբեկվում կամ կարող է վարկաբեկվել, հետևեք Հովսեփի օրինակին:

Փախեք դրանից և դուրս եկեք: Դուք չեք կարող հապաղել մեղքի մեջ և ակնկալել, որ ձեզ կհաջողվի ապաշխարել:

2. *Աղերսեք Տիրոջից ուժ, որ հաղթահարեք:* Նրանց հետ, ում սատանան հրապուրել է ի մեղք, նրա ամենաարդյունավետ ռազմավարությունն է նրանց ականջին շշնջալ, որ նրանք արժանի չեն աղոթելու: Նա կասի ձեզ, որ Երկնային Հայրն այնքան դժգոհ է ձեզանից, որ նա երբեք չի լսի ձեր աղոթքները: Սա սուտ է, և նա ասում է դա մեզ խաբելու համար: Մեղքի ուժը մեծ է: Եթե մենք ուզում ենք ազատվել դրանից, հատկապես լուրջ մեղքից, մենք պետք է ունենանք ավելի մեծ ուժ, քան մեր ունեցածն է: Ոչ ոք այնքան մտահոգված չէ օգնել ձեզ փախչելու մեղքից, որքան ձեր Հայրը, որը Երկնքում է: Գնացեք Նրա մոտ: Ընդունեք ձեր մեղքը, խոստովանեք ձեր ամոթը և հանցանքը, իսկ հետո աղերսեք Նրան օգնության համար: Նա ի զորու է օգնել ձեզ հաղթել:

3. *Թող ձեր քահանայության առաջնորդներն օգնեն ձեզ լուծել օրինազանցությունը և վերադառնալ լիակատար անդամակցության Տիրոջ հետ:* Որոշ մեղքեր այնպիսի մեծ ծանրություն ունեն, որ դրանք Եկեղեցում վտանգում են մեր դիրքը: Այդպիսի լրջության սեռական մեղքերը դրանց շարքում են (տես ՎԱՈՒ 42.24): Այդպիսի մեղքերից լիակատար ապաշխարությունը պահանջում է, որ մենք ոչ միայն խոստովանենք մեր մեղքերը և լուծենք դրանք Տիրոջ հետ, այլ որ մենք այդ անենք նաև Եկեղեցու հետ: Դա արվում է համապատասխան քահանայության առաջնորդների հետ: Եպիսկոպոսները և ցցի նախագահները նշանակվել են հայտնությամբ ծառայելու որպես պահապաններ Եկեղեցու վրա և որպես դատավորներ Իսրայելում: Չնայած միայն Տերը կարող է ներել մեղքերը, քահանայության առաջնորդները կարևոր դեր են խաղում ապաշխարության գործընթացում: Նույնիսկ եթե մեզ բանադրել են կամ հեռացրել Եկեղեցուց, դա սկզբնական քայլ է դեպի ապաշխարության գործընթացը և որքան շուտ է մարդ սկսում, այնքան շուտ է կարողանում գտնել քաղցր խաղաղություն և ուրախություն, որոնք գալիս են ներման հրաշքի հետ:

4. *Խմեք աստվածային աղբյուրից և լցրեք ձեր կյանքը դրական ուժի զորությամբ:* Բավական չէ ուղղակի փորձել դիմադրել չարին կամ դատարկել մեր կյանքը մեղքից: Մենք պետք է նաև լցնենք մեր կյանքը արդարակեցությամբ: Մենք պետք է զբաղվենք գործերով, որոնք բերում են հոգևոր ուժ: Ես խոսում եմ այնպիսի գործերի մասին, ինչպիսին սուրբ գրությունների մեջ խորասուզվելն է: Զորություն է հորդում մեր կյանք, երբ մենք կարդում և ուսումնասիրում ենք սուրբ գրություններն ամեն օր, որը չի կարելի գտնել որևէ այլ ձևով: Ամենօրյա աղոթքը մեծ զորության մեկ այլ աղբյուր է: Ծոմապահությունը հատուկ ուժի և կամ հատուկ օրհնությունների համար կարող է զորացնել մեզ մեր կարողությունից վեր: Քրիստոնեական ծառայությունը, եկեղեցի հաճախելը, արքայությունում ծառայելը, բոլորը կարող է ավելացնել մեր ուժի և զորության պահեստին: Մենք կարող ենք անել ավելին, քան ուղղակի բացասական ազդեցությունները մեր կյանքից վերացնելն է: Մենք պետք է փոխարինենք դրանք արդար գործերով, որոնք մեզ լցնում են ուժով և վճռականությամբ՝ ապրելով այնպես, ինչպես պարտավոր ենք:

5. Հիշեք, որ պատշաճ ապաշխարության միջոցով դուք կարող եք կրկին մաքուր դառնալ: Մորոնին սովորեցրել է, որ «հուսահատությունը գալիս է անօրինության պատճառով» (Մորոնի 10.22): Նրանք, ովքեր ընկել են անբարոյականության մեջ հավանաբար զգում են հուսահատության ամայացնող ազդեցությունները: Բայց կա փոխտարբերակ: Ովքեր վճարում են ճշմարիտ ապաշխարությամբ պահանջվող գինը, նրանց համար խոստումը հաստատ է: Դուք կարող եք կրկին մաքուր լինել: Հուսահատությունը կհեռանա: Ներման քաղցր խաղաղությունը կհորդի ձեր կյանք:

Գտնելով խաղաղություն

Եսայիայի միջոցով Տիրոջ խոսքերը հաստատ են. «Հիմա եկէք ու վիճաբանենք, ասում է Տերը, եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս լինին, ձիւնի պէս պիտի սպիտականան. Եթե նորանք որդան կարմիրի պէս լինին, ասրի պէս սպիտակ պիտի դառնան» (Եսայիա Ա.18):

Իսկ այս տնտեսությունում Տերը խոսեց կրկնակի հստակությամբ, երբ Նա ասաց. «Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես Տերս, այլևս չեմ հիշում դրանք» (ՎԱՈՒ 58.42):

Ինչպես ասացի, երբ հարցը վերաբերում է մաքրաբարոյության օրենքին, ավելի լավ է նախապատրաստվել և կանխարգելել, քան վերանորոգել և ապաշխարել:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր ավետարանում, մեր Երկնային Հայրը մեզ համար բացի երջանկությունից ուրիշ ոչինչ չի ցանկանում: Նա ասում է մեզ միայն այն բաները, որոնք մեզ կբերեն ուրախություն: Եվ այդ ուրախությունը գտնելու համար Աստծո կողմից տրված ամենահավաստի սկզբունքներից մեկը մաքրաբարոյության օրենքն է:

Ես աղոթում եմ իմ ողջ սրտով, որ դուք ամենայն լրջությամբ մտածեք այս օրենքը պահելու ուրախալի հետևանքների մասին և այն խախտելու ողբերգական հետևանքների մասին: Եվ ես աղոթում եմ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի

Սոլթ Լեյք Սիթի, Յուտա 84150

Նոյեմբերի 14, 1991

Ուղղված՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բոլոր անդամներին

Սիրելի Եղբայրներ և Քույրեր,

Բարոյականության և հավատարմության չափանիշներ

Մենք կոչ ենք անում անդամներին վերանորոգել բարոյական վարքի Տիրոջ չափանիշներով ապրելու իրենց պարտավորությունները: Ծնողները պետք է ուսուցանեն իրենց երեխաներին ծննդաստեղծ ուժերի սրբազան բնույթը և մտքով և գործով նրանց մեջ ներարկեն մաքրաբարո լինելու ցանկություն: Տղամարդկանց և կանանց աստվածայնորեն նշանակված դերերի ճիշտ ըմբռնումը կամրացնի բոլորին մեղսավոր գործողությունների դեմ: Մեր միակ իսկական ապահովությունը, ֆիզիկապես և հոգևոր, կայանում է Տիրոջ պատվիրանները պահելու մեջ:

Բարոյական վարքի Տիրոջ օրենքը օրինական ամուսնությունից դուրս ժուժկալությունն է և հավատարմությունը ամուսնության մեջ: Սեռական հարաբերությունը հատուկ են միայն ամուսնուն և կնոջը՝ համապատասխանաբար արտահայտվելով ամուսնական կապի մեջ: Որևէ այլ սեռական շփում, ներառյալ պոռնկությունը, շնությունը, համասեռամոլությունը և լեզբիան վարքագիծը մեղսավոր է: Նրանք, ովքեր նման վարքագիծ են հետապնդում կամ ազդում են ուրիշների վրա նույն վարքը դրսևորել, ենթակա են Եկեղեցու տույժերին:

Մենք հիշեցնում եմ ձեզ այն սուրբ գրությունների մասին, որոնք հստակեցնում են հարաբերությունը մտքերի և գործերի միջև (տես Մատթեոս ԺԵ.19, Մոսիա 4.29–30, Ալմա 12.14, 3 Նեփի 12.28, ՎԿՈ 121.45): Կա տարբերություն անբարոյական մտքերի և զգացումների միջև և դրանց մասնակցելու կամ անբարոյական տարասեռ կամ համասեռ վարքագծի միջև: Այնուամենայնիվ, այդպիսի մտքերն ու զգացումները, անկախ դրանց պատճառներից, կարող են և պետք է հաղթահարվեն և մեղսավոր վարքը պետք է արմատախիլ արվի: Սրան կարելի է հասնել Աստծո հանդեպ հավատքի, անկեղծ ապաշխարության և հետևողական ջանքերի միջոցով: Հավանաբար, անհրաժեշտ կլինի ուրիշների օգնությունը: Մենք ողջունում ենք և խրախուսում նրանց, ովքեր անպատշաճ մտքերն ու զգացումները հաղթահարելու գործընթացում են: Մենք աղերսում ենք նրանց, ովքեր այդպիսի վարքի մեջ են ներգրավված, թողնել դա: Մենք սիրում ենք նրանց և աղոթում ենք նրանց համար: Մենք վստահ ենք, որ ապաշխարության միջոցով և անհարժեշտ օգնություն ձեռք բերելով նրանք կարող են զգալ այն խաղաղությունը, որը գալիս է իրենց կյանքը Աստծո ուսմունքներին ենթարկելուց:

Անհատներն ու նրանց ընտանիքները, ովքեր այս հարցերի հետ կապված օգնության կարիք ունեն, պետք է դիմեն խորհրդի համար իրենց եպիսկոպոսին, ճյուղի նախագահին, ցցի կամ շրջանի նախագահին: Մենք քաջալերում ենք Եկեղեցու առաջնորդներին և անդամներին սիրով և ըմբռնումով օգնության հասնել նրանց, ովքեր մաքառում են այս խնդիրների հետ: Շատերը կարձագանքեն քրիստոսանման սիրուն և ոգեշնչված խորհրդին, երբ նրանք հրավեր ստանան ետ գալ և կիրառել Փրկչի քավող և բժշկող զորությունը (տես Եսայիա ԾԳ.4–5, Մոսիա 4.2–3):

Հարգանքներով ձեր եղբայրներ,

Էզրա Թաֆթ Բենսոն
Գորդոն Բ. Հինքլի
Թոմաս Ս. Մոնսոն
Առաջին Նախագահություն

ՄԵՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Երեց Բոյդ Կ. Փաքեր

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, ապր. 1992, 91–95, կամ Ensign, մայիս 1992, 66–68

Ես Գերագույն Իշխանավոր եմ եղել ավելի քան երեսուն տարիների ընթացքում և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ քսաներկու տարի: Այդ տարիների ընթացքում ես հարցազրույցներ եմ ունեցել, չգիտեմ քանի հոգու, հավանաբար Եկեղեցու հազարավոր անդամների հետ և խոսել եմ նրանց հետ մտերիմ ձևով իրենց արժանավորության, իրենց ցավերի և իրենց երջանկության մասին: Ես նշում եմ այդ մասին միայն այն հույսով, որ փորձառության հավատարմագիրը գուցե համոզի ձեզ հաշվի առնել հարցերը, որոնք մեզ խորապես անհանգստացրել են:

Բարոյական միջավայր

Այսօր ես խոսում եմ Երկեղեցու անդամների հետ որպես միջավայրի պահպանության մասնագետ: Իմ ուղեձը *ֆիզիկականի* վերաբերյալ չէ, այլ *բարոյական և հոգևոր* միջավայրի, որտեղ մենք պետք է մեծացնենք մեր ընտանիքները: Երբ մենք ստուգում ենք *բարոյական* միջավայրը, մենք գտնում ենք, որ *աղտոտվածություն* ցուցիչը սրընթաց բարձրանում է վեր:

Մորմոնի Գիրքը պատկերում է մարդկությանը «խավարի մեգի» միջով մաքառելիս, սահմանում է խավարը որպես «դևի գայթակղություններ» (1 Նեփի 8.23, 12.17): Այնքան խիտ էր այդ *բարոյական աղտոտվածությունը,* որ շատերը հետևեցին «անծանոթ ճանապարհներ» և «հեռացան դեպի արգելված ուղիներ և կորան» (տես 1 Նեփի 8.23–32):

Կենաց աղբյուրի դիտավորյալ աղտոտվածությունն այժմ մթագնում է մեր բարոյական միջավայրը: Մահկանացու կյանքի պարգևը և ուրիշ կյանքեր բոցավառելու կարողությունը գերագույն օրհնություն է: Դրա արժեքը *անչափելի է:*

Հոգևոր միջավայրը

Հասարակության մեջ արժեքների բուռն և սրընթաց այլասերմանը այժմ հատկանշական է մի մտահոգություն, նույնիսկ մի մոլագարություն ծննդաստեղծ ակտի վերաբերյալ: Ինքնազսպվածությունը նախքան ամուսնությունը և հավատարմությունը ամուսնության ընթացքում բացեիբաց ծաղրի է ենթարկվում որպես հնաոճ մի բան, ամուսնությունն ու ծնող լինելը ծիծաղի առարկա է որպես դժվարակիր և ոչ անհրաժեշտ: Համեստությունը՝ արժանիք, որը հատկանշական է բարեկիրթ անձնավորությանը կամ հասարկությանը, իսպառ վերացել է:

Փորձիչը

Հակառակորդը նախանձում է բոլոր նրանց, ովքեր կյանք ստեղծելու զորություն ունեն: Նա չի կարող կյանք ստեղծել, նա անկարող է: Նա և նրանք, ովքեր հետևեցին նրան, դուրս գցվեցին երկնքից և զրկվեցին մահկանացու մարմին ստանալու իրավունքից: Նրա հրեշտակները խնդրեցին, որ բնակվեն խոզերի մարմիններում (տես Մատթեոս Ը.31): Եվ հայտնություններն ասում են մեզ՝ «նա ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը» (2 Նեփի 2.27):

Գնալով ավելի քիչ բացառություններով, ողջ մեր տեսածի և կարդացածի կամ լսածի կենտրոնական թեման զուգավորման ակտն է: Ամեն ձևի գրաքննությունը դուրս է մղվում բեմից՝ որպես անհատի ազատության դեմ ոտնձգություն:

Այն, ինչը պետք է բացարձակապես գաղտնի լինի, կողոպտվում է և ցուցադրվում կենտրոնական բեմում: Կուլիսների ստվերներում առկա են հակվածություն, պոռնոգրաֆիա, այլասերվածություն, անհավատարմություն, վիժեցում և դրանցից ամենայլանդակը՝ արյունապղծությունն ու մանկապղծությունը: Այժմ դրանք ուղեկցվում են աստվածաշնչյան չափերի պատուհասով: Եվ այդ բոլորը գնալով աճում է:

Հասարակությունն այժմ ազատում է իրեն երիտասարդների մեջ սեռական անբարոյականության բարձր անկման որևէ պատասխանատվությունից, եթե հաշվի չառնենք դպրոցում երեխաներին ուսուցանելը մարդկային վերարտադրության ֆիզիկական պրոցեսը, որպեսզի կանխարգելեն հղիությունը կամ հիվանդությունը և ապահովելով դեռահասներին միջոցներով, որոնք ըստ երևույթին պիտի պաշտպանեն նրանց երկուսից էլ:

Երբ որևէ ջանք է գործադրվում ընդգրկել այդ դասընթացների մեջ համաշխարհային հիմնական արժեքներ, ոչ թե հենց Եկեղեցու արժեքները, այլ քաղաքակրթության, հենց հասարակության, բողոք է բարձրացվում. «Դուք մեզ պարտադրում եք կրոն, սպառնալով մեր ազատությանը»:

Ընտրության ազատությունը

Չնայած մենք օրենքներ ենք անցկացնում կրճատելու երկրագնդի աղտոտվածությունը, բարոյական և հոգևոր միջավայրի պաշտպանությանն ուղղված որևէ առաջարկ լռեցվում և դեմ են արշավում, որպես անկախության, ազատ կամքի, ազատության և ընտրելու իրավունքի դեմ ոտնձգություն:

Հետաքրքիր է, թե ինչպես մեկ արժանիքը, երբ դրան տրվում է չափազանցված կամ ֆանատիկ շեշտ, կարող է օգտագործվել ջախջախելու մյուսին: Որքան խելացի է խաբեությունը, երբ ազատությունը, որն արժանիք է, օգնության է կանչվում արդարացնելու *չարիքը*: Նրանք, ովքեր վճռել են օրինազանցել, համարում են իրենց կենսաձևի որևէ կառավարում որպես իրենց ազատ կամքի խոչընդոտում և ձգտում իրենց գործողություններին թողություն գտնել դրանք դարձնելով օրինականացված:

Մարդիկ, ովքեր այլ ձևով են խելացի, ասում են. «Ես մտադիր չեմ դրանով զբաղվել, բայց ես կողմ եմ քվեարկում ընտրության ազատությանը նրանց համար, ովքեր դա անում են»:

Թերի փաստարկ

Անկախ նրանից, թե որքան վեհ և բարոյական կինչի «ընտրության կողմնակիցների» փաստարկը, այն խիստ թերի է: Այդ նույն տրամաբանությամբ մարդ կարող է վիճել, որ բոլոր տրանսպորտային նշանները և սահմանները, որոնք պահում են անհոգներին վտանգից, պետք է վերացվեն, այն տեսությամբ, որ յուրաքանչյուր անձնավորություն պետք է ազատ լինի ընտրելու, թե որքան մոտիկ նա կգնա ծայրեզրին:

Ոչ մի ազատ կամք

Բոլոր նրանց, ում ուսուցանվել է փրկության ծրագիրը, հասկանում են, որ ազատությունը բոլոր բարոյական սահմանափակումներից պաշտպանելը նշանակում է քարոզել այն, ինչ հակառակ է Աստծո կամքին:

«*Ազատ կամք*» արտահայտությունը չի հայտնվում սուրբ գրություններում: Միակ կամքը, որի մասին այնտեղ խոսվում է, *բարոյական* կամքն է,- «որը,- Տերն ասել է,- տվել եմ նրան, որպեսզի դատաստանի օրն ամեն մարդ

պատասխան տա իր իսկ մեղքերի համար» (ՎԱՈՒ 101.78, շեղագիրն ավելացված է):

Ականջ դնելով նախազգուշացմանը

Եվ Տերը նախազգուշացրեց իր Եկեղեցու անդամներին. «Մի թողեք, որ այն, ինչը ես նշանակել եմ, պղծվի իմ թշնամիների կողմից, *նրանց թույլտվությամբ, ովքեր իրենց կոչում են իմ անունով:* Քանզի դա շատ դառը և ցավագին մեղք է իմ դեմ և իմ ժողովրդի դեմ» (ՎԱՈՒ 101.97–98, շեղագիրն ավելացված է):

Քանի որ մարդկային օրենքները, ընդհանուր առմամբ, չեն բարձրացնում բարոյական հարցեր, մենք սովորեցվում ենք հարգել, աջակցել և հնազանդվել օրենքին (տես Հավատո Հանգանակ 1.12), և որ «նա, ով պահում է Աստծո օրենքները, պետք չէ որ խախտի երկրի օրենքները» (ՎԱՈՒ 58.21):

Ձայնը բարձրացնելու իրավունք

Երբ բարոյական հարց է առաջանում, Եկեղեցու առաջնորդների պարտականությունն է բարձրացնել իրենց ձայնը: Խաղամոլությունը, օրինակ, անշուշտ բարոյական հարց է: Կյանքը բարոյական հարց է: Երբ բարոյականությանն է առնչվում մենք ունենք և *իրավունք* և *պարտականություն* նախազգուշացնող ձայն բարձրացնելու: Մենք որպես եկեղեցի չենք խոսում քաղաքական հարցերի շուրջ, մինչև որ այն չի առնչվում բարոյականությանը: Երեսուն տարիների ընթացքում և հազարավոր հարցազրույցների ժամանակ, ես երբեք, ոչ մի անգամ չեմ հարցրել անդամներին, թե որ քաղաքական կուսակցությանն են նրանք պատկանում:

Ֆիզիկական և բարոյական օրենքներ

Կան ինչպես բարոյական, այնպես էլ ֆիզիկական օրենքներ «երկնքում անդարձորեն հրամանագրված, այս աշխարհի հիմնադրումից առաջ» (ՎԱՈՒ 130.20):

Օրինակ, ի՞նչ եք կարծում, ձգողականության օրենքը չեղյալ հայտարարելու համար քվերակելը կարո՞ղ է որևէ օգուտ տալ:

Անհարկադրելին

Պատկերացրեք օրենք է սահմանվել, որ բոլոր երեխաները պիտի վերցվեն իրենց ծնողներից և մեծացվեն պետության կողմից: Այդպիսի օրենքը ամբարիշտ կլիներ, բայց հավանաբար հնարավոր կլիներ հարկադրել: Այդպիսի բաներ արվել են նախկինում:

Բայց պատկերացրեք, որ այդ օրենքի մի կետ նշում է. «Տասնհինգ օրվա ընթացքում մայրը պիտի դադարեցնի բոլոր զգացմունքային կապերը իր երեխայի հետ»:

Այդ որոշումը բացարձակապես անհարկադրելի է: Անկախ նրանից, թե որքան խիստ կլինի պատիժը կամ հարկադրողների թիվը, այն բացարձակապես անհարկադրելի է, որովհետև այն հակասում է ինչպես բնական, այնպես էլ բարոյական օրենքին:

Նշանակություն չունի տասնհինգ շաբաթ թե ամիս կամ տասնհինգ տարի է թույլատրվել, այն չի կարող հարկադրվել: Դա գուցե ստացվեր կենդանիների հետ, բայց «ամեն մարմին», ուսուցանում է սուրբ գրությունը. «միեւնոյն մարմինը չէ. ուրիշ է մարդկանց մարմինը, ուրիշ է անասունների մարմինը» (Ա Կորնթացիս ԺԵ.39): Այն հնարավոր չէ գործադրել մարդկանց մայրերի հանդեպ: Երբեք:

Բնության դեմ մարդու կողմից ստեղծված օրենքը նույնչափ անհնարին կլիներ պաշտպանել որքան անհնարին կլիներ հարկադրել մոր և երեխայի միջև սերը զրոյացնող օրենքը:

Աստծո զավակները

Չկա ավելի մեծ իդեալ, որը երբևէ հայտնի է դարձվել, քան այն գերագույն ճշմարտությունը, որ մենք Աստծո զավակներն ենք, և որ մեր արարման արժանիքով մենք տարբերվում ենք բոլոր մյուս կենդանի արարածներից (տես Մովսես 6.8–10, 22, 59):

Չար գաղափար

Ոչ մի այլ գաղափար այնքան *կործանարար* չի եղել երջանկության համար, ոչ մի փիլիսոփայություն չի պատճառել այնքան վիշտ, և ոչ մի գաղափար այդքան չի նպաստել ընտանիքի քայքայմանը, որքան այն գաղափարը, որ մենք Աստծո զավակը չենք, այլ ընդամենը զարգացած անասուններ՝ ստիպված ենթարկվելու ամեն մի մարմնական մղման:

Կենդանիները չեն կարող պատասխանատու լինել բարոյականության չափանիշների համար, որով դատվում է մարդկությունը: Այնուամենայնիվ, չնայած ընդհանուր առմամբ նրանք անխտիր արձագանքում են իրենց զուգավորման բնազդներին, նրանց զուգավորման ծեսերը հետևում են սահմանված ձևերի և խիստ սահմանափակումների: Օրինակ՝ կենդանիները զույգ չեն կազմում իրենց սեփական սեռի հետ՝ բավարարելու իրենց զուգավորման բնազդները: Ոչ էլ այդ զուգավորման բնազդները արտահայտվում են իրենց իսկ հետնորդի հանդեպ մանկապղծությամբ:

Կյանքի աղբյուրը այժմ իջել է չամուսնացած մարդկանց հաճույքի մակարդակին, առք ու վաճառքի առարկա դարձել և նույնիսկ, ապականվել սատանայական ծեսերով: Աստծո զավակները կարող են կամավոր հանձնվել իրենց մարմնական էությանը և առանց խղճի խայթի արհամարհել բարոյականության օրենքները և այլասերվել՝ իջնելով, նույնիսկ, կենդանիներից ցած:

Ամենապիղծը

Եթե մենք աղտոտում ենք կյանքի մեր աղբյուրները կամ առաջնորդում ուրիշներին օրինազանցել այդ ձևով, կլինեն տույժեր շատ ավելի «սուր» և «ծանր տանելի» (տես ՎԱՈՒ 19.15), քան բոլոր ֆիզիկական հաճույքները կարող են երբևէ արժանի լինել: Ալման ասաց իր որդի Կորիանթոնին. «Չգիտե՞ս, որդիս, որ այս բաները պղծություն են Տիրոջ աչքում, այո, ամենապիղծը բոլոր մեղքերից, բացի դա լինի անմեղ արյուն թափելը կամ Սուրբ Հոգին ուրանալը» (Ալմա 39.5):

Բարոյական օրենքի ծածկագիրը գտնվում է սուրբ գրություններում, որն այնքան պարզ է ձևակերպված, ինչպես այս. «Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել» (Ալմա 41.10): Սուրբ գրությունները խոսում են ընդհանուր արտահայտություններով, մեզ ազատ թողնելով կիրառելու ավետարանի սկզբունքները բավարարելու կյանքի անսահման բազմազանությունը: Բայց երբ նրանք ասում են «դու չպետք է»՝ մենք ավելի լավ է ուշադրություն դարձնենք:

Ծննդաստեղծ ուժի միակ օրինական կիրառումը ամուսնու և կնոջ միջև է, տղամարդու և կնոջ, ովքեր իրավական և օրինական ամուսնացած են: Որևէ այլ բան խախտում է Աստծո պատվիրանները: Ալմայի գրքից. «Եթե դուք խոսեք սրա դեմ, դա նշանակություն չունի, քանզի Աստծո խոսքը պետք է իրագործվի» (Ալմա 5.58):…

Ապաշխարություն

Կյանքի ճակատամարտում, հակառակորդը վերցնում է վիթխարի թվով գերիներ և շատերը չիմանալով փախուստի ուղին, հարկադրվում են ծառայելու նրան: Յուրաքանչյուր հոգի, որը բանտարկված է մեղքի և հանցանքի նրա համակենտրոնացման ճամբարում, ունի դռան մի բանալի: Բանալին կոչվում է՝ Ապաշխարություն: Հակառակորդը չի կարող պահել նրանց, եթե նրանք իմանան ինչպես օգտագործել այն: Ապաշխարության և ներման զույգ սկզբունքներն ուժով գերազանցում են փորձիչի սարսափելի ուժին:

Ես չգիտեմ բարոյական չափանիշի հետ կապված որևէ մեղք, , որի համար հնարավոր չլինի ներվել: Ես չեմ բացառում վիժեցումը: Բանաձևը ձևակերպված է երեսունհինգ բառերով.

«Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս չեմ հիշում դրանք:

Այս բանով դուք կարող եք իմանալ, թե արդյո՞ք մարդն ապաշխարում է իր մեղքերից,- ահա նա կխոստովանի և կթողնի դրանք» (ՎԱՈՒ 58.42–43):

Ես այլևս չեմ հիշի ձեր մեղքերը

Որքան էլ երկար և ցավոտ լինի ապաշխարության գործընթացը, Տերն ասել է.

«Սա է այն ուխտն ….կտամ իմ օրենքները նորանց սրտերի մէջ, եւ նորանց խորհուրդների վերայ կգրեմ նորանց:

Եվ նորանց մեղքերը եւ նորանց անօրէնութիւնները էլ չեմ յիշիլ» (Եբրայեցիս Ժ.16–17, շեղագիրն ավելացված է):

Սոդոմի և Գոմորի քաղաքակրթությունները իրենց կործանեցին բարոյական օրենքներին չհնազանդվելով: «Քանզի Տիրոջ Հոգին միշտ չի ճգնի մարդու հետ: Եվ երբ Հոգին դադարում է մարդու հետ ճգնելը, այն ժամանակ գալիս է սրընթաց կործանում» (2 Նեփի 26.1, տես նաև Ծննդոց Զ.3, Եթեր 2.15, ՎԱՈՒ 1.33, Մովսես 8.17):

Աստված տա, որ մենք ուշքի գանք և պաշտպանենք մեր բարոյական միջավայրը խավարի այս օրեցօր թանձրացող մեգից: Ողջ մարդկության ճակատագիրը վտանգի տակ է:

Եվ թող մենք ունենանք Նրա պաշտպանությունը, ով մեր Հայրն է և մեր Աստվածը, և թող որ մենք արժանի լինենք Նրա Որդու, մեր Քավիչի սիրուն և օրհնությանը, որի անունով, այսինքն Հիսուս Քրիստոսի անունով ես վկայություն եմ բերում, ամեն:

ԱՆՁՆԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, հոկտ. 1998, 98–102, կամ Ensign, նոյ. 1998, 75–78

Անձնական մաքրություն

Երբ անբարոյականության ժամանակակից քամիները գայթակղիչ ձևով պտտվում են նրանց կողքին, ես անհանգստանում եմ մեր պատանիների և երիտասարդ չափահասների համար, ովքեր հավանական է շփոթվեն անձնական մաքրության սկզբունքներում, ամուսնությունից առաջ բացածակ մաքրաբարոյության պարտականության, իսկ հետո լիակատար հավատարմության վերաբերյալ: Ես ուզում եմ այսօր խոսել բարոյական մաքրության մասին, նրա դեմ ինչ տեղի է ունենում աշխարհում, որոնք նրանք տեսնում են և լսում և հուսալով ամրացնել ծնողներին, երբ նրանք ուսուցանեն իրենց երեխաներին ավելի բարձր չափանիշներ: Քանի որ այս թեման իմ իմացած թեմաներից նույնքան սրբազան է, ես անկեղծորեն աղոթում եմ,

որ Սուրբ Հոգին առաջնորդի ինձ այն դիտողություններում, որոնք առավել անկեղծ են, քան ես կկամենայի անել: Այսօր ես գիտեմ, թե ինչպես էր զգում Մորմոնի Գրքի Հակոբը, երբ նա ասաց նույն թեմայի վերաբերյալ. «Ինձ վշտացնում է, որ ես պետք է գործածեմ խոսքի այսքան շատ խստություն»:[1]

Շոշափելով այս թեման ես չեմ փաստարկում սոցիալական չարիքները, որոնց վիճակագրությունը ճնշող է, իսկ օրինակները վիրավորական: Ոչ էլ կներկայացնեմ այստեղ ընթացակարգեր ժամադրվելիս անելու և չանելու բաների և տղա–աղջիկ հարաբերությունների վերաբերյալ: Այն, ինչ ուզում եմ անել, ավելի անձնական է՝ ես ուզում եմ պատասխանել այն հարցերին, որոնք ձեզանից ոմանք հարցնում են. *Ինչո՞ւ* մենք պետք է բարոյապես մաքուր լինենք: Արդյո՞ք Եկեղեցին *պետք է* այդքան խիստ լինի դրա վերաբերյալ: Ինչպե՞ս կարող է մի բան, որը հասարակությունը այդքան բացահայտորեն օգտագործում և հմայիչ է դարձնում, լինի շատ սրբազան կամ լուրջ:

Կրակի գետ

Կարելի՞ է սկսել քաղաքակրթության երկար, ուսուցողական պատմությունով: Ուիլ և Արիել Դուրանթները գրել են. «Ոչ մի տղամարդ [կամ կին], որքան էլ փայլուն կամ լավ տեղեկացված լինի…. չի կարող ապահով …. բաց թողնել…. պատմության լաբորատորիայում [սովորած դասերի] իմաստությունը: Երիտասարդը, որի մեջ եռում են հորմոնները կզարմանա, թե ինչու նա չպետք է լիակատար ազատություն տա իր սեռական ցանկություններին, [բայց] եթե նա չի վերհսկվում ավանդույթով, բարոյականությամբ կամ օրենքներով, նա կարող է կործանել իր կյանքը նախքան նա բավականաչափ կհասունանա հասկանալու, որ սեռական կյանքը կրակի գետ է, որը պետք է պատնեշվի և հովացվի հարյուրավոր սահմանափակումներով, քանի դեռ չի կործանել ինչպես անձնին, այնպես էլ խմբին»:[2]

Մի ավելի կարևոր սուրբգրքյան դիտարկում է ներկայացնում Առակաց գրողը. «Հնա՞ր է որ մի մարդ կրակ կրէ իր ծոցումը, եւ նորա հանդերձները չայրուին: Կամ կարելի՞ է որ մի մարդ կայծերի վերայ ման գայ, եւ նորա ոտները չխանձուին…. Բայց կին պղծողն…. իր հոգին է փչացնում: Նա վէրք եւ անարգանք կգտնէ, եւ նորա նախատինքը չի ջնջուիլ»:[3]

Ինչո՞ւ է սեռական մաքրությունն այդքան կարևոր

Ինչո՞ւ է սեռական հարաբերության այս հարցն այդքան խիստ դրված, որ գրեթե միշտ կրակն է փոխաբերությունը, կիրքը ներկայացվելով վառվռուն բոցերով: Ի՞նչ կա այդտեղ հնարավորին վնասակար դրա տաքության մեջ, որ մարդու հոգին, կամ ողջ աշխարհը, այդ հարցի պատճառով կարող է կործանվել, եթե այդ բոցը թողնվի անվերահսկելի և այդ կրքերն անսանձ: Ի՞նչ կա բոլոր այս բաներում, որ հուշում է Ալմային նախազգուշացնել իր որդի Կորիանթոնին, որ սեռական օրինազանցությունը «պղծություն [է] Տիրոջ աչքում, այո, ամենապիղծը բոլոր մեղքերից, բացի դա լինի անմեղ արյուն թափելը կամ Սուրբ Հոգին ուրանալը»:[4]

Այդպես համընդհանուր պարգևած մարմնական ցանկությանը տալով այսպիսի կարևորություն, ի՞նչ է Աստված փորձում ասել մեզ՝ Իր ծրագրում բոլոր տղամարդկանց և կանանց համար դրա նշանակության մասին: Նա անում է դա բծախնդրորեն՝ ակնարկելով հենց կյանքի ծրագրի մասին: Պարզ է, որ մահկանացու կյանքի վերաբերյալ Նրա մեծագույն մտահոգությունների շարքում են, թե ինչպես է մարդ մտնում այս աշխարհ և թե ինչպես է նա դուրս գալիս այդտեղից: Նա շատ խիստ սահմաններ է դրել այս հարցերում:

Բարեբախտաբար, ինչ վերաբերում է կյանքի ավարտին, մեծամասնությունը թվում է բավականին պատասխանատվություն են ցուցաբերում: Բայց ինչ վերաբերում է *կյանք տալու* կարևորությանը, մենք երբեմն նկատում ենք հանցագործության հասնող անպատասխանատվություն: Ես առաջարկում եմ երեք պատճառներ, թե ինչու է սա այդպիսի մեծ կարևորության հարց և հետևանք Հիսուս Քրիստոսի ավետարանում:

Մարդկային հոգու վարդապետությունը

Առաջինը մարդկային հոգու վերաբերյալ բացահայտված, վերականգված վարդապետությունն է:

Այս տնտեսությունում վերականգված «պարզ և արժեքավոր» ճշմարտություններից մեկն այն է, որ «ոգին ու մարմինը մարդու հոգին են»[5] և երբ ոգին և մարմինը բաժանվում են, տղամարդիկ և կանայք «չեն կարող ստանալ ուրախության լիությունը»:[6] Ահա թե ինչու է մարմին ստանալը այդքան հիմնավորապես կարևոր՝ առաջին տեղում, թե ինչու է որևէ ձևի մեղքը այդքան կարևոր հարց (այսինքն դա մեղքն է, որ վերջնականապես բերում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր մահ), և թե ինչու է մարմնի հարությունը այդքան կենտրոնական Քրիստոսի Քավության մեծ հաղթանակի համար:

Մարմինը հոգու կարևոր մասն է: Այս հատկանշական և Վերջին Օրերի Սրբերի շատ կարևոր վարդապետությունը ընդգծում է, թե ինչու է սեռական մեղքն այդքան լուրջ: Մենք հայտարարում ենք, որ նա, ով օգտագործում է Աստծո տված մեկ ուրիշի մարմինը առանց աստվածային թույլտվության, անարգում է հենց կենտրոնական նպատակը և կյանքի գործընթացները՝ կյանքի «հենց բանալին»,[7] ինչպես Նախագահ Բոյդ Կ. Փաքերն է մի առիթով կոչել այն: Շահագործելով մեկ ուրիշի մարմինը, որը նշանակում է շահագործել տղամարդու կամ կնոջ հոգին, այդ

անձը սրբապղծում է Քրիստոսի Քավությունը, որը փրկել է այդ հոգին, և որը հնարավոր է դարձնում հավերժական կյանքի պարգևը: Իսկ երբ մեկը ծաղրում է Արդարության Որդուն, այդ մեկը քայլ է անում դեպի տաքության մի աշխարհ, որն ավելի տաք է և ավելի սուրբ, քան կեսօրվա արևը: Դուք չեք կարող այդպես անել և չայրվել:

Խնդրում ենք երբեք մի ասեք. «Ո՞ւմ է դա վնասում: Ինչո՞ւ ոչ մի փոքր ազատություն: Ես կարող եմ օրինազանցել այժմ, իսկ հետո ապաշխարել»: Խնդրում ենք մի եղեք այդքան հիմար և այդքան դաժան: Դուք չեք կարող անպատիժ «Քրիստոսին կրկին խաչել»:[8] «Փախեք պոռնկությունից», աղաղակում է Պողոսը,[9] և փախեք դրա «նման որևէ բանից»,[10] ավելացնում է Վարդապետությունն և Ուխտերը: Ինչո՞ւ: Դեհ, մեկ պատճառով, որովհետև ինչպես մարմնում, այնպես էլ հոգում աշխարհի Փրկիչը տարավ անհամար տառապանքներ, որպեսզի մենք *կարողանայինք* փախչել: Մենք ինչ որ բան ենք պարտք դրա համար: Իրականում, մենք ամեն ինչի համար պարտք ենք Նրան: «[Դուք] ձերինը չեք»,-ասում է Պողոսը: «Որովհետեւ մեծ գնով գնուեցաք. *ուստի փառաւորեցէք Աստուծուն ձեր մարմնումը եւ ձեր հոգումն որ Աստուծունն են»:* [12] Սեռական օրինազանցության ժամանակ հոգին վտանգվում է՝ ինչպես մարմինը, այնպես էլ ոգին:

Բացարձակ միության մեծագույն խորհրդանիշը

Երկրորդը, կարո՞ղ եմ շեշտել, որ մարդկային մտերմությունը պահված է ամուսնացած զույգի համար, որովհետև դա բացարձակ միության մեծագույն խորհրդանիշն է, մի բացարձակություն և միություն, որը կարգված և սահմանված է Աստծո կողմից: Եդեմի պարտեզից սկսած ամուսնությունը նախատեսված է նշանակելու տղամարդու և կնոջ լիակատար միաձուլում՝ իրենց սրտերի, հույսերի, կյանքերի, սիրո, ընտանիքի, ապագայի, ամեն ինչի: Ադամն ասաց Եվային, որ նա ոսկոր է իր ոսկրից և մարմին իր մարմնից, և որ նրանք պետք է լինեին «մեկ մարմին» իրենց միասնական կյանքում:[13] Դա մի այնպիսի լիակատար միություն է, որ մենք օգտագործում ենք *կնիք* բառը արտահայտելու դրա հավերժական խոստումը: Մարգարե Ջոզեֆ Սմիթը մի անգամ ասել է, որ մենք հավանաբար կարող է բացատրենք այդպիսի սրբազան կապը որպես «միացում»[14] միմյանց հետ:

Բայց այդպիսի բացարձակ միությունը, տղամարդու և կնոջ միջև այդպիսի անհողդողդ պարտավորությունը կարող է գալ միայն մտերմությամբ և հարատևությամբ, որը թույլ է տալիս ամուսնական ուխտը, հանդիսավոր խոստումներով և բոլոր իրենց ունեցածի՝ իրենց իսկ սրտերի և մտքերի, բոլոր իրենց օրերի և բոլոր իրենց երազանքների գրավականով:

Կարողանո՞ւմ եք ըմբռնել բարոյական շիզոֆրենիան, որը գալիս է *ձևացնելուց*, որ դուք մեկ եք, ձևացնելուց, որ դուք արել եք հանդիսավոր խոստումներ Աստծո առջև, կիսվելով ֆիզիկական խորհրդանիշներով և ֆիզիկական մտերմությամբ ձեր կեղծ միության, բայց հետո փախչելով, նահանջելով, հեռանալով բոլոր մյուս այն բաներից, որոնք նախատեսված էին լինելու ընդհանուր պարտականություն:

Մարդկային մտերմության հարցերում, դուք պետք է սպասեք: Դուք պետք է սպասեք մինչև կարողանաք տալ ամեն ինչ, իսկ դուք չեք կարող տալ ամեն ինչ, մինչև դուք իրավական և օրինական ձևով չամուսնանաք: Այսօրինաբար տալ այն, ինչ ձերը չէ, որ տաք (հիշեք, «դուք ձերինը չեք») և տալ միայն մի մասը նրա, որին չի կարող հետևել ձեր ողջ էության նվիրումը, ռուսական զգացմունքային ռուլետկա է: Եթե համառորեն հետապնդում եք ֆիզիկական բավարարվածության առանց երկնքի թույլտվության, դուք այնպիսի հոգևոր, հոգեբանական վնասվածքի սոսկալի ռիսկի եք դիմում, որ կարող եք քայքայել *ինչպես* ձեր ֆիզիկական մտերմության տեսնը, *այնպես էլ* ձեր լիասիրտ նվիրում ցուցաբերելու կարողությունը հետագա, ավելի ճշմարիտ սիրուն: Դուք կարող եք գալ կարգված սիրո, իսկական միության այդ ավելի ճշմարիտ պահին, միայն բացահայտելու ի սարսափ ձեզ, որ այն ինչ դուք պետք է պահած լինեիք, դուք ծախսել եք, և որ միայն Աստծո շնորհը կարող է ապաքինել առաքինության աստիճանաբար կորուստը, որը դուք այնքան անփութորեն շռայլել եք: Ձեր հարսանիքի օրը ամենալավ նվերը, որ կարող եք տալ ձեր հավերժական զուգընկերոջը, հենց ձեր լավագույն ինքնությունն է՝ մաքուր և անբիծ և փոխադարձաբար այդպիսի մաքրության արժանի լինելը:

Աստծո հետ փոխհարաբերության խորհրդանիշ

Երրորդը, կարո՞ղ եմ ասել, որ ֆիզիկական մտերմությունը ամուսնու և կնոջ միջև ոչ միայն խորհրդանշական միություն է, այլ նրանց հոգիների հենց միավորումը, բայց այն նաև իրենց միջև և իրենց Երկնային Հոր միջև համատեղ փոխհարաբերության խորհրդանիշ է: Նա անմահական և կատարյալ է: Մենք մահկանացու ենք և անկատար: Այնուամենայնիվ մենք նույնիսկ մահկանացու կյանքում որոնում ենք ուղիներ, որոնցով մենք կկարողանանք միանալ Նրա հետ հոգեպես: Այդպես անելով մենք ձեռք ենք բերում որոշ հասանելիություն ինչպես նրա շնորհին, այնպես էլ Նրա զորության մեծափառությանը: Այդ հատուկ պահերը ներառում են Տիրոջ տանը զոհասեղանի մոտ ծնկի իջնելը, նորածին մանկանն օրհնելը, Եկեղեցու նոր անդամին մկրտելն ու հաստատելը, Տիրոջ Ընթրիքի խորհրդանիշները ճաշակելը և այլն:

Սրանք պահեր են, երբ մենք միանգամայն տառացիորեն միավորում ենք մեր կամքը Աստծո կամքի հետ, մեր ոգին Նրա հոգու հետ, որտեղ վարագույրի միջով միավորումը դառնում է շատ իրական: Այդպիսի պահերի մենք ոչ միայն

ընդունում ենք Նրա աստվածայնությունը, այլ մենք միանգամայն տառացիորեն մեզ ենք վերցնում ինչ որ բան այդ աստվածությունից: Փաստորեն բոլոր տղամարդկանց և կանանց տրված այդ աստվածության կողմերից մեկը Նրա զորության օգտագործումն է մարդկային մարմին ստեղծելու համար, այդ հրաշքը բոլոր հրաշքների, այդ զարմանալիքը բոլոր զարմանալիքների՝ ժառանգականորեն և հոգեպես աշխարհի պատմության մեջ նախկինում երբեք չտեսնված և երբեք նորից չկրկնօրինակվող ողջ հավերժության բոլոր դարերի ընթացքում անկրկնելի մի էակի ստեղծումը: Երեխա՝ ձեր երեխան՝ աչքերով և ականջներով և մատներով ու ոտնաթաթերով և անպատմելի վեհության ապագայով:

Հավանաբար միայն ծնողը, ով գրկել է այդ նորածին մանկանը իր ձեռքերում կհասկանա հրաշքը, որի մասին ես խոսում եմ: Բավական է ասել, որ բոլոր կոչումներից, որ Աստված ընտրել է Իր համար, *Հայր* կոչումն է, որին Նա ամենաշատն է նախապատվություն տալիս և *արարումը* Նրա նշանաբառն է, հատկապես մարդու արարումը, արարումը Իր պատկերով: Ձեզ և ինձ տրվել է ինչ որ բան այդ աստվածայնությունից, *բայց ամենալուրջ և սրբազան սահմանափակումների ներքո: Միակ վերահսկողությունը, որ դրվել է մեզ վրա, դա ինքնավերահսկողությունն է՝* ինքնավերահսկողություն, որը ծնվում է այս պարգևը ներկայացնող աստվածային նվիրական զորության հանդեպ հարգանքից:

Վերահսկեք ծննդաստեղծ սրբազան ուժերը

Իմ սիրելի ընկերներ, հատկապես իմ երիտասարդ ընկերներ, տեսնո՞ւմ եք թե ինչու է անձնական մաքրությունը այդքան լուրջ հարց: Հասկանո՞ւմ եք, թե ինչու է Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը լույս ընծայել հայտարարություն հռչակելով, որ «ուղիները, որոնց միջոցով մահականացու կյանք է ստեղծվում, ղեկավարվում է աստվածության կողմից» և որ «ծննդաստեղծ սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին»:[15] Մի խաբվեք և մի կործանվեք: Մինչև այդպիսի զորությունները չվերահսկվեն և պատվիրանները չպահվեն, ձեր ապագան կարող է այրվել, ձեր աշխարհը կարող է բոցերի ճարակ դառնալ: Պատիժը ըստ երևույթին չի գա օրինազանցության հենց նույն օրը, բայց այն իհարկե անկասկած կգա: Եվ մինչև չլինի ճշմարիտ ապաշխարություն և հնազանդություն ողորմած Աստծուն, ապա մի օր, ինչ որ տեղ բարոյապես գոռոզներն ու անմաքուրները կաղոթեն այն հարուստ մարդու նման, որն ուզում էր, որ Ղազարոսը «իր մատի ծայրը թրջէ…. ջրով, և ի[ր] լեզուն հովացնէ. որովհետեւ այդ կրակի բոցի մէջ տանջվում է»:[16]

Ապաշխարության խաղաղությունն ու վերանորոգումը

Ես հայտարարեցի այստեղ հայտնության հանդիսավոր խոսքը, որ մարդու հոգին բաղկացած է ոգուց և մարմնից և որ Քրիստոսի Քավության միջոցով մարմինը կբարձրանա գերեզմանից միանալու ոգու հետ հավերժական գոյության համար: Ուստի այդ մարմինը մի բան է, որը պետք է մաքուր և սուրբ պահել: Մի վախեցեք կեղտոտել դրա ձեռքերը ազնիվ աշխատանքում: Մի վախեցեք սպիներից, որոնք կարող են հայտնվել ճշմարտությունը պաշտպանելիս կամ ճշտի համար պայքարելիս, բայց զգուշացեք սպիներից, որոնք հոգեպես տձևացնում են, որոնք գալիս են ձեզ այն գործերից, որոնք դուք չպետք է նախաձեռնեիք, որոնք ձեզ հետ տեղի են ունենում այն տեղերում, ուր դուք չպետք է գնայիք: Զգույշ եղեք որևէ ճակատամարտի վերքերից, որում դուք կռվել եք սխալ կողմում:[17]

Եթե ձեզանից ոմանք կրում են այդպիսի վերքեր, և ես գիտեմ, որ դուք կրում եք, ձեզ կհասցվի ապաշխարության խաղաղությունն ու վերականգնումը, որը հասանելի է Տեր Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության միջոցով: Այդպիսի լուրջ հարցերում ապաշխարության ուղին հեշտորեն չի սկսվում, ոչ էլ առանց ցավի է անցնում: Բայց աշխարհի Փրկիչը կքայլի այդ գլխավոր ճամփորդության ընթացքում ձեզ հետ: Նա կզորացնի ձեզ, երբ դուք երերաք: Նա կլինի ձեր լույսը, երբ շատ խավար թվա: Նա կվերցնի ձեր ձեռքը և կլինի ձեր հույսը, երբ ձեր ողջ ունեցած հույսը թվա, թե վերացել է: Նրա կարեկցանքն ու ողորմածությունը ողջ իրենց մաքրագործող և բժշկող ուժով անվճար տրվում է բոլորին, ով իսկապես ցանկանում է լիակատար ներում և կկատարի քայլեր, որոնք առաջնորդում են դեպի այն:

Փառավորեք Աստծուն մարմնում և ոգում

Ես բերում եմ վկայություն կյանքի մեծ ծրագրի վերաբերյալ, աստվածության զորությունների, ողորմածության և ներման և Տեր Հիսուս Քրիստոսի Քավության վերաբերյալ, որոնք բոլորը բարոյական մաքրության հարցերում խորն իմաստ ունեն: Ես վկայում եմ, որ մենք պետք է փառավորենք Աստծուն մեր մարմնում և մեր հոգում: Ես շնորհակալություն եմ հայտնում երկնքին պատանիների լեգեոնների համար, որ անում են հենց այդ և օգնում ուրիշներին անել նույնը: Ես շնորհակալ եմ այն տների համար, որտեղ ուսուցանվում է սա: Բարոյական մաքրության այդ կյանքերը կարող են հարգվել բոլորի կողմից, ես աղոթում եմ հենց Իր մաքրության անունով, այսինքն Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. Հակոբ 2.7, տես Հակոբ 2 և 3 մաքրաբարոյության վերաբերյալ նրա քարոզի լրիվ տեքստի համար:
2. *The Lessons of History* (1968), 35–36.
3. Առակաց Զ.27–28, 32–33:
4. Ալմա 39.5:
5. Վարդապետություն և Ուխտեր 88.15:
6. Վարդապետություն և Ուխտեր 93.34:
7. In Conference Report, Apr. 1972, 139; or *Ensign,* July 1972, 113.
8. Տես Եբրայեցիս Զ.6:
9. Ա Կորնթացիս Զ.18:
10. Վարդապետություն և Ուխտեր 59.6, շեղագիրն ավելացված է:
11. Տես հատկապես Վարդապետություն և Ուխտեր 19.15–20:
12. Ա Կորնթացիս Զ.19–20, շեղագիրն ավելացված է, տես նաև հատվածներ 13–18:
13. Տես Ծննդոց Բ.23–24:
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 128.18:
15. «Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին» *Ensign,* նայ. 1995, 102:
16. Ղուկաս ԺԶ.24:
17. Տես James E. Talmage, in Conference Report, Oct. 1913, 117:

ՏՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գրեթե անհնարին է լինել լիաժամկետ տնային տնտեսուհի և լիաժամկետ աշխատող:

—Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Ամուսնուց ակնկալվում է, որ նա պահի իր ընտանիքը և միայն արտակարգ իրավիճակում կինը պետք է ձեռք բերի դրսի աշխատանք: Նրա տեղը տանն է՝ կառուցելու տունը դարձնելով այն երկինք հրճվանքի:

Բազմաթիվ ամուսնալուծությունների հետքերը տանում են դեպի ուղիղ այն օրը, երբ կինը թողեց տունը և դուրս գնաց աշխատելու աշխարհում: Երկու եկամուտը բարձրացնում են ապրուստի չափանիշը նորմայից վեր: Երկու ամուսինների աշխատանքը կանխարգելում են լիակատար և պատշաճ ընտանեկան կյանքը, խախտում ընտանեկան աղոթքները, ստեղծում մի անկախություն, որը համագործակցական չէ, առաջացնում է աղավաղում, սահմանափակում ընտանիքը և հուսահատեցնում արդեն ծնված երեխաներին….

…. Ես աղաչում եմ ձեզ, ձեզ, ովքեր կարող եք և պետք է պահեք և մեծացնեք ընտանիք՝ Կանայք, տուն եկեք տպագրական աշխատանքից, լվացքատնից, բուժքույրական աշխատանքից, տուն եկեք գործարանից, սրճարանից:

Ոչ մի կարիերա իր կարևորությամբ չի էլ մոտենում կնոջ, տանտիկնոջ, մոր աշխատանքին՝ ճաշ եփելուն, ամանները լվանալուն, թանկագին ամուսնու և երեխաների համար անկողինները սարքելուն:

Կանայք, տուն եկեք ձեր ամուսինների մոտ: Դարձրեք տունը երկինք նրանց համար: Տուն եկեք կանայք, ձեր երեխաների մոտ, ծնված և չծնված: Ձեզ վրա վերցրեք մայրության պարտականությունները և առանց նեղվելու օգնեք ավելի մեծ դերի իրականացմանը՝ ստեղծեք մարմիններ անմահ հոգիների համար, ովքեր անհամբեր սպասում են:

Երբ դուք լիովին լրացնեք ձեր ամուսնուն ընտանեկան կյանքում և ծնեք և մեծացնեք հավատքով, հավատարմությամբ, պատասխանատվությամբ և բարությամբ լի երեխաներ, ապա դուք հասել եք ձեր նվաճումներից բարձրագույնին, անզուգականին և դուք կլինեք նախանձի առարկա ժամանակի և հավերժության ընթացքում» (fireside address in San Antonio, Texas, 27, 32–33):

«Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս է Տերը նայում նրանց վրա, ովքեր փոխանակում են մսից և արյունից երեխաներին դաշնամուրների կամ հեռուստացույցի կամ էլ ավտոմեքենայի հետ, և մի՞թե սա չէ իրական պատճառը, երբ մարդիկ գնում են այս շքեղությունները, բայց ի վիճակի չեն ունենալ իրենց երեխաները» (*Teachings of Spencer W. Kimball,* 329):

«Մենք հաճախ ենք ասել. Մայրության այս աստվածային ծառայությունը կարող է մատուցվել միայն մայրերի կողմից: Այն չի կարելի փոխանցել ուրիշներին: Դայակները չեն կարող դա անել, հասարակական մանկամսուրները չեն կարող դա անել: Վարձված օգնությունը չի կարող անել դա, բարի ազգականները չեն կարող դա անել: Միայն մայրը, սիրող հոր, եղբայրների և քույրերի և մյուս հարազատների օգնությամբ կարող է լիովին անհրաժեշտ չափով ուշադիր խնամք ցույց տալ» (“The Blessings and Responsibilities of Womanhood,” *Ensign,* Mar. 1976, 73):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Ժամանակ հատկացրեք միշտ լինել խաչմերուկներում, երբ ձեր երեխաները կամ գալիս են կամ գնում, երբ նրանք գնում են դպրոց և վերադառնում են դպրոցից, երբ նրանք գնում են կամ վերադառնում ժամադրությունից, երբ նրանք ընկերներ են բերում տուն: Եղեք այնտեղ՝ խաչմերուկներում, անկախ նրանից ձեր երեխաները վեց տարեկան են, թե տասնվեց: Առակաց գրքում մենք կարդում ենք. «Բաց ընկած տղան անարգանք կբերէ իր մոր համար» (Առակաց ԻԹ.15): Մեր հասարակության մեծագույն մտահոգությունների շարքում են միլիոնավոր անխնամ մնացած երեխաներ, ովքեր տուն են գալիս ամեն օր դատարկ բնակարաններ, առանց հսկողության թողված աշխատող ծնողների կողմից» (*To the Mothers in Zion,* 8):

«Տանը, որտեղ կա աշխատունակ ամուսին, ակնկալվում է, որ նա լինի հաց վաստակողը: Երբեմն մենք լսում ենք, որ ամուսինները տնտեսական պայմանների պատճառով կորցրել են իրենց աշխատանքը և սպասում են, որ կանայք դուրս գան տնից և աշխատեն, չնայած ամուսինը դեռ ի վիճակի է ապահովել իր ընտանիքը: Այս դեպքերում մենք հորդորում ենք ամուսնուն անելինարավոր ամեն ինչ, որպեսզի կինը մնա տանը և խնամի երեխաներին, մինչ նա կշարունակի ապահովել իր ընտանիքը ինչպես կարող է, չնայած այն աշխատանքը, որը նա կունենա,կարող է չլինել կատարյալ և ընտանիքի բյուջենզուսպ կլինի:

Երբեմն մայրն աշխատում է տնից դուրս ամուսնու քաջալերանքով կամ նույնիսկ պահանջով: Նա է հիմնականում ցանկանում հարմարավետության միջոցներ, որոնք կարող են գնել միայն հավելյալ եկամտով: Այսպիսի դեպքերում ոչ միայն ընտանիքն է տուժում եղբայրներ, այլ ձեր իսկ հոգևոր

աճը և ձեր առաջընթացն է խոչընդոտվում: Ես ասում եմ ձեզ բոլորիդ, Տերը տղամարդկանց վրա է դրել իրենց ընտանիքներն ապահովելու պարտականությունն այն ձևով, որպեսզի կինը մնա տանը և կատարի իր դերը որպես մայր….

Կանանց շարժման մի ակնհայտ ազդեցություն է անբավարարվածության զգացումը, որն առաջացել է երիտասարդ կանաց մեջ, ովքեր ընտրել էին կնոջ և մոր դերը: Նրանց հաճախ ստիպել են զգալ, որ կան ավելի հետաքրքիր և ինքնակայացնող դերեր կանանց համար, քան տնային գործերը, տակդիրներ փոխելը և մայրիկ կանչող երեխաները: Այս տեսակետը կորցնում է տեսողությունից հավերժական հեռանկարը, որ Աստված ընտրեց կանանց մոր վսեմ դերի համար և որ վեհացումը հավերժական հայրություն է և հավերժական մայրություն» [’To the Elect Women of the Kingdom of God,’ Nauvoo Illinois Relief Society Dedication, 30 June 1978.]“ (*Teachings of Ezra Taft Benson*, 506–7, 548–49):

«Մեր միջավայրում կան ձայներ, որոնք կփորձեն համոզել ձեզ, որ օջախի վրա կենտրոնացած այս ճշմարտությունները կիրառելի չեն մեր ներկա օրերի պայմաններում: Եթե դուք լսեք և ականջ դնեք, դուք կգայթակղվեք հեռանալ ձեր հիմնական պարտականություններից:

Գայթակղիչ ձայներն աշխարհում կանչում են կանանց համար «կյանքի տարբերակային ոճերի» մասին: Դրանք պնդում են, որ որոշ կանայք ավելի լավ են հարմարված կարիերայի, քան մայրության համար:

Այս անձինք տարածում են իրենց դժգոհությունը այն պրոպագանդայով, որ կան ավելի հետաքրքիր և ինքնակայացնող դերեր կանանց համար, քան տնարարությունն է: Ոմանք նույնիսկ այնքան համարձակություն են ունեցել, որ առաջարկել են Եկեղեցին վերացնի «տնային տնտեսուհու և երեխաներ աճեցնող Մորմոն կանանց ստերեոտիպը» (“The Honored Place of Woman,” *Ensign*, Nov. 1981, 105):

«Կնոջ համար առաջին առաջնահերթությունն է նախապատրաստվել իր աստվածային և հավերժական առաքելությանը, անկախ նրանից նա վաղ, թե ուշ կամուսնանա: Սխալ է զանց առնել, որ կրթության համար նախապատրաստումը չառնչվող բնագավառներում ուղղակի ժամանակավոր նախապատրաստում են փող վաստակելուն: Կանայք, երբ դուք ամուսնացած եք, ապահովելը ամուսնու դերն է, ոչ թե ձերը: Մի զոհաբերեք ձեր նախապատրաստությունը հավերժորեն կարգված առաքելությանը հանուն ժամանակավոր փող վաստակելու հմտությունների անհրաժեշտությանը, որը դուք կարող եք օգտագործել կամ չօգտագործել» (“In His Steps,” 64):

«Ժամանակն է, որ մեր՝ հայրերիս սրտերը դառնան դեպի մեր երեխաները և երեխաների սրտերը դեպի հայրերը, այլապես մենք երկուսով էլ կանիծվենք: Ամուսնալուծության սերմերը հաճախ ցանվում են և երեխաների օրհնությունները ուշացվում կանանց միջոցով, ովքեր աշխատում են տնից դուրս: Աշխատող մայրերը պետք է հիշեն, որ իրենց երեխաները սովորաբար ավելի շատ կարիք ունեն մոր, քան փողի» (in Conference Report, Oct. 1970, 24):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

Տես մեջբերումները, էջ «00»:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Քույրեր, հսկեք ձեր երեխաներին: Նրանք ապրում են չարի աշխարհում: Այդ ուժերը նրանց շրջապատում են: Ես հպարտ եմ ձեր որդիներից դուստրերից այնքան շատերով, ովքեր լավ կյանքով են ապրում: Բայց ես խորապես մտահոգված եմ ուրիշ շատերով, ովքեր աստիճանաբար բռնում են աշխարհիկ ուղիներ: Ոչինչ ավելի թանկ չէ ձեզ համար, բացարձակապես ոչինչ: Ձեր երեխաները ամենաարժեքավոր բանն են, որ դուք կունենաք ժամանակի կամ ողջ հավերժության համար: Դուք իսկապես բախտավոր կլինեք, երբ ծերանաք և նայեք նրանց, ում դուք աշխարհ եք բերել, նրանց մեջ գտնելով շիտակություն կյանքում, առաքինություն ապրելակերպում և ազնվություն նրանց վարքում:

Կարծում եմ երեխաների խնամքն ու դաստիարակությունը ավելին է, քան ժամանակավոր պարտականությունը: Ես հասկանում եմ, որ որոշ կանայք պետք է աշխատեն, բայց վախենում եմ, որ կան շատ-շատերը, ովքեր անում են այդպես միայն մի քիչ ավելի ճոխության և մի քանի հետաքրքիր խաղալիքներ ձեռք բերելու միջոցներ վաստակելու համար:

Եթե դուք պիտի աշխատեք, հավելյալ բեռ եք կրելու: Դուք չեք կարող թույլ տալ անուշադրության մատնել ձեր երեխաներին: Նրանք կարիք ունեն ձեր ղեկավարությանը սովորելիս, տանը թե դրսում աշխատելիս, դաստիարակելիս, որը միայն դուք կարող եք համապատասխան ձևով տալ՝ սիրով, օրինությամբ, քաջալերանքով և մոր մոտիկությամբ:

Ընտանիքներն ամենուր մասնատվում են: Ընտանեկան հարաբերությունները լարված են, քանի որ կանայք փորձում են հասցնել երկու լիաժամկետ աշխատանքի խիստ պահանջները:

Ես բազմաթիվ հնարավորություններ եմ ունեցել խոսելու ղեկավարների հետ, ովքեր պարսավում են այն, ինչ տեղի է ունենում՝ հանցախմբեր մեր քաղաքների փողոցներում, երեխաներին սպանող երեխաներ, իրենց ժամանակը անցկացնելով այնպիսի գործերում, որը կարող է տանել միայն բանտ կամ մահ: Մենք տեսնում ենք անհամար մեծ թվով երեխաներ, ովքեր ծնվում են միայնակ մայրերից: Այդպիսի երեխաների ապագան գրեթե անխուսափելիորեն արատավորվում է ծնված օրվանից: Յուրաքանչյուր տուն կարիք ունի լավ հոր և լավ մոր:

Մենք չենք կարողանում բավականաչափ արագ բանտեր կառուցել այս երկրում կարիքը բավարարելու համար:

Ես չեմ տատանվում ասել, որ դուք, ովքեր մայրեր եք, կարող եք անել ավելին, քան որևէ այլ խումբ այս իրավիճակը փոխելու համար: Բոլոր այս խնդիրների արմատները գտնվում են

մարդկանց տներում: Տների կործանումն է, որ տանում է հասարակության կործանմանը:

Եվ այսպիսով այս երեկո, իմ սիրելի քույրեր, իմ ուղերձն է ձեզ, իմ մարտահրավերն է ձեզ, իմ աղոթքն է, որ դուք վերստին նվիրաբերեք ձեզ ձեր տներն ամրացնելուն» (“Walking in the Light of the Lord,” *Ensign,* Nov. 1998, 99–100):

«Մի քանի տարի առաջ Նախագահ Բենսոնը մի ուղերձ հղեց Եկեղեցու կանանց: Նա քաջալերեց նրանց թողնել իրենց աշխատանքը և նվիրել իրենց անձնական ժամանակը իրենց երեխաներին: Ես հաստատում եմ նրա կողմից բռնած դիրքորոշումը:

Այնուամենայնիվ, ես ընդունում եմ, ինչպես նա ընդունեց, որ կան որոշ կանայք (փաստորեն խիստ շատ են դարձել), ովքեր ստիպված են աշխատել ընտանիքի կարիքները բավարարելու համար: Ձեզ ես ասում եմ, արեք լավագույնը, ինչ կարող եք: Ես հուսով եմ, որ եթե դուք լիաժամկետ աշխատող եք, դուք անում եք դա հիմնական կարիքները բավարարելու համար և ոչ թե ուղղակի ձեզ նրբագեղ տուն, մոդայիկ մեքենաներ և այլ շքեղություններ վայելելու համար: Մեծագույն աշխատանքը, որ որևէ մայր երբևէ կանի՝ իր երեխաներին արդարությամբ և ճշմարտությամբ դաստիարակելը, ուսուցանելը, օգնելը, քաջալերելը և կրթելն է: Ուրիշ ոչ մեկը չի կարող պատշաճորեն զբաղեցնել նրա տեղը:

Գրեթե անհնարին է լինել լիաժամկետ տնային տնտեսուհի և լիաժամկետ աշխատող: Գիտեմ, թե ինչպես են ձեզանից ոմանք մաքառում այդ հարցի վերաբերյալ որոշումներ ընդունելիս: Ես կրկնում եմ՝ արեք լավագույնը ինչ կարող եք: Դուք գիտեք ձեր հանգամանքները և ես գիտեմ, որ դուք խորապես մտահոգված եք ձեր երեխաների բարօրությամբ: Ձեզանից յուրաքանչյուրն ունի եպիսկոպոս, որը կխորհրդակցի ձեզ հետ և կօգնի ձեզ: Եթե զգում եք, որ կարիք ունեք խոսելու մի հասկացող կնոջ հետ, առանց տատանվելու կապվեք ձեր Սփոփող Միության նախագահի հետ:

Այս Եկեղեցու մայրերին, յուրաքանչյուր մոր, ով այստեղ է այսօր, ես ուզում եմ ասել, որ երբ տարիներն անցնեն, դուք գնալով ավելի երախտապարտ կզգաք, այն բանի համար, ինչ արել եք՝ ուղղորդելով ձեր երեխաների կյանքերը արդարակեցության և բարության, ազնվության և հավատքի ուղղությամբ: Դա ամենայն հավանականությամբ տեղի կունենա, եթե դուք կարողանաք բավականաչափ ժամանակ անցկացնել նրանց հետ» (in Conference Report, Oct. 1996, 93–94; կամ *Ensign,* Nov. 1996, 69):

«Կանանց համար, ովքեր անհրաժեշտ են գտնում աշխատել, երբ կնախընտրեին լինել տանը, ես կխոսեմ համառոտ: Ես գիտեմ, որ կան ձեզանից շատերը, ովքեր գտնվում են այս իրավիճակում: Ձեզանից ոմանց լքել են և բաժանվել, [թողնելով] երեխաներին, որոնց համար պետք է հոգ տանել: Ձեզանից ոմանք այրիներ են խնամքի տակ գտնվող ընտանիքներով: Ես մեծարում եմ ձեզ և հարգում եմ ձեզ ազնվության և ինքնավստահության ոգու համար: Ես աղոթում եմ, որ Տերն օրհնի ձեզ ուժով և մեծ կարողությամբ, քանզի դուք երկուսի կարիքն էլ ունեք: Դուք ունեք ինչպես հաց վաստակողի, այնպես էլ տնային տնտեսուհու պարտականությունները: Ես գիտեմ, որ դա դժվար է: Ես գիտեմ, որ դա հուսահատեցնող է: Աղոթում եմ, որ Տերն օրհնի ձեզ հատուկ իմաստությամբ և նշանավոր տաղանդով, որն անհրաժեշտ է ձեր երեխաներին ապահովելու համար ժամանակով և ընկերակցությամբ ու սիրով և այն հատուկ ղեկավարությամբ, որը միայն մայրը կարող է տալ: Ես աղոթում եմ, որ նա օրհնի ձեզ ընտանիքի, ընկերների, և Եկեղեցու կողմից անսահմանափակորեն տրվող օգնությամբ, որը կբարձրացնի ձեզանից ոմանց բեռը ձեր ուսերից և կօգնի ձեզ ծայրահեղ պահերին:

Մենք առնվազն փոքր ինչ գիտակցում ենք այն միայնակությունը, որ դուք երբեմն զգում եք և հուսախաբությունները, որոնք պետք է ճաշակեք, երբ փորձում եք հաղթահարել խնդիրները, որոնք լուծելը ձեր կարողությունից վեր են թվում: Երբեմն դուք կարիք եք ունենում ուտելիքի ձեր սեղանների համար և մենք վստահ ենք, որ եպիսկոպոսներն այնտեղ կլինեն ապահովելու ուտելիքով և այլ իրերով ու ծառայություններով, ըստ այն մեծ ծրագրի, որը Տերն է տվել իր Եկեղեցուն: Բայց մենք գիտենք, որ շատ հաճախ դուք ավելի մեծ կարիք ունեք ըմբռնման և գնահատման և ընկերակցության: Մենք մի քիչ ավելի ջանասիրաբար կփորձենք զարգացնել այս արժանիքները, և ես հորդորում եմ ձեզ քույրեր, ովքեր հնարավորություն ունեք անելու այդ, օգնության հասնել նրանց, ովքեր գտնվում են այդպիսի ավելի անհաջող պայմաններում:

Այժմ դիմելով մյուսներին, ովքեր աշխատում են, երբ դա անհրաժեշտ չէ, և ովքեր այդ անելով թողնում են երեխաներին նրանց խնամքին, ովքեր հաճախ ընդամենը վատ փոխարինողներ են, ես հղում եմ նախազգուշացման խոսք: Մի հետևեք գործառույթների, որոնք հետագայում կբերեն ձեզ զղջման: Եթե ձեր ամենօրյա աշխատանքի նպատակն է ուղղակի փող ստանալ նավակի կամ մոդայիկ ավտոմեքենայի կամ էլ այլ ցանկալի, բայց ոչ անհրաժեշտ բանի համար, և այդ ընթացքում դուք կորցնում եք ձեր երեխաների ընկերակցությունը և նրանց կրթելու հնարավորությունը, դուք հավանաբար կգտնեք, որ կորցրել եք կարևորը մինչ ձգտում էիք բռնել ստվերին» (in Conference Report, Oct. 1983, 114; կամ *Ensign,* Nov. 1983, 83):

Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին

«Ըստ աստվածային ծրագրի հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով և առաքինությամբ և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքների կենսական կարիքներն ու իրենց ընտանիքների պաշտպանությունը: Մայրերը հիմնականում պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակության համար: Այս սուրբ պարտականություններում հայրերը և մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ: Անաշխատունա-

կությունը, մահը կամ այլ հանգամանքներ կարող են անհրաժեշտություն առաջացնել, որպեսզի փոփոխվեն ընտանիքի համար հոգ տանողների դերերը: Անհրաժեշտության դեպքում մոտ ազգականները պետք է օգնություն ցույց տան» (*Ensign,* Nov. 1995, 102):

Երեց Հովարդ Վ. Հանթեր

«Անձնական ձևով ես վերհիշում եմ այն փորձառությունները, որոնք իմ սիրելի կինն ու ես անցանք, երբ որոշում կայացրեցինք աշխատանքի համար դասընթաց անցնելու վերաբերյալ: Ես անցել էի մի քանի կուրս դեղագործությունից՝ ծրագիր ունենալով մտքումս կարիերա բժշկության բնագավառում: Ինչպես մեզանից շատերն են անում ես միտքս փոխեցի և զբաղվեցի մեկ ուրիշ գործով՝ բանկային: Մենք օրհնվեցինք կայուն աշխատանքով, բայց ինձ հրապուրում էր իրավաբանի մասնագիտությունը: Սա լուրջ որոշում էր, որովհետև ես ամուսնացած էի և պետք է պահեի ընտանիքս, բայց ծոմապահությունից և աղոթքից հետո և ձեռք բերելով տեղեկություններ, թե որն էր լավագույն ուղին սկսելու, ես վերջացրեցի ավարտական կուրսի աշխատանքը և ընդունվեցի իրավաբանական համալսարան: Ես դասի էի գնում գիշերը, որովհետև անհրաժեշտ էր աշխատել օրվա ընթացքում: Դրանք հեշտ տարիներ չէին մեզ համար, բայց ցանկությունները սովորաբար իրականանում են, եթե մենք կամենում ենք վճռական ջանքեր գործադրել: Կարիք չկա ասել, որ ես ունեի կնոջս օգնությունն ու աջակցությունը: Նա մնաց տնային տնտեսուհի և հոգ տարավ մեր երեխաների համար: Այն ինչ նա տվեց սիրով, քաջալերանքով, խնայողությամբ և ընկերակցությամբ շատ ավելին էր, քան նյութական օգնությունը, որը կարող էր կատարել աշխատանքի մտնելով:

Մեր կանայք արժանի են մեծ պատվի այն աշխատանքային ծանր բեռի համար, որ նրանք կրում են ամեն օր մեր տներում: Ոչ ոք ավելի շատ էներգիա չի վատնում, քան նվիրված մայրն ու կինը: Այնուամենայնիվ, իրերի սովորական ընթացքի դեպքում, տղամարդուն է Տերը նշանակել հաց վաստակողի դերը:

Մեր քույրերի համար կան նաև աշխատանքի համար ծրագրեր կազմելու հարկադրական պատճառներ: Մենք ուզում ենք, որ նրանք ձեռք բերեն ողջ կրթությունը և մասնագիտական ուսուցումը, որ հնարավոր է մինչև ամուսնանալը: Եթե նրանք այրիանան կամ ամուսնալուծվեն և կարիք ունենան աշխատելու, մենք ուզում ենք, որ դա արժանավայել և վարձատրվող աշխատանք լինի: Եթե քույրը չամուսնանա, նա ունի ամեն իրավունքը զբաղվելու մի մասնագիտությամբ, որը թույլ կտա նրան զարգացնել իր տաղանդներն ու պարգևները:

Եղբայրներ և Քույրեր, մենք պետք է անենք անհրաժեշտ ամեն բան բավականաչափ նախապատրաստվելու աշխատանքի կամ կարիերայի համար: Մենք ինքներս ենք պարտավոր անել մեր ուժերի սահմանում լավագույնը և պարտավոր ենք անել մեր լավագույնը մեր ընտանիքներն ապահովելու համար» (“Prepare for Honorable Employment,” *Ensign,* Nov. 1975, 123–24):

Երեց Բոյդ Կ. Փաքեր

«Առաջին Նախագահությունը խորհուրդ է տվել, որ «մայրը, որը վստահում է իր երեխայի խնամքն ուրիշներին, որպեսզի կատարի ոչ մայրական աշխատանք, լինի դա ոսկու, համբավի, կամ հասարակական ծառայության համար, պետք է հիշի, որ «բաց ընկած տղան անարգանք կբերէ իր մօր համար» (Առակաց ԻԹ.15): Մեր օրերում Տերն ասել է, որ եթե ծնողները իրենց երեխաներին չսովորեցնեն Եկեղեցու վարդապետությունները, «մեղքը լինի ծնողների գլխին» (ՎԱՈՒ 68.25)…

«Առաջին Նախագահության կողմից այդ ուղերձն ու նախազգուշացումը ավելի է անհրաժեշտ, այն նույնքան արդիական է այսօր, որքան երբ այն տրվեց [1942] թվականին: Իսկ Եկեղեցու որևէ կազմակերպության կամ ղեկավարության որևէ մակարդակի կողմից հնչող ոչ մի ձայն չի կարող հավասարվել Առաջին Նախագահության ձայնին» (in Conference Report, Oct. 1993, 30; կամ *Ensign,* Nov. 1993, 23):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Նախագահ Բենսոնը սովորեցրել է, որ մայրը երեխաների հետ պետք է տանը լինի: Նա նաև ասել է. «Մենք հասկանում ենք…. որ մեր ընտիր քույրերից ոմանք այրիանում են և ամուսնալուծվում, իսկ մյուսները գտնվում են անսովոր պայմաններում, որտեղ անհրաժեշտությունից ելնելով, նրանցից պահանջվում է աշխատել մի որոշ ժամանակահատվածում: Բայց այդ դեպքերը բացառություններ են, ոչ թե կանոն (Ezra Taft Benson, *To the Mothers in Zion* [pamphlet, 1987], pp. 5–6): Դուք այդ անսովոր պայմաններում արժանի եք Տիրոջ կողմից հավելյալ ոգեշնչման և ուժի: Ովքեր թողնում են տունը ավելի քիչ պատճառներով, դրան չեն արժանանա» (in Conference Report, Apr. 1993, 42–43; կամ *Ensign,* May 1993, 34):

ԾՆՈՂ ԼԻՆԵԼ՝ ՍՏԵՂԾԵԼ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՎՐԱ ԿԵՆՏՐՈՆԱՑԱԾ ՏՈՒՆ

> *Ձեր տունը ուսման տուն դարձնելու իդեալական ուղին հավատարմորեն ընտանեկան երեկո անցկացնելն է:*
>
> —Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Ծնողական հաջողություն

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Ես երբեմն տեսել եմ լավ ընտանիքների երեխաներ, ովքեր ապստամբել են, դիմադրել, մոլորվել, մեղանչել և նույնիսկ փաստացի կռվել Աստծո ուսմունքների դեմ: Սրանով նրանք վիշտ են պատճառել իրենց ծնողներին, ովքեր արել են իրենց լավագույնը՝ նրանց ուղղություն տալով, ուսուցանելով և օրինակ ծառայելով: Բայց ես անընդհատ տեսել եմ, ինչպես են այս նույն երեխաներից շատերը տարիներ շարունակ թափառելուց հետո հասունանում, գիտակցում, թե ինչ են իրենք կորցրել, ապաշխարում և մեծ ներդրումներ կատարում իրենց համայնքի հոգևոր կյանքում: Իմ հավատալու պատճառը, որ այս կարող է տեղի ունենալ այն է, որ չնայած բոլոր թշնամական քամիներին, որոնց ենթարկվում են այս մարդիկ, նրանք ավելի շատ են ներգործվում, շատ ավելի, քան իրենք գիտակցում են, այն տների կյանքի հոսանքով, որոնցում դաստիարակվել են: Երբ հետագա տարիներին նրանք կարոտ են զգում վերստեղծելու իրենց սեփական ընտանիքներում նույն մթնոլորտը, որը նրանք վայելել են որպես երեխաներ, նրանք, կարծես, դառնում են դեպի հավատը, որն իմաստ էր տալիս իրենց ծնողների կյանքին» (in Conference Report, Oct. 1974, 160; կամ *Ensign*, Nov. 1974, 111):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Դաստիարակեք ձեր երեխաներին սիրով և Տիրոջ հորդորներով:

Երջանիկ, խաղաղ երեխաներ դաստիարակելը հեշտ մարտահարվեր չէ այսօրվա աշխարհում, բայց դա կարելի է անել և դա արվում է:

Պատասխանատու ծնող լինելը բանալին է:

Ամեն ինչից առավել երեխաները պետք է իմանան և զգան, որ իրենք սիրված են, ցանկալի և գնահատված: Նրանք պետք է հաճախ համոզվեն դրանում: Ակնհայտորեն սա մի դեր է, որ ծնողները պետք է կատարեն և ամենահաճախը մայրը կարող է անել դա լավագույն ձևով…

Երեխաները պետք է ուսուցանվեն աղոթել, ապավինել Տիրոջն առաջնորդության համար և արտահայտել շնորհակալություն այն օրհնությունների համար, որ իրենք ունեն: Ես հիշում եմ մահճակալի կողքին մեր փոքրիկ երեխաների հետ ծնկի իջնելը և նրանց օգնելն իրենց աղոթքներում:

Երեխաներին պետք է ուսուցանվի զանազանել ճիշտը սխալից: Նրանք կարող են և պետք է սովորեն Աստծո պատվիրանները: Նրանց պետք է սովորեցվի, որ սխալ է գողանալը, ստելը, խաբելը, ցանկանալն այն, ինչ ուրիշներն ունեն:

Երեխաներին պետք է սովորեցնել տանը աշխատել: Նրանց պետք է սովորեցնել, որ ազնիվ աշխատանքը զարգացնում է արժանապատվությունը և ինքնահարգանքը: Նրանք պետք է սովորեն աշխատելու և աշխատանքը լավ կատարելու հաճույքը:

Երեխաների հանգստի ժամանակը պետք է կառուցողական ձևով ղեկավարվի՝ ձգտելով օգտակար, դրական զբաղմունքների: Խիստ շատ հեռուստացույց նայելը կարող է վնասակար լինել, իսկ պոռնոգրաֆիան այս միջավայրում անհանդուրժելի է: Հաշվարկված է, որ աճող երեխաներն այսօր շաբաթական քսանհինգ ժամից ավելի հեռուստացույց են դիտում:

Համայնքները պատասխանատվություն ունեն աջակցելու ընտանիքին թողարկելով օգտակար զվարճություններ: Այն ինչ հանդուրժում է հասարակությունը, կդառնա չափանիշ այսօրվա երիտասարդության համար:

Ընտանիքները պետք է ավելի շատ ժամանակ անցկացնեն միասին աշխատելով և հանգստանալով: Ընտանեկան երեկոները պետք է պլանավորվեն շաբաթը մեկ անգամ որպես հանգստի ժամանակ, ընդգրկելով աշխատանքային ծրագրեր, երգիծանքներ, երգեր դաշնամուրի շուրջը, խաղեր, հատուկ հյուրասիրություններ և ընտանեկան աղոթքներ: Ինչպես շղթայի երկաթյա օղակները, այս փորձառությունը միմյանց կկապի ընտանիքի անդամներին սիրով, պարծանքով, ավանդույթով, ուժով և հավատարմությամբ:

Սուրբ գրությունների ուսումնասիրությունը պետք է կատարել մեր տներում յուրաքանչյուր կիրակի օրը:

Ամենօրյա հավաքները նույնպես գովելի զբաղմունք են, որտեղ սուրբ գրությունների ընթերցանությունը, օրհներգեր երգելը և ընտանեկան աղոթքը մեր ամենօրյա գործերի մասն են կազմում:

Ծնողները պետք է իրենց երեխաներին նախապատրաստեն ավետարանի արարողությունների համար…

Տունն այն է, ինչը վերափոխման կարիք ունի: Փորձեք այսօր և վաղը փոփոխություն մտցնել ձեր տանը, երկու անգամ աղոթելով ձեր ընտանիքի հետ…. Օրհնություն խնդրեք յուրաքանչյուր կերակուրի համար, որ դուք ուտում եք: Անցկացրեք տասը րոպե, … կարդալով [սուրբ գրություններում] Տիրոջ խոսքերը:… Թող սերը, խաղաղությունը և Տիրոջ Հոգին, բարությունը, գթությունը, ուրիշների համար զոհաբերությունը առատանան ձեր ընտանիքներում: Հեռու վանեք կոպիտ խոսքերը, … և թող Աստծո Հոգին տիրի ձեր սրտերում: Ուսուցանեք ձեր երեխաներին այս բաները հոգով և զորությամբ… Հարյուրից մեկ երեխա չէր մոլորվի, եթե ընտանեկան մթնոլորտը, օրինակը և ուսուցումը ներդաշնակության մեջ լինեին… Քրիստոսի ավետարանի հետ (Joseph F. Smith, *Gospel Doctrine,* 5th ed., Salt Lake City: Deseret Book Co., 1939, p. 302.)» (in Conference Report, Oct. 1982, 84–87; կամ *Ensign,* Nov. 1982, 60–61):

Երեց Օրսոն Ֆ. Ուիթնի

«Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է և նա չի սովորեցրել երբևէ ավելի մխիթարող վարդապետություն, որ հավատարիմ ծնողների հավերժական կնքումները և աստվածային խոստումները, որոնք տրվել են նրանց հանուն Ճշմարտության Գործի քաջարի ծառայության համար, կփրկի ոչ միայն իրենց, այլ նմանապես նրանց ժառանգներին: Չնայած որոշ ոչխարներ հավանաբար կթափառեն, Հովվի աչքը նրանց վրա է և վաղ թե ուշ նրանք կզգան Աստվածային Ճակատագրի շոշափուկները իրենց հասնելիս և իրենց փարախ ետ բերելիս: Լինի այս, թե գալիք կյանքում, նրանք կվերադառնան: Նրանք ստիպված կլինեն վճարել իրենց պարտքը արդարադատությանը, նրանք կտառապեն իրենց մեղքերի համար և գուցե քայլեն փշոտ արահետով, բայց եթե այն ի վերջո տանի Անառակ որդու նման դեպի սիրառատ և ներողամիտ հոր սիրտը և տունը, ցավոտ փորձառությունը զուր չի լինի: Աղոթեք ձեր անփույթ և անհնազանդ զավակների համար, կառչած մնացեք նրանցից ձեր հավատքով: Շարունակեք հուսալ, վստահել մինչև տեսնեք Աստծո փրկությունը» (in Conference Report, Apr. 1929, 110):

Երեց Հովարդ Վ. Հանթեր

«Հաջող ծնողը նա է, ով սիրել է, զոհաբերել, մեկը որ հոգ է տարել, ուսուցանել և սպասավորել երեխայի կարիքները: Եթե դուք արել եք բոլոր այս բաները և ձեր երեխան այնուամենայնիվ կամակոր կամ անհանգիստ կամ էլ աշխարհիկ է, այնուամենայնիվ, կարող է լավ լինի, եթե դուք հաջող ծնող լինեք: Հավանաբար կան երեխաներ, ովքեր աշխարհ են եկել և մարտահրավեր են հանդիսանում որոշ ծնողական զույգի համար ցանկացած հանգամանքների դեպքում: Նմանապես, հավանաբար, կան այլոք, որոնք կօրհնեն կյանքեր և ուրախություն կլինեն գրեթե ցանկացած հոր կամ մոր համար» (in Conference Report, Oct. 1983, 94; կամ *Ensign,* Nov. 1983, 65):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Ակնհայտորեն ընտանեկան արժեքները արտացոլում են մեր անձնական առաջնահերթությունները: Տրված ունենալով ներկա պայմանների կարևորությունը, արդյոք ծնողները կկամենան հրաժարվել դրսի ուղղակի մեկ իսկ բանից, փոխարենը այդ ժամանակը և տաղանդը հատկացնելու ընտանիքին: Ծնողներ և տատիկ պապիկներ, խնդրում ենք քննեք ձեր գրաֆիկը և առաջնահերթությունները, որպեսզի հավաստիանաք, որ կյանքի հիմնական հարաբերություններին հատկացվեն ավելի շատ հիմնական ժամանակ: Նույնիսկ օծված և նվիրված Բրիգամ Յանգին մի անգամ Տերն ասաց. «Առանձնակի հոգալ ընտանիքի համար » (ՎԱՈՒ 126.3): Երբեմն ամենաբարեխիղճներն են, որ ամենաշատը կարիք ունեն այս ուղերձին (in Conference Report, Apr. 1994, 121; կամ *Ensign,* May 1994, 90):

Երեց Ռիչարդ Սքոթ

«Ձեզանից ոմանք ունեն երեխաներ, ովքեր չեն արձագանքում ձեզ, ընտրելով լիովին տարբեր ուղիներ: Երկնային Հայրը հաճախ ունեցել է այդ նույն փորձառությունը: Չնայած Իր զավակներից մի քանիսը օգտագործել են ազատ կամքի Նրա պարգևը, կատարելով ընտրություններ Նրա խորհրդի դեմ, Նա շարունակում է սիրել նրանց: Սակայն ես համոզված եմ, Նա երբեք չի մեղադրել Իրեն՝ նրանց ոչ իմաստուն ընտրությունների համար» (in Conference Report, Apr. 1993, 43; կամ *Ensign,* May 1993, 34):

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս

«Մեր տան պատերի ներսում կարելի է անել անհամար բաներ՝ ընտանիքը զորացնելու համար: Կարելի՞ է կիսվել մի քանի գաղափարներով, որոնք կարող են օգնել որոշելու այն շրջանակները, որոնք պետք է զորացնել մեր իսկ ընտանիքներում: Ես առաջարկում եմ քաջալերանքի ոգով, իմանալով, որ յուրաքանչյուր ընտանիք և յուրաքանչյուր ընտանիքի անդամ անզուգական է. . .

- Անցկացնել անձնական ժամանակ մեր երեխաների հետ, թույլ տալով նրանց ցրույցի համար ընտրել միջոցառումը և թեման: Անտեսեք շեղումները. . .
- Ամեն օր աղոթել մեր երեխաների հետ:
- Միասին կարդալ սուրբ գրությունները: Ես հիշում եմ իմ սեփական մայրիկին և հայրիկին, ովքեր կարդում էին սուրբ գրությունները մինչ մենք նստում էինք հատակին և լսում: Երբեմն նրանք հարցնում էին. «Ի՞նչ է նշանակում

այդ սուրբ գրությունը ձեզ համար» կամ «ի՞նչ զգացում է այն ձեր մեջ առաջացնում»: Ապա նրանք լսում էին մեզ, երբ մենք պատասխանում էինք մեր սեփական խոսքերով:

- Կարդալ ապրող մարգարեների խոսքերը և Եկեղեցու ամսագրերում այլ ոգեշնչող հոդվածներ երեխաների, պատանիների և չափահասների համար:

- Ամեն շաբաթ անցկացնել ընտանեկան երեկո: Որպես ծնողներ երբեմն մենք անհարմար ենք մեզ զգում ուսուցանելու կամ վկայելու մեր երեխաներին: Ես մեղավոր եմ դրա համար իմ սեփական կյանքում: Մեր երեխաների հետ մենք պետք է կիսվենք հոգևոր զգացումներով և ուսուցանենք և նրանց վկայություն բերենք:

- Հրավիրել ընտանեկան խորհուրդներ՝ քննարկելու ընտանեկան ծրագրեր և հոգսեր: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի հետ մեկ առ մեկ ընտանեկան խորհուրդներ անցկացնելն ամենաարդյունավետն է: Կարևոր է օգնել մեր երեխաներին իմանալ իրենց մտքերը: Լսեք նրանց և սովորեք նրանցից….

- Հնարավորության դեպքում ճաշելով միասին և ճաշի ընթացքում անցկացնել իմաստալի քննարկումներ:

- Աշխատել միասին որպես ընտանիք, նույնիսկ եթե ավելի արագ և ավելի հեշտ կլիներ աշխատանքն ինքնուրույն անել: Խոսել մեր որդիների և դուստրերի հետ, երբ աշխատում ենք միասին: Ես ունեի այդ հնարավորությունը ամեն շաբաթ օր իմ հայրիկի հետ:

- Օգնել մեր երեխաներին սովորել, թե ինչպես կառուցել լավ ընկերություններ և իրենց ընկերներին օգնել սիրված զգալ մեր տներում: Սկսենք ճանաչել մեր երեխաների ընկերների ծնողներին:

- Սովորեցնել մեր երեխաներին օրինակով, թե ինչպես բյուջեավորել ժամանակը և ռեսուրսները: Օգնել նրանց սովորել ինքնավստահություն և ապագայի համար նախապատրաստվելու կարևորությունը:

- Ուսուցանել մեր երեխաներին մեր նախնիների պատմությունը և մեր իսկ ընտանեկան պատմությունը:

- Ստեղծել ընտանեկան սովորույթներ: Ծրագրեք և միասին իրականացրեք նպատակաուղղված արձակուրդներ, հաշվի առնելով մեր երեխաների կարիքները, տաղանդները և ունակությունները: Օգնեք նրանց ստեղծել երջանիկ հիշողություններ, զարգացրեք նրանց տաղանդները և ստեղծեք նրանց մեջ իրենց ինքնարժեքի զգացումներ….

- Հիշեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի խոսքերը. «Ոչ մի բան այնքան արդյունավետ չի ազդում մարդկանց վրա, տանելով դեպի մեղքից հրաժարում, ինչպես նրանց հետ ընկերանալը և քնքշությամբ պահպանելը: Երբ մարդիկ ցույց են տալիս նվազագույն բարություն և սեր իմ հանդեպ, օհ, ինչպիսի ուժ է այն գործում իմ մտքի վրա, մինչդեռ հակառակ վերաբերմունքը միտում ունի տակնուվրա անելու բոլոր վատ զգացումները և ճնշելու մարդկային միտքը» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 240)» (in Conference Report, Apr. 1999, 41–44; կամ *Ensign,* May 1999, 33–34):

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

«Նույնիսկ սիրված և մեծապես հաջողված այդ ծնողը՝ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը, աղերսել է. «Ով Աստված, թույլ մի տուր, որ ես կորցնեմ իմ յուրայիններին:» Սա յուրաքանչյուր ծնողի աղաղակն է և դրա մեջ կա ինչ որ բան յուրաքանչյուր ծնողի վախից: Բայց ոչ մեկը չի ձախողվել, ով շարունակում է փորձել և շարունակում է աղոթել: Դուք ունեք ամեն իրավունք ստանալու քաջալերանք և իմանալու, որ վերջում ձեր երեխաները կկոչեն ձեր անունը օրհված» (in Conference Report, Apr. 1997, 48; կամ *Ensign,* May 1997, 36):

Եպիսկոպոս Ռոբերտ Դ. Հեյլս

«Երեխան, նույնիսկ նա, ում մեծացրել են սիրով և հոգատարությամբ և սովորեցրել խնամքով, հնարավոր է, որ երբ չափահաս դառնա, չհետևի այս ուսմունքներին զանազան պատճառներով: Ինչպե՞ս պետք է մենք արձագանքենք: Մենք հասկանում ենք և հարգում ազատ կամքի սկզբունքը: Մենք աղոթում ենք, որ կյանքի փորձառություններն օգնեն նրանց վերգտնել ավետարանով ապրելու իրենց ցանկությունն ու ունակությունը: Նրանք այնուամենայնիվ մեր երեխաներն են և մենք միշտ կսիրենք և հոգ կտանենք նրանց: Մենք չենք փակի մեր տան դռները, ոչ էլ մեր սրտի դռները:

Որոշ մարդիկ զգում են, որ չեն կարող ընդունել կամ կատարել եկեղեցական ծառայություն, եթե նրանց երեխաներից մեկը մոլորվել է: Երբ մենք ընդունենք կոչումը և անենք մեր լավագույնը, մենք կարող ենք ունենալ խորը հոգևոր ազդեցություն նրանց վրա, ում մենք սիրում ենք ամենաշատը: Եթե մտածում եք ուրիշների ընտանիքները չունեն որևէ դժվարություններ կամ որևէ խնդիրներ, մենք ուղղակի նրանց բավականաչափ լավ չգիտենք ….

Իհարկե ծնողները սխալներ կանեն իրենց ծնող լինելու ընթացքում, բայց համեստությամբ, հավատքով, աղոթքով և ուսումնասիրելով, յուրաքանչյուր ոք կարող է սովորել ավելի լավ ուղի և այդ անելով կօրհնի ընտանիքի անդամների կյանքը այժմ և կսովորեցնի ճիշտ սովորույթներ հետագա սերունդների համար:

Տիրոջ խոստումները հաստատ են: «Իմաստուն կանեմ քեզ, և կսովորեցնեմ քեզ այն ճանապարհը, որ նորանում պիտի գնաս» (Սաղմոս ԼԲ. 8): Եվ «ինչ որ դուք խնդրեք Հորը, իմ անունով, ինչ ոչ ճիշտ է, հավատալով, որ դուք կստանաք, ահա այն կտրվի ձեզ» (3 Նեփի 18.20) (in Conference Report, Oct. 1993, 10–11; կամ *Ensign,* Nov. 1993, 10):

Ընտանեկան երեկո

Առաջին Նախագահություն՝ Ջոզեֆ Ֆ. Սմիթ, Էնթոն Հ. Լենդ, Չարլզ Վ. Փենրոուզ

«Այս նպատակի համար մենք խորհուրդ ենք տալիս և հորդորում ձեզ «Ընտանեկան Երեկոյի» հանդիսավոր բացումը ողջ Եկեղեցով մեկ, որի ժամանակ հայրերը և մայրերը տանը կարող են հավաքել իրենց տղաներին և աղջիկներին իրենց շուրջը և ուսուցանել նրանց Տիրոջ խոսքը…

Եթե Սրբերը հնազանդվեն այս խորհրդին, մենք խոստանում ենք, որ մեծ օրհնություններ կլինեն: Սերը տան մեջ և հնազանդությունը ծնողների հանդեպ կմեծանան: Հավատքը կզարգանա Իսրայելի երիտասարդների սրտերում և նրանք ուժ ձեռք կբերեն մարտնչելու չարի ազդեցությունների և փորձությունների դեմ, որոնք շրջապատում են նրանց» (“Home Evening,” *Improvement Era,* June 1915, 733–34):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Ժամանակ տրամադրեք իմաստալի ամենշաբաթյա ընտանեկան երեկո անցկացնելուն: Ձեր ամուսնու նախագահությամբ, մասնակցեք հոգևոր և վեհացնող ընտանեկան երեկոյի ամեն շաբաթ: Հանձնարարեք երեխաներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել: Ուսուցանեք նրանց ճիշտ սկզբունքներ: Սա դարձրեք ձեր ընտանեկան մեծ սովորույթներից մեկը» (*To the Mothers in Zion,* 9):

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին

«Ձեր տունը ուսման տուն դարձնելու կատարյալ ուղին հավատարմորեն ընտանեկան երեկո անցկացնելն է: Եկեղեցին երկուշաբթի երեկոն պահել է այդ նպատակի համար: 1915 թվականին Առաջին Նախագահությունը հրահանգեց տեղական առաջնորդներին և ծնողներին հանդիսավոր ընտանեկան երեկո անցկացնել՝ ժամանակ, որի ընթացքում ծնողները պետք է ուսուցանեն իրենց ընտանիքներին ավետարանի սկզբունքները: Նախագահությունը գրել էր. «Եթե Սրբերը հնազանդվեն այս խորհրդին, մենք խոստանում ենք, որ մեծ օրհնություններ կլինեն: Սերը տան մեջ և հնազանդությունը ծնողների հանդեպ կմեծանան: Հավատքը կզարգանա Իսրայելի երիտասարդների սրտերում և նրանք ուժ ձեռք կբերեն մարտնչելու չարի ազդեցությունների և փորձությունների դեմ, որոնք շրջապատում են նրանց»:

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը տվեց նույն խոստումը 1965 թվականին և ավելացրեց, որ երիտասարդությունը ձեռք կբերի ուժ՝ «ընտրելու արդարություն և խաղաղություն և կապահովեն հավերժական տեղ մեր Հոր ընտանեկան շրջանակում»: 1976 թվականին Նախագահությունը վերահաստատեց, որ «կանոնավոր մասնակցությունը ընտանեկան երեկոյին կզարգացնի արժանապատվության աճ, ընտանեկան միություն, սեր մեր մերձավորի հանդեպ և վստահություն մեր Երկնային Հոր հանդեպ» (in Conference Report, Apr. 1993, 86–87; կամ *Ensign,* May 1993, 70–71):

Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն

«*Ամեն շաբաթ* անցկացրեք ընտանեկան երեկո առանց թերանալու: Սա հրաշալի ժամանակ է՝ կիսվելու ձեր վկայությամբ ձեր երեխաների հետ: Նրանց հնարավորություն տվեք կիսվելու ավետարանի վերաբերյալ իրենց զգացումներով: Օգնեք նրանց սովորել ճանաչել, երբ զգան Հոգու ներկայությունը: Ընտանեկան երեկոները կօգնեն ստեղծել ապաստանի և ապահովության կղզի ձեր սեփական տանը» (in Conference Report, Oct. 1993, 14; կամ *Ensign,* Nov. 1993, 12):

Ընտանեկան խորհրդի գործընթացները

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Մենք անցյալ տարի ասացինք նաև, որ բավականին ժամանակ է, որ կանգ ենք առել մի մակարդակի վրա, և ապա շեշտը դրեցինք խորհուրդների վրա՝ ընտանեկան խորհուրդների, ծխի և ցցի խորհուրդների, իսկ հետո տարածքի և համաեկեղեցական խորհուրդների:

Եթե շարունակենք ուշադիր հետևել, կտեսնենք թե ինչպես են բոլոր այս զարգացումները առաջնորդում մեզ դեպի մեկ նպատակ: Որպես ժողովուրդ մենք դրվում ենք այնպիսի հանգամանքներում, որ ավելի կատարելապես անենք այն, ինչ Տերը տվել է մեզ անելու» (in Conference Report, Apr. 1980, 5; կամ *Ensign,* May 1980, 4):

«Մտածեք այն գիտելիքի մասին, որն օգնում է ընտանեկան խորհրդի ժամանակ ընտանիքի բյուջեավորմանը: Ինչպե՞ս են զգում մայրիկը և հայրիկը, երբ պատանի որդին, որն ընդգրկված լինելով խորհրդում և հասկանալով բյուջեավորման գործընթացը, կամավոր տալիս է իր ամառային եկամտի մի մասը՝ օգնելով փոխել հին սառնարանը» (in Conference Report, Oct. 1977, 125; կամ *Ensign,* Nov. 1977, 78):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Ամեն ընտանիք ունի խնդիրներ և մարտահրավերներ: Բայց հաջողակ ընտանիքները փորձում են աշխատել միասին լուծումներ գտնելու ուղղությամբ, փոխարենը դիմելու քննադատության և հակառակության: Նրանք աղոթում են միմյանց համար, քննարկում և տալիս քաջալերանք: Երբեմն այս ընտանիքները միասին ծոմ են պահում ընտանիքի անդամներից մեկին աջակցելու համար:

Ուժեղ ընտանիքները աջակցում են միմյանց:

Հաջող ընտանիքները միասին գործեր են անում՝ ընտանեկան նախագծեր կազմում, աշխատանք, արձակուրդներ, հանգիստ և հավաքներ անցկացնում:

Հաջող ծնողները գտնում են, որ հեշտ չէ երեխաներ մեծացնել մի միջավայրում, որն աղտոտված է չարով: Այդ պատճառով նրանք նպատակային քայլեր են կատարում լավագույնս ապահովելու օգտակար ազդեցություններ: Ուսուցանում են բարոյական սկզբունքներ: Լավ գրքեր են մատչելի դարձնում և կարդում: Հեռուստացույց նայելը վերահսկվում է: Ապահովում են լավ և վեհացնող երաժշտություն: Բայց ամենակարևորը, կարդում են սուրբ գրությունները և քննարկում դրանք որպես հոգևոր մտածելակերպ զարգացնելու միջոց» (in Conference Report, Apr. 1984, 6–7; կամ *Ensign,* May 1984, 6):

«Ես մատնանշում եմ ընտանեկան խորհուրդները՝ ընտանեկան միասնության և ընտանեկան միաբանության վրա մեր հետևողական շեշտադրման պատճառով: Ծնողներին քաջալերելով ընտանեկան խորհուրդներ անցկացնել, մենք նմանակում ենք մեր տներում երկնային գործելակերպին» (in Conference Report, Mar.–Apr. 1979, 124; կամ *Ensign,* May 1979, 88):

Նախագահ Ստեֆան Լ. Ռիչարդս

«Մեր Եկեղեցու կառավարման հանճարեղությունը՝ *խորհուրդների* միջոցով կառավարման մեջ է… Ես բավականաչափ փորձառություն ունեմ խորհուրդների արժեքը գիտակցելու համար: Չկա մի օր, որ ես չտեսնեմ իմաստությունը, Աստծո իմաստությունը, իր Թագավորության կառավարման համար խորհուրդներ ստեղծելիս» (in Conference Report, Oct. 1953, 86):

Երեց Լ. Թոմ Փերի

«Ես կդարձնեի ընտանեկան երեկոյի ժամանակը երկուշաբթի երեկոյան ընտանեկան խորհրդի ժողով, որտեղ երեխաները կուսուցանվեին ծնողների կողմից, թե ինչպես պատրաստվեն որպես ընտանիքի անդամներ և ապագա ծնողներ իրենց դերերին: Ընտանեկան երեկոն կսկսվեր միասնական ընտանեկան ճաշով, որին կհետևեր խորհրդի ժողովը, որտեղ կծավալվեր քննարկում և կտրվեր ուսուցում այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են՝ տաճարային նախապատրաստվածությունը, տան կառավարումը, ընտանեկան ֆինանսները, կարիերայի զարգացումը, կրթությունը, համայնքի ներգրավվածությունը, մշակութային բարելավումը, անշարժ և անձնական ունեցվածքի ձեռքբերումը, ընտանեկան օրացույցերի կազմումը, հանգստի ժամանակի օգտագործումը և աշխատանքի հանձնարարումը: Ապա երեկոն կարող էր հասնել իր բարձրակետին հատուկ աղանդերով ու յուրաքանչյուր երեխայի հետ ծնողների անձնական հանդիպումներով» (in Conference Report, Oct. 1980, 8–9; կամ *Ensign,* Nov. 1980, 9):

«Յուրաքանչյուր ընտանեկան կազմակերպություն պետք է ընտանեկան խորհրդի մեջ ընդգրկի բոլոր ընտանեկան միավորի անդամներին: Այստեղ ընտանեկան կազմակերպության հիմնական պարտականությունները կարող են ուսուցանվել երեխաներին: Նրանք կարող են սովորել, թե ինչպես որոշումներ ընդունեն և գործեն այդ որոշումների համաձայն: Խիստ շատերն են մեծանում մինչև ամուսնական տարիքը այդ պարտականությանն անպատրաստ: Աշխատանքային էթիկան և ինքնապատրաստվածությունը կարող են ուսուցանվել ամենարդյունավետ ձևով ընտանեկան խորհրդում: Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտ. վերափոխել է մի հին դրույթ. «Ամբողջովին աշխատանքով տարված լինելը և ոչ մի խաղ չխաղալը դարձնում է Ջաքին ձանձրալի տղա» պնդումը նա վերափոխում է, ասելով «Ամբողջովին խաղով տարված լինելը և ոչ մի աշխատանք չանելը դարձնում է Ջաքին անօգուտ տղա… (ըստ Հարոլդ Բ. Լիի մեջբերման՝ «Սպասավորելով ճշմարիտ գթություն», ելույթ բարօրության գյուղատնտեսության ժողովի ժամանակ, 5 հոկտ. 1968)» (in Conference Report, Apr. 1981, 119; կամ *Ensign,* May 1981, 88):

Տես մեջբերումները էջ 99-ում:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

«Եկեք հիշենք, որ Եկեղեցու հիմնական խորհուրդը ընտանեկան խորհուրդն է: Հայրերն ու մայրերը պետք է ջանասիրաբար կիրառեն այն սկզբունքները, որոնք ես քննարկեցի երեխաների և միմյանց հետ իրենց հարաբերությունների վերաբերյալ: Երբ մենք այդպես անենք մեր տները կարող են դառնալ երկինք երկրի վրա» (in Conference Report, Apr. 1994, 34; կամ *Ensign,* May 1994, 26):

Երեց Ռոնալդ Ի. Փոլման

«Միասնությունը ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր հարցերում, կարևոր է մեր հաջողության համար: Յուրաքանչյուր քայլում պետք է ձեռք բերել համաձայնություն խորհրդի անդամների միջև՝ աղոթքի և քննարկման միջոցով, հասնելով այն միասնությանը, որն անհրաժեշտ պայման է Տիրոջ օգնության համար: Արդյունավետ լինելու համար պետք է որոշումների հանգել աստվածային համաձայնության և ոչ թե փոխզիջման միջոցով: Մասնակիցները մրցակցող փաստաբաններ չեն, որոնք ներկայացնում են հատուկ հետաքրքրություններ, այլ ավելի շուտ միաբանված մարմնի ներդրող անդամներ» (in Conference Report, Apr. 1980, 126; կամ *Ensign,* May 1980, 91):

Լավ ամուսնություններն օրհնում են երեխաներին

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Դուք պետք է կանոնավորապես արտահայտեք ձեր կնոջն ու երեխաներին ձեր ակնածանքն ու հարգանքը նրա հանդեպ: Իրականում մեծագույն բաներից մեկը, որ հայրը կարող է անել իր երեխաների համար՝ նրանց մորը սիրելն

է» (in Conference Report, Oct. 1994, 68; կամ *Ensign,* Nov. 1994, 50):

Երեց Դելբերթ Լ. Սթեյփլի

«Եթե ծնողները հասուն չեն և չեն կարողանում կարգավորել իրենց տարաձայնություններն առանց զայրույթի, կռվի և վիրավորանքի, երեխան դառնում է առավել անապահով, և երբ մեծանում է, միտում է ունենում ընտրելու սխալ ընկերներ՝ տան դժբախտ միջավայրից պարզապես հեռու մնալու համար» (in Conference Report, Oct. 1970, 45):

Երեց Մարվին Ջ. Աշթոն

«Հաճախ ծնողները ամենարդյունավետ ձևով են հաղորդակցվում իրենց երեխաների հետ, երբ տեսնում են, թե ինչպես են նրանք միմյանց լսում և դիմում: Մեր խոսակցությունները, որոնք ցույց են տալիս մեղմություն և սեր, լավում են մեր մշտարթուն, տպավորվող երեխաների կողմից» (in Conference Report, Apr. 1976, 81; կամ *Ensign,* May 1976, 53):

Երեց Լեգրան Ռ. Կուրտիս

«Հավանաբար, լավագույն պարգևը, որ ծնողները կարող են տալ իրենց երեխաներին, միմյանց սիրելն է և նույնիսկ միմյանց ձեռքը բռնելը և իրենց սերը ցույց տալն այն ձևով, թե ինչպես են խոսում միմյանց հետ» (in Conference Report, Oct. 1990, 13; կամ *Ensign,* Nov. 1990, 12):

Եպիսկոպոս Ռոբերտ Դ. Հեյլս

«Երեխաներին օգնում է տեսնել, որ լավ ծնողները կարող են ունենալ տարբեր կարծիքներ և որ այդ տարաձայնությունները կարող են լուծվել առանց խփելու, գոռալու կամ իրեր շպրտելու միմյանց վրա: Նրանք պետք է տեսնեն և զգան միմյանց տեսակետների հանդեպ հարգանքով լցված հանգիստ հաղորդակցություն, որպեսզի իրենք էլ իմանան, թե ինչպես հաղթահարեն տարաձայնություններն իրենց իսկ կյանքում» (in Conference Report, Oct. 1993, 10; կամ *Ensign,* Nov. 1993, 9):

Ծնող լինելը որպես հավերժական հեռանկար

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Սկզբից ի վեր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին շեշտել է ընտանեկան կյանքի կարևորությունը: Մենք միշտ հասկացել ենք, որ ընտանիքի հիմքերը, որպես հավերժական միավոր, դրվել են նույնիսկ նախքան այս երկրի ստեղծումը: Հասարակությունն առանց ընտանեկան հիմնավոր կյանքի անհիմն է և կքայքայվի, դառնալով ոչնչություն» (in Conference Report, Oct. 1980, 3; կամ *Ensign,* Nov. 1980, 4):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Մարգարեները խոսել են նաև անցյալում նրանց մասին, ովքեր գուցե հնարավորություն չունենան ամուսնանալ այս կյանքում: Նախագահ Լորենցո Սնոուն ասել է.

«Չկա Վերջին Օրերի Սուրբ, որը հավատարիմ կյանքով ապրելուց հետո, մահանալով կորցնի որևէ բան այն պատճառով, որ իրեն հնարավորություն չի ընձեռվել որոշ բաներ անելու: Այլ խոսքով ասած, եթե երիտասարդ տղամարդը կամ երիտասարդ կինը չի ունեցել ամուսնանալու հնարավորություն, բայց ապրել է հավատարիմ կյանքով մինչև իր մահը, նա կունենա բոլոր օրհնությունները՝ մինչև վեհացում և փառք, որ կարող է ունենալ ամեն տղամարդ և կին, ով ունեցել և օգտագործել է այդ հնարավորությունը: Սա անկասկած է և հաստատ» (*The Teachings of Lorenzo Snow,* comp. Clyde J. Williams [Salt Lake City: Bookcraft, 1984], p. 138):

«Ես հավատում եմ, որ Նախագահ Սնոուի միտքը ճիշտ է» (in Conference Report, Oct. 1994, 67; կամ *Ensign,* Nov. 1994, 49–50):

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

«Չնայած այս սուրբ և հանդիսավոր հավաքին մեր մտքերը կենտրոնացած են Քահանայապետ, Նախագահ, Առաքյալ, Մարգարե, Տեսանող, Հայտնող ազնվական կոչումների վրա, երկինքները չեն վիրավորվում, եթե մենք անմիջապես խոսում ենք հոր, մոր, երեխայի, եղբոր, քրոջ և ընտանիքի մասին, նույնիսկ կոչելով նրանց պապա, մամա, տատ, պապ, մանկիկ:

Եթե դուք ակնածալի եք և աղոթքով լի ու հնազանդ, կգա օրը, երբ ձեզ համար հայտնի կդարձվի, թե ինչու է երկնքի Աստվածը պատվիրել մեզ դիմել Իրեն որպես *Հայր,* և Տիեզերքի Տիրոջը՝ որպես *Որդի*: Այդ ժամանակ դուք հայտնաբերած կլինեք թանկագին մարգարիտը, որի մասին խոսվում է սուրբ գրություններում և պատրաստակամորեն կգնաք և կվաճառեք բոլորն, ինչ ունեք, որպեսզի ձեռք բերեք այն:

«Մարգարեներին հայտնի դաձված երջանկության մեծ ծրագիրը (տես Ալմա 42.8,16) ծրագիր է երջանիկ ընտանիքի մասին: Դա սիրո պատմություն է ամուսնու և կնոջ միջև, ծնողների և երեխաների միջև, որը վերանորոգվում է դարերի ընթացքում» (in Conference Report, Apr. 1995, 8–9; կամ *Ensign,* May 1995, 9):

Հավանաբար, լավագույն պարգևը, որ ծնողները կարող են տալ իրենց զավակներին, միմյանց սիրելն է:

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Մայրությունը մոտ է աստվածությանը: Դա մարդկության կողմից ստանձված բարձրագույն, ամենասուրբ ծառայությունն է: Նրան, ով հարգում է այդ սուրբ կոչումը և ծառայությունը դնում է հրեշտակների կողքին» [in Conference Report, Oct. 1942, pp. 12–13]:

« Առաջին Նախագահության կողմից տրված այդ ուղերձը և նախազգուշացումը ավելի է անհրաժեշտ, ոչ սակավ այսօր, քան երբ այն տրվել էր: Եվ ոչ մի ձայն Եկեղեցու որևէ կազմակերպություն կառավարման որ մակարդակից էլ որ լինի, չի կարող հավասարվել Առաջին Նախագահության հետ» (in Conference Report, Oct. 1993, 30; կամ *Ensign,* Nov. 1993, 23):

«Երբ մարդ իմանում է Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին, հրճվելու պատճառ կա: *Ուրախություն* և *հրճվանք* բառերը հայտնվում են սուրբ գրություններում կրկնողաբար: Վերջին Օրերի Սրբերը երջանիկ ժողովուրդ են: Երբ մարդ իմանում է վարդապետությունը, ծնող լինելը դառնում է սրբազան պարտականություն, կյանք ծնունդ տալը՝ սրբազան արտոնություն: Վիժեցումը աներևակայելի մի բան է: Ոչ ոք չի մտածի ինքնասպանության մասին: Եվ մարդկային բոլոր տկարությունները և խնդիրները կվերանան» (in Conference Report, Oct. 1983, 23; կամ *Ensign,* Nov. 1983, 18):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի

«Հետևաբար այն ամենը, ինչ ունենք Եկեղեցում, կենտրոնացած է սելեստիալ ամուսնության վրա, և փրկությունը ընտանեկան գործ է…

Ուստի ընտանեկան միավորը ամենակարևոր կազմակերպությունն է ժամանակի և հավերժության համար:

Եվ այսպիսով մենք պետք է ավելի շատ հետաքրքրություն և մտահոգություն ցուցաբերենք մեր ընտանիքների համար, քան կյանքում որևէ այլ բանի համար:

Յուրաքանչյուր կարևոր որոշում պետք է ընդունվի ընտանեկան միավորի վրա ունեցած ազդեցության հիմքի վրա: Մեր սիրատածումը, կրթությունը և ընկերեների ընտրությունը, մեր աշխատանքը, հետաքրքրությունները և բնակության վայրը, մեր հասարակական կյանքը, կազմակերպությունները, որոնց միանում ենք, և ծառայությունը, որ մատուցում ենք մարդկությանը, և ամենից վեր, մեր հնազանդությունը կամ դրա բացակայությունը հայտնի դարձված ճշմարտության չափանիշներին, բոլոր այս բաները պետք է որոշվեն ընտանեկան միավորի վրա ունեցած ազդեցության հիման վրա:

Այս աշխարհում չկա ավելի կարևոր բան, քան այնպիսի ընտանեկան միավորների ստեղծումն ու կատարելագործումը, որոնց մասին ուսուցանվում է Հիսուս Քրիստոսի ավետարանում» (in Conference Report, Apr. 1970, 27):

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

«Ես կանգ եմ առնում՝ ակնածանքով լցված, երբ մտածում եմ այն մեծ վստահության մասին, որ Երկնային Հայրը դրել է ձեր և իմ վրա, երբ Նա թույլ է տվել մեզ մահկանացու հայրեր և մայրեր լինել իր հավերժական հոգևոր ժառանգների համար: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ նա մեզանից յուրաքանչյուրիս հանդեպ առանձնահատուկ հետաքրքրություն ունի և մենք պետք է գիտակցենք, թե որքան կարևոր է յուրաքանչյուր հոգին Աստծո հավերժական ծրագրում: Երբ մենք հասկանում ենք յուրաքանչյուր հոգու կարևորությունը, մենք կարող ենք Նրա առաջ վստահորեն գնալ աղոթքով՝ որոնելով Նրա առաջնորդությունը և ուղղորդումը որպես ծնողներ մեր սրբազան հանձնարարություններում: Նա ասել է. «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39): Սա թվում է ինձ լավագույն ամփոփումն այն կարևոր դերի, որ մեր ընտանիքների յուրաքանչյուր անդամի համար մահկանացու ծնողներն ունեն կյանքի հավերժական մեծ ծրագրում» (in Conference Report, Sept.–Oct. 1978, 99; կամ *Ensign,* Nov. 1978, 66):

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

«Ինձ խորապես հուզում է, որ Աստված Իր մեծագույն նպատակը և իմաստը գտնում է ծնող լինելու մեջ» (in Conference Report, Apr. 1997, 47; կամ *Ensign,* May 1997, 36):

Երեց Ջ. Ռիչարդ Քլարկ

«Ողջ դարերի ընթացքում չար ուժերը հարձակում են գործել ընտանիքի վրա: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է սատանան այդքան համակված դրա քայքայման գաղափարով: Որովհետև այն ներկայացնում է այն ամենը, ինչ նա ցանկանում է, բայց չի կարող ունենալ: Նա չի կարող լինել ամուսին, հայր կամ պապիկ: Նա չի կարող ունենալ ժառանգներ այժմ և հավերժ: Սատանան չի կարող նույնիսկ պահել նրանց, որոնց նա հեռացրեց Աստծուց: Նա չունի հավերժական թագավորություն կամ ժառանգություն» (in Conference Report, Apr. 1989, 74; կամ *Ensign,* May 1989, 60):

Ծնող լինելու ուրախությունը

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Մենք համաձայն ենք Պեստալոզիի հետ.

«Մեր ընտանեկան ուրախությունները ամենահրճվագինն են, որ ի վիճակի ենք զգալու երկրի վրա, և ծնողների ուրախությունը իրենց երեխաներով մարդկության ամենասուրբ ուրախությունն է: Այն դարձնում է նրանց սրտերը մաքուր և բարի: Այն բարձրացնում է նրանց դեպի իրենց Երկնային Հայրը:

Դուք և ես լավ ենք հասկանում, որ այս մեծ, գերագույն ուրախությունը գտնվում է յուրաքանչյուր ծնողական զույգի ոլորտի սահմաններում, եթե նրանք ճիշտ են կատարել իրենց ամուսնական և ընտանեկան պարտականությունները և եթե գերիշխել են ամուսնության և ընտանեկան կյանքի բարձր իդեալներ» (in Conference Report, Apr. 1976, 159; կամ *Ensign,* May 1976, 108):

Նախագահ Ն. Էլդոն Թաններ

«Չեմ կարող ավելի քաղցր որևէ բանի մասին մտածել, քան տան մասին, որտեղ մարդն ապրում է իր կրոնով, մեծարելով իր քահանայությունը, որտեղ կինը աջակցում է նրան ամեն ձևով, որտեղ սեր ու ներդաշնակություն գոյություն ունի և որտեղ նրանք միասին փորձում են մեծացնել արդարակյաց որդիների և դուստրերի ընտանիք, որոնց նրանք կկարողանան ետ տանել իրենց Երկնային Հոր ներկայություն: Սա կարող է հնչել անհնարին երազանքի նման, բայց ես կարող եմ հավաստիացնել ձեզ, որ հազարավոր այդպիսի ընտանիքներ կան Եկեղեցում, և դա մի բան է, որը կարող է իրականություն դառնալ մեզանից յուրաքանչյուրի համար, երբ մենք ընդունում ենք և ապրում Հիսուս Քրիստոսի ուսմունքներով: Որքան բախտավոր է երեխան, ապրելով այդպիսի ընտանիքում, և որքան մեծ կլինի ծնողների ուրախությունը իրենց սերնդով» (in Conference Report, Oct. 1973, 127; կամ *Ensign,* Jan. 1974, 10):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Եկեղեցու ողջ գործունեության վերջնական գագաթնակետն այն է, որ տղամարդն ու նրա կինը և նրանց երեխաները կարող են երջանիկ լինել տանը, և որ ընտանիքը կարող է շարունակվել հավերժության մեջ: Քրիստոնեական ողջ վարդապետությունը ձևակերպվել է անհատին, տունը և ընտանիքը պաշտպանելու համար » (in Conference Report, Apr. 1981, 17; կամ *Ensign,* May 1981, 15):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Չնայած մարդկային մարտահրավերներից քչերն են ավելի մեծ, քան լավ ծնողներ լինելը, քիչ հնարավորություններ կարող են տալ ավելի մեծ ուրախության ներուժ: Անկասկած, չկա ավելի կարևոր աշխատանք, քան մեր երեխաներին աստվածավախ, երջանիկ, պատվավոր և արդյունավետ լինելուն նախապատրաստելը: Ծնողները չեն գտնի ավելի լիակատար երջանկություն, քան իրենց երեխաների հարգանքն իրենց և իրենց ուսմունքների հանդեպ: Դա ծնող լինելու փառքն է: Հովհաննեսը վկայում է. «Սրանից ավելի մեծ ուրախութիւն չունիմ, որ լսում եմ թե իմ որդիները ճշմարտութեան մէջ են գնում» (3 Հովհ Ա.4)» (in Conference Report, Oct. 1990, 40; կամ *Ensign,* Nov. 1990, 32–33):

Երեց Դալլին Հ. Օուքս

«Մեր ծնողներին հարգելու պատվիրանը արձագանքում է ընտանեկան հարաբերությունների սրբազան ոգու մեջ, երբ լավագույն ձևով ունենում ենք երկնային սիրո և միմյանց հանդեպ հոգատարության վսեմ արտահայտություններ: Մենք գիտակցում ենք այս հարաբերությունների կարևորությունը, երբ հասկանում ենք, որ մեր ուրախության կամ ցավի մեծագույն արտահայտությունները մահկանացու կյանքում գալիս են մեր ընտանիքի անդամներից» (in Conference Report, Apr. 1991, 17; կամ *Ensign,* May 1991, 15):

Ավետարանի ուսուցանումը երեխաներին

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Այս խոստումները՝ տանը աճող սերը և ներդաշնակությունը, ավելի մեծ հարգանքը ծնողի և երեխայի միջև, աճող հոգևորությունն ու արդարակեցությունը, պարապ խոստումներ չեն, այլ ճիշտ այն, ինչ Մարգարե Ջոզեֆ Սմիթն է ի նկատի ունեցել, երբ ասել է, որ Մորմոնի Գիրքը կօգնի մեզ մոտենալ Աստծուն» (in Conference Report, Oct. 1986, 6; կամ *Ensign,* Nov. 1986, 7):

«Մենք չենք օգտագործում Մորմոնի Գիրքը, ինչպես որ պարտավոր ենք: Մեր տներն այնքան էլ ուժեղ չեն լինի, մինչև մենք այն չօգտագործենք բերելու մեր երեխաներին դեպի Քրիստոս» (in Conference Report, Apr. 1975, 96; կամ *Ensign,* May 1975, 65):

«Մենք քաջալերում ենք ծնողներին ուսուցանել իրենց երեխաներին հիմնավոր հոգևոր սկզբունքներ, որոնք կպատվաստեն հավատք Աստծո հանդեպ» (“Righteousness Exalteth a Nation,” 5):

«Ի՞նչ պետք է մենք սովորեցնենք: Տերը հայտնի է դարձրել հատուկ ծրագիր, որով ծնողները պետք է ուսուցանեն: Լսեք Նրա խոսքերը. «…Ուսուցանեք ձեր երխաներին, որ բոլոր մարդիկ, ամենուրեք, պետք է ապաշխարեն, այլապես նրանք ոչ մի կերպ չեն ժառանգի Աստծո արքայությունը, քանզի ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել այնտեղ, կամ բնակվել նրա ներկայության մեջ» (Մովսես 6.57):

«Ինչպես հետո է նշվում այս հայտնության մեջ, հիմնական վարդապետությունները բաղկացած են՝ Անկման վարդապետությունից, Քրիստոսի առաքելությունից և Նրա քավությունից և ավետարանի առաջին սկզբունքներից և արարողություններից, որոնք ներառում են՝ հավատք առ Քրիստոս, ապաշխարություն, մկրտություն մեղքերի թողության համար և Սուրբ Հոգու պարգևը որպես միջոց սրբագործված կյանքի համար» (տես Մովսես 6.58-59) (in Conference Report, Apr. 1981, 48; կամ *Ensign,* May 1981, 36):

Նախագահ Ն. Էլդոն Թանների

«Ծնողները պետք է նաև ուսուցանեն իրենց երեխաներին նրանց կյանքի վաղ շրջանում այն փառահեղ տեսակետը և փաստը, որ նրանք Աստծո հոգևոր զավակներն են և որ Հիսուս Քրիստոսի ուսմունքներին հետևելն ընտրելը միակ ուղին է՝ վայելելու հաջողություն և երջանկություն այստեղ և հավերժական կյանք հետագայում: Նրանց պետք է ուսուցանվի, որ սատանան իրական է և որ նա կօգտագործի իր տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցները՝ գայթակղելու նրանց անել սխալ, մոլորեցնելու նրանց, նրանց իր գերիները դարձնելու և պահելու նրանց գերագույն երջանկությունից և վեհացումից, որը նրանք հակառակ դեպքում կվայելեին» (in Conference Report, Apr. 1973, 58; կամ *Ensign,* July 1973, 8):

Նախագահ Մարիոն Գ. Ռոմնի

«Մորմոնի Գիրքը կարդալու համար կա ևս մեկ պատճառ՝ այդ անելով մենք կլցնենք և կթարմացնենք մեր մտքերը այն «ջրի» անընդհատ հոսքով», որը, ինչպես Հիսուսն ասում է, կլինի մեր մեջ «ջրի աղբիւր….որ յաւիտենական կեանքի համար կբղխէ» (Դ.14): Մենք պետք է ձեռք բերենք այս ջրի անընդհատ պաշարը, եթե պետք է դիմադրենք չարին և պահպանենք վերստին ծնված լինելու օրհնությունները…

Ես համոզված եմ, որ եթե մեր տներում ծնողները աղոթքով և կանոնավորապես կարդան Մորմոնի Գրքից, ինչպես առանձին, այնպես էլ իրենց երեխաների հետ, այդ մեծ գրքի ոգին կգա՝ ներթափանցելով մեր տները և այն բոլորի մեջ, ովքեր կբնակվեն այնտեղ: Ակնածանքի ոգին կմեծանա, փոխադարձ հարգանքն ու հոգատարությունը միմյանց հանդեպ կաճեն: Հակառակության ոգին կհեռանա: Ծնողները խորհուրդ կտան իրենց երեխաներին ավելի մեծ սիրով և իմաստությամբ: Երեխաներն ավելի արձագանքող և ենթարկվող կլինեն իրենց ծնողների խորհրդին: Արդարակեցությունը կաճի: Հավատքը, հույսը և գթությունը՝ Քրիստոսի մաքուր սերը, կառատանան մեր տներում և մեր կյանքում, իրենց հետ բերելով խաղաղություն, ուրախություն և երջանկություն» (in Conference Report, Apr. 1980, 88, 90; or *Ensign,* May 1980, 66–67):

Երեց Մարկ Ի. Պիտերսոն

«Ինչո՞վ կփոխարինեն ծնողները իրենց փոքրիկ երեխաների հոգիները, այս փոքրիկների, ովքեր տրվել են նրանց խնամքին հենց Ամենազորի կողմից, որոնց նրանք պետք է ուսուցանեն արդարության սկզբունքները և առաջնորդեն դեպի կյանքի պատշաճ ուղիներ» (in Conference Report, Oct. 1973, 142; կամ *Ensign,* Jan. 1974, 111):

Երեց Լ. Թոմ Փերի

«Այն ժամանակ, երբ ես նոր ծնող էի դարձել, Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն էր նախագահում Եկեղեցում: Նրա խորհուրդը հստակ էր և անկեղծ երեխաների հանդեպ մեր պարտականությունների վերաբերյալ: Նա ուսուցանեց, որ ամենաթանկարժեք ընծան, որ տղամարդն ու կինը կարող են ստանալ, Աստծո զավակն է, և որ երեխա մեծացնելը սկզբունքայնորեն և բացարձակապես *հոգևոր* գործընթաց է:

Նա մեզ հրահանգեց հիմնական սկզբունքների վերաբերյալ, որոնք մենք պետք է ուսուցանենք մեր զավակներին: Առաջին և ամենակարևոր ներքին հատկանիշը, որը դուք կարող եք պատվաստել երեխայի մեջ *հավատքն է առ Աստված*: Առաջին և ամենակարևոր գործողությունը, որ երեխան կարող է սովորել *հնազանդությունն* է: Եվ ամենահզոր զենքը, որ դուք ունեք երեխային ուսուցանելու համար *սերն* է (տես *Instructor,* Dec. 1949, p. 620)» (in Conference Report, Apr. 1983, 106; կամ *Ensign,* May 1983, 78):

Երեց Դեյվիդ Բ. Հեյթ

«Մենք պետք է ուսուցանենք և վարժեցնենք մեր երեխաներին Տիրոջ ուղիներում: Երեխաները չպետք է թողնվեն առանց ծնողների՝ ինքնուրույն սովորելու բնավորություն և ընտանեկան արժեքներ կամ լսելով ու դիտելով հավանության չարժանացած երաժշտություն, հեռուստահաղորդում կամ կինոֆիլմեր՝ որպես գիտելիք և հասկացողություն իրենց կյանքն ապրելու համար:

Տերը հստակորեն պատվիրել է, որ ծնողները ուսուցանեն իրենց երեխաներին բարիք անել (տես Ալմա 39.12) և սովորեցնեն նրանց «ապաշխարության վարդապետությունը, հավատք առ Քրիստոս՝ կենդանի Աստծո Որդին և մկրտություն և Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրմամբ, երբ ութ տարեկան լինեն, [այլապես] մեղքը [պիտի] լինի ծնողների գլխին…» (in Conference Report, Oct. 1992, 105; կամ *Ensign,* Nov. 1992, 75–76):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Կարգապահության հիմնական նպատակը հնազանդություն ուսուցանելն է: Նախագահ Դեյվիդ Օ.Մակքեյը նշել է. «Ծնողները, ովքեր ձախողվում են հնազանդություն ուսուցանել իրենց երեխաներին, եթե [նրանց] տները չեն զարգացնում հնազանդություն, հասարակությունը կպահանջի այն և կպարտադրի: Ուստի ավելի լավ է, որ տանը բարությամբ, կարեկցանքով և հասկացողությամբ ուսումնավարժեցնել երեխային հնազանդության մեջ, քան քարասրտորեն թողնել նրան դաժան և անբարյացակամ պատժին, որը հասարակությունը կգործադրի, եթե տունը չկատարի իր պարտավորությունը» (*The Responsibility of Parents to Their Children,* p. 3)» (in Conference Report, Oct. 1990, 41–42; կամ *Ensign,* Nov. 1990, 34):

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին

«Նրանք պետք է ուսուցանեն և առաջնորդեն իրենց երեխաներին, «համոզելով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ, անկեղծ սիրով և բարությամբ,… խստությամբ հանդիմանելով, երբ ներշնչվում ես Սուրբ Հոգով, և ապա, դրանից հետո, ավելի մեծ սեր ցույց տալով» (ՎԿՈՒ 121.41–43): Ծնողներն այդ ժամանակ կվաստակեն իրենց երեխաների հարգանքը և երեխաները կպատվեն իրենց ծնողներին, միավորելով ընտանիքները» (in Conference Report, Apr. 1993, 87–88; կամ *Ensign*, May 1993, 71):

Երեց Հ. Վերլան Անդերսեն

«Չնայած Տերը խրատեց ղեկավարող եղբայրներին և իրականում Սիոնում բոլոր ծնողներին ծնողական զանցանքների դեմ, նա նշեց նաև, որ ապաշխարությունը հնարավոր է: Բայց նա ասաց նաև, որ եթե մենք չապաշխարենք, մենք կհանվենք մեր տեղից» (տես ՎԿՈՒ 93.41–50):

Սուրբ գրությունները ոչ միայն հրահանգում են մեզ այն բանի վերաբերյալ, թե երբ է ուսուցումը լավագույն ձևով արվում (տես ՎԿՈՒ 68.25–32, Երկրորդ Օրինաց Ը.5–9), այլ նաև այն բանի վերաբերյալ, թե ինչ պետք է և ինչ չպետք է ուսուցանվի (տես Մորոնի 7.14–19, 2 Նեփի 9.28–29), ով պետք է և ով չպետք է կատարի ուսուցումը (տես 2 Նեփի 28.14, 31, Մոսիա 23.14)» (in Conference Report, Oct. 1991, 112; կամ *Ensign*, Nov. 1991, 81):

Եպիսկոպոս Ռոբերտ Դ. Հեյլս

«Հայրս սովորեցրեց ինձ հարգանք քահանայության հանդեպ: Երբ ծառայում էի Ահարոնյան Քահանայությունում, մենք բաժանում էինք հաղորդությունը, օգտագործելով չժանգոտվող պողպատի մատուցարաններ, որոնք ջրի ցայտերի հետևանքով հաճախ խամրում էին կոշտ ջրի բծերից: Որպես Ահարոնյան Քահանայություն կրող, իմ պարտականությունն էր օգնել հաղորդությունը պատրաստելիս: Հայրս խնդրեց ինձ տուն բերել մատուցարանները և մենք միասին մաքրեցինք դրանք մետաղյա նրբաթելից հարիչով, մինչև յուրաքանչյուր մատուցարան փայլեց: Երբ բաժանում էի հաղորդությունը, ես հասկացա, որ մենք մասնակցեցինք հաղորդության արարողությունը մի փոքր ավելի սրբազան դարձնելու գործին…

Ես սովորեցի հարգել կանացի սեռին՝ մայրիկիս, քրոջս և իր քույրերի հանդեպ հորս քնքուշ հոգատարությունը տեսնելով: Հայրս առաջինն էր վեր կենում ճաշից՝ սեղանը մաքրելու համար: Քույրս և ես սովորաբար ամեն գիշեր լվանում և չորացնում էինք ափսեները հայրիկիս խնդրանքով: Եթե մենք այնտեղ չէինք լինում, հայրս և մայրս խոհանոցը միասին էին մաքրում» (in Conference Report, Oct. 1993, 9; կամ *Ensign*, Nov. 1993, 9):

Երեխաներին աշխատել սովորեցնել

Վարդապետություն և Ուխտեր 68.31–32

«Արդ, ես Տերս, չեմ հավանում Սիոնի բնակիչներին, քանի որ նրանց մեջ կան ծույլեր. և նրանց զավակները նույնպես աճում են ամբարշտության մեջ. Նաև նրանք լրջորեն չեն փնտրում հավերժության հարստությունները, այլ նրանց աչքերը լի են ժլատությամբ:

Այդ բաները չպիտի լինեն, և պետք է հեռացվեն նրանց միջից. ուստի թող իմ իմ ծառա Օլիվեր Քաուդերին այս ասաածները տանի Սիոնի հող»:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«*Աշխատեք միասին*: Ես չգիտեմ, թե քանի սերունդներ կամ դարեր առաջ ինչ որ մեկն առաջին անգամ ասել է. «Պարապ միտքը դևի աշխատավայրն է»: Երեխաները պետք է աշխատեն իրենց ծնողների հետ, նրանց հետ լվանան սպասքը, մաքրեն հատակը, հնձեն մարգագետինը, էտեն ծառերը» (“Four Simple Things to Help Our Families and Our Nations,” *Ensign*, Sept. 1996, 7):

Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին

Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում են և պահպանվում հավատքի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի սկզբունքների վրա (*Ensign*, Nov. 1995, 102):

Երեց Մարվին Ջ. Աշթոն

«Երեսիդ քրտինքովը հաց ուտես» պատգամը ժամկետանց խորհուրդ չէ: Այն կարևոր է անձնական բարօրության համար: Մեծագույն բարիքներից մեկը, որ կարող են ծնողներն անել իրենց երեխաների համար, նրանց աշխատել սովորեցնելն է: Տարիների ընթացքում շատ բան է ասվել ամսեկան ապրուստաբաժնի մասին և կարծիքներն ու խորհուրդները խիստ տարբերվում են: Ես «հին դպրոցից եմ»: Կարծում եմ, երեխաները պետք է վաստակեն իրենց դրամը՝ ծառայության և համապատասխան ամենօրյա գործեր կատարելու միջոցով: Կարելի է նաև որոշ ֆինանսական պարգևներ տալ երեխաներին՝ կապված կրթական ջանքերի այլ արժանավոր նպատակներ իրականացնելու հետ: Կարծում եմ, բախտը չի բերել այն երեխայի, որը մեծանում է մի ընտանիքում, որտեղ նրա մտքում սերմանում են, որ կա ընտանեկան փողի ծառ, որն ինքնաբերաբար շաբաթը կամ ամիսը մեկ «կանաչ թղթադրամներ» է թափում» (*One for the Money*, 8):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Երեխաներին կարգապահություն և պատասխանատվություն սովորեցնելիս կարևոր է նրանց աշխատել սովորեցնելը: Երբ մենք մեծանում ենք, մեզանից շատերը նմանվում են այն մարդուն, որն ասել է. «Ես սիրում եմ աշխատանքը, այն հրապուրում է ինձ: Ես կարող եմ նստել և ժամերով նայել դրան» (Jerome Klapka Jerome, in *The International Dictionary of Thoughts,* comp. John P. Bradley, Leo F. Daniels, and Thomas C. Jones [Chicago: J. G. Ferguson Publishing Co., 1969], p. 782): Աշխատանքի սկզբունքի լավագույն ուսուցիչները նորից իրենք՝ ծնողներն են: Ինձ համար աշխատանքը դարձավ ուրախություն, երբ առաջին անգամ աշխատեցի հայրիկիս, պապիկիս, քեռիներիս և եղբայրներիս կողքին: Համոզված եմ, որ ես հաճախ ավելի շուտ խանգարում էի, քան օգնում, բայց հիշողություններս քաղցր են և սովորած դասերն արժեքավոր: Երեխաները պետք է սովորեն պատասխանատվություն և անկախություն: Արդյո՞ք ծնողներն անձնապես ժամանակ տրամադրում են՝ ցուցադրելու ու բացատրելու, որպեսզի, ինչպես Լեքին էր ուսուցանում «գործեն ինքնուրույն և չներգործվեն» (2 Նեփի 2.26)» (in Conference Report, Oct. 1990, 42; կամ *Ensign,* Nov. 1990, 34):

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին

«Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտ. դիտողությունները, որոնք տրվել են հիսունվեց տարի առաջ, ուսանելի են այսօր: Նա ասել է. «Հավերժական, անխուսափելի օրենք է, որ աճը գալիս է միայն աշխատանքից և նախապատրաստվելուց, լինի դա նյութական, մտավոր, թե հոգևոր աճ: Աշխատանքն անփոխարինելի է» (in Conference Report, Apr. 1933, p. 103): Ավելի ուշ Երեց Հովարդ Վ. Հանթերն է խորհուրդ տվել. «Անկումից հետո Ադամին տրված առաջին արձանագրված հրահանգը վերաբերվում էր աշխատանքի հավերժական սկզբունքին: Տերն ասաց. «Երեսիդ քրտինքովը հաց ուտես» (Ծննդոց Գ.19): Մեր Երկնային Հայրը մեզ այնպես կատարելապես է սիրում, որ նա տվել է մեզ աշխատելու պատվիրան: Սա հավերժական կյանքի բանալիներից մեկն է: Նա գիտի, որ մենք կսովորենք ավելի շատ, կաճենք ավելի շատ, ձեռք կբերենք ավելի շատ, կծառայենք ավելի շատ և ավելի շատ օգուտ կքաղենք ջանասեր կյանքով, ոչ թե հեշտ կյանքով ապրելով» (*Ensign,* Nov. 1975, p. 122)“ (in Conference Report, Apr. 1989, 9; or *Ensign,* May 1989, 8):

Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն

«*Սովորեցրեք ձեր երեխաներին աշխատել և պատասխանատվություն կրել:* Շատ շատ երեխաներ, հատկապես քաղաքային պայմաններում, մեծանում են մի միջավայրում, որտեղ նրանք բավականաչափ բան չունեն անելու: Նրանք նման են տասներեք տարեկան պատանուն, որին հարցրեցին, թե ինչ էր արել ամբողջ օրը ամռանը:

Նա պատասխանեց. «Դեհ, վեր եմ կենում առավոտյան մոտ տասին կամ տասնմեկին: Ապա մամաս ինձ տալիս է ուտելու բան: Հետո կամ գնում եմ տղաների հետ և մի քիչ բասկետբոլ խաղում, կամ հեռուստացույց դիտում, իսկ հետո գնում զբոսավայր և «թափառում» մի քիչ, աղջիկներին նայում և այդ տիպի ինչ որ բաներ անում…

Ես սիրում եմ այն, ինչ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն է ասել այս նյութի վերաբերյալ.

«Մենք կամենում ենք, որ դուք՝ ծնողներդ, աշխատանք ստեղծեք ձեր երեխաների համար» (in Conference Report, Oct. 1993, 13; կամ *Ensign,* Nov. 1993, 12):

Հոր պարտականությունը

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

Տես «Լինել արդարակյաց ամուսին և հայր», էջ 206-9:

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Ես շտապում եմ ընդունել, որ կան չափազանց շատ ամուսիններ և հայրեր, ովքեր վիրավորում են իրենց կանանց և երեխաներին և որոնցից կանայք և երեխաները պետք է պաշտպանվեն: Այնուամենայնիվ, ժամանակակից սոցիոլոգիական հետազոտություններն ուժգնորեն վերահաստատում են հոգատար հոր ազդեցությունը երեխայի կյանքում՝ լինի տղա, թե աղջիկ: Անցած քսան տարիների ընթացքում, երբ տներն ու ընտանիքները մաքառում էին անեղծ մնալու համար, սոցիոլոգիական հետազոտությունները բացահայտել են այս տագնապալի փաստը՝ հանցագործության մեծ մասը և բազմաթիվ անկարգ վարվելակերպի դեպքեր Միացյալ Նահանգներում գալիս են տներից, որտեղ հայրը լքել է երեխաներին: Ողջ աշխարհում բազմաթիվ հասարակարգերում մանուկների աղքատությունը, հանցագործությունը, թմրադեղերի չարաշահումը և ընտանիքի քայքայումը կարելի է վերագրել այն պայմաններին, որտեղ հայրը չի տալիս արական դաստիարակություն: Սոցիալապես այժմ ցավալիորեն ակնհայտ է, որ հայրերը ընտանիքի ոչ պարտադիր ուղեբեռ են:

Մենք պետք է հարգենք հոր դիրքը որպես ֆիզիկական և հոգևոր հիմք ապահովողի: Ես նշում եմ դա առանց հապաղելու, որովհետև Տերը հայտնել է, որ այս պարտականությունը դրված է ամուսինների վրա: «Կանայք իրենց ապրուստի համար իրավունք ունեն [պահանջ ներկայացնել] իրենց ամուսիններին, քանի դեռ նրանց ամուսինները չեն վերցվել» (ՎԱՈՒ 83.2): Այնուհետև, «բոլոր երեխաները, մինչև չափահաս դառնալը, իրենց ապրուստի համար իրավունք ունեն [պահանջ ներկայացնել] իրենց ծնողներին»

(ՎԱՈՒ 83.4): Բացի այդ, նրանց հոգևոր բարօրությունը պետք է «իրագործվի իրենց հայրերի հավատքով և ուխտով» (ՎԱՈՒ 84.99): Ինչ վերաբերվում է փոքրիկ երեխաներին, Տերը խոստացել է, որ «մեծ բաներ պահանջվեն նրանց հայրերի ձեռքից» (ՎԱՈՒ 29.48):

«Անօգուտ է վիճելը, թե որ ծնողն է ամենակարևորը: Ոչ ոք չի կասկածում, որ մոր ազդեցությունը գերագույնն է նորածինների համար և երեխայի կյանքի առաջին տարիներին: Հոր ազդեցությունը մեծանում է, երբ երեխան մեծանում է: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ծնող անհրաժեշտ է երեխայի զարգացման տարբեր ժամանակաշրջաններում: Ինչպես հայրերը, այնպես էլ մայրերն անում են բազմաթիվ ներհատուկ տարբեր բաներ իրենց երխաների համար: Ինչպես մայրերը, այնպես էլ հայրերը հարմարեցված են երեխաներին դաստիարակելու համար, բայց նրանց մոտեցումները տարբեր են: Մայրերը, թվում է, գերակշռող դեր են խաղում երեխաներին իրենց ներկա և ապագա ընտանիքի ներսում ապրելուն նախապարաստելու համար: Հայրերը, կարծես, լավագույնս հարմարեցված են երեխաներին նախապատրաստելու ընտանիքից դուրս գտնվող միջավայրում գործելու համար:

Մի իշխանավոր նշում է. «Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայրերը հատուկ դեր են խաղում երեխայի ինքնահարգանքը կառուցելու գործում: Նրանք կարևոր են նաև երեխաների մեջ ներքին սահմաններ և ինքնավերահսկողություն զարգացնելիս, ինչը մենք իրականում չենք կարևորում »: Նա շարունակում է. «Հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ հայրերը կարևոր են երեխաների մեջ սեռի հաստատման համար: Հետաքրքրական է, որ հոր ներգրավվածությունը առաջացնում է ավելի ուժեղ սեռական ինքնություն և բնավորություն ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների մոտ: Լավ հայտնի է, որ որդիների առնականությունը և դուստրերի կանացիությունը յուրաքանչյուր դեպքում ավելի մեծ է, երբ հայրերը ակտիվ են ընտանեկան կյանքում» (Karl Zinsmeister, "Do Children Need Fathers?" *Crisis*, Oct. 1992):

«Ծնողները ամեն մի ամուսնական իրավիճակում պարտականություն ունեն մի կողմ դնել անձնական տարաձայնությունները և քաջալերեն միմյանց արդար ազդեցությունը իրենց երեխաների կյանքում…

Հավանաբար, մենք համարում ենք Եղիայի կողմից օժտված զորությունը մի բան, որը կապված է միայն կանոնավոր արարողությունների հետ, որոնք կատարվում են սրբազան վայրերում: Բայց այդ արարողությունները դառնում են ակտիվ և արդյունավետ բարու համար միայն այն ժամանակ, երբ բացահայտվում են մեր ամենօրյա կյանքում: Մաղաքիան ասել է, որ Եղիայի զորությունը կդարձնի հայրերի և երեխաների *սրտերը* միմյանց հանդեպ: Սիրտը զգացմունքների տեղն է և հայտնության համար ուղի (տես Մաղաքիա Դ.5–6): Այս կնքող զորությունը, այսպիսով, դրսևորվում է ընտանեկան հարաբերություններում՝ հատկանիշների և արժանիքների միջոցով, որոնք զարգանում են դաստիարակող միջավայրում և սիրո ծառայության մեջ: Սրանք են այն պարանները, որոնք կապում են ընտանիքները միմյանց, իսկ քահանայությունը շարունակում է դրանք զարգացնել: Աննկատելի, բայց իրական ուղիներով «քահանայության վարդապետությունը կիջնի քո հոգու [և քո տան] վրա, ինչպես ցողը երկնքից» (ՎԱՈՒ 121.45):

Ես վկայում եմ, որ քահանայության օրհնությունները, որոնք հարգվում են հայրերի և ամուսինների կողմից և մեծարվում կանանց և երեխաների կողմից, իսկապես կարող են բժշկել մեր հասարակությանը համաճարակող քաղցկեղը: Աղերսում եմ ձեզ, Հայրեր, տուն եկեք: Մեծարեք ձեր քահանայության կոչումը, օրհնեք ձեր ընտանիքները այս սրբազան ազդեցությամբ և ճաշակեք մեր Հոր և Աստծո կողմից խոստացված պարգևները: Ես ասում եմ այս՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն» (in Conference Report, Apr. 1993, 44–45, 47; կամ *Ensign*, May 1993, 35, 37):

Երեց Հորացիո Ա. Տենորիո

«Հին ժամանակներում ամրոցը պահանջում էր կանոնավոր ստուգումներ՝ հավաստիանալու, որ ոչ մի թույլ կետ չի առաջացել, որից թշնամին կարող էր օգտվել, իսկ պահապանները պահակակետերում ապահովում էին, որ ոչ մի թշնամի չկարողանար աննկատ մոտենալ: Այլ խոսքով ասած, երբ քաղաքը ամրացվում էր, անընդհատ ջանքեր էին գործադրվում՝ պահպանելու ամրոցը, որպեսզի այն կարողանար ծառայել իր նպատակին:

Հիմնադրելով անվտանգության մեր իսկ համակարգը, մենք կարող ենք արգելել թշնամուն գտնել և օգտագործել մեր ընտանեկան ամրոցի թուլությունները, որոնց միջոցով նա կկարողանար ձեռք բերել հասանելիություն և վնասել մեր ամենաթանկ գանձը՝ մեր ընտանիքը:

Մեր ամրոցի վրա պահակակետերից մեկը կարող է լինել հոր կանոնավոր հարցազրույցի սովորույթը իր ընտանիքի յուրաքանչյուր անդամի հետ: Անձնական հարցազրույցները կարևոր աղբյուր են մեր ամրոցի ապահովությունը պահպանելու համար: Դրանց միջոցով մենք ավելի լավ ենք ծանոթանում մեր երեխաների հետ, իմանում նրանց խնդիրների և հոգսերի մասին և հաստատում բաց հաղորդակցություն և վստահություն, որը մեզ հնարավորություն կտա կանխատեսել ամեն մի վտանգ, օգնել նրանց որոշումներ կայացնել և աջակցել նրանց դժվար ժամանակ: Մեր Երկնային Հայրը տվել է մեզ՝ ծնողներիս, մեր ընտանիքներին հոգ տանելու և պաշտպանելու ղեկավարությունը: Դա մի պարտականություն է, որը մենք չենք կարող և չպետք է վստահենք ուրիշին:

Վարդապետություն և Ուխտեր 93 բաժնի 39 և 40 հատվածներում ասվում է.

«Եվ այն չարագործը գալիս և վերցնում է լույսն ու ճշմարտությունը մարդկանց զավակներից, անհնազանդության միջոցով, և նրանց հայրերի ավանդությունների պատճառով:

Բայց ես պատվիրել եմ ձեզ՝ մեծացնել ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ:

Հոգու առաջնորդությամբ սիրով տոգորված մի զրույց կարող է ուղղություն տալ մեր երեխաների կյանքին, առաջ բերել անհրաժեշտ կարգավորումներ կամ փոփոխություններ և նույնիսկ կարող է հրաշքներ կատարել» (in Conference Report, Oct. 1994, 29–30; կամ *Ensign*, Nov. 1994, 23–24):

Ինչպես մայրերը, այնպես էլ հայրերը, սպառազինված են երեխաներին դաստիարակելու համար, բայց նրանց մոտեցումները տարբեր են:

Մոր պարտականությունը

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Մայրությունը բաղկացած է երեք հիմնական հատկանիշներից կամ հատկություններից՝ (1) ծնելու զորությունից, (2) դաստիարակելու ունակությունից, և (3) սիրո պարգևից…

Երեխաներին պատշաճորեն դաստիարակելու այս ունակությունը կամ պատրաստակամությունը, սիրո պարգևը և ձգտումը, նաև դա արտահայտելու ջանասիրությունը հոգու զարգացման ընթացքում դարձնում է մայրությունը աշխարհում պաշտոններից կամ կոչումներից ազնվագույնը» (*Gospel Ideals*, 453):

Տես Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի մեջբերումը, էջ (237) «00»:

Տես Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, *Ուղղված Սիոնի մայրերին*, էջեր (352–57) «00»:

Տես Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի մեջբերումը, էջ (77) «00»:

Տես Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, «Եկեղեցու կանայք», էջեր (357–60) «00»:

Տես Երեց Դալլին Հ. Օուքս, «Երջանկության մեծ ծրագիրը», էջեր (259–63) «00»:

Տես «Կանանց աստվածային գործը», էջեր (347–49) «00»:

Կարգապահություն դաստիարակել սիրով

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Սերը ընտանեկան կյանքի բուն էությունն է: Ինչո՞ւ է այնպես պատահում, որ երեխաները, ում մենք սիրում ենք, հաճախ դառնում են մեր կոպիտ խոսքերի նշանակետերը: Ինչո՞ւ է այնպես լինում, որ այս երեխաները, ովքեր սիրում են իրենց հայրերին և մայրերին, երբեմն, կարծես, խոսում են դանակներով, որոնք անմիջապես կտրում են: «Շուրջ բոլորը չքնաղ է» *միայն*, «երբ սեր կա տան մեջ» *(Հիմներ և մանկական երգեր, էջ 44)*» (in Conference Report, Apr. 1989, 83; կամ *Ensign*, May 1989, 67):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Հաջողակ տուն ունենալու համար պետք է ուսուցանվեն արժեքներ, և պետք է լինեն կանոններ, պետք է լինեն չափանիշներ և պետք է լինեն ճշմարտություններ: Շատ հասարակարգերում ծնողներին շատ քիչ աջակցություն են ցույց տալիս բարոյական արժեքներ ուսուցանելիս և հարգելիս: Մի շարք մշակույթներ դառնում են հիմնականում արժեզուրկ և երիտասարդ մարդկանցից շատերը այդ հասարակարգերում լցվում են ցինիզմով բարոյական օրենքների հանդեպ…

… Երեխա դաստիարակելը շատ անհատական է: Յուրաքանչյուր երեխա տարբեր է և եզակի: Այն, ինչ ստացվում է մեկի հետ, կարող է չստացվել մյուսի հետ: Ես չգիտեմ, թե ով է բավականաչափ իմաստուն եղել, ասելով, «որ պատիժն է շատ խիստ կամ որն է խիստ ներողամիտ, եթե ոչ երեխաների ծնողներինը, ովքեր նրանց ամենաշատն են սիրում»: Սա ծնողների համար աղոթքով հասկանալու հարց է: Իհարկե, առաջնորդող և օժանդակող սկզբունքն այն է, որ երեխաներին կարգավարժելը պետք է հիմնավորվի ավելի շատ սիրով, քան պատժով… Ուղղորդելը և կարգավարժելը, աշուշտ, երեխայի դաստիարակության անհրաժեշտ մասն են կազմում: Եթե ծնողները կարգապահություն չեն դաստիարակում իրենց երեխաների մեջ, ապա հասարակությունը կարգապահության կենթարկի նրանց այնպիսի մի ձևով, որ ծնողներին դուր չի գա: Առանց կարգապահության երեխաները չեն հարգի ոչ տան կանոնները, ոչ էլ հասարակության օրենքները» (in Conference Report, Oct. 1990, 40–41; կամ *Ensign*, Nov. 1990, 32–34):

Երեց Բեն Բ. Բանքս

«*Կարգապահություն դաստիարակելք սիրով»:* «Կարգավարժելը» և «պատժելը» հոմանիշներ չեն: Պատիժ նշանակում է ցավեցնել, ինչ որ մեկին ետ վճարելով գործած սխալի համար: Կարգավարժել նշանակում է նպատակաուղղված … օգնել անձին իրեն բարելավել» (William E. Homan, ‘How to Be a Better Parent,’ *Reader’s Digest*, Oct. 1969, p. 188): Կարգավարժումը միշտ պետք է սիրով կիրառվի (in Conference Report, Oct. 1993, 40; կամ *Ensign*, Nov. 1993, 29):

Անձնական արդարակեցությունը նախապատրաստում է ծնողներին

Նախագահ Բրիգամ Յանգ

«Ոչ մի մարդ չի կարող երբևէ կառավարիչ դառնալ Աստծո թագավորությունում, մինչև կատարելապես չկառավարի ինքն իրեն: Այդ ժամանակ նա կկարողանա բարձրացնել երեխաներով մի ընտանիք, ովքեր վեր կկենան և կկոչեն նրան օրհնված» (*Discourses of Brigham Young,* 265):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Կարգի դնել տունը նշանակում է պահել Աստծո պատվիրանները: Սա բերում է ներդաշնակություն և սեր տանը ձեր ու ձեր կնոջ միջև և ձեր ու ձեր երեխաների միջև: Դա ամենօրյա ընտանեկան աղոթքն է: Դա ձեր ընտանիքին Հիսուս Քրիստոսի ավետարանը հասկանալը սովորեցնելն է: Դա ընտանիքի յուրաքանչյուր անդամի կողմից Աստծո պատվիրանները պահելն է: Դա ձեր և ձեր կնոջ արժանի լինելն է տաճարային երաշխավորագրին, բոլոր ընտանիքի անդամների վեհացման արարողություններին և հավերժության համար ձեր ընտանիքի միասին կնքմանը: Դա մեծ պարտքերից զերծ մնալն է, ընտանիքի անդամների հետ ազնիվ տասանորդ և նվիրատվություններ վճարելը» (in Conference Report, Apr. 1981, 48–49; կամ *Ensign,* May 1981, 36):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«*Աղոթեք միասին:* Մի՞թե աղոթքն այդքան դժվար բան է: Մի՞թե այդքան դժվար է քաջալերել հայրերին և մայրերին իջնել ծնկի իրենց փոքրիկ երեխաների հետ և դիմել Աստվածության գահին՝ արտահայտելով երախտագիտություն օրհնությունների համար, աղոթել նրանց համար, ովքեր դժբախտության մեջ են… Ինչպիսի հզոր բան է աղոթքը» (“Four Simple Things to Help Our Families and Our Nations,” *Ensign,* Sept. 1996, 8):

«Ձեր երեխաները կզգան այնպիսի տան ապահովությունը, որտեղ բնակվում է Տիրոջ Հոգին… Նրանք կմեծանան շնորհակալության զգացումով, լսելով իրենց ծնողների աղոթքները, որոնցում նրանք երախտագիտություն են հայտնում մեծ և փոքր օրհնությունների համար: Նրանք կհասունանան կենդանի Աստծո հանդեպ հավատքով» (in Conference Report, Apr. 1971, 83; կամ *Ensign,* June 1971, 72):

Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին

Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում են և պահպանվում հավատքի, աղոթքի, ապաշխարության սկզբունքների վրա (*Ensign,* Nov. 1995, 102):

Երեց Բոյդ Կ. Փաքեր

«Ծնողներ, կարո՞ղ եք առաջինը մտածել ձեր խնդրի ամենացավոտ մասի վերաբերյալ: Եթե կամենում եք ուղղել ձեր որդուն կամ դստերը, ինչո՞ւ չեք ուղղակի մի առ ժամանակով մի կողմ թողնում ձեր երեխային փոխելու փորձերը և կենտրոնանում ձեզ վրա: Փոփոխությունները պետք է սկսվեն ձեզանից, ոչ թե ձեր երեխաներից:

Դուք չեք կարող շարունակել անել այն, ինչ անում էիք (չնայած մտածում էիք, թե դա ճիշտ էր) և սպասել, որ ձեր երեխայի որոշ վարքագծեր կվերանան, երբ ձեր վարմունքն է եղել դրա պատճառներից մեկը:

Ի վերջո, ես ասացի այն, ինչ ոչ ոք չէր համարձակվում ասել: Բոլորը խուսափում էին ասել ողջ ճշմարտությունը, ողջ մտահոգությունը կամակոր երեխաների համար, ուրիշների ողջ մեղադրանքից հետո, փորձելով ցավ չպատճառել ծնողներին: Ճշմարտությունն ասվեց:

Այդ ձեզ է անհրաժեշտ անմիջական ուշադրություն, ոչ թե երեխային:

Այժմ, ծնողներ, կա հիմնավոր օգնություն ձեզ համար, եթե դուք այն ընդունեք: Ես ավելացնում եմ, շեշտելով, որ օգնությունը, որ մենք առաջարկում ենք, հեշտ չէ, քանի որ միջոցները հավասար են ձեր խնդրի լրջությանը: Գոյություն չունի պատրաստի դեղամիջոց անմիջապես բուժվելու համար:

Եվ ծնողներ, եթե դուք որոնում եք բժշկություն, որն անտեսում է հավատքը և կրոնական վարդապետությունը, դուք որոնում եք բժշկություն, որտեղ այն երբեք չի գտնվի: Երբ մենք խոսում ենք կրոնական սկզբունքների և վարդապետությունների մասին և մեջբերում սուրբ գրությունները, հետքրքիր է, թե որքան շատերն են անհարմար զգում այդպիսի խոսակցությունից: Բայց երբ մենք խոսում ենք ձեր խնդիրների մասին ձեր ընտանիքի հետ և առաջարկում լուծում, այդ ժամանակ ձեր հետաքրքրությունը լարվում է:

Իմացեք, որ դուք չեք կարող խոսել մեկի մասին առանց խոսելու մյուսի մասին և սպասեք ձեր խնդիրների լուծմանը: Երբ ծնողները գիտեն, որ կա Աստված և որ մենք նրա զավակներն ենք, նրանք կարող են դիմակայել այդպիսի խնդիրների և հաղթել:

Եթե դուք անօգնական եք, Նա ոչ:

Եթե դուք կորած եք, Նա ոչ:

Եթե դուք չգիտեք ինչ անել հաջորդը, Նա գիտի:

Ասում եք, հրաշք կպահանջվի՞:

Դեհ, եթե հրաշք կպահանջվի, ինչո՞ւ ոչ» (in Conference Report, Oct. 1970, 119–20):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Փոքրիկ երկդիմությունները ծնողների միջև կարող են մեծ շեղումներ առաջացնել նրանց երեխաների մեջ» (in Conference Report, Oct. 1992, 89; կամ *Ensign,* Nov. 1992, 66):

Երեց Դալլին Հ. Օուքս

«Ժամանակակից հայտնությունը պատվիրում է ծնողներին, որ «երեխաներին ուսուցանեն աղոթել» (ՎԿՈՒ 68.28): Սա պահանջում է ծնողներից սովորել և աղոթել աղոթքի հատուկ լեզվով: Մենք սովորում ենք մեր մայրենի լեզուն ուղղակի լսելով նրանց, ովքեր խոսում են դրանով: Սա նաև վերաբերում է այն լեզվին, որով մենք դիմում ենք մեր Երկնային Հորը: Աղոթքի լեզուն ավելի հեշտ է սովորել և ավելի քաղցր է, քան որևէ այլ լեզու: Մենք պետք է մեր երեխաներին հնարավորություն տանք սովորելու այս լեզուն՝ լսելով իրենց ծնողներին այն օգտագործելիս տարբեր աղոթքներում, որոնք ամեն օր ասվում են մեր տներում» (in Conference Report, Apr. 1993, 20; կամ *Ensign,* May 1993, 18):

Ժամանակ անցկացնելով երեխաների հետ

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Արդյունավետ ընտանեկան ղեկավարումը, եղբայրներ, պահանջում է ժամանակի քանակ և որակ: Ընտանիքի ուսուցանումը և կառավարումը չպետք է թողնվի միայն ձեր կնոջը, հասարակությանը, դպրոցին կամ նույնիսկ Եկեղեցուն» (in Conference Report, Oct. 1994, 68; կամ *Ensign,* Nov. 1994, 50):

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

«Այնքան հաճախ ենք մենք սխալմամբ հավատում, որ մեր երեխաները կարիք ունեն ավելի շատ բաների, երբ իրականում նրանց լուռ աղերսանքներն են՝ ուղղակի ավելի շատ տրամադրել մեր ժամանակից: Հարստության կուտակումը կամ գույքի բազմապատկումը դեմ է Վարդապետի ուսմունքին.

«Ձեզ համար գանձեր մի դիզէք երկրիս վերայ. Ուր որ ցեցն եւ ժանկն ապականում են, եւ ուր որ գողերը պատը ծակում են եւ գողանում:

Բայց ձեզ համար գանձեր դիզեցէք երկնքումը, ուր ոչ ցեց եւ ոչ ժանկ չեն ապականում, եւ ուր գողերը պատը չեն ծակում եւ չեն գողանում» (in Conference Report, Apr. 1994, 80; կամ *Ensign,* May 1994, 62):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Փոքր բաները մեծ բաներ են սիրո, հավատքի, կարգապահության, զոհաբերության, համբերության և աշխատանքի հազարավոր թելերով հյուսված ընտանեկան նախշավոր գորգում» (in Conference Report, Oct. 1990, 43; կամ *Ensign,* Nov. 1990, 35):

Երեց Լ. Թոմ Փերի

Կա երկու ասպարեզ, որ ես կորոշեի բարելավել, եթե մեր տանը մեկ անգամ ևս տրվեր փոքրիկ երեխաներ ունենալու այդ արտոնությունը:

Առաջինը կլիներ ավելի շատ ժամանակ անցկացնել որպես ամուսին և կին ընտանեկան գործադիր հանձնաժողովի ժողովում՝ սովորելով, հաղորդակցվելով, ծրագրելով և կազմակերպելով ավելի լավ կատարել որպես ծնողներ մեր դերերը:

Երկրորդ ցանկությունը, որ ես կկամենայի, եթե այդ տարիները ինձ կրկին տրվեին, կլիներ՝ ավելի շատ ժամանակ անցկացնել ընտանիքում» (in Conference Report, Apr. 1994, 49; կամ *Ensign,* May 1994, 37):

Ստեղծեք ավանդույթներ ձեր ընտանիքներում, որոնք ձեզ միասին կհավաքեն, քանի որ դրանք կարող են ցույց տալ ձեր նվիրվածությունը, սերը և միմյանց աջակցությունը: Ձեր ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի համար այդ իրադարձությունները կարող են ներառել՝ օրհնությունը երեխաներին, մկրտությունները, քահանայության այլ արարողությունները, ուսուցման ավարտը, միսիոներական հրաժեշտը, տունդարձը և, իհարկե, ամուսնությունները: Եթե տարածությունը, միսիաները կամ վատ առողջությունը խանգարում են հավաքներին անձնական մասնակցությանը, գրեք այն առանձնահատուկ նամակներից մեկը, որոնք բարձր են գնահատվում ընտանեկան պատմություններում: Այս առիթներով որպես ընտանիք մասնակցելը կօգնի մեզ կառուցել մի հիմք, որը հաստատված կլինի վեմի վրա» (in Conference Report, Apr. 1985, 29; կամ *Ensign,* May 1985, 23):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

Տես մեջբերումները, էջ (242) «00»:

Երեց Ա. Թեոդոր Թաթլ

«Նախապատրաստվեք այժմ: Այժմ կատարեք քայլեր ընտանիքը զորացնելու համար: Միասին ժամանակ անցկացրեք: Հիմնադրեք և պահպանեք ընտանեկան ավանդույթներ, որոնք ստեղծում են երջանիկ հիշողություններ» (in Conference Report, Oct. 1979, 39; կամ *Ensign,* Nov. 1979, 28):

Երեց Բեն Բ. Բանքս

«*Միասին արեք ինչ որ բաներ:* Արձակուրդները, ուժերը վերկանգնող հանգիստը և ընտանեկան աշխատանքի ծրագրերը ծնողներին լավ հնարավորություններ են տալիս ուսուցանելու լավ աշխատանքային էթիկայի

զարգացման կարևորությունը: Միասին ինչ որ բաներ անելը երեխային և ծնողին հնարավորություն է տալիս իրենց ուշադրությունը բաշխել ընդհանուր նպատակի վրա» (in Conference Report, Oct. 1993, 40; կամ *Ensign*, Nov. 1993, 29):

ՄԵԾԱԳՈՒՅՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ՝ ԼԱՎ ԾՆՈՂ ԼԻՆԵԼՆ Է

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, հոկտ. 1990, 39–43, կամ Ensign, նոյ.1990, 32–35

Ծնող լինելն աստվածային կոչում է

Իմ սիրելի եղբայրներ, քույրեր և ընկերներ, ես ձեր հավատքն ու աղոթքներն եմ խնդրում այս օրվա երկրորդ կեսին, քանի որ մղում եմ զգում քննարկելու մի թեմա, որն ընտրել եմ՝ կոչելով այն՝ մեծագույն մարտահրավերն աշխարհում: Այն առնչվում է ծնող լինելու արտոնության և պատասխանատվության հետ: Այս թեմայի վերաբերյալ կան գրեթե այնքան կարծիքներ, որքան ծնողներ կան, սակայն քչերն են, որ պնդում են, թե ունեն բոլոր պատասխանները: Ես, իհարկե, նրանցից մեկը չեմ:

Ես զգում եմ, որ շատ ավելի ակնառու երիտասարդ տղամարդիկ և կանայք կան ներկայումս մեր ժողովրդի մեջ, քան եղել են իմ կյանքում որևէ այլ պահի: Սա նշանակում է, որ այս հրաշալի երիտասարդ մարդկանց մեծ մասը եկել են լավ տներից և ունեն նվիրված, հոգատար ծնողներ: Նույնիսկ այս դեպքում բարեխիղճ ծնողների մեծ մասը զգում են, որ նրանք գուցե որոշ սխալներ են գործել: Մի ժամանակ, երբ ես մի անմիտ բան արեցի, հիշում եմ, թե ինչպես մայրս բացականչեց. «Որտե՞ղ եմ սխալ թույլ տվել»:

Տերը հրահանգել է. «Դաստիարակեք ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ» (ՎԿՈՒ 93.40): Ինձ համար չկա ավելի կարևոր մարդկային ջանք:

Հայր կամ մայր լինելը ոչ միայն մեծ մարտահրավեր է, այն աստվածային կոչում է: Այն ջանք պահանջող նվիրաբերում է: Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը նշում է, որ ծնող լինելը «մեծագույն վստահությունն է, որ տրվել է մարդկային էակներին» (*The Responsibility of Parents to Their Children* [pamphlet, n.d.], p. 1):

Ստեղծելով հաջողված տներ

«Չնայած մարդկային մարտահրավերներից քչերն են ավելի մեծ, քան լավ ծնողներ լինելը, քիչ են ավելի մեծ ուրախության ներուժ տվող այլ հնարավորությունները: Անկասկած չկա ավելի կարևոր աշխատանք, քան մեր երեխաներին աստվածավախ, երջանիկ, պատվավոր և արդյունավետ լինելուն նախապատրաստելը: Ծնողները չեն գտնի ավելի լիակատար երջանկություն, քան իրենց երեխաների հարգանքն իրենց և իրենց ուսմունքների հանդեպ: Դա ծնող լինելու փառքն է: Հովհաննեսը վկայում է. «Սրանից ավելի մեծ ուրախութիւն չունիմ, որ լսում եմ թե իմ որդիները ճշմարտութեան մէջ են գնում» (3 Հովհ Ա.4): Իմ կարծիքով, երեխաներին ուսուցանելը, դաստիարակելը և վարժեցնելը պահանջում է ավելի շատ խելք, ներըմբռնում, համեստություն, ուժ, իմաստություն, հոգևորություն, հետևողականություն և ծանր աշխատանք, քան որևէ այլ մարտահրավեր, որ կարող ենք ունենալ կյանքում: Սա հատկապես այդպես է, երբ պատվի և օրինավորության բարոյական հիմքերը քայքայվում են մեր շրջապատում: Հաջողակ տուն ունենալու համար պետք է ուսուցանվեն արժեքներ և պետք է լինեն կանոններ, պետք է լինեն չափանիշներ և պետք է լինեն ճշմարտություններ: Շատ հասարակարգերում ծնողներին շատ քիչ աջակցություն են ցույց տալիս բարոյական արժեքներ ուսուցանելիս և հարգելիս: Մի շարք մշակույթներ հիմնականում դարձել են արժեզրկված և երիտասարդ մարդկանցից շատերը այդպիսի հասարակությունում ցինիզմով են լցվում բարոյական օրենքների հանդեպ…

Քանի որ ամբողջ մշակույթներ քայքայվել են և կորցրել իրենց բարոյական իսկությունը և աղքան շատ տներ են քանդվում, լավագույն հույսը ավելի մեծ ուշադրություն և ջանք գործադրելն է հաջորդ սերնդին՝ մեր երեխաներին ուսուցանելու ուղղությամբ: Այս անելու համար մենք պետք է առաջինը Երեխաների Միության ուսուցիչներին ամրապնդենք: Այս ուսուցիչների մեջ ամենակարևորը ծնողներն են և ընտանիքի մյուս անդամները և լավագույն միջավայրը պետք է լինի տանը: Ինչ որ կերպ, ինչ որ ձևով մենք պետք է փորձենք ավելի շատ ճիգ գործադրել մեր տներն ավելի ուժեղացնելու համար, որպեսզի դրանք կանգնեն որպես սրբարաններ մեր շրջապատում՝ անսուրբ, այլասերված բարոյական փտախտի դեմ: Տանը ներդաշնակությունը, երջանկությունը, խաղաղությունը և սերը կարող են երեխաներին տալ անհրաժեշտ ներքին ուժը՝ կյանքի մարտահրավերները հաղթահարելու համար: Բարբարա Բուշը՝ Նախագահ Ջորջ Բուշի կինը, մի քանի ամիս առաջ ասաց Ուելսլեյ Քոլեջի շրջանավարտներին.

«Բայց ինչ դար էլ որ լինի, ինչպիսի ժամանակներ էլ որ լինեն, մեկ բան երբեք չի փոխվի: Հայրեր և մայրեր, ձեր երեխաները պետք է առաջին տեղում լինեն: Դուք պետք է կարդաք ձեր երեխաների համար, և դուք պետք է գրկեք ձեր երեխաներին, և դուք պետք է սիրեք ձեր երեխաներին: Ձեր հաջողությունը որպես ընտանիք, մեր հաջողությունը որպես հասարակություն կախված է ոչ թե նրանից, թե ինչ է կատարվում Սպիտակ Տանը, այլ նրանից, թե ինչ

է կատարվում ձեր տան ներսում» (*Washington Post*, 2 June 1990, p. 2):

Լավ հայր և մայր լինելու համար պահանջվում է, որ ծնողները զիջեն իրենց կարիքներն ու ցանկությունները հանուն իրենց երեխաների կարիքների: Այս զոհաբերության հետևանքով բարեխիղճ ծնողները զարգացնում են բնավորության ազնվականություն և սովորում գործի դնել Փրկչի՝ հենց Իր կողմից ուսուցանված անեսասեր ճշմարտությունները:

Ես մեծագույն հարգանք եմ զգում միայնակ ծնողների հանդեպ, ովքեր պայքարում են և զոհաբերում, փորձելով դեմ գնալ գրեթե գերմարդկային տարաձայնությունների՝ ընտանիքը միասնական պահելու համար: Նրանց պետք է հարգել և օգնել այդ հերոսական ջանքերում: Բայց ամեն մի հոր և մոր անելիքը շատ ավելի հեշտ է, եթե տանը կան երկու գործող ծնողներ: Երեխաները երբեմն ստուգում և փորձում են երկու ծնողների ուժն ու իմաստությունը…

Ծնողները պետք է օրինակ հանդիսանան

Երբ ծնողները փորձում են ուսուցանել իրենց երեխաներին խուսափել վտանգից, նրանց պատասխանը չպետք է լինի. «Մենք փորձառու ենք և իմաստուն աշխարհիկ ուղիներում և մենք կարող ենք ավելի մոտիկ գնալ ժայռի եզրին, քան դուք»: Ծնողական կեղծավորությունը կարող է երեխաներին ցինիկ դարձնել և անհավատ այն բաների հանդեպ, ինչ իրենց ուսուցանում են տանը: Օրինակ, երբ ծնողները ֆիլմեր են նայում և արգելում են իրենց երեխաներին դիտել, ծնողների հանդեպ վստահությունը նվազում է: Եթե երեխաներից սպասվում է ազնիվ լինել, ծնողները պետք է ազնիվ լինեն: Եթե երեխաներից սպասվում է, որ առաքինի լինեն, ծնողները պետք է առաքինի լինեն: Եթե սպասում եք, որ ձեր երեխաները պատվավոր լինեն, դուք պետք է պատվավոր լինեք:

Մյուս արժեքների շարքում, որոնք պետք է ուսուցանվեն երեխաներին, ուրիշների հանդեպ հարգանքն է, սկսած երեխայի սեփական ծնողներից և ընտանիքից, հարգանք ուրիշների հավատքի խորհրդանիշների և հայրենասիրական հավատամքների հանդեպ, հարգանք օրենքի և կարգուկանոնի հանդեպ, հարգանք ուրիշների ունեցվածքի հանդեպ, հարգանք իշխանությունների հանդեպ: Պողոսը հիշեցնում է, որ երեխաները «թող առաջ իրանց ընտանիքումը որդիական սէր ցոյց տալ» (Ա Տիմոթեոս Ե.4):

Երեխաներին կարգապահություն սովորեցնել

Ամենադժվար ծնողական մարտահրավերներից մեկը երեխաներին պատշաճորեն կարգապահության վարժեցնելն է: Երեխա դաստիարակելն շատ անհատական է: Յուրաքանչյուր երեխա տարբեր է և եզակի: Այն, ինչ ստացվում է մեկի հետ կարող է չստացվել մյուսի հետ: Ես չգիտեմ, թե ով է բավականաչափ իմաստուն եղել ասելով «որ պատիժն է շատ խիստ կամ որն է խիստ ներողամիտ, եթե ոչ հենց երեխաների ծնողներինը, ովքեր նրանց ամենաշատն են սիրում»: Սա ծնողների համար աղոթքով զանազանելու հարց է: Իհարկե առաջնորդող և օժանդակող սկզբունքն այն է, որ երեխաներին կարգավարժելը պետք է հիմնավորվի ավելի շատ սիրով քան պատժով…. Ուղղորդելը և կարգավարժելը, այնուամենայնիվ, իհարկե երեխայի դաստիարակության անհրաժեշտ մասն են կազմում: Եթե ծնողները կարգապահության չեն վարժեցնում իրենց երեխաներին, ապա հասարակությունը կարգապահության կվարժեցնի նրանց, այնպիսի մի ձևով, որ ծնողներին դուր չի գա: Առանց կարգապահության երեխաները չեն հարգի ոչ տան կանոնները, ոչ էլ հասարակության» (in Conference Report, Oct. 1990, 40–41; կամ *Ensign*, Nov. 1990, 32–34):

«Կարգապահության հիմնական նպատակը հնազանդություն ուսուցանելն է: Նախագահ Դեյվիդ Օ.Մակքեյը նշել է. «Ծնողները, ովքեր ձախողվում են հնազանդություն ուսուցանել իրենց երեխաներին, եթե [նրանց] տները չեն զարգացնում հնազանդություն, հասարակությունը կպահանջի այն և կպարտադրի: Ուստի ավելի լավ է տան համար ավելի շուտ բարությամբ, կարեկցանքով և հասկացողությամբ ուսումնավարժեցնել երեխային հնազանդության մեջ, քան քարասրտորեն թողնել նրան դաժան և անբարյացակամ պատժին, որը հասարակությունը կներկայացնի, եթե տունն արդեն չի կատարել իր պարտականությունը» (*The Responsibility of Parents to Their Children*, p. 3):

Երեխաներին աշխատել սովորեցնել

«Երեխաներին կարգապահ և պատասխանատու լինել սովորեցնելիս կարևոր հանգամանք է նրանց աշխատել սովորեցնելը: Երբ մենք մեծանում ենք, մեզանից շատերը նման են այն մարդուն, որն ասել է. «Ես սիրում եմ աշխատանք, այն հրապուրում է ինձ: Ես կարող եմ նստել և ժամերով դիտել այն» (Jerome Klapka Jerome, in *The International Dictionary of Thoughts*, comp. John P. Bradley, Leo F. Daniels, and Thomas C. Jones [Chicago: J. G. Ferguson Publishing Co., 1969], p. 782): Աշխատանքի սկզբունքի լավագույն ուսուցիչները նորից իրենք ծնողներն են: Ինձ համար աշխատանքը դարձավ ուրախություն, երբ առաջին անգամ աշխատեցի հայրիկիս, պապիկիս, քեռիներիս և եղբայրներիս կողքին: Համոզված եմ որ ես հաճախ ավելի շուտ խանգարում էի քան օգնում, բայց հիշողությունները քաղցր են և սովորած դասերն արժեքավոր: Երեխաները պետք է սովորեն պատասխանատվություն և անկախություն: Արդյոք ծնողներն անձնապես ժամանակ տրամադրո՞ւմ են ցույց տալու և ցուցադրելու ու բացատրելու համար, որպեսզի ինչպես Լեքին էր ուսուցանում «գործեն ինքնուրույն և չներգործվեն» (2 Նեփի 2.26)

Լյութեր Բարբանքը՝ աշխարհի մեծագույն բանջարաբույծներից մեկն ասել է. «Եթե մենք այլևս ավելի շատ ուշադրություն չդարձնենք մեր բույսերին, քան ստիպված ենք դարձնել մեր երեխաներին, մենք այժմ կապրեինք մոլախոտերի ջունգլիում» (in *Elbert Hubbard's Scrap Book* [New York: Wm. H. Wise and Co., 1923], p. 227):

Հաջողված տներ ունենալու համար պետք է ուսուցանվեն արժեքներ:

Հատուկ մարտահրավերներ ծնողների համար

Երեխաները ևս բարոյական կամքի ազատությունից օգտվողներ են, որով մեզ բոլորիս հնարավորություն է տրվում առաջադիմել, աճել և զարգանալ: Այդ ազատ կամքը նաև թույլ է տալիս երեխաներին հետևել այլ ընտրությունների՝ եսասիրական, շռայլող, երեսառածության և ինքնաոչնչացման: Երեխաները հաճախ խիստ երիտասարդ հասակում են դրսևորում կամքի այդ ազատությունը:

Թող ծնողները, ովքեր բարեխիղճ են եղել, սիրառատ և մտահոգված և ովքեր ապրել են արդարակեցության սկզբունքներով լավագույն ձևով, կարող են մխիթարվել իմանալով, որ իրենք լավ ծնողներ են, չնայած իրենց երեխաների որոշ արարքներին: Երեխաներն իրենք պատասխանատվություն ունեն լսելու, հնազանդվելու և, լինելով ուսուցանված, սովորելու: Ծնողները չեն կարող միշտ պատասխանել իրենց երեխաների բոլոր սխալ արարքների համար, որովհետև նրանք չեն կարող ապահովել երեխաների լավ վարքը: Որոշ երեխաներ կարող են պահանջել նույնիսկ Սողոմոնի իմաստությունը և Հոբի համբերությունը:

Հաճախ գոյություն ունի մի հատուկ մարտահրավեր այն ծնողների համար, ովքեր հարուստ են կամ լիովին ներողամիտ: Ինչ որ տեղ որոշ երեխաներ այդ պայմաններում իրենց ծնողներին դժվարին կացության մեջ են դնում՝ հրաժարվելով հնազանդ լինել իրենց ծնողներին մինչև ծնողները չեն համաձայնվում բավարարել երեխաների պահանջները: Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է. «Նրանք, ովքեր խիստ շատ բան են անում իրենց երեխաների *համար*, շուտով կհայտնաբերեն, որ ոչինչ չեն կարող անել իրենց երեխաների *հետ:* Այնքան շատ երեխաների *համար անում են* այնքան շատ բան, որ դա նրանց գրեթե *կործանում է:* (in Conference Report, Apr. 1975, p. 150; կամ *Ensign,* May 1975, p. 101): Թվում է, մարդկային էությունն է այդպես, որ մենք լիովին չենք գնահատում նյութական բաները, որոնք մենք ինքներս չենք վաստակել:

Որոշակի հեգնանք կա այն փաստում, որ կան ծնողներ, ովքեր անհանգստանում են իրենց հասակակիցների մեջ իրենց երեխաների ընդունված և ճանաչված լինելու փաստով, սակայն այդ նույն ծնողները վախենում են, որ իրենց երեխաները կարող է անեն այն բաները, որոնք նրանց հասակակիցներն են անում:

Երեխաներին օգնել յուրացնել արժեքները

Ընդհանրապես, այն երեխաները, ովքեր որոշում են ընդունում և ունեն վճռականություն հեռու մնալու թմրանյութերից, ալկոհոլից և անպատշաճ սեռական հարաբերություններից, նրանք են, ովքեր որդեգրել և յուրացրել են իրենց տների ուժեղ արժեքները, երբ իրենց ծնողների հետ էին ապրում: Դժվար որոշումների ժամանակ նրանք ամենայն հավանականությամբ ավելի շուտ հետևում են իրենց ծնողների ուսուցումներին, քան իրենց հասակակիցների օրինակին կամ լրատվական միջոցների կեղծիքներին, որոնք հրապուրիչ են դարձնում ալկոհոլի սպառումը, անպատշաճ սեռական հարաբերությունները, անհավատարրմությունը, անազնվությունը և այլ չարիքներ: Նրանք նման են Հելամանի երկու հազար պատանիներին, ովքեր « սովորեցվել էին իրենց մայրերի կողմից, որ եթե նրանք չկասկածեին, Աստված կազատեր նրանց» մահից» (Ալմա 56.47): «Եվ նրանք կրկնեցին … իրենց մայրերի խոսքերն՝ ասելով. Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա» (Ալմա 56.48):

Այն, ինչ թվում է օգնում է ցեմենտել ծնողական ուսուցումները և արժեքները երեխաների կյանքում, Աստվածության հանդեպ ամուր հավատքն է: Երբ այս հավատքը դառնում է նրանց հոգու մի մասը, նրանք ունենում են ներքին ուժ: Այսպիսով, բոլոր բաներից, որոնք կարևոր են սովորեցնելու համար, ի՞նչ պետք է սովորեցնեն ծնողները: Սուրբ գրքերը սովորեցնում են մեզ, որ ծնողները պետք է սովորեցնեն իրենց երեխաներին «հավատք առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի» և «ապաշխարության վարդապետությունը» (ՎԱՈՒ 68.25): Այս ճշմարտությունները պետք է ուսուցանվեն տանը: Դրանք չեն կարող ուսուցանվել հասարակական դպրոցներում, ոչ էլ այն կխրախուսվի կառավարության կողմից կամ էլ հասարակության կողմից: Իհարկե, Եկեղեցու ծրագրերը կարող են օգնել, բայց ամենաարդյունավետ ուսուցումը տեղի է ունենում տանը:

Միրո հազարավոր թելեր

Ծնողների ուսուցման պահերը չպետք է լինեն մեծ կամ դրամատիկ կամ զորեղ: Մենք սովորում ենք դա Վարդապետից: Չարլզ Հենրի Փարխուրստն ասել է.

«Քրիստոսի կյանքի կատարյալ գեղեցկությունը ընդամենը աննկատելի փոքրիկ գեղեցիկ գործերի գումարված գեղեցկությունն է, երբ Նա խոսում է ջրհորի մոտ կնոջ հետ, … երբ ցույց է տալիս երիտասարդ կառավարչին նրա սրտի խորքում գտնվող թաքուն փառասիրությունը, որը նրան դուրս էր պահում երկնքի արքայությունից, …. երբ հետևորդների մի փոքրիկ խմբի սովորեցնում է աղոթել, … երբ կրակ է վառում և ձուկը խորովում, որպեսզի իր

աշակերտները կարողանային նախաճաշել՝ սպասելով նրանց, երբ նրանք ափ եկան գիշերային ձկնորսությունից, մրսած, հոգնած և հուսահատված: Բոլոր այս բաները, որ դուք տեսնում եք, մեզ այնքան հեշտորեն բացահայտում են [Քրիստոսի] հետաքրքրությունների իրական առանձնահատկությունը և ուղղվածությունը, այնքան յուրահատուկ, այնքան նեղ, այնքան խորացած նրա վրա, ինչը փոքր է, այնքան կլանված նրանով, ինչն աննշան է» (“Kindness and Love,” in *Leaves of Gold* [Honesdale, Pa.: Coslet Publishing Co., 1938], p. 177):

Եվ դա այդպես է ծնող լինելիս: Փոքր բաները մեծ բաներ են՝ սիրո, հավատքի, կարգապահության, զոհաբերության, համբերության և աշխատանքի հազարավոր թելերով հյուսված ընտանեկան գորգի նախշերում:

Ուխտի զավակները

Կան մի քանի մեծ հոգևոր խորհուրդներ, որոնք այս Եկեղեցում կարող են օգնել հավատարիմ ծնողներին: Հավերժական կնքումներով զավակների վրա են իջնում աստվածային խոստումները, որոնք տրվել են նրանց քաջարի նախնիներին, ովքեր ազնվորեն պահել են իրենց ուխտերը: Ծնողների կողմից հիշվող ուխտերը կհիշվեն Աստծո կողմից: Երեխաները կարող են այսպիսով դառնալ այս մեծ ուխտերի և խոստումներ շահառուները և ժառանգները: Սա այն պատճառով է, որ նրանք ուխտի զավակներ են (տես Orson F. Whitney, in Conference Report, Apr. 1929, pp. 110–11):

Թող Աստված օրհնի այս աշխարհի պայքարող, զոհաբերող, պատվավոր ծնողներին: Թող որ Նա հատկապես պատվի մեր ժողովրդի միջի հավատարիմ ծնողների կողմից պահվող ուխտերը և հսկի ուխտի այս զավակներին: Ես աղոթում եմ, որ սա այսպես լինի Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն:

ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Մենք, որ գիտենք Աստծո ծրագիրը իր զավակների համար, մենք, որ ուխտել ենք մասնակցել, ունենք հստակ պատասխանատվություն:

—Երեց Դալլին Հ. Օուքս

«ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԾՐԱԳԻՐԸ»

Երեց Դալլին Հ. Օուքս

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, հոկտ. 1993, 96–102, կամ Ensign, նոյ. 1993, 72–75

Փրկության ծրագիր՝ հավերժության ուղեցույց

Հարցեր, ինչպիսիք են՝ Ինչո՞ւ ենք այստեղ, Որտեղի՞ց ենք եկել, և Ո՞ւր ենք գնում պատասխան են ստանում Հիսուս Քրիստոսի ավետարանում: Մարգարեները կոչել են այն փրկության ծրագիր և «երջանկության մեծ ծրագիր» (Ալմա 42.8): Ոգեշնչման միջոցով մենք կարող ենք հասկանալ հավերժության այս ուղեցույցը և օգտագործել այն մահկանացու կյանքում մեր ճանապարհն առաջնորդելու համար:

Ավետարանը սովորեցնում է մեզ, որ մենք երկնային ծնողների հոգևոր զավակներն ենք: Նախքան մեր մահկանացու ծնունդը մենք ունեինք «նախագո ոգեղեն անհատականություն, որպես Հավերժական Հոր որդիներ և դուստրեր» (Առաջին Նախագահության հայտարարություն, *Improvement Era,* Mar. 1912, p. 417; տես նաև Երեմիա Ա.5): Մենք դրվել ենք այստեղ՝ երկրի վրա առաջադիմելու դեպի հավերժական կյանքի ճակատագիրը: Այս ճշմարտությունները տալիս են մեզ առանձնահատուկ հեռանակար և տարբեր արժեքներ՝ առաջնորդելու համար նրանց որոշումները, ովքեր կասկածում են Աստծո գոյությանը և հավատում, որ կյանքը պատահական գործընթացների արդյունք է:

Խորհուրդ երկնքում

Կյանքի մեր ըմբռնումը սկսվում է երկնային մի խորհրդից: Այնտեղ Աստծո հոգևոր զավակները ուսուցանվեցին իրենց ճակատագրի համար նրա հավերժական ծրագիրը: Մենք առաջադիմել ենք այնքանով, որքանով կարողացել ենք առանց ֆիզիկական մարմնի և մահկանացու կյանքի փորձառության: Ուրախության լրիվությունը հասկանալու համար մենք պետք է ապացուցեինք մեր պատրաստակամությունը Աստծո պատվիրանները պահելիս այնպիսի պայմաններում, որտեղ մենք հիշողություն չունեինք այն մասին, թե ինչ է նախորդել մեր մահկանացու ծննդին:

Մահկանացու կյանքի ընթացքում մենք դառնում ենք մահվան ենթակա և աղտոտվում ենք մեղքով: Մահից և մեղքից մեզ ետ բերելու համար մեր Երկնային Հոր ծրագիրն ապահովեց մեզ Փրկչով, որի Քավությունը փրկագնում է բոլորին մահից և վճարում գինը, որն անհրաժեշտ է բոլորին մաքրագործելու մեղքից ըստ նրա սահմանած պայմանների (տես 2 Նեփի 9.19–24):

Սատանան ուներ իր սեփական ծրագիրը: Նա առաջարկեց փրկել Աստծո *բոլոր* հոգևոր զավակներին, հավաստիացնելով, որ կվերացներ նրանց ընտրելու զորությունը և այսպիսով կբացառեր մեղքի հնարավորությունը: Երբ սատանայի ծրագիրը մերժվեց, նա և նրա հետևորդները հակադրվեցին Հոր ծրագրին և դուրս գցվեցին:

Բոլոր բյուրավոր մահկանացուները, ովքեր ծնվել են այս երկրի վրա, ընտրել են Հոր ծրագիրը և պայքարել հանուն դրա: Մեզանից շատերը նաև ուխտեր են կապել Հոր հետ այն բանի վերաբերյալ, թե ինչ պետք է անեն մահկանացու կյանքում: Հայտնի չդարձված ուղիներով մեր գործողությունները հոգևոր աշխարհում ազդում են մեր վրա մահկանացու կյանքում:

Սատանան ձգտում է կործանել Աստծո ծրագիրը

Չնայած սատանան և նրա հետևորդները կորցրել են ֆիզիկական մարմին ունենալու իրենց հնարավորությունը, նրանց թույլ է տրվում օգտագործել իրենց ոգու ուժերը, փորձելով խափանել Աստծո ծրագրերը: Սա ապահովում է անհրաժեշտ ընդդիմություն,՝ ստուգելու, թե ինչպես կօգտագործեն մահկանացուները ընտրելու իրենց ազատությունը: Սատանայի ամենաուժեղ ընդդիմությունը ուղղված է նրա վրա, ինչն ամենակարևորն է Հոր ծրագրում: Սատանան ձգտում է վարկաբեկել Փրկչին և աստվածային իշխանությանը, զրոյի հավասարեցնել Քավության ազդեցությունները, կեղծել հայտնությունը, հեռու տանել մարդկանց ճշմարտությունից, հակադրվել անձնական պատասխանատվությանը, խառնաշփոթության մատնել սեռը, քայքայել ամուսնությունը, և երեխա ունենալու մտադրությունից ետ կանգնեցնել (հատկապես այն ծնողներին, ովքեր կմեծացնեն երեխաներին արդարության մեջ):

Սեռը, ամուսնությունը և երեխա ունենալը կարևոր են ծրագրի համար

Արականությունը և իգականությունը, ամուսնությունը և երեխաներ խնամելն ու դաստիարակելը՝ բոլորը կարևոր են երջանկության մեծ ծրագրի համար: Ժամանակակից հայտնությունը հստակեցնում է, որ այն, ինչ մենք կոչում ենք սեռ, մեր ծննդից առաջ մեր գոյության մասն էր կազմում: Աստված հայտարարում է, որ Նա ստեղծեց «արու և էգ» (ՎԱՌ 20.18, Մովսես 2.27, Ծննդոց Ա.27): Երեց Ջեյմս Ի. Թալմիջը բացատրել է. «Արականի և իգականի միջև տարբերությունը մահկանացու կյանքի համեմատաբար կարճ ժամանակահատվածին վերաբերող վիճակին չէ առանձնահատուկ, այն բնորոշ հիմնական հատկանիշ էր մեր նախագոյության վիճակում» (*Millennial Star,* 24 Aug. 1922, p. 539):

Առաջին տղամարդուն և կնոջը երկրի վրա Տերն ասել է. «Պտղաբեր եղեք և բազմացեք» (Մովսես 2.28, Ծննդոց Ա.28, տես նաև Աբրահամ 4.28): Այս պատվիրանը առաջինն էր հաջորդականությամբ և առաջինը կարևորությամբ: Կարևոր է, որ Աստծո հոգևոր զավակներն ունենան մահկանացու ծնունդ և հնարավորություն առաջադիմելու դեպի հավերժական կյանք: Հետևաբար, բոլոր բաները, որոնք կապված են ծննդաստեղծման հետ գլխավոր նշանակետեր են հակառակորդի ջանքերում Աստծո ծրագիրը խորտակելու համար:

Անկման անհրաժեշտությունը

Երբ Ադամն ու Եվան ստացան առաջին պատվիրանը, նրանք անցումնային վիճակում էին, այլևս ոգիների աշխարհում չէին բայց ֆիզիկական մարմիններով, դեռևս ենթակա չէին մահվան և ի վիճակի չէին ծննդաստեղծման: Նրանք չէին կարող կատարել Հոր առաջին պատվիրանը առանց օրինազանցելու այն արգելքը, որ կար Եդեմական պարտեզի երանության և մահկանացու կյանքի սոսկալի փորձությունների և հրաշալի հնարավորությունների միջև:

Երբեք չբացահայտված պատճառներով այս անցումը կամ «անկումը» չէր կարող տեղի ունենալ առանց օրինազանցության, բարոյական ազատ կամքի կիրառման՝ առաջացնելով օրենքի ինքնակամ խախտման (տես Մովսես 6.59): Սա կարող էր լինել ծրագրված վիրավորանք, հավերժական նպատակի ծառայող մի ձևականություն: Մարգարե Լեքին բացատրել է, որ «եթե Ադամն օրիազանցություն չաներ, նա չէր ընկնի», այլ կմնար նույն վիճակում, որով նա ստեղծվել էր (2 Նեփի 2.22):

«Եվ նրանք երեխաներ չէին ունենա. Ուստի, նրանք մնացած կլինեին անմեղության վիճակում, չունենալով ուրախություն, քանզի չգիտեին թշվառություն. Չանելով բարիք, քանզի նրանք չգիտեին մեղքը» (հ.23):

Բայց, ահա, բոլոր բաներն արվել են նրա իմաստությամբ, ով գիտի բոլոր բաները (հ. 24):

Եվայի իմաստությունն ու քաջությունը

Եվան առաջինն էր, որ օրինազանցեց Եդեմի կարգը, որպեսզի սկիզբ դներ մահկանացու կյանքի պայմաններին: Նրա գործողությունը ինչպիսին էլ որ լիներ դրա բնույթը, օրինազանցություն էր ձևականորեն, բայց հավերժորեն փառահեղ անհրաժեշտություն՝ բացելու դուռը դեպի հավերժական կյանք: Ադամը ցույց տվեց իր իմաստությունը, անելով նույնը: Եվ այսպիսով, Եվան և «Ադամն ընկան, որպեսզի մարդիկ լինեն» (հ.25):

Որոշ քրիստոնյաներ դատապարտում են Եվայի արարքը, եզրակացնելով, որ նա և իր դուստրերը ինչ որ տեղ արատավորվում են դրա պատճառով: Բայց ոչ Վերջին Օրերի Սրբերը: Տեղեկացված լինելով հայտնությամբ, մենք տոնում ենք Եվայի արարքը և հարգում նրա իմաստությունն ու քաջությունը այն մեծ իրադարձությունում, որը կոչվում է Անկում (տես Bruce R. McConkie, "Eve and the Fall," in *Woman* [Salt Lake City: Deseret Book Co., 1979], էջեր 67–68): Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ դա «մեղք» չէր որովհետև Աստված էր հրամանագրել այն (տես *The Words of Joseph Smith,* ed. Andrew F. Ehat and Lyndon W. Cook [Provo: Religious Studies Center, Brigham Young University, 1980], p. 63): Բրիգամ Յանգը հայտարարել է. «Մենք երբեք չպետք է մեղադրենք Մայր Եվային, նվազագույն իսկ չափով» (in *Journal of Discourses,* 13:145): Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Ես երբեք չեմ խոսում Եվայի դերի մասին այս անկումում որպես մեղք, ոչ էլ Ադամին եմ մեղադրում մեղքի համար … Սա օրինազանցություն էր օրենքի, բայց ոչ թե մեղք … Քանի որ դա մի բան էր, որ Ադամն ու Եվան ստիպված էին անել» (*Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. [Salt Lake City: Bookcraft, 1954–56], 1:114–15):

Տարբերությունը մեղքի և օրիանազանցության միջև

Այս առաջարկվող տարբերությունը *մեղքի* և *օրինազանցության* միջև հիշեցնում է մեզ հավատքի երկրորդ հանգանակի բառերի խնամքով ընտրությունը. «Մենք հավատում ենք, որ մարդիկ կպատժվեն իրենց իսկ գործած մեղքերի, այլ ոչ թե Ադամի *օրինազանցության* համար» (շեղագիրն ավելացված է): Այն նաև ընդօրինակում է նմանատիպ մի տարբերություն օրենքում: Որոշ արարքներ, ինչպես սպանությունը, հանցագործություն են և, անկակտելիորեն սխալ են: Այլ արարքներ, ինչպիսիք են՝ առանց վարորդական իրավունքի վարելը, հանցագործություն են, միայն այն պատճառով որովհետև օրենքով արգելված են: Այս առանձնահատկություններից ելնելով, արարքը, որն առաջ բերեց անկում, մեղք չէր, անկակտելիորեն սխալ, այլ օրիազանցություն, սխալ, որովհետև ձևականորեն արգելված էր: Այս բառերը միշտ չէ, որ օգտագործվում են տարբեր բաներ արտահայտելու համար, բայց այս տարբերությունը թվում է իմաստալի Անկման հանգամանքներում:

Առաջին ծնողները գիտեին անկման անհրաժեշտության մասին

Ժամանակակից հայտնությունը ցույց է տալիս, որ մեր առաջին ծնողները հասկանում էին Անկման անհրաժեշտությունը: Ադամը հայտարարեց. «Օրհնյալ է Աստծո անունը, քանզի իմ օրինազանցության հետևանքով աչքերս բացվել են, և այս կյանքում ես ուրախություն կունենամ, և կրկին, մարմնի մեջ, ես կտեսնեմ Աստծուն» (Մովսես 5.10):

Ուշադրություն դարձրեք Եվայի առանձնահատուկ հեռանկարին ու հատուկ իմաստությանը, որը կենտրոնացավ երջանկության մեծ ծրագրի նպատակի և արդյունքի վրա. «Եթե չլիներ մեր օրինազանցությունը, մենք երբեք սերունդ չէինք ունենա, և երբեք չէինք գիտենա բարին և չարը, և մեր փրկագնման ուրախությունը, և հավերժական կյանքը, որն Աստված տալիս է բոլոր հնազանդներին» (Մովսես 5.11): Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը տեսավ «մեծերի և հզորների» հավաքված հանդիպելու Աստծո Որդուն և նրանց մեջ էր «մեր փառահեղ Մայր Եվան» (ՎևՈՒ 138.38–39):

Երբ մենք հասկանում ենք փրկության ծրագիրը, մենք նաև հասկանում ենք իր զավակներին տված Աստծո պատվիրանների նպատակն ու ազդեցությունը: Նա սովորեցնում է մեզ ճիշտ սկզբունքներ և հրավիրում մեզ կառավարել ինքներս մեզ: Մենք անում ենք այս այն ընտրություններով, որոնք մենք կատարում ենք մահկանացու կյանքում:

Մենք ապրում ենք այնպիսի օրերում, երբ կան բազմաթիվ քաղաքական, իրավական և սոցիալական ճնշումներ փոփոխությունների համար, որոնք խառնում են սեռը և տղամարդկանց և կանանց տարբերությունները նույնացնում: Մեր հավերժական հեռանկարը դնում է մեզ փոփոխությունների դեմ, որոնք փոխում են տղամարդկանց և կանանց այդ առանձին պարտականություններն ու արտոնությունները, որոնք կարևոր են երջանկության մեծ ծրագիրն իրականացնելու համար: Մենք դեմ չենք տղամարդկանց և կանանց բուժման բոլոր փոփոխություններին, քանի որ որոշ փոփոխություններ օրենքներում կամ սովորույթներում պարզապես հին անիրավություններն ուղղելու համար են, որոնք երբեք հիմնված չեն եղել հավերժական սկզբունքների վրա:

Ստեղծարար ուժի օգտագործումը և դրա սխալ կիրառումը

Մահկանացու կյանք ստեղծելու զորությունը ամենավեհ զորությունն է, որն Աստված տվել է իր զավակներին: Դրա օգտագործման վերաբերյալ լիազորություն էր տրվել առաջին պատվիրանում, սակայն մեկ այլ կարևոր պատվիրան տրվեց արգելելու դրա սխալ օգտագործումը: Մաքրաբարոյության օրենքի վրա մեր շեշտադրումը բացատրվում է Աստծո ծրագրի իրականացման համար մեր ծննդաստեղծ զորությունների նպատակը հասկանալով:

Մեր ծննդաստեղծ ուժերի արտահայտումը գոհացուցիչ է Աստծո համար, բայց Նա պատվիրել է, որ այն սահմանափակվի ամուսնության հարաբերության մեջ: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը սովորեցրել է, որ «օրինական ամուսնության ենթատեքստում սեռական հարաբերությունների ինտիմությունը ճիշտ է և աստվածայնորեն հաստատված: Ինքնին սեռական հրապույրի մեջ ոչ մի անսուրբ կամ այլասերող բան չկա, քանի որ այդ միջոցով տղամարդիկ և կանայք միանում են ստեղծման գործընթացի և սիրո արտահայտման մեջ» (*The Teachings of Spencer W. Kimball*, . . . p. 311):

Ամուսնության կապերից դուրս, ծննդաստեղծ ուժերի ամեն մի օգտագործում այս կամ այն չափով տղամարդու և կնոջ ամենաաստվածային հատկանիշի մեղսավոր այլասերում կամ խեղաթյուրում է: Մորմոնի Գիրքը սովորեցնում է, որ անմաքրաբարոյությունը «ամենապիղծն [է] բոլոր մեղքերից, բացի դա լինի անմեղ արյուն թափելը կամ Սուրբ Հոգին ուրանալը» (Ալմա 39.5): Մեր իսկ օրերում Եկեղեցու Առաջին Նախագահությունը հայտարարել է այս Եկեղեցու վարդապետությունը, «որ սեռական մեղքը՝ տղամարդկանց և կանանց անպատշաճ սեռական հարաբերությունը իր նողկալիությամբ զբաղեցնում է մարդասպանությունից հետո հաջորդ տեղը» (in James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. [Salt Lake City: Bookcraft, 1965–75], 6:176): Ոմանք, ովքեր չգիտեն փրկության ծրագիրը, վարվում են այլասեռ կենդանիների նման, բայց Վերջին Օրերի Սրբերը, հատկապես նրանք, ովքեր սրբազան ուխտերի ներքո են, չունեն այդպիսի հանդուրժողականություն: Մենք հանդիսավորությամբ պատասխանատու ենք Աստծուն՝ մեր մեջ դրած ստեղծող ուժերի կործանման կամ սխալ օգտագործման համար:

Վիժեցում

Կործանման ծայրահեղ արարքը կյանքը խլելն է: Այդ պատճառով վիժեցումն այդպիսի լուրջ մեղք է: Մեր վերաբերմունքը վիժեցման նկատմամբ հիմնված չէ բացահայտված գիտելիքի վրա, թե երբ է մահկանացու կյանքը սկսվում օրինական նպատակներով: Մեր գիտելիքով հաստատված է, որ համաձայն հավերժական ծրագրին, Աստծո բոլոր հոգևոր զավակները պետք է գան այս երկիր մի փառահեղ նպատակով և որ անձնական ինքնությունը սկսվել է բեղմնավորումից շատ առաջ և կշարունակվի գալիք բոլոր հավերժություններում: Մենք հիմնվում ենք Աստծո մարգարեների վրա, ովքեր ասել են մեզ, որ չնայած կարող են լինել «հազվադեպ» բացառություններ, «ընտրովի վիժեցման կիրառումը հիմնավորապես դեմ է Տիրոջ հրամանին. «Մի … սպանիր, ոչ էլ նման որևէ բան գործիր» (Վարդապետություն և Ուխտեր 59.6)

(*1991 Supplement to the 1989 General Handbook of Instructions*, p. 1):

Երջանկության մեծ ծրագրի մեր գիտելիքը տալիս է մեզ նաև առանձնահատուկ հեռանկար ամուսնության և երեխաներ ունենալու վերաբերյալ: Սրա հետ կապված մենք նույնպես հակադիր որոշ ընթացիկ ուժերի ենք հանդիպում սովորույթների, օրենքի և տնտեսության հետ գործ ունենալիս:

Ամուսնությունն անհրաժեշտ է Աստծո ծրագրում

Ամուսնությունը արհամարհվում է աճող թվով զույգերի կողմից և շատերը, ովքեր ամուսնանում են, ընտրում են հրաժարվել երեխաներից կամ խիստ սահմանափակում են նրանց թիվը: Վերջին տարիներին տնտեսական ուժեղ ճնշումները շատ ազգերի մոտ փոխել են ամեն մի ընտանքին մեկ հաց վաստակող ունենալու ավանդական ձևը: Փոքրիկ երեխաներ ունեցող աշխատող մայրերի թվի մեծացումը անխուսափելիորեն ահազանգում է մանուկների դաստիարակությանը հատկացվող ծնողական ժամանակի պարտավորության կրճատման մասին: Այս կրճատման հետևանքներն ակնհայտ են՝ վիժեցումների, ամուսնալուծությունների, երեխաներին անուշադրության մատնելու և պատանեկան հանցագործությունների աճող թվերից:

Մենք ուսուցանվում ենք, որ ամուսնությունն անհրաժեշտ է Աստծո ծրագրի իրականացման համար՝ ապահովելով հաստատված կարգ մահկանացու ծննդի համար և նախապատրաստելով ընտանիքի անդամներին հավերժական կյանքի համար: «Ամուսնությունը Աստծո կողմից է կարգված մարդու համար, - ասել է Տերը, - որպեսզի երկիրը կատարի իր ստեղծման նպատակը. և որպեսզի այն լրացնի մարդկանց քանակը, աշխարհի արարումից առաջ նրանց ստեղծման համաձայն» (ՎԿՈՒ 49.15–17):

Երջանկության մեծ ծրագիրը տալիս է նաև Վերջին Օրերի Սրբերին երեխաներ ծնելու և դաստիարակելու վերաբերյալ որոշակի մտածելակերպ:

Ամուսնության մեր տեսակետը հիմնավորված է բացահայտված ճշմարտությամբ միջոցով, ոչ թե աշխարհիկ հասարակագիտությամբ: Պողոս Առաքյալը սովորեցրել է. «Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տերումը» (Ա Կորնթացիս ԺԱ.11): Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը բացատրել է. «Առանց պատշաճ և հաջող ամուսնության, մարդ երբեք չի վեհացվի» (*Marriage and Divorce* [Salt Lake City: Deseret Book Co., 1976], p. 24):

Սովորույթի համաձայն սպասվում է, որ տղամարդիկ նախաձեռնություն հանդես բերեն, ձգտելով ամուսնության: Այդ պատճառով Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուղղել է իր մարգարեական ճնշումը տղամարդկանց վրա: Նա ասել է. «Ոչ մի տղամարդ, որն ամուսնանալու ընդունակ է, լիովին չի ապրում իր կրոնով, եթե մնում է չամուսնացած» (*Gospel Doctrine* [Salt Lake City: Deseret Book Co., 1939], p. 275): Մենք լսում ենք որոշ արժանավոր ՎՕՍ տղամարդկանց մասին, ովքեր երեսուն տարեկանում զբաղված են ունեցվածք կուտակելով և վայելելով ազատություն ընտանեկան պարտականություններից՝ ամուսնության վերաբերյալ առանց որևէ անհետաձգելիության զգացում ունենալու: Զգույշ եղեք, Եղբայրներ: Դուք թերանում եք սրբազան մի պարտականության մեջ:

Ծնեք և դաստիարակեք երեխաներ

Երջանկության մեծ ծրագրի գիտելիքը տալիս է նաև Վերջին Օրերի Սրբերին երեխաներ ծնելու և դաստիարակելու վերաբերյալ մտածելակերպ:

Ինչ որ ժամանակներում և վայրերում երեխաները համարվել են միայն աշխատողներ ընտանեկան տնտեսություններում կամ որպես օգնություն ապահովողներ իրենց ծնողների համար: Չնայած դրա դեմ հասարակության ճնշումների, որոշ մարդիկ մեր օրերում չունեն խղճի խայթ նման վերաբերմունքի հանդեպ, որը ստորադասում է Աստծո հոգևոր զավակի բարօրությունը ծնողների հանգստությանը կամ հարմարվետությանը:

Փրկիչը սովորեցրել է, որ մենք չպետք է գանձեր դիզենք երկրի վրա, այլ պետք է գանձեր դիզենք երկնքում (Մատթեոս Զ.19–21): Երջանկության մեծ ծրագրի վերջնական նպատակի լույսի ներքո, ես հավատում եմ, որ երկրի վրա և երկնքում մեծագույն գանձերը մեր երխաներն են և մեր սերունդը:

Նախագահ Քիմբալն ասել է. «Ծայրահեղ եսասիրության փաստ է՝ ամուսնացած զույգի համար, հրաժարվել երեխաներ ունենալուց, երբ նրանք ունակ են դա անել» (in Conference Report, Apr. 1979, p. 6; կամ *Ensign*, May 1979, p. 6): Երբ ամուսնացած զույգերը հետաձգում են երեխա ունենալը մինչև բավարարեն իրենց նյութական նպատակները, պարզապես ժամանակի այդ հատվածը հաստատում է, որ նրանք լրջորեն կրճատում են իրենց ներուժը մեր Երկնային Հոր բոլոր հոգևոր զավակների համար ծրագրին օժանդակելուն մասնակցելուց: Հավատարիմ Վերջին Օրերի Սրբերը չեն կարող թույլ տալ նայել երեխաներին, ինչպես աշխարհն է կոչում, որպես խանգարողների «ինքնակայացմանը»: Աստծո հետ մեր ուխտերը և կյանքի վերջնական նպատակը կապված են այդ փոքրիկների հետ, ովքեր մեր ժամանակի, մեր սիրո և մեր զգոհաբերությունների կարիքն ունեն:

Քանի՞ երեխա պետք է ունենա զույգը. Այնքան, որքանի համար կարող են հոգ տանել: Իհարկե, երեխաների համար հոգ տանելը նշանակում է ավելին, քան պարզապես նրանց կյանք տալը: Երեխաները պետք է սիրվեն, դաստիարակվեն, ուսուցանվեն, սնուցվեն, հագցվեն, տուն ունենան և լավ գործի դնեն իրենց կարողությունները, որպեսզի իրենք էլ լավ ծնողներ լինեն: Հավատալով Աստծո խոստումներին այն բանի վերաբերյալ, որ Նա կօրհնի նրանց, եթե իրենք պահեն Նրա պատվիրանները, շատ ՎՕՍ ծնողներ մեծ ընտանիքներ ունեն: Մյուսները ձգտում են, բայց չեն օրհնվում երեխաներով կամ այն թվով երեխաներով, որ իրենք են կամենում: Այնպիսի անձնական հարցում ինչպիսին սա է, մենք չպետք է դատենք միմյանց:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին տվել է այս ոգեշնչված խորհուրդը Վերջին Օրերի Սրբերին.

«Ես սիրում եմ մտածել հավասարման դրական կողմի մասին, կյանքի իմաստի և սրբության մասին, մեր հավերժական ճամփորդության այս վիճակի նպատակի մասին, Աստծո մեր Հոր մեծ ծրագրի համաձայն մահկանացու կյանքի փորձառությունների անհրաժեշտության մասին, այն ուրախության մասին, որ կարելի է գտնել միայն այն տանը, որտեղ երեխաներ կան, այն օրհնությունների մասին, որոնք գալիս են լավ ժառանգներից: Երբ ես մտածում եմ այս արժեքների մասին և տեսնում, որ դրանք ուսուցանվում և պահվում են, ապա ես կամենում եմ թողնել թվերի հարցը տղամարդուն, կնոջը և Տիրոջը» (“If I Were You, What Would I Do?” *Brigham Young University 1983–84 Fireside and Devotional Speeches* [Provo: University Publications, 1984], p. 11):

Ոչ մի օրհնություն չի մերժվի

Ոմանք, ովքեր լսում են այս ուղերձը, հավանաբար ասում են. «Բայց ի՞նչ է լինելու ինձ հետ»: Մենք գիտենք, որ բազմաթիվ արժանի և հրաշալի Վերջին Օրերի Սրբեր ներկայումս զուրկ են իդեալական հնարավորություններից և իրենց առաջընթացի համար հիմնական պահանջներից: Միայնակությունը, երեխա չունենալը, մահը և ամուսնալուծությունը խափանում են իդեալները և հետաձգում խոստացված օրհնությունների իրականացումը: Բացի այդ, որոշ կանայք, ովքեր ցանկանում են լիաժամկետ մայր լինել և տնտեսուհի տառացիորեն հարկադրված են մտնել լիաժամկետ աշխատուժի շարքերը: Բայց այս ձախողումները միայն ժամանակավոր բնույթ ունեն: Տերը խոստացել է, որ հավերժություններում ոչ մի օրհնություն չի մերժվի իր որդիներին և դուստրերին, ովքեր պահում են պատվիրանները, հավատարիմ են իրենց ուխտերին և ցանկանում են այն, ինչը ճիշտ է:

Մահկանացու կյանքի ամենամեծ զրկանքները կվերանան Հազարամյակի ժամանակ, որը մի ժամանակ է, երբ կիրականացվի այն ամենը, ինչն անավարտ է մեր Հոր արժանի զավակների համար երջանկության մեծ ծրագրում: Մենք գիտենք, որ դա ճիշտ կլինի տաճարային արարողությունների վերաբերյալ: Հավատում եմ, որ այն նաև ճիշտ կլինի ընտանեկան հարաբերությունների և փորձառությունների վերաբերյալ:

Արեք ամեն ինչ իմաստությամբ ու կարգուկանոնով

Աղոթում եմ, որ մենք թույլ չտանք, որ մահկանցու կյանքի մարտահրավերներն ու ժամանակավոր զրկանքները ստիպեն մեզ մոռանալ մեր ուխտերը և կորցնել մեր տեսադաշտից մեր հավերժական ճակատագիրը: Մենք, ովքեր գիտենք Իր զավակների համար Աստծո ծրագիրը, ովքեր ուխտել ենք մասնակցել, հստակ պատասխանատվություն ունենք: Մենք պետք է ցանկանանք անել այն, ինչը ճիշտ է, և մենք պետք է անենք այն ամենը, ինչ կարող ենք մահկանացու կյանքում մեր սեփական հանգամանքներում:

Բոլոր այս բաներում մենք պետք է հիշենք Թագավոր Բենյամինի նախազգուշացումը. «Տեսեք, որ բոլոր այս բաներն արվեն իմաստությամբ և կարգով. Քանզի հարկավոր չէ, որ մարդ վազի ավելի արագ, քան ինքն ուժ ունի» (Մոսիա 4.27): Ես մտածում եմ այդ ոգեշնչված ուսմունքի մասին, երբ որ անհամապատասխան եմ զգում, հուսալքված ու ճնշված:

Երբ մենք անենք այն ամենը, ինչ կարող ենք, մենք կարող ենք ապավինել Աստծո խոստացած ողորմածությանը: Մենք ունենք *Փրկիչ*, ով իր վրա է վերցրել ոչ միայն ուղղակի մեղքերը, բայց նաև «իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները … որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների» (Ալմա 7.11–12): Նա մեր Փրկիչն է և երբ մենք անենք այն ամենը, ինչ կարող ենք, Նա կառաջացնի տարբերություն՝ իր իսկ ձևով և իր իսկ ժամանակին: Այդ մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՊՈՌՆՈԳՐՈՖԻԱ

Դուք չեք կարող թույլ տալ որևէ աստիճանով ներգրավվել պոռնոգրաֆիայի մեջ, ինչպիսի ձև էլ այն ունենա:

—Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Պոռնոգրաֆիայի ազդեցությունները ժամադրության, ամուսնությունների և ընտանիքների վրա:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Մենք հորդորում ենք Պետրոսի հետ. «Հեռու մնացէք մարմնաւոր ցանկութիւններից, որ կռվում են հոգու դէմ» (Ա Պետրոս Բ.11): Ոչ մի միտքն ու հոգին աղտոտող անպատշաճ կեցվածք կամ պոռնոգրաֆիա կամ այլ շեղումներ» (in Conference Report, Apr. 1974, 8; կամ *Ensign,* May 1974, 7):

«Մենք հույսով ենք, որ մեր ծնողները և ղեկավարները չեն հանդուրժի պոռնոգրաֆիան: Այն իսկապես աղբ է, բայց այսօր ներկայացվում է որպես նորմալ և բավարարող սնունդ: Շատ գրողներ, թվում է, հրճվում են մթնոլորտը կեղտոտելով դրանով: Թվում է, այն չի կարող կանգնեցվել օրենսդրությամբ: Կապ կա պոռնոգրաֆիայի և գռեհիկ, սեռական մղումների և այլասերվածության մեջ: Մենք ապրում ենք մի մշակույթում, որը պաշտում է սեռական հաճույքը, հասարակության մեջ մերկ հայտնվելը, կանանց վաճառքը և նման խենթություններ: Որքան ցածր կարող են մարդիկ ընկնել: Մենք աղոթում ենք մեր Տիրոջը, որ կարողանանք չլինել աշխարհից: Տխուր է, որ կարգին մարդկանց նետում են մտավոր և հոգևոր աղտոտվածության մի տարածք: Մենք կոչ ենք անում բոլոր մեր ժողովրդին իրենց ողջ ուժի սահմաններում դեմ կենալ այս անբարոյական հեղափոխությանը:

Ծիծաղելի է մտածել, որ պոռնոգրաֆիան ազդեցություն չունի: Կա որոշակի կապ հանցագործության հետ: Սպանությունը, գողությունը, բռնաբարությունը, մարմնավաճառությունը և ծախու չարիքը սնվում են այս անբարոյականությամբ: Սեռական հանցագործությունների վիճակագրությունը, թվում է, արտացոլում է այդ կապը հանցագործության և պոռնոգրաֆիայի միջև:

Սա բացարձակապես չփրկվող սոցիալական արժեք է: Մենք հորդորում ենք մեր ընտանիքներին պաշտպանել իրենց երեխաներին ամեն հնարավոր միջոցներով: Մենք ապրում ենք ամենաթողտվական աշխարհում, բայց մենք պետք է հստակեցնենք, որ մենք չենք դառնում այդ ամենաթողտվական աշխարհի՝ այդ այլասերված աշխարհի մասը: Մենք ցնցվում ենք, թե որքան հեռու են այս աշխարհի շատ մարդիկ գնում իրենց ազատությունը պաշտպանելու համար: Մենք վախենում ենք, որ անբարոյականության հանդեպ ամենաթողտվության միտումները կարող են կործանել մեր սերնդի բարոյական արժեքները: …

Համասեռամոլության ամեն մի ձև մեղք է: Պոռնոգրաֆիան այդ օրինազանցության մոտեցումներից մեկն է: Չկա ճիշտ ու սխալ, այն ուղղակի սխալ է (in Conference Report, Oct. 1974, 7–8; կամ *Ensign,* Nov. 1974, 7–8):

«Պոռնոգրաֆիան այլասերում է սեռական կյանքը և մարդկությունը: Սեռական կյանքը մարդկային փոխհարաբերությունների չափազանց նուրբ մասն է: Երբ դուք վիրավորում եք այն և այլասերում, դուք դարձնում եք այն անասնական ակտ և դա վիրավորանք է մեր մարդկությանը ընդհանրապես:

Երբ այն տարածվում է, այն ունենում է համատարած ազդեցություն մեր բնակչության վրա: Անառակությունը քաղաքակրթությանը դեմ է: Այն հարձակվում է մեր հիմնական հավատալիքների վրա: Այն հարձակում է ընտանեկան էթիկայի վրա (Larry Parrish, U.S. Assistant Attorney, in "War on Pornography," p. 76.):

«Պոռնոգրաֆիայի պատճառով գործված մեղքերը, դժբախտաբար, առաջացնում են այլ լուրջ օրինազանցություններ՝ ներառյալ վիժեցումը» (in Conference Report, Oct. 1976, 6; կամ *Ensign,* Nov. 1976, 6):

«Մենք պետք է անընդհատ ամրացնենք մեր տները և ընտանիքները և պետք է պաշտպանենք նրանց այնպիսի չարիքների հարձակումներից, ինչպիսիք են ամուսնալուծությունը, քանդված ընտանիքները, բռնությունը և անարգանքը, հատկապես կանանց և երեխաների հանդեպ: Մենք պետք է անընդհատ աչալուրջ լինենք անբարոյականության, պոռնոգրաֆիայի և սեռական ամենաթողտվության դեմ, որոնք կործանում են ընտանիքի անդամների՝ երիտասարդների և մեծահասակների մաքրությունը» (in Conference Report, Apr. 1979, 5; կամ *Ensign,* May 1979, 5):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Առաքինությունը և սրբությունը՝ աստվածության հատկանիշները, անբաժան են: Քահանայություն կրողը պետք է ակտիվորեն ձգտի նրան, ինչն առաքինի է և գեղեցիկ, և ոչ թե նրան, ինչը ստորացնող է կամ կեղտոտ: Առաքինությունը կզարդարի նրա մտքերը անդադար (տես ՎԱՌՒ 121.45): Ինչպե՞ս կարող է մարդ տարվել պոռնոգրաֆիայի,

անառակության կամ գռեհիկության չարիքներով և համարել իրեն լիովին առաքինի» (in Conference Report, Oct. 1986, 60; կամ *Ensign,* Nov. 1986, 46):

Նախագահ Հարոլդ Բ. Լի

«Մեր շրջապատում կան նենգ ուժեր, որոնք անընդհատ փորձում են թակել մեր դռները և թակարդներ դնել մեր երիտասարդ տղամարդկանց և կանանց համար, հատկապես նրանց համար, ովքեր անզգույշ են և անփորձ աշխարհիկ ուղիներում: Ես խոսում եմ ալկոհոլի, թղթախաղի, մարմնավաճառության, պոռնոգրաֆիայի դեմ ճակատամարտի մասին և քրիստոնյա մարդկանց օգնելու մեր ջանքերի մասին, ովքեր կամենում են ունենալ հանգստյան օրը սուրբ պահելուն նվիրված մեկ օր» (in Conference Report, Apr. 1970, 54):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Հավատարիմ եղեք ձեր ամուսնական ուխտերին մտքով, խոսքով և գործով: Պոռնոգրաֆիան, սիրախաղը և անօգուտ ֆանտազիաները քայքայում են մարդու բնավորությունը և հարվածում երջանիկ ամուսնության հիմքերին: Այդ պատճառով ամուսնության մեջ միասնությունն ու վստահությունը կործանվում է: Նա, ով չի վերահսկում իր մտքերը և, այդպիսով, շնություն գործում իր սրտում, եթե չի ապաշխարում, չի ունենա Հոգին, այլ կուրանա հավատքը և կվախենա» (տես ՎԿՈՒ 42.23, 63.16) (in Conference Report, Oct. 1994, 67; կամ *Ensign,* Nov. 1994, 50):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ինչպես մեզ հիշեցվել է, սա մեծ չարիքի մի ժամանակ է աշխարհում: Ոչ ոքի պետք չէ հիշեցնել այդ մասին: Մենք անընդհատ ենթակա ենք պոռնոգրաֆիայի գաղջանքին և կեղտին, անառակ և չար վարքին, որը լիովին անհարիր է որևէ մեկին, ով Աստծո քահանայությունն է կրում» (in Conference Report, Apr. 1999, 68; կամ *Ensign,* May 1999, 51):

Առկա է անընդհատ աճող պոռնոգրաֆիայի համաճարակ, որը պտտվում է մեր շուրջը… Տղամարդը, որը ճաշակել է արգելված պտղից, իսկ հետո հայտնաբերել, որ կործանել է իր ամուսնությունը, կորցրել ինքնահարգանքը և կոտրել իր կնոջ սիրտը, սկսում է գիտակցել, որ իր ընտրած վտանգավոր ուղին սկիզբ է առել կարդալով կամ նայելով պոռնոգրաֆիկ նյութեր:…

Սեռական այլասերվածության, բռնության և վայրագության պատկերները դառնում են ավելի մատչելի նրանց, ովքեր ենթարկվում են դրանց հրապույրներին: Երբ սա տեղի է ունենում, կրոնական գործերը դառնում են ավելի քիչ գրավիչ, որովհետև այդ երկուսը չեն խառնվում, ինչպես չեն խառնվում նավթն ու ջուրը (in Conference Report, Oct. 1983, 66–67; կամ *Ensign,* Nov. 1983, 45):

«Դուք չպիտի լինեք նրա զոհերը: Դուք կարող եք վեր բարձրանալ նրա հրապույրներից և աղերսանքներից: Ազատվեք գրգռող զվարճություններից, պոռնոգրաֆիայից, որը տանում է չար ցանկությունների և դատապարտելի գործողությունների: Կանայք, նայեք ձեր ամուսիններին որպես ձեր թանկագին զուգընկերներ և ապրեք արժանի այդ ընկերակցությանը» (in Conference Report, Apr. 1991, 98; կամ *Ensign,* May 1991, 74):

«Դուք չեք կարող թույլ տալ որևէ աստիճանով ներգրավվել պոռնոգրաֆիայի մեջ, ինչպիսի ձև էլ այն ունենա: Դուք պարզապես չեք կարող թույլ տալ մասնակից դառնալ անբարոյական գործողությունների կամ իջեցնել սեռական զսպվածության ձեր չափանիշները: Զգացմունքները, որոնք եռում են ձեր մեջ, որոնք դարձնում են տղաներին գրավիչ աղջիկների համար և աղջիկներին գրավիչ տղաների համար, աստվածային ծրագրի մասն են կազմում: Բայց դրանք պետք է զսպվեն, ենթարկվեն և պահվեն վերահսկողության տակ, այլապես դրանք կկործանեն ձեզ և կդարձնեն անարժան այն մեծ օրհնություններից շատերին, որոնք Տերը պահել է ձեզ համար (in Conference Report, Apr. 1992, 99; կամ *Ensign,* May 1992, 71):

«Թույլ տվեք ինձ կարդալ ձեզ մի նամակից, որ ես ստացել եմ մի մարդուց, որն ամաչել է ստորագրել իր անունը: Նա գրում է.

«Ես 35 տարեկան եմ, արական սեռի և ավելի քան տասը տարի Եկեղեցու անդամ եմ: Իմ հասուն կյանքի մեծ մասը ես հակում եմ ունեցել պոռնոգրաֆիայի հանդեպ: Ես ամաչում եմ ընդունել այդ: Իմ հակումը այնքան իրական է, ինչպես հարբեցողի կամ թմրամոլի հակումը:

Ես առաջին անգամ ծանոթացա այս նյութի հետ, երբ երեխա էի: Ինձ անհանգստացնում էր արական սեռի ավագ զարմիկս և պոռնոգրաֆիան գրավեց իմ հետաքրքրությունը: Ես համոզված եմ, որ վաղ հասակում սեռական այս անպաշտպանվածությունը և պոռնոգրաֆիան այսօրվա իմ հակվածության պատճառն է: Կարծում եմ, ծաղր է, որ նրանք, ովքեր աջակցում են պոռնոգրաֆիայի բիզնեսին, ասում են, որ այն ազատության արտահայտման հարց է: Ես ազատություն չունեմ: Ես կորցրել եմ իմ ազատ կամքը, որովհետև ես չեմ կարողանում հաղթահարել այս: Սա ինձ համար թակարդ է և ես, կարծես, չեմ կարողանում դրանից դուրս գալ: Խնդրում եմ, խնդրում եմ, խնդրում եմ, աղերսեք Եկեղեցու եղբայրներին, որ ոչ միայն խուսափեն, այլ արմատախիլ անեն պոռնոգրաֆիկ նյութերի աղբյուրները իրենց կյանքից…

Վերջապես, Նախագահ Հինքլի, խնդրում եմ աղոթեք ինձ համար և մյուսների համար Եկեղեցում, ովքեր գուցե ինձ նման իրավիճակում են, որպեսզի քաջություն և ուժ ունենան այս սարսափելի դժբախտությունը հաղթահարելու համար»:

Եղբայրներ, ոչ երջանկություն, ոչ էլ խաղաղություն ձեռք կբերվի այս թուլությանը հանձնվելուց, այս բաներին անձնատուր լինելուց, որոնք այլասերում և կործանում են: Երբ այսպիսի նյութ է հայտնվում հեռուստաէկրանին, անջատեք հեռուստացույցը: Դադարեք վատնել ձեր ժամանակը հեռուստացույցի առջև: Խուսափեք սեռական ցանկություններ խթանող տեսահոլովակներից, ինչպես կանեիք գարշելի մի հիվանդությունից: Դրանք նույն կարգում են: Հեռու մնացեք պոռնոգրաֆիկ ամսագրերից և այլ կործանարար գրականությունից: Շատ լավ բաներ կան նայելու, վայելելու չափազանց շատ հրաշալի ընթերցանություն կա, փոխարենը ժամանակ վատնելու և կործանելու բնավորությունը և կամքի ուժը հպատակվելով այդպիսի կործանարար հիմարությանը:

«*Ուժեղ եղեք՝ պաշտպանելով ճիշտը*: Մենք ապրում ենք փոխզիջման և լուռ համաձայնության դարաշրջանում: Այն իրավիճակներում, որոնց մենք ամեն օր հանդիպում ենք, մենք գիտենք, թե ինչն է ճիշտը, բայց մեր հասակակիցների և նրանց հրապուրիչ ձայների ճնշման տակ, ովքեր համոզում են մեզ, մենք անձնատուր ենք լինում: Մենք փոխզիջման ենք գնում: Մենք լուռ համաձայնվում ենք: Մենք տեղի ենք տալիս և ամաչում մեզանից: Որպես քահանայության տղամարդիկ, մենք պետք է մշակենք ուժ՝ հետևելու մեր համոզմունքներին» (in Conference Report, Oct. 1992, 72–73; կամ *Ensign*, Nov. 1992, 51–52):

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

«Ինչ որ դուք կարդում եք, լսում կամ դիտում, տպավորություն է թողնում ձեզ վրա:

Պոռնոգրաֆիան հատկապես վտանգավոր է և հակում առաջացնող: Հետաքրքրությունից ելնելով պոռնոգրաֆիայի օգտագործումը կարող է դառնալ վերահսկող սովորույթ, տանելով դեպի ավելի գռեհիկ նյութերի և դեպի սեռական օրինազանցության:

Մի վախեցեք ընդհատել կինոդիտումը, անջատել հեռուստացույցը կամ փոխել ռադիո կայանը, եթե այն, ինչ ներկայացվում է, չի բավարարում ձեր Երկնային Հոր չափանիշներին: Կարճ ասած, եթե դուք կասկածում եք, թե արդյոք որևէ կինոնկար, գիրք կամ զվարճալիք պատշաճ է, մի դիտեք այն, մի կարդացեք այն, մի մասնակցեք դրան» (in Conference Report, Oct. 1990, 60; կամ *Ensign*, Nov. 1990, 46):

Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ

«Ինտերնետով տարվելը կարող է մեզ քաշել մի բանի մեջ, որը, եթե շարունակենք, կարող է կործանել մեր ամուսնությունները, մեր տները և նույնիսկ մեր կյանքը» (in Conference Report, Apr. 1999, 20; կամ *Ensign*, May 1999, 17):

Երեց Էզրա Թաֆթ Բենսոն

«Տերը գիտեր, որ վերջին օրերում սատանան կփորձի կործանել ընտանեկան միավորը: Նա գիտեր, որ դատարանի որոշմամբ պոռնոգրաֆիան կթույլատրվի ծաղկել» (in Conference Report, Oct. 1970, 23):

Երեց Թոմաս Ս. Մոնսոն

«Պոռնոգրաֆիայի բզեզը կատարում է իր մահացու գործը՝ տակից կտրելով մեր կամքը, կործանելով մեր դիմադրողականությունը և շնչահեղձ անելով դեպի վեր գնացող այն ներուժը, որը մեզանից յուրաքանչյուրի մեջ է (in Conference Report, Oct. 1979, 96; կամ *Ensign*, Nov. 1979, 66):

Երեց Մարվին Ջ. Աշթոն

Բռնության կամ պոռնոգրաֆիայի ամենօրյա ազդեցությունը բթացնում է զգայունությունը և հետագա տպավորությունները պետք է լինեն ավելի գռեհիկ և ավելի ծայրահեղ: Շուտով մարդը դառնում է անզգայացած և ի վիճակի չէ արձագանքել զգայուն, հոգատար, պատասխանատու ձևով, հատկապես նրանց, ովքեր իր սեփական տանն են և ընտանիքում: Լավ մարդիկ կարող են աղտոտվել այս նյութերով և այն կարող է ունենալ սոսկալի, կործանարար հետևանքներ (in Conference Report, Oct. 1977, 108; կամ *Ensign*, Nov. 1977, 71):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Մի փոքր պոռնոգրաֆիան կարող է բերել ոչ միայն երեխայի և կնոջ հանդեպ անարգանքի, այլ դանդաղ դուրս քաշել արժանապատվության ծուծքը» (in Conference Report, Oct. 1992, 91; կամ *Ensign*, Nov. 1992, 67):

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

Մենք չպետք է թեթևամտորեն մոտենանք վերջերս մահապատժի ենթարկված մարդասպանի խոստովանությանը՝ իր կյանքում լրատվական միջոցներով ներթափանցած պոռնոգրաֆիայի և բռնության ազդեցության վերաբերյալ: Պողոս Առաքյալը նախազգուշացրել է , որ մարդիկ կարող են դառնալ «անզգայացած… իրանց անձերը [մատնելով] անառակութեան ամեն պղծութեան գործերի մէջ ագահութիւնով» (Եփեսացիս Դ.19): Առակացում մենք կարդում ենք. «Ինչպէս որ [մարդ] իր սրտումը [մտածում] է … այնպէս է» (ԻԳ.7): Բռնությանն ու անբարոյականությանը ենթարկված միտքը չի կարող փախչել այդպիսի ազդեցության բացասական հետևանքից» (in Conference Report, Apr. 1989, 99; կամ *Ensign*, May 1989, 79):

Կինոնկարներ և տեսաֆիլմեր

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Մենք խորհուրդ ենք տալիս ձեզ, երիտասարդ տղամարդիկ, չաղտոտել ձեր միտքը այդպիսի այլասերող նյութով, քանի որ միտքը այդպիսի կեղտի միջով անցնելուց հետո այլևս երբեք նույնը չէ: Երբեք մի դիտեք R կարգի կինոնկարներ կամ գռեհիկ տեսաֆիլմեր կամ մասնակցեք որևէ զվարճության, որն անբարոյական է, հրավիրող կամ պոռնոգրաֆիկ» (in Conference Report, Apr. 1986, 58; կամ *Ensign,* May 1986, 45):

Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն

«Փրկիչը ձեզ վրա է հույս դնում, որ կխուսափեք անբարոյական աղբից, որը շրջապատում է ձեզ լրատվական միջոցներում:

Սատանան ներքին մեծ ճանապարհներ է հարթել որոշ Վերջին Օրերի Սրբերի կյանքում լրատվական միջոցների չարիքի միջոցով: Ես վստահ եմ, որ ձեզանից մեծ մասը ընդգրկված չեն լուրջ սեռական մեղքի մեջ, բայց շատերն են դնում իրենց մի ուղու վրա, որը կարող է տանել այնտեղ: Մի եպիսկոպոս պատմեց, որ նկատել էր, թե ինչպես էր երիտասարդ քահանայություն կրողների հոգևոր մակարդակը վայրէջք կատարում: Նրանց հետ իր անձնական հարցազրույցների միջոցով նա հայտնաբերել է, որ նրանցից շատերը R կարգի կինոֆիլմեր էին դիտում: Երբ նա հարցրեց նրանց, թե ուր էին գնում նայելու այդ աղբը, նրանք ասել էին. «Մենք չենք գնում որևէ տեղ: Մենք նայում ենք դրանք մեր տանը: Մենք կաբելային հեռուստատեսություն ունենք և երբ մեր ծնողները տանը չեն, մենք նայում ենք այն, ինչ ուզում ենք»:

Հայրեր, գուցե կամենաք վերանայել անսահմանափակ կաբելային կամ անվերահսկելի հեռուստացույցներ ունենալու հարցը ձեր տանը և հատկապես ձեր երեխաների ննջարաններում:

Շատ անխելամիտ է ենթադրել, որ անառակություն, մերկություն, սեռական հարաբերություն և բռնություն ցուցադրելը բացասական ազդեցություն չունի մեզ վրա: Մենք չենք կարող թավալվել ցեխի մեջ առանց կեղտոտվելու:

Մտահոգիչ է, որ մեր որոշ երիտասարդ Վերջին Օրերի Սրբեր, ինչպես նաև նրանց ծնողները, կանոնավորապես դիտում են R կարգի և այլ անպատշաճ կինոֆիլմեր և տեսաֆիլմեր: Դա ևս մեկ պատճառ է, թե ինչու է «դևը ծիծաղում, և նրա հրեշատակները հրճվում» (3 Նեփի 9.2):

Միայն մի քանի ամիս առաջ Տիրոջ մարգարե՝ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին կիսվեց երիտասարդների և մեզ բոլորիս հետ՝ այս հստակ և անսխալ խորհրդով.

«Եղեք մաքուր: Ես չեմ կարողանում բավականաչափ շեշտել դա: Եղեք մաքուր: Դա չափազանց կարևոր է և դուք ձեր տարիքի համար ողջ ժամանակ չափազանց մեծ գայթակղության մեջ եք: Այն ձեզ վրա է լցվում հեռուստացույցից: Այն ձեզ վրա է լցվում գրքերից, ամսագրերից ու տեսաֆիլմերից: Դուք կարիք չունեք վարձելու դրանք: Մի արեք դա: Ուղղակի մի արեք դա: Մի նայեք դրանք: Եթե ինչ որ մեկը առաջարկում է, որ դուք նստեք ողջ գիշեր ու դիտեք այդ զզվելի նյութը, ասացեք.«Դա ինձ համար չէ»: Հեռու մնացեք դրանից» (Denver, Colorado, youth meeting, 14 Apr. 1996):

«Տերը և Նրա ապրող մարգարեները ձեզ վրա են հույս դրել, որ դուք խուսափեք աղբից, որ շրջապատում է ձեզ լրատվական միջոցների կողմից: Եթե որևէ մեկը ընտրում է անտեսել կամ հանդգնորեն դեմ գնալ ապրող մարգարեի խորհրդին, նա շատ խախուտ հողի վրա է կանգնած» (in Conference Report, Oct. 1996, 55; կամ *Ensign,* Nov. 1996, 40):

Երեց Հ. Բըրք Փիթերսոն

«Կրկին եմ ասում, թողեք այն: Անջատեք, հեռու գնացեք դրանից, այրեք այն, ջնջեք կամ ոչնչացրեք այն: Ես գիտեմ, որ դժվար խորհուրդ ենք տալիս, երբ ասում ենք, որ R կարգի և PG-13 կարգի շատ կինոֆիլմեր արտադրվում են սատանայական ազդեցությամբ: Մեր չափանիշները չպետք է թելադրվեն կարգային համակարգով: Ես կրկնում եմ, որ այն պատճառով, ինչ նրանք *իրականում* ներկայացնում են, այդ տեսակի կինոֆիլմերը, երաժշտությունը և տեսաժապավենները ծառայում են ողջ խավարի հեղինակի նպատակներին» (in Conference Conference Report, Oct. 1993, 60; կամ *Ensign,* Nov. 1993, 43):

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Հպարտությունը ավելի շուտ «իմ կամքը», քան «քո կամքը» մոտեցումն է կյանքին:

—Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

ՄԱՔՐԵԼ ԱՆՈԹԻ ՆԵՐՍԸ

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

Եկեղեցու Նախագահ

Conference Report, ապր. 1986, 3, 5–6, կամ Ensign, մայիս 1986, 4, 6–7

Պահապան, ի՞նչ կա գիշերիցը: Մենք պետք է պատասխանենք, ասելով, որ ամեն ինչ լավ չէ Սիոնում: Ինչպես Մորոնին խորհուրդ տվեց, մենք պետք է մաքրենք անոթի ներսը (տես Ալմա 60.23), սկսելով առաջինը մեզանից, հետո մեր ընտանիքներից և ի վերջո Եկեղեցուց:

Փոխված մարդիկ

Աստծո մի մարգարե նշել է. «Դուք պետք է մաքրեք վատը՝ լավի աճելու հետ մեկտեղ … մինչև լավը հաղթի վատին» (Հակոբ 5.66): Սիոնի ժողովուրդ է անհրաժեշտ՝ Սիոնի հասարակությունը ստեղծելու համար և մենք պետք է նախապատրաստվենք դրան…

Հպարտություն

Կարելի՞ է այժմ քննարկել մի թեմա, որը խիստ մտահոգիչ է և արժե ավելի խորը զարգացման, քան մենք ժամանակ ունենք: Դա հպարտության թեման է:

Սուրբ գրություններում չկա արդար հպարտության գաղափար: Այն միշտ համարվել է մեղք: Մենք չենք խոսում ինքնագնահատման օգտակար տեսակետի մասին, որը լավագույնս հաստատվում է Աստծո հետ սերտ հարաբերությունից: Մենք խոսում ենք հպարտության մասին որպես բազմակողմանի մեղք, ինչպես այն նկարագրվել է մեկի կողմից:

Մորմոնը գրում է, որ «այս ազգի կամ Նեփիացիների հպարտությունը նրանց հասցնում է կործանման» (Մորոնի 8.27): Տերն ասում է Վարդապետություն և Ուխտերում. «Զգուշացեք հպարտությունից չլինի թե դուք դառնաք ինչպես հին Նեփիացիները» (ՎԱՈՒ 38.39):

«Խոնարհեցրեք ձեզ Աստծո առաջ»

Հպարտությունը, հիմնականում, ավելի շուտ «իմ կամքը», քան «քո կամքը» մոտեցումն է կյանքին: Հպարտության հակադիրը խոնարհությունն է, հեզությունը, հլու (տես Ալմա 13.28) կամ ուսանելի լինելը:

Վերականգնված Եկեղեցու վաղ օրերին Տերը նախազգուշացրեց երկու նշանավոր անդամների հպարտության վերաբերյալ: Օլիվեր Քաուդերիին Նա ասաց. «Զգուշացիր հպարտությունից, որ չլինի թե ընկնես գայթակղության մեջ» (ՎԱՈՒ 23.1): Էմմա Սմիթին Նա ասաց. «Շարունակիր հեզության ոգով և զգուշացիր հպարտությունից» (ՎԱՈՒ 25.14):

«Քո սրտում հպարտ մի եղիր», - նախազգուշացնում է մեզ Տերը (ՎԱՈՒ 42.40): «Խոնարհեցրեք ձեզ՝ Աստծո առաջ», - ասում է Մորմոնի Գիրքը (Մոսիա 4.10):

Երբ երկիրը մաքրվի, այրվելով վերջին օրերին, հպարտները պիտի լինեն հարդի պես (տես 3 Նեփի 25.1, ՎԱՈՒ 29.9, 64.24):

Լայն և ընդարձակ շենքը, որը Լեքին տեսավ, աշխարհի հպարտությունն էր, որտեղ հավաքված էր երկրի բազմությունը (տես 1Նեփի 11.35–36): Նրանք, ովքեր քայլեցին նեղ և անձուկ արահետով և բռնվեցին Աստծո խոսքից և ճաշակեցին Աստծո սիրուց, ծաղրվեցին և արհամարհվեցին շենքում եղողների կողմից (տես 1 Նեփի 8.20, 27, 33, 11.25):

«Քրիստոսի խոնարհ հետևորդները» քիչ են (2 Նեփի 28.14):

Ոչ թե իմ կամքը բայց Քոնը

Հպարտությունը չի նայում վեր դեպի Աստված և հոգում նրա համար, ինչը ճիշտ է: Այն նայում է իր կողքերը՝ դեպի մարդիկ, և վիճում, թե ով է ճիշտ: Հպարտությունը դրսևորվում է հակառակության ոգով:

Միթե՞ հպարտությունը չէր, որ դևին դև դարձրեց: Քրիստոսը կամենում էր ծառայել: Դևը կամենում էր կառավարել: Քրիստոսը կամենում էր բերել մարդկանց այնտեղ, որտեղ Նա էր: Դևն ուզում էր լինել մարդկանցից վեր:

Քրիստոսը հեռացրեց եսը որպես ուժ Իր կատարյալ կյանքում: Ոչ թե *իմ* կամքը, այլ *Քոնը* լինի կատարված:

Հպարտությունը բնորոշվում է ավելի շուտ «Ի՞նչ եմ կամենում կյանքից», քան «Ի՞նչ է կամենում Աստված, որ ես անեմ կյաքիս հետ»: Դա եսի կամքն է՝ հակադրված Աստծո կամքին: Դա Աստծո վախից վեր՝ վախն է մարդուց:

Համեստությունը արձագանքում է Աստծո կամքին՝ Նրա դատաստանների վախին և մեր շրջապատի մարդկանց

կարիքներին: Հպարտների համար աշխարհի ծափահարությունները հնչում են իրենց ականջներում, խոնարհների համար երկնքի ծափահարությունները ջերմացնում են նրանց սրտերը:

Ինչ որ մեկն ասել է. «Հպարտությունը հաճույք չի ստանում ինչ որ բան ունենալուց, միայն ավելի շատ ունենալուց, քան կողքի մարդը»: Մի եղբոր համար Տերն ասել է. «Ես՝ Տերս, չեմ հավանում նրան, քանզի նա գերազանցություն է փնտրում և բավականաչափ հեզ չէ իմ առաջ» (ՎԱՈՒ 58.41):

«Ուայլներն ու հարուստները»

Մորմոնի Գրքում երկու խմբերը, որոնք կարծես ամենամեծ դժվարությունն ունեն հպարտության հետ կապված, «ուայլներն են և հարուստները» (2 Նեփի 28.15): Բայց Աստծո խոսքը կարող է վար փլել հպարտությունը (տես Ալմա 4.19):

Հպարտության հետ կան շատ անեծքներ: Համեստության հետ գալիս են շատ օրհնություններ: Օրինակ. «Եղիր խոնարհ. և Տերը՝ քո Աստվածը, ձեռքդ բռնած կառաջնորդի քեզ և կպատասխանի քո աղոթքներին» (ՎԱՈՒ 112.10): Խոնարհները «[կ]զորացվեն և [կ]օրհնվեն բարձրից և գիտելիք [կ]ստանան» (ՎԱՈՒ 1.28): Տերը «ողորմած է նրանց հանդեպ, ովքեր խոնարհ սրտով խոստովանում են իրենց մեղքերը» (ՎԱՈՒ 61.2): Համեստությունը կարող է հեռու տանել Աստծո բարկությունը (տես Հելաման 11.11):

Պետք է մաքրել ներսի անոթը

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, երբ մենք մաքրում ենք ներսի անոթը, փոփոխություններ են տեղի ունենում մեր իսկ անձնական կյանքում, մեր ընտանիքներում և Եկեղեցում: Հպարտները չեն փոխվում բարելավվելու համար, այլ պաշտպանում են իրենց դիրքը, իրենց արդարացնելով : Ապաշխարություն նշանակում է փոփոխություն և պահանջվում է խոնարհ մարդ, որը կարող է փոխվել: Բայց մենք կարող ենք դա անել:

Մենք մի քանի հրաշալի քայլեր ենք կատարել անցյալում: Մենք կլայնացնենք մեր քայլն ապագայում: Այդ անելու համար, մենք պետք է մաքրենք առաջինը մեր ներսի անոթը, արթնանալով և վեր կենալով, լինելով բարոյապես մաքուր, օգտագործելով Մորմոնի Գիրքը մի ձևով, որպեսզի Աստված հեռացնի դատապարտությունը և, ի վերջո, հաղթահարելով հպարտությունը, մեզ խոնարհեցնելով:

Մենք կարող ենք դա անել: Ես գիտեմ, մենք կարող ենք: Իմ աղոթքն է մեր բոլորիս համար, որ մենք անենք այդպես: Աստված օրհնի ձեզ այն բոլոր բարու համար որ դուք արել եք և անելու եք: Ես թողնում եմ իմ օրհնությունները ձեր բոլորիդ և անում այդ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԶԳՈՒՇԱՑԵՔ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

Եկեղեցու Նախագահ

Conference Report, ապր. 1989, 3–7, կամ Ensign, մայիս 1989, 4–7

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ուրախ եմ ձեզ հետ լինելու ևս մեկ փառահեղ գերագույն համաժողովում: Որքան երախտապարտ եմ աշխարհով մեկ Եկեղեցու նվիրված անդամների սիրո, աղոթքների և ծառայության համար:

Ցանկանում եմ գովաբանել ձեզ՝ հավատարիմ Սրբեր, որ ձգտում եք հեղեղել երկրագունդը և ձեր կյանքերը Մորմոնի Գրքով: Մենք պետք է առաջ շարժվենք՝ հավերժացնելով Մորմոնի Գիրքը, ոչ միայն ավելի շատ օրինակներ տարածելով, այլ նաև նրա սքանչելի պատգամները մեր մեջ և երկրագնդով մեկ համարձակորեն տարածելով:

Այս սրբազան հատորը գրվել է մեզ համար, մեր օրերի համար: Նրա սուրբ գրվածքները պետք է վերագրվեն մեզ (տես 1 Նեփի 19.23):

Հպարտության մեղքը

Վարդապետություն և Ուխտերն ասում են, որ Մորմոնի Գիրքը «մի ընկած ժողովրդի հիշատակարան է» (ՎԱՈՒ 20.9): Ինչո՞ւ նրանք ընկան: Այս հարցի պատասխանը Մորմոնի Գրքի գլխավոր պատգամներից մեկն է: Գրքի եզրափակիչ գլուխներից մեկում Մորմոնը տալիս է այդ հարցի պատասխանը՝ հետևյալ խոսքերով. «Ահա, այս ազգի կամ Նեփիացիների հպարտությունը նրանց հասցնում է կործանման» (Մորոնի 8.27): Իսկ հետո, որպեսզի այդ «ընկած ժողովրդից» մեզ հասած Մորմոնի Գրքի կարևոր պատգամն աչքաթող չանենք, Տերը Վարդապետություն և Ուխտերում նախազգուշացնում է մեզ. «Զգուշացեք հպարտությունից, չլինի թե դուք դառնաք ինչպես հին Նեփիացիները» (ՎԱՈՒ 38.39):

Ձեր հավատքով և աղոթքներով լուրջ հետաքրքրված լինելն ինձանից պահանջում է լուսաբանել Մորմոնի Գրքի պատգամը՝ հպարտության մեղքը: Արդեն բավական ժամանակ է, որ այս պատգամը ծանրացած է իմ հոգու վրա: Ես գիտեմ, որ այս պատգամը տարածելը այժմ, Տիրոջ ցանկությունն է:

«Զգուշացեք հպարտությունից»

Նախաերկրային խորհրդի ժամանակ հպարտությունն էր, որ վայր գցեց Լյուցիֆերին՝ «արշալույսի որդուն» (2 Նեփի

24.12–15, տես նաև ՎԱՈՒ 76.25–27, Մովսես 4.3): Այս աշխարհի վերջում, երբ Աստված կմաքրի երկրագունդը կրակով, հպարտները կայրվեն հարդի պես և հեզերը կժառանգեն երկիրը (տես 3 Նեփի 12.5, 25.1, ՎԱՈՒ 29.9, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.37, Մաղաքիա 4.1):

Վարդապետություն և Ուխտերում Տերը երեք անգամ օգտագործում է «զգուշացիր հպարտությունից» արտահայտությունը, ներառյալ զգուշացումը՝ Եկեղեցու երկրորդ երեց Օլիվեր Քաուդերիին և Էմմա Սմիթին՝ Մարգարեի կնոջը (ՎԱՈՒ 23.1, տես նաև ՎԱՈՒ 25.14, 38.39):

Հպարտության Աստծո սահմանումը

Հպարտությունը չափազանց սխալ հասկացված մեղք է և շատերը մեղանչում են անգիտության մեջ (տես Մոսիա 3.11, 3 Նեփի 6.18): Սուրբ գրքերում չկա այնպիսի հասկացություն, ինչպես՝ արդար հպարտություն. այն մեղք է համարվում բոլոր պարագաներում: Հետևաբար, անկախ նրանից, թե այն ինչ նշանակությամբ է օգտագործվում աշխարհում, մենք պետք է ըմբռնենք, թե ինչ իմաստով է Աստված օգտագործում այդ հասկացությունը, որ կարողանանք հասկանալ սուրբ գրքերի լեզուն և դրանից օգուտ քաղենք (տես 2 Նեփի 4.15, Մոսիա 1.3–7, Ալմա 5.61):

Մեզանից շատերը հպարտություն են համարում եսակենտրոնացումը, սնապարծությունը, պարծենկոտությունը, գոռոզությունը կամ մեծամտությունը: Այս բոլորը մեղքի տարրերն են, բայց նրա էությունը, միջուկը բացակայում է:

Հպարտության հիմնական բնորոշիչ հատկանիշը թշնամանքն է՝ Աստծո և մերձավորի հանդեպ: *Թշնամանք* նշանակում է «ատելություն, հակառակորդություն կամ ընդդիմության վիճակ մեր մերձավորի հանդեպ: Դա այն ուժն է, որով սատանան ցանկանում է իշխել մեզ վրա:

Թշնամություն Աստծո հանդեպ

Հպարտությունն իր հիմնական էությամբ մրցակցական է: Մենք հակադրում ենք մեր կամքն՝ ընդդեմ Աստծո: Երբ մենք ուղղում ենք մեր հպարտությունը դեպի Աստված, ապա այն հետևյալ ոգով է. «Իմ կամքը թող կատարվի, ոչ թե քո»: Ինչպես Պողոսն է ասել. «ամենքն իրանց բաներն են որոնում և ոչ թէ Յիսուս Քրիստոսինը» (Փիլիպպեցիս Բ.21):

Մեր կամքի մրցակցությունը Աստծո կամքի հետ, թույլ է տալիս ցանկությունների, ախորժակների և կրքերի անսանձ ընթացք (տես Ալմա 38.12, 3 Նեփի 12.30):

Հպարտները չեն կարող ընդունել Աստծո հեղինակությունը՝ իրենց կյանքին ուղղություն տալիս (տես Հելաման 12.6): Նրանք հակադրում են ճշմարտության իրենց զգայական ընկալումը Աստծո մեծ իմացության դեմ, իրենց ունակություններն՝ Աստծո քահանայության զորության դեմ, իրենց ձեռքբերումներն՝ ընդդեմ Նրա հզոր գործերի: Մեր թշնամանքը հանդեպ Աստված ունի բազմաթիվ պիտակներ, ինչպիսիք են ապստամբ, կարծրասիրտ, խստապարանոց, չապաշխարող, փքված, հեշտ վիրավորվող, նշաններ որոնող: Հպարտները ցանկանում են, որ Աստված համաձայնվի իրենց հետ: Նրանք չեն ցանկանում փոխել իրենց կարծիքը՝ համաձայնվելու Աստծո հետ:

Թշնամանք մերձավորի հանդեպ

Հպարտության այս չափազանց գերակշռող մեղքի մյուս գլխավոր մասը թշամանքն է հանդեպ մեր մերձավորը: Ամեն օր մենք գայթակղվում ենք ինքներս մեզ վեր դասելու մյուսներից և նվաստացնելու նրանց (տես Հելաման 6.17, ՎԱՈՒ 58.41):

Հպարտները յուրաքանչյուր մարդու դարձնում են իրենց հակառակորդը՝ ցուցադրելով դիմացինին իրենց մտածելակերպը, կարծիքները, գործերը, հարստությունը, տաղանդները կամ աշխարհիկ որևէ այլ չափի միջոց: Կ.Ս. Լյուիսի խոսքերով, «հպարտությունը չի բավարարվում պարզապես որևէ բան ունենալով, այլ միայն մեկ ուրիշի համեմատ ավելին ունենալով… Համեմատությունն է, որ դարձնում է ձեզ հպարտ՝ մնացածից վեր լինելու հաճույքը: Հենց որ անցնում է մրցակցության տարրը, հպարտությունը նույնպես անցնում է» (*Mere Christianity* [New York: Macmillan, 1952], pp. 109–10):

Նախաերկրային խորհրդում Լյուցիֆերն իր առաջարկով մրցակցեց Հոր ծրագրի հետ, մինչ վերջինս պաշտպանվում էր Հիսուս Քրիստոսի կողմից (տես Մովսես 4.1–3): Նա ցանկանում էր մեծարվել ավելի շատ, քան բոլոր մյուսները: Կարճ ասած, նրա հպարտ ցանկությունն էր գահազրկել Աստծուն (տես ՎԱՈՒ 29.36, 76.28):

Հպարտության հետևանքները

Սուրբ Գրքերը հարուստ են անհատների, խմբերի, քաղաքների և ազգերի հպարտության մեղքի ծանր հետևանքների դասերով: «Կորստից առաջ գնում է գոռոզությունը» (Առակաց ԺԶ.18): Այն կործանեց Նեփիի ազգին և Սոդոմ քաղաքը (տես Մորոնի 8.27, Եզեկիել 16.49–50):

Հպարտության պատճառով էր, որ խաչվեց Քրիստոսը: Փարիսեցիները կատաղած էին, որովհետև Հիսուսը սպառնալիք էր իրենց դիրքերի համար և, այսպիսով, նրանք Նրա մահվան համար դավ նյութեցին (տես Հովհաննես ԺԱ.53):

Հպարտության պատճառով Սավուղը թշնամացավ Դավթին: Նա նախանձում էր, որովհետև Իսրայելցի կանանց ամբոխները երգում էին. «Սաուղն իր հազարաւորներին զարկեց, Եւ Դաւիթն իր բյուրաւորներին» (Ա Սամուել ԺԸ.7, տես նաև ԺԸ.6, 8):

Հպարտներն ավելի շատ վախենում են մարդկանց դատաստանից, քան Աստծո դատաստանից (տես

ՎԱՈՒ 3.6–7, 30.1–2, 60.2): «Ի՞նչ կմտածեն մարդիկ իմ մասին», ավելի ծանրակշիռ է, քան՝ «Ի՞նչ կմտածի Աստված իմ մասին»:

Նոյ թագավորը մտադիր էր ազատել Աբինադի մարգարեին, բայց նրա ամբարիշտ քահանաների մի փոքր կոչը՝ ուղղված նրա հպարտության զգացումն արթնացնելուն, ստիպեց նրան ուղարկել Աբինադիին դեպի կրակի բոցերը (տես Մոսիա 17.11–12): Հերովդեսը վշտացած էր Հովհաննես Մկրտչին գլխատելու իր կնոջ խնդրանքից: Բայց նրա ցանկությունը լավը երևալ նրանց աչքում, «ում հետ նա խնջույքի էր նստած», ստիպեց նրան սպանել Հովհաննեսին (Մատթեոս ԺԴ.9, տես նաև Մարկոս Զ.26):

Մարդկանց դատաստանի վախը պարզորոշ դրսևորվում է մարդկանց հավանության համար մրցակցությունում: Հպարտները մարդկանց գովասանքն ավելի շատ են սիրում, քան Աստծո գովասանքը (Հովհաննես ԺԲ.42–43): Մեր վարվելակերպի շարժառիթի մեջ է, որ պարզորոշ դրսևորվում է մեղքը: Հիսուսն ասում էր, որ անում էր «միայն այնպիսի բաներ», որոնք գոհացնում էին Աստծուն (Հովհաննես Ը.29): Արդյո՞ք մենք ավելի լավ չենք վարվի, եթե որպես շարժառիթ ընտրենք Աստծուն գոհացնելը, քան մեր մերձավորներից վեր բարձրանալու կամ նս մեկից առաջ անցնելու փորձերը:

Որոշ հպարտ մարդիկ այնքան մտահոգված չեն նրանով, թե արդյոք իրենց աշխատավարձը բավարար է իրենց կարիքները հոգալու համար, որքան այն հարցով, թե արդյո՞ք իրենց աշխատավարձն ավելին է, քան ինչ որ մեկինը: Նրանց պարգևը՝ մնացածից մի աստիճան բարձր լինելն է: Սա է հպարտության թշնամանքը:

Երբ հպարտությունն իշխում է մեր սրտերում, մենք կորցնում ենք մեր անկախությունն աշխարհից և հանձնում ենք մեր ազատությունը մարդկանց դատաստանին: Աշխարհը գոռում է ավելի բարձր, քան սուրբ Հոգու շշունջները: Մարդկային դատողությունը ոտնատակ է անում Աստծո հայտնությունները և հպարտը բաց է թողնում «երկաթե ձողը» (տես 1 Նեփի 8.19–28, 11.25, 15.23–24):

Հպարտության դրսևորումները

Հպարտությունը մեղք է, որը հեշտ է տեսնել ուրիշների մեջ, բայց որը դժվարությամբ ենք նկատում մեր մեջ: Մեզանից շատերը կարծում են, որ հպարտությունը վերևում գտնվողներին բնորոշ մեղք է, որոնք են՝ հարուստները, ուսյալները, որոնք վերևից ներքև են նայում մնացած բոլորի վրա (տես 2 Նեփի 9.42): Ինչևէ, մեզանում կա մի ավելի ընդհանուր հիվանդություն. և դա ներքևից դեպի վեր նայող հպարտությունն է: Այն դրսևորվում է բազմաթիվ տարբեր ձևերով, ինչպիսիք են՝ բծախնդրությունը, բամբասելը, վատաբանելը, դժգոհելը, ունեցած միջոցներից դուրս ապրելը, նախանձելը, ցանկասիրությունը, խուսափելը երախտագիտություն ու գովասանք հայտնելուց, որը կարող էր վեհացնել դիմացինին և, չներող ու խանդոտ լինելը:

Անհնազանդությունը հիմնականում հպարտ ուժի պայքարն է ընդդեմ որևէ մեկի, որը հեղինակությամբ բարձր է մեզանից. դա կարող է լինել ծնողը, քահանայության առաջնորդը, ուսուցիչը կամ, ի վերջո, Աստված: Հպարտ մարդն ատում է այն փաստը, որ որևէ մեկն իրենից բարձր է: Նա մտածում է, որ դա ստորացնում է իր դիրքը:

Եսասիրությունը հպարտության ավելի պարզ դրսևորումներից մեկն է: «Ինչպե՞ս է ամեն ինչ ազդում ինձ վրա», սա է բոլոր հարցերի՝ ինքնահավանության, ինքնախղճահարության, աշխարհիկ ինքնահաստատման, ինքնագոհության և շահամոլության կենտրոնը:

Հպարտությունն է առաջացնում գաղտնի խմբավորումներ, որոնք ստեղծվում են իշխանություն, շահ և աշխարհիկ փառք ձեռք բերելու համար (տես Հելաման 7.5, Եթեր 8.9, 16, 22–23, Մովսես 5.31): Հպարտության մեղքի այս պտուղը, այսինքն՝ գաղտնի խմբավորումները, կործանեցին երկու՝ Հարեդացիների և Նեփիացիների քաղաքակրթությունները, և եղել է ու դեռ կլինի շատ ազգերի անկման պատճառը (տես Եթեր 8.18–25):

Հպարտության մեկ այլ արտահայտություն է հակառակությունը: Վեճերը, կռիվները, անարդար իշխանությունը, տարակարծության ճեղքվածքը սերունդների միջև, ամուսնալուծությունները, կողակցի հանդեպ բռնությունը, անկարգություններն ու խռովությունները, բոլորը մտնում են հպարտության այս դասի մեջ:

Հակառակությունը մեր ընտանիքներում հեռու է վանում Տիրոջ Հոգին: Այն նմանապես հեռու է վանում մեր ընտանիքի անդամներին: Հակառակությունը վերածվում է մի թշնամական խոսքից համաշխարհային ընդհարումների: Սուրբ գրքերն ասում են, որ «միայն հպարտությունից է առաջ գալիս հակառակությունը» (Առակաց ԺԳ.10, տես նաև Առակաց ԻԸ.25):

Սուրբ գրքերը վկայում են, որ հպարտները շուտ վիրավորվում են և ոխ պահում (տես 1Նեփի 16.1–3): Նրանք հրաժարվում են ներել, որպեսզի դիմացինին պարտքի տակ պահեն և արդարացնեն իրենց վիրավորված զգացմունքները:

Հպարտները դժվարությամբ են խորհուրդ ընդունում կամ ուղղվում (տես Առակաց ԺԵ.10, Ամովս 5.10): Պաշտպանողականությունը նրանց կողմից օգտագործվում է՝ արդարացնելու և պատճառաբանելու իրենց թուլությունները և ձախողումները (տես Մատթեոս Գ.9, Հովհաննես Զ.30–59): Հպարտների համար անձնական արժանիքներ ունենալը կամ չունենալը կախված է աշխարհի կարծիքից: Նրանց ինքնագնահատումը որոշվում է նրանով, թե աշխարհիկ

հաջողության որ աստիճանին են իրենք դասվում: Նրանք իրենց արժանի անհատներ են զգում, եթե հաջողությամբ, շնորհալիությամբ, գեղեցկությամբ իրենցից ցածր գտնվողների թիվը բավականաչափ մեծ է: Հպարտությունը տգեղ է: Այն ասում է. «Եթե դու հաջողություն ունես, ապա ես անհաջողակ եմ»:

Մենք ինքնագնահատում կունենանք, եթե սիրենք Աստծուն, կատարենք Նրա կամքը և Նրա դատաստանից ավելի վախենանք, քան մարդկանց դատաստանից:

«Անիծված մեղք»

Հպարտությունն անիծյալ մեղք է՝ բառի բուն իմաստով. Այն սահմանափակում կամ կանգնեցնում է առաջընթացը (տես Ալմա 12.10–11): Հպարտները հեշտորեն չեն ուսուցանվում (տես 1 Նեփի 15.3, 7–11): Նրանք չեն կամենում փոխել իրենց կարծիքը, որպեսզի ընդունեն ճշմարտությունները, որովհետև այդպես վարվելը կնշանակեր, որ իրենք սխալ են եղել:

Հպարտությունը բացասաբար է ազդում մեր բոլոր հարաբերությունների, մեր և Աստծո ու նրա ծառաների հարաբերությունների վրա, ամուսին և կին հարաբերության վրա, ծնող և երեխա, գործատու և աշխատող, ուսուցիչ և ուսանող հարաբերությունների վրա և ողջ մարդկության վրա: Մեր հպարտության աստիճանն է որոշում, թե ինչպես ենք մենք վերաբերվում մեր Աստծուն և մեր եղբայրներին ու քույրերին: Քրիստոսը ցանկանում է բարձրացնել մեզ՝ հասցնելով Իր բարձրության աստիճանին: Արդյո՞ք մենք ցանկանում ենք անել նույնն ուրիշների համար:

Հպարտությունը նվազեցնում է մեր որդիական զգացումն Աստծո հանդեպ և եղբայրական զգացումը մարդու հանդեպ: Այն անջատում և բաժանում է մեզ «դասերի» ըստ մեր «հարստությունների» և մեր «ուսման հնարավորությունների» (3 Նեփի 6.12): Միաբանությունն անհնար է հպարտ ժողովրդի համար, իսկ եթե մենք միաբան չենք, մենք Տիրոջինը չենք» (տես Մոսիա 18.21, ՎԱՈՒ 38.27, 105.2–4, Մովսես 7.18):

Հպարտության գինը

Մտածեք, թե որքան թանկ ենք մենք վճարել հպարտության համար անցյալում և, որքան թանկ ենք վճարում դրա համար այժմ՝ մեր սեփական կյանքում, մեր ընտանիքներում և Եկեղեցում:

Մտածեք ապաշխարության մասին, որը կարող էր տեղի ունենալ, փոխելով կյանքեր, պահպանելով ամուսնություններ և ամրացնելով ընտանիքներ, եթե հպարտությունը ետ չպահեր մեզ՝ մեր մեղքերը խոստովանելուց և դրանցից հրաժարվելուց (տես ՎԱՈՒ 58.43):

Մտածեք այն շատերի մասին, որոնք ակտիվ չեն Եկեղեցում, որովհետև նրանք վիրավորվել են և նրանց հպարտությունը թույլ չի տալիս ներել, ոչ էլ նույնիսկ օգտվել Տիրոջ սեղանից:

Մտածեք այն բյուրավոր երիտասարդների և զույգերի մասին, ովքեր կարող էին ծառայել որպես միսիոներ, եթե չլիներ հպարտությունը, որը նրանց ետ է պահում՝ իրենց սրտերը Աստծուն նվիրաբերելուց (տես Ալմա 10.6, Հելաման 3.34–35):

Մտածեք, թե որքան կաճեր տաճարային աշխատանքը, եթե ժամանակը, որը ծախսվում է այս աստվածահաճո ծառայության վրա, համարվեր ավելի կարևոր, քան այն բազմաթիվ հպարտ ձգտումները, որոնք մրցակցում են մեր ժամանակի համար:

Բազմակողմանի մեղք

Հպարտությունն ազդեցություն ունի բոլորիս վրա՝ տարբեր ժամանակներում և տարբեր աստիճաններով: Այժմ դուք կարող եք տեսնել, թե ինչու Լեքիի երազի շենքը, որն աշխարհի հպարտությունն էր ներկայացնում, մեծ էր և ընդարձակ, և մեծ էր բազմությունը, որը մտավ այնտեղ (տես 1 Նեփի 8.26, 33, 11.35–36):

Հպարտությունը բազմակողմանի մեղք է, մեծ չարիք:

Համեստությունը հպարտության հակաթույնն է

Հպարտության հակաթույնը համեստությունն է՝ հեզությունը, հլությունը (տես Ալմա 7.23): Դա կոտրված սիրտն է և փշրված հոգին (տես 3 Նեփի 9.20, 12.19, ՎԱՈՒ 20.37, 59.8, Սաղմոս 34.18, Եսայիա ԾԷ.15, ԿԶ.2): Ինչպես ասել է Ռուդյարդ Կիպլինգը.

Աղմուկ, աղաղակ մարում են անհետ,
Զորավար, արքա՝ գնում-հեռանում:
Իսկ խոնարհ սրտի, զղջացող հոգու
Զոհաբերությունը Քո մնում է կանգուն:
Տեր, Զորաց Աստված, մի լքիր դու մեզ,
Որ չլինի թե մոռանանք մենք Քեզ:

(“God of Our Fathers, Known of Old,” *Hymns,* no. 80.)

Ընտրեք խոնարհությունը

Աստված կամենում է ունենալ խոնարհ ժողովուրդ: Մենք կարող ենք կամ ինքներս խոնարհվել, կամ էլ հարկադրված լինել խոնարհվելու: Ալման ասել է. «Օրհնված են նրանք, ովքեր խոնարհեցնում են իրենց, առանց հարկադրված լինելու՝ լինել խոնարհ» (Ալմա 32.16):

Եկեք որոշենք խոնարհ լինել:

Մենք կարող ենք որոշել ինքներս խոնարհվել՝ հաղթահարելով թշնամանքը մեր եղբայրների և քույրերի հանդեպ, գնահատելով նրանց, ինչպես մեզ, և բարձրացնելով նրանց այնքան բարձր, որքան մենք ենք, կամ ավելի բարձր (տես ՎԱՈՒ 38.24, 81.5, 84.106):

Մենք կարող ենք որոշել ինքներս խոնարհվել՝ ընդունելով խորհուրդ և խրատ (տես Հակոբ 4.10, Հելաման 15.3, ՎԱՈՒ 63.55, 101.4–5, 108.1, 124.61, 84, 136.31, Առակաց Թ.8):

Մենք կարող ենք որոշել ինքներս խոնարհվել՝ ներելով նրանց, ովքեր վիրավորել են մեզ (տես 3 Նեփի 13.11, 14, ՎԱՈՒ 64.10):

Մենք կարող ենք որոշել ինքներս խոնարհվել՝ մատուցելով անձնուրաց ծառայություն (տես Մոսիա 2.16–17):

Մենք կարող ենք որոշել ինքներս խոնարհվել՝ գնալով միսիայի և քարոզելով խոսքը, որը կարող է խոնարհեցնել մյուսներին (տես Ալմա 4.19, 31.5, 48.20):

Մենք կարող ենք որոշել ինքներս խոնարհվել՝ ավելի հաճախ այցելելով տաճար:

Մենք կարող ենք որոշել ինքներս խոնարհվել՝ խոստովանելով և թողնելով մեր մեղքերը և վերստին ծնվելով Աստծուց (տես ՎԱՈՒ 58.43, Մոսիա 27.25–26, Ալմա 5.7–14, 49):

Մենք կարող ենք որոշել ինքներս խոնարհվել՝ սիրելով Աստծուն, մեր կամքը Նրան ենթարկելով և Նրան առաջին տեղում դնելով մեր կյանքում (տես 3 Նեփի 11.11, 13.33, Մորոնի 10.32):

Եկեք որոշենք խոնարհ լինել: Մենք կարող ենք այդ անել: Ես գիտեմ, մենք կարող ենք:

Սիոնի համար մեծ գայթակղության քարը

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք պարտավոր ենք պատրաստվել՝ Սիոնը փրկագնելու համար: Դա հիմնականում հպարտության մեղքն էր, որ խանգարեց մեզ հիմնադրել Սիոնը Մարգարե Ջոզեֆ Սմիթի օրոք: Այդ նույն հպարտության մեղքն էր, որ վերջ դրեց նվիրաբերմանը Նեփիացիների մեջ (տես 4 Նեփի 1.24–25):

Հպարտությունը մեծ գայթակղության քար է Սիոնի համար: Կրկնում եմ, հպարտությունը գայթակղության մեծ քար է Սիոնի համար:

Մենք պետք է մաքրենք ներքին անոթը՝ հաղթահարելով հպարտությունը (տես Ալմա 6.2–4, Մատթեոս 23.25–26):

Մենք պետք է ենթարկվենք «Սուրբ Հոգու հորդորներին», հանենք մեր վրայից հպարտ «բնական մարդուն» և դառնանք «սուրբ, Տեր Քրիստոսի քավությամբ» և դառնանք «ինչպես մի երեխա՝ ենթարկվող, հեզ, խոնարհ» (Մոսիա 3.19, տես նաև Ալմա 13.28):

Ես ջերմեռանդ աղոթում եմ, որպեսզի մենք կարողանանք այդպես վարվել և առաջ գնալ՝ իրականացնելու մեր աստվածային ճակատագիրը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Սկզբունքը հարատև ճշմարտություն է, օրենք, կանոն, որով կարող եք առաջնորդվել որոշումներ ընդունելիս:

—Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Մենք պետք է սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունը դարձնենք ողջ կյանքի ընթացքում իրականացվող նպատակ…

…Ամենակարևոր բաներից մեկը, որ դուք կարող եք անել,… սուրբ գրությունների մեջ խորասուզվելն է: Հետազոտեք դրանք ջանասիրաբար: Սնվեք Քրիստոսի խոսքերով: Սովորեք վարդապետությունը: Տիրապետեք սկզբունքներին» (in Conference Report, Oct. 1986, 61; կամ *Ensign*, Nov. 1986, 47):

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

«Այդ *սկզբունք* բառը հայտնության մեջ շատ կարևոր է: Սկզբունքը հարատև ճշմարտություն է, օրենք, կանոն, որով կարող եք առաջնորդվել որոշումներ ընդունելիս: Ընդհանրապես սկզբունքները մանրամասնորեն չեն բացատրվում: Դա թողնում է ձեզ ազատ՝ գտնելու ձեր ճանապարհը հարատև ճշմարտության հետ, սկզբունքը՝ որպես ձեր խարիսխ» (in Conference Report, Apr. 1996, 22; կամ *Ensign*, May 1996, 17):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Վարդապետությունից մենք սովորում ենք վարքի սկզբունքներ, ինչպես արձագանքենք կյանքի ամենօրյա խնդիրներին, նույնիսկ ձախողումներին, քանի որ դրանք ևս տրված են վարդապետություններում» (in Conference Report, Apr. 1994, 26; կամ *Ensign*, May 1994, 20):

Որոշ բաներ չեն կարող փոխվել: Վարդապետությունը չի կարող փոխվել:

«Սկզբունքները, որոնք հայտնի են դարձվել, - ասել է Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը,- մարդկանց զավակների փրկության և վեհացման համար, … սկզբունքներ են, որ դուք չեք կարող բնաջնջել: *Դրանք սկզբունքներ են, որ ոչ մի մարդկանց խմբավորում չի կարող ոչնչացնել:* Դրանք սկզբունքներ են, որ երբեք չեն կարող մեռնել… Դրանք մարդկանց հասանելիությունից վեր են՝ փոխելու կամ ոչնչացնելու համար» [In *Journal of Discourses*, 22:342; italics added.]» (in Conference Report, Oct. 1993, 29; կամ *Ensign*, Nov. 1993, 22):

«*Կազմակերպություն, ծրագրեր, ընթացակարգեր, քաղաքականություն* և*սկզբունքներ*՝ բոլորը կարևոր են: Բայց դրանք հավասար կարևորության չեն…

Եթե դուք չգիտեք *սկզբունքները*, սկզբունքներ ասելով ի նկատի ունեմ ավետարանի սկզբունքները, վարդապետությունները, որոնք հայտնություններում են, եթե դուք չգիտեք, թե ինչ են ասում հայտնությունները արդարադատության կամ ողորմածություն մասին, կամ ինչ են հայտնում հանդիմանության կամ ներման մասին, ինչպե՞ս կարող եք ընդունել ոգեշնչված որոշումներ այն դժվար դեպքերում, որոնք պահանջում են ձեր դատողությունը …

Կան ավետարանի սկզբունքներ, որոնք Եկեղեցու կառավարման յուրաքանչյուր փուլի հիմքում են դրված: Սրանք չեն բացատրվում ձեռնարկներում: Դրանք գտնվում են սուրբ գրություններում: Դրանք հայտնությունների համար նյութն են և դրանց նպատակը:

Ընթացակարգերը, ծրագրերը, ղեկավարման քաղաքականությունը, նույնիսկ որոշ կազմակերպչական օրինակներ ենթակա են փոփոխության: Մենք միանգամայն ազատ ենք, անգամ պարտավոր՝ դրանք ժամանակ առ ժամանակ փոխելու: Բայց *սկզբունքները, վարդապետությունները երբեք* չեն փոխվում…

… Մենք իսկապես կարիք ունենք վերակենդանացնելու բոլոր հիմնական ավետարանական սկզբունքները Վերջին Օրերի Սրբերի կյանքում: Քահանայության ճշմարիտ էության կառավարումը ընթացակարգ չէ, այն սկզբունքի մեջ է, վարդապետության մեջ:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը տվել է մեզ բանալի: Նա ասել է կառավարման կապակցությամբ. «Ես ուսուցանում եմ ճիշտ *սկզբունքներ* և նրանք իրենք են իրենց կառավարում» (“Principles,” *Ensign*, Mar. 1985, 6, 8):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Մեծ աշխարհիկ և հոգևոր ուժ է հորդում, երբ հետևում ենք նրանց, ովքեր ունեն Աստծո արքայության բանալիները մեր ժամանակներում: Անձնական ուժն ու զորությունը առաջանում են հավերժական սկզբունքներին հնազանդվելուց, որոնք ուսուցանվում են Տիրոջ ապրող ներկայացուցիչների կողմից» (in Conference Report, Oct. 1994, 97; կամ *Ensign*, Nov. 1994, 74):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Ուղղափառությունը հաստատում է հավասարակշռություն ավետարանի հզոր և ճիշտ սկզբունքների միջև…

Բայց ավետարանի սկզբունքները պահանջում են համաժամանակեցում: Երբ միմյանցից առանձնացվում են կամ մեկուսացվում, այս վարդապետությունների մարդկանց մեկնաբանություններն ու կիրառումները կարող են վայրի լինել» (in Conference Report, Apr. 1993, 97; կամ *Ensign,* May 1993, 78):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Երբ որոնում եք հոգևոր գիտելիք, որոնեք սկզբունքներ: Խնամքով առանձնացրեք դրանք մանրամասներից, որոնք օգտագործվում են դրանք բացատրելու համար: Սկզբունքները փաթեթավորված խտացված ճշմարտություններ են՝ կիրառելու հանգամանքների լայն բազմազանության դեպքում: Ճշմարիտ սկզբունքը որոշումները հստակ է դարձնում նույնիսկ ամենախճճված և հարկադրական հանգամանքներում: Արժե մեծ ջանքեր գործադրել ձևավորելու համար ճշմարտությունը, որը մենք կուտակում ենք՝ դարձնելով այն սկզբունքի հստակ դրույթներ (in Conference Report, Oct. 1993, 117; կամ *Ensign,* Nov. 1993, 86):

Մարդը միշտ շահել է ճիշտ սկզբունքներին հնազանդվելուց: Անվախ պոլինեզիացիները անհուսալի նավերով անցնում էին վիթխարի օվկիանոսը հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող նպատակակետերին հասնելու համար: Այդ սխրագործությունը իրականացվում էր ոչ թե պատահական ձևով, այլ հետևելով սելեստիալ նավագնացության խելամիտ սկզբունքներին: Նրանք խնամքով նախապատրաստվում էին և չէին ենթարկվում գայթակղության, շեղվելով իրենց ուղուց կամ ուշանալով ուղևորության ընթացքում: Նույն ձևով դուք և ես կարող ենք համոզված լինել, որ կյանքում արժանի նպատակակետերի կհասնենք, եթե հասկանանք և հետևողականորեն հետևենք ճիշտ սկզբունքների, որոնք հիմնված են բացահայտված ճշմարտության վրա:

Սկզբունքներն ապահովության խարիսխներ են: Դրանք նման են պողպատյա պահանգների, որոնք լեռնագնացն օգտագործում է հաղթահարելու համար հակառակ դեպքում անանցելի ժայռերը: Դրանք կօգնեն ձեզ վստահություն ունենալ նոր և անծանոթ հանգամանքներում: Դրանք կապահովեն ձեզ պաշտպանություն կյանքի հակառակորդի փոթորիկների ժամանակ:

Բոլոր ինքնահարույց ողբերգություններից, որոնք տեղի են ունենում այսօր Տիրոջ պատվիրանները խախտելուց, կարելի է խուսափել ուշադիր, հետևողական ձևով բացահայտված ճշմարտությանը հետևելով: Ճիշտ սկզբունքների արդյունավետ ուժը կարող է դարձնել ձեր կյանքը ուրախ, բավականություն պատճառող փորձառություն…

«Ջոզեֆ Սմիթի ոգեշնչված միտքը - «Ես սովորեցնում եմ նրանց ճիշտ սկզբունքներ և նրանք իրենք են իրենց կառավարում» - դեռ կիրառվում է» (quoted by John Taylor, in *Millennial Star,* 15 Nov. 1851, p. 339): Տերն օգտագործում է այդ ձևը մեզ համար: Դուք կարող եք գտնել ճիշտ սկզբունքներ Փրկչի, Նրա մարգարեների և սուրբ գրությունների ուսմունքներում, հատկապես Մորմոնի Գրքում:

Չնայած գտնելը հեշտ է, բայց ճիշտ սկզբունքներով հեշտ չէ ապրել, մինչև դրանք չդառնան հաստատված կենսաձև: Դրանք կպահանջեն ձեզանից դուրս մղել կեղծ գաղափարները: Դրանք կպատճառեն ձեզ ցավագին ճակատամարտեր ձեր սրտի գաղտնի սենյակներում և վճռորոշ ընդհարումներ գայթակղությունը, հասակակիցների ճնշումը և «հեշտ ելքի» կեղծ հրապույրը հաղթահարելու համար: Սակայն, երբ դուք վճռականորեն հետևեք ճիշտ սկզբունքների, դուք կկտրեք բնավորության ուժ, որը մատչելի կլինի ձեզ՝ խիստ անհրաժեշտ պահերին: Սկզբունքին հավատարիմ մնալը հաղթահարում է հրապուրիչ, բայց կեղծ կենսաոճը, որը շրջապատում է ձեզ: Ճիշտ սկզբունքների ձեր հավատարիմ օգտագործումը քննադատություն և ծաղր կառաջացնի ուրիշների կողմից, սակայն արդյունքներն այնքան արժեքավոր են հավերժական տեսակետից, որ դրանք կարդարացնեն ձեր ամեն մի զոհաբերություն:

Այժմ ամենակարևոր սկզբունքը, որով կարող եմ կիսվել. «Խարսխեք ձեր կյանքը Հիսուս Քրիստոսի, ձեր Քավչի շուրջ: Դարձրեք ձեր Հավերժական Հորը և Նրա Սիրելի Որդուն ամենակարևոր առաջնահերթությունը ձեր կյանքում, ավելի կարևոր, քան ինքը կյանքը, ավելի կարևոր, քան սիրելի կողակիցը կամ երեխաները կամ որևէ մեկն այս աշխարհում: Դարձրեք Նրանց կամքը ձեր կենտրոնական ցանկությունը: Ապա բոլորը, ինչ դուք կարիք ունեք երջանկության համար, կտրվի ձեզ» (in Conference Report, Apr. 1993, 40–41, 43; կամ *Ensign,* May 1993, 32, 34):

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ

Քննեք ձեր սրտերը և քաջորեն գնահատեք առաջնահերթությունները ձեր կյանքում:

—Երեց Մ. Ռասսել Բալլարդ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Մեծագույն մարտահրավերը, որ մենք ունենք մահկանացու կյանքում, մեր ազատ կամքը լավ օգտագործելն է, կատարելով ճիշտ ընտրություններ ժամանակի և տաղանդների փոխազդեցության մեջ: Ժամանակը մեզ տրված օրհնություններից մեկն է: Ընդհանրապես, այդ մենք ենք, որ թույլ ենք տալիս մեզ չափից շատ շեղվել: Դա մեր կյանքում որոշակի առաջնահերթություններ չհաստատելու (իսկ հետո դիմանալու) հետևանքով է: Ես չեմ ժխտում ձեր դրած մարտահրավերի իրականությունը, բայց չեմ կարծում նաև, որ այն անհաղթահարելի է» (*Deposition of a Disciple*, 68):

«Արդյո՞ք սա նշանակում է, որ ժամանակի հետ հեշտ կլինի առաջնահերթություններ դնելը: Ոչ: Հաճախ այն ավելի դժվար է, քանի որ այժմ մենք ընտրում ենք ոչ թե չար Ա-ի և բարի Բ-ի միջև, այլ պետք է բաշխենք ժամանակը և տաղանդը կարևոր ու լավ Գ-ի և լավ ու կարևոր Դ-ի միջև» (*Wherefore, Ye Must Press Forward*, 19):

«Ճիշտ ինչպես Տերը կարողացավ այսպես հստակ հանրագումարի բերել Իր առաջնահերթությունները - սա է իր «գործը և … փառքը իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39) - այնպես էլ մենք պետք է կարողանանք կառավարել մեր ժամանակը և տաղանդները այնպիսի ձևով, որպեսզի իմանանք մեր իսկական առաջնահերթությունները և կենտրոնանանք դրանց վրա: Երբ մենք մեր սրտերում որոշենք, թե ինչն է, որ իսկապես նշանակություն ունի, ապա մեր տաղանդն ու ժամանակը, ինչպես նաև մեր գանձը, ադպիսով կորոշվի» (*We Will Prove Them Herewith*, 66–67):

Հոգևոր առաջնահերթություններ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Ինձ զարմացնում է, որ Եկեղեցու մեր տարբեր ծրագրերը նման են դաշնամուրի ստեղնաշարի ստեղներին: Որոշ ստեղներ շատ ավելի հաճախ են օգտագործվում, քան մյուսները, բայց դրանք բոլորը ժամանակ առ ժամանակ պետք են լինում՝ մեր կյանքում ներդաշնակություն և հավասարակշռություն ունենալու համար: Ուստի, չնայած մեր հաճախ արվող ելույթներին և ժողովներին, պետք է հիշել հավասարակշռության կարիքի մասին, այստեղ կամ այնտեղ թարմ շեշտադրման անհրաժեշտության մասին և այն բաներն անելու կարիքի մասին, որոնք առավել կարևոր են, միաժամանակ չմոռանալով անել մնացած բաները» (in Conference Report, Apr. 1976, 70; կամ *Ensign*, May 1976, 46):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Երբ մենք առաջին տեղում Աստծուն ենք դնում, բոլոր մյուս բաներն ընկնում են իրենց ճիշտ տեղը կամ դուրս են ընկնում մեր կյանքից: Տիրոջ հանդեպ մեր սերը կկառավարի քնքշանք մեր պահանջը, ժամանակի մեր կարիքը, մեր հետաքրքրությունները և մեր առաջնահերթությունների հաջորդականությունը» (in Conference Report, Apr. 1988, 13; կամ *Ensign*, May 1988, 4):

«Հաջողակ լինելու համար մենք պետք է ունենանք Տիրոջ Հոգին: Մենք ուսուցանվել ենք, որ Հոգին չի բնակվում անմաքուր տաղավարներում: Ուստի, մեր առաջին առաջնահերթություններից մեկը պիտի լինի մեր սեփական կյանքը կարգավորելը» (*Come unto Christ*, 92):

Երեց Դալլին Հ. Օուքս

«Մեր առաջնահերթությունները որոշում են, թե ինչի ենք մենք ձգտում կյանքում: «Ուստի, մի փնտրեք աշխարհի բաները, այլ փնտրեք նախ կառուցել Աստծո արքայությունը և հաստատել նրա արդարությունը» (ՋՍԹ Մատթեոս 6.38), ինչպես ուսուցանեց Հիսուսն իր աշակերտներին: Ինչպես կարդում ենք ժամանակակից հայտնության մեջ. «Մի փնտրեք հարստություն, այլ իմաստություն, և ահա, Աստծո խորհուրդները կբացվեն ձեզ համար, և այն ժամանակ դուք կհարստանաք: Ահա, նա, ով ունի հավերժական կյանք, հարուստ է» (ՎևՈՒ 6.7) (*Pure in Heart*, 6):

Երեց Ռասսել Մ. Բալլարդ

«Երբեմն մենք անձնական ճգնաժամի կարիք ունենք, երբ մեր մտքում ամրացնում ենք այն, ինչն իսկապես

գնահատում և փայփայում ենք: Սուրբ գրությունները լցված են ճգնաժամին դիմակայող մարդկանց օրինակներով, որոնք նախ սովորում էին, թե ինչպես ավելի լավ ծառայեին Աստծուն և ուրիշներին: Գուցե դուք էլ, զննելով ձեր սրտերը և քաջաբար գնահատելով ձեր կյանքի առաջնահերթությունները, կարողանաք հայտնաբերել, ինչպես ես, որ կարիք ունեք ավելի լավ հավասարակշռության ձեր առաջնահերթությունների մեջ» (in Conference Report, Apr. 1987, 14–15; կամ *Ensign*, May 1987, 13):

Ընտանեկան առաջնահերթություններ

Նախագահ Վ. Քիմբալ

«Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի» (ՎԿՈՒ 42.22):

Ուրիշ ոչ մեկի խոսքերը վերացնում են բոլորին և ամեն ինչ: Կողակիցը այդ ժամանակ դառնում է ամենակարևորը ամուսնու կամ կնոջ կյանքում, և ոչ հասարակական կյանքը, ոչ մասնագիտական կյանքը, ոչ քաղաքական կյանքը, ոչ էլ որևէ այլ հետաքրքրություն, անձնավորություն կամ որևէ բան երբևէ պետք է գերակայություն ունենա ընկերակից կողակցի վրա (*Teachings of Spencer W. Kimball*, 310–11):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Այն հարցը, որը երբեմն ուղղում են երիտասարդ քահանայություն կրողները. «Որտեղ եմ ես դնում իմ մեծագույն առաջնահերթությունները՝ Եկեղեցու, ընտանիքի, թե իմ մասնագիտության վրա», ես պատասխանել եմ, շեշտելով, որ ընտանիքների ղեկավարները ունեն չորս կարևոր պարտականություններ: Իհարկե առաջինը տան և ընտանիքի հանդեպ է: Այդտեղ չի կարող լինել որևէ հարց: Մարդը կարող է հաջողակ լինել գործում կամ Եկեղեցական կոչման մեջ, բայց եթե նա ձախողվում է իր տանը, նա կդիմավորի հավերժությունը հուսահատված… Տունը այն տեղն է, որտեղ Տերը նախատեսել է, որ հոր ազդեցությունը ամենաշատը զգացվի» (*Teachings of Ezra Taft Benson*, 509–10):

Երեց Ջոն Ա. Ուիդքսոու

«Եկեղեցին կազմված է տներից: Եկեղեցին և տունը չեն կարող առանձնացվել: Ոչ էլ մեկը կարող է առաջինը լինել: Դրանք մեկ են» (*Evidences and Reconciliations*, 318):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Հաշվի առնելով այդ ներկա պայմանների լրջությունը, արդյո՞ք ծնողները կկամենան հրաժարվել դրսի բաներից նույնիսկ մեկից, փոխարենը տրամադրելով այդ ժամանակը և տաղանդը ընտանիքին: Ծնողներ, պապիկներ ու տատիկներ, խնդրում ենք զննեք ձեր գրաֆիկները և առաջնահերթությունները, որպեսզի հավաստիանաք, որ կյանքի գլխավոր հարաբերությունները պահանջում են ավելի շատ գլխավոր ժամանակ: Նույնիսկ նվիրված և անձնվեր Բրիգամ Յանգին Տերը մի անգամ ասաց. «Հատուկ հոգ տար քո ընտանիքին» (ՎԿՈՒ 126.3): Երբեմն ամենաբարեխիղճներն են, ովքեր ամենաշատը կարիք ունեն այս ուղերձի» (in Conference Report, Apr. 1994, 121; կամ *Ensign*, May 1994, 90):

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, Թոմաս Ս. Մոնսոն, Ջեյմս Ի. Ֆաուստ

Church News, 27 Feb. 1999, 3

Ուղղված է Եկեղեցու անդամներին ողջ աշխարհում

(Հաղորդության ժողովին կարդալու և տնային ուսուցիչների կողմից հաղորդելու համար)

Սիրելի Եղբայրներ և Քույրեր…

Մենք խորհուրդ ենք տալիս ծնողներին և երեխաներին բարձրագույն առաջնություն տալ ընտանեկան աղոթքին, ընտանեկան երեկոյին, ավետարանի ուսումնասիրությանը և հրահանգներին և օգտակար ընտանեկան միջոցառումներին: Որքան էլ արժանավոր և պատշաճ լինեն այլ պահանջներն ու միջոցառումները, չպետք է թույլ տալ փոխարինել աստվածայնորեն նշանակված պարտականությունները, որոնք կարող են միայն ծնողներն ու ընտանիքները պատշաճորեն կատարել:

Մենք հորդորում ենք եպիսկոպոսներին և Եկեղեցու այլ ծառայողներին անել ամեն բան, որ իրենք կարող են՝ օգնելու ծնողներին ժամանակ և օգնություն տրամադրել, որտեղ անհրաժեշտ է, երբ նրանք ուսուցանում են իրենց ընտանիքներին և դաստիարակում Տիրոջ ուղով: Բացի կիրակնօրյա ժողովներից, որոնք երեքժամյա գրաֆիկով են ընթանում, և գուցե կիրակի առավոտյան վաղ խորհրդակցական ժողովներից կամ ավելի ուշ երեկոյան հավաքներից բացի, հնարավորին չափով, պետք է խուսափել ժողովներից, որպեսզի ծնողները կարողանան իրենց երեխաների հետ լինել: Երբ մենք զորացնենք ընտանիքները, մենք կզորացնենք ողջ Եկեղեցին:

Ձեր հավատարիմ եղբայրներ,
Առաջին Նախագահություն

ԾՆՈՂՆԵՐ ՍԻՈՆՈՒՄ

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ

Conference Report, հոկտ. 1998, 27–30, կամ Ensign, նոյ. 1998, 22

Ծնողներ Սիոնում

1831 թվականին Տերը մի հայտնություն տվեց ծնողներին Սիոնում:[1] Ծնողների մասին է, որ ես ուզում եմ խոսել:

Ես 28 տարի ծառայել եմ Տասներկուսի Քվորումում և 9 տարի որպես Տասներկուսի Օգնական: Միմյանց գումարած դա անում է 37 տարի՝ ուղիղ կյանքիս կեսը:

Բայց ես ունեմ մեկ այլ կոչում, որում ծառայել եմ նույնիսկ ավելի երկար: Ես ծնող եմ՝ հայր և *պապիկ:* Տարիներ պահանջվեց պապիկ կոչումը վաստակելու համար, ևս 20 տարի *մեծ պապիկ* կոչման համար: Այս կոչումները՝ հայր, պապիկ, մայր, տատիկ կրում են պատասխանատվություն և լիազորություն, որոնք գալիս են մասնավորապես փորձառությունից: Փորձառությունը հարկադրող ուսուցիչ է:

Հավասարակշռելով ընտանիքն ու Եկեղեցին

Իմ կոչումը քահանայությունում որոշում է իմ պաշտոնը Եկեղեցում, *պապիկ* կոչումը իմ պաշտոնն է ընտանիքում: Ես ցանկանում եմ խոսել դրանց երկուսի մասին միասին:

Ծնող լինելը գտնվում է ամենակարևոր գործերի թվում, որոնց կարող են իրենց նվիրել Վերջին Օրերի Սրբերը: Շատ ծնողներ դիմակայում են հակասությունների, երբ նրանք մաքառում են հավասարակշռել իրենց պարտականությունները որպես ծնողներ և որպես Եկեղեցու հավատարիմ ծառայողներ:

Կան ընտանիքի բարօրության համար կենսական բաներ, որոնք կարելի է գտնել միայն Եկեղեցի հաճախելով: Կա քահանայություն, որը ուժ է տալիս մարդուն առաջնորդելու և օրհնելու իր կնոջը և երեխաներին, և ուխտեր, որոնք հավերժ կապում են նրանց միմյանց:

Եկեղեցուն պատվիրվեց «հաճախ միասին հավաքվել»[2] և ասվեց. «Երբ ժողովվում եք միասին, դուք պետք է հրահանգեք և շենացնեք միմյանց»:[3] Ալմա Ավագն ու Ալմա Կրտսերը տվեցին նույն հրահանգը իրենց ժողովրդին:[4]

Մեզ պատվիրված է «դարձն[ել] հայրերի սիրտը դէպի որդիքը և որդկանց սիրտը՝ դէպի իրանց հայրերը»: [5]

Տերը դիմեց Ջոզեֆ Սմիթ Կրտ.-ին անունով և ասաց. «Դու չես պահել պատվիրանները և անպայման պետք է կշտամբվես Տիրոջ առաջ կանգնելով»:[6] Նա հաջողություն չէր ունեցել իր երեխաներին ուսուցանելիս: Դա միակ անգամն էր, որ *կշտամբել* բառն օգտագործվեց նրան ուղղելու համար:

Նրա խորհրդական Ֆրեդերիկ Գ. Վիլյամսն էլ նույն դատապարտության տակ էր. «Դու քո երեխաներին լույս և ճշմարտություն չես ուսուցանում»:[7] Սիդնի Ռիգդոնին ասվեց նույն բանը, ինչ որ Եպիսկոպոս Նյուել Ք. Ուիթնիին,[8] և Տերն ավելացրեց, «Այն, ինչ ես ասում եմ մեկին, ասում եմ բոլորին»:[9]

Եկեղեցու ոգեշնչված առաջնորդությունը ընտանիքներին

Մենք տեսել ենք, թե ինչպես են բարոյականության չափանիշները գնալով ավելի ցած իջնում, մինչև որ այժմ դրանք ազատ անկում են ապրում: Միևնույն ժամանակ մենք տեսել ենք ոգեշնչված առաջնորդության մի հեղեղում ծնողների և ընտանիքների համար:

Եկեղեցու բոլոր ծրագրերը և միջոցառումները վերակառուցվել են և փոխկապակցվել տան հետ.

- Ծխի ուսուցումը դարձել է տնային ուսուցում:
- Ընտանեկան երեկոն վերահաստատվել է:
- Ծագումնաբանությունը վերանվանվել է ընտանեկան պատմություն և ուղղված է հավաքելու բոլոր ընտանիքների արձանագրությունները:
- Իսկ հետո լույս տեսավ ընտանիքի վերաբերյալ պատմական հայտարարությունը Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Խորհրդի կողմից:
- Ընտանիքը դարձել է և մնում է գերիշխող թեմա ժողովներում, համաժողովներում և խորհուրդներում:
- Բոլորը նախերգանք են տաճարներ կառուցելու մի աննախադեպ դարաշրջանի, որի ընթացքում գործի է դրվում ընտանիքների միասնական կնքման լիազորությունը հավերժության համար:

Կարող ե՞նք տեսնել ոգեշնչման ոգին Տիրոջ ծառաների վրա: Կարող ե՞նք այժմ հասկանալ ընտանիքի վրա ուղղված մարտահրավերն ու հարձակումը:

Ուշադիր եղեք միջոցառումները պլանավորելիս

Ընտանիքի համար բացօդյա միջոցառումներ կազմակերպելիս, մենք պետք է ուշադիր լինենք, հակառակ դեպքում կարող ենք նմանվել մի հոր, որը որոշել է ապահովել ամեն ինչով իր ընտանիքին: Նա նվիրաբերում է իր ամբողջ էներգիան այդ նպատակին և հաջողության հասնում, միայն հետո նա հայտնաբերում է, որ այն, ինչի կարիքն իրենք ունեին ամենաշատը՝ միասին լինել որպես ընտանիք, անտեսվել է: Եվ նա հնձում է տխրություն բավականության փոխարեն:

Որքան հեշտ է միջոցառումների ծրագրեր կազմելու մեր ցանկության մեջ անտեսել ծնողի պարտականությունները և ընտանիքների համար միասին լինելու հիմնական անհրաժեշտությունը:

Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի Եկեղեցու ծրագրերը և միջոցառումները խիստ ծանր չդառնան որոշ ընտանիքների համար: Ավետարանի սկզբունքները, երբ ընկալվում են և կիրառվում, զորացնում են և պաշտպանում ինչպես անձանց, այնպես էլ ընտանիքները: Ընտանիքին և Եկեղեցուն նվիրված լինելը իրարից տարբեր և առանձին բաներ չեն:

Պահեք ընտանիքը և Եկեղեցին հեռանկարի մեջ

Ես վերջերս ականատես եղա, ինչպես մի կին արձագանքեց, երբ մեկ ուրիշի մասին ասվեց. «Ինչ նա նոր երեխա է ունեցել, նա ոչի մի բան չի անում Եկեղեցում»: Կարող էիք գրեթե մանկիկ տեսնել նրա գրկում, երբ նա առարկեց զգացմունքային ձևով. «Նա անում *է* ինչ որ բան Եկեղեցում: Նա կյանք է տվել այդ երեխային: Նա դաստիարակում է և ուսուցանում նրան: Նա Եկեղեցում անում է ամենակարևոր բանը, որ կարող է»:

Ինչպե՞ս կպատասխանեիք այս հարցին. «Իրենց հաշմանդամ երեխայի պատճառով նա բանտարկված է տանը, իսկ [ամուսինը] երկու տեղ է աշխատում, ծայրը ծայրին հասցնելով: Նրանք հազվադեպ են հաճախում, կարող ե՞նք նրանց ակտիվ համարել Եկեղեցում»:

Իսկ դուք երբևէ լսե՞լ եք որևէ կնոջ ասելիս. «Իմ հայրը շատ լավ հայր է, բայց նա երբեք եպիսկոպոս կամ ցցի նախագահ չի եղել կամ արել որևէ կարևոր բան Եկեղեցում»: Ի պատասխան դրան մի հայր վճռականորեն ասաց. «Ի՞նչն է ավելի կարևոր Եկեղեցում, եթե ոչ լավ հայր լինելը»:

Հավատարմորեն Եկեղեցի հաճախելը՝ ընտանիքի կարիքների հանդեպ հոգատար ուշադրության հետ միասին գրեթե կատարյալին մոտ համակցություն է: Եկեղեցում մեզ ուսուցանվում է երջանկության մեծ ծրագիրը:[10]

Տանը մենք կիրառում ենք այն, ինչ մենք սովորել ենք: Յուրաքանչյուր կոչում, յուրաքանչյուր ծառայություն Եկեղեցում բերում է փորձառություն և արժեքավոր ներըմբռնումներ, որոնք ներմուծվում են ընտանեկան կյանք:

Արդյոք մեր հեռանկարն ավելի հստակ կլինե՞ր, եթե մենք կարողանայինք մի պահ վերաբերվել ծնող լինելուն՝ որպես կոչում Եկեղեցում: Փաստորեն, դա շատ ավելին է, բայց եթե մենք կարողանայինք մի պահ այդպես վերաբերվել դրան , ապա կկարողանայինք ավելի լավ հավասարակշռության հասնել, ընթանալով այն ուղով, որով պլանավորում ենք ընտանիքը:

> ***Կան ընտանիքի բարօրության համար կենսական բաներ, որոնք կարելի է գտնել միայն Եկեղեցի հաճախելով:***

Անհարկի մի ծանրաբեռնեք ընտանիքները

Ես չեմ ուզում, որ որևէ մեկն օգտագործի այն, ինչ ես ասում եմ, որպես արդարացում նրանց համար, ովքեր չեն ընդունում ոգեշնչված կոչումը Տիրոջից: Ես *իսկապես* ուզում եմ քաջալերել առաջնորդներին ուշադիր հաշվի առնել տան հանգամանքը, որպեսզի չտան այնպիսի կոչումներ կամ պլանավորեն այնպիսի միջոցառումներ, որոնք անհարկի բեռ կդնեն ծնողների և ընտանիքների վրա:

Վերջերս ես մի երիտասարդ զույգի նամակ կարդացի, որոնց կոչումները Եկեղեցում հաճախ պահանջում են երեխա խնամող վարձել իրենց փոքր երեխաների համար, որպեսզի իրենք կարողանան մասնակցել իրենց ժողովնեերին: Նրանց համար շատ դժվար է դարձել միաժամանակ երկուսով տանը լինել իրենց երեխաների հետ: Արդյոք տեսնո՞ւմ եք հավասարակշռությունից դուրս ինչ որ բան այստեղ:

Ամեն անգամ, երբ դուք որևէ բան պլանավորում եք պատանու համար, դուք պլանավորում եք նաև ընտանիքի՝ հատկապես մոր ժամանակը:

Մտածեք մոր մասին, որը բացի Եկեղեցու իր և իր ամուսնու կոչումներից, պետք է պատրաստի իր երեխաներին և վազի մեկ միջոցառումից մյուսը: Որոշ մայրեր հուսահատվում են և նույնիսկ ճնշվածության մեջ ընկնում: Ես ստանում եմ նամակներ, որտեղ օգտագործում են *հանցանք* բառը, որովհետև նրանք չեն կարողանում անել այդ բոլորը:

Եկեղեցի հաճախելը կարճատև դադար է, կամ պետք է լինի դադար ամենօրյա կյանքի հոգսերից: Այն պետք է բերի խաղաղություն և բավարարվածություն: Եթե այն բերում է ճնշվածություն և հուսահատություն, ապա ինչ որ բան հավասարակշռությունից դուրս է եկել:

Եվ Եկեղեցին միակ պարտականությունը չէ, որ ծնողներն ունեն: Այլ կազմակերպությունները, դպրոցները, գործատուները, համայնքը, ունեն շատ օրինական պատճառ՝ դիմելու ընտանեկան ռեսուրսներին, և բոլորը պետք է հավասարակշռվի:

Վերջերս մի մայր ասաց ինձ, որ իր ընտանիքը տեղափոխվել էր մի գյուղական, ցրված ծխից, որտեղ անհրաժեշտությունից ելնելով, միջոցառումները կենտրոնացած էին շաբաթվա մեկ երեկո: Դա հիանալի էր: Նրանք ժամանակ ունեին իրենց ընտանիքի համար: Ես պատկերացնում եմ, թե ինչպես էին նրանք նստած միասին սեղանի շուրջը:

Նրանք տեղափոխվեցին մի ավելի մեծ ծուխ, որտեղ անդամներն ավելի մոտ էին ապրում ժողովատանը: Նա ասաց. «Այժմ մեր ընտանիքի ժամանակը պլանավորված է՝ երեքշաբթի երեկո, չորեքշաբթի երեկո, հինգշաբթի երեկո, ուրբաթ երեկո, շաբաթ երեկո, կիրակի երեկո: Դա շատ դժվար է մեր ընտանիքի համար»:

Հիշեք, երբ դուք որևէ բան պլանավորում եք պատանու համար, դուք պլանավորում եք նաև ընտանիքի՝ հատկապես մոր ժամանակը:

Ընտանիքների մեծ մասը մեծ ջանքեր են գործադրում, բայց մի քանիսը, երբ ծանրաբեռնվում են առողջական և ֆինանսական խնդիրներով , ուղղակի հոգնում են, փորձելով հասցնել, և, ի վերջո, նրանք ետ են քաշվում, դառնալով ոչ ակտիվ: Նրանք չեն տեսնում, որ հեռանում են իրենց ընտանիքներին օգնելու լույսի և ճշմարտության լավագույն աղբյուրից, գնալով դեպի ստվերները, որտեղ նրանց սպասվում է վտանգ և սրտաբեկություն:

Ես պետք է անդրադառնամ նրան, ինչ, անկասկած, պետք է որ լինի ամենադժվար լուծվող խնդիրը: Որոշ պատանիներ շատ քիչ ուսուցում և օգնություն են ստանում տանը: Կասկած չկա, որ մենք պետք է ապահովենք նրանց: Բայց եթե մենք ստեղծում ենք հաստատուն գրաֆիկ, որն ընդգրկում է տնից դուրս բավականաչափ միջոցառումներ՝ այդ տներում պակասը լրացնելու համար, դա կարող է դժվարացնել հոգատար ծնողների համար ժամանակ գտնել՝ լինելու իրենց սեփական երեխաների հետ և ուսուցանելու նրանց: Միայն աղոթքն ու ոգեշնչումը կարող են օգնել մեզ գտնել այս դժվար հավասարակշռությունը:

Տանը սովորելու կարևորությունը

Մենք հաճախ լսում ենք. «Մենք պետք է ապահովենք հաճախակի և հետաքրքիր միջոցառումներ, որպեսզի մեր երիտասարդները չգնան ավելի քիչ օգտակար վայրեր»: Նրանցից ոմանք կգնան: Բայց ես համոզված եմ, որ եթե մենք ուսուցանենք ծնողներին պատասխանատու լինել և տրամադրել նրանց բավականաչափ ժամանակ, նրանց երեխաներն ի վերջո տանը կլինեն:

Տանը նրանք կարող են սովորել, թե ինչը չի կարող արդյունավետ ուսուցանվել Եկեղեցում կամ դպրոցում: Տանը նրանք կարող են սովորել աշխատել և պատասխանատվություն կրել: Նրանք սովորում են ինչ անել, երբ իրենց սեփական երեխաներն են ունենում:

Օրինակ, Եկեղեցում երեխաներն ուսուցանվում են տասանորդի սկզբունքը, բայց տանն է, որ սկզբունքը կիրառվում է: Տանը նույնիսկ փոքր երեխաներին կարելի է ցույց տալ, թե ինչպես հաշվել և վճարել տասանորդը:

Մի անգամ Նախագահ և Քույր Հարոլդ Բ. Լին մեր տանն էին: Քույր Լին մի բուռ մանր մետաղադրամ դրեց սեղանի վրա՝ մեր փոքրիկ որդու առջև: Նա հանձնարարեց մի կողմ դնել փայլունները և ասաց. «Սա քո տասանորդն է, սա պատկանում է Տիրոջը: Մյուսները քոնն են, պահիր դրանք»: Նա մտախոհ նայեց մեկ կույտից մյուսին, իսկ հետո ասաց. «Այլևս կեղտոտ կոպեկներ էլ չունեք»: Դա էր իսկական ուսուցման պահի սկիզբը:

Օգտագործեք ծխի խորհուրդը հավասարակշռություն հաստատելու համար

Ծխի խորհուրդը կատարյալ տեղ է տան և Եկեղեցու միջև հավասարակշռություն հաստատելու համար: Այստեղ քահանայության եղբայրները՝ որպես հայրեր և օժանդակների քույրերը՝ որպես մայրեր կարող են ոգեշնչված ներըմբռնմամբ համակարգել կազմակերպությունների աշխատանքը, որոնցից յուրաքանչյուրը ծառայում է ընտանիքի տարբեր անդամների:

Խորհրդի անդամները կարող են համեմատել, թե յուրաքանչյուր կազմակերպություն ինչ է ապահովում յուրաքանչյուր անդամի համար և ապահովում են հոգատարություն և խնամք միայնակ ծնողներին, երեխայազուրկներին, ամուրիներին, ծերերին, հաշմանդամներին և ապահովում, շատ ավելին, քան պարզապես միջոցառումներ երեխաների և երիտասարդ մարդկանց համար:

Ծխի խորհուրդն ունի ռեսուրսներ, որոնք հաճախ աչքաթող են արվում: Օրինակ՝ պապիկները, տատիկները, երբ կոչումներ չունեն կարող են օգնել երիտասարդ ընտանիքներին, ովքեր գտնում են իրենց ուղին այն նույն արահետում, որով նրանք մի ժամանակ քայլել են:

Տերը նախազգուշացրել է ծնողներին. «Որքան որ ծնողները երեխաներ ունեն Սիոնում … որոնց չեն ուսուցանում, որպեսզի մինչև ութ տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի, մեղքը լինի ծնողների գլխին»:[11]

Ծխի խորհուրդը իդեալական է մեր ներկա կարիքների համար: Այստեղ տունն ու ընտանիքը կարող են խարսխվել պատշաճ տեղում և Եկեղեցին կարող է ավելի շուտ աջակցել, քան, ծնողներին դուրս մղելով, նրանց տեղը գրավել: Հայրերը և մայրերը երկուսով կհասկանան իրենց երեխաներին ուսուցանելու պարտականությունները և Եկեղեցու կողմից տրվող օրհնությունները:

Տանը սովորած ամենակարևոր բաները

Մինչ աշխարհն աճում է, դառնալով ավելի քան երբևէ սպառնալից, երկնքի զորությունները ավելի են մոտենում ընտանիքներին և ծնողներին:

Ես ուսումնասիրել և ուսուցանել եմ սուրբ գրությունները: Ես շատ եմ կարդացել մարգարեների և առաքյալների խոսքերը: Դրանք խորն ազդեցություն են թողել ինձ վրա որպես տղամարդ և որպես հայր:

Բայց ամենաշատն այն ամենից, ինչ ես գիտեմ այն մասին, թե մեր Երկնային Հայրն ինչպես է իրականում զգում մեր՝ Իր զավակների հանդեպ, ես սովորել եմ նրանից, ինչ զգացել եմ իմ կնոջ և իմ երեխաների և նրանց երեխաների հանդեպ: Սա ես սովորել եմ տանը: Ես սովորել եմ դա իմ ծնողներից և իմ կնոջ ծնողներից, իմ սիրելի կնոջից և իմ երեխաներից, և այդ պատճառով ես կարող եմ վկայել սիրառատ Երկնային Հոր և փրկագնող Տիրոջ մասին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 68.25:
2. Վարդապետություն և Ուխտեր 20.75:
3. Վարդապետություն և Ուխտեր 43.8:
4. Տես Մոսիա 18.25, Ալմա 6.6:
5. Մաղաքիա Դ.6, տես նաև 3 Նեփի 25.5–6, Վարդապետություն և Ուխտեր 2.2–3:
6. Վարդապետություն և Ուխտեր 93.47:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.41–42:
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.44, 50:
9. Վարդապետություն և Ուխտեր 93.49:
10. Տես Ալմա 12.32:
11. Վարդապետություն և Ուխտեր 68.25:

ՀԱՇՎԵԿՇՌԻ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՎ ԿՅԱՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, ապր. 1987, 15–18, կամ Ensign, մայիս 1987, 14–16

Պարբերաբար վերանայելը Տիրոջ հետ կապած մեր ուխտերը կօգնի մեզ մեր առաջնահերթություններում և մեր կյանքը հաշվեկշռելիս: Այս վերանայումը կօգնի մեզ տեսնել, թե որտեղ մենք կարիք ունենք ապաշխարելու և փոխելու մեր կյանքը՝ հավաստիանալու համար, որ արժանի ենք այն խոստումներին, որոնք ուղեկցում են մեր ուխտերին և սրբազան արարողություններին: Մեր սեփական փրկությունը պահանջում է լավ պլանավորում և կշռադատված ու քաջարի ջանքեր:

Ես մի քանի առաջարկներ ունեմ, որոնք, հուսով եմ, արժեքավոր կլինեն նրանց համար, ովքեր մտահոգված են կյանքի պահանջների հաշվեկշռելու հարցով: Այս առաջարկները շատ հիմնավոր են, դրանց տեսակետները, անուշադրության դեպքում, կարելի է հեշտորեն աչքից բաց թողնել: Ձեզ անհրաժեշտ կլինի ուժեղ պարտավորվածություն և անձնական կարգապահություն՝ դրանք ձեր կյանքում կիրառելու համար:

Օգտագործեք հավերժական հեռանկարը առաջնահերթություններ դնելիս

Առաջինը, մտածեք ձեր կյանքի մասին և սահմանեք ձեր առաջնահերթությունները: Կանոնավորապես, խաղաղ մի պահ գտեք, երբ կարող եք խորը մտածել այն մասին, թե ուր եք գնում և ինչ պետք է անեք այնտեղ հասնելու համար: Հիսուսը՝ մեր Օրինակը, հաճախ «քաշվում էր անապատ տեղերանք, և աղոթք էր անում» (Ղուկաս Ե.16): Մենք պետք է անենք նույն բանը երբեմն մեզ հոգեպես վերաերիտասարդացնելու համար, ինչպես Փրկիչն էր անում: Գրի առեք այն խնդիրները, որոնք դուք կկամենայիք իրականացնել ամեն օր: Ձեր ամենօրյա գրաֆիկը կազմելիս, հիշեք, որ ամենակարևորը սրբազան ուխտերը հիշելն է, որոնք դուք կապել եք Տիրոջ հետ:

Դրեք խելամիտ կարճաժամկետ նպատակներ

Երկրորդը, դրեք կարճաժամկետ նպատակներ, որոնց դուք կարող եք հասնել: Դրեք նպատակներ, որոնք լավ հաշվեկշռված են, ոչ խիստ շատ, ոչ խիստ քիչ և ոչ շատ բարձր, ոչ էլ շատ ցածր: Գրի առեք ձեր հասանելի նպատակները և աշխատեք դրանց ուղղությամբ՝ ըստ կարևորության: Ձեր նպատակները դնելիս աղոթեք աստվածային առաջնորդության համար:

Դուք հիշում եք, որ Ալման ասաց, որ կկամենար հրեշտակ լինել, որպեսզի կարողանար «խոսել Աստծո փողով, երկիրը ցնցելու … և ապաշխարություն աղաղակեր ամեն ժողովրդի» (Ալմա 29.1): Իսկ հետո ասաց. «Բայց ահա, ես մարդ եմ և մեղանչում եմ իմ իրոնում. Քանզի ես պետք է գոհ լինեմ այն բաների համար, որոնք Տերը բաշխել է ինձ…

….Ինչո՞ւ ես պետք է ցանկանամ ավելին, քան այն գործը կատարելը, որին կանչված եմ» (Ալմա 29.3, 6):

Դարձեք ֆինանսապես պատասխանատու և ապահով

Երրորդը, բոլորն իրենց կյանքում դիմակայում են ֆինանսական մարտահրավերների: Իմաստուն բյուջեավորման միջոցով, վերահսկեք ձեր իսկական կարիքները և դրանք ուշադիր համեմատեք կյանքում ձեր բազմաթիվ պահանջների հետ: Խիստ շատ մարդիկ և ընտանիքներ չափազանց շատ պարտքերի մեջ են ընկնում: Զգույշ եղեք փող պարտք վերցնելու հրապուրիչ առաջարկներից: Շատ ավելի հեշտ է

փող պարտք վերցնելը, քան այն ետ վճարելը: Չկան կարճ ուղիներ դեպի ֆինանսական ապահովություն: Չկան արագ հարստանալու սխեմաներ, որոնք աշխատում են: Հավանաբար ոչ ոք իր կյանքում չունի հաշվեկշռի սկզբունքի այն կարիքը, որքան նա, ով այս աշխարհում մղում ունի դեպի «ինչ որ բաներ» կուտակելուն:

Մի վստահեք ձեր փողն ուրիշներին առանց խորը գնահատելու առաջարկված ներդրումը: Մեր մարդիկ շատ փող են կորցրել՝ վստահելով իրենց միջոցներն ուրիշներին: Իմ կարծիքով, մենք երբեք հաշվեկշիռ չենք ունենա մեր կյանքում, մինչև որ մեր ֆինանսները ապահով վերահսկողության տակ չլինեն:

Հակոբ մարգարեն ասաց իր ժողովրդին. «Ուստի, փող մի ծախսեք այն բանի համար, ինչն արժեք չունի, ոչ էլ ձեր աշխատանքն այն բանի համար, որ չի կարող բավարարել: Լսեք ինձ ջանասիրաբար և հիշեք խոսքերը, որոնք ես խոսել եմ. և եկեք դեպի Սուրբն Իսրայելի, ճաշակեք այն, ինչը չի ոչնչանում, ոչ էլ կարող է ապականվել, և թող ձեր հոգին զվարճանա պարարտությունով» (2Նեփի 9.51):

Եղբայրներ և քույրեր, հիշեք միշտ վճարել լրիվ տասանորդ:

Կառուցեք սերտ հարաբերություններ ընտանիքի և ընկերների հետ

Չորրորդը, մնացեք մոտ ձեր կողակցին, երեխաներին, բարեկամներին և ընկերներին: Նրանք կօգնեն պահպանել հաշվեկշիռը ձեր կյանքում: Եկեղեցու կողմից մի վերջին ուսումնասիրության ժամանակ Միացյալ Նահանգներում չափահասների շրջանում հարցում էր կատարվել, որի ժամանակ պետք էր նշել մի ժամանակ, երբ նրանք շատ երջանիկ են եղել, և նկարագրել մի ժամանակ, երբ նրանք շատ դժբախտ են զգացել: Մարդկանց մեծամասնության համար այն, ինչ նրանց ամենաերջանիկը կամ ամենատխուրն էր դարձրել, նրանց փոխհարաբերություններն էին ուրիշների հետ: Շատ ավելի քիչ կարևոր էին իրենց անձնական առողջությունը, աշխատանքը, փողը և այլ նյութական բաները: Կառուցեք փոխհարաբերություններ ձեր ընտանիքի և ընկերների հետ՝ բաց և ազնիվ հաղորդակցության միջոցով:

Լավ ամուսնություն և լավ ընտանեկան հարաբերություններ կարող են պահպանվել նրբանկատ, սիրալիր, ուշադիր հաղորդակցության միջոցով: Հիշեք, որ հաճախ մի հայացքը, աչքերի շարժումը, գլխով նշան անելը կամ հպվելը կարող են ասել ավելին, քան խոսքերը: Հումորի զգացումն ու լսելու ունակությունը նույնպես կարևոր են լավ հաղորդակցության համար:

Ուսումնասիրեք սուրբ գրությունները

Հինգերորդը, ուսումնասիրեք սուրբ գրությունները: Դրանք պարունակում են լավագույն աղբյուրները, որոնք մեզ կապի մեջ կպահեն Տիրոջ Հոգու հետ: Ուղիներից մեկը, որի միջոցով ես ձեռք բերեցի հաստատուն գիտելիք, որ Հիսուսը Քրիստոսն է, սուրբ գրությունների իմ ուսումնասիրության միջոցով էր: Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը կոչ է արել Եկեղեցու անդամներին Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը դարձնել ամենօրյա սովորույթ և ողջ կյանքի ժամանակի նպատակ: Պողոս Առաքյալի խորհուրդը Տիմոթեոսին լավ խորհուրդ է մեզանից յուրաքանչյուրի համար: Նա գրել է. «Եւ որ մանկութիւնից սուրբ գրքերը գիտես, որ կարող են քեզ իմաստուն անել փրկութեան համար այն հավատքի ձեռովն որ Քրիստոս Յիսուսումն է:

Ամեն Գիրք աստվածաշունչ են եւ օգտակար, վարդապետութեան, եւ յանդիմանութեան, եւ ուղղելու, եւ արդարութեան խրատելու համար» (Բ Տիմոթեոս Գ.15–16):

Հանգստացեք, մարզվեք և զվարճացեք

Վեցերորդ, շատ մարդիկ, ներառյալ ես, դժվարություն ունենք հանգստի, մարզվելու և զվարճանալու համար ժամանակ գտնելիս: Մենք պետք է ժամանակ հատկացնենք մեր ամենօրյա այս գործերը ծրագրելուն, եթե ուզում ենք վայելել առողջ և հաշվեկշռված կյանք: Ֆիզիկական լավ արտաքինը բարձրացնում է մեր արժանապատվությունը և ինքնահարգանքը:

«Միմյանց ուսուցանեք ավետարանը»

Յոթերորդը, մարգարեները ուսուցանել են բազմիցս, որ ընտանիքները պետք է միմյանց ուսուցանեն ավետարանը, նախընտրելի է, ամենշաբաթյա ընտանեկան երեկոների ժամանակ: Ընտանեկան այս գործունեությունը, եթե մենք շատ ուշադիր չլինենք, կարող է դանդաղորեն հեռանալ մեզանից: Մենք չպետք է կորցնենք այս հատուկ հնարավորությունը՝ «միմյանց ուսուցանելու արքայության վարդապետությունը» (ՎԱՈՒ 88.77), որը կառաջնորդի ընտանիքներին դեպի հավերժական կյանք:

Սատանան միշտ աշխատում է կործանել մեր վկայությունները, բայց նա չի ունենա ուժ գայթակղելու կամ ստիպելու դիմանալ մեր ուժից վեր, երբ մենք ուսումնասիրում ենք ավետարանը և ապրում նրա պատվիրաններով:

Հաճախ աղոթեք

Իմ վերջին առաջարկն է՝ աղոթել հաճախ որպես անհատներ և ընտանիքներ: Ծնողները պետք է գործադրեն կարգապահություն, որն անհրաժեշտ է առաջնորդելու և դրդելու համար երեխաներին միասին կանոնավոր ընտանեկան աղոթքներ ասել: Մեր երիտասարդությունը կարող է իմանալ ամեն օր ճիշտ որոշումներ ընդունելու ձևը՝ անկեղծ աղոթքի միջոցով:

Ալմա մարգարեն ամփոփեց աղոթքի կարևորությունը այս խոսքերով. «Այլ, որ դուք խոնարհեցնեք ձեզ Տիրոջ առաջ,

և կանչեք նրա սուրբ անունը, և արթուն կենաք ու շարունակ աղոթեք, որպեսզի դուք չլինի թե փորձվեք ավելի, քան դուք կարող եք դիմանալ, և այսպես առաջնորդվեք Սուրբ Հոգուց՝ դառնալով խոնարհ, հեզ, հլու, համբերատար, սիրով և ողջ երկայնամտությամբ լի» (Ալմա 13.28): Երբ ես հոգեպես ներդաշնակության մեջ եմ, ես գտնում եմ, որ կարող եմ ամեն ինչ շատ ավելի հեշտորեն հաշվեկշռել իմ կյանքում:

Արեք բոլոր բաները իմաստությամբ և կարգով

Ես գիտակցում եմ, եղբայրներ և քույրեր, որ սրան կարելի է ավելացնել այլ առաջարկներ: Այնուամենայնիվ, ես հավատում եմ, որ երբ մենք կենտրոնանում ենք մի քանի հիմնական նպատակների վրա, մենք ըստ երևույթին կարող ենք կառավարել այն բազմաթիվ պահանջները, որոնք կյանքն է առաջադրում մեզ: Հիշեք, կյաքում որևէ բանի առկայության ավելցուկը կարող է մեզ գցել հաշվեկշռից: Միևնույն ժամանակ, կարևոր բաների խիստ սակավությունը կարող է անել նույնը: Թագավոր Բենյամինը խորհուրդ է տվել, «որ բոլոր այս բաներն արվեն իմաստությամբ և կարգով» (Մոսիա 4.27):

Նույնիսկ հստակ ուղղության և նպատակների բացակայությունը կարող է սպառել մեր ժամանակն ու էներգիան և նպաստել անհավասարակշռությանը մեր կյանքում: Կյանքը, որը հաշվեկշռից դուրս է գալիս, շատ նման է մեքենայի անվադողին, որը բալանսից ընկել է: Դա դարձնում է մեքենայի աշխատանքը անհավասար և անապահով: Անվադողերը, որոնք կատարյալ բալանսի մեջ են, կարող են ապահովել հարթ և հարմարավետ ընթացք: Նույնը վերաբերում է կյանքին: Ընթացքը մահկանացու կյանքի միջով կարող է ավելի հարթ լինել մեզ համար, երբ մենք ձգտում ենք մնալ հավասարակշռության մեջ: Մեր գլխավոր նպատակը պետք է լինի ձգտելը «անմահության և հավերժական կյանքի» (Մովսես 1.39): Սա ունենալով որպես մեր նպատակ, ինչո՞ւ չվերացնել մեր կյանքից այն բաները, որոնք աղմուկով պահանջում են և կլանում մեր մտքերը, զգացմունքները և էներգիան առանց նպաստելու այդ նպատակին հասնելուն:

Ավելի շուտ օգնեք՝ խանգարելու փոխարեն

Ուղղակի մի խոսք Եկեղեցու առաջնորդներին. «Եղեք շատ զգույշ, որ այն ինչ դուք խնդրում եք անդամներից, օգնի նրանց ձեռք բերել հավերժական կյանք: Որպեսզի Եկեղեցու անդամների կյանքը հավասարակշռության մեջ լինի, Եկեղեցու ղեկավարները պետք է համոզված լինեն, որ նրանք չեն պահանջում անդամներից այնքան, որ վերջիններս ժամանակ չունենան իրականացնել իրենց անձնական և ընտանեկան նպատակները»:

Արեք ձեր լավագույնը՝ ամեն օր

Ոչ շատ առաջ իմ երեխաներից մեկն ասաց. «Պապ, երբեմն ինձ թվում է, ես երբևէ չեմ հասնի դրան»: Պատասխանը, որ ես տվեցի նրան, նույնն է ինչ ես կտայի ձեզ, եթե դուք ունենայիք նմանատիպ զգացումներ: Ուղղակի արեք լավագույնը, ինչ կարող եք ամեն օր: Արեք հիմնական բաները և նախքան դուք կգիտակցեք դա, ձեր կյանքը լցված կլինի հոգևոր ըմբռնումով, որը ձեզ կհավաստիացնի, որ ձեր Երկնային Հայրը սիրում է ձեզ: Երբ մարդն իմանում է այդ, կյանքը լցվում է նպատակով և իմաստով, ավելի հեշտ դարձնելով հավասարակշռության պահպանումը:

Կան ընտանիքի բարօրության համար կենսական բաներ, որոնք կարելի է գտնել միայն Եկեղեցի հաճախելով:

ԽՆԴԻՐՆԵՐ ԼՈՒԾԵԼԸ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոգևոր աճը գալիս է միասին խնդիրներ լուծելուց, ոչ թե դրանցից փախչելուց:

—Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Իմ ուղերձն է վերադանալ դեպի Աստծո կողմից կարգված հիմունքները, որը կապահովի սեր, կայունություն և երջանկություն մեր տներում…

«…*Ամուսինն ու կինը պետք է հասնեն արդար միության և իրենց նպատակներում, ցանկություններում և գործերում մեկ լինելուն:*

«Ամուսնությունն ինքնին պետք է համարվի սրբազան ուխտ Աստծո առջև: Ամուսնացած զույգը պարտավորություն ունի ոչ միայն միմյանց հանդեպ, այլ նաև Աստծո հանդեպ: Նա խոստացել է օրհնություններ նրանց, ովքեր հարգում են այդ ուխտը:

Հավատարմությունը իրենց ամուսնական երդումներին բացարձակապես կարևոր է սիրո, վստահության և խաղաղության համար: Շնությունը անկասկածորեն դատապարտվում է Տիրոջ կողմից:

«Ամուսիններն ու կանայք, ովքեր սիրում են միմյանց, կհասկանան, որ սերն ու հավատարմությունը փոխադարձ են: Այս սերը կապահովի դաստիարակչական մթնոլորտ երեխաների զգացմունքային աճի համար: Ընտանեկան կյանքը պետք է լինի երջանկության և ուրախության ժամանակ, որին երեխաները կարող են ետ նայել սիրելի հիշողություններով և հաղորդակցվելով:

Զսպվածությունը և ինքնավերահսկողությունը պետք է լինեն կառավարող սկզբունքներ ամուսնական փոխհարաբերության մեջ: Զույգերը պետք է սովորեն սանձել իրենց լեզուները, ինչպես նաև իրենց կրքերը:

Աղոթքը տանը և աղոթքը միմյանց հետ կուժեղացնեն ձեր միությունը: Աստիճանաբար մտքերը, ձգտումները և գաղափարները կձուլվեն, դառնալով մեկ՝ մինչ դուք ձգտեք նույն նպատակներին և ծրագրերին: Ապավինեք Տիրոջը, մարգարեների ուսմունքներին և սուրբ գրություններին՝ առաջնորդության և օգնության համար, հատկապես, երբ լինում են տարաձայնություններ և խնդիրներ:

Հոգևոր աճը գալիս է խնդիրները միասին լուծելուց, ոչ թե դրանցից փախչելուց: Այսօրվա արտասովոր շեշտը ինդիվիդուալիզմի վրա բերում է եսասիրության և առանձնացման: Երկու անձնավորության «մեկ մարմին» դառնալը դեռևս Տիրոջ չափանիշն է (Տես Ծնն. Բ.24):

«Երջանիկ ամուսնության գաղտնիքը Աստծուն և միմյանց ծառայելն է: Ամուսնության նպատակը միությունն է և մեկ լինելը, ինչպես նաև ինքնազարգացումը: Տարօրինակ է, բայց որքան ավելի շատ ենք միմյանց ծառայում, այնքան ավելի մեծ է մեր հոգևոր և զգացմունքային աճը» (“Salvation—A Family Affair,” *Ensign,* July 1992, 2–4):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Մենք ապրում ենք այնպիսի օրերում, երբ հակառակորդը շեշտում է ամեն ինչում վայրկենական բավարարվածության փիլիսոփայությունը: Մենք, կարծես, պահանջում ենք ամեն ինչ *վայրկենապես,* ներառյալ վայրկենական լուծումներ մեր խնդիրներին:

Մենք ուսուցանված ենք, որ ինչ որ ձևով մենք միշտ պետք է վայրկենապես զգացմունքային հանգստություն գտնենք: Երբ դա այդպես չէ, ոմանք տագնապում են և խիստ հաճախ սփոփանք են որոնում խորհրդակցելու, վերլուծության և նույնիսկ դեղամիջոցների մեջ:

Կյանքը միտված է լինելու մարտահրավեր: Որոշ սրտնեղություն, որոշ ճնշվածություն, որոշ հուսալքություն, նույնիսկ որոշ ձախողում կրելը նորմալ է:

Ուսուցանեք մեր անդամներին, որ եթե նրանք մեկ լավ, մեկ թշվառ օր են ունենում, կամ մի քանի օր հաջորդաբար, թող ամուր կանգնեն և դիմակայեն դրանց: Գործերը կարգի կընկնեն:

Կա մեծ նպատակ կյանքի մեր պայքարում…

Եպիսկոպոս, նրանք ովքեր գալիս են ձեզ մոտ, Աստծո զավակներն են: Խորհուրդ տվեք նրանց Աստծո իսկ ձևով: Սովորեցրեք նրանց խորհել իրենց մտքում, ապա աղոթել իրենց խնդիրների մասին:

Հիշեք սուրբ գրությունները կարդալու այդ մեղմացնող, հանգստացնող ազդեցությունը: Հաջորդ անգամ, երբ դուք կարդում եք դրանք, ուշադրություն դարձրեք, թե ինչպես են գործերը կարգավորվում: Զգացեք խաղաղության և ապահովության զգացումը, որով տոգորվում եք:

Հիսուս Քրիստոսի անունով, ամեն» (in Conference Report, Apr. 1978, 135–40; կամ *Ensign,* May 1978, 91–93):

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԾՐԱԳԻՐԸ



Երեց Ջո Ջ. Քրիչենսեն

Յոթանասունի Նախագահությունից

Conference Report, ապր. 1995, 84–87, կամ Ensign, մայիս 1995, 64–66

Բարբարան և ես օրհնվել ենք վեց երեխաներով: Մի քանի տարի առաջ, երբ մենք նրանց բոլորին տարել էինք իրենց պապիկ տատիկին այցելելու, հայրս ասաց. «Ջո, կարծում եմ դու և Բարբարան սկսել եք մի բան և չեք կարողանում կանգ առնել»:

Այս զատիկի ժամանակ մենք հայտարարում ենք ողջ աշխարհին, որ Հիսուսը Քրիստոսն է և որ Նրա սուրբ Քահանայության միջոցով և դրա կնքող զորությամբ ամուսնություններն ու ընտանիքները չպետք է երբեք կանգ առնեն, երբեք չպետք է հասնեն ավարտի:

Այսօր ես կկամենայի խոսել ձեր բոլորի հետ մեր ամուսնությունների մասին: Ահա ութ պրակտիկ առաջարկներ, որոնք հուսով ենք, կարող են արժեքավոր լինել մեր ամուսնությունները զորացնելիս, այժմ և ապագայում:

Հիշեք ամուսնության կարևորությունը

1. Հիշեք ձեր ամուսնության հիմնական կարևորությունը: Լսեք Երեց Բրյուս Ռ. Մակքոնկիի այս խոսքերը մեր Երկնային Հոր «երջանկության մեծ ծրագրում» ամուսնության կարևորության մասին (Ալմա 42.8):

«Մահկանացու կյանքում ծննդյան պահից ի վեր մինչև այն ժամանակը, երբ մենք ամուսնանում ենք տաճարում, ամբողջը, ինչ ունենք ողջ ավետարանական համակարգում, պետք է նախապատրաստի և որակավորի մեզ՝ մտնելու ամուսնության այդ սուրբ կարգը, որը մեզ դարձնում է ամուսին և կին այս կյանքում և գալիք աշխարհում…

Չկա այս աշխարհում ոչ մի բան այնքան կարևոր, որքան ընտանեկան միավորների ստեղծումն ու կատարելագործումը» («Փրկությունը ընտանեկան գործ է», Improvement Era, June 1970, էջ 43–44):

Աղոթեք ձեր ամուսնության հաջողության համար

2. Աղոթեք ձեր ամուսնության հաջողության համար: Տարիներ առաջ, երբ Գերագույն Իշխանավորի համար սովորական մի բան էր միսիայով շրջելը և բոլոր միսիոներների հետ հարցազրույց անցկացնելը, Երեց Սպենսեր Վ. Քիմբալը, որն այդ ժամանակ Տասներկուսի Քվորումի անդամ էր, հանդիպեց մի երեցի հետ, որի միսիան ավարտին էր մոտենում:

«Երբ ազատ արձակվես Երեց, ինչպիսի՞ն են քո պլանները»:

«Օ, ես պլանավորել եմ վերադառնալ քոլեջ»: Իսկ հետո ժպտալով ավելացրեց. «Ապա հուսով եմ սիրահարվել և ամուսնանալ»:

Երեց Քիմբալը տվեց այս իմաստուն խորհուրդը. «Դու մի աղոթիր ուղղակի ամուսնանալու համար նրա հետ, ում սիրում ես: *Փոխարենը, աղոթիր, որ սիրես նրան, ում հետ ամուսնանալու ես*»:

Մենք պետք է աղոթենք ավելի բարի, քաղաքավարի, խոնարհ, համբերատար, ներողամիտ և *հատկապես*, ավելի քիչ եսասեր դառնալու համար:

Որպեսզի գիտակցենք մեր անձնական խնդիրները կամ թուլությունները, որոնք խանգարում են մեզ ավելի լավ ամուսնական զուգընկեր լինել, մենք պետք է գանք Տիրոջ մոտ աղոթքով և հնձենք Մորմոնի Գրքի այս հզոր խոստման արտոնությունները. «Եթե մարդիկ գան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը … քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ» (Եթեր 12.27):

Եվ այսպես աղոթելու անհրաժեշտությունը: Շատ Եկեղեցու ղեկավարներ և ամուսնության խորհրդատուներ նշում են, որ նրանք չեն տեսել որևէ ամուսնություն լուրջ վտանգի մեջ, եթե զույգը դեռ միասին աղոթում է ամեն օր: Երբ խնդիրներ են առաջանում և սպառնում ամուսնություններին, որպես զույգ միասին աղոթելը կարող է լինել ամենակարևոր սպեղանին:

Լսեք ձեր կողակցին

3. Լսեք: Ժամանակ գտեք լսելու ձեր կողակցին, նույնիսկ կանոնավորապես պլանավորեք այն: Հանդիպեք միմյանց և գնահատեք որպես ամուսնական զուգընկեր, թե ինչպես են գործերը:

Եղբայր Բրենթ Բարլոուն մի հարց տվեց քահանայության եղբայրների մի խմբի. «Ձեզանից քանի՞սը կկամենային հայտնություն ստանալ»: Բոլորի ձեռքերը բարձրացան: Ապա նա առաջարկեց, որ նրանք բոլորը տուն գնան և հարցնեն իրենց կանանց, թե ինչպես կարող էին ավելի լավ ամուսիններ լինել: Նա ավելացրեց. «Ես հետևեցի իմ իսկ խորհրդին և ունեցա այդ օրը մեկ ժամից ավելի մի շատ բովանդակալից քննարկում [կնոջս] Սյուզանի հետ » (“To Build a Better Marriage,” *Ensign*, Sept. 1992, p. 17): Այդպիսի խոսակցությունը կարող է հայտնություն լինել մեզանից յուրաքանչյուրի համար:

Ձեր կանանցից որևէ մեկը երբևէ ասե՞լ է այսպիսի մի բան, որը ես վերջերս լսեցի. «Ջո, լսո՞ւմ ես»: Նա միակը չէր, որ հետաքրքրվում էր, թե լսում էի ես արդյոք: Որոշ ժամանակ առաջ ես ննջում էի և մեր փոքրիկ թոռնիկը՝ Ալիսոնը, եկավ և բարձրացնելով կոպս ասաց. «Պապիկ, դու այդտե՞ղ ես»: Մենք պետք է այդտեղ լինենք և արձագանքենք մեր կնոջը:

Խուսափեք անդադար խայթելուց

4. Խուսափեք «անդադար խայթելուց»: Խիստ քննադատական մի եղեք միմյանց սխալների հանդեպ: Ընդունեք, որ մեզանից ոչ մեկը կատարյալ չէ: Մենք բոլորս երկար ճանապարհ ունենք անցնելու, որպեսզի Քրիստոսի նման դառնանք, ինչպես մեր ղեկավարներն են հորդորել մեզ դառնալ:

«Անընդհատ խայթոցները», ինչպես Նախագահ Քիմբալն է ասում, կարող են արժեզրկել գրեթե ամեն մի ամուսնություն (“Marriage and Divorce,” *1976 Devotional Speeches of the Year* [Provo: Brigham Young University Press, 1977], p. 148): Ընդհանրապես մեզանից յուրաքանչյուրը ցավալիորեն տեղյակ է իր թուլություններին, և կարիք չունի հաճախակի հիշեցումների: Քիչ մարդիկ են երբևէ փոխվել դեպի լավը՝ անընդհատ քննադատության կամ բծախնդրության հետևանքով: Եթե մենք զգույշ չլինենք, մեր առաջարկած որոշ *կառուցողական* քննադատություն, փաստորեն, կարող է դառնալ *ավերիչ:*

Երբեմն ավելի լավ է որոշ բաներ թողնել չասված: Երբ Քույր Լոլա Ուոլթերսը նոր էր ամուսնացել, մի ամսագրում կարդաց, որ ամուսնությունը զորացնելու համար զույգերը պետք է ունենան կանոնավոր, անկեղծ մտքերի փոխանակում, որի ընթացքում նրանք կթվարկեն բոլոր շարժուձևերը, որոնք իրենց ջղայնացնում են: Նա գրել է.

«Մենք պետք է անվանեինք հինգ բան, որոնք մեզ ջղայնացնում էին, և ես սկսեցի… Ես ասացի նրան, որ չէի սիրում թե ինչպես էր նա ուտում գրեյփֆրութ: Նա կլպում էր այն և ուտում նարնջի նման: Էլ ոչ ոք, որքան գիտեի, գրեյպֆրութը չէր ուտում այդ ձևով: Կարո՞ղ էր մի աղջիկ, որն ակնկալվում էր, որ անցկացներ իր ողջ կյանքի ժամանակը և նույնիսկ հավերժությունը միասին, դիմանալ, նայելով իր ամուսնուն գրեյփֆրութը նարնջի նման ուտելիս…

[Իմ հինգը] վերջացնելուց հետո, նրա հերթն էր ասել այն բաները, որոնք նա չէր հավանում իմ մեջ: [Նա] ասաց. «Դեհ, ճիշտն ասած ես չեմ կարողանում հիշել որևէ բան, որ ես չեմ հավանում քո մեջ, սիրելիս»:

Զարմանքից ապշել էի:

Ես արագ մեջքով շրջվեցի, որովհետև չգիտեի թե ինչպես բացատրեի արցունքները, որոնցով լցվել էին աչքերս և հոսում էին դեմքիս վրայով»:

Քույր Ուոլթերսն ամփոփեց. «Երբ էլ որ լսում եմ ամուսնացած զույգերի անհամատեղելիության մասին, ես միշտ զարմանում եմ, թե արդյոք նրանք տառապում են նրանից, ինչը ես այժմ կոչում եմ Գրեյփֆրութի Սինդրոմ» (“The Grapefruit Syndrome,” *Ensign*, Apr. 1993, p. 13):

Այո, երբեմն, ավելի լավ է որոշ բաներ չասված թողնել:

Կենդանի պահեք ձեր սիրատածումը

5. Կենդանի պահեք ձեր սիրատածումը: Ժամանակ գտեք միասին ինչ որ բաներ անելու համար, հենց երկուսով: Ինչպես որ կարևոր է երեխաների հետ լինել որպես ընտանիք, դուք կարիք ունեք կանոնավոր ամենշաբաթյա մենակ ժամանակ անցկացնել միասին: Դա պլանավորելը թույլ կտա ձեր երեխաներին իմանալ, որ դուք ձեր ամուսնությունը այնքան կարևոր եք համարում, որ պետք է սնուցեք այն: Դա պահանջում է պարտավորվածություն, պլանավորում և գրաֆիկ:

Այն չպետք է թանկ լինի: Ամենակարևոր էլեմենտը միասին անցկացրած ժամանակն է:

Մի անգամ, երբ աներս լանչից հետո դուրս էր գալիս տնից՝ վերադառնալու դաշտ աշխատելու, զոքանչս ասաց. «Ալբերթ, հենց հիմա ետ արի այստեղ և ասա ինձ, որ սիրում ես ինձ»: Նա քմծիծաղ տվեց և կատակով ասաց. «Էլսի, երբ մենք ամուսնացանք, ես ասացի քեզ որ սիրում եմ քեզ, և եթե դա երբևէ փոխվի, ես քեզ իմաց կտամ»: Անհնարին է չափից դուրս շատ օգտագործել «Ես սիրում եմ քեզ» արտահայտությունը: Օգտագործեք այն ամեն օր:

Մի հապաղեք ասել«Ներիր»

6. Մի հապաղեք ասել «Ներիր»: Որքան էլ, դժվար լինի բառերը ձևակերպել, արագ ասեք. «Ներողություն, խնդրում եմ ներիր ինձ», չնայած միայն դուք չեք նա, ով լիովին մեղավոր է: Իսկական սերը զարգացվում է նրանց կողմից, ովքեր կամենում են պատրաստակամորեն ընդունել անձնական սխալները և վիրավորանքները:

Երբ տարաձայնություններ են առաջանում, դրանք քննարկել ու լուծել կարողանալը կարևոր է, բայց կան դեպքեր, երբ ավելի լավ է ժամանակ շահել: Ձեր լեզուն կծելը և մինչև տասը կամ, նույնիսկ, մինչև հարյուրը հաշվելը կարևոր է: Եվ երբեմն, նույնիսկ եթե թողնեք, որ արևը մայր մտնի ձեր զայրույթի վրա, առավոտը կօգնի ձեզ անդրադառնալ խնդրին ավելի հանգստացած, հանդարտ և լուծման համար ավելի լավ հնարավորությամբ:

Երբեմն մենք լսում ենք նման մի բան «Ինչո՞ւ մենք ամուսնացած ենք եղել հիսուն տարի, և երբեք տարաձայնություն չենք ունեցել»: Եթե դա տառացիորեն այդպես է եղել, ապա զույգերից մեկը ամբողջովին գերիշխել է մյուսին կամ ինչպես ինչ որ մեկն է ասել, անձանոթ է եղել ճշմարտությանը: Ամեն մի կրթված զույգ ունենում է կարծիքների տարաձայնություն: Մեր խնդիրը կայանում է նրանում, որ իմանանք, թե ինչպես լուծենք այն: Դա լավ ամուսնությունը ավելի լավը դարձնելու գործընթացի մասն է կազմում:

Ապրեք ձեր միջոցների սահմաններում

7. Սովորեք ապրել ձեր միջոցների սահմաններում: Ամուսնության մեջ ամենադժվար մարտահրավերներից մի քանիսն առաջանում են ֆինանսական հարցերում: «Ամերիկյան Դատարանի Ասոսիացիան….նշում է, որ ամուսնալուծությունների 89 տոկոսը կարելի է վերագրել փողի հետ կապված վեճերին և մեղադրանքներին» (Marvin J. Ashton, "One for the Money," *Ensign,* July 1975, p. 72): Պատրաստ եղեք հետաձգել կամ հրաժարվել որոշ գնումներից, որպեսզի մնաք ձեր բյուջեի սահմաններում: Առաջինը վճարեք ձեր տասանորդը և որքան որ հնարավոր է խուսափեք պարտքից: Հիշեք, որ ամսեկան հիսուն դոլար պակաս ծախսելը, քան դուք ստանում եք, հավասար է երջանկության, և հիսուն դոլար ավել ծախսելը հավասար է թշվառության: Կգա ժամանակ, երբ կհանեք մկրատը և ձեր կրեդիտ քարտերը և կկատարեք, ինչպես Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն է ասում, «պլաստիկ վիրահատություն» ("Things We Have Learned—Together," *Ensign,* June 1986, p. 30):

Բաշխեք տան և ընտանեկան պարտավորությունները

8. Եղեք ճշմարիտ զուգընկեր տան և ընտանեկան պարտավորություններում: Մի նմանվեք այն ամուսիններին, ովքեր նստում են տանը, սպասելով, որ ծառայեն իրենց, զգալով որ ապրուստը վաստակելը իր պարտքն է և որ իր կինը մենակ պատասխանատու է տան և երեխաներին հոգ տանելու համար: Տան և երեխաների համար հոգ տանելու խնդիրը միայն մեկ մարդու պարտականություն չէ:

Հիշեք որ այս ընկերակցությունում դուք միասին եք: Բարբարան և ես հայտնաբերել ենք, որ մենք կարող ենք հավաքել մեր անկողինը մեկ րոպեից ավելի քիչ ժամանակում ամեն առավոտ և դա արվում է ողջ օրվա համար: Նա ասում է, որ թույլ է տալիս, որ ես անեմ դա, որպեսզի ես լավ զգամ իմ արածի համար ողջ օրը և, կարծում եմ, որ գուցեև դա այդպես է:

Ժամանակ գտեք սուրբ գրությունները միասին ուսումնասիրելու համար և հետևեք Նախագահ Քիմբալի կողմից տրված այս խորհրդին. «Երբ ամուսինն ու կինը միասին հաճախ գնում են սուրբ տաճար, միասին ծնկի են իջնում աղոթքով իրենց տանը, ձեռք ձեռքի տված գնում են իրենց կրոնական ժողովներին, իրենց կյանքը լիովին մաքրաբարո պահում, մտավոր և ֆիզիկապես … և երկուսով միասին աշխատում Աստծո արքայությունը կառուցելու համար, ապա երջանկությունը իր գագաթնակետին է» (*Marriage and Divorce* [Salt Lake City: Deseret Book Co., 1976], p. 24):

Ամփոփում.

- Հիշեք ձեր ամուսնության հիմնական կարևորությունը:
- Աղոթեք դրա հաջողության համար:
- Լսեք:
- Խուսափեք «անդադար խայթելուց»:
- Պահեք ձեր սիրատածումը կենդանի:
- Մի հապաղեք ասել «Ներիր»:
- Սովորեք ապրել ձեր միջոցների սահմաններում:
- Եղեք ճշմարիտ զուգընկեր տանը ընտանեկան պարտավորություններում:

Ես վկայում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է, որ գերեզմանը դատարկ էր այն երրորդ օրը, և որ «ինչպէս Ադամով ամենը մեռնում են, այնպէս էլ Քրիստոսով ամենը կենդանանում են» (Ա Կորնթացիս ԺԵ.22): Այսպիսով Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանում կնքող զորության հանդեպ երախտագիտությամբ, մենք վստահորեն ասում ենք բանաստեղծի հետ. «Մահից հետո ես պիտի սիրեմ քեզ էլ ավելի շատ » (Elizabeth Barrett Browning, *Sonnets from the Portuguese,* no. 43, line 14): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆ ԳՏՆԵԼՈՒ ԲԱՆԱՁԵՎ `ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՎ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երեց Ռոբերտ Ի. Ուելս

Յոթանասունի Առաջին Քվորումից

Ensign, հուն. 1987, 60–62

Երբ երկու մարդիկ ապրում են միասին, նրանք ստիպված են ունենալ կարծիքների տարաձայնություն: Թյուրըմբռնումներ կարող են հեշտորեն առաջանալ գրեթե կյանքի բոլոր ոլորտներում՝ կարևոր և ոչ կարևոր, ինչպես օրինակ՝ երեխայի կարգապահության, տնարարության, ճաշի, փողի կառավարման, զարդարանքների, ռադիոկայանի և կինոֆիլմերի ընտրության և այլ հարցերում:

Քանի որ ինչ որ չափով մեզանից յուրաքանչյուրը մեր անցյալի միջավայրերի և փորձառությունների արդյունք է, բնական է, որ մենք երբեմն տարաձայնություններ ենք ունենում: Մարդիկ, ովքեր մեծացել են քաղաքում, որոշ բաներ անում են տարբեր ձևով, քաննրանք, ովքեր մեծացել են գյուղում: Մարդիկ աշխարհի մի մասում անում են ինչ որ բաներ տարբեր ձևով, քան նրանք, ովքեր գտնվում են մի այլ մասում: Տարբեր էթնիկ, կրթական, ֆինանսական ու կրոնական ծագումները ևս առաջացնում են տարաձայնություններ նրանում, թե ինչպես ենք մենք

վերաբերվում տարբեր հարցերի մանրամասներին: Գոյություն ունի նաև բնական տարբերություն արական և իգական տեսակետների միջև:

Բայց տարբեր լինելն անպայման չի նշանակում, որ մի անձնավորությունը ճիշտ է, իսկ մյուսը սխալ, կամ որ մեկ ուղին ավելի լավն է, քան մյուսը: Ամուսնության մեջ միասնությունը պահանջում է փոխզիջման պատրաստակամություն, փոխհարաբերությունը կարգավորելու պարտավորություն և կախվածություն Տիրոջից: Չնայած կարող է տարբերություն լինել կարծիքների, սովորույթների կամ նախադրյալների միջև, որ տղամարդիկ և կանայք կարող են ունենալ, «միավորելով իրենց սրտերը միությամբ ու սիրով մեկը մյուսի հանդեպ» (Մոսիա 18.21):

Եկեղեցին այսօր ունի ավելի քան երեսուն հազար միսիոներներ, սակայն լուրջ խնդիրներ զուգընկերների միջև համեմատաբար քիչ են: Պատճառը մասնավորապես մի գերազանց բանաձևի մեջ է, որը գտնվում է *Միսիոներական ձեռնարկում*, որը տրվել է բոլոր լիաժամկետ միսիոներներին: Ահա, թե այն ինչ է ասում.

«Ձեր զուգընկերոջ հետ հաղորդակցվել կարողանալը հիմնական քայլ է հաջող միսիոներ դառնալու համար: Ձեր զուգընկերոջ հետ անցկացրեք խորհրդակցություն: Սա մի ժողով է, որի ընթացքում քննարկում եք և նպատակներ դնում՝ ձեր աշխատանքի համար, ձեր ընկերական փոխհարաբերության և ձեր անձնական կյանքի վերաբերյալ…

Օգտագործեք այս ժամանակը՝ լուծելու համար զուգընկերոջ հետ ունեցած որևէ հակասություն, դրանք բացահատելով և միասին լուծելով» (pp. 25–26; stock no. PBMI4201):

Իհարկե միսիոներ զուգընկերները հաճախ անծանոթներ են կամ ընդամենը թեթև ծանոթներ, երբ նրանց հանձնարարվում է միասին աշխատել: Նույն սենյակում ապրողները ևս հաճախ անծանոթներ են կամ ընկերներ, ովքեր կարծում են, թե միմյանց լավ են ճանաչում: Բայց բարեբախտաբար ամուսնությունը սկսվում է շատ ավելի ուժեղ հիմքի վրա՝ երկու մարդկանցով, ովքեր բավականաչափ ժամանակ են ունեցել միմյանց լավ ճանաչելու համար:

Ինչպիսին էլ որ լինի իրավիճակը, միսիոներական խորհրդակցության հիմնական գաղափարները ուրվագծված են Վարդապետություն և Ուխտերի 6.19 հատվածում: «Խրատիր [քո զուգընկերոջը] իր սխալներում, և նաև, ընդունիր նրա խրատը: Եղիր համբերատար. եղիր լրջամիտ. եղիր ժուժկալ. ունեցիր համբերություն, հավատք, հույս և գթություն»: Հետևյալը մի քանի դիտարկումներ են, թե ինչպես կիրառել այս գաղափարները հատկապես ամուսնության մեջ:

Քննադատություն

Ամենադժվար բաներից մեկը, որի հետ ապրելը ամեն մի փոխհարաբերության մեջ դժվար է՝ քննադատությունն է, լինի իրական, թե ակնարկվող: Սակայն որոշ ամուսիններ և կանայք կտրուկ պահանջում են. «Ինչո՞ւ համար դու արեցիր այդ», կամ «Ես դա չէի անի այդ ձևով», կամ «Այնտեղ, որտեղից ես եմ, մենք դա չենք անում այդպես» կամ «Դա հիմար բան էր, որ ասեցիր»: Այսպիսի բացասական և ծակող բնույթի կրկնվող քննադատությունը կարող է մաշեցնել սիրո կապերը, մինչև որ ամուսնական միությունը թուլանում է և քայքայվում՝ երկու կողմերի համար էլ տխուր հետևանքներով:

Խիստ հաճախ քննադատությունը հարձակվում է քնքուշ, անպաշտպան զգացմունքների վրա: Երբ մենք քննադատում ենք, մենք ակնարկում ենք մեղադրանք, պախարակում, դատապարտություն, կշտամբանք և պարսավանք, և մենք դնում ենք մեզ որպես դատավորներ, կարծես մենք որակավորված ենք մատնացույց անելու ինչ որ մեկի սխալներն ու թուլությունները:

Որոշ մարդկանց համար սուր հարցերը կամ արագ առարկությունները սովորություն են: Քննադատությունը հումորի ձև է նրանց համար և նրանք բավականություն են ստանում իրենց բարձր զգալով, երբ տեսնում են ինչ որ մեկի նեղվածությունը: Սա ողբերգական, մեղսավոր վերաբերմունք է, որը պետք է փոխվի:

Խոսելով բացեիբաց

Ամեն մի ամուսնու և կնոջ քննարկման կառուցվածքը հիարկե ճկուն է: Այն կարող է լինել ինքնաբերաբար, տեղի ունենալով որտեղ որ դուք կամ ձեր զուգընկերը անհրաժեշտ է համարում: Կամ դուք կարող եք ծրագրել կանոնավորապես խորհրդակցություն անցկացնել ուղղակի հետևելու համար՝ միգուցե ամեն շաբաթ, ամեն ամիս կամ երեք ամիսը մեկ: Ոմանք գերադասում են անել դա խիստ ոչ պաշտոնական՝ նրանք քննարկում են այդ հարցերը մեքենա վարելով, երբ զբոսնում են, կամ երբ միասին ժամադրության են գնում: Մյուսները գերադասում են ավելի կառուցվածքային մոտեցում՝ բացիչ և փակիչ աղոթքներով, վերանայելով, թե գործերն ինչպես գնացին անցած շաբաթ (կամ ամիս), նայելով օրացույցին մոտակա միջոցառումների համար և քննարկելով անձնական և ամուսնուն ու կնոջը վերաբերող նպատակները:

Ինչպես էլ և երբ էլ որ այն անցկացվի, քննարկումը պետք է կենտրոնացած լինի միմյանց լսելու և հասկանալու, խնդիրները լուծելու և փոխհարաբերությունում տեղի ունեցող լավ բաներին սիրալիր աջակցություն ցույց տալու վրա:

Ես կառաջարկեի, որ դուք սկսեիք լավ բաներից: Սկսեք, արտահայտելով երախտագիտություն միմյանց հանդեպ և ձեր օրհնությունների համար: Ասեք ձեր կողակցին այն բաները, որոնց համար դուք ամենաշատն եք երախտապարտ, բաներ, որոնք դուք ամենաշատն եք հավանում նրա մեջ: Եղեք կոնկրետ: Նշեք մանրամասնորեն պահեր և դեպքեր, որոնք հստակորեն ցույց են տալիս այն լավ բաները, որոնք ձեր կողակիցն արել է: Եվ արտահայտեք երախտագիտության ձեր ազնիվ զգացումները և սերը: Փոխհարաբերությունները փթթում են դրական մտքերի, դրական խոսքերի, դրական գործերի վրա:

Երախտագիտության և շնորհակալության անկեղծ զգացումներով կիսվելուց հետո, դուք երևի զգաք, որ պատշաճ պահ է քննարկելու համար ձեր փոխհարաբերության մեջ եղած խափանումները կամ խնդիրները: Դա անելիս հիշեք Պողոսի խոսքերը. «Ամուսինը թող իր կնոջը ցույց տա պատշաճ սիրալիրություն և այնպես էլ կինն իր ամուսնուն» (Ա Կորնթ. Է.3): Ջերմությունը, նրբազգացությունը և հարգանքը պետք է լինեն գերիշխող զգացումները քննարկելու ժամանակ:

Ձեզանից մեկը գուցե սկսի, հարցնելով. «Ի՞նչ կարող եմ անել ավելի լավ ամուսին (կամ կին) լինելու համար»: Ապա մյուսը պատասխանում է բարությամբ՝ գաղափարներ տալով և առաջարկություններ անելով:

Երբ կիսվեք ձեր զգացումներով և ձեր կողակցին առաջարկություններ կատարեք, եղեք խոնարհ և ոչ սպառնալի: Մի կարծեք, որ դուք եք միշտ վիրավորված կողմը և որ ձեր զուգընկերը մեղավոր կողմն է: Հիշեք նաև, որ շատ իրավիճակներում, հարցը նրանում չէ, թե ով է ճիշտ և ով է սխալ, դա պարզապես միմյանց հասկանալու խնդիր է:

Ես կառաջարկեի, որ դուք խուսափեք սխալների ցուցակ գրելուց: Սա այն պահն է, երբ ավելի նրբանկատ կլինեք, եթե ապավինեք հիշողությանը, քան ընթերցեք գրված բազմաթիվ բողոքները: Մեկ այլ կանոն, որ դուք պետք է հաստատեք ձեզանից յուրաքանչյուրի համար, այն է, որ դուք պետք է սահմանափակեք առաջարկների թիվը այդ անգամ. առավելագույնը երկու կամ երեք առաջարկ: Այդ դեպքում փորձառությունն այնքան էլ ճնշող չի թվա:

Եթե դուք եք առաջարկություններ ստացողը, մի դարձեք պաշտպանողական: Խուսափեք մղումից ասել. «Մի քննադատիր: Դա շատ հաճախ չէ տեղի ունենում»: Խուսափեք ձեր մեղավորության համար ապացույց պահանջելու մղումից: «Ե՞րբ եմ երբևէ ասել այդ»: Ընդունեք, որ եթե դա բավականաչափ կարևոր է եղել ձեր զուգընկերոջ համար, որպեսզի նա ասի դա ձեզ, ուրեմն ինչ որ բան անհանգստացնում է նրան: Եվ խուսափեք նահատակի պատասխանից. «Դու չափից դուրս շատ ես ակնկալում»:

Երբ ձեր կողակիցն առաջարկում է մի ուղի, որով կարող եք բարելավվել, դուք կարող եք պատասխանել ասելով. «Դու ճիշտ ես: Ես պետք է հավաքեմ իմ կեղտոտ շորերը և ննջարանն ավելի մաքուր պահեմ: Խնդրում եմ ներես և խնդրում եմ հիշեցրու ինձ, երբ որ մոռանամ: Շնորհակալ եմ քո համբերության և օգնության համար»:

Ապա հարցրեք, թե էլ ինչ կարող եք անել ավելի լավ զուգընկեր լինելու համար, տալով ձեր ընկերակցին հնարավորություն բացահատելու այլ բաներ, որոնց մասին նա ուզում է խոսել քննարկման ժամանակ:

Այդ լրացուցիչ հարցերը քննարկելուց հետո դերերը փոխվում են: Ժամանակն է մյուս զուգընկերոջ համար վերցնել նախաձեռնությունը և առաջարկներ անել բարելավման համար:

Նպատակը *միմյանց զգացմունքները հասկանալն է*, ուրիշ մարդու տեսանկյունից իրերը տեսնելու և խնդիրները լուծելու համար ուղիներ քննարկելը:Կրկին, շատ դեպքերում, նշանակություն չունի, թե ով է ճիշտ կամ սխալ, հաճախ դա պարզապես տարբեր ավանդույթների և սովորույթների հարց է: Բայց այդ հարցերի մասին խոսելու և լուծումներ որոնելու ձեր պատրաստակամությունը մեծ չափով սեր և հարգանք է ցույց տալիս:

Հաճախ փոխզիջումն անհրաժեշտ է: Երբ մենք փոխզիջման ենք գնում, մենք պաշտպանում ենք զգացմունքները և հարգում տարբեր լինելու ուրիշի իրավունքը: Բայց հարցերը, որոնք *կարևոր են,* նշվում են և լուծվում:

Այսպիսով, եկեք վերանայենք այս ընթացակարգը, որն առաջարկվում է ձեր վերլուծության և հարմարվելու համար: Միմյանց նկատմամբ սեր և շնորհակալություն արտահայտելուց հետո, ձեր քննարկումը գուցե ընթանա հետևյալ ձևով.

Ամուսինը հարցնում է. «Սիրելիս, ինչ կարող եմ անել ավելի լավ ամուսին լինելու համար: Ազնիվ եղիր ինձ հետ: Ես իսկապես ուզում եմ իմանալ, թե ինչպես կարող եմ բարելավվել»:

Կնոջ բարությամբ տրված պատասխանը կարող է լինել այսպիսին. «Մի քանի փոքր բաներ կարող են օգտակար լինել: Օրինակ՝ գուցե դու չես էլ նկատել, բայց վերջերս հակաճառել ես ինձ կամ չես համաձայնվել ինձ հետ մի քանի անգամ երեխաների ներկայությամբ: Դա մեր տանը լավ մթնոլորտ չի ստեղծում և դա իսկապես շփոթեցնում է երեխաներին: Կարծում եմ, ավելի լավ կլիներ մեզ և նրանց համար, եթե մենք ավելի միաբանված լինեինք»:

Ամուսինը հավանաբար չկարծի էլ, որ իսկապես հանցավոր է դրանում: Բայց ոչ մի օգուտ չկա ընդհանրապես պաշտպանվելու և պահանջելու կոնկրետ օրինակներ

Իմաստությունը հուշում է, որ աղոթքը ամուսնության կարևոր մասն է կազմում:.

այն երեք անգամների համար, երբ նա արել է դա: Եթե նրա կինը մտածում է, որ դա բավականին կարևոր է նշելու համար, ամուսինը պետք է գիտակցի, որ բավականին կարևոր է իր համար փոխել իր վարքը:

Նա կարող է ասել. «Ցավում եմ, սիրելիս, ես կփորձեմ ուշադիր լինել: Եթե դու տեսնում ես այսպիսի իրավիճակ է ստեղծվում, խնդրում եմ օգնիր ինձ ազդանշան տալով, ինչպես օրինակ ասելով, որ մենք հնարավորություն դեռ չենք ունեցել միայնակ քննարկելու այդ թեման»:

Հաջորդը, կինը կարող է դիտողություն անել, որ իր ամուսինը չափազանց շատ է բարկանում զգայուն դստեր վրա իր ընկերոջ պատճառով: Կամ նա կարող է հիշեցնել նրան, որ ամենշաբաթյա ժամադրությունը, որ նա խոստացել էր որպես Նոր Տարվա որոշում, չի կայացել:

Այդ ժամանակ նրա հերթն է հարցնել. «Սիրելիս, ի՞նչ կարող եմ անել ավելի լավ կին լինելու համար»:

Նրա ամուսինը գուցե այդ դեպքում սիրով առաջարկի, որ նկատել է վերջերս կատարված մի քանի չբյուջեավորված գնումներ, և քաջալերի նրան վերահսկել գնելու մղումը: Կամ միգուցե նշի, որ ինքը նախընտրում է ձվածեղ՝ պինդ խաշած ձվի փոխարեն, նույնիսկ, եթե նա մի հոդված է կարդացել վերջերս, որը զգուշացնում է տապակած ուտելիքների դեմ:

Ամուսնու և կնոջ միջև միասնական կյանքի ընթացքում նորմալ է նման մանրամասնություններով քննարկումներ անցկացնելը: Մի քանիսը մեծ կարևորություն ունեն, մյուսները կարող են թվալ չնչին: Բայց բոլորը կարևոր են ամուսնու և կնոջ միջև ներդաշնակության համար:

Դիմելով Տիրոջը

Իմաստությունը հուշում է, որ աղոթքը ամուսնության կարևոր մասն է կազմում: Մենք պետք է որոնենք Տիրոջ օգնությունը միմյանց հասկանալու համար, լուծելով մարտահրավերները և հասնելով համապատասխան որոշումների՝ և այդ ամենը առանց պաշտպանվելու: Նույնիսկ ավելի կարևոր է, որ մենք որոնենք Նրա օգնությունը մեր վարքն ու մեր սրտերը փոխելու համար: Երբ մենք խնդրում ենք Տիրոջը փափկացնել մեր սրտերը միմյանց հանդեպ և երբ անկեղծորեն ապաշխարում ենք մեր թուլություններից, Նա կփոխի մեր սրտերը: Նա մեզ կշրջի եսասեր, դատարկ, աշխարհիկ վերաբերմունքից և կլցնի մեզ մաքուր Քրիստոսանման սիրով: Ոչ մի խոսակացության և հաղորդակցության ծավալ իրականում չի լուծի մեր տարաձայնությունները, մինչև մեր ամուսնությունները հիմնված չլինեն ավետարանական ճշմարիտ սկզբունքների վրա, ինչպես օրինակ՝ առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքի, ապաշխարության և հնազանդության վրա:

Երբ մենք մոտենում ենք Տիրոջը, Նա կարող է օգնել մեզ ավելի մոտենալ միմյանց: Միայն Նրա ողորմածության միջոցով մենք կարող ենք օրհնվել Քրիստոսանման սիրով, ունակությամբ «Սիրիր կնոջդ [կամ ամուսնուդ] քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի» (ՎԵՈՒ 42.22):

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Որոնելով ապահովության ուղի մարգարեների խորհրդում խելամիտ է նրանց համար, ովքեր ուժեղ հավատք ունեն:

—Երեց Հենրի Բ. Այրինգ

ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԳՏՆԵԼ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Երեց Հենրի Բ. Այրինգ

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, ապր. 1997, 31–35, կամ Ensign, մայիս 1997, 24–26

Փրկիչը կամենում է առաջնորդել մեզ դեպի ապահովություն

Փրկիչը միշտ պաշտպան է եղել նրանց, ովքեր կամեցել են ընդունել Նրա պաշտպանությունը: Նա մեկ անգամից ավելի է ասել. «Որքան հաճախ հավաքած կլինեի ես ձեզ, ինչպես հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին և դուք չկամեցաք» (3 Նեփի 10.5):

Տերն Իր նույն սուգն է արտահայտել մեր իսկ տնտեսությունում շատ ձևերով, որոնցով Նա կանչում է մեզ դեպի ապահովություն:

«Որքան հաճախ ես կանչեցի ձեզ, իմ ծառաների բերանով, և հրեշտակների սպասավորությամբ, և իմ իսկ բերանով, և որոտների ձայնով, և կայծակների ձայնով, և փոթորիկների ձայնով, և երկրաշարժերի ձայնով, և մեծ կարկտահողմերով, և սովերի ու ամեն տեսակի ժանտախտների ձայնով, և փողի բարձր հնչումով, և դատաստանի ձայնով, և ողորմության ձայնով՝ ողջ օրվա ընթացքում, և փառքի ու պատվի և հավերժական կյանքի հարստությունների ձայնով, և ձեզ փրկած կլինեի հավիտենական փրկությամբ, բայց դուք չկամեցաք» (ՎԱՈՒ 43.25):

Նա խորհուրդ է տալիս մեզ մարգարեների միջոցով

Թվում է, չկա վերջ մեզ դեպի ապահովություն առաջնորդելու Փրկչի ցանկությանը: Եվ կա կայունություն այն ձևում, որով Նա ցույց է տալիս մեզ արահետը: Նա կանչում է մեկից ավելի միջոցներով, որպեսզի Նրա ուղերձը հասնի նրանց, ովքեր կամենում են ընդունել այն: Եվ այդ միջոցներից է միշտ եղել Իր մարգարեների բերանով ուղերձ ուղարկելը, երբ որ ժողովուրդն արժանանում է ունենալ Աստծո մարգարեներին իրենց մեջ: Այդ լիազորված ծառաներին միշտ հանձնարարվում է նախազգուշացնել ժողովրդին, հաղորդելով նրանց ապահովության ուղին:

Երբ 1838 թվականի աշնանը հյուսիսային Միսսուրիում լարվածությունն ուժեղացավ , Մարգարե Ջոզեֆ Սմիթը կանչեց բոլոր Սրբերին հավաքվել Ֆար Ուեսթում պաշտպանության համար: Շատերը մեկուսացած ագարակներում էին կամ ցրված բնակավայրերում: Նա առանձնակի խորհուրդ տվեց Հակոբ Հոնին՝ Հոնի Ջրաղաց կոչվող մի փոքրիկ բնակավայրի հիմնադրին և ջրաղացի տիրոջը: Այդ ժամանակվա մի արձանագրություն ասում է. «Եղբայր Ջոզեֆը խոսք էր ուղարկել Հոնի հետ, որը ջրաղացի տերն էր, տեղեկացնելու եղբայրներին, ովքեր ապրում էին այնտեղ, թողնել և գալ Ֆար Ուեսթ, բայց Պր. Հոնը չէր հանձնել ուղերձը» (Philo Dibble, in "Early Scenes in Church History," in *Four Faith Promoting Classics* [1968], 90): Հետագայում Մարգարե Ջոզեֆը գրեց իր պատմության մեջ.«Մինչև այս օրը Աստված ինձ իմաստություն է տվել փրկելու ժողովրդին, ով խորհուրդ է ընդունում: Ոչ ոք երբևէ չի սպանվել, եթե [մնացել է] իմ խորհրդում» (*History of the Church,* 5:137): Ապա Մարգարեն գրել էր տխուր ճշմարտությունը, որ անմեղ կյանքեր կարող էին փրկվել Հոնի Ջրաղացում, եթե նրա խորհուրդը ստանային և դրան հետևեին:

Մեր իսկ ժամանակներում մենք նախազգուշացվել ենք խորհրդով, թե որտեղ գտնենք ապահովություն մեղքից և վշտից: Այդ նախազգուշացումները ճանաչելու ուղիներից մեկն այն է, որ դրանք կրկնվում են: Օրինակ այս գերագույն համաժողովներում մեկ անգամից ավելի ենք լսել, թե ինչպես մեր մարգարեն ասել է, որ նա մեջբերում կանի նախորդ մարգարեից և այդ պատճառով կլինի երկրորդ վկա և երբեմն նույնիսկ երրորդ: Մեզանից յուրաքանչյուրը լսել է Նախագահ [Սպենսեր Վ.] Քիմբալի խորհուրդը տանը մոր մնալու կարևորության մասին և ապա լսել Նախագահ [Էզրա Թաֆթ] Բենսոնին նրան մեջբերելիս, և լսել ենք Նախագահ [Գորդոն Բ.] Հինքլիին նրանց երկուսին մեջբերելիս: Պողոս Առաքյալը գրել է, որ «երկու եւ երեք վկաների բերանից ամեն բան կհաստատվի» (Բ Կորնթացիս ԺԳ.1): Ուղիներից մեկը, որով կարող ենք իմանալ, որ նախազգուշացումը Տիրոջից է, այն է, որ վկաների խոսքերը՝ լիազորված վկաների, օրենքն է հանդիսանում: Երբ մարգարեների խոսքերը

կրկնվող են թվում, դա պետք է գրավի մեր ուշադրությունը և լցնի մեր սրտերը երախտագիտությամբ՝ այսպիսի օրհնված ժամանակում ապրելու համար:

Հետևեք մարգարեին կամ ընտրեք այլ ազդեցություն

Մարգարեների խորհրդում ապահովություն որոնելը խելամիտ է նրանց համար, ովքեր հավատքով ուժեղ են: Երբ խոսում է մարգարեն, փոքր հավատքով մարդիկ մտածում են, որ նրանք ընդամենը լսում են իմաստուն մի մարդու, որը խորհուրդ է տալիս: Ուստի, եթե նրա խորհուրդը հարմար կամ խելամիտ է թվում, համընկնելով նրա հետ, ինչ իրենք են ուզում անել, նրանք ընդունում են այն: Եթե ոչ, նրանք դա համարում են կամ ոչ կարևոր կամ իրենց հանգամանքները արդարացնող գտնելով՝ իրենց բացառություն են համարում այդ խորհրդից: Նրանք, ովքեր առանց հավատքի են, կարող է մտածել, որ իրենք լսում են մարդկանց, ովքեր ձգտում են ազդեցություն գործադրել ինչ որ եսասիրական մտադրությամբ: Նրանք հավանական է ծաղրեն կամ ծանակեն, ինչպես արեց Կորիհոր անունով մի մարդ, այս խոսքերով, որոնք գրված են Մորմոնի Գրքում.

«Եվ այսպես, դուք մոլորեցնում եք այս ժողովրդին՝ ըստ ձեր հայրերի հիմար ավանդությունների, և ըստ ձեր սեփական ցանկությունների. և դուք պահում եք նրանց հնազանդության մեջ, ճիշտ կարծես ճորտության մեջ, որպեսզի դուք կարողանաք հագեցնել ձեզ նրանց ձեռքերի աշխատանքով, որպեսզի նրանք չհամարձակվեն վեր նայել համարձակությամբ, և որպեսզի նրանք չհամարձակվեն վայելել իրենց իրավունքներն ու արտոնությունները» (Ալմա 30.27):

Կորիհորը վիճում էր, ինչպես այն տղամարդիկ և կանայք էին վիճում կեղծավորաբար ժամանակի սկզբից ի վեր, որ Աստծո ծառաներից խորհուրդ վերցնելը նշանակում է հանձնել Աստծո կողմից տրված անկախության իրավունքները: Բայց փաստարկը կեղծ է, որովհետև այն սխալ է ներկայացնում իրականությունը: Երբ մենք մերժում ենք խորհուրդը, որը գալիս է Աստծուց, մենք չենք ընտրում անկախ լինել դրսի ազդեցությունից: Մենք ընտրում ենք այլ ազդեցություն: Մենք մերժում ենք կատարյալ սիրող, ամենակարող, ամենագետ Երկնային Հոր պաշտպանությունը, որի ողջ նպատակն է, ինչպես Իր Սիրելի Որդու, տալ մեզ հավերժական կյանք, տալ մեզ այն ամենն ինչ Նա ունի և կրկին մեզ տուն տանել ընտանիքներով Նրա սիրո բազուկների մեջ: Մերժելով Նրա խորհուրդը, մենք ընտրում ենք մեկ այլ ուժի ազդեցություն, որի նպատակն է մեզ դարձնել թշվառ և որի շարժառիթն է ատելությունը: Մենք ունենք բարոյական ազատ կամքը որպես Աստծո պարգև: Ավելի շուտ ազդեցությունից ազատ լինելն ընտրելու փոխարեն, մեր աստվածատուր իրավունքն է մեզ ենթարկել այդ ուժերից նրան, որը մենք ընտրենք:

Մեկ այլ մոլորություն է հավատալը, որ մարգարեների խորհուրդը ընդունելու կամ չընդունելու ընտրությունը ավելին չէ, քան որոշելը՝ ընդունել բարի խորհուրդ և ձեռք բերել արտոնություններ, թե մնալ որտեղ որ կանք: Բայց մարգարեական խորհուրդ չընդունելու ընտրությունը փոխում է հենց այն հողը, որի վրա մենք կանգնած ենք: Այն դառնում է ավելի վտանգավոր: Մարգարեական խորհուրդ չընդունելը նվազեցնում է ապագայում ոգեշնչված խորհուրդ ընդունելու մեր ուժը: Նոյին օգնել որոշելու լավագույն պահը առաջին անգամն էր, երբ նա խնդրեց: Դրանից հետո ամեն անգամ խնդրելու և յուրաքանչյուր անգամ արձագանքելու ձախողումը կնվազեցներ զգայունությունը Հոգու հանդեպ: Եվ այսպես ամեն անգամ նրա խնդրանքը պետք է որ ավելի հիմար թվար, մինչև որ անձրևը սկսվեց: Իսկ հետո խիստ ուշ էր:

> ***Մարգարեական խորհուրդը չընդունելը նվազեցնում է ապագայում ոգեշնչված խորհուրդ ընդունելու մեր ուժը:***

Ամեն անգամ իմ կյանքում, երբ ես ընտրել եմ հետաձգել ոգեշնչված խորհրդին հետևելը կամ որոշել եմ որ ես բացառություն եմ, ես հասկացել եմ, որ ինձ դրել եմ վնասակար ճանապարհին: Ամեն անգամ, երբ ես լսել եմ մարգարեների խորհուրդը, աղոթքով այն հաստատված զգալով, իսկ հետո հետևել դրան, զգում եմ որ շարժվել եմ դեպի անվտանգություն: Ճանապարհին ես զգում էի, որ ուղին պատրաստված է ինձ համար և խորթուբորթ տեղերը դարձվել են հարթ: Աստված առաջնորդել է ինձ դեպի ապահովություն՝ ուղով, որը պատրաստված էր սիրառատ հոգատարությամբ, երբեմն պատրաստված շատ վաղուց:

Նրանք, ովքեր ունեն Քահանայության բանալիները, առաջնորդում են մեզ դեպի ապահովություն

Մորմոնի Գրքի սկզբում պատմությունը Աստծո մի մարգարեի մասին է: Նա նաև ընտանիքի ղեկավար էր: Նա նախազգուշացվել էր Աստծո կողմից տանել նրանց, ում նա սիրում էր, դեպի ապահովություն: Լեքիի փորձառությունը մի օրինակ է նրա, թե ինչ է պատահում, երբ Աստված խորհուրդ է տալիս իր ծառաների միջոցով: Լեքիի ընտանիքից միայն նրանք, ովքեր հավատք ունեին, և նրանք, ովքեր ստանում էին հաստատող հայտնություն, տեսնում էին և վտանգը և ուղին դեպի անվտանգություն: Նրանց համար, ովքեր առանց հավատքի էին, տեղափոխությունը դեպի անապատ թվում էր ոչ միայն հիմարություն, այլ վտանգավոր: Բոլոր մարգարեների նման, Լեքին, մինչև իր մահվան օրը, փորձում էր ցույց տալ իր ընտանիքին, որտեղ էր գտնվում նրանց համար ապահովությունը:

Նա գիտեր, որ Փրկիչը պատասխանատվության է ենթարկում նրանց, ում Նա լիազորում է քահանայության բանալիները: Այդ բանալիների հետ գալիս է խորհուրդ տալու զորությունը, որը մեզ ցույց կտա ուղին դեպի անվտանգություն: Նրանք, ովքեր ունեն բանալիները պատասխանատու են նախազգուշացնելու, նույնիսկ եթե իրենց խորհուրդը չընդունվի: Բանալիները լիազորվում են վար իջնող գծով, որն անցնում է մարգարեից նրանց միջոցով, ովքեր պատասխանատու են անդամների ավելի փոքր խմբերի, ավելի ու ավելի մոտենալով ընտանիքներին և անհատներին: Սա ուղիներից մեկն է, թե ինչպես է Տերը դարձնում ցիցը անվտանգության տեղ: Օրինակ, ես նստած էի կնոջս հետ ծնողական մի ժողովում, որը կանչվել էր մեր եպիսկոպոսի կողմից, որը մեր հարևանն էր, որպեսզի նա նախազգուշացներ մեզ հոգևոր վտանգների մասին, որոնց դիմակայում են մեր երեխաները: Ես լսում էի նրան ավելի քան որպես իմ իմաստուն ընկերոջ ձայնը: Ես լսում է որպես բանալիներ կրող և իր պարտականությունները կատարող և մեզ՝ ծնողներիս գործելու պատասխանատվությունը փոխանցող Հիսուս Քրիստոսի ծառայի: Երբ մենք հարգում ենք քահանայության գծով բանալիները՝ ուշադրություն դարձնելով, մենք կապում ենք մեզ մի կենսակերպի, որը մեզ չի ձախողի ոչ մի փոթորկի ժամանակ:

Մեր Երկնային Հայրը սիրում է մեզ: Նա ուղարկեց Իր Միածին Որդուն լինելու մեր Փրկիչը: Նա գիտեր, որ մահկանացու կյանքում մենք լինելու էինք ահավոր վտանգի մեջ, ամենավատթարը՝ սոսկալի հակառակորդի կողմից գայթակղությունների մեջ: Սա է պատճառներից մեկը, թե ինչու է Փրկիչը տվել քահանայության բանալիներ, որպեսզի նրանք, ովքեր ականջ ունեն՝ լսելու և հավատք՝ հնազանդվելու, կարողանան գնալ ապահով վայրեր:

Խոնարհաբար ընդունեք խորհուրդը

Լսող ականջներ ունենալը պահանջում է համեստություն: Դուք հիշում եք Տիրոջ նախազգուշացումը Թոմաս Բ. Մարշին: Նա այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահն էր: Տերը գիտեր, որ Նախագահ Մարշը և Տասներկուսի նրա եղբայրները ստուգվելու էին: Նա խորհուրդ տվեց խորհուրդ վերցնելու վերաբերյալ: Տերն ասաց. «Եղիր խոնարհ. և Տերը՝ քո Աստվածը, ձեռքդ բռնած կառաջնորդի քեզ և կպատասխանի քո աղոթքներին» (ՎԵՈՒ 112.10):

Տերն ավելացրեց մի նախազգուշացում, որը կիրառելի է ամեն մեկի համար, ով հետևում է ապրող մարգարեին. «Մի բարձրացրեք ձեզ. մի ապստամբեք իմ ծառա Ջոզեֆի դեմ. Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ես նրա հետ եմ, և իմ ձեռքը պիտի լինի նրա վրա. և բանալիները, որոնք ես տվել եմ նրան, և նաև ձեզ, նրանից չեն վերցվի, մինչև ես չգամ» (ՎԵՈՒ 112.15):

Հետևեք խորհրդին ուրիշների ապահովության համար

Աստված խորհուրդ է առաջարկում ոչ միայն մեր իսկ ապահովության համար, այլ Իր մյուս զավակների ապահովության համար, որոնց մենք պետք է սիրենք: Կան մի քանի մխիթարություններ որոնք այնքան քաղցր են, երբ իմանում ենք, որ մենք Աստծո ձեռքում գործիք ենք եղել ինչ որ մեկ ուրիշին դեպի ապահովություն առաջնորդելու համար: Այդ օրհնությունը ընդհանրապես պահանջվում է հավատք՝ հետևելու խորհրդին, երբ այն դժվար է կատարել: Ռեդիք Նյուքոն Օլրեդը մի օրինակ է Եկեղեցու պատմությունից: Նա փրկարար ջոկատներից մեկից էր, որին Բրիգամ Յանգն ուղարկել էր բերելու Ուիլլի և Մարտին Ձեռնասայլերի Ընկերությունները: Երբ մի ահավոր փոթորիկ սկսվեց, Կապիտան Գրանտը՝ փրկարար ջոկատի կապիտանը, որոշեց թողնել սայլերից մի քանիսը Սուիթուոթեր գետի մոտ, ինքն առաջ ընթանալով գտնելու ձեռնասայլերի ընկերություններին: Ոռնացող ձնաբուքն ու կյանքին սպառնացող եղանակը, երկու մարդկանց, ովքեր թողվել էին ետևում՝ Սուիթուոթեր գետի մոտ, ստիպեցին մտածել, որ հիմարություն էր մնալը: Նրանք մտածեցին, որ ձեռնասայլերի ընկերությունները կամ ձմեռել էին ինչ որ մի վայրում կամ կործանվել էին: Նրանք որոշեցին վերադառնալՍոլթ Լեյքի հովիտ և փորձեցին ամենքին համոզել անել նույնը:

Ռեդիք Օլրեդը հրաժարվեց տեղից շարժվել: Բրիգամն ուղարկել էր նրան և նրա քահանայության առաջնորդն ասել էր, որ նա սպասեր այնտեղ: Մյուսները վերցրեցին մի քանի սայլեր, բոլորն անհրաժեշտ մթերքներով լցված, և ճամփա ընկան՝ ետ վերադառնալով: Նույնիսկ ավելի աղետալի, Սոլթ Լեյքից դուրս եկած յուրաքանչյուր սայլի, որին նրանք հանդիպում էին, նույնպես ետ էին ուղարկում: Նրանք ետ ուղարկեցին 77 սայլեր՝ վերադառնալով դեպի Լիթլ Մաունթին ողջ ճանապարհը, որտեղ Նախագահ Յանգն իմացավ, թե ինչ էր տեղի ունենում և նրանց նորից ետ ուղարկեց: Երբ Ուիլլի Ընկերությունը վերջապես հայտնաբերվեց և կատարեց այն սրտակեղեք վերելքը և անցավ Ռոքի Ռիջի վրայով, Ռեդիք Օլրեդն ու և նրա սայլերը սպասում էին նրանց (տես Rebecca Bartholomew and Leonard J. Arrington, *Rescue of the 1856 Handcart Companies* [1992], 29, 33–34.):

Այս համաժողովում դուք կլսեք ոգեշնչող խորհուրդ, օրինակ Եկեղեցու նոր անդամներին օգնության հասնելու վերաբերյալ: Նրանք, ովքեր Ռեդիք Նյուքոն Օլրեդի հավատքն ունեն, կշարունակեն օգնության ձեռք առաջարկել, նույնիսկ, երբ թվում է կարիք չկա կամ անարդյունք է: Նրանք կշարունակեն հետամուտ լինել: Երբ նոր անդամներից մի քանիսը հասնում են հոգևոր նվաղման կետին, նրանք այնտեղ կլինեն, առաջարկելով բարի խոսքեր և ընկերություն: Այդ ժամանակ նրանք կզգան այն նույն աստվածային հավանությունը, որ Եղբայր Օլրեդը զգաց, երբ տեսավ ձեռնասայլերով ռահվիրաներին, ովքեր մաքառում էին դեպի իրեն

մոտենալով, իմանալով, որ նա կկարողանար իրենց ապահովություն տալ, որովհետև նա հետևել էր խորհրդին, երբ դժվար էր այդ անելը:

Չնայած արձանագրությունը չի հավաստում այդ, ես համոզված եմ, որ Եղբայր Օլրեդը աղոթել էր, մինչ սպասում էր: Ես համոզված եմ, որ նրա աղոթքները պատասխանվել էին: Նա այն ժամանակ իմացավ, որ ամուր կանգնած մնալու խորհուրդը Աստծուց էր: Մենք պետք է աղոթենք դա իմանալու համար: Ես խոստանում եմ ձեզ այդպիսի հավատքով ասված աղոթքների պատասխաններ:

Համբերատար եղեք, երբ խորհուրդը, թվում է, չի կիրառվում

Երբեմն մենք կստանանք խորհուրդ, որը մենք չենք կարողանա հասկանալ կամ որը, թվում է, թե մեզ չի վերաբերում, նույնիսկ ուշադիր աղոթքից և մտածելուց հետո: Դեն մի նետեք խորհուրդը, այլ պինդ բռնեք այն: Եթե ինչ որ մեկը վստահել է ձեզ, ինչ թվում էր ոչ ավելին քան ավազ՝ խոստումով, որ այն ոսկի է պարունակում, դուք իմաստությամբ միաժամանակ պահեք այն ձեր ձեռքում, թեթևակի թափահարելով այն: Ամեն անգամ, երբ ես այդպես եմ վարվել մարգարեի խորհրդի հետ, որոշ ժամանակ անց ոսկու շողեր են հայտնվել և ես երախտապարտ եմ մնացել:

Մենք օրհնված ենք, ապրելով մի ժամանակ, երբ քահանյության բանալիները երկրի վրա են: Մենք օրհնված ենք, իմանալով, թե ուր նայել և ինչպես լսել այն ձայնը, որը կկատարի Տիրոջ խոստումը, որ Նա կհավաքի մեզ ապահովության մեջ: Ես աղոթում եմ ձեր և իմ համար, որ մենք խոնարհ սրտեր ունենանք, որ մենք լսենք, որ մենք աղոթենք, որ մենք սպասենք Տիրոջ ազատմանը, որը հաստատ կգա, եթե մենք հավատարիմ լինենք: Ես վկայում եմ, որ Աստված՝ մեր Երկնային Հայրն ապրում է և սիրում է մեզ: Նա է Եկեղեցու գլուխը և Նա մեր Փրկիչն է: Ես վկայում եմ, որ Գորդոն Բ. Հինքլին կրում է Աստծո քահանայության բոլոր բանալիները: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՆՈՒՅՆ ՍԵՌԻ ՀԱՆԴԵՊ ՀԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Սեռը հիմնական հատկանիշ է անձնավորության նախամահկանացու, մահկանացու և հավերժական ինքնության և նպատակի համար:

—Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ինչպիսի՞ն է ձեր Եկեղեցու վերաբերմունքը համասեռամոլության հանդեպ»:

«Առաջինը, մենք հավատում ենք, որ ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև կարգված է Աստծո կողմից: Մենք հավատում ենք, որ ամուսնությունը կարող է լինել հավերժական, Տիրոջ տանը հավիտենական քահանայության զորության գործադրման միջոցով:

Մարդիկ հետքրքրվում են մեր դիրքորոշմամբ այն մարդկանց հանդեպ, ովքեր իրենց, այսպես ասած, կոչում են առվամոլներ և լեզբիաններ: Մեր պատասխանն է, որ մենք սիրում ենք նրանց որպես Աստծո որդիներ և դուստրեր: Նրանք կարող է ունենում են հակումներ, որոնք հզոր են և որոնք գուցե դժվար է վերահսկել: Մարդկանց մեծ մասը ունենում են մեկ կամ մեկ այլ տեսակի հակումներ տարբեր ժամանակներում: Եթե նրանք չեն գործում այդ հակումների համաձայն, ապա նրանք կարող են առաջադիմել ինչպես բոլոր Եկեղեցու մյուս անդամներն են անում: Եթե նրանք խախտում են մաքրաբարոյության օրենքը և Եկեղեցու բարոյական չափանիշները, ապա նրանք ենթակա են Եկեղեցու պատժամիջոցներին ճիշտ ինչպես մյուսները:

Մենք ուզում ենք օգնել այդ մարդկանց, զորացնել նրանց, օժանդակել նրանց իրենց խնդիրներում և սատարել նրանց իրենց դժվարություններում: Բայց մենք չենք կարող անգործ կանգնել, եթե նրանք տրվում են անբարոյական գործունեության, եթե նրանք փորձում են խրախուսել և պաշտպանել և ապրել համասեռ ամուսնության վիճակում: Թույլ տալ այդպիսի բան կնշանակի թեթևամտորեն մոտենալ ամենալուրջ և ամենասրբազան Աստծո հրամանագրած ամուսնության հիմքերին և դրա հենց նպատակին՝ ընտանիքներ ստեղծելուն» (in Conference Report, Oct. 1998, 91; կամ *Ensign*, Nov. 1998, 71):

Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին

«Բոլոր մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր: Նախաերկրային, երկրային և հավերժական ինքնության և նպատակի համար սեռն անհատի հիմնական բնութագիրն է» (*Ensign*, Nov. 1995, 102):

ՆՈՒՅՆ ՍԵՌԻ ՀԱՆԴԵՊ ՀԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեց Դալլին Հ. Օուքս

Տասներկու Առաքյալների Քվորումից

Ensign, հոկտ. 1995, 7–14

Յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ գիտի, որ Աստված արգելել է ամուսնական կապից դուրս բոլոր սեռական հարաբերությունները: Մեծ մասը նաև տեղյակ են Փրկչի ուսմունքից, որ մեղսավոր է մարդու համար նայել և տենչալ կնոջ (տես Մատթ. Ե.28, ՎԱՈՒ 42.23, 63.16):

Կնոջ և տղամարդու միջև գրավչությունը պատվաստված է Աստծո կողմից ապահովելու մահկանացու կյանքի հարատևությունը և ամուսնուն և կնոջը բերելու մեկտեղ ընտանեական մթնոլորտի մեջ, որը նշանակված է նրա նպատակներն իրականացնելու համար, ներառյալ երեխաներ մեծացնելը: Ի տարբերություն սրա, ծննդաստեղծ զորությունների օգտագործման ժամանակ Աստծո պատվիրաններից շեղումները ծանր մեղքեր են: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է.

«Սեռական միությունը օրինական է ամուսնական կապի մեջ և եթե մասնակցում են ճիշտ մտադրությամբ հարգարժան է և սրբագործող: Բայց առանց ամուսնական կապի, սեռական կյանքով զբաղվելը այլասերող մեղք է, գարշելի Աստվածության աչքում»:[1]

Որոշ Վերջին Օրերի Սրբեր հանդիպում են խառնաշփոթության և ցավի, որն առաջանում է, երբ տղամարդը կամ կինը զբաղվում է սեռական կյանքով նույն սեռի անձնավորության հետ կամ նույնիսկ, երբ անձնավորությունը տարփալից զգացումներ ունի, ինչը կարող է տանել դեպի այդպիսի վարքագիծ: Ինչպե՞ս պետք է արձագանքեն Եկեղեցու առաջնորդները, ծնողները և Եկեղեցու մյուս անդամները, երբ

հանդիպում են կրոնական, զգացմունքային և ընտանեկան մարտահրավերների, որոնք ուղեկցում են այդպիսի վարքագծին կամ զգացմունքներին: Ի՞նչ ենք ասում երիտասարդ անձնավորությանը, որը տեղեկացնում է, որ նա հակվածություն ունի կամ տարփալից մտքեր կամ զգացմունքներ նույն սեռի անձանց հանդեպ: Ինչպե՞ս պետք է մենք արձագանքենք, երբ այդ անձնավորությունը հայտարարում է, որ նա համասեռամոլ է կամ լեզբիան, և որ գիտական փաստերը «վկայում են», որ նա «այդպես է ծնվել»: Ինչպե՞ս ենք արձագանքում, երբ մարդիկ, ովքեր չեն կիսում մեր տեսակետները, մեղադրում են մեզ անհանդուրժողական կամ անողորմ լինելու մեջ, երբ մենք պնդում ենք, որ տարփալից զգացմունքները նույն սեռին պատկանող անձի հանդեպ անկանոն են և այդ բնույթի որևէ սեռական վարքագիծ մեղսավոր է:

Ավետարանի վարդապետություններ

Այս հարցերի հանդեպ մեր վերաբերմունքը թելադրվում է ավետարանի վարդապետություններով, որոնք մենք գիտենք, որ ճշմարիտ են:

1. Աստված ստեղծել է մեզ «արու և էգ» (ՎԱՈՒ 20.18, Մովսես 2.27, Ծննդ. Ա.27): Այն ինչ մենք կոչում ենք սեռ մեր ծննդին նախորդող գոյության հիմնական հատկանիշն էր:[2]
2. Մահկանացու կյանքի նպատակը և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու առաքելությունն է՝ նախապատրաստել Աստծո որդիներին և դուստրերին իրենց ճակատագրի համար՝ նման դառնալու իրենց երկնային ծնողներին:
3. Մեր հավերժական ճակատագիրը՝ սելեստիալ արքայությունում վեհացումը, հնարավոր է դառնում միայն Հիսուս Քրիստոսի քավության միջոցով (որի միջոցով մենք դարձել ենք և կարող ենք մնալ «անմեղ Աստծո առջև» [ՎԱՈՒ 93.38]), և մատչելի է միայն այն տղամարդուն և կնոջը, ովքեր մտել են և հավատարիմ մնացել Աստծո տաճարում հավերժական ամուսնության ուխտերին (տես ՎԱՈՒ 131.1–4, 132):
4. Մեր Երկնային Հոր ողորմած ծրագրի միջոցով մարդիկ, ովքեր ուզում են անել այն, ինչը ճիշտ է, բայց ոչ իրենց սեփական մեղքով անկարող են ունենալ հավերժական ամուսնություն մահկանացու կյանքում, հնարավորություն կունենան արժանանալու հավերժական կյանքի մահկանացու կյանքին հաջորդող ժամանակամիջոցում, եթե պահեն Աստծո պատվիրանները և հավատարիմ մնան իրենց մկրտության և մյուս ուխտերին:[3]
5. Ի լրացում Քավության մաքրագործող ազդեցությանը, Աստված տվել է մեզ ազատ կամք՝ զորություն ընտրելու բարու (կյանքի արահետի) և չարի (հոգևոր մահի և կործանման արահետի միջև) [տես 2 Նեփի 2.27, Մովսես 4.3]: Չնայած մահկանացու պայմանները կարող են սահմանափակել մեր ազատությունը (ինչպես օրինակ սահմանափակելով մեր շարժունակությունը կամ որոշ դեպքերում գործելու մեր ուժը), երբ մենք հասնում ենք պատասխանատվության տարիքի կամ վիճակի (տես Մորոնի 8.5–12, ՎԱՈՒ 68.27, 101.78), ոչ մի մահկանացու կամ հոգևոր ուժ չի կարող զրկել մեզ մեր ազատ կամքից:
6. Մահկանացու կյանքի նպատակներից մեկն իրականացնելու համար, կարևոր է, որ մենք ստուգվենք ընդդիմության կողմից՝ տեսնելու, թե մենք կպահենք Աստծո պատվիրանները (տես 2 Նեփի 2.11, Աբր. 3.25–26): Այդ ընդդիմությունն ապահովելու համար՝ սատանային և նրա հետևորդներին թույլ է տրված փորձել մեզ՝ օգտագործելու մեր ազատ կամքը և չարն ընտրելու և մեղք գործելու ազատությունը:
7. Քանի որ սատանան ցանկանում է, որ «բոլոր մարդիկ լինեն թշվառ իրեն նման» (2 Նեփի 2.27), նրա ամենալարված ջանքերն ուղղված են քաջալերելու այն ընտրություններն ու գործողությունները, որոնք կխափանեն իր զավակների համար Աստծո ծրագիրը: Նա ձգտում է քայքայել անձնական պատասխանատվության սկզբունքները, համոզել մեզ սխալ օգտագործել մեր ծննդաստեղծ սրբազան զորությունները, արժանավոր տղամարդկանց և կանանց ամուսնանալու և երեխաներ ունենալու մտադրությունից ետ կանգնեցնել և խառնաշփոթության մատնել այն, ինչ նշանակում է պատկանել արական կամ իգական սեռի:
8. Այս բոլորով հանդերձ, դևը, որը մարմին չունի, ձգտում է համոզել մահկանացուներին փչացնել իրենց մարմինները «[ընտրելով] հավերժական մահ՝ համաձայն մարմնի կամքի…, որը դևի ոգուն զորություն է տալիս գերելու՝ դժոխք իջեցնելու [նրանց], որպեսզի նա իշխի [նրանց] վրա իր սեփական թագավորությունում» (2 Նեփի2.29):
9. Առաջին Նախագահությունը հայտարարել է, որ «տարբերություն կա [1] անբարոյական մտքերի և զգացմունքների և [2] անբարոյական այլասեռամոլ կամ որևէ համասեռամոլ վարքագծի միջև»:[4] Չնայած անբարոյական մտքերը այնքան լուրջ չեն, որքան անբարոյական վարքը, այդպիսի մտքերին նույնպես պետք է դիմադրել և ապաշխարել, որովհետև մենք գիտենք, որ «մեր մտքերը ևս կդատապարտեն մեզ» (Ալմա 12.14): Անբարոյական մտքերը (և ոչ այնքան լուրջ զգացմունքները, որոնք տանում են դեպի այդ) կարող են առաջ բերել վարվելակերպ, որը մեղսավոր է:
10. Իր զավակների հանդեպ Աստծո մեծ սիրո շնորհիվ, նույնիսկ ամենավատթար մեղավորները (կամ գրեթե նրանք բոլորը) ի վերջո կպարգևատրվեն, նշանակվելով որևէ փառքի արքայության:[5] Մարդիկ, ովքեր ապրել են լավ կյանքով և ստացել են փրկության արարողությունների մեծ մասը, բայց որոնցչի հաջողվել արժանանալ

վեհացման՝ հավերժական ամուսնության միջոցով, կփրկվեն սելեստիալ արքայության մի ավելի ցածր տեղում, որտեղ չկա հավերժական աճ (տես ՎԱՈՒ 131.1–4):

11. Մահկանացու կյանքի մարտահրավերների և ընտրությունների մեջ մենք բոլորս Փրկչի «իրար սիրեք» պատվիրանի ներքո ենք (Հովհ. ԺԵ.12, 17): Ինչպես Առաջին Նախագահությունն է ասել մի վերջին ուղերձում.

«Մեզ խնդրվել է լինել ավելի բարի միմյանց հանդեպ, ավելի քնքուշ և ներող: Մեզ խնդրվել է ավելի դանդաղ լինել բարկանալիս և ավելի արագ օգնելիս: Մեզ խնդրվել է ընկերության ձեռք մեկնել և դիմադրել վրեժի ձեռքին: Մենք կանչված ենք լինելու Քրիստոսի ճշմարիտ աշակերտները, սիրել միմյանց անկեղծ կարեկցանքով, քանի որ այդ ձևով սիրեց մեզ Քրիստոս»:[6]

Բարությունը, կարեկցանքը և սերը հզոր միջոցներ են մեզ զորացնելու, առանց մեր սեփական որևէ մեղքի մեզ վրա դրված ծանր բեռները կրելու և անելու այն, ինչ մենք գիտենք, որ ճիշտ է:

Վարդապետությունների և պարտականությունների կիրառում

Այս վարդապետությունները, պատվիրանները և պարտականությունները առաջնորդում են մեզ պատասխանելու այն հարցերին, որոնք ուղղվել էին մեզ ավելի վաղ այս հոդվածում:

Մեր վարդապետություններն ակնհայտորեն դատապարտում են նրանց, ովքեր զբաղվում են այսպես կոչված «առվամոլներին ծեծի ենթարկելուն», ֆիզիկական կամ խոսքով մարդկանց վրա հարձակվելուն, ովքեր համասեռամոլ կամ լեզբիան վարքի մեջ են ներքաշված:

Մենք պետք է կարեկցանք ցուց տանք այն անձանց, ովքեր տառապում են առողջական վատ վիճակից, ներառյալ նրանց, ովքեր վարակված են ՄԻԱՎ-ով կամ հիվանդ են ՁԻԱՀՈՎ (ովքեր հավանաբար և ոչ հավանաբար ձեռք են բերել իրենց հիվանդությունը սեռական հարաբերություններից): Մենք պետք է քաջալերենք այդպիսի մարդկանց մասնակցել Եկեղեցու միջոցառումներին:

Կիրառելով Առաջին Նախագահության պարզաբանումը, նույն սեռի հարաբերությունների հարցի վերաբերյալ, մենք պետք է տարբերակենք (1) համասեռամոլ (կամ լեզբիան) «մտքերի ու զգացմունքների» (որոնց պետք է դիմադրել և վերուղղել) և (2) «համասեռամոլ վարքի» միջև (որը լուրջ մեղք է):

Մենք պետք է նշենք, որ *համասեռամոլ*, *լեզբիան* և *առվամոլ* բառերը ածականներ են՝ նկարագրելու որոշակի մտքեր, զգացմունքներ կամ վարվելաձև: Մենք պետք է ձեռնպահ մնանք այս բառերը որպես գոյական օգտագործելուց, արտահայտելով որոշակի վիճակ կամ որոշակի մարդկանց: Մեր կրոնական վարդապետությունը թելադրում է այս օգտագործումը: Այս բառերը սխալ է օգտագործել արտահատելու *վիճակ*, որովհետև սա նշանակում է, որ մարդը դատապարտված է ծննդից ի վեր մի հանգամանքի, որից դուրս գալու ընտրություն չունի, ինչ վերաբերվում է սեռական *վարքի* խիստ կարևոր հարցին:

Զգացմունքներն այլ հարց են: Որոշ զգացմունքներ կան ի ծնե: Մյուսները կապված են մահկանացու փորձառությունների հետ: Այնուամենայնիվ այլ զգացմունքներ թվում է ձեռք են բերվում «բնության և դաստիարակության» փոխազդեցությունների կոմպլեքսից: Մեզանից բոլորն ունեն որոշ զգացումունքներ, որոնք մենք չենք ընտրել, բայց Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանում է մեզ, որ մենք դեռևս ունենք ուժ դիմադրելու և վերափոխելու մեր զգացմունքները (ինչպես պետք է) և համոզվելու, որ դրանք չեն տանում մեզ անպատշաճ մտքերի տեղ տալուն կամ մեղսավոր վարքով զբաղվելուն:

Տարբեր անձինք տարբեր ֆիզիկական հատկանիշներ և տարբեր տրամադրվածություններ ունեն, տարբեր ֆիզիկական և զգացմունքային լարումներ, որոնց մենք կարող ենք հանդիպել մեր մանկության և չափահաս միջավայրերում: Մենք չենք ընտրել այս անձնական տրամադրվածությունները ևս, բայց մենք իսկապես ընտրում ենք և հաշվետու կլինենք վերաբերմունքի, առաջնահերթությունների, վարքի և «կենսաոճի» համար, որոնցով մենք արդարացնում ենք մեզ:

Մեր ազատության և մեր ազատ կամքի միջև տարբերությունը կարևոր է այս հարցերի շուրջ մեր վարդապետական դիրքորոշման համար: Մեր ազատությունը կարող է սահմանափակվել մահկանացու կյանքի տարբեր պայմաններով, բայց ազատ կամքի Աստծո պարգևը չի կարող սահմանափակվել դրսի ուժերի կողմից, որովհետև դա Նրան մեր հաշվետու լինելու հիմքն է: Ազատության և ազատ կամքի միջև հակադրությունը կարող է ցույց տրվել վարկածային պրոգրեսիայի միջոցով՝ զգացմունքներից դեպի մտքեր, դեպի վարք, դեպի հակվածություն: Այս պրոգրեսիան կարելի է տեսնել տարբեր հարցերի հետ կապված, ինչպես օրինակ թղթախաղի և ծխախոտի ու ալկոհոլի օգտագործման:

Ճիշտ ինչպես որոշ մարդիկ ավելի զգայուն են, քան մյուսները, որոշ մարդիկ, թվում է, հատկապես դյուրազգաց են որոշակի գործողությունների, արձագանքների կամ հակումների հանդեպ: Մի գուցե այդպիսի տրամադրվածությունը ի ծնե է, կամ առանց հատուկ միտման ձեռքբերովի, ինչպես Պողոս Առաքյալի անանուն տկարությունը. «Մարմնիս համար խայթ տրվեցավ ինձ՝ սատանայի հրեշտակ, որ ինձ բռունցքով ծեծե, որ չգոռոզանամ» (Բ Կորնթ. ԺԲ.7): Մի մարդ կարող է զգացմունքներ ունենալ, որոնք ձգում են նրան դեպի թղթախաղը, բայց ի տարբերություն նրանց, ովքեր մակերեսորեն են զբաղվում, նա անպայման դառնում է խաղամոլ: Մեկ այլ անձնավորություն կարող է ունենալ

հակում ծխախոտի հանդեպ և տրամադրվածություն դրանից հակվածություն ձեռք բերելու: Սակայն մեկ ուրիշը կարող է ունենալ անսովոր հակում դեպի ալկոհոլը և թուլություն պատրաստակամորեն առաջ մղվելու դեպի հարբեցողություն: Այլ օրինակներ կարող են լինել տաքարյունությունը, կռվարարությունը, ցանկասիրությունը և այլն:

Յուրաքանչյուր դեպքում (և մյուս օրինակներում, որոնք կարող են տրվել) զգացմունքները կամ այլ հատկություններ, որոնք մեծացնում են տրամադրվածությունը մինչև որոշակի վարքի, կարող են ունենալ որոշ կապ ժառանգականության հետ: Բայց կապը, հավանաբար, շատ բարդ է: Ժառանգական տարրը կարող է լինել ոչ ավելի, քան աճող հավանականություն, որ անձնավորությունը ձեռք կբերի որոշակի զգացմունքներ, եթե նա հանդիպի որոշակի ազդեցությունների մանկության վաղ տարիների ընթացքում: Բայց անկախ մեր տարբեր տրամադրվածություններից և խոցելիությունից, որոնք ներկայացնում են ընդամենը մեր մահկանացու ազատության տարբերակումները, (մենք «ազատ ենք ըստ մարմնի» միայն մահկանացու կյանքում [2 Նեփի 2.27]), մենք պատասխանատու ենք մնում մեր ազատ կամքի գործադրման համար մեր մտքերում, որոնց թույլ ենք տալիս, որ զբաղեցնեն մեզ, և այն վարքում, որն ընտրում ենք: Ես քննարկել եմ այս հակադրությունը այն ելույթում, որ ունեցա Բրիգամ Յանգի Համալսարանում մի քանի տարի առաջ:

Մենք պետք է սովորենք ապրել այնպես, որպեսզի որևէ թուլություն, որը մահկանացու է, չխոչընդոտի մեզ հասնելու նպատակին, որը հավերժական է:

Մեզանից շատերը ծնվում են [կամ զարգացնում] խայթեր մարմնում, մի քանիսն ավելի տեսանելի, մի քանիսն էլ ավելի լուրջ, քան մյուսները: Մենք բոլորս, թվում է, ունենք տրամադրվածություն այս կամ այն տեսակի խանգարման հանդեպ, բայց ինչպիսին էլ լինի մեր տրամադրվածությունը, մենք ունենք կամք և ուժ վերահսկելու մեր մտքերն ու մեր գործողությունները: Սա պետք է լինի այդպես: Աստված ասել է, որ Նա մեզ հաշվետու է դարձնելու նրա համար, ինչ մենք անում ենք և ինչ մտածում ենք, այսպիսով մեր մտքերը և գործողությունները պետք է վերահսկելի լինեն մեր ազատ կամքի միջոցով: Երբ հասնում ենք հաշվետու լինելու տարիքի կամ վիճակի, պնդումը «ես այսպես եմ ծնվել» չի արդարացնում գործողությունները կամ մտքերը, որոնք չեն համապատասխանում Աստծո պատվիրաններին: Մենք պետք է սովորենք ապրել այնպես, որպեսզի թուլությունները, որոնք մահկանացու են, մեզ չխանգարեն հասնելու նպատակին, որը հավերժական է:

«Աստված խոստացել է, որ կսրբագործի մեր չարչարանքները մեր օգտի համար» (տես 2 Նեփի 2.2): Ջանքերը, որոնք մենք գործադրում ենք հաղթահարելու համար ամեն մի ժառանգական [կամ ձեռքբերովի] թուլություն, կառուցում են հոգևոր ուժ, որը կծառայի մեզ ողջ հավերժության ընթացքում: Այսպիսով, երբ Պողոսը երեք անգամ աղոթեց, որ «մարմնում իր խայթը» հեռանար իրենից, Տերը պատասխանեց. «Բավական է քեզ իմ շնորհքը, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է կատարվում»: Հնազանդ Պողոսը եզրակացրեց.

«Արդ ավելի հոժարությամբ իմ տկարություններովը կպարծենամ, որ Քրիստոսի զորությունը բնակվե ինձանում:

Վասնորոյ հավանել եմ տկարությունների, թշնամանքների, վշտերի, հալածանքների, և նեղությունների Քրիստոսի համար. որ երբոր տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ» (2 Կորնթ. ԺԲ.9–10):

«Ինչպիսին էլ որ լինեն մեր տրամադրվածությունը կամ կանխատրամադրվածությունները [զգացմունքները], դրանք չեն կարող հանգեցնել մեզ հավերժական հետևանքների, մինչև մենք չօգտագործենք մեր ազատ կամքը՝ անելով կամ մտածելով Աստծո պատվիրաններով արգելված բաները: Օրինակ, ալկոհոլի հանդեպ տրամադրվածությունը թուլացնում է ազատությունը՝ խմել առանց հակում ձեռք բերելու, բայց ազատ կամքը թույլ է տալիս զսպել և այսպիսով խուսափել ալկոհոլից՝ ֆիզիկական թուլացումից և հակվածության հետևանքով հոգևոր վատթարացումից:

…Զգուշացեք այն պատճառաբանությունից, թե քանի որ մարդը ուժեղ մղում ունի դեպի որոշակի գործողություն, նա ուժ չունի ընտրության և հետևաբար պատասխանատվություն չունի իր գործողությունների համար: Այս գաղափարը հակառակ է Հիսուս Քրիստոսի ավետարանի ամենահիմնական նախադրյալներին:

Սատանան ուզում է, որ մենք հավատանք, որ մենք պատասխանատու չենք այս կյանքում: Դա էր այն արդյունքը, որին նա փորձեց հասնել իր մրցակցությամբ նախագոյության ժամանակ: Մարդը, որը պնդում է, որ նա պատասխանատու չէ՝ իր ազատ կամքի օգտագործման համար, որովհետև «նա այդպես է ծնվել», փորձում է անտեսել Երկնքում տեղի ունեցած Պատերազմի հետևանքը: Մենք պատասխանատու *ենք*, և եթե մենք պնդում ենք հակառակը, մեր ջանքերը դառնում են հակառակորդի ջանքերի քարոզում:

Անձնական պատասխանատվությունը կյանքի օրենքն է: Այն վերաբերում է ինչպես մարդկային օրենքներին, այնպես էլ Աստծո օրենքին: Հասարակությունը մարդկանց պատասխանատու է դարձնում իրենց ներքին մղումների վերահսկողության համար, որպեսզի մենք կարողանանք ապրել քաղաքակիրթ հասարակության մեջ: Աստված Իր զավակներին պատասխանատվության է ենթարկում վերահսկելու իրենց ներքին մղումները, որպեսզի նրանք

կարողանան պահել Իր պատվիրանները և իրականացնել իրենց հավերժական ճակատագիրը: Օրենքը չի ներում անզուսպ մարդուն, որը հանձնվում է ատրճանակի ձգանը իրեն տանջողի վրա քաշելու իր ներքին մղմանը , կամ ագահ մարդուն, որն անձնատուր է լինում գողանալու իր ներքին մղմանը, կամ էլ մանկապղծողին, որը հանձնվում է իր ներքին մղմանը բավարարելու իր սեռական պահանջները երեխաների հետ…

Կան շատ բաներ մեր մարմնում, որոնց ազատության չափի մասին մենք չգիտենք՝ տարբեր խայթեր, որոնք մեզ չարչարում են կյանքում: Բայց այսքանը մենք իսկապես գիտենք. մենք *բոլորս* ունենք մեր ազատ կամքը և Աստված հաշվետու է պահում մեզ նրա համար, թե ինչպես ենք օգտագործում դա մեր մտքում և գործերում: Սա սկզբունքային է»:[7]

Գիտական մոտեցումներ

Ի հակադրություն մեր վարդապետական մոտեցման, շատ անձինք մոտենում են նույն սեռի հանդեպ հակվածությանը սոսկ ժամանակակից գիտության տեսանկյունից: Չնայած ես որակավորված չեմ որպես գիտնական, բայց գիտական գրականության օգնությամբ և գիտնականների և մասնագիտական պրակտիկայով զբաղվող բժիշկների խորհրդով, կփորձեմ հերքել ոմանց պնդումը, որ գիտական հայտնագործությունները ցույց են տալիս, որ իրենց առվամոլներ և լեզբիաններ համարողները «այդպես են ծնվել»:

Մենք ապրում ենք մարդկային մարմնի վերաբերյալ բուռն գիտական հայտնագործությունների ժամանակաշրջանում: Մենք գիտենք, որ մեր ժառանգականությամբ են բացատրվում մեր շատ ֆիզիկական հատկանիշներ: Միևնույն ժամանակ, մենք նաև գիտենք, որ մեր վարքագիծը խորապես ներգործվում է հոգեբանական գործոններից, ինչպես օրինակ ծնողական և քույր, եղբայր հարաբերություններից (հատկապես կազմաձևավորման տարիներին) և այն մշակույթից, որում մենք ապրում ենք: Վեճն այն մասին, թե որքանով է որոշակի վարքագիծը հանդիսանում «բնության» կամ «դաստիարակության» հետևանք, դարավոր պատմություն ունի: Դրա կիրառումը նույն սեռի հանդեպ զգացմունքների և վարքագծի հարցում միայն մեկ դրսևորում է չափազանց բարդ մի թեմայի, որի շուրջ գիտական միտքը դեռ գտնվում է իր զարգացման վաղ շրջանում:

Որոշ գիտնականներ հերքում են, որ ժառանգականությունն ազդում է այդ վարքագծի վրա:[8] Մյուսները փաստերի և տեսությունների կողմնակիցներ են, ենթադրելով, որ «սեռական կողմնորոշման վրա ժառանգականության ազդեցության վերաբերյալ էական ապացույցներ կան»:[9]

Մենք իհարկե տեղյակ ենք փաստերից, որ ժառանգականությամբ է բացատրում որոշակի հիվանդությունների՝ ինչպես օրինակ որոշ տեսակի քաղցկեղերի, շաքարախտի հանդեպ նախահակվածությունը: Կան նաև տեսություններ և որոշ փաստեր, որ տարբեր վարքագծային խանգարումների համար նախահակվածության գործոն է հանդիսանում ժառանգականությունը, ինչպիսիք են՝ ագրեսիան, ալկոհոլիզմը և գիրությունը: Հիպոթեզ առաջ քաշելը, որ ժառանգականությունը սեռական կողմնորոշման համար դեր է խաղում, հեշտ է: Այնուամենայնիվ, կարևոր է հիշել, թե ինչպես ընդունեցին այդ մոտեցումը երկու կողմնակիցներ. «Էական ժառանգականության տեսակետը չպետք է խառնել անխուսափելի ժառանագականության տեսակետի հետ… Հավանաբար, մեխանիզմների մեծ մասը ներառում են օրգանական նախահակվածության և միջավայրի պայմանների միջև գոյություն ունեցող փոխազդեցություններ»:[10]

Ինչպիսին էլ որ լինի յուրաքանչյուր գիտնականի կարծիքը՝ սեռական կողմնորոշման կենսաբանական պայմանավորվածության լիակատար հերքումից մինչև լիակատար համաձայնություն, գիտնականների մեծ մասն ընդունում է, որ ներկա փաստերը անբավարար են, և որ վերջնական եզրակացությունների համար անհրաժեշտ է անցկացնել բազմաթիվ լրացուցիչ գիտական ուսումնասիրություններ:

Նույն ձվաբջիջից ծնված հիսունվեց արական սեռի երկվորյակների ուսումնասիրությունը, որոնցից մեկ երկորյակ իրեն դասեց որպես «առվամոլ», տեղեկացնում է, որ երկվորյակների մյուս անդամների 52 տոկոսը իրենց ևս դասեցին որպես առվամոլ:[11]Միևնույն ձվից ծնված իգական սեռի երկվորյակների մի ուսումնասիրություն ցույց տվեց երկվորյակների մյուս անդամների մոտ մոտավորպես միևնույն տոկոսային հարաբերությունը, ովքեր դասեցին իրենց որպես առվամոլ (յոթանասունմեկ զույգերից երեսունչորսը, այսինքն 48 տոկոս):[12] Եթե այս ուսումնասիրությունները ցույց են տալիս որոշ ժառանգական ազդեցություն այն բանի վերաբերյալ, թե ինչն է ստիպում տղամարդուն կամ կնոջը դասել իրենց որպես համասեռամոլ, պարզ է, որ այս ազդեցությունը վճռորոշ չէ: Ինչպես մի հանրաճանաչ գիտնական է նկատել. «Նույնիսկ եթե նույն ձվից ծնված երկվորյակից մեկն իրեն առվամոլ է համարում, մյուսն ունի 50 տոկոս կամ ավելի բարձր հավանականություն լինելու նորմալ կողմնորշմամբ, չնայած նա ունի ճիշտ նույն գեները և դաստիարակվել է նույն ծնողների կողմից»:[13] Մենք պետք է նաև ուշադրություն դարձնենք, որ այս ուսումնասիրությունների արդյունքները (և ստորև մյուս նկարագրվածները) հիմնված են ինքնադասակարգման նյութի վրա, որը խախուտ հիմք է գիտական եզրակացությունների համար, երբ «դեռ չկա համասեռամոլության համաշխարհային ընդունված սահմանում՝ գործնական և պրակտիկ գիտնականների կողմից, մի կողմ թողած դրա ծագման վերաբերյալ տեսությունը »:[14]

Ցանկացած ասպարեզում գիտելիքի երևան եկող ապացույցների նոր աղբյուրները միշտ ողջունելի են: 1993թվականի հուլիսին Դոկտոր Դին Համերը համաշխարհային

սենսացիա առաջացրեց, երբ հայտարարեց, որ գտել էր «վիճակագրական առումով կարևոր կապ գենետիկական մարկերների [ԴՆԹ-ի տարբերիչ շերտ] քրոմոսոմային հատվածի Xq28-ի և սեռական կողմնորոշում ունեցող ընտրված խմբի….համասեռամոլ տղամարդկանց և նրանց 18 տարեկանից բարձր ազգականների միջև»:[15] Այլ խոսքով ասած, «երևում է, որ Xq28-ը պարունակում է մի գեն, որը նպաստում է արական սեռի համասեռամոլ կողմնորոշմանը»: Իր հայտնագործության վերաբերյալ առավել ճշգրիտ մեկնաբանություն անելով, Դոկտոր Համերն իր հաջորդ գրքում եզրակացնում է.

«Մենք կարող ենք ընդամենը գիտական ենթադրություններ կատարել ընդհանուր բնակչության մեջ Xq28-ի կարևորության վերաբերյալ: Ամենաբարձր հավանականությամբ, այս հատվածի հետ «կապված» առվամոլ եղբայրների և քույրերի խստորեն ընտրված մեր խմբի ուսումնասիրության տոկոսային հարաբերությունից ելնելով, Xq28 հատվածը հնարավոր է չկարողանա ազդել 67տոկոսից ավել առվամոլ տղամարդկանց վրա: Ըստ նվազագույն հավանականության, եթե համասեռամոլության մեծ մասն առաջանում է միջավայրային գործոնների ազդեցության տակ կամ բազմաթիվ փոխներգործող գեներից, Xq28-ը սեռական կողմնորոշման հարցում քիչ տոկոսով տղամարդկանց մոտ կարող է փոփոխություն առաջացնել: Եթե վերցնենք միջին հավանականությամբ առկա երկրորդակի և ընտանեկան ուսումնասիրությունների տվյալները, պարզվում է, որ Xq28-ը կարող է որոշ դեր խաղալ մոտավորապես 5-30 տոկոս առվամոլ տղամարդկանց մոտ: Այս գնահատականների լայն ամպլիտուդան ապացույց է, որ դեռ հսկայական աշխատանք է մնում անելու»:[16]

Այն միտքը, որ «խաղում է որոշ դեր մոտավորապես 5-30 տոկոս» իրենց «առվամոլ» համարող տղամարդկանց մոտ, անշուշտ անկարող է արդարացնել այն պնդումը, որ գիտությունը ցույց է տվել, որ «համասեռամոլությունը» «առաջանում է» գենետիկ ժառանգության պատճառով: Մի ականավոր գիտնական հաստատեց տարակուսանքներից երկուսը.

«Մինչև այժմ, ի՞նչ ներքին կենսաբանական հատկանիշների վերաբերյալ փաստեր գոյություն ունեն, որոնք առաջացնում են համասեռամոլությունը որպես արատ»…. Գենետիկական հետազոտությունների հաստատման փորձերը, վկայելով, որ համասեռամոլությունը ժառանգական է, չեն հստակեցնում ոչ այն, թե ինչ է ժառանգվում, ոչ էլ այն, թե ինչպես է այն ազդում սեռական կողմնորոշման վրա»:[17]

Մարդկային սեռական կողմնորշման կենսաբանական տեսությունների իրենց տպավորիչ վերգնահատման մեջ, Կոլումբիայի Համալսարանի հոգեբանության ֆակուլտետից Դոկտոր Բայնը և Դոկտոր Փարսոնը առաջարկում են այս կարևոր զգուշացումներն ու առաջարկները.

«Խիստ կարևոր է, որ բժիշկներն ու վարքագծի փորձագետները սկսեն ընդունել սեռական կողմնորոշման բարդությունները և դիմադրեն պարզունակ հոգեբանական և կենսաբանական բացատրություններ որոնելու մղմանը:

Սեռական կողմնորոշման ծագման տեսությունների մեծ մասում նկատելիորեն բացակայում է անհատի ինքնությունը ձևավորվելիս անձնավորության ակտիվ դերը … Մենք առաջարկում ենք փոխներգործությունների մոդելը, որում գեները կամ հորմոնները չեն հատկորոշում սեռական կողմնորոշումը, այլ ընդհակառակը նպաստում են անձնական առանձնահատուկ հատկանիշների ձևավորմանը և դրա միջոցով ազդում այն ձևի վրա, որով անձնավորությունը և նրա միջավայրը փոխներգործում են, ձևավորելով սեռական կողմնորոշում, և սկսում են զարգացնել անհատականության այլ առանձնահատկություններ»:[18]

Այս դիտարկումը լինելով գիտնականների կողմից բազմաթիվ առաջարկներից մեկը, առանձնապես համոզիչ է, որովհետև այն հաշվի է առնում անձնական ընտրության տարրը, որը մենք գիտենք, որ մեր մահկանացու վիճակի ճշմարիտ սկզբունքներից է:

Եկեղեցու պաշտոնյաների և անդամների պարտականությունները

Մաքրաբարոյության օրենքի վերաբերյալ 1991 թվականի նոյեմբերի 14-ի նամակում Առաջին Նախագահությունը հայտարարել է. «Սեռական հարաբերությունները պատշաճ են միայն ամուսնու և կնոջ միջև համապատասխանորեն արտահայտվելով ամուսնության կապերի մեջ: Որևէ այլ սեռական կապ, ներառյալ պոռնկությունը, շնությունը և համասեռամոլությունը և լեզբիան վարքը, մեղսավոր են»:

Այդ հրահանգի համաձայն, Եկեղեցու պաշտոնյաները պատասխանատու են օրինազանցներին ապաշխարության կանչել և հիշեցնել նրանց Սամուել մարգարեի ուսուցանած սկզբունքը ամբարիշտ Նեփիացիներին. «Դուք փնտրել եք ձեր կյանքի բոլոր օրերում այն, ինչը դուք չէիք կարող ձեռք բերել. և դուք փնտրել եք երջանկություն անօրինություն անելու մեջ, մի բան, որը հակառակ է այն արդարության էությանը, որը մեր մեծ ու Հավերժական Գլխավորի մեջ է» (Հել. 13.38):

Մարդիկ չեն կարող շարունակել մնալ լուրջ մեղքի մեջ և մնալ Եկեղեցու անդամներ: Եվ պատժամիջոցներ կարող են տրվել՝ ուրիշներին մեղք գործելու քաջալերելու համար: Չկան պատժամիջոցներ անպատշաճ մտքերի կամ զգացմունքների համար (չնայած քաջալերվում է ուղղել դրանք), բայց կան հետևանքներ վարքի համար: Նույն քարոզում, որում Նա ուսուցանեց, որ մարդիկ չպետք է «դուրս գցվեն», Փրկիչը պատվիրեց Իր ծառաներին. «Դուք չպետք է թույլ տաք որևէ մեկին գիտակցաբար անարժանորեն ճաշակել իմ մարմնից ու արյունից…, ուստի, եթե

դուք գիտեք, որ որևէ մարդ անարժան է… դուք պետք է արգելեք նրան» (3 Նեփի 18.28–29): Փրկիչը նաև պատվիրեց. «Բայց եթե նա չի ապաշխարում, նա չպետք է համարվի իմ ժողովրդի թվում, որ նա չկարողանա կործանել իմ ժողովրդին» (հ. 31, տես նաև Մոսիա 26.36, Ալմա 5.56–61): Հետևաբար, եթե օրինազանցները չեն արձագանքում ապաշխարության կոչերին, Եկեղեցու հոտի հովիվները պետք է պատժամիջոցներ ձեռք առնեն, կատարելով Աստծո կողմից տրված իրենց պարտականությունները:

Միևնույն ժամանակ մենք պետք է միշտ զանազանենք մեղսավոր *գործերի* և անպատշաճ *զգացմունքների* կամ հնարավոր վտանգավոր *տրամադրվածությունների* միջև: Մենք պետք է սիրով օգնության հասնենք նրանց, ովքեր մաքառում են գայթակղությանը դիմադրելու համար: Առաջին Նախագահությունն արեց այս 1991 թվականի նոյեմբերի 14-ի իր նամակում: «Պոռնկության, շնության, և համասեռամոլ և լեզբիան վարքի» մեղսավոր բնույթը վերահաստատելուց հետո, Նախագահությունն ավելացրեց.

«Անձնավորությունները և նրանց ընտանիքները, ովքեր օգնության կարիք ունեն այս հարցերում, պետք է խորհուրդ փնտրեն իրենց եպիսկոպոսից, ճյուղի նախագահից, ցցի կամ շրջանի նախագահից: Մենք խրախուսում ենք Եկեղեցու առաջնորդներին և անդամներին օգնության հասնել սիրով և ըմբռնումով նրանց, ովքեր մաքառում են այս խնդիրների դեմ: Շատերը կարձագանքեն Քրիստոսանման սիրուն և ոգեշնչված խորհրդին, երբ նրանք հրավեր ստանան ետ վերադառնալու և կիրառելու Փրկչի քավող և բժշկող զորությունը» (տես Եսայիա ԾԳ.4–5, Մոսիա 4.2–3):

Նմանապես Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նույն թեմայի վերաբերյալ համաժողովի իր ելույթում ասաց. «Ես կամենում եմ այժմ ասել, շեշտադրելով, որ մեր մտահոգությունը մեղքի դառը պտղի համար ուղեկցվում է Քրիստոսանման համակրանքով զոհերի հանդեպ՝ անմեղ և մեղավոր: Մենք պաշտպանում ենք Տիրոջ օրինակը, ով դատապարտեց մեղքը, սակայն սիրեց մեղավորին: Մենք պետք է օգնության հասնենք չարչարվածներին բարությամբ և մխիթարությամբ, սպասավորելով նրանց կարիքները և օգնելով նրանց իրենց խնդիրներում»:[19]

Չնայած այդպիսի հրավերներին և հավաստիացումներին, Եկեղեցին և նրա անդամները շարունակում են թյուրըմբռնումներով մոտենալ այս հարցերի հետ կապված մեր դիրքորոշմանը: Անցյալ աշնանը հեռուստալրագրողի հետ մի հարցազրույցի ժամանակ մեր Եկեղեցու պաշտոնյաներից մեկին հարցրեցին. «Ի՞նչ է արվում Եկեղեցում համասեռամոլների հանդեպ ատելության մթնոլորտը վերացնելու համար»: Ինը տարի առաջ այս թեմայի շուրջ մի հեռուստազրույցի ժամանակ ինձ հարցրեցին այն լուրերի մասին, թե Եկեղեցին ուսուցանել է կամ ակնարկել, «որ այս մարդիկ ինչ որ չափով պարիահներ (իրավազուրկ, մերժված մարդիկ Հնդկաստանում) են… և այս մարդիկ ատում են իրենց և որ այս վերաբերմունքը առաջ է բերվել Եկեղեցու կողմից»:

Ամենակարևորն այն է, որ մենք ստանում ենք այդպիսի հարցեր նաև հավատարիմ անդամներից: Վերջին նամակներից մեկը լավ օրինակ է.

«Մեկ այլ մտահոգություն է այն, թե ինչպես են դասակարգվում մեր որդիներն ու դուստրերը որպես մարդիկ, ովքեր շեղված են և հեշտասեր վարքով: Հավանաբար ոմանք անում են, բայց մեծամասնությունը ոչ: Այս երիտասարդ տղամարդիկ և կանայք ուզում են ուղղակի գոյատևել, ունենալ հոգևոր կյանք և մոտ մնալ իրենց ընտանիքներին և Եկեղեցուն: Հատկապես վնասակար է, երբ այս բացասական ակնարկներն ամբիոնից են արվում: Մենք հավատում ենք, որ այսպիսի ելույթները միայն ստեղծում են ավելի շատ ճնշվածություն և հսկայական չափով հանցանքի, ամոթի և ինքնարժեքի բացակայության զգացում, որը նրանք կրում են ողջ իրենց կյանքում: Երբեմն ակնհայտ է Քրիստոսի մաքուր սիրո արտահայտման, նրանց տառապանքների մեջ օգնելու իսկական բացակայություն: Մենք բոլորս շնորհակալ կլինեինք, եթե որևէ բան կարողանայիք անել՝ օգնելու այս վիճակում հայտնված Երկնային Հոր այդ բոլորովին չհասկացված զավակներին: Եթե Բարձրագույն Իշխանավորներից մի քանիսը կարողանային արտահայտել ավելի մեծ նրբազգացություն այս խնդրի հանդեպ, դա անկասկած կօգներ խուսափել ինքնասպանություններից և տարաձայնություններից, որոնք տեղի են ունենում ընտանիքներում: Շատերն ուղղակի չեն կարողանում հանդուրժել այն փաստը, որ Եկեղեցու անդամները դատում են նրանց որպես «չար մարդիկ» և նրանք այդ պատճառով սփոփանք են գտնում առվամոլ կողմնորոշում ունեցող կենսաոճերում»:[20]

Այս թյուրըմբռնումներն անկասկած ցույց են տալիս մեր հաղորդակցությունը եղբայրների և քույրերի հետ բարելավելու անհրաժեշտությունը, ովքեր մաքառում են խնդիրների հետ՝ ամեն տեսակի խնդիրների: Քրիստոսի Եկեղեցու յուրաքանչյուր անդամ հստակորեն ձևավորված վարդապետական պատասխանատվություն ունի՝ ցույց տալու սեր, հասնելու օգնության և արտահայտելու ըմբռնում: Մեղավորները, ինչպես նաև նրանք, ովքեր պայքարում են դիմադրելու անպատշաճ զգացումները, դուրս գցելու ժողովուրդ չեն, այլ սիրելու և օգնելու մարդիկ (տես 3 Նեփի 18.22–23, 30, 32): Միևնույն ժամանակ Եկեղեցու առաջնորդները և անդամները չեն կարող խուսափել իրենց պարտականություններից՝ ուսուցանելու ճիշտ սկզբունքներ և արդար վարք (բոլոր թեմաների շուրջ), եթե նույնիսկ դա ոմանց մոտ անհարմարություն է առաջացնում:

Երբեմն Եկեղեցու առաջնորդներին հարցնում են, թե արդյոք տեղ կա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում այն մարդկանց համար, ովքեր ունեն համասեռամոլ

տրամադրվածություն կամ զգացմունքներ: Իհարկե կա: Դժվարության աստիճանը և վարքից հրաժարվելու և մտքերը վերահսկելու անհրաժեշտ ձևը տարբեր կլինեն տարբեր մարդկանց համար, բայց հույսի ուղերձը և ընկերակից ձեռքը, որը մեկնված է Եկեղեցու կողմից, նույնն են բոլորի համար, ովքեր ջանք են գործադրում:

Ես փորձեցի նկարագրել կարևոր տարբերությունները հեռուստալրագրողին տված իմ պատասխանում, որն ի նկատի ուներ, որ Եկեղեցին ուսուցանում էր, որ «այդ մարդիկ ինչ որ տեղ պարիաներ էին»: Ես ասացի.

«Մարդը, որն աշխատում է [դիմակայել] այդ կանխատրամադրվածություններին, չպետք է զգա իրեն մերժված [պարիա]: Լիովին այլ բան է ամուսնությունից դուրս սեռական հարաբերությունները: Մարդը, որն այդպիսի վարքագիծ ունի, պետք է որ հանցավորության ուժեղ զգացում ունենա: Նրանք պետք է իրենց օտարացած զգան Աստծուց, ով պատվիրաններ է տվել այդպիսի վարքի դեմ: Ինձ համար զարմանալի չէր լինի, եթե նրանք իրենց օտարացած զգային Եկեղեցուց: Մի բան, որ զարմացնում է ինձ, այն է, որ նրանք կարծում են, որ Եկեղեցին կարող է չեղյալ համարել Աստծո պատվիրանները… Շնության մեջ բռնված կնոջ հանդեպ (որը մեզ համար բավականին լավ նախադեպ է), … [Փրկիչը] ողորմած էր և սիրով լի…, բայց նա ասաց. «Գնա և այլևս մեղք մի գործիր»: Նա սիրում էր մեղավորին, բայց դատապարտեց մեղքը: Կարծում եմ, Եկեղեցին անում է նույնը, ոչ կատարյալ ձևով գուցե, բայց դա այն է, ինչ մենք ուսուցանում ենք մեր անդամներին՝ սիրիր մեղավորին, բայց դատապարտիր մեղքը»:[21]

> ***Սեռական հարաբերությունները պատշաճ են միայն ամուսնու և կնոջ միջև համապատասխանորեն արտահայտված ամուսնության կապերի մեջ:***

Նրանց մաքառումները, ովքեր չարչարվում են նույն սեռի հանդեպ հակվածությամբ, եզակի չեն: Կան բազմապիսի գայթակղություններ՝ սեռական և այլ ձևի: Մեղքին դիմակայելու պարտականությունը կրում են նրանք բոլորը:

Ամենակարևոր օգնությունը, որ Եկեղեցին կարող է առաջարկել մարդկանց, ովքեր անձնատուր են եղել մեղքին կամ մաքառում են դրան դիմակայելու համար, աստվածային միսիան կատարելն է՝ ճշմարիտ վարդապետություն ուսուցանելը և վերականգնված ավետարանի աստվածային արարողությունները սպասավորելը: Ավետարանը նույն հիմունքներով վերաբերվում է ամենքին: Դրա կենտրոնական ճշմարտությունը մեր Փրկչի քավությունն է և հարությունը, որպեսզի մենք ունենանք անմահություն և հավերժական կյանք: Այդ ճակատագրին հասնելու համար Աստծո յուրաքանչյուր զավակի համար այս կյանքում կամ գալիք կյանքում, աստվածային և նշանակված նպատակը հավերժական ամուսնությունն է: Այնուամենայնիվ, այս սրբազան նպատակը պետք է իրականանա Տիրոջ ուղով: Օրինակ, Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հայտարարել է, որ «ամուսնությանը չպետք է նայել որպես բուժական քայլ լուծելու այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են համասեռամոլ հակումները կամ դրանով զբաղվելը»:[22]

Քրիստոսի և Նրա Եկեղեցու միջոցով նրանք, ովքեր մաքառում են, կարող են օգնություն ստանալ: Այդ օգնությունը գալիս է ծոմի և աղոթքի միջոցով, ավետարանի ճշմարտությունների միջոցով, Եկեղեցի հաճախելով և ծառայելով, ոգեշնչված առաջնորդների խորհրդի միջոցով և, որտեղ անհարաժեշտ է, մասնագիտական օգնության միջոցով այն խնդիրների դեպքում, որոնք պահանջում են այդպիսի օգնություն: Օգնության ևս մեկ կարևոր աղբյուր է սիրող եղբայրների և քույրերի զորացնող ազդեցությունը: Բոլորը պետք է հասկանան, որ անձնավորությունները (իրենց ընտանիքի անդամները), ովքեր մաքառում են նույն սեռի հակվածության բեռի ներքո, հատուկ սիրո և քաջալերանքի կարիք ունեն, որը Եկեղեցու անդամների հստակ պարտականությունն է, ովքեր արտահայտել են ուխտով իրենց հոժարակամությունը՝ «կրելու միմյանց բեռները» (Մոսիա 18.8) և, այդպիսով, կատարելու Քրիստոսի օրենքը» (Գաղ. Զ.2):

Ավետարանի առաջին սկզբունքը առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքն է, ով տալիս է մեզ լույս և ուժ հաղթահարելու մահկանացու կյանքի խոչընդոտները և օգտագործելու մեր աստվածատուր ազատ կամքը՝ ընտրելու այն վարքը, որը մեզ կտանի դեպի մեր աստվածային ճակատագիրը: Մեզ խոստացվել է. «Ձեզ ուրիշ փորձություն չի պատահի, բացի մարդկային փորձությունից. Բայց Աստված հավատարիմ է, որ չի թողնի ձեզ ձեր կարողությունիցը վեր փորձվելու, այլ փորձության հետ ելքն էլ կպատրաստե, որ կարողանաք համբերել» (Ա Կորնթ. Ժ. 13):

Եզրակացություն

Գիտական փաստի և կրոնական վարդապետության տարբեր հեռանկարները կարելի է նմանեցնել ավտոմեքենայի մասին գաղափար կազմելու համար դրա գործունեությանը հետևելուն, մասերի բաժանելով քանդելուն և դրա տարբեր մասերը վերլուծելով՝ ի տարբերություն արտադրողի կողմից գրված գործարկողի ձեռնարկը կարդալուն: Շատ բան կարելի է սովորել, զննելով և վերլուծելով, բայց այդ մեթոդը կտա միայն մասնակի գիտելիք մեքենայի գործունեության և ներուժի մասին: Լավագույն և ամենաիկատար գիտելիքը մեքենայի գործունեության և ներուժի մասին կբացահայտվի ձեռնարկի ուսումնասիրությունը, որը գրվել է արտադրողի կողմից: Մեր մարմինների և հոգիների համար գործարկողի ձեռնարկը սուրբ գրություններն են, գրված Աստծո կողմից, ով ստեղծել է մեզ, և որը թարգմանվել է մարգարեների կողմից: Սրանք

գիտելիքի լավագույն աղբյուրներն են կյանքի նպատակի և մտքերի և վարքի վերաբերյալ, որոնք մենք պետք է մշակենք երջանկության մեջ ապրելու և մեր աստվածային ճակատագրին հասնելու համար:

Բոլորը, ովքեր պայքարում են մահկանացու կյանքի մարտահրավերների դեմ, կարող են միանալ Նեփիի սաղմոսի ողբին. «Ով թշվառ մարդ, որ ես եմ: Այո, սիրտս վշտանում է՝ մարմնիս պատճառով, հոգիս մորմոքվում՝ իմ անօրինությունների պատճառով:

Ես պարփակված եմ գայթակղությունների և մեղքերի պատճառով, որոնք իրավ, այնքան հեշտությամբ նեղում են ինձ»(2 Նեփի 4.17–18):

Մեղքին դիմակայելու կամք և ուժ ունենալու համար մենք պետք է վստահենք Աստծուն և աղոթենք Նրա օգնության համար: Նեփին հրճվեց Տիրոջով, որն առաջնորդեց նրան իր չարչարանքների միջով (տես հ.20): «Ինչո՞ւ պիտի ես անձնատուր լինեմ մեղքին իմ մարմնի պատճառով», - հարցնում էր Նեփին (հ.27), ավելացնելով աղոթք, որ Տերը կփրկագնի իր հոգին և «կդարձնի ինձ այնպիսին, որ կարողանամ ցնցվել մեղքի տեսքից» (հ. 31):

Նեփին եզրափակում է խոսքերով, որոնք վերաբերվում են ուղղակիորեն նրանց, ովքեր որոնում են իրենց ուղին, անցնելով այն դժվարությունների միջով, որոնք քննարկվեցին այս հոդվածում.

«Ով Տեր, ես քեզ եմ ապավինել, և ես քեզ եմ ապավինելու հավիտյան: Ես իմ վստահությունը չեմ դնի մարմնի բազկի վրա. Քանզի գիտեմ, որ անիծված է նա, ով մարմնի բազկին է ապավինում: Այո, անիծված է նա, որ դնում է իր վստահությունը մարդու վրա կամ մարմինն իրեն բազուկ է սարքում:

Այո, ես գիտեմ, որ Աստված առատորեն կտա նրան, ով խնդրում է» (հ. 34–35):

Նա, ով պատվիրել է մեզ կատարյալ լինել, հեղել է իր արյունը՝ տալով մեզ հնարավորություն հասնելու մեր աստվածային ճակատագրին: Նրա վստահությունը հավերժական կյանքի հասնելու մեր ունակության հանդեպ դրսևորվում է Նրա աներևակայելի հրավերով. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել: Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27):

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (Salt Lake City: Deseret Book Co., 1939), p. 309.
2. Statement of the First Presidency, 31 Jan. 1912; printed in *Improvement Era,* Mar. 1912, p. 417; see also *Millennial Star,* 24 Aug. 1922, p. 539.
3. Lorenzo Snow, *Millennial Star,* 31 Aug. 1899, p. 547; discussed in Dallin H. Oaks, *Pure in Heart* (Salt Lake City: Bookcraft, 1988), pp. 61–62.
4. Letter of the First Presidency, 14 Nov. 1991.
5. Տես ՎԼՈՒ 76, discussed in Dallin H. Oaks, "Apostasy and Restoration," *Ensign,* May 1995, pp. 86–87.
6. "An Easter Greeting from the First Presidency," *Church News,* 15 Apr. 1995, p. 1.
7. "Free Agency and Freedom," *Brigham Young University 1987–88 Devotional and Fireside Speeches* (Provo: BYU Publications, 1988), pp. 46–47; the edited version printed here is found in Monte S. Nyman and Charles D. Tate, Jr., eds., *The Book of Mormon: Second Nephi, The Doctrinal Structure* (Provo: BYU Religious Studies Center, 1989), pp. 13–15.
8. R. C. Lewontin and others, *Not in Our Genes* (New York: Pantheon Books, 1984); R. Hubbard and E. Wald, *Exploding the Gene Myth* (Boston: Beacon Press, 1993).
9. R. C. Friedman and J. Downey, "Neurobiology and Sexual Orientation: Current Relationships," *Journal of Neuropsychiatry* 5 (1993): 149.
10. Ibid.
11. J. M. Bailey and R. C. Pillard, "A Genetic Study of Male Sexual Orientation," *Archives of General Psychiatry* 48 (1991): 1089–96.
12. J. M. Bailey, R. C. Pillard, and others, "Heritable Factors Influence Sexual Orientation in Women," *Archives of General Psychiatry* 50 (1993): 217–23.
13. D. Hamer and P. Copeland, *The Science of Desire* (New York: Simon & Schuster, 1994), p. 218.
14. W. Byne and B. Parsons, "Human Sexual Orientation: The Biologic Theories Reappraised," *Archives of General Psychiatry* 50 (1993): 228.
15. Dean Hamer and others, "A Linkage Between DNA Markers on the X Chromosome and Male Sexual Orientation," *Science* 261 (16 July 1993): 321–27.
16. *The Science of Desire,* pp. 145–46.
17. W. Byne, "The Biological Evidence Challenged," *Scientific American,* May 1994, pp. 50, 55.
18. Byne and Parsons, "Human Sexual Orientation," pp. 236–37.
19. Gordon B. Hinckley, "Reverence and Morality," *Ensign,* May 1987, p. 47.
20. Letter to Dallin H. Oaks, 3 Sept. 1994.
21. Television interview with Elder Dallin H. Oaks, 3 Dec. 1986; answer not telecast; excerpts printed in "Apostle Reaffirms Church's Position on Homosexuality," *Church News,* 14 Feb. 1987, pp. 10, 12.
22. Gordon B. Hinckley, "Reverence and Morality," p. 47.

ՆՈՒՅՆԱՍԵՌ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Ծննդաստեղծ ուժերի միակ օրինական գործածումը ամուսնու և կնոջ միջև է, ովքեր իրավաբանորեն և օրինականապես ամուսնացած են:

—Երեց Բոյդ Ք. Փաքեր

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի

«Համասեռամոլությունը լուրջ մեղք է: Եթե գտնում եք, որ պայքարում եք միևնույն սեռի հանդեպ հրապուրանք տածելու դեմ, խորհուրդ հարցրեք ձեր ծնողներից և եպիսկոպոսից: Նրանք կօգնեն ձեզ» (*Երիտասարդներին Զորացնելու համար՝ Կատարել Աստծո հանդեպ Մեր Պարտականությունը,* 28):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ես ժամանակ ունեմ քննարկելու մեկ այլ հարց. «Ինչո՞ւ է Եկեղեցին խառնվում հարցերի, որոնք կապված են օրենսդրության և ընտրողների հետ»:

Ավելացնում եմ արագ, որ մենք գործ ունենք միայն այն օրենսդրական հարցերի հետ, որոնք խստորեն բարոյական բնույթի են կամ որոնք ուղղակիորեն ազդում են Եկեղեցու բարօրության վրա: Մենք դեմ ենք կանգնել թղթախաղին և ալկոհոլին և կշարունակենք անել այդպես: Մենք համարում ենք ոչ միայն մեր իրավունքը այլև մեր պարտականությունը՝ դեմ գնալ այն ուժերին, որոնք մենք զգում ենք քայքայում են հասարակության բարոյական արժեքները: Մեր ջանքերի մեծ մասը, դրա հսկայական մասը զուգորդվում է ուրիշների հետ, որոնց հետաքրքրությունները նմանատիպ են: Մենք աշխատել ենք հրեական խմբերի, կաթոլիկների, մահմեդականների, բողոքականների և նրանց հետ, ովքեր ոչ մի հատուկ կրոնական կազմակերպության չեն պատկանում, ստեղծելով կոալիցիաներ՝ պաշտպանելու բարոյական կենսական հարցերին առնչվող դիրքորոշումները: Ներկայումս այսպիսին է վիճակը Կալիֆոռնիայում, որտեղ Վերջին Օրերի Սրբերն աշխատում են որպես կոալիցիայի մի մաս՝ պաշտպանելու ավանդական ամուսնությունը մեր հասարակության այն ուժերից, որոնք փորձում են վերասահմանել այդ սրբազան հաստատությունը: Աստծո հրամանագրած ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև եղել է քաղաքակրթության հիմքը հազարավոր տարիներ: Չկա արդարացում վերասահմանելու ամուսնությունը: Սա մեր իրավունքը չէ, և նրանք, ովքեր փորձում են դա անել, իրենց պատասխանատու կգտնեն Աստծո առջև:

Ոմանք պատկերացնում են այսպես կոչված նույնասեռ ամուսնության օրենսդրությունը որպես քաղաքացիական իրավունք: Դա քաղաքացիական իրավունքի հարց չէ, դա բարոյականության հարց է: Մյուսները կասկածի տակ են դնում որպես Եկեղեցի մեր սահմանադրական իրավունքը՝ բարձրացնելու մեր ձայնը մի հարցի վերաբերյալ, որը կրիտիկական կարևորություն ունի ընտանիքի ապագայի համար: Մենք հավատում ենք, որ աշխատելով պահպանել ավանդական ամուսնությունը՝ այս սուրբ հաստատության պաշտպանությունը, հստակորեն գտնվում է մեր կրոնական և սահմանադրական բացառիկ իրավունքների շրջանակներում: Իրականում մենք հարկադրված ենք զգում՝ մեր վարդապետության համաձայն բարձրացնել մեր ձայնը:

Այնուամենայնիվ, և ես շեշտում եմ այս, ես ցանկանում եմ ասել, որ մեր ընդդիմությունը նույնասեռ ամուսնության օրինականացման փորձերի դեմ երբեք չպետք է մեկնաբանվի որպես ատելության, անհանդուրժողականության կամ անարգանքի պատճառ նրանց հանդեպ, ովքեր ընդունում են համասեռամոլ նախահակումներ, լինի անհատապես, թե որպես խումբ: Ինչպես ասել եմ այս ամբիոնից մեկ տարի առաջ, մեր սրտերը նրանց հետ են, ովքեր համարում են իրենց առվամոլ կամ լեզբիան: Մենք սիրում ենք նրանց և հարգում որպես Աստծո որդիներ և դուստրեր: Նրանք ողջունելի են Եկեղեցում: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ նրանք հետևեն Աստծո կողմից տրված վարքի նույն կանոններին, ինչը վերաբերվում է մնացած բոլորին՝ չամուսնացած և ամուսնացած» (in Conference Report, Oct. 1999, 70; կամ *Ensign,* Nov. 1999, 53–54):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Ծննդաստեղծ ուժերի միակ օրինական գործածումը ամուսնու և կնոջ միջև է, ովքեր իրավաբանորեն և օրինականապես ամուսնացած են: Բացի սրանից որևէ այլ բան խախտում է Աստծո պատվիրանները: Եվ ինչպես Ալման է ասել. «Ես ասում եմ ձեզ, եթե դուք խոսեք սրա դեմ, դա նշանակություն չունի, քանզի Աստծո խոսքը պետք է իրագործվի…» (Ալմա 5.58):

«Ես արդեն նախազգուշացրել եմ, որ հակառակորդի սոսկալի ուժերը կօգտագործվեն գայթակղելու ողջ մարդկությանը մեղսավոր ձևով օգտագործելու ծննդաստեղծ սրբազան զորությունը: Անձնատուր մի եղեք, քանզի օրինազանցության յուրաքանչյուր պարտք պետք է վճարվի» (*Things of the Soul,* 113–14):

«Աշխարհի առաջնորդները և դատարանի դատավորները համաձայնվում են, որ ընտանիքը պետք է հարատևի, եթե մենք ուզում ենք գոյատևել: Միևնույն ժամանակ, նրանք օգտագործում են *ազատություն* և *ընտրություն* բառերը որպես միջոցներ թաքուն մասնատելու անցյալի նախազգուշական միջոցները և թուլացնելու ամուսնությանը, վիժեցմանը և սեռին վերաբերող օրենքները: Այդ անելով, նրանք խթանում են հենց այն բաները, որոնք սպառնում են ընտանիքին» (in Conference Report, Apr. 1994, 24; կամ *Ensign,* May 1994, 19):

Երեց Դալին Հ. Օուքս

«Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ կան բազմաթիվ քաղաքական, իրավական և հասարակական ճնշումներ՝ այնպիսի փոփոխություններ կատարելու համար, որոնք խառնում են սեռը և միատարր դարձնում տղամարդկանց և կանանց միջև տարբերությունները: Մեր հավերժական հեռանկարները մեզ դնում են այդ փոփոխությունների դեմ, որոնք փոխում են տղամարդկանց և կանանց այն առանձին պարտավորություններն ու արտոնությունները, որոնք կարևոր են երջանկության մեծ ծրագիրն իրականացնելու համար» (in Conference Report, Oct. 1993, 99; կամ *Ensign,* Nov. 1993, 73):

ԵՍԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Եսասիրությունը սիրո հակադրությունն է:

—Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Չգիտեմ ավելի լավ ուղի տանը, շրջակայքում, կազմակերպություններում ներդաշնակություն, երկրում և աշխարհում խաղաղություն ստեղծելու համար, քան այն, երբ յուրաքանչյուր տղամարդ և կին առաջինը իրենց սրտերից արմատախիլ են անում ներդաշնակության և խաղաղության թշնամիներին, ինչպիսիք են ատելությունը, եսասիրությունը, ագահությունը, չարությունը և նախանձը» (*Gospel Ideals*, 292):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Այդ բոլորը արտահայտվում է մեկ խոսքով, այնպես չէ՞. Եսասիրություն» (*Teachings of Spencer W. Kimball*, 313):

«Յուրաքանչյուր ամուսնալուծություն եսասիրության արդյունք է ամուսնության համաձայնագրի մեջ գտնվող մեկ կամ մյուս կողմից, կամ էլ երկու կողմից էլ: Մեկը մտածում է անձնական հանգստության, հարմարավետության, ազատության, ճոխության կամ հեշտության մասին: Երբեմն դժբախտ, դժգոհ և եսասեր կողակցի անընդհատ խայթոցները ի վերջո կարող է վերածվել լուրջ ֆիզիկական բռնության: Երբեմն մարդիկ այնքան են բարկանում, որ սխալմամբ արդարացված են զգում անելով բաներ, որոնք այնքան անիրավ են: Իհարկե, ոչինչ չի արդարացնում մեղքը…

Յուրաքանչյուր ամուսնալուծություն եսասիրության արդյունք է ամուսնության համաձայնագրի մեջ գտնվող մեկ կամ մյուս կողմից, կամ էլ երկու կողմից էլ:

Ամուսնությունը, որը հիմնված է եսասիրության վրա, գրեթե անպայման ձախողման է ենթակա: Մեկը, որն ամուսնանում է հարստության կամ հեղինակության կամ հասարակական դիրքի համար, անպայման կհիասթափվի: Անձնավորությունը, որն ամուսնանում է սնափառությունը և հպարտությունը բավարարելու կամ ի հեճուկս մեկ ուրիշին կամ ինչ որ բան ապացուցելու համար, միայն ինքն իրեն է վնասում: Բայց նրա համար, ով ամուսնանում է երջանկություն տալու, ինչպես նաև ստանալու համար, ծառայություն տալու և նաև ստանալու համար, և որը հոգ է տանում երկուսի շահերի համար էլ, ապա ընտանիքը, երբ այն ստեղծվում է, երջանիկ ամուսնություն լինելու լավ հնարավորություն կունենա» (“Marriage and Divorce,” 148–49):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Եսասիրությունը շատ հաճախ փողային խնդիրների հիմքն է, որը շատ լուրջ և իրական գործոն է, որն ազդում է ընտանեկան կյանքի կայունության վրա: Եսասիրությունը շնության արմատն է, որը խախտում է հանդիսավոր և սրբազան ուխտերը՝ եսասիրական կիրքը բավարարելու համար: Եսասիրությունը սիրո հակադիրն է: Այն ագահության փտախտի արտահայտությունն է: Այն կործանում է ինքնակարգապահությունը: Այն ոչնչացնում է հավատարմությունը: Այն պատռում է սրբազան ուխտերը: Այն տանջում է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց» (in Conference Report, Apr. 1991, 96; կամ *Ensign*, May 1991, 73):

Երեց Նիլ Ա. Մաքսվել

«Մեր ձախողումներում սովորաբար առկա է ծպտված եսասիրություն, որը հասնում է «մի կամրջի, որը խիստ հեռու է»: Լինի ֆինանսական, թե քաղաքացիական կործանում կամ անհավատարմություն և ամուսնալուծություն, սովորաբար հպարտ եսասիրությունն այնտեղ է: Բանական համեստության բացակայությունը նրանց մեջ է, ովքեր դիտավորյալ մշակել են իրենց կասկածները, որպեսզի, ինչպես իրենք են կարծում, իրենց ազատեն իրենց ուխտերից: Ոմանք ջանասիրաբար սնուցում են իրենց դժգոհությունները: Եթե նրանց դժգոհությունների փոխարեն Ալմայի հավատքի սերմը լիներ, նրանք շատ վաղուց սնուցած կլինեին վկայության մի հզոր ծառ» (*Meek and Lowly*, 6–7):

ԻՆՔՆԱՊԱՎԻՆՈՒՄ

Ինքնապավինման սկզբունքը հոգևոր է, ինչպես և նյութական:

—Երեց Լ. Թոմ Փերի

ԻՆՔՆԱՊԱՎԻՆՈՒՄ

Երեց Բոյդ Ք. Փաքեր

Տասներկու Առաքյալների Քվորումից

Speeches of the Year, 1975, 346–47, 354–60; տես նաև Ensign, Օգոստ. 1975, 86–89

Ինքնապավինումը … կիրառություն ունի ինչպես զգացմունքային, այնպես էլ հոգևոր բաներում:

Ես սկսում եմ խիստ անհանգստանալ այն խորհրդատվության վերաբերյալ, որի կարիքը մենք կարծես ունենք Եկեղեցում, և խորհրդատվության ցանցի ծառայությունների քանակությամբ, որոնք մենք շարունակում ենք կառուցել առանց մի անգամ շեշտելու ինքնապավինման սկզբունքը՝ ինչպես այն հասկացվում է բարօրության ծրագրում: Խիստ շատերը կան Եկեղեցում, ովքեր, թվում է, զգացմունքային և հոգևոր առումով լիովին կախված են ուրիշներից: Նրանք գոյատևում են ինչ որ բարօրության վրա հենվելով: Նրանք չեն կամենում իրենք իրենց ապահովել: Նրանք այնքան կախյալ են դառնում, որ անվերջ կարիք ունեն օժանդակության, բարձրացվելու, քաջալերանքի, իսկ իրենց իսկ սեփական ներդրումը շատ քիչ է:

Ես մտահոգված եմ նրանով, որ մենք գուցե պատրաստվում ենք անել մի բան, հուզական (և ուստի հոգեպես), ինչից մենք այնքան տքնաջանորեն աշխատում էինք սերունդներ շարունակ խուսափել նյութական առումով: Եթե մենք կորցնում ենք մեր հուզական և հոգևոր ինքնապավինումը, մենք կարող ենք թուլանալ ճիշտ այդքան, հավանաբար նույնիսկ ավելի, որքան երբ դառնում ենք նյութապես կախյալ: Մի կողմից մենք խորհուրդ ենք տալիս եպիսկոպոսներին խուսափել Եկեղեցու բարօրության ծրագրի չարաշահումներից: Մյուս կողմից մենք կարծես թե խրատ և խորհուրդ ենք տալիս առանց մտքներովս իսկ անցկացնելու, որ անդամը պետք է լուծի իր խնդիրը ինքնուրույն կամ դիմի իր ընտանիքին: Միայն այն ժամանակ, երբ այդ ռեսուրսներն անբավարար են, նա պետք է դիմի Եկեղեցուն:

Մենք անմիջապես գիտակցում ենք, որ սխալ կլիներ մշակել բարօրության պատրաստման համընդհանուր ծրագրեր՝ յուրաքանչյուր նյութական կարիքի դեպքում Եկեղեցու բոլոր անդամներին օգնելու համար: Մենք նմանապես պետք է շատ զգույշ լինենք՝ նախքան խորհրդատվական ծրագրերի լայն ցանց զարգացնելը՝ եպիսկոպոսների և ճյուղի նախագահների և բոլոր մյուսների հետ, մեր բոլոր անդամներին սատարելու յուրաքանչյուր հուզական կարիքի դեպքում խորհուրդ տալու ջանք թափելիս:

Եթե մենք զգույշ չլինենք, մենք կարող ենք կորցնել անձնական հայտնության զորությունը: Տերն ասել է Օլիվեր Քաուդերիին, և դա իմաստալի է մեզ բոլորիս համար.

«Ահա, դու չհասկացար. Դու կարծում էիր, որ ես պիտի տայի քեզ, երբ դու միտք չարեցիր, այլ միայն խնդրեցիր ինձ:

Բայց, ահա, ես ասում եմ քեզ, որ դու պետք է քննես այն քո մտքում, հետո դու պետք է հարցնես ինձ, թե արդյոք դա ճիշտ է, և եթե դա ճիշտ լինի, ես այնպես կանեմ, որ կուրծքդ կայրվի քո ներսում. Ուստի, դու պիտի զգաս, որ դա ճիշտ է:

Բայց, եթե դա ճիշտ չլինի, դու նման զգացումներ չես ունենա, այլ կունենաս մտքի ընդարմացում, որի արդյունքում դու կմոռանաս այն, ինչը սխալ է…. » (ՎԱՈՒ 9.7–9):

Սկզբունքներ զգացմունքային և հոգևոր անկախության համար

Այժմ, եթե դուք հոժար եք համաձայնվել, որ հիմնական սկզբունքները, որոնք ընկած են Եկեղեցու բարօրության ծրագրում ունեն կիրառություն ձեր հուզական և հոգևոր կյանքում՝ այսինքն, որ պետք է զարգացվի անկախություն, աշխատասիրություն, խնայողություն, ինքնապավինում և ինքնահարգանք, որ աշխատանքը պետք է համարվի կառավարող սկզբունք ձեր կյանքում, որ նյութական օգնության հուզական կամ հոգևոր չարիքներից պետք է խուսափել, և որ Եկեղեցու նպատակն է օգնել անդամներին՝ օգնել իրենց, ապա ես ունեմ որոշ սկզբունքներ և առաջարկություններ ձեզ համար:

Մենք ավելի վաղ նշել ենք, որ չպետք է լինի նվազագույն իսկ չափի նեղսրտվածություն Եկեղեցու որևէ անդամի համար բարօրության օժանդակություն ստանալիս, որը տրվում է, երբ առաջինը՝ սպառվել են անձնական և ընտանիքում եղած ռեսուրսները: Նմանապես, չպետք է լինի նվազագույն իսկ չափով նեղսրտվածություն Եկեղեցու անդամների կողմից, ովքեր կարիք ունեն խորհրդի: Երբեմն դա կարող է կրիտիկական լինել, որ դուք խորհուրդ որոնեք և խորհուրդ ընդունեք:

Երբ դուք հուսահատված եք և զգում եք, որ չեք կարող լուծել խնդիրն ինքնուրույն, դուք գուցեև ճիշտ եք, բայց առնվազն պարտավոր եք փորձել: Ձեզ մատչելի յուրաքանչյուր անձնական ռեսուրս պետք է գործողության մեջ դնել, նախքան մեկ այլ քայլ ձեռնարկելը, իսկ դուք ունեք հզոր

ռեսուրսներ: Մորմոնի Գիրքը հայտարարում է այս մեկը, որը հաճախ անտեսվում է.

«Քանզի, Հոգին նույնն է՝ երեկ, այսօր և հավիտյան: Եվ ուղին պատրաստված է՝ մարդու անկումից ի վեր և փրկությունն անհատուց է:

Եվ մարդիկ բավականին ուսուցանված են, որ բարին տարբերեն չարից» (2 Նեփի 2.4–5, շեշտադրումն ավելացված է):

Բացարձակապես կարևոր է, որ դուք հասկանաք, որ դուք իմանում եք ճիշտն ու սխալը, որ դուք ներքուստ, ժառանգականորեն և բնազդաբար լավն եք: Երբ ասում եք. «Ես չեմ կարող, չեմ կարող լուծել իմ խնդիրները», ես ուզում եմ որոտալ. «Չե՞ք հասկանում, ով եք դուք: Դեռ չե՞ք սովորել, որ դուք Ամենազոր Աստծո որդին կամ դուստրն եք: Միթե՞ չգիտեք, որ կան հզոր ռեսուրսներ Նրանից ժառանգած, որոնց կարող եք դիմել՝ ձեզ կայունություն և քաջություն և մեծ զորություն տալու համար»:

Ձեզանից շատերը ուսուցանվել են ավետարանը ողջ իրենց կյանքում: Դուք բոլորդ գիտեք բարու և չարի, ճշտի և սխալի միջև գոյություն ունեցող տարբերությունը: Ուրեմն, միթե՞ժամանակը չէ, որ որոշեք անել այն, ինչը ճիշտ է: Այդպես անելով, դուք կատարում եք ընտրություն: Ոչ թե *ինչ որ մի ընտրություն*, այլ կատարում եք *ընտրությունը*: Մեկընդմիշտ, երբ որոշեք, որ չի լինելու [ինչպես մանկական խաղում] ոչ մի խաչած մատներ, ոչ մի կեղծիք, ոչ մի վերապահություն կամ տատանվողականություն, մնացած բոլորը կընկնեն իրենց տեղը:

Մարդկանցից շատերն, ովքեր գալիս են խորհրդի համար ցցի նախագահների, ճյուղի նախագահների, եպիսկոպոսների ու մեզ մոտ, որպես Բարձրագույն Իշխանավորների, չեն գալիս, որովհետև խառնաշփոթի մեջ են և չեն կարողանում տեսնել ճշտի և սխալի միջև տարբերությունը: Նրանք գալիս են, որովհետև գայթակղվում են անել ինչ որ բան, որը նրանք սրտի խորքում գիտեն սխալ է և ցանկանում են այդ որոշումը վավերացնել:

Երբ դուք խնդիր ունեք, առաջինը ձեր իսկ մտքում այն քննեք: Կշռադատեք այդ մասին և վերլուծեք ու խորհեք: Աղոթեք այդ մասին: Ես եկել եմ այն հասկացողության, որ կարևոր որոշումները հնարավոր չէ պարտադրել: Դուք պետք է առաջ նայեք և հեռանկար ունենաք: Ի՞նչ էր մարգարեն ասում Հին Կտակարանում: «[Որտեղ չկա հեռանկար, մարդիկ կործանվում են]» (Առակաց ԻԹ.18):

Կշռադատեք գործերն ամեն օր քիչ-քիչ և միշտ մի եղեք տվյալ րոպեին անհապաղ կարևոր որոշումներ ընդունելու ճնշման տակ: Եթե դուք կյանքում առաջ եք նայում, դուք կարող եք տեսնել գլխավոր խնդիրները, որոնք գալիս են ճանապարհով դեպի ձեզ բավականին մեծ տարածության վրա: Մինչև դրանք կահսնեն ձեզ, դուք կարող եք հենց սկզբում վերցնել իրավիճակի հսկողությունը ձեր ձեռքը: Ժամանակ առ ժամանակ, բայց ոչ շատ հաճախ, գլխավոր որոշումները կցատկեն ձեզ վրա ճանապարհի եզրից և կցնցեն ձեզ, խենթացնելով: Եթե դուք արդեն որոշել եք, որ անելու եք այն, ինչ ճիշտ է, և թողնելու եք, որ բոլոր հետևանքները առաջ գան, նույնիսկ այդ ընդհարումները չեն վնասի ձեզ:

Ես հասկացել եմ, որ գլխավոր խնդիրների հետ գոտեմարտելու լավագույն ժամանակը վաղ առավոտյան է: Ձեր միտքն այդ ժամանակ թարմ է և զգաստ: Ձեր մտքի գրատախտակը մաքրվել է գիշերային լավ հանգստից: Օրվա կուտակված խոչընդոտները ձեր ճանապարհին չեն: Ձեր մարմինը ևս հանգստացած է: Դա էէ ժամանակը խորը մտածելու շատ խնամքով և ստանալու անձնական հայտնություն:

Ես լսել եմ, թե ինչպես է Նախագահ Հարոլդ Բ. Լին սկսել հայտնության հարցերին առնչվող շատ մտքեր այսպիսի մի արտահայտությամբ. «Առավոտյան վաղ ժամերին, երբ ես խորհում էի այդ նյութի շուրջ» և այլն: Նա սովորույթ էր դարձրել աշխատել խնդիրների վրա, որոնք հայտնություն էին պահանջում, վաղ առավոտյան թարմ, զգաստ ժամերին:

Տերը մի բան գիտեր, երբ Նա ուղղորդում տվեց Վարդապետություն և Ուխտերում. «Դադարեք քնել ավելի շատ, քան անհրաժեշտ է. վաղ մտեք ձեր անկողինը, որպեսզի չհոգնեք. վաղ վեր կացեք, որ ձեր մարմինն ու միտքն առույգ լինեն» (ՎԱՈՒ 88.124):

Խորհուրդ տվեք մեր երեխաներին իրենց կարևոր ուսումնասիրությունը կատարել առավոտյան վաղ ժամերին, երբ նրանք թարմ են և զգաստ, ոչ թե պայքարել ֆիզիկական հոգնածության և մտավոր ուժասպառության դեմ գիշերը: Ես հասկացել եմ, որ «վաղ քնել ու վաղ արթնանալ» ասույթը զորավոր է: Երբ ճնշման տակ եմ լինում, օրինակ, երբ պատրաստում էի այս ելույթը, դուք ինձ չէիք գտնի կեսգիշերին աշխատելիս: Փոխարենը ես շուտ եմ գնում քնելու և վաղ վեր կենում առավոտյան, երբ կարող եմ մոտիկ լինել Նրան, ով առաջնորդում է այս աշխատանքը:

Այժմ հայտնության մասին: Մեզ բոլորիս ուսուցանվել է, որ հայտնությունը մատչելի է մեզ անձնապես: Ամենաշատ տրվող հարցը հայտնության վերաբերյալ այս է. «Ինչպե՞ս իմանամ թե, երբ եմ ստանում այն: Ես աղոթել եմ և ծոմ պահել այդ խնդրի համար և աղոթել եմ այդ մասին ու աղոթել և դեռ լիովին չգիտեմ ինչ անել: Ինչպե՞ս կարող եմ իսկապես իմանալ, թե ես ոգեշնչված եմ, որպեսզի սխալ չգործեմ»:

Առաջինը, արդյո՞ք դուք գնում եք Տիրոջ մոտ որևէ հարցով և խնդրում Նրան որոշում ընդունել ձեզ համար: Թե՞ աշխատում եք և խորհրդածում և աղոթում, իսկ հետո ընդունում որոշում: Քննեք խնդիրը, համեմատելով նրա հետ, ինչ դուք գիտեք ճիշտ է կամ սխալ և հետո ընդունեք որոշում: Ապա հարցրեք Նրան, արդյո՞ք որոշումը ճիշտ է, թե սխալ: Հիշեք, թե ինչ ասաց Նա Օլիվեր Քաուդերիին իր մտքում այն քննելու մասին:

Լսեք այս նախադասությունը, եթե դուք որևէ այլ բան չեք լսում. Եթե մենք հիմարաբար խնդրում ենք մեր եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին կամ էլ Տիրոջը մեր փոխարեն որոշում ընդունել, այդտեղ հազիվ թե ինքնապավինման նշույլ կա: Մտածեք թե ինչ գին եք վճարում ամեն անգամ, երբ ուրիշ որևէ մեկին ստիպում եք որոշում ընդունել ձեզ համար:

Կարծում եմ, ես պետք է նշեմ մեկ այլ բան և հուսով եմ սա սխալ չի հասկացվի: Մենք հաճախ հանդիպում ենք երիտասարդ մարդկանց աղոթելիս մեծ ջանասիրությամբ այն հարցերի համար, որոնք նրանք ազատ են որոշելու ինքնուրույն: Եկեք պատկերացնենք մի զույգ, որն առձեռն փող ուներ տուն կառուցելու համար: Պատկերացրեք, որ նրանք անվերջ աղոթում են, թե այն կառուցեն վաղ ամերիկյան ոճով, ռանչոյի ոճով, ժամանակակից ճարտարապետության ոճով, կամ միգուցե միջերկրական ոճով: Երբևէ մտածե՞լ եք, որ գուցե Տիրոջ ուղղակի հոգը չէ, թե ինչ ոճ է: Թող կառուցեն, ինչ ուզում են: Դա նրանց ընտրությունն է: Շատ դեպքերում մենք կարող ենք անել ուղղակի ինչ ուզում ենք:

Բայց *կան* բաներ, որոնց մասին Նա շատ է հոգում: Եթե դուք պատրաստվում եք կառուցել այդ տունը, ապա եղեք ազնիվ և վճարեք շինանյութի համար, որն օգտագործվելու է և պատշաճ գործ արեք, կառուցելով այն: Երբ տեղափոխվեք այնտեղ, արդար ապրեք այդ տանը: Դրանք են այն բաները, որոնք հաշվի են առնվում:

Այդ առիթների դեպքում ես խորհուրդ էի տալիս մարդկանց, որ Տերը հավանաբար միանգամայն հոժարակամորեն հավանություն կտա նրան, ինչ իրենք մտադրվել են անել իրենց ցանկություններին հետևելով: Տարօրինակ է, երբ նրանք գալիս են և գրեթե մեղավոր զգում ինչ որ բան անելիս, որովհետև նրանք ցանկանում են դա, նույնիսկ երբ դա արդար է: Տերը շատ առատաձեռն է, երբ Նա մեզ ազատություն է տալիս: Որքան ավելի շատ ենք սովորում հետևել ճշտին, այնքան ավելի հոգեպես ինքնապավինող ենք դառնում, այնքան ավելի շատ է մեր ազատությունն ու անկախությունը հաստատվում: «Եթե դուք իմ խոսքի մեջ կենաք, ճշմարտապես իմ աշակերտներն եք: Եվ ճշմարտությունը կճանաչեք. և ճշմարտությունը կազատե ձեզ» (Հովհ Ը.31–32):

«Ի՞նչպես է, որ դուք չեք պահում Տիրոջ պատվիրանները: Ի՞նչպես է, որ դուք պիտի կորչեք ձեր սրտերի կարծրության պատճառով: Դուք չե՞ք հիշում այն բաները, որ Տերն ասել է. Եթե դուք չկարծրացնեք ձեր սրտերը և խնդրեք ինձ հավատքով, հավատալով, որ կստանաք, ջանասիրությամբ պահելով իմ պատվիրանները, իհարկե, այս բաները հայտնի կդարձվեն ձեզ» (տես 1 Նեփի 15.7–11):

Որպես եզրակացություն, եթե մենք կորցնենք անձնական հայտնության ոգին և զորությունը, մենք կորցրած կլինենք շատ բան այս Եկեղեցում: Դուք ունեք մեծ և հզոր ռեսուրսներ: Դուք ձեր աղոթքներով կարող եք լուծել ձեր խնդիրները՝ առանց անվերջ գնալու նրանց մոտ, ովքեր այնքան տքնաջանորեն փորձում են օգնել ուրիշներին:

Այժմ, եթե դուք սկսեք ստանալ հայտնություններ որևէ մեկ ուրիշի իրավասության վերաբերյալ, դուք անմիջապես իմացեք, որ ձեզ մոտ ինչ որ բան կարգին չէ և որ դրանք գալիս են սխալ աղբյուրից:

Եթե դուք այնքան կախյալ եք և անապահով, որ աղոթքն ու աղոթքի պատասխանը այնպիսին են, որ դուք տատանվում եք հենվել դրանց վրա, ապա դուք թույլ եք:

Եթե մենք հետևում ենք մի ուղու, որտեղ մի կողմից մենք խնամքով մանրամասն ուսումնասիրում ենք մի կարգ ու կանոն բարօրության համար մթերքներ հավաքելու մասին և, այնուամենայնիվ, մյուս կողմից տալիս ենք խրատ և խորհուրդ առանց ձեզ ուղարկելու գիտելիքի և ոգեշնչման ձեր իսկ պահեստը, ապա մենք վատ ծառայություն ենք անում ձեզ:

Այս Եկեղեցին հենվում է անձնական վկայության վրա: Յուրաքանչյուրը պետք է վաստակի իր սեփական վկայությունը: Այդ ժամանակ է, որ դուք կարող եք կանգնել և ասել, ինչպես որ ես կարող եմ ասել, որ ես գիտեմ, որ Աստված ապրում է, որ Նա մեր Հայրն է, որ մենք ունենք երեխա- ծնող հարաբերություն Նրա հետ: Ես գիտեմ, որ Նա մոտիկ է, որ մենք կարող ենք գնալ Նրա մոտ և խնդրել և հետո, եթե մենք հնազանդ լինենք և լսենք և օգտագործենք ամեն ռեսուրս, մենք կունենանք պատասխան մեր աղոթքներին:

Սա Նրա Եկեղեցին է: Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Մենք ունենք մարգարե, որը նախագահում է Եկեղեցու վրա: Մեզանից յուրաքանչյուրը և ամեն մի հոգի այս երկրագնդի վրա կարող է իմանալ այդ: Ես բերում եմ վկայություն այդ մասին: Ես գիտեմ, որ Նա ապրում է և հաստատում եմ այս վկայությունը ձեզ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԴԱՌՆԱԼՈՎ ԻՆՔՆԱՊԱՎԻՆՈՂ

Երեց Լ. Թոմ Փերի

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, հոկտ. 1991, 87–90, կամ Ensign, Նոյ. 1991, 64–66

Նեփիի ինքնապավինումը

Լեքին և իր ընտանիքը անապատում ութ տարի թափառելուց հետո, եկան մի տեղ, որը կոչվում էր Բաունթիֆուլ,

որովհետև այն շատ մրգերի և վայրի մեղրի վայր էր: Նրանք եկան մի մեծ ծովի մոտ և նրանք հրճվեցին Տիրոջով, որովհետև Նա նրանց պահպանեց: Շատ օրեր Բաուենթիֆուլի երկրում մնալուց հետո, Տերը խոսեց Նեփիի հետ և ասաց. «Վեր կաց և բարձրացիր սարը» (1 Նեփի 17.7):

Նեփիին հնազանդվեց Տիրոջը, նա գնաց սար և աղոթեց: Եվ Տերը պատվիրեց Նեփիին. «Դու պետք է մի նավ կառուցես՝ այն ձևով, որ ես ցույց կտամ քեզ, որ ես կարողանամ տանել քո ժողովրդին այս ջրերի մյուս կողմը» (1 Նեփի 17.8):

Այդ ժամանակ Նեփիին հարցրեց Տիրոջը. «Ո՞ւր պետք է գնամ, որ կարողանամ գտնել հանքանյութ, որ հալեմ, որպեսզի կարողանամ գործիքներ սարքել՝ նավը կառուցելու համար, այն ձևով, որ դու ցույց տվեցիր ինձ» (1 Նեփի 17.9):

Տերը Նեփիին հրահանգեց, թե որտեղից կարող էր գտնել հանքանյութ, բայց հետո Նեփիին ինքնուրույն էր թողված: 1 Նեփի գլուխ 17–ում կարդում ենք.

«Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, կենդանիների կաշվից փուքս սարքեցի՝ դրանով կրակը փչելու համար. և փուքս սարքելուց հետո, որպեսզի կարողանայի ունենալ ինչով փչել կրակը, ես երկու քար իրար հարվածեցի, որ կարողանայի կրակ ստանալ …

Եվ եղավ այնպես, որ ես գործիքներ սարքեցի այն հանքանյութից, որը ես հալել էի ապարից» (17.11, 16):

Սա հետաքրքիր պատմվածքներից մեկն է, որ մենք ունենք սուրբ գրություններում, որովհետև այն պատմում է մի դեպքի մասին, երբ Տերն օգնություն ապահովեց, բայց հետո մի կողմ քաշվեց՝ թույլ տալով Իր որդիներից մեկին գործադրել իր իսկ նախաձեռնությունը: Երբեմն մտածում էի, թե ինչ կպատահեր, եթե Նեփիին գործիքներ սարքելու համար հանքանյութ գտնելու տեղի փոխարեն գործիքներ խնդրեր Տիրոջից: Կասկածում եմ, թե Տերը հարգեր Նեփիի խնդրանքը: Տեսնում եք, որ Տերը գիտեր, որ Նեփիին կարող էր գործիքներ պատրաստել և հազվադեպ է Տերն անում ինչ որ բան մեզ համար, որը մենք կարողանում ենք անել ինքներս մեզ համար:

Ինքնապավինման կարևորությունը

Տերն իսկապես օգնում է, երբ մենք գնում ենք Նրա մոտ կարիքի ժամանակ, հատկապես, երբ մենք նվիրված ենք Նրա գործին և արձագանքում ենք Նրա կամքին: Բայց Տերն օգնում է միայն նրանց, ովքեր հոժար են օգնել իրենք իրենց: Նա սպասում է, որ Իր զավակները լինեն ինքնապավինող այն աստիճան, որքան կարող են:

Բրիգամ Յանգը հրահանգեց Սրբերին. «Փոխարեն որոնելու, թե Տերն ինչ է պատրաստվում անել մեզ համար, եկեք հարցնենք, թե ինչ կարող ենք ինքներս անել մեզ համար» (*Discourses of Brigham Young*, sel. John A. Widtsoe [Salt Lake City: Deseret Book Co., 1941], p. 293):

Անկախությունը և ինքնապավինումը կրիտիկական են մեր հոգևոր և աշխարհիկ աճի համար: Երբ մենք ընկնում ենք իրավիճակների մեջ, որոնք սպառնում են մեր ինքնապավինմանը, մենք մեր ազատությունները նույնպես կգտնենք սպառնալիքի տակ: Եթե մենք մեծացնում ենք մեր կախվածությունը որևէ բանից կամ որևէ մեկից, բացի Տիրոջից, մենք անմիջապես կտեսնենք, որ գործելու մեր ազատությունը սահմանափակում է: Ինչպես Նախագահ Հեբեր Ջ. Գրանտն է հայտարարել. «Ոչինչ չի կործանում տղամարդու կամ կնոջ կամ էլ երեխայի անհատականությունը ինչպես ինքնապավինող լինելու ձախողումը» (“Address,” *Relief Society Magazine,* Oct. 1937, p. 627):

Իմ կյանքում երբեք նախկինում ինքնապավինման վարդապետությունն այսքան անհրաժեշտ չի եղել Սրբերին քարոզելու և խրախուսելու համար: Մենք ապրում ենք բուռն փոփոխությունների ժամանակաշրջանում: Կառավարությունները բարձրանում են և անկում ապրում: Արդյունաբերությունը ծաղկում է, հետո շատ շուտ ամեն-ինչ հնացած է դառնում: Գիտության մեջ նոր հայտնագործությունները շուտով ստվերվում են նոր գյուտերով: Եթե մենք անընդհատ չլայնացնենք մեր հասկացողությունը և հեռանկարը, մենք ևս կդառնանք հնաոճ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ անձնավորությունները, ովքեր այսօր մտնում են աշխատանքային շուկա իրենց աշխատանքային տարիների ընթացքում ստիպված կլինեն գտնել երեքից հինգ կարիերայի ուղիներ:

Ի՞նչ պետք է անենք դառնալու համար ավելի ինքնապավինող:

Ընտանեկան ավանդույթ

Ծնողներս ստեղծել էին մի ընտանեկան ավանդույթ մեր տանը, որն ինձ համար զվարճություն էր իմ վաղ տարիներին և դարձել է նույնիսկ ավելի իմաստալի, երբ մտքով ետ եմ գնում, երբ տարիներ են անցել: Յուրաքանչյուր երեխայի առաջին ծննդյան օրը ընտանիքը սովորաբար հավաքվում էր ճաշասենյակում: Ճաշասենյակի կենտրոնում՝ հատակին մեր ծնողները դնում էին իրեր՝ մեկ տարեկան երեխայի ընտրության համար: Կատարվող ընտրությունը կարող էր ցույց տալ մի հետաքրքրություն, որին երեխան, հավանական է, հետամուտ լիներ կյանքում: Այդ իրերն էին Աստվածաշունչը, երեխայի կաթով լիքը շիշը, խաղալիք և մանրադրամով լիքը փող խնայելու արկղիկ: Երեխային դնում էին սենյակի մի կողմում, իսկ ընտանիքը սպասում էր մյուս կողմում: Ընտանիքի անդամները խրախուսում էին երեխային սողալով մոտենալ առարկաներին և ընտրություն կատարել: Այս բոլորը արվում էր իհարկե, որպես զվարճություն:

Ինձ ասվել էր, որ ես ընտրել էի փողով արկղիկը և ես որպես մասնագիտություն ընտրեցի ֆինանսների ոլորտը: Ես հետևում էի իմ եղբայր Թեդին, երբ նա ընտրեց սուրբ գրությունները և նա հետևեց օրենքին՝

Անկախությունն ու ինքնապավինումը կրիտիկական են մեր հոգևոր և նյութական աճի համար:

որպես իր ընտրած մասնագիտություն: Տարիների ընթացքում նա հենվել է սուրբ գրությունների վրա որպես դատավճիռներ կայացնելու հիմք: Իմ ամենափոքր եղբայրը՝ Բոբը, ընտանիքի բազմակողմանի անդամն էր: Նա մոտ սողաց, նստեց Աստվածաշնչի վրա, դրեց կաթի շիշը բերանին, իսկ հետո վերցրեց խաղալիքը մի ձեռքով իսկ փողի արկղիկը մյուս ձեռքով:

Հոգևոր սնուցում

Այժմ ես առաջարկում եմ ձեզ, որ այս զվարճալի ընտանեկան միջոցառման մեջ մենք կարողանանք գտնել ինքնապավինման ամենահիմնական սկզբունքները: Սուրբ գրություններում Տերը բացահայտում է Իր կամքը Իր զավակներին: Ժամանակի հենց սկզբից Նա հրահանգել է Իր մարգարեներին արձանագրել Իր հաղորդակցությունները նրանց հետ՝ Իր զավակների օգտի համար: Սուրբ գրությունները հայտնում են հավերժական արժեքներ, դրանք այն ամուր հիմքն են, որի վրա մենք կարող ենք կառուցել հաջող բարոյական փորձառություն: Մենք դառնում ենք ավելի ինքնապավինող, երբ ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, որոնք ուսուցանում են սկզբունքներ, որոնք ապահովում են մեր կյանքի համար աստվածային կենտրոն այստեղ՝ մահկանացու կյանքում:

Մենք պետք է մխիթարվենք այն փաստով, որ ունենք լավագույն տեքստը, որ երբևէ գրվել է կամ երբևէ կգրվի որպես մեր ուղեցույց: Մենք կարող ենք դիմել Բ Թագավորաց հինգերորդ գլխին և սովորել հնազանդության մասին: Մենք կարող ենք ուսումնասիրել Հոբի կյանքը և սովորել հավատարմության մասին: Թագավոր Բենյամինի խոսքը Մոսիայում ուսուցանում է աշխատասիրություն: Հովսեփի կյանքը Ծննդոց ԼԹ գլխում պատմում է մեզ, թե ինչ պետք է անենք, երբ ստուգվում է բարոյականության մեր չափանիշը:

Սրանք ուղղակի մի քանի օրինակներ են այն դասերից, որոնք մենք կարող ենք սովորել սուրբ գրություններից: Դրանք դասեր են, որոնք դիմացել են ժամանակի քննությանը: Մեր մարտահրավերն է դրանք կենդանացնել մեր ընտանիքների սրտերում և մտքերում, երբ մենք հանձն ենք առնում նրանց ուսուցանելու պարտականությունը:

Նյութական ինքնապավինում

Երկրորդը՝ կաթով լիքը շիշը խորհրդանշում է ֆիզիկական մարմնի սնուցման պահանջը: Մեր բարօրության ծառայությունների ծրագիրը ուսուցանել է մեզ՝ օգտագործելով անվի ճաղերը, բացատրել նյութական ինքնապապավինման հիմնական էլեմենտները: Անվի մեջ պարունակվող այդ էլեմենտներն են՝ կրթությունը, ֆիզիկական առողջությունը, աշխատանքը, տնային պահեստը, ռեսուրսների կառավարումը և հասարակական, հուզական և հոգևոր ուժը:

Այս ամառ կինս և ես առիթ ունեցանք այցելելու մի ութսուն տարեկան տղամարդու, որն իհարկե իր կյանքում հանդես էր բերում այս էլեմենտներից յուրաքանչյուրը: Նա ծնվել էր Այդահոյի մի փոքրիկ քաղաքում և երկար ժամեր աշխատել էր իր ագարակում իր կրթությունը ֆինանսավորելու համար: Նա անցկացրել էր իր մասնագիտական կյանքը, դասավանդելով անգլերեն և իսպաներեն մի փոքրիկ միջնակարգ դպրոցում: Իր մեծ ընտանիքի միսիաների և կրթության ֆոնդերի համար գումար մի կողմ դնելու նպատակով, նա աճեցրել էր ելակ և մորի՝ հավաքելով և վաճառելով այն տեղի շուկաներում: Այս աշխատանքը զբաղեցնում էր նրա ամառային ամիսները:

Քանի որ այդ հատապտուղներն աճեցնելն աշխատատար էր, քիչ մարդիկ էին ձգտում դրանք աճեցնել: Դրանք բարձր պահանջարկ ունեցող հատապտուղներ էին: Պահանջարկը միշտ առկա էր, որքան էլ որ նա կարողանար աճեցնել: Նա երբեք գոհ չէր մնում իր հատապտուղների բերքատվությունից, այսպիսով նա ուսումնասիրեց նոր տեսակներ, փորձելով գտնել ամենաբերքատուները: Նրա ետնաբակը տառացիորեն փորձարարական դաշտի էր վերածվել, որտեղ ստուգվում էին տարբեր տեսակի թփուտներ, որոնք տալիս էին ամենաքաղցր և ամենաառատ հատապտուղները այդ կլիմայական պայմաններում: Նրա ուսումնասիրությունները տվեցին բերքատվության աճ: Աշխատանքը նրան պահում էր առողջ ու լավ ֆիզիկական վիճակում: Հատապտուղների դաշտերը ինքնաբերաբար ամեն ամառ աշխատանք էին ապահովում իր երեխաների համար: Շուկա արտահանվող հատապտուղները կարելի էր ոչ միայն վաճառել առձեռն գումարով, այլ նաև փոխանակել ապրանքներով, որոնք կարող էին համալրել իրենց տան պահեստը: Ճիշտ կառավարելով իր ռեսուրսները, նա կառուցեց մի գեղեցիկ տուն և ապահովեց իր ընտանիքի կարիքները:

Այս մարդը սիրում էր հետևել շատանալու և երկիրը լցնելու Տիրոջ համակարգին, որը տալիս էր նրան հասարակական, հուզական և հոգևոր ուժ: Այժմ թոշակի անցնելով իր ակտիվ դասավանդման աշխատանքից, նա շարունակում է հատապտուղներ աճեցնել, ոչ թե շահույթի համար այլ բավականության: Հատապտուղների բերքահավաքի ընթացքում յուրաքանչյուր շաբաթվա վեց առավոտ, դուք կարող եք տեսնել նրան տասից տասներկու մեքենաների շարանն առաջնորդելիս քաղաքից դուրս դեպի իր հատապտուղների հողակտորը: Ընտանիքները գալիս են համալրելու տնական պահեստը հատապտուղներ հավաքելով: Ես հարցրեցի նրան, թե որքան կլիներ մեկ տուփ հատապտղի գինը, եթե մենք հավաքեինք հատապտուղը: Նա պատասխանեց. «Ես չգիտեմ: Իմ վճարը մարդկանց դեմքերին նրանց գոհունակությունը տեսնելն է, երբ նրանք հեռանում են դաշտից, իրենց ձեռքում բռնած իրենց աշխատանքով հավաքած հատապտուղները»:

Ես գիտեմ, որ ընտանիքների համար ինքնապավինում գտնելու հազարավոր ուղիներ կան՝ արդյունավետ գործերում միասին աշխատելու արդյունքում: Հավանաբար, լավ

ընտանեկան երեկոյի մի քննարկում կարող է տալ որոշ գաղափարներ՝ օգնելու ձեր ընտանեկան միավորը դարձնել նյութապես ավելի ինքնապավինող:

Ռեսուրսների ճիշտ օգտագործում

Երրորդը, խաղալիքը, որի մասին ես նշել էի ավելի վաղ, ներկայացնում է աշխարհիկ բաների ձեռք բերումը: Այժմ մենք ռմբակոծվում ենք հզոր լրատվությամբ՝ ձեռք բերելու այժմ և վճարելու հետո գովազդով, որը համոզում է, որ դրանք ոչ դժվար ամենամսյա հերթական վճարումներ են: Մենք ապրում ենք մի անհամբեր աշխարհում, որտեղ ամեն մեկը կամենում է ամեն ինչ այժմ: Աշխարհիկ ապրանքների ձեքբերումը, թվում է, բացում է ախորժակը ավելի շատ ձեռքբերումների, քան որևէ ձևի տևական բավարարվածություն ստանալու համար:

Մեր ռեսուրսները և աշխարհիկ ապրանքներն իմաստուն ձևով օգտագործելը և դրանց օգտագործման ժամանակի երկարացումը կօգնեն մեզ դառնալ ավելի ինքնապավինող: Ես նայում էի, թե ինչպես էր մի երիտասարդ ընտանիք տեղափոխվում այս ամառ, և ինձ հետաքրքրեցին արկղերի վրայի պիտակները, որոնք դուրս էին հանում պահեստասենյակից: Դրանց վրա գրված էին «Հագուստներ աղջիկների՝ 2 տարեկան», «Հագուստներ աղջկների՝ 3տարեկան», և այսպես շարունակ: Պարզ էր, որ այս ընտանիքը գնված հագուստների օգտագործման ժամանակը առավելագույնի հասցնելու լավ հղացած ծրագիր ուներ:

Մենք ապրում ենք մի աշխարհում, որն օրհնված է առատությամբ: Եկեք համոզված լինենք, որ ռեսուրսները, որոնցով մենք օրհնված ենք, երբեք չեն վատնվի:

Ֆինանսական ապահովություն

Ի վերջո, չորրորդը՝ փողի արկղիկը: Այն խորհրդանշում է մեր ֆինանսական ապահովությունը: Ես մի հիանալի դաս սովորեցի իմ գործարարական կարիերայի սկզբում: Իմ ղեկավարն ինձ կանչեց իր գրասենյակ: Զգում էի, որ ինչ որ բան ուներ մտքում: Նա ասաց. «Ինձ ասա շահույթի սահմանումը»: Իհարկե, ես հիշեցի իմ դասընթացը և տվեցի մի սահմանում, որը ես սովորել էի դասագրքից: Նա ասաց.«Ոչ, ոչ, ոչ, դա այն չէ, ինչ ես եմ ուզում: Դու լսիր և հիշիր այս մեկը. Նրանք ովքեր հասկանում են դա, վաստակում են այն, իսկ նրանք, ովքեր չեն հասկանում, վճարում են այն»:

Այժմ պետք չէ հանճար լինել հասկանալու, որ նախքան դուք կարող եք շահույթ ունենալ, դուք պետք է որոշ խնայողություններ ունենաք: Խնայողություններ ունենալը մինչ ապրուստի չափանիշը շարունակում է բարձրանալ, պահանջում է հասկացողություն մի հասարակ գործողության և ապա այն սրբորեն կիրառելու վերաբերյալ: Ձեր տասանորդը Տիրոջը վճարելուց հետո, դուք վճարում եք ձեզ մի կանխորոշված գումար ուղիղ խնայողությունների վրա: Դա թողնում է ձեզ մի հաշվեկշիռ ձեր եկամուտը բյուջեավորելու, հարկերի, ուտելիքի, հագուստի, ապաստանի, տրանսպորտի և այլնի համար: Ինձ համար զարմանալի է, որ այդքան շատ մարդիկ աշխատում են իրենց ողջ կյանքում մթերային խանութի, տանտիրոջ, էլեկտրականության ցանցի, ավտոմեքենա վաճառողի և բանկի համար և այնքան քիչ են մտածում իրենց իսկ ջանքերի մասին, և իրենք իրենց ոչինչ չեն վճարում:

Եղեք խելամիտ, իմաստուն և պահպանողական ձեր ներդրումային ծրագրերում, որպեսզի կարողանաք ստեղծել ձեր արտակարգ իրավիճակների և թոշակի համար խնայողություններ: Սա կօժանդակի ինքնապավինող դառնալու ձեր ջանքերին:

Ինքնապավինման սկզբունքը հոգևոր է, ինչպես նաև նյութական: Դա աշխարհի վերջը նախապատրաստելու ծրագիր չէ, այն մեր կյանքի յուրաքանչյուր և ամեն օր օգտագործելու համար է: Թող որ մենք շարունակենք ամուր բռնել ինքնապավինման հավերժական ճշմարտություններից՝ սա է իմ աղոթքը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՄԻԱՅՆԱԿ ԾՆՈՂՆԵՐ

Նույնիսկ միայնակ ծնող ունեցող ընտանիքներում ընտանիքը շարունակվում է, քանի որ ընտանիքները հավերժ են:

—Երեց Բեն Բ. Բանքս

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Միայնակ մայրեր և հայրեր, թույլ տվեք երախտագիտության հատուկ խոսք հղել ձեզ: Ձեր բեռը ծանր է: Մենք գիտենք սա: Ձեր մտահոգությունները խորն են: Երբեք բավականաչափ գումար չկա: Երբեք բավականաչափ ժամանակ չկա: Արեք լավագույնը, որ դուք կարող եք և աղերսեք Տիրոջը, որ օգնի ձեզ, որպեսզի ձեր երեխաներն աճեն շնորհքով և գիտությունով և հաջողությունով և, ամենակարևորը, հավատքով: Եթե դուք անեք սա, կգա օրը, երբ դուք ծնկի կիջնեք և արցունքներն աչքերում շնորհակալություն կհայտնեք Տիրոջը՝ձեզ տրված օրհնությունների համար: (“A Conversation with Single Adults,” *Ensign,* Mar. 1997, 63):

Այժմ խոսքս ուղղում են ձեզ՝ միայնակ մայրեր, ինչն էլ որ լինի ձեր ներկա իրավիճակի պատճառը, մենք ձեզ շատ ենք սիրում: Մենք գիտենք, որ ձեզանից շատերն ապրում են միայնակ, անապահով, անհանգիստ ու վախով: Ձեզանից շատերը երբեք բավականաչափ գումար չեն ունենում: Ձեզ մշտապես հուզում են ձեր երեխաների ու նրանց ապագայի հետ կապված հարցերը: Ձեզանից շատերը գտնվում են այնպիսի իրավիճակներում, որ պետք է աշխատեն և ձեր երեխաներն իրենք են հոգ տանում իրենց համար: Բայց եթե դեռ մանկուց նրանց հանդեպ մեծ հոգատարություն, մեծ սեր է ցուցաբերվում, միասին աղոթում եք, ապա ավելի հավանական է, որ խաղաղություն լինի ձեր երեխաների սրտերում և նրանք ուժեղ բնավորություն ունենան: Սովորեցրեք նրանց Տիրոջ ճանապարհները: Ինչպես հայտարարել է Եսայիան՝ «Եւ քո բոլոր որդիքը Տէրից ուսուած պիտի լինեն, եւ շատ պիտի լինի քո որդկանց խաղաղութիւնը» (Եսայիա ԾԴ.13):

«Որքան շատ պահեք ձեր երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանի ուղիներին համապատասխան՝ սիրով ու մեծ սպասելիքներով, ավելի հավանական է, որ նրանց կյանքում խաղաղություն լինի:

«Օրինակ եղեք նրանց համար: Դա ավելի մեծ արժեք կունենա, քան բոլոր ուսուցումները, որ դուք կարող եք նրանց տալ: Երես մի տվեք նրանց: Թող նրանք մեծանան հարգելով և հասկանալով աշխատանքի նշանակությունը, աշխատելով ու հոգ տանելով տան ու դրա շրջակայքի համար՝ որոշ ճանապարհներով վաստակելով իրենց ծախսերի համար անհրաժեշտ գումարի մի մասը: Թող ձեր տղաները գումարներ խնայեն միսիայի համար, և խրախուսեք նրանց պատրաստվել ոչ միայն ֆինանսապես, այլ նաև հոգեպես և առանց որևէ եսասիրության Տիրոջը գնալու և ծառայելու դիրքորոշում ունենալ: Ես առանց կասկածելու խոստանում եմ ձեզ, որ եթե դուք անեք սա, դուք պատճառ կունենաք հաշվելու ձեր օրհնությունները» (“Stand Strong against the Wiles of the World,” *Ensign,* Nov. 1995, 99–100):

«Բեռը, որն ընկնում է երիտասարդ կնոջ վրա, ով պետք է միայնակ մեծացնի իր երեխային, անհավատալի ծանր է և ուժասպառ անող ... Պատասխանը հստակ է: Դա կախված է ավետարանի սկզբունքներին և Եկեղեցու ուսմունքներին հավատարիմ մնալուց: Դա կախված է ներքին դաստիարակությունից» (in Conference Report, Oct. 1994, 73; կամ *Ensign,* Nov. 1994, 53):

«Անցած տասը տարիների ընթացքում երեք թե չորս առիթ եմ ունեցել խոսքս ուղղելու Եկեղեցու կանանց: Այդ մի քանի ելույթներին ի պատասխան ես ստացել եմ զգալի քանակությամբ նամակներ: Ես դրանցից մի քանիսը պահել եմ քարտարանում «Դժբախտ կանայք» նշագրումով:

... Ես ցանկանում եմ կարդալ ձեզ համար դրանցից մեկից մի հատված, որը ստացել եմ ընդամենը մեկ շաբաթ առաջ: ...

«Այնուհետև պատահեց անսպասելին: Մոտ մեկ տարի առաջ նա որոշեց, որ երբեք ինձ չի սիրել և որ մեր ամուսնությունը սխալմունք էր ի սկզբանե: Նա համոզված էր, որ մեր հարաբերություններում ոչինչ չկար նրա համար: Նա բաժանվելու համար դիմեց դատարան և հեռացավ: «Սպասիր», շարունակ ասում էի ես: «Օ, ոչ: Վերջ տուր: Ինչու ես դու հեռանում: Ինչն է սխալ: Խնդրում եմ, խոսիր ինձ հետ: Նայիր մեր երեխաներին: Ի՞նչ կասես մեր բոլոր երազանքների մասին: Հիշիր մեր ուխտերը: Ոչ, ոչ: Բաժանվելը հարցի լուծում չէ»: Նա ինձ չէր լսում: Ես մտածում էի՝ ես կմեռնեմ:

Այժմ ես միայնակ ծնող եմ: Խոր վշտի, ցավի և միայնակության ինչ ահռելի բեռ կա այդ արտահայտության ետևում: Այն բացատրություն է տալիս իմ դեռահաս տղաների այնքան շատ ջղայինցնցումներին ու այնքան մեծ զայրույթին: Այն բացատրություն է տալիս իմ փոքրիկ աղջիկների բազում արցունքներին: Այն բացատրություն է տալիս բազում անքուն գիշերներին, բազում ընտանիքի

պահանջներին ու կարիքներին: Ինչու՞ եմ ես այս խառնաշփոթ վիճակում: Ի՞նչ սխալ ընտրություն եմ ես կատարել: Ինչպե՞ս եմ երբևիցե ավարտելու ուսումս: Ինչպե՞ս եմ ապրելու այս շաբաթը: Որտե՞ղ է իմ ամուսինը: Որտե՞ղ է իմ երեխաների հայրը: Ես միանում եմ հոգնած կանանց խմբին, ում ամուսինները լքել են իրենց: Ես չունեմ փող, աշխատանք: Ես ունեմ երեխաներ, որոնց համար պետք է հոգամ, վարձավճարներ, որոնք պետք է վճարվեն, և ոչ այնքան շատ հույս»(Conference Report, Oct. 1991, 69–70; կամ *Ensign,* Nov. 1991, 50):

Դուք, որ բաժանված եք, խնդրում եմ իմացեք, որ մենք ձեր վրա չենք նայում որպես անհաջողակների, որովհետև ամուսնությունն անհաջող էր: Շատ դեպքերում, հավանաբար մեծամասամբ, դուք պատասխանատու չէիք այդ անհաջողության համար: Դեռ ավելին, մենք պարտավորություն ունենք ոչ թե դատապարտելու, այլ ներելու և մոռանալու, բարձրացնելու և օգնելու: Ձեր տխրության ժամին դարձեք դեպի Տերը, ով ասել է. «Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ: ...

Որովհետեւ իմ լուծը քաղցր է, եւ իմ բեռը՝ թեթեւ»(Մատթեոս ԺԱ.28,30):

Տերը ձեզ չի մերժի և ոչ էլ երես կդարձնի ձեզնից: Ձեր աղոթքների պատասխանները կարող է ակնհայտ չլինեն. դրանք կարող է միանգամից չհասկացվեն կամ նույնիսկ չգնահատվեն: Բայց ժամանակ կգա, որ դուք կիմանաք, որ դուք օրհնվել եք: Քանզի ձեզանից նրանք, որ երեխաներ ունեն և ջանում են մեծացնել նրանց արդարության մեջ, վստահ եղեք, որ նրանք օրհնություն և մխիթարություն և ուժ կտան ձեզ բոլոր եկող տարիների համար:

Այժմ դիմում եմ նրանց, ովքեր կորցրել են իրենց կողակցին մահվան պատճառով, մեր սրտերը լի են ձեր հանդեպ սիրով ու կարեկցանքով: Ինչպես մի անգամ նկատել է մի մարդ. «Բաժանման սրից վիրավորված սրտի համար դարման չկա»(Hitopadesa, *Elbert Hubbard's Scrapbook,* New York City: Wm. H. Wise and Co., 1923, p. 21):

Ձեզանից շատերի մոտ ծանր կորստի ու վախի մշտական ցավ կա: Ձեր համար Տերն ասել է. «Երանի սգաւորներին, որ նորանք կմխիթարուին»(Մատթեոս Ե.4):

Մենք գիտենք, որ ձեզանից շատերն ունենում են միայնակ օրեր և կարոտով լի գիշերներ: Բայց կա նաև այն, ինչ գալիս է Նրանից, ով ասել է. «Ես՝ ես եմ ձեզ մխիթարողը» (Եսայիա ԾԱ.12):

Տերն է ձեր ուժը: Նա պատրաստ է օգնել ձեզ և երբ հրավիրեք, Նա Իր Հոգով կայցելի ձեզ:

Դուք նույնպես մեծ տաղանդներ ունեք ուրիշների կյանքը հարստացնելու համար: Դուք մխիթարություն և ուժ կգտնեք, մինչ կմոռանաք ինքներդ ձեզ նրանց ծառայելիս: Ձեր սեփական դժվարությունները կմոռացվեն, մինչ դուք կօգնեք ուրիշներին հաղթահարել իրենց դժվարությունները: Ձեր բեռները կթեթևանան, մինչ դուք կբարձրացնեք ընկճվածների և ճնշվածների բեռները»(“To Single Adults,” *Ensign,* June 1989, 74):

Երեց Մարվին Ջ. Աշթոն

«Որոշ մայրեր թվում է, թե ունեն ունակություն և էներգիա պատրաստելու իրենց երեխաների հագուստները, թխելու, դաշնամուրի դասեր տալու, գնալու Սփոփող Միություն, Կիրակնօրյա Դպրոցում ուսուցանելու, մասնակցելու ծնողական ժողովներին, և այսպես շարունակ: Ուրիշ մայրեր նայում են այսպիսի կանանց որպես օրինակելի էակների և զգում են իրենց անվստահ, վհատված և մտածում են, որ իրենք անհաջողակներ են, երբ նրանք համեմատվում են նրանց հետ:

Մենք չպիտի մեզ թույլ տանք ընկնել թերարժեքության զգացումի այսպիսի վնասակար ծուղակի մեջ: Սա Սատանայի մեկ այլ գործիք է: Շատերը թվում է չափից ավելի ճնշում են գործադրում իրենց վրա լինելու ամենալավ մայրը կամ ամենալավ կինը:

Քույրեր, թույլ մի տվեք, որ ձեզ զգաք անվստահ կամ հուսալքված, քանի որ դուք չեք կարողանում անել այն ամենը, որ թվում է ուրիշներին հաջողվում է անել: Ավելի ճիշտ յուրաքանչյուրը պիտի գնահատի իր իսկ իրավիճակը, իր սեփական էներգիան, և իր սեփական տաղանդները, և այնուհետև ընտրի իր ընտանիքը միասնական թիմ դարձնելու լավագույն եղանակը, մի թիմ, որն աշխատում է միասին և աջակցում է մեկը մյուսին: Միայն դուք և ձեր Երկնային Հայրը գիտեք ձեր կարիքները, ուժերը և ցանկությունները: Այս գիտելիքի վրա հիմնվելով պիտի կառուցեք ձեր անձնական նպատակներն ու կատարեք ձեր ընտրությունները» (Conference Report, Apr. 1984, 11; կամ *Ensign,* May 1984, 9–10):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Նախագահ Բենսոնը սովորեցրել է, որ մայրը երեխաների հետ պիտի տանը լինի: Նա նաև ասել է. « Մենք հասկանում ենք ... որ մեր մի քանի լավագույն քույրերը այրի են և բաժանված և որ ոմանք էլ իրենց գտնում են անսովոր պայմաններում, որտեղ, ելնելով կարիքից, որոշ ժամանակ նրանցից պահանջվում է աշխատել: Բայց այս առանձին դեպքերը բացառություններ են, ոչ թե օրենք(Ezra Taft Benson, *To the Mothers in Zion* [pamphlet, 1987], pp. 5–6): Դուք այս արտասովոր հանգամանքներում Տիրոջ կողմից արժանանում եք լրացուցիչ ոգեշնչման և ուժի: Նրանք, ովքեր թողնում են տունը անկարևոր պատճառներով, չեն արժանանա դրանց» (Conference Report, Apr. 1993, 42–43; կամ *Ensign,* May 1993, 34):

Երեց Բեն Բ. Բանքս

«Մենք չենք կարող գերագնահատել ծնողների և ընտանիքի կարևորությունը: Որոշ Վերջին Օրերի Սրբերի ընտանիքների մենք հիշատակում ենք որպես «ավանդական ընտանիք», որը բաղկացած է ծնողներից ու երեխաներից՝ բոլորը իրար հետ մշտական կապի մեջ, որտեղ և մայրը, և հայրը՝ երկուսն էլ կիսում են երեխաների համար հոգալու պարտականությունը: Ոմանք կորցրել են ծնողներից մեկին և դարձել բազում միայնակ ծնող ունեցող ընտանիքներից մեկը: Ես նրանցից մեկն եմ, ով մեծացել է միայնակ ծնող ունեցող ընտանիքում: Իմ հայրը զրկվեց կյանքից շինարարական վթարի արդյունքում, երբ ես երկու տարեկան էի, թողնելով իմ մորը մեծացնելու յոթ երեխաներ: Նույնիսկ միայնակ ծնող ունեցող ընտանիքներում ընտանիքը շարունակվում է, քանի որ ընտանիքները հավերժ են» (Conference Report, հոկտ. 1993, 39; կամ *Ensign,* նոյ. 1993, 29):

Երեց Ջ. Ռիչարդ Քլարկ

«Այժմ ես հասկանում եմ, որ Եկեղեցում կան բազմաթիվ միայնակ ծնող ունեցող ընտանիքներ: ... Նրանք դժկամությամբ են օգնության հայցում և անմիջապես վիրավորվում են իրենց ընտանիքի կարգավիճակի վերաբերյալ անզգույշ ակնարկներից: Դա այդպես է նաև չափահաս ամուրիների մոտ, ովքեր դեռ պետք է ամուսնանան: Նրանք հաճախ իրենց կտրված են զգում Մորմոնական օրինակելի ընտանեկան կյանքից: Նրանք հատկապես կարիք ունեն բարեկամների ավետարանական ընտանիքի մի մասը լինելու համար, որտեղ օրհնություններ կարող են ստանալ քահանայության արժանի կրողներից և լավ օրինակներ կարող են գտնել եղբայրների քվորումում և քույրերի Սփոփող Միությունում: Ծխի ընտանիքները կարող են միաբանվել և սիրով կիսել միմյանց հոգսը: Տիրոջ ծրագրի համաձայն ոչ ոք չպիտի անտեսվի: Մենք բոլորս Քրիստոսի մարմնի անդամներն ենք» (Conference Report, Apr. 1989, 75; կամ *Ensign,* May 1989, 61):

ՏԱՃԱՐԱՅԻՆ ՆԱԽԱ-ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Այդ բանալիները՝երկրի վրա կնքելու և կապելու և դա երկնքում կապված ունենալու բանալիները, ներկայացնում են շատ կարևոր պարգևներ մեր Աստծո կողմից:

—Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Տաճարային արժանավորություն

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Ես նաև հրավիրում եմ Վերջին Օրերի Սրբերին Տիրոջ տաճարին նայել որպես ձեր անդամության մեծ խորհրդանիշի: Իմ սրտի ամենամեծ ցանկությունն է, որ եկեղեցու յուրաքանչյուր անդամ արժանի լինի տաճար մտնելու: Տերը գոհ կլինի, եթե յուրաքանչյուր չափահաս անդամ արժանի լինի և իր մոտ ունենա տաճարային գործող երաշխավորագիր: Գործերը, որ մենք պիտի անենք և տաճարային երաշխավորագրի արժանանալու համար այն բաները, որոնք չպիտի անենք, ապահովում են, որ մենք լինենք երջանիկ որպես անհատներ և որպես ընտանիքներ» (Conference Report, Oct. 1994, 8; կամ *Ensign*, Nov. 1994, 8):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Այս յուրահատուկ ու հիասքանչ շենքերը, և այնտեղ կատարվող արարողությունները ներկայացնում են մեր երկրպագության գերագույն աստիճանը: Այս արարողությունները դարձել են աստվածայնության մեր ամենահիմնավոր դրսևորումները: Ամենայն համոզվածությամբ ես խրախուսում եմ մեր ժողովրդին ամենուր արժանի ապրել տաճարային երաշխավորագրի արժանանալու համար, ունենալ այն և վերաբերվել դրան որպես թանկարժեք ունեցվածքի և ավելի մեծ ջանք գործադրել Տիրոջ տուն գնալու և հոգին ու օրհնությունները ճաշակելու համար, որ կունենաք այնտեղ: Ես համոզված եմ, որ յուրաքանչյուր տղամարդ կամ կին, ով տաճար է գնում ազնվության ու հավատքի հոգով, հեռանում է Տիրոջ տնից ավելի լավ տղամարդ կամ կին դարձած: Մեր ամբողջ կյանքի ընթացքում մենք մշտական կատարելագործման կարիք ունենք: Ժամանակ առ ժամանակ կարիք կա թողնելու աշխարհի աղմուկն ու ոտք դնելու Աստծո սուրբ տան պատերց ներս՝ սրբության և խաղաղության միջավայրում Նրա հոգին այնտեղ զգալու համար» (Conference Report, Sept.–Oct. 1995, 72; կամ *Ensign*, Nov. 1995, 53):

Ուխտեր և պարտավորություններ

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ

«Եթե մարդը դրժում է ուխտը, լինի դա մկրտության, ձեռնադրության, ամուսնության թե ցանկացած այլ ուխտ, Հոգին հեռացնում է հաստատումը, և օրհնությունները չեն ստացվում» (*Doctrines of Salvation*, 1:45):

Երեց Ջեյմս Ի. Թալմիջ

«Օժտման արարողությունը անհատի կողմից ներառում է որոշ պարտավորություններ, ինչպիսիք են՝ առաքինության և մաքրաբարոյության օրենքը խստորեն պահելու ուխտն ու խոստումը, գթառատ, մեծահոգի, համբերատար և մաքուր լինելը, տաղանդն ու նյութական բարիքները ճշմարտության տարածմանն ու մարդկության երջանկության համար նվիրաբերելը և ճշմարտությանը նվիրված մնալն ու ամեն ճանապարհ փնտրելը նպաստելու մեծ պատրաստությանը, որ երկիրը կարողանա պատրաստ լինել իր Թագավորին՝ Տեր Հիսուս Քրիստոսին ընդունելուն: Յուրաքանչյուր ուխտն ընդունելուն և յուրաքանչյուր պարտավորությունը ստանձնելուն զուգահեռ հայտարարվում է խոստացված օրհնությունը, պայմանների հավատարիմ կատարման դեպքում բազում օրհնություններ» (*House of the Lord*, 84):

Տաճարի խորհրդանիշը

Նախագահ Հագ Բ. Բրաուն

«Այստեղ մենք մի կողմ կդնենք ոչ միայն փողոցի հագուստը, այլ նաև փողոցի մտքերը, և կփորձենք մաքուր սպիտակ բամբակե գործվածքով ծածկել ոչ միայն մեր մարմինները, այլ մեր մտքերը՝ մտքի մաքրությամբ»(*Continuing the Quest*, 38):

Երեց Ջոն Ա. Ուիդքսոու

«Մենք ապրում ենք խորհրդանիշների աշխարհում: Ոչ մի տղամարդ կամ կին չի կարող ինչպես հարկն է օժտված դուրս գալ տաճարից, եթե նա չի տեսել է խորհրդանիշերից այն կողմ գտնվող, զորեղ իրականությունները, որոնք ներկայացնում են խորհրդանիշները» (“Temple Worship,” 62):

Օժտման նպատակը

Մարգարե Ջոզեֆ Սմիթ

«Ձեզ անհրաժեշտ է օժտում, եղբայրներ, որպեսզի դուք պատրաստվեք և կարողանաք հաղթահարել բոլոր բաները» (*History of the Church,* 2:309):

Նախագահ Բրիգամ Յանգ

«Թույլ տվեք ձեզ տալ մի համառոտ սահմանում: Ձեր օժտումն նպատակն է, որ Տիրոջ տանը ստանաք այն բոլոր արարողությունները, որոնք ձեզ անհրաժեշտ են այս կյանքից ձեր հեռանալուց հետո, որոնք հնարավորություն կտան ձեզ ետ վերադառնալ Հոր ներկայություն՝ անցնելով հրեշտակների մոտով, որոնք կանգնած են որպես պահապաններ, … և ստանաք ձեր հավերժական վեհացումը» (*Discourses of Brigham Young,* 416):

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ

«Եկեղեցի գալը հրաշալի բան է, բայց դուք չեք կարող վեհացում ստանալ, մինչև որ ուխտեր չկապեք Տիրոջ տանը և չստանաք բանալիներն ու իշխանությունները, որ կտրվեն այնտեղ և որոնք այսօր չեն կարող տրվել ուրիշ ոչ մի վայրում»(*Doctrines of Salvation,* 2:253):

Երեց Ջոն Ա. Ուիդքսոու

«Տաճարային օժտումը կապված է մարդու հավերժական ճանապարհորդության պատմության հետ, տալիս է պայմանները, որոնց վրա հիմնված է հավերժական ճանապարհորդության հաջողությունը, պահանջում է ուխտեր կամ համաձայնագրեր մասնակիցներից՝ ընդունելու և օգտագործելու հաջողության օրենքները, տալիս է հարցեր, որոնց միջոցով իմացվում է արդարության վերաբերյալ մեր կամքը և համապատասխանությունը, և ի վերջո նշում է վերջնական ճակատագիրը նրանց, ովքեր սիրում են ճշմարտությունը և ապրում են դրանով» (*Program of the Church of Jesus Christ of Latter-day Saints,* 178):

Օժտում հասկացողությունը

Երեց Ջոն Ա. Ուիդքսոու

«Օժտումը, որը տրվել է հայտնության միջոցով, լավագույնս կարող է հասկացվել հայտնության միջոցով. և նրանց, ովքեր փնտրում են մեծ եռանդով, մաքուր սրտով, կտրվի մեծագույն հայտնությունը» (“Temple Worship,” 63):

Երեց Հարոլդ Բ. Լի

«Երբ մտնում եք սուրբ տաճար, դուք այդ ընթացքում ընկերակցություն եք ստանում Աստծո հավերժական թագավորության Սրբերի հետ, որտեղ այլևս գոյություն չունի ժամանակ: Ձեր Աստծո տաճարում դուք օժտվում եք ոչ թե աշխարհիկ գանձերի լիառատ ժառանգությամբ, այլ լիառատ հավերժական հարստությամբ, որն անգին է:

Տաճարային արարողությունները նախագծված են իմաստուն Երկնային Հոր կողմից, ով դրանք հայտնել է մեզ այս վերջին օրերում որպես ուղեցույց և պաշտպանություն մեր ողջ կյանքի ընթացքում, որպեսզի դուք և ես կարողանանք վեհացման արժանանալ սելեստիալ արքայությունում, որտեղ բնակվում են Աստված և Քրիստոս»(“Enter a Holy Temple,” *Improvement Era,* June 1967, 144):

Երեց Կառլոս Ի. Ասայ

«Մի քանի տարի առաջ նոր տաճարի նախագահների և նրանց կանանց համար սեմինարում Երեց Ջեյմս Ի. Ֆաուստը՝ այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումից, պատմեց իր՝ որպես Գերագույն Իշխանավոր ծառայության կանչվելու մասին: Նախագահ Հարոլդ Բ. Լին միայն մեկ հարց տվեց նրան՝ «Դուք պատշաճ ձևով ե՞ք կրում տաճարային ներքնազգեստը», որին նա դրական պատասխան տվեց: Այնուհետև նա հարցրեց, թե արդյոք Նախագահ Լին չէր պատրաստվո՞ւմ իրեն հարցնել իր արժանավորության մասին: Նախագահ Լին պատասխանեց, որ նա կարիք չուներ դա անելու, քանի որ նա իր փորձից գիտեր, որ տաճարային ներքնազգեստի կրելու ձևը արտահայտում էր անհատի զգացմունքները Եկեղեցու և դրա հետ կապված ամեն ինչի վերաբերյալ: Դա յուրաքանչյուրի արժանավորությունն ու ավետարանին նվիրվածությունը որոշելու միջոց էր:

Կան մարդիկ, ովքեր անհրաժեշտ են համարում հագուստի հանգամանալից կանոնադրությունը, որը պատասխանում է տաճարային ներքնազգեստ կրելու վերաբերյալ յուրաքանչյուր հնարավոր հարցի: Նրանք ստիպում են քահանայության ղեկավարներին նշել երկարությունները, մանրամասնել պայմանները, թե երբ և ինչպես դա պիտի կամ չպիտի կրեն, և պարտադրում պատիժներ նրանց վրա, ովքեր մի մատնաչափ իսկ վրիպել են: Այսպիսի անհատները պարտադրում են եկեղեցու անդամներին քամել մժեղը իսկ Հիսուս Քրիստոսի ավետարանի կարևոր բաները աչքաթող անել (տես Մատթեոս ԻԳ.23–26):

Վերջին Օրերի Սրբերի մեծամասնությունը, այնուամենայնիվ, հրճվում են խղճի ազատությամբ, որը տրվել է նրանց սիրող Երկնային Հոր կողմից: Նրանք բարձր են գնահատում Տիրոջ և Եկեղեցու ղեկավարների կողմից իրենց վրա դրված վստահությունը՝վստահություն, որի մասին ակնարկվում է Ջոզեֆ Սմիթի այս հայտարարության մեջ. «Ես սովորեցնում եմ նրանց ճիշտ սկզբունքներ, և նրանք ինքներն են կառավարում իրենց»[As quoted by John Taylor, *Millennial Star,* 15 Nov. 1851, 339.]» (“The Temple Garment: ‘An Outward Expression of an Inward Commitment,’ “*Ensign,* Aug. 1997, 19):

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՃԱՐԱՅԻՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Վերջին Օրերի Սրբերին սովորեցրել են տաճարում ամուսնանալու կարևորությունը: Այնտեղ հարս ու փեսայի ամուսնությունը կնքվում է հավերժության համար:

Մի քանի բաներ կան, որոնք պետք է նախօրոք արվեն, որպեսզի դուք կարողանաք ամուսնանալ տաճարում: Որոշ բաներ կապված են եկեղեցու օրենքների հետ և որոշ բաներ էլ երկրի քաղաքացիական օրենքների հետ: Քանի որ տաճարները գտնվում են մի շարք տարբեր երկրներում, իրավաբանական պահանջները տարբեր են:

Եթե դուք մտածում եք որոշակի տաճարում ամուսնանալու մասին, դուք պետք է կապվեք այդ տաճարի հետ և խնդրեք անհրաժեշտ տեղեկություններ տալ: Տաճարների հասցեների համար խնդրում ենք դիմել ձեր եպիսկոպոսին: Նա պետք է որ ունենա տվյալ տարվա «Բոլոր տաճարների ժամանակացույցը»:

Ներքևում նշված են որոշ պայմաններ, որոնք դուք պետք է ի նկատի ունենաք:

Երկրի օրենքը

Արյան անալիզներ

Որոշ տեղեր ամուսնությունը պաշտոնապես թույլատրելու համար ձեզանից հավանաբար կպահանջեն արյան անալիզներ:

Ամուսնության պաշտոնական թույլտվություն

Եթե քաղաքացիական օրենքը ճանաչում է տաճարային ամուսնությունը, ձեզ պետք կգա ամուսնության թույլտվություն, որն ընդունվում է քաղաքացիական արդարադատության կողմից, որտեղ որ գտնվում է տաճարը:

Միացյալ Նահանգներում և Կանադայում դուք պետք է տաճար տանեք իրավաբանական արտոնագիր, որը ձեզ թույլատրում է ամուսնանալ: Այս արտոնագիրը կարող եք ձեռք բերել այն երկրում կամ նահանգում/մարզում, որտեղ գտնվում է տաճարը: Որոշ վայրերում մինչև արտոնագիր ստանալը դուք պետք է ստանաք տվյալ երկրում բնակվելու օրինական իրավունք:

Թույլտվություն

Կախված ձեր տարիքից հնարավոր է անհրաժեշտ լինի, որ ձեր ծնողները լինեն ձեզ հետ գրավոր համաձայնություն տալու համար, որպեսզի ձեռք բերեք ամուսնության արտոնագիր:

Սպասելու ժամանակաշրջան

Որոշ կառավարական մարմիններ պահանջում են սպասելու ժամանակաշրջան՝ ձեր արտոնագրի համար դիմելու օրվա և այն օրվա միջև, երբ դուք կարող է այն ստանաք:

Քաղաքացիական արարողությունը նախորդում է տաճարային կնքմանը

Որոշ երկրներում տաճարային ամուսնությունը ընդունվում է երկրի օրենքի կողմից: Այնուամենայնիվ, բազում այլ երկրներում մարդկանցից, ովքեր ցանկանում են կնքվել տաճարներում, օրենքները պահանջում են առաջինը քաղաքացիական օրենքով ամուսնանալ:

Եկեղեցու արարողակարգերը

Վկաներ

Եկեղեցու երկու տղամարդիկ, ովքեր ունեն վավերական տաճարային երաշխավորագրեր, ձեր ամուսնության ժամանակ կծառայեն որպես վկաներ: Դուք կարող եք ընտրել ձեր վկաներին, ովքեր տաճարում կստորագրեն ձեր ամուսնության թղթերը, կամ տաճարը կտրամադրի վկաներ:

Տաճարային ամուսնության երաշխավորագիր

Երբ տաճար եք գնում ձեր օժտումը ստանալու կամ ամուսնությունը կնքելու համար, դուք պետք է ունենաք երկու երաշխավորագրեր՝տաճարային երաշխավորագիրը և ողջերի արարողությունների երաշխավորագիրը: Առաջինը դուք կօգտագործեք տաճար վերադառնալու համար, որպեսզի աշխատանք կատարեք մահացածների համար: Վերջինը երաշխավորագիր է ձեր օժտման, ամուսնության կամ կնքման համար: Այն տեղեկություններ է ներառում ձեր անդամության տվյալներից, ինչպիսիք են ձեր ծնողների անունները, ձեր մկրտության ամսաթիվը և օժտման ամսաթիվը, եթե դուք մինչ այդ օժտված էիք: Այն նաև պետք է նշի, որ դուք տաճար եք եկել ամուսնանալու համար:

Հայտարարություններ և հրավերներ

Մի ուղարկեք հայտարարություններ և հրավերներ նախքան ձեր տաճարային ամուսնության երաշխավորագրի ստանալը, խուսափելով հնարավոր անհարմար վիճակներից, եթե որևէ պատճառով երաշխավորագիրը մերժվի: Իմացեք, որ կարող են լինել լրացուցիչ հարցազրույցներ ` մինչ դուք մոտենում եք ձեր ամուսնության օրվան:

Մեկ տարուց պակաս

Մարդը չի կարող ստանալ տաճարային երաշխավորագիր մինչև մեկ ամբողջ տարի չանցնի մկրտությունից և հաստատումից: Եթե զույգը քաղաքացիական օրենքով է ամուսնանում և հետո որոշում, որ իրենք ուզում են կնքվել տաճարում, նրանք կնքման համար պետք է իրենց քաղաքացիական ամուսնությունից հետո սպասեն մեկ տարի: Այս սահմանափակումը վերաբերվում է միայն այն մարդկանց, ովքեր կարող էին սկզբում ամուսնանալ տաճարում, բայց ընտրել են չանել դա:

Ժամ և օր

Զույգերը պիտի համաձայնեցնեն իրենց ամուսնության ծրագրերը տաճարի հետ, հավաստիանալու համար, որ այն բաց կլինի այդ օրը և այն ժամին, որ իրենք են ընտրել: Ձեր եպիսկոպոսը կունենա ժամանակացույցը:

Օժտում և կնքում

Զույգերը, որոնք ծրագրում են կնքվել, նախ պետք է ստանան իրենց օժտումները: Դուք կարող եք ստանալ ձեր օժտումը կնքման օրը կամ դրանից առաջ:

Ձեր սեփական օժտման համար դուք պետք է նախատեսեք երեք կամ չորս ժամ: Կնքումը, ներառյալ պաշտոնակատարի կողմից տրված խորհրդատվությունը, կպահանջի ևս քառասունհինգ րոպե: Երբ դուք օժտվում կամ կնքվում եք, դուք պետք է տաճարում լինեք նիստից կամ կնքումից մեկ ժամ առաջ:

Տաճարային հագուստ

Տաճարում հագնում են հատուկ ճերմակ հագուստներ: Դուք կարող եք այն վարձել տաճարում կամ ձեզ հետ վերցնել ձեր սեփականը :

Հարսանյաց հագուստներ

Հարսնացուները կնքման ժամանակ կարող են տաճարում հագնել իրենց հարսանյաց զգեստները: Զգեստները պետք է լինեն ճերմակ, առանց շատ զարդերի, երկարաթև լինեն և ունենան պարկեշտ վզի բացվածք, բոլոր թափանցիկ կտորները աստառապատված լինեն և քղանցքը պետք է շարժական լինի կամ հնարավոր լինի քորոցներով ամրացնել կամ բարձր պահել ճանապարհից: Եթե որևէ հարց ունեք հարմարության վերաբերյալ, տարեք զգեստը կամ կտորն ու նմուշը տաճար՝ թույլտվություն ստանալու համար: Հարսնացուները կարող են կրել իրենց հարսանյաց զգեստները օժտման նիստի ընթացքում, բայց պետք է նիստի ժամանակ հանեն քղանցքը: Նրանք չեն կարող տաճարում հագնել երկար երեկոյան զգեստներ: Շատ տաճարներ ունեն գեղեցիկ ճերմակ զգեստներ նրանց համար, ովքեր կունենեան դրա կարիքը իրենց հատուկ առիթների ժամանակ: Ամեն տաճարում ճշտեք հնարավոր տարբերակները:

Պահեստավորման տեղ հարսանյաց զգեստի համար

Հարսանյաց զգեստները կարող են ուղարկվել տաճարներից շատերին մինչև կնքումը: Զգեստները կտարվեն հարսնացուի հանդերձարան և կպահվեն ձեր համար:

Հյուրերի թիվը

Քանի որ կնքման սենյակները տարբեր են իրենց չափերով, դուք պետք է տեղեկացնեք տաճարին (երբ դուք նախնական պատվեր եք կատարում), թե քանի հյուր եք նախատեսում, որ կայցելեն ձեր կնքմանը: Օժտմանը կարող են մասնակցել միայն այն անձինք, ովքեր ստացել են իրենց անձնական օժտումները և ունեն վավերական տաճարային երեշխավորագրեր: Տաճարների մեծամասնությունը մեծ խմբեր հյուրընկալելու հնարավորություն չունեն: Ուստի, հրավերները պիտի սահմանափակվեն ընտանիքի անդամներով և մտերիմ ընկերներով:

Հյուրերի տեղեկացումը ժամի և հագուստի պահանջների մասին

Եթե դուք ստանում եք ձեր օժտումը ձեր ամուսնության օրը, դուք կարող է ցանկանաք, որ որոշ հյուրեր ձեր հետ մասնակցեն օժտման նիստին: Որոշ հյուրեր էլ կարող է ժամանակ ունենան մասնակցելու միայն ձեր կնքմանը: Յուրաքանչյուր դեպքում դուք պետք է տեղեկացնեք այս հյուրերին, թե նրանք երբ պիտի գան տաճար: Եվս մեկ անգամ ճշտեք այս տեղեկությունը տաճարի հետ:

Հյուրերին պետք է խորհուրդ տրվի հագնվել այնպես, ինչպես նրանք կհագնվեին հաղորդության ժողովին

հաճախելիս: Սմոկինգները կամ այլ պաշտոնական հագուստը պատշաճ չէ: Բոլոր հյուրերը պետք է ունենան վավերական տաճարային երաշխավորագրեր:

Պաշտոնակատար

Տաճարի նախագահությունը և այլ տաճարային կնքողներ պաշտոնապես ձեռնադրված են տաճարային ամուսնություններ կատարելու համար: Քանի որ Գերագույն Իշխանավորների ժամացուցակները խիստ զբաղված են, Եկեղեցու անդամներին ասվել է նրանց չխնդրել ամուսնություններ կատարելու համար:

Լեզու

Տաճարների մեծամասնությունը նիստեր ունեն բազմաթիվ լեզուներով: Ստուգեք տաճարի նախագահի հետ հավաստիանալու համար, որ ձեր օժտումն ու ամուսնությունը լինեն ձեր ընտրած լեզվով:

Նկարահանում տաճարի մոտակայքում

Տաճարի ներսում լուսանկարչական խցիկները թույլատրելի չեն: Կնքումից հետո հարսն ու փեսան կարող են նկարվել տաճարի մոտակայքում: Ուստի ձեր լուսանկարչից չի պահանջվի ունենալ տաճարայինի երաշխավորագիր:

Այլ տեղեկություններ

Յուրաքանչյուր տաճար ձեզ կամ ձեր եպիսկոպոսին կտա ամբողջ անհրաժեշտ տեղեկությունը ձեր ամուսնությունը ծրագրելու համար: Դուք միշտ կարող եք զանգահարել տաճար (խնդրեք ամուսնության գրասենյակային ծառայողին) կամ գրեք տաճարի նախագահին, եթե դուք հարցեր ունեք:

Ամփոփիչ հարցեր

Նշեք, երբ կատարված լինի.

Կապվեք այն տաճարի հետ, որտեղ ամուսնանալու եք և հարցրեք անհրաժեշտ տեղեկություններ: Ամսաթիվը _____

Համաձայնեցրեք ձեր ամուսնության օրն ու ժամը տաճարի հետ: Օրը_____ Ժամը _____

Հավաստիացեք, որ հրավիրված հյուրերի թիվը ավելի մեծ չէ, քան տաճարի պատվիրված սենյակը:

Ձեր տաճարի պատվերում նշեք լեզուն, որով կցանկանաք, որ արարողությունը կատարվի:

Տեղեկացրեք հրավիրված հյուրերին տաճարի հագուստի պահանջների մասին:

Եթե դեռևս օժտված չեք, օր և ժամ պայմանավորվեք ձեր անձնական օժտման համար: Օրը _____ Ժամը _____

Հրավիրեք նրանց, ում ուզում եք, որ ընկերակցեն ձեզ օժտվելիս և տեղեկացրեք նրանց օրվա ու ժամի մասին:

Եթե հարկավոր է ձեռք բերեք արյան անալիզներ,:

Օրը _____ Կիրառելի չէ _____

Ամուսնության թույլտվություն

Քաղաքացիություն պահանջվո՞ւմ է: Այո ___ Ոչ ___

Թույլտվություն պահանջվո՞ւմ է: Այո ___ Ոչ ___

Սպասելու շրջան պահանջվո՞ւմ է: Այո ___ Ոչ ___

Պահանջվո՞ւմ է, որ քաղաքացիական արարողությունը նախորդի տաճարային կնքմանը: Այո ___ Ոչ _____ Եթե այո, օրը, ժամը, ու՞մ կողմից: _____ Կազմակերպված է _____

Պայմանավորվել տաճարային ամուսնության վկաների հետ:

Ունենալ տաճարային երաշխավորագիր օժտման համար և/կամ ամուսնության համար երաշխավորագիր: Ամսաթիվը _____

Եթե մեր կամքով ամուսնացել ենք քաղաքացիական օրենքով, մենք սպասել ենք մեկ տարի: Կ/Չ _____

Տաճարային ներքնազգեստներ: Եթե նախօրոք օժտված չենք, մենք խոսել ենք մեր եպիսկոպոսների հետ ներքնազգեստների նպատակի մասին: Ամսաթիվը _____ Ներքնազգեստը գնված է _____

Հարսանյաց զգեստ. Սպիտակ __ երկար թևերով __ պատշաճ բարձր վզի բացվածք __ թափանցիկ կտորները աստառապատված __

Եթե ցանկանում եմ, ես տաճարում կպատվիրեմ սպիտակ զգեստ: Հնարավորությունը ստուգված է տաճարի հետ: Կ/Չ _____

ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԸ

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ

Ensign, Feb. 1995, 32–36

Տաճար գնալու ցանկության համար մարդ կարող է ունենալ բազմաթիվ պատճառներ: Նույնիսկ արտաքին տեսքն է ակնարկում նրա խորը հոգևոր նպատակները: Այն ավելի շատ ակնհայտ է դառնում նրա պատերի ներսում: Տաճարի դռան վերևում գտնվում է հարգանքի մի նշան: «Սրբություն Տիրոջը»: Երբ դուք մուտք եք գործում որևէ սրբագործված տաճար, դուք Տիրոջ տանն եք:

Եկեղեցու անդամները, ովքեր իրենց իրավասու են դարձնում, տաճարներում կարող են մասնակցել ամենավեհ փրկող արարողություններին, որոնք հայտնվել են մարդկությանը: Այնտեղ սուրբ արարողության ժամանակ անհատը կարող է լվացվել, օծվել, հրահանգվել, օժտվել և կնքվել: Եվ երբ մենք ստանում ենք այս օրհնությունները մեր համար, մենք կարող ենք կատարել նրանց համար, ովքեր մահացել են առանց նման հնարավորություն ունենալու: Տաճարներում սուրբ արարողությունները կատարվում են ինչպես ապրողների այնպես էլ մահացածների համար:

Այս բաները սուրբ են

Սուրբ գրությունների ուշադիր ընթերցումը բացահայտում է, որ Տերը չի ասել բոլոր բաները բոլոր մարդկանց: Կան որոշ սահմանված,որակավորումներ որոնք անհրաժեշտ պայման են սուրբ տեղեկություններ ստանալու համար: Տաճարային արարողությունները համապատասխանում են այս կարգին:

Մենք տաճարից դուրս չենք քննարկում տաճարային արարողությունները: Այն երբեք նկատի չի ունեցել, որ տաճարային այս արարողությունների գիտելիքը սահմանափակ լինի մի քանի ընտրվածների համար, ովքեր պարտադրված կլինեն երաշխավորել, որ ուրիշները երբեք չեն սովորի դրանց մասին: Իրականում դա լրիվ հակառակն է: Մեծ ջանասիրությամբ մենք հորդորում ենք ամեն հոգու որակավորվել և պատրաստվել տաճարային փորձառությունների համար: Նրանք, ովքեր եղել են տաճարում, սովորել են մի սկզբունք. Մի օր ամեն կենդանի հոգի և ամեն հոգի, ով երբևէ ապրել է, հնարավորություն կունենա ավետարանը լսելու և ընդունելու կամ մերժելու այն, ինչ առաջարկում է տաճարը: Եթե այս հնարավորությունը մերժվում է, մերժումը պիտի լինի անհատի իսկ կողմից:

Տաճարային արարողություններն ու ծեսերը պարզ են: Դրանք գեղեցիկ են: Դրանք սուրբ են: Դրանք գաղտնի են պահվում, որ հանկարծ չտրվեն նրանց, ովքեր պատրաստ չեն: Հետաքրքրասիրությունը պատրաստություն չէ: Խորը հետաքրքրությունը ինքը պատրաստություն չէ: Արարողությունների համար պատրաստությունը ներառում է նախնական քայլեր՝ հավատք, ապաշխարություն, մկրտություն, հաստատում, արժանավորություն, հասունություն և արժանապատիվ անձնավորություն, ով Տիրոջ տուն է գալիս հրավերով՝ որպես հյուր:

Բոլորը, ովքեր արժանի են և որակավորվում են ամեն ձևով, կարող են մտնել տաճար, որտեղ նրանց են ներկայացվում սուրբ ծիսակատարություններն ու արարողությունները:

Մտնելու արժանի

Հենց որ դուք որոշակի զգացում ունենաք տաճարային օրհնությունների և տաճարում կատարվող արարողությունների սրբության արժեքի վերաբերյալ, դուք չեք կասկածի Տիրոջ կողմից հաստատված սուրբ տաճար մտնելու բարձր չափանիշներին:

Դուք պետք է ունենաք վավերական երաշխավորագիր, որպեսզի ձեզ թույլ տան մտնել տաճար: Այս երաշխավորագիրը պետք է ստորագրեն Եկեղեցու համապատասխան ծառայողները: Տաճար պետք է գնան միայն նրանք, ովքեր արժանի են: Ձեր տարածքի եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը պարտավորություն ունեն հարցազրույց անցկացնել ձեր անձնական արժանավորության վերաբերյալ: Այս հարցազրույցը շատ կարևոր է, քանի որ այն Տիրոջ կարգված ծառայի հետ ձեր կյանքը քննելու առիթ է: Եթե ձեր կյանքում կա ինչ որ ոչ ճիշտ բան, եպիսկոպոսը կկարողանա օգնել ձեզ լուծել այն: Այս արարողակարգի միջոցով, երբ դուք խորհուրդ եք անում Իսրայելի դատավորի հետ, դուք կարող եք հայտարարել կամ ձեզ կարող են օգնել վերականգնել Տիրոջ հավանությամբ տաճար մտնելու ձեր արժանավորությունը:

Տաճարային երաշխավորագրի հարցազրույցը վարում են գաղտնի՝ եպիսկոպոսի և եկեղեցու մտահոգված անդամի միջև: Այստեղ անդամին տալիս են քննող հարցեր իր անձնական վարքի, արժանավորության, Եկեղեցու և դրա պաշտոնյաների հանդեպ հավատարմության վերաբերյալ: Անհատը պիտի վկայի, որ նա բարոյապես մաքուր է և պահում է Իմաստության Խոսքը, վճարում է լրիվ տասանորդ, ապրում է Եկեղեցու ուսմունքների համաձայն և ոչ մի կապ չունի և չի համակրում ոչ մի ուխտադրուժ խմբի: Եպիսկոպոսին հրահանգված, որ յուրաքանչյուր հարցազրույցի այս հարցերը գաղտնի պահելը մեծագույն կարևորություն ունի:

Եպիսկոպոսի հարցերին տրված ընդունելի պատասխանները սովորաբար կհաստատեն անհատի արժանավորությունը տաճարային երաշխավորագիր ստանալու համար: Եթե դիմողը չի պահում պատվիրանները կամ նրա կյանքում կա որևէ չլուծված խնդիր, որը կարգավորման կարիք ունի, անհրաժեշտ կլինի, որպեսզի մինչև նրան տաճարային երաշխավորագիր տալը նա ցուցաբերի ճշմարիտ ապաշխարություն:

Եպիսկոպոսի կողմից այդպիսի հարցազրույց անցկացնելուց հետո, ցցի նախագահության որևէ անդամ նմանատիպ հարցազրույց է ունենում մեզանից յուրաքանչյուրիս հետ՝ մինչև մեր տաճար գնալը:

Ուսուցանվել ի վերուստ

Մինչև առաջին անգամ տաճար գնալը կամ նույնիսկ բազում անգամներից հետո, այն կարող է ձեզ օգնել հասկանալ, որ տաճարում ուսուցումը կատարվում է խորհրդանիշների ձևով: Տերը՝Մեծ Ուսուցիչը, տվել է Իր հրահանգները այս ձևով:

Տաճարը մեծ դպրոց է: Այն ուսուցման տուն է: Տաճարայինն մթնոլորտը նպաստում է, որպեսզի այն կատարյալ լինի այնպիսի խնդիրների ուսուցման համար, որոնք հոգևոր խորություն ունեն: Տասներկուսի Քվորումից հանգուցյալ Երեց Ջոն Ա. Ուիդթսոնն եղել է հայտնի համալսարանի նախագահ և աշխարհի հռչակավոր գիտնական: Նա մեծ ակնածանք ուներ տաճարային աշխատանքի նկատմամբ և մի առիթով ասել է.

Տաճարը մեծ դպրոց է: Այն ուսման տուն է:

«Տաճարային արարողությունները ներառում են փրկության որոշ ծրագիրը, ինչպես ժամանակ առ ժամանակ ուսուցանվում են Եկեղեցու առաջնորդների կողմից և լուսաբանում են դժվար հասկացվող խնդիրները: Տաճարային ուսուցումը փրկության մեծ ծրագրին հարմարեցնելու համար անհրաժեշտ չեն որևէ փոփոխություններ: Օժտման փիլիսոփայական ամբողջականությունը տաճարային արարողությունների կատարելիության մեծագույն ապացույցներից մեկն է: Ավելին, ուսուցումների այս ամբողջականությունը և Ավետարանի ծրագրի բացատրությունը, տաճարային երկրպագությունը դարձնում են Ավետարանի ողջ կառուցվածքի վերաբերյալ հիշողությունը թարմացնելու ամենաարդյունավետ մեթոդներից մեկը» (*Utah Genealogical and Historical Magazine,* Apr. 1921, p. 58):

Եթե դուք գնաք տաճար և հիշեք, որ ուսուցումը խորհրդանշական է, դուք երբեք ներս չեք մտնի համապատասխան հոգով և դուրս գա առանց ձեր խորաթափանցությունը ընդարձակված, մի փոքր ավելի վեհացած, ձեր գիտելիքը ավելացած՝ ինչ վերաբերում է հոգևոր բաներին: Ուսուցման ծրագիրը հոյակապ է: Այն ոգեշնչված է: Տերն Ինքը՝ Մեծ Ուսուցիչը, շարունակ սովորեցնում էր իր աշակերտներին առակներով՝բառերի միջոցով խորհրդանշական ձևով ներկայացնելով այն բաները, որոնք այլ կերպ դժվար կլիներ հասկանալ:

Տաճարն ինքը դառնում է խորհրդանիշ: Եթե դուք տեսել եք տաճարներից մեկը գիշերով, ամբողջովին լուսավորված, դուք գիտեք, թե ինչ ազդեցիկ տեսարան այն կարող է լինել: Տիրոջ տունը՝ լույսով ողողված, մթության մեջ կանգնած, դառնում է զորության խորհրդանիշ և Հիսուս Քրիստոսի ավետարանի ոգեշնչում, կանգնելով որպես փարոս աշխարհում, որն ավելի ու ավելի խորն է ընկղմվում հոգևոր խավարի մեջ:

Տաճար մտնելուց անմիջապես հետո, դուք փոխում եք ձեր դրսի հագուստը տաճարային ճերմակ հագուստով: Հագուստի այս փոփոխությունը տեղի է ունենում անձնական իրերի պահարաններով սենյակում, որտեղ յուրաքանչյուր անձնավորության հատկացվում է անձնական իրերի պահարան և հանդերձարան, որն ամբողջովին անհատական է: Տաճարում պարկեշտության սկզբունքը հոգատարությամբ պահպանվում է: Երբ դուք դնում եք ձեր հագուստները պահարանում, դուք այնտեղ դրանց հետ թողնում եք ձեր հոգսերն ու մտահոգությունները և ուշադրությունը շեղող բաները: Դուք դուրս եք գալիս այս անհատական փոքրիկ հանդերձարանից ճերմակ հագած և դուք զգում եք միաբանություն և հավասարություն, քանի որ բոլորը ձեր շուրջը միանման են հագնված:

Կնքելու զորություն

Ձեզանից նրանք, ովքեր ուրախությամբ սպասում են տաճարային ամուսնության, հավանաբար ցանկանում եք իմանալ, թե ինչ է տեղի ունենում այնտեղ: Մենք տաճարից դուրս (ամուսնության) կնքման արարողության բառերը չենք մեջբերում, բայց մենք կարող ենք նկարագրել կնքման սենյակը, որպես գեղեցիկ մի վայր, լուռ ու խաղաղ հոգով, և սրբագործված այն սրբազան աշխատանքով, որ կատարվում է այնտեղ:

Նախքան կնքման արարողության համար զոհասեղանին զույգի մոտենալը, պաշտոնակատարը բացառիկ հնարավորություն ունի երիտասարդ զույգին որոշ խորհուրդներ տալու իսկ նրանք ընդունելու դրանք: ընդունելու: Սրանք այն մտքերի շարքում են, որոնք երիտասարդ զույգը կարող է լսել այս առիթով:

«Այսօր ձեր ամուսնության օրն է: Ձեր վրա մեծ ազդեցություն են թողել ձեր ամուսնության զգացողությունները: Տաճարները կառուցվել են որպես ապաստարան այնպիսի արարողությունների համար, ինչպիսին սա է: Մենք աշխարհում չենք: Աշխարհի բաները այստեղ չեն կիրառվում և

չպիտի որևէ ազդեցություն ունենան այն ամենի վրա, ինչ մենք անում ենք այստեղ: Մենք դուրս ենք եկել աշխարհից և մուտք ենք գործել Տիրոջ տաճար: Սա դառնում է ձեր կյանքի ամենակարևոր օրը:

Դուք ծնվել եք, հրավիրվել աշխարհ ծնողների կողմից, ովքեր պատրաստել են մահկանացու խորան ձեր հոգու բնակության համար: Ձեզանից յուրաքանչյուրը մկրտվել է: Մկրտության սուրբ արարողությունը, մաքրման խորհրդանիշ է, մահվան ու հարության խորհրդանիշ, նոր կյանք մտնելու խորհրդանիշ : Այն խորհել է տալիս ապաշխարության և մեղքերի թողության մասին: Տիրոջ ընթրիքի հաղորդությունը մկրտության ուխտի վերանորոգում է, և մենք կարող ենք, եթե մենք ապրում ենք դրան համապատասխան, թողություն ստանալ մեր մեղքերին:

«Դուք՝ փեսացու, քահանա եք կարգված: Ձեզ առաջինը շնորհել են Ահարոնյան Քահանայություն և հավանաբար առաջադիմել եք դրա բոլոր պաշտոններում՝ սարկավագ, ուսուցիչ և քահանա: Այնուհետև եկել է օրը, երբ դուք արժանի եք գտնվել ստանալ Մելքիսեդեկյան Քահանայություն: Այդ քահանայությունը՝ բարձրագույն քահանայությունը, սահմանվում է որպես Աստծո սուրբ կարգի քահանայություն, կամ Սուրբ Քահանայություն ըստ Աստծո Որդու Կարգի(տես Ալմա 13.18, Հելաման 8.18, ՎԱՈՒ 107.2–4): Ձեզ քահանայության պաշտոն է տրվել: Դուք այժմ երեց եք:

Ձեզանից յուրաքանչյուրը ստացել է իր օժտումը: Այդ օժտմամբ դուք ստացել եք հավերժական ներուժի ավանդ: Բայց բոլոր այս բաները նախնական և նախապատրաստական աշխատանք են եղել զոհասեղանին ձեր մոտենալու համար, ժամանակի և ողջ հավերժության համար ամուսին ու կին կնքվելու համար: Այժմ դուք դառնում եք ընտանիք, ազատ գործելու, կյանք ստեղծելու համար, հնարավորություն ունենալու նվիրվածության ու զոհաբերության միջոցով երեխաներ բերել աշխարհ և մեծացնել նրանց ու նրանց ապահով պահել իրենց մահկանացու գոյության ընթացքում. տեսնել նրանց մի օր եկած, ինչպես դուք եք եկել, մասնակցելու տաճարային այս սուրբ արարողություններին:

Դուք եկել եք ձեր հոժար կամքով և գտնվել եք արժանի: Ամուսնական ուխտով իրար ընդունելը մեծ պատասխանատվություն է, մի բան, որ բերում է իր հետ անչափ մեծ օրհնություններ»:

Եթե մենք կարողանայինք հասկանալ տաճարային աշխատանքի և՛ պատմությունը, և՛ վարդապետությունը, մենք պիտի հասկանանք, թե ինչ է իրենից ներկայացնում կնքելու զորությունը: Մենք պետք է, գոնե մի փոքր պատկերացնենք, թե կնքման զորությունը գործածելու իշխանության բանալիները ինչու են խիստ կարևոր՝ խիստ կարևոր ոչ միայն տաճարների արարողության աշխատանքի համար, այլ աշխարհով մեկ ամբողջ Եկեղեցու արարողության աշխատանքի համար:

Կնքելու զորությունը իրենից ներկայացնում է Աստծո կողմից մարդուն հոգևոր իշխանության փոխանցում: Եկեղեցու Նախագահը այդ կնքման զորության պահապանը Տիրոջ գլխավոր ներկայացուցիչն է այստեղ՝ երկրի վրա: Սա հավատքն ու իշխանությունը գործածելու պաշտոնն է:

Ինչպես ասվել է, եկեղեցում, հատկապես տաճարում, հոգևոր խորը բաների հետ կապված ուսմունքներից շատերը խորհրդանշական են: Բանալիներ բառը մենք օգտագործում ենք որպես խորհրդանիշ: Այստեղ քահանայության իշխանության բանալիները ներկայացնում են զորության սահմանները, ուղղված վարագույրի մյուս կողմից մահկանացու մարդուն, Աստծո անունից երկրի վրա գործելու համար: Կնքել, բանալիներ և քահանայություն բառերը սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ:

Կնքման զորության բանալիները և հավիտենական քահանայության բանալիները հոմանիշներ են: «Եւ Յիսուսը դուրս գնաց Փիլիպպեայ Կեսարիայի կողմերը, եւ իր աշակերտներին հարցնում էր եւ ասում. Մարդիկ ինձ համար ո՞վ են ասում, որ մարդի Որդին լինի:

Եւ Սիմօն Պետրոսը պատասխան տուաւ եւ ասեց. Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին:

Եւ Յիսուսը պատասխան տուաւ եւ ասաց նորան. Երանի քեզ, Սիմօն՝ Յովնանի որդի, որովհետեւ մարմինը եւ արիւնը չյայտնեց քեզ, բայց իմ Հայրը որ երկնքումն է:

Ես էլ ասում եմ քեզ, որ դու ես Պետրոս, եւ այս վէմի վերայ կշինեմ իմ եկեղեցին, եւ դժոխքի դռները չեն յաղթիլ նորան:

Եւ ես կտամ քեզ երկնքի արքայութեան բանալիները, եւ այն որ կապես երկրի վերայ, կապուած կլինի երկնքումը. եւ այն որ երկրի վերայ արձակես, արձակված կլինի երկնքումը» (Մատթեոս ԺԶ.13–19):

Պետրոսը կրում էր բանալիները: Պետրոսը կրում էր կնքելու զորությունը, այն իշխանությունը, որը զորություն ուներ կապելու կամ կնքելու երկրի վրա կամ արձակելու երկրի վրա և դա այդպես կլիներ երկնքում: Այդ բանալիները կրում է Եկեղեցու Նախագահը՝ մարգարեն, տեսանողն ու հայտնողը: Այդ սուրբ կնքման զորությունը այժմ կա եկեղեցոսում: Ոչինչ չի ընդունվում ավելի սուրբ խորհրդածությամբ նրանց կողմից, ովքեր գիտեն այս իշխանության կարևորությունը: Ոչինչ ավելի մոտ չի լինում: Համեմատաբար քիչ տղամարդիկ կան, ում փոխանցվել է այս կնքման զորությունը երկրի վրա ցանկացած ժամանակաշրջանում. յուրաքանչյուր տաճարում կան եղբայրներ, որոնց տրվել է կնքելու զորությունը: Ոչ ոք չի կարող այն ստանալ, բացի դա լինի մարգարեի, տեսանողի, հայտնողի և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահի կողմից:

Մի պարզ հայտարարություն է հաջորդում կնքման զորության վերաբերյալ, որպես ողջերի և մահացածների համար մեր արած բոլոր բաները կապողի:

«Երբ էլ որ ավետարանի լրիվությունը երկրի վրա է, Տերն ունի գործակալներ, ում նա տալիս է երկրի վրա կապելու և հավերժորեն երկինքներում կնքելու զորություն (Մատթեոս ԺԶ.19, ԺԸ.18, Հելաման 10.3—10, ՎԱՈՒ 132.46–49): …

Բոլոր բաները, որոնք կնքված չեն այս զորությամբ, վերջանում են, երբ մարդիկ մեռնում են: Եթե մկրտությունը չունի այս հարատև կնիքը, անձին թույլ չի տրվի մտնել սելեստիալ արքայություն. եթե հավերժական ամուսնության ուխտը չի կնքվել այս իշխանությամբ, այն մասնակից կողմերին չի տանի համբարձման ամենաբարձր երկնքում՝ սելեստիալ աշխարհի մեջ:

Ամեն բան ստանում է հավերժական ուժ և վավերականություն կնքման զորության շնորհիվ: Այս զորությունն այնքան ընդգրկուն է, որ այն ներառում է ողջերի և մահացածների համար կատարվող արարողությունները, կնքում է երկրի վրա եղող երեխաներին իրենց հայրերի հետ, ովքեր եղել են իրենցից առաջ և կազմում է հարատև հայրապետական շղթա, որը հավերժորեն գոյություն կունենա համբարձված էակների մեջ» (Bruce R. McConkie, *Mormon Doctrine,* 2d ed., Salt Lake City: Bookcraft, 1966, p. 683):

Եկեղեցում մենք կրում ենք բավարար իշխանություն կատարելու բոլոր արարողությունները, որոնք անհրաժեշտ են ամբողջ մարդկային ընտանիքը փրկելու և վեհացնելու համար: Եվ քանի որ մենք ունենք կնքման զորության բանալիները, ինչ մենք այստեղ կապենք պատշաճ կարգով՝ կապված կլինի երկնքում: Այդ բանալիները՝ երկրի վրա կնքելու և կապելու և դրանք երկնքում կապված ունենալու բանալիները՝ ներկայացնում են պարգև մեր Աստծո կողմից: Այդ իշխանությամբ մենք կարող ենք մկրտել և օրհնել, մենք կարող ենք օծտել և կնքել, և Տերը կհարգի մեր խոստումը:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ իրեն հաճախակի են հարցրել, «Մենք չե՞նք կարող փրկվել առանց այդ բոլոր արարողությունների միջով անցնելու, և այլն»: Ես պատասխանել եմ՝ Ոչ, ոչ փրկության լրիվությամբ: Հիսուսն ասել է. «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան, և ես կգնամ և տեղ կպատրաստեմ ձեզ համար»: Այստեղ *տուն* անվանվածը պետք է թարգմանվեր թագավորություն. և ցանկացած անձնավորություն, ով համբարձվել է ամենաբարձր բնակարանը, պետք է պահի սելեստիալ օրենքը և ամբողջ օրենքը նույնպես» (*History of the Church,* 6:184):

Ոչ առանց հակասության

Տաճարները Եկեղեցու հոգևոր ուժի հենց կենտրոնն են: Մենք պետք է ակնկալենք, որ հակառակորդը կփորձի խանգարել մեզ որպես եկեղեցի և որպես անհատներ, մինչ մենք ձգտում ենք մասնակցել այս սուրբ և ոգեշնչող աշխատանքին:

Տաճարային աշխատանքը բերում է շատ մեծ կայունություն, որովհետև այն մեծ հոգևոր ուժի աղբյուր է հանդիսանում Վերջին Օրերի Սրբերի և ողջ Եկեղեցու համար:

Լոգանի Տաճարի անկյունաքարի նվիրագործմանը Նախագահ Ջորջ Ք. Քենոնը կատարել է այս հայտարարությունը.

«Տաճարի համար դրված յուրաքանչյուր հիմնաքարը և իր սուրբ քահանայության համար Տիրոջ հայտնած կարգի համաձայն ավարտված յուրաքանչյուր Տաճարը նվազեցնում է Սատանայի զորությունը երկրի վրա և ավելացնում է Աստծո և Աստվածայնության զորությունը, շարժում է երկինքները մեծ զորությամբ մեր համար, գործադրում և մեր վրա է բերում օրհնությունները Հավերժական Աստվածների և նրանց, ովքեր բնակվում են նրանց ներկայության մեջ» (*Millennial Star,* 12 Nov. 1877, p. 743):

Երբ եկեղեցու անդամներն անհանգիստ են կամ երբ վճռական որոշումները ծանրացած են նրանց մտքերում, հաճախ նրանք գնում են տաճար: Դա ամենահարմար տեղն է մեր հոգսերը տանելու համար: Տաճարում մենք կարող ենք ստանալ հոգևոր հեռանկար: Այնտեղ տաճարային արարողության ընթացքում մենք «աշխարհից դուրս ենք»:

Երբեմն մեր մտքերն այնքան ծանրաբեռնված են խնդիրներով և շատ բաներ միաժամանակ ուշադրություն են պահանջում, որ մենք ուղղակի չենք կարողանում հստակ մտածել և պարզորոշ տեսնել: Տաճարում թվում է, թե ուշադրությունը շեղող բաները հանդարտվում են, մեգն ու մշուշը կարծես թե ցրվում են, և մենք կարող ենք «տեսնել» բաներ, որոնք մենք չէինք կարողանում տեսնել մինչ այդ և գտնում ենք մեր դժվարությունները հաղթահարելու ուղիներ, որոնց մասին մենք մինչ այդ չգիտեինք:

Տերը կօրհնի մեզ, մինչ մենք մասնակցում ենք Տաճարի սուրբ արարողության աշխատանքին:

Տերը կօրհնի մեզ, երբ մենք մասնակցենք տաճարի սուրբ արարողության աշխատանքին: Օրհնություններն այնտեղ չեն սահմանափակվի մեր տաճարային ծառայությամբ: Մենք կօրհնվենք մեր բոլոր անձնական գործերում:

Եկեք տաճար

Ոչ մի աշխատանք ավելի չի պաշտպանում այս եկեղեցուն քան տաճարային աշխատանքը և ծագումնաբանական ուսումնասիրությունը, որն օժանդակում են դրան: Ոչ մի աշխատանք ավելի հոգեպես կատարելագործող չէ: Ոչ մի աշխատանք չի պահանջում ավելի բարձր արդարության չափանիշ:

Տաճարում մեր աշխատանքները ծածկում են մեզ վահանով և պաշտպանությամբ՝ և անհատապես, և որպես ժողովուրդ:

Ուստի եկեք տաճար՝ եկեք և խնդրեք ձեր օրհնությունները: Դա սուրբ աշխատանք է:

ՏԱՃԱՐԱՅԻՆ ՆԵՐՔՆԱԶԳԵՍՏ՝ ՆԵՐՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Երեց Կառլոս Ի. Ասայ

Առաջին Յոթանասունի Քվորումի Անդամ

Ensign, Aug. 1997, 18–23

«Մի քանի տարի առաջ նոր տաճարի նախագահների և նրանց կանանց համար սեմինարում Երեց Ջեյմս Ի. Ֆաուստը՝ այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումից, պատմեց իր՝ որպես Գերագույն Իշխանավոր ծառայության կանչվելու մասին: Նախագահ Հարոլդ Բ. Լին միայն մեկ հարց էր տվեց նրան՝ «Դուք պատշաճ ձևով ե՞ք կրում տաճարային ներքնազգեստը», որին նա դրական պատասխան տվեց: Այնուհետև նա հարցրեց, թե արդյոք Նախագահ Լին չէր պատրաստվում հարցնել նրան իր արժանավորության մասին: Նախագահ Լին պատասխանեց, որ նա կարիք չուներ դա անելու, քանի որ գիտեր իր փորձից, որ տաճարային ներքնազգեստ կրելու ձևը արտահայտում է անհատի զգացմունքները Եկեղեցու և դրա հետ կապված ամեն ինչի վերաբերյալ: Դա մեկի արժանավորությունն ու ավետարանին նվիրվածությունը որոշելու միջոց էր:

Կան մարդիկ, ովքեր անհրաժեշտ են համարում հագուստի հանգամանալից կանոնադրությունը, որը պատասխանում է տաճարային ներքնազգեստ կրելու վերաբերյալ յուրաքանչյուր հնարավոր հարցի: Նրանք ստիպում են քահանայության ղեկավարներին նշել երկարությունները, մանրամասնել պայմանները, թե երբ և ինչպես դա պիտի կամ չպիտի կրեն, և պարտադրել պատիժներ նրանց վրա, ովքեր մի մատնաչափ իսկ վրիպել են: Այսպիսի անհատները պարտադրում են եկեղեցու անդամներին մժեղը քամել իսկ Հիսուս Քրիստոսի ավետարանի կարևոր բաներն աչքաթող անել (տես Մատթեոս ԻԳ.23–26):

Վերջին Օրերի Սրբերի մեծամասնությունը, այնուամենայնիվ, հրճվում են խղճի ազատությամբ, որը տրվել է նրանց սիրող Երկնային Հոր կողմից: Նրանք բարձր են գնահատում Տիրոջ և Եկեղեցու ղեկավարների կողմից իրենց վրա դրված վստահությունը՝վստահություն, որի մասին ակնարկվում է Ջոզեֆ Սմիթի այս հայտարարության մեջ. «Ես սովորեցնում եմ նրանց ճիշտ սկզբունքներ, և նրանք իրենք են կառավարում իրենց»: 1

Սամուել Լամանացին հայտարարել է.

«Եվ այժմ հիշեք, հիշեք, իմ եղբայրներ, որ ով կործանվում է, իր պատճառով է կործանվում, և ով անօրինություն է անում, իրեն է անում. քանզի ահա դուք ազատ եք. ձեզ թույլատրված է, որ գործեք ինքներդ ձեզ համար. քանզի ահա, Աստված տվել է ձեզ գիտելիք և դարձրել է ձեզ ազատ:

Նա տվել է ձեզ, որ դուք կարողանաք բարին տարբերել չարից, և նա տվել է ձեզ, որ դուք կարողանաք ընտրել կյանք կամ մահ. և դուք կարող եք բարին անել և վերականգնվել դեպի այն, ինչը բարի է, կամ բարին կվերադարձվի ձեզ, կամ կարող եք անել չարիք, և չարը կվերադարձվի ձեզ» (Հելաման 14.30–31):

Ես գտնում եմ, որ կարևոր է գիտելիք ունենալ տաճարային ներքնազգեստի վերաբերյալ: Երբ ձեռք են բերում այդ գիտելիքը, Վերջին Օրերի Սրբերը հավատքով լցված հագնում են ներքնազգեստը և հագնում են պատշաճ ձևով, ոչ թե այն պատճառով, որ ինչ որ մեկը հսկում է իրենց արարքները, այլ որովհետև նրանք հասկանում են սուրբ հագուստի նշանակությունը և ուզում են «բարին անել և վերականգնվել դեպի այն, ինչը բարի է»: Եվ ընդհակառակը, երբ մեկը չի հասկանում տաճարային ներքնազգեստի սուրբ էությունը, միտում կա, որ մակերեսայնորեն վերաբերվեն դրան և վերաբերվեն դրան ընդամենը որպես հագուստի մեկ այլ մասի:

Կարևոր գիտելիքը սուրբ քահանայության հանդերձի հետ միասին կարող են դասակարգվել երեք վերնագրերի ներքո՝ Աստծո Սպառազինությունը, Պատմական Տեղեկություններ և Ժամանակակից Մարգարեների Ուսմունքները: Ես կներկայացնեմ որոշ տեղեկություններ այս վերնագրերից յուրաքանչյուրի վերաբերյալ՝ հուսալով, որ կիսված մտքերը մեծ երախտագիտություն կառաջացնեն հանդերձի հանդեպ և Սրբերի մտքում առաջ կբերեն հոժարակամ և պատշաճ կերպով դրանք կրելու մեծ վճռականություն:

Աստծո սպառազինությունը

Մենք պատերազմի մեջ ենք: Մեր թշնամին սահմանակից ազգի մեծաքանակ բանակ չի կամ ինչ-որ օտար ազգի նավատորմ: Փամփուշտները չեն սլանում մեր գլխավերևում, ոչ էլ ռումբերն են պայթում մեր տների վրա կամ մեր շուրջը: Այնուամենայնիվ, մենք ներգրավված ենք կյանքի ու մահի պայքարի մեջ այն ուժերի հետ, որոնք կարող են տակնուվրա անել մեր հոգին և մեզ հոգևոր պարտության մատնել, եթե մենք աչալուրջ չլինենք:

Ես հիարկե վկայակոչում եմ «պատերազմը» իշխանությունների, պետությունների, խավարի աշխարհակալների և չար ոգիների հետ, որ երկնավորների մեջ են, ինչպես ասել է Պողոս Առաքյալը(տես Եփեսացիս Զ.12): Ես վկայակոչում եմ անբարոյականության, օրինազանցության, կախվածություն առաջացնող բաների ի չար գործադրման

գրոհը և այլ թաքնված ազդեցություններ, որոնք սպառնում են մեր հասարակությանը: Այսպիսի վտանգավոր ազդեցությունները վերահաս վտանգների հետ միասին ներկայացնում են «սատանայի հնարքները» (Եփեսացիս Զ.11), որոնց դեմ մենք պետք է կանգնենք այս «չար ժամանակներում» (Բ Տիմոթեոս Գ.1):

Պետրոսը խորհուրդ է տալիս. «Սորա համար Աստուծոյ սպառազինութիւնն առէք, որ կարող լինիք հակառակ կենալ չարութեան օրումը, եւ ամենը կատարելով հաստատ կանգնել» (Եփեսացիս Զ.13): Իր մարգարեական զորությամբ Պետրոսը կարող էր կանխատեսել չար պայմանները, որոնք գոյություն կունենան աշխարհում մեր ժամանակներում: Ուստի, նա հորդորում էր բոլոր սրբերին ունենալ «մեջքերը ճշմարտութեամբ գօտեւորված»(Եփեսացիս Զ.14), հագնել «արդարութեան զրահը»(հ. 14), իրենց ոտները կոշիկ հագած «խաղաղութեան ավետարանի պատրաստութիւնովը»(հ. 15), առնել «հաւատքի վահանը»(հ. 16), իրենց գլխին դնել «փրկութեան սաղաւարտը»(հ. 17), առնել «Հոգու սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է»(հ. 17), և ամեն ժամանակ աղոթել(հ. 18), որ նրանք կարողանան պաշտպանվել: Նա գիտեր, որ ճշմարտությունից, արդարությունից, հավատքից, հոգուց և աղոթքից պատրաստված վահանը մարդկանց կպաշտպաներ Սատանայի և նրա հետևորդների կողմից ստեղծված ու նետված «կրակոտ նետերից»(հ. 16):

Այնուամենայնիվ, մեր ուշադրությանը արժանի վահանի ևս մի մաս կա: Դա հատուկ ներքնազգեստն է՝ հայտնի որպես տաճարային ներքնազգեստ կամ սուրբ քահանայության հանդերձ, որը կրում են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները, ովքեր ստացել են իրենց տաճարային օժտումը: Գիշեր ու ցերեկ կրվող այս ներքնազգեստը ծառայում է երեք հիմնական նպատակների. այն Տիրոջ սուրբ տանը Նրա հետ կնքած սուրբ ուխտերի հիշեցնում է, պաշտպանիչ ծածկ մարմնի համար և հագուստի ու ապրելակերպի պարկեշտության խորհրդանիշ, որը պիտի բնութագրի Քրիստոսի բոլոր խոնարհ հետևորդների կյանքը:

Գրված է, որ «սպիտակ հանդերձը խորհրդանշում է մաքրություն և օգնում է երաշխավորել համեստություն, հարգանք Աստծո հատկանիշների հանդեպ և որքանով որ այն մեծարվում է՝ *նշան մի բանի, ինչը Պետրոսը համարում էր Աստծո սպառազինությունը առնելը* (Եփեսացիս Զ.13, ՎԱՈՒ 27.15)… Ներքնազգեստները կրում են մի քանի պարզ նշաններ՝ կողմնորոշելով դեպի հնազանդության, ճշմարտության, կյանքի և Քրիստոսին աշակերտելու ավետարանի սկզբունքները»: 2

Շատ, շատ ավելին կարելի էր ասել մարդկանց հոգիների համար մղվող պատերազմի և Աստծո ողջ սպառազինության վերաբերյալ: Պատերազմը երկրի վրա սկսվեց Ադամի օրերից, շարունակվեց մինչև Մովսեսի և Իսրայելի որդիների օրերը և մինչև այժմ մոլեգնում է տնտեսությունում, որը հայտնի է որպես ժամանակների լրություն՝ տնտեսություն, որը սկսվեց Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով ստացված հայտնություններով: Ուստի պաշտպանիչ ծածկը, որը մեզ թույլ է տալիս հակառակ կենալ Սատանայի կրակոտ նետերին, կշարունակի մեծ նշանակություն ունենալ:

Մենք պետք է հագնենք Աստծո սպառազինությունը, որի մասին խոսել է Պետրոս Առաքյալը և կրկին ասվել է ժամանակակից հայտնությունում(տես ՎԱՈՒ 27.15–18): Մենք պետք է նաև «հագ[նենք] արդարության զենքերը»(2 Նեփի 1.23)՝խորհրդանշված տաճարային հանդերձով: Այլապես մենք կարող ենք պարտվել պատերազմում և կործանվել:

Ծանր սպառազինությունը, որ մի ժամանակ կրում էին զինվորները, ներառյալ սաղավարտները, վահանները և զրահները, վճռում էին որոշ ճակատամարտերի ելքը: Այնուամենայնիվ, մեր ժամանակակից օրերի կյանքի իրական պայքարում կհաղթեն նրանք, ովքեր հագել են հոգևոր սպառազինություն՝ սպառազինություն, որը բաղկացած է առ Աստված հավատքից, սեփական անձի հանդեպ հավատքից, գործի հանդեպ հավատքից և ղեկավարների հանդեպ հավատքից: Սպառազինության տաճարային հանդերձ կոչվող մասը ոչ միայն հարմարավետություն ու տաքություն է տալիս որպես կտորե ծածկույթ, այն նաև ամրացնում է կրողին, որ կարողանա դիմակայել փորձություններին, պաշտպանվել չար ազդեցություններից և ամուր կանգնել ճշմարտության համար:

Պատմական տեղեկություններ

Պետք է հասկանալ, որ «Տիրոջ բաներ[ը]» (2 Նեփի 4.16)ներառել են նաև սուրբ հագուստը այս աշխարհի հենց սկզբից: Սուրբ գրությունները բազում հղումներ են պարունակում հին օրերում ապրած մարդկանց հատուկ հանդերձներ կրելու վերաբերյալ: Եդեմի Պարտեզից իրենց վտարվելուց հետո Ադամին ու Եվային տրվեցին սուրբ հագուստներ: Մենք կարդում ենք, «Եւ Եհովայ Աստուածն Ադամի եւ նորա կնոջ համար կաշուց հանդերձներ շինեց, եւ հագցրեց նորանց» (Ծննդոց Գ.21):

Նրանք ստացան այս հագուստը Քավության, զոհաբերության, ապաշխարության և ներման վերաբերյալ հրահանգների հետ միասին (տես Մովսես 5.5–8): Տաճարային հանդերձը Վերջին Օրերի Սրբերին տրվել է նույն կերպով: Այն տրվել է ապաշխարության շարունակական կարիքի, Տիրոջ տանը կապած ուխտերը հարգելու կարիքի և մեր ամենօրյա կյանքում առաքինությունը փայփայելու և օգտագործելու կարիքի մասին կրողներին հիշեցնելու համար, որպեսզի արժանանանք խոստացված օրհնություններին:

Մովսեսին պատվիրված էր սուրբ զգեստներ և քահանայական հանդերձներ տալ Ահարոնին և ուրիշներին, այդպիսով

պատրաստելով նրանց խորանում պաշտոնավարելուն: Տերն ասաց Մովսեսին. «Ու դու քեզ մօտ մօտեցրու քո եղբայր Ահարօնին՝ ու նորա որդիներին նորա հետ՝ Իսրայէլի որդիների միջից ... եւ քո եղբայր Ահարոնի համար սուրբ զգեստներ շինես պատուի և փառքի համար ... որ ինձ քահանայութիւն անէ» (Ելից ԻԸ. 1–3):

Հին Կտակարանի ժամանակաշրջանի ընտրյալ առաջնորդների կրած քահանայության հանդերձների և Ահարոնի հագուստների վերաբերյալ հիշատակությունները ուղեկցվում են այնպիսի արտահայտություններով, ինչպիսիք են՝»թանկագին հագուստներ», «փառավոր հագուստներ», «պատվավոր հագուստներ», «փառքի ապարօշներ» և «փրկության հանդերձներ»: 3 Այս արտահայտությունները հատկապես վերաբերվում են այն հագուստին, որը կրում էին նրանք, ովքեր պաշտոնավարում էին աղոթարանների և տաճարների արարողությունների ժամանակ. այնուամենայնիվ այս նկարագրական բառերը վերաբերվում են նաև սուրբ հագուստին, որն ամեն օր կրում են նրանք, «ովքեր իրենց կոչում են [Աստծո] անունով և ջանում են [դառնալ] սրբեր» (ՎԱՈՒ 125.2): Սուրբ հանդերձների պատիվը, փառքը և թանկագին էությունը, որոնք կրում են միայն տաճարում կամ ամենօրյա կյանքում դրսի շորերի տակից, անցնում են այն նյութից, որից դրանք պատրաստված են: Դրանց ամբողջ արժեքն ու գեղեցկությունը գնահատվում և ընդունվում է նույնքան թանկարժեք կամ փառահեղ, երբ նայում ես « հավատքի աչքով» (Ալմա 5.15):

«Հանդերձը առանց այն բանի, ինչի համար այն նշանակված է, բավական չէ: ... Այն ձեզ չի պաշտպանի, մինչև դուք հավատարիմ չլինեք ձեր ուխտին և եթե միայն մի փոքր դուք չեք պատվում ձեր հանդերձը, այն ոչ մի նշանակություն չի ունենա: Միայն այն դեպքում, երբ դուք չեք անարգի այն, երբ դուք մաքուր կլինեք, երբ հավատարիմ կլինեք ձեր ուխտին, հանդերձը կունենա որոշակի օգտակարություն», - գրել է Հուֆ Նիբլին՝ Բրիգամ Յանգի Համալսարանի անտիկ սուրբ գրությունների հանգուցյալ դասախոսը: 4

Այո, դարերի ընթացքում մարգարեներն ու այլ արդար Սրբեր կրել են հանդերձները, երբ քահանայության և տաճարի արարողությունները հնարավոր են եղել մարդկանց զավակների համար: Երբ եկեղեցին մեր օրերում վերականգնվեց երկրի վրա, սուրբ տաճարի հետ կապված քահանայության սուրբ արարողությունները կրկին հայտնվեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Նրա ստացած հայտնությունները ներառում էին հրահանգներ հանդերձների վերաբերյալ:

Սուրբ գրություններում բազմաթիվ հղումներ կան հանդերձների և հագուստների հետ կապված: Ենովքը հայտարարել է. «Ես տեսա երկինքները բացված, և փառք իջավ իմ վրա» (Մովսես 7.3): Հակոբը խոսեց դատաստանի օրվա վերաբերյալ, երբ «մենք կունենանք կատարյալ գիտելիք մեր ողջ հանցանքի և մեր անմաքրության և մեր մերկության մասին. իսկ արդարները կունենան կատարյալ իմացություն իրենց վայելքի և իրենց արդարության, հանդերձավորված լինելով մաքրությամբ, այո, նույնիսկ արդարության պարեգոտով» (2 Նեփի 9.14): Եսայիան հրճվում էր՝ ասելով. «Աստված ... ինձ փրկութեան հանդերձներ հագցրեց, արդարութեան պատմուճանը զգեց ինձ վերայ» (Եսայիա ԿԱ.10): Ալման վկայակոչում էր «բոլոր սուրբ մարգարեներին, որոնց հանդերձները սրբված են ու անբիծ՝մաքուր ու ճերմակ» (Ալմա 5.24): Այս և այլ մարգարեական մեջբերումները խորհուրդ են տալիս մարդուն ոչ միայն սրբված ու մաքուր հոգի ունենալ իր մեջ, այլ նաև անբիծ հանդերձ մարդու հոգու վրա, որը նշանակում է բարի և նվիրված կյանք առ Աստված:

Ժամանակակից մարգարեների ուսմունքները

Ես վախենում եմ, որ եկեղեցու անդամներից շատերը ըստ արժանվույնս չեն գնահատում տաճարային հանդերձի հետ կապված պաշտպանության խոստումն ու օրհնությունները: Ոմանք պատշաճ կերպով չեն կրում դրանք, մյուսները հանում են դրանք իրենց պայմաններին հարմարեցնելով: Նման դեպքերում ժամանակակից մարգարեների, տեսանողների և հայտնողների հրահանգներն անտեսվում են և հոգևոր պաշտպանությունը վտանգվում է:

Առաջին Նախագահության 1974թ. հուլիսի 3-ի նամակում Եկեղեցու անդամներին հիշեցվում էր հանդերձների սուրբ էության մասին. «Հանդերձի սրբությունը պետք է մշտապես և ամենակարևորը լինի կրողների մտքում. ... օրհնությունները, որոնք հորդում են մեր ուխտերը պահելուց, չափազանց մեծ փոխհատուցում են տալիս ցանկացած անհարմարության: Մեր ուխտերը չպահելը զրկում է պաշտպանությունից ու օրհնություններից, որոնք խոստացվել են դրանց հնազանդ լինելու դեպքում»:5

Եվ քահանայության ղեկավարներին ուղղված 1988թ. հոկտեմբերի 10-ի նամակում Առաջին Նախագահությունը կատարեց հետևյալ կարևոր հայտարարությունները այն բանի վերաբերյալ, թե ինչպես պետք է կրել հանդերձները. «Եկեղեցու անդամները, ում տաճարում հագցրել են հանդերձը, ուխտել են կրել դրանք ողջ կյանքի ընթացքում: Սա նշանակում է, որ այն պետք է կրել որպես ներքնազգեստ գիշեր ու ցերեկ: Այս սուրբ ուխտ է անդամի և Տիրոջ միջև: Անդամները պետք է փնտրեն Սուրբ Հոգու առաջնորդությունը, որպեսզի Նա պատասխանի հանդերձները կրելու հետ կապված իրենց ցանկացած անձնական հարցերին: ... Պաշտպանության և օրհնությունների խոստումը պայմանավորված է արժանավորությամբ և ուխտը պահելու հավատարմությամբ:

Հիմնական սկզբունքը պետք է լինի հանդերձը կրելը և առիթներ չգտնելը դրանք հանելու համար: Այսպիսով, անդամները չպիտի հանեն ամբողջ հանդերձը կամ դրա մի մասը պարտեզում աշխատելիս կամ տանը լողազգեստով կամ անհամեստ հագուստով ժամանակ անցկացնելիս: Ոչ էլ նրանք պետք է դա հանեն հաճելի ժամանցների

մասնակցելու համար, որոնք կարող են լավ անցկացվել պատշաճ կերպով հանդերձը սովորական հագուստի տակից հագնելով մեկտեղ: Երբ հանդերձը պետք է հանել, օրինակ լողալու համար, այն պետք է որքան հնարավոր է շուտ կրկին հագնել:

Առաքինության և մարմինը պատշաճ կերպով ծածկելու սկզբունքները ուխտի անբաժան մասն են կազմում և պետք է որոշեն բոլոր կրվող հագուստների բնույթը: Եկեղեցու օժտված անդամները հանդերձը կրում են որպես Տիրոջ հետ կապած նրանց սուրբ ուխտերի հիշեցում և նաև որպես պաշտպանություն փորձության ու չարի դեմ: Այն կրելու ձևը Փրկչին հետևելու ներքին պարտավորության արտաքին դրսևորումն է»:6

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հանդերձը պատշաճորեն կրելու վերաբերյալ ուժեղ զգացողություն ուներ. «Տերը մեզ տվել է սուրբ քահանայության հանդերձը, և դուք գիտեք, թե ինչ է դա նշանակում: Եվ այնուամենայնիվ մեր մեջ կան ոմանք, ովքեր խեղաթյուրում են դրանք, որպեսզի կարողանան հետևել աշխարհի հիմար, սնափառ և (թույլ տվեք ինձ ասել) անվայել սովորություններին: Որպեսզի նման անձնավորությունները կարողանան խեղաթյուրել ընդունված ձևը, նրանք առանց վարանելու կխեղաթյուրեն այն, ինչը նրանք պետք է աշխարհի բոլոր բաներից ամենասուրբը պահեն իրենց անձնական առաքինության կողքին, իրենց անձնական կյանքի մաքրության կողքին: Նրանք պետք է պահեն այս բաները սուրբ,, որոնք Աստված է տվել իրենց, այն օրինակից անփոփոխ, ինչպիսին Աստված էր տվել նրանց: Եկեք մենք ունենանք բարոյական համարձակություն նորաձևության կարծիքներին դեմ կանգնելու համար և հատկապես այնտեղ, որտեղ նորաձևությունը հարկադրում է մեզ չպահել ուխտը և այսպիսով ծանր մեղք գործել»:7

Իր *Սուրբ Տաճարը* գրքում Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բոյդ Քֆ. Փաքերը հասկանալի կերպով բացատրել է, թե ինչու է կարևոր հանդերձը պատշաճորեն կրելը:

«Հանդերձը ներկայացնում է սուրբ ուխտերը: Այն օժանդակում է պարկեշտությանը և վահան ու պաշտպանություն է դառնում կրողի համար:

Այսպիսի հանդերձ կրելը չի խանգարում անդամներին աշխարհի ազգերի մեջ սովորաբար կրվող նորաձև հանդերձներ կրել: Միայն այն հագուստը, որը անպարկեշտ է կամ ծայրահեղ ոճի, անհամատեղելի կլինի հանդերձը կրելու հետ»: 8

Սրանից ավել ինչ պիտի ասվի հանդերձի վերաբերյալ և այն կրելու ձևի և դրան վերաբերվելու մասին: Սկզբունքները պարզորոշ կերպով հայտարարվել են և կրողներին ու նրանց խղճին է թողնվել դրանց համապատասխանաբար ապրելու գործը: Հավատի մարդիկ կարիք չունեն ղեկավարվելու բոլոր բաներում, քանի որ նրանք չեն ձգտում արդարացնել իրենք իրենց նվազագույն իսկ չափով կամ ըստ ավարտված Մովսեսի օրենքի մանրամասն հրահանգների, թե ինչպես ղեկավարեն իրենք իրենց: Բայց փոխարենը նրանք կառավարում են իրենց հագուստը և վարքը ինչպես Աստված ու իր մարգարեներն են վճռում, թույլ տալով Աստծո արդարադատությունը, ողորմությունը և երկայնամտությունը լիակատար ազդեցություն ունենան իրենց սրտերում(տես Ալմա 42.29–31):

Հիշեցում, որը մենք կրում ենք

Ես սիրում եմ մտածել հանդերձի մասին որպես Տիրոջ ուղի, որով թույլ է տալիս մեզ տաճարի մի մաս տանել մեր հետ, երբ մենք դուրս ենք գալիս այնտեղից: Ճշմարիտ է, որ մենք Տիրոջ տնից տանում ենք ոգեշնչված ուսմունքներ և սուրբ ուխտեր՝ գրված մեր մտքերում և սրտերում: Ինչևիցե, մի շոշափելի հիշեցում, որ մենք մեր հետ ետ ենք տանում մի աշխարհ, հանդերձն է: Եվ չնայած, որ մենք չենք կարող միշտ լինել տաճարում, դրա մի մասը միշտ կարող է լինել մեզ հետ՝ մեր կյանքն օրհնելու համար:

Մի մոռացեք, որ հանդերձ բառը սուրբ գրություններում խորհրդանշորեն է օգտագործվում և ընդլայնված նշանակություն է տալիս այլ բառերին, ինչպիսիք են ՝ սպիտակ, մաքուր, կատարյալ, արդար, պարկեշտ, ծածկ, արարողական, սուրբ, քահանայություն, գեղեցիկ, կատարելություն, փրկություն, պաշտպանություն, անբիծ, անարատ, սպառազինություն, ուխտեր, խոստումներ, օրհնություններ, հարգանք, հավերժական կյանք և այսպես շարունակ: Այս բոլոր բառերը հատուկ տեղ են զբաղեցնում այն մարդկանց բառապաշարում, ովքեր անկեղծորեն ակնկալում են Սրբեր դառնալ:

Հավատացյալների մի ընտրյալ խմբի մասին գրված է. «Մի քանի անձինք ունիս Սարդէսի մէջն էլ, որ իրանց հանդերձները չկեղտոտեցրին. եւ նորանք սպիտակներով ման կգան ինձ հետ, որովհետեւ արժանի են:

Ով որ յաղթում է, նա սպիտակ հանդերձներ կհագնէ. եւ նորա անունը կեանքի գրքիցը չեմ ջնջիլ. եւ կդաւանեմ նորա անունն իմ Հօր առաջին եւ նորա հրեշտակների առաջին» (Հայտնություն Գ.4–5):

Ինչ հրաշալի կլինի, եթե Եկեղեցու բոլոր անդամները սպիտակներով ման գան Աստծո հետ և հաշվվեն Սարդեսի Սրբերի հետ:

Միշտ հիշեք, որ մեր ամբողջ փրկությունը խորհրդանշորեն կախված է մեր հանդերձների վիճակից: Ալմա մարգարեն իր օրերում Եկեղեցու անդամներին ասաց, որ նրանք չէին կարող փրկվել, մինչև նրանց հանդերձները խորհրդանշորեն լվացվեին, մաքրվեին և սպիտակ դարձվեին Հիսուս Քրիստոսի արյան միջոցով: Նա սովորեցրել է.

«Ոչ մի մարդ չի կարող [փրկվել] մինչև նրա հանդերձները լվացված չլինեն ճերմակ. այո, նրա հանդերձները պիտի սրբվեն, մինչև դրանք մաքրվեն բոլոր բծերից, նրա արյամբ,

ում մասին խոսվել է մեր հայրերի կողմից, որը պիտի գա փրկագնելու իր ժողովրդին իրենց մեղքերից:…

Քայլե՞լ եք դուք՝ ձեզ անարատ պահելով Աստծո առաջ: Կկարողանայի՞ք դուք ասել ձեր մեջ, եթե դուք այս պահին կանչվեիք մեռնելու, որ եղել եք բավականին խոնարհ: Որ ձեր հանդերձները մաքրված և ճերմակ են դարձված Քրիստոսի արյան միջոցով, որը կգա՝ փրկագնելու իր ժողովրդին իրենց մեղքերից:

Իմ աղոթքն է, որ մեր հանդերձները մաքրված լինեն Քրիստոսի արյան միջոցով և որ մենք մեր մտքում և սրտում ամրապնդենք հետևյալ հայտարարությունը՝ «Սիոնը պիտի աճի գեղեցկությամբ և սրբությամբ, ... և հագնի իր գեղեցիկ հանդերձները» (ՎԱՈՒ 82.14):

Հղումներ

1. As quoted by John Taylor, Millennial Star, 15 Nov. 1851, 339.
2. Evelyn T. Marshall, "Garments," in *Encyclopedia of Mormonism,* ed. Daniel H. Ludlow, 5 vols. (1992), 2:534; emphasis added.
3. *Encyclopedia of Mormonism,* 2:534.
4. "Sacred Vestments: A Preliminary Report," Foundation for Ancient Research and Mormon Studies (1986), 13.
5. First Presidency Letter, 3 July 1974.
6. First Presidency Letter, 10 Oct. 1988; emphasis added.
7. *Improvement Era,* Aug. 1906, 813.
8. *The Holy Temple* (1980), 75.

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏ-ՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Սեփական ուժերին վստահելու սկզբունքը կանգնած է անձնական և ընտանեկան պատրաստվածության Եկեղեցու կարևորագույն սկզբունքի հետևում:

—Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Ինձ դուր է գալիս, թե ինչպես է Սփոփող Միությունը սովորեցնում անձնական և ընտանեկան պատրաստվածությունը որպես «հեռատես ապրելակերպ»: Այն ակնարկում է մեր միջոցներին տնօրինելը, ֆինանսական գործերի խելացի ծրագրավորումը, անձնական առողջության ամբողջական ապահովումը և կրթության ու աշխատանքային գործունեության զարգացման համապատասխան պատրաստվածությունը, տնային մթերմանն ու պահեստավորմանը նույնքան պատշաճ ուշադրություն դարձնելը, որքան հոգեկան ճկունության զարգացմանը» (Conference Report, Oct. 1977, 125, կամ *Ensign,* Nov. 1977, 78) :

Երեց Լ. Թոմ Փերի

«Ամեն օր մենք ականատես ենք լինում մեծապես տատանվող արժեզրկումների, պատերազմների, միջանձնական ընդհարումների, ազգային աղետների, եղանակի հետ կապված փոփոխությունների, անբարոյականության անթիվ ներգործությունների, հանցագործության և բռնության, ընտանիքի և անհատների վրա գրոհների և ճնշումների, տեխնոլոգիակական առաջընթացների, որոնք աշխատանքը դարձնում են հնացած, և այսպես շարունակ: Պատրաստվածության կարիքը խիստ ակնհայտ է: Պատրաստված լինելու մեծ օրհնությունը մեզ ազատում է վախից, ինչպես երաշխավորել է մեզ Տերը Վարդապետություններ և Ուխտերում. «Եթե պատրաստ լինեք, դուք չեք վախենա» (ՎԼՈՒ 38.30):

Որքան որ կարևոր է, որ մենք պատրաստենք մեզ հոգեպես, մենք պետք է նաև պատրաստենք մեզ մեր ֆիզիկական կարիքների համար: Մեզանից յուրաքանչյուրը պետք է ժամանակ տրամադրի և հարցնի ինքն իրեն՝ Ի՞նչ պատրաստություն ես պետք է տեսնեմ, որպեսզի կարողանամ հոգալ իմ կարիքները և իմ ընտանիքի կարիքները:

Տարիներ շարունակ մեզ սովորեցրել են հետևել առնվազն չորս պահանջների՝ պատրաստվելով ապագայի համար:

Առաջինը, ստանալ համապատասխան կրթություն: ...

Երկրորդը, ապրել ամբողջովին ձեր եկամուտին համաձայն և խնայեք որոշ բան վատ օրվա համար...

Երրորդը, խուսափեք պետք եղածից ավելի պարտքերից ...

Չորրորդը, ձեռք բերեք և պահեք սննդի պաշար և պարեն, որը կապահովի կյանքը» (Conference Report, Sept.–Oct. 1995, 46—47, կամ *Ensign,* Nov. 1995, 35–36):

Առողջություն

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Մենք սովորեցնում ենք մեր մարդկանց ապրել առողջության օրենքներով: Առողջության օրենքներով ապրելով նրանք կօրհնվեն ավելի երկար և ավելի առողջ կյանքով» (Conference Report, Apr. 1975, 6, կամ *Ensign,* May 1975, 6):

«Սեփական ուժերին վստահելու սկզբունքը կանգնած է անձնական և ընտանեկան պատրաստվածության Եկեղեցու կարևորագույն սկզբունքի ետևում: Մենք հույսով ենք, որ դուք գիտակցորեն եք մոտենում առողջ սննդին և առողջարար սովորություններին, որ կարողանաք ֆիզիկապես առողջ լինել և արձագանքել կյանքի բազում դժվարություններին» (Conference Report, Apr. 1978, 120—21, կամ *Ensign,* May 1978, 79–80):

«Մենք հրաժարվում ենք մեր մարմնի համար վնասակար բաներ ընդունելուց: Բոլոր բաներում իմաստության և ժուժկալության շնորհիվ մենք ձգտում ենք ամուր առողջության և ֆիզիկական բարեկեցիկ վիճակի» (Conference Report, Oct. 1978, 7, կամ *Ensign,* Nov. 1978, 6):

Աշխատանք և եկամուտներ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ես հորդորում եմ ձեզ, եղբայրներ, նայել ձեր եկամուտների վիճակին: Ես հորդորում եմ ձեզ համեստ լինել ձեր ծախսերում. ձեր գնումներում վերահսկեք ինքներդ ձեզ՝ հնարավորին չափ պարտքերից խուսափելու համար: Որքան հնարավոր է շուտ վերադարձրեք ձեր պարտքերը և ազատեք ինքներդ ձեզ գերությունից:

Սա ավետարանի ֆիզիկական մասն է, որին մենք հավատում ենք: Թող Տերն օրհնի ձեզ, իմ սիրելի եղբայրներ, որ ձեր ընտանիքներում կարգ ու կանոն հաստատեք: Եթե դուք վճարել եք ձեր պարտքերը, եթե դուք խնայողություններ ունեք, նույնիսկ, եթե դրանք փոքր են, ապա եթե

նույնիսկ փոքրիկ բարձրանա ձեր գլխավերևում, դուք ապաստան կունենաք ձեր կանանց ու երեխաների համար և խաղաղություն ձեր սրտերում» (Conference Report, Oct. 1998, 69—72, կամ *Ensign*, Nov. 1998, 52–54):

Երեց Հովարդ Վ. Հանթեր

«Թույլ տվեք հատուկ խոսք ուղղել մասնագիտական աշխատանքի կամ զբաղմունքների վերաբերյալ: Մեր ընտրած զբաղմունքը պետք է լինի պատվարժան ու հետաքրքիր: Լավագույն դեպքում մենք պետք է փնտրենք այնպիսի աշխատանք, որը հարմար է մեր հետաքրքրությանը, ընդունակությանը և փորձին: Մարդու աշխատանքը պետք է լինի ավելին, քան միայն համապատասխան եկամուտ ապահովելը. այն պետք է ապահովի նրա ինքնարժեքը և հաճելի լինի՝մի բան, որին նա ձգտի ամեն օր ...

Մեր քույրերը նույնպես հարկադրող պատճառներ ունեն աշխատանքի ծրագրեր կազմելու համար: Մենք ուզում ենք, որ նրանք մինչև ամուսնանալը ձեռք բերեն բոլոր հնարավոր կրթությունն ու մասնագիտական փորձը: Եթե նրանք դառնան այրիներ կամ բաժանվեն և աշխատելու կարիք ունենան, մենք ուզում ենք, որ նրանք ունենան արժանապատիվ և եկամտաբեր աշխատանք: Եթե քույրը չի ամուսնանում, նա ունի ամեն իրավունք նվիրվելու իր մասնագիտությանը, որը նրան թույլ է տալիս զարգացնել իր տաղանդներն ու պարգևները» (“Prepare for Honorable Employment,” *Ensign*, Nov. 1975, 122, 124):

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Երբեք մի նվաստացրեք որևէ մեկին, ներառյալ ձեր անձը, կամ համարեք նրանց կամ ձեզ անհաջողակ, եթե ձեր ապրուստը համեստ է եղել: Երբեք վերևից մի նայեք նրանց վրա, ովքեր աշխատում են ցածր աշխատավարձով: Մեծ արժանապատվություն և արժեք ունի ցանկացած ազնիվ աշխատանք: Մի օգտագործեք ցածրակարգ բառը որևէ աշխատանքի համար, որը բարելավում է աշխարհը կամ մարդկանց, ովքեր ապրում են դրա մեջ» (Conference Report, Apr. 1982, 121, կամ *Ensign*, May 1982, 84):

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

«Եղբայրներ և քույրեր, ինչ կարող ենք մենք անել մեր ընտանիքի եկամուտները շատացնելու համար: Թույլ տվեք առաջարկել երեք կարևոր բանալիներ, որոնք կօգնեն մեզ: Դրանք են *վերաբերմունքը, ծրագրելը և ներքին դաստիարակությունը*:

«Առաջին բանալին սեփական անձի նկատմամբ դրական վերաբերմունք ունենալն է:

Վերաբերմունքը կարևոր մաս է կազմում այն հիմքի, որի վրա մենք կառուցում ենք արդյունավետ կյանք: Մեր ներկա վերաբերմունքը գնահատելու համար մենք կարող ենք հարցնել. «Ես աշխատու՞մ եմ իմ լավագույն անձը դառնալու համար: Ունե՞մ արդյոք արժանի և հասանելի նպատակներ: Կյանքում փնտրու՞մ եմ դրականը: Ես ուշադի՞ր եմ այն ճանապարհներին, որ ես կարող եմ մատուցել ավելի շատ ու ավելի լավ ծառայություն: Ես անում եմ ավելին, քան պահանջվու՞մ է ինձնից: ...

Որոշ մարդիկ, ովքեր ապրել են մեծ դեպրեսիայի ընթացքում և դրան հաջորդող ժամանակահատվածում, երբ իշխանությունը անհիմն մեղադրանքներ էր ներկայացնում մարդկանց, առաջ բերեց զգացում, որ աշխարհը պարտական էր նրանց իրենց ապրուստի համար: Այդ իրավիճակում Առաջին Նախագահությունը 1936 թվականին ասել է. «Եկեղեցու նպատակն է օգնել մարդկանց, որ օգնեն իրենց: Աշխատանքը մեր Եկեղեցու անդամների կյանքում պետք է լինի իշխող սկզբունք» (In Conference Report, Oct. 1936, p. 3):

Մեր կյանքում պետք է սեր լինի աշխատանքի հանդեպ: Յուրաքանչյուր ընտանիք պետք է աշխատանքի համար ծրագիր ունենա, որն առնչվի ընտանիքի յուրաքանչյուր անդամի կյանքի հետ, որպեսզի այս հավերժական սկզբունքը դառնա նրանց կյանքի մի մասը: ...

Եղբայրներ և քույրեր, եկեք քննարկենք երկրորդ բանալին, *ծրագրելը*, որը նշանակում է նախօրոք մտածել, թե ինչպես ենք մենք մտադիր կյանքում հասնել մեր նպատակներին: Մենք բոլորս ունե՞նք մեր աշխատավայրում մեր արժեքը մեծացնելու ծրագիր: Մենք արդյոք տրամադրե՞լ ենք ժամանակ հատուկ նպատակներ գրելու համար, և մենք արդյոք կազմե՞լ ենք ավելի արդյունավետ դառնալու գործողությունների ծրագիր....

Երրորդ բանալին մեր ներքին դաստիարակությունը կիրառելն է մեր աշխատանքում, և երբ մենք փորձում ենք մեր տներում կրճատել մեր ծախսերը: Ինչ վերաբերվում է վերջինին, Եկեղեցու առաջնորդները պետք է օրինակ ծառայեն հետևելով, որ ցցի և ծխի ֆինանսական պահանջները հասցվեն նվազագույնի: Անդամները պետք է՝

1. Խուսափեն տոկոսով պարտքից, որտեղ մեծ տոկոսադրույքներ են պահանջվում: Մենք կարող է ցանկանանք ավելի արդյունավետ դարձնել մեր պարտքերը օգտվելով բանկի կամ վարկային ընկերության վարկից, որը կարող է ետ վճարվել խելամիտ տոկոսաչափով բավականին ժամանակահատվածում: Մենք կարող է ստիպված լինենք դադարեցնել մեր վարկային քարտերից օգտվելը:
2. Գործադրեն ներքին դաստիարակությունը ինքներս մեզ ասելով՝ «Մենք չենք կարող դա մեզ թույլ տալ» և հրաժարվել հավելյալ պարտքերի պարտավորություններից:

   Մի օր պատահաբար մի վիճաբանություն լսեցի: Ամուսիններից մեկը, մինչ հանդիմանում էր մյուսին շռայլորեն ծախսելու համար, ասում էր. «Քանի՞ անգամ ես

պետք է քեզ ասեմ, որ մինչև քո փողը ստանալն այն ծախսելը տնտեսական տեսակետից անապահով է»:

«Oh, - ասում էր կողակիցը,- Ես չգիտեմ այդ մասին: Ահա թե ինչու, եթե դու չստանաս փողը, գոնե դու մի բան կունենաս դրա փոխարեն ցույց տալու համար»:

Խնդրում եմ համբերատար եղեք և զգուշորեն վերահսկեք ձեր գնումները, որպեսզի դուք գերի չդառնաք ձեր պարտատերերին:

3. Պլանավորեք ձեր ծախսերը և հետևեք դրանց:
4. Կրճատեք ձեր ծախսերը՝ զանազանելով ցանկությունները կարիքներից: Տնտեսեք՝ վերահսկելով ապրանքների, ծառայությունների և եռանդի օգտագործումը:
5. Շատացրեք տնայնագործական հմտությունները և թող ընտանիքի անդամները ավարտեն տան և մեքենայի վերանորոգումը, երբ հնարավոր կլինի:
6. Իմաստուն ձևով ներդրումներ կատարեք: Խուսափեք սպեկուլյացիաներից և արագ հարստանալու մեքենայություններից:

Եղբայրներ և քույրեր, մեզանից յուրաքանչյուրը ներուժ ունի զարգացնելու և մեծացնելու իր վաստակելու ունակությունը: Մենք շատ ավելի լավ կանենք, եթե կարողանանք զարգանալ և ավելի պիտանի դառնալ մեր լիաժամկետ աշխատանքներում, քան եթե մենք փորձենք երկու աշխատանք ունենալ կամ թույլ տանք մայրերին թողնել տունը և միանալ աշխատուժին:

Երբ մենք սովորում ենք ակնկալել ավելի մեծ հաջողություն, քան կյանքում անհաջողակ լինելը, մենք շուտով կզարգացնենք հաջող վերաբերմունք:

Մի հաջողությունը առաջնորդում է բազում հաջողությունների:

Հիշեք,դրական վերաբերմունքը, լավ մտածված ծրագիրը և շարունակական ինքնադաստիարակությունը կարող են օգնել մեզ լավացնել մեր պայմանները: Մեր ամենօրյա աշխատանքում այս բանալիները կիրառելը կօգնի ավելի շատ եկամուտ ձեռք բերել և դրանք մեր տներում գործածելը կօգնի նվազեցնել ծախսերը: Երբ մենք այս սկզբունքները միացնենք Աստծո պատվիրանները պահելու հետ, մենք կարող ենք սովորել դառնալ մեր ժամանակի և ունակությունների ավելի լավ կազմակերպիչներ և դառնալ ֆինանսապես ապահով» (Conference Report, Apr. 1981, 115–18, կամ *Ensign,* May 1981, 85–87):

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին

«Սեփական ուժերին վստահելը հիմնված է ջանասեր աշխատանքի վրա: Ծնողները պետք է սովորեցնեն իրենց երեխաներին, որ աշխատանքը յուրաքանչյուր կարևոր ջանքի հաղթանակի ու հաջողության անհրաժեշտ պայման է: Իրավական տարիքի երեխաները պետք է մասնագիտական աշխատանք ունենան և սկսեն ծնողներից կախվածություն չունենալ: Մեզանից ոչ ոք չպետք է ակնկալի, որ ուրիշները կապահովեն մեզ նրանով, ինչը մենք կարող ենք ապահովել մեզ համար» (Conference Report, Oct. 1991, 20, կամ *Ensign,* Nov. 1991, 16):

Տնային պահեստ և արտադրություն

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Ընդունելով, որ ընտանիքը Եկեղեցու և ընդհանրապես հասարակության ամենակարևոր մասն է, մենք պաշտոնապես դիմում ենք Վերջին Օրերի Սրբերին ամենուր ամրացնել և գեղեցկացնել իրենց տունը նոր եռանդով այս որոշակի բնագավառներում՝ սննդի արտադրություն, պահպանում, պահեստավորում. Ոչ սննդային ապրանքների արտադրություն և պահեստավորում (Conference Report, Apr. 1976, 170, կամ *Ensign,* May 1976, 124):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Ես լրջորեն հարցնում եմ ձեզ, դուք ձեր ընտանիքը ապահովե՞լ եք մեկ տարվա սննդի, հագուստի և, որտեղ հնարավոր է, վառելանյութի պաշարով: Սնունդ արտադրելու և պահեստավորելու հայտնությունը կարող է այսօր այնքան կարևոր լինել մեր ֆիզիկական բարօրության համար, որքան տապան նստելը Նոյի օրերի մարդկանց համար» (Conference Report, Oct. 1987, 61, կամ *Ensign,* Nov. 1987, 49; *To the Fathers in Israel,* 4):

ՍԱՏԱՆԱՅԻ և ԲՆԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ

Մենք չենք կարող «հաղթող ճանաչվել», եթե մենք նախ «չհանենք» եսասեր բնական մարդուն:

—Երեց Նիլ Ա. Մաքսվել

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Նախագահ Բրիգամ Յանգ

«Շատերը կարծում են, որ դևը իշխանություն և զորություն ունի թե մարմնի և թե հոգու վրա: Այժմ ես ուզում եմ ձեզ ասել, որ նա ոչ մի զորություն չունի մարդու վրա, միայն այնքան ժամանակ, մինչև մարմինը հաղթում է հոգուն, որը մարդու մեջ է, չար հոգուն զիջելու միջոցով: Ոգին, որը Տերը դնում է մարմնեղեն տաղավարում, Ամենազոր Տիրոջ թելադրանքի տակ է. սակայն ոգին ու մարմինը միավորվում են, որպեսզի հոգին տաճար ունենա և կարողանա վեհացվել. և հոգին ներգործվում է մարմնի կողմից, և մարմինը հոգու կողմից:

Առաջին վիճակում հոգին մաքուր է և Տիրոջ հատուկ հսկողության ու ներգործության ներքո, բայց մարմինը աշխարհիկ է և դևի զորությանը հպատակ, և ենթակա հզոր ներգործությանը այն ընկած էակի, որն աշխարհից է: Եթե հոգին տեղի է տալիս մարմնին, դևն այնուհետև զորություն ունի պարտության մատնել այդ մարդու մարմնին և հոգուն, և նա կորցնում է երկուսն էլ» (*Discourses of Brigham Young*, 69–70):

«Մենք մեր մարմնական ծնողների մարմնական որդիներն ու դուստրերն ենք, և հոգեպես մենք լույսի Հոր բնական զավակներն ենք և նրա թագավորության բնական ժառանգներն ենք. և երբ մենք չարիք ենք գործում, մենք դա անում ենք ի հակառակ Ճշմարտության Հոգու հուշումների, որը մեր մեջ է: Մարդը,Աստծո ազնվական աշխատանքը, իր ստեղծման մեջ նախատեսված էր անվերջ տևողությամբ, որի համար ամեն լավ բանի հանդեպ սերը ներառված էր նրա էության մեջ: Երբեք չէր նախատեսվել, որ նա պետք է բնականաբար աներ և սիրեր չարը» (*Journal of Discourses*, 9:305):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Տես «Մեր հանդիսավոր պարտականությունները», էջ 22–26 [00]:

Երեց Սպենսեր Վ. Քիմբալ

«Սատանան շատ անհատական, որոշակի ոգեղեն էակ է, սակայն առանց մահկանացու մարմնի: Մեզանից յուրաքանչյուրին իրենը կնքելու նրա ցանկությունը պակաս բուռն չէ ամբարշտության մեջ, քան մեր Հոր ցանկությունը արդարության մեջ իր հավերժական թագավորության մեջ մեզ տանելը» (*Miracle of Forgiveness*, 21):

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

«Անկման գործընթացի ընթացքում շատ բաներ պատահեցին, ներառյալ փոփոխությունները, որոնք տեղի ունեցան Ադամի և Եվայի ֆիզիկական մարմինների հետ: Դրանցից մեկն այն էր, որ նրանք ընկան «բնական» վիճակի մեջ: ...

Ադամի և Եվայի մուտքը բնական աշխարհ ուղեկցվեց նրանց մարմինները արյունով հագեցնելուն՝ապականող բաղադրիչ,որը տրվեց մինչ այդ անարյուն մսի և ոսկորի անապական մարմինների փոխարեն: Բայց նույնիսկ այսպիսի ֆիզիկական փոփոխություններից ավելի կարևոր էին հոգու փորձություններն ու վտանգները: Անկման հետ եկավ Աստծուց ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր բաժանումը: Մարդկությունը զրկվեց Աստծո հետ անմիջական անձնական կապից, որն Ադամն ու Եվան վայելում էին Եդեմի պարտեզում: Որպես արդյունք նրանցից հեռացվեց Սուրբ Հոգին և դարձան ավելի քիչ պատրաստակամ արդարության շատ բաների հանդեպ ...

Քանի որ [բնական մարդու] այս վարդապետությունը շատ կարևոր է փրկության ծրագրում և նաև քանի որ շատ հեշտությամբ կարելի է այն սխալ հասկանալ, մենք պետք է նշենք, որ «բնական» չարիքի վերաբերյալ տեղեկությունները բացարձակորեն *չեն* նշանակում, որ տղամարդիկ ու կանայք «անխուսափելիորեն» չար են: Կա մի վճռական տարբերություն: Որպես Աստծո հոգևոր որդիներ և դուստրեր մահկանացու բոլոր տղամարդիկ և կանայք աստվածային ծագում ունեն և նրանց ճակատագիրն ունի աստվածային ներուժ: Ինչպես սովորեցնում է Վարդապետություն և Ուխտեր 93.38—39, ամեն տղամարդու, կնոջ ու երեխայի ոգի «սկզբում անմեղ էր»: Բայց ճշմարիտ է նաև այն, որ որպես Անկման արդյունք նրանք այժմ «բնական» (ընկած) աշխարհում են, որտեղ դևը «վերցնում է լույսը» և որտեղ բնական որոշ տարրեր՝ներառյալ մարդկային ֆիզիկական բնույթը,կարգուկանոնի, զսպվածության և կատարելագործման կարիք ունեն: Այն կարծես թե տղամարդուն և կնոջը տրված, որպես նրանց դեպի աստվածություն տանող ճանապարհի զարգացման հաջորդ փուլի մի մաս է՝ ֆիզիկական և հոգևոր բնական բաղադրամասեր այսինքն

«բնական» ունակություններ: Այդ ունակությունները չի կարելի իզուր վատնել, այլ այնպես պետք է կենտրոնացնել, որ դրանց զորությունն ու ներուժը (ինչպես երբեմն արվում է «բնական» գետերի կամ «բնական» ջրվեժների հետ) միավորվեն և դրանով իսկ դառնան ավելի արդյունավետ և օգտակար:

Բնական մարդը իր ողջ նոր ու հրաշալի, սակայն դեռ անսանձելի ու չվերականգված ներուժով, պետք է «հնազանդվի» Սուրբ Հոգուն, հոգի, որը դեռևս մեզ հրապուրում և վեր է բարձրացնում ... Մեր ամենամեծ ցանկությունները, մեր նախաերկրային փափագները մնացել են աստվածային իրենց ծագմամբ, և նրանք դեռևս մնում են խորը մեր հոգում: Մեր նախկին անմեղության արձագանքը դեռևս լսվում է և լույսը, որ խափանում է չարին, դեռևս փայլում է: Մեր սրտերը կարող են,և իրենց մաքուր վիճակում այդպես էլ անում են,ցանկանալով այն, ինչը հոգևոր է և սուրբ, և ոչ թե այն, ինչը «մարմնական, զգայական է և դիվային»: Եթե դա այդպես չլիներ, մենք ամբողջովին անհուսալի վիճակում կլինեինք և իրական ընտրության գաղափարը ընդմիշտ վտանգված կլիներ: Մենք փառաբանում ենք Աստծուն՝ մեր Հորը, որ մեր իսկական ժառանգությունը նրանից է և որ իր հավերժական ներգործությանը տեղի տալով և ենթարկվելով մենք կարող ենք հաղթել այն թշնամությանը, որը բաժանեց մեզ նրանից և բնությունից տրված պարգևները դարձնենք մեզ օրհնություններ, ոչ թե անեծք» (*Christ and the New Covenant*, 205–7):

Երեց Մերիլ Ջ. Բեյթման

«Սուրբ գրությունները հաղորդում են, որ տղամարդիկ ու կանայք ստեղծվել են Աստծո պատկերով(տես Ծննդոց Ա.26–27, Աբրահամ 4.27–28): Եվ կանայք, և տղամարդիկ իրենց մեջ ունեն աստվածային հատկանիշներ և երկուսն էլ օրհնվում են, երբ իրականացնում են իրենց աստվածային կոչումները: Պետրոս առաքյալը և Բենիամին Թագավորը նշում են, որ մենք ընդունում ենք աստվածային էություն Քրիստոսի քավության միջոցով՝ Սուրբ Հոգու օգնությամբ (տես Բ Պետրոս Ա.3–8, Մոսիա 3.19): Հետաքրքիր է նկատել Հոգու պտուղների և Երկնային Ծնողներից ժառանգած աստվածային սերմերի նմանությունը (տես Գաղատացիս Ե.21–22, Բ Պետրոս Ա.3–8): Քանի որ «լույսը հարում է լույսին» և Հոգին հոգուն, Սուրբ Հոգին կարող է կենդանացնել մեզ լույսի մի մասով, որը պատճառ է դառնում, որ մեր միջի աստվածային սերմերը բողբոջեն և ծաղկեն (ՎԱՈՒ 88.29, 40): Լույսի աստիճանն ու տարածությունը, որով հատկանիշները ծաղկում են, պայմանավորված է նրանով, թե որքանով են կանայք ու տղամարդիկ սանձում իրենց կրքերը և հնազանդվում աստվածային սկզբունքներին» (“The Eternal Family,” 112–13):

Երեց Ջ. Ռիչարդ Քլարկ

«Դարեր շարունակ չար ուժերը գրոհել են ընտանիքների վրա: Ձեր կարծիքով ինչու՞ է սատանան այդքան համակված դրա կործանմամբ: Քանի որ դա այն ամենն է, որ նա ուզում է և չի կարողանում ունենալ: Նա չի կարող լինել ամուսին, հայր կամ պապիկ: Նա չի կարող ժառանգներ ունենալ այժմ կամ երբևէ: Սատանան չի կարող նույնիսկ պահել նրանց, ում նա հեռացրել է Աստծուց: Նա չունի հավերժական թագավորություն կամ ժառանգություն» (Conference Report, Apr. 1989, 74, կամ *Ensign*, May 1989, 60):

ՄԵՐ ՎԱՂԱՆՑԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Եկեղեցու Նախագահ

Բրիգամ Յանգի Համալսարանի բացման հանդիսավոր արարողություն, 25 ապրիլի, 1996թ.

Ձեր աշխարհիկ կրթությունը ծրագրված է աշխարհի աշխատանքի մեծ շուկայում ձեզ զարգացող հնարավորություն տալու համար: Շատ դեպքերում դուք կփոխհատուցվեք համաձայն այն գնահատականի, որը կտա ձեր հմտություններին հասարակությունը:

Բայց ինչպես ձեզ ասվել է նախկինում, պետք է ԲՅՀ ձեր ստացած կրթության հանդեպ լինի նաև մեկ այլ մոտեցում: Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը, ով շատ տարիներ ծառայել է որպես նախագահող Խորհրդի Հավատարմատար, մի անգամ ասել է.

«Ճիշտ կրթությունը բաղկացած չի լոկ գիտությունից, պատմությունից, գրականությունից կամ արվեստից ստացված փաստերից, այլ բնավորության զարգացումից: Ճիշտ կրթությունը ցանկություն է առաջացնում պահպանել առողջությունը՝ մարմինը մաքուր և անարատ պահելով: Ճիշտ կրթությունը մարզում է ինքնամերժումը և ինքնատիրապետումը: Ճիշտ կրթությունը կարգավորում է հավասարակշռությունը, խեղդում է կրքերը և հասարակական օրենքներին ու բարոյական կարգերին հնազանդվելը դարձնում է կյանքի առաջնորդող սկզբունք: Այն զարգացնում է դատողությունը և մեծացնում է հավատքն առ կենդանի Աստված՝ որպես ամենի Հավերժական Հոր» (*Conference Report*, April 1928, 102):

Ձեզանից շատերը ուսման ընթացքում ուսումնասիրել են քաղաքակրթության զարգացումը: Այն եղել է իսկական

ակնառու ոդիական, մինչ դարերի ընթացքում հասարակությունը զարգացում է ապրել, երբ մարդիկ ապրել են միասին համայնքներում՝ հարգելով և մտահոգվելով մեկը մյուսի համար: Սա քաղաքակրթության առանձնահատկությունն է: Եվ այնուամենայնիվ երբեմն մենք զարմանում ենք, թե մենք իրականում որքան առաջընթաց ենք ապրել: Այս դարը, որն այժմ մոտենում է իր ավարտին, ականատես է եղել ավելի շատ պատերազմների ու ավելի շատ մահ ու տառապանքի, քան մարդկության պատմության որևէ այլ դար: ... Քաղաքակրթությունն ու փոխադարձ հարգանքը կարծես անհետացել են, մինչ մարդիկ սպանում են իրար ազգային տարբերությունների պատճառով:

Բայց քաղաքակրթությունը ևս թվում է աղոտանում է , երբ երբ այն առնչվում է տան հետ:: Քաղաքակրթությունը մարդկային հարաբերություններում բազմաթիվ խնդիրներ է լուծում: Դրա ներկայությունը բնութագրվում է այնպիսի բառերով, ինչպիսիք են «լավ վարվելակերպի կանոններ» և «լավ դաստիարակություն, բարեկրթություն»: Բայց մեր շուրջն ամենուր մենք տեսնում ենք հակառակը:

Դա սարսափելի է: Դա տագնապալի է: Եվ երբ ամեն ինչ ասված ու արված է, վնասը կարելի է վերագրել գրեթե ամբողջովին մարդկային ագահությանը, չկառավարվող կրքին, ուրիշների իրավունքների լիարժեք անտեսմանը: Այլ կերպ ասած՝ քաղաքակրթության բացակայությանը: Ինչպես ասել է մի գրող՝ «Մարդիկ կարող են քաղաքակիրթ հասարակություն համարել այն, որտեղ կա բարեկիրթ մշակույթ: Ոչ բոլոր դեպքերում. առաջինը և ամենակարևորը այն հասարակությունն է, որտեղ մարդկանց մեծամասնությունը ճնշում են իրենց եսասիրական բնազդները ի շահ համընդհանուր բարեկեցության» (*Royal Bank Letter*, May–June 1995): Նա շարունակում է. «Վերջին տարիներին զանգվածային լրատվամիջոցները գռեհկությունը դարձրել են արվեստի տեսակ: Կինոնկարների հանրաճանաչ հերոսները այսօր հանդես են գալիս անհիմն քննախոսությամբ՝ ծաղրելով և նվաստացնելով ցանկացածին, ով հայտնվում է նրանց ճանապարհին: Վատ պահվածքը երևի ապրանքը դյուրավաճառ է դարձնում: Հեռուստատեսային զվարճալի ծրագրերը թաղված են գռեհկության մեջ, երգիծաբաններն իրենց ելույթներում հիմնվում են իրենց հանդիսատեսներին ուղղված անվայել ռեպլիկների վրա և նրանք հարուստ ու հայտնի են դառնում ՝ այցելուների հետ տհաճ ձևով խոսելով և հյուրերին բղավոցներով ընդհատելով»:

Միթե՞ այս ամենը խոսում է բացառապես բարեփոխումների մասին: Միթե՞այն խոսում է բացառապես բարեկրթության մասին: Միթե՞ այն խոսում է բացառապես քաղաքակրթության մասին: Ավելի ճիշտ, այն խոսում է գռեհկության և անքաղաքավարության մասին, և ուրիշների զգացմունքների և իրավունքների հանդեպ լիակատար անտարբերության մասին:

Նույն իրավիճակում է գտնվում նաև այսօրվա լեզվի մեծ մասը: Դպրոցներում և աշխատատեղերում տարածված է տհաճ, չար, անպարկեշտ լեզուն: Ես հույսով եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը կբարձրանա դրանից վեր: Դուք այժմ այս հրաշալի հաստատության շրջանավարտներն եք: Դուք չեք կարող ձեզ թույլ տալ ունենալ նրանց կերպարը, ում բառապաշարն այնքան աղքատ է, որ նրանք ստիպված են օգտվել փողոցային բառերից՝ իրենց մտքերն արտահայտելու համար: Այսպիսի անքաղաքավարի խոսելաձևին ավելանում է նաև դատարկախոսությունը: Սա նույնպես նշում է քաղաքավարության պակասը: Տիրոջ մատը գրեց քարե տախտակների վրա. «Քո Եհովայ Աստուծոյ անունը դարտակ տեղը չյիշես, որովհետեւ Եհովան՝ իր անունը դարտակ տեղը յիշողին անպատիժ չի թողիլ» (Ելից Ի.7):

Քաղաքավարությունն այն է, ինչը համ է տալիս մեր կյանքին: Դա է աղը, որ խոսում է լավ ճաշակի, լավ պահվածքի, լավ դաստիարակվածության մասին:

Անփույթ խոսելակերպն ու անփույթ վարքը հաջորդում են միմյանց: Ես հուսով եմ, որ դուք սովորել եք ավելին, քան գիտություններ, հումանիտար գիտություններ, օրենք, ճարտարագիտություն և արվեստներ, մինչ դուք այստեղ էիք: Ես հուսով եմ, որ դուք այս փառավոր վայրից ձեր հետ կտանեք որոշակի փայլ, որը կներկայացնի ձեզ որպես մեկի, ով սիրահարված է կյանքի լավագույն որակներին, քաղաքակրթությանը, որը կիրք կավելացնի երկրային աշխարհին, որի մի մասն ենք մենք, փայլ, որը բավականին լույս կսփռի այն բանի վրա, ինչն այլապես կլիներ անազնիվ մետաղ:

Փրկիչն ասաց բազմությանը. «Դուք երկրի աղն էք. եթէ աղն անհամանայ, ի՞նչով կաղանուի. այլեւս ոչնչի պէտք չէ, միայն թէ դուրս գցուի եւ մարդկանցից ոտնակոխ լինի» (Մատթեոս Ե.13):

Քաղաքավարությունն է, որ համեմում է մեր կյանքը: Դա է աղը, որը խոսում է լավ ճաշակի, լավ պահվածքի, լավ դաստիարակվածության մասին:

Այն դառնում է Ոսկե Օրենքի արտահայտում. «Ամեն ինչ որ կամենում էք՝ թէ ձեզ անեն մարդիկ, այնպէս էլ դուք արէք նորանց» (Մատթեոս Է.12):

ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԿԱՅՈՒՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

In Conference Report, Oct. 1991, 70–71, 73; կամ Ensign, Nov. 1991, 50–52

Թույլ տվեք ինձ կարդալ մեկ այլ նամակից: Նամակագիրն ասում է. «Իմ ամուսինը լավ մարդ է՝ բազում բացառիկ որակներով և բնավորության գծերով, բայց այդ ամենի տակ թաքնված է ուժեղ բռնատիրությունը: ... Նա բավականին հաճախ է կորցնում իր ինքնատիրապետումը՝ ինձ հիշեցնելու համար այն ամբողջ հնարավոր գարշելիությունը, որին նա ընդունակ է:

Նախագահ Հինքլի, ... խնդրում եմ, հիշեցրեք եղբայրներին, որ կանանց ֆիզիկապես կամ խոսքով վիրավորելը աններելի է, երբեք ընդունելի չէ, և տարաձայնությունների ժամանակ բռնություն գործադրելը, հատկապես և մասնավորապես նողկալի է, երբ բռնացողը քահանայություն կրող է»:

Այժմ, ես հավատում եմ, որ Եկեղեցում ամուսնությունների մեծամասնությունը երջանիկ են, որ ամուսիններն ու կանայք՝ երկուսն էլ այդ ամուսնությունների մեջ զգում են ապահովություն և սեր, փոխադարձ վստահություն, և հավասար կիսում են պատասխանատվությունները: Ես վստահ եմ, որ այդ տների երեխաները, գոնե նրանց ճնշող մեծամասնությունը, մեծանում են խաղաղության և ապահովության զգացումով, իմանալով, որ իրենք գնահատված և սիրված են իրենց երկու ծնողների կողմից էլ, ովքեր, նրանք զգում են, որ սիրում են իրար: Բայց ես վստահ եմ, իմ եղբայրներ, որ զգալի չափով կա նաև իմ ասածի հակառակը, որը պիտի արդարացվի:

Ով կարող է հաշվել բարկությամբ ասված կոպիտ ու ստորացնող բառերի պատճառած վիրավորանքները, դրանց խորությունն ու ցավը: Որքան ցավալի է պատկերը այն մարդու, ով ուժեղ է տարբեր կողմերից, բայց ով կորցնում է իր ողջ ինքնատիրապետումը, երբ ինչ-որ փոքր բան, սովորաբար անկարևոր նշանակության, վրդովում է նրան: Յուրաքանչյուր ամուսնությունում իհարկե պատահում են տարաձայնություններ: Բայց ես ոչ մի արդարացում չեմ գտնում դյուրագրգռությանը, որը անսպասելի պոռթկում է թեթևակի դրդումից:

Առակների հեղինակն ասում է. «Բարկութիւնը անգութ է եւ ցասումը հեղեղասաստ» (Առակաց ԻԷ.4):

Անզուսպ դյուրագրգռությունը շատ սարսափելի, քայքայիչ բան է: Եվ ողբերգությունը նրանում է, որ այն ոչ մի լավ բանի չի բերում. այն միայն սնում է չարին զայրույթով և խռովությամբ և ցավով: Յուրաքանչյուր տղամարդու կամ պատանու, ով լսում է իմ ձայնը, ով խնդիր ունի իր լեզուն կառավարելու հետ, թույլ տվեք խորհուրդ տալ, որ դուք աղերսեք Տիրոջը, որ ձեզ ուժ տա ձեր թուլությունը հաղթահարելու համար, որ դուք ներողություն խնդրեք նրանցից, ում դուք վիրավորել եք, և որ դուք ձեր մեջ ուժ զարգացնեք ձեր լեզուն վերահսկելու համար:

Պատանիներին, ովքեր հիմա այստեղ են, կարո՞ղ եմ ես խորհուրդ տալ, որ դուք վերահսկեք ձեր հավասարակշռությունը հիմա, ձեր կյանքի այս ձևավորվող տարիներին: Ինչպես Եղբայր [Դեյվիդ Բ.] Հեյթն է ձեզ հիշեցրել, սա է ձեր անձը կառավարելու ուժ զարգացնելու շրջանը: Դուք կարող է մտածեք, որ տղամարդկությունն է համարվում բարկանալը և հայհոյելը և Տիրոջ անունը պղծելը: Բարկությունը ուժի դրսևորում չէ: Այն ցույց է տալիս անձի անկարողությունը հսկելու իր մտքերը, խոսքերը, իր զգացմունքները: Իհարկե հեշտ է բարկանալը: Երբ բարկանալու թուլությունը գլուխ է բարձրացնում, բանականության ուժը հեռանում է: Ձեր մեջ զարգացրեք ներքին դաստիարակության հզոր ուժը: ...

Երջանիկ ամուսնության գեղեցկությունը

Որքան գեղեցիկ է ամուսնությունը երիտասարդ տղամարդու և երիտասարդ կնոջ, ովքեր սկսում են իրենց համատեղ կյանքը ծնկի գալով Տիրոջ տանը զոհասեղանի առջև, խոստանալով իրենց սերն ու հավատարմությունը միմյանց հանդեպ բոլոր ժամանակների և հավերժության համար: Երբ երեխաներ են գալիս այդ տուն, նրանց խնամում են և հոգ տանում, սիրում և օրհնում այն զգացումով, որ իրենց հայրը սիրում է իրենց մորը: Այդ միջավայրում նրանք գտնում են խաղաղություն և ուժ և ապահովություն: Նայելով իրենց հորը նրանց մոտ հարգանք է ձևավորվում կնոջ հանդեպ: Նրանց սովորեցնում են ինքնակառավարում և ինքնադաստիարակություն, որն ուժ է տալիս հետագայում խուսափել դժբախտությունից:

> ***Աստվածային ուսուցումը գլխավորապես տրվում է, որպեսզի մեզ օգնի ազատվել մեր եսասիրությունից:***

Տարիներն անցնում են: Երեխաներն ի վերջո հեռանում են տնից՝ մեկ առ մեկ: Եվ հայրն ու մայրը կրկին մենակ են: Բայց նրանք կարող են խոսել իրար հետ, վստահել իրար, խնամել, հուսադրել և օրհնել: Գալիս է կյանքի աշունը, երբ ետ ես նայում բավականությամբ և ուրախությամբ: Բոլոր տարիների ընթացքում եղել է հավատարմություն իրար հանդեպ: Եղել է տարաձայնություն և քաղաքավարություն:

Այժմ որոշակի մեղմություն կա, փափկություն, ազդեցություն, որ ճաշակում են սուրբ հարաբերություններից: Նրանք գիտակցում են, որ մահը կարող է այցելել ցանկացած ժամի, սովորաբար նախ մեկին՝ կարճաժամկետ կամ երկարաժամկետ բաժանումով: Բայց նրանք նաև գիտեն, որ քանի որ իրենց ընկերակցությունը կնքվել է հավերժական քահանայության իշխանության ներքո և նրանք ապրել են օրհնություններին արժանի, կրկին կլինի հանդիպում՝ քաղցր ու հաստատ:

Եղբայրներ, Երկնային Հայրն ուզում է, որ ամուսնությունը լինի այսպիսին: Սա է Տիրոջ ճանապարհը: Նա է սա մատնանշել: Նրա մարգարեները խոսել են սրա մասին:

Սա ջանքեր է պահանջում: Սա պահանջում է ինքնակառավարում: Սա պահանջում է եսասեր չլինել: Այն պահանջում է իսկական սեր, որը զուգընկերոջ բարեկեցության և երջանկության համար լուրջ մտահոգությունն է: Ես սրանից ավելի լավ բան չեմ կարող ցանկանալ ձեր բոլորի համար, և ես աղոթում եմ, որ սա լինի ձեր անձնական օրհնությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՀԱՆԵՔ ԲՆԱԿԱՆ ՄԱՐԴՈՒՆ և ՀԱՂԹՈՂ ԴՈՒՐՍ ԵԿԵՔ

Երեց Նիլ Ա. Մաքսվել

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, Oct. 1990, 15–19; կամ Ensign, Nov. 1990, 14–16

Եսասիրության վտանգները

Մարգարեները բազմիցս զգուշացրել են եսասիրության վտանգների մասին՝ սեփական անձի հանդեպ չափից դուրս և պետք եղածից ավելի մտահոգության մասին: Հեռավորությունը մշտապես ինքդ քեզ դուր գալու և ինքդ քեզ պաշտելու միջև ավելի կարճ է, քան մենք կարծում ենք: Համառ եսասիրությունը իրականում ապստամբություն է Աստծո դեմ, որովհետև, նախազգուշացնում է Սամուելը՝ «անհնազանդությունը կռապաշտության պես է» :

Եսասիրությունը շատ ավելին է, քան սովորական խնդիրը, քանի որ այն գործի է դնում բոլոր մեծ մեղքերին: Այն Տասը Պատվիրանները չպահելու պատճառն է:

Սեփական անձի վրա կենտրոնանալով բնականաբար հեշտանում է սուտ վկայություն տալը, եթե դա ծառայում է մեր նպատակին: Ավելի հեշտ է ծնողներին արհամարհել նրանց պատվելու փոխարեն: Ավելի հեշտ է գողանալ, քանի որ տիրանում ես այն բանին, ինչ ցանկանում ես: Ավելի հեշտ է ցանկանալ, քանի որ եսասերները եզրակացնում են, որ ոչինչ չպիտի մերժվի իրենց:

Սեռական մեղք գործելն ավելի հեշտ է, քանի որ այդ մահացու խաղի անունն է՝ գոհացնել անձին, որում ուրիշները հաճախ դաժանորեն շահագործվում են: Շաբաթ օրը հեշտորեն անտեսվում է, քանի որ մի օրը շուտով դառնում է ճիշտ ինչպես մյուսը: Եթե եսասեր ես, հեշտ է ստել, քանի որ ճշմարտությունը հարմարավետորեն ստորադասվում է:

Եսասեր անձնավորությունն այսպիսով փնտրում է գոհացնել ոչ թե Աստծուն, այլ ինքն իրեն: Նա նույնիսկ կդրժի ուխտը՝ իր ցանկացածին հասնելու համար:

Եսասիրությունը քիչ ժամանակ ունի ուրիշների տառապանքների վրա լուրջ ուշադրություն դարձնելու համար, քանի որ շատերի սերը սառել է (տես Մատթեոս ԻԴ.12, ՎԱՈՒ 45.27, Մովսես 6.27):

Վերջին օրերը լի կլինեն մեծ մեղքերով, ճիշտ «ինչպես Նոյի օրերում»: Հասարակությունը Նոյի օրերում, ինչպես տեղեկացնում են սուրբ գրությունները, «ապականվել էր Աստծո առաջ» և «լցված էր բռնությամբ» (Ծննդոց Զ.11, Մովսես 8.28): Ապականություն ու բռնություն՝ծանո՞թ են թվում: Այս երկու սարսափելի պայմանները հասել են իրենց գագաթնակետին, քանի որ անձնական եսասիրությունը շատ արագ է աճում: Երբ այսպես կլանված են, զարմանալի չէ, որ մարդկային սրտերը մեր օրերում կնվաղեն վախից (տես Ղուկաս ԻԱ.26, ՎԱՈՒ 45.26): Նույնիսկ հավատարիմները կարող են ակնկալել որոշ վախ:

Որոշակի եսասիրություն կա նաև լավ մարդկանց մեջ: Ջեյն Ասթենի հերոսուհի Էլիզաբեթը մտորում էր. «Իմ ողջ կյանքում իրականում ես եսասեր արարած եմ եղել, չնայած ոչ սկզբունքայնորեն» (*Pride and Prejudice* [New York: Airmont Books, 1962], p. 58): Եսասեր անձնավորությունը բուռն սեր ունի «ես» դերանվան հանդեպ: Իսկ եսը երբեք մենքի հետ համաձայնության չի գալիս:

Եսասիրությունը մտահոգված լինելով ինքն իրենով խուսափում է ուրիշներին արժանի, անհրաժեշտ գովասանք տալուց, դժգոհություն դրսևորելով գովասանքի փոխարեն:

Մենք մեր մեջ տեսնում ենք եսասիրության այլ ծանոթ ձևեր՝ ընդունելով կամ պահանջելով անարժան գովասանք, փքվելով արժանի գովասանքից, ուրախանալով ուրիշների սխալների վրա, զայրանալով ուրիշների ազնիվ հաջողություններից, գերադասելով հրապարակայնորեն արդարանալը անձնական շահերին համաձայն և «օգուտ քաղելով մեկից իր խոսքերի պատճառով» (2 Նեփի 28.8): Այսպիսի բոլոր բաները եսասիրական նպատակ ունեն,երբ դրանցից սպասվող արդյունքները «ես»-ի համար են, որը շատ նման է մայրուղում հայտնված ներքնակին, որը դանդաղեցնում է երթևեկությունը: Երբ զայրացած վարորդները վերջապես կարողանում են շրջանցել այն, ոչ ոք

կանգ չի առնում դա տեղափոխելու համար, որովհետև դա նրանց այլևս չի անհանգստացնում:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է. «Մարդկությունը բնականից եսասեր է, փառամոլ և ձգտում է բարձրանալ մեկը մյուսից վեր» (*The Words of Joseph Smith,* comp. Andrew F. Ehat and Lyndon W. Cook [Provo: Brigham Young University Religious Studies Center, 1980], p. 201):

Հոգին, որը փքվում է եսասիրությունից, հիշատակվում է հին ժամանակներից՝ «որ քո աչքերին փոքր էիր երեւում» (Ա Թագավորաց ԺԵ.17):

Քրիստոսի հեզության օրինակը

Եսասիրությունը հաճախ արտահայտվում է կամակոր հոգու մեջ: [Ամբարտաւանութեամբ խստացած հոգի] ունենալը հաճախ վնասում է ամենախելացի մարդուն էլ, ով կարող էր նաև լինել ամենալավը (Դանիել Ե.20): «Մի բան», որ խելացիներին հաճախ պակասում է, հեզությունն է: «Պատրաստակամ միտք» ունենալու փոխարեն, որը փնտրում է հետևել «Քրիստոսի մտքի» օրինակին, «հպարտությունից կարծրացած միտքը» անտարբեր է խորհրդի հանդեպ և հաճախ փնտրում է իշխանություն (Ա Մնացորդաց ԻԸ.9, Ա Կորնթացիս Բ.16, ՎԱՈՒ 64.34): Հիսուսը, լինելով «ավելի խելացի ... ., քան նրանք բոլորը», նաև ավելի հեզ է, քան նրանք բոլորը (Աբրահամ Գ.19):

Հիսուսն ամեն ինչ դրեց զոհասեղանի վրա՝ առանց փող հնչեցնելու կամ սակարկելու: Իր զարմանահրաշ քավությունից թե առաջ և թե հետո Նա հայտարարեց. «Փառք լինի Հորը» (ՎԱՈՒ 19.19, տես նաև Մովսես 4.2): Հիսուսը, ապշեցուցիչ խելացի լինելով հանդերձ, այնուամենայնիվ թույլ էր տալիս, որ իր կամքը «կուլ գնա …Հոր կամքին» (Մոսիա 15.7, տես նաև Հովհաննես Զ.38): Այսպիսով, հպարտությունից կարծրացած մտքերը պարզապես ի վիճակի չեն սա անելու:

Հանել բնական մարդուն

Համառ եսասիրությունը տանում է մնացած առումներով լավ մարդկանց կռվել հոտերի համար, մի կտոր հողի համար և մի քանի կաթիլ կաթի համար: Այս ամենը հետևանք է այն ամենի, ինչ Տերն անվանում է. «տենչում եք այն, ինչը միայնմի կաթիլ է», մինչդեռ անտեսում եք «ավելի ծանրակշիռ բաները» (ՎԱՈՒ 117.8): Մերձակա եսասիրությունը ճոխացնում է սովորական ուտելիքը և արծաթի երեսուն կտորը դարձնում է գանձերի կույտ: Մեր մեծ ձեռքբերումներում մենք մոռանում ենք Նրան, ով մի անգամ ասել է. «Ի՞նչ է սեփականությունն ինձ համար» (ՎԱՈՒ 117.4):

Այսպիսին է ծանր բեռով բնական մարդուն հանելու տեսարանը, ով բնականից եսասեր է (տես Մոսիա 3.19): Եղբայրներ և քույրեր, մեր գերհոգնածությունը փաստորեն մեծ մասամբ գալիս է այդ անպետք բեռը կրելուց: Բնական մարդու այս ծանրությունը խանգարում է մեզ, որ մենք կատարենք մեր Քրիստոնեական պարտականությունները. Այսպիսով մենք ի վերջո հայտնվում ենք եսասիրության մեջ չափազանց խորասուզված, որպեսզի անցնենք նեղ ասեղի անցքից:

Աննա Մորո Լինդբերգը գրել է. «Շատ բաների վերաբերյալ Մարթայատիպ իմ անհանգստությունից պետք է ազատվեմ, … ազատվեմ հպարտությունից…. ազատվեմ մարդկային հարաբերություններում կեղծավորությունից: Ինչպիսի անդորր կլինի դա: Ես հայտնաբերել եմ, որ կյանքում ամենահոգնեցուցիչ բանը կեղծավոր լինելն է: Ահա թե ինչու է հասարակական կյանքի մեծ մասը հոգնեցնեցուցիչ է» (*Gift from the Sea* [New York: Vintage Books, 1978], p. 32):

Այսպիսով անկառավարելի եսասիրությունը համառորեն փակում է այն ուղին, որը զարգացնում է բոլոր սուրբ հատկանիշները՝ սեր, ողորմություն, համբերություն, երկայնամտություն, բարություն, բարեգթություն, առաքինություն և հեզություն: Այս արժեքներից որևէ մեկի նուրբ բողբոջներն անմիջապես հեռացվում են սուր եսասիրության կողմից: Եվ ընդհակառակը, եղբայրներ և քույրեր, ես չեմ կարող մտածել նույնիսկ մեկ ավետարանական ուխտի մասին, որին հավատարիմ մնալը մեզանից չհեռացներ եսասիրությունը:

Բայց ինչպիսի պայքար է սա մեզանից ոմանց համար: Մենք բոլորս տառապում ենք տարբեր չափերով: Հարցը կայանում է սրանում՝ Ինչպե՞ս է ընթանում պայքարը: Մեր եսասիրությունը հանվու՞մ է, եթե նույնիսկ դա միայն աստիճանաբար է տեղի ունենում: Կամ էլ բնական մարդը նման է «ընթրիքի հրավիրված մարդու»: Աստվածային ուսուցումը մեծ մասամբ տրված է, որպեսզի մեզ օգնի վերացնել մեր եսասիրությունը, «որովհետեւ որ որդին [կամ դուստրն] է որ հայրը նորան չէ խրատում» (Եբրայեցիս ԺԲ.7):

Կարևոր հոգևոր հեռանկար

Վերականգնման սուրբ գրություններն ավելի շատ բան են մեզ ասում այն մասին, թե մենք ինչպես կարող ենք իրոք ներվել Քրիստոսի քավության շնորհիվ, որի միջոցով, ի վերջո. «գթասրտությունը … հաղթում է արդարադատությանը» (Ալմա 34.15): Մենք կարող ենք իրական և արդարացված հույս ունենալ ապագայի համար՝բավականաչափ հույս՝ հավատ զարգացնելու համար, որն անհրաժեշտ կլինի ինչպես բնական մարդուն հանելու համար, այնպես էլ ավելի սուրբ դառնալու ջանքերի համար:

Բացի այդ, քանի որ Քավության գլխավոր զարդը արդեն իր տեղում է, մենք գիտենք, որ Աստծո ծրագրի մնացած

բոլոր մասերն ի վերջո նմանապես հաջողության կհասնեն: Աստված անկասկած ի վիճակի է անելու Իր սեփական գործը (Տես 2 Նեփի 27.20–21): Մարդկային ընտանիքին վերաբերող Իր ծրագրերում Աստված վաղուց միանգամայն բավարար պատրաստություններ է տեսել բոլոր մարդկային սխալների համար: Նրա բոլոր նպատակները հաղթանակի կհասնեն առանց մարդուն բարոյական իրավունքից զրկելու: Դեռ ավելին, Նրա բոլոր նպատակները կլինեն իրենց ժամանակին (տես ՎԱՈՒ 64.32):

Ինչևիցե, առանց այս վերջին և այլ հոգևոր հեռանկարների, տեսեք ինչպես տարբեր կլիներ մեր պահվածքը: Մի կողմ դրեք աստվածային ծրագրի ընդունումը և այնուհետև տեսեք, թե քաղաքական և տնտեսական համակարգերը ինչ եսասեր իրարանցում կկազմակերպեն՝ կյանքն անցավ և հաճելի վայր դարձնելու նպատակով: Մոլորության մեջ ընկած ղեկավարությունները կշարունակեն գործել, եթե նույնիսկ դրանց գործունեությունը չծառայի իր նպատակին, այսպիսով գրավ դնելով ապագա սերունդներին:

Մի կողմ դրեք հարգանքը ձեր դրացու աստվածայնության հանդեպ, և տեսեք, թե ինչպես կփոխվի ձեր վերաբերմունքը նրա հանդեպ:

Մի կողմ դրեք սովորական բարոյական չափանիշները և տեսեք, թե որքան արագ հանդուրժողականությունը կփոխվի գործելու ազատության:

Մի կողմ դրեք ընտանիքին կամ համայնքին պատկանելու սուրբ զգացողությունը, և տեսեք, թե որքան արագ քաղաքացիները կդադարեն հոգ տանել մեծ քաղաքների համար:

Մի կողմ դրեք ակնածանքը յոթերորդ պատվիրանի հանդեպ և տեսեք սեռական հարաբերությունների լայնորեն ընդունվող տոնախմբությունը, աշխարհիկ կրոնները՝ հեշտասիրության իրենց իսկ ավանդույթներով և դրան աջակցող երաժշտությամբ: Նրանց աստվածաբանությունը կենտրոնանում է «անձի» վրա: Նրանց այսուհետևը «այս պահն» է: Նրանց բարձրագույն ծեսը «զգայությունն» է, չնայած, ճակատագրի հեգնանքով, այն ի վերջո անզգայացնում է նրանց համակած կախվածությունը, որը դառնում է «անցողիկ զգացում» (Եփեսացիս Դ.19, Մորոնի Թ.20):

Այսպիսով, իր բոլոր բազմազան արտահայտություններով եսասիրությունը իսկական ինքնակործանում է՝ դանդաղ ընթացքով:

Եսասիրության յուրաքանչյուր ջղաձգություն ավելի շատ է նեղացնում տիեզերքը՝ սահմանափակելով ուրիշների մասին մեր տեղեկացվածությունը և մեզ ավելի ու ավելի միայնակ դարձնում: Զգացողություններն այնուհետև հուսահատորեն փնտրում են ճշգրտում, որպեսզի ճշտեն, որ ինչ որ մեկն իրոք գոյություն ունի: Ճշգրտումը տեղի է ունենում, երբ մեկը հոգատարության փոխարեն լի է ինքնախղճահարությամբ: Այնուհետև նա հայտնվում է օրինազանցության մեջ:

Ալեկոծվող եսասիրությունը մեզ ներկայանում է խելամիտ տեսարանով, երբ բնական մարդը ներկայացնում է իր ցանկությունները: Շատերը հիմնավորում են իրենց կարիքները, բայց որտե՞ղ ենք մենք ներկայացրել համապատասխան պարտավորություն: Շատերը դառնում են պահանջողներ, բայց որտե՞ղ են բոլոր մատակարարները: Շատ ավելի մարդիկ կան, որոնք բան ունեն ասելու, քան լսողներ կան: Ավելի շատ անուշադրության մատնված և ծերացած ծնողներ կան, քան հոգատար որդիներ ու դուստրեր, չնայած թվային առումով, պարզապես այդպես չպիտի լինի:

Հաղթող դուրս եկեք

Ճիշտ ինչպես Հիսուսը զգուշացրեց, որ որոշ չար հոգիներ դուրս կգան միայն «աղոթքով և ծոմով» (Մատթեոս ԺԷ.20), «բնական մարդը» նույնպես դուրս չի գա առանց դժվարության:

Այս անձնական պայքարի վերաբերյալ Տերը հորդորել է մեզ այնպես ապրել, որ մենք կարողանանք «հաղթող դուրս գալ» (ՎԱՈՒ 10.5): Բայց մենք չենք կարող «հաղթող դուրս գալ», եթե նախ «չհանենք» եսասեր, բնական մարդուն:

Բնական մարդն իրոք Աստծո թշնամին է, որովհետև բնական մարդը կհեռացնի Աստծո թանկագին զավակներին ճշմարիտ և հավիտենական երջանկությունից: Մեր լիակատար երջանկությունը պահանջում է, որ մենք դառնանք Քրիստոսի տղամարդիկ և կանայք:

Քրիստոսի տղամարդիկ և կանայք

Քրիստոսի հեզ տղամարդիկ և կանայք ձգտում են գովասանքի, բայց նաև կարողանում են զսպել իրենց: Նրանք հասկանում են, որ առիթի դեպքում լեզուն կծելը կարող է նույնքան կարևոր լինել, որքան լեզուների պարգևը:

Քրիստոսի տղամարդիկ և կանայք հեշտությամբ են ներգործվում, իսկ եսասեր մարդը՝ ոչ: Քրիստոսը երբեք չանտեսեց կարիքի մեջ գտնվողներին այն պատճառով, որ Նա ավելի կարևոր բաներ ուներ անելու: Դեռ ավելին, Քրիստոսի տղամարդիկ և կանայք հետևողական են, որ մենակության մեջ լինեն ճիշտ այնպիսին, ինչպիսին են մարդկանց մեջ: Մենք չենք կարող պահել երկու տեսակի գրքեր, երբ երկինքն ունի միայն մեկը:

Քրիստոսի տղամարդիկ և կանայք մեծարում են իրենց կոչումները՝ առանց իրենց մեծարելու: Այնինչ բնական մարդն ասում է «Երկրպագիր ինձ» և «Տուր ինձ քո զորությունը», Քրիստոսի տղամարդիկ և կանայք փնտրում են օգտագործել զորությունը երկայնամտությամբ և անկեղծ սիրով (տես Մովսես 1.12, 4.3, ՎԱՈՒ 121.41):

Մինչդեռ բնական մարդը ազատություն է տալիս իր զայրույթին, Քրիստոսի տղամարդիկ և կանայք «չեն գրգռվում» (Ա Կորնթացիս ԺԳ.5): Մինչդեռ բնական մարդը լի է ագահությամբ, Քրիստոսի տղամարդիկ և կանայք «իրենցը չեն որոնում» (Ա Կորնթացիս ԺԳ.5): Մինչդեռ բնական մարդը հազվադեպ է զրկում իրեն աշխարհի հաճույքներից, Քրիստոսի տղամարդիկ և կանայք փնտրում են սանձել իրենց կրքերը (տես Ալմա 38.12):

Մինչդեռ բնական մարդը ցանկանում է գովասանք և հարստություններ, Քրիստոսի տղամարդիկ և կանայք գիտեն, որ նման բաները ընդամենը «մի կաթիլ» են (ՎԱՈՒ 117.8): Մարդկային պատմության ամենաերջանիկ պահը կլինի այն, որ ուխտ պահող, անեսամով անհատները վերջապես կստանան «այն ամենն, ինչ … Հայրն ունի» (ՎԱՈՒ 84.38):

Մենք չենք պատկանում ինքներս մեզ

Եսասիրության վերջին, ճկուն հենարաններից մեկը բնական զգացումն է, որ մենք «պատկանում» ենք ինքներս մեզ: Իհարկե մենք ազատ ենք ընտրելու և անհատապես պատասխանատու ենք: Այո, մենք ունենք անհատականություն: Բայց նրանք, ովքեր ընտրել են «գալ դեպի Քրիստոս», շուտով հասկանում են, որ իրենք իրենց չեն «պատկանում»: Դրա փոխարեն, նրանք պատկանում են Նրան: Մենք պետք է նվիրաբերվենք մեր պարգևներով, մեզ նշանակված օրերով և մեր ողջ անձերով հանդերձ: Ուստի, բացահայտ տարբերություն կա մեկին համառորեն «պատկանելու» և հեզությամբ Աստծուն պատկանելու միջև: Հին մարդուց կառչելը անկախության նշան չի, այլ անձնատուր լինելու:

Եսասիրությունից ազատվելու օրհնությունները

Մարգարե Ջոզեֆը խոստացել է, որ երբ եսասիրությունը ոչնչացվում է, մենք «կարող ենք հասկանալ բոլոր բաները, ներկան, անցյալը և ապագան» (*The Personal Writings of Joseph Smith,* comp. Dean C. Jessee [Salt Lake City: Deseret Book Co., 1984], p. 485): Նույնիսկ այժմ, ինչևիցե, ավետարանի որոշ գաղափարներից մենք կարող ենք տեսնել բաներ, «ինչպես դրանք իրականում կան» (Հակոբ 4.13):

Իրոք, ավետարանը փառահեղ լուսաբանում է բերում մեր հնարավորություններին: Խավարի թեփուկներն ընկնում են մեր աչքերից՝ եսասիրությունից ազատվելու հետ մեկտեղ: Այնուհետև մենք տեսնում ենք մեր պայծառ և իսկական ինքնությունը.

Մի պարզ օր վեր կաց ու նայիր քո շուրջը,
Եվ դու կտեսնես, թե ով ես դու:
Մի պարզ օր, որքան դա քեզ կապշեցնի,
Որ քո էության փայլը յուրաքանչյուր աստղից
էլ պայծառ է շողում …
Եվ մի պարզ օր …
Դու կտեսնես շատ ու շատ ավելին:

[Ալան Ջայ Լերներ, “On a Clear Day” (Chappell and Co., 1965)]

Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Սուրբ գրություններ

«Բնական մարդու» մասին հետագա ընթերցում.

Ծննդոց ԼԹ. 7–12

Ա Կորնթացիս Բ.14, Ժ.13

Եփեսացիս Գ.16

Ա Թեսաղոնիկեցիս Ե.22

Հակոբոս Ա.13—15, Դ.4

Մոսիա 3.19

Ալմա 13.11—12, 26.21

Հելաման 12

Եթեր 3.2

Մորոնի 10.32

Վարդապետություն և Ուխտեր 29.43, 45.32, 50.41, 62.1, 67.12, 84.33, 47–58

ՀԱՅՐԵՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Աստված սովորեցնում է մեզ, որ երեխաները պետք է պատվեն իրենց ծնողներին: … Ի՞նչն է մեր մեջ ազնվական, խոհեմ, հավատարիմ, բարեհոգի, նրբանկատ: Ի՞նչն է արժանի նրանց հարգանքին և ի՞նչ կարող են ընդօրինակել մեզանից:

—Երեց Մարիոն Դ. Հանքս

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Երեց Մարիոն Դ. Հանքս

«Ժամանակակից բառարաններում «ավանդույթ» բառի առաջին սահմանումը հետևյալն է. «Սերնդեսերունդ փոխանցվող գիտելիք, ուսմունքներ, սովորույթներ, փորձառություններ և այլն ...» (Conference Report, Oct. 1968, 116):

Պահպանել առաքինի ավանդույթներ

Ելից Ի.12

«Պատուիր քո հօրը եւ քո մօրը, որ քո օրերը երկարանան այն երկրի վերայ՝ որ քո Եհովայ Աստուածը կտայ քեզ»:

1 Նեփի 1.1

«Ես՝ Նեփիս, ծնված լինելով լավ ծնողներից, հետևաբար, ինչ-որ չափով սովորեցվել էի հորս բոլոր գիտելիքներից»:

1 Նեփի 3.19

«Եվ ահա Սատծո իմաստությամբ է, որ մենք պետք է ձեռք բերենք այս հիշատակարանները, որպեսզի մենք կարողանանք պահպանել մեր զավակների համար մեր հայրերի լեզուն»:

1 Նեփի 5.21

«Եվ մենք ձեռք էինք բերել այն հիշատակարանները, որոնք Տերը պատվիրել էր մեզ, և ուսումնասիրել ու գտել, որ դրանք բաղձալի էին. այո, նույնիսկ շատ մեծ արժեքի էին մեզ համար, այնպես որ մենք կկարողանայինք պահպանել Տիրոջ պատվիրանները մեր զավակների համար»:

2 Նեփի 25.26

«Եվ մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին, և մենք գրում ենք մեր մարգարեությունների համաձայն, որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»:

Ենովս 1.1, 3

«Ահա, եղավ այնպես, որ ես՝ Ենովսս, գիտենալով իմ հորը, որ նա արդար մարդ էր,- քանզի նա ինձ սովորեցրել էր իր լեզվով և նաև Տիրոջ խրատով ու ուսմունքով,- և օրհնված լինի իմ Աստծո անունը դրա համար. ...

Ահա, ես գնացել էի գազաններ որսալու անտառներում, և խոսքերը, որոնք ես հաճախ լսել էի իմ հորն ասելիս, հավերժական կյանքի և սրբերի ուրախության մասին, խորը ընկղմվել էին իմ սրտում»:

Վարդապետություն և Ուխտեր 68.25

«Եվ բացի այդ, որքան որ ծնողները երեխաներ ունեն Սիոնում կամ նրա կազմակերպված ցցերում, որոնց չեն ուսուցանում, որպեսզի մինչև ութ տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի, մեղքը լինի ծնողների գլխին»:

Վարդապետություն և Ուխտեր 93.40

«Բայց ես պատվիրել եմ ձեզ մեծացնել ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ»:

Կեղծ ավանդույթների օրինակներ

Ա Պետրոս Ա.18

«Գիտենալով որ ոչ թէ ապականացու արծաթով կամ ոսկով փրկուեցաք ձեր հայրենավանդ ունայն վարմունքիցը»:

Մոսիա 10.12

«Նրանք վայրի և կատաղի և արյունռուշտ մի ժողովուրդ էին՝ հավատալով իրենց հայրերի ավանդություններին»:

Մոսիա 26.1

«Արդ, եղավ այնպես, որ աճող սերնդից կային շատերը, ովքեր ... . չէին հավատում իրենց հայրերի ավանդությանը»:

Ալմա 9.8

«Ահա, ո՛վ դուք ամբարիշտ ու խոտորյալ սերունդ, ի՞նչպես մոռացաք ձեր հայրերի ավանդությունը. Այո, որքա~ն շուտ դուք մոռացաք Աստծո պատվիրանները»:

Ալմա 60.32

«Դա նրանց հայրերի ավանդությունն է, որ առաջացրել է իրենց ատելությունը»:

Վարդապետություն և Ուխտեր 93.39

«Եվ այն չարագործը գալիս և վերցնում է լույսն ու ճշմարտությունը մարդկանց զավակներից, անհնազանդության միջոցով, և նրանց հայրերի ավանդությունների պատճառով»:

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

« «Նրանց հայրերի ավանդությունները» վերաբերվում է, իհարկե, հայրերի սխալ օրինակներին և ուսմունքներին» (Conference Report, Apr. 1981, 47; կամ *Ensign,* May 1981, 35):

Հաղթահարել կեղծ ավանդույթները

Մատթեոս Ժ.37

«Ով որ հօրը կամ մօրը ինձանից աւելի է սիրում, նա ինձ արժանի չէ. եւ ով որ որդին կամ աղջիկն ինձանից աւելի է սիրում, նա ինձ արժանի չէ»:

Մոսիա 25.12

«Եվ եղավ այնպես, որ նրանք, ովքեր Ամուղոնի ու նրա եղբայրների զավակներն էին, ... դժգոհ էին իրենց հայրերի վարքից, և նրանք չկամեցան այլևս կոչվել իրենց հայրերի անուններով, ուստի նրանք իրենց վրա վերցրեցին Նեփիի անունը, որպեսզի նրանք կարողանային կոչվել Նեփիի զավակներ»:

Ալմա 3.11

«Եվ եղավ այնպես, որ ովքեր չէին հավատում Լամանացիների ավանդությանը, այլ հավատում էին այն հիշատակարաններին, որոնք դուրս էին բերվել Երուսաղեմի հողից, և նաև իրենց հայրերի ավանդությանը, որոնք ճիշտ էին, ովքեր հավատում էին Աստծո պատվիրաններին և պահում էին դրանք, կոչվում էին Նեփիացիներ»:

Ալմա 37.9

«Այո, ես ասում եմ ձեզ, եթե չլինեին այս բաները, որ այս հիշատակարանները պարունակում են, որոնք այս թիթեղների վրա են, Ամմոնը և նրա եղբայրները չէին կարողանա համոզել Լամանացիներից այսքան բազում հազարավորների՝ նրանց հայրերի թյուր ավանդության վերաբերյալ. Այո, այս հիշատակարանները և դրանց խոսքերը բերեցին նրանց ապաշխարության»:

Հելաման 15.4

«Բայց ահա, իմ եղբայրներ, Լամանացիներին ատել է նա, որովհետև նրանց գործերը շարունակ չար են եղել, և դա՝ նրանց հայրերի ավանդությունների անօրինության պատճառով: Բայց ահա, Նեփիացիների քարոզելու միջոցով փրկություն է եկել նրանց. և այդ նպատակով է Տերը երկարացրել նրանց օրերը»:

Երեց Բոյդ Ք. Փաքեր

«Ձեզ՝ չափահասներ, ովքեր կրկնում եք անուշադրության և բիրտ վերաբերմունքի օրինակը, որ դուք տարել եք որպես փոքր երեխաներ, հավատալով, որ դուք ընկել եք վարքի ոլորապտույտ ծուղակը, որից դուրս գալ հնարավոր չէ, ես ասում եմ.

Դա հակասում է երկնքի կարգին, որ որևէ հոգի փակված լինի անկառավարելի, բարոյազուրկ վարքագծի մեջ՝ որից որևէ ելք չկա:

Հակառակորդի գործերի հետ համատեղելի է ձեզ մոլորության մեջ գցելը, որ դուք հավատաք, թե դա այդպես է:

Ես երախտագիտությամբ հաստատում եմ, որ օրինազանցությունները, նույնիսկ նրանք, որոնք ներգործում են փոքր երեխաների վրա, կարող են հաղթահարվել անկեղծ ապաշխարությամբ: Ես վկայում եմ իմ ողջ հոգով, որ ապաշխարության վարդապետությունը ճշմարիտ է և ունի հրաշագործ, ազատագրող ազդեցություն վարքագծի վրա:

Ձեզ՝ *անմեղներիդ,* ովքեր չեք օրինազանցել, բայց մանուկ հասակում արժանացել եք բիրտ վերաբերմունքի և դեռևս կրում են մեղքի անցանկալի բեռը, ես ասում եմ.

Սովորեք ճշմարիտ վարդապետությունը՝ապաշխարություն և ներում. թողեք մեղքի այդ բեռը:

Որովհետև մենք բոլորս նույն Երկնային Հոր զավակներն ենք: Ցանկացած տարիքի նրա յուրաքանչյուր զավակ մի՞թե չի կարող հավակնել Հիսուս Քրիստոսի փրկող զոհաբերությունը, և այդ անելով, լիակատար ապաշխարության միջոցով մաքրվել և վերականգնվել երեխայի անմեղության վիճակի (Conference Report, Oct. 1986, 21–22; կամ *Ensign,* Nov. 1986, 18):

ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ

Երեց Մարիոն Դ. Հանքս

Տասներկու Առաքյալների Քվորումի Խորհրդատու

Conference Report, Oct. 1968, 115–18

Իրենց հայրերի ավանդույթը

Այս մի քանի րոպեների ընթացքում ես հատուկ ուշադրություն կդարձնեմ «Իրենց հայրերի ավանդության

պատճառով» արտահայտությանը և «կարգի բեր քո սեփական տունը» հրամանին:

Նախապես այս ամբիոնից ես իմ հարգանքն արտահայտեցի այն երեխաների հանդեպ, ովքեր բարելավվել են զանցառու ծնողների ճանապարհներին և իմ կարեկցանքը լավագույն ծնողների հանդեպ, ովքեր լրջորեն փորձել են կրթել իրենց երեխաներին իրենց ճանապարհին համեմատ, միայն թե այդ երեխաները օգտագործել են իրենց ընտրության իրավունքն ու անհատականությունը՝ հետևելով այլ ճանապարհների: Տերը մեզ սովորեցրել է, որ որդին չպիտի կրի հոր անօրենությունը և ոչ էլ հայրը պիտի կրի որդու անօրենությունը: Յուրաքանչյուրը, ով պատասխանատու է, պետք է ի վերջո հաշիվ տա իր սեփական որոշումների համար:

Բայց մեզանից շատերը դեռևս երեխաներ ունեն տանը, կամ ունեն թոռնիկներ, կամ ազդեցություն ունեն ուրիշների տների կամ երեխաների վրա: Մեծաթիվ երիտասարդ զույգեր դեռ նոր են ընտանիք կազմում, կամ շուտով կկազմեն: Բոլորս էլ պետք է լուրջ ուշադրություն դարձնենք՝ զգաստացնող խոսքով, որ թեև երեխաները «անմեղ են Աստծո առաջ», «այն չարագործը» կարող է վերցնել «լույսն ու ճշմարտությունը» ՝ «անհնազանդության միջոցով» և «նրանց հայրերի ավանդությունների պատճառով»:

Ժամանակակից բառարանում «ավանդություն» բառի առաջին սահմանումն է. «Սերնդե-սերունդ փոխանցվող գիտելիք, ուսմունքներ, սովորույթներ, փորձառություններ ...»:

Մեր ավանդույթները

Ի՞նչ է ավանդությունը ձեր սեփական տան և իմ տան համար: Ի՞նչ «գիտելիքներ, ուսմունքներ, սովորույթներ, փորձառություններ» … են փոխանցվում կամ կփոխանցվեն մեր սերնդից մեր երեխաներին ու նրանց երեխաներին:

Աստված մեզ սովորեցնում է, որ երեխաները պետք է պատվեն իրենց ծնողներին: Ի՞նչն է մեր մեջ, մեր կյանքում, մեր բնավորության մեջ, մեր վարքագծում արժանի նրանց հարգանքին: Ի՞նչն է մեր մեջ ազնվական, պատասխանատու, հավատարիմ, բարեհոգի, նրբանկատ: Ի՞նչն է արժանի նրանց հարգանքին և օրինակելի նրանց համար:

Մենք սովորեցնու՞մ ենք ազնվություն՝ ազնիվ լինելով: Ես սիրում եմ հիշել պատմությունն այն մարդու, ով, մինչ իր փոքր որդին իր հետ էր, կանգ առավ քաղաքից դուրս գտնվող մի հեռավոր ճանապարհի վրա գտնվող մեկուսի ցորենի արտի մոտ, և հետ ու առաջ, աջ ու ձախ նայելուց հետո սկսեց բարձրանալ ցանկապատի վրա՝ ագարակատիրոջ արտից մի քանի հասկ պոկելու համար: Նրա որդին ասաց. «Հայրիկ, դու մոռացար վեր նայել»:

Ազնվություն տան մեջ

Ի՞նչ է պատահում տղայի հետ, ում հայրը պարծենում է իր կատարած շահավետ գործարքով, որում ուրիշների հանդեպ խորամանկություններ է թույլ տվել: Տարիներ առաջ Տարվա Հայր անվանվելու առիթով հանգուցյալ Ջոզեֆ Ուելչն ասել է.

«Եթե ես ի զորու լինեի աշխարհի երիտասարդներին շնորհել ընդամենը մեկ արժանիք, կարծում եմ՝ ես չէի ընտրի հումորի զգացում կամ իմաստություն կամ նույնիսկ այն մեծ բարիքը՝ կրթությունը: Եթե ես կարողանայի ընտրել միայն մի բան, ես կընտրեի ազնվությունը: Եթե մի օր իմ երեխաները և թոռները իրար ասեն. «Նա մեզ սովորեցրել է գնահատել ազնվությունը», ես գոհ կլինեմ:

«Ինչպե՞ս է ազնվության արժանիքը տանը փոխանցվում երեխաներին: Այն փոխանցվում է ազնիվ *կյանքով* ապրելով, լրջամիտ ճշմարտախոսությամբ, պատասխանատու քաղաքացիությամբ: Ինչպե՞ս կարող է մեկը *թերանալ* այս անգին արժեքը տանը երեխաներին փոխանցելում: Մի փոքր անօրինականություն գործելով. մի փոքր օրենքը շրջանցելով, խարդախ և անազնիվ լինելով: Ոչ շատ վաղուց իմ երկու տղաներից մեկը այս զգաստացնող խոսքերն ասաց ինձ: Նա ասաց. «Երբ մենք երկուսս էլ փոքր էինք, լինում էին պահեր, որ դու և մայրիկը պարզորոշ կերպով մեզ բացատրում էիք, թե ինչպես ապրել լավ կյանքով: Մենք միշտ կարողանում էինք ճանաչել այդ պահերը և մենք փակում էինք մեր ականջներն ու մեր մտքերը: Ձեր ամենաազդեցիկ պահերը եղել են ձեր ամենապատահական պահերը: Մենք հակված էինք ընդօրինակել այն, ինչ դուք իրականում կայիք,դուք այն չէիք, ինչ ասում էիք կամ նույնիսկ ինչ դուք հավատում էիք, որ կաք»:

Որպեսզի ձեր երեխաները ազնիվ լինեն, նրանք պետք է դա գտնեն տանը և ձեր մեջ: Եթե նրանք ապրում են կատարյալ ազնվության մթնոլորտում, նրանք կընդունեն այն որպես վերաբերմունք և դրանից հետո երբեք չեն տատանվի: Եվ ազնվություն ունենալով նրանք իրենց մեջ ազատություն կգտնեն. և գտնելով այն՝ ուրախությամբ կերաշխավորեն մնացած բոլորին»:

Սկզբունքներ և արժեքներ

Յուրաքանչյուր ծնող պետք է հարցնի՝ Ի՞նչ սկզբունքներ և արժեքներ է սովորում իմ երեխան: Ո՞րն է նրա պատկերացումը իր մասին: Ինչպիսի՞ն է ուրիշների կարծիքն այն մասին թե ինչպես է նա զարգանում մեր տանը: Նրա փորձը իր ծնողների հետ արդյոք բերու՞մ է նրան աճող գիտակցություն, որ «Աստծո պայծառ լույսը» բոլոր բաների վրա է և աճող վստահություն իր Երկնային Հոր ներկայության հանդեպ:

Նոր Զելանդիայում մենք սովորեցինք Մաորիի մի հին ասացվածք. «Թռչունը պետք է փետուրներ ունենա, որ թռչի»: Ծնողների տարրական պարտականությունն է մեր երեխաներին փետուրներ տալ, որ թռչեն: Երեխան, որն ապրում է անհարգալից, քննադատական կամ ամոթալի

մթնոլորտում, հակված չի լինի հարգելու կամ ընդունելու իրեն. իսկ ամոթի մասին հարկադրված են եղել գրել. «Սպանդներ տեղի են ունենում ոչ միայն ատոմային պայթյուններից: Սպանդներ տեղի են ունենում այնտեղ, որտեղ անհատը դրվում է ամոթալի իրավիճակի մեջ» (Abraham J. Heschel, *The Insecurities of Freedom*):

Մեր վերաբերմունքն ուրիշների հանդեպ

Ուրիշների հանդեպ մեր վերաբերմունքն անկասկած կկանխորոշի երեխայի վերաբերմունքն այլ մարդկանց հանդեպ: Երեխաները, որոնք ծնողների մեջ տեսնում և զգում են անկեղծ մտահոգություն ուրիշների հանդեպ՝ արտահայտված բարության և կարեկցանքի և անեսամոլության գործերով, նրանք ինքները հակված կլինեն լավ մտածել մարդկության մասին և անել այն, ինչ առաջարկում են սուրբ գրությունները. «սատարիր թույլերին, բարձրացրու ընկած ձեռքերը և ամրացրու տկար ծնկները» (ՎԱՈՒ 81.5):

Այսպես օրհնված երիտասարդները կարող են նաև քիչ ընկալունակ լինել շփոթմունքի պատճառով, որին բախվում են մարդու իրավունքների և արտոնությունների մեր սերնդի որոշ հակասական դժվար իրավիճակներում՝ մինչդեռ միևնույն ժամանակ նվաստացնում նրան որպես իր միջավայրի արդյունք, սահմանված հասարակական և հոգեբանական գործոններով, առանց մտածելու և հավատալու, ընտրելու և որոշում կայացնելու ազատ ընտրության իրավասությամբ և հնարավորությամբ, ոչ էլ եզակի անհատականությամբ, որն Աստված սովորեցրել է, որ մենք ունենանք: Վարքի «պայմանական ռեֆլեքսի» տարբերակը չի կարող ոգեշնչել խորհրդավորություն, ակնածանք և մտածելու կարողություն, որոնք մարդու փառքն են: Փոխարենը իմանալ, որ ամեն անհատ հավերժական էակ է, պոտենցիալ աստված կամ աստվածուհի՝ ընդունակ խորը սիրո և բարեհոգության և գթասրտության, ավելի, քան հատուկ է մարդուն, մեզ պատրաստում է, որ ապրենք համարձակ և պատասխանատվության զգացումով, առաջացնելով վստահություն սեփական ուժերի հանդեպ, անձնական արժանապատվություն և անկեղծ հարգանք ուրիշների հանդեպ:

Կարգապահության ավանդույթ

Ո՞րն է մեր տների կարգապահության սովորույթը: Արդյոք մեր երեխան շփացա՞ծ է, երես առա՞ծ, նրան արդյոք թո՞ւյլ ենք տալիս ճգնաժամի պահին իր մեղքը գցել ուրիշների վրա՝ իր ծնողների, հավասարակիցների, ընտանիքի, ապրած ժամանակաշրջանի, հասարակության: Ինչպե՞ս նա կտանի հիասթափությունն ու անհաջողությունը, եթե նրան չեն սովորեցրել ազնվորեն ընդունել իր սխալները: Մենք չենք խոսում խիստ տպավորիչ, անմիտ պատժի մասին: Մենք խոսում ենք իրականության, մեր առաջ կանգնած փաստերի, արդար սկզբունքների մասին, որոնք հասկացվում և պարտադրվում են՝համապատասխան պատժամիջոց կիրառելով, երբ դրանք չեն պահվում: Մեկն ասել է՝ «Անձնական արժանապատվությունը կարգապահության պտուղն է. արժանապատվության զգացումը մեծանում է սեփական անձին Ոչ ասելու կարողությանը զուգահեռ» (Heschel, *op. cit*):

Փոխանցել այլ սովորույթներ

Ի՞նչ պետք է մենք տանք երեխաներին: Աղոթեք հումորի զգացման համար: «Կյանքը թեթևացնող ծիծաղ» և ուրախ հոգի:

Աղոթեք նաև, որ կարողանաք փոխանցել աշխատելու ցանկություն և վեհանձն լինելու ձգտում, խրատելու ունակություն, մենակ պայքարելու քաջություն. արհամարհանք չարի հանդեպ և սեր դեպի արդարությունը. առանց պայմանի կամ առանց կասկածի սիրելու կարողություն: Դուք գիտե՞ք որքանոցի անհրապույր, նյարդայնացնող պահվածքով, ուսուցիչների և կառավարիչների համար անհամակրելի ութնամյա մի աղջկա պատմությունը: Մի օր հաղորդեցին, որ նա խախտել էր մի օրենք, որը կարդարացներ նրան հաստատությունից հեռացնելը: Նրան տեսել էին ցանկապատի վրայից ծառի ճյուղի վրա մի գրություն դնելիս, որը դեմ էր կանոններին: Գրությունը հեռացվել էր այնտեղից: Այնտեղ գրված էր. «Ով էլ գտնի սա՝ ես սիրում եմ քեզ»:

Ինչպիսին է ձեր և իմ տան հայրենասիրության ավանդույթը

Անցած տարի Սուրբ Ծննդից անմիջապես առաջ շաբաթ օրը երեկոյան երկու մաքուր հագնված, բարետես երիտասարդ տղամարդիկ՝ավելի ճիշտ կլիներ ասել տղաներ,իրենց մարտական պարագաները մոտակայքում դասավորած, կանգնել էին իրենց զինակիցների մի մեծ բազմության առջև ԴաՆանգի մոտ՝ Չինաստանի լողափին, Հարավային Վիետնամ, և երգում էին «Սուրբ գիշեր»-ը: Նրանք երգում էին առանց նվագակցության և նրանց քաղցր, մաքուր ձայները միշտ կհիշվեն և մեր բոլորի զգացած ապրումները նույնպես: Հաջորդ առավոտյան մինչև լույսը կբացվեր այս երիտասարդ տղամարդկանցից մեկը եկավ այն թաղամասը, որտեղ ես քնած էի, հաջողություն ասելու և մեկ անգամ ևս ձեռքս սեղմելու համար, և նա միացավ իր զինխմբին, որը մեկնում էր մացառուտներ՝ գտնելու և ոչնչացնելու միսսիայով: Դա կիրակնօրյա զբաղմունք չէր, որը նա կնախընտրեր՝ նա հիասթափված էր, որ չէր կարող մյուս մասնակիցների հետ միասին երկրպագել ծրագրված ժողովում, բայց նա գնաց իր ճանապարհով՝ իր գործն անելու: Հարց լինել չի կարող այս տղայի տանը փոխանցված ավանդության վերաբերյալ:

Ինքնակառավարումը տներում

Հայրեր, մայրեր, ի՞նչ ավանդույթ ենք մենք սերմանում հաջորդ սերնդի մեջ, մեր տներում, ինչ վերաբերվում է ինքնակառավարմանը՝մեր լեզուների և հավասարակշռության և ցանկությունների վերահսկմանը: 1884թ. Հենրի Դրումոնդը այս թեմայով մի հայտարարություն կատարեց, որը կարող է մշտապես կարդացվել մեզանից յուրաքանչյուրի օգուտի համար.

«Մենք հակված ենք վատ հավասարակշռությանը նայել որպես շատ վնասակար թուլության: Մենք խոսում ենք դրա մասին որպես պարզապես բնավորության հիվանդության, ընտանեկան թերության, անհատականության խնդրի, ոչ շատ լուրջ պատճառ հանդիսացող մի բանի, երբ գնահատում ենք մարդու բնավորությունը: Եվ այնուամենայնիվ ... Աստվածաշունչը նորից ու նորից վերադառնում է դատապարտելու այն որպես մարդկային էության ամենակործանարար տարր:

Վատ հավասարակշռության առանձնահատկությունն այն է, որ այն արատ է դառնում առաքինիների համար: Այն հաճախ մնացած առումներով ազնիվ բնավորության մի բիծ է ... Վատ հավասարակշռության և բարձր բարոյական հատկանիշների այս համատեղումը էթիկայի ամենատարօրինակ և ամենատխուր խնդիրներից մեկն է: Ճշմարտությունն այն է, որ կա մեղքերի երկու մեծ խումբ՝մարմնական մեղքեր և բնավորության մեղքեր... . Ոչ մի արատ, աշխարհիկություն, ագահություն ոսկու հանդեպ, ոչ էլ հարբեցողությունն ինքնին ավելի շատ բան չեն անում հասարակությունն անքրիստոնեական դարձնելու համար, որքան վատ բնավորությունը: Դառնացած կյանքի, համայնքների բաժանման, ամենասուրբ հարաբերությունների քայքայման, հաջողակ մանկության խափանման՝ կարճ ասած որպես իսկական անհիմն դժբախտություն առաջացնող ուժ, այս ազդեցությունն առանձնահատուկ է» (Հենրի Դրումոնդ. *The Greatest Thing in the World,* pp. 43–46.):

Ավանդույթներ ապագա օջախների համար

Ի՞նչ ավանդույթներ ենք մենք փոխանցում ապագա օջախներին, որոնք արժանի են հիշվելու, ինչպես որ մենք ինքներս ենք հիշում: Տարիներ շարունակ տարբեր առիթներով ես վայելել եմ օրհնություն չափահասների ղեկավարների մեծ խմբերին խնդրելու մի պահ խորհել չավարտված նախադասության իրենց եզրակացության վրա և այնուհետև կիսվել իրենց մտքերով: Նախադասությունը հետևյալն է. «Ո՞րն է իմ մանկությունից՝ տանը իմ ծնողների և ընտանիքի հետ լավագույն հուշը _____»:

Կարծում եմ, որ ձեր պատասխանները մոտավորապես նույնը կլինեն, ինչ իմ լսած նրանց պատասխաններն էին: Երբեք ոչ մեկը չի նշել ապրելակերպի բարձր չափանիշը կամ նյութական ունեցվածքները: Նրանք միշտ խոսել են, ինչպես ես կխոսեի, մոր կամ հոր ուշադրության, ընտանեկան կապերի, ավանդույթների, զոհաբերությունների, միասին կատարած արկածների մասին, բարձրաձայն կարդացված գրքերի, երգված երգերի, կատարված աշխատանքների, ընտանեկան աղոթքների և ընտանեկան խորհրդի, սիրով և անեսամոլությամբ պատրաստված փոքր նվերների, ընտանեկան լավ և ուրախ հիշողությունների մասին: Նրանց ուղղած իմ միակ հարցը միշտ եղել է հետևյալը, և ես դա հարցնում եմ այսօր ևս. «Ի՞նչ ենք մենք տալիս մեր սեփական երեխաներին, որը նրանք կհիշեն այդպիսի ուրախությամբ և երախտագիտությամբ»:

Երեխաների երգի ավանդույթը

Մեր վերջին համաժողովից հետո իմ կինս և ես արտոնություն ունեցանք այցելելու Սամոա և հեռավոր արևելքի այլ կղզիներ: Մի օր կեսօրին Ամերիկյան Սամոայի Ուփոլու լեռան բարձրունքներում գտնվող Սաունիատու գյուղում մենք ուշագրավ փորձառություն ունեցանք այդ պահի հետ կապված: Գյուղում ոչ ոք չկար, բացի մի քանի փոքրիկներից և մեկ կամ երկու հոգուց, որոնք մնացել էին տանը նրանց հետ: Մնացածն աշխատում էին դաշտերում կամ այլ առաջադրանքներ էին կատարում: Մինչ մենք քայլում էինք Սաունիատուի միակ փողոցի ծղոտե տանիքներով տնակների արանքով՝ նոր աղոթատան և դպրոցի մոտի հուշարձանի ուղղությամբ, մենք լսեցինք երեխաների երգը: Երևի այնտեղ ընդամենը վեց երեխա կար՝ ոչ ավել, քան չորս տարեկան, և նրանք մանկական քաղցրությամբ երգում էին մի երգ, որը մենք միանգամից ճանաչեցինք, և արցունքները մեր աչքերում զմայլված կանգնած էինք՝ լսելով «Զավակն եմ ես Աստծո» երգը:

Այդ հեռավոր բարձր սարերում, երկար, ոլորապտույտ ճանապարհի վերջում, ծովի այդ կղզում մենք գտանք փոքրիկ սևամորթ երեխաների, որոնցից ոչ մեկը աշխարհում չէր տեսել ավելին, քան իրենց փոքրիկ գյուղը, երգում էին այն, ինչ նրանք սովորել էին իրենց հայրերի ավանդությամբ, որ կյանքի ամենամեծ ճշմարտություններից մեկն էր՝ Աստծո զավակը լինելը :

Միթե՞ կա որևէ այլ ճշմարտություն: Որ կա Աստված, ով լսում է իր զավակների ձայնը:

Թող Աստված այնքան օրհնի մեզ, որ ապրենք և սովորեցնենք, որ մենք կարողանանք առաջ բերել ընտանիքի վերականգնումը, ծնող լինելու վերականգնումը, որ «չարը » երբեք չկարողանա մեր երեխաներից խլել «լույսն ու ճշմարտությունը» «իրենց հայրերի ավանդության պատճառով»: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Չի կարող խաղաղություն լինել այնտեղ, որտեղ չկա վստահություն. չի կարող ազատություն լինել այնտեղ, որտեղ չկա հավատարմություն:

—Երեց Գորդոն Բ. Հինքլի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Վստահություն

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Հավատարիմ եղեք ձեր ամուսնական ուխտերին մտքով, խոսքով և գործով: Պոռնոգրաֆիան, սիրախաղերը և անվայել մտքերը քայքայում են բնավորությունը և հարված հասցնում երջանիկ ամուսնության հիմքին: Ամուսնության մեջ համերաշխությունն ու վստահությունը այդ պատճառով քանդվում են: Նա, ով չի վերահսկում իր մտքերը և այդպիսով շնություն է գործում իր սրտում, չի ունենա Հոգին, այլ կուրանա հավատը և վախ կունենա (տես ՎԿՈՒ 42.23, 63.16)» (Conference Report, Oct. 1994, 67; կամ *Ensign*, Nov. 1994, 50):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Տերը հայտարարել է, որ ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև կարգված է Աստծո կողմից և նախատեսված է լինելու հավերժական հարաբերություն՝ կապված վստահությամբ և հավատարմությամբ: Բոլոր մարդկանցից առավել Վերջին օրերի սրբերը պետք է ամուսնանան այս սուրբ նպատակն ունենալով իրենց մտքում» (Conference Report, Apr. 1987, 58; կամ *Ensign*, May 1987, 47):

Երեց Մարվին Ջ. Աշթոն

«*Համոզմունքներ պահպանելու ցանկություն ունենալ*: Վստահության արժանի լինել նույնիսկ չնչին հարցերում և նկատառումներում: Կարևոր հարցերն ու նկատառումները առաջ կգան միայն այն դեպքում, եթե մենք արժանի ենք եղել վստահության չնչին բաներում: Անձնական հարցերին և մտահոգություններին հարգանքով վերաբերվել: Անհատները, ովքեր օրհնված են հարաբերություն ունենալ մեկի հետ, ում հետ կարող են առանձնազրույց ունենալ և վստահել, իսկապես հաջողակ են: Ո՞վ է, որ կասի, թե ընտանիքում վստահություն ունենալը ավելի մեծ չէ, քան հասարակության վստահությունը» (Conference Report, Apr. 1976, 81–82; կամ *Ensign*, May 1976, 54):

Ավելի մեծ հարգանք, նվիրվածություն և համերաշխություն

Երեց Էզրա Թաֆթ Բենսոն

«Ամուսնությունը պետք է ընդունել որպես սուրբ ուխտ Աստծո առաջ: Ամուսնացած զույգի կողմերը պարտավորություն ունեն ոչ միայն իրար հանդեպ, այլ Աստծո հանդեպ: Նա խոստացել է օրհնություններ նրանց, ովքեր հարգում են այդ ուխտը:

Ամուսնական երդումին հավատարիմ լինելը միանգամայն կարևոր է սիրո, վստահության և խաղաղության համար: Շնությունը հստակորեն դատապարտվում է Տիրոջ կողմից:

Ամուսիններն ու կանայք, ովքեր սիրում են իրար, կգտնեն այդ փոխադարձ սերն ու նվիրվածությունը: Այս սերը հոգատար մթնոլորտ կստեղծի երեխաների էմոցիոնալ զարգացման համար: Ընտանեկան կյանքը պետք է լինի երջանկության և ուրախության ժամանակ, որին երեխաները կարող են ետ նայել հաճելի հուշերով և զգացողություններով» (Conference Report, Oct. 1982, 85; կամ *Ensign*, Nov. 1982, 59):

Երեց Գորդոն Բ. Հինքլի

«Ոչ մի ազգ, քաղաքակրթություն չի կարող երկար գոյատևել առանց ընտանիքի անդամների բարոյական ամրության: Այդ ամրությունը բխում է նրանց ազնվությունից, ովքեր հիմնում են այդ տները:

Ոչ մի ընտանիք չի կարող ունենալ խաղաղություն, ոչ մի տուն չի կարող զերծ լինել հակառակորդի փոթորիկներից մինչև այդ ընտանիքը և այդ տունը կառուցված չլինեն բարոյականության, հավատարմության և փոխադարձ հարգանքի հիմքի վրա: Չի կարող խաղաղություն լինել այնտեղ, որտեղ չկա վստահություն. չի կարող ազատություն լինել այնտեղ, որտեղ չկա հավատարմություն: Բարոյազրկության ճահճուտից չեն բարձրանա սիրո ջերմ շողեր» (Conference Report, Oct. 1970, 66):

«Երբևիցե եղե՞լ է շնություն առանց անազնվության: Ավելի պարզ ասած, այդ չարիքը նկարագրվում է որպես «դավաճանություն»: Եվ այն դավաճանություն է, քանի որ այն կողոպտում է առաքինությունը, այն կողոպտում է հավատարմությունը, այն կողոպտում է սուրբ խոստումները, այն կողոպտում է սեփական արժանապատվությունը, այն կողոպտում է ճշմարտությունը: Այն ներառում է խաբեություն: Դա անձնական անազնվության ամենավատ տեսակն է, քանի որ այն դառնում է դավաճանություն մարդկային ամենասուրբ հարաբերությունների հանդեպ և ուխտերի ու

խոստումների հերքում, որոնք կապվել էին Աստծո և մարդու առջև: Դա վստահության անազնիվ խախտում է: Դա եսասիրությունից ելնելով Աստծո օրենքը մի կողմ դնելն է, և ինչպես անազնվության այլ ձևերի դեպքում դրա պտուղներն են վիշտը, դառնությունը, կոտրված սրտով ամուսինները և դավաճանված երեխաները» (Conference Report, Apr. 1976, 92; կամ *Ensign,* May 1976, 61):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Միմյանց նկատմամբ կատարյալ վստահությունը ամուսնության ամենաօգտակար գործոններից մեկն է: Ոչինչ այնպես չի կործանում փոխադարձ վստահության միջուկը, որն անհրաժեշտ է գոհացուցիչ հարաբերություններ պահպանելու համար, ինչպես դավաճանությունը: Ծնության համար երբեք արդարացում չկա: Չնայած այս կործանարար փորձառությանը, երբեմն ամուսնությունները փրկվում են և ընտանիքները պահպանվում: Այդ անելու համար վիրավորված կողմից պահանջվում է անկեղծ սեր ունենալ, բավականին մեծ՝ ներելու և մոռանալու համար: Դա անառակ կողմից պահանջում է անհապաղ ապաշխարելու ցանկություն և իսկապես չարից հրաժարում:

Մեր հավատարմությունը դեպի մեր հավերժական զուգընկերը չպիտի լինի լոկ ֆիզիկական, այլ նաև մտավոր և հոգևոր: Քանի որ չկան անվտանգ սիրախաղեր և խանդը տեղ չունի ամուսնությունից հետո, ամենալավն այն է, որ խուսափենք չարի նույնիսկ արտաքին տեսքից՝ հեռու մնալով որևէ այլ անձի հետ ցանկացած կասկածելի հարաբերությունից, ում հետ մենք ամուսնացած չենք» (Conference Report, Oct. 1977, 13–14; կամ *Ensign,* Nov. 1977, 10):

Քույր Բարբարա Բ. Սմիթ

Առակաց ԼԱ գլխի սուրբ գրքյան հատվածները լավ հայտնի են առաքինի կնոջ սքանչելի հատկանիշների իրենց թվարկմամբ, ում «գինը աւելի է քան թէ գոհարները» (հատված 10), բայց 11-րդ հատվածում մենք գտնում ենք ամուսնության ուշագրավ նկարագրություն: Այն հետևյալն է. «*Նորա վերայ վստահ է իր մարդի սիրտը*»>: Այս հիշվող տողը բացահայտում է, առաջինը, որ ամուսինը վստահում է իր սիրտը իր կնոջը և երկրորդը, որ կինը պաշտպանում է այն: Թվում է, որ դրանք հասկացնում են մի կարևոր ճշմարտություն, որ ամեն տղամարդ և կին, ովքեր ուխտում են ընտանիք կազմել, պետք է ապահով վայր ստեղծեն իրենց սիրո համար:

Մարդկային սիրտը հաճախ ցանկանում է այնպիսի մեկին, ով քնքշորեն կվերաբերվի նվիրվածությանը, որ ինքը կցուցաբերի նրա հանդեպ: Մենք դա լսում ենք Վիլիամ Բութլեր Յեթսի պոեմի բառերում. մարդն ընդամենը դնում է իր սրտի ցանկությունները իր սիրեցյալի ոտքերի մոտ և հետո նա խնդրում է, «Նուրբ վարվիր նրանց հետ, քանի որ դու գործ ունես իմ երազանքների հետ» (‘He Wishes for the Cloths of Heaven,’ *The Oxford Dictionary of Quotations,* 3d ed., New York: Oxford University Press, p. 585.):

Վստահությունը մարդկային փոխհարաբերությունների համար այն է, ինչ հավատքը ավետարանով ապրելու համար: Այն սկիզբն է, հիմքը, որի վրա շատ ավելին կարելի է կառուցել: Որտեղ կա վստահություն, սերը կարող է բարգավաճել» (Conference Report, Oct. 1981, 117; կամ *Ensign,* Nov. 1981, 84):

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Քիչ բան կա, որ մենք չենք կարող իրականացնել, եթե մենք առաջ գնանք այն անելու միասնական սրտերով:

—Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Համերաշխության կարևորությունը ամուսնության մեջ

Երեց Էզրա Թաֆթ Բենսոն

«Ամուսինն ու կինը պետք է ձեռք բերեն արդար միություն և մեկ լինեն իրենց նպատակներում, ցանկություններում և գործերում» (Conference Report, Oct. 1982, 85; կամ *Ensign,* Nov. 1982, 59):

Քույր Բարբարա Վինդեր

«Ես չէի կարողանում դադարել մտածել Պողոսի խոսքերի շուրջ, երբ նա խորհուրդ տվեց Եկեղեցուն ծառայել միասնական և մեկ նպատակով, և ինչպես նա է սովորեցրել, որ բոլոր մասերը պետք է աշխատեն ընդհանուր օգուտի համար: Այսպես է նաև ամուսնության մեջ և ընտանիքում, որ մենք պետք է աշխատենք միասին» (Conference Report, Apr. 1984, 79; կամ *Ensign,* May 1984, 59):

Միասնության հասնել Տիրոջը և Նրա արդարությունը փնտրելու միջոցով

Նախագահ Մարիոն Գ. Ռոմնի

«Միասնական լինելու միայն մեկ ճանապարհ կա, և այդ ճանապարհը Տիրոջը և նրա արդարությունը փնտրելն է (Տես 3 Նեփի 13.33): Միասնությունը գալիս է վերևից եկող լույսին հետևելուց: Այն դուրս չի գալիս ներքևի խառնաշփոթությունից: Քանի դեռ մարդիկ հույսները դնում են իրենց սեփական իմաստության վրա և քայլում են իրենց սեփական ճանապարհով, առանց Տիրոջ առաջնորդության նրանք չեն կարող ապրել միասնության մեջ: Ոչ էլ նրանք կարող են միության հասնել անոգեշունչ մարդկանց հետևելով:

Մեր համար միասնության ուղին Տիրոջ կամքը սովորելն է և հետո դա անելը: Մինչև այս տարրական սկզբունքը չհասկացվի և չկատարվի, աշխարհի վրա չի լինի միություն և խաղաղություն» (Conference Report, Apr. 1983, 21–22; կամ *Ensign,* May 1983, 17):

Երեց Լ. Թոմ Փերի

«Մենք տեսնում ենք միասնությունը, որ գալիս է Աստծո հանդեպ հավատքից և Նրա թագավորությունը կառուցելու ցանկությունից: Եվ մենք տեսնում ենք անձնուրաստությունը, որն արդյունք է այն բանի, որ մարդկանց սրտերը դառնում են դեպի եսասիրական կարիքներն ու ցանկությունները, դեպի մարմնական հաճույքները, դեպի հարստություններն ու աշխարհիկ ունեցվածքը» (Conference Report, Apr. 1987, 39; կամ *Ensign,* May 1987, 33):

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Մեր միասնությունը գալիս է արդար սկզբունքների հետ լիակատար համաձայնությունից և Աստծո Հոգու առաջնորդությանն ամբողջությամբ արձագանքելուց» (Conference Report, Oct. 1993, 53; կամ *Ensign,* Nov. 1993, 38):

Միասնության հասնել գթության միջոցով

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ

«Շատ ավելի դժվար է մեկ սրտի և մտքի տեր լինելը, քան ֆիզիկապես մեկ լինելը: Սրտի և մտքի այս միությունը դրսևորվում է «Ես երախտապարտ եմ քեզ» և «ես հպարտանում եմ քեզնով» անկեղծ արտահայտություններում: Այսպիսի ընտանեկան ներդաշնակությունը ներելու և մոռանալու արդյունք է, առանցքային տարրեր զարգացող ամուսնական հարաբերություններում: Մեկն ասել է, որ մենք պետք է մեր աչքերը լայն բացած պահենք ամուսնանալուց առաջ և կիսափակ՝ դրանից հետո (Magdeleine de Scudéry, in John P. Bradley, et al., comp., *The International Dictionary of Thoughts* [Chicago: J. G. Ferguson Publishing Co., 1969], p. 472): Ճշմարիտ գթասրտությունը պետք է սկսվի ամուսնությունից, քանի որ դա մի հարաբերություն է, որի վրա պետք է աշխատել ամեն օր» (Conference Report, Apr. 1993, 46; կամ *Ensign,* May 1993, 36):

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին

«Ես հավատում եմ, որ մենք պետք է հետևողականորեն սնուցենք սիրո սերմերը, ներդաշնակությունը և միասնականությունը մեր տներում և ընտանիքներում: Հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները բարությամբ, հիշելով որ «ոչ մի զորություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ. միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով» (ՎԿՈ 121.41): Ամուսիններն ու կանայք պետք է սիրեն իրար կատարյալ սիրով, որը հաղթահարում

է եսասիրությունը» (Conference Report, Apr. 1989, 8; կամ *Ensign,* May 1989, 8):

Երեց Վիլիամ Ռ. Բրանդֆորդ

«Մեզանից յուրաքանչյուրը մեծ կարիք ունի զգալու, որ մենք գտնվում ենք ճիշտ տեղում: Միասնության և հոգեհարազատության այս զգացումը գալիս է ջերմ ժպիտի, ձեռքսեղմումի կամ գրկախառնության միջոցով, ծիծաղի և սիրո անխոս ապացույցների միջոցով: Այն գալիս է հանգիստ, ակնածալից պահերին, երբ մեղմորեն զրուցում ես և լսում: Այն գալիս է մեղմ, հանդարտ ձայնի միջոցով՝ հիշեցնելով մեզ, որ մենք եղբայրներ ու քույրեր ենք, Երկնային Հոր զավակները» (Conference Report, Oct. 1987, 91–92; կամ *Ensign,* Nov. 1987, 75–76):

Միասնության հասնել հավատարմության միջոցով

Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսեր

«Միասնության առանցքային մասը հավատարմությունն է: Չի կարող լինել միություն այնտեղ, որտեղ չկա հավատարմություն: Հավատարմություն ունենալը բավականին դժվար հատկանիշ է: Այն պահանջում է եսասիրությունը, ագահությունը, փառասիրությունը և մարդկային մտքի բոլոր անազնիվ հատկանիշները մի կողմ դնելու ունակություն: Դուք չեք կարող հավատարիմ լինել, մինչև դուք չկամենաք անձնուրաց լինել: Չի կարող լինել մտավոր, ֆիզիկական կամ հոգևոր զարգացում, եթե չլինի որոշ սահմանափակում, որոշ՝ թույլ տվեք ասել զոհաբերություն, նրա կողմից, ով հավատարիմ կլինի: Նրա սեփական նախապատվություններն ու ցանկությունները պետք է մի կողմ դրվեն, և նա պետք է տեսնի միայն այն մեծ նպատակը, որը ամեն ինչից վեր է (Conference Report, Apr. 1950, 180):

Միասնության հասնել արդյունավետ հաղորդակցության միջոցով

Երեց Մարվին Ջ. Աշթոն

«Թող մեր բարեգութ և բարի Երկնային Հայրը օգնի մեզ մեր կարիքներում և ցանկություններում՝ ավելի արդյունավետ ընտանեկան հաղորդակցության համար: Հաղորդակցությունը կարող է օգնել կառուցել ընտանեկան միություն, եթե մենք աշխատենք դրա վրա և զոհաբերենք դրա համար: Այս նպատակի համար ես աղոթում եմ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն» (Conference Report, Apr. 1976, 82; կամ *Ensign,* May 1976, 54):

Երեց Լեգրան Ռ. Կուրտիս

«Ժամանակ ունենալը, երբ ընտանիքը հանդիպում է խոհանոցի սեղանի շուրջ, կարող է պահանջել զգալի կարգավորումներ և ուշադիր ծրագրում, սակայն ի՞նչը կարող է ավելի կարևոր լինել ընտանիքի միասնությունից, ընտանիքի հոգևոր աճից, կամուրջներից, որոնք կառուցվում են ընտանիքի անդամների միջև, մինչ նրանք խոսում են, լսում և պատասխանում՝ սիրով շրջապատված: Մեր գլխավոր հաջողությունը պարզապես նորից ու նորից փորձելն է » (Conference Report, Apr. 1995, 110; կամ *Ensign,* May 1995, 83):

Միասնության օրհնությունները

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Երեխան իրավունք ունի զգալու, որ իր տանը նա տեղ ունի ապաստանելու, տեղ ունի պաշտպանվելու դրսի աշխարհի վտանգներից և չարիքներից: Ընտանեկան միասնությունը և ազնվությունը անհրաժեշտ են այս կարիքը բավարարելու համար» (Conference Report, Apr. 1965, 7):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ես զգում եմ մեծ ուժը, որ կարող է գալ մեր միասնությունից: Քիչ բան կա, որ մենք չկարողանանք իրականացնել, եթե մենք առաջ գնանք միասնական սրտերով այն անելու համար» (Conference Report, Oct. 1988, 59; կամ *Ensign,* Nov. 1988, 48):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Ամուսնությունը թույլ է տալիս, որ այս տարբեր առանձնահատկությունները միանալով միմյանց դառնան մեկ՝միասնություն կազմելով՝օրհնելու ամուսնուն և կնոջը, նրանց երեխաներին և թոռներին: Ամուսինը և կինը երկուսն էլ անհրաժեշտ են կյանքում ամենամեծ երջանկության և արդյունավետության համար: Նրանց ջանքերը միանում են և լրացնում իրար: Յուրաքանչյուրն ունի անհատական գծեր, որոնք լավագույնս համապատասխանում են այն դերին, որ Տերը սահմանել է երջանկության համար՝ որպես տղամարդ կամ կին: Երբ օգտագործվում են այնպես, ինչպես Տերն է ծրագրել, այդ ունակությունները ամուսնացած զույգին թույլ են տալիս մտածել, գործել և ուրախանալ որպես մեկ՝դժվարությունների առաջ միասին կանգնել և հաղթահարել դրանք միասնականորեն, աճել սիրո և հասկացողության մեջ, և տաճարային արարողությունների միջոցով կապվել միասին որպես մեկ ամբողջություն՝ հավերժորեն: Սա է ծրագիրը» (Conference Report, Oct. 1996, 101; կամ *Ensign,* Nov. 1996, 74):

Երեց Հենրի Բ. Այրինգ

«Աշխարհի Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, ասել է նրանց, ովքեր կլինեն Իր Եկեղեցու անդամները. «Եղեք մեկ. և եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք» (ՎԱՈՒ 38.27): Եվ տղամարդու

և կնոջ ստեղծման ժամանակ ամուսնության մեջ նրանց մեկ լինելը չտրվեց նրանց որպես հույս. դա պատվիրան էր: «Սորա համար մարդը կթողէ իր հայրը եւ իր մայրը, եւ կյարի իր կնոջը. Եւ մէկ մարմին կլինին» (Ծննդոց 2.24): Մեր Երկնային Հայրն ուզում է մեր սրտերը կապված լինեն միմյանց: Սիրո այդ միությունը պարզապես սկզբունք չէ: Դա անհրաժեշտություն է: ...

Աշխարհի Փրկիչը խոսել է այդ միության մասին և թե ինչպես մեր էությունները կփոխվեն՝ դա հնարավոր դարձնելու համար: Նա պարզորոշ կերպով սովորեցրեց դա աղոթքի միջոցով, որը Նա ասաց Իր մահից առաջ Իր Առաքյալների հետ վերջին հանդիպման ժամանակ: Այդ կատարելապես գեղեցիկ աղոթքը արձանագրված է Հովհաննեսի գրքում: Նա պատրաստ էր մեր բոլորի համար սարսափելի զոհաբերությունը տանելուն, որը հնարավոր կդարձներ հավերժական կյանքը: Նա պատրաստ էր Առաքյալներին թողնելուն, որոնց Նա կարգել էր, որոնց Նա սիրում էր և որոնց հետ Նա թողնելու էր բանալիները՝ Իր Եկեղեցին առաջնորդելու համար: Եվ այսպիսով Նա աղոթեց Իր Հորը, կատարյալ Որդին Կատարյալ Ծնողին: Նրա բառերում մենք տեսնում ենք ճանապարհը, որով ընտանիքները մեկ կդառնան, ինչպես մեր Երկնային Հոր բոլոր զավակները, ովքեր հետևում են Փրկչին և Նրա ծառաներին.

«Ինչպէս դու ինձ ուղարկեցիր աշխարհք, ես էլ նորանց ուղարկեցի աշխարհք:

Եվ ես նորանց համար իմ անձը սուրբ եմ անում, որ նորանք էլ ճշմարտութիւնով սրբուած լինեն:

Բայց ոչ թէ միայն նորանց համար եմ աղաչում, այլ նորանց համար էլ, որ նորանց խոսքովը կհաւատան ինձ:

Որ ամենքը մէկ լինեն, ինչպէս դու, Հայր, ինձանում, եւ ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մէկ լինեն. որ աշխարհքը հաւատայ, թէ դու ուղարկեցիր ինձ» (Հովհաննես ԺԷ.18–21):

Այդ մի քանի բառերով Նա պարզ է դարձնում, թե ինչպես Հիսուս Քրիստոսի ավետարանը կարող է սրտերը մեկ դարձնել: Նրանք, ովքեր կհավատան Նրա սովորեցրած ճշմարտությանը, կարող են ընդունել Նրա լիազորված ծառաների առաջարկած արարողություններն ու ուխտերը: Այնուհետև, այդ արարողություններին և ուխտերին հնազանդվելու միջոցով նրանց էությունները կփոխվեն: Փրկչի Քավությունը այդ ճանապարհով հնարավոր է դարձնում մեզ համար սրբագործվել: Այնուհետև մենք կարող ենք ապրել միասնության մեջ, ինչը մենք պիտի անենք այս կյանքում խաղաղություն ունենալու համար և հավերժության մեջ Հոր և Որդու հետ ապրելու համար» (Conference Report, Apr. 1998, 85–86; կամ *Ensign*, May 1998, 66):

ԿԱՆԱՆՑ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԴԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱ-ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխարհիկ կամ հոգևոր գրականության մեջ չկա ավելի սուրբ բառ, քան մայրը:

—Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

ԸՆՏՐՎԱԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Տես նաև «Մոր աշխատանքը տնից դուրս», էջ 237- 40 [00]:

Կնոջ աստվածային աշխատանքը

Մարգարե Ջոզեֆ Սմիթ

«Թող այս Միությունը սովորեցնի քույրերին, թե ինչպես վարվեն իրենց ամուսինների հետ, որ նրանց վերաբերվեն մեղմությամբ և հոգատարությամբ: Երբ տղամարդն ընկնում է դժվար կացության մեջ, երբ նա շփոթված է հոգսից ու դժվարությունից, եթե նա կարողանա հանդիպել ժպիտի վիճաբանության կամ տրտունջի փոխարեն,եթե նա կարողանա հանդիպել մեղմության, դա կհանգստացնի նրա հոգին և կփափկացնի նրա զգացմունքները. երբ միտքը գնում է դեպի հուսահատություն, այն հոգատարության և բարության սփոփանքի կարիք ունի» (*Teachings of the Prophet Joseph Smith,* 228):

Նախագահ Հեբեր Ջ. Գրանտ

«Թվում է, թե կա մի զորություն, որը մայրն ունի երեխայի կյանքի վրա ներգործելու համար, որն իմ կարծիքով, մեծապես գերազանցում է հոր զորությանը, և սա համարյա առանց բացառության:... Ի վերջո սիրով է՝ մեր մտերիմների իսկական անկեղծ սիրով, որ մենք իրագործում ենք շատ բաներ: Մոր սերը թվում է ամենակատարյալն ու ամենաանկեղծն է, ամենաուժեղը ցանկացած սիրուց, որի մասին մենք երբևէ իմացել ենք: Ես մեկն եմ նրանցից, ով ուրախանում է դրանով, քանի որ ես ունեմ այդ հրաշալի օրինակը իմ կյանքում» (*Gospel Standards,* 152):

Նախագահ Ջորջ Ալբերթ Սմիթ

«Կինը հրաշալի մաս է կազմում մարդկային հասարակության զարգացման մեջ, բայց բոլոր պարտականություններից ամենակարևորը, որը դրված է կանանց վրա, մեր Երկնային Հոր զավակներին աշխարհ բերելու և խնամելու պարտականությունն է» (*Sharing the Gospel with Others,* 139):

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ

«Մայրությունը բաղկացած է երեք հիմնական հատկանիշներից կամ արժանիքներից. դրանք են՝ (1) ծնելու զորությունը, (2) խնամելու ունակությունը, (3) սիրելու պարգևը: ...

Երեխաներին պատշաճորեն խնամելու ունակությունն ու ցանկությունը, սիրելու պարգևը և ձգտումը, այո, ձգտումը արտահայտել դա հոգու զարգացման մեջ, մայրությունը դարձնում են աշխարհի ամենավեհանձն աշխատանքը կամ կոչումը» (*Gospel Ideals,* 453):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

«Ամուսնությունը համագործակցություն է: Յուրաքանչյուրին տրվում է կյանքի աշխատանքի մի մաս անելու համար: Փաստը, որ որոշ կանայք և տղամարդիկ անուշադրության են մատնում իրենց աշխատանքը և իրենց հնարավորությունները, չի փոխում ծրագիրը:

Երբ մենք խոսում ենք ամուսնության մասին որպես համագործակցություն, թույլ տվեք, որ մենք խոսենք ամուսնության մասին որպես *ամբողջական* համագործակցություն: Մենք չենք ուզում մեր ՎՕՍ կանայք լինեն *ծայնազուրկ* զուգընկերներ կամ *սահմանափակ իրավունքներով* զուգընկերներ այդ հավերժական հանձնարարությունում: Խնդրում ենք, եղեք *աջակցող* և *լիիրավ* զուգընկեր» (“Privileges and Responsibilities of Sisters,” *Ensign,* Nov. 1978, 106):

«Տերը կազմակերպել էր ամբողջական ծրագիրն ի սկզբանե, որտեղ հայրն արարում է, հոգում ապրուստը և սիրում ու ղեկավարում, և մայրը հղիանում է և ծնում, խնամում, կերակրում և սովորեցնում: Տերը կարող էր այլ կերպ կազմակերպել այս ամենը, բայց ընտրել է ունենալ պատասխանատվություն և նպատակասլաց համագործակցություն ունեցող միություն, որտեղ երեխաները սովորեցնում և դաստիարակում են իրար, և սովորում են սիրել, հարգել և գնահատել միմյանց: Ընտանիքը կյանքի մեծ ծրագիրն է, ինչպես պատկերացրել և կազմակերպել էր մեր Երկնային Հայրը» (Conference Report, Apr. 1973, 151; or *Ensign,* July 1973, 15):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

«Աստծո կողմից կարգված է, թե ինչ պետք է անի կինը: ... Կնոջ աստվածային գործը ներառում է ընկերակցություն, տնայնագործություն և մայրություն» (“In His Steps,” 64):

Քահանայության եղբայրներ, ես շարունակում եմ ընդգծել մայրերի տանը մնալու կարևորությունը, որպեսզի նրանք դաստիարակեն, խնամեն և ուսուցանեն իրենց երեխաներին արդարության սկզբունքների համաձայն» (Conference

Report, Oct. 1987, 60; կամ *Ensign,* Nov. 1987, 49; տես նաև *To the Fathers in Israel,* 3–4):

Տես *To the Mothers in Zion,* on pages 352—57:

«Մոր դերը նույնպես կարգված է Աստծո կողմից: Մայրերը պետք է հղիանան, ծնեն, սիրեն և ուսուցանեն: Նրանք պետք է օգնող լինեն և խորհրդակցեն իրենց ամուսինների հետ» (Conference Report, Apr. 1984, 6; կամ *Ensign,* May 1984, 6):

«Աստծո կողմից կարգված է, թե ինչ պիտի անի կինը, բայց տղամարդը պետք է փնտրի իր գործը: Կնոջ աստվածային գործը ներառում է ընկերակցությունը, տնայնագործությունը և մայրությունը: Լավ է, եթե այս երեք ոլորտների հմտությունները առաջինը կարողանան սովորեցվել ծնողների տանը և հետո լրացվեն դպրոցում, եթե լինի կարիք կամ ցանկություն» (“In His Steps,” 64):

«Մեր շրջապատում կան ձայներ, որոնք կփորձեն համոզել ձեզ, որ ընտանիքի վերաբերյալ այս ճշմարտությունները կիրառելի չեն մեր ներկա օրերի պայմաններում: Եթե դուք լսեք և ուշադրություն դարձնեք, դուք կգայթակղվեք հեռանալ ձեր հիմնական պարտավորություններից:

Աշխարհի նենգ ձայները աղաղակում են ի օգուտ կանանց «նոր անհատական ոճի»: Դրանք պնդում են, որ որոշ կանանց ավելի սազական է կարիերան, քան ամուսնությունն ու մայրությունը:

Այս անհատները տարածում են իրենց դժգոհությունը քարոզչությամբ, որ կանանց համար կան ավելի հետաքրքիր և ինքնագոհացնող դերեր, քան տնային տնտեսուհի լինելը: Ոմանք նույնիսկ հանդգնել են առաջարկել, որ Եկեղեցին «Մորմոն կնոջ ստերեոտիպից» հեռացնի տնային տնտեսուհի լինելու և երեխաներին խնամելու գաղափարները: Նրանք նաև ասում են, որ խելամիտ է փոքր ընտանիք ունենալը, որպեսզի ավելի շատ ժամանակ ունենաք անձնական նպատակների և ինքնաբավարարման համար» (“The Honored Place of Woman,” *Ensign,* Nov. 1981, 105):

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Մայրերին տրված է սուրբ արտոնություն «մարդկանց հոգիներ բերել. քանզի դրանով է իմ հոր գործը շարունակվում, որպեսզի նա փառավորվի» (ՎԱՈՒ 132.63):

«Առաջին Նախագահությունն ասել է. «Մայրությունը մոտ է աստվածությանը: Դա ամենաբարձր, ամենասուրբ ծառայությունն է, որը պետք է ընդունվի մարդկության կողմից» (James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. [Salt Lake City: Bookcraft, 1965–75], 6:178): Քահանայությունը չի կարող իրականացնել իր ճակատագիրը, ոչ էլ Աստծո նպատակները կիրականանան առանց մեր օգնականների: Մայրերը կատարում են աշխատանքը, որը քահանայությունը չի կարող անել: Կյանքի այս պարգևի համար քահանայությունը պետք է անսահման սեր ունենա իրենց երեխաների մայրերի հանդեպ ...

... Տերը պատվիրել է, որ կանայք և երեխաները իրենց ապրուստի համար իրավունք ունեն աջակցվելու իրենց ամուսինների և հայրերի կողմից (տես ՎԱՈՒ 83, Ա Տիմոթեոս 5.8): Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է, որ երբ ամուսինը խրախուսում կամ պահանջում է, որ իր կինը աշխատի տանից դուրս իրենց հարմարության համար, «ոչ միայն ընտանիքը կտառապի այդ դեպքում, ... բայց [նրա՝ ամուսնու] սեփական հոգևոր աճը և զարգացումը կխանգարվի» (Conference Report, Oct. 1987, pp. 60–61; կամ *Ensign,* Nov. 1987, p. 49)» (Conference Report, Oct. 1994, 67, 69; կամ *Ensign,* Nov. 1994, 50–51):

Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին

«Ադամին և Եվային Աստծո կողմից տրված առաջին պատվիրանը որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությունն էր: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Իր երեխաներին տրված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: ...

Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար: «Որդիքը Տիրոջ ժառանգությունն են» (Սաղմոս ՃԻԷ.3): ...

... Ըստ աստվածային ծրագրի հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ, և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը: Մայրերը, մասնավորապես, պատասխանատու են իրենց երեխաների դաստիրակման համար: Այս սուրբ պարտականություններն իրականացնելիս, հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ: Անաշխատունակությունը, մահը կամ այլ իրադրությունները կարող են անհրաժեշտություն առաջացնել ընտանիքի համար հոգ տանողների դերերի փոփոխման: Անհրաժեշտության դեպքում ընտանիքները կարող են ապավինել նաև մերձավորների օգնությանը» (*Ensign,* Nov. 1995, 102):

Երեց Էզրա Թաֆթ Բենսոն

«Կանանց առաջընթացի ակնհայտ հետևանքներից մեկը եղել է դժգոհության զգացումը, որը այն ստեղծել է երիտասարդ կանանց մեջ, ովքեր ընտրել են կնոջ և մոր դերը: Նրանց հաճախ ստիպում են զգալ, որ կնոջ համար կան ավելի հետաքրքիր և ինքնագոհացնող գործեր, քան տան աշխատանքները, մանկան տակդիրները փոխելը և դեպի մայրը ձգտող երեխաները: Այս կարծիքը անտեսում է հավերժական հեռանկարը, որ վեհացումը հավերժական հայրությունն ու հավերժական մայրությունն է (‘To the

Elect Women of the Kingdom of God,' Nauvoo Illinois Relief Society Dedication, 30 June 1978)" (*Teachings of Ezra Taft Benson*, 548):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

«Զգուշացեք աննկատ ճանապարհներից, որոնք Սատանան օգտագործում է Աստծո ծրագրից [2 Նեփի 9.13] և ճշմարիտ երջանկությունից ձեզ հեռացնելու նպատակով: Սատանայի ամենաարդյունավետ միջոցն է նվաստացնել կնոջ և մոր դերը տանը: Սա հարձակում է Աստծո ծրագրի բուն էության վրա, որը նպաստում է, որ սեր լինի ամուսնու և կնոջ միջև և որ դաստիարակեն երեխաներին համերաշխության, խաղաղության, երախտագիտության և աջակցության մթնոլորտում: Բռնության մեծամասնությունը, որն այսօր տարածված է աշխարհում, թուլացած տների արդյունքն է: Կառավարությունն ու հասարակական ծրագրերը արդյունավետ կերպով չեն կարող դա ուղղել, ոչ էլ դպրոցների և եկեղեցիների լավագույն ջանքերը կարող են ամբողջապես լրացնել տանը կարեկցող մոր և կնոջ քնքուշ հոգատարության պակասը:

Այս առավոտ Գորդոն Բ. Հինքլին խոսեց տանը մոր կարևորության մասին: Ուսումնասիրեք նրա ուղերձը: Որպես Տիրոջ կողմից առաջնորդվող մայր դուք բնավորության լավ գծեր եք զարգացնում ձեր երեխաների մեջ՝ ճշմարտություններ ուսուցանելով՝ հոգատարությամբ ցուցումներ տալու և արժանի օրինակի միջոցով: Դուք ներշնչում եք ազնվության գծեր, հավատք առ Աստված, պարտականություն, հարգանք ուրիշների հանդեպ, բարություն, ինքնավստահություն և աջակցելու, սովորելու ցանկություն տալ ձեզ վստահված երեխաների մտքերին և սրտերին: Ոչ մի մանկապարտեզ չի կարող դա անել: Դա ձեր սուրբ իրավունքն ու արտոնությունն է:

Իհարկե, որպես կին դուք կարող եք բացառիկ արդյունքների հասնել աշխատավայրում, բայց միթե՞ դա է Աստծո կողմից շնորհված ձեր տաղանդների ու կանացի գծերի լավագույն օգտագործումը: Որպես ամուսին մի խրախուսեք ձեր կնոջը՝ աշխատանքի գնալ օգնելու ձեզ ընտանիքի համար միջոցներ ապահովելու Աստծո կողմից տրված ձեր պարտականություններում, եթե դուք հնարավորություն ունեք դրանից խուսափելու: Ինչպես խորհուրդ են տվել մարգարեները, որքանով որ հնարավոր է, Տիրոջ օգնությամբ, որպես ծնողներ միասին աշխատեք մորը տանը պահել: Ձեր ներկայությունն այնտեղ կուժեղացնի ձեր երեխաների ինքնավստահությունը և կսահմանափակի էմոցիոնալ խնդիրների առաջացումը: Դեռ ավելին, մինչ դուք սովորեցնում եք ճշմարտությունը խոսքով և օրինակով, այդ երեխաները կսկսեն հասկանալ, թե ով են իրենք և ինչի կարող են հասնել որպես Երկնային Հոր աստվածային զավակներ» (Conference Report, Oct. 1996, 102; կամ *Ensign*, Nov. 1996, 74–75):

Քույր Պատրիցիա Թ. Հոլլանդ

«Եվան ճանաչվեց որպես «բոլոր ողջերի մայր» ... նույնիսկ մինչև նրա երեխա ունենալը: Կարող էր թվալ, որ այստեղ մայրությունը նախորդել էր նրա մայր դառնալուն, ճիշտ այնպես, ինչպես Պարտեզի կատարելությունը նախորդել էր մահկանացության դժվարություններին: Ես կարծում եմ, որ *մայրը* այն շատ զգուշությամբ ընտրված բառերից մեկն է, այն հարուստ բառերից մեկը, որն ունի բազում նշանակություններ: Մենք ամեն գնով պետք է թույլ չտանք, որ այդ բառը բաժանի մեզ: Ես հավատում եմ իմ ողջ սրտով, որ դա առաջինը և ամենակարևորը հայտարարություն է մեր էության մասին, ոչ թե մեր երեխաների գլխաքանակի մասին:

... Որոշ կանայք ծնում և մեծացնում են երեխաներ, բայց երբեք «մայր» չեն լինում նրանց համար: Ոմանք էլ, ում ես սիրում եմ իմ ողջ սրտով, «մայր» են իրենց ողջ կյանքի ընթացքում, բայց երբեք չեն ծնել երեխաներ: Եվ մենք բոլորս էլ Եվայի դուստրերն ենք, անկախ այն բանից ամուսնացած ենք, թե ամուրի, երեխաներ ունենք, թե չունենք: Մենք ստեղծվել ենք Աստվածների պատկերով՝ աստվածներ և աստվածուհիներ դառնալու համար» (" 'One Thing Needful': Becoming Women of Greater Faith in Christ," *Ensign*, Oct. 1987, 33):

Ի՞նչ է օգնականը:

Նախագահ Հովարդ Վ. Հանթեր

«Տղամարդը, որը քահանայություն է կրում, ընդունում է իր կնոջը որպես գործընկեր տան և ընտանիքի ղեկավարման մեջ, ով ունի դրանց վերաբերվող բոլոր որոշումներում լիարժեք գիտելիք և լիարժեք մասնակցություն: Անհրաժեշտությունից ելնելով Եկեղեցում և տանը պետք է լինի նախագահող պաշտոնյա (տես ՎԱՈՒ 107.21): Աստվածային նշանակմամբ տանը նախագահելու պարտավորությունն ընկնում է քահանայություն կրողի վրա (տես Մովսես 4.22): Տերը ծրագրել է, որ կինը օգնական լինի տղամարդու համար, որը նշանակում է հավասար և անհրաժեշտ զուգընկեր լիարժեք համագործակցության մեջ: Արդարությամբ նախագահելն անհրաժեշտ է դարձնում պարտականությունների կիսումը ամուսնու և կնոջ միջև. միասին դուք գործում եք համաձայն ձեր գիտելիքների և մասնակցում բոլոր ընտանեկան խնդիրներին: Ընտանիքը ղեկավարելում տղամարդու համար ինքնիշխան կամ առանց կնոջ զգացումների և խորհրդի վրա ուշադրություն դարձնելու գործելակերպը, համարվում է անիրավ իշխանության գործադրում» (Conference Report, Oct. 1994, 68; կամ *Ensign*, Nov. 1994, 50–51):

ԱՐԴԱՐ ԿՆՈՋ ԴԵՐԸ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ

Եկեղեցու Նախագահ

Գրված նրա կնոջ՝ քույր Կամիլլա Քիմբալի կողմից

Ensign, Nov. 1979, 102–4

Իմ սիրելի քույրեր. ես ամիսներ շարունակ սպասել եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կանանց ամբողջ աշխարհի համաժողովին կրկին ձեզ հետ, թանկագին քույրեր, հանդիպելու հաճույքին: Դժբախտաբար, ես հիվանդանոցում եմ, այստեղ՝ Սոլթ Լեյք Սիթիում, և անձամբ ներկա չեմ լինի ձեզ հետ, բայց ես ձեզ հետ կլինեմ հոգով: Նաև ես կդիտեմ և կլսեմ այստեղ՝ ՎՕՍ հիվանդանոցի իմ սենյակում:

Անցած տարվա մեր ժողովում տրված խորհուրդը դեռևս ուժի մեջ է: Ամեն անգամ, երբ անդրադառնում եմ և խորհում ավետարանի փառահեղ ճշմարտությունների շուրջ, և հաճախ մտածում եմ այն, թե մենք երբևէ կկսենք գնահատել այս փառահեղ ճշմարտությունների հետևանքները: Եկեք սկսենք մի քանի օրինակներից:

Սուրբ գրություններն ու մարգարեները մեզ պարզորոշ կերպով սովորեցրել են, որ Աստված, ով կատարյալ է իր արդարության հատկանիշով «աչառ չէ» (Գործք Առաքելոց Ժ.34): Մենք նաև գիտենք, որ Աստված կատարյալ է նաև որպես իր հոգևոր զավակներ մեզանից յուրաքանչյուրիս և բոլորի հանդեպ իր սիրով: Երբ մենք գիտենք այս ճշմարտությունները, իմ քույրեր և այս աստվածային գործում իմ գործընկերներ, դա մեզ պետք է մեծապես օգնի, մինչ մենք բոլորս աշխարհում հանդիպում ենք ամենևին էլ ոչ կատարյալ սիրո և ոչ կատարյալ արդարության: Եթե, կարճ ասած, մենք երբեմն հանդիպում ենք անտարբեր և անմիտ վերաբերմունքի ուրիշների կողմից, անկատար տղամարդկանց և կանանց կողմից, դա կարող է այնուամենայնիվ մեզ ցավ պատճառել, բայց այդպիսի ցավն ու հիասթափությունը կյանքում միակ բաները չեն: Աշխարհի ուղիները չեն գերակշռի, քանի որ Աստծո ուղիները կհաղթանակեն:

Որպես նրա հոգևոր զավակներ մենք ունեցել ենք լիարժեք իրավահավասարություն: Մենք հավասարություն ունենք որպես ընդունողներ Աստծո կատարյալ սիրո, որը նա ունի մեզանից յուրաքանչյուրի հանդեպ: Հանգուցյալ Երեց Ջոն Ա. Ուիդթսոնն գրել է.

«Կնոջ տեղը Եկեղեցում տղամարդու կողքով քայլելն է, ոչ նրա առջևից, ոչ էլ նրա ետևից: Եկեղեցում կա լիարժեք հավասարություն տղամարդու և կնոջ միջև: Ավետարանը, որը Եկեղեցու միակ հոգևն է, մշակված է Տիրոջ կողմից տղամարդկանց և կանանց համար հավասարապես» (*Improvement Era,* Mar. 1942, p. 161):

Այդ մեծ հավաստիացումների մեջ, այնուամենայնիվ, մեր դերերն ու հանձնարարությունները տարբերվում են: Սրանք հավերժական տարբերություններ են՝ կանանց համար մայրության և քույրության բազմաթիվ հսկայական պարտավորություններ և տղամարդկանց համար հայրության և քահանայության հսկայական պարտավորություններ, բայց ոչ մարդն է առանց կնոջ և ոչ էլ կինը առանց մարդու Տերումը (տես Ա Կորնթացիս ԺԱ.11): Արդար տղամարդը և արդար կինը երկուսն էլ օրհնություն են բոլոր նրանց համար, ում կյանքում նրանք կան:

Հիշեք, աշխարհում, մինչև մեր այստեղ գալը, հավատարիմ կանանց տրվել էին որոշակի հանձնարարություններ այն ժամանակ, երբ հավատարիմ տղամարդկանց նախասահմանել էին որոշակի քահանայական առաջադրանքներ: Չնայած մենք այժմ չենք հիշում մանրամասները, սա չի փոխում փառահեղ իրականությունը, որին մենք մի ժամանակ համաձայնություն ենք տվել: Դուք պատասխանատու եք այն բաների համար, որոնք երկար ժամանակ առաջ ակնկալվել են ձեզանից, ճիշտ ինչպես նրանք, ում մենք հաստատում ենք մարգարեներ և առաքյալներ:

Չնայած տղամարդկանց և կանանց հավերժական դերերը տարբեր են, ինչպես մենք մեկ տարի առաջ բացատրեցինք ձեզ, դեռ շատ բան է կա թողված, որ պետք է արվի զուգահեռ անհատական զարգացման ճանապարհով՝ինչպես տղամարդու, այնպես էլ կնոջ համար: Այս կապակցությամբ ես կրկին շեշտում եմ սուրբ գրությունների ուսումնասիրման մեծ կարիքը, որն ունի յուրաքանչյուր կին: Մենք ուզում ենք մեր տները օրհնված լինեն քույրերով, որոնք սիրում են սուրբ գրությունները՝ անկախ նրանից դուք ամուրի եք թե ամուսնացած, երիտասարդ թե ծեր, այրի եք թե ապրում եք ընտանիքում:

Անկախ ձեր որոշակի հանգամանքներից, երբ դուք ավելի ու ավելի եք ծանոթանում սուրբ գրությունների ճշմարտություններին, դուք ավելի ու ավելի արդյունավետ կդառնաք երկրորդ մեծ պատվիրանը պահելում, սիրել ձեր մերձավորին ձեր անձի պես: Դարձեք սուրբ գրությունների գիտակներ՝ոչ թե ուրիշներին ցածրացնելու, այլ նրանց բարձրացնելու համար: Ի վերջո, ո՞վ ունի ավետարանի ճշմարտությունները «գանձելու»ավելի մեծ կարիք (որոնց վրա նրանք կարող են հույս դնել իրենց կարիքի պահին), քան կանայք և մայրերն ունեն, ովքեր այնքան շատ հոգ են տանում և ուսուցանում:

Կատարելություն փնտրեք ձեր բոլոր արդար ջանքերում և ձեր կյանքի բոլոր ոլորտներում:

Պահեք ձեր մտքում, թանկագին քույրեր, որ հավերժական օրհնությունները, որոնք ձերն են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն անդամակցելու միջոցով, շատ,

շատ ավելի մեծ են, քան ցանկացած այլ օրհնություններ, որոնք հնարավոր է, որ դուք ստանաք: Ավելի մեծ ճանաչում այս աշխարհում դուք չեք կարող ունենալ, քան որպես Աստծուն հավատարիմ կին ճանաչվելը: Ավելի մեծ կարգավիճակում չեք կարող հաստատվել, քան Աստծո դուստր լինելը, ով ունի ճշմարիտ քույր, կին և մայր լինելու փորձառություն կամ այլ առաջադրանքներ, որոնք ներգործում են ուրիշների կյանքում ի բարին:

Ճիշտ է, կան որոշ ժամանակավոր տարբերություններ և որոշ սահմանափակող պայմաններ: Ձեզանից ոմանք կորցրել են իրենց ամուսիններին մահվան պատճառով, ուրիշները՝ բաժանությամբ: Ձեզանից ոմանք դեռ չեն ունեցել ամուսնության հրաշալի արտոնությունը: Սակայն, հավերժության տեսանկյունից, այս օրհնությունների բացակայությունը «կտևեն միայն մի փոքր պահ» (տես ՎԱՈՒ 121.7):

Ուրիշ քույրեր անցնում են տառապանքի միջով, որը հաճախ անցնում է տարիների հետ: Սակայն ձեզանից ոմանք էլ այժմ գիտեն երիտասարդ լինելու անվստահությունը, մինչ դուք խորհում եք հավերժական ծրագրում ձեր տեղի մասին: Բայց իրականում, չնայած այս խնդիրները գոյություն ունեն, դուք բոլորդ պետք է խորապես հասկանաք ձեր անհատական առանձնահատկությունների հավերժական էության վերաբերյալ ավետարանի ճշմարտությունները և ձեր անձնական հատկանիշների յուրահատկությունը: Դուք կարիք ունեք ավելի ու ավելի զգալու կատարյալ սերը, որը մեր Երկնային Հայրն ունի ձեր հանդեպ և զգալու արժեքը, որը նա դրել է ձեր վրա որպես անհատ: Խորհեք այս մեծ ճշմարտությունների վերաբերյալ, հատկապես այն պահերին, երբ (նմանատիպ անհանգստության մեջ, որը դուք կարող եք ունենալ որպես անհատ) հակառակ դեպքում հավանաբարք կզարմանայիք և կապշեիք:

Հիշեք նաև, որ չնայած մենք այստեղ կենտրոնանում ենք ընտանեկան կյանքի վայելքների և կարևորության վրա, մենք բոլորս պատկանում ենք մեր Երկնային Հոր հավերժական ընտանիքին:

Նաև վստահ եղեք, որ բոլոր հավատարիմ քույրերը, ովքեր, ոչ իրենց մեղքով, հնարավորություն չեն ունեցել իրենց երկրորդ վիճակի ընթացքում կնքվել արժանի տղամարդու հետ, կունենան այդ օրհնությունը հավերժության մեջ: Այն դեպքերում, երբ դուք փափագում եք այդ փաստի ընդունումը և ազդեցությունը, որը կապված է երկրի վրա ընտանեկան կյանքի հետ, խնդրում եմ, իմացեք, որ մեր Երկնային Հայրը տեղյակ է ձեր ցավերին, և որ մի օր նա ձեր պատկերացրածից առավել կօրհնի ձեզ:

Երբեմն փորձվելն ու ապացուցելը պահանջում են, որ մենք ժամանակավորապես աղքատ լինենք, բայց արդար կանայք և տղամարդիկ մի օր կստանան *ամեն ինչ,* մտածեք այդ մասին, քույրեր,*ամեն ինչ,* ինչ մեր Հայրն ունի: Արժե ոչ միայն սպասել դրան. արժե ապրել դրա համար:

Միևնույն ժամանակ պարտադիր չէ, որ մեկը ամուսնացած լինի կամ մայր՝ առաջին և երկրորդ մեծ պատվիրանները պահելու համար,որոնք են Աստծուն և մերձավորին սիրելը,որի վերաբերյալ Հիսուսն ասել է, որ դրանից են կախված բոլոր օրենքն ու բոլոր մարգարեները:

Որոշ կանայք, պայմանների պատճառով, որն իրենց վերահսկողությունից դուրս է, պետք է աշխատեն: Մենք հասկանում ենք դա: Մենք հասկանում ենք ավելին, որ մինչ ընտանիքները մեծանում են , տաղանդները, որոնք Աստված տվել է ձեզ և օրհնել ձեզ դրանցով կարող են հաճախ ներդրվել արդյունավետ օգտագործման մեջ մարդկության համար լրացուցիչ ծառայության մեջ: Ինչևիցե, մի կատարեք երկրորդական խնդիրներին տրվելու սխալը, որը պատճառ կհանդիսանա ձեր հավերժական հանձնարարությունների անտեսման համար, ինչպիսիք են մեր Երկնային Հոր հոգևոր զավակներին ծնունդ տալը և խնամելը: Զգուշորեն աղոթեք ձեր բոլոր որոշումների համար:

Մենք ցանկանում ենք, որ դուք անդադար ձգտեք և ձեռք բերեք այն կրթությունը, որը ձեզ համապատասխան կլինի *ինչպես* հավերժության համար *այնպես էլ* մահկանացու կյանքի լիարժեք ծառայության համար: Ի լրացում այն հիմնական և անհրաժեշտ հմտությունների, որոնք անհրաժեշտ են տան աշխատանքներում, կան այլ հմտություններ, որոնք կարող են պատշաճորեն մշակվել և որոնք կբարձրացնեն ձեր արդյունավետությունը տանը, Եկեղեցում և հասարակության մեջ:

Դուք պետք է նաև իմաստուն լինեք ձեր կատարած ընտրություններում, բայց մենք չենք ցանկանում, որ Եկեղեցու կանայք լինեն չտեղեկացված կամ անարդյունավետ: Դուք կլինեք ավելի լավ մայրեր և կանայք, և այս կյանքում, և հավերժության մեջ, եթե դուք լավացնեք ձեզ տրված հմտությունները և օգտագործեք տաղանդները, որոնցով Աստված օրհնել է ձեզ:

Չկա կանանց տրված ավելի մեծ ու ավելի փառահեղ խոստումների շարք, քան այն, որը գալիս է ավետարանի և Հիսուս Քրիստոսի եկեղեցու միջոցով: Ուրիշ ո՞րտեղ դուք կարող եք սովորել, թե ով եք դուք իրականում: Ուրիշ ո՞րտեղ դուք կարող եք ստանալ անհրաժեշտ բացատրություններ և հավաստիացումներ կյանքի էության մասին: Ի՞նչ այլ աղբյուրներից դուք կարող եք սովորել ձեր իսկ եզակիության և անհատականության մասին: Ուրիշ ումի՞ց դուք կարող եք սովորել Երկնային Հոր փառահեղ երջանկության ծրագրի մասին:

Ավետարանի պատասխանները միակ ճիշտ պատասխաններն են այն հարցերին, որոնք կանայք և տղամարդիկ դարեր շարունակ բարձրացրել են իրենց վերաբերյալ, կյանքի վերաբերյալ և տիեզերքի վերաբերյալ: Որքան բարի է Ասված մեր բոլորի հանդեպ, որ օրհնել է մեզ այդ պատասխաններով և համոզմունքներով,չնայած այս

ճշմարտությունները մեզ վրա են դնում լուրջ և հավերժական պարտավորություններ:

Ինչքան առանձնահատուկ է Վերջին Օրերի Սրբերի կանանց համար, որ իրենց տրվել են վսեմ հանձնարարություններ մեր Երկնային Հոր կողմից, հատկապես ձեզ համար, ովքեր արտոնություն եք ունեցել ծնվելու այս վերջին տնտեսության այս շրջանում: Թող ուրիշ կանայք ուշադրությամբ հետամուտ լինեն ինչ իրենք են ընկալում որպես իրենց եսասեր հետաքրքրություններ: Դուք կարող եք այս մոլորակի վրա ավելի պետքական ուժ լինել սիրո և ճշմարտության և արդարության համար: Թող ուրիշները եսասիրաբար հետամուտ լինեն կեղծ արժեքների, բայց Աստված ձեզ տվել է ընտանիքների, ընկերների և հարևանների համար *հոգալու* հրաշալի հանձնարարություններ, ճիշտ ինչպես տղամարդկանց՝ *ապրուստը հոգալու* համար: Բայց ամուսինն ու կինը երկուսն էլ պետք է լինեն ծնողներ:

Վերջապես, իմ սիրելի քույրեր, կարող եմ ես ձեզ խորհուրդ տալ մի բան, որը նախկինում չի ասվել կամ առնվազն այսպես չի ասվել: Վերջին օրերում Եկեղեցում մեծ աճ կդիտվի այն պատճառով, որ աշխարհի բազմաթիվլավ կանայք (ում մեջ հաճախ հոգևորության այնպիսի ներքին զգացում կա)Եկեղեցուն կմիանան մեծ քանակությամբ : Սա կպատահի այն չափով, որ չափով Եկեղեցու կանայք արդարություն և պարզություն կդրսևորեն իրենց կյանքում և որչափով, որ Եկեղեցու կանայք առանձնահատուկ և տարբեր կերևան,դրական առումով,աշխարհի կանանցից:

Աշխարհի իսկական հերոսուհիների մեջ, ովքեր կգան Եկեղեցի, կլինեն կանայք, ովքեր ավելի մտահոգված կլինեն արդար լինելով, քան եսասեր: Այս իսկական հերոսուհիներն ունեն ճշմարիտ համեստություն, որոնք ավելի բարձր են գնահատում ազնվությունը, քան համբավը: Հիշեք, միայն կանանց երևալու համար բաներ անելը նույնքան սխալ է, որքան տղամարդկանց երևալու համար բաներ անելը: Լավ կանայք և տղամարդիկ միշտ ավելի մտահոգված են ծառայել, քան իշխանություն ունենալ:

Այնպես կլինի, որ վերջին օրերում Եկեղեցու կանայք նշանակալի ուժ կհանդիսանան Եկեղեցու թե քանակական, և թե հոգևոր աճի համար:

Կասկած չկա, որ հակառակորդը ջանում է , նույնիսկ հիմա, կանխել սրա իրականացումը: Անկախ նրանից, թե ով է ձեռք բերում հակառակորդի հատուկ ուշադրությունը ցանկացած ժամանակներում, նա փնտրում է բոլոր մարդկանց դարձնել «թշվառ ինչպես ինքը» (2 Նեփի 2.27): Անկասկած, նա փնտրում է «ողջ մարդկության թշվառությունը» (2 Նեփի 2.18): Նա չի շեղվում իր նպատակներից և հմուտ ու համառ է դրանց վերաբերյալ իր ձգտումներում:

Մինչ մենք մոտենում ենք գերագույն համաժողովի քահանայության նիստին, մենք ավելի պակաս սիրված կամ հրահանգավորված չենք լինի եղբայրների կողմից, քանի որ մեր խորհուրդը նմանատիպ կլինի:

Մենք սիրում ենք ձեզ, քույրեր: Մենք վստահություն ունենք ձեր հանդեպ: Մենք հրճվում ենք ձեր նվիրվածությամբ: Մենք մեծապես ոգևորված ենք ձեր ներկայությամբ ոչ միայն այս երեկո, բայց այս տնտեսության այս ժամանակաշրջանում, երբ ձեր տաղանդներն ու հոգևոր ուժը այնքան անխուսափելիորեն անհրաժեշտ են:

Թող Աստված օրհնի ձեզ այնպես, որ ձեր համար նախատեսված բոլոր օրհնություններն իրականություն դառնան այս կյանքում և գալիք աշխարհում:

Ես գիտեմ, որ Աստված ապրում է, որ Հիսուսը նրա Միածին Որդին է, աշխարհի Փրկիչը, և որ սա Հիսուս Քրիստոսի եկեղեցին է՝ ունենալով նրան որպես դրա գլուխ: Ես թողնում եմ այս վկայությունը ձեր հետ՝ իմ սիրո և օրհնությունների հետ մեկտեղ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ՍԻՈՆԻ ՄԱՅՐԵՐԻՆ

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն

Եկեղեցու Նախագահ

Հավաքի ուղերձ, փետրվարի 22, 1987 թ.

Չկա ուրիշ թեմա, որի մասին ես կնախընտրեի խոսել, բացի տան և ընտանիքի մասին խոսելուց, քանի որ դրանք Հիսուս Քրիստոսի ավետարանի հենց սիրտն են: Եկեղեցին մեծամասամբ գոյություն ունի ընտանիքի փրկության և վեհացման համար:

Քահանայության վերջին գերագույն ժողովում ես խոսեցի հենց Ահարոնյան Քահանայության երիտասարդ տղամարդկանց հետ նրանց պարտականությունների և պարտավորությունների վերաբերյալ: Դրանից կարճ ժամանակ անց կանանց գերագույն համաժողովում ես խոսեցի Եկեղեցու երիտասարդ կանանց համար, քննարկելով նրանց հնարավորություններն ու նրանց սուրբ կոչումները:

Այս երեկո, ծնողների այս հավաքին, փնտրելով երկնքի քաղցր ոգեշնչումը, ես կցանկանայի խոսել հենց մայրերի հետ, որ հավաքվել եք Եկեղեցում այստեղ և ամենուր, քանի որ դուք եք, կամ պետք է լինեք ընտանիքի հենց սիրտն ու հոգին:

Չկա ավելի վեհանձն աշխատանք

Աշխարհիկ կամ հոգևոր գրականության մեջ չկա գրված ավելի սուրբ բառ, քան *մայրը:* Չկա ավելի վեհանձն աշխատանք, քան լավ և աստվածավախ մայր լինելը:

Այս երեկո ես հարգանքի տուրք եմ մատուցում Սիոնի մայրերին և աղոթում իմ ողջ սրտով, որ այն, ինչ ես ունեմ ձեզ ասելու հասկացվի Հոգով և բարձրացնի և օրհնի ձեր կյանքը ձեր սուրբ կոչումներում որպես մայրեր:

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը հայտարարել է. «Մայրությունը մարդկային կյանքում հնարավոր ամենամեծ ազդեցությունն ունի թե ի բարին թե ի չարը: Մոր կերպարը առաջինն է, որ դրոշմվում է մանկան մտքի ազատ էջում: Դա նրա հոգատարությունն է, որ առաջինն է արթնացնում ապահովության զգացում. նրա համբույրը, կապվածության առաջին ընթռնումը, նրա կարեկցանքն ու քնքշությունը, առաջին հավաստիացումը, որ աշխարհում գոյություն ունի սեր»:

Նախագահ Մակքեյը շարունակում է. «Մայրությունը բաղկացած է երեք հիմնական հատկանիշներից կամ արժանիքներից. դրանք են, (1) ծնելու զորությունը, (2) խնամելու կարողությունը, (3) սիրելու պարգևը ...

Պատշաճորեն երեխաներին խնամելու կարողությունն ու ցանկությունը, սիրելու պարգևը և ձգտումը, այո, ձգտումը արտահայտել դա հոգու զարգացման մեջ, մայրությունը դարձնում է աշխարհի ամենվեհանձն պաշտոնը կամ կոչումը: Նա, ով կարող է գլուխգործոց նկարել կամ գրել մի գիրք, որն ազդեցություն կթողնի միլիոնավորների վրա, արժանի է մարդկության հիացմունքին և գովասանքին. բայց նա, ով հաջողությամբ մեծացնում է առողջ, գեղեցիկ որդիներով և դուստրերով մի ընտանիք, ում ազդեցությունը կզգացվի եկող սերունդների ընթացքում, ... արժանի է ամենամեծ հարգանքին, որը մարդը կարող է տալ, և Աստծո լավագույն օրհնություններին» (*Gospel Ideals*, 452–54):

Իմ ամբողջ սրտով ես հավանություն եմ տալիս Նախագահ Մակքեյի խոսքերին:

Մոր դերը նախասահմանված է Աստծո կողմից

Հավերժական ընտանիքում Աստված հաստատել է, որ ընտանիքում պետք է նախագահեն հայրերը: Հայրերը պետք է հոգան ապրուստը, սիրեն, ուսուցանեն և առաջնորդեն:

Սակայն մոր դերը նույնպես նախասահմանված է Աստծո կողմից: Մայրերը պետք է հղիանան, ծնեն, խնամեն, սիրեն և սովորեցնեն: Սա են հայտարարում հայտնությունները:

Վարդապետություն և Ուխտեր 132 բաժնում Տերը հայտարարում է, որ կանանց արտոնություն է ու պարտականություն է տրված «բազմանալու և երկիրը լցնելու համար, իմ պատվիրանի համաձայն, և խոստումն իրականացնելու համար, որը տրվել էր իմ Հոր կողմից աշխարհի հիմնադրումից առաջ, և հավերժական աշխարհներում նրանց վեհացման համար, որ նրանք կարողանան մարդկանց հոգիներ բերել. քանզի դրանով է իմ Հոր գործը շարունակվում, որպեսզի նա փառավորվի» (ՎԿՈՒ 132.63):

> ***Չկա կանանց տրված ավելի մեծ ու ավելի փառահեղ խոստումների շարք, քան այն, որը գալիս է ավետարանի և Հիսուս Քրիստոսի Եկեղեցու միջոցով:***

Ամուսինն ու կինը Արարիչներ են

Այս աստվածային հրամանով, ամուսիններն ու կանայք, որպես արարիչներ պետք է փափագով և աղոթքով հրավիրեն երեխաներին իրենց տները: Այնուհետև, երբ յուրաքանչյուր երեխա միանում է իրենց ընտանեկան շրջանակին, նրանք կարող են երախտագիտությամբ բացականչել, ինչպես արեց Աննան. «Ես այս տղայի համար աղօթք արի, եւ Տէրն իմ խնդրուածքն ինձ տուաւ՝ ինչ որ նորանից խնդրեցի: Հիմա ես էլ նորան փոխ եմ տալիս Տիրոջը. իր բոլոր կեանքի մէջ Տիրոջը փոխ տրուած լինի» (Ա Թագավորաց Ա.27–28):

Արդյոք դա գեղեցիկ չէ՞: Մայր, որն աղոթում է երեխա ունենալու համար և հետո տալիս է նրան Տիրոջը:

Ես միշտ սիրել եմ Սողոմոնի այս խոսքերը. «Ահա որդիքը Տիրոջ ժառանգութիւնն են. ... Երանի այն մարդին և [կնոջը] որ [իրենց] կապարճը նորանցով լցրեց» (Սաղմոս ՃԻԷ.3–5):

Ես գիտեմ մեծ և երջանիկ ընտանիքի հատուկ օրհնությունները, քանի որ իմ թանկագին ծնողները ունեցել են երեխաներով լի կապարճ: Լինելով տասնմեկ երեխաներից ավագը, ես տեսել եմ անեսամոլության սկզբունքները, միմյանց հանդեպ փոխադարձ հարգանքը, իրար հանդեպ հավատարմությունը և այլ բազմաթիվ արժանիքներ, որոնք զարգացել են մեծ ու հրաշալի ընտանիքում՝ իմ մեծահոգի մայրը լինելով այդ տան թագուհին:

Երիտասարդ մայրեր և հայրեր, իմ ամբողջ սրտով ես ձեզ խորհուրդ եմ տալիս չհետաձգել ձեր երեխաներ ունենալը, մեր Երկնային Հոր հետ միասին լինելով արարիչներ:

Մի օգտագործեք աշխարհիկ դատողությունները ինչպիսիք են, «Մենք կսպասենք, մինչև ավելի լավ միջոցներ կունենանք երեխաներ ունենալու համար, մինչև մենք ավելի ապահով կլինենք, մինչև Ջոնը կավարտի իր ուսումը, մինչև նա կունենա ավելի լավ վարձատրվող աշխատանք, մինչև մենք կունենանք ավելի մեծ տուն, մինչև մենք ձեռք կբերենք մի քանի նյութական հարմարություններ», և այլն, և այլն:

Սա աշխարհիկ դատողություն է, և հաճելի չէ Աստծո աչքում: Մայրեր, ովքեր վայելում եք լավ առողջություն, ունեցեք ձեր երեխաներին և ունեցեք շուտ: Եվ, ամուսիններ, միշտ կենտրոնացած եղեք ձեր կանանց երեխաներ բերելու վրա:

Մի սահմանափակեք ձեր երեխաների քանակը անձնական կամ եսասեր պատճառներից ելնելով: Նյութական կարողությունները, հասարակական հարմարությունը և այսպես կոչված մասնագիտական առավելությունները ոչինչ են արդար սերնդի հետ համեմատած: Ըստ հավերժական մտածելակերպի երեխաներըունեցվածք չեն, պաշտոն չեն, հեղինակություն չեն՝մեր մեծագույն գանձերն են:

Բրիգամ Յանգն ընդգծել է. «Բազում մաքուր ու սուրբ հոգիներ կան, որոնք սպասում են իրենց վրա տաղավար վերցնելուն, այժմ, ո՞րն է մեր պարտականությունը: Նրանց համար տաղավարներ պատրաստել. բռնել այն ուղին, որը հակված չի լինի այդ հոգիներին տանել չարամիտների ընտանիքները, որտեղ նրանք կվարժեցվեն ամբարշտության, անբարոյական վարքագծի և ամեն տեսակ հանցանքի մեջ: Յուրաքանչյուր արդար տղամարդու և կնոջ պարտականությունն է տաղավարներ պատրաստել բոլոր հոգիների համար, որ կարող են» (*Discourses of Brigham Young,* sel. John A. Widtsoe [Salt Lake City: Deseret Book Co., 1954], p. 197):

Այո, օրհնյալ են ամուսինն ու կինը, ովքեր ունեն երեխաների ընտանիք: Կյանքի ամենամեծ ուրախությունները և օրհնությունները կապված են ընտանիքի, ծնող լինելու և զոհաբերության հետ: Այդ քաղցր հոգիների տուն գալու համար արժե գնալ գրեթե ցանկացած զոհաբերության:

Աստծո հատուկ խոստումները

Մենք հասկանում ենք, որ որոշ կանայք, առանց իրենց իսկ մեղքի, երեխաներ ունենալու հնարավորությու չունեն: Այս հիանալի քույրերին Աստծո յուրաքանչյուր մարգարե խոստացել է, որ նրանք կօրհնվեն երեխաներով հավերժության մեջ և որ նրանք չեն զրկվի սերունդ ունենալուց:

Կատարյալ հավատքի, աղերսող աղոթքների, ծոմապահության և քահանայության հատուկ օրհնությունների միջոցով այս նույն հիանալի քույրերից շատերը՝ իրենց կողքին ունենալով ազնիվ զուգընկերներ, հրաշքների են հանդիպել իրենց կյանքում և օրհնվել են երեխաներով: Ոմանք աղոթքներով ընտրել են երեխաներ որդեգրելը և այդ սքանչելի զույգերին՝ մենք ողջունում ենք ձեր զոհաբերությունների և սիրո համար, որ դուք տվել եք այդ երեխաներին, որոնց դուք ընտրել եք լինելու ձեր սեփականը:

Երեխաներին մեծացնել Տիրոջ ճանապարհով

Այժմ, իմ թանկագին մայրեր, իմանալով ձեր՝ երեխաներ ունենալու և մեծացնելու և Նրա ներկայություն հետ բերելու Աստծո շնորհած դերի մասին, ինչպե՞ս դուք կիրականացնեք սա Տիրոջ ճանապարհով: Ես ասում եմ «Տիրոջ ճանապարհով», որովհետև այն տարբերվում է աշխարհիկ ճանապարհից:

Տերը պարզորոշ կերպով սահմանել է մայրերի և հայրերի դերերը կարիքները հոգալու և արդար սերունդ մեծացնելու կապակցությամբ: Սկզբում Ադամը՝ոչ թե Եվանհրահանգվեց իր ճակատի քրտինքով հաց վաստակել: Ավանդական իմաստության համաձայն, մոր կոչումը տանն է, ոչ թե գործարար աշխարհում:

Կրկին, Վարդապետություն և Ուխտերում մենք կարդում ենք. «Կանայք իրենց ապրուստի համար իրավունք ունեն [պահանջ ներկայացնելու] իրենց ամուսիններին, քանի դեռ նրանց ամուսինները չեն վերցվել» (ՎԵՈՒ 83.2): Սա կնոջ և մոր սուրբ իրավունքն է: Նա տանը հոգում է իր երեխաների համար և կերակրում նրանց: Նրա ամուսինը վաստակում է ընտանիքի ապրուստի համար, որն այս կերակրումը հնարավոր է դարձնում: Իրենց ամուսինների հանդեպ ֆինանսական պահանջի այդ իրավունքով Եկեղեցու խորհուրդը միշտ կողմ է եղել, որ մայրերն իրենց ողջ ժամանակը անցկացնեն տանը՝ մեծացնելով և հոգալով իրենց երեխաների համար:

Մենք նաև հասկանում ենք, որ մեր լավագույն քույրերից ոմանք այրիացել են և բաժանվել և որ ոմանք էլ իրենց գտնում են արտասովոր պայմաններում, որտեղ, կարիքից ելնելով, նրանցից պահանջվում է որոշ ժամանակով աշխատել: Բայց այս առանձին դեպքերը բացառություններ են, ոչ թե օրենք:

Տանը, որտեղ կա ֆիզիկապես առողջ ամուսին, նրանից պահանջվում է լինել հաց վաստակողը: Երբեմն մենք լսում ենք ամուսինների մասին, ովքեր, ելնելով տնտեսական իրավիճակներից, կորցրել են իրենց աշխատանքը և ակնկալում են իրենց կանանցից դուրս գալ տանից և աշխատել, չնայած, որ ամուսինը այնուամենայնիվ ի վիճակի է ապահովել իր ընտանիքին: Ասպիսի դեպքերում մենք հորդորում ենք ամուսնուն անել իրենից կախված հնարավոր ամեն ինչ, որպեսզի թույլ տա իր կնոջը մնալ տանը՝ հոգալով երեխաների համար, մինչ նա շարունակում է հոգալ իր ընտանիքի համար իր հնարավորությունների համաձայն, չնայած որ աշխատանքը, որով նա կարող է ապահովել, գուցե լավագույնը չլինի նրա համար և ընտանիքի ծախսերը կարող են հազիվ բավարարվել:

Նախագահ Քիմբալի խորհուրդը

Մեր սիրելի մարգարե Սպենսեր Վ. Քիմբալը շատ բան ուներ ասելու տանը մոր դերի և նրանց կոչումների ու պարտականությունների մասին: Այս երեկո ես ոգեշնչված եմ կիսել ձեզ հետ նրա որոշ տպավորիչ հայտարարություններով: Ինձ անհանգստացնում է, որ նրա խորհուրդներից շատերը անուշադրության են մատնվել, և ընտանիքները տառապել են դրա պատճառով: Բայց այս երեկո ես կանգնում եմ որպես երկրորդ վկա այն ամենի ճշմարտության համար, ինչ ասել է Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը: Նա խոսել է որպես Աստծո ճշմարիտ մարգարե:

Նախագահ Քիմբալը հայտարարել է. «Կանայք պետք է հոգ տանեն ընտանիքի համար,սա հաստատել է Տերը,լինեն օգնական ամուսնու համար, աշխատեն նրա հետ, բայց չվաստակեն ապրուստի համար, բացառությամբ առանձնահատուկ դեպքերում: Տղամարդիկ պետք է իսկական տղամարդ լինեն և վաստակեն ապրուստը նորմալ պայմաններում» (*The Teachings of Spencer W. Kimball*, p. 318):

Կյանքի ամենամեծ ուրախությունները և օրհնությունները կապված են ընտանիքի, ծնող լինելու և զոհաբերության հետ:

Նախագահ Քիմբալը շարունակում է. «Բազմաթիվ մայրեր աշխատում են տանից դուրս, որպեսզի տան իրենց երեխաներին հագուստ, երաժշտության դասեր, ուղևորություններ և զվարճություն: Բազմաթիվ կանայք իրենց ժամանակը անց են կացնում մարդկանց հետ շփվելով, քաղաքականությամբ զբաղվելով, հանրային ծառայություններ կատարելով, մինչդեռ նրանք պետք է լինեին տանը՝ իրենց երեխաներին ապահովության մեջ ուսուցանելու, վարժեցնելու, ընդունելու և սիրելու համար» (The Teachings of Spencer W. Kimball, p. 319):

Հիշեք Նախագահ Քիմբալի խորհուրդը՝ տրված Ջոնին ու Մերիին. «Մերի, դու պետք է դառնաս հմուտ կին աշխարհի ամենամեծ աշխատանքում,որը տնային տնտեսուհի, կին և մայր լինելն է: Տիրոջ կողմից երբեք չի նախատեսվել, որ ամուսնացած կինը պետք է պայքարի տղամարդու հետ աշխատանքում: Նրանք ավելի մեծ ու ավելի կարևոր ծառայություն ունեն մատուցելու» (*Faith Precedes the Miracle* [Salt Lake City: Deseret Book Co., 1975], p. 128):

Կրկին խոսում է Նախագահ Քիմբալը. «Ամուսնուց ակնկալվում է, որ նա պահի իր ընտանիքը և միայն արտակարգ իրավիճակում կինը պետք է ձեռք բերի դրսի աշխատանք: Նրա տեղը տանն է՝ կառուցելու տունը դարձնելով այն հրճվանքի վայր:

Բազմաթիվ ամուսնալուծությունների հետքերը տանում են դեպի ուղիղ այն օրը, երբ կինը թողեց տունը և դուրս գնաց աշխատելու աշխարհում: Երկու եկամուտը բարձրացնում են ապրուստի չափանիշը նորմայից վեր: Երկու ամուսինների աշխատանքը կանխարգելում են լիակատար և պատշաճ ընտանեկան կյանքին, խախտում ընտանեկան աղոթքները, ստեղծում մի անկախություն, որը համագործակցական չէ, առաջացնում է աղավաղում, սահմանափակում ընտանիքը և հուսահատեցնում արդեն ծնված երեխաներին…. :

Ի վերջո, Նախագահ Քիմբալը խորհուրդ է տալիս. «…. Ես աղաչում եմ ձեզ, ձեզ ովքեր կարող եք և պետք է պահեք և մեծացնեք ընտանիք՝ Կանայք, տուն եկեք տպագրական աշխատանքից, լվացքատնից, բուժքույրական աշխատանքից, տուն եկեք գործարանից, սրճարանից: Ոչ մի կարիերա չի էլ կարող մոտենալ կարևորությամբ, կնոջ, տանտիկնոջ, մոր աշխատանքին՝ ճաշ եփելուն, ամանները լվանալուն, թանկագին ամուսնու և երեխաների համար անկողինները սարքելուն:

Տուն եկեք կանայք ձեր ամուսինների մոտ: Դարձրեք տունը երկինք նրանց համար: Տուն եկեք կանայք, ձեր երեխաների մոտ, ծնված և չծնված: Ձեզ վրա վերցրեք մայրության պարտականությունները և առանց նեղվելու օգնեք ավելի մեծ դերի իրականացմանը՝ ստեղծեք մարմիններ անմահ հոգիների համար, ովքեր անհամբեր սպասում են:

Երբ դուք լիովին լրացնեք ձեր ամուսնուն ընտանեկան կյանքում և ծնեք ու մեծացնեք հավատքով, հավատարմությամբ, պատասխանատվությամբ և բարությամբ լի երեխաներ, ապա դուք հասել եք ձեր նվաճումներից բարձրագույնին, անզուգականին և դուք կլինեք նախանձի առարկա ժամանակի և հավերժության ընթացքում (fireside address in San Antonio, Texas, 27, 32–33)

Նախագահ Քիմբալը խոսում էր ճշմարտությունների մասին: Նրա խոսքերը մարգարեական են:

Երեխաների հետ ժամանակ անցկացնելու տասը եղանակներ

Սիոնի մայրեր, Աստծո կողմից ձեզ տրված դերերը շատ էական են ձեր սեփական վեհացման և ձեր ընտանիքի փրկության և վեհացման համար: Երեխան ավելի շատ մոր կարիքն ունի, քան բոլոր այն բաների, որոնք հնարավոր է գնել փողով: Ձեր երեխաների հետ ժամանակ անցկացնելը բոլոր պարգևներից մեծագույնն է:

Սիոնի մայրերի հանդեպ սեր ունենալով իմ սրտում՝ ես այժմ կցանկանայի առաջարկել տասը յուրահատուկ եղանակներ, որոնց միջոցով մեր մայրերը կարող են արդյունավետ ժամանակ անցկացնել իրենց երեխաների հետ:

Եղեք խաչմերուկներում: Առաջինը, ժամանակ տրամադրեք միշտ խաչմերուկներում լինելու համար, երբ ձեր երեխաները գալիս կամ գնում են,երբ նրանք գնում կամ վերադառնում են դպրոցից, երբ նրանք գնում կամ վերադառնում են ժամադրություններից, երբ նրանք ընկերներ են բերում տուն: Եղեք այնտեղ՝ խաչմերուկներում, անկախ նրանից՝ ձեր երեխաները վեց, թե տասնվեց տարեկան են: Առակացում մենք կարդում ենք. «Բաց ընկած տղան անարգանք կբերէ իր մօր համար» (Առակաց ԺԹ.15): Մեր հասարակության ամենամեծ մտահոգությունների մեջ են դռան ետևում փակված միլիոնավոր երեխաները, ովքեր ամեն օր վերադառնում են դատարկ տներ՝ աշխատող ծնողների կողմից չվերահսկվելով:

Եղեք իսկական ընկեր: Երկրորդը, մայրեր, ժամանակ տրամադրեք ձեր երեխաների համար իսկական ընկեր լինելու համար: Լսեք ձեր երեխաներին, իսկապես լսեք: Խոսեք

նրանց հետ, ծիծաղեք և կատակեք նրանց հետ, երգեք նրանց հետ, խաղացեք նրանց հետ, լաց եղեք նրանց հետ, գրկեք նրանց, անկեղծորեն գովեք նրանց: Այո, հաճախակի ժամանակ անցկացրեք ոչ հապճեպ կերպով զրուցելով յուրաքանչյուր երեխայի հետ առանձին-առանձին: Եղեք իսկական ընկեր ձեր երեխաների համար:

Կարդացեք ձեր երեխաների համար: Երրորդը, մայրեր, ժամանակ տրամադրեք ձեր երեխաների համար կարդալու համար: Սկսած օրորոցից՝ կարդացեք ձեր որդիների և դուստրերի համար: Հիշեք, թե ինչ է ասել պոետը.

Դուք կարող է ունեք շոշափելի հարստություն անպատմելի.
Գոհարների և ոսկու զարդատուփեր անհամար:
Ավելի հարուստ, քան ես, դուք երբեք չեք լինի,
Ես ունեցել եմ մայր, ով կարդում էր ինձ համար:
(Strickland Gillilan, “The Reading Mother”):

Դուք կսերմանեք սեր լավ գրականության նկատմամբ և իսկական սեր սուրբ գրությունների հանդեպ, եթե դուք կանոնավորապես կկարդաք ձեր երեխաների համար:

Աղոթեք ձեր երեխաների հետ: Չորրորդը, ժամանակ տրամադրեք ձեր երեխաների հետ աղոթելու համար: Հոր ղեկավարման ներքո ընտանեկան աղոթքները պետք է տեղի ունենան առավոտյան և երեկոյան: Թող ձեր երեխաները զգան ձեր հավատքը, մինչ դուք ցած եք կանչում երկնքի օրհնությունները նրանց վրա: Մեջբերում եմ Հակոբոսի խոսքերը. «Շատ զորավոր է արդարի [մոր] աղոթքը» (Հակոբոս Ե.16): Ձեր երեխաները թող մասնակցեն ընտանեկան և անձնական աղոթքների, և ուրախանան Երկնային Հորն ուղղված իրենց քաղցր արտահայտություններով:

Ամեն շաբաթ ընտանեկան երեկոներ կազմակերպեք: Հինգերորդը, ժամանակ տրամադրեք ամեն շաբաթ իմաստալից ընտանեկան երեկոներ կազմակերպելուն: Ձեր ամուսնու նախագահությամբ ամեն շաբաթ մասնակցեք հոգևոր և բարձր տրամադրություն ստեղծող ընտանեկան երեկոների: Թող ձեր երեխաները ակտիվորեն ներգրավված լինեն: Սովորեցրեք նրանց ճիշտ սկզբունքներ: Սա դարձրեք ձեր ընտանիքի հրաշալի ավանդույթներից մեկը: Հիշեք սքանչելի խոստումը, որը տրվել է Նախագահ Ջոզեֆ Ֆ. Մմիթի կողմից, երբ ընտանեկան երեկոների գաղափարը առաջին անգամ ներկայացվեց Եկեղեցուն. «Եթե Սրբերը հնազանդվեն այս խորհուրդին, մենք խոստանում ենք, որ արդյունքում կլինեն մեծ օրհնություններ: Սերը տան մեջ և հնազանդությունը ծնողների հանդեպ կմեծանա: Հավատք կզարգանա Իսրայելի երիտասարդների սրտերում և նրանք զորություն կստանան կասեցնելու չար ազդեցությունները և փորձությունները, որոնք կսպառնան նրանց» (James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints*, 6 vols. [Salt Lake City: Bookcraft, 1965–75], 4:339): Այս սքանչելի խոստումը շարունակում է գործել այսօր:

Միասին եղեք ճաշի ժամերին: Ժամանակ տրամադրեք ճաշի ժամերին միասին լինելու համար, որքան հաճախ որ հնարավոր կլինի: Սա դժվար խնդիր է դառնում, երբ երեխաները մեծանում են և կյանքն ավելի զբաղված է դառնում: Բայց ուրախ զրուցելու, օրվա ծրագրերով և զբաղմունքներով կիսվելու և ուսուցանելու յուրահատուկ պահեր են առաջ գալիս ճաշի ժամին, որովհետև մայրերը, հայրերը և երեխաները աշխատում են դրա վրա:

Ամեն օր կարդացեք սուրբ գրությունները: Յոթերորդը, ժամանակ տրամադրեք ընտանիքի հետ միասին ամեն օր սուրբ գրությունները կարդալուն: Սուրբ գրությունների անհատական ընթերցումը կարևոր է, բայց սուրբ գրությունների ընտանեկան ընթերցումը կարևորագույնն է: Որպես ընտանիք Մորմոնի գիրքը միասին կարդալը հատկապես մեծ հոգևորություն կբերի ձեր տուն և ծնողներին ու երեխաներին, երկուսին էլ զորություն կտա փորձությանը դիմակայելու համար և Սուրբ Հոգին որպես մշտական զուգընկեր ունենալու համար: Ես խոստանում եմ, որ Մորմոնի Գիրքը կփոխի ձեր ընտանիքի կյանքը:

Արեք բաներ որպես ընտանիք: Ութերորդը, ժամանակ տրամադրեք միասին, որպես ընտանիք որոշ գործեր անելու համար: Կազմակերպեք ընտանեկան զբոսանքներ, զբոսախնջույքներ, ծննդյան տոների նշումներ, կարճատև ուղևորությունների յուրահատուկ պահեր և հուշեր ստեղծեք: Հնարավորության դեպքում, որպես ընտանիք մասնակցեք միջոցառումների, որտեղ ընտանիքի անդամներից մեկը ներգրավված է, ինչպես դպրոցական ներկայացումը, գնդակով խաղը, ելույթները, մենակատարումը: Միասին մասնակցեք եկեղեցու ժողովներին և միասին նստեք որպես ընտանիք, երբ կարողանաք: Մայրերը, ովքեր օգնում են ընտանիքներին աղոթել և խաղալ միասին, կմնան միասին և կօրհնեն երեխաների կյանքը հավերժորեն:

Ուսուցանեք ձեր երեխաներին: Իններորդը, մայրեր, ժամանակ տրամադրեք ձեր երեխաներին ուսուցնելու համար: Որսացեք ուսուցանելու պահերը: Սա կարելի է կատարել օրվա ընթացքում ցանկացած պահի՝ճաշի ժամին, մտերմիկ պահերին կամ երբ հատուկ հավաքվում եք միասին, օրվա վերջում անկողնու կողքին կամ վաղ առավոտյան միասին քայլելու ժամանակ: Մայրեր, դուք ձեր երեխաների լավագույն ուսուցիչն եք: Այս թանկարժեք պատասխանատվությունը մի գցեք մանկապարտեզների կամ դայակների վրա: Մոր սերն ու ջերմեռանդ վերաբերմունքը երեխաների հանդեպ նրա սեփական ուսուցման ամենակարևոր բաղադրիչներն են:

Ոչ մի աշխատանքային առաջարկ այդքան կարևոր չէ, որքան կին, տնային տնտեսուհի և մայր լինելը:

Երեխաներին սովորեցրեք ավետարանի սկզբունքները: Սովորեցրեք նրանց, որ դա

լավ արդյունքի է բերում: Սովորեցրեք նրանց, որ ապահովություն չկա մեղքի մեջ: Սովորեցրեք նրանց սեր Հիսուս Քրիստոսի ավետարանի հանդեպ և դրա աստվածայնության վկայությունը:

Սովորեցրեք ձեր որդիներին և դուստրերին պարկեշտություն, և սովորեցրեք նրանց հարգել տղամարդկությունը և կանացիությունը: Սովորեցրեք ձեր երեխաներին սեռական մաքրություն, ժամադրության պատշաճ չափանիշներ, տաճարային ամուսնություն, միսիոներական ծառայություն և Եկեղեցու կոչումները ընդունել և մեծարել:

Սովորեցրեք նրանց սեր աշխատանքի հանդեպ և լավ կրթության արժեքը:

Սովորեցրեք նրանց ճիշտ տեսակի ուրախ ժամանցի կարևորությունը, ներառյալ պատշաճ ֆիլմերն ու տեսաժապավենները, երաժշտությունը, գրքերն ու թերթերը: Քննարկեք պոռնոգրաֆիայի և թմրադեղերի չարիքները և սովորեցրեք նրանց մաքուր կյանքի կարևորությունը:

Այո, մայրեր, սովորեցրեք ձեր երեխաներին ավետարանը ձեր իսկ տանը, ձեր սեփական հավաքների ժամանակ: Սա ամենաարդյունավետ ուսուցումն է, որ ձեր երեխաները երբևէ կստանան: Սա Տիրոջ ճանապարհով սովորեցնելն է: Եկեղեցին չի կարող սովորեցնել այնպես, ինչպես դուք եք կարող: Դպրոցը չի կարող: Մանկապարտեզը չի կարող: Բայց դուք կարող եք, և Տերը կաջակցի ձեզ: Ձեր երեխաները ձեր սովորացրած բաները ընդմիշտ կհիշեն, և երբ նրանք մեծանան, չեն բաժանվի դրանցից: Նրանք ձեզ կկոչեն օրհնված՝ իրենց իսկական հրեշտակ մայր:

Մայրեր, այսպիսի երկնային, մայրական ուսուցումը ժամանակ է պահանջում,շատ ժամանակ: Այն չի կարող արդյունավետ կերպով կատարվել ավելի քիչ ժամանակում: Այն պետք է կատարվի ամբողջ ժամանակ, որպեսզի փրկի և վեհացնի ձեր երեխաներին: Սա ձեր աստվածային կոչումն է:

Իսկապես սիրեք ձեր երեխաներին: Տասերորդը և վերջինը, մայրեր, ժամանակ տրամադրեք իսկապես ձեր երեխաներին սիրելու համար: Մոր անվերապահ սերը մոտ է քրիստոսանման սիրուն:

Ահա որդու կողմից իր մորն ուղղված մի գեղեցիկ գնահատանք. «Ես շատ բան չեմ հիշում նրա քվեարկության վերաբերյալ նրա կարծիքներին, ոչ էլ նրա հասարակական հեղինակության վերաբերյալ. և ինչ գաղափարներ է նա ունեցել երեխաներին մարզելու, սննդակարգի և երեխաներին մեծացնելու վերաբերյալ, ես չեմ կարող հիշել: Հիմնական բանը, որ ես կարող եմ հիշել այսքան տարիներ անց այն է, որ նա սիրում էր ինձ: Նա սիրում էր պառկել խոտի վրա ինձ հետ միասին և պատմություններ պատմել, կամ վազել և թաքնվել մեր հետ: Նա միշտ գրկում էր ինձ: Եվ ինձ դա դուր էր գալիս: Նա ուներ պայծառ դեմք: Ինձ համար նա նման էր Աստծուն, և այն ամենին, ինչ սրբերը պատմում էին Նրա մասին: Եվ երգել: Իմ կյանքի բոլոր հաճելի զգացմունքների մեջ ոչինչ չի կարող համեմատվել այն բերկրանքի հետ, երբ նա ինձ իր գիրկն էր առնում և ես քնում էի, մինչ նա ճոճվում էր իր ճոճաթոռին և երգում: Այս մասին մտածելով՝ ես խորհում եմ, թե արդյոք այսօրվա կինը իր բոլոր հրաշալի ենթադրություններով և ծրագրերով հանդերձ գիտակցում է, թե ինչ ամենակարող գործոն է նա հանդիսանում իր երեխայի լավ կամ վատ ձևավորման համար: Ես մտածում եմ, թե արդյոք նա հասկանում է, թե ինչքան կարևոր են իսկական սերն ու ուշադրությունը երեխայի կյանքում»:

Մայրեր, ձեր անչափահաս երեխաները նույնպես ունեն այդ նույն ձևի սիրո և ուշադրության կարիք: Շատ մայրերի և հայրերի համար ավելի հեշտ է թվում իրենց սերն արտահայտել և ցույց տալ իրենց երեխաների հանդեպ, երբ նրանք փոքր են, սակայն ավելի դժվար է, երբ նրանք ավելի մեծ են: Ջանասիրաբար աշխատեք սրա վրա: Չպիտի անդունդ լինի սերունդների միջև: Եվ լուծումը սերն է: Մեր երիտասարդները կարիք ունեն սիրո և ուշադրության, ոչ թե անուշադրության: Նրանք կարեկցանքի և հասկացված լինելու կարիք ունեն, ոչ թե մայրերի և հայրերի կողմից անտարբերության: Նրանք կարիք ունեն ծնողների ժամանակի: Մոր սիրալիր ուսուցանումներն ու նրա սերն ու վստահությունը անչափահաս որդու կամ դստեր հանդեպ կարող է բառիս բուն իմաստով փրկել նրանց չար աշխարհից:

Տիրոջ օրհնությունները ծնողների վրա

Որպես վերջաբան, ես ինչ որ բան կկորցնեի այս երեկո, եթե չարտահայտեի իմ սերն ու հավերժական երախտագիտությունն իմ սիրելիի և ընկերակցի և մեր վեց երեխաների մոր հանդեպ: Նրա նվիրվածությունը մայրություն հանդեպ օրհնել է ինձ և մեր ընտանիքն առավել, քան կարելի է դա արտահայտել բառերով: Նա եղել է հրաշալի մայր՝ ամբողջովին և ուրախությամբ նվիրելով իր կյանքը և իր առաքելությունը իր ընտանիքին: Որքան երախտապարտ եմ ես Ֆլորայի համար:

Թույլ տվեք նաև արտահայտել իմ երախտագիտությունը ձեզ՝ այս երեկո այստեղ հավաքված հայրեր և ամուսիններ: Մենք ակնկալում ենք, որ դուք արդար ղեկավարներ լինեք ձեր տներում և ընտանիքներում և, ձեր ընկերակիցների և ձեր երեխաների մայրերի հետ, ձեր ընտանիքները կառաջնորդեք ետ՝ մեր Երկնային Հոր մոտ:

Այժմ թող Աստված օրհնի մեր հիանալի մայրերին: Մենք աղոթում ենք ձեզ համար: Մենք աջակցում ենք ձեզ: Մենք պատվում ենք ձեզ, մինչ դուք բերում, խնամում, վարժեցնում, սովորեցնում և սիրում եք հավերժության համար: Ես խոստանում եմ ձեզ երկնքի օրհնությունները և «այն ամենն, ինչ ... Հայրն ունի» (տես ՎԱՌՒ 84.38), մինչ դուք մեծարում եք բոլոր կոչումներից ամենավեհը՝ Սիոնի մայր լինելը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆԱՅՔ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Եկեղեցու Նախագահ

Conference Report, Oct. 1996, 90–95; կամ Ensign, Nov. 1996, 67–70

Կանայք հենակետային նշանակություն ունեն Աստծո ծրագրում

Եկեղեցու չափահաս անդամների կեսը, հավանաբար ավելի քան կեսից ավելին, կանայք են: Այս առավոտ հատկապես նրանց կցանկանայի ուղղել իմ խոսքը: Ես սա անում եմ այն հույսով, որ տղամարդիկ նույնպես կլսեն:

Առաջինը թույլ տվեք ասել ձեզ, քույրեր, որ դուք երկրորդ տեղում չեք մեր Հոր հավերժական երջանկության և Իր զավակների բարեկեցության ծրագրում: Դուք լիովին կարևոր մաս եք այդ ծրագրում:

Առանց ձեզ ծրագիրը չէր կարող գործել: Առանց ձեզ ողջ ծրագիրը կխափանվեր: Ինչպես ասել եմ նախկինում այս ամբիոնից, երբ արարման գործընթացը սկսվեց, Եհովան՝ Արարիչը, Իր Հոր հրահանգների ներքո, առաջինը լույսը բաժանեց խավարից և այնուհետև ցամաքը բաժանեց ջրերից: Դրան հաջորդեց բուսական կյանքը, որին հաջորդեց կենդանական կյանքի արարումը: Այնուհետև եկավ մարդու արարումը, և որպես այդ աստվածային գործունեության գագաթնակետ եկավ լավագույն գործը՝ կնոջ արարումը:

Ձեզանից յուրաքանչյուրը Աստծո դուստր է՝ օժտված ծնվելու աստվածային իրավունքով: Դուք կարիք չունեք պայքարելու այդ կարգավիճակի համար:

Եկեղեցու կանանց մեծ ուժը

Մինչ ես շրջագայում եմ տեղից տեղ, ես հարցազրույց եմ ունենում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Մշտապես նրանք հարցնում են Եկեղեցում կնոջ տեղի մասին: Նրանք սա անում են գրեթե մեղադրող տոնով, կարծես թե մենք քննադատում և նվաստացնում ենք կանանց: Ես մշտապես պատասխանում եմ, որ ես չգիտեմ ոչ մի ուրիշ կազմակերպություն ամբողջ աշխարհում, որը կանանց զարգացման, շփման, մեծ բարիքների իրականացման, ղեկավար պաշտոններ վարելու և պատասխանատվություն կրելու համար այսքան շատ հնարավորություններ տար:

Ես կցանկանայի, որ այս բոլոր լրագրողները լինեին Թաբերնաքլում անցած շաբաթ օրը, երբ տեղի էր ունենում Սփոփող Միության գերագույն համաժողովը: Ոգեշնչող էր նայելը այդ մեծ հավաքին Աստծո դուստրերի՝ հավատի և հմտությունների տեր կանանց, կանանց, ովքեր գիտեն, թե ինչի համար է տրված կյանքը և ունեն որոշակի զգացում իրենց աստվածային արարման վերաբերյալ: Ես կցանկանայի, որ նրանք կարողանային լսել Բրիգամ Յանգի Համալսարանի երիտասարդ կանանց այդ երգչախմբին, ովքեր մեր սրտերը լցրեցին իրենց երգի գեղեցկությամբ: Երանի թե նրանք կարողանային լսել Սփոփող Միության գերագույն նախագահության հուզիչ ուղերձները, որոնցից յուրաքանչյուրը հերթով խոսեցին հավատքի, հույսի և գթության թեմաներով:

Ինչ հմուտ մարդիկ են այս կանայք: Նրանք իրենց արտահայտում են զորությամբ և վստահությամբ և մեծ համոզմունքով: Նախագահ Ֆաուստը եզրափակեց այդ ծառայությունը հրաշալի ելույթով:

Եթե այդ լրագրողները, ովքեր հակված են բարձրացնել այս հարցը, կարողանային նստել այդ հոծ բազմության շարքերում, նրանք կիմանային, նույնիսկ առանց հետագա հարցուփորձի, որ ուժ ու մեծ կարողություն կա այս Եկեղեցու կանանց մեջ: Առաջնորդություն և նպատակաուղղվածություն, ինքնուրույնության որոշակի հոգի կա այստեղ, և էլ ավելին, մեծ բավականություն է լինել մի մասը այս՝ Տիրոջ թագավորության, և աշխատել քահանայության հետ ձեռք ձեռքի տված այն առաջ տանելու համար:

Ազգի իսկական կառուցողները

Ձեզանից շատերը, ովքեր եղել են այն ժողովին, այսօր այստեղ են: Այսօր դուք նստած եք ձեր ամուսինների հետ, տղամարդկանց, ում դուք սիրում, պատվում և հարգում եք, և ովքեր ի պատասխան սիրում, պատվում և հարգում են ձեզ: Դուք գիտեք, թե որքան բախտավոր եք դուք, որ ամուսնացել եք լավ մարդու հետ, ով ձեր կյանքի ընկերակիցն է և ով կլինի ձեր ընկերակիցը հավերժության մեջ: Միասին, մինչ դուք ծառայել եք շատ պաշտոններում և պահել ձեր ընտանիքները և հոգ տարել նրանց համար, դուք հանդիպել եք բազմատեսակ փոթորիկների և անցել եք դրանց բոլորի միջով ձեր գլուխները բարձր պահած: Ձեր մեծամասնությունը մայրեր են, և ձեզանից շատերը տատիկներ են և նույնիսկ ծոռնատերեր: Դուք քայլել եք երբեմն ցավոտ, երբեմն բերկրալի ծնող լինելու արահետով: Դուք քայլել եք Աստծո հետ ձեռք ձեռքի տված երեխաներ աշխարհ բերելու մեծ գործընթացի մեջ, որպեսզի նրանք կարողանան դեպի անմահություն և հավերժական կյանք տանող ճանապարհի այս վիճակի փորձառությունն ունենալ: Ընտանիքը մեծացնելը հեշտ չի եղել: Ձեզանից շատերը ստիպված են եղել զոհաբերել և խնայել և աշխատել գիշեր ու ցերեկ: Երբ ես մտածում եմ ձեր և ձեր իրավիճակի մասին, ես մտաբերում եմ Աննա Քամփբելի խոսքերը, ով գրել էր, թե ինչպես էր նա նայում իր երեխաների վրա.

Դուք այն ճանապարհորդությունն եք, որին ես չգնացի.
Դուք մարգարիտներն եք, որ ես չեմ կարող գնել.
Դուք իմ խոպական կապույտ լճակն եք.
Դուք իմ օտարերկրյա երկնքի մասնիկն եք:
["To My Child," quoted in Charles L. Wallis, ed., *The Treasure Chest* (1965), 54]

Քույրեր, որտեղ էլ որ դուք ապրեք, դուք եք իսկական ազգեր ստեղծողները, քանի որ դուք ստեղծել եք զորության, խաղաղության և ապահովության տներ: Դրանք դառնում են ցանկացած ազգի իսկական ուժը:

Հանդիմանություն բռնացողներին

Ցավոք սրտի, ձեզանից մի քանիսը կարող է ամուսնացած լինեն այնպիսի մարդկանց հետ, ովքեր կոպիտ են: Նրանցից ոմանք օրվա ընթացքում աշխարհի առաջ բարի դեմքեր են հագնում և երեկոյան տուն են գալիս, մի կողմ են դնում իրենց ներքին դաստիարակությունը, և ամենափոքր առիթի դեպքում տրվում են զայրույթի պոռթկումներին:

Ոչ մի տղամարդ, ով ունի նման չար և անդառնալի վարքագիծ, արժանի չէ Աստծո քահանայությանը: Ոչ մի տղամարդ, ով իրեն այսպես է պահում, արժանի չէ Տիրոջ տան արտոնություններին: Ես ցավում եմ, որ կան որոշ տղամարդիկ, ովքեր անարժան են իրենց կանանց և երեխաների սիրուն: Կան երեխաներ, ովքեր վախենում են իրենց հայրերից, և կանայք, ովքեր վախենում են իրենց ամուսիններից: Եթե լինի մի այսպիսի տղամարդ, ով կլսի իմ ձայնը, որպես Տիրոջ ծառա ես հանդիմանում եմ ձեզ և կանչում ձեզ ապաշխարության: Կարգի հրավիրեք ինքներդ ձեզ: Կառավարեք ձեր հավասարակշռությունը: Ձեզ բարկացնող բաներից շատերը շատ փոքր, անկարևոր բաներ են: Եվ ինչ սարսափելի գին եք դուք վճարում ձեր բարկության համար: Խնդրեք Տիրոջը, որ ների ձեզ: Խնդրեք ձեր կնոջը, որ ների ձեզ: Ներողություն խնդրեք ձեր երեխաներից:

Խորհուրդ ամուրի կնոջը

Մեր մեջ կան շատ կանայք, ովքեր ամուրի են: Հիմնականում, սա նրանց ընտրությամբ չէ: Ոմանք երբեք հնարավորություն չեն ունեցել ամուսնանալ մեկի հետ, ում հետ նրանք կցանկանային լինել հավերժության մեջ:

Ձեր համար, չամուսնացած կանայք, ովքեր ցանկանում եք ամուսնանալ, ես կրկնում եմ այն, ինչ վերջերս ասել եմ ամուրիների ժողովին այս Թաբերնաքլում.

«Մի կորցրեք ձեր հույսը: Եվ մի դադարեք փորձել: Բայց դադարեք հետապնդվել այդ մտքի կողմից: Հնարավորություններն այն են, որ եթե դուք մոռանաք դրա մասին և դառնաք ջերմեռանդ ներգրավվեք այլ գործերում, հնարավորություններն անչափ կմեծանան ...

«Ես հավատում եմ, որ մեզանից շատերի համար ամենալավ դեղամիջոցը միայնակության դեմ աշխատանքն է՝ ուրիշներին մատուցված ծառայությունը: Ես չեմ նսեմացնում ձեր խնդիրները, բայց ես առանց տարակուսելու ասում եմ, որ կան շատ ուրիշներ, ում խնդիրներն ավելի լուրջ են, քան ձերը: Ճանապարհներ փնտրեք նրանց ծառայելու, օգնելու և հուսադրելու համար: Կան շատ տղաներ և աղջիկներ, ովքեր թերանում են դպրոցում մի փոքր անհատական ուշադրության և խրախուսանքի պակասի պատճառով: Կան բազում ծերեր, ովքեր ապրում են թշվառության և միայնակության և վախի մեջ, ում հասարակ զրույցը կբերի հույս և երջանկություն» (Salt Lake Valley single adult fireside, 22 Sept. 19966թ.):

Աջակցեք կանանց, ովքեր ամուսիններ են կորցրել

Եկեղեցու կանանց մեջ ներգրավված են նրանք, ովքեր կորցրել են իրենց ամուսիններին լքվածության, ամուսնալուծության և մահվան արդյունքում: Մեծ է մեր պարտավորությունը ձեր հանդեպ: Ինչպես հայտարարում են սուրբ գրությունները. «Սուրբ եւ անարատ կրօնասիրութիւնն Աստուծոյ եւ Հօր առաջին սա է. որբերին եւ այրիներին այցելել նորանց նեղութեան մէջ, եւ իր անձն աշխարհիցից անարատ պահել» (Հակոբոս Ա.27):

Ես մի նամակ ստացա մեկից, ով իրեն համարում է հաջողակ, և նա իրոք հաջողակ է: Նա գրում է.

«Չնայած ես մեծացնում էի մեր չորս տղաներին որպես միայնակ ծնող, ... ես մենակ չեմ: Ես ունեմ հրաշալի «ծխի ընտանիք», որը համախմբված էր մեր շուրջը: ...

Իմ Սփոփող Միության նախագահը միշտ պատրաստ է եղել օգնել ինձ իմ ամենամեծ դժվարությունների պահին, քաջալերելով իմ հոգևոր աճը, անձնական աղոթքները և տաճարային այցելությունները:

Մեր եպիսկոպոսը առատաձեռն է եղել անհրաժեշտ սնունդ և հագուստ ապահովելում և օգնել է տղաներից երկուսին ուղարկել ճամբար: Նա հարցազրույց է ունեցել բոլորիս հետ և մեզանից յուրաքանչյուրին օրհնություններ և անհրաժեշտ քաջալերում է տվել: Նա օգնել է ինձ պլանավորել իմ ծախսերը և անել այն, ինչ ես կարող եմ՝ իմ ընտանիքին օգնելու համար:

Մեր տնային ուսուցիչները կանոնավորապես եկել են և նույնիսկ տղաներին օրհնություններ են տվել, երբ նրանք սկսել են նոր ուսումնական տարին:

Մեր ցցի նախագահը և նրա խորհրդականները պարբերաբար հետաքրքրվել են մեզանով՝ ժամանակ տրամադրելով հանդիպել մեզ եկեղեցում, խոսել հեռախոսով, կամ այցելել մեր տուն:

Այս Եկեղեցին ճշմարիտ է, և իմ տղաներն ու ես ապրող ապացույց ենք, որ Աստված սիրում է մեզ և որ «ծխի ընտանիքը» կարող է շատ բան փոխել:

Մեր քահանայության ղեկավարները նպաստել են, որ տղաները ակտիվ մնան եկեղեցում և սկաուտների ծրագրում: Նրանցից մեկը Արծիվ Սկաուտ է և ստանալու է իր չորրորդ մրցանակը այս շաբաթ: Մյուսը Արծիվ է՝ երեք մրցանակներով: Եվ երրորդը հենց այս շաբաթ է հանձնել իր Արծվի թղթերը: Կրտսերը ներգրավված է մինչև տասներկու տարեկանների Սկաուտական ծրագրում:

Մեզ միշտ դիմավորում են սիրող սրտերով և ջերմ ձեռքսեղմումներով: Ցցի և ծխի Քրիստոսանման վերաբերմունքը մեզ օգնել է հաղթահարել դժվարություններ, որը մենք երբեք չէինք կարող պատկերացնել, որ հնարավոր էր:

Կյանքը բարդ է եղել, ... բայց մենք հագնում ենք Աստծո ամբողջ սպառազինությունը, երբ մենք ծնկի ենք գալիս ընտանեկան աղոթքի համար ... , խնդրելով օգնություն և առաջնորդություն, և շնորհակալություն ենք հայտնում ստացած օրհնությունների համար: Ես ամեն օր աղոթում եմ Սուրբ Հոգու մշտական ընկերակցության համար, որ առաջնորդի ինձ, մինչ ես մեծացնում եմ այս տղաներին լինելու միսիոներներ և քաջալերում եմ նրանց հավատարիմ լինել ավետարանին և քահանայությանը, որը նրանք կրում են:

Ես հպարտ եմ, որ կարող եմ ասել, որ ես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եմ: Ես գիտեմ, որ այս եկեղեցին ճշմարիտ է: Ես աջակցում եմ իմ Եկեղեցու ղեկավարներին: Մենք լավ ենք, և ես շնորհակալություն եմ հայտնում բոլորին իրենց սիրո և աղոթքների և ընդունելության համար»:

Ինչ հրաշալի նամակ է դա: Որքան բան է դա ասում այն մասին, թե ինչպես է գործում այս Եկեղեցին և պիտի գործի աշխարհով մեկ: Ես հույսով եմ, որ ամեն կին, ով գտնվում է նմանատիպ պայմաններում, որոնցում ապրում է այս կինը, նմանապես օրհնված է հասկացող և պատրաստակամ եպիսկոպոսով, Սփոփող Միության նախագահով, ով գիտի ինչպես աջակցել, տնային ուսուցիչներով, որոնք գիտեն իրենց պարտավորությունները և ինչպես կատարել այն, և ծխի բազմաթիվ անդամներով, որոնք պատրաստ են ծառայելու ՝ առանց ավելորդ միջամտությունների:

Ես երբեք չեմ հանդիպել այն կնոջը, ում նամակը ես կարդացի: Չնայած նրա հաղորդած կենսուրախ վերաբերմունքին, ես վստահ եմ, որ այնտեղ եղել են շատ դժվարություններ և միայնակություն և, ժամանակ առ ժամանակ, վախ: Ես նկատում եմ, որ նա աշխատում է ապահովելու համար իր կարիքները և իր տղաների կարիքները, ովքեր դեռևս պատանիներ են: Ես կարծում եմ նրա եկամուտը չի բավականացնում, քանի որ նա նշում է, որ եպիսկոպոսը օգնել է նրանց սննդով և հագուստով:

Խորհուրդ տնից դուրս աշխատանքի մասին

Որոշ տարիներ առաջ Նախագահ Բենսոնը ուղերձ հղեց Եկեղեցու կանանց: Նա քաջալերեց նրանց թողնել իրենց աշխատանքը և իրենց անհատական ժամանակը տալ իրենց երեխաներին: Ես հաստատում եմ նրա բռնած դիրքը:

Այնուամենայնիվ, ես հասկանում եմ, ինչպես նա էր հասկանում, որ կան որոշ կանայք (իրականում նրանք անչափ շատ են), ովքեր ստիպված են աշխատել իրենց ընտանիքների կարիքները հոգալու համար: Ձեզ ես ասում եմ, արեք լավագույնը, որ դուք կարող եք: Ես հույսով եմ, որ եթե դուք աշխատում եք լրիվ դրույքով, դուք դա անում եք վստահ լինելու համար, որ հիմնական կարիքները ապահովված են, և ոչ թե պարզապես դուք ցանկանում եք ամեն ինչով ապահովված տուն, թանկարժեք մեքենաներ և այլ ճոխություններ: Ամենամեծ աշխատանքը, որ ցանկացած մայր երբևիցե կանի, կլինի արդարության և ճշմարտության մեջ իր երեխաներին խնամելը, ուսուցանելը, բարձրացնելը, խրախուսելը և մեծացնելը: Ոչ ոք չի կարող պատշաճ կերպով զբաղեցնել նրա տեղը:

Դա գրեթե անհնարին է լինել լիարժեք տնային տնտեսուհի և աշխատել ամբողջ դրույքով: Ես գիտեմ, թե ինչպես են ձեզանից ոմանք տառապում այս հարցի շուրջ որոշումներ կայացնելիս: Ես կրկնում եմ, արեք լավագույնը, որ դուք կարող եք: Դուք գիտեք ձեր պայմանները, և ես գիտեմ, որ դուք լրջորեն անհանգստացած եք ձեր երեխաների բարեկեցությամբ: Ձեզանից յուրաքանչյուրն ունի եպիսկոպոս, ով ձեզ խորհուրդ կտա և կաջակցի ձեզ: Եթե դուք զգում եք, որ պիտի խոսեք հասկացող մի կնոջ հետ, մի հապաղեք կապվել ձեր Սփոփող Միության նախագահի հետ:

Այս եկեղեցու մայրերին, յուրաքանչյուր մոր, ով այստեղ է այս երեկո, ես ուզում եմ ասել, որ տարիներ անց, դուք անչափ երախտապարտ կլինեք այն բանի համար, ինչ դուք արել եք ձեր երեխաների կյանքը արդարության և բարության, ազնվության և հավատքի ուղղությամբ զարգացնելու համար:

Խորհուրդ միայնակ ծնողներին

Ձեզ, ովքեր միայնակ ծնողներ եք, ես ասում եմ, որ շատ ձեռքեր պատրաստ են ձեզ օգնելու համար: Տերն անտարբեր չէ ձեր նկատմամբ: Եվ ոչ էլ Իր Եկեղեցին:

Թող Նա օրհնի ձեզ, իմ սիրելի քույրեր, ովքեր գտնվում եք միայնակ ծնող լինելու իրավիճակում: Թող որ դուք ունենաք առողջություն, ուժ, եռանդ՝ կրելու ծանր բեռը, որ ձերն է: Թող որ դուք ունենաք սիրող ընկերներ և ծանոթներ՝ ձեր դժվար պահին ձեզ բարձրացնելու համար: Դուք գիտեք աղոթքի զորությունը, ինչպես հավանաբար քչերը գիտեն: Ձեզանից շատերը շատ ժամանակ են անցկացնում իրենց ծնկների վրա, փնտրելով ձեր Երկնային Հորը, մինչ

արցունքները վազում են ձեր այտերի վրայով: Խնդրում եմ, իմացեք, որ մենք նույնպես աղոթում ենք ձեզ համար:

Այն ամենի հետ մեկտեղ, ինչ դուք պետք է անեք, ձեզ նաև խնդրում են ծառայել Եկեղեցում: Ձեր եպիսկոպոսը ձեզ չի խնդրի անել որևէ բան, որը ձեր հնարավորություններից վեր լինի: Եվ երբ դուք այսպես ծառայեք, նոր եռանդ կավելանա ձեր կյանքում: Դուք կգտնեք նոր և հետաքրքիր զգացողություններ: Դուք կգտնեք ընկերություն և շփումներ: Կավելանա ձեր գիտելիքը, հասկացողությունը, իմաստությունը և ծառայելու ունակությունը: Դուք կդառնաք ավելի լավ մայրեր՝ Տիրոջ գործում ձեր կատարած ծառայության միջոցով:

Տարիքով կանանց

Վերջում ես ուզում եմ մի քանի խոսք ասել ձեզ, տարիքով կանայք, որոնցից շատերը այրի են: Դուք մեծ արժեքներ ունեք: Դուք անցել եք կյանքի փոթորիկների միջով: Դուք դիմացել եք այն դժվարություններին, որոնց այժմ հանդիպում են ձեր ավելի երիտասարդ քույրերը: Դուք հասուն եք իմաստության, հասկացողության, կարեկցանքի, սիրո և ծառայության մեջ:

Որոշ գեղեցկություն կա, որ փայլում է ձեր դեմքին: Դա այն գեղեցկությունն է, որ գալիս է խաղաղությունից: Դեռևս կարող է դժվարություն լինել, բայց կա հասուն իմաստություն դրան դիմակայելու համար: Կան առողջական խնդիրներ, բայց կա որոշակի հանգստություն դրանց վերաբերյալ: Անցյալի վատ հիշողությունները մեծամասամբ մոռացվել են, մինչդեռ լավ հիշողությունները վերադառնում են և կյանքում բերում քաղցր ու գոհացնող հարստություն:

Դուք սովորել եք սիրել սուրբ գրությունները, և դուք կարդում եք դրանք: Ձեր աղոթքները մեծամասամբ գոհաբանական աղոթքներ են: Ձեր շնորհավորական մաղթանքները բարության խոսքեր են: Ձեր ընկերությունը ամրություն է, որի վրա կարող են հենվել ուրիշները:

Ի~նչ հարստություն են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կանայք: Դուք սիրում եք այս Եկեղեցին. դուք ընդունում եք դրա վարդապետությունը. դուք պատվում եք ձեր տեղը դրա կազմակերպությունում. դուք բերում եք լույս և ուժ և գեղեցկություն դրա ծխական համայնքներին: Որքան երախտապարտ ենք մենք ձեզ: Որքան սիրված, հարգված և պատվելի եք դուք:

Ես ողջունում եմ իմ սիրելի ընկերակցին: Շուտով կլրանա 60 տարին, որ մենք դուրս եկանք Սոլթ Լեյքի Տաճարից միմյանց հանդեպ սիրով լցված որպես ամուսին և կին՝: Այդ սերն ամրացել է այս բոլոր տարիների ընթացքում: Մեր ամուսնության տարիներին մենք հանդիպել ենք բազում խնդիրների: Ինչ-որ ձևով, Տիրոջ օրհնություններով, մենք հաղթահարել ենք դրանք բոլորը:

Ֆիզիկապես ավելի դժվար է դառնում բարձր և ուղիղ կանգնելը, ինչ մենք անում էինք մեր ավելի երիտասարդ տարիներին: Անկախ դրանից,մենք դեռևս ունենք միմյանց և մենք դեռևս միասին ենք կանգնում, չնայած, որ մենք կռանում ենք մի փոքր: Եվ երբ գա բաժանման ժամը, անչափ ցավալի կլինի դա, բայց կլինի նաև մխիթարություն, որը կգա վստահությունից, որ նա իմն է և ես նրանը՝ հավերժության մեջ, որը սպասում է մեզ:

Երախտագիտություն քույրերի հանդեպ

Եվ ուստի, իմ սիրելի քույրեր, խնդրում եմ, իմացեք, թե ինչքան երախտապարտ ենք մենք ձեզ: Դուք մեզ ամբողջություն եք բերում: Դուք մեծ ուժ ունեք: Արժանապատվությամբ և մեծ հմտությամբ դուք առաջ եք տանում Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց և Երեխաների Խմբի ակնառու ծրագրերը: Դուք սովորեցնում եք Կիրակնօրյա Դպրոցում: Մենք քայլում ենք ձեր կողքով որպես ձեր զուգընկերներ և ձեր եղբայրներ՝ հարգանքով և սիրով, պատվով և մեծ հիացմունքով: Տիրոջ հանձնարարությամբ է, որ տղամարդիկ Իր Եկեղեցում պետք է կրեն քահանայությունը: Այդ Նա է, որ ձեզ տվել է ձեր ընդունակությունները՝ լրացնելու համար այս մեծ և հրաշալի կազմակերպությունը, որը Աստծո Եկեղեցին և թագավորությունն է: Ամբողջ աշխարհի առաջ ես բերում եմ վկայություն ձեր արժեքի, ձեր շնորհի և բարության, ձեր ակնառու հմտությունների և հսկայական օժանդակությունների մասին, և ես խնդրում եմ երկնքի բոլոր օրհնությունները ձեր վրա, Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԾՐԱԳՐՈՎ ԱՊՐԵԼՈՒ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

Տասներկու Առաքյալների Քվորումից

Conference Report, Oct. 1996, 100–104; կամ Ensign, Nov. 1996, 73–75

Աստծո փրկության մեծ ծրագիրը

Սուրբ գրություններն արձանագրում են. «Եվ ես՝ Աստվածս, ստեղծեցի մարդուն ... արու և էգ ստեղծեցի նրանց»: 1 Սա կատարվեց հոգեպես ձեր նախաերկրային գոյության ժամանակ, երբ դուք ապրում էիք ձեր Երկնային Հոր ներկայությամբ: Ձեր սեռը գոյություն ուներ մինչև ձեր աշխարհ գալը: Դուք ընտրեցիք ունենալ այս աշխարհի փորձառությունը որպես ձեր համար Նրա ծրագրի մի մաս: Մարգարեները այն կոչում են «ողորմության ծրագիր», 2 «ազատման հավերժական ծրագիր», 3 «փրկության ծրագիր», 4 և,

այո, «երջանկության մեծ ծրագիր»: 5 Ձեզ սովորեցրել էին այս ծրագիրը մինչև ձեր այս աշխարհ գալը և այնտեղ հրճվել էիք դրան մասնակցելու ձեր արտոնության համար:

Ծրագրին հնազանդվելը այս կյանքում լիարժեք ուրախության և վարագույրի մյուս կողմում հավերժական երջանկության շարունակության համար է պահանջվում: Նրա երջանկության ծրագրում հենակետային նշանակություն ունի ազատությունը՝անձնական ընտրության իրավունքը: Հիմնարար է նաև արարման սուրբ արտոնության կիրառումը օրինական ամուսնության սահմաններում: Ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև առանցքային է Նրա հավերժական ծրագրում: Ընտանիքը հաստատված է Աստծո կողմից: Որպես ամուսին և կին, դուք պարտականություն ունեք բերել երեխաներ և նրանց հոգևոր, էմոցիոնալ և ֆիզիկական դաստիարակություն և ուսուցում տալ:

Սատանան նույնպես ծրագիր ունի: Դա կործանման նենգ, չար, ճկուն ծրագիր է: 8 Նրա նպատակն է գերի վերցնել Երկնային Հոր զավակներին և ամեն հնարավոր միջոցներով խափանել երջանկության մեծ ծրագիրը:

Ամուսնության կարևորությունն Աստծո ծրագրում

Մեր Երկնային Հայրը Իր որդիներին և դուստրերին օժտել է յուրահատուկ գծերով, հարմարեցրած հատկապես նրանց անհատական պատասխանատվություններին, երբ նրանք իրականացնում են Նրա ծրագիրը: Նրա ծրագրին հետևելը պահանջում է, որ դուք անեք այն բաները, որոնք Նա սպասում է ձեզանից՝ որպես որդի կամ դուստր, ամուսին կամ կին: Այդ դերերը տարբեր են, բայց ամբողջապես համատեղելի: Տիրոջ ծրագրում պահանջվում են երկուսը՝տղամարդ և կինամբողջություն կազմելու համար: Իսկապես, ամուսինը և կինը երկու նույնանման կեսեր չեն, այլ ունակությունների և առանձնահատկությունների զուգակցվող տարբեր, աստվածայնորեն նախասահմանված համակցություն:

Ամուսնությունը թույլ է տալիս, որ այս տարբեր առանձնահատկությունները միանան և դառնան մեկ՝միասնության մեջ,օրհնելու ամուսնուն և կնոջը, նրանց երեխաներին և թոռներին: Կյանքում ամենամեծ երջանկության և արդյունավետության համար ամուսինը և կինը երկուսն էլ պետք են: Նրանց ջանքերը գործում են միասին և լրացնումմիմյանց: Յուրաքանչյուրն ունեն անհատական գծեր, որոնք լավագույնս համապատասխանում են այն դերին, որը Տերը նախասահմանել է երջանկության համար՝ որպես տղամարդ կամ կին: Երբ կիրառվում են այնպես, ինչպես Տերն է նախատեսել, այդ ունակությունները թույլ են տալիս ամուսնացած զույգին մտածել, գործել և ուրախանալ որպես մեկ՝դժվարությունների առաջ կանգնել միասին և հաղթահարել դրանք որպես մեկ, աճել սիրո և հասկացողության մեջ, և տաճարային արարողությունների միջոցով կապվել որպես մեկ ամբողջություն՝ հավերժորեն: Սա է ծրագիրը:

Սովորեք Ադամի և Եվայի կյանքից

Դուք կարող եք սովորել ինչպես լինել ավելի արդյունավետ ծնողներ ուսումնասիրելով Ադամի և Եվայի կյանքը: Ադամը Միքայելն էր, ով օգնեց ստեղծել աշխարհը՝փառահեղ, հոյակապ անհատ: Եվան նրա նման մեկն էր՝լիարժեք, մեծապես աջակցող գործընկեր: Նրանց պտղից ճաշակելուց հետո Տերը խոսեց նրանց հետ: Նրանց մեկնաբանությունները բացահայտում են տղամարդու և կնոջ որոշ տարբեր առանձնահատկություններ: Ադամին Նա ասաց. «Մի՞թե կերել ես այն ծառից, որից պատվիրեցի, որ չուտես»:9 Այժմ, Ադամի պատասխանը դրսևորում էառանձնահատկությունը մի մարդու, ով ձգտում է հանդես գալ որպես որքան հնարավոր է ճշտին մոտ մարդ: Ադամը պատասխանեց. «Կինը, որին տվեցիր ինձ, և պատվիրեցիր, որ մնա ինձ հետ, նա ինձ տվեց այն ծառի պտղից, և ես կերա»: 10 Եվ Տերը ասաց Եվային. «Այս ի՞նչ է, որ դու արեցիր»: 11 Եվայի պատասխանը կնոջն է առանձնահատուկ: Նրա պատասխանը շատ պարզ էր և անկեղծ. «Օձն ինձ խաբեց, և ես կերա»: 12

Հետո «Ադամն օրհնեց Աստծուն ... և սկսեց մարգարեանալ երկրի բոլոր ընտանիքների վերաբերյալ՝ ասելով. Օրհնյալ է Աստծո անունը, քանզի *իմ* օրհնազանցության հետևանքով *աչքերս* բացվել են և այս կյանքում *ես* ուրախություն կունենամ, և կրկին, մարմնի մեջ, *ես* կտեսնեմ Աստծուն»: 13 Ադամը մտածում էր իր պարտականությունների մասին: Նա փորձում էր մի գծի վրա դնել իր արածը Տիրոջ ցանկությունների հետ: Եվան ասաց. «Եթե չլիներ *մեր* օրհնազանցությունը, *մենք* երբեք սերունդ չէինք ունենա, և երբեք չէինք գիտենա բարին և չարը, և *մեր* փրկագնման ուրախությունը, և հավերժական կյանքը, որն Աստված տալիս է *բոլոր* հնազանդներին»: 14 Եվայի պատասխանը կնոջ առանձնահատկություն է: Նա ներառում էր բոլորին, ուզում էր վստահ լինիլ, որ յուրաքանչյուրը հաշվի է առնված: Մի պատասխանը ավելի ճիշտ չէր, քան մյուսը: Երկու հեռանկարներ առաջ եկան տղամարդկանց և կանանց ներհատուկ գծերից: Տերը նախատեսել է, որ մենք կօգտագործենք այդ տարբերությունները իրագործելու երջանկության, անձնական աճի և զարգացման Իր ծրագիրը: Միասին խորհրդակցելով նրանք հասան ճշմարտության ավելի ցայտուն, ավելի ճիշտ հասկացողության:

Նրանք միասին աշխատեցին: 15 Նրանք հնազանդվեցին երեխաներ ունենալու պատվիրանին: 16 Նրանք գիտեին երջանկության ծրագիրը և հետևում էին դրան, չնայած ժամանակ առ ժամանակ դրա հետևանքով նրանք հաղթվում էին նեղության և դժվարության:

Նրանց պատվիրվել էր. «Դու պետք է ապաշխարես և կանչես առ Աստված առհավետ՝ Որդու անունով»: 17 Եվ նրանք այդպես էլ անում էին: Հետագայում նրանք սովորեցրեցին

իրենց զավակներին երջանկության ծրագիրը: 18 Նրանք միասին աշխատում էին հաղթահարել դժվարությունները, 19 և նրանք «չդադարեցին կանչել առ Աստված»: 20

Քանի որ Ադամն ու Եվան հնազանդ էին, Սուրբ Հոգին առաջնորդում էր նրանց: Որպես ամուսին և կին, դուք կարող եք առաջնորդություն ստանալ ձեր կյանքում, արժանի լինելով Սուրբ Հոգու պարգևին, Փրկչի ուսմունքներին հնազանդվելու միջոցով:

Կնոջ և մոր դերերը

Տեղյակ եղեք աննշան ճանապարհների մասին, որոնք Սատանան օգտագործում է Աստծո ծրագրից21 և ճշմարիտ երջանկությունից ձեզ հեռացնելու համար: Սատանայի ամենաարդյունավետ միջոցներից մեկը տանը կնոջ և մոր դերը նվաստացնելն է: Սա գրոհ է Աստծո ծրագրի հենց սրտի վրա, որը նպաստում է ամուսնու և կնոջ միջև սիրուն և նախատեսում է երեխաներին մեծացնել համերաշխ, խաղաղ, գնահատող և աջակցող միջավայրում: Բռնության մեծամասնությունը, որ այսօր աշխարհում հասնում է մեծ չափերի, թուլացող տների արդյունք է: Կառավարությունը և հասարակական ծրագրերը արդյունավետ կերպով չեն կարող դա ուղղել, ոչ էլ դպրոցների և եկեղեցիների ամենալավ ջանքերը կարող են լրացնել տանը կարեկցող մոր և կնոջ քնքուշ հոգածության պակասը:

Այս առավոտ Նախագահ Հինքլին խոսեց տանը մոր կարևորության մասին: Ուսումնասիրեք նրա ուղերձը: Որպես Տիրոջ կողմից առաջնորդվող մայր դուք ճշմարտության քող եք գցում ձեր երեխաների վրա հոգատար ուսուցման և արժանի օրինակի միջոցով: Դուք ներշնչում եք ազնվության, առ Աստված հավատքի, պարտքի, ուրիշների հանդեպ հարգանքի, բարության, ինքնավստահության և աջակցելու, սովորելու և տալու ցանկության գծեր ձեզ վստահող երեխաների մտքերում և սրտերում: Ոչ մի մանկապարտեզ չի կարող սա անել: Դա ձեր սուրբ իրավունքն ու արտոնությունն է:

Անշուշտ, որպես կին դուք կարող է աշխատավայրում բացառիկ հաջողություններ ունենալ, բայց արդյոք դա՞ է աստվածայնորեն նշանակված տաղանդների և կանացի գծերի լավագույն օգտագործումը: Որպես ամուսին մի քաջալերեք ձեր կնոջը աշխատանքի գնալ, որպեսզի ձեր աստվածայնորեն նշանակված պարտավորությունում օգնի ձեզ ընտանիքի համար միջոցներ հայթհայթել, եթե հնարավոր է, որ դրանից խուսափեք: Ինչպես խորհուրդ են տվել մարգարեները, որքան հնարավոր է Տիրոջ օգնությամբ որպես ծնողներ միասին աշխատեք Մորը տանը պահելու համար: 22 Ձեր ներկայությունն այնտեղ կամրացնի ձեր երեխաների ինքնավստահությունը և կնվազեցնի էմոցիոնալ խնդիրների հավանականությունները: Դեռ ավելին, երբ դուք սովորեցնում եք ճշմարտությունը խոսքով և օրինակով, այդ երեխաները կհասկանան, թե ով են իրենք և ինչ կարող են նրանք ստանալ որպես Երկնային Հոր աստվածային զավակներ:

Օրհնությունները կտրվեն Տիրոջ ժամանակին

Ես գիտեմ, ես խոսել եմ կատարելատիպի մասին, և դուք կարող է վշտանաք, քանի որ ձեր կյանքն այժմ չի կարող հարմարվել այդ կաղապարին: Ես խոստանում եմ ձեզ, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հնազանդության և շարունակվող հավատքի և երջանկության ողջ ծրագրի հասկացողության միջոցով, եթե նույնիսկ դրա կարևոր մասերն այժմ չեն իրականացել ձեր կյանքում, դրանք ձերը կլինեն Տիրոջը հարմար ժամանակին: Ես նաև խոստանում եմ ձեզ, որ դուք կարող եք ունենալ զգալի աճ և երջանկություն այժմ՝ ձեր ներկա պայմաններում: Որպես Աստծո դուստր կամ որդի ապրեք ծրագրի որ մասով որ կարող եք՝ ձեր կարողության լավագույն չափով:

Կին և մայր լինելու ձեր ցանկությունը գուցե չունենա իր ամբողջական իրականացումն այստեղ, բայց այն կիրականանա Իր ժամանակին, եթե դուք ապրեք դրան արժանանալու հավատքով և հնազանդությամբ: 23 Մի գայթակղվեք մեր Աստծո ծրագրից 24 դեպի աշխարհի ճանապարհները, որտեղ մայրությունը նվաստացվում է, կանացիություն չի խրախուսվում և Աստծո կողմից հաստատված կնոջ և մոր դերը ծաղրի է ենթարկվում: Թողեք աշխարհը գնա իր ճանապարհով: Դուք հետևում եք Տիրոջ ճշմարիտ, հավերժական հաջողության և ամենալիարժեք երջանկության ծրագրին մեծագույն չափով: Խոստացված օրհնությունների պակասը, որոնց համար դուք որակավորվում եք, ամբողջությամբ կշտկվի այս կամ հաջորդ կյանքում: 25

Երախտագիտություն կանանց էության և գործի համար

Ես հաճախ հարցազրույց եմ ունենում քահանայության ուժեղ ղեկավարների հետ: Երբ այս տղամարդիկ խոսում են իրենց կանանց մասին, դա անում են խորը քնքշությամբ և բացահայտ երախտագիտությամբ: Հաճախ արցունքներ են հորդում: Նրանց մեկնաբանությունները ներառում են «Նա ավելի հոգևոր, մաքուր և նվիրված է, քան ես», «Նա ինձ դրդում է լինել ավելի լավ անձնավորություն», «Նա իմ կյանքի ուժն է» և «Ես չէի կարող դա անել առանց նրա»: Որպես կին, խնդրում ենք, մի դատեք որքան արժանի, անհրաժեշտ և սիրված եք դուք՝ մեր իսկական զգացմունքներն արտահայտելու մեր աղքատիկ ունակությամբ: Աստծո կողմից հաստատված ձեր անվարձահատույց նվիրվելու գիծը ձեզ տանում է ձեր սեփական արժեքի թերագնահատմանը:

Ես խոնարհաբար շնորհակալություն եմ հայտնում մեր Երկնային Հորը Իր դուստրերի համար, ձեր, որ հոժար էիք գալ աշխարհ՝ ապրելու այսպիսի անորոշ պայմաններում:

Տղամարդկանց մեծամասնությունը չէր կարողանա տանել անորոշությունները, որոնցում ձեզանից պահանջվում է ապրել: Հասարակական սովորույթները պահանջում են, որ դուք սպասեք, մինչև ձեզ ամուսնության առաջարկ արվի: Ձեզանից ակնկալվում է ձեր ամուսնու հետ գնալ այնտեղ, որտեղ նրա աշխատանքը կամ կոչումը տանում է նրան: Ձեր պայմանները և շրջակայքը որոշվում է ըստ նրա ապրուստը հոգալու կարողության, լինի դա շատ չնչին կամ հակառակը: Դուք դնում եք ձեր կյանքը Աստծո ձեռքերի մեջ ամեն անգամ, երբ դուք երեխա եք լույս աշխարհ բերում: Տղամարդիկ նման զոհաբերություն չեն կատարում: Երեխաներ մեծացնելու և ամուսնու համար հոգ տանելու օրհնությունը հաճախ միախառնվում է բազում առօրյա խնդիրների հետ: Բայց դուք բոլոր այս բաներն անում եք պատրաստակամորեն, որովհետև դուք կին եք: Սովորաբար դուք չեք էլ պատկերացնում, թե դուք իրականում որքան հրաշալի և հմուտ եք, որքան անչափ գնահատված և սիրված, կամ որքան անհետաձգելիորեն անհրաժեշտ, քանի որ տղամարդկանց մեծամասնությունը ձեզ չեն ասում այս ամենի մասին լիովին և այնքան հաճախ, որքան անհրաժեշտ է:

Տիրոջ ծրագրում պահանջվում են երկուսը՝ տղամարդ և կինամբողջություն կազմելու համար:

Ինչպես հասնել երջանկության

Ինչպե՞ս դուք կարող եք ստանալ ամենամեծ երջանկությունն ու օրհնությունները այս աշխարհի փորձառություններից:

- Սովորեք երջանկության մեծ ծրագրի վարդապետական հիմքը սուրբ գրություններն ուսումնասիրելու միջոցով, դրանց բովանդակության շուրջ խորհելով և աղոթելով, որ հասկանաք դրանք: Ուշադրությամբ ուսումնասիրեք և կիրառեք Առաջին Նախագահության և Տասներկուսի ընտանիքի վերաբերյալ հայտարարությունը: 26 Այն ոգեշնչված է Տիրոջ կողմից:
- Ականջ դրեք ներկայիս և անցյալի մարգրեների ձայնին: Նրանց հայտարարությունները ոգեշնչված են: Դուք կարող եք վավերացնել այդ խորհուրդը ձեր սեփական մտքում և սրտում այդ մասին աղոթելով, թե ինչպես է այն վերաբերվում ձեր հատուկ պայմաններին: Խնդրեք Տիրոջը հաստատել ձեր ընտրությունները և դրանց համար պատասխանատվություն կրեք:
- Հնազանդվեք ներքին զգացողություններին, որոնք գալիս են որպես հուշումներ Սուրբ Հոգու կողմից: Այդ զգացողություններն առաջանում են ձեր արդար մտքերից և գործերից և Տիրոջ կամքը փնտրելու և դրանով ապրելու ձեր վճռականությունից:
- Երբ անհրաժեշտություն կա, խորհուրդ և առաջնորդություն խնդրեք ծնողներից և ձեր քահանայության ղեկավարներից:

Մի հրաշալի մայր գրել է. «Ինչպե՞ս են կին պիոներները ... արձագանքել իրենց ժամանակների դժվարություններին: Նրանք *ականջ են դրել* իրենց մարգարեի ձայնին և հետևել են *նրան*, քանի որ նրանք *գիտեին*, որ նա ասում էր Տիրոջ կամքը: Նրանք դիմակայեցին այդ դժվարություններին և հնձեցին մեծ օրհնություններ իրենց հավատքի և հնազանդության արդյունքում: Նրանց առաջնահերթությունները ապահովությունը, հարմարավետ տները կամ հեշտ կյանքը չէին: ... Ոչ մի զոհաբերություն նրանց համար չափից ավելի մեծ չէր՝ հանուն իրենց թանկագին ամուսինների և երեխաների կատարելու համար»: 27

Բնականաբար ես չգիտեմ, թե ինչ է նշանակում կին լինելը, բայց ես գիտեմ, թե ինչ է նշանակում մեկին իմ ողջ սրտով և հոգով սիրելը: Ես մշտապես մեծ երախտագիտություն եմ հայտնում Տիրոջը այն անվերջ օրհնությունների համար, որոնք թափվում են մեր երեխաների վրա և առատորեն իմ վրա՝ Նրա թանկարժեք դուստրերից մեկի կյանքի պատճառով: Ես ուզում եմ, որ այն երջանկությունը, որը մենք ենք գտել երկուսով, ձերը լինի: Որքան դուք անձամբ ավելի եք կառչում երկրի վրա ձեր համար Նրա ծրագրից, այնքան ավելի մեծ կլինի ձեր երջանկությունը, զոհունակությունը և զարգացումը. ավելի որակված դուք կլինեք ստանալու պարգևները, որոնք Նա խոստացել էր օրհնության դիմաց: Սա ես վկայում եմ, քանի որ Փրկիչն ապրում է և Նա սիրում է ձեզ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. Մովսես 2.27: Տես նաև Մովսես 2.28, 3.5: James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints*, 6 vols. (1965–75), 4:303; James E. Talmage, *Millennial Star*, 24 Aug. 1922, 539.
2. Ալմա 42.15:
3. 2 Նեփի 11.5:
4. Մովսոս 6.62:
5. Ալմա 42.8:
6. Տես «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Ensign*, Nov. 1995, 102.
7. Տես «Հայտարարություն», *Ensign*, Nov. 1995, 102.
8. Տես 2 Նեփի 9.8—9, Ալմա 12.4—5, Հելաման 2.8, 3 Նեփի 1.16, Վարդապետություն և Ուխտեր 10.12, 23:
9. Մովսես 4.17:
10. Մովսես 4.18:
11. Մովսես 4.19:

12. Մովսես 4.19:
13. Մովսես 5.10, շեղագրերն ավելացված են:
14. Մովսես 5.11, շեղագրերն ավելացված են:
15. Տես Մովսես 5.1:
16. Տես Մովսես 5.2:
17. Մովսես 5.8:
18. Տես Մովսես 5.12:
19. Տես Մովսես 5.13:
20. Մովսես 5.16:
21. 2 Նեփի 9.13:
22. Տես Սպենսեր Վ. Քիմբալ, Սան Անտոնիո հավաք, դեկտեմբերի 3-ին, 1977թ., 32:
23. Տես Gordon B. Hinckley, in Conference Report, Apr. 1991, 94; կամ *Ensign,* May 1991, 71:
24. Տես 2 Նեփի 9.13:
25. Տես Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 2:76.
26. Տես «Հայտարարություն», *Ensign,* Nov. 1995, 102:
27. Ջենին Վ. Սքոթ, ԲՅՀ Կանանց Համաժողով, Ապրիլի 6, 1989թ., 1:

ՄԵՆՔ ԱՍՏԾՈ ԿԱՆԱՅՔ ԵՆՔ

Քույր Շերի Լ. Դյու

Ստիպող Միության Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ensign, Nov. 1999, 97–99

Վերջերս մասնագիտական հանձնարարությունը պահանջում էր, որ ես ճանապարհորդեի երկրից դուրս: Բայց ես այնպիսի վատ նախազգացում ունեի ճանապարհորդության հետ կապված, որ նախքան մեկնելը ես քահանայության օրհնություն խնդրեցի: Ես նախազգուշացվեցի, որ հակառակորդը կփորձի խափանել իմ առաքելությունը և որ ֆիզիկական և հոգևոր վտանգ է սպասվում: Ինձ նաև խորհուրդ տվեցին, որ սա չպիտի լինի տեսարժան վայրեր դիտելու կամ գնումներ կատարելու ճանապարհորդություն և որ եթե ես կենտրոնանայի իմ հանձնարարությունների վրա և փնտրեի Հոգու առաջնորդությունը, ես ապահով տուն կվերադառնայի:

Այսպիսով, նախազգուշացումը զգաստացնող էր: Բայց մինչ ես շարունակում էի խնդրել առաջնորդություն և պաշտպանություն ճանապարհի ամեն քայլափոխին, ես հասկացա, որ իմ փորձառությունը այդքան էլ յուրահատուկ չէր: Չէ՞ր կարող մեր Հայրը ասել ձեզ և ինձ, երբ մենք հեռանում էինք Նրա ներկայությունից. «Հակառակորդը կփորձի խափանել ձեր առաքելությունը, և դուք կհանդիպեք հոգևոր և ֆիզիկական վտանգների: Բայց եթե դուք կենտրոնանաք ձեր հանձնարարությունների վրա, եթե դուք ականջ դնեք իմ ձայնին, և եթե դուք մերժեք վերածել մահկանացու կյանքը տեսարժան վայրերի դիտման կամ գնումներ կատարելու ուղևորության, դուք ապահով տուն կվերադառնաք»:

Հակառակորդը մեծ հաճույք է ստանում, երբ մենք գործում ենք որպես տեսարժան վայրեր դիտողներ, ի նկատի ունենալով նրանց, ովքեր ավելի խոսքը լսողներ են, քան անողներ (տես Հակոբոս Ա.22), կամ գնորդներ, ի նկատի ունենալով նրանց, ովքեր մտահոգված են աշխարհի ունայն բաներով, որոնք շնչահեղձ են անում մեր հոգիները: Սատանան գայթակղում է մեզ ժամանակավոր հաճույքներով և մտահոգություններով՝մեր բանկային հաշիվներով, հագուստեղենով, նույնիսկ մեր գոտկատեղի չափսերով,քանզի նա գիտի, որ որտեղ որ մեր գանձն է, այնտեղ կլինեն նաև մեր սրտերը (տես Մատթեոս Զ.21): Դժբախտաբար հեշտ է թույլ տալ հակառակորդի գայթակղությունների կուրացնող լույսին շեղել մեզ Քրիստոսի լույսից: «Որովհետեւ ինչ օգուտ ունի մարդ, որ բոլոր աշխարհքն ստանայ եւ իր անձը կորցնէ» (Մատթեոս ԺԶ.26):

Մարգարեները մեզ խրատել են թողնել աշխարհը և մեր սրտերը դարձնել դեպի Հիսուս Քրիստոսը, ով խոստացել է մեզ. «Այս աշխարհում ձեր ուրախությունը լիակատար *չէ,* բայց *ինձանով* ձեր ուրախությունը լիակատար է» (ՎԱՈՒ 101.36, շեղագրումներն ավելացված են): Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Եթե մենք համառորեն շարունակենք ծախսել մեր ողջ ժամանակն ու միջոցները կառուցելու ... աշխարհիկ թագավորություն, դա կլինի ճիշտ այն, ինչը մենք կժառանգենք» (“The False Gods We Worship,” *Ensign,* June 1976, 6): Որքա՞ն հաճախ ենք մենք այնքան կենտրոնանում այսպես կոչված լավ կյանքի ձգտելու վրա, որ մենք մեր տեսադաշտից կորցնում ենք հավերժական կյանքը: Դա ճակատագրական մեկ ամանի ապուրով մեր անդրանիկությունը ծախելու հոգևոր համարժեքն է:

Տերը հայտնել է միջոցը այսպիսի հոգևոր աղետի դեմ, երբ Նա խորհուրդ է տվել Էմմա Սմիթին՝ ասելով. «մի կողմ պետք է դնես այս աշխարհի բաները, և ավելի լավ բաների ձգտես» (ՎԱՈՒ 25.10): Եվ Քրիստոսը տվեց ուղին՝ մինչև Գեթսեմանին հայտարարելով. «Ես *յաղթել* եմ աշխարհքին» (Հովհաննես ԺԶ.33, շեղագիրն ավելացված է): Միակ ճանապարհը, որով *մենք* կարող ենք հաղթել աշխարհին, Քրիստոսի մոտ գալն է: Եվ Քրիստոսի մոտ գալը նշանակում է հեռու մնալ աշխարհից: Դա

նշանակում է Քրիստոսին և միայն Քրիստոսին դնել մեր կյանքի կենտրոնում, որպեսզի այսպիսով մարդկային սնափառություններն ու փիլիսոփայությունները կորցնեն իրենց կախվածություն առաջացնող գրավչությունը: Սատանան *է* Բաբելոնի աստվածը, կամ այս աշխարհի: Քրիստոսը Իսրայելի Աստվածն է, և Նրա Քավությունը մեզ զորություն է տալիս հաղթել աշխարհին: «Եթե դուք ակնկալում եք փառք, խելք և անվերջ կյանք», ասել է Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը, *«թույլ տվեք աշխարհին հեռանալ»* (*Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* [1998], 243; շեղագիրն ավելացված է):

Որպես Սիոնի քույրեր մենք կարող ենք արգելք լինել ընտանիքների և առաքինության դեմ հակառակորդի դավադրությունների համար: Կասկած չկա, որ նա գայթակղում է մեզ ընտրել աշխարհիկ հաճույքներ, և ոչ թե փնտրել հավերժական փառք: Վեց երեխաների 45 տարեկան մայրը վերջերս ինձ ասաց, որ երբ նա դադարեց խորամուխ լինել թերթերի մեջ, որոնք անհանգստացնում էին նրան պատկերներով, թե ինչ տեսք պետք է ունենային նրա տունն ու հագուստեղենը, նա սկսեց ավելի խաղաղ զգալ իրեն: Նա ասում էր. «Ես կարող է թմբլիկ եմ, ալեհեր և կնճռոտ, բայց ես Աստծո թմբլիկ, ալեհեր և կնճռոտ դուստրն եմ, ով գիտի ինձ և սիրում է ինձ»:

Սփոփող միությունը կարող է օգնել մեզ շրջվել աշխարհից, քանի որ դրա նպատակն է օգնել քույրերին և նրանց ընտանիքներին գալ դեպի Քրիստոս: Այդ հոգով ես միանում եմ Քույր Սմութին և Քույր Ջենսենին՝ հայտարարելով, թե ով ենք մենք և ուրախանում Սփոփող Միության նպատակի հայտարարված բարեփոխումներով: Մենք այլևս ժամանակ չունենք ծախսել մեր եռանդը որևէ բանի վրա, որը մեզ և մեր ընտանիքներին չի առաջնորդում դեպի Քրիստոս: Այն Սփոփող Միության համար փորձաքար է այնպես, ինչպես մեր կյանքի համար: Գալիք օրերում մակերեսային նվիրումը Քրիստոսին մեզ չի փրկի:

Երբ ես երիտասարդ աղջիկ էի, ես տեսել եմ նվիրում իմ տատիկի մեջ, որն օգնում էր պապիկին աշխատեցնել տափաստանի մեր Կանզասի ընդարձակ ագարակը: Ինչորոնվ ձևով նրանք ազատվել էին փոթորիկից, Դեպրեսիայից և պտտահողմերից, որոնք ահաբեկում են Մեծ Հարթավայրերը: Ես հաճախ եմ մտածել, թե ինչպես է տատիկը համբերությամբ տարել աղքատիկ եկամուտի և դժվար աշխատանքի տարիները և ինչպես է նա շարունակել ապրել, երբ նրա ավագ որդին մահացավ դժբախտ պատահարից: Տատիկի կյանքը հեշտ չի եղել: Բայց դուք գիտե՞ք, թե ես ամենաշատը ինչ եմ հիշում նրա մասին: Նրա լիարժեք ուրախությունը ավետարանում: Նա երբեք ավելի երջանիկ չէր, քան երբ նա աշխատում էր ընտանեկան պատմության վրա կամ սովորեցնում՝ իր սուրբ գրությունները ձեռքին: Տատիկը մի կողմ էր դրել այս աշխարհի բաները՝ ավելի լավ բաների ձգտելու համար:

Աշխարհի համար իմ տատիկը սովորական կին էր: Բայց ինձ համար նա ներկայացնում է *այս* դարի չգովաբանված հերոսուհիներին, ովքեր հասան իրենց նախաերկրային խոստումներին և հավատքի հիմք թողեցին, որի վրա մենք կարող ենք կառուցել: Տատիկը կատարյալ չէր, բայց նա Աստծո կին էր: Այժմ ձեր և իմ հերթն է առաջ տանել դրոշը դեպի հաջորդ դարաժրջան: *Մենք աշխարհի կանայք չենք: Մենք Աստծո կանայք ենք:* Եվ Աստծո կանայք կլինեն 21-րդ դարի ամենամեծ հերոսուհիների մեջ: Ինչպես հայտարարել է Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը, մեզ համար չէ «աշխարհի կանանց կողմից առաջնորդվելը. մեր համար է առաջնորդելը ... աշխարհի կանանց՝ այն ամենում, որ արժանի է գովասանքի» (*Teachings,* 184):

Սա նպատակ չունի արժեզրկել աշխարհով մեկ բազմաթիվ լավ կանանց կյանքերը: *Սակայն մենք յուրահատուկ ենք:* Մենք յուրահատուկ ենք մեր ուխտերի, մեր հոգևոր արտոնությունների և այդ երկուսին կցված պարտավորությունների պատճառով: Մենք օժտված ենք զորությամբ և ունենք Սուրբ Հոգու պարգևը: Մենք ունենք *ապրող* մարգարե մեզ առաջնորդելու համար, արարողություններ, որ կապում են մեզ Տիրոջ հետ և իրար հետ, և քահանայության զորությունը մեր մեջ: Մենք հասկանում ենք, թե ինչ տեղ ունենք երջանկության մեծ ծրագրում: Եվ մենք գիտենք, որ Աստված մեր Հայրն է և որ Նրա Որդին մեր անփոփոխ Պաշտպանն է:

Այս արտոնությունների հետ գալիս է մեծ պարտականություն, քանզի «ում շատ տրվել է, շատ էլ պահանջվում է» (ՎԵՈՒ 82.3) և լինում են ժամանակներ, երբ աշակերտության պահանջները ծանր են: Բայց մենք չպիտի՞ ակնկալենք, որ դեպի հավերժական փառք ճանապարհորդությունը պետք է մեզ ձգի: Մենք երբեմն հիմնավորում ենք այս աշխարհում մեր մտահոգությունը և հոգեպես աճելու մեր մակերեսային փորձերը՝ փորձելով իրար մխիթարել սխալ կարծիքով, որ ավետարանով ապրելը իրականում չպիտի պահանջի այդքան շատ բան մեզանից: Վարքագծի վերաբերյալ Տիրոջ չափանիշը միշտ ավելի մեծ ուշադրություն կպահանջի, քան աշխարհինը, բայց հետո Տիրոջ պարգևները շատ ավելի փառահեղ կլինեն՝ներառյալ ճշմարիտ ուրախությունը, խաղաղությունը և փրկությունը:

Ինչպե՞ս ենք այնուհետև մենք, որպես Աստծո կանայք, լցնում մեր արարման ամբողջ չափը: Տերը վարձահատույց է լինում«իրան խնդրողներին» (Եբրայեցիս ԺԱ.6): Մենք փնտրում ենք Նրան ոչ միայն ուսումնասիրելով և փնտրելով, խնդրելով և աղոթելով և միշտ զգուշանալով, որ չլինի թե ընկնենք փորձության մեջ, այլ թողնելով աշխարհիկ բաներով տարվելը, երկդիմի քաղաքականություն չվարելով Աստծո և մամոնայի միջև: Այլապես մենք վտանգվում ենք կանչված լինել, բայց ոչ ընտրված, որովհետև մեր «սրտերն այնքան շատ են դրված այս աշխարհի բաների վրա» (ՎԵՈՒ 121.35):

Մտածեք այն սկզբունքի շուրջ, որը սովորեցվել է այս սուրբգրքյան հրամանի հաջորդականությունում. «Սիրիր Տիրոջը՝ քո Աստծուն, քո ողջ *սրտով*, քո ողջ զորությամբ, մտքով և ուժով» (ՎԱՈՒ 59.5, շեղագիրն ավելացված է): Այն, ինչ Տերն առաջինն է պահանջում, մեր սրտերն են: Պատկերացրեք, թե ինչպես կներգործվեին մեր ընտրությունները, եթե մենք սիրեինք Փրկչին ամեն ինչից առավել: Ինչպես մենք կծախսեինք մեր ժամանակն ու փողերը, կամ ինչպես կհագնվեինք ամառային շոգ օրերին, կամ ինչպես կարձագանքեինք այցելել սովորեցնելու կոչմանը և միմյանց մասին հոգալուն, կամ ինչպես կարձագանքեինք լրատվական միջոցներին, որոնք անարգում են Հոգուն:

Քրիստոսի մոտ գալը նշանակում է ... Քրիստոսին և միայն Քրիստոսին դնել մեր կյանքի կենտրոնում, որպեսզի այսպիսով մարդկային սնափառություններն ու փիլիսոփայությունները կորցնեն իրենց կախվածություն առաջացնող գրավչությունը:

Երբ մենք թույլ ենք տալիս, որ աշխարհը հեռանա և գալիս ենք Քրիստոսի մոտ, մենք ավելի ու ավելի ենք ապրում որպես Աստծո կանայք: Մենք ծնվել ենք հավերժական փառքի համար: Ճիշտ ինչպես հավատարիմ տղամարդիկ էին նախասահմանվել քահանայություն կրելու համար, մեզ համար նախասահմանվել էր լինելու Աստծո կանայք: Մենք հավատքի, առաքինության, խորաթափանցության և գթության կանայք ենք, ովքեր հրճվում են մայրությամբ, կանացիությամբ և ընտանիքով: Մենք խուճապի չենք մատնվում կատարելության պատճառով, այլ մենք աշխատում ենք դառնալ ավելի մաքուր: Եվ մենք գիտենք, որ Տիրոջ ուժով մենք կարող ենք անել բոլոր արդար բաները, քանզի մենք ընկղմվել ենք Նրա ավետարանի մեջ (տես Ալմա 26.12): *Ես կրկնում եմ, մենք չենք կարող լինել աշխարհի կանայք, քանզի մենք Աստծո վերջին օրերի կանայք ենք:* Եվ ինչպես սովորեցրել է Նախագահ Քիմբալը. «Ավելի մեծ ճանաչում այս աշխարհում [մեզ] չի կարող գալ, քան որպես Աստծո կանայք ճանաչվելը» (“The Role of Righteous Women,” *Ensign*, Nov. 1979, 102):

Այս ամառ ես անմոռանալի փորձառություն ունեցա Սուրբ Երկրում: Մինչ ես նստել էի Երանությունների սարում և նայում էի Գալիլեայի ծովին, հեռվում ես տեսա բլրի վրա կառուցված մի քաղաք: Տեսողական նկարագիրն այն քաղաքի, որը չի կարող թաքնվել, տպավորիչ էր, և մինչ ես խորհում էի դրա խորհրդանշական լինելու շուրջ, ես մի մեծ տպավորություն ունեցա, որ մենք որպես Աստծո կանայք նման ենք այդ քաղաքին, որ եթե մենք հետևում թողնենք աշխարհի բաները և գանք Քրիստոսի մոտ, այնպես, որ Հոգին ճառագայթի մեր կյանքի միջոցով և մեր աչքերից, մեր յուրահատկությունը լույս կլինի աշխարհի համար: Որպես Սփոփող Միության քույրեր, մենք պատկանում ենք վարագույրի այս կողմում գտնվող կանանց ամենանշանակալի միությունում: Եվ որքան քիչ մենք նայենք և գործենք աշխարհի կանանց պես, այնքան ավելի նրանք կնայեն մեզ՝ որպես հույսի, խաղաղության, առաքինության և ուրախության աղբյուրի:

Քսան տարի առաջ հենց այսպիսի մի համաժողովում Նախագահ Քիմբալը մի հայտարարություն արեց, որը մենք այդ պահից սկսած մեջբերել ենք շատ անգամներ. «Այս վերջին օրերում Եկեղեցու ամենամեծ աճը ... պայմանավորված է նրանով, թե որքանով Եկեղեցու կանայք իրենց կյանքում կարտացոլեն արդարություն և պարզություն և թե որքանով նրանք կերևան որպես *տարբեր և անսովոր՝ դրական առումով* - աշխարհի կանանց հետ համեմատած» (*Ensign*, Nov. 1979, 103–4; շեղագիրն ավելացված է): Մենք այլևս չենք կարող բավարարվել լոկ մեջբերելով Նախագահ Քիմբալի խոսքերը: Մենք ենք քույրերը, ովքեր պետք է և կդարձնեն նրա մարգարեությունը իրականություն: Եվ մենք կարող ենք դա անել: Ես գիտեմ՝ մենք կարող ենք:

Վերջերս Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է, որ «աշխարհի հավերժական փրկությունը ... դրված է այս Եկեղեցու ուսերի վրա: ... Աշխարհի պատմության մեջ ոչ մի ուրիշ մարդիկ չեն ստացել ... ավելի համոզիչ հանձնարարագիր ... , և ավելի լավ կլինի, որ մենք սկսենք անել դա» (“ ‘Church Is Really Doing Well,’ “ *Church News*, 3 July 1999, 3):

Աստծո կանայք, դա ներառում է մեզ: Այս երեկո ես հրավիրում եմ մեզանից յուրաքանչյուրին նշել գոնե մեկ բան, որը մենք կարող ենք անել, որպեսզի դուրս գանք աշխարհից և ավելի մոտենանք Քրիստոսին: Եվ հետո հաջորդ ամիս՝մեկ այլ բան: Եվ հետո մեկ այլ բան: Քույրեր, սա կոչ է զինվելու, սա կոչ է գործելու, կոչ է վեր կենալու: Կոչ՝ մեզ զորությամբ և արդարությամբ զինելու: Կոչ՝ Տիրոջ բազկին ապավինելու, և ոչ թե մարմնի բազկին: Եվ կոչ՝ «Վեր կացեք և շողացեք, որպեսզի [մեր] լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար» (ՎԱՈՒ 115.5): Կոչ՝ *ապրելու* որպես Աստծո կանայք, որպեսզի մենք և մեր ընտանիքները կարողանան ապահով վերադառնալ տուն:

Մենք ունենք ուրախանալու առիթ, քանի որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ուրախության ճայնն է: Քանի որ Փրկիչը հաղթել է աշխարհին: Քանի որ Նա վեր կացավ երրորդ օրը, որպեսզի մենք կարողանանք վեր կենալ որպես Աստծո կանայք: Թող որ մենք մի կողմ դնենք այս աշխարհի բաները և փնտրենք ավելի լավ բաները: Թող որ մենք հենց այս ժամին վճիռ կայացնենք դուրս գալ աշխարհից և երբեք ետ չնայենք: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

«ՄԵԿ ԲԱՆ Է ՊԵՏՔ» - ԴԱՌՆԱԼ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՀԱՎԱՏՔԻ ՏԵՐ ԿԱՆԱՅՔ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ

Քույր Պատրիցիա Թ. Հոլլանդ

Նախկին Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահություն

Ensign, Oct. 1987, 26–33

Երիտասարդ Կանանց գերագույն նախագահությունից իմ հետ կանչվելուց անմիջապես հետո, 1986թ.-ի ապրիլին, ես հնարավորություն ունեցա մեկ շաբաթ անցկացնել Երուսաղեմում: Ինձ համար այդ երկու տարիները եղել էին շատ դժվարին և ուշադրություն պահանջող: Լավ մայր լինել, ով ունի միանգամայն բավարար ժամանակ, այդ հարցում հաջողության հասնելը միշտ առաջին տեղում է եղել ինձ համար, ուստի ես փորձել եմ լինել լիաժամկետ մայր տարրական դասարանների աշակերտի համար, բարձր դասարանի աշակերտի համար և իր միսիային պատրաստվող որդու համար: Ես նաև փորձել եմ լինել լիաժամկետ կին ապշեցնող կերպով զբաղված համալսարանի նախագահի համար: Եվ ես պետք է լինեի այնքան լիաժամկետ խորհրդական այդ գերագույն նախագահությունում, որքան գրասենյակից 80.5կմ հեռավորության վրա ապրող մեկը կարող էր լինել: Բայց սկզբունքներ ձևավորելու և ծրագրեր սկսելու կարևոր շրջանում ես մտահոգված էի, որ ես չէի անում բավարար աշխատանք, և ես փորձեցի վազել մի փոքր ավելի արագ:

> ***Վարքագծի վերաբերյալ Տիրոջ չափանիշը միշտ ավելի մեծ ուշադրություն կպահանջի, քան աշխարհինը, բայց հետո Տիրոջ պարգևները շատ ավելի փառահեղ կլինեն:***

Իմ երկու տարվա ժամկետի ավարտին մոտ, իմ առողջությունը վատանում էր: Ես անընդհատ քաշ էի կորցնում, և ես լավ չէի քնում: Իմ ամուսինն ու երեխաները փորձում էին հոգ տանել ինձ համար ճիշտ այնպես, ինչպես ես էի փորձում նույնն անել նրանց համար: Մենք ուժասպառ էինք եղել: Եվ այնուամենայնիվ, ես շարունակում էի մտածել, թե ես ինչ կարող էի անել, այդ ամենն ավելի լավ կազմակերպելու համար: Եղբայրները, միշտ կարեկցող, տեսնում էին և սիրալիրորեն ետ կանչեցին ինձ: Որքան էլ որ իմ ընտանիքը շնորհակալ էր իմ ծառայության ժամկետի ավարտի համար, ես, այնուամենայնիվ, զգացի շփման կորուստ, և ես խոստովանում եմ, որոշ անհատականության կորուստ՝ այն կանանց հետ, որոնց ես այնքան շատ սիրել էի: Ո՞վ էի ես և որտե՞ղ էի ես այս պարտականությունների խառնաշփոթում: Մի՞թե կյանքը պիտի լինի այնքան դժվար, ինչքան այս ամենն է: Որքա՞ն հաջողակ եմ ես եղել իմ մի շարք և մրցակցական հանձնարարություններում: Թե՞ ես ձախողել եմ դրանք բոլորը: Օրերը իմ ազատվելուց հետո գրեթե այնքան դժվար էին, որքան դրանից առաջվա շաբաթները: Ես չունեի ուժի ոչ մի պաշար: Ես անզոր էի որևէ բան անելու և ես վստահ չէի, թե որտեղից կարող էի ուժ ստանալ:

Ընդամենը մի քանի շաբաթ անց իմ ամուսինը հանձնարարություն ուներ Երուսաղեմում, որի մասին ես հիշատակել էի, և Եղբայրները, որոնք ճանապարհորդելու էին հանձնարարությամբ, առաջարկեցին, որ ես միանայի նրան: «Արի գնանք», ասաց նա: «Դու կարող ես կազդուրվել Փրկչի կենդանի ջրի և կյանքի հացի երկրում: Որքան էլ որ ես հոգնած էի, ես պատրաստեցի պայուսակներս, հավատալով՝ կամ ամենաքիչը հուսալով, որ այնտեղ անցկացրած ժամանակը կլինի առողջարար կարճատև դադար:

Պարզ ու արևաշող մի օր ես նստած նայում էի Գալիլեայի ծովին և վերընթերցում էի Ղուկասի գրքի տասներորդ գլուխը: Սակայն էջի վրայի բառերի փոխարեն, ինձ թվաց, որ ես տեսա իմ մտքով և լսեցի իմ սրտով այս բառերը. «[Պատրիցիա, Պատրիցիա, Պատրիցիա], դու հոգս ես քաշում եւ շատ բաներով զբաղուած ես»: Այնուհետև մաքուր և անձնական հայտնության զորությունը համակեց ինձ, երբ ես կարդացի. «Բայց մէկ բան [միայն մեկ բան] է [իրոք] պետք»: (Հատվածներ 40–41):

Մայիսյան արևն Իսրայելում այնքան պայծառ է, որ դու զգում ես, թե կարծես դու նստած ես աշխարհի վերևում: Ես հենց նոր էի այցելել Բեթորոնով, որտեղ արեգակը կանգ առավ Հեսուի համար (տես Յեսու Ժ.12), և իրոք, այդ օրը ինձ համար նույն կերպ էր թվում: Մինչ ես նստած խորհում էի իմ խնդիրների շուրջ, ես զգացի այդ նույն արևի բժշկող շողերը որպես իմ սիրտը լցվող տաք հեղուկ՝ հանգստացնող, խաղաղեցնող և իմ անհանգիստ հոգին մխիթարող:

Մեր սիրառատ Երկնային հայրը թվում է շշնջում էր ինձ. «Դու պարտավոր չես մտահոգվել այդքան շատ բաների համար: Մի բան, որն անհրաժեշտ է՝միակ բանը, որն իրոք պետք է,քո աչքերը դեպի արևը պահելն է՝ դեպի իմ Որդին»: Անսպասելիորեն ես իսկական խաղաղություն զգացի: Ես գիտեի, որ իմ կյանքը միշտ եղել էր Նրա ձեռքերում՝հենց ամենասկզբից: Ծովը, որ խաղաղ փռված էր իմ աչքերի առջև, վեր է բարձրացել փոթորկից և եղել վտանգավոր՝շատ, շատ անգամներ: Այն ամենը, ինչ ես պիտի անեի, իմ հավատքը նորոգելն էր, և նրա ձեռքը ամուր բռնելը՝և *միասին* մենք կկարողանայինք քայլել ջրի վրայով:

Ես կցանկանայի հարց ուղղել մեզանից յուրաքանչյուրին մտածելու համար: Ինչպե՞ս ենք մենք որպես կանայք իրականացնում այդ կատարելագործումը՝ անհանգիստ և մտահոգված լինելուց դառնալով նույնիսկ ավելի մեծ հավատքի

կանայք: Մի հոգեվիճակը անշուշտ մերժում է մյուսին: Հավատքը և վախը չեն կարող երկար գոյակցել: Մտածեք որոշ բաների մասին, որոնք անհանգստացնում են մեզ:

Ես ծառայել եմ որպես Սփոփող Միության նախագահ չորս տարբեր ծխերում: Այս ծխերից երկուսը միայնակ կանանց համար էր, և երկու ծխերը շատ երիտասարդ մայրեր ունեին: Երբ ես նստում էի խորհրդակցելու իմ միայնակ քույրերի հետ, իմ սիրտը հաճախ ցավում էր, մինչ նրանք նկարագրում էին ինձ իրենց միայնակության և հիասթափության զգացումները: Նրանք կարծում էին, որ իրենց կյանքը իմաստ կամ նպատակ չուներ եկեղեցում, որը իրավամբ շատ մեծ կարևորություն է տալիս ամուսնությանը և ընտանեկան կյանքին: Ամենացավալին այն էր, որ երբեմն նրանք ենթադրում էին, որ իրենց միայնակությունը իրենց իսկ մեղքով էր՝կամ նույնիսկ ավելի վատ՝ եսասեր մի ցանկություն: Նրանք ջանասիրաբար փնտրում էին խաղաղություն և նպատակ՝իսկական արժեք ունեցող ինչ-որ բան, որին նրանք կարող էին նվիրել իրենց կյանքը:

Այնուամենայնիվ ինձ թվում էր, որ երիտասարդ մայրերն ամենայն հավանականությամբ ունեին նույնքան մտահոգություններ: Նրանք նկարագրում էին ինձ ավելի ու ավելի բարդացող աշխարհում երեխաներ մեծացնել փորձելու, արժեք ունեցող անձ զգալու համար երբեք բավականաչափ ժամանակ կամ միջոցներ կամ ազատություն չունենալու դժվարությունները, քանի որ նրանք միշտ փորձում էին անել ավելին, քան հնարավոր էր, որպեսզի պարզապես գոյատևեին: Եվ ընդամենը մի քանի իրական ապացույցներ կային, որ այն, ինչ իրենք էին անում իրոք պետք է հաջող ավարտ ունենար: Չկար ոչ մեկը, ով կբարձրացներ նրանց վարձատվությունը. և բացի նրանց ամուսիններից (ովքեր կարող է հիշեին կամ չհիշեին անել դա), ուրիշ ոչ ոք նրանց չի հաճոյախոսում լավ կատարած աշխատանքի համար: Եվ նրանք միշտ հոգնած էին: Մի բան, որ ես հիշում եմ շատ հստակ այս երիտասարդ մայրերի հետ կապված այն էր, որ նրանք *միշտ* շատ հոգնած էին:

Հետո այնտեղ կային այն կանայք, ովքեր, առանց իրենց մեղքի, իրենց գտել էին միակ մատակարար իրենց տների ֆինանսական, հոգևոր, էմոցիոնալ և ցանկացած այլ ոլորտներում: Ես չէի կարող նույնիսկ հասկանալ խնդիրները, որոնց առաջ կանգնել էին նրանք: Ակնհայտորեն, որոշ առումներով, այդ բոլորից նրանցն էր ամենամեծ ուշադրություն պահանջող հանգամանքը: Հեռանկարը, որ ես ստացել եմ այս բազում տարիների ընթացքում լսելով կանանց մտահոգություններն այն է, որ ոչ մի կին կամ կանանց խումբ՝ամուրի, ամուսնացած, բաժանված, այրի, տնային տնտեսուհիներ կամ մասնագետներ, անելանելի կացության մեջ ընկել մտահոգությունների պատճառով: : Թվում է, թե կան բազմաթիվ խնդիրներ, որոնք կարելի է շրջանցել: Բայց, շտապով ուզում եմ ավելացնել, որ կան նաև հրաշալի օրհնություններ:

Մեզանից յուրաքանչյուրն ունի բացառիկ հնարավորություններ և օրհնություններ, և մեզանից յուրաքանչյուրն ունի մտավախություններ և փորձություններ: Թվում է, թե հանդուգն է ասել, բայց ընդհանուր դատողությունը ենթադրում է, որ աշխարհի պատմության մեջ նախկինում կանայք, ներառյալ ՎՕՍ կանայք, երբեք չեն հանդիպել ավելի մեծ խճճվածության իրենց մտահոգություններում:

Ես շատ շնորհակալ եմ ավելացված տեղեկացվածության համար, որ կանանց գործունեությունը տրվել է ավետարանի սկզբունքում, որը մենք ունեցել ենք սկսած Մայր Եվայից և դրանից առաջ ազատությունն է՝ ընտրելու իրավունքը:

Բայց այս ազատության հետ կապված ամենաանցանկալի կողմը, որին մենք հանդիպում ենք այն է, որ այսօրվա կանանց ապրելակերպի աճող բազմազանության պատճառով, մենք թվում է նույնիսկ ավելի անվստահ և անհուսալի ենք միմյանց հանդեպ: Մենք չենք մտերմանում միմյանց հետ, բայց ավելի ենք հեռանում միասնության և քույրության գիտակցությունից, որն աջակցել էր մեզ և տվել էր մեզ ուժ սերնդե սերունդ: Թվում է, թե աճում է մեր մրցակցությունը և նվազում է մեր մեծահոգությունը միմյանց հանդեպ:

Նրանք, ովքեր ժամանակ և ուժ ունեն պահածոյացնելու իրենց մրգերն ու բանջարեղենը, բարելավում են պատրաստվածության աստիճանը, որը կծառայի նրանց բավարար չափով կարիքի ժամանակ՝իսկ մեր անկայուն տնտեսությունում դա կարող է լինել գրեթե ցանկացած ժամանակ: Բայց նրանք չպիտի վերևից նայեն նրանց, ովքեր գնում են իրենց դեղերը կամ ովքեր չեն սիրում դդմիկ դրա պատրաստման երեսունհինգ եղանակներից և ոչ մի ձևով, կամ ովքեր պարզապես գիտակցաբար ընտրում են ծախսել իրենց ժամանակը և ուժը մեկ այլ իմաստալից եղանակով:

Եվ որտեղ եմ ես այս ամենի մեջ: Իմ կյանքի երեք քառորդ մասը ես զգացել եմ մինչև ուղն ու ծուծը վտանգված, քանի որ ես ատում էի կարելը: Այժմ ես *կարող* եմ կարել. Եթե դա խիստ անհրաժեշտ է, ես *կկարեմ*,-բայց ես ատում եմ դա: Կարո՞ղ եք դուք պատկերացնել իմ բեռը վերջին քսանհինգ կամ երեսուն տարիների ընթացքում, երբ «ձևացնում էի» Սփոփող Միության նիստերում և փորձում էի ժպտալ, երբ վեց փոքրիկ աղջիկներ եկեղեցի էին մտնում բոլորը գոգնոցներով և ժանյակներով և ժապավեններով և կիսավերարկուներով, ճիշտ նույն ձևի, ձեռքով կարված զգեստներով, բոլորը հերթով իրենց մայրիկի առջևից գնացող, ով ուներ նույնատիպ հանդերձանք: Բոլոր դեպքերում ես իմ վերաբերմունքը չեմ համարում առաքինի, գեղեցիկ, բարեհամբավ կամ գովեստի արժանի, բայց ես անկեղծ եմ կարելու հանդեպ իմ հակակրանքում:

Ես մի փոքր ավելի խելամիտ եմ դարձել այդ օրերի համեմատ առնվազն երկու կողմով. ես այժմ անկեղծորեն խորին հարգանք ունեմ մոր հանդեպ, ով կարող է դա անել իր երեխաների համար և ես դադարել եմ ինձ մեղավոր զգալուց, որ

կարելը այնքան էլ լավ չի ստացվում ինձ մոտ: Ասածս այն է, որ մենք պարզապես չենք կարող մեզ կոչել Քրիստոնյա և շարունակենք դատել մեկս մյուսինկամ ինքներս մեզայդքան խստասրտորեն: Բալով լի ոչ մի ապակե տարա չարժե առճակատման, որը թալանում է մեզանից մեր կարեկցանքը և մեր քույրությունը:

Ակնհայտ է, որ Տերը մեզ ստեղծել է տարբեր բնավորության գծերով, այնպես ինչպես տարբեր աստիճանի ուժով, հետաքրքրություններով, առողջությամբ, տաղանդով և հնարավորություններով: Քանի դեռ մենք հավատարիմ ենք արդարությանը և հավատարիմ նվիրվածությամբ կյանքով ապրելուն, մենք պետք է գովերգենք այս աստվածային տարբերությունները, իմանալով, որ դրանք պարգև են Աստծո կողմից: Մենք չպիտի մեզ զգանք շատ վախեցած, շատ վտանգված և անվստահ. մենք կարիք չունենք գտնելու ճիշտ մեր կրկնօրինակներին, որպեսզի զգանք հաստատված որպես արժեքավոր կին: Շատ բաներ կան, որոնք կարող են մեզ բաժանել, սակայն մի բան է պետք մեր միասնության համար՝կենդանի Աստծո Որդու ըմբռնումն ու կարեկցանքը:

Ես ամուսնացել եմ 1963թ., հենց այն տարում, երբ Բեթի Ֆրայդանը հրատարակեց իր հասարակությանը ցնցող *Կին առեղծվածը* գիրքը, ուստի որպես չափահաս կին ես կարող եմ միայն մանկության հիշողություններով ետ նայել 1940-ականներին և 50-ականներին: Բայց ավելի հարմար է եղել ունենալ արդեն քո համար պատրաստի ապրելակերպ, և հարևաններ ցանկացած կողմում, որոնց կյանքը տվել է ձեզ լավ օրինակ ձեր իսկ համար: Ինչնիցե, երևի թե շատ ավելի ցավալի է եղել նրանց համար, ովքեր, առանց իրենց իսկ մեղքի, եղել են միայնակ այն ժամանակ, կամ ստիպված են եղել աշխատել, կամ տառապել են քանդված ընտանիքի պատճառով: Այժմ, մեր ավելի ու ավելի բարդացող աշխարհում, որի օրինակն ավելի վաղ մանրակրկիտ ձևով ներկայացվեց, թվում է, թե մենք ավելի քիչ ենք համոզված, թե ով ենք մենք և ուր ենք մենք գնում:

Անկասկած պատմության մեջ չի եղել մեկ այլ ժամանակաշրջան, երբ կանայք հարցականի տակ են դրել իրենց ինքնարժեքն այդքան խստորեն և քննադատաբար, ինչպես քսաներորդ դարի երկրորդ կեսում: Շատ կանայք փնտրում են, ավելի անհանգստացած, քան նախկինում երբևէ, անձնական նպատակի և նշանակության զգացում. և շատ ՎՕՍ կանայք նույնպես փնտրում են հավերժական խորաթափանցություն և նշանակություն իրենց կին լինելու էության մեջ:

Եթե ես սատանան լինեի և ցանկանայի կործանել հասարակությունը, կարծում եմ ես կկազմակերպեի լիովին բացահայտ աշխատանք կանանց դեմ: Ես նրանց կպահեի շատ անհանգիստ և մտացրված վիճակում, որպեսզի նրանք երբեք չգտնեին հանգստացնող ուժ և խաղաղություն, որով նրանց սեռը միշտ ճանաչվել է:

Սատանան արդյունավետ կերպով արել է սա, բռնելով մեզ բարդ իրավիճակում, երբ մենք փորձում ենք լինել գերմարդկային, փոխանակ ձգտելու հասնել մեր յուրահատուկ, աստվածատուր հնարավորություններին նման բազմազանության մեջ: Նա կծու խոսքերով ծաղրում է մեզ, որ եթե մենք չունենանք այդ ամենը՝համբավ, հարստություն, ընտանիքներ և զվարճանք, և եթե միշտ չունենանք այդ ամենը,մենք թշվառ ենք և երկրորդ կարգի քաղաքացիներ կյանքի մրցարշավում: Մենք պայքարում ենք որպես սեռ, պայքարում են մեր ընտանիքները և պայքարում է մեր հասարակությունը: Թմրադեղերը, դեռահասների հղիությունները, ամուսնալուծությունը, ընտանեկան բռնությունները և ինքնասպանությունը մեր համատեղ կյանքի արահետում ամենաբուռն աճող կողմնակի ազդեցություններից են:

Մեզանից շատ շատերը պայքարում և տառապում են, շատ շատերը վազում են ավելի արագ, քան իրենք ուժ ունեն՝ չափից ավելին սպասելով իրենցից: Որպես արդյունք մենք նոր և չախտորոշված ստրեսային հիվանդություններ ենք ստանում: Էփսթեյն-Բար վիրուսը, օրինակ, բժշկական մասնագիտական լեզվում մեզ հայտնի է դարձել որպես 1980-ականների հիվանդություն: «[Տուժածներին] անհանգստացնում են մի փոքր տենդը, հոդերի ցավը և բորբոքված կոկորդը, բայց նրանք հարբուխ չունեն: Նրանք անհաղթահարելիորեն ուժասպառ, թույլ և հյուծված են, բայց նրանք ՁԻԱՀ չունեն: Նրանք հաճախ շփոթված են և ունեն հիշողության խնդիրներ, բայց դա Ալցհայմերի հիվանդությունը չէ: Շատ հիվանդներ ինքնասպան լինելու ցանկություն ունեն, բայց դա կլինիկական դեպրեսիա չէ: ... Տուժված կանանց թիվը գերակշռում է տղամարդկանց թվին երեքը մեկի հարաբերությամբ, և նրանց մեծամասնությունը մեծ հաջողությունների հասած ստրեսներով լի կյանքով ապրող խելացի անձնավորություններ են: » (*Newsweek*, Oct. 27, 1986, p. 105):

Մենք *պետք է* քաջություն ունենանք լինել անկատար, մինչ ջանում ենք լինել կատարյալ: Մենք *չպետք է* թույլ տանք մեր սեփական մեղքի զգացմանը, տղամարդկանց հետ կանանց հավասարության շարժման վերաբերյալ գրքերին, հեռուստատեսային հարցազրույցներ կազմակերպողներին կամ ամբողջ զանգվածային լրատվամիջոցներին սխալ պատկերացում տալ մեզ բարիքների վերաբերյալկամ նույնիսկ տալ պատկերացում չարիքների վերաբերյալ: Մենք կարող է շեղվենք անհատականության և ինքնագնահատման մեր անվերահսկելի փնտրտուքներում, որ մենք իրոք հավատում ենք, որ *դա* կարելի է գտնել՝ ունենալով կատարյալ կազմվածք կամ ակադեմիական աստիճաններ, մասնագիտական կարգավիճակ կամ նույնիսկ բացարձակ մայրական հաջողություն: Այնուամենայնիվ, այսպես փնտրելով արտաքնապես, մենք կարող ենք զրկվել մեր ճշմարիտ ներքին ճշմարտությունից՝ հավերժական սեփական անձերից: Մենք հաճախ այնքան շատ ենք մտածում ուրիշներին հաճելի լինելու և ուրիշների համար լավ բաներ անելու մասին, որ կորցնում

ենք մեր եզակիությունը՝այն լիարժեք և խաղաղ ընդունումը մեր սեփական անձի՝ որպես արժեք և անհատականություն ունեցող անձնավորություն:

Մենք դառնում ենք այնքան վախեցած և անվստահ, որ մենք չենք կարող մեծահոգիլինել բազմազանության և անհատականության հանդեպ: Բազմաթիվ կանայք այս անհանգստությունները անօգնական դիտում են, մինչ իրենց կյանքը հեռանում է ամենակարևոր բանից, որը կենտրոնացնում և աջակցում է նրանց: Շատերը նման են ծովում գտնվող մի նավի՝ առանց առագաստի կամ ղեկի, «երերված ու տատանված», ինչպես ասել է Պողոս Առաքյալը (տես Եփեսացիս Դ.14), մինչև մեզանից ավելի ու ավելի շատերը իսկապես, կատարելապես վարակվում են ծովախտով:

Որտե՞ղ է վստահությունը, , որ մեզ թույլ է տալիս վարել մեր նավը, ինչ քամիներ էլ որ փչեն, վարպետ նավաստու հաղթական աղաղակով՝ «Ամուր բռնեք, մինչ նա գնում է»: Որտե՞ղ է ներքին հանգստությունը, ինչը մենք անչափ փայփայում ենք և որով մեր սեռը սովորաբար հայտնի է եղել:

Ես հավատում եմ, որ մենք կարող ենք գտնել մեր ամուր հիմքը և հոգու հանգստությունը երես դարձնելով ֆիզիկական մտահոգություններից, առաջնակարգ կնոջ նվաճումներից և անվերջ հանրաճանաչության մրցույթից և դրա փոխարեն դառնանք դեպի մեր հոգու կատարելությանը, մեր իսկական էության միասնությանը, որը հավասարակշռում է մեծ ուշադրություն պահանջող և կյանքի անխուսափելի բազմազանությանը:

Մի կին, որը մեր հավատքից չէ, ում գրվածքները ես սիրում եմ , Աննա Մորրոու Լինդբերգն է: Նա մեկնաբանում է մեր օրերում կանանց հուսահատությունն ու ընդհանուր չարչարանքը.

«Ֆեմինիստները [բավականին] հեռու չեն նայել. նրանք չեն հիմնել ղեկավարման կանոններ: Նրանց համար բավական է եղել արտոնություններ պահանջելը: ... Եվ [այսպիսով] կինն այսօր դեռևս փնտրում է: Մենք գիտենք մեր իրոքերն ու կարիքները, բայց շարունակում ենք անտեղյակ մնալ, թե ինչը դրանց կբավարարի: Մեր ազատ ժամանակով մենք ավելի հակված ենք ծանծրալի դարձնել մեր ստեղծարար գարունները, քան դրանք վերալցնելը: Մեր [ձեռքում բռնած] սափորներով մենք փորձում ենք ... ջրել արտը՝ պարտեզի [փոխարեն]: Մենք հախուռն կերպով տարվում ենք հանձնախմբերով և գործերով: Առանց իմանալու, թե ինչպես սնենք հոգին, մենք փորձում ենք խեղդել դրա պահանջները ուշադրություն շեղող բաներով: Փոխարեն կենտրոնը՝ անվի առանցքը հանդարտեցնելու, , մենք ավելի շատ կենտրոնախույս միջոցառումներ ենք ավելացնում մեր կյանքում,որոնք հակված են մեզ [էլ ավելի շատ] հանել հավասարակշռությունից:

«Մեխանիկական տեսակետից մենք նվաճումների ենք հասել վերջին սերնդում, բայց հոգեպես մենք ... կորցրել ենք»:

Առանց ուշադրություն դարձնելու ժամանակաշրջանի վրա, նա ավելացնում է. «[կանանց համար] խնդիրը [դեռևս] նրանում է կայանում, թե ինչպես սնեն հոգին» (*Gift from the Sea*, New York: Pantheon Books, 1975, pp. 51–52):

Ես երկար և ջանադիր կերպով խորհել եմ չափից ավելի անհանգստություն պատճառող բաներով շրջապատված լինելով հանդերձ մեր ներսի անձին սնելու վերաբերյալ: Զուգադիպություն չէ, որ մենք խոսում ենք հոգին սնելու մասին ճիշտ այնպես, ինչպես մենք կխոսեինք մարմինը սնելու մասին: Երկուսն էլ մշտական սնվելու կարիք ունեն: Նախագահ Բենսոնը վերջերս ասել է. «Կասկած չկա, որ մարմնի առողջական վիճակը ազդում է հոգու վրա, այլապես Տերը երբեք չէր հայտնի

Իմաստության Խոսքը: Աստված երբեք չի տվել որևէ *մարմնական* պատվիրան և այն, ինչն ազդում է մեր մարմնի վրա, ազդում է հոգու վրա»: Մենք շատ բաների կարիք ունենք մարմնի, մտքի և հոգու համար, որ միանան մեկ առողջ, հավասարակշռված անձի մեջ:

Անկասկած Աստված լավ հավասարակշռություն ունի, ուստի հավանաբար մենք որքան ավելի մոտ ենք Նրան, այդ ժամանակ *մենք* էլ այդպիսին ենք: Ամեն դեպքում, ինձ դուր է գալիս *ամբողջ, առողջ, առողջանալ և տուրք* բառերի մեջև եղած կապը: Մեր անձի միասնությունը պայմանների բազմազանության մեջ՝ մեր «կենտրոնի հանգստությունը»արժանի է ամեն ջանքի:

Հաճախ մենք թերանում ենք հաշվի առնել մեր անձի հենց ներսի փառահեղ հնարավորությունը: Մենք պետք է հիշենք այս աստվածային խոստումը. «Աստուծոյ արքայութիւնը հենց ձեր ներսումն է» (Ղուկաս ԺԷ.21): Հավանաբար մենք մոռանում ենք, որ Աստծո թագավորությունը հենց մեր ներսում է, քանի որ չափից ավելի ուշադրություն ենք դարձնում այս դրսի պատյանի վրա, մեր այս մարդկային մարմնի վրա և դյուրաբեկ, չափից դուրս խարխուլ աշխարհի վրա, որում այն շարժվում է:

Թույլ տվեք ինձ ձեզի հետ կիսվել մի անալոգիայով, որը ես ստեղծել եմ մի բանից, որը կարդացել եմ տարիներ առաջ: Այն ինձ օգնեց այն ժամանակ և շարունակում է ինձ օգնել՝ ներքին ուժի և հոգևոր աճի իմ ուսումնասիրություններում:

Անալոգիան հոգու մասին է՝ մարդկային հոգու, իր բոլոր շքեղություններով, տեղադրված գեղեցկորեն քանդակված, բայց շատ կիպ կողպված արկղում: Այս նվիրական արկղում վեհությամբ իշխողը և մեր հոգին լուսաբանողը մեր Տեր և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսն է՝ կենդանի Հոր կենդանի Որդին: Այս արկղը այնուհետև դրվել է և կողպվել մեկ այլ՝ ավելի մեծ արկղի մեջ, և այսպես շարունակ՝ մինչև հինգ գեղեցկորեն քանդակված, բայց շատ ապահով կերպով կողպված արկղեր սպասում են կնոջը, ով հմուտ է և բավականաչափ իմաստուն՝ դրանք բացելու համար: Որպեսզի նա կարողանա ազատ հաղորդակցվել Տիրոջ հետ, նա պետք է

գտնի բանալին և բացի այս արկղերի պարունակությունները: Հաջողությունն այնուհետև նրան կհայտնի իր իսկ հոգու գեղեցկությունն ու աստվածայնությունը և իր պարգևներն ու իր շնորհները՝ որպես Աստծո դուստր:

Ինձ համար առաջին արկղի բանալին *աղոթքն* է: Մենք ծնկի ենք գալիս օգնություն խնդրելու մեր խնդիրների համար և հետո բարձրանում ենք հայտնաբերելու, որ առաջին կողպեքն այժմ բացված է: Բայց սա չպիտի թվա զուտ հարմար և հնարամիտ հրաշք, քանզի եթե մենք փնտրում ենք իսկական լույս և հավերժական համոզմունքներ, մենք պետք է աղոթենք նախնիների պես: Մենք կանայք ենք հիմա, ոչ երեխաներ, և մեզանից ակնկալվում է աղոթել հասունորեն: Ամենահաճախ օգտագործվող բառերը, որոնք նկարագրում են խիստ ցանկալի, ջերմեռանդ ջանքեր հետևյալն են՝ *գոտեմարտ, աղաչել, աղաղակել և սովել:* Որոշ առումով աղոթքը կարող է լինել ամենադժվար աշխատանքը, որը մենք երբևէ կկատարենք, և հավանաբար պետք է լինի այդպիսին: Այն հիմնական պաշտպանություն է աշխարհիկ հարստություններով, լավ համբավով և հասարակական դիրքով այնպես տարված դառնալու դեմ, որ մենք այլևս չցանկանանք հանձն առնել մեր հոգու որոնումը:

Նրանք, ովքեր Ենովսի պես հավատքով աղոթում են և ձեռք բերում մուտքի իրավունք իրենց աստվածային հնարավորության նոր ասպարեզում, նրանք հասնում են երկրորդ արկղին: Այստեղ միայն մեր աղոթքները բավարար չեն թվում: Մենք պետք է դառնանք դեպի սուրբ գրությունները՝ մեր հոգիների վերաբերյալ Աստծո երկար արձանագրված ուսմունքների համար: Մենք պետք է սովորենք: Այս եկեղեցու յուրաքանչյուր կին անկասկած սովորելու, աճելու և զարգանալու աստվածային պարտավորություն ունի: Մեզ Աստված տվել է իրարից խիստ տարբերվող մեծ քանակությամբ տաղանդներ և մենք չպիտի հողի մեջ պահենք այս տաղանդները կամ թաքցնենք մեր լույսը: Եթե Աստծո փառքը մտավոր կարողությունն է, ապա սովորելը , հատկապես սուրբ գրություններից սովորելը, ձգում է մեզ դեպի այն:

Մենք պետք է համբերատար լինենք մեր հանդեպ, երբ հաղթահարում ենք թուլություններ, և մենք պետք է հիշենք ուրախանալ բոլոր այն լավ բաներով, որոնք կան մեր մեջ:

Նա օգտագործում է բազում փոխաբերություններ աստվածային ներգործության համար, ինչպես օրինակ «կենդանի ջուր « և «կյանքի հաց»: Ես բացահայտել եմ, որ եթե իմ անձնական զարգացումը կանգ է առնում, այն կանգ է առնում թերսնվելուց, որը առաջ է գալիս նրա սուրբ գրություններից ամեն օր չուտելուց և չխմելուց: Իմ կյանքում եղել են խնդիրներ, որոնք ամբողջովին կկործանեին ինձ, եթե ես սուրբ գրություններ չունենայի և իմ մահճակալի կողքի դարակում, և իմ պայուսակում, որպեսզի ես կարողանայի ճաշակել դրանցից օր ու գիշեր նշված պահերին: Սուրբ գրություններում Աստծուն հանդիպելը ինձ համար եղել է աստվածային ներերակային սնուցում՝ սելեստիալ ներերակային ներարկման հանգամանք, որն իմ որդին մի անգամ նկարագրեց որպես հրեշտակային պորտալար: Այսպիսով, երկրորդ արկղը բացվում է *սուրբ գրություններից սովորելու միջոցով:* Ես բացահայտել եմ, որ դրանք ուսումնասիրելով ես կարող եմ ունենալ, կրկին ու կրկին, ոգևորիչ հանդիպում Աստծո հետ:

Ինչևիցե, հոգին ազատելու նման հաջողության սկզբում Լյուցիֆերը դառնում է ավելի անհանգիստ, հատկապես մինչ մենք մոտենում ենք երրորդ արկղին: Նա գիտի, որ մենք մոտ ենք մի շատ կարևոր և հիմնական սկզբունք սովորելուն,որ մեր անձը իսկապես գտնելու համար մենք պետք է կորցնենք մեզ,ուստի նա սկսում է խոչընդոտել մեր մեծ ջանքերին՝ սիրելու Աստծուն, մեր մերձավորին և մեր անձը: Վերջին տասնամյակի ընթացքում սատանան գայթակղել է ամբողջ մարդկությանը նվիրել գրեթե իրենց ողջ ուժերը ռոմանտիկ սիրո կամ ինչ-որ բան սիրելու կամ չափից դուրս շատ անձնասիրությանը հետամուտ լինելուն: Այսպես անելով մենք մոռանում ենք, որ պատշաճ անձնասիրությունը և ինքնահարգանքը ուրիշներին առաջինը դնելու խոստացված պարգևն է: «Ով որ ուզէ իր անձն ապրեցնել, կկորցնէ նորան. Եւ ով որ կորցնէ նորան, կապրեցնէ նորան» (Ղուկաս ԺԷ.33): Երրորդ արկղը բացում է միայն գթության բանալին:

Գթությունով են սկսվում իսկական աճն ու մաքուր խորաթափանցությունը: Սակայն չորրորդ արկղի կափարիչից ներս թվում է, գրեթե անհնարին է մտնել: Դժբախտաբար, թուլասիրտներն ու վախկոտները հաճախ ետ են դառնում այստեղից: Գնալը թվում է շատ դժվար, կողպեքը՝ շատ ամուր: Սա ինքնագնահատման ժամանակ է: Մեզ տեսնելը այնպիսին, ինչպիսին իրականում մենք կանք հաճախ ցավ է պատճառում, սակայն միայն ճշմարիտ համեստության, ապաշխարության և վերափոխման միջոցով է, որ մենք կկարողանանք ճանաչել Աստծուն: «Ինձանից սովորեցէք. որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ», ասել է նա : (Մատթեոս ԺԱ.29) Մենք պետք է համբերատար լինենք մեր հանդեպ, երբ հաղթահարում ենք թուլություններ, և մենք պետք է հիշենք ուրախանալ բոլոր այն լավ բաներով, որոնք կան մեր մեջ: Սա կուժեղացնի մեր ներսի մարդուն և մենք արտաքին խրախուսանքից քիչ կախում կունենանք: Երբ մեր հոգիները քիչ ուշադրություն են դարձնում հասարակական գովասանքին, նրանք այդ ժամանակ նաև շատ քիչ են մտահոգվում, երբ հասարակությունը հավանություն չի տալիս: Մրցակցությունը, խանդը և նախանձը այժմ սկսում են նշանակություն չունենալ: Միայն պատկերացրեք զորեղ հոգին, որ կլինի մեր կանանց միությունում, եթե մենք վերջապես հասնենք այն կետին, որտեղ մեր Փրկչի նման, մեր իսկական ցան-

կությունը կլիներ համարվել *ամենափոքրը* մեր քույրերի մեջ: Պարգևներն այստեղ այնքան մեծ ուժ ունեն և հավատքի անաղմուկ հաղթանակ, որ մենք տարվում ենք նույնիսկ ավելի լուսավոր ասպարեզ: Այսպիսով, չորրորդ արկղը, ի տարբերություն մյուսների, ջարդված բացված է , ճիշտ ինչպես ապաշխարող սիրտն է կոտրված: *Մենք վերածնված ենք* ինչպես երկրի կեղևից դուրս եկող աճող և ծաղկող ծաղիկը:

Հինգերորդ արկղը բացելու իմ զգացողությունները ձեր հետ կիսելու համար ես պետք է մեր հոգիների գեղեցկությունը համեմատեմ մեր տաճարների սրբության հետ: Այնտեղ՝ ոչ այս աշխարհի միջավայրում, որտեղ նորաձևություն, պաշտոն և մասնագիտություններ չեն ճանաչվում, մենք մեր հնարավորությունն ունենք գտնելու խաղաղություն, անդորր և հանգստություն, որ հավերժորեն կամրացնեն մեր հոգին, քանզի այնտեղ մենք կարող ենք գտնել Աստծուն: Քանի որ մեզանից նրանք, ովքեր Հարեղի եղբոր պես քաջություն և հավատք ունեն անցնելու վարագույրի միջով դեպի գոյության այդ սուրբ կենտրոնը (տես Եթեր 3.6–19), մենք վերջին արկղի պայծառությունը կգտնենք ավելի պայծառ, քան կեսօրվա արևինը: Այնտեղ մենք գտնում ենք ամբողջություն՝ սրբություն: Ահա դա է ասվում հինգերորդ արկղի մուտքի վերևում. *Սրբություն Տիրոջը:* «Չգիտե՞ք որ դուք Աստուծոյ տաճար էք» (Ա Կորնթացիս Գ.16): Ես վկայում եմ, որ դուք սուրբ եք,որ աստվածայնությունը մշտապես ձեր մեջ է՝ սպասելով բացվելուևանաձգերծվելուև, հզորանալուև և ի ցույց դրվելու:

Ես լսել եմ, որ ոմանք ասում են, որ Եկեղեցու կանայք դժվարանում են ճանաչել իրենց ինքնությունն այն պատճառով, որ նրանք չունեն աստվածային կնոջ լավ օրինակ: Բայց մենք ունենք: Մենք հավատում ենք, որ ունենք մայր երկնքում: Թույլ տվեք մեջբերել Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի գերագույն համաժողովի ելույթից.

«Երբ մենք երգում ենք այդ վարդապետական հիմնը ... «Օ՜, Հա՛յր իմ», մենք զգում ենք մեր Երկնային Մոր մայրական պարկեշտության, զսպվածության, թագուհուն վայել նրբագեղության կատարելությունը, և իմանալով, թե որքան խելացիորեն են մեր մահկանացու մայրերը ներգործել մեր վրա այստեղ, մենք միթե՞ կարծում ենք, թե նրա ազդեցությունը մեր վրա որպես անհատների ավելի քիչ կլինի» (*Ensign,* May 1978, p. 6):

Ես երբեք չեմ հարցրել, թե ինչու է մեր երկնային մայրը կարծես քողարկված մեզ համար, քանի որ ես հավատում եմ, որ Տերը ունի իր պատճառները հայտնելու այնքան քիչ, որքան նա հայտնել է այդ թեմայի շուրջ: Դեռ ավելին, ես հավատում եմ, որ մենք գիտենք ավելի շատ մեր հավերժական բնույթի մասին, քան մենք կարծում ենք, որ գիտենք. և մեր սուրբ պարտավորությունն է հայտնել մեր գիտելիքը, սովորեցնել այն մեր երիտասարդ քույրերին ու դուստրերին, և դա անելով ամրացնել նրանց հավատքն ու օգնել նրանց կեղծ շփոթությունների այս դժվարին վերջին օրերում: Թույլ տվեք ինձ նշել մի քանի օրինակներ:

Տերը մեզ չի դրել այս միայնակ ու մռայլ աշխարհում առանց կյանքի ծրագրի: Վարդապետություն և Ուխտեր 52 գլխում մենք կարդում ենք Տիրոջ խոսքերը. «Ես ձեզ կտամ մի օրինակ, *բոլոր բաների համար, որպեսզի դուք չխաբվեք*» (հատված 14, շեղագիրն ավելացված է): Նա անկասկած ներառել է մեզ՝ կանանց, այդ խոստման մեջ: Նա մեզ տվել է օրինակներ Աստուածաշնչում, Մորմոնի Գրքում, Վարդապետություն և Ուխտերում և Թանկագին Մարգարիտում. և նա մեզ տվել է օրինակներ տաճարային արարողությունում: Մինչ մենք ուսումնասիրում ենք այդ օրինակները, մենք պետք է շարունակաբար հարցնենք. «Ինչու՞ է Տերն ընտրել ասել այս որոշակի բառերը և ներկայացրել դա հենց այս ձևով»: Մենք գիտենք, որ նա օգտագործում է փոխաբերություններ, խորհրդանիշներ, առակներ և այլաբանություններ՝ իր հավերժական ճանապարհները մեզ սովորեցնելու համար: Մեզ բոլորիս ծանոթ է Աբրահամի և Իսահակի միջև եղած հարաբերությունը, որն այնքան համարժեք է ՝ իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի զոհաբերության հետ կապված Աստծո տառապանքին: Բայց որպես կանայք մենք արդյոք լարում ենք մեր միտքը և հարցնում նաև այս փորձառությունում Սառայի ծանր վիճակի մասին: Մենք պետք է ուսումնասիրություն կատարենք այս հարցի շուրջ, և մենք միշտ պետք է փնտրենք ավելի խորը իմաստ: Մենք պետք է զուգահեռներ և խորհրդանիշներ փնտրենք: Մենք պետք է փնտրենք թեմաներ և հիմնական գաղափարներ այնպես, ինչպես մենք կգտնեինք Բախի կամ Մոցարտի ստեղծագործությունում, և մենք պետք է փնտրենք կրկնվող օրինակներ:

Ակնհայտ օրինակներից մեկն այն է, որ և Աստվածաշունչը, և Մորմոնի Գիրքը սկսվում են ընտանեկան թեմայով՝ ներառյալ ընտանեկան տարաձայնությունները: Ես միշտ հավատացել եմ, որ սա խորհրդանշում է ինչ- որ հավերժական բան *ընտանիքի* մասին ավելի շատ, քան լոկ պատմություն այդ որոշ ծնողների կամ այդ որոշ երեխաների մասին: Անկասկած մենք բոլորս էլամուսնացած թե միայնակ, երեխաներ ունեցող թե չունեցող, ամեն օր մեր կյանքում տեսնում ենք որոշ բաներ Ադամից ու Եվայից և որոշ բաներ Կայենից ու Աբելից: Ամուսնացած կամ չամուսնացած, երեխաներ ունեցող կամ չունեցող, մենք բոլորս էլ ունենք Լեքիի, Սարիայի, Լամանի, Նեփիի, Հռութի, Նոյեմիի, Եսթերի, Հելամանի որդիների և Իսմայելի դուստրերի որոշ զգացմունքները:

Դրանք մեզ համար տիպական օրինակներ և ստվերներ են, մեր մահկանացու ուրախությունների և տխրությունների մարմնացումներ, ճիշտ ինչպես Հովսեփի ու Մարիամի ծնողական նվիրվածության զգացողությունը, տիպական օրինակը, թե ինչպես են նրանք մեծացրել Աստծո Որդուն: Այս բոլորն ինձ համար ավելի բարձր սկզբունքների և ճշմարտությունների խորհրդանիշներ են, հոգատարությամբ ընտրված

խորհրդանիշներ, որոնք մեզ ցույց են տալիս ճանապարհը, անկախ նրանից մենք ամուսնացած ենք, թե ամուրի, երիտասարդ ենք, թե ծեր, ունենք ընտանիք թե չունենք:

Եվ, ակնհայտորեն, տաճարը շատ խորհրդանշական է: Կարո՞ղ եմ կիսվել մի փորձառությամբ, որն ունեցել եմ այնտեղ մի քանի ամիս առաջ՝ բառերի զգույշ ընտրության և խորհրդանիշների վերաբերյալ: Ես ընտրել եմ իմ բառերը զգուշությամբ, որպեսզի այսպիսով ոչինչ անպատշաճորեն չկիսվի տաճարից դուրս: Իմ հարցերը վերցված են հրատարակված սուրբ գրություններից:

Միգուցե դա զուգադիպություն էր (մեկն ասել է `»զուգադիպությունը փոքրիկ հրաշք է, որում Աստված նախընտրում է մնալ անհայտ»), բայց յուրաանչյուր դեպքում, մինչ ես սպասում էի տաճարի աղոթարանում, ես նստել էի մի ծեր մարդու կողքին, ով անսպասելիորեն, բայց քաղցրությամբ շրջվեց դեպի ինձ և ասաց. «Եթե դու ուզում ես պարզորեն տեսնել Արարման պատկերը, կարդա Աբրահամ 4-ը»: Մինչ ես սկսեցի դառնալ Աբրահամի գրքին, ես ուղղակի պատահաբար աչքի անցկացրեցի Մովսես 3.5. «Քանզի ես՝ Տեր Աստվածս, հոգեղեն ստեղծեցի բոլոր բաները, որոնց մասին ասացի, նախքան դրանք բնական տեսքով երկրի երեսին էին»: Փոխաբերական մեկ այլ ուղերձ՝մահկանացու արարմանը իմաստ տվող հոգևոր օրինակ: Այնուհետև ես ուշադիր կարդացի Աբրահամ 4-ը և օգտվեցի լվացման և օծման նիստին մասնակցելու հնարավորությունից: Ես դուրս եկա այնտեղից ավելի մեծ հայտնության լույս ունենալով մի բանի վերաբերյալ, որը ես միշտ գիտեի իմ սրտում, որ այդպես էր,որ տղամարդն *ու* կինը քահանայության օրհնությունների համատեղ ժառանգներ են, և չնայած տղամարդիկ կրում են այն կառավարելու ավելի մեծ պատասխանատվություն, կանայք զերծ չեն մնում իրենց քահանայության հետ կապված պարտականություններից:

> ***Ես գիտեմ, որ Աստված սիրում է մեզ անհատապես և որպես կանանց միություն, և որ նա առաքելություն ունի մեզանից յուրաքանչյուրի համար:***

Հետո, երբ ես մասնակցեցի օժտման նիստին, ես հարցրեցի ինքս ինձ, որ եթե ես լինեի Տիրոջ փոխարեն և կարողանայի երկրի վրա իմ երեխաներին տալ միայն պարզեցված, բայց զորեղ խորհրդանշական օրինակ իրենց դերերի և առաքելությունների վերաբերյալ, որքա՞ն ես կտայի և որտեղի՞ց կսկսեի: Ես լսում էի յուրաքանչյուր բառը: Ես փնտրում էի օրինակներ և նախատիպեր:

Ես մեջբերում եմ ձեզ համար Աբրահամ 4.27-ից. «Այդպես, Աստվածներն իջան ներքև, որ կազմավորեն մարդուն իրենց իսկ պատկերով, որ Աստվածների պատկերով ձևավորեն նրան, արու *և* էգ ձևավորեն *նրանց*» (Շեղագրերն ավելացված են): Նրանք ձևավորեցին արու և նրանք ձևավորեցին էգ *Աստվածների պատկերով, նրանց* սեփական պատկերով:

Այնուհետև, Աստծո հետ տանջալից զրույցի ժամանակ Ադամը հայտնում է, որ նա կնոջը կկոչի Եվա: Եվ ինչու՞ էր նա նրան կոչում Եվա: «Որովհետև նա բոլոր կենդանեաց մայրն [է]» (Ծննդոց Գ.20, Մովսես 4.26):

Մինչ ես նրբազգացորեն ընդունում եմ եմ այն իրական ցավը, որը շատ թե միայնակ և թե ամուսնացած կանայք զգում են, ովքեր երեխաներ չեն ունեցել մայրության մասին ցանկացած զրույցի ժամանակ, կարո՞ ղ ենք մենք խորհել մեր հավերժորեն կին ճանաչվելու այս մեկ հնարավորության վերաբերյալ, մեր միությունը մեր բազմազանության մեջ: Եվան ճանաչվեց որպես «բոլոր կենդանեաց մայր», մինչև նրա երեխա ունենալը տարիներ, տասնամյակներ, միգուցե դարեր առաջ: Կարող էր թվալ, որ նրա մայրությունը նախորդել էր նրա մայր դառնալուն, ճիշտ այնպես վստահորեն, ինչպես Պարտեզի կատարելությունը նախորդել էր մահկանացության դժվարություններին: Ես կարծում եմ, որ *մայրը* այն շատ զգուշությամբ ընտրված բառերից մեկն է, այն հարուստ բառերից մեկը,որն ունի բազում նշանակություններ: Մենք ամեն գնով պետք է թույլ չտանք, որ այդ բառը բաժանի մեզ: Ես հավատում եմ իմ ողջ սրտով, որ դա առաջինը և ամենակարևորը հայտարարություն է՝ մեր էության մասին, ոչ թե մեր երեխաների գլխաքանակի մասին:

Ես ունեմ ընդամենը երեք երեխա և ես արտասվել եմ, որ չեմ կարող ունենալ ավելին: Եվ ես գիտեմ, որ ձեզանից ոմանք չունենալով ոչ մեկը նույնպես արտասվել եք: Եվ երբեմն շատ շատերը պարզապես զայրացել են հենց այս փաստի կապակցությամբ: Հանուն մեր հավերժական մայրության, ես աղաչում եմ, որ դա այդպես չլինի: Որոշ կանայք ծնում և մեծացնում են երեխաներ, բայց երբեք «մայր» չեն լինում նրանց համար: Ոմանք էլ, ում ես սիրում եմ իմ ողջ սրտով, «մայր» են իրենց ողջ կյանքի ընթացքում, բայց երբեք չեն ծնել երեխաներ: Եվ մենք բոլորս էլ Եվայի դուստրերն ենք, անկախ այն բանից ամուսնացած ենք, թե միայնակ, երեխաներ ունենք, թե չունենք: Մենք ստեղծվել ենք Աստվածների պատկերով՝ աստվածներ և աստվածուհիներ դառնալու համար: Եվ մենք կարող ենք որոշ բան նախատեսել այդ աստվածային օրինակից, այդ մայրական նախատիպից, իրար համար և նրանց համար, ովքեր գալիս են մեզանից հետո: Ինչպիսին էլ լինեն մեր պայմանները, մենք կարող ենք ձեռք մեկնել, շփվել, գրկել, բարձրացնել և խնամել,բայց մենք չենք կարող դա անել մեկուսի: Մենք ունենք ` հոգին խաղաղեցնող և վերքեր կապող քույրերի միության կարիք:

Ես գիտեմ, որ Աստված սիրում է մեզ անհատապես և որպես *կանանց* միություն, և որ նա առաքելություն ունի մեզանից յուրաքանչյուրի համար: Ինչպես ես սովորեցի

Գալիլեայի բլրի մոտ իմ գտնվելու պահին, ես վկայում եմ, որ եթե մեր ցանկություններն արդար են, Ասված վերահսկում է մեր բարու համար և որ երկնային ծնողները քնքշությամբ կզբաղվեն մեր կարիքներով: Մեր բազմազանությամբ և անհատականությամբ հանդերձ, իմ աղոթքն է, որ մենք միասնական լինենք՝միասնական *մեր* յուրահատուկ, նախասահմանված առաքելությունը փնտրելում, միասնական «Ի՞նչ կարող է թագավորությունն անել ինձ համար» *չհարցնելում* , այլ «Ի՞նչ կարող եմ ես անել թագավորության համար: Ինչպե՞ս ես կարող եմ իրագործել *իմ* արարման նպատակը: Իմ հանգամանքներում և իմ խնդիրներով ու իմ հավատքով, որտե՞ղ է աստվածային նմանության իմ *ամբողջական* կայացումը, որով ես ստեղծվել եմ»:

Հավատքով առ Ասված, նրա մարգարեները, նրա եկեղեցին և մեր անձը,հավատքով առ մեր իսկ աստվածային ստեղծումը,թող մենք հանգիստ լինենք և թողնենք շատ բաների հետ կապված մեր հոգսերը և տագնապները: Թող որ մենք հավատանքառանց որևէ կասկածի այն լույսին, որ շողում է՝ նույնիսկ մութ վայրում:

ՀՂՈՒՄՆԵՐ

Ashton, Marvin J. *One for the Money: Guide to Family Finance* (booklet). 1992.

Ballard, Melvin J. *Melvin J. Ballard—Crusader for Righteousness.* 1966.

Bateman, Merrill J. "The Eternal Family." In *Brigham Young University 1997–98 Speeches.* 1998.

Benson, Ezra Taft. *Come unto Christ.* 1983.

———. "In His Steps." In *1979 Devotional Speeches of the Year.* 1980.

———. "The Law of Chastity." In *Brigham Young University 1987–88 Devotional and Fireside Speeches.* 1988.

———. "Righteousness Exalteth a Nation" (address at Provo Freedom Festival, 29 June 1986).

———... . *So Shall Ye Reap.* Compiled by Reed A. Benson. 1960.

———. *The Teachings of Ezra Taft Benson.* 1988.

———. *To the Mothers in Zion* (pamphlet). 1987.

———. *To the Fathers in Israel* (pamphlet). 1987.

Brown, Hugh B. *Continuing the Quest.* 1961.

———. *Bulletin,* 1993.

Christensen, Joe J. *One Step at a Time.* 1996.

James R. Clark, comp. *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints.* 6 vols. 1965–75.

Eyring, Henry B. *To Draw Closer to God.* 1997.

Family Home Evening: Love Makes Our House a Home. 1974.

Father, Consider Your Ways: A Message from The Church of Jesus Christ of Latter-day Saints (pamphlet). 1973.

Երիտասարդներին զորացնելու համար՝ կատարել Աստծո հանդեպ մեր պարտականությունը (գրքույկ): 2001:

Grant, Heber J. *Gospel Standards.* Compiled by G. Homer Durham. 1941.

Green, Susette Fletcher and Dawn Hall Anderson, ed. *To Rejoice as Women: Talks from the 1994 Women's Conference.* 1995.

Hinckley, Bryant S. *Sermons and Missionary Services of Melvin Joseph Ballard.* 1949.

Hinckley, Gordon B. *Cornerstones of a Happy Home* (pamphlet). 1984.

———."Our Fading Civility." Brigham Young University commencement and inauguration ceremony, 25 Apr. 1996.

———. *Teachings of Gordon B. Hinckley.* 1997.

———. "This I Believe." In *Brigham Young University 1991–92 Devotional and Fireside Speeches.* 1992.

Holland, Jeffrey R. *Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon.* 1997.

———. "How Do I Love Thee?" In *Brigham Young University 1999–2000 Speeches.* 2000.

———. *Speaking Out on Moral Issues.* 1998.

Hunter, Howard W. *The Teachings of Howard W. Hunter.* Edited by Clyde J. Williams. 1997.

Journal of Discourses. 26 vols. 1854–86.

Kimball, Spencer W. *Faith Precedes the Miracle.* 1972.

———. *Love versus Lust.* Brigham Young University Speeches of the Year. 5 Jan. 1965.

———."Marriage and Divorce." In *1976 Devotional Speeches of the Year.* 1977.

———. *The Miracle of Forgiveness.* 1969.

———. *President Kimball Speaks Out.* 1981.

———. *The Teachings of Spencer W. Kimball.* Edited by Edward L. Kimball. 1982.

———. Fireside address delivered in San Antonio, Texas, 3 Dec. 1977.

Lee, Harold B. *Decisions for Successful Living.* 1973.

———. *Stand Ye in Holy Places: Selected Sermons and Writings of President Harold B. Lee.* 1974.

———. *The Teachings of Harold B. Lee.* Edited by Clyde J. Williams. 1996.

Lewis, C. S. *Mere Christianity.* 1960.

Ludlow, Daniel H., ed. *Encyclopedia of Mormonism.* 5 vols. 1992.

Maxwell, Neal A. *All These Things Shall Give Thee Experience.* 1979.

———."But for a Small Moment." In *Speeches of the Year: BYU Devotional and Ten-Stake Fireside Addresses, 1974.* 1975.

———. *Deposition of a Disciple.* 1976.

———. *Even As I Am.* 1982.

———. *Meek and Lowly.* 1987.

———. *Men and Women of Christ.* 1991.

———. *"Not My Will, But Thine."* 1988.

———. *That My Family Should Partake.* 1974.

———. *We Will Prove Them Herewith.* 1982.

———. *Wherefore, Ye Must Press Forward.* 1977.

McConkie, Bruce R. *Doctrinal New Testament Commentary.* 3 vols. 1966–73.

———. *Mormon Doctrine.* 2nd ed. 1966.

———. *A New Witness for the Articles of Faith.* 1985.

McKay, David O. *Gospel Ideals.* 1953.

Oaks, Dallin H. *Pure in Heart.* 1988.

———."Revelation." In *Brigham Young University 1981–82 Fireside and Devotional Speeches.* 1982.

Packer, Boyd K. *Eternal Love.* 1973.

———. "Self-Reliance." In *Speeches of the Year, 1975.* 1976.

———. *The Things of the Soul.* 1996.

Pratt, Parley P. *Writings of Parley Parker Pratt.* Edited by Parker Pratt Robison. 1952.

Responding to Abuse: Helps for Ecclesiastical Leaders. 1995.

Richards, LeGrand. *A Marvelous Work and a Wonder.* Rev. ed. 1966.

Smith, George Albert. *Sharing the Gospel with Others.* Selected by Preston Nibley. 1948.

Smith, Joseph. *History of the Church.* 7 vols. 2nd ed. rev. Edited by B. H. Roberts. 1932–51.

———. *Teachings of the Prophet Joseph Smith.* Selected by Joseph Fielding Smith. 1976.

Smith, Joseph F. *Gospel Doctrine.* 5th ed. 1939.

Smith, Joseph Fielding. *Doctrines of Salvation.* Compiled by Bruce R. McConkie. 3 vols. 1954–56.

———. *The Way to Perfection: Short Discourses on Gospel Themes.* 2nd ed. 1935.

Snow, Lorenzo. *The Teachings of Lorenzo Snow.* Edited by Clyde J. Williams. 1996.

Talmage, James E. *The House of the Lord.* 1968.

Taylor, John. *The Gospel Kingdom.* Selected by G. Homer Durham. 1943.

Widtsoe, John A. *Evidences and Reconciliations.* Arranged by G. Homer Durham. 3 vols. in 1. 1960.

———. *Program of the Church of Jesus Christ of Latter-day Saints.* 1937.

———. "Temple Worship." *Utah Genealogical and Historical Magazine,* Apr. 1921, 50–64.

Woodruff, Wilford. *The Discourses of Wilford Woodruff.* Selected by G. Homer Durham. 1946.

Young, Brigham. *Discourses of Brigham Young.* Selected by John A. Widtsoe. 1954.

ՑՈՒՑԻՉ

Ագահություն
«Ագահություն, եսասիրություն և բավականություններով տարվելը», Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն, 125

Ադամի անկումը, 274

ազատ կամք
«Ազատ կամք, թե՞ ոգեշնչում», Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի, 202
երիտասարդների, 53
հիմնական սկզբունք է, 18, 150
ոչ «ազատ», 243

ազատություն ընտրելու, 150, 243

ազգությունը և մշակույթը զուգընկերոջ ընտրության ժամանակ, 176, 197

ազնվություն, 356
ֆինանսական, 134
ինքներդ ձեր և ուրիշների հետ, 58

ազնվություն: *Տես նաև* վստահություն ամուսնությունում

աղոթք
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», 86
դիմակայել փորձությանը, 239
ընտանիք, 135, 297, 374
լուծում է տարաձայնությունները, 194
կարևոր է ամուսնության մեջ, 299, 303
կարևոր է զուգընկերոջ ընտրության հարցում, 201
սկզբունք, 88

ամուսին: *Տես նաև* հայր
«Լինել արդարակյաց ամուսին և հայր», Նախագահ Հովարդ Վ. Հանթեր, 216

ամուսնալուծություն, 75-78: *Տես նաև* ուխտեր և արարողություններ
«Ամուսնության բարելավումը », Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ, 193
«Ամուսնություն և ամուսնալուծություն», Երեց Դեյվիդ Բ. Հեյթ, 76
«Ամուսնություն և ամուսնալուծություն», Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ, 176
«Ինչ Աստված միմյանց կապեց», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 183
«Ուխտյալ ամուսնություն», Երեց Բրյուս Կ. Հեյֆն, 48
եսասիրությունը պատճառ է դառնում, 180, 185, 194
երեխաների համար ծանր բեռ դարձած վայրեր, 190

ամուսնության նոր և հավերժական ուխտը, 41, 175

ամուսնություն
«Ամուսնության բարելավումը», Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ, 193
«Ամուսնություն և ամուսնալուծություն», Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ, 176
«Ամուսնություն», Երեց Բոյդ Ք. Փաքեր, 189
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Երջանկության մեծ ծրագիրը», Երեց Դալլին Հ. Օուքս, 273
«Ժամանակի և ողջ հավերժության համար», Երեց Բոյդ Ք. Փաքեր, 68
«Ինչ Աստված միմյանց կապեց», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 183
«Ինչու՞ ամուսնանալ տաճարում», Երեց Ջոն Ա. Ուիդքսոու, 187
«Ուխտյալ ամուսնություն», Երեց Բրյուս Կ. Հեյֆն, 48
անհրաժեշտ է Աստծո ծրագրում, 274
հավերժական, 175-189
հնարավորություն չի եղել, 254, 274
պաշտոնական թույլտվություն ունենալ, 332
սկզբունքը, 25, 76

ամուսնություն ողջ տարիների ընթացքում, 193-195
«Ամուսնության բարելավումը», Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ, 193
«Ամուսնությունը և երջանկության մեծ ծրագիրը», Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն, 299
«Համբերեք և բարձրացվեք», Երեց Ռասսել Մ. Նելսոն, 27
«Հաշվեկշռի մեջ պահելով կյանքի պահանջները», Երեց Մ. Ռասսել Բալլարդ, 295
«Հինքլիները նշելու են 60-րդ տարեդարձը», 195

Այրինգ, Հենրի Բ., viii, 140, 363
«Ապահովություն գտնել խորհրդում», 305
«Ընտանիք», 109
անակնկալ դեպքերի պատրաստվածություն, 124
անարգանք, 3-9
«Անարգանքի ողբերգական սպիների բժշկում», Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, 6
«Դաստիարակել կայուն հավասարակշռություն», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 350
«Եկեղեցու կանայք», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 376
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Մեր հանդիսավոր պարտականությունները», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 23
ամուսին, 86, 107, 114, 132, 139, 145, 218
արժանավայել չէ քահանայություն կրողին, 167-8, 377
երեխա, 139, 218

թմրանյութ, 60, 264
խոսքով, 24, 216
կրկնել օրինակը, 96, 356
հոգևոր, 24
հպարտության արդյունք է, 285
պահանջում է ապաշխարություն, 94
պաշտպանվել ընդդեմ, 163, 186, 218, 278, 377
պոռնոգրաֆիան կարող է առաջնորդել դեպի, 281
սեռական, 118, 218
տուժածները մեղք չունեն, 58, 356
ֆիզիկական, 94, 218, 350

անարգանքի զոհերը, 6

անարդարացի իշխանություն
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Միասնություն գտնելու բանաձև՝ հաղթահարելով տարակարծություններն ամուսնության մեջ», Երեց Ռոբերթ Ի. Ուելս, 301
հարցեր ստուգելու համար, 6

Անդերսեն, Հ. Վերլան, 262

անկախություն, 142-43
«Դառնալով ինքնապավինող», Երեց Լ. Թոմ Փերի, 323
Ֆինանսական, 326
«Ինքնապավինում», Երեց Բոյդ Ք. Փաքեր, 321
ծնողներից, 10

անկյունաքարեր
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132

անհամաձայնություն, 4, 32, 220, 257, 285

անհաջողություն, 49

Աշթոն, Մարվին Ջ., 20, 62, 96, 120, 208, 258, 263, 281, 328, 360, 363
«Ընտանեկան հաղորդակցում», 33
«Փողի և ընտանեկան ֆինանսների համար մեկ ուղեցույց», 120

Աշխատանք
երեխաներին ուսուցանել, 263, 269
«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», 96
սկզբունքը, 96
«Ուսդ դեմ տուր անվին», Երեց Նիլ Ա. Մաքսվել, 98

աշխատանքներ, 250

աշխատող մայրեր: *Տես* տնից դուրս մոր աշխատանքը

ապահովում, 124

ապաշխարություն
անբարոյականությունից հետո, 151, 239, 242, 244, 248
բերում է ուժ և խաղաղություն, 13, 58, 248
խոստովանում և, 152
«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», 86
«Թագավորության խաղարարար բաները», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 12
սկզբունքը, 89, 245

առանց ամուսնության համատեղ ապրելը, 156-160
կեղծ ամուսնություն է, 190

Առաջին Նախագահություն
«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», 86
«Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների Վկայությունը», 153
1912 հայտարարություն, որ մենք երկնային ծնողների զավակներն ենք, 273, 316
1915 հրահանգ ընտանեկան երեկոներ նախաձեռնելու մասին, 257, 374
1936 ուղերձ աշխատելու կարիքի վերաբերյալ, 97, 345
1942 ուղերձ բազմանալու և երկիրը լցնելու նախազգուշացման վերաբերյալ, 69
1974 նամակ տաճարային հանդերձների սուրբ էության վերաբերյալ, 342
1988 նամակ տաճարային ներքնազգեստը կրելու կարգի վերաբերյալ, 342
1991 նամակ բարոյականության և հավատարմության չափանիշների վերաբերյալ, 242, 310, 314
1996 Ջատկի շնորհավորական մաղթանք ավելի բարի լինելու վերաբերյալ, 308
1999 նամակ ընտանիքների համար հոգ տանելու կարևորության վերաբերյալ, 291
ամուսնության մեջ հավատարմության վերաբերյալ, 116
Դեյվիդ Օ. Մակքեյ, Հագ Բ. Բրաուն, Ն. Էլդոն Թաններ, ծննդաբերության վերահսկման վերաբերյալ, 15
Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ուղերձը՝ քո անձը մաքուր պահիր, 249
Էզրա Թաֆթ Բենսոն, Գորդոն Բ. Հինքլի, Թոմաս Ս. Մոնսոն, զուգընկերոջ ընտրության վերաբերյալ, 202
Հեբեր Ջ. Գրանտ, Անտոնի Վ. Իվինս, Չարլզ Վ. Նիբլի, հավերժական աճի վերաբերյալ, 175
Հեբեր Ջ. Գրանտ, Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսեր, Դեյվիդ Օ. Մակքեյ, ծննդաբերության վերահսկման վերաբերյալ, 15
մայրությունը որպես սուրբ ծառայություն, 217, 224, 259, 366
Ջոզեֆ Ֆ. Սմիթ, Անտոն Հ. Լանդ, Չարլզ Վ. Փենրոս, ընտանեկան երեկոների վերաբերյալ, 257
սեռական մեղքի ահռելիության վերաբերյալ, 275
Սպենսեր Վ. Քիմբալ, Ն. Էլդոն Թաներ, Մարիոն Գ. Ռոմնի, երեխաներ, որոնք կարող է մոլորվել, 48
տարհամոզել դաջվածքներ և զարդեր կախելու նպատակով մարմնի վրա անցքեր անելիս, 234-35

առաջնահերթություններ և հավասարակշռություն, 290-95
«Ծնողներ Սիոնում», Նախագահ Բոյդ Ք. Փաքեր, 292
«Հաշվեկշռի մեջ պահելով կյանքի պահանջները», Երեց Մ. Ռասսել Բալլարդ, 295
ամուսնությունը բարձր է, 173
ընտանիքի, 217
կարգավորել, 63
օգնում են մեզ համբերել, 29

առաքինություն
և մաքրաբարոյություն, 239
բարելավում է ամուսնությունը, 172, 194
լինել …մարդ, 219
որպես Աստծո սպառազինություն, 235

առաքյալների վկայությունները, 153

առողջություն, ֆիզիկական, 60, 344

Ասայ, Կառլոս Ի., 331
«Տաճարային ներքնազգեստ՝ներքին պարտավորության արտաքին դրսևորում», 339

Աստծո սպառազինությունը
ամբողջ, 340
«Հագեք Աստծո ողջ սպառազինությունը», Նախագահ Հարոլդ Բ. Լի, 235

աստվածային
ամուսնության հասարակական կարևոր ավանդույթը, 181
«Զարգացնել աստվածային հատկանիշներ», Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին, 135
ճակատագիր, 86

արարման միջոցառումներ
«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», 86
սկզբունքը, 86

արարողություններ և ուխտեր, 39-50
հաղորդություն, 44
մկրտություն, 42
սելեստիալ ամուսնություն, 47
Սուրբ Հոգու պարգևի հաստատումը, 43
տաճարային օժտում, 46
քահանայություն, 45

արարում
ղեկավարել սուրբ զորությունը, 247, 275
մտերմության բարձրագույն նպատակն է, 57, 144, 145
միայն ամուսնու և կնոջ միջև, 86

արդարակեցությունը նախապատրաստում է ծնողներին, 267

արժանավորություն
«Արժանի ապրել այն աղջկան, որի հետ մի օր կամուսնանաք»,
զուգընկերոջ ընտրության ժամանակ, 198
Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 219
տաճար, 330, 336

արժեզրկում, 124

արժեքներ

արյան անալիզներ, 332

արյունապղծություն, 1,2

արտաքին տեսք
երիտասարդների, 55
դրսի, 198
հոգացեք ձեր, 72

բազմացեք և լցրեք երկիրը
աշխարհը ստեղծված է, 39
պատվիրանը ուժի մեջ է, 69, 86, 146

Բալլարդ, Մ. Ռասսել, 53, 83, 87, 97, 258, 260, 281, 290, 345
«Հաշվեկշռի մեջ պահելով կյանքի պահանջները», 295

Բալլարդ, Մելվին Ջ., 17, 175

Բանքս, Բեն Բ., 267, 269, 328

բավականություններով տարվելը
«Ագահություն, եսասիրություն և բավականություններով տարվելը », Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն, 125

բարոյականություն և համեստություն, 230-47
և արժեքներ, 148
«Անձնական մաքրություն», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 245
«Երջանկության մեծ ծրագիրը», Երեց Դալլին Հ. Օուքս, 267
«Հագեք Աստծո ողջ սպառազինությունը», Նախագահ Հարոլդ Բ. Լի, 235
«Մաքրաբարոյության օրենքը», Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, 239
«Մաքրել անոթի ներսը», Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, 295
«Մեր բարոյական միջավայրը», Երեց Բոյդ Ք. Փաքեր, 242
Առաջին Նախագահության գրասենյակ, 242

բարություն, հոմանիշ գթության համար, 174

Բեյթման, Մերիլ Ջ., 67, 84, 87, 96, 327

Բենսոն, Էզրա Թաֆթ, viii, 3, 17, 20, 52, 61, 67, 84, 88, 101, 117, 118, 138, 142, 161, 165, 199, 231, 250, 254, 257, 261, 267, 278, 281, 288, 290, 291, 298, 346, 356, 360, 362, 365, 366
«Զգուշացեք հպարտությունից», 283
«Մաքրել անոթի ներսը», 282
«Մաքրաբարոյության օրենքը», 239
«Ուղղված Իսրայելի հայրերին», 213
«Սիոնի մայրերին», 370

բնական մարդ
«Դաստիարակել կայուն հավասարակշռություն», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 350
«Հանեք բնական մարդուն և հաղթող դուրս եկեք», Երեց Նիլ Ա. Մաքսվել, 351
«Մաքրել անոթի ներսը», Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, 282
«Մեր վաղանցիկ քաղաքակրթությունը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 348
կարիքները, 114, 125

բռնաբարություն, 1,2

Բրադֆորդ, Վիլիամ Ռ., 362

Բրաուն, Հուչ Բ., 15, 102, 330

Բրաուն, Վիկտոր Լ., 81

գթություն, 20-22
«Զարգացնել աստվածային հատկանիշներ», Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին, 135
«Ինչպե՞ս եմ ես սիրում քեզ», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 165
«Սիրո և փոխըմբռնման միությունը», Երեց Մարլին Ք. Ջենսեն, 170
համերաշխություն … միջոցով, 362

գիտելիք հոգևոր բաների մասին, 153-56
«Ապահովություն գտնել խորհրդում», Երեց Հենրի Բ. Այրինգ, 305
«Ձեռք բերել հոգևոր գիտելիք», Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, 153

Գրանտ, Հեբեր Ջ., 15, 365

դատել, 35

Դյու, Շերի Լ.
«Մենք Աստծո կանայք ենք», 383

եկամուտներ, 120-28: *Տես նաև* պարտք
«Փողի և ընտանեկան ֆինանսների համար մեկ ուղեցույց», Երեց Մարվին Ջ. Աշթոն, 120
«Դառնալ ինքնապավինող», Երեց Լ. Թոմ Փերի, 323
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Հաշվեկշռի մեջ պահելով կյանքի պահանջները», Երեց Մ. Ռասսել Բալլարդ, 295
ազնվություն, 132
ամուսինները կիսում են պարտականությունը, 222
ապրել համաձայն, 300
պատրաստված լինել, 344

եսասիրություն, 318
«Ազահություն, եսասիրություն և բավականություններով տարվելը», Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն, 125
«Ես հարց ունեմ», Դոկտոր Հոմեր Էլսվորթ, 18
«Ինչ Աստված միմյանց կապեց», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 183
«Հանեք բնական մարդուն և հաղթող դուրս եկեք», Երեց Նիլ Ա. Մաքսվել, 354
ազատվելու օրհնությունները, 354
ամուսնալուծության պատճառ, 91, 180, 185
Անեսասիրություն 10, 180, 354
որպես չափման միջոց, 18
վտանգները, 351

երաժշտություն և պարեր, 56

երախտագիտություն
առ Աստված, 226
սովորիր երիտասարդ ժամանակ, 54

Երանություններ, 226

Երեխաներ
երեխա չունենալը ժամանակավոր է, 277
երես տալ, 125
ժամանակ անցկացրեք, 268, 374, 276
լավ ամուսնություններն օրհնում են, 258
կարգապահությունը, 270
ուխտի, 238, 272
ուսուցանել ավետարանը, 261, 263, 375
սովորեցնել լինել պատասխանատու, 124, 294
քմահաճ, 48, 184, 255

երեխաներ բերել, 273

Երիտասարդներին Զորացնելու համար՝ Կատարել Աստծո Հանդեպ Մեր Պարտականությունը, գրքույկ, 53

Երջանկություն
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Երջանկության մեծ ծրագիրը», Երեց Դալլին Հ. Օուքս, 273
«Երջանկության մեծ ծրագրով ապրելու ուրախությունը», Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, 379
«Կանացի սեռի ուրախությունը», Քույր Մարգարետ Դ. Նադաուլդ, 72
ամուսնության մեջ, 138-40
ծնող լինելու, 260
կանանց տխրությունը, 23
հասնել, 241, 382
տաճարային ամուսնությունը բերում է, 138-40, 177, 188, 191

զոհաբերություն, 33

զուգընկերներ, մոլորություն, 52, 200

զուգընկերոջ ընտրություն, 197-204
«Ազատ կամք, թե՞ ոգեշնչում», Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի, 202

«Արժանի ապրել այն աղջկան, որի հետ մի օր կամուսնանաք», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 219

զուգընկերոջ ընտրությունում մշակույթն ու ազգությունը, 176, 197

զվարճանք և լրատվամիջոցներ, 55

Էլսվորթ, Հոմեր

«Ես հարց ունեմ», 18

Ընկերներ

զգուշորեն ընտրեք, 54

օգնում են մեզ հավասարակշռություն պահպանել, 296

ընտանեկան երեկո

առաջին նախագահության խորհուրդը որպես ամենամեծ կարևորություն, 257, 291

դարձնել տունը ուսման տուն, 258

ժամանակ տրամադրել, 375

հայրը նախագահում և հոգևոր առաջնորդություն է տալիս, 212, 215

հոր պարտականությունն է կազմակերպել, 225

ձեռնարկ, 48

շաբաթական, 101, 254, 255, 297

սովորեցնել ավետարանը, 102, 218

վերահաստատված, 293

ընտանիք

«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132

«Ընտանիք», Երեց Հենրի Բ. Այրինգ, 109

«Ժամանակի և ողջ հավերժության համար», Երեց Բոյդ Ք. Փաքեր, 68

«Հավերժական ընտանիք», Երեց Ռոբերտ Դ. Հեյլս, 105

աղոթք, 135

առանցքային է Արարչի ծրագրում, 85

ժամանակ անցկացնել, 293

խորհուրդ, 258

հաստատված է Աստծո կողմից, 86

պատրաստվածություն, 214

պլանավորում, 18, 213

պոռնոգրաֆիայի ազդեցությունները, 278

օրհնություն երիտասարդների համար, 54

Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին, 15, 86-107, 129, 252, 263, 267, 309, 366

արժանի է լուրջ խորհրդածության, 109

«Ընտանիք», Երեց Հենրի Բ. Այրինգ, 109

սկզբունքները գալիս են, viii

Թալմեյջ, Ջեյմս Ի., 330

Թաներ, Ն. Էլդոն, 15, 48, 233, 260, 241

Թեյլոր, Ջոն, 144

Թենորիո, Հորացիո Ա., 266

թերություններ կողակցի մեջ, 49

Թուլ, Ա. Թեոդոր, 268

ժամադրության չափանիշներ, 52-60

պոռնոգրաֆիայի ազդեցությունը, 278

Երիտասարդներին Զորացնելու համար՝ Կատարել Աստծո Հանդեպ Մեր Պարտականությունը, 53

«Ինչպե՞ս եմ ես սիրում քեզ», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 165

Իմաստության Խոսքը, 220

Ինտերնետ, 221, 281

Ինքնակառավարում

դյուրագրգռության վրա, 24

կարևոր է երջանիկ ամուսնության համար, 195, 359

կրքերի վրա, 148, 172

փողի հետ կապված, 121

ինքնապավինում, 321-326

«Դառնալով ինքնապավինող», Երեց Լ. Թոմ Փերի, 323

«Ինքնապավինում», Երեց Բոյդ Ք. Փաքեր, 321

«Ուսդ դեմ տուր անվին», Երեց Նիլ Ա. Մաքսվել, 98

ֆինանսապես, 64

Լարսեն, Դին Լ., 97, 105

լեզու, օգտագործել մաքուր, 56, 234

Լի, Հարոլդ Բ., 10, 65, 87, 202, 210, 278, 331

«Հագեք Աստծո ողջ սպառազինությունը», 235

«Սահմանադրություն կատարյալ կյանքի համար», 129

լսել: *Տես* հաղորդակցվել

խաղաղություն, անձնական, 12

խնայողություններ, 123

խնդիրներ լուծելը ամուսնության մեջ, 298-303: *Տես նաև* համակերպում

«Ամուսնություն և ամուսնալուծություն», Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ, 176

«Ամուսնությունը և երջանկության մեծ ծրագիրը», Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն, 299

«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132

«Միասնություն գտնելու բանաձև՝ հաղթահարելով տարակարծություններն ամուսնության մեջ», Երեց Ռոբերտ Ի. Ուելս, 301

«Ուխտյալ ամուսնություն», Երեց Բրյուս Կ. Հեյֆն, 48

լուծումները գալիս են աղոթքով, 78

համակերպում, 10-11

Խոստումի Սուրբ Հոգին, 43, 141

Խորհուրդ

«Ապահովություն գտնել խորհրդում», Երեց Հենրի Բ. Այրինգ, 305

երկնային, 273
ծուխ, 295
մարգարեական, 305-308
փնտրեք բարի, 77

ծախսերը պլանավորել
ապրել միջոցներին համապատասխան, 300
օգտագործել, 122

ծառայությունը երիտասարդների համար, 60

ծննդաբերության վերահսկում, 15-19
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Երջանկության մեծ ծրագիրը», Երեց Դալլին Հ. Օուքս, 273
«Ես հարց ունեմ», Դոկտոր Հոմեր Էլսվորթ, 18
«Սիոնի մայրերին», Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, 370

ծնող լինել՝ ստեղծել ավետարանի վրա կենտրոնացած տուն, 254-72
«Ծնողներ Սիոնում» Նախագահ Բոյդ Ք. Փաքեր, 292
«Մեծագույն մարտահրավերն աշխարհում՝ լավ ծնող լինելն է», Երեց Ջեյմս Ի. Ֆաուստ, 269
հարստացնում է ամուսնությունը, 195
մեծագույն երջանկություն, 16
պատվիրան է, 86
պարտավորություն կյանք ծնելու, 148
սնել դուստրերի ներուժը, 74

ծնող լինելը: *Տես* ծնող լինելը՝ ստեղծել ավետարանի վրա կենտրոնացած տուն

կանանց աստվածային դերն ու պարտականությունները, 365-395
«Արդար կնոջ դերը», Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ, 368
«Եկեղեցու կանայք», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 376
«Երջանկության մեծ ծրագիրը», Երեց Դալլին Հ. Օուքս, 273
«Երջանկության մեծ ծրագրով ապրելու ուրախությունը», Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, 379
«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», 86
«Կանանց պատվելու մեր սրբազան պարտականությունը», Երեց Ռասսել Մ. Նելսոն, 223
«Կանացի սեռի ուրախությունը», Քույր Մարգարետ Դ. Նադաուլդ, 72
«Մեկ բան է պետք» - դառնալ ավելի մեծ հավատքի տեր կանայք Քրիստոսում, 386
«Մենք Աստծո կանայք ենք», Քույր Շերի Լ. Դյու, 383
«Սիոնի մայրերին», Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, 370
դաստիարակություն, 214
կանանց գործունեության ազդեցությունը, 84
կանանց տխրությունը, 23

կատարելություն, աստիճանաբար, 173

կարգապահություն
«Դաստիարակել կայուն հավասարակշռություն», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 350
ավանդույթ, 357
բարդ խնդիր, 270
խորհուրդները, 241
հավասարակշռություն, 24, 377
սիրով, 266

կարեկցանք, 95

կարիքներ: *Տես* ցանկություններ և կարիքներ

կենակցություն: *Տես* առանց ամուսնության համատեղ ապրելը. նույնասեռ ամուսնություն

կինոնկարներ և տեսաֆիլմեր, 281

կինոնկարներ և տեսաֆիլմեր, 281

Կիրակին սուրբ պահելը, 59

կիրք, սանձել, 144, 145, 146, 148, 150, 172

Կուրտիս, Լեգրան Ռ., 258, 363

կրթություն, 80-81
աշխատանք, 199, 222
բանալի է տնտեսական հեռանկարի համար, 222
երիտասարդների համար, 54
կանանց համար, 253
շարունակական գործընթաց, 124

կրոն, գործոն զուգընկերոջ ընտրության ժամանակ, 182, 197

հագուստ
համեստություն, 233
հարսանյաց, 334

Հազարամյակ, 277

Հակադրություն
և դժվարություններ, 14
տաճարային աշխատանքին, 338

հակվածություն
նույն սեռի հանդեպ, 309
ֆիզիկական, 162, 163

հաղորդակցում, 32-38
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Ընտանեկան հաղորդակցում», Երեց Մարվին Ջ. Աշթոն, 33
«Թագավորության խաղարարար բաները», Երեց

Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 12
«Ունկնդրեք, որ սովորեք», Երեց Ռասսել Մ. Նելսոն, 36
առանցքային է երջանիկ ամուսնության համար, 196
արտահայտել երախտագիտություն կողակցի համար, 93
լսելը, 299, 302
միասնություն …միջոցով, 363

հաղորդություն, 44

համաժողով, գերագույն, 155

համակերպում ամուսնության մեջ, 10-11: *Տես նաև* խնդիրներ լուծելը ամուսնության մեջ
«Ամուսնություն և ամուսնալուծություն», Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ, 176
«Միասնություն գտնելու բանաձև՝ հաղթահարելով տարակարծություններն ամուսնության մեջ», Երեց Ռոբերտ Ի. Ուելս, 301
«Ուխտյալ ամուսնություն», Երեց Բրյուս Կ. Հեյֆն, 48

համբերել մինչև վերջ: *Տես նաև* պարտավորություն. ուխտեր և արարողություններ. ամուսնություն ողջ տարիների ընթացքում
«Համբերեք և բարձրացվեք», Երեց Ռասսել Մ. Նելսոն, 27

Համբերություն
ինքնակառավարման ձև է, 5
խոհրուրդ տալ, 307
հաղորդակցվելիս, 35
սեփական անձի հանդեպ, 391

համեստություն
դեմ է հպարտությանը, 282, 286
խորհուրդն ընդունիր, 307
կարևոր է հոգևոր գիտելիքի համար, 154

հայտարարություն ընտանիքի վերաբերյալ: *Տես* Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին

հայտնություն, 200, 203, 207

հայր: *Տես նաև* տղամարդկանց աստվածային դերն ու պարտականությունները
բացակայությունը վնասում է երեխաներին, 227
և ծնող լինելը, 254
«Լինել արդարակյաց ամուսին և հայր», Նախագահ Հովարդ Վ. Հանքեր, 216
«Հայրեր, խորհեք ձեր ուղիների մասին», 210
«Հայրերի ձեռքերը», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 226
«Ուղղված Իսրայելի հայրերին», Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, 213
ազդեցությունը, 228
հայրապետ է տանը, 214
հավերժական կոչումը, 213
հարցազրույց, 266
հետևիր Աստծո օրինակին, 228
նախագահել արդարությամբ, 86
պատասխանատու է ապահովել ընտանիքի կարիքները, 86, 213, 218, 250
պատրաստություն դառնալու, 222
պարտականությունը, 210, 264
օրհնություններ, 212

հայրենասիրություն, 357

հայրերի ավանդույթները, 355-359

հանդերձներ, տաճար
«Տաճարային ներքնազգեստ՝ ներքին պարտավորության արտաքին դրսևորում», Երեց Կառլոս Ի. Ասայ, 339
պատմական տեղեկություններ, 341
պատշաճ կրում, 331

Հանքեր, Հովարդ Վ., 3, 16, 22, 65, 81, 82, 92, 93, 116, 117, 146, 210, 216, 251, 253, 255, 258, 259, 268, 279, 330, 345, 360, 366, 367
«Լինել արդարակյաց ամուսին և հայր», 216

Հանքս, Մարիոն Դ., 104, 209, 355
«Ներում՝ սիրո բարձրագույն ձևը», 93
«Իրենց հայրերի ավանդույթը», 356

հասունություն, 208-9

հավասարակշռություն
վերահսկեք ձեր, 24, 167, 220
«Դաստիարակել կայուն հավասարակշռություն», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 350

հավասարություն
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
ամուսնական զույգի, 67, 217
տղամարդու և կնոջ, 3-4, 68, 82-83, 132, 217

հավատարմություն ամուսնության մեջ, 116-19
«Երջանկության մեծ ծրագիրը», Երեց Դալլին Հ. Օուքս, 273
«Մաքրաբարոյության օրենքը», Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, 239
«Մեր հանդիսավոր պարտականությունները», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 23
ոչ ժամադրությունից դուրս, 148
Տիրոջ օրենքը, 242

հավատարմություն: *Տես նաև* վստահություն ամուսնությունում
կողակցին, 219
միասնության … միջոցով, 363

հավատք: *Տես նաև* վստահություն ամուսնության մեջ
«Զարգացնել աստվածային հատկանիշներ», Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին, 135
«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», 86

«Մեկ բան է պետք» - դառնալ ավելի մեծ հավատքի տեր կանայք Քրիստոսում, 386
առ Հիսուս Քրիստոս, 60, 154
հավերժական ընտանիքներ, 108

հավերժական
«Ժամանակի և ողջ հավերժության համար», Երեց Բոյդ Ք. Փաքեր, 68
«Հաշվեկշռի մեջ պահելով կյանքի պահանջները», Երեց Մ. Ռասսել Բալլարդ, 295
«Հավերժական ընտանիք», Երեց Ռոբերտ Դ. Հեյլս, 105
աճ, 175, 189, 191
ամուսնությունն ու Քավությունը, 12-14
առկա ուխտերը, 86
ընտանիքներ, 105, 188
հեռանկար, 49, 84-85

հավերժական ամուսնության հիմքերը, 129-35
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Սահմանադրություն կատարյալ կյանքի համար», Նախագահ Հարոլդ Բ. Լի, 129

Հարգանք
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», 86
առանցքային է երջանիկ ամուսնության համար, 195
սկզբունքը, 95

հեզություն, 352

Հեյթ, Դեյվիդ Բ., 88, 97, 262
«Ամուսնություն և ամուսնալուծություն», 76

Հեյլս, Ռոբերտ Դ., 40, 93, 117, 256, 257, 259, 262
«Հավերժական ընտանիք», 105

Հեյֆն, Բրյուսկ.
«Ուխտյալ ամուսնություն», 48

հեշտասիրություն, 79, 163

Հինքլի, Գորդոն Բ., 1, 3, 5, 16, 52, 61, 75, 80, 84, 87, 88, 89, 91, 94, 95, 96, 97, 116, 117, 118, 139, 156, 162, 197, 199, 208, 231, 233, 263, 266, 267, 279, 309, 318, 327, 330, 344, 360, 363, 376
«Ինչ Աստված միմյանց կապեց », 183
«Արժանի ապրել այն աղջկան, որի հետ մի օր կամուսնանաք», 219
«Դաստիարակել կայուն հավասարակշռություն», 350
«Եկեղեցու կանայք», 376
«Երջանիկ տան անկյունաքարերը», 137
«Հինքլիները նշելու են 60-րդ տարեդարձը», 195
«Մեր հանդիսավոր պարտականությունները», 23
«Մեր վաղանցիկ քաղաքակրթությունը», 348
«Տղաներին և տղամարդկանց», 62

Հիսուս Քրիստոս
«Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների վկայությունը», 153

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի
հայտարարություն, որ նույնասեռ ամուսնությունը լուրջ մեղք է, 318

հնազանդություն պատվիրաններին
հետևանքները, 233
առանցքային է երջանիկ ամուսնության համար, 165, 195
ուժ է տալիս, 50, 155

հոգևոր գիտելիք, 154-56

Հոլլանդ, Պատրիցիա Թ., 40, 367
«Մեկ բան է պետք» - դառնալ ավելի մեծ հավատքի տեր կանայք Քրիստոսում, 386

Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 40, 156, 165, 257, 347
«Անձնական մաքրություն», 245
«Թագավորության խաղարարար բաները», 12
«Ինչպե՞ս եմ ես սիրում քեզ», 165
«Հայրերի ձեռքերը», 226

հոմոսեքսուալիզմ: *Տես* նույն սեռի հանդեպ հակվածություն

հույս
«Զարգացնել աստվածային հատկանիշներ», Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին, 135
ավետարանը բերում է, 108
Հիսուսը տալիս է, 12

հպարտություն, 282-87
«Զգուշացեք հպարտությունից», Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, 283
«Մաքրել անոթի ներսը», Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, 282

Մակքեյ, Դեյվիդ Օ., 15, 118, 145, 161, 197, 198, 266, 320, 363, 365

Մակքոնկի, Բրյուս Ռ., 20, 83, 84, 88, 139, 141, 142, 175, 176, 197, 198, 200, 259
«Ազատ կամք, թե՞ ոգեշնչում», 202

մայր: *Տես նաև* կանանց աստվածային դերն ու պարտականությունները
և ծնող լինելը, 254
պատասխանատվություն են կրում հոգ տանելու համար, 86
պատիվ, 73, 224
պարտականությունները, 266
սուրբ կոչումը, 70
տնից դուրս աշխատանքը, 250-53, 378

մարգարեական խորհուրդ, 305-8
«Ապահովություն գտնել խորհրդում», Երեց Հենրի Բ. Այրինգ, 305

Մաքսվել, Նիլ Ա., ix, 2, 5, 32, 67, 84, 95, 143, 163, 207, 232, 256, 268, 281, 288, 290, 291, 320
«Հանեք բնական մարդուն և հաղթող դուրս եկեք», 351
«Ուսդ դեմ տուր անվին», 98

մաքրաբարոյություն: *Տես* հավատարմություն ամուսնության մեջ. բարոյական վարքագիծ և համեստություն

մաքրություն
«Անձնական մաքրություն», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 245
ժամադրվելիս, 58

Մեղք
առանց ամուսնության համատեղ ապրելու, 156
հպարտության, 283, 285
տարբերվում է օրինազանցությունից, 274

միայնակ
անդամներ, 176, 216, 259, 329, 381
տղամարդիկ, 184, 199, 276
մայրեր, 186, 227
ծնողներ, 327-29, 378
կանայք, 184, 198, 377

միասնություն, 362-64: *Տես նաև* վստահություն ամուսնությունում. խնդիրներ լուծելը ամուսնության մեջ
«Միասնություն գտնելու բանաձև՝ հաղթահարելով տարակարծություններն ամուսնության մեջ», Երեց Ռոբերթ Ի. Ուելս, 301
հարգանք, հավատարմություն և, 360

միսիա
օրհնությունները, 201, 208, 222
թե ամուսնություն, 201
քույրերը ծառայելու պարտավորություն չեն կրում, 201

Մոնսոն, Թոմաս Ս., 61, 66, 91, 96, 102, 118, 281

մտերմություն ամուսնության մեջ, 144-52
հարմարվել, 10
«Կյանքի աղբյուրը», Երեց Բոյդ Ք. Փաքեր, 146
քնքշություն և հարգանք, 217
միության ամենամեծ խորհրդանիշը, 246

մտքեր, վերահսկումը, 233, 240, 242

Յանգ, Բրիգամ, 48, 175, 193, 331, 347

Նադաուլդ, Մարգարետ Դ.
«Կանացի սեռի ուրախությունը», 72

նախազգուշացում, ուշադրություն դարձնել, 243

Նելսոն, Ռասսել Մ., 2, 23, 80, 81, 104, 164
«Համբերեք և բարձրացվեք», 27
«Ունկնդրեք, որ սովորեք», 36
«Կանանց պատվելու մեր սրբազան պարտականությունը », 223

Ներում
ապաշխարություն և, 2, 13, 89, 94
«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», 86
«Ներում՝ սիրո բարձրագույն ձև», Երեց Մարիոն Դ. Հանքս, 93
«Թագավորության խաղարարար բաները», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 12

նույն սեռի հանդեպ հակվածություն, 309, 317
նույն սեռի հանդեպ հակվածությունը լուրջ մեղք է, 232, 242, 318
«Նույն սեռի հանդեպ հակվածություն», Երեց Դալլին Հ. Օուքս, 309

նույնասեռ ամուսնություն, 318

շնություն: *Տես* հավատարմություն ամուսնության մեջ

ոգեշնչում
«Ազատ կամք, թե՞ ոգեշնչում», Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի, 202

Ոիդքսոու, Ջոն Ա., 161, 164, 291, 330, 331

Ոսկե օրենքը, 89, 186, 350

որդեգրում, 1

Ուելս, Ռոբերթ Ի.
«Միասնություն գտնելու բանաձև՝ հաղթահարելով տարակարծություններն ամուսնության մեջ», 301

Ուիթնի, Օրսոն Ֆ., 255
«Ինչու՞ ամուսնանալ տաճարում», 187

ուխտեր և արարողություններ, 39-49
«Համբերեք և բարձրացվեք», Երեց Ռասսել Մ. Նելսոն, 27
«Մեր հանդիսավոր պարտավորությունները», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 23
«Ուխտյալ ամուսնություն», Երեց Բրյուս Կ. Հեյֆն, 48
ամուսնություն, 25, 175, 187
սրբությունը, 25
տաճար, 330

չափանիշներ
Երիտասարդներին Զորացնելու համար՝ Կատարել Աստծո Հանդեպ Մեր Պարտականությունը, 53
մի ցածրացրեք, 199

պատասխանատվություն
եթե դրժվում են ուխտերը, 87
երիտասարդների, 53
մայրերի և հայրերի, 86

պատվել
«Կանանց պատվելու մեր սրբազան պարտականությունը», Երեց Ռասսել Մ. Նելսոն, 223
կանանց հանդեպ, 224, 225

պատրաստվածություն
անձնական, 223
ընտանիք, 214
տաճարի համար, 330
ֆիզիկական, 344

պարտականություն
«Կանանց պատվելու մեր սրբազան պարտականությունը», Երեց Ռասսել Մ. Նելսոն, 223

Պարտականություն
«Մեր հանդիսավոր պարտականությունները», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 23

պարտավորություն, 22-31: *Տես նաև* խնդիրներ լուծելը ամուսնության մեջ. վստահություն ամուսնությունում
«Ամուսնություն և ամուսնալուծություն», Երեց Դեյվիդ Բ. Հեյթ, 75
«Համբերեք և բարձրացվեք», Երեց Ռասսել Մ. Նելսոն, 27
«Մեր հանդիսավոր պարտականությունները», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 23
ընկերակցին, 173

պարտավորություններ: *Տես* ուխտեր և արարողություններ

պարտք, 61-64: *Տես նաև* եկամուտներ
խուսափեք ինչպես ժանտախտից, 125
վերացումը, 122
խուսափելու խորհուրդ, 120
«Տղաներին և տղամարդկանց», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 62
նախազգուշացում դրա դեմ, 196

պոռնկություն, 230, 231, 232, 236

պոռնոգրաֆիա, 278-81
նախազգուշացում ընդդեմ, 227, 231

Ջենսեն, Մարլին Ք.
«Սիրո և փոխըմբռնման միություն», 170

Ռիչարդս, Լեգրան, 88

Ռիչարդս, Սթեֆեն Լ., 258

Ռոմնի, Մարիոն Գ., 39, 48, 142, 261, 362

Սահմանադրություն
«Սահմանադրություն կատարյալ կյանքի համար», Նախագահ Հարոլդ Բ. Լի, 129

Սատանա
«Դաստիարակել կայուն հավասարակշռություն», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 350
«Հանեք բնական մարդուն և հաղթող դուրս եկեք», 351
«Մեր վաղանցիկ քաղաքակրթությունը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 348
«Ուխտյալ ամուսնություն», Երեց Բրյուս Կ. Հեյֆն, 48
դիմակայել, 186
հակադրվում է տաճարային աշխատանքին, 338
հարձակում է գործում ամուսնության վրա, 90, 242
հարձակում է գործում ընտանիքի վրա, 106, 260, 281
նպատակն է, 273
փորձությունները, 148, 347-54
փորձում է կործանել Աստծո երջանկության ծրագիրը, 139, 243, 273

Սատանայի և բնական մարդու գայթակղությունները, 347-54

սելեստիալ ամուսնություն
աստվածային նպատակն է, 76
ուխտ, 47
տաճարում կատարված, 176

սեռ
«Երջանկության մեծ ծրագիրը», Երեց Դալլին Հ. Օուքս, 273
«Կանացի սեռի ուրախությունը», Քույր Մարգարետ Դ. Նաղաուլդ, 72
նախաերկրային կյանքի առանձնահատկությունը, 86, 273

սեռական ուսուցումը դպրոցներում, 150, 243

սեր, 161-70
և մտերմություն, 146
«Ինչպե՞ս եմ ես սիրում քեզ» Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 165
«Սիրո և փոխըմբռնման միություն», Երեց Մարլին Ք. Ջենսեն, 170
կարիք ունի արտահայտելու, 225
կողակցին մնացած բոլորից առավել, 106
հասուն և հարատև, 147

Սթափլեյ, Դելբերթ Լ., 258

Սիմփսոն, Ռոբերտ Լ., 93

սիրահարվածություն շարունակվող
բարելավում է ամուսնությունը, 23, 194, 300
«Ինչպե՞ս եմ ես սիրում քեզ», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 165

սկզբունքներ, 288-89
ապրել, նախաբան, viii
«Ձեռք բերել հոգևոր գիտելիք», Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, 153
փնտրել, 153

Սմիթ, Բարբարա Բ., 97, 105, 361

Սմիթ, Ջոզեֆ Ֆ., 10, 15, 144

Սմիթ, Ջոզեֆ Ֆիլդինգ, 39, 87, 164, 200, 330, 331

Սմիթ, Ջոզեֆ, ix, 48, 331, 365

Սմիթ, Ջորջ Ալբերթ, 83, 365

սննդի պահեստավորում, 124, 346

Սնոու, Էլիզա Ռ., 83

Սնոու, Լորենցո, 145, 176

սուրբ գրություններ
մեջբերված, 11, 20, 32, 61, 75, 87, 96, 116, 117, 118, 144, 156, 161, 232, 233, 355, 356
անձնական ուսումնասիրություն, 143, 296
ուսումնասիրեք որպես ընտանիք, 301, 374

Սքոթ, Ռիչարդ Գ., viii, 67, 87, 118, 129, 145, 163, 175, 197, 209, 253, 255, 289, 328, 363, 366
«Անարգանքի ողբերգական սպիների բժշկում», 6
«Երջանկության մեծ ծրագրով ապրելու ուրախությունը», 379
«Ձեռք բերել հոգևոր գիտելիք», 153

Վաշբուրն, Ջ. Բալլարդ, 41

վիժեցում, 1-2

Վինդեր, Բարբարա, 362

Վիրթլին, Ջոզեֆ Բ., 20, 97, 140, 257, 262, 263, 346
«Զարգացնել աստվածային հատկանիշներ», 135

Վուդրուֆ, Վիլֆորդ, 198

վստահություն ամուսնությունում, 360-61
արժանի եղիր, 35
բարելավում է ամուսնությունը, 194

տաճար: *Տես նաև* օժտում, տաճար. հանդերձներ, տաճար. ուխտեր և արարողություններ
«Ինչու՞ ամուսնանալ տաճարում», Երեց Ջոն Ա. Ուիդթսոու, 187
«Սուրբ Տաճարը», Երեց Բոյդ Ք. Փաքեր, 335
«Տաճարային ներքնազգեստ՝ ներքին պարտավորության արտաքին դրսևորում», Երեց Կառլոս Ի. Ասայ, 339
նախապատրաստություն, 330-43
օրհնությունները, 151, 339

Տասանորդ
և նվիրատվություններ, 59
ապահովագրություն է ամուսնալուծության դեմ, 195
վճարիր ազնիվ, 121

տղամարդկանց և կանանց միջև ներհատուկ տարբերությունները, 65-74
«Երջանիկ տան անկյունաքարերը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 132
«Երջանկության մեծ ծրագրով ապրելու ուրախությունը», Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, 379
«Ժամանակի և ողջ հավերժության համար», Երեց Բոյդ Ք. Փաքեր, 68
«Կանացի սեռի ուրախությունը», Քույր Մարգարետ Դ. Նադաուլդ, 72

տղամարդկանց աստվածային դերն ու պարտականությունները, 210-28
«Ուղղված Իսրայելի հայրերին», Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, 213
«Արժանի ապրել այն աղջկան, որի հետ մի օր կամուսնանաք», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 219
«Երջանկության մեծ ծրագրով ապրելու ուրախությունը», Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, 379
«Լինել արդարակյաց ամուսին և հայր», Նախագահ Հովարդ Վ. Հանթեր, 216
«Կանանց պատվելու մեր սրբազան պարտականությունը », Երեց Ռասսել Մ. Նելսոն, 223
«Հայրեր, խորհեք ձեր ուղիների մասին», 210
«Հայրերի ձեռքերը», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 226
«Մեր հանդիսավոր պարտականությունները», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 23

տնայնագործություն, 251

տուն
սեփականություն, 63, 124
պահեստավորումն ու արտադրությունը, 346

ցանկություններ և կարիքներ
եղեք պարկեշտ, 222
մի շփոթեք, 125
ուշադիր մտածեք, 118

Փաքեր, Բոյդ Ք., ix, 1, 40, 48, 66,81, 82, 89, 138, 139, 142, 156, 162, 163, 176, 201, 253, 259, 260, 267, 288, 298, 318, 345, 356
«Ամուսնություն», 189
«Ժամանակի և ողջ հավերժության համար», 68
«Ինքնապավինում», 321
«Ծնողներ Սիոնում», 292
«Կյանքի աղբյուրը», 146
«Մեր բարոյական միջավայրը», 242
«Սուրբ տաճարը», 335

Փեյս, Գլեն Լ., x

Փերի, Լ. Թոմ, 61, 80, 84, 95, 96, 102, 233, 258, 262, 268, 344, 362
«Դառնալով ինքնապավինող», 323

Փիթերսեն, Մարկ Ի., 102, 261

Փիթերսոն, Հ. Բուրք, 5, 282

Փոելման, Ռոնալդ Ի., 258

Փոխրմբռնում
«Սիրո և փոխրմբռնման միություն», Երեց Մարլին Ք. Ջենսեն, 170

փող: *Տես* եկամուտներ

փորձություններ
նպատակ ունեն, 13
«Ինչպե՞ս եմ ես սիրում քեզ», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 165

Փրաթ, Փարլի Փ., 144

Փրաթ, Օրսոն, 165

փրկության ծրագիր, 273-76
«Ամուսնությունը և երջանկության մեծ ծրագիրը», Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն, 299
«Երջանկության մեծ ծրագիրը», Երեց Դալլին Հ. Օուքս, 273
«Երջանկության մեծ ծրագրով ապրելու ուրախությունը», Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, 379
երջանկության ծրագիրը, 68
տաճարային արարողությունները ներառում են, 336

քահանայություն
բերում է ապահովություն, 306
երդում և ուխտ, 45

քաղաքավարություն
«Մեր վաղանցիկ քաղաքակրթությունը», Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 348

Քավությունը և հավերժական ամուսնությունը, 12-14
«Երջանկության մեծ ծրագիրը», Երեց Դալլին Հ. Օուքս, 273
«Թագավորության խաղարարար բաները», Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, 12
«Ներում՝ սիրո բարձրագույն ձև», Երեց Մարիոն Դ. Հանքս, 93
«Ուխտյալ ամուսնություն», Երեց Բրյուս Կ. Հեյֆն, 48
Քրիստոսի, 8, 226

Քափ, Արդեթ Գ., 23

Քիմբալ, Սպենսեր Վ., 1, 10, 16, 22, 48, 52, 53, 61, 82, 84, 88, 89, 91, 94, 97, 118, 138, 142, 144, 145, 146, 156, 163, 165, 197, 200, 208, 210, 230, 231, 250, 254, 257, 259, 260, 278, 290, 320, 344, 346, 347, 365
«Ամուսնություն և ամուսնալուծություն», 176
«Արդար կնոջ դերը», 368

Քլայդ, Այլին Հ., 6

Քլարկ, Ջ. Ռիչարդ, 105, 260, 330, 348

Քլարկ, Ջ. Ռուբեն Կրտսեր, 15, 363

Քննադատություն
կործանում է ինքնարժեքը, 49
վտանգավորությունը, 303

Քրիսչենսեն, Ջո Ջ., 23, 62, 88, 105, 163, 257, 263, 281
«Ագահություն, եսասիրություն և բավականություններով տարվելը», 125
«Ամուսնությունը և երջանկության մեծ ծրագիրը», 299

օժտում, տաճար
կնքում, 333
ուխտը, 46, 331
նպատակը, 331-32

Օուքս, Դալլին Հ., 2, 17, 66, 83, 85, 120, 145, 201, 261, 268, 290, 318
«Երջանկության մեծ ծրագիրը», 273
«Նույն սեռի հանդեպ հակվածություն», 309

օրենքներ, ֆիզիկական և բարոյական, 244

Ֆաուստ, Ջեյմս Ի., 3, 22, 48, 61, 66, 75, 83, 93, 95, 97, 104, 139, 143, 233, 260, 262, 263, 264, 266, 268, 281, 288, 361, 362
«Ամուսնության բարելավումը», 193
«Մեծագույն մարտահրավերն աշխարհում՝ լավ ծնող լինելն է», 269

ֆիզիկական պատրաստվածություն, 344-46

Ֆիթերսթոն, Վաուգն Ջ., 105


THE FAMILY
OCLAMATION
THE WORLD
ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ
ARMENIAN
4 02353 11201 8
35311 201